



Հարգելի՛ ընթերցող.


ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

**АРМЯНСКИЕ
НАРОДНЫЕ
СКАЗКИ**

XVII

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԵՔԻԱԹՆԵՐ**

XVII

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԴ 398.21 = 919. 81
ՊՄԴ 82.3 Դ-6
Դ 241

Տպագրվում է ՀՀ ՊԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Ավետիսյան Պ. Ս., Հարությունյան Ս. Բ., Աբրահամյան Լ. Բ., Հոբոսյան Ս.Գ.,
Հայրապետյան Թ. Լ.

Հատորը կազմեց, առաջաբանը գրեց և տպագրության պատրաստեց
Թամար Հայրապետյանը

Հատորի խմբագիր՝ Ղազիյան Ա. Ս.

Հատորը հրատարակության են երաշխավորել ք. գ. դ. Վ. Գ. Սվազյանը և
ք. գ. ք. Ե. Լ. Ջաքարյանը

Դ 241 Հայ ժողովրդական հեքիաթներ: Հատ. XVII, Մոկս / ՀՀ ՊԱԱ հնագիտ. և
ազգագր. ին-տ: Կազմեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Թ. Լ. Հայր-
ապետյան: Խմբ.՝ Ա. Ս. Ղազիյան. - Եր.: «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատ., 2012,
840 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակության XVII հատորը
նվիրված է Պատմական Հայաստանի Մոկս (Մոկս) գավառին: Ներկա հատորում տեղ են
գտել Մոկս քաղաքից, Մոկս-Բուլենց, Մոկս-Ղաշտ, Մոկս-Գինեկանց (Գնեկանց),
Մամոտանք-Պաստ, Կարճկան-Գոմս, Կարճկան-Կութ, Կարճկան-Ուրանց բնակավայրերի,
ինչպես նաև Խլաթ, Արճեշ քաղաքների մի շարք հեքիաթներ՝ բոլորն էլ ցարդ անտիպ:
Հատորի հեքիաթները գրի են առնված 1915-1916թթ. Երևանում, Էջմիածնում, Թիֆլիսում
ապաստանած գաղթական ասացողներից՝ Ե. Լալայանի նշանավոր բանահյուսական
խմբարշավի կողմից, ինչպես նաև կազմված են «Էմինեան ազգագրական ժողովածուի»
Բ, Դ գրքերում լույս տեսած Ս. Հայկունու՝ Մոկաց հավաքածուից և Հովսեփ Օրբելու՝
«Ընտիր աշխատությունների» 2-րդ գրքում զետեղված հեքիաթներից (վեց միավոր)
գրառված իր իսկ Հ. Օրբելու կողմից, Մոկսում, 1911-12թթ.:

Հատորն ունի նախաբան, նյութերի գրառման հանգամանքներին վերաբերող ծանո-
թագրություններ, բարբառային և օտար բառերի բացատրական բառարան, հատուկ
անունների և առարկայական ցանկեր:

ՀՏԴ 398.21 = 919. 81
ՊՄԴ 82.3 Դ-6

I SBN 978-5-8080-0947-9

© ՀՀ ՊԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատարակչություն, 2012



ՆԱԽԱԲԱՆ

Հայ ժողովրդական հեքիաթների 17-րդ հատորը ընդգրկում
է Պատմական Հայաստանի Մոկս գավառի հեքիաթները: Մոկսը
կամ Մոկսը հայկական բնաշխարհիկ գավառներից է՝ դարերի ըն-
թացքում ստեղծված և սերնդեսերունդ փոխանցված իր պատմա-
մշակութային արժեքներով: Նա արևմուտքից սահմանակից է
Աղձնիքին, հյուսիսից և արևելքից՝ Վասպուրականին, իսկ հա-
րավից՝ Կորճայքին: Մ.թ.ա. IX դարից Մոկսի տարածքն ընդ-
գրվել է Ուրարտու պետության, մ.թ.ա. VI դ. սկզբից՝ Երվանդու-
նիների թագավորության կազմի մեջ: Մովսես Խորենացու հա-
վաստմամբ՝ հայոց թագավոր Վաղարշակը Մոկսում հաստատել է
առանձին թագավորություն: Որպես Հայաստանի հարավային
նահանգ՝ հնուց ի վեր Մոկսն ունեցել է պաշտպանական կարևոր
նշանակություն, իսկ նրա նախարարները՝ ազդեցիկ դեր: Ագա-
թանգեղոսը Մոկսի նախարարին հիշում է Հայոց մեծ իշխանների
շարքում: Հայոց արքունիքում նախարարական գահերի պատ-
վաստիճանների ցուցակում (Գահնամակ) Մոկսի նախարարու-
թյանը հատկացվել է 5-րդ տեղը, իսկ ըստ Ջորանամակի՝ նրա
զորաբաժինը կազմվել է 1000 հեծյալից: IV դարից Մոկսում հաս-
տատվել է առանձին եպիսկոպոսություն: Մոկսի նախարարու-
թյունը կարևոր դեր է խաղացել V դ. ժողովրդագրատագրական
պատերազմներում: Ավարայրի ճակատամարտում (451թ.) Մոկսի
մեծ իշխանը եղել է Հայոց առաջին զորագնդի հրամանատարի
օգնական: Հայոց Արշակունի թագավորության անկումից (428թ.)
հետո՝ մարզպանության շրջանում, և Արաբական խալիֆայու-

թյան տիրապետության պայմաններում Մոկսի իշխանները պահպանել են իրենց ինքնուրույնությունը: IX դ. կեսին Հայաստանում մեծ ազդեցություն ուներ Մոկսի իշխան Սմբատ Բագրատունին, ուն թովմա Արծրունին անվանում է «քաջահայտ և բարձրագահ»:

Մոկսն ունի անտառածածկ լեռներ, հարուստ բուսական ու կենդանական աշխարհ, սառնորակ ջրեր, հանածո հարստություններ (հատկապես երկաթահանքեր): Մոկսում զարգացած էր խաղողամշակությունը, բամբակագործությունը, ծիթատու բույսերի մշակությունը, մեղվաբուծությունը: Արհեստներից հատկապես զարգացած էին գորարությունը և շալագործությունը, մասամբ՝ մետաղամշակությունը: Մոկս քաղաքի յուրաքանչյուր թաղ ունեցել է իր եկեղեցին [Անճղոնց Ս. Աստվածածինը (XIII դ.), Դաշտ թաղի Ս. Հակոբ եկեղեցին (XIV դ.), Մոկաց Ս. Խաչ վանքը (XIV-XVI դդ.) և այլն], որոնք միջնադարում եղել են գրչության հայտնի կենտրոններ: XIII դարից ի վեր Մոկս են թափանցում քրդական վաչկատուն ցեղեր: XVI դ. սկզբից Մոկսի տարածքը բռնատիրել է Օսմանյան թուրքիան: XVI-XIX դդ. Մոկսում շարունակում էին գոյատևել հայկական կիսանկախ բնակավայրերը՝ հայ մելիքների գլխավորությամբ: Մոկսի 49 բնակավայրերի հայ բնակչությունը (ավելի քան 900 ընտանիք) 1915թ. տեղահանվում է և հիմնականում զոհ գնում բռնագաղթին¹:

Իր խոսվածքով ու մշակութային ավանդներով Մոկսը սերտ աղերսներ ունի Վասպուրականի և ընդհանրապես Շատախի, Ռշտունիքի հետ: Մոկացի Նախո Քեռուց, Խապոյենց Ջատիկից, Վարդան Բագիկյանից ժամանակին գրի են առնվել «Սասնա ծռեր» հերոսավեպի լավագույն պատումները:

Ներկա հատորում տեղ են գտել Մոկս քաղաքից, Մոկս-Բուլենց, Մոկս-Դաշտ, Մոկս-Գինեկանց (Գնեկանց), Մամռտանք-Պաստ, Կարճկան-Գոնս, Կարճկան-Կութ, Կարճկան-Ուրանց բնա-

կավայրերի, ինչպես նաև Խլաթ, Արճեշ քաղաքների մի շարք հեքիաթներ՝ բոլորն էլ ցարդ անտիպ: Հատորի ձեռագիր նյութերը (թվով 70 միավոր) պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի Երվանդ Լալայանի ֆոնդում (FA IV: 0001-3502): Այս հեքիաթները գրառել են Ե. Լալայանի՝ 1915-1916թթ. նշանավոր բանահյուսական խմբարչավի մասնակից-բանահավաքներ Արտաշես Բարսեղյանը, Սենեքերիմ Շալճյանը, Արտաշես Շահինյանը, Երվանդ Պեգազյանը: Հատորի նյութերը գրի են առնված Եղեռնից փրկված և էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում ապաստան գտած վերոհիշյալ բնակավայրերի գաղթական ասացողներից: Ձեռագիր այդ նյութերի մեջ նշանակալից տեղ են գրավում Ե. Լալայանի՝ 1910 և 1911թթ. բուն Մոկսում կատարած հեքիաթների անձնական գրառումները, երբ գիտնականը մեկնել էր Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ՝ ժողովրդագիտական հետախուզումների: Վերոհիշյալ անտիպ նյութերում կան մի շարք վարպետ ասացողների հեքիաթներ, որոնք աչքի են ընկնում Վանի բարբառի Մոկսի խոսվածքի և պատմողական ոճի անաղարտ դրսևորումներով (Դանիել Խլոյան, Սարգիս Մուրադյան, Պետրոս Սահակյան, Վարդան Բագիկյան): Հատորն ընդգրկում է ինչպես ձեռագիր, նույապես և տպագիր նյութեր՝ նպատակ ունենալով ամբողջական և անաղարտ տեսքով հրապարակ համել հեքիաթի ժանրի հարուստ ու արժեքավոր ժառանգությունը: Խոսքը վերաբերում է «Եմինեան ազգագրական ժողովածուի» (այսուհետ՝ ԷԱԺ) Բ, Դ գրքերում (Մոսկուա-Վաղարշապատ, 1901-1902) հավաքած Մոկաց հեքիաթներին, որոնց արխայիկ մոտիվներով աչքի ընկնող սյուժեների պատմողը հայտնի վիպասաց Ջատիկ Խեպոյանն է: Հիշյալ հատորում տեղ են գտել նաև Հովսեփ Օրբելու «Ընտիր աշխատությունների» 2-րդ գրքում (Երևան, 2002) զետեղված հեքիաթները (վեց միավոր)՝ գրառված իր իսկ Հ. Օրբելու կողմից, Մոկսում, 1911-12թթ.:

Հատորում պահպանված են բնագրաբանական (տեքստաբանական) այն սկզբունքները, որոնք մշակված և ընդունված են «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության համար՝ իրենքացս հաշվի առնելով սույն հատորի նյութերի առանձնահատկությունները:

¹ Մոկաց աշխարհի մասին պատմաաշխարհագրական անհրաժեշտ տեղեկությունները քաղել ենք Հ. Հյուբշմանի «Հին հայոց տեղվոյ անունները», Վնն., 1907; Н. Адонц, «Армения в эпоху Юстиниана», СПб., 1908; Ե. Լալայանի «Վասպուրականի նշանավոր վանքերը», պր. 1, Թ., 1912; Թ. Խ. Հակոբյանի «Հայաստանի պատմական աշխարհագրություն», Ե., 1968; Գ. Սրվանձտյանց.- «Թորոս աղբար», Երկեր, հ. 2, Երևան, 1982; Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991 աշխատություններից (Ծ.Կ.):

1. Բուն տեքստերի դասակարգման համար առաջին հերթին նկատի է առնված նրանց ժանրային բնույթը, սյուժետային-թեմատիկ առանձնահատկությունները: Սկզբում տրված են հրաշապատում հեքիաթները, իսկ հետո՝ իրապատում:

2. Հատորում ընդգրկված են բովանդակային, ժանրային, գեղարվեստական տեսակետից համեմատաբար անթերի հեքիաթներ: Բնագրերում խմբագրական որևէ փոփոխություն՝ հապավում, հավելում, չի կատարված:

3. Հեքիաթների լեզուն չի փոփոխված, այսինքն՝ թողնված է այնպես, ինչպես գրի է առել բանահավաքը ասացողից: Նյութերը գրված են ժամանակակից ուղղագրությամբ և կետադրությամբ: Բնագրերում եղած բացահայտ սխալներն ու վրիպումներն ուղղված են:

4. «Նմուշ», «Աղվեսն ու կրիան», «Գայլի փորձանքներ», «Ճակատագիր», «Աղվեսն ու գայլը», «Ամուլ մարդ», «Որն է պոռնկորդին», «Մարդ և օձ» հեքիաթները, մեր կարծիքով, վերնագրվել են դրանք գրառող բանահավաքների կողմից, քանի որ հեքիաթների բուն բարբառային բնագրերից տարբերվում են:

5. Ճշտված և ուղղված են բնագրերի տրոհության և առօգանության նշանները, բնագրերի պարբերությունների ուղղակի և անուղղակի խոսքի կիրառությունները: Բացի հատուկ անուններից, բնագրերում մեծատառով են գրված նաև կենդանական ու բուսական աշխարհի առանձին ներկայացուցիչների անունները և հեքիաթների հերոսներին տրված մականունները:

Մոկսի բարբառն, ըստ Հր. Աճառյանի ձևաբանական դասակարգման, պատկանում է «կը» ճյուղին, ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Վանի կամ հարավային միջբարբառախմբին, և տվյալ բարբառային միավորը կոչվում է Վանի բարբառի Մոկսի խոսվածք²:

Մոկսի տարածքում գրաբարի ծայնեղ պայթականներն ու կիսաշփականները բառասկզբում խլանում են.

1. Բ>Պ (բարի>պարի), Զ>Ծ (ծայն > ծէն), Հ>Խ (հոգի > խուկյի): Ետնալեզվային բաղաձայններն ունեն քմային տարբե-

րակներ՝ 2. քար>քյար, քո>քյու: Խլացած ծայնեղ պայթականներից ու կիսաշփականներից հետո ա-ն արտասանվում է օ՝ 3. բակ > պակ, առանձին գյուղերում էլ՝ օ (կաթ > կօթ): Շեշտը վերջնավանկային է: Վաղակատար ժամանակաձևում դերբայը ստանում է /հ/ մասնիկ՝ նըստի իմ: Ժխտական խոնարհման մի շարք բայածևերում շեշտվում է ոչ թե ժխտական մասնիկը, այլ խոնարհվող բայի առաջին վանկը. չըմուտը (արգելական հրամայականում՝ մը տը՛վը – մի՛ ծեծի՛ր)³, բնագրերում, ընդհակառակը, գերազանցապես շեշտված է արգելական մը մասնիկը: Քանի որ մեր ձեռքի տակ եղած բնագրաբանական նյութերը հնչյունաբանության և ուղղագրության առումներով միօրինակ չեն, և տարբերություններ են դրսևորվում բանասացների պատմած և բանահավաքների գրառած հեքիաթներում, հետևաբար՝ Վանի բարբառի Մոկսի խոսվածքին բնորոշ ուղղագրական և ուղղախոսական կանոնները որոշ դեպքերում միագծորեն պահպանված չեն: «Էմինյան ազգագրական ժողովածուի» և Հ. Օրբելու վերոհիշյալ գրքից ընտրված 6 հեքիաթների ուղղագրությունը ևս հարմարեցված է սույն հատորի համար մշակված ուղղագրական-ուղղախոսական ընդհանուր սկզբունքներին:

Հատորը, բացի բնագրերից, ունի.

1. Նախաբան, որտեղ լուսաբանվում է տվյալ ազգագրական շրջանի առանձնահատկություններն ու հավաքածուի գոյացման պատմությունը:

2. Ծանոթագրություններ, որտեղ հերթականությամբ տեղեկություններ են տրվում հատորում ընդգրկված հեքիաթների գրառման հանգամանքների վերաբերյալ:

3. Բառարան, որն ընդգրկում է հեքիաթներում առկա դժվար հասկանալի, բարբառային ու փոխառյալ բառերի բացատրությունները:

4. Անձնանունների ցանկ, որտեղ ներկայացված են հեքիաթներում հիշվող պատմական նշանավոր դեմքերը, սովորա-

³ Մոկսի բարբառի արտասանական և ձևաբանական առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն, Մ.-Նոր Նախիջևան, 1911 (Էմինեան ազգագրական ժողովածու, հ. 8) և Մ. Մուրադյան. Մոկսի բարբառի հնչյունա-հնչույթային համակարգի հիմնական առանձնահատկությունները. - Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1978, № 9, որոնցից և օգտվել ենք մենք:

² Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 134: Այսօր առավել ընդունելի է համարվում բարբառների դասակարգման Գ. Ջահուկյանի առաջարկած սկզբունքը (Ծ. 4.):

կան անձնանունները, հեքիաթային-առասպելական արարածներին, կենդանիներին տրված անունները, հերոսների հատկանիշները բնութագրող մականուններն ու ածականները:

5. Տեղանունների ցանկ, որն ընդգրկում է հեքիաթներում առկա պատմական ու հեքիաթային-առասպելական վայրերի անուններն ու անվանումները:

6. Առարկայական ցանկ, որը պարունակում է հատորի հեքիաթներում հանդիպող առարկաները, կենդանիները, բույսերը, բնության, առասպելական և հասարակական երևույթները, տնտեսական, կենցաղային, կրոնական և այլ հասկացություններն ու ըմբռնումները:

Անձնանունների, տեղանունների և առարկայական ցանկերում բառերը տրվում են այբբենական կարգով, էջերը՝ արաբական թվանշանով:

7. Ցանկեր, որոնք այբբենական կարգով ներկայացնում են հատորում ընդգրկված հեքիաթները՝ ըստ ծագման վայրի, բանասացների ու բանահավաքների:

8. Հավելված I, որտեղ ներկայացված է հատորի հիմնական տեքստերից վերցված մի հեքիաթ («Պոլոտ կյով»)՝ Սոկսի խոսվածքի ձևաբանական ու արտասանական առանձնահատկությունների գիտական ճշգրիտ տառադարձությամբ (Շ նշանը դրված է բառասկզբի հավելական *h* հնչյունի փոխարեն, օրինակ՝ *չիտիվ=հիտիվ*):

9. Հավելված II, որտեղ ներկայացված են բանահավաքներ Սենեքերիմ Շալճյանի և Արտաշես Բարսեղյանի կենսագրությունները:

10. Բոլոր տեսակի ճշտումների, բացատրությունների ու ծանոթագրությունների դեպքում հատորում հանդիպում են հետևյալ հապավումներն ու համառոտագրությունները՝

ԲԱ - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ:


Ծ.Ա. - Ծանոթություն ասացողի:

Ծ.Բ. - Ծանոթություն բանահավաքի:

Ծ.Կ. - Ծանոթություն կազմողի:

Մ Ո Կ Ս





1. ՄԵՎ ՍԱՐԻ ՋԵՅՅՈՐԱՆ

Մեկ թակավորը կեր, էնոր մեկ տըղա կեր: Տըղեն էղավ տասնուխինգ տարեկան, գյընաց սար ավչութեն, ջեյիըրա՛մ հանճըվեն փախավ, լարեց ջեյիըրանի հետև: Մեկ քիչ սարի մեչ օր գյընաց, իրեքյ մարթ էնոր ռաստ էկան:

Ասին. – Տըղա՛, էտա ի՞նչ ա կենիս:

Ասաց. – Ջեյիըրանի հետև կը լարեմ, գի կը տեսիքյ:

Ասին. – Տըղա՛, էտի ջեյիըրան չէր, էտի մեկ թակավորի ախչիկ մ՛ ա, օր սեյրի կենա, էլե, ջեյիըրանի պես ինգե լեռներ, կան կը գա: Թե չես ավատար, էնու պատկերքյ գի մեր մոտ:

Պատկերքյ տըղին շանց տըվին:

Պատկերքյ տանցավ նայեց, խելքից էլավ:

Տըղեն էկավ տուն: Քանի մ՛օր մընաց, տըղեն խիվընցավ: Ծանխեցին, հեքյըմներ պերին, թե տըղի խիվընտութեն ի՞նչ ա:

Չեքյըմներ ասին. – Սիրու առե տըղեն: Էնոր տեղ-տանրման չըկա, չուր օր ախչիկ չըպերեն:

Թակավոր ասաց. – Էտի չէղի: Էտա ախչիկ ո՛չ ոռց հանյվընի միս կուտա, ո՛չ մարթու էրես կը նայա, ո՛չ էլ մարթու կերթա: Պատճառ չեն գիտե:

Վոզիրն ասաց. – Թակավոր, էտի ճարըմ չըկընդընի, տըղեն կը մեռի:

– Եար ի՞նչ կընդինքյ, վոզիր:

Վոզիր ասաց. – Թակավոր, տու ծի տաս խազար ոսկի փառա, ես առեմ տըղեն, էրթամ, բալկո ճարըմ կընդիմ:

Թակավոր ասաց. – Տաս խազար չէ, կուզես տասնուխինգ խազար տամ:

Վոզիրն առավ տաս խազար ոսկի ու տըղեն իր խետ գյընաց: Էլ շատ քիչ էր, թալուց վերճ խասավ էն ախչըկա խոր քաղաքյ:

Քանդքին անծանոթ էր, գյընաց մեկ պառվու՛մ տուն: Պառավն էլ մեկ պըստիկ հօղե մ՛ուներ:

Ասաց. – Պառավ, մե տեղըմ չը՛ս էնե, հեսօր գյիշեր պառկենքյ:

Պառավ ասաց. – Քյե մեռնեմ, գի էսա պըստիկ օթախն ա, կուզես՝ էկեքյ, մընացեքյ իմ մոտ:

Գյիշեր պառվու տուն մընացին: Չիրիկուն խաց կերելու ժամանակ վոզիր խառցընեց պառվուց:

Ասաց. – Պառավ, ես լըսեր եմ, օր ծեր թակավորի ախչիկ ո՛չ ոռց հանյվընի միս կուտա, ո՛չ իրկան կերթա, էնու պատճառն ի՞նչ ա:

Պառավ ասաց. – Չա՛չ կաց, վիր պերնեն լըսեն, լեգիւն կըտրեն, որ օր ակընջով լըսավ, էնու ականջ կը կըտրեն:

Վոզիրն ասաց պառվուն. – Պառավ, էնու մաղեն խասկըցի, ծի պատմա՛, քյե էրկու խազար ոսկի փառա տը տամ:

Պառավ օր փառի անուն լըսավ, ուրախցավ, ասաց. – Տ՛երթամ, խասկընամ էնու մաղեն, ես էնու գյըլխու վըլանցողն եմ:

Պառավ առավտուն էլավ, գյընաց թակավորի ախչըկե սենյակ:

Թակավորի ախչիկ ասաց. – Պառավ, էկա՞ր: Առավտուն իմ գյըլխի տը վըլան:

Պառավ ասաց. – Ես էսա էղավ տաս տարի ա՛ քիւ գյըլխի կը վըլան, քյե աճազ կը տամ, տիւ ծի չասիր, թե տիւ ի՞նչ հապիվ ոռց հանյվընի միս ս՛ ուտի ու իրկան չըս էրթա:

Ախչիկ հըռըկավ: Ծանխեց, էրկու զաբթիա էպի: Մեկ-մեկ կոճան ծեռքյեր, պառվու ճըվքյեր պըռնեցին, գարկին:

Պառավ լեզվից ինգավ, տըվին մեկ մարթու՛մ քամակ, չըլկեց, տարավ էնոր տուն:

Մընաց չուր մեկէլ օր, թակավորի կնիկ գյընաց ուր ախչըկան մոտ, ասաց. – Տիւ էն պառավ ընչի՞ տըլփել տըվիր, մըկա կը մեռի, տիւ ընչի՞ մըտար էնոր մեղաց տակ:

Ախշիկ ասաց. – Տ'երթամ պառվու մոտ, էնորից խալալութեն ուզեմ:

Ախշիկ էլավ, գլընաց պառվու տուն:

Ասաց. – Պառավ, պառավ:

Պառավ հուշիկ ծենովըմ ասաց. – Ի՞նչ ա:

Ասաց. – Պառավ, քիւ երվածք, օր ծի երեր ես, ծի խալալ երա:

Պառավ ասաց. – Չուր տիւ քիւ մանդեն ծի կըսա չենես, քյե խալալ չըմ էնե, ես գի կը մեռնեմ, էլ հիւրհուշի էլ չըմ կանա ասել:

Ախշիկն էլ ասաց. – Գի կը մեռի, ես իմ մանդեն էնոր տ'ասեմ:

Ախշիկ ասաց. – Պառավ, իմ մանդեն եսին ա. էրագի մեչ ես տեսա՝ ես ջեյիըրան էր, ոռջ ջեյիըրան մ'էլ իմ կըշտի խետ կեր: Մենքյ էսա մեր քանդաքյի տիմացի Սև սար խընդորաց կարծենքյ: Մեկ տեղ ճիւր կը խըմենքյ, մեկ տեղ կը նըստենքյ: Ես ու էտա ոռջ ջեյիըրան էնքան զիրար կուզինքյ, օր մեր կըշտըներ կը պընդենքյ հիրար, օր իմ ծախ կող, էնու աչ կող պիւրթ չըկեր, լոպկըվեր էր: Էն սարի մեչ արանքներու կոներ էն տեղն են: Մարմար սալերով հախպիւր մ'էլ գի դան: Մենք ծան կավու պըռուկ կարծենքյ, էնդիւց էճանքյ, էկանքյ հախպըրի վերեն ճիւր խըմելու: Չասե՞ս՝ արանքներ թոռեր թալած վեր հախպըրին, օր մեզ պըռնեն: Զանճին՝ ոռջ ջեյիըրան գլընաց ճիւր խըմելու, ընգան վոռը վեր, ես կոտշովս էնի ուր թոռից խանի: Դիր էնի ազատվավ, ես ընգան թոռը վե: Արանքներ էկան, օր մե պըռնեն, էնի ծի էթող թոռերու մեչ, փախավ: Արանք էկավ, նաջախըմ էզար իմ ճակատ: Ես քընուց հիշարցա: Դըլ հըլա իմ գըլըխ կը ցավի էն նաջախ դըրբից: Ոռցեղենի միս օր չըմ ուտի ու հիրկան չըմ էրթա, էն պատճառն էն ա, օր ոռցեղեն բերախտ ա, ծի թողեց արանքներու ծեռ ու փախավ:

Պառավ ասաց. – Քյե խալալ էլնի իմ անագ, օր ես քյե էնքան վըլանցեր եմ, ծամերտ հիստըկեր եմ, թող Աստըված քյե խալալ էնա էսա հիտին տըփոցն էլ:

Ախշիկ գլընաց ուր խոր սարեն:

Թակավորի վոգիր էկավ, պառավ տեսավ:

Ասաց. – Պառավ, թակավորի ախշըկե մանդեն հիմացա՞ր:

Պառավ ասաց. – Վոգիր, թակավորու ախշըկե մանդեն հիմացա, չուր հիմաց, մեռնելուց մեկ մագ պըռծա:

Վոգիրն ասաց. – Պառավ, դե ծի պատմա, օր ես հիմնամ, մեկ ճարըմ կընդիմ:

Պառավ ասաց. – Իմ էրկու խազար ոսկին տուր, օր քյե պատմեմ:

Վոգիրն էլավ, խուրջին էպիր, պերան էպաց, էրկու խազար ոսկին էտուր պառվուն:

Պառավ ըսկսեց պատմել:

Ասաց. – Ախշիկ կասա, թե՛ էրագի մեչ ես տեսա՝ ես ջեյիըրան էր, ոռջ ջեյիըրան մ' էլ իմ կըշտի խետ կեր: Մենքյ էսա մեր քանդաքյի տիմացի Սև սար խընդորաց կարծենքյ: Մեկ տեղ ճիւր կը խըմենքյ, մեկ տեղ կը նըստենքյ: Ես ու էտա ոռջ ջեյիըրան էնքան զիրար կուզենքյ, օր մեր կըշտըներ կը պընդենքյ հիրար, օր իմ ծախ կող, էնու աչ կող պիւրթ չըկեր, լոպկըվեր էր: Էն սարի մեչ արանքներու կոներ կեն: Մարմար սալերով հախպիւր մ'էլ գի դան: Մեկ օր էճանքյ հախպըրի վըրեն ճիւր խըմելու, ոռջ ջեյիըրան ընգան վոռը վեր, ես կոտշովս էնի ուր թոռից խանի: Դիր էնի ազատվավ, ես ընգան թոռը վեր: Արանք մ'էկավ, նաջախ էզար իմ ճակատ, ես քընուց հիշարցա: Դըլ հըլա իմ գըլըխ կը ցավի էն դըրբից: Ոռցեղենի միս օր չըմ ուտի ու հիրկան չըմ էրթա, էն պատճառն էն ա, օր ոռցեղեն բերախտ ա, ծի թողեց արանքներու ծեռ ու փախավ: Վոգիր, հիմացա՞ր ախշըկա պատմութեն:

Վոգիր ասաց. – Ի՞նչ էնեմ, օր ախշըկեն համոզեմ:

Վոգիրն առավ տըղեն, գլընաց քանդաքյի մեչ, չալըջին տեսավ, ասաց էնոր. – Քյե ի՞նչ տամ, օր տիւ մեկ ամսըվան մեչ իմ տըղին լավ չալըջութեն շանց տաս ու խաղ սովըրցուցես:

Չալըջին ասաց. – Տաս ծի հիսուն ոսկի, մեկ ամիս քիւ տըղին լավ չալըջութեն ու խաղալ կը սովըրցուցեմ:

Տըղեն էտու, չալըջին տարավ, օր սովըրցուցա:

Վոգիր դիր գլընաց ոսկըրչու մոտ:

Ասաց. – Ոսկըրի՛չ, քյե քանի՞ ոսկի տամ, օր տիւ Սև սարի թասպիր ոսկով, արծըթով շինես:

Ասաց. – Էրկու խազար քորով կը շինա:

Վոգիր առավ ոսկըրչին, գլընաց Սև սար: Էտա հախպիւր, էտա ծան կավիքյ, էտա տեղ, օր ընոնքյ արծըրցած են, արանքներու կոներ հըմեն պըռքան, էկան:

Ոսկրիչ նըստավ, արծըթից, ոսկուց էտա սար շինեց: Դախար շինեց ոսկեղեն, ծաղկըներ պատրաստեց: Արաբներու կոներ շինեց, թռեք հախարի կող պիլի շինեց: Ջուխտ մ'էլ ջեյիըրան շինեց՝ մեկ ոռց, մեկ էք, կափաղ սանդուխի մեջ էդիր, կափաղով ծածկեց և էտու վոզիրին, էնու էրկու խազար ոսկին անեց:

Չուս պատրաստեց, մեկ ամիս թընըմավ, տըղեն էլ էկավ:

Տըղեն էնպես չալըջութեն սովրեր ա, օր խազար-խազար եղանակ էնոր չալըուց կէլնի տիւս:

Առավոտուն առավ տըղին ու գըրնաց քանքի մեջ: Շուկի մեջ նըստավ, ըսկսեց չալըին չալել:

Չըմեն մարթ էկան, թամաշա էրին:

Ախշըկե խեր թակավոր ու իր վոզիր էկած են, գանցած պանդիս: Պանդիսից օր տիւս կը գան, թակավոր հանեճ կը քելան, վոզիր՝ ետ: Վոզիր կը տեսնի, օր շուկի մեջ մարթեր թափած են, ծեն կը գան:

Կը տաննա կը պըշքի, օր մեկ տըղեն՝ նըստի, խազար-խազար եղանակ չալըի կը չալա, խաղ կասա ու կը խաղա:

Վոզիր խելքից կէլնի, թակավոր կը մոռնա:

Թակավոր կերթա ուր սարեն, կիշկա, օր վոզիր չըկա:

Կասա. – Վոզիր, չէ՞ հիմա տիւ տը գաս, քիւ վիզ տը տամ կըտրել:

Եփ օր տըղեն վերճ կը տա, վոզիր կը հիշարնա վըր ուր:

Կասա. – Վո՛ր, էս ի՞նչ եմ էրե, թակավոր իմ վիզ կը կըտրա:

Վոզիր գըրնաց խընդ սարեն: Թակավոր էրկու քանան պերեր, պատրաստեր, օր էնոր վիզ գանեն:

Վոզիր ասաց. – Կը խընթրեն թակավորից, թոխ հըրաման տա՝ մեկ խոսք ասեն, թոխ նոր իմ վիզ գանա:

Թակավոր ասաց. – Ասա՛, խի ի՞նչ ա:

Ասաց. – Թակավոր ապրած, էն ժամանակ օր ես ու տիւ պանդիսից էկանք, մեկ խորոտ տըղեն՝ շուկի մեջ չալըի կը գաներ, կասեր ու կը խաղեր: Եփ օր ես տեսա, խելքից, մըտքից էլան, քե մոռցա:

Թակավոր ասաց. – Վոզիր, ճամխեն, էն տըղեն պիրեն, օր էնպես չէղավ, քիւ վիզ նորեն կը գանեն:

Թակավոր ճամխեց տըղեն ու տըղի խետու մարթն առավ էկավ:

Տըղի խետու մարթն վոզիրն էր, անքե՛մ թալե վըր թիվքերուն, զինք էլեր ա մեկ խեղճըմ:

Էկան, գանցին թակավորի սարեն:

Թակավոր ասաց. – Պապիկ, էտա տըղեն քիւ տըղեն՞ ա:

Պապիկն ասաց. – Խա՛, իմ տըղեն ա:

Ասաց. – Դիրիկվան սանհաթ էրկըսվին էկեք մեր տուն, մե քիչ մը ժելիք էնենք:

Ասաց՝ շատ լավ:

Դիրիկուն սանհաթ էղավ էրկու, գանցին թակավորի սենյակ: Տըղեն ըսկսեց չալըի չալել: Խաղ ասաց ու խաղաց:

Թակավոր խելքից, մըտքից էլան:

Թակավորի կնիկ ասեր էր թակավորին, օր էսօր հիրիկուն իմ սենյակի տիւ տը պանց թոնիմ, իմ սենյակ տը գաս:

Թակավորի մըտքից էլեր էր: Եփ չալըին կըտրավ, թակավորու միտքն ինգան կընկան խաբար:

Ասաց. – Վա՛ր, կնիկ առավոտուն ծի կը խայտառակա:

Չալըջիք էլան, գանցին ընոնց սենյակ:

Առավոտուն թակավորի կնիկ էկավ, թակավորին ասաց. – Չի կը խապես, տիւ թողի էպաց, չէկար: Առավոտուն քե տը խայտառակեմ մեջ վոզիր-վոքիլին:

Թակավոր ասաց. – Կնիկ, չալըջի մ'էկավ, եփ օր ըսկըսեց չալըի չալել, ծի խելքից, մըտքից էլան: Էնու խամար ես մոռցա, չէկա քիւ սենյակ:

Ասաց. – Կանի՛, ես էսօր տը կանչեմ, պիրեն իմ մոտ էտա չալըջին, թե էնպես չէղավ, քե տը խայտառակեմ:

Դիրիկուն թակավորի կնիկ կանչեց չալըջիք:

Վոզիր տըղին ասաց. – Տըղա՛, հերեկ թակավորի մոտն ենք, հետք էնոր կընկան մոտ: Դետք էրկու կաթ օյինբազութեն էնես:

Գանցին թակավորի կընկան սենյակ:

Եփ հիրիկուն էղավ, տըղեն սկսեց չալըի չալել, ասել ու խաղալ:

Թակավորի կնիկ խելքից էլան:

Եփ օր տըղեն էտա սանդուխի կափաղ էպանց, էտա ոսկեղեն, արծաթեղեն Սև սար հերեկվան էկավ: Ծաղկունք, սար, քան, ջեյիըրաներ, հախար, թոռ, անքներու կոներ նշանց էտու թակավորի կընկան:

Կնիկ օր տեսավ, խելք գլորնաց:

Վերճ սանդուխ կոծեց:

Կնիկ վեր ուր հիշարցավ, ասաց. – Վա՛յ, էսա ի՞նչ պան էր, թակավոր կասեր, ես չըր ավտե:

Հենօր իրիկուն ախչիկ մոր ասեր էր, թե՛ ձի էրկու խատ ծըմերուկ պե:

Մեր չալղըջին օր տեսավ, ծըմերուկ մըտեն էլավ:

Առավոտուն ախչիկ էկավ, մոր պան ասաց, ասաց. – Չի խապեցիր, ծըմերուկ չըպերիր:

Մերն ասաց. – Հնալ-քեֆիաք էսպես ա, չալղըջիք օր տեսա, մըտախան էրի քու ծըմերուկ:

Ախչիկ ասաց. – Հեսա հիրիկուն կը կանչեմ, պերեմ իմ մոտ, եթե օր էնպես չէլավ՝ էլ իմ ծեռնեն չըս պըռծեր:

Ճանխեց չալղըջոց հիտև:

Վոզիր ասաց. – Տըղա՛, էլ տասնապատիկ խընծ էն մեկէլ տըրին հնավէլ քու շընորիք շանց տաս, թե պան մ'էղի, հեսօր կէղի:

Էլան, գանցին ախչըկե սենյակ:

Հիրիկուն տըղեն ըսկսեց: Չալղի կը գաներ, կասեր ու կը խաղեր:

Ախչիկ խելքից, մըտքից էլավ:

Մեկ էլ տըղեն սանդուխի կափաղ վերուց, օր Սև սարի թասպիր խանեց տուս, էն ժանանակ ախչիկ վեր հիշարցավ, ասաց. – Վա՛, էսի ի՞նչ պան ա, էսի իմ էրազի սարն ա, իմ էրազի պատմութեն ա:

Ասաց. – Էսի մեկ եսն եմ, էնա մեկ՝ ոռց ջեյիըրան ա, գո՛ մենք էսա հնախար ճուր կը խըմենք, էնա կավու պըռուկ կարծենք, գո՛ անաբներու կոներ, գո՛ հնախարի վըրնվի թոռեր:

Ախչիկ ուր մտքի մեջ կասա. «Ես պիտի էսա պապիկ խանեմ տուս, էսա տըղեն քըննեմ, խի ի՞նչ խընթիր ա»:

Եփ տըղեն վերճացուց էնու օյինբազութեն, թակավորի ախչիկ ասաց. – Պապիկ, տու՛, խալայեղներ, տու՛ս էլեք, էսօր տըղեն ըստան տը մընա:

Վոզիրն ասաց. – Չէ՛, իմ տըղեն մընա ըստան, տու՛ տը վըրնասես:

Ասաց. – Տըղին ընչի՞ տը վըրնասեմ: Տու՛ս էլեք:

Հըմեն էլ էլան տուս:

Ախչիկ տըղին ասաց. – Տըղա՛, արե դողրին ասա, էսա ի՞նչ մանահ ի, էսա ոսկեղեն, արծաթեղեն սար, էսա ջեյիըրաներ, անաբներու կոներ ընչի՞ էք շինե, էսի ի՞նչ ա:

Ասաց. – Քու ինչո՞ւն պետք, ընչի՞ կը խառցընես: Ես չըխ ուխտեր եմ, օր էք հնայվընի միս տը չուտեմ, էքեղենի էրես չըտեսնեմ ու չըփըսակվեմ:

Ախչիկ ասաց. – Ընչի՞ խամար, ի՞նչ հնապու:

Ասաց. – Քանի որ ես էսա Սև սարի մանի տեր չըմ կընդի:

Ախչիկ ասաց. – Չի պատմա՛, օր ես իմանամ խի ի՞նչ ա, կարելի ա, օր ես կընդեմ էտա մանի դեր:

Տըղեն ասաց. – Ես կասեմ, տու՛ լավ ականջ էրա: Ես էրազի մեջ ջեյիըրան էր, էք ջեյիըրա մ'էլ իմ կըշտի խետն էր, խընդրաց կերթենք, էնա կավու պըռուկ կարծենք, խընդրաց կը գյենք էնա հնախար, ճուր կը խըմենք: Մենք էնալըմ գիրար կուզենք՝ մեր կըշտըներ ճըխթեր ենք հիրար, նա՛ իմ աջ կող պուրթ կեր, նա՛ էնու ծախ: Օրըմ անաբներ թոռեր պերած են, թալանծ են վեր հնախարին: Ես հանաճ գանցի ճուր խըմելու, ընգան թոռը վե, էք ընծի թոռերուց էխան: Դոր էնի ընգան թոռը վե, անաբներ էն դեխեն էկան խընդ մե, ես քընուց հիշարցա, էլ չըգյիտցա՝ անաբներ էնոր պըռնեցին՝ չըմ գյիտե ըսպանեցին, չըմ գյիտե՝ ի՞նչըխ էրեցին, չըմ գյիտե:

Ախչիկ ասաց. – Տըղա՛, տու՛ քընուց հիշարցա՞ր, չէ՞ չըխ փախար:

Ասաց. – Չէ՛, ջանըմ, ես հիշարցա, ես չըփախա, իմ կյանք կը տեր էնու կյանքին ուղուր:

Ախչիկ ինքն ինք մտածեց, ասաց. «Կէղի, չէղի, էսա տըղեն ա էն ոռց ջեյիըրան, օր խըն ձի կը ֆըռեր, թի չէ ի՞նչ գյիտեր, օր էսա թասպիր շինե»:

Ախչիկ ասաց. – Տըղա՛, ես ոռցեղենի միս տը չուտեր ու մարթու հիրիս տը չըպըշթեր: Եփ օր տու՛ չըս թողե, փախե, էն ժանանակ ես հոժար եմ, տը փըսակվիմ, իրկան տ'երթամ:

Ճեռ էպի լաճու վըզի պուր, լաճու էրեսներ պագյեց:

Ախչիկ ասաց. – Տըղա՛, ես իմ նպատակին խասա, լե կէղի, օր իմ խեր ձի չըտա քե, ընչի օր ես թակավորի մ'ախչիկ եմ, տու՛ պըռնագանդի մարթ մ'ես:

Տրդեն եսպես էնու վերվակ էխան, թակավորու նըշաներ, պաններ էրեվաց տակի խավըներ վերեն:

Ախչիկ ուրախութեն ծըռավ:

Ու ասաց. – Օրհնյալ է Աստված, ես մեկել իմ մըրագին խասա: Օր իմ ուզած մարթն էր, ես էրագի մեչ տեսա:

Մընաց, էլան, պառկան չում առավոտուն:

Առավոտուն լուր գըննաց խոր, օր ախչիկ դիրսվան իրիկ կենա:

Խեր շատ ուրախացավ:

Խըլիսուն վոգիր էկավ, տըղեն առավ, գըննաց:

Թակավոր իր ախչիկեն կանչեց, տարավ:

Ասաց. – Ախչիկ, ես լըսեր եմ, օր տու իրիկ կենես, ուրախութեն ծըռեր եմ, օղո՞րթ ա, սո՞ւր ա:

Ախչիկ ասաց. – Խա՛, դանդո՛, ես իրիկ կենիմ:

Ասաց. – Ասա, խենքյ՝ ո՞ր մեկ վոգիրի լաճ տ'աննես, ասա՛, վանդ պերենքյ, նըշանենքյ, փըսակենքյ:

Ասաց. – Չէ՛, դանդո՛, մենակ ես էն չալըղջին կառեմ:

Խեր ասաց. – Ախչիկ, մենքյ թակավոր ենքյ, էնի չալըղջի, մեր նամուսին չըկըպի էնոնց խետ պարեկմանալ, յան վոգիրի, յան փանչի՛մ լաճն առ:

Ասաց. – Չէղի՛, դանդո՛, չալըղջին կառեմ:

Էն ժամանակ ախչիկ գըննաց:

Խերն ինքյն ուր ասաց. «Կայնի ճամխեմ, էն չալըղջիք պերեմ՝ խի էնոնքյ ի՞նչ տեսակ միլանթ են, խա՞յ են, քո՞ւրթ են, մըռտը՞բ են, ի՞նչ տեսակ միլանթ են, իմ քանդըլից մըլիմ տուս, թ'երթան, օր ախչիկ էլ չըտեսի ու ասի՝ ես էսա կառիմ»:

Թակավոր ճամխեց, չալըղջին ու պապիկ առեց, էկավ:

Ասաց. – Տո մարթ, տու ի՞նչ մարթ եքյ: Մըռտը՞բ եքյ, խա՞յ եքյ, ի՞նչ եքյ:

Ասաց. – Թակավոր ապրած, ես թակավորի վոգիր եմ: Էսա տըղեն էլ թակավորի տըղա յա: Թե տու չըս ավտա՞ր, ահա իմ նըշաներ:

Ուր անքեն էպանց, վոգիրի նըշաներ շանց էտուր:

Տըղի սաքոն էլ օր խանեցին, թակավորական բանգրանդներ և նըշաներ վերեն կարուկ են:

Թակավոր ուրախութեն խելքից, մըտքից տուս էլան:

Ասաց. – Տըղեն էլ սիրուն, ախչիկն էլ սիրուն, թըխ առին գիրար ու վայելեն:

Թակավոր կանչեց էնոր ախչիկեն, առեց, էպիր:

Ասաց. – Ախչիկ, օր Աստված քյե էտուր, հեչ մեկ մարթուն չըտըվեր ա, էն էլ սիրուն, տու՛ն էլ սիրուն, էն էլ թակավորի տըղա, տու՛ն էլ թակավորի ախչիկ, գանցեքյ, մեկմըկու վայելեքյ:

Թակավոր էլան, տաս խատ ծի, տաս խագար ոսկի, բարխանա էտի խընդ ախչիկեն ու տըղեն, զորքով ճամխեց տըղի խոր քանդաքյ:

Քանդըլին օր մոտիըսցան, ջուլանք տարան թակավորին, թի՛ վոգիր էկավ՝ քու լաճն էլ, խարսն էլ խետ:

Թակավոր ուրախութեն խելքից, մըտքից էլան:

Թակավոր էպի, լաճու խարսնիս էրաց: Յոթ օր, յոթ գյիշեր ուրախութեն էրին, էնոնքյ խասան էնոնց մըրագին, տուքյ էլ՝ ծեր:





2. ԴՆՎՐԵՇՆԵՐ ԵՎ ՏՈՂԱՆ

Մե տղղե՛մ կեղի, օրըմ կելնի, կերթա՛ սար վեր կան գա՛լու: Կերթա՛, իրեքյ դնվրեշի կը պատահի:

Դնվրեշներ տղղային կասեն. – Արի՛, քյե փա՛րա տանքյ, մենքյ կը կարտանքյ՝ էսա մարմնա՛ր քա՛ր կը պանցվի, մըտի մեչ, մեկ կութի՛մ կա, առ էն կութին, արի՛: Չեղի՛ ծեռ տաս հա՛ւրուշ ապրանքյներ, դիր քա՛ր կը կոծվի, տա՛ւ կը մընաս մեչ, մեկ էլ էնու սեյրին մե կը թա՛լա յոթ ծովու կղզին:

Կասա. – Լա՛վ կեղի:

Եփ դնվրեշներ կը կարտան, քա՛ր կը պանցվի, տղղեն կը մըտի ներս: Կութին կը տընա ուր քո՛թ, աչք կընգի հա՛ւրուշ ապրանքյներ, ծեռ կը թա՛լա, ապրանքյըմ կը վիրուցա, վիրուցելու պես՝ քա՛ր կը գա՛ հիրար, էտա սեյրին էլ ըզդնվրեշներ կը վիրուցա, կը թա՛լա յոթ ծովու կղզին:

Տղղեն էլ՝ խոր-մոր մեկ տղղա յա:

Տղղի խեր, մեր իշկացին, օր տղղեն չըկա, հըմեն օր, հըմեն օր տղղի կըսկըծուն կերթեն տղղի հօդեն, կը լեն չուր հիրիկուն, հիրիկուն նոր կը գյեն ուրենց տեղ, պառկեն, քյընեն:

Տղղեն շատ կը մընա հինե, քիչ կը մընա հինե, մարթ չըգյինա, Աստված գյինա, մեկ էլ կիշկա, օր պատուխանի ծակըմ կա, օր կիշկա տեխ ծով: Աման ծակ պանցըր ա, ծով ցածըր:

Օրըմ տեսավ, օր տախտակըմ ծովու տալղեն էպիր պատուխանի տեն:

Տղղեն ասաց. – Մընամ էսա տեղ, տը մեռնիմ: Չէ՛, վոլլա՛, ծի թա՛լեմ էսա տախտղկի վերեն, յան տ՛ազատվիմ, յան տը խեղտըվիմ:

Տղղեն գինքյ էթա՛լ վըր տախտղկին, տախտակ պըռնեց, մընաց վըր էնոր: Քանի տղղեն առավ, տարավ հա՛ւրուշ երկիրըմ, ծըկան ավչիքյ եփ օր ծա՛ւկ կը պըռնեն, էն մեկ տեսավ՝ տղղեն վիրուց, էպի, իտուր կընգան:

Ասաց. – Կնի՛կ, տղղա չըկեր մե, Աստված մե մեկ տղղե մ՛տու:

Տղղեն շատ սիրուն, հըմեն մարթ կը գյեր բալըղչու մոտեն առտուր կենեն:

Օրըմ թակավոր վոզիրին կասա. – Քյելի՛, մեկ էրթանքյ էն տղղեն տեսնանքյ խի, օր կասին էմալըմ խորոտ ա:

Թակավոր, վոզիր կը գան, տղղին կը տեսին, օր շատ լավ, շատ խորոտ տղղե մ՛ա:

Վոզիր կուգա, օր տղղեն էտա մարթա՛ւ ծեռնեն առնի, տանի, ուր ախչիկ վերեն փըսակա, էնա էնու տղղա:

Վոզիր, թակավոր կը թոնին, կերթան:

Թակավոր վոզիրին կասա. – Իրավ, շատ սիրուն տղղե մ՛եր:

Վոզիր թակավորին կասա. – Թակավոր՛, ես էտա տղղեն էնու ծեռնեն տ՛առնեմ:

Թակավոր կասա. – Ինչպե՛ս տ՛առնես, զոռով չառվի, օրենքյ չընդուներ:

Վոզիր կասա. – Պերենքյ, ըստիպենքյ վերեն, ասենքյ՝ յան վոզիրի տըներ հըմեն պիտի առնիս, յան էտա տղղեն տաս մե: էնու փարա չըկա, ճարուհատ՝ տղղեն տը տա:

Օրըմ էտա ծա՛ւկ պըռնող կասա. – Կնի՛կ, պե էսա մեր տղղի խալվըներ թախթըփա՛, լըվա՛, մըկա էնու ջըլեր կեղտ կուկուն էղեր ա:

Մեր լաճուն կասա. – Տղղա՛, քու ջըլեր խա՛ն, թախթըփեմ, լըվամ:

Տղղեն կը խանա էնու ջըլեր, օր թախթըփա:

Մեկ էլ էնու քո՛թեն կութին կընգի տակ:

Տղղեն կութին օր կը տեսնա, կասա. – Հա՛յ, միրաթ կենաս, քյե խամար անլե՛մ ժամանակ իմ ջան վանվավ: Խի տա՛ւ ի՞նչ ես:

Տրդեն կուօին էպնց, աչկեց, օր մեկ ծալած մոմպատ հինե կեր: Քյըբրիթ էգնր, էթոխ հինե, տեսավ, օր էրկու անֆիդ ակսչիկ թըռան էնտեղ:

Ասին. – Տըղա՛, է՛, մե ընչի՞ կանչեցիր:

Տրդեն ասաց. – Ես ծե չըկանչեցի:

Տրդեն շատ գնրմացավ:

Ախչըկներն ասին. – Էտա մոմ օր վանեցիր, մե կանչեցիր, ասա՛ խի ի՞նչ կուզես, մեր թըլըսմ էնի ա:

Մեկէլ տըղեն փըլչեց վեր մոմին, մոմ ընցուց: Էտոնքյ կուրուսան:

Տրդեն ասաց. – Եսի շատ լավ պն մ՛ա, էնու խամար դանկըռներ կուզեն:

Մընաց օր մ՛երկու ընցավ, վոզիր մարթ դրկեց, ծուկ պըռնողին կանչեց, տարավ:

Ասաց. – Իմ տըներ տաս խազար ոսկի են, յան տաս խազար ոսկի կը տաս, տըներ կառես, ծեռ մոտեն կը քնչեմ, յան քու տըղեն կը տաս:

Մարթն գյընաց, փողոքեց:

Կառավարություն էլ ասաց. – Թակավորի անրն ա, յան տըղեն տը տաս, յան տըներ տ՛առնես:

Ծուկ ծախող տանցավ, էկավ տուն:

Մաղդեն էրեր էր, շա՛տ տըրտմեր էր:

Կնիկ ասաց. – Մարթ, տու ընչի՞ քու մաղդեն էրեր ես:

Ասաց. – Կնիկ, ես մաղդեն չէնեմ, ո՞ր տ՛ենա:՝ Մեկ տըղա կեր, էն էլ մեր ծեռնեն կառեն:

Կնիկ ասաց. – Մարթ, խըլղի տըղա էր, ծուկ քյե, ծուկ էլ էնոնց թըխ էղնի: Օր կառնեն, տու ի՞նչ տ՛ենես:

Էսա զըրուցի վերեն տըղեն մըտավ տուն:

Ասաց. – Էտա ի՞նչ ա, ծեր մաղդեն էրեր եքյ:

Կասա. – Վոլլա՛, վոզիր քյե մեր ծեռնեն կառի:

Կասա. – Ինչպե՞ս կառի:

Կասա. – Յան վոզիրի տըներ տ՛աննիմ՝ տաս խազար ոսկի, յան քյե տը տամ վոզիրին: Ես էլ տաս ոսկի չունեմ, հուստե՞ն պերիմ տաս խազար ոսկի:

Լաճ կասա. – Դանդի՛, գյընա՛ ասա՛ վանչ չէ մյուս օր տաս խազար ոսկին կը պերեմ, թող տըներ տա: Ա՛ռ պանըսներ, արի՛:

Մարթն զարմացավ, ասաց. – Ջանըմ, էսա տըղեն ո՞ր տեղեն տաս խազար ոսկի փնրա տը պերա, զէնի ես ծովուց պըռնեցի, պերի:

Ասաց. – Տըղա՛, էսա վոզիր մ՛ա, էտա պես սուք մ՛ասելուն պես մեր գյըլիխ կը գանի:

Ասաց. – Չէ՛, տու գյընա՛, գյընա՛, էսպես ասա:

Մարթն էլանվ, գյընաց, վոզիրին ասաց. – Պանըսներ տու՛, վանչ չէ, մեկէլ օր քու տաս խազար ոսկին կը պերեմ:

Վոզիր գյընաց թակավորին ասաց. – Թակավոր, իմ տըներ գանցին: Էկանվ, ասաց՝ վանչ չէ մեկէլ օր քու փնրեն կը պերեմ, պանըսներն էլ տարավ:

Մարթն տանցավ, էկավ, ասաց. – Վոլլա՛, պանըսներն պերեր են:

Լաճ գյընաց էնու հողի մեչ, քյըբրիթ էգնր, էտու մոմ, էնու էրկու անֆիդ էկան:

Ասաց. – Յե՛յ, տըղա՛, ի՞նչ կուզես:

Ասաց. – Էսպես պան ա պատահե, տաս խազար ոսկի փնրա կուզեն:

Ասաց. – Առավոտուն քյընից էլնես, պատրաստ ա:

Յիրիկուն խեր էկավ, ասաց. – Տըղա՛, հո՛ւր ի փնրա, խըլխուն պայման ա, օր պիտի տանեմ, տամ:

Տըղեն ասաց. – Խըլխուն պատրաստ ա:

Քյընավ չուր խըլխուն, տըղեն էլանվ վեր խըլխուն, տեսավ, օր տաս խազար ոսկին սիվտակ տոպըրկի՛մ մեչ կարած, շինուկ, էնտեղ տըրուկ էր:

Խոր կանչեց, էտու խոր: Խեր առեց, գյընաց, խամբըրեց վոզիրի հանեճ, տըներ մոտեն առավ:

Առավ էնու տան էլանվ, չէլանվ, քնչվավ վոզիրի տուն:

Տըղեն օրըմ կը նըստի էնու հողի մեչ, մոմ կը կըպուցա, էտա էրկու աներևութներ կը գան:

Կասա. – Ի՞նչ կուզես:

Կասա. – Ձի խամար փըշու՛մ խանցե՛քյ, օյի՛ն էրեքյ:

Էնոնքյ եփ օր բաշլայից գանել, խանդալ, հիսան խելքից, մըտքից կը խանեն:

Թակավորի ակսչըկե աչք վերեն կեղի, փանջարից թաննչա կենա:

Եփ օր կը փըչա, կուօին կը տընա ուր ծոց, թակավորի ախչիկ կը տեսնա, կասա. – Ես պիտի էն կուօին էնու ծեռնեն առեմ:

Վերչ ճամխեց, տըղային առավ, էկավ էնու մոտ:

Տըղային ասաց. – Ես քե շատ կը սիրիմ, տ'եղիս ծի սիրական:

Տըղային խանց կերցուց, գյինի խըմցուց, չուր տըղային խելքից էխան: Եփ օր տըղեն պառկավ դան, ինքն կուօին ջիբեն էխան, էտու տըղեն երկու մարթու քանակ, տարան, թալեցին էնու խոր տուն, ոչ ոք մարթ չակխավ:

Եփ տըղի խելք էկավ վերեն, ասաց. – Ես թակավորի ախչըկե մոտն էր, մըկա ինչպե՞ս էկեր եմ, ինգեր եմ ըստա:

Ծեռ էտուր ծոց, կուօին չըկա: Տըղեն կըսկըծու ուր խելք էթալ: Ինգավ չարսու մեչ, կը զըվըռեր, կասեր՝ իքի բալուղ, օն փարա⁴:

Տաննանքյ թակավորի ախչըկե վերեն:

Ախչիկ օրըմ սադրանգամի ախչըկներ, վոգրի ախչըկներ կը կանչա պերա, օր օյին էնա էնոնց խանար:

Եփ օր կը գան, սենյակի մեչ կը նըստին, հիրիկուն քըրբիթ կը գանա, կը թոնա մոմ:

Տեսավ, օր քանի որ մեկ ախչիկ կեն էնտեղ, էնչափ արար էկան, հըմեն մեկ առան մեյ մեկ ախչիկ, պառկան:

Ախչըկներն ասին. – Աստված քու տուն ավրա՛, էս ի՞նչ էրիր մեր գըլիխ:

Ախչըկներ՝ ամա՛ն-գամա՛ն, թակավորի ախչիկն էլ շիվարի, չըֆահմեր վըր ուր:

Մեկել ախչըկներ բոռացին, թակավորի ախչըկե խելքյն էկավ վեր ուր, փըչեց մոմ, ախչըկներ ազանավան:

Թակավորի ախչիկ վեր ուր մտածեց, ասաց. – Էսա ծի լայեղ չի, թասլիմ էնեմ ուր տիրոչ, ի՞նչ կենա, թըխ էնա:

Օրըմ թակավոր կը տիսնա էտա տըղին. չուլախ, ծըռու պես մըջ շուկին կը ֆըռեր, կը բոռեր՝ երկու ծուկ, տաս փարա՛:

Կը կանչա տըղին, կը տանի ուր մոտ, կասա. – Քու տարտն ի՞նչ ա, տու ընչի՞ ընցնա էղեր ես:

Ինքն կասա. – Ձի կուօի՛մ կեր, թակավորի ախչիկ ծիգնից առեր ա:

Թակավոր ախչիկ կը կանչա: Ախչիկ թակավորին կասա. – Ես հօղի մեչ նըստուկ տեսա, օր էսա տըղեն մոմ վանեց, ջուխտըմ ախչիկ էնու տեմ խանղցին: Ես էլ առի էնու մոտեն, ամա էնու մոտեն գյեչ պաներ տուս կը գան, մենք չընք կանա պանցուցե:

Թակավոր կառնի կուօին, կը տա տըղին:

Կասա. – Էտու մարիֆաթ ի՞նչ ա:

Տըղեն կուօին Եփ օր առավ, խելք էկավ վերեն, խելանցանգավ:

Քըրբիթ էգար, էտու մոմին: Երկու անֆիղ թըռան էն տեղ:

Ասին. – Յե՛յ, տըղա՛, ի՞նչ կուզես:

Ասաց. – Կուզեմ, օր թակավորին մե քիչ մըժելիք էնեք:

Եփ օր գարկին-խաղցին, թակավոր խելքից, մըտքից էլավ:

Թակավոր ասաց. – Իմ ախչիկ էսա տըղին պիտի տամ, հան սիրուն ա, հան էսա մարիֆաթ էնու ծեռն ա:

Ախչիկ էպի, փըսակեց տըղի վերեն:

Շատ քիչ ժամանակ մընաց, տըղեն ասաց. – Չէ՞ Ես խեր ունիմ, մեր ունիմ, մըկա իմ խեր, մեր ի՞նչըխ են անքեր, Ես տ'երթամ իմ խոր երկիր, խընդ իմ խեր-մեր:

Տըղեն էն հիրիկուն էսպես կը մտածա, թակավորի ախչիկ կասա. – Տըղա՛, ընչի՞ չըս քըններ, ի՞նչ կը մտածես, ի՞նչ ա քու տարտ:

Կասա. – Թակավորի՛ ախչիկ, ծի խեր կա, մեր կա, անլե՛ մ ժամանակ Ես կուրսեր եմ, էնոնք մըկա ի՞նչ կասկածի մեչ եմ, Ես տ'երթամ իմ խոր երկիր:

Թակավորի ախչիկ ասաց. – Որ տեղ օր էրթաս, չըխ ծի խընդ քե տը տանես, չէ՞ քու կնիկն եմ:

Մեկել հիրիկուն՝ պառկելու ժամանակ, մոմ կըպուց, երկու անֆիղ էկան:

Ասաց. – Ի՞նչ կուզես:

Ասաց. – Կուզեմ, օր մենք քընուկ էսա մեր տեղ ջըլով, իմ խոր տան մեչ, իմ հօղի մեչ էլնեմ: Առավոտուն էլնեմ վեր, ծի էն տեղ տիսնամ:

Եփ օր էնոնք կը քյեն, անֆիղներ զենոնք կը վերցին, էնպես կը տանեն էնու խոր տուն, էնու սենյակի մեչ կը տընեն:

⁴ Երկու ծուկ, տաս փարա (Ծ. Բ.):

Խեր ու մեր չէ՞ հըմեն օր կերթեն տղայի սենյակի մեջ կը լեն, առավոտուն կերթան, սենյակի տուռ կը պանան, օր էրթան ներս, կիշկան, օր էրկու խոզի ներս պառկուկ են:

Մեյնըկու կասեն. – Ձա՛նըմ, էսա տուռ փակուկ ա, էսա էրկու խոզին ո՞ր տեղից էկած, պառկած ա ըստա՛:

Կերթան, կիշարցընեն, կը տեսին, օր ուրենց տղեն, մեկէ կնիկ մ'էլ կա, տղայի կնիկ:

Շատ կուրախանան, կը խընդանան, օր տղան էկեր ա:

Տըղեն օրըմ կը մընա, էրկու կը մընա, ինքյ ուր կը խանցընա. «Ձա՛նըմ, էն էրկու դավրեշներ ի՞նչըխ էղան, չէ՞ որ ձի ասին՝ մե մտախան չէնես: Էն օր, օր ձի մըտուցին քարի մեջ, ասին, օր սեյրին ավրի, սեյրին մե կը թալա յոթ ծովու կղզին»:

Շուտըմ մոմ կը կըպուցա, էրկու աֆիղներ կերևան, կասեն. – Ի՞նչ կուգես:

Կասա. – Էն օր, օր ես ծեր կութին պերի, ջուխտըմ դավրեշ կուրիսան, կուգեն, օր էն դավրեշներ պերեքյ:

Կասեն. – Տըղա՛, մենքյ շատ գոռ կը պերենքյ: Երթանքյ, թե պերինքյ՝ աղեկ, թե չէ՛ մենքյ էլ չընքյ կանա գա: Յոթ ավուր վերեն էկանքյ՝ էկանքյ, չէկանքյ էլ ծեռ մեր մոտեն քաշի:

Գացին: Յոթ օր օր թըմըմավ, առան էրկու դավրեշ, էկան:

Դավրեշներու մուրսըներ էկի, կեղտոտած:

Տըղեն տարավ պաղնիս, մեկ թամիզըմ լողկըցուց, խալավ խագուց, էպի:

Էպի, մեկ խարցում էրաց:

Ասաց. – Դավրեշներ, էնտեղ ի՞նչ տեսակ գացիքյ, ի՞նչ տեսակ էկաքյ, ի՞նչ կեր էնտեղ, ի՞նչ չըկեր:

Ասաց. – Տըղա՛, էնոնց թակավոր էն տեղն էր, աջնի⁵ թակավորն էր: Օրական մեկ անգամ մե կը կանչեր էնտեղ մախքամա: Օրական էրկու անգամ էլ մե ծեծ ու փետ կեր, թե՛ տուռ ընչի՞ իմ կութին տըվիքյ տանել: Մեր հալեն էսին էր:

Տըղեն դավրեշներուն հըմեն մեկին չորս-խինգ խագար ոսկու չափին փարա էտուր, խըրկեց ուրենց տըներ:

Տըղեն տարի՛մ, էրկու մնաց: Խեր-մեր մեռնելեն ետ ուր կութին կուրիսեց:

Գիշեր, ցերեկ էտա կութու վերեն կը մըտածեր, ապա՛ ծեռնեն գացեր ա:

Քանի՛մ տարի մընաց, էնու ախչիկ մ'էղավ:

Ախչիկ էղավ քսան տարեկան, օրըմ ախչիկ կը տեսնի՛ մեկ մարթ մ'էկեր ա հավուզի վերեն, թասըմ կա էնու ծեռ, պըստիկ թասըմ, կը տա ճըրու առեճ, կը լըցա ուր ծոց:

Ախչիկ ասաց. – Ձա՛նըմ, էսա տղեն ծո՞ւռ ա, թասով ճուր կը լըցա ուր ծոց:

Ախչիկ կերթա, տըղին օր խառցընա, կը տեսնի չէ՛ թաս քանի տա ճըրու հառեճ, թասի ճուր կեղի ոսկի, կը տառտըկա ուր ծոց:

Ախչիկ տըղին կասա. – Ի՞նչ տամ քյե՛՝ էտա թաս տաս ձի:

Տըղեն կասա. – Տու կը խիս, օր իմ մոտ հիլին փարա յա, ես փարեն ի՞նչ էնեն, օր պառկես մո ձի, թաս տը տամ քյե, չըխո՛ չըմ էտա:

Պառկավ, մոտեն թաս կառի, կը տըղովնա:

Եփ օր մարթ տեսավ, թի ախչիկ տըղով ա, էլավ մըլեց տուս:

Ասաց. – Էլի՛, իմ երկրից գընա՛, մե ամոթ ա:

Ախչիկ գընաց հուրուշ երկիրըմ: Մեկ ճամխի վերեն խա՛՛մ շինեց, օր էնու պատեր հըմեն ոսկի, էնու տանիս հըմեն ոսկի: Խանին էրկու տուռ շինեց, էրթըցող, գալացողին փարա կը տեր, կերթեն:

Օր մ'էտա մարթու դավրեշներ կը գան, կը պատահեն էտա խանին:

Էն ժամանակ ինչ կը խեն, կը տեսնեն, օր խան հըմեն ոսկով շինուկ ա:

Կը տանան գան, կը պատահեն օրըմ էնոնց կութու տիրոջ մոտ, կը տեսնեն, օր էն մարթ ֆուխարացեր ա:

Կասեն. – Յե՛՛, մարթ, տու ընչի՞ էսպես ֆուխարացեր ես:

Ասաց. – Չէ՞ կութին կուրիսուցեր եմ: Քանի էն կութին մը ձի էր, ձի պես հարուստ չըկեր, որքան ուզեր, ձի փարա կեղեր:

Դավրեշներն ասին. – Յե՛՛ մարթ, մենք էկանքյ, մեկ տեղըմ սարե՛մ շիներ ա, հըմեն ոսկի ա էնու պատեր: Երթըցողին, գալացողին ճանգ-ճանգ ոսկի կը տա:

Մարթն ասաց. – Օր ընցուկ ա, ես պիտի էլնեն, էրթամ էն տեղ, խի չե՞մ կանա մե քիչ փարա պերի:

⁵ Ջինների թագավոր (Ճ.Բ.)

Գյրնաց, գյրնաց, սարեն կընդանվ, օր ոսկով շինուկ էր:
Ախչիկ ըզխեր ճանչըցավ, աման խեր ախչըկան չըճանչը-
ցավ, ընչի՝ օր ախչիկ մարթու խալավ էր խազյե:
Խեր տարավ էնու սենյակի մեջ, լավ պատվեց:
Խերն ասաց. – Էսա ոսկե տուն, ոսկե պատեր ի՞նչըխ ես
շինե:

Ախչիկ ասաց. – Ընծի թասըն կա, էնորով ճուր լըցեմ, տան-
տըկեմ, կէլնի ոսկի: լըցեմ, տանտըկեմ, կէլնի ոսկի: Էնտուց շի-
նեցի:

Ասաց. – Ի՞նչ տամ քյե՝ տու էտա թաս տաս ձի:


Ասաց. – Թասն առեր եմ պառկելով, տուն էլ պառկի, թաս
տամ քյե:

Խեր ասաց. «Վոլլան, ըստան ձի վո՞վ կը ճանչընա, ես տը
պառկեմ, թաս մոտեն առնիմ»:

Էլանվ, շըլվար էցկեց տակ, ոռ էպաց, ախչիկ չնփանլե մ՛եզան
վըր ոռուն:

Ասաց. – Տու ի՞նչըխ ես, տու մարթ մ՛ես, թասի խամար ոռըտ
կը պանաս, ես օր ախչիկ մ՛էի, թասի խամար չըպառկե՞ խընդ
ջըհելի՛մ: Տու էլան, էնու խամար ձի քու երկրեն, քու տընեն տուս
մըլիցի:

Նոր էնտեղ խեր ճանչըցավ ուր ախչըկան, փընտըռեց, էն
թասի տերն էլ էպի, լաճուն պըսակեց վեր ուր ախչըկան, ապըր-
վան մեկտեղ:



3. ՍԱԼԻՍ

Թակավորըն կեղի, կը նըստի, կը մըտածա, կասա. «Չըկա
մեկ մարթըմ, օր մանանլ մ՛ասա ձի, գանխ-գանխըմ ուրախնամ,
գանխ-գանխըմ տըռտմիմ»:

Իր վոզիդին ասաց թե՝ էմանլ մարթըմ կընդի:

Քանըքյի մեջ զըվըռեցին, չըկարցան էնպես մարթըմ կընդին,
օր մանանլ մ՛ասեր թակավորին, օր բանգի գանխ տըռտմեր, բանգի
գանխ ուրախներ:

Քանըքյի մեջ դանլանլ կանչեց, թե՝ մեկ մարթըմ թող գան, թակա-
վորին մանանլ ասա, օր թակավոր բանգի ուրախնա, բանգի տըռտ-
մի, էնոր ամսական կը տամ:

Մեկ մարթ մ՛ասաց. - Ես կանամ էնպես խեքան մ՛ասեմ, օր
էնի բանգի տըռտմի, բանգի ուրախնա:

Ասին. - Քու անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անուն Սանլիմ ա:

Լուր տվին թակավորին, օր քյե խամար մեկ մարթըմ կըն-
դանըյ:

Թակավոր ասաց. - Կանչե՛ք, պերե՛քյ:

Կանչեցին Սանլիմ, տարան թակավորի մոտ:

Թակավոր ասաց. - Դե՛, Սանլիմ, պատմա՛ խի քու պատմու-
թյուն ի՞նչ ա, օր ես բանգի բիր ուրախնամ, բանգի բիր տըռտմիմ:

Սանլիմ ասաց. - Թակավոր ապրած, օր տուն ըսկըսեցի
կըռիվ էնել, դուշմընի անքըրի մեջ մեկ մարթըմ կեր ծիավոր, չար-
խանջի էր: Ինքյն կը գյեր քու անքըրի մեջ, չուն հիրիկուն էրկու
խարիր մարթ կը կոտորեր, հիրիկուն անվնաս կերթեր: Չըկեր մեկ
մարթ քու անքըրի մեջ, օր էնու տեմ առեր:

Թակավոր ըսկըսավ տըռտմիլ:

Ասաց. - Է՛, Սալիմ, ապա ի՞նչըխ եղավ, էտա մարթու տեմ չառա՞ն:

Սալիմ ասաց. - Չէ՛, թակավոր ապրած: Իմ սիրտ չըհամփե-
րեց, ես գյընացի, կուճանդարի մոտեն ծի մ'ուզեցի ու ընծի գենք
առա, գյընացի էն մարթու տեմաց: Էն օր չուր հիրիկուն ես, էտա
մարթ կըռվանք, ոչ ես կարողացա գէն ըսպանել, ոչ էնի ծի: Յէնօր
քու անքար մընաց անվնաս, մարթ չըսպանվավ:

Թակավոր ուրախացավ:

Ասաց. - Մընաց չուր մեկէլ օր, էն մեկէլ օր էլանք կըռվանք,
ես էտա չարխացի մարթուն ըսպանեցի: Ըսպանելու ժամանակ
դու չընդի անքար իմ չորս պիլիք պըռնեց, ընծի պըռնեցին:

Թակավոր ըսկըսավ տըռտմիլ:

Ասաց. - Չի օր պըռնեցին, տարան ուրենց կուճանդարի
մոտ: Կուճանդար ընծի չըսպանեց: Պերին, սանդուխըմ չինեցին,
էրկու, իրեք ավուր խաց տըրին մեչ սանդուխին, պերան
կոծեցին, ընծի թալեցին ծով:

Թակավոր ըսկըսավ տըռտմիլ:

Ասաց. - Էլ չեմ գյիտի՞ քանի՞ օր մընացի ծովու վերեն, մեկ
էլ տեսա՞ իմ սանդուխ կը տիպներ քարին, թըրըխկոց կէլներ: Ես
հիմացա, օր թե կարա էր: Ծեռ ճըխթեցի, սանդուխի տուռ պացի,
իրիչկեցի, օր մեկ կըղզի մ' ա ծովու մեչ: Եսն էլ էլան, կանան, ծի
թալեցի քարի վերեն:

Սանդուխն էլ պերի ծովու հանփ, մեկ քարի տակ պախեցի:

Թակավոր ըսկըսավ ուրախանալ:

Ասաց. - Թակավոր, ես գացի ծառերու մեչ, անոթի էի, գացի,
Ֆեքի կուտեր: Մեկ էլ տեսա, օր մեյմուներ ընծի պըռնեցին: Տա-
րան էնոնց մեծավորի մոտ: Մեծավոր կնիկ կապիկ էր, ինծի թա-
րիՖ էնելով ծեռնով, ոտնով փըսակեց իր վրա: Ինչպես
պըռնավոր, չորս խատ մեյմուն դիր էրթամ, ընծի խետ կան կը
գան, օր չըփախիմ: Իմ յոթ տարին էն տեղ լըմեցավ:

Թակավոր ըսկըսավ տըռտմիլ:

Ասաց. - Վերժ ծի տըղե մ'էլանվ էտա մեյմունից, հան իմ լե-
զուն սովրավ, հան մեյմունի լեզուն:

Ես տըղին ասի. - Քու մոր ասա՞ էտա մեյմուներ չըտընան
խընդ ծի, ես ազատ կան գան: Չորս պիլիք ծով ի, ո՞ր տեղ պիտի

փախիմ: Մեկ էլ տու իմ ջիգարն ես, քյե ի՞նչըխ թողնիմ էտա տեղ
վեր, փախիմ: Ծանթան էլ չըկա:

Տըղեն մոր ասաց. - Իմ խոր ազատ թող ապրի: Թե մեյմու-
ներ խընդ ինոր գան, գինք մեկ տեղ կը թալի տակ, ըսպանի:

Մեր էտա մեյմուներուն էլ հրաման չէտուր, ես մընացի
ազատ:

Ես ըսկսեցի պըտուղ քանդել, լըցի սանդուխի մեչ, օր պատ-
րաստվիմ, փախիմ: Մըտա սանդուխի մեչ, փետըմ առա իմ ծեռ,
տըղի քարին, սանդուխ ճըխթեցի, սանդուխ էլանվ ծով:

Ձույնք սովին կընգան, կնիկ մեյմուներ առավ, էպե ծովու
հանփ, օր ընծի պըռնեց: Ես գանացեր էր ծովու մեչ: Ետի իմ կըս-
կըծուն իմ լաճ էն տեղ ճըղճըղեց: Սանդուխի տուռ վըր ծի կո-
ծեցի, քանին ինգան, սանդուխ քըչեց, առեց տարավ: Էլ չեմ գյի-
տի խի մե՞ օր իմ մընացի, թի քսան: Մեկ էլ տեսա, օր էնէլ քարին
կը տըղի: Պացի, աչկեցի, օր կըղզի մ'էր: Ես էլան տուս, աչկեցի,
թե մեյմուներու տեղ չէ՞ր, տեսա կըղզու մեչ մարթ չըկեր:

Թակավոր ըսկըսավ ուրախանալ:

Ասաց. - Գացի ծառերու մեչ կան էկա, պըտուղ, պան կերա,
խկի պան չըտեսա: Մեկ էլ էկա ծառի՞մ տակ, տեսա մեկ մարթըմ
պառկեր էր էն տեղ, խիվընդի պես կը տըքեր:

Չի ասաց. - Մարթ, քու անուն ի՞նչ ա:

Ասի. - Իմ անուն Սալիմ ա:

Չի ասաց. - Սալիմ, տու քու Աստված սիրես, ծի էտա արևի
հանճըվեն վերու, տար, թալ էնա ծառի խով:

Ես չըկեցի էտա մարթ: Ետի էնու ծեռքեր լաստիկի պես մե
չորս-խինգ փանք փանթեց իմ մեչաց, մընաց իմ քանակ:

Ասի. - Է՛՛՛ տակ իմ քանակեն:

Ասաց. - Չէ՛, ես չըմ էճներ, էնլե՞մ ժամանակ ես պառկուկ եմ,
մեռա, խընժ քու քանակ էլ անուշ տեղ ո՞ր տեղ կը կընդիմ: Չի ոտ
չըկա՞ քյելիմ:

Կան գան, նըստիմ, պառկիմ, գի իմ քանակն ա, քանկից
չէճիր, չըմ կարողանա հանցըկել:

Թակավոր ըսկըսավ տըռտմիլ:

Ասաց. - Թակավոր, էրկու տարի էտա մարթ մընաց իմ քա-
նակ: Էրկու տարուց ետ քանի՞մ տունգ խաղող կեր էտա կըղզու
մեչ, եսն էլ մըտածեցի, իմ խելք էնպես խասավ, խաղող պերի,

քարի՛մ փոսի մեջ քաննեցի ու եղավ շիրա, մընաց արևու տեմ, եռաց, տանցավ գյիհնի:

Էտի ասաց. - Սանի՛մ, էտի ի՞նչ կերակուլ ա՛ կը շինիս:

Ասացի. - Էտի մեր էրկրի կերակուլն ա: Կով օր ուտա, ծեռ, ոտ կէլնի, մարթ կը քելնա:

Գանցի, տեսա, օր թըթվեր էր լավ: Մախսուս պերանս տըրի մեջ, չէ՛, չեմ խըմեր, էտի գո՛ իմ քանակը վեր կասա. - Սանի՛մ, փըշու մ՛էլ թո՛ղ ձի:

Ասի. - Չէ՛, տո՛ւ շատ բեբախտ մեկ մարթ մ՛ես, չըմ իտա քյե, օր քյե ոտ, ծեռ էլնի:

Վերջ ասի. - Արի՛, տո՛ւ խեղճ ես, արի՛ մե քիչ էլ տո՛ւ խըմա՛:

Էնու պերան իտի գյիհնու մեջ, քյեֆուվըմ խըմեց: Տարա, տըրի արիվու հանեծ: Շարխոսցավ, էնու ծեռներ իմ մեչանց պոխորեն թուլցավ: Փըռթուցի քանկես, գանկեցի գյետին:

Թակավոր ուրախցավ:

Էրկու-իրեք օր էլ ես մընացի էն տեղ, մե քիչ պան-ման ժողվեցի, տըրի սանդոխի մեջ, ասի. - Էրթան, էսա տեղ ձի վոժ չըկըտրա, էրթան մեկ էրկիր մ՛էլնեմ, օր մարթ, հիսան կընդղվի:

Նըստա սանդոխի մեջ, տո՛ւ կոծեցի, քանին առավ, քելից:

Էլ շատ մընացի ծովուն մեջ, քիչ իմ մընացե, չեմ գյիտե, հիմացա, օր սանդոխի կող կը գաներ քար: Պանցի, աչկեցի, օր խովիվըմ գո՛ օխչար տըվե հանճև, կարածեր:

Ասի. - Վոլլա՛, էրկիր կընդա՛:

Թակավոր ուրախցավ:

Ասաց. - Վերճ էլնա տո՛ւս, իմ սանդոխ պախեցի ծովու հանի, էլնա, գանցի դեխ օխչար: Խովիվ ձի տեսավ, ես գըրնացի խընդ խովիվ, խովիվ էկավ խընդ ձի: Խովիվ ինձի պըռնեց, տարավ օխչարի մոտ: Կաթ կըթեց մեկ ճոչ տաշտի՛մ մեջ, խաց պըրտեց ինե, գըտնալ մ՛էլ էտու իմ ծեռ: Կերա, կերա, քիչ պան կերա, չըկարցա շատ ուտել:

Խովիվ ընձի խառցեց. - Քո՛ւ անուն ի՞նչ ա:

Ասի. - Իմ անուն Սանի՛մ ա:

Ինձի պըռնեց, տարավ ուր տուն: Ուր տուն հեր էր, ձի իտիր ներս, ճանցի քար մ՛էտու տեմ:

Ես իշկացի, օր տաս-քսան մարթ էլ պըռներ էր, պիրեր էր էսա տեղ:

Ես խառցուցի էտա մարթերաց. - Տո՛ մարթեր, էսա տեղ ի՞նչ կէլնեք:

Ասաց թե. - Վոլլա՛, մե պըռնե, պիրե էսա տեղ, հըմեն հիրիկուն մեկ մարթ կը խաշա, կուտա:

Թակավոր ըսկսավ տըռտմիլ:

Ասաց Սանի՛մ. - Գիրիկուն խովիվ առավ օխչար, էկավ, տո՛ւս էպանց, օխչար մըլեց ներս: Կրակ էրաց, էնոր հերկըթե ճոչ կոճան կեր, էտիր կրակի մեջ, կարմրավ: Աչկեց խի ո՞ր մեկ կլավն էր, կոճան տըկեց էնու սիրտ, քանակ վե էխան տո՛ւս, պըռնեց կրակի վերեն, խաշեց, կերավ: Եփ օր ես էսա տեսա, ախ ու սարսափ ձի պըռնեց, վանխեցա: Խըլխուն առավ ուր օխչար, էլնա տո՛ւս, էլըմ քար էտու տեմ, գըրնաց: Թու չարա չընք կանա էնե, օր էլնինք տո՛ւս: Ես մտածեցի, ասի, թե՛ մեկ ճանբախըմ կընդինք, էսի մե հըմեն էլ տո՛ւտա: Գիրիկուն էկավ տուն, մեկէլ էնպես կերավ: Պառկավ քանկի վերեն ու քըրնավ: Ես էլ էնու կոճնի ծեր տըրի կրակ, լավըմ կարմրավ: Էտա խովիվն էլ թափագոյոգ էր, մեկ աչք ուներ վըր ճակտին: Էլնա, կոճնի ծեր տըրի մեջ իտոր աչիչ, սըխմեցի: Ինքն հիշարցավ:

Էլնավ, ասաց. - Ախ, Սանի՛մ, ախ, Սանի՛մ, էսա քո՛ւ էրած պան էր, էքան օր մարթըմ չէր մըտածե էսա պան էներ:

Ասաց. - Լա՛վ, տո՛ւ իմ ծեռեն դո՞ր պիտի ազատվեք: Ես կէլնեմ խընդ ծեր ջան:

- Մենք էլնեք, փախանք օխչարի մեջ, օր մե չըպըռներ: Օր պըռներ, կը ճըղճըղեր: Մընաց չուր խըլխուն, էլնավ, քար էտու ետ, ոտ մեկ իտիր ճանխու մեկ յան, մեկն մեկէլ յան, օխչար մեկ մեկ կընցուցի տո՛ւս, օր մենք չըփախենք, չուր օխչար խըլըսավ: Քար էտու հանեծ, ինք մընաց ներս: Էն ժամանակ մե էսպես կը լնարա, էտ կողմ կը տանի ոտաց պեճի խետ: Չուն հիրիկուն չըկարցավ մե մեկին պըռներ:

Ասաց. - Լա՛վ, չեմ կանա ձե պըռնեմ, ամա ծե տը թոնիմ էսա տեղ վեր, չուն տո՛ւ անոթի մեռնեք:

Ասաց Սանի՛մ. - Օր մընացինք անոթի, էն մեկէլ օր ես ասի՛ ինգըրներ, տո՛ւ կանաք տանակըմ տաք ձի, օր ես ճանբախըմ կընդիմ, էսա դո՛ւց ազատվեք:

Ինգըրի մեկ ասաց. - Խա՛, խըն ձի մեկ տանակըմ կա:

- Թակավոր, էտոր օխչըրի մեչ մեկ ճոչ քոշըմ կեր, քոշու անուն տըրեր էր Կավար: Ես տանակ տարա, քոշու վիզ մե քիչ կըտրեցի, փոր ճղեցի, ոտներ, ծեռներ, գըլիխ ակընջկընախառն փոսթ խանեցի: Չուն խանեցի, լիւս պանցվավ: Խո՞վիվ էլանվ, տիւռ էպանց, մեկ-մեկ օխչար ուր ոտաց մեչեն կը թոնա տիւս, ինքըն էլ ինգե օխչըրի հիտև, էլանվ տիւս, տիւռ կոծեց:

Ես էլ իմ ինգըրներուն ասի. - Էկե՛ք, էսա փոսթի մեչ էս մըտ-նիմ, տիւքը կարեք, էղիմ քոշու ծևով, էլնեմ տիւս, օր ծե պըռծու-ցեմ:

Թակավոր ուրախցավ, թե էսա մարթ ուր խելքոյով պիտի պըռծընի:

Ասաց. - Մընաց չուն հիրիկուն, օխչար առեց, էկավ, մըլեց ներս, ասաց. - Սանլիմ, Սանլիմ, էսա էրկու օր ի անոթի էս, մընաց մեկ էրկու օր էլ, անոթութեց պիտի ընգիս էն տեղ, էս գան, քյե պըռնեմ, ուտեմ:

Ես ծեմ չըտըլի: Մընաց չուն խըլխուն, խըլխուն էլանվ, օխչար կը թոնա տիւս: Ես էլ ոտաց, ծեռաց վերեմ քոշու պես կերթամ ու կը վանխեմամ, չըմ գըխչընա էնու էրկու ոտաց մեչեն ընցնիմ:

Թակավոր տըռտըմավ:

- Ես գանցի, էնոր մոտեցա, օր էրկու ոտաց մեչ տ'ընցիմ: Իմ կոտոշ առավ էնու փոր, ծեռ էտու ծի, աչքեց, օր Կավար քոշն էմ, չիմացավ, թե էսն էր:

Ասաց. - Ախ, Կավար, քիւ տեր աչքիրուց անլի էղի, տիւ մընացեր էս անտեր, անտիրական:

Ես էլան տիւս, պըռծա, իմ կաշի պատռեցի, էլան տիւս, ասի. - Խո՞վիվ, խո՞վիվ, ինչպե՞ս ա, ազանովա՞, թե՞ չէ:

Ինքըն գարմացավ, թե՛ էսա ի՞նչըխ ազատվե, գանցե: Իմ ծե-նի խետ, մեկէլ ծի կանչեց, ասաց. - Սանլիմ, Աստված սիրես, մեկէլ ծի ծեմ տաս:

Ասի. - Գո էս ըստան էմ, ի՞նչ կուզես:

Վանգավ իմ ծեմի խետ խըն ծի: Օր վանգավ խըն ծի, տիւռ պանց մընաց: Էն մյուս ինգըրներ տիւս փախան:

Կանչեցի ինգըրներուն, ասի. - Ինգըրներ, մե մեկ մեծ քար առեք ու զանեք էսա մարթուն ու փախեք, չընգիք ծեռ:

Մե մեկ-մեկ քար առին, զարկինք ու փանխանք, զարկինք ու փախանք, չուն սպանեցինք:

Սորա ասի. - Ինգըրներ, էկե՛ք էտոր մալ, էտոր օխչար վեր մե պանծանեք:

Օխչըրներ պանծանեցինք մեր վըրեմ, հըմեմ մեկին տասնու-խինգ խատ խասավ:

Թակավոր ըսկսավ ուրախնալ:

Սանլիմ ասաց. - Թակավոր ապրած, էս հան էղա պատճառ՝ քիւ գորքն ազատեցի, հան էնքան անծեր, օր խովըլու ծեռն էն, էնոնք ազատեցի:

Թակավոր էնոր մեծ փանու մ' էտու:





4. ԼԱՎՈԳ, ՀԱՍԸԴ

Թակավորը կեղի, էնոր մեկ տղղա կեղի: Էն տղղեն կեղի տասնուխինգ տարեկան, օրը կերթա քաղքի մեչ կան գանլու:

Կը տեսնի հըմեն մարթ էմալ քաղքի մեչ ջուխտ-ջուխտ կան կը գան:

Կը գա տուն, խոր կասա. - Դանդո՛, քաղքի մեչ ես հեսօր գանցի կան գանլ, տեսա հըմեն ջուխտ-ջուխտ կան կը գան, էնոնք ի՞նչ են:

Թակավոր կասա. - Ջավա՛կս, էտոնք հիրարու դաստաբրա են: Իրարու ծեռներ պըռնած կան կը գան, վըր իրարու կուրախանան: Էնպես կանկեք, քոչեք կան կը գան:

Կասա. - Դանդո՛, ես էլ ծի մեկ դաստաբրա տը պըռնեմ, խետ կան գան, իմ սըբըր չէլնի:

Թակավոր կասա. - Լավ կեղի, գըռնա՛ մեկըմ կընդի՛, էնու խալալ-խագուստ կտրի, կերցո՛ւ, խըմցո՛ւ, թըխ եղի քյե ախաըրգյիր, խըն քյե կան գան:

Թակավորի տղղեն էլա՛վ, գըռնաց չարսու մեչ: Աչկեց՝ մեկ ջըհել տղղե մ՛են դեխեն կը գյեր:

Տըղեն կանչեց:

Տըղեն տանցավ իշկաց, օր թակավորի լաճն էր: Տըղեն վախեցավ, թե թակավորի լաճ ընչի՞ ծի կը կանչա:

Թակավորի լաճն ասաց. - Մը՛ վախենա, տղղա՛: Ես կուզեմ, օր քյեգ տանեմ, էնեմ ծի ախաըրգյիր:

Տըղեն ասաց. - Լավ, ես հալա շնորհակալ կեղիմ:

Ասաց. - Քու անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անուն Լավոգ ա:

Թակավորի տղղեն առավ Լավոգ, գըռնաց պանդիս: Պանդիսից էլան, գանցին տուն, մեկ կանոնավոր ծեռքըմ սանդրազամի շոր խագուց, ու հիրարու ծեռ պըռնեցին, ինգան շուկի մեչ, կան կը գան:

Հիրիկուն էկան տուն:

Թակավոր ասաց. - Ջավա՛կս, քյե ախաըրգյիր պերի՞ր:

Ասաց. - Դանդո՛, ծի ախաըրգյիրըմ պերի, համա՛ խընդ իմ մոր ծնած զավակ հա՛վելի լավ ա:

Խերն ասաց. - Պի՛, մեկ նայեմ:

Էպիր: Թակավոր տեսավ, օր էնպես խորոտ ջըհել մ՛ ա, օր աննման ա:

Թակավոր սիրով ընդունեց:

Լավոգ ինքն վըր ուր մտածեց, ասաց. «Փա՛ռք քյե, Աստված, ես վիր տղղեն էր, որտեղ էկա, ինգա՛: Օր Աստված տա, չասա՛ տու վի՞ր տղղեն ես»:

Քանի՛մ տարի թակավորի ախաըրգյիրըմ էնոնց մատանին էրագի մեչ փոխած են:

Տըղեն հիշարցավ, տեսավ օր ուր մատնիկն փոխված էր, էրագի մեչ տեսած ախաըրկա մատնիկն էր: Վըր էն ախաըրկեն սիրահարվավ:

Էլ ոչ խաց կուտեր, ոչ ճուր կը խըմեր, գյիշեր-ցերեկ տրտում էր:

Թակավոր օրըմ կանչեց տղղին, ասաց. - Ջավա՛կս, տու շատ տխուր-տրտում կերևաս ու շատ լըղճորվեր ես, քու մանդեն ի՞նչ ա, չուն մըկա տու ուրախ էր, քյե ի՞նչ ա էղեր:

Խոր չասաց: Ասաց. - Խիվանդ եմ:

Խեր հեքըմնիր էպե, նայեցին, օր սուք կասեր՝ սիրու էր առե:

Թակավոր ինչքան էրաց, տղղեն չասաց՝ խի ինչի՞ վերեն ա սիրու առե:

Վերչ՝ թակավոր կանչեց Լավոգին, ասաց. - Գըռնա՛, քու ախաըրգյիրից խանցըրա, տուրք դաստաբրա եք, բալկո քյե ասա, ծի չասա էնու խիվընդուրթին ինչից ա:

Լավոգ գըռնաց Համըղի հօղեն:

Ասաց. - Համըղ, էտա քու տրտմութեն, ցավ ծի ասա: Կա-

սես՝ ասա, չըս ասի՝ կը թոնիմ կերթամ, էլ քյե ախպըրուօին չեն էներ:

Թակավորի տղղեն շիվարած մընաց: Ասաց. «Ասե՛մ, իմ խեր, մեր կը լըսնան, ծի ամոթ ա: Չասե՛մ՝ իմ ախպըրոյի կերթա»: Ասաց՝ տ'ասեմ:

Ասաց. - Լավո՛գ, իմ տրտմութեն գինա՞ս ինչ ա: Ես երագի մեչ մեկ թակավորի ախչիկըմ տեսեր եմ, իմ մատնիկն խընդ էնու մատնիկին փոխեր եմ: Էնու սիրուց՝ սիրու եմ առե, էն պատճառ՝ խիվընդցեր եմ:

Լավոգ գյընաց, թակավորին պատմեց, ասաց. - Տըղայի տրտմութեն էսա պանից ա, երագի մեչ թակավորի մ'ախչիկ տեսեր ա, սիրահարված ա էնու վըրեն:

Թակավոր յոթ տարի աշխատավ, չըկարցավ, օր ախչիկ պիրեր:

Օրըմ Լավոգ ասաց. - Թակավոր, մեկ քիչըմ ասքար տուր խընդ ծիկ, մի տարվա մ'էլ գախիրա տուր, ես երթամ, թի կարցա տը պերիմ, թի չըկարցա, թըխ չէղի:

Թակավոր ասաց. - Շա՛տ աղեկ, թի էսպես պարիրարութիմ էնես, իմ ճոչ տղղեն տիւն ես:

Թակավոր ասքար էտուր, գախիրա էտուր էնոնց տարվա՛մ: Աստված կանչեց ու էլավ ճամբախ: Խետն առեց Զամըդ ու ասքըրներ:

Շատ, քիչ գյընաց, շատ, քիչ Աստված գյինա, մեկ գյիշեր պառկեր էր Լավոգ, երագի մեչ մեկ մարթըմ տեսավ: Էտա մարթ էտոր ասաց. «Վա՛ղ ծեր հանե՛մ մեկ ճոչ սարըմ կա: Չէղի էն սարի մեչ թափեք, տը վնասեք»:

Առավոտուն էլավ, էպարց, քըշեց: Խասավ սարի մոտ, հեվար էր:

Լավոգ ասաց. - Տը քշեմ, սար ընցեմ: Էսա սար մե վնաս կա:

Թակավորի լաճն ասաց. - Չէ՛, ջա՛նըմ, ամլե մ'ասքար գա խընդ մե կա, ի՞նչ վնաս տ'էղի:

Թակավորի լաճ թափեց սարի մեչ:

Էն տեղ վըրաներ գարկին, պառկան: Զամա Լավոգ երագի մեչ օր տեսեր ա, չըգըխշընա քընի:

Մընաց չուր կեսգյիշերին, Լավոգ տեսավ օր հա՛, ծեն կը գա վըրաներու մեչ:

էլավ, գյընաց վըրաներու մեչ աչկեց, տեսավ, օր մեկ մարթըմ էկե, չու՛մ եռու՛ն ասքար հավել կա, ճարտեր ա:

Գյընաց մարթու հանե՛մ:

Ասաց. - Ջա՛նըմ, քու անուն տու, խի ի՞նչ մարթ ես, էկեր, ես իմ ասքար ճարտեր ես:

Էտա մարթն ասաց. - Իմ անուն քու ինչո՞ւն ա պետք: Արի՛, ես, տիւ կըռվըտիք. Աստված յան կը տա քյե, յան կը տա ծի:

Կըռվան չու՛մ առավոտման տեմ: Թակավորի տղղեն օր քընուկ ա՛ ըսկի խաբար չունի:

Օր եղավ առավոտու, էտա մարթ Լավոգու ծեռ պըռնեց, ասաց. - Ըստեղ կըռվու տեղ չի, քյելա՛՛ երթանք իմ սարեն, ես, տիւ կըռվենք:

Առավ Լավոգ, գյընաց մեկ ավուր ճամբախ, նոր խասավ էնու սարեն:

Թակավորի տղղեն քընուց հիշարցավ, ասաց. - Կանչե՛ք Լավոգ, թի գա, պաննանք երթանք, հանգան ա:

Գացին, Լավոգի վըրանի մեչ աչկեցին, օր Լավոգ չըկա: Ասքըրի վըրաներու մեչ աչքեցին, էլըմ չըկա:

Տեսան, օր քսան, եռու՛ն ասքար ճարտուկ էտա տեղ, Լավոգ չըկա:

Թակավորի տղղեն ասաց. - Վա՛խ, վա՛խ, ինքյն ասաց թե՛՛ սարի մեչ չըթալիմ, մե վնաս կա, ես էնու խոսք չէրեցի: Մըկա տաննամ, երթամ տուն, չէղի, մընամ էսա տեղ՝ չէղի: Դե՛, Աստված, տիւ մեկ ճար մ՛ էնես ծի:

Ինքյն կըսկըծու՛ պառկավ էնու վըրանի մեչ: Ասքարն էլ մընաց էտա տեղ:

Մենքյ տաննանք Լավոգի վերեն:

Էտա մարթ Լավոգ տարավ ուր տուն, խաց կերցուց, չայ խըմցուց, չու՛մ առավոտուն, նոր ըլնեն կըռվին:

Լավոգ ասաց. - Մա՛րթ, քու անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անուն Դին Մանգաննա յա:

Դին Մանգանին էնպես սիրուն կնիկըմ կեր, էտա կընգան աչկ ինգեր էր Լավոգ:

Խըլխուն էլան կռիվ: Օր Լավոգ գոռ կը գաներ էտա Դին Մանգանին, հեչ պա՛մ չէնե, օր էնի կը գանի Լավոգին, փարչափարչա կենա, Լավոգից արուն կը պերա: Կըռվան չու՛մ հիրիկուն:

Լավագ ասաց. - Ես չըմ կանա էսա մարթու վըրեն, էնիկ ծի տը սպանա: Ինչի՞ց՝ քանի որ իմ գոռզ գանեն էնոր, իսկի յարալու չէնի:

Էլան, գանցին տուն, ու կըռիվ փայթոստ եղավ:

Խաց կերան, չայ խմեցին, եղավ քըրմելու ժամանակ, Դին Մանգանեն ասաց. - Տիւ մեիվան ես, հեսոր գըրնա՛, իմ կըրնգան մոտ պառկիր:

Մարթն ասաց. - Ախըր ծի տը սպանա, ես էրթամ էնոր կըրնգան մոտ, էն մեկ խավաս, էն քասար թող չըմընա մեչ իմ սրտին:

Լավագ էլավ, գըրնաց ուր կըրնգան հոդեն:

Կնիկ ասաց. - Ընչի՞ էկար:

Ասաց. - Քիւ մարթ ծիկ ասաց՝ տիւ մեիվան ես, էսոր գըրնա՛, իմ կըրնգան մոտ պառկա՛, մեր անքն ընցկոն ա:

Կնիկ ասաց. - Քանի որ տիւ կուզիս իմ կուշտ պառկիս, ես տաս անգամ խընդ քեզ հավել կուզիմ: Օր տիւ իմ մոտ պառկիս, քիւ յարեքյ հյու-հյու՛ գեշ կեղի, առավոտուն էն քի կը սպանա: Զուխտ էրա Աստու հանձն, որ ես քե խելքըմ շանքյ տամ, քե ազատիմ, տիւ ծի չըմոռնաս, ընծի քե խամար տանիս:

Լավագ ասաց. - Կին, ծի անգտա՛, հուխտ էղի, ես քե պիտի տանիմ ու քանի որ սաղ իմ, քե չըմոռնամ:

Ասաց. - Իմ մարթ էսա խագար մարթ էսպես ըսպաներ ա: Դե ելի՛, հավուզըմ կա էսա տեղ, կուլանքանգե սըլեմանի⁶ կասեն, էնու ճուր տեղ ա, լավըմ լողկըցի ու արի ինձնե ջոկ պառկի: Չուն առավոտուն քիւ յարեքյ կը սաղնա: Մեկ էլ իմ հիրկան էսա չոքերուց վեր պողպտե խանավ խագուկ ա, գոռզ յինե հասար չէնա: Գոռզ գար էնու չոքերուց ցածր: Էնի քե տ՛ ասա, թե. «Գի իմ սիրտ ըստա՛, իմ սրտին գարկ, տիւ ընչի՞ կը գանես չոքերուն»: Տիւ ասա. «Իմ խոր օսյաթ էսպես ա՛ հանաճին օրեր գար սրտին, հիտին օրեր գար չոքերուց ցածր»: Օր կըռվիք չուր հիրիկուն, հիրիկուն քե կասա՛ հեսոր էլ գըրնա՛ իմ կըրնգան մոտ, տիւ ասա՛ չէ, հեսոր դիր քուն ա, տիւ գըրնա՛: Էնի գա՛, ես գէնի լավըմ կը չարչըրեն, առավոտուն տիւ էնոր կը սպանես:

Մընաց չուր առավոտուն: Առավոտուն էլան, գանցին կըռիվ:

Լավագ գոռզ կը գանա էնու չոքերուց ցածր:

Էն ասաց. - Դե՛, իմ սիրտ գի ըստա պանց, տիւ ընծի գոռզ կը գանես իմ չոքերուց ցածր:

Լավագ ասաց. - Չէ՛, իմ խոր օսյաթ էնպես ա, հանաճին օր կը գանես սրտին, հիտին օր չոքերուց ցածր:

Կըռվան չուն հիրիկուն: Զիրիկուն էկան տուն, խաց կերան, պըռոնա:

Դին Մանգանեն ասաց. - Լավագ, հեսորն էլ գըրնա՛ իմ հոդեն, իմ կըրնգան մոտ պառկի:

Ասաց. - Չէ՛, հեսոր դիր քուն ա, հերեկ ես գանցի:

Մարթն էլավ, գըրնաց ուր կըրնգան մոտ պառկավ:

Կնիկ մարթուն ասաց. - Մարթ, տիւ հերեկ էն ի՞նչ մարթ էր՝ ճամխեցիր իմ մոտ: Ես քե կը սիրեն:

Էնպես փանթուրավ վիզ վեր, չուր լոս չէթող հիրիկ քյներ էր: Երի օր առավոտուն յաթղից էլավ վեր, մարթն լավըմ ճըն-ջըխվեր էր:

Խըլխուն էլան, կըռվան չուն կեսօրին, Լավագ էնոր ըսպանց:

Ըսպանեց, էթող կերթա խընդ թակավորի տըղեն: Խի էսա քանի մ՛որ ի՞նչըխ էլած, գանցա՞ծ ան, մեռա՞ծ ան, խի ի՞նչըխ էլած:

Կնիկ կանցեց փանջարից, ասաց. - Զի՛ գիտի, բերանստ հիսան, չէ՛ խում կաթ ա կերե, էնու խեր ի՞նչ տ՛եղի: Ես քիւ կյանքյ ազատեցի, մըկա տիւ ծի կը թողնիս, կերթաս:

Լավագ տանցավ, էկավ:

Ասաց. - Ա՛յ կնիկ, մինչև մահվան՝ քե չըմ մոռնա, լե թակավորի տըղեն էսա խինգ-վեց օր գի սարի մեչն ա, օր քիւ հիրիկ ծի էպի: Երթամ խի մեռա՞ծ ան, մընացած ան, աչկեն ու մեկ խոր-խուրթ էլ կա, կատարիմ, ես ետ կը տաննամ, քե կը տանեն: Քանի օր քիւ հիրկան անուն ըսած ան, չըխտ մարթ չըգըխընա գա՛ քիւ սարի պիլիր: Տիւ ծի աչկի, չուր ես տաննամ:

Լավագ գըրնաց սար, տեսավ թակավորի տըղեն ի՞նչըխ օր քյինթ-պերնի պառկեր ա, ընցկոն մնացեր ա կըսկըծու:

Գըրնաց ասաց. - Ախպեր, ախպեր, հելի՛ վեր:

Թակավորի լաճ եփ օր տեսավ ըզԼավագ, շատ ուրախացավ:

Ասաց. - Ախպեր, էլի՛, էսա անքըրին դաստուր տանքյ, էր-թան ուրինց տներ, էնոնց օլուխ-չոջուխ մեղք են, ես, տիւ էր-

⁶ Սյուլեյմանի ավազան (Շ.Բ.)

թանք: Յան տը մեռինք, յան տ'ազատվինք, տը գանք:

Ասքըրներ տանցան, ետ գանցին: Ու էնոնք մե-մեկ ծի'մ խե-ծան ու շարունակեցին էնոնց ճանքախ, գանցին:

Շատ գանցին, քիչ գանցին, էնի Աստված գյինա, ավաիի չը-կընդան, մեկ սարի մեչ մընացին: Հիրիկուն էր, քըրնան: Լավոգ մընաց հիշար՝ չըլնի թե քանավարըմ գան, գուրինք ուտա:

Թակավորի լաճ քըրնավ, Լավոգ մնաց հիշար: Էնոնք քյնած տեղ մեկ ծառըմ կեր:

Լավոգ տեսավ, օր իրեք եղվընիկ թրռան էկան, տըրին էն ծառի ճրղի վերեն: Մեկ մերն էր, էրկուսն էլ էնու ծառեր:

Էն ծառեր մոր ասին. - Մարե՛, էսա դուց թըռինք, մարթ կա էսա ծառի տակ:

Մերն ասաց. - Չէ՛, զավակներ, էնոնք գյինա՞ս ինչ մարթ են, մե ըսպանող մարթեր չեն: Մեկ թակավորի լաճն ա, մեկ էլ էնոր ախարրոգիր: Էնոնք կերթան, օր Արևմտյան թակավորի ախչիկ պերեն: Բայց էնոնք ոտնով չըն կանա խասի, շատ գանտն ա ճանքախ:

Էտոր ծառեր ասին. - Ապա՞, մարե՛, ի՞նչըխ տ' էնեն:

Մեր ասաց. - Գըլխըվեր էրթին ծովու հանի, էնտեղ մեկ սըվ-տակ մարմար քարըմ կա, էն քար շուռ տան, էրկու գան կա էնու տակ, էտա գաներու տերվանք էրկու խատ խըրեղեն ծի են գի մըչ ծովուն: Գաներ թալին մըչ ծովուն, քանչին, էն ծիյանք կը գան: Էտա ծիյանք էնոնց կասեն, թե՛ ի՞նչ կուզեք: Էնոնք ասեն, թե՛ մենք կուզենք մե տանեք Արևմտյան թակավորի քաղաք: Մեկ օրեն կը տանեն, կը խասուցեն: Մինակ թե երանի էնոնց մոտեն մեկ հիշար էղի, էրթեն էնպես էնեն:

Լավոգ էսա խաբըրներ լըսավ:

Մընաց չու՛մ առավոտուն, էլան, գանցին, խասան ծովու պը-ռուկ: Մարմար քար տեսան, քար շուռ տըրվին, էրկու գան տըրկեն խանեցին, թալեցին ծով, քանչեցին, էրկու ծի էկան, ծիյանք ասին՝ տու ի՞նչ կուզեք:

Լավոգ ասաց. - Ես կուզեմ, օր մե տանեք, Արևմտյան թա-կավորի քաղաք խանեք տուս:

Ծիյանք ասին. - Դե՛, ելեք մե խեծեք, համա ծե աղեկըմ պըռենք վըր մեր քանկին, օր քանին ծե չըթալա տակ:

Էլան, ծիյանք խեծան, կայիմ զինք պըռնեցին ծիերու քա-մակ, մեկ օր տարան, խանին Արևմտյան թակավորի քաղաք:

Ծիյանք ասին. - Մի պոճեն մեկ-մեկ մագ առեք ու մե թո-ղեք, էրթանք ծով: Եի ուզեք, էն ժամանակ մենք կը գանք, ծե կը խասինք:

Էնոնք ծիյանքներու պոճեն մեկ մագ առան, ծիյանք թո-ղին, գանցին:

Էնոնք գանցին քաղաքի մեչ մեկ ֆուկարի տուն:

Էտա տան մեչ մեկ պառավ կի'մ կեր:

Ասին. - Պառավ, ըստա թակավորի քաղա՞քն ա:

Պառավ ասաց. - Խա՛:

Ասին. - Էսա ի՞նչ չալղու, նաղարի, սագի ծեն կը գան:

Ասաց. - Եսիկ մեր թակավորի ախչիկն ա կուզեն:

Ասաց. - Պառավ, օր քե ճանխինք, թակավորի ախչիկ կա-նա՞ս տեսնես:

Պառավ ասաց. - Մեռիմ քե, ես էմլա ֆուկարա, օր էրթամ, էնու տըռան դարգանչիք չըն թողնի մտիմ ներս:

Լավոգ առավ խարիր ոսկի փարա, պառավ գըրնաց չարսու մեչ: Մեկ դանտըմ խորոտ, խարսնիսի հարմար խալանկ առեց, խագիւց պառվուն:

Մեկ սինի մ'էլ խընձիր առավ, երեսի խընձիր էսպես կըտրեց, մատնիկ էտի մեչ, էտուր պառվու ծեռ, պառավ գըրնաց խընդ թակավորի սարեն:

Պառավ խասավ ախչըկե հօղի տըռան մոտ, տըռնապանե-րուն մե մեկին մեկ ոսկի փարա էտուր:

Տըռնապաններ ուրախցան, թող տըրվին, պառավ մտավ ներս:

Ասին. - Էսքան ժամանակ մարթ մե փարա չէր տըրվեր, էսի էտուր, թըխ էրթա ներս:

Պառավ մտավ ներս, խընձիր էսպես էտու թակավորի ախ-չըկեն:

Թակավորի ախչիկ ասաց. - Ես ի՞նչ էնեմ խընձիր, քու խըն-ձիրներ տար:

Պառավ ասաց. - Տու էն գանտն ճանքախ օր քե մոտխըսցեր ա, տու էնա խընձիր առնիս, ուտիս:

Եսպես Էրեսի խընծիր վերուց, վիրուցելու պես խընծիր էղավ էրկու տապակ: Մատնիկն էրեվաց:

Մատնիկ առավ, աչկեց, օր էնու մատնիկ, ինչ էրագի մեջ փոխած են:

Շատ ուրախացավ:

Ասաց. - Պառա՛վ, էսա մատընկի տեր դի՞ր ա:

Պառավ ասաց. - Գի՞ մեր տուն կը մընան: Թակավորի լաճն ա ու էնու ախպըրգյիր:

Ախչիկ ասաց. - Ես ի՞նչ էնեմ, դիրվան՝ էկած ձի կը տանին, պետք էր շոտ գյեն: Լե ես իմ խոր մոտեն դաստուր կուզիմ, կերթամ մեր խաս բանչեն, թը գա՛, ես զենի տեսնիմ, ախըր խելին եկե, ձի կը տանին:

Ախչիկ մատնիկ առավ, մըտուց ուր մատ, ու պառավ էլնվ, տանցավ, գյընաց ուր տուն:

Լնվոգ ասաց. - Պառա՛վ, թակավորի ախչիկ տեսա՞ր:

Պառավ ասաց. - Խա՛, տեսա:

Ասաց. - Դե ձի պատմա՛, խի ի՞նչ ա:

Ասաց. - Ի՞նչ ա, կասեր, թը՛ էնոնք շոտ գյեն, մըկա իմ խելին էկեր, ձի կը տանեն, թող գյիչեր գա՛, մտի խաս բանչեն, ես իմ խոր մոտեն դաստուր կառնիմ, կերթանք էնտեղ, զիրար կը տեսինք:

Գյիչեր, առավոտման տեմ, Լնվոգ առավ թակավորի լաճ, գանցին: Բանչի բանչն վե էլան, մըտան խաս բանչեն:

Ախչիկ թակավորին ասաց. - Դանդի՛, ախըր ձի կը տանին, ձի դաստուր տու, ես էրթամ խաս բանչեն ֆըռամ, օր մեկ, էրկու օրեն ձի կը տանին, չըմնա իմ սրտի վերեն քնսար:

Թակավոր ասաց. - Գյընա՛:

Թակավորի ախչիկ գյընաց բանչի տուռ, օր տը մըտեր բանչեն, Լնվոգ ասաց. - Տ՛իյամ պաղկըվեմ, չըլլնի զիգնե ամչընա:

Լնվոգ գյընաց, մըչ ծաղկըներուն պաղկըվավ:

Հանըղն էլ քյընավ: Ախչիկ էկավ, տեսավ, օր թակավորի լաճ քընուկ ա: Էնքան կանչեց, էնքան կըլորեց, դեն տարավ, դեն եպեր, էնի չիշարցավ:

Լնվոգն էլ կը տիսնա, կըսկըծու կը բանչի ու չըկանար էրթա ծեն տա:

Ախչիկն էլ էրկու ճան էտի թակավորու լաճու ջեթ, մշանակ,

թե՛ տու ձի լայեղ չես, գյընա՛ հնվա խընդ ճըժերուն ճան խաղա:

Թակավորի ախչիկ էթող, գյընաց:

Լնվոգ էկավ, Հանըղ հիշարցուց:

Ասաց. - Տո քիւ տուն ավիրի: Ախչիկ էկավ, էնքան քյի բոռաց, էնքան քյե կըլորեց, տու ի՞նչըխ չիշարցար:

Ասաց. - Տու սութ կասիս:

Ասաց. - Օր ես սութ կասիմ, խի՞ ծեռըտ մըտու քիւ ջեթի մեջ: Թակավորի լաճ ծեռ մըտուց ուր ջեթ, օր էրկու ճան կեր էնու ջեթի մեջ:

Ասաց. - Լնվո՛գ, էսի ի՞նչ ճան ա:

Ասաց. - Ախչիկ օր էնքան ինչըխ էրաց, տու չիշարցար, էտու խամար էրկու ճան էթալ քիւ ջեթ, ասաց. «Էնի ձի լայեղ չի, էնի ճիժ ա, թըխ էրթա խընդ ճըժերուն ճան խաղա»:

Թակավորի լաճու դարդ թե մեկ էր, էղավ խազար:

Թողին, էկան պառվու տուն:

Պառավ ասաց. - Լնվո՛գ, տեսա՞ք թակավորու ախչիկ:

Լնվոգ ասաց. - Չէ՛, չուր էն էկավ, Հանըղ քյընավ, էնիկ էկավ, ինչըխ էրաց, Հանըղ չիշարցավ, էթող գյընաց:

Պառավ ասաց. - Ապա ի՞նչըխ տ՛եղի:

Լնվոգ ասաց. - Էլի՛ գյընա՛, թակավորի ախչիկն տեսի, ասա՛ Լնվոգ կասեր, թըխ վանղն էլ գա՛, չէ թակավորի տըղեն կըսկըծու կը բանչի:

Պառավ էլավ, գյընաց թակավորի ախչիկն մոտ:

Ասաց. - Լնվոգ կասեր, թե՛ կը խընթրիմ թող հետոն էլ գա՛ խաս բանչեն, թակավորի լաճ կըսկըծու կը բանչի, օր էն էրկու ճան թալեց էնոր ջեթ:

Ասաց. - Պառա՛վ, գյընա՛ ասա, թոխ էտոն էլ գան բանչեն, ես էտոն էլ իմ խոր մոտեն դաստուր կուզիմ, բալկը ձի թողնա էրթամ:

Պառավ էկավ, Լնվոգին ասաց. - Թակավորի ախչիկ կասա՛ թող էտոն էլ գան խաս բանչեն, ձի տեսին, վանղ չէ, մյուս օր ձի կը տանին:

Լնվոգ առավ Հանըղ, տարավ բանչի մեջ:

Տեսավ օր ախչիկ էկավ բանչեն: Լնվոգ գյընաց, պաղկըվավ, թակավորի տըղեն էլման քյընավ:

Ախշիկ էկավ բանդչեն, ի՛նչըխ էրաց, թակավորի տըղեն չիշարցավ: Մազե գունդըմ էթալ էնոր ջեբ, ասաց. «Տիւ ձի յարամիշ չըս էլնի, առ՛ էնա գունդ, տար, չուր հիրիկուն խընդ ճըժերուն խաղա»:

Ախշիկ էթող, գըրնաց:

Լանվոգ էկավ, ասաց. - Տըղա՛, ախշիկ էկեր, տիւ ընչի՞ քընար:

Ասաց՝ սուր կասիս:

Ասաց. - Խի քիւ ծեռ մըտու քիւ ջեբ:

Ծեռ մըտուց ջեբ, օր գունդըմ:

Թակավորի լաճն ասաց. - Էսա ի՞նչ մազե գունդ ա իմ ջեբ:

Ասաց. - Ախշիկն ա տըրե, կասա՛ էնի ձի լայեղ չի, թըխ էնա գունդ առնի, էրթա խընդ ճըժերուն խաղ էնա:

Թակավորի լաճու ցավ թե մեկ էր, եղավ խազար:

Թողին, գանցին պառվու տուն:

Պառավ ասաց. - Լանվո՛գ, հեսօր պա՛մ շինեցի՞ք:

Ասաց. - Չէ՛, մարե՛ս, մե ծախորթութեն ա:

- Ապա ի՞նչ էնենք:

Ասաց. - Էլի՛, գըրնա՛, ախշիկ մեկ էլ տեսի: Ասա՛ Լանվոգ կասա՛ խընթրիմ, թըխ էս մեկ տըրին էլ գա՛, էսիկ վերձին անգամն ա:

Պառավ գըրնաց ախշըկե մոտ:

Ասաց. - Թակավորի՛ ախշիկ, Լանվոգ կասա՛ կը խընթրիմ, էսի վերձին անգամն ա, թե հիշարցավ՝ հիշարցավ, թե չէ՛ թըխ էրթա ուր պանին:

Ախշիկ ասաց. - Գըրնա՛ ասա՛, թըխ հեսօրն էլ գան:

Պառավ գըրնաց տուն:

Լանվոգ ասաց. - Պառա՛վ, թակավորի ախշիկ ի՞նչ ասաց:

Ասաց. - Կասա՛ թըխ հեսօրն էլ գան, վանդ անպայման ձի կը տանին:

Լանվոգ առավ Զանըղ, հիրիկուն գըրնաց, մտավ բանդչի մեջ:

Առավտուն, օր թակավորի ախշիկ էկավ, խասավ բանդչի տըռան մոտ, Լանվոգ Զանըղի մատ կըտրեց տանկով, մե քիչ աղ ըլեց մեջ, ասաց. - Օր էնու քիւն չըտանի:

Ախշիկ էկավ, տըղային տեսավ: Հիրարու վիզ գըրկեցին, հիրար պագյեցին, շատ ուրախացան:

Ախշիկ ասաց. - Թակավորի՛ լաճ, էսա էրկու օր էր էս կը գյեր, տիւ ընչի՞ չիշարներ:

Թակավորի լաճն ասաց, թե՛ ծախորթութեն էր:

Ախշիկ ասաց. - Ապա ի՞նչըխ էնենք, գի ձիկ վանդ կը տանեն: Տիւ տը գա՛ս ո՞ր տեղ ձի տեսիս:

Թակավորի լաճն ասաց. - Չըմ գյիտի, ո՞ր տեղ կուզես՝ գանք տեսիմ:

Թակավորի ախշիկ ասաց. - Իմ մոր գյերեզման գի քանդի էնդեխաց կուշտ՝ ճամխի վերեն: Էնպես մատուռըմ շինած են վերեն, վանդ առավտուն օր ձի կը տանին, խելին կընցի, իմ ֆայթոն հետուց կերթա, էս կիճիմ, կերթամ իմ մոր գյերեզման խամբուրելու, տիւ արի, էն տեղ պաղկըվի, էս գան, գիրար տեսինք, մոր էս կերթամ:

Տըղեն ասաց. - Շա՛տ լավ:

Խոսք տվին, խոսք առան, ախշիկ էլավ, գըրնաց:

Լանվոգ էկավ, ասաց. - Է՛յ, դաստաբրա, քիւ նպատակին խասա՞ր:

Ասաց. - Ախպե՛ր, քիւ ջան սաղ կենա, էս իմ նպատակին խասա, լե ի՞նչ էնեն, օր կը տանին խըլխուն:

Լանվոգ ասաց. - Զանըղ, չըխո իսկի քյե պա՛մ չասա՞ց:

Թակավորի լաճն ասաց. - Ձի էսպես ասաց, թե՛ արի ճամխի վերեն, իմ մոր գյերեզման ճամխից տիւսն ա, արի էնու մատուռի մեջ պաղկըվի, էս կը գան էն տեղ, կիճիմ տակ, իմ մոր գյերեզման կը խամբուրիմ, էն տեղ քյի կը տեսնամ ու կը թողիմ կերթամ:

Լանվոգ ասաց. - Շա՛տ լավ:

Էլան, գանցին պառվու տուն:

Խըլխուն՝ պատրաստված խելին, գի կը գանին, կը խաղան ու առան ախշիկ, կերթան:

Լանվոգ ասաց. - Զանըղ, տիւ մընացեր ըստա՛, էս էրթամ էնու մոր գյերեզմանատուն պաղկըվիմ:

Զանըղ մընաց, Լանվոգ էլավ, գըրնաց: Էնու մոր գյերեզմանատուն կընդավ, պաղկըվավ մեջ:

Տեսավ օր խելին էկավ, ընցավ, վերջ ախշըկե ֆայթոն էկավ:

Ախշիկ էճավ, էկավ մոր գյերեզմանատուն, օր խամբուրա, տեսավ խորոտ ջըիել տըղա մ՛ էտա տեղ պաղկըվեր էր, էլավ տիւս:

Ախշիկ ասաց. - Էսի թակավորի լաճ չէր:

Լավագ ասաց. - Մը՛ վախենա, ես էնոր ախպրոգյիրն եմ, էնու խետն եմ իկի:

Ախչիկ ասաց. - Պառավ կասեր՝ քու անուն Լավագ, լե չուն մըկա քյե չըտեսեր իր:

Ասաց. - Ապա ի՞նչ էնենք:

Լավագ ասաց. - Քու ջըլեր տու ես խագյիմ, էղիմ խարս, նըստիմ ֆայթոն, էրթամ խընտ խելուն, տու իմ ջըլեր խագյիր, տանցիր, գըննա պառվու տուն:

Էնի ախչըկե ջըլեր խագան, ախչիկն էլ էնու ջըլիր խագան, Լավագ գըննաց, նըստավ ֆայթոն, գըննաց խընդ խելուն:

Բեղ-մուրուս օր չուներ, էնոնք գյիտցան, թե ախչիկն ա:

Խելին առավ, ինքյ ինքյ գըննաց, ախչիկ մընաց մոր գյերեզ-մընի մեչ, մարթու խավըներ խագուկ, չուր քիչըմ վերճ էլավ, գըննաց պառվու տուն:

Մարթըմ չըճանչցավ զինքյ, ապա մարթու խավնավ կեր վերեն:

Գըննաց պառվու տուն: Թակավորի լաճ տեսավ, օր Լավագի ջըլերն ա, լե ինքյն Լավագ չի: Չըճանչըցավ:

Ասաց. - Ի՞նչ կը պըշկիս, ես թակավորի ախչիկն եմ:

Շատ ուրախացան, մընացին պառվու տուն:

Թակավորի լաճն ասաց. - Ախչիկ, ապա Լավագ ի՞նչ էղավ:

Ասաց. - Իմ տեղ գըննաց հիրկան, օր չիմեն:

Էնոնք մընացին էտա մանախի մեչ Լավագի խամար, թի չէլնիր՝ հիմանան, Լավագին ըսպանեն:

Տաննանքյ Լավագի կըսի վերեն:

Լավագ առին, տարան թակավորի սարեն:

Կը տանին փըսակին: Լավագ կը տեսնի, օր մեկ ըխթիյար թակավոր մ'ա, օր էնու վերեն կը փըսակին:

Եփ օր հիրիկուն կեղի, թակավոր կասա. - Արի՛ մեր տեղ թա՛լ, պառկինքյ:

Թակավոր գինն օր ախչիկ ա:

Լավագ կասա. - Մեր ցեղակնի օսյաթ էնպես ա, մինչև տասնուխինգ օր հիրկան մոտ չըպիտի պառկինքյ, տասնուխինգ օր թըմըմի, նորեն կը պառկինքյ:

Կը խապա թակավորին:

Թակավորին ախչիկըմ կա, շատ խորոտ կեղի:

Թակավորի ախչիկ եփ օր Լավագի կը տեսի, կասա. - Ափսո՛ս, օր տու ընցնա ջահել կին ես, քյե պերած են իմ խալիվոր խոր: Հիմա տու մարթ էղեր, ես քյե տ'առներ, մենքյ հիրար վալելենքյ:

Լավագ ախչըկեն կասա. - Եթե ես մարթ էղեր, տու ծի կառնե՞ր:

Ախչիկ կասա. - Խա՛, ապա ես էլ քյե պես խորոտ ո՞ր տեղ տը կընդըներ:

Լավագ կասա. - Ախչիկ, ես տը խընթըրվիմ Աստըծուց, բալկո ծի մարթ էնա, ես քյե առնիմ, փախիմ:

Ախչիկ կասա. - Շա՛տ լավ, ես սիրով կուզիմ:

Կը մընա չուր մեկէլ առավոտուն: Առավոտուն ախչիկ կը գա սենյակ:

Կասա. - Իմ խորթ մեր, տու Աստըծուց խընթեցի՞ր, օր մարթ տաննա:

Կասա. - Խա՛, խընթեցի, մարթ եմ տանցե:

Ախչիկ չավատա: Կը նայա, օր մարթ:

Ախչիկ ուրախութենն՝ խելքյից, մտքից կէլնի:

Ասաց. - Տու մարթ տանցար, ապա քու անուն տընինք ի՞նչ:

Կասա տըղան. - Իմ անուն Լավագ տը տնիմ, ինչի՞՞ օր ջա-հել տըղա եմ:

Ախչիկ կասա. - Լավո՛գ, ե՞փ էրթանքյ, ե՞փ փախինքյ, ի՞նչ-չըխ փախինքյ, էսի թակավոր մ'ա: Էնու զորք շատ, թել կը տա՛ մեր ճամխըներ կը պըռնեն, մե երկուսն էլ կը մորթեն:

Լավագ կասա. - Ախչիկ, մը՛ վախենա, տու քու պատրաստութեն էրա: Ես էնպես ծիյանքյ ունիմ, օր քսան ավուր ճամբախ՝ մարթու մեկ օր կը տանին: Էլ անքար, թելկըրաֆ, մեր ճամբախ կըտրել էլ ֆայդա չէնա:

Ախչիկ էնու պատրաստութեն տեսավ, օր առավոտ ճամբախ տ'էլին:

Լավագ ծիու մագ էխան, էտու կրակ, ծիյեր էկան:

Մեկ ինքյ խեժավ, մեկ ախչիկ: Ինգան ճամբախ:

Հիմացան, քանդքի մեչ կանչեցին թե՛ թակավորի կնիկ օր պերին, տըղա էր, ախչիկն էլ փախցուց:

Թելկըրաֆ տըղին ճամխըներ կըտրելու, անքար էլավ, ըն-գանկ հետեվեն, ֆայդա չէրաց:

խըրեղեն ծիյանք մեկ օրեն էնոնք էնու խողեն խանին տուս:

Գացին ախչկա խոր քաղաք, պառվու տուն: Տեսան օր Համնդ, թակավորի ախչիկ նրստած են դա:

Շատ իրարու վերեն ուրախացան:

Թակավորի ախչիկ Լավոգին ասաց. - Օր տու էնպես լավ մարթ ես, օր համ ձի ազատեցիր, համ քյե կնիկըմ պերիր, իմ ճրկըթի մատնիկ տը տամ քյե նվեր:

Մատընկի գյին երկու հարուր ոսկի էր:

Մընացին պառվու տուն չուր առավոտուն: Առավոտուն էլան, խըրեղեն ծիյանք խեծան, մեկ մեկ կնիկ տըրին էնոնք քարթ, գացին: Էլան էն ծովու էն մեկէլ էրես, օր մարմար քարի տըրկեն գամեր խանած են:

Ծիյանք ասին. - Լավոգ, մեր պայման չուր ըստեղ էր, մեր գամեր խանեք, տըրեք էսա քարի տակ, տուք էլ գացեք խընդ ծեր ճամխին, մենք ծե ծեր մըրագին խասուցինք:

Գամեր տըրին քարի տակ, ծիյանք քաշվան ծով, էնոնք չորս էլած ինգան ճամբախ, հուշիկ-հուշիկ կը գան խընդ թակավորու լաճու խոր սարեն:

Էլան, մընացին գյիշեր էն ծառի տակ, օր էն մեկէլ անգամին մընացած են:

Եփ օր էղավ հիրիկու, թակավորի լաճ, էնու կնիկ պառկան քընան, Լավոգ չըքընի:

Լավոգի կնիկ ասաց. - Լավոգ, տու հե՞ր չըքընիս, էնոնք քընան, արի՛ ես, տու էլ քընիմք:

Լավոգ ասաց. - Թե մենք էլ քընինք, ջանավար կը գա, մե չորսն էլ կը վնասա:

Լավոգ չըքընավ:

Էտա իրեք եղվընիկ, մեր, երկու ծաքու խետ էլան, թառան էտա ծառի վերեն:

Ծաքյեր ասին. - Մարե՛, էսա տեղ մարթ կա, թըռնինք, մեզի չըվընասեն:

Մեր ասաց. - Չէ՛, էնի թակավորի տըղան ա, ուր դաստարեն, օր գացին ախչիկ պերին: Էնու պերին, լե ուրենց մըրագին չըն խասնի: Թակավորի լաճ խընդ Լավոգին բեբախտութիւն տ'էնա:

Ծաքյեր ասին. - Մարե՛, ինչպե՞ս մըրագին չըն խասի:

Ասաց. - Իմ խոսքեր լըսող մարթ վի՛ր պատմա, աչկեր կը կուրնա: Թակավորի տըղեն էն օր, օր կերթա ուր տուն, ուր հողեն պառկի, ջանավարըմ՝ անուն Քյառքյառթոշ, տը գա, գխարս, փեսեն գյիշեր ուտա, օր հիշար մարթ իմ խոսքեր լսի ու թակավորի տըղին ասա՝ հիշար կաց քյեզնից, էնու աչկեր տը կուրնա:

Էնոնք թռան, գացին:

Առավոտուն թակավորի լաճ քընուց էլավ վեր, էլան ընգան ճամբախ, գացին:

Շատ ու քիչ էրթալ Աստված գյինա: Թակավորի քաղքին մոտխասցան:

Ջուլար գըրնաց թակավորին, թե՛ քու տըղեն գըրնաց, ուր կնիկ առավ էկավ, շնորհիվ Լավոգին:

Թակավոր ուրախացավ, էլավ տենքըներ ուր տըղի, Լավոգի ճակատ պագյեց, շնորհակալ էղավ, օր էն էսպես պարիրարու-թինըմ էրեր էր խընդ ուր:

Թակավոր էպիր, հանածին Լավոգ փսակեց, ասաց. - Իմ ճոչ լաճն էն ա:

Նորեն Համնդ փըսակեց:

Յոթ օր, յոթ գյիշեր էնոնց խաղտուն էրաց:

Գացին, գյիշիր կը պառկեն թակավորի տըղեն, ուր կնիկ:

Լավոգ ասաց. - Չէ՞ խավքյեր ձի պան ասին: Ես գացի, չարչըրվա, էսա ախչիկ պերի, եփ օր վընասվեն էսա գյիշեր, էլ իմ գախմաթ չընգի՞ ճուր: Հըմենից լավ ա, օր էրթամ էն սենյակի մեչ պաղկըվիմ, պախենմ, պախապանեմ զէնոնք չում առավոտուն:

Լավոգ գյիշեր էլավ, գըրնաց թակավորի լաճու սենյակի մեչ:

Էնոնք օր պառկան, գյիշեր շատ, քիչ ընցավ, օր Լավոգ տեսավ փանջարից Քյառքյառթոշ էկավ ներս:

Պերան պաց էրաց, օր տը խասեր վընասեր ըզպառկողներ, ինքն ուր թուր քաշեց, Քյառքյառթոշին լավըմ պրտեց:

Մեկ պուտ արուն թըռավ թակավորի լաճու կընգան ճակտի վերեն:

Լավոգ ասաց. - Ի՞նչ էնեն, թրի ծերով վիրուցե՞մ, վախենամ՝ ախչըկա էրես յարալու էղի: Էրթամ իմ լեզվով վիրուցե՞մ, վախենամ թե ծահր էղի, ձի ըսպանա:

Ասաց. - Վալլա՛, ես տ'երթամ իմ լեզվով վիրուցեմ, ճակատ չ'եղի լաքա՛, թոխ ես մեռիմ:

Ինքն գլորնաց, կրզված, լեզվով էտա արուն լիզեց:

Լիզելու ժամանակ թակավորի տրղեն հիշարցավ:

Ասաց. - Վո՛ւյ, բերախտ հիսան, տա՛ւ իմ կրնգան էրես պագ-յեցի՞ր: Թե օր տա՛ւ շատ կուզեր, թը տա՛ւ քյե խամար պերեր:

Լավոգ ասաց. - Թակավորի՛ լաճ, ես քա՛ւ կրնգան էրես չըմ պագյեր, հաւրա՛ւ գործըմ կեր: Խի ի՞նչ կասես էնա ջանա՛վարին ինչ ըսպանեցի: Էն խընթրու խամար քա՛ւ կրնգա՛ ճակատ լիզեցի:

Հանըղ չավատաց, ասաց. - Ոչի՛նչ, տա՛ւ ջանա՛վարըմ պերեր ես ըստա՛, ըսպաներ ես:

Խոսք մ՛ էնու մոտեն, մեկ էնու մոտեն, թակավորու խարս հի-շարցավ, էլա՛վ նըստավ:

Վերչ Լավոգ ասաց. - Ես իմ խաց խարամ չըմ էնե, էլ ֆայրա՛ չէնե, ես կըսա տ'ենեմ էնոր, թոխ իմ աչկ կուրնա, օր էնի ավատա:

Ասաց. - Հանըղ, ականջ էրա, ասեմ, թոխ իմ աչկեր կուրնա: Էն ժամանակ, ինչ գանցիք քա՛ւ կնիկ պերելու, էն ծառի տակ օր տա՛ւ քյընար, ես մընացի հիշար: Իրեք եղվընիկ էկան էն տեղ: Մեկ մերն էր, երկու ծաքյեր:

Ծաքյեր մորն ասին՝ թռռինք, էսա մարթեր մե չըվընասեն:

Մեր ասաց. - Չէ՛, էնի թակավորի լաճն ա, ուր դաստա՛բրեն, կերթան Արևմտյան թակավորի ախչիկ պերեն: Բայց էնոնք ոտնով չըն խասիր: Երանի մեկ հիշար էղներ, ասաց, ես էնոնց պա՛ մ'ասեր:

Ծաքյեր ասին. - Ի՞նչ տ'ասեր տա՛ւ:

Ասաց. - Էնոնք գյըլխըվեր էրթեն ծովա՛փ, էնտեղ սըվտակ մարմար քարըմ կեր: Էնու տակ երկու գա՛մ էր, գամեր օր թալեն ծով, երկու խրեղեն ծի կը գան, խեծին, էրթեն: Թե չէ՛ էնոնք ոտ-նով չըն կանա խասի: Թակավորի՛ լաճ, էնպե՛ս չէր: Մենք գա-ցի՞նք ծովա՛փ, սըվտակ քար շուռ չըտըվի՞նք, գամեր չըխանի՞նք տա՛ւս, թալիցինք ծով, ծիյանք էկան, խեծանք, ծովն ընցանք:

Թակավորի լաճն ասաց. - Խա՛, քա՛ւ խոսքն ա:

Լավոգ ասաց. - Օր էն տեղեն տա՛ռցանք, էկանք, էլըմ չըպառկա՞նք էն ծառի տակ: Տա՛ւ քյընար, ես մընացի հիշար, էլ-ման էն եղվընկներ էկան, թառան ծառի վերեն:

Ծաքյեր ասին. - Մարե՛, էլի՛ թռռինք էրթանք, էսա տեղ ինս-ջինս կա, մե չըսպանին:

Մեր ասաց. - Չէ՛, էնի թակավորի լաճն ա ու իր դաստա՛բրեն: Պերին, լե էնոնք էնոնց մըրագին չըն խասիր:

Ծաքյեր ասին. - Հե՞ր, մարե՛:

Ասաց. - Քյառքյառթոչըմ տը գա՛ թակավորի լաճու սենյակի մեչ, երկըսին էլ վընասա: Լե լըսող օր լըսավ ու թակավորի տրղին ասաց, էնու աչկեր տը կուրնա, էնու սերին էնպես ա:

Եփ օր ես էկա, Քյառքյառթոչ ըսպանեցի, պուտըմ արուն ընգավ քա՛ւ կրնգան ճակտին: Ասի թըրով վերցե՛մ, վախենամ՝ ախչըկե ճակատ էղի յարա, լեզվով վերցե՛մ, վախեցա՛ ծառի էղի, ծի ըսպանա: Ես իմ ջան ընցա, լեզվով վերցի, ասի թըխ կրնգան ճակատ լաքա՛ չէղի, տա՛ւ մըկա կասես՝ իմ կրնգան էրես պագյես, մըկա մընչ մե էրկուս վո՞ն ա բեբախտ:

Խոսք վերճանալու պես՝ սերի էր, Լավոգի աչկեր կուրցավ:

Թակավորի լաճն ու խարս էլան, բոռացին, աղաղակեցին, ոնչինչ ֆայրա՛ չէրաց:

Չուր առավոտուն թակավոր հիմացավ:

Գյընաց տրղի մոտ, խառցուց տրղին ու խարսին, միտք հիմացավ:

Տրղին ջալա՛ պիտի տեր: Վերչ սաւրգա՛ն էրաց:

Ասաց. - Թըխ չըտեսնիմ ինչպես բեբախտ տըղա, օր Լավոգ խընդ իմ տըղեն դընա հա՛վել էր, ինքն բեբախտութին էրաց, էնու աչկեր կուրցավ: Էնպես տըղա չըպիտի տեսնիմ:

Եփ թակավորին տըղեն տընից տա՛ւս էլա՛վ, ասաց. - Պիտի էրթամ էն ծառի տակ, խի էն խավքյեր մեկ էլ չը՞ն իգա, մեկ տեղըմ, տարման մ'ասին էնու աչկերու խամար:

Թակավորի տըղեն գյընաց խընդ էն երկիր:

Գյընա՛ց, գյընա՛ց էն ծառի, գիշեր մընաց էնտեղ:

Հախու՛ քա՛ւն չըտանի: Տեսավ՝ իրեք եղվընիկ թըռան, էկան վըր էն ծառին տըրին:

Էն երկու ծաքյ մոր ասին. - Մարե՛, թըռենք, մարթ կա ծառի տակ:

Մեր ասաց. - Չէ՛, էնի էն բեբախտ թակավորի տըղեն ա, օր բեբախտութին էրաց Լավոգի, չուն Լավոգ ճարախատ՝ պատմեց իմ ասած պաներ, ուր աչկեր կուրցավ:

Ծանրեր ասին. - Մարե՛, ապա ի՞նչըխ տ'եղի: Էնու աչկեր չու՛մ ե՞փ տը մընա էմալ կո՛ծ:

Մեր ծանրերուն ասաց. - Օր մենք մըկա կը թըռի՛նք, մեր թևեն մեկ թերուռ կընճի: Իմ թերուռ օր տանի, յոթ հախալըրի ճուր ժողվա, խառնա հիրար, էտա թերուռ թաթխա հինե, քըսա էնու աչկեր, Աստըծու խըրամանքիվ էնու աչկեր կը պանցվի: Թե չէ՛ թու չարա չըկա:

Եղվընիկներ թռան, գանցին: Էնու թևեն թերուռըմ ինգավ գյետին:

Մընաց չու՛մ խըլխու՛ն, թակավորի տըղեն էլավ, կան էկավ, էնտեղ էն թերուռ կընճավ, ուրախացավ, առավ թերուռ, տանցավ խընդ խոր էրկիր:

Գյընաց՝ Լավոգ գո տըրած էն մեկ սենյակի՛մ մեչ, խաց, ճուր կը տան, կուտա, կը խմա:

Յոթ հախալըրի ճուր էպե, խառնեց հիրար, թերուռ թաթխեց հինե, Աստըծու խըրամանքիվ պանցվավ, էլավ հանճի՛նի պես:

Ջուլյաբ տըվին թակավորին, թե Լավոգի աչկեր սախցեր ա:

Թակավորի լաճ նոր վըր էնու հիշարցավ, ասաց. - Էսա մարթու ասածներ հըմեն ճիշտ են, կը խի՞ս, խավքերն էկան, խընդ ձի գրուցեցին: Ես էր բեթախտ, օր չըր ավատա էնու ասածին:

Ասաց. - Ես քու Աստըծուն մեղա, Լավո՛գ, տու իմ ճոչ ախպերն, ես քու պստիկ ախպերն: Եփ օր իմ խեր մեռի, իմ խոր մալ կես ձիկ, կես քեզ:

Օրըմ ընցավ, էրկու ընցավ, Լավոգ մըտածեց, ասաց. «Յա՛յ, հո՛յ, էսա ընցավ էրկու տարի, Դին Մանգանի կնիկ օր իմ կյանք ազատեց, ես ի՞նչըխ իմ մոռցեր»:

Էլավ էն մեկէլ օր, ասաց. - Թակավորի՛ լաճ, ես կերթամ:

Թակավորի լաճն պսաց. - Դի՞ր կերթաս:

Ասաց. - Յէնօր, օր անքար կոտորեցին, օր ձի պըռնեցին տարան, օր տու մընացի սարի մեչ, էն մարթու կնիկ իմ կյանք ազատեց, ձի ճարըմ շանց իտու, էնու հիրիկն ըսպանեցի, լե խոսք տըվի, օր էնոր տեր էլներ, առներ պիրեր: Էնա էղավ էրկու տարի, օր իմ մըտից խաներ են: Մըկա նոր ինգավ իմ միտ:

Ասաց. - Լավ, տու կերթաս, ձի չը՞ս տանի խետ, չեղի քյե պան մ'եղի:

Ասաց. - Չէ՛, մեկ անգամ քու բախտ տեսեր եմ, մի գան, էկա՛ էկա, չէկա՛ չէկա:

Լավոգ էլավ, գյընաց: Շատ գյընաց, քիչ գյընաց, էնի Աստված գի՛նա, կընգան սարին խասավ:

Գյընաց, տուռ էպաց, մըտավ ներս, ըխավ օր կին մըստուկ էր, մեկ մարթ մ'էլ կընգան կողքին մըստուկ էր: Էնպես մեծ մարթ մ' էր, օր էնոր Դև կասեն:

Կնիկ օր աչկ ընգավ Լավոգ, ըսկըսեց լաց:

Ասաց. - Օղորթ հիսնին բախտ չըկա, ես չավատեր: Օր ձի թողիր ըստեղ մեքու, գանցիր, էսա էրկու տարի մարթ չէկավ վըր ձի, չըպատահավ, հեսօր էսա մարթ էկավ, ծեռն էտիր վըր ձի, ասաց՝ տու իմն իս: Տու չըս կանա էլ ծեռքեն անգանի, քյե տը վընասա:

Դև օր տեսավ մարթ մտավ ներս, ասաց. - Յե՛յ, ինսըն-ջընսն, խավքյն ուր թևով, օցն ուր պոռտով ըստեղ չըր կանե գյե, տու ինչպե՞ս ես էկե:

Դև էլավ, օր մարթուն տը վընասեր:

Դև կանավ, ասաց. - Դե՛, Լավո՛գ, մենք բեթախտութնով իրարու չընք ըսպանե, էլի, ես գո կանիմ, տու դըրըրմ գար ձի, եթե ձի վընասեցիր, չըխտ կնիկ քյոն ա, կառիս կերթաս: Եթե չըվընասեցիր, ես կը գանեն քյե, քյե կը վընասիմ, կնիկ կառնիմ:

Լավոգ ասաց. - Յէսօր ես եմ եկե, դըրբ քյոն ա, հանճեն քու դըրբ գար:

Դև էլավ, գոռզ մ' էգար Լավոգին:

Գոռզ չըտիպավ Լավոգին, լե գոռզի քանին զԼավոգ թըռուց մեկ տեղ:

Դև ասաց. - Յե՛յ, խողածին, խող էր, ի՞նչ շոտ խող դանցար:

Ասաց. - Չէ՛, գո ես տա սաղ եմ, Աստված օր իմ խոգին չառնի, տու չես կարող առնիլ:

Ասաց. - Դի՛ր խասավ ձի, Դև՛, կանի, դըրբ մ'էլ ես գանիմ քյե:

Լավոգ թուր մ'էթալ Դևու մեչք: Թալելուն պես ջանտակ կիսեց, կըտորներ մընացին վըր հիրարու, Դև չիմացավ, թե ինք կիսվեր էր:

Դև ասաց. - Լավո՛գ, քու դըրբ էտի՞ն էր:

Լավոգ ասաց. - Քյե մեկ հիրար տուր:

Յիրար տալուն պես կըտորըմ տեն գյընաց, մեկ տեն:

Ինքն մընաց չուր առավոտուն, առավ կնիկ, էկավ: Առավ, էկավ թակավորի սարեն:

Համըղ օր տեսավ Լավոգ էկավ, էլավ, գյընաց անձ:

Էնոր ջոկ սարեն՝մ շինեցին, Լավոգ, ուր էրկու կնիկ հինե մընացին, չուր օր թակավոր մեռավ:


Լավոգ ասաց. - Համըղ, տու կասեր, օր իմ դարդուն մեռի, էնոր մալ կես ձիկ ա, կես քիկ ա:

Համըղ ասաց. - Հինա օր իմ մալի կես տամ քյե, խալխ պիտի կասկածեն, թե թակավորութեն կը պաժնա: Թը մընա, քանի՛մ տարի ընցի, յան ձի լաճըմ կեղի, քյե ախչիկ, յան քյե լաճ կեղի, ձի ախչիկ, կը տանքյ հիրարու, թըխ ելին, էն մալ վայելեն, համ քու տըղեն ա, համ իմ, էտա մալ կեղի կիսրար:

Քանի՛մ տարի օր անցավ, լաճ մ'էղավ Համըղին, ախչիկ մ'էղավ Լավոգին:

Հիրարու վերեն փըսակեցին, մինչև Լավոգ, Համըղ ծերացան ու մեռան, թակավորութեն մընաց Լավոգի ախչկան ու Համըղի լաճուն:

Էրկըսվի պաժինքյն էլ մընաց մեչ թակավորութին:



5. ԽԱՌԱՆԿՈՒՆԱ ԳՅԵՂԻ ՆԱԽՐՈՐԹԻ ԱԽՉԻԿ

Թակավորի լաճ խետ ուր ախպըրգյրին խընդրաց գացին կան գալու, ուր խամար կնիկըմ կընդեր, պիրեր:

Գացին մեկ գյեղըմ, հախարի վերեն նստան, ախչըկներ էկան ճուր տանելու:

Ախչըկներու խառցեցին, ասին. - Էսա գյեղ ի՞նչ գյեղ ա: Ասին՝ Խառանկունս:

Վերչ՝ ախչիկ մ'էկավ: Տեսան, օր շատ խորոտ ախչիկ էր, թակավորի տըղի աչք ինգանվ հինե:

Խառցուց. - Վի՞ր ախչիկն ես:

Ասաց. - Խառանկունսա նախրորթի ախչիկն եմ:

Գացին նախրորթի տուն, ախչըկեն ուզեցին:

Նախրորթ շատ ուրախացավ, ասաց. - Շա՛տ աղեկ, հավելի աղեկ, օր թակավորի տըղեն էղի ձի փեսա:

Ախչըկեն ասաց. - Թակավորի տըղեն քյե կուգա:

Ախչիկն ասաց. - Թի արիեստ ունի ծեռ, կառիմ, թի չէ, վո՛ւ կելնի, թըխ էղնի, չե՛մ առի:

Տանցան, գացին տուն: Թակավորին պատմեցին:

Լաճուն էտի արիեստի, կարպետ գյործել սովրանվ:

Ախչիկ էպե, փըսակեց տըղայի վերեն:

Թակավոր մեռավ, տըղեն նստավ թակավոր:

Շատ, քիչ նստավ, օրըմ կընգան ասաց. - Կնիկ, արի՛ նստի՛ իմ տեղ թակավոր, ես մեկ էրթամ աշխարքյ կան գան, խեմ՝ ինչպե՞ս ա ահալին, ինչպես չի:

Կնիկ նստավ, էնոր տեղ թակավորեց, ինքն էլանվ, գլընաց էնոր տեղ կան էկավ:

Օրըմ հուրուէ քաղաք չարսու մեչ կան կը գա, ջըհուղներ կը պըռնեն, կը տանին: Էնոնց քաղքի էն կողմ էնպես պանցր քարըմ կա, օր անհաշիվ ա: Էտա քարի գլըլիս ակնունք, ալմաստ, ջանվահիր կը կընդղվի, օր ոչ ոք չըկանա էտա քարի գլըլիս պանցրանա, օր էտա քարեր պերա:

Ջըհուղներ մըտածած ան, թե ի՞նչ կերպ կընդղնինք, օր էտա ալմաստ քարեր պերինք:

Կը պերեն, եզըմ կը քըրթեն, կը խանեն տիկ, թակավորի տըղին կը մըտուցեն մեչ էտա տըկին, տիկ լավ կը փըչեն, պերան կապեն:

Էտա քարի գլըլիս երկու սինանախավքու պուն կա: Էն ժամանակ խավքեր կը տեսին, օր լեշըմ կա քարի գլըլիս, կեճին, ըզտիկ կը վիրուցեն քարի գլըլիս:

Տիկ օր տարած քարի գլըլիս, կտցով օր զարկին, տիկ ճըղվավ:

Թակավորի տըղեն տուս էլանվ: Խավքեր թըռան, ինքն մընաց քարի գլըլիս մեքու, ոնչ ճանքախ կա իճի, ոչ թու չարա կա:

Էտոնք տըկեն կը կանչեն, կասեն. - Էտա ակնունքներ, ջանվահիրներ թա՛լ, թըխ գան, օր մենք քյե ինչըխ խաներ ենք, էլման էճուցենք:

Եփ օր ակնունքներու հետև կան կը գա, կը տեսի՝ մեկ աղվըսի պունի պես պանմ կա, հըլին հիսնի գլըլիս ա, ոտ ա, ծեռ ա: Օր էնքան մարթու խապած ան, խանած քարի գլըլիս:

Թակավորի տըղեն մըտածեց, ասաց. «Էսքան մարթեր էկած ան ըստա, մեռած ան, ես էլ տը մեռիմ, էլ հո՛ւր ակնունք թալեմ տակ, էնոնք գանգընան»:

Օր, մ'երկու մընաց քարի գլըլիս, չեթալ, էնոնք թողին, գանցին:

Շատ, քիչ մընաց, չե՞ ցուրտ էր, ինքն էլ գլընաց, մըտավ աղվըսու պընան մեչ, օր չըմըսեր:

Գիշեր տեսավ, օր կըռթկըռթոց կը գա: Իշկեց, տեսավ, օր աղվիս էկե, էտա լեշերու օսկոռ կը կրծա:

Ասաց. - Ջանըմ, էտա աղվիս հալքաթ աշխըրքից ա էկե, էտա տեղ լեշ կուտա:

Առավոտուն էլանվ, ինգանվ էտա աղվըսու ծակի խետ ու գլընաց փորու վերեն:

Գլընաց գլըլիսներ, գլընաց, գլընաց, գլընաց, մեկ տեղըմ վե՛ քաղքից գանտն, տուս էլանվ:

Էկավ մըչ քաղքին:

Ասաց. - Ես թակավորն եմ, կանեք, տուրք շատ անմեղներ պերեր եք, խաներ քարի գլըլիս, սպաներ եք: Ծե հըմենիտ սըրի տը քաշեմ:

Գլընաց էն մեկէլ փողան կան էկավ, մեկ էլ էն ջըհուղներուն ռաստ էկավ: Ջըհուղներ պըռնեցին, տարան: Տարան, էճուցին մեկ գյետնափոր մաղարի՛մ մեչ:

Տեսավ օր ի՞նչ՝ կան քսան, եռսուն խոգի, հըմեն պըռված, գո՛ դա եմ:

Թակավոր խառցուց, ասաց. - Մարթեր, տու՛ ըստա ի՞նչ կեմեք, ծե ի՞նչ ա էղե:

Կեսն ասին. - Մե թագան հեւօր պըռնած են, պերած են, չենք գիտի ի՞նչ խընթիր ա:

Մեկ էնդեխեն ասաց. - Յե՛, մարթ, ի՞նչ կը խառցնիս, էնի օր արհեստավոր ա, արթեն էտա տեղ արհեստ կենա, էնոր պան չեն ասի, չուր ժամանակին խի ի՞նչըխ կեղի: Էնի, օր արհեստավոր չի, կը տանեն, կը մըտուցեն տըկի մեչ, խավքեր էնի կը խանեն քարի գլըլիս:

Ասաց. - Տու՛ ընչի՞ց գինաս, թի կը խանեն քարի գլըլիս:

Ասաց. - Մեկ մարթըմ պըռնած են, տարած քարի տակ, օր խավքեր խանեն վեր: Խավքեր զենի խանած են քարի գլըլիս, խավքերուն ի՞նչ կըլնի, էտա տիկ չըն պատռե, կերթան, տիկ կը մընա էտա տեղ: Կարիք խավքեր կը գան էնտեղից ընցնելու, լեշ քարի գլըլիս կը տեսին, կեճին վերին, էնտուց կառին, կերթան հուրուէ սարըմ, էնտեղ կուտեն: Տիկ խե պատռելուն մարթըմ կելի տուս, խավքեր կը փախեն, մարթն կելի, կը գա: Կը գա, էլման ջըհուղներուն կը պատահի, էնի կը պըռնեն, պերեն ըստա: Էնի ծի կը պատմեր: Յիմա՛ քյե օր պիրած են ըստեղ, օր տու՛ մեկ արհեստ չըգիտնաս, քյե կը խանեն քարի գլըլիս, օր ակնունք, ջանվահիր պերես տակ:

Քիչ վերճ ջըհուղներ կը գան, կը խառցընին. - Տու՛ ո՞ր մեկ արհեստավոր եք:

Թակավոր կասա. - Ես արհեստավոր եմ:

Կասեն. - Քիւ արհեստ ի՞նչ ա:

Կասա. - Իմ արհեստ կարպետ, խալի, խուռջի շինել ա:

Լե թակավորու տղղեն կասա. - Իմ շինածին էսա քաղքի մեչ գյին չեն կանա տա, թակավորի թախթի քաղքայն էղի, օր գյին էն ա: Խատին հիսուն օսկի, խարիր օսկի կը տան:

Եփ օր ժամանակե՛մ վերճ մեկ խատ կը շինա, կարպուտի պըռկըներ էնու ի՞նչ գալ գըլլիս, ո՞ր տեղ մընալ, կը գըրա թելով:

Ջըհուղներ կը տանեն ուրենց քաղքի մեչ, խարիր, էրկու խարիր կուռուչ կը տան կարպետին:

Էն մեկ ջըհուղ կասա. - Տանենք թակավորական քաղքայ, օր մեկ խատ խարիր, խարիր հիսուն օսկի տան:

Կառին, կերթան էտոնց մայրաքաղքայ:

Կը տանին, չարսու մեչ էնի օր կը ծախա, մուշթերիք կը գան, կը խին օր առին, կը խին, օր թակավորի անուն գըլլխագալ՝ Լած՝ գըրուկ ա չորս պիլիր:

Կասա. - Ջանըմ, մեր թակավոր դի՞ր ա գանցե, պըռվե գյերի:

Փոլխ կոմսարներուն կասեն: Փոլխներ կառին, կը տանին էտոնց թակավորի սարեն:

Թակավորի ծառաներ գանցին, թակուհուն ասին: Թակուհին էկավ, տեսավ, հիմացավ:

Էլանվ, չորս-խինգ թաբուռ գորք առեց, ըզկարպետու պերողն էլ խետ առեց, գըրնաց յալլա՝ խընդ ջըհուղներու քաղքայ:

- Դե՛, մարթ, էսա մարթ ո՞ր տեղն ա:

Ջըհուղ տեղ շանց էտու:

Թակավորի կին մըտավ ներս, տեսավ օղորթ՝ ուր մարթ գի էնդեն ա:

Ամբողջին տիւս էխան: Հըրաման էրաց՝ գորք ըզջըհուղներ հըմեն քաշեցին սուր:

Տանցան, էկան էնոնց տուն:



6. ԹԱԿԱՎՈՐԻ ԾԱՌԵՆ

Մեկ թակավորըմ կեղի, էնոր մեկ ծառե՛մ կեղի: Էտա ծառեն օրըմ կերթա սարի մեչ կը ֆըռա, մեկ խավքիւ թեբուռ կը կընդընի, կը պերա:

Էտա խավքիւ թեբուռ էնալ սիրուն կեղի, օր թակավոր կը տանի, տընա ուր հօդի մեչ:

Վերճ էնու վոզիր կը գա, կը տեսի էտա թեբուռ:

Կասա. - Թակավոր ապրած, էսա թեբուռ ո՞ր տեղից ինգե քիւ ծեռ:

Կասա. - Ծառեն ա պերե:

Կասա. - Էսա թեբուռ էնքան խորոտ ա, ապա թեբուռի տեր ինչքա՞ն խորոտ ա, ծառեն խըրկա, թ՛երթա խավքայն պերա:

Թակավոր կասա. - Վոզիր, էտա խավքիւց թեբուռ մ՛իմգեր էր, խեղճ տղղեն խավքյ ո՞ր տեղեն պըռնա, պերա:

- Չէ՛, - կասա վոզիր, - թեբուռ պերող խավքյն էլ կանա պերա:

Էն ժամանակ թակավոր կը կանչա ծառային, կասա. - Յան խավքյ կը պերես, յան քիւ վիզ կը գանին:

Տըղեն կերթա սենյակի մեչ լան, լան չուր առավոտուն, օր էրթա խընդ խավքյ:

Առավոտման դեխ կը քըրնի:

Քըրնելու պես մեկ ըխթիյար մարթ կը գա էրագ, կասա. - Տըղա՛, ընչի՞ կը լան, կը մըտածես, ի՞նչ ա էղեր:

Կասա. - Չէ՞ թակավոր ընծեն խավքյ կուզա, Ես ո՞ր տեղեն պերեմ:

Ըխթիյար կասա. - Ես ի՞նչ օր կասիմ, իմ խոսքով էրա: Առավոտուն էլի՛, գըրնա՛ սար, էտա խավքյ էնու պիւն շիներ ա թըզի ծառի մեչ: Կը պաղկըվիս թըզի ծառի մեչ, Եփ օր գյիչեր էնի կը գա, կը նըստի էնու պըռնան վերեն, ծեռ կը թալես, էնի կը պըռնես:

Տղղեն եփ օր քյընուց կիշարնա, էտա էրագ օր տեսեր ա, էփեջն սիրտ կուրախնա:

Էն ժանանակ տղղեն կերթն սար, թըզի ծառըն կը կընդի, կը մըտի մեչ չուր հիրիկուն: Իրիկուն, օր խավքը գն, կը թառի էնու պընան վեր, ինքը ծեռ կը թնլն, խավքուն կը պըռնա, կը պերա:

Եփ օր կը պերա թակավորին, թակավոր կը տեսնի, շատ կուրախնա:

Վերճ վոզիր կը գն, կը տեսնի, կասա. - Տեսա՞ր, թակավոր, ի՞նչըխ խավքը էպե: Ծանխա՛, թ'երթա թաչկաթ քնղաքը, էնտեղաց թակավորի ախչիկ քյե խամար պերա:

Թակավոր կը կանչա ծառային, կասա. - Տ'երթաս թաչկաթ քնղաքը, թակավորի ախչիկ ձի խամար պերես:

Տղղեն գյըննց ուր սենյակ, էլնց, էլնց, ու քուն տարավ, քյընավ:

Քյընելու մեչ էտա խալիվոր էկավ էնու էրագ:

Ասաց. - Տղղեն, ինչի՞ կը լնս:

Ասաց. - Ես չըլնմ, վո՞ն տը լն, ես ի՞նչըխ տ'երթամ թաչկաթ քնղաքը: Թակավոր տըրե վըր ձի, կասա. «Տ'երթաս թաչկաթ, թակավոր ախչիկ պերես ձի խամար»:

Էն ժանանակ խալիվոր ասաց. - Մը՛ վնխենա, էլի՛, քու ճանքնի պըռնա, գյընն, ես միշտ, միշտ քու խետն եմ:

Տղղեն առավոտուն էլնավ, էնու խաց էտի տուրկի մեչ, ինգե սարեր, ծորեր, կերթա: Ծանքնխն էլ չըգյիտի, ծըռու պես կերթն:

Գյըննց, գյըննց, գյիշեր մընաց սարի մեչ:

Տեսավ, օր մարթուն մըմըռոց կը գն:

Գյըննց, կան էկավ, տեսավ, օր մեկ մարթըն, գյըլիխ վեր թնլած են խոր վեր: Թնլեց, մարթու ոտներ պըռնեց, քնչեց, խորեն խանեց տուս:

Ասաց. - Ծո՛, մարթ, տու էտա սարի խորի մեչ ի՞նչ կանես, քյե վո՞ն ա թնլե էտա խոր վե:

Ասաց. - Էտա քննի՛մ ժամանակ խորի մեչ անոթի եմ, խաց տու ուտեմ, օր սորա իմ գյըլխու գնլած քյե ասեմ:

Խաց էտու կերավ, էնու գյըլխու գնլած պատմեց:

Ասաց. - Հն՛, մարթ, ես հնվնլ կոր չեր: Ես թակավորի տըղա էր: Քննի ախչիկ զավակ էղեր իմ խոր, համա էն օր, օր

էղեր, մեկէլ օր իմ խեր էնու վիզ կը կըտրեր: Ես էլ շատ կուզեր՝ ձի քուր էլներ:

Էն մեկ օր ասի. - Թակավոր, օր ախչիկ էղի, տու ձիկ, հըմենին քուր կա, ձիկ չըկա:

Իմ մեր կանավ, ախչիկ էպե, իմ խեր էտա ախչիկ էտու ձիկ, ասաց. - Ան, գյընն՛ ուրիշ երկիր, իմ խողի մեչ մը՛ մընա:

Ես էլ առի ախչիկ, փնթութեցի, գնցի մեկ սարի՛մ մեչ: Օխչըրի կաթ, կովու կաթ պերի, կերցուցի, չուն ախչիկ ճոցավ: Դիրսվան ավչութեն կեներ, կը պերեր, միս կէփեր, կուտենքը:

Ախչիկ էղավ տասնութինգ տարեկան: Օրըն ես գնցեր էր ավչութեն, մեկ տղղեն՛ կը գն, էն տեղ վե կընցի:

Ախչիկ տղղին կասա. - Արի՛, ձի ա՛ն:

Տղղեն կասա. - Ընչի՞, տու տեր-տիրական չունի՞ս:

Ասեր ա. - Մեկ ախպեր ունիմ:

Կասա. - Օր ես քյե առնիմ, քու ախպեր ձի կը սպանա:

Վերճ ախչիկ կասա. - Տըղա՛, տու էտա տեղ պատրաստ կացիր, եփ հիրիկուն իմ ախպեր կը գն տուն, ես էնոր էննլ վնրպե-տուրյամբ կապեմ, արե համա գն՛ր, ըսպանա:

Ասաց. - Ես էկա հիրիկուն, խաց կերա, քյընա: Իմ քուր գյիշեր էլեր էր, իմ ծեռ, ոտ լավըմ կապեր էր:

Մեկ էլ տեսա՝ հերի տըռնից իմ քուրոչ ծեն կը գեր. - Տըղա՛, արի՛, արի՛:

Ես էսպես էլն, տը մըստեր՝ տեսա իմ ոտ, ծեռ կապուկ էր:

Ասի. - Վա՛յ, էտա իմ ոտ, ծեռ վո՞ն ա կապե:

Մեկէլ տեսա, օր իմ քուր ու տղղեն՛ մըտան ներս:

Տղղեն էսպես իշկեց ձի, ասաց. - Վա՛յ, ես քու ախպոր աչկերուց կը վնխենամ:

Ախչիկ ասաց. - Մը՛ վնխենա, ես էնպես եմ կապե էնու ծեռ, ոտ, օր էն չըկանա հիրար առնի:

Հանա փետ մ'առավ, էգնր իմ գյըլխուն:

Ու ասաց տըղային. - Դե՛, իմ ախպեր մորթա՛:

Տղղեն ասաց. - Չըմ մորթե, մեղքը ա, աչկեր խանենքը, տանենքը թնլենքը էնա խոր վե, չուն մեռնի:

Իմ աչկեր խանեցին, դրեցին իմ քուր, ձի թնլեցին էտա խորը վեր, մընացի էն տեղ, չուն տու էկար, ձի խանեցիր: Իմ գյըլխու գնլած էսին ա:

Էտա պատմութեան մեջ թակաւորու ծառեն տեսաւ, որ մեկ կոր եղվընիկ, մեկ էլ սաղ կը գան: Էն սաղ կանաչ թուփըմ պըռներ էր ուր պերան, կը լարեր կորու հիղև: Պըռնեց կորուն, էտա թուփ քըսեց էնու աչկեր, աչկեր ժըրավ: Թըռան, գանցին ու էտա թուփ թողին էն տեղ:

Ծառեն ասաց. - Տ'էլնիմ, էսա մարթու աչկեր տը տընիմ ուր տեղ, քըսիմ էնու թուփ, բալկո էսա մարթու աչկերն էլ ժըրի:

Թուփ էպե, աչկեր տըրեց ուր տեղ, թուփ թաթխեց ճուր, քըսեց էտա մարթու աչկերաց, աչկեր ժըրավ, խընդրաց ճանբախ գանցին:

Գանցին, մեկ հերին ռաստ էկան: Օր տը մըտնեն էն հերի մեջ, էտա մարթ տեսաւ, որ քուր միս ու սոխ կը պըրտեր, որ կերակուր էփեր:

Ախչիկ օր ուր ախպեր տեսաւ, զըզվաց:

Ախպեր ասաց. - Ընչի՞ կը զըզվաս, տու մըռնացիր քու չարութեան մեջ, էս կերթամ խընդ իմ գործին:

Էտա էրկու մարթ ժամանակըմ գանցին խընդրաց, դորսվան էնոնց ճանբախ պաժըրվավ:

Ինքն ուր ճանխով գըռնաց խընդ ուր խոր երկիր: Ծառեն գըռնաց խընդ ուր քաղաք՝ Թաչկաթ:

Ճանբախ գըռնաց, տեսաւ, որ ծուկըմ ծովու տալդեն թալեր ա, չըկանա մըտի մըջ ճըրուն, մացեր ա վըր ավազին:

Ինքն գըռնաց, կըլորեց, մըլեց ծով:

Ծուկ օր մըտավ ծովու մեջ, ասաց. - Մարթ, տու իմ կյանք ազատեցիր, արի՛ իմ թերուռից մե քիչ պա՛մ տամ քե, ի՞նչ ժամանակ տու նեղ ընգիս, տաս կրակ, էս քե կը խասիմ:

Մարթն առեց թերուռ, էտիր ուր քիթի մեջ ու գըռնաց ճանբախ:

Գըռնաց սար, տեսաւ, որ օձըմ փաթալեթե ծառ վե, կէլնի: Խավքու՛մ պու՛ն կեր էտա տեղ, որ խավքու՛ ծառքերն ուտի:

Վիշապուն ըսպանեց, միսն էտու, ծառքեր կերան, էկավ, նըստավ ծառի տակ:

Էն ժամանակ Սիմանա խավքը վերուց գըլխը վըրավ էկավ, որ էտա մարթ ուտա, վըռնասա:

Ծառքեր էլան մոր հանեճ, ասին. - Էտա մարթուն պան մ'էնի, էտա մարթ մեր կյանք ազատեց:

Ասաց. - Մարթ, տու աղեկութեն էս էրե: Արի՛ իմ թերուռից մեկը տամ քե, էն ժամանակ, որ տու նեղ ընգիս, էս քե կը խասիմ, թե տու էն թերուռ տաս կրակ:

Մարթն առեց թերուռ, ընգավ ճանբախ:

Գըռնաց, գըռնաց, սարի մեջ մեկ մեյմունի՛մ ռաստ էկավ: Տեսաւ, որ առջ էկեր էր, մեյմունի ծառքեր կուտեր: Մարթն խընդ առջ տեսաւ, վախեցաւ, մեկ էնու ծենով բռնաց: Բռնալու մեջ առջ էնու մոտեն վախեցաւ, դորսվան՝ առջն փախավ: Կապիկ էկավ, էնու մըռնացած ծառքեր ժողվեց, տարավ էնու պըռնան մեջ:

Տանցաւ էկավ, մարթուն ասաց. - Մարթ, տու իմ ծառքեր առչուց ազատեցիր, առ իմ մոտեն փըռու՛մ պիւրթ, է՛հ, ժամանակին թե օր նեղ տեղ մ'ինես, կրակ տաս իմ պըրթին, էս քե կը խասիմ:

Էն ժամանակ մարթն առեց ու գըռնաց:

Գըռնաց, խասաւ քաղաքըմ, մըտավ մեկ պառվու՛մ տուն, ասաց. - Մարե՛, էսիկ Թաչկաթ քաղաք՞ըն ի:

Ասաց. - Չավա՛կս, Թաչկաթ էսա քաղքից մեկ ամիս կիսու ճանբախ գանցին ի:

Ասաց. - Ապա էսա քաղքի անուն ի՞նչ ի:

Ասաց. - Էսա քաղքին Թիլման կասեն:

Ասաց. - Տու հի՛ւր կերթաս Թաչկաթ, տըղա՛:

Ասաց. - Տ'երթամ թակաւորու ախչըկե խետ փորձըվիմ, բալկո առիմ, գան իմ թակաւորին:

Ասաց. - Տու չըս կանա վըր էնու: Էնու ճոչ քուր ըստա՛ է, գըռնա՛, խընդ էնու փորձըվի, թի կարցա՛ր, գըռնա՛ խընդ պըստիկ քուր: Թի չըկարցա՛ր, չըխտ քու վիզ կը կըտրա:

Ծառեն էլավ, գըռնաց թակաւորի ախչըկե մոտ, խառցուց, ասաց. - Քու անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անուն Նաժիշտ ա:

Ասաց. - Նաժիշտ, էկեր են խընդ քե փորձըվելու, խի քու փորձ ինչպե՛ս ա:

Ասաց. - Իմ փորձ էնպես ա՛ տու պաղկըվես, թի էս չըկիտցա՛ տու ո՞ր տեղն էր, էս հաղթա, դորսվան ի՞նչ գիտես, խընդ ծիկ էրա, կառնիս, կը տանիս, ի՞նչ գիտես, էրա: Թի խանեցի, չըխտ քու վիզ կը գանիմ:

Ասաց. - Չըխտ ես իկեր եմ, որ խընդ քյե փորձըվիմ: Ես կերթամ պաղկըվիմ:

Ասաց. - Լա՛վ, գյընա՛ պաղկըվի՛:

Տըղեն գյընաց պառվու տուն, ասաց. - Պառա՛վ, տեղըմ չուցի՞ս, ես հեսոր պաղկըվիմ էն տեղ:

Ասաց. - Գյընա՛ խավերու տուն պաղկըվի:

Տըղեն գյընաց, խավերու տուն պաղկըվավ չուր կեսօրին, կեսօրին էլավ, գյընաց:

Ախչիկ ասաց. - Տո՛ւ պաղկըվեր էր պառվու խավերու տուն:

Տըղեն հըզգաց, ասաց. «Վալլա՛, էսի իմ վիզ կը գանի, էնի ի՞նչ գիտցավ, թի ես պաղկըվեր ի էն տեղ»:

Ախչիկ ասաց. - Գյընա՛, մեկ էլ պաղկըվի, իրեքյ անգամ ի իմ շարթ:

Տըղեն գյընաց ծովու պըռուկ, ծըկան թերուռ էտու կրակ, ծուկ շուտ մ'էկավ, ասաց. - Ի՞նչ կուզես:

Ասաց. - Կուզեմ, որ տո՛ւ ծի չում կեսօրին պախես քու պերանը վե, որ թակավորի ախչիկ գի չըտեսնի, թի չէ իմ վիզ կը կըտրա:

Թակավորի ախչիկ էլավ, տես-տեն աչկեց, տըղեն եփ օր էկավ, ասաց. - Ես ո՞ր տեղն էր պաղկըվե:

Ասաց. - Տո՛ւ ծովու ծըկան պերնի մեչն էր:

Տըղեն ասաց. - Իմ խընթիր լըմենցավ, էսա դիրուն իմ վիզ կը գանի, պըռձա ախչըրքյից:

Ասաց. - Մեր փորձ մընաց մեկ:

Էն մեկէլ օր տըղեն գյընաց մըտ կապիկ:

Ասաց. - Ի՞նչ կուզես:

Ասաց. - Կուզեմ՝ տո՛ւ չուր կեսօրին ընծի պախես, օր մարթ ծի չըտեսնի:

Կապիկն ի, մըտուց էնու պուներ վեր, էնու ծաքյեր, հինքյըն մըստան պընան պերնի հանեծ:

Թակավորի ախչիկ ո՞ր տեղ աչկեց, չըկարցավ կընդեր էր: Էն ժամանակ, եփ օր էկավ տըղեն, ասաց. - Ես ո՞ր տեղն էր պաղկըվե:

Ախչիկ չըկիտցավ:

Ախչիկ, օր չըկիտցավ, էխան ուր մատի մատնիկ, էտու էնոր, ասաց. - Ա՛ռ էսա մատնիկ, կուզես ծի ա՛ռ, կուզես ընծի գա՛ր, գի մատանին տըվի:

Տըղեն մատնիկն մըտուց ուր մատ:

Ասաց. - Ես կերթամ Թաչկաթ խընդ քու քուր: Թի տառցա, քյե կը տանեմ, թի չէ, չըխտ իմ վիզ կը կըտրա, կը պըռձի:

Տըղեն եփ օր գյընաց Թաչկաթ, շատ գանտն ճամբախ էր:

Օրըմ գյընաց, մեկէլ օր խավքու թերուռ ինգավ միտ:

Թերուռ էտու կրակ, խավքյ էկավ, ասաց. - Ի՞նչ կուզես:

Ասաց. - Բյենե կուզեմ՝ տո՛ւ ծի տանես Թաչկաթ:

Խասավ Թաչկաթ քաղքյի կուշտ, էճավ տակ, խավքյն թըռավ, ինքյն էլավ հուշիկ-հուշիկ գյընաց քաղքյ: Տեսավ, օր մեկ ըխթիյար մեկ պըստիկ կաֆաս մ'ուր ծեռ, ճընջըղուկըմ մըչ կաֆասին, էտա ըխթիյարի ծեռ էկավ լաճու անեծ:

Չասե՞ս՝ տա ըխթիյար էն ըխթիյարն ա, օր միշտ լաճուն էրագի մեչ կը գա:

Ըխթիյար ասաց. - Տըղա՛, դի՞ր կերթաս:

Ասաց. - Կերթամ էսա քաղքյ՝ թակավորի ախչըկե խետ փորձըվիմ:

Ասաց. - Էսա ճընջըղուկ չըս առե՞ր:

Ասաց. - Ի՞նչ տ'ենեմ, գի պըկեր չիգա:

Ըխթիյար ասաց. - Բյե փառով չըմ իտա, ա՛ռ, տա՛ր, տո՛ւ միքա մարթ ես, քու բեհն էլնի խետ:

Տըղեն առավ ճընջըղուկ, տարավ, ասաց. - Տանեմ էրթամ:

Ճամխի խետ կը տեսնի, օր կաֆաս կը զըրուցա:

Իշկեց. էնու կըշտըներ մարթ չըկա:

Տըղեն զարմացավ, ասաց. - Չանըմ, էսի ի՞նչ ա, կիշկեմ, իմ չորս պիլի՞ր մարթ չըկա ու զըրոցի ծեն կը գա:

Տըղեն իշկեց կաֆասի մեչ, ճընջըղուկ ասաց. - Ընչի՞ կը գարմանաս, ես իմ կը զըրուցեմ: Էն ըխթիյար էն ըխթիյարն էր, օր միշտ էրագի մեչ կը տեսներ, օր ծի էտու քյե: Եփ օր կերթանքյ թակավորի ախչըկե մոտ, տո՛ւ պարս կը տաս թակավորի ախչըկեն, ծի տի տըռան հիտև, գյընա պարս տու: Օր քու պարս չառավ, տո՛ւ տանցի, տըռան պարս տու: Ես չըխտ աներևութ եմ, դիրսվան կը սկսիմ զըրուցել:

Տրդեն առավ ճընջողուկ, գյընաց թակավորի ախչըկե մոտ:
Գյընաց խանսավ տոռ, ինքյն մըտավ ներս, ճընջողուկ էտի տոռ:

Ասաց. - Պարն քյե, թակավորի՛ ախչիկ:

Ախչիկ ծեն չիխան, չըզըրիցեց:

Տանցավ, պարն էտու տըռան, ասաց. - Պարն քյե, թակավորի ախչըկե՛ տոռ:

Տոռ ասաց. - Ածու պարին էկար: Թակավորի՛ ծառա, ի՞նչ գործ ունես էտա հիմար ախչըկե խետ: Քյե պես խազար ջըհելի գյըլիխ ա կըտրե:

Թակավորի ախչիկ ծըռավ, ինքյն ուր ասաց. «Ձանըմ, էսա տոռ ի՞նչըխ էտը պատասխան կը տա: էսա մարթ խրիշտա՞կ ա, ի՞նչ ա»:

Ասաց. - Տոռ, մեկ պա՛ մ՛ ասա, ականջ ընենքյ:

Ասաց. - Օր լավ մըտիկ էնեքյ, կասեմ:

Ասաց. - Ժամանակին խոր մ՛իրեքյ տըղա կելնի: Էնոնց խոր մեյ խատ անգյին խավքըմ կեղի: Տըղեկներ օրըմ ասին ուրենց խոր. «Դանդո՛, խալիվորցեր ես, մեռնելու ժամանակ էսա խավքյ ո՞ր մեկին տը տաս»:

Խեր ասաց. - Ծե հըմեն մեկին խարիր հիսուն կուռուշ փարա՛ կը տամ, իրեքյտ էլ գացեքյ կուրբաթ, որ օր հա՛վիլի փարա՛ էպե, էն խավքյ էնոր կը խասնի:

Իրեքյ ախպերն էլ, առած ամեն մեկին խարիր հիսուն կուռուշ փարա՛, խընդրաց գացին: Գացին, խասան մեկ տեղըմ, ճամբախ իրեքյ ճող պա՛ժվավ:

Ախպըրներ իրարու ասին. - Էկե՛քյ, մեկ էնա ճամխով երթանքյ, մեկ՝ էնա ճամխով, մեկ՝ էսա ճամխով: Լե իրեքյ տարի պայմանով, իրեքյ տարուց ետ եփ օր կը տաննանքյ, ո՞ր շոտ գա՛, թըստան նըստի, աչկա, չու՛մ էմեկելոնքյ գան:

Եփ օր իրեքյ տարի թըմըմավ, հանճին՝ ճոչ ախպեր էկավ, էն տեղ նըստավ: Քանի մ՛օր ընցավ, միչնեկ ախպեր էկավ, քանի մ՛օր էլ ընցավ, պըստիկ ախպեր էկավ:

Էն տեղ մեկտեղան ու ասին իրարու. - Ախպերներ, մեզնից ո՞ր մեկն ա շատ փարա՛ պերե, օր խավքյն առնի:

Ճոչ ախպեր ասաց. - Վալլա՛, ես փարա՛ չունիմ, լե համա մարիֆաթըմ սովրեր եմ, օր ձի քիմիյա ա:

Ախպըրներ ասին. - Ի՞նչ ա քու մարիֆաթ:

Ասաց. - Ես մեկ տարվան ճամբախ գանն կը խասկընամ՝ խի էն տեղ ի՞նչ կեղի, ի՞նչ չեղի: Իմ մարիֆաթ էնի յա:

Միչնեկ ախպեր ասաց. - Ես էլ փարա՛ չըմ պերի, համա ես էլ մարիֆաթըմ սովրեր եմ, էն էլ ձի շատ օգուտ ա:

Ասաց. - Ի՞նչ ա քու մարիֆաթ:

Ասաց. - Ես էմա՛լ հեքյըմութեն սովրեր եմ, օր մեռնող մարթու լեզվեն խասիմ, կը ժըրըցուցեմ:

Էն ժամանակ պըստիկ ախպեր խառցընեցին:

Պըստիկ ախպեր ասաց. - Ես էմա՛լ փոթանցութեն սովրեր եմ, օր մեկ ամսըվան ճամբախ մեկ օր կերթամ:

Ախպըրներ ճոչ ախպիր ասին. - Արի՛ իմացի՞ խի մեր խոր խավքյ սա՞ղ ա, թի՞ խատի:

Ճոչ ախպեր ականջ էտի գյետնին կես սահաթի չափ, էլնավ, ասաց. - Ախպըրներ, մեր խոր խավքյ խիվանդ ա՛, համա մընացեր ա իրեքյ սահաթ, օր խատի:

Միչնեկ ախպեր էնու ծոցեն շուշե՛մ տեղ իխան, ասաց. - Երանի էսա տեղից մե փշու՛մ ինգեր էնու կըտըցին, էն տը ժրեր, չէր խատնի:

Պստիկ ախպեր ասաց. - Իրեքյ սահաթ ժամանակ կա:

Ասաց ու տեղն առավ, վազավ: Երկու սահաթ գյընաց, խասավ տու՛ն, տեղ էտի խավքյի կըտըցին: Խավքյ տեղ կուլ էտու, սաղցավ:

Մընաց չուր քանի՛մ օր, էն մեկէլ երկու ախպերներն էլ էկան, խասան տու՛ն:

Ասաց. - Մըկա իրեքյ ախպերներ վեր էսա խավքու՛ն կը կըռվին, էնիկ կասա՛ ձի կը խասի, էնի կասա՛ ձի կը խասի: Թակավորի՛ ծառա, օր տոռ էղնիս տանավոր, տոռ էտա խավքյ վի՞ր տը խասուցեր:

Ասաց. - Ես ճոչ ախպիր տը խասուցեր, օր էնի հիմցավ՝ խավքյ խիվանդ եր:

Տոռ ասաց. - Եսն էղի, կը խասուցի միչնեկ ախպիր, ընչի օր հեքյիմ էնի յա:

Թակավորի ախչիկ չըտիմացավ, ասաց. - Տոռ երկուսն էլ հիմար եքյ, օր հիմար չեղեքյ, խավքյ պըստիկ ախպիր կը խասուցեքյ: Օր էնի տեղ չըտաներ, խասուցեր, խավքյ ի՞նչըխ տ՛ա-գատվեր:

Ծառեն ասաց ախչըկան. - Ձի հանթըվար, իմ նշանակ տո՛ւ:
Ախչիկ ասաց. - Էսա մեկ անգամ, դրիա էրկու անգամ էլ կա:
Էլ՛ավ, գյընաց, առավոտուն մեկ էլ էկավ:
Թակավորի ախչիկ էլ՛ավ, տառ ճըղեց, հալրուշ տուռ մ'էլ
էպի, խի վերեն:

Տըղեն էկավ, խավք տըղին ասաց. - Էսա տըրու՛ն ծի տի՛ր
աթռռի տակ:

Ծառեն ասաց. - Պա՛րև քե, թակավորի՛ ախչիկ:

Ծեն չէտու, պա՛րև չառավ:

Պա՛րև էտու աթռռին, աթռռ պա՛րև առավ:

Ասաց. - Թակավորի՛ ծառա, ի՞նչ գործ ունիս խընդ էտա հի-
մար ախչըկեն:

Տըղեն ասաց. - Հե՛յ աթռռ, պա՛մ ասա, մե քիչ ականջ
էնենք:

Ասաց. - Կասեմ, ամա լավ ականջ էրեք:

(Պատմողը պատմեց իրեք իմաստուն եղբայրների պատ-
մությունը, ուղտի, հղի կնոջ և զիրենք դատող դատավորի անհա-
րազատ զավակ ըլլալը, հացի արնոտ ըլլալը, և մսի շան միս ըլ-
լալը)⁷:

- Մըկա, թակավորի՛ ծառա, վո՞ն ա էտնցից հիմաստուն:

Թակավորի ծառեն ասաց. - Ճոչ տըղեն ա:

Աթռռն ասաց. - Միչնեկն հավելի խելացի էր:

Թակավորի ախչըկե սիրտ չըտարավ, ասաց. - Տա՛ւ քանի՛մ
հիմար եք, պըստիկ տըղեն ա հիմաստուն:

Ծառեն ասաց. - Թակավորի՛ ախչիկ, տա՛ւ հանթըվար,
դարսվան հանձնվի:

- Չէ՛, մընացե մեկ անգամ էլ, եսի օր հանթըվա՛ կը
հանձնվեմ:

Մընաց չում առավոտուն, տըղեն էկավ:

Թակավորու ախչիկ զաթռռ ճըղճըղեր, էնդուց թա՛լեր:

Խավքյն ասաց. - Ձի տի՛ր էնու մի՛նդըրի տակ:

Էտի մի՛նդըրի տակ: Պա՛րև էտու թակավորի ախչըկեն,
չառավ:

Պա՛րև էտու մի՛նդըրին, մի՛նդա՛ր պա՛րև առավ, ասաց. - Թա-
կավորի՛ ծառա, էսա էրկու տի՛ր տա՛ւ թակավորի ախչըկեն տարար,

էսա հիտին տի՛ր փորձըվել քա՛ւ հիմարութեն, թող քե հանձնվի:

Ասաց. - Մի՛նդա՛ր, մեկ պատմութեն մ՛ էրա՛, ականջ էնենք:

Ասաց. - Ես պատմութեն էնեմ, տա՛ւք ականջ էրեք: Ժամա-
նակով թակավորըմ կեղի, էնոր ոսկե լապըզտրակըմ կեղի, ոսկե
թագի՛մ, օր ոսկե սինու մեչ տըրված՝ միշտ կը լա՛րեն հիրարու
էտև:

Թակավորուն իրեք լաճ կեղի:

Օրըմ խոր կասեն. - Դա՛դա՛, քա՛ւ մեռնելուց ետ էսա ոսկե
լապըզտրակ, ոսկե թագին վի՞ր կը խասնի:

Խեր ասաց. - Գացե՛ք էնա երկիր, էնտեղ մարթ փորձող կա,
փորձըվեք: Վո՞ն օր հիմաստուն էղավ, էտա պա՛ն էնու կը խասնի:

Էլ՛ան, գացին փորձողի մոտ:

Ասին. - Մե փորձի, խի մեզնից ո՞ր մեկն ա հիմաստուն, օր
մեր խոր ոսկե լապըզտրակ, ոսկե թագին խասի էնոր:

Փորձող էպե, ծավա՛ր էլից սամավարի մեչ, եռցուց, չայնիկն
չայ էթա՛լ, շուշեք պատրաստեց: Էտա իրեք ախպիր կանչեց էպե,
նըստուց էնտեղ:

Ծառեն ասաց. - Սամավար կեռա, չայ՛ պե էսա մարթերուն:

Ախպըրներ իշկեցին սամավար, ճոչ ախպերն ասաց. - Ա՛վ
կոտան (այս ծեծած է)⁸:

Միչնեկ ախպեր ասաց. - Ա՛վ բը դաստե խո թավ տանա
(ծեռքով խառնված է):

Պըստիկ ախպեր ասաց. - Ա՛գ տը բեժիմ ա՛վ տան ա՛ (ես
կասեմ, որ այս ծավար է):

Մի՛նդա՛ր ասաց. - Թակավորու ծառա, էտա փորձող խասուց
պըստիկ ախպիր: Տա՛ւն էղիր՝ ո՞ր մեկուն տը տեր:

Ասաց. - Ես էղեր, տը տեր միչին ախպիր:

Էն ժամանակ թակավորի ախչիկ չըտիմացավ:

Ասաց. - Տա՛ւն էլ հիմար ես, էտա տա՛տավորն էլ հիմար էղե:
Էնոնցից խելացին ճոչ տըղեն ա: Օր էնի ասաց՝ էսի ծեծած ան, էն
մյուս ախպեր կիտցավ, օր ծավա՛ր կը ծեծին, հալքա՛թ ծեռնով էլ
հիրար կը տան: Պըստիկ ախպերն էլ կիտցավ, օր ծավա՛ր ա սա-
մավարի մեչ:

⁷ Ծ.Բ.

⁸ Արտահայտությունները քրդերեն լեզվով են, բացատրությունը բանահա-
վաքինն է (Ծ.Կ.):

Թակավորու ծառեն ասաց. - Թակավորու ախշիկ, դիրսվան քու հնդրովելու նշան տու:

Էն էլ էլանվ, մատնիկ էխան, էտու: Ձույաբ գյընանց թակավորուն, թե քու ախշիկ հնդրովավ: Թակավոր շատ ուրախացավ:

Ասաց. - Էն ախշիկ էնքան մարթու գյըլիխ կըտրե, օր մեղաց արյան տակ մըտանքյ:

Խընդ ախշըկեն ջըհեգ-մըհեգ էտիր:

Ասաց. - Թակավորի՛ ծառա, ախշիկ փըսակեն վեր քյե:

Ասաց. - Չէ՛, ես իմ թակավորի խամար կը տանիմ:

Առավ գախշիկ, ինգանվ ճամբախ: Ճամբախ հեռու էր, ջըկաներ խասներ, խավքու թեբուռ միտ ինգանվ, էտու կրակ, խավքյ խասավ:

Ախշիկ, ինքյ նըստան խավքու թեբուռ վերեն, տարավ էնու թակավորի երկիր էտիր:

Ախշիկ ասաց. - Ծառա՛, տու շատ սիրուն, հիմաստուն ես, ես քյե կուզիմ ասիմ՝ թակավորին կամքյ չըմ իտար:

Ասաց. - Չէ՛, ես ծառա եմ, թի ես քյե էնու խամար չըտանիմ, չըթողնի իմ խոր երկրի մեջ մընամ, իմ վիզ կը գանի, քու էլ խետ:

Չուր գանցին, ջույաբ էկավ հանճեներ, թե թակավոր մեռեր ա:

Ծառեն թակավորի ախշիկ փըսակեց էնու վերեն, իրեքյ-չորս օր խաղ-խաղտուն էրաց, էնոնքյ խասան ուրենց մըրագին:



7. ՇԱԻՔԱԶ ՄԵԼԻՔՅ

Ժամանակով մարթըմ կեր, էնոր անուն Շաիբազ Մելիքյ էր: Շատ հարուստ մարթ էր: Մեկ կընիկ ուներ, էնոր տըղա ջըկեր: Ինքյն փափաքյ էր՝ մեկ տըղա էլներ ուր:

Եփ տըղա չէղավ, ուր կընգան ասաց. - Արի՛ էրթանքյ էճմիածին, աղոթ էնենքյ, Աստված մե մեկ տըղա տա:

Գանցին էճմիածին, խընթեցին, օր Աստված էնոնց տըղե՛մ տա: Յեվարման գանխ, օր ժամեն կէլին, Շաիբազ Մելիքյի կընիկ մեկ խորոտ հեթիմըմ տեսավ ժամու տուռ: Շատ ուզեց էտա տըղեն, էն էլ տասվերկու տարեկան էր: Էնու սըռտի մեջ ասաց. «Կը խընթեմ Աստծուց, ինչքան ես էտա տըղեն սիրեցի, Շաիբազ Մելիքյն էլ իմ պես սիրա, օր տանեմ, էնեմ ձի խոգանվակ: Կարելի յա, օր ես էկա ըստն ուխտի խամար, օր ձի տըղա էղեր, Աստված էտա տըղեն էտու ձի»:

Մընաց չուր հիրիկուն, Շաիբազ Մելիքյ էկավ ուր հօղեն, կընիկ ասաց. - Շաիբազ Մելիքյ, Աստված մեկ տըղե մ՛ա տըվե մե, ես շատ սիրեցի, տուն էլ տե՛ս, խի՛ տը սիրե՛ս, թի՛ չէ:

Շաիբազ Մելիքյ տըղեն օր տեսավ, խընդ կընիկ շատ սիրեց:

Տըղին խարցուց. - Դու ո՞ր տեղացի իս: Խեր ունի՞ս, մեր ունի՞ս, պարեկամ ունի՞ս:

Ասաց. - Չէ՛: Ես զինքյ էտա տեղն իմ տեսի:

Ասաց. - Ի՞նչըխ քյե էտա տեղն իս տես:

Ասաց. - Ես ութ տարեկան, պարսիկի խողի միճից եփ օր գախթըվանքյ, ինձի խետ ա պերած: Թանան ան էտա տեղ, որի

անընով ըզծի կը պախեն:

Ասաց. - Լավ կէղի, տըղա՛, քիւ անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անուն Աղավան ա:

Շահբագ Մելիք տըղին ասաց. - Թե քյե շատ ուզեցի, իմ կընիկ խընդ ծի հնավելի ըզքյե կուզա: Օր մենք քյե տանինք, մե տըղա էնենք, տիւ տը գա՛ս, էղիս մի տըղա, թի՛ չէ: Ես էլ շատ հարուստ եմ, իմ մալ կը մընա քյե, կը տեսնաս՝ իմ ծերութնի ժա՛մանակն ա: Էնքան օր էղիս ծի հիշատակ:

Ասաց. - Լավ կէղի, ես չըխտ շատ կուզեմ, օր ծի խեր մ'էղի ու մեր մ'էղի: Ես անլա խեղճ ու շիվար չըմնամ:

Ասաց. - Շա՛տ աղեկ, վա՛ղ չէ մեկէլ օր ճամբախ կելինք, էրթանք մեր տուն: Քյե կը տանիմ խետ:

Էկան էնոնց տուն: Գյեղացիք իըմեն գա՛ցին հանեճ, թե՛ Շահբագ Մելիք, տիւ գա՛ցիր ինչ խընթելու, օրշնյալ Աստված, քյե տըղե մ'տու, առի՛ր, պերի՛ր խետ:

Էն էլ գոհացավ Աստծուց, ասաց. - Աստված ծի էտուր:

Խինգ-վեց տարի մ'ատեն գյընաց, տըղեն եղավ տասնեվուր տարեկան: Գարուն օր պացվավ, էնոնց գառ կեր, գառ կը տաներ, կարծեր: Էնոնց գյեղ թաղըմ քիւրտ էր, մեկ էլ խայ էր: Գյեղի մեջ աղե՛մ կեր, անուն Դավրեշ աղա յէր: Դավրեշ աղին ախչիկըմ կեր, տասնուխինգ տարեկան էր, անուն Փարիշան:

Էնի ու Աղավան գառներ կը խառնեն հիրար, կը տանեն, կարծեն: Տըղեն պառկավ, քյընավ, ախչիկ հիշար մընաց, օր գառներ չըկուրուսեն:

Տեսավ ախչիկ, օր տըղի պերնից էսպես շողի պես պա՛մ կէլեր, կը մըտեր ներս:

Տըղեն հիշարցավ, ախչիկ ասաց. - Աղավան, օր տիւ քյը՛նար, շողի պես պա՛մ կէլեր, կը մըտեր քիւ պերան, էնի ի՞նչ էր:

Ասաց. - Մենք մըկըրտվեր ենք ավազանի մեջ, էնի մեր օրենքյի, մեր մեռոնի շընորքյն ա:

Ասաց. - Ապա հե՛ր ծի չըկա:

Ասաց. - Տիւ քիւրտ ես, ծե մըկըրտութեն չըկա, տիւքյն անմեռոն եքյ:

Ախչիկ ասաց. - Աղավան, արի՛ ծի առ, տար մըկըրտա՛, էտա լիւս ես էլ տեսիմ:

Ասելուն խետ Աստված տըղի խելք փոխեց, ախչիկ, տըղեն գիրար սիրեցին:

Ախչիկ տըղին ասաց. - Իմ խեր աղա յա, օր հիմնա, քյիկ էլ, ծիկ էլ, քիւ խերն էլ կը սպանա, տըղերն էլ կը վառա:

Մընաց չուր էն մեկէլ էօր: Գառներ տարան, կարծան, տեսավ օր էրեցըմ էնդեխեն կը գյեր:

Աղավան ասաց. - Փարիշան, տերտեր գի կը գա, ես էրթամ գէն պերեմ էսա տեղ, օր քյե մըկըրտա, մարթ չըհիմնա:

Աղավան վա՛զեց, գըյընաց տերտըրոջ հանեճ, ասաց. - Տեր հայր, ես քյե պա՛մ տ'ասեմ, համա չէղի՛ տիւ հուրիշներուն ասես:

Ասաց. - Չէ՛, տըղա՛, ես տերտեր իմ, օր ծի խոստովանք էղի, ես մարթիւ քըսա չըմ էներ: Իրավունք չունիմ, օր ասեմ:

Ասաց. - Ես ու Դավրեշ աղի ախչիկ հիրար շատ կուզենք, մենք հիրար տ'առնինք, կը խընթիմ, օր տիւ գա՛ս, էնի մըկըրտիս, օր մեկ մարթըմ չիմանա:

Տերտեր ասաց. - Զավակս, Դավրեշ աղեն օր հիմնա, ընծի յէլ կը սպանա, քյե յէլ, քիւ խերն էլ կը սպանա:

Ասաց. - Չէղի՛, տերտեր, ուզես, չուզես, տը գա՛ս:

Ասաց. - Ո՛նչ մասթուփ կա խընդ ծի, ո՛նչ մեռոնի շիշ, վա՛ղ առավոտուն կառիմ, կը գա՛մ, մըկըրտութեն կէնեմ:

Գառներ պերին գյեղ, չուր առավոտուն, առավոտ շոտ տերտեր էլավ, էկավ: Ախչիկ էպեր հախալըրի մոտ, չուխըցուց, մեռոն թափեց վերեն, օր տը մըկըրտա:

Տերտեր ասաց. - Բավոր չըկա, առանց քավորի մըկըրտութեն չէղի:

Տեսան, օր սարից մեկ մարթըմ գըյըլխըվեր կը գա խընդ էնոնք: Տերտեր, էնոնք վախեցան, ասին թի քիւրտ ա: Եկավ, տեսան, օր մեկ ճոջ մարթըմ, օր տաս մարթիւ գյորա կըղուվա՛թ ուներ:

Ասաց. - Տերտեր, տիւ էտի ի՞նչ ա ըստա կէնեքյ:

Ասաց. - Պա՛մ չընք էնի:

Ասաց. - Չի տ'ասեքյ, թի չէ ծի իրեքյն էլ ըստա կը սպանեմ:

Տերտեր չասաց, Աղավան ասաց, ասաց. - Ես Դավրեշ աղի ախչըկեն կը սիրեմ, տերտեր գիրով պերեր եմ, օր կընքա, օր առիմ: Մըկա քավոր չըկա:

Էտա փայլեվանի անուն Արագատ էր, ասաց. - Ես Աջմա

Շահի փայլեվան եմ, էկեր եմ էսա կողմեր կան կը գան՝ խի ի՞նչ կա, ի՞նչ չըկա: Օր ծի տեսա, էկա, մըկա ես ձե քավոր կէղիմ:

Փայլեվան Արագատ էղավ քավոր: Ախչիկ մըկըրտեցին, տերտեր ուր գյեղ գյընաց, Արագատն էլ սար գյընաց: Աղավան, ախչիկ մընացին չուր հիրիկուն, գաններ տարան տուն: Ըսկի մարթըմ չիմցավ էն մըկըրտութեն:

Էն մեկէլ էոր գաններ առան տըղեն ու ախչիկ, էլմէլ տարան, կարծան: Աղավան պառկավ քընավ, ախչիկն էլ էնու կուշտ քընավ: Ախչիկ տեսավ՝ Աղավանի պերնի էտա շող պերնեն կէլեր, կը մըտեր ուր պերան, ուր պերնից կէլեր, կը մըտեր Աղավանի պերան:

Ասաց. «Օրշնյալ Աստված, մեկ էլ էսա լիւս տեսա, թըխ մեռնիմ»:

Էրկու տարի էտպես ընցավ: Մեկ Մահմուդ աղա տաճիկըմ էկավ Դավրեշ աղի մոտ, օր էնոր ախչիկ ուզան ուր լամկուն:

Ուզեց ու պայման կըտրեց, օր էրկու ամիս նորեն գան տանի, օր էնոր ջըհեզ էնենք, խալավ-խազիւստ էնենք, թանգարիք իըմեն էնենք:

Ասաց. - Լավ կէղի, էնոր նաղը կըտրա՛, փարեն տամ, էրկու սորա կը գան, իմ խարս կառիմ, կէրթամ:

Աղավան չըհիմցավ, էն մեկէլ էոր ախչիկ գյընաց, Աղավան տեսավ, ասաց. - Չի ուզած ան, դիրիս ձի ճանքախըմ կընդի: Օր ձի ճանքախ չըկընդիս, ձի պանցըր տեղից կը թալիմ տակ, կը մեռիմ, էտա լիւս չըմ իտա, խավար չըմ առի:

Տըղեն ասաց էնոր. - Ես, իմ խեր մեր ոռց գաններ կը տանինք քաղաք, ծախենք: Տաննամ, գան, քյե մեկ ճարըմ կէնեն:

Էն մեկէլ էոր Շահբազ Մելիք առավ գաններ ու ըզտըղեն, տարավ քաղաք, օր ծախա:

Իրեք ավուր ճանքախ գանն ա: Գաններ ծախեցին, Շահբազ Մելիք գյընաց, օր փարա տ'առնի, քաղաքի մեջ Աղավան կուրուսավ: Շահբազ Մելիք էնքան կան էկավ, տըղեն չըկընդավ, էթող, գյընաց:

Ասաց թե՛ տըղեն տուն ա գանց:

Գյընաց տուն, կընգան խարցնեց, ասաց. - Կընի՛կ, Աղավան չէկե՞:

Ասաց. - Չէ: Չէղի՞ տըղին պան մ'ա էղե, սպանած ան, խի վընդութ մ'ա էղե:

Մելիք ասաց. - Չէ՛, իս գանցի փարեն առա, տըղեն իմ վերեն կուրուսավ:

Էնոնք սկսեցին տըղի խամար լաց: Աղավան կը մընա քաղաքի մեջ, տեղըմ չը կընդի, օր պառկի: Մուրըն կը տա վերեն, կը կըծկի սարի՛մ պատի տակ: Էտա շենք Շահի ախպիր նստած տուն ա: Շահի ախպիր կընիկ օր կէլի, տիւս կէրթա, կը տեսի՛ մեկ տըղե՛մ գո՛ կըծկե պատի տակ:

Կը խարցուցա, կասա. - Դու ի՞նչ տըղա ես, օր էսա տեղն ես մընաց:

Աղավան կասա. - Ես կարիբ եմ, տուն-տեղ չըկընդան, ես էլ էկա, կըծկա էսա պատի տակ:

Շահի ախպիր կընիկ տըղին կառի, կը տանի ներս: Խաց կը կերցուցա, չայ կը խըմցուցա: Ու կը խարցնա, թե՛ ո՞ր տեղացի ես, քիւ ջընս հի՞ւստ ա, ո՞ր տեղեն էկար: Քիւ անուն ի՞նչ ա:

Աղավան կասա. - Ես որի եմ, իմ անուն Աղավան ա: Շահբազ Մելիք ձի տարեր ա, էրե ուր տըղա, կը պախա: Գաններ պերինք ըստան, ծախեցինք, իմ խեր իմ վերեն կուրուսավ, մըկա ես տիւս եմ մընացեր:

Շահի ախպիր կընիկ կը շփոթվի Աղավանի անունից:

Կէլի, լալով կը փաթութվի Աղավանի վիզ, տըղեն կը գանմանա, կասա. - Էսա ի՞նչ ա, էսա կընիկ իմ էրըսներ կը պագան, կը փաթութվի իմ վիզ:

Կընիկ կասա. - Մը՛ գանմանա, դու իմ ախպիր տըղեն ես: Գախթելու ժանանակ Շահի ախպեր իմ խորտկութնի խամար գիրովեն էպեր ուր խամար:

Մընաց չուր հիրիկուն, Շահի ախպեր էկավ տուն, ասաց. - Կընի՛կ, էսա ի՞նչ տըղա յա՛ էսա տեղ նըստեր ա:

Ասաց. - Իմ ախպիր տըղեն ա, իմ ազքից մարթ չըմընացե, մենակ էնին ա մնացե: Խի ի՞նչ տ'ենես, ի՞նչըխ տը պախես, թի՞ տը մըլես տիւս:

Շահի ախպեր ասաց. - Կընի՛կ, քիւ խաթրի խամար ի՛նչըխ ուզես, էնպես կէնեն:

Ասաց. - Իմ ախպիր տըղեն հալան ճիժ ա, ճանքախ՝ թըխ ձի խեծնել սորվի:

Աղավանի խալվրներ փոխեցին, ճամբխեցին ծիերու մեջ:
Լավ ծի խեծնիլ սորվավ քանի մ'ավուր մեջ:

Չուր ծի խեծնել սորվավ, ամիսըն ընցավ, մընաց մեկ ամիս,
օր ախչիկ տը տանեն:

Հիրիկուն օր Աղավան քյընավ, ա՛խ քաշեց:

Խորքուր ասաց. - Տըղա՛, անոթի՞ կը մընաս, թի՞ ծարավ, օր
ախ կը քաշես: Ինչ ուզես, ես էնի քյեզի կը տամ, ինչ գոռծ օր
ուզես, քյե էն գոռծին կը ճամբխեն:

Աղավան ասաց. - Չէ՛, խորքուր, իմ ցավ պաշխա պան ա:

Խորքուր ասաց. - Քու ցավ ծի ասա՛, թե ի՞նչ ա, քու ցավին
մեկ ճար մ՛ էնեն:

Աղավան ասաց. - Ես ու Դավրեշ աղի ախչիկ հիրարու շատ
կուզենք, հիրար տ'առնինք, մըկա չաճողվի, մարթ էլ չըկա, օր
ընծի խամար պերի, էսոր խամար ա՛խ կենեն:

Խորքուր ասաց. - Աղավան, տու խայ ես, էնի քուրտ ա,
ի՞նչըխ տու էնի տ'առնես, էնու խեր քյե կը սպանա:

Ասաց Աղավան. - Էղի, չէղի, ես էնի տ'առնեն:

Խորքուր շիվարած մնաց:

Ասաց. - Օր էնպես ա, ես ճամբխեն, Արագատ փայլեվան
պերիմ, տընիմ խընդ քյե, գյընա՛ քի խոր տուն, օր ախչիկ առնես,
պերես:

Ճամբխեց, Արագատ փայլեվան էկավ, ասաց. - Շահի՛ կին,
տու ընչի՞ խամար ես ծիկ ուզե:

Շահի կին ասաց, թե՛ իմ ախպիր տըղի խետ պիտի էրթաս
էնոնց գյեղ, օր ճամբխներ գարարըն չըլնի իմ ախպիր լաճուն:

Ասաց. - Պե՛ ախպիր լաճ, տանիմ:

Փայլեվան Արագատ օր ախպիր տըղեն տեսավ, շատ խըն-
դացավ:

Ասաց. - Թե էսի Աղավան ա, ես էնոր քավոր եմ էղե սարի
մեջ:

Շահի ախպրկին ասաց. - Տու ի՞նչըխ էնոր քավոր ես էղե:

Ասաց. - Եփ ես գացի կան գալու էն երկիրներ Շահի անրով,
սարի մեջ տեսա, օր մեկ տերտերըն, մեկ տըղե՛մ, մե ախչիկըն էն
տեղ կայնած են: Էն տեղն էլ քանի՛մ խատ էլ գառ կարծին: Գացի,
անոնց խառցնեցի, թե տու ի՞նչ մարթ եք, ի՞նչ կենեքյ եսա տեղ:
Տերտեր պա՛մ չասաց, ախչիկն էլ ծեն չէխան, Աղավան ասաց. «Ես

էսա ախչըկեն շատ կը սիրեն, տ'առեն: Տերտեր պերեր եմ, օր
մըկըրտա, մըկա քավոր չըկա»: Ես էղա էնոր քավոր: Հիմա ես
շատ ուրախ եմ, օր տըղեն առնեն, տանեն ուր գյեղ:

Շահի ախպիր կին վախեցավ, ասաց. - Իմ ախպիր տըղին
պիտի ըսպանեն, օր քյըրտու ախչիկ խայացուցե, պիտի առնի:

Արագատ փայլեվան ասաց. - Դե՛, էն էլ տու՛րք մտածեքյ:

Շահի ախպրկին ասաց. - Աղավան, էտպես մ'է՛նե, օր Շահ
իմա, քիկ էլ, ախչիկն էլ կը սպանի:

Ասաց. - Խորքուր, չէղի, ես ախչըկեն խոսք տըվեր եմ, էնոր
ժամանակ ամիս կես ընցեր ա, մընացեր կես ամիս, օր կը տանեն,
ես պիտի էրթամ խասեն, քանի չըն տարած:

Էլան, Արագատ մեկ ծի խեծավ, Աղավան էլ մեկ ծի խեծավ,
էկան, գացին էնոնց գյեղ: Չու՛մ գացին էնոնց գյեղ, խելին էկեր էր,
Դավրեշ աղի ախչիկ կուզեր օր տաներ:

Ախչիկ Աղավանին կաչկեր, կասեր. «Չէկավ, ծի խապեց, թո-
ղեց էսա կրակի մեջ»:

Հիրիկվան Աղավան, Արագատ խընդրաց գացին, խասան
գյեղ:

Մեկ ախչկան ասաց, թե՛ Աղավան էկավ:

Ախչիկ ուրախացավ, էլավ տուս, Աղավանին տեսավ:

Ասաց. - Խելին էկեր, ծի կը տանի, տու ի՞նչ կը մըրտածես,
տու ո՞ր տեղն էր կուրիսե չու՛մ մըկա:

Աղավան ախչըկեն ասաց. - Պատրաստվի՛, առավոտ քյեզ
կը տանիմ: Յան քյե կաճատենք, յան մի երկըսիս էլ կը սպանեն:
Արագատ՝ մեր քավոր, մեր խետն ա, թի էնի մի ազատա էսա
խելից, էսա խարիր հիսուն ծիավորից:

Ախչիկ ուր պատրաստություն տեսավ, առավոտուն շոտ
Աղավան, Արագատ էնոնց ծիանք պատրաստած ան, օր ախչիկ
փախուցեն:

Ախչիկ տեսնալուն պես իրենց ծիանք խեծան:

Արագատ փայլեվան ախչիկ առավ էնու ծիու թարթյ:

Քըշեցին: Քըշելու ժամանակ գյեղի կողքին մեկ քուրտըն
էնոնց տեսավ, ճանչըցավ, թե էսի Դավրեշ աղի ախչիկն ա, օր
փախուցին, տարան:

Ախչըկեն կանչեց, ասաց. - Դի՞ր կերթաս էտա խայերու
խետ, քու խելին էկեր ա, քյեզ կը տանի:

Շուտ քուրտ գյրնաց, լուր էտու ախչըկե խոր՝ Դավրեշ աղին, օր Շահբազ Մելիքի լաճ Աղավան, մեկէլ չըճանչըցա, քու ախչիկ փախուցին, տարան: Խելին էկեր ա, քյեզ ամոթ ի:

Դավրեշ աղան հերսոտավ ու էլավ խելուն ու խոլամներուն ասաց. - Էլեք խեծներնք, իներնք էնոնց հիտև:

Խեծան, էնոնց հիտև ընգան իրեք խարիր մարթ: Ծիեր քըշեցին, մեկ սահաթից էնոնց խասան:

Աղավան էտ տեղ հիտուց պըշկավ, տեսավ օր ծիանքներու թոզ էրեվաց, չէրեվաց, էնոնց մոտխըսցան:

Ասաց. - Արագատ, մեզի խասան, ի՞նչ էներնք, ծիկ էլ կը սպանեն, ախչըկեն էլ, քյեզ էլ:

Արագատ փայլեվան ասաց. - Թըղ գան, էնոնք իմ անուն չըլսած, հիմա ես էնոնց խետ կը խոսիմ:

Արագատ ծիուց էճավ տակ, ծիու յուլար էտուր Աղավանին ծեռ, կանչեց քուրտերուն:

Ասաց. - Մի՛ գաք, մեղք էք, ե՛տ տանցեք: Ախչիկ, տըղեն գիրար կը սիրեն, էնու խամար կը տանիմ: Թե օր չէ, ետ չեք տանա, ես Շահի փայլեվան Արագատն եմ, օր կըռվու մեչ մտա, ծե հըմեն կը սպանեն:

Դավրեշ աղեն քըրտերուն ասաց. - Մեկ խայու տըղա յա, կուզի մե ես իրեք խարիր մարթուն վախցուցելով ետ տա:

Կըռիվ բաշլեց: Աղավան չի կանա կըռվի, Արագ փայլեվան միքն կը կըռվի: Զուր ճաշու ժամանակ հիսուն մարթ ըսպանեց:

Դավրեշ աղեն վեր ուր փոշպընավ, ասաց. - Մեզնից հիսուն մարթ ըսպանեց, մենք չըկարցանք էնու պա՛մ էնել, թե չուր հիրիկվան կըռվենք, հիսուն-վաթսուն մ՛էլ կը կոտորա, ֆայդա չէներ, տանանք, էրթանք մեր տուն:

Տանցան, գացին ուրենց տուն: Ենպես մալուլ, փիս-փիս գացին փեսի տուն:

Դավրեշ աղեն տանցավ, գյրնաց Շահբազ Մելիքի տան տուռ կանավ, ասաց. - Մելիքին կանչեք, թի գա:

Մելիքին կանչեցին, ասին. - Տո՛ւս արի, Դավրեշ աղեն քյե կը կանչի:

Շահբազ Մելիք ուր կընգան ասաց. - Օր ձի կանչա, տանի տուս, ձի տը սպանա: Ես ի՞նչ բալա էր՝ մի խամար գյրնեցինք,

գացինք ես խոգազավակ պերեցինք, ես պատիճն իպե մեր գյըլիխ:

Կընիկ ասաց. - Աստված օղորմած, պան չըկա, գյրնա՛ մեկ խենք ի՞նչ կասա, ի՞նչ չասա:

Եփ Շահբազ Մելիք էլավ տուս, գյրնաց Դավրեշ աղին մեկ փաթե մ՛էթալ:

Ասաց. - Զի ի՞նչ ես կանչե, աղա՛:

Ասաց. - Քյաֆըր, տու չը՞ս գյինա քյե ընչի խամար եմ կանչե: Քու տըղեն իմ ախչիկ փախցուցե, տարե:

Շահբազ Մելիք ասաց. - Դավրեշ աղա, ես ի՞նչ էնեմ, էն իմ տըղեն չէր, մեկ հեթիմ էր, ես պիրեցի, տերեցի, ես ի՞նչ մեղավոր եմ, թի էն քի ախչիկ փախցուցե: Մեղավոր տըղեն ա, գյրնա՛ հետեվեն, պըռնա՛, ըսպանա՛:

Ասաց. - Գացի, հիսուն մարթ էլ վերա տըլի: Խետ մեկ մարթըմ կեր, չըճանչըցա ո՞րն էր, կասեր թե՛ ես Աջմու Շահի փայլեվան եմ: Ես ետ տանցա, էնոնք գացին:

Շահբազ Մելիք ասաց. - Ապա ի՞նչ կուզես, աղա՛:

Աղեն ասաց. - Խեծի՛ քու ծին, խընդրաց էրթանք, բալքի քու խոսքով իմ ախչիկ ետ տանցուցենք:

Շահբազ Մելիք ասաց. - Լավ կեղի:

Էլան, խեծան, գացին: Գացին կան էկան, էնոնց չըտեսան, չըգյիտցան դուր վեր են գացած:

Էնոնք թըխ ախչըկե հիտև կան գան, մենք տանանք Աղավանի, Արագատի վերեն, խենք՝ որ տեղ վեր գացին:

Աղավան, Արագատ առան ախչիկ, գացին չուր սարի՛մ տակ, չիմա՛մ կեր դա, հախաբուրըմ, ծիանք թողին արածալ, ուրենք խաց կերան, ճուր խըման, խանգըստան, պառկան:

Էն սարի մեչ քանսուն գեբակ կը մընան:

Ետա գեբակներ Աղավանին ու Արագատին օր տեսան՝ պառկած են հախաբուրի վրեն, ասին. - Մենք ես տեղ էքան թալան-թուբան էրեր ենք, ես ճամխըներ կըտըրվեր ա, մարթ չէրթա, չի գա, ես մարթեր ի՞նչ մարթ եմ, օր էկած եմ ես տեղ, ողիաթ պառկած ան: Յան էտոնք խալիմ են, յան շատ կըտորիճ են:

Ջերակ-բաշին ասաց. - Իմ դուլքին պերեք, ես մայեմ, խի ես ի՞նչ մարթ եմ:

Դիւրով իշկեց, ճանչցաւ, որ Արագատ՝ Աջմա Շահի փայլեւան էր:

Ընգերներուն ասաց. - Եսի Աջմու Շահի փայլեւան ա, էնոր խամար անվախ պառկած ա: Մե տանք ետ, պաղկըվենք, որ չիմանա, էլնի մե ըսպանա:

Գացին, սարի մեջ պաղկըվան: Արագատ չիմացաւ: Քընուց իլան վեր, էնոնց ծիանք պատրաստեցին, խեծան: Գացին խորքուրոջ տուն՝ Շահի ախպիր կընգան մոտ:

Էն ժամանակ Շահի ախպիր կին տեսավ, որ Աղավան ու Արագատ առին ախշիկ, էկան կանան տուռ:

Շոտ գընաց, առավ Աղավան ու ախշիկ, էկավ տուն, ախշիկ տարավ մեկ հօրի մեջ պախեց, որ Շահի ախպեր չըգն, չըտեսնի, չուր միճոցը կընտի:

Մընաց չուր հիրիկուն, Շահի ախպեր էկավ տուն:

Կընգան ասաց. - Քիւ ախպիր լաճ էսա էղավ յոթ, տաս եօր կուրուսե, ո՞ր տեղն էր գացե:

Կընիկ ասաց. - Էնու խորթ խերը կոր, գացեր էր էնոր տեսնելու, էկավ:

Ասաց. - Էն տեղ ի՞նչ կեր, ի՞նչ չըկեր, ի՞նչ բասը կեր:

Կընիկ ասաց. - Շահի՛ ախպեր, ես, տու հրիկ, կընիկ ենք, քյե մեկ պն՛մ տասեմ, թե իմ խոսքով չէնես, յան ձի չըվընից կախեմ, յան պանցր տեղեն ձի տը թալեմ տակ, մեռիմ:

Ասաց. - Կընիկ, ասա, խեմ՝ ի՞նչ խընթիր ա:

Կընիկ ասաց. - Իմ ախպիր լաճ Դավրեշ աղի ախշիկ սիրեր ա, էսա քանի մ՛որ որ գացեր էր, գընաց, ախշիկն ա փախուցեր, պերեր, խենք տու ի՞նչ կասես:

Ասաց. - Կընիկ, թե Շահ իմնա, լաճն էլ, ախշիկն էլ կը սպանա: Մեր օրենքի մեջ չըկա, որ խայու տըղա քըրտու ախշիկ խայացուցա, փախցուցա: Ետի շատ գյեշ պն՛ն ա:

Կընիկ ասաց. - Գո պերեր ա, Աստըժու խաթըր, մեկ ախպիր տըղա ունիմ իմ ցեղական, էլ տու գյինաս:

Շահի ախպեր հիրիկուն Շահին ասաց. - Իմ կընգան ախպիր տըղեն՝ Աղավան, Դավրեշ աղի ախշիկ փախցուցե, պերե: Խի տու ի՞նչ կասես:

Ասաց. - Տըղի վիզն էլ, ախշըկեն էլ ջալատի պիտի տամ կըտրել: Ետի մեր օրենքին հակառակ ա:

Շահի ախպեր խընթեց Շահից. - Մեկ ճամբախը կընտընես, էտոնց վըզքեր չըկըղրես, իմ կընգան ցեղականից մեկ էտա տըղեն ա մընացեր: Օր տըղի վիզ կըտրես, իմ կընիկ յան ուր կը խեխտի, յան մեջտեղից տակ կը թալա, իմ էրկու ճըժեր հեթիմ կը մընան:

Շահ ասաց ախպիր. - Ճամխա՛, լաճ, ախշիկ պե՛, քննենք, թե ի՞նչ պատճառով ա ախշիկ խայացեր, ի՞նչ պատճառով ա փախեր:

Ճամխեց, լաճ, ախշիկ առավ, էկավ:

Լաճուն խառցուց, թե՛ ախշիկ ընչի՞ պերեցիր:

Ասաց. - Ախշիկ ձի սիրեց, ձի փափաքավ, ես էլ պերի:

Ախշըկեն խառցուց, ասաց. - Քյե գիռո՞վ ա պերե, թե՞ տու քիւ կամքով ես խայացե:

Ախշիկ ասաց. - Ձի գիռով չըպերե, ես իմ կամքով եմ խայացե:

Շահ ասաց. - Տիւ ընչի՞ն թըմախ էրիր: Մալին էրիր, ոսկուն էրիր, ընչի՞ն թըմախ էրիր:

Ասաց. - Նա՛ մալին եմ թըմախ էրեր, մա՛ ոսկուն. ես, տըղան խընդրաց գան կարծենք, տըղան եփ օր քընավ, քընելու մեջ ես տեսա՛ շողի պես լիւս պն՛մ կէլներ ու կը մըտեր էնու պերան վեր: Ես էնի օր տեսա, տըղեն օր հիշարցավ, ես խառցընեցի, ասի. «Աղավան, էն, օր տու քընար, էնի ի՞նչ էր՝ լիւսու պես կէլներ ու կը մըտեր քիւ պերան»: Տըղեն ձի ասաց. «Մենք ավազանի մեջ մըկըրտվեր ենք, էտի մեռնի շընորքն ա, կէլի, կը մըտի իմ պերան»: Ես էլ էտա լիւսու խամար տըղին սիրեցի, խայացա ու առա:

Շահն ասաց. - Շատ լավ, մենք ճամխենք, էրկու վարթապետ, էրկու խատ տերտեր պերենք էստեղ, օր ծեր օրենք շատ լավ օրենք ա, ծե էսա գյետի մեջ թող փըսակեն: Թե ծեր օրենք շատ զորութենով ի, ճիւր պիտի դադրի, չուր ծեր փըսակ էղի, եթե ճիւր դադրավ, ծեր փըսակ էրին, տու ազատ եք, եթե չըդադրավ, ծեր էրկըսվի վիզ և էրկու քահանային ու վարթապետին պիտի կըտրեն:

Շահ հիրիկեց, էրկու տերտեր, էրկու վարթապետ էպի:

Վարթապետին, տերտըրոջ ասաց. - Մեկ խայու տըղեն՝ քըրտու ախշիկ փախցուցե, պերե, էտոնց փըսակ տ՛ենք էսա

գյետի մեջ, եթե ճուր դահրավ չու՛մ էնոնց փըսակ եղավ, արդեն տու՛ հըմեն էլ ազատ եք, օր չէ՛ ճուր չըդահրավ, ծեր՝ քահանաներուն ու վարթապետներուն վիզ կը կըտրեն, օր չէղի սովորութեն:

Տերտըրնիր, վարթապետնիր շատ վախեցան էնոնց ջանից: Թե էսա ճուր խընձ Արագ շատ ի, ի՞նչըխ պիտի դահրի, օր մենք փըսակ էնենք:

Ճամխեցին, լաճ, ախչիկ պերին, օր տանին ճըրու անի, փըսակեն:

Պերելու ժամանակ Շահբագ Մելիք ու Դավրեշ աղեն, օր ախչըկե հիտև կան կը գյեն, էկան պատահան: Եփօր տարան ճըրու պըռուկ, քահանեք, վարթապետներ լավիվ, բոռալով կանչեցին Աստված, թե՛ մե անգանես էսա գանգանի ծեռնեն:

Խարս, փեսեն էճան ճըրու մեջ, պաշլայեցին փըսակ էնել, ճուր Աստծու կամքով դահրավ: Էնոնց փըսակ էրին:

Շահի ժողովուրթ հըմեն զարմացան:

Դավրեշ աղեն ու Շահբագ Մելիք, օր գանգած, պատահած, էնոնքյն էլ զարմացան:

Փըսակ պըռձան, ու խարս, փեսեն ճըրուց տուս էլան, ճուր ըսկըսեց էրթալ:


Շահ ասաց. - Տու ազատ, գանգեք դիր, օր կուզեք:

Շահբագ Մելիք, Դավրեշ աղեն առան ախչիկ, տըղան, պերին իրենց գյեղ: Տարան Մելիքի տուն:

Դավրեշ աղեն էնու կընգան պատմեց, ասաց. - Թե մեր ախչիկ Աղավան օր առավ, գյետի վերեն փըսակեցին, գյետի ճուր դահրավ, ես փափաք եմ, օր ամբոխ տըղով տաննանք խայ:

Կին ասաց. - Օր էնպես ա, ես էլ կուզեմ:

Տըղով հըմեն խայացան, Աղավան էլ պերին, ուրենց տըղա էրին:



8. ԶԸՆԴՐՍՏԱՆ ՓԱՅԼԵՎԱՆ, ԶԻԼԻ ՓԱՅԼԵՎԱՆ

Կեղի մեկ փայլեվան, անուն՝ Զընդըստան:

Ինքըն երկրի մեջ շատ զեբակութեն, ավերութեն կենա, վերջ կը թոնա, կերթա ուրիշ երկիրըմ:

Քանդքի՛մ մեջ կը պատահի, կը տեսնի, օր փայլեվըներ կը թոնին հիրար:

Մեկ փայլեվան չըկանա թակավորու փայլեվընին տընա գյետին:

Ինքյն կասա. - Ես տ'երթամ, խընդ թակավորի փայլեվընին գուլանջ առնեմ:

Զիրուշներ կասեն. - Տու կործ չունես խընդ էն փայլեվընին, քյե կը տընա գյետին, քու վիզ կը կըտրա:

Էտա Զընդըստան կասա. - Լավ, թե էն ծի էտիր գյետին, իմ վիզ կը կըտրա, լե օր ես էնի տըղի գյետին, ես էնու ի՞նչ տ'ենիմ:

Ասաց. - Թե տու էնի տընես գյետին, թակավոր էնու ախչիկ կը տա քյե:

Գընաց, թակավորի փայլեվընի խետ գուլանջ առավ: Թակավորի փայլեվընին էտիր գյետին:

Թակավոր էնոր կանչեց, ասաց. - Քու անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անուն Զընդըստան փայլեվան ա:

Ասաց. - Ո՞ր երկրեն ես:

Ասաց. - Զընդըստանա երկրեն:

Թակավոր էլավ, ուր ախչիկ էպի, փըսակեց վերեն:

Ժամանակըմ մընաց, փայլեվան թակավորին ասաց. - Զրաման տուր, դիրսվան ես կերթամ իմ խոր երկիր:

Թակավոր ասաց. – Ազա՛տ ես, կերթաս, գյընա՛:

Թակավոր էնու խետ տտի քիչըմ մալ, ուր փայլեվան էլ էտիր խետ, օր տանի, ուր երկրեն տուս խանա, նոր տաննա:

Էլան, ընգան ճամբախ: Շատ էկան, քիչ էկան, շատ ու քիչ Աստված գյինա, էկան մեկ սարի՛մ պատահան:

Մեկ մաղարա կեր դա, մըտան էն տեղ, օր քըլընին, չուր առավոտուն էլնին, էրթին:

Տեսան մաղարի մեչ մեկ անգուրթըմ կեր, մեչ կրակ, լե մարթ, պան չըկեր:

Էտա փայլեվան թակավորի փայլեվընին ասաց. – Էսա կրակ, էսա անգուրթ օր շինած, հալբաթ մեկ մարթըմ էրի, չէղի՞ մենքյ փորձանքի՛մ հանդիպինքյ:

Փայլեվան ասաց. – Մենքյ էրկուսն էլ փայլեվան ենքյ, վո՞ն կանա մեր վերեն:

Տեսան օր հիրիկուն խալիվոր մարթըմ ու տըղե մ՛ էկան, մըտան ներս:

Ասաց. – Օ՛հ, պարի՛ եքյ էկե, մեհվընե՛ր, մենքյ ծեր էտև գյիշ-րովըն կան կը գանքյ, տուրքյ ցերեկով եքյ էկե:

Ասաց. – Ընչի՞ կասես էտա պես:

Ասաց. – Էրկու մարթ տու՛ն եքյ, էրկու մենքյ, էլե՛քյ կըվենքյ, յան տուրքյ մե կը սպանեքյ, կընիկ կը տանեքյ, յան մենքյ ծե կը սպանենքյ, կընիկ կը տանքյ իմ լաճուն:

Էլան, ըսկըսեցին կռիվ:

Եփ օր կռիվ ըսկըսեցին, էրկու փայլեվընին էլ հաղթեցին, թալեցին խոր:

Ամա թակավորի փայլեվընի վերեն էլ խելքյ չըկեր: Յընդըստան փայլեվան՝ էնու խելքյ վերեն էր:

Յընդըստան փայլեվան տեսավ, օր շիշըմ կարմըրցուցին, պարզեցին խորի մեչ, խընդ էնոնց ջան: Ինքյն գինքյ էտու մեկ տեղ, թակավորի փայլեվընի ջանդըկից ճըժոց էլան: Էրկու-իրիքյ անգամ ա՛յ, ա՛յ, ա՛յ էրաց ու ծեն կըտրեց: Խալիվորն, ուր տըղեն կարծին, թե մեռան, պըռձան:

Խալիվորի լաճ առավ կընիկ, գյընաց էնու հերի մեչ պառկավ, խալիվորն էլ պառկավ էտա տեղ՝ անգուրթի հառաճ, կըրակի տեմ:

Գյիշեր ընցավ մեկ քիչ, փայլեվան ասաց. «Էլ ոջ չըկըտրա,

էսա տեղ մընալով էս անոթի տը մեռիմ, էլիմ յան փախիմ, յան պան մ՛ենեմ»:

Խորի էս կուշտ, էն կուշտ փորեց, օտքերու տեղ շինեց, էլանվ տուս խորից, տեսավ, օր խալիվոր կրակի անաճ քըլընուկ էր, լաճն էլ մըտեր էր մաղարեն, էն, ուր կընիկ ծեռքյեր տըրած հիրարու գյըլխու տակ, պառկած:

Ինքյն կանեն քանչեց, խալիվոր մորթեց, դիր գյընաց խընդ խալիվորու լաճ, օր մորթեր:

Տեսավ էնու կընգան ծեռ էնու գյըլխու տակն էր:

Ասաց. – Իմ կընգան ծեռ գյըլխու տըկեն քանչեմ, օր չէղի յարալու:

Յուշիկ կընգան ծեռ քանչեց, կանե մ՛էթալ, լաճու վիզ կըտրեց: Կընիկ հիշարցավ, օր լաճու վիզ կըտրեր էր:

Ասաց. – Վա՛յ, տու ինչպե՞ս բեթախտութնով էնու վիզ կըտրեցիր:

Ասաց. – Վա՛յ, քու խեր շուն էղի, դեմակ տու գէնի խընձ ծի շատ կը սիրե՞ր:

Կանեն էթալ, գէնի էլ մորթեց: Ինքյն էլ կանանվ դա, մտածեց, ասաց. «Դաննան էրթան թակավորի մոտ՝ չէղի, հան փայլեվան կուրիսավ, հան ախշիկն ըսպաներ են, իմ երկիր էրթամ՝ էն էլ չէղի: Մեկ գեթակ Չիլի՛մ կա, տ՛էրթան էնու մոտ, ժամանակըմ էնու մոտ տ՛ապրիմ, մեկտեղ էնու խետ գեթակութեն էնենքյ»:

Գյընաց Չիլիի մոտ:

- Պա՛րև, Չիլի:

- Ասժու պարին:

Չիլի ասաց. – Յընդըստան փայլեվան, ո՞ր տեղեն կը գաս:

Ասաց. – Ծեն մ՛եներ, իմ գյըլխու գանլած օր քյեգի ասիմ, տու ծըռես:

Էնու գյըլխու գանլած Չիլիին պատմեց:

Չիլի մտածեց, ասաց. – Յե՛յ, փայլեվան, իմ գյըլխու գանլած խընձ քուն շատ ա: Յանա՛ քու կընիկ փուճ կընիկ մ՛ա էղեր, չէ՛ քու գյըլխու գանլած շատ չիր:

Յընդըստան ասաց. – Չիլի՛, պատմա՛ խի՞ քու գյըլխու գանլած, էս էլ խասկընամ:

Չիլի էնու գյըլխու գանլած էնու ըսկըսեց պատմել:

Ասաց. – Փայլեվան, էս մեկ օր էլան, գանցի գեթակութեն: Ես

գացի, խասա տնչտի մեչ, գյիշեր մութն ա, տեսա, օր էսպես պանցր-պանցր պան կերևեր, ես գյիտցա, թե ուղտ էր, թալեցի վերեն, ասի թալնիմ: Ես ծին քըշեցի մեչքեր, իմ ռըմ գարկեցի, ռըմ տիպավ քար, ռըմ մեչ վե կոտրավ: Էճա, իշկեցի, տեսա, օր գյերեզընատուն էր: Ես վախեմ՝ էսպես զըզվացի: Մեկ էլ ես ինքյն ինքյն մտածեցի, ասի. «Ես Չիլին եմ, աշխարք գ'իզնից կը վախենամ, ես էսա գյերեզընատնից կը վախենամ»:

Վերչ գացի, գյերեզըններու մեչ էսպես զըվըռեցի, տեսա, օր հիսնի մըմըռոց կը գա: Գացի, աչկեցի, օր թածա մեկ պերած խորած, էտա մեռըլից ա ծեն կելնի:

Խանեցի տուս էտա մեռել, տեսա, օր մեկ խիվանդըմ, օր էնու խելք քիչըմ գացեր էր, անխելք մարթեր գյիտցած են, թե մեռեր էր, պերած են, խորած:

Խանեցի տուս, էնու պատանք ճեղքեցի, խառցուցի, ասի. – Տու ո'ր տեղացի ես:

Ասաց. – Էսա գյեղացի:

Ասի. – Քու անուն ի՞նչ ա:

Ասաց. – Իմ անուն Մահմադ ան:

Ասի. – Մահմադ, տու վի՞ր լաճն ես, վի՞ր տըղեն ես:

Ասաց. – Ես էսա տեղաց բեկի տըղեն եմ:

Ես էլ էտա երկրին բալան չեմ, խի վո՞ր տեղեն ա, վի՞ր տըղեն ա:

Մահմադ ասաց. – Ես իմ խոր, մոր մեկ տըղա յեմ, եփ օր տու ծի էսա տեղեն խանեցիր, իմ խոր տարար հանձնեցիր՝ աշխըրքի մալ քյե տը տա: Ամա՝ աշխըրքի մալ օր տա՝ մ'առիր, ծի մեկ քուրըմ կա, էն քուրն ուզա:

Ես առի էն տըղեն, էնու շապիկ ու թուճաճաճ խագուցի, առա, տարա էնու խոր դիվանխանի տուռ:

Տըղեն թողի տուս, ես մըտա ներս:

Գացի դիվանխանեն, տեսա, օր ինչքան աղա, բեկ կեն, էկած են էնու սիրտ գյընելու, օր տըղեն մեռեր էր:

Էսպես կային պարկըմ տըվի, հուրուշներ հըռըկան:

Ասի. – Ջանըմ, հե՞ր կ'ըռըկիք:

Ասաց, թե. – Բեկի լաճ մեռեր ա, հուրուշներ էկած էնու սիրտ գյընելու:

Ես ասի. – Ի՞նչ տա ծի ամիրեն, օր էրթամ, էնու լաճ սաղ-սալ-լամաթ պերեն:

Ամիրեն եփ լըսեց՝ դըհա հըռըկավ:

Ասաց. – Իմ լաճ մեռե, էսա էկե վեր ծի ծաղըր կենա, պըռ-նեք պերեք, թալեք գյետին, դաղեք, օր մեկ էլ էնպես մեռնելու կողմեն չըզըրուցա:

Ասաց. – Չընդրտան փայլեվան, լավ մ'իմ ասածին ականջ տու:

Չի առան, էկան, ծի թալեն գյետին, օր տը տըվեն:

Ասի. – Ամիրա՛, տու ընչի՞ ծի տը տըվեք:

Ասաց. – Չէ՞ իմ տըղեն մեռեր ա, տու էկեր ես, վեր իմ սևուս սխտոր կը ծեծես:

Ասաց. – Թո՛ղ տուր, էրթամ դիվանխանի տուռ, քու տըղեն պերիմ, գի կանըցըցեր եմ տուռ:

Ես գացի, տըղեն կանչեցի, պերի: Ամիրեն օր ուր լաճ տեսավ, խելք գյընաց, ինզավ էն տեղ: Ջուլաթ տըվեցին տուն, ամիրի կընգան, տըղի քուրոջ, տըղի կընգան, ամբոխ էկան էտա տեղ, պարեկըմներով, թախըմով, օր ուրախութնից էլ ծըռան:

Չուն ամիրի խելք էկավ էնու վերեն, էլավ, նըստավ, տըղի վերեն ուրախացավ:

Չի ասաց. – Դե՛, Չիլի՛, քու ուզած ուզա, տամ:

Ասի ի՞նչ ուզեն:

Ասաց. – Ի՞նչ կուզես, քու քյեֆն ա, մալ կուզես, ոսկի կուզես, արծաթ կուզես:

Ասի. – Ամիրա՛, ո՛չ մալ կուզեմ, ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, թե տան՝ քու պըստիկ ախչիկ տու ծի: Մի՛նակ էնի կուզիմ:

Ամիրեն ասաց. – Չիլի՛, էտի քու մարիֆաթ չէր, լե ի՞նչ էնեն, ուզեցիր: Չիլի՛, իմ տըղի խոգյին ազատեցիր, պերիր, ախչիկըմ կուրբան էղի քյեգ:

Ախչիկ տըվին ընծի: Վըր ծի փըսակեցին, խընդ ծի չորս-խինգ բերգիր մալ տըրին: Քանի՛մ օր մընացի էն տեղ, դիրիս գացի, խաթըր ուզեցի ամիրից, օր տ'երթամ իմ երկիր:

Ամիրեն ընծի հրաման էտուր, ծի ճամխու տըրեցին: Ես էլա՛ ճամբախ:

Ամիրեն մեր խետ մարթ կը տըղեն, ես չըթողի:

Ասի. – Ես Չիլիոն եմ, աշխարքը ընծնից կը վախենան, ես խըլ-
ղի՞ց:

Էկանք, էկանք, չուր մեկ չու տանտի մեջ, ավեր խա՛մ կեր:
Էկանք էտա խանի մեջ տըրհնք: Չորս կողմ իշկեցի, տեսա, օր
երկու ավուր ճամբախ էտա խանից գանտն՝ ավահի չըկա:

Ասաց. – Յընդըստան փայլեվան, լավ մըտիկ կէնի՞ս:

Ես, իմ կընիկ խաց խանեցինք խուռչու մեջեն, խաց կու-
տինք, չասե՞ս՝ մեկ չուլախ մարթըմ կա էտա խանի, մեկ կաննա
կապուկ ուր չուլախ փորուն, օր էնալ շոտ կը վազի, օր ինչըխ քան-
մի, հականնա կը վազա խընդ մարթ, հանա կը գանա, կերթա, մըտի
խանի քունջ:

Թու մարթ չըկանա էնու պըռնա:

Չասե՞ս՝ էտա խանին էլ խանա Շալանուտան կասեն:

Ես, իմ կընիկ խաց կուտենք, մեկ էլ տեսա՝ քանու պես
էգար, իմ հանճըվեն խաց տարավ:

Ես գարմացա, ասի. – Եսի ի՞նչ պան ա, օր հեջ թուչար ընց-
նա պան իմ կյանքի մեջ չէր տեսեր:

Կը լսե՞ս, Յընդըստան փայլեվան: Ես մեկ էլ տեսա՝ քանու
պես էկավ, կաննա մ՛էթալ իմ փոր, իմ աղքըներ լըցվան գետին, իմ
կընիկ ասաց. «Է՛յ, տու ի՞նչ ես, ը՞նս ես, ջը՞նս ես, ի՞նչ ես, ես
գլխտեմ՝ տու ծի խամար իմ մարթուն գարկիր, էլը նոր պան չա-
նես, գաթի էն կը մեռնի, ես էլ քյե կառնեմ, չէ՛ ես ժահր կը խմեմ,
ես էլ կը մեռնեմ»:

Էնի էկավ, կաննավ իմ կընգան կուշտ: Մեկ չուլախ մարթ՝ պի-
պիկ, կեղտ կուկուն:

Իմ կընիկ ասաց. – Յե՛յ, մարթ, քու անուն ի՞նչ ա:

Էտա մարթ ասաց. – Իմ անուն Շալանուտ⁹ ա:

- Յընդըստան փայլեվան, իմ գըրըխու գաննած օր էկավ,
ծըմեռն, ցուրտ ժամանակ էր:

Իմ կընիկ էնու ասաց. – Ես քյե կառնիմ, լե տու շատ կեղտ
կուկուն ես, քյե սապոն տամ, գըրնա՛ գետ, լիղկըցի՛, արի՛, քյե
տանտըմ խալավ տամ, խագի, չըխտ էտա մարթ կը մեռի, ես ու
տու ասպրինք մեկ տեղ:

Խապեց, մարթն ճամխեց գետ, սապոն էտու, օր լողկընա
ու էլավ, խանի տուռ կայիմ փակեց, քար, պան էտի տըռան հետև,

⁹ Մերկ գող (Ճ. Բ.)

էլավ, թանիգ կրակ երաց, իմ աղքըներ էտու դեմ, իմ աղքըներ
քանչվան իմ փոր: Տեղըմ թալեց իմ յարի վերեն, իմ յարեն կարեց:
Նոր Շալանուտ լիղկըցավ, էկավ:

- Յընդըստան փայլեվան, իմ կընիկ էնալ հեքյիմ մ՛ էր, օր
մեկ երկիր չըկընդըվեր:

Շալանուտ էկավ, կանչեց, ասաց. – Կընի՛կ, կընի՛կ, արի՛
տուռ պանց, ես էկա:

Կընիկ գըրնաց տըռան իտև, ասաց. – Տու Շալանուտ չես,
տու ծի կը խապես:

Ասաց. – Չանըմ, ես Շալանուտն եմ:

Ասաց. – Խի քու ծեռ ակնատը վե պե ներս, ես քու ծեռ կը
ճանչընամ, օր տու Շալանուտն ես:

Էնու ծեռ ակնատը վե էպե տուս, կընիկ էնու ծեռ պըռնեց,
կաննեմ մեկ իրիսեն խըջթեց, մեկէլ իրիսեն էխան տուս, ծեռ մընաց
ակնատը վե քյիմ: Չուս խըլխուն էնի մընաց էտա պարզկա ցըր-
տու տեմ: Խըլխուն տեսանք, օր էնի խատեր էր:

Խըլխուն իմ կընիկ էլավ, մեր պեռներ պանցեց, ծի գըրկեց,
էտի վեր ծիուն, էկանք մեր տուն:

Ասաց. – Փայլեվան, կընիկ կա, կընիկ էլ կա, տեսա՞ր իմ
կընիկ, քու կընիկ անասլ ա եղե:





9. ԽՈՋԱ ՄԱՀՄԱՂ, ԽՈՋԱ ԱԼԻ

Կեղի, չեղի, խոջա Մահմանդ անունով մարթըմ կեղի: Խոջա Մահմանդի խեր շատ հարուստ կեղի:

Խեր եփ կը մեռի, տղղեն շատ կը շիվարնա: Ինչի՞ց՝ օր ուր կնիկ կանաքջին կը սիրեր:

Չըմեն հիրիկուն, եփ էնու հիրիկ կը քըրներ, կնիկ գյիշեր տուռ կը պաներ, կանաքջին կը գեր, կերթին, կուտեն, խըմեն, էնոնց խամար քյեֆ կենեն:

Էտա պատճառով խոջա Մահմանդ լըղճորցավ:

Օրըմ խոջա Մահմանդ կերթա չարսուի մեչ, ուր խոր ծեռաց մարթ էնու տեսավ:

Ասաց. – Խոջա՛ Մահմանդ, քյե էտա ի՞նչ ա եղեր: Անոթի՞ կը մըրնաս, ծարա՞վ կը մըրնաս:

Ասաց. – Ես չեմ գյիտի՝ իմ պատճառն ի՞նչ ա:

Ասաց. – Քու կնիկ մեկ փործա՛, խի, կարելի կընգընից ա:

Խոջա Մահմանդ ասաց. – Ինչի՞ փործեմ, աղա՛:

Ասաց. – Պառկիր հիրիկուն, հինք սուք քու՛ն էրա, չուն կես գյիշըրին խի՛ ի՞նչ տուս կը գա՛:

Խոջա Մահմանդ եփ օր եղավ հիրիկուն, հիրիկուն պառկավ, գինք սուք քու՛ն էրաց, կնիկն էլ քըրնու ուլինգն էթալ էնու ականջ, քիչ մըրնաց, չըմընաց, տեսավ՝ մեկ տուռ տղփեց:

Կնիկ գյըրնաց, տուռ էպաց, էկան ներս:

Խոջա Մահմանդ գանդտիկ օր նայեց, տեսավ կանաքջին՝ էփած միս ծեռ: Պերին, կերան, խըմեցին, էլան չոկ էնոնց քյեֆով պառկան:

Չուն լիսու ժամանակ կանաքջին էլավ, գյըրնաց, կնիկ էլավ, չոլխըցավ, էկավ պառկավ հիրկան ծոց:

Առավոտուն խոջա Մահմանդ էլավ չարսուի մեչ, էնու խոր մարթ էնու ռաստ էկավ:

Ասաց. – Տըղա՛, ի՞նչ տեսար, քու կնիկ փործեցի՞ր:

Ասաց. – Խա՛, իմ կնիկ փործեցի:

Ասաց. – Է՛, ինչպե՞ս տեսար:

Խոջա Մահմանդ ասաց. – Չիրիկուն օր ես քըրնա, իմ կնիկ քըրնու ուլինգ էթալ իմ ականջ, մեկ մարթ մ՛էկավ, տուռ տղփեց, գյըրնաց, տուռ էպաց, օր տեսա կանաքջի մ՛էփուկ միս ծեռ: Էկան, էն ու կնիկ կերան, խըմեցին, էնոնց խամար պառկան: Ես անլա տեսա:

Էտա մարթ ասաց. – Խոջա՛ Մահմանդ, էլ մը՛ կանե, գյըրնա՛ դալալչու մոտ, տուն խան մազա՛ք:

Խոջա Մահմանդ գյըրնաց դալալչու մոտ, տուն էխան մազա՛ք:

Խոջա Մահմանդի կնիկ գյըրնաց կասաքջու մոտ, ասաց. – Տըներ ա՛ռ:

Կանաքջին ասաց. – Տըներ էլի չորս-խինգ խարիր ոսկի, ես փարա չունիմ:

Կնիկ ասաց. – Մեկի՛մ մոտեն փոխ փարա վերցու, տըներն ա՛ռ, իմ հիրկան խոր խորած փարա կա, ես գյինամ:

Կանաքջին գյըրնաց, ուրիշի մոտեն փարա վերուց, տըներ առավ:

Խոջա Մահմանդ էլավ, գյըրնաց էնու խոր մարթու մոտ:

Ասաց. – Տըներ ծախեցի՞ր:

Ասաց խա:

Ասաց. – Չէսօր գյըրնա՛, քու կնիկն էլ խան մազա՛ք, ծախա՛:

Խոջա Մահմանդ գյըրնաց, կնիկն էլ էխան մազա՛ք:

Կանաքջին կնիկն էլ առավ:

Մընաց չուր մեկէլ օր, կանաքջին ասաց. – Պալնըսներ քաս-լի՛մ էրա:

Խոջա Մահմանդ ասաց. – Չի ապրանք կա, քաշիմ տուս, քասլիմ էնեմ պալնըսներ:

Մընաց չուր հիրիկուն, էնու խոր մարթ էկավ, գացին, գյիշեր խըզին տեղ փորեցին, խըզինեն խանեցին:

Առավոտուն պալնըսներ քասլիմ էրաց կանաքջուն:

Կանաքջին առավ կնիկ, գյընաց տուն, խընդալուց ծըռավ,
օր տըներն էլ, կնիկն էլ առավ, խըզհնեն տը խաներ:

Կանաքջին ու կնիկ գացին տուն:

Ասաց. – Կնիկ, քելա խի խըզհնեն դո՞ր ա:

Կնիկ գյընաց, օր խըզհնեն խանած-տարած:

Կանաքջին ասաց. – Եսքան փարա ես պարտք էրի, տուն ու
քելգ գյընեցի, մըկա ես պարտք ո՞ր տեղից տամ, կնիկ, տու ձի
խապեցիր:

Կը կըսկըծորի, ըզկնիկ կը սպանա ու զինքյն էլ կը սպանա:

Մենք տաննանքյ խոջա Մահմանդի վերեն, խի՝ ի՞նչըխ էլավ
էնու վերծ:

Խոջա Մահմանդ գյընաց էնու խոր մարթու տուն, ասաց. –
Մարթ, տու իմ կյանքյ ազատեցիր ու եսքան փարա էլ իմ ծեռ տը-
վիր, էսօրվա ետ ինչ օր ասես, քու խոսքով տ'ենեն:

Ժանանակ մ'ընցավ, էտա խոր մարթ ասաց. – Խոջա՛
Մահմանդ, արի՛ քել փըսակենքյ, անկնիկ չըս կանա մընա:

Խոջա Մահմանդ ասաց. – Տու գինաս, կը փըսակես, փըսա-
կա, ես քու խոսքեն տուս չըմ էլնի:

Ասաց. – Ախչիկըմ կընդի, պերեն փըսակեն վըր քել:

Խոջա Մահմանդ ասաց. – Ես չեմ խառվի, տու կընդի՛, տու
պե՛ փըսակա՛:

Մարթն ասաց. – Խոջա՛ Մահմանդ, ձի ախչիկըմ կա, պերեն
փըսակեն քու վերեն, լե համա՛ էնու ծեռըմ շալ ա, էնու ոտ մ' էլ
թալ ա, էնու աչք մ' էլ կոր ա: Եթե կուզես, պերեն փըսակեն քու
վերեն:

Խոջա Մահմանդ ուր մտքի մեչ էսաց. «էն կնիկ, օր շալ ա,
թալ ա, կոր ա, ես առնեմ, ի՞նչ էնեմ»:

Վերծ ասաց. «Վոլլա, տ'առնեն, թըխ ինչ կեղի, եղի: Էսա
մարթ ձի շատ աղեկութեն էրե, պարտաստոկըմ պըռնենքյ հանեծ,
թող աշխատի»:

Խոջա Մահմանդ ասաց. – Ես քու ախչիկ տ'առնեմ, ի՞նչ կեղնի,
թ' էլնի:

Մարթն ասաց. – Խոջա՛ Մահմանդ, գյընա՛ սենյակ, ախչիկ
տես, ես ճանխեմ, մալեն պերեն, քու մահր էնեմ:

Խոջա Մահմանդ էլավ, գյընաց ախչիկե հողեն, տեսավ գո մեյ
խորոտ ախչիկըմ հողի մեչ, խելքից, մտքից էլավ:

Ասաց. – Տու վի՞ր ախչիկն ես:

Ասաց. – Քու խոր մարթու ախչիկն եմ:

Ասաց. – Ձանըմ, քի խեր կասեր՝ ախչիկե ծեռըմ շալ ա,
ոտըմ թալ ա, աչքըմ կոր ա, կարելի տու էնի՞ չես:

Ասաց. – Ես էն եմ, վոլ օր էկե ձի ուզե, հըմենին էսպես խա-
պեր ա, թու մարթ չասե՛ խա, ես տ'առնիմ, օր տանեն ձի էրկան:

Խոջա Մահմանդ ուրախցավ, էլավ, գյընաց ախչիկե խոր
մոտ:

Ասաց. – Ես շատ շնորհակալ եմ քելգնից: Քելի՛, մալե՛մ պե՛,
մեր մահր թ' էնա:

Մարթն գյընաց, մալե՛մ էպի, էնոնց մահր էրաց: Էրկու-իրիքյ
օր մ'էլ էնու խաղտուն էրաց:

Ախչիկ, լաճ գացին, մեկ սենյակի մեչ ապըրվան:

Շատ մընաց, քիչ մընաց, օր մ'ախչիկ ասաց. – Խոջա՛ Մահ-
մանդ, մենքյ նստելով, ուտելով, քանի՛մ տարուց էսա փարեն տը
խըլըսցուցենքյ:

Խոջա Մահմանդ ասաց. – Կնիկ, ապա ի՞նչ էնենքյ:

Ասաց. – Յիսուն խատ ճիրի ա՛ռ, հիսուն պեռ էլ Յալաբա մալ
ա՛ռ: Էղի բազըրգան, տար էնա օտար քաղքըներ ծախա՛, մեր
փարեն թոխ հավիլնա, օր ապրվենքյ:

Խոջա Մահմանդ ասաց. – Շատ աղեկ, թող քի խոսքով եղի:

Գյընաց, առավ հիսուն խատ ճիրի, հիսուն պեռ էլ Յալաբա
մալ, էպի էպարց, տաս խատ կաթըրջի էլ պըռնեց խըն ճիրիքյնե-
րուն, ինքյն էղավ բազըրգան, խեծավ ծին ու առեց ուր մալեր,
գյընաց:

Շատ գյընաց, քիչ գյընաց, շատ ու քիչ Աստված գյինա, մեկ
քաղքի՛մ հանեծ էթալ:

Տեսավ, օր էտա քաղաքյ ջըհուտներու քաղաքյն էր: Տեսավ,
օր էրկու խոգյի քաղքից էկան:

Խառցնեցին կաթըրջոց, ասին. – Ծեր բազըրգանբաշին
վո՞ն ա:

Ասին՝ խոջա Մահմանդն ա:

Գացին խոջա Մահմանդի մոտ:

Ասին. – Տո՛ւ ես խոջա Մահմանդ:

Ասաց խա՛:

Ջրհուտներ ասին. – Քու մալի մեչ յափմա կըրմըզ չըկա՞, մեր թակավոր մեկ թակ յափմա կըրմըզ կուզա:

Ասաց. – Չէ՛, իմ մալ հըմեն Յալաբա մալ ա:

Ջրհուտներ ասին. – Եթե կըրմըզ եղավ քու մալի մեչ, քու հիսուն ճիրին, հիսուն պեռ մալ տը խասի միրուն: Թե չեղավ, հիսուն ճիրի, հիսուն պեռ մալ մենքյ պիտի տանքյ քյե:

Ասաց. – Շա՛տ աղեկ:

Պերեն սանաթըմ շինեցին: Իմզա էրեցին:

Ջրհուտներ ասին. – Դե՛, թի մընա չուր առավոտուն, գանքյ, քու պեռներ աչկենքյ:

Մընաց չուր գյիշեր: Գյիշեր ջրհուտներ թակըմ յափմա կըրմըզ պերին, տըրին էնու մալի մեչ, թակըմ էնու մալից գողցան, տարան:

Մընաց չուր խըլիսուն: Խըլիսուն էկան, օխլամա էրին, օր թակըմ յափմա կըրմըզ գի էնու մալերու մեչ տեսան:

Խոջա Մահմանդ ասաց. – Ջանըմ, իմ պեռներու մեչ յափմա կըրմըզ չըկեր, հըմեն Յալաբա մալ էր, էսի ո՞ր տեղեն էլավ:

Ջրհուտներ ասին. – Ախըր գի կընդանքյ:

Էտա հիսուն ճիրին, հիսուն պեռ մալն պանջին, առան, գանցին:

Խոջա Մահմանդ շիվարավ, մընաց: Են՛ կանա ետ տաննա, մա՛ հանան էրթա, չըգյինա՛ ի՞նչ էնա:

Կաթըրջիքյ էնու մոտեն էնոնց ամսականեր կուզեն: Ինչ օր փարա կեր մոտ, էտու կաթըրջոց ամսականեր, էնի գյընաց ջրհուտի քանդի մեչ: Փարեն խըլըսավ, մընաց անոթի:

Ասաց. – Տաննամ էրթամ ե՛տ, իմ կնիկ ձի տ՛ասա՛ տու մարթ չես, օր ամբողջ մալ փըրըրուցիր, տանջար էկար: Մընամ էտա, մեռնեմ էլ, չըմ էրթա, էտ ամոթ չըմ պերի իմ էրես:

Մընաց օր մ՛ էրկու անոթի:

Ասաց. – Տ՛երթամ տեղըմ ծառաութուն էնեմ, չէ, կը մընամ անոթի:

Ծառաութուն ծեռ չինգավ, գյընաց, էղավ տարպինի ծառա: Քյոմուռ կը պերեր, կը թալեր կրակի մեչ: Տարի մ՛ էրկու մընաց, խեղճ, շիվար էղավ՝ կեղտո՛տ, ջըլեր կըտըրտված: Էնպես կը ծառայեր՝ խացափորիկ:

Տարի՛մ ընցավ, էրկըսվին՝ խոջա Մահմանդի կնիկ ասաց. –

Դանդի՛, էտա մարթ էտա էրկու տարի էղավ՝ չէկավ: Չեղի՞ պան՛ ա պատահե:

Խեր ասաց. – Ջավալկա, ես չըմ գյիտի, ես ի՞նչ գյինամ:

Ասաց. – Դանդի՛, ձի հիսուն ճիրի, հիսուն պեռ մալ առ, ես էրթան, աշխարքյ կան գան, խի իմ մարթ չը՞մ կընդի, խի էնոր ի՞նչ ա պատահեր:

Խեր էլավ, հիսուն ճիրի առավ, հիսուն պեռ էլ Յալաբա մալ, տաս խատ էլ կաթըրջի էպի:

Կնիկ էլավ, էնու խավըներ փոխեց, մարթու խալավ խագավ. էղավ էմա՛լ խորոտ ջըհելըմ, օր մարթ տեսներ, խեքից, մըտքից կէլներ:

Քըշեց, գյընաց: Աշխարքյ կան էկավ, օր մեկ քանաքյ օր էնու մալ կառնին, չըծախեր:

Ավուր մեկ էկավ, պատահավ էտա ջրհուտի քանդի: Տեսավ, օր քանդից էրկու ջրհուտ էկան:

Կաթըրջոց ասին. – Ծեր բազըրգանբաշին վո՞ն ա:

Ասին. – Խոջա Ալին ա:

Կնիկ էնու անուն տըրի խոջա Ալի:

Գանցին խոջա Ալու մոտ:

Ասին. – Խոջա՛ Ալի, յափմա կըրմըզ չըկա՞ քու մալի մեչ, թակըմ մեր թակավոր կուզա:

Խոջա Ալին ասաց. – Չէ՛, իմ մալ հըմեն Յալաբա մալ ա, կըրմըզ չունեմ:

Ջրհուտներ ասին. – Եթե էղավ, քու մալ հըմեն կեղի միրի:

Ասաց. – Շա՛տ լավ:

Ասին. – Թե չեղավ, քու մալի, ճիրու չափին քյե մալ կը տանքյ:

Սանաթ շինեցին, օր մըներ չուն առավոտուն, գյեն, թակեր հըմեն մույաննա էնեն:

Խոջա Ալին ասաց. – Վոլլա՛, իմ հիրկան գանջան էտա դուլ ա: Ես էտա քանաքյ տը կան գան, բալկո կընդիմ իմ հիրիկ:

Մընաց չուր հիրիկուն, հիրիկուն խոջա Ալի կանչեց կաթըրջոց, էպե, ասաց. – Տե՛, կաթըրջիքյ, տու մեկ օր քյընաքյ, ծեր խոգյին կառեմ, պառկե՛քյ, լե հիշար մընացեքյ:

Ասաց. – Ինչ օր պերեն, ինչ կը տանեն՝ ծեն մ՛ էնեքյ, եփ օր էնոնքյ էրթան, նոր ձի հիշարցուցեքյ:

Կաթըրջիք պառկան, հիշար մընացին, տեսան, օր ջըհուտներ թակըմ պերին, թակեցին էնոնց մալերու մեչ, թակըմ գողցան, տարան:

Ջըհուտներ գացին: Էնոնք գացին, խոջա Ալուն խանեցին վեր:

Ասին. – Ելի՛, ելի՛, թակըմ կըրմըգ պերին, թակին մեր մալերու մեչ, թակըմ գողցան մեր մալերուց, առան, գացին:

Խոջա Ալին էլավ, թակ էպաց, օր կըրմըգ էր:

Ասաց. – Հա՛, վոլլա՛, էսոնք են իմ հիրկան գարար տված, էսոնք են իմ հիրկան ինչ էրած՝ էրած:

Կանչեց կաթըրջոց, հըմեն էկան:

Ասաց. – Դե՛, գյետին փորեք, էսա կըրմըգ լըցեք հինե, խորեք ու խող ու ծիու կու տըվեք վերեն, ծիյանք կապեք վերեն, հարթ տըվեք, թըխ ուտեն:

Էնոնք գյետին փորեցին, կըրմըգ լըցին մեչ, խող ու կու տըվին վերեն, հարթ լըցին, ծիյանք թողին վերեն:

Խոջա Ալի ասաց. – Մեր թակեր հըմեն քակեք, մեկ-մեկ թոփ խանեք, ըրեք էսա պեռան թակ:

Կաթըրջիք էնոր ասածի պես էրին, էղավ խարիր թակ:

Չուր խըլխուն՝ ջըհուտներ էկան, աչկեցին, կըրմըգ ջըկըմդան:

Կը խամբերեն, թակեր թամամ խարիր ա, ու կըրմըգ ջըկա մեչ:

Չըգյիցան, թե ի՞նչըխ էղավ:

Խոջա Ալին ասաց. – Դե՛, քյեկեք, իմ հիսուն պեռ Հալաբա մալ ու հիսուն ճորիք տըվեք:

Գյընաց, ուր սանաթ տարավ, էնու հիրկընից տարած մալ տըվեցին էնու, առեց էպե:

Էտու ջըհուտի քաղքի մեչ մեկ դալքան էպաց: Էտա մալեր հըմեն էտի խանութի մեչ:

Էտա քաղքի մեչ որ թոփ կը ծախեր քսան կուռուշ, հինք կը տեր տաս կուռուշ: Էն ապրանք օր կը տեն տաս, ինք կը տեր խինգ կուռուշ:

Քաղքի մեչի խանութներ հըմեն կոծվան, ժողովուրթ տանգած վըր էնու՝ բազառ կանա:

Թալըրներ գացին, թակավրուն փողոքեցին, ասին. – Էտա

մարթ էսա դուց ջըմըլեն տուս, մենքյ անոթի, ծարավ տը մեռինք, առուտուր հըմեն տանցե էնու վերեն:

Թակավոր գէնի կանչեց, տարավ:

Ասաց. – Խոջա՛ Ալի, թալըրներ էկած իմ մոտ գանգատ, կասեն՝ տու շատ հեժան մալ կը տաս:

Ասաց. – Թակավոր, տու ջը՞ս ուզի՝ քու քաղքի մեչ հեժուրեն էղի: Օր ջըս ուզեր՝ էս իմ խանութ կը կոծեմ, էսա դուց կը պանամ, կերթամ:

Ասաց. – Չէ՛, քու գործ շարունակի՛:

Խոջա Ալի տանցավ, էկավ էնու խանութի մեչ նստավ, մտածեց, ասաց. – Չա՛նըմ, էս էկեր են իմ հիրկան էտև, էսա ի՞նչ առուտուր ա կենեն:

Էլավ, գյընաց քաղքի մեչ զըվոեց, ջըկարցավ կընդեր:

Մընաց չուր մեկէլ օր, գյընաց տարալընոցներ աչկեց, տեսավ մեկ մարթըմ քյոմուռ շալակ, էն տեղեն կը գյեր:

Ճանչըցավ, օր էնու հիրիկն էր:

Ասաց. – Մարթ, տու ո՞ր տեղացի էս:

Մարթն ասաց. – Էս էնա՛ հուրուշ երկրացի են:

Խոջա Ալին ասաց. – Քու անուն ի՞նչ ա:

Ասաց. – Իմ անուն խոջա Մահմադ ա:

Ասաց. – Խոջա՛ Մահմադ, ըսկի կնիկ, տըղա, պա՛մ չունի՞ս քու խոր երկիր:

Ա՛խըմ քաչեց խոջա Մահմադ:

Խոջա Ալին ասաց. – Ընչի՞ ախ կը քաչես:

Ասաց. – Ա՛խ կը քաչեմ, օր ծի կնիկըմ կեր, էնքան խորոտ էր, օր մարթ տեսներ, խելքից, մըտքից կէլներ: Էս էկա բազըրգանութեն, էսա քաղքի ջըհուտներ ծի խապեցին, իմ մալ իմ ծեռնեն առան: Էլ էս ջըկարցա էրթեր խըն տուն: Ասի էրթամ, իմ կնիկ վըր ծի տը քյըռխի, օր մալեր տարա, փըճացուցի: Էս էլ էսա քաղաք մընացի, իմ չարեն կըտրավ, էկա, էղա ըստա տարալընի ծառա, քյոմուռ կը կրեն:

Խոջա Ալին ասաց. – Մահմադ, ծի կը ճանչընա՞ս:

Ասաց. – Չէ՛, քյե ջըմ ճանչընա:

Ասաց. – Էս խոջա Ալին են, օր էսա տեղ դալքան են պացե:

Ասաց. – Հա՛, էսա տեղ կասեն, թե խոջա Ալին դալքան ա պացե, առուտուր հըմեն տատըրցուցե, էնի տու՛ն էս: Չի տար,

երա քյե ծառա, էսա քյոմուռի թոգից, մըրից ազատիմ:

Ասաց. – Շա՛տ աղեկ, քյե կը տանեմ, խի քյե ամիս ի՞նչ տամ:

Ասաց. – Ես ըստան խացափորիկ կաշխատեմ, դիրսվան տո՛ւ՝ քիւ նըսաֆ, ի՞նչ կը տաս՝ տու:

Խոջա Ալին ասաց. – Եփ օր էմալ կասես, ես քյե ամիս խինգ ոսկի կը տամ, քիւ խալվըներն էլ կը փոխեմ, իմ ծոցեն էլ կուտես, կը խըմես, բա՛կո քիչըմ փարա շինես, էրթաս երկիր՝ մըտ քիւ կնիկ, օր կասես՝ իմ կնիկ շատ խորոտ ա:

Առավ հիրկան, գյընաց պա՛ղնիս, լավ կանոնավոր դաստըմ շոր էպե, խագոց, գացիկ դուքան, ըսկսեցին առուտուր էնել:

Համա՝ խոջա Մահմանդ չըճանչընար, թի խոջա Ալին էնու կնիկն ա: Գո ծառաութուն կէնա: Աստըծուն էլ շնորհակալ կէղի, թե քյոմուռի հա՛լից էլավ, խանգիստ գործըմ կընդի, փարա կը վա՛ստըկա:

Ժամանակըմ ընցավ, ապրանքյ առնողներ ջըհիւտի թակավորի ախչըկեն կը պատմեն, օր խոջա Ալին էնպես կանոնավոր մարթ մ՛ ա, օր մարթ տեսի, մարթիւ խելքյ գյըլխուց կէրթա՛:

Թակավորի ախչիկ կուզա՝ էնի պերա էնու սենյակի մեչ:

Էնու հառճըվու մարթիւն կասա. – Էլի՛, գյընա՛, խոջա Ալուն ասա՛՝ թը ծի թոփըմ շամի պերա: Օր տա, տիւ չըպերես: Ասա՛՝ թակավորի ախչիկ կասա՛՝ թող ինքյ ուր ծեռնով առի՛, գա՛:

Հառճըվու մարթ գյընաց խոջա Ալու մոտ:

Ասաց. – Խոջա՛ Ալի, թակավորի ախչիկ քյենե թոփըմ շամի կուզա:

Ասաց. – Առ՛, գյընա՛:

Ասաց. – Չէ՛, կասա՛՝ թ՛ էնի պըխտ պերա:

Ասաց. – Տիւ գյընա՛, մեկ քիչ վերճ ես կը պիրեմ: Էն մարթ գյընաց:

Թակավորի ախչիկ ասաց. – Ի՞նչ էրիր:

Ասաց. – Կասեր՝ տիւ գյընա՛, ես քիչ վերճ կառեմ, կը գամ:

Թակավորի ախչիկ ուրախացավ:

Խոջա Ալին մտածեց, ասաց. «Ըստեղ պա՛՛մ կա, օր ծի կը կանչա: Շամին էղեր՝ շամին կառեր, կէրթեր»:

Ասաց. – Խոջա՛ Մահմանդ, էլի՛, թոփըմ շամի ա՛ռ, գյընա՛՝ թակավորի ախչըկեն: Օր քյե խառցընա, թե քիւ անուն ի՞նչ ա, ասա՛՝ իմ անուն խոջա Ալի ա:

Խոջա Ալին ինչ մտածեց, ասաց. «Ես էրթամ թակավորի ախչըկե մոտ, վա՛յ թե էնու միտք շուն ա, ես կնիկ եմ, էնի կնիկ ա, անպատիվ կէղնիքյ: Լավ ա, օր ես խոջա Մահմանդ ճամխեմ, օր էնի մարթ, էնու ծեռնեն գա՛լած թոխ ի՞նչ կէնա, թ՛ էնա»:

Խոջա Մահմանդն էլ մեկ սիրուն, խորոտ մարթ մ՛ էր:

Ասաց. – Խոջա՛ Մահմանդ, ա՛ռ թոփըմ շամի, գյընա՛՝ թակավորի ախչըկեն, տար տիւռ կանիր, տիւռ պա՛՛ց, տու՛՛ ներս, արի՛: Չէ՛՝ որ քյե ներս առան, քյեզեն ինչ օր կը գա՛՛ չըխնայես, ես ըստա եմ, չըվա՛խեսաս:

Խոջա Մահմանդ առավ թոփըմ շամի, գյընաց թակավորի ախչըկե մոտ, տիւռ կաննավ, կանչեց:

Ասաց. – Թակավորի ախչըկեն ասե՛քյ, թող գա՛, էնու շամին տանի:

Հառճըվու մարթ էկավ ասաց. – Թակավորի ախչիկ կասա՛՝ թըխ առի, գա՛ ըստա՛:

Ասաց. – Չէ՛, ես չըմ կենա գա՛, դուքան մընացեր ա մըշամուր, մուշթերի շատ կա:

Թակավորի ախչիկ էկավ տիւս, ասաց. – Տի՛ւն ես խոջա Ալի:

Խոջա Մահմանդ ասաց. – Խա՛, եսն եմ:

Ասաց. – Արի՛ ներս:

Ասաց. – Չէ՛, դուքան մըշամուր ա, չըմ կանա գա՛:

Թա՛լեց ծեռ, գոռով քա՛շեց ներս: Տարավ ուր սենյակի մեչ:

Ասաց. – Խոջա՛ Ալի, ես քիւ շամուն փափաք չեմ, ես քյե յեմ փափաք:

Ի՛նչըխ օր ախչըկե քյեֆ ուզեց, էնպես էրին:

Ջըհիւտներ ինցան, օր թե խոջա Ալին էկե, գացե ախչըկե սենյակ, գացին, շոտըմ լուր տըվին թակավորին, ասին. – Մենքյ քյե ասինքյ՝ էսա մարթ երկրից տիւս խան, տիւ չըխանիր: Մըկա դիր էկե, քիւ նամուսին տիպե:

Հիրիկվան տեղն էր:

Թակավոր ասաց. – Գացե՛քյ, ախչըկե սարեն չորս պիլիր կանե՛քյ, կարակոլ պահե՛քյ չում առավոտուն, գանքյ խուզարկենքյ, խոջա Ալին խանենքյ տիւս, կախաղան խանենքյ:

Ծեն գյընաց քա՛ղքյի մեչ, օր Խոջա Ալին գացեր ա թակավորի ախչըկե մոտ: Ախչըկե սարի չորս պիլիր պըռնած ան, վա՛ղ

տը պոնեն, խանեն կախաղան:

Խոջա Ալին հիմցավ, թե հիրիկ մընացեր ա մեջ:

Ասաց. – Ի՞նչ էնեն, էտա մարթ ազատեն:

Գյընաց, խինգ խատ խու առավ, տաս կիտր արաղ առավ, էտա խույեր տարավ կարմըրցուց, առավ, արաղի խետ տարավ թակավորի ախչըկե սարի մոտ:

Ուր խավըներ փոխեր ա, ջրհուտի խալավ խագյեր ա, ոչ մեկ մարթ չըճանչընա:

Տարավ ջրհուտներուն, ասաց. – Առե՛ք էնա միս ու արաղ, կերե՛ք, խըմե՛ք, ծե ուրախութեն էրեք: Օր էտա մարթ էսա քանդաք քակեց, մեր առուտուր տատրեցուց:

Ջրհուտներ օր միս, արաղ ըխան, ուրախութեն խելքից էլան: Կերան միս, արաղ խըմեցին:

Չըմեն սարխոջացան, չուր կես գիշըրին պառկան, քյընան:

Եփ օր էնոնք պառկան, քյընան, խոջա Ալին էլավ, գյընաց շոտըմ տուռ տըփեց:

Խըմ տուռ տըփելուն, հիրիկ էկավ տըռան վերեն:

Ասաց. – Տո՛ւռ պաց, արի՛ տուս, էնոնք հըմեն խելքից էլան են:

Տուռ էպաց, էկավ տուս, ոչ մեկ մարթ չիմցավ: Էկան, գացին էնոնց խանութի մեջ պառկան, քյընան: Եփ օր լուսցավ, թակավոր ուր վոզիրներով էկան, գացին ախչըկե տուն օխլամա էնեն:

Գացին, ախչըկե տուն մարթ չըտեսան:

Թակավոր ախչըկեն ասաց. – Ախչի՛կ, չէ՞ կասեն խոջա Ալին էկի ըստա՞ քու մոտ:

Ասաց. – Չէ՛, դանդա՛, սուք կասեն, հո՛ւր ա:

Թակավոր, վոզիր էլան, գացին խոջա Ալու դուքան, կը տեսնին, օր խոջա Ալին գո էտա տեղ նստեր ա:

Թակավոր ասաց. – Խոջա՛ Ալի, վըր քյե էսպես պա՛ մասին, աչկեցինք, սուք էր:

Խոջա Ալին ասաց. – Թակավոր ապրած, օր տու նամուսով թակավոր մ՛եղիս, օր էտա ջրհուտներ քու նամուսին տիպան, պետք ա տու էնոնք հըմեն քաշես սուր:

Թակավոր ուր վոզիրին ասաց. – Վոզիր՛, օղորթ էսա մարթու խոսքն ա: Պետք ա մենք էտոնք քաշենք սուր:

Վոզիրն ասաց. – Քու կամքն ա:

Խըլխուլն էտա ջրհուտներ քաշեցին սուր:

Խոջա Ալին ասաց. – Վոլլա՛, ես իմ հիրկան ոխ վերուցի:

Ժամանակ մ՛ էնտեղ մընացին, կնիկ չոկ կը պառկեր, խոջա Մահմանդ չոկ կը պառկեր:

Օրըմ կնիկ ասաց. – Խոջա՛ Մահմանդ, տու չը՞ս իզա իմ կըշտի խետ պառկի:

Ասաց. – Աման, խոջա՛ Ալի, ես քու ծառեն՝ ի՞նչըխ գան քու յաթըղներու մեջ պառկիմ:

Ասաց. – Չէ՛, տը գաս:

Ինքյն էլ չըգյընաց:

Ասաց. – Օր չես իզա պառկի, արի՛ մե քիչ իմ քանակ, իմ օտքեր մաժե՛, գյընա՛ քու տեղ պառկի:

Ինքյն ծառա յեր, էլավ, գյընաց, խոջա Ալու օտքեր մաժեց, օր հըմեն օտաց մեկ հատ խալխալ կապուկ էր, զինքյ-զինքյ մտածեց, ասաց. «Էսա մեր երկրի կիխտեր էսա խալխալ կը կապեն, էսա ի՞նչըխ ա՛ խոջա Ալին էլ ա կապե՞»:

Դիր քանակն էլ մաժեց, սիրտ մաժեց, տեսավ, օր հըմեն մեկ ծիծ էսքան:

Էսպես շիվարած կանավ:

Խոջա Ալին ասաց. – Խոջա՛ Մահմանդ, տու ընչի՞ շիվարած կաներ ես, մաժա՛:

Ասաց. – Խոջա՛ Ալի, քյե ծիծ կա, ես մարթու ծիծ չըտեսեր են:

Խոջա Ալին ասաց. – Մե ցեղական էնպես ա, մարթու էլ կընգան էլ ծիծ կա:

Խոջա Մահմանդ ասաց. – Ես թու մարթու ծիծ չըմ տեսի:

Խոջա Ալին ասաց. – Խոջա՛ Մահմանդ, արի՛ իմ Աստըծուն երկըրպագություն արա, ես քու կնիկն եմ, ծի չըճանչընա՞ս, օր էկա, քյե էսա նեղ տեղեն ազատեցի:

Խոջա Մահմանդ ուրախութեն սկսեց լաց:

Ասաց. – Ինչի՞ կը լաս, քու ապրանքյներ հըմեն առա, քյե ազատեցի, քու մըրրազին խասար: Էլ ինչի՞ կը լաս:

Ասաց. – Էնոր խամար կը լան, օր տու կնիկ մ՛ ես, ես մարթ, ես չըկարցա քյե չափ գործ հանաճ տանեն, իմ խելք քու խելքի պես չէլավ:

Կնիկ տանգավ, ասաց. – Խոջա՛ Մահմանդ, փորժանքյ ա, մարթ կընգի մեչ: Մինչև մախվան օր ես թու մարթու չըմ ասի, թե ես գանցի, հիրիկս ազատեցի պերի, օր տու աճընաս:

Էնոնց խամար պառկան, քյեֆ էրին:

Մընացին էն տեղ մեկ ժամանակըմ, էնոնց ապրանքյներ սաղացուցին, էլան, էնդուց պանցին, գանցին խընդ խոր երկիր:


Խեր տեսավ, օր ախչիկ ու հիրիկ խընդրանց էկան:

Խեր գյընաց հանձններ, էպե, հիրարու վերեն ուրախացան:

Ախչըկեն խառցուց, ասաց. – Ախչիկ, քու էրիկ ո՞ր տեղն էր:

Ասաց. – Դանդո՛, իմ էրիկ մեծ առուտուրըմ պըռներ էր, գո՞ գանցի առա, էկա:

Էնոնքյ խասան ուրենց մըրագին ու ապըրվան մեկ տեղ:



10. ՁԵՎԱՆ ԽԱՆԸՍ

Ձեվան խանըմ մեկ հանխալըրի մոտ կաններ էր, մեկ մարթըմ էկավ, տեսավ, էնու աչք ինգանվ Ձեվան խանըմ: Ձեվան խանըմ շատ խորոտ էր:

Էնպես կաններ էր, կը նայեր ախչըկեն ու չըր գըխշըներ ախչըկեն պան՝ ասեր:

Ախչիկ ասաց. – Ինչի՞ ծի կիրիշկես:

Տըղան ասաց. – Տու շատ խորոտ ես, իմ սիրտ քյե կուզան, հանլան չըմ գըրըխշընա պան ասե:

Ասաց ախչիկ. – Ես էս տեղ մեկ ճաշարան պանցեր եմ, ֆախիր-ֆուխարին խեր-խերիանք կենեմ: Տու էլի՛, գյընան՝ մեկ մարթըմ էլ կա, էն էլ ճաշարան պանցե, խեր-խերիանք կենա, ինքյն էլ էտա մարթերու մեչ կերթան դեն, կը գան դեն, ուր ծեռներով կը գանի էնոր քյիթ ու պերնի վերեն: Գյընան՝ էնորից խասկըցի՛, թե էնու պատճառն, մանդեն ի՞նչ ա, արե՛ ծի ասա՛, օր ես քյե առիմ:

Տըղեն էլանվ, գյընանց: Գյընանց էտա մարթու ճաշարան: Զըմեն մարթ նըստավ, խաց կուտեն, ինքյ չըկերավ: Տեսավ, օր ճաշարանի տերն էկավ էտա մարթերու մեչ, դեն գյընանց, դեն էկավ, էրկու ծեռնով էգար մըչ ուր իրեսին ու գյընանց ուր տուն:

Տըղեն էլանվ, ինգանվ էնոր հիտեն: Գյընանց էնու տուն:

Էտա մարթ տանգավ, ասաց. – Տըղա՛, ճաշարան էն տեղն ա, գյընան՝ էն տեղ խաց կե՛, տու ընչի՞ իմ հիտեն կը գան:

Ասաց. – Ես կը խընթերեմ քյենե, օր տու քու մանդեն ծի ասես, խի տու ընչի՞ գանկիր քու աչքերու մեչ:

Ասաց. – Տըղա՛, ինձնե վա՛զ կաց, չե՛մ ասե:

Ասաց. – Կը խընթերեմ, օր տու ծի ասես քու մանդեն, պիտի

տանեն արհեստագործական, որ ինձ առի:

Էտա մարթն էլ ասաց. - Գլորնա՛, էնա քննարկի մեջ մեկ զինգանրըմ կա, խի՛ խասկըցի՛ էնու մանդեն ի՞նչ ա, որ ուր շինած զին կը տանի չարշին, խարիր կուռուշ տան՝ չի տա, խարիրըհիսուն տան՝ չի տա, էնու զինի արժողությունը քանտուն կուռուշ ի: Վերջ, հիրիկուն կը պիրա, կը տընա շեմի վըրեն, լոզով զին կը կըտըրտա, մյուս օր էլմ կը շինա ու կը տանի չարշին, կը պիրա, կը կըտըրտա: Խասկըցի՛ էնու մանդեն, արի՛, ես էլ իմ մանդեն կասեմ քե:

Տըղեն էլավ, գլորնաց զինգանրի մոտ: Ձինգանր չարշու մեջ զին պըռնած ծեռ կը զըվըռեր: Տըղեն ինգավ հիտև: Էնի որ տեղ վե կերթա, տըղեն էլ էնու ետևեն կերթա: Խարիր կուռուշ տըվին՝ չէտուր, խարիր հիսուն տըվին՝ չէտուր: Էպե տուն, էտի վըր շեմին, լոզով լավըմ պըրտեց:

Տըղեն, օր ընգեր էր հիտև չուն տուն, խառցուց, ասաց. - Աստված սիրես, քու մանդեն ի՞նչ ա, օր էտա զին չէր արժե քանտուն կուռուշ, խարիր հիսուն տըվին, տու չըտվիր, պիրիր տուն, լոզով պըրտեցիր:

Ասաց. - Քու ինչու՞ն պետք ընչի՞ ասեմ:

Ասաց. - Չի ասա՛, օր քու մանդից ծի ֆայրա կա:

Ասաց զինգանր. - Քննարկի էն կող մեկ կորըմ կա, լավ խորոտ տներ շիներ ա, էրկու-իրեք խլամ ա պըռնե, խլամներ միս կուտեն, չայ կը խմեն, ինքն ցամաք խաց կուտի: Օրական մեկ տիր էլ խլամներ էնոր պիտի տըվեն: Տըվելուց օր կը պըռծին, ինքն կասի. «Խլամներ, էն հան ծե խալալ չէրի, էն խաց ծե խալալ չէրի, օր տուք չըկարցաք ծի խորոտ տըվեք»: Գլորնա՛, էնու մանդեն խասկըցի՛, արի՛ ծի պատմա՛, ես էլ իմ մանդեն քե ասեմ:

Տըղեն էլավ, գլորնաց քննարկից մեկ ավուր ճանքախ զատն՝ կորու մոտ:

Տեսավ, օր խըլիսուն խլամներ էկան, հըմեն մեկի ծեռ թաց կոճանըմ, կորուն կը գանին, ինքն կանե թամաշա կենա: Կայիմ տըվեցին:

Կորն ասաց. - Էն հան ծե խալալ չէրի, էն խաց ծե խալալ չէրի, օր տուք չըկարցաք ծի կուշտ տըվեք:

Խլամներ գանցին էնոնց սենյակ, կոր գլորնաց, մտավ խավերու քաննա:

Տըղեն ինգավ հետև, գլորնաց: Գլորնաց մըտ կոր:

Կոր տըղին ասաց. - Ընչի՞ ես էկե ըստա՛, նա՛ ուտելու կա, նա՛ խըմելու: Գլորնա՛ մըշակներու մոտ, պըրինձ, միս, չայ, կե՛ր, խըմա՛, չուն առավոտուն էլի՛, գլորնա՛: Իմ մոտ մեկ ցամաք խաց կէլնի:

Ասաց. - Ես ցամաք խացին ըռագի եմ, ես քե խամար եմ էկե:

Խաց կերան, ասաց կորուն. - Տու քու Աստված, քու մանդի խամար եմ էկե, օր տու հան տըվեր ես, կեր-խում տըվեր ես էտա մարթերուն, քե օրական մեկ անգամ կը տըվեմ, խի ի՞նչ ա պատճառ՝ ծի ասես:

Կոր ասաց. - Քու ինչու՞ն պետք ա, չըմ ասի, էլի՛, գլորնա՛: Օր ես ասեմ, տու իմ դանդին մեկ դանդանըմ տ՛ էնե՞ս:

Տըղեն ասաց. - Կը խընթերեմ, ծի ասա՛, ես էկա զինգանրի մանդի խամար, օր տու չասես, զինգանրն էլ չասե:

Կոր ասաց. - Տըղա՛, քե տ՛ասեմ:

Ասաց. - Ես գեթակներու մեծն էր: Գլորնաց ժամանակ ֆախիր-ֆուխարին կը թալները սարի մեջ: Օրըմ մարթ չէկավ ճանքախ, չըգլորնաց, օր թալները՝ չուն կեսօրին: Կեսօրին չորս խոզի էկան: Շըլակ էնոնց քանկըներ կերթեն քննարկ: Ես անր էրի, քանի՞մ խոզի ճանքեցի, օր թալներն էտոնց: Գանցին, տանցան էկան, չըթալեցին:

Ասի. - Տու ընչի՞ չըթալեցիր:

Ասաց. - Վոլլա՛, չորս խեղճ պըրուտ եմ, էնոնց շալկըներ աման էր, տանեն քննարկ, ծախեն, տեն խաց-մացի, պերեն, տանեն էնոնց ճըթերու խամար:

Ես հինատ էրի վեր էնոնց, էլա՛, գանցի, չորս պըրուտ պըռնեցի, էնոնց շալկըներու ամըներ հըմեն կուտըրտեցի, էնոնց ջիբ, ծից պըշկեցի, խարիր փարա¹⁰ մըքա կեր խետքեր, էն փարեն առա ու ետ տանցա: Խեղճ պըրուտներ տանցան, ետ գանցին էնոնց տուն: Ես օր տանցա, էկա ճանքախ խետ, մեկ սիվտակ ծիավորըմ, էնու մըզանղ տըրեր էր մեջ ծիու էրկու ականջ, էկավ, ծի խասավ:

Չի ասաց. - Անաստված, Աստըծուց չըս վանքենա՞, օր տու խեղճ պըրուտներու ամըներ կուտեցիր ու էնոնց խարիր փարեն առար, էնոնց ճըթերու խացի փարեն էլ կըտըրցուցիր: Էնքան, օր

¹⁰ Քսան կոպեկ (Ճ. Բ.):

տալ փարա կուզես, քյելա՛, գյընա՛, չորս ճորի պե՛ր, ու ես քյե փարա տամ, մեկ էլ տալ ես ճամխըներ ֆախիր-ֆուխարին չըտեպիս:

Ես գաճի, առա չորս ճորի պերի, առավ ծի ու չորս ճորին, տարավ մեկ սարի՛մ մեչ, էն տեղ մեկ տալու մ՛ էպաց, չորս ճորին պեռ ոսկի էլից:

- Դե՛, - ասաց, - տա՛ր կըշտացի՛:

Ես էլ պառցի ճորիքյ, խընդրաց էկանքյ: Հանխարըն մեռաստ էկավ: Էտա մարթ կըզվա՛վ, ճուր խըմեց: Ես բըխտ-բըխտ ծի կասեմ, թե էսա փարեն էնի չի տա ծի: Չի կը խապա, տանի էնոր: Ես էլ ասի՝ զենի սպանեմ, փարեն մընա ծի: Էնի կըզվա՛վ, ճուր խըմեց, ես թուրըն թալեցի էնոր վիզ: Էնու գյըլիխ կըտրավ, ես տեսա՝ իմ աչքերն էլ կուրցավ: Համա էնու գյըլիխ առա, տըվի իմ ընթիտակ ու աչքեցի, ափլփեցի, մեկ ճորի կընտա՛, կոր եմ չու՛մ ըխի օր ճորիքյ պերիմ մեկ տեղ: Էն մեկ ճորին առա, էկա: Էտա ճորի պեռ փարով էսա քոչկ ու սարեն շինեցի: Մըկա էտա մըշակներ օրական մեկ անգամ ծի կը տըփեն, օր իմ կես հաղին չի, ու ես հե՛ր էն մարթ ըսպաներ, հե՛ր իմ աչքեր կորներ: Մըկա էն չորս ճորին պեռ ոսկին էլ իմն էր ու աչքերս էլ սաղ: Իմ մադեն էսին ա: Թե չըս ավատա, էն մարթու գյըլիխն էլ գի:

Համա տըղեն էզար, մարթու գյըլիխ առավ ու փախավ տեխ քաղաքյ:

Առավ, գյընաց գինգարու մոտ:

Ձինգար տըղին ասաց. - Կորու մադեն տալ պերի՞ր:

Ասաց՝ խա՛, պերի:

Ասաց. - Չի պատմա՛ խի ի՞նչ ա:

Ասաց. - Կորու պատմութեն անլա՛ յա. կոր գեբակ էր էղի, ճամխըներ թալան-թուլան կեներ: Օրըն չորս խատ պըրուտ կը գան, էնոնց շալկըներ աման: Կոր կըլնի, էրկու իրեքյ խուլամ կը ճամխա, օր թալնին: Մըշակներ կերթան, կը խեն, օր խեղճ են, պա՛մ չըկա խետ, չըն թալնի: Կորն կը հըռըկի, կէլնի, կերթա հառճեներ, էնոնց շալկըներու ամըններ կը կոտըրտա, խարիր փարա կէղի խետքեր, կառնի, կը գա: Մեկ սիվտակ ծիավորըն՝ ռըմ ծեռ, կը գա, կասա. «Անաստվա՛ծ, տալ Աստուց չըս վախենա՞, էտա ֆուխարի ամըններ կոտըրտեցիր, էնոնց խարիր փարեն առար: Օր էնքան փարա տալ կուզես, գյընա՛, չորս ճորի

պե՛ր, ես քյե փարա տամ, տա՛ր, տիր մ՛ էլ էսա տեղ ֆախիր-ֆուխարին չըթալնես»: Կոր կերթա, չորս ճորի կը պերա, կերթան սարի մեչ, չորս պեռ ոսկի կը տա: Խընդրաց կը գան, վըր հախպըրի՛մ կը նըստեն: Էտա ծիավոր մարթ ճուր կը խըմա: Կոր ինքյն ուր կասա. «Էսա փարեն էնի չի տա ծի, ծի կը խապա»: Թուրըն կը գանա, մարթու գյըլիխ կը թըռուցա: Կըտըլու ժամանակ էնու էրկու աչքն էլ կը կուրնան: Էնի կառնի ըզգյըլիխ ու մեկ ճորի, կը գա: Քոչկ ու սարեն կը շինա, խուլամներուն հաղ կը տա, կը տընա հինե, օր հըմեն օր զենի տըփեն, օր էնու կես հաղին չի. ընչի՞ մարթու վիզ կըտրեր, ընչի՞ էնու աչքեր կուրներ: Թե չէ, չորս պեռ ոսկին էլ չըխտ էնորն էր: Էնու մադեն էսին ա, չըս ավտա՛ գի գյըլիխն էլ պերեր եմ խետ:

Համա՝ գինգար մեկ էնու ծենով կը բռա, էտա գյըլիխ կը պագա:

Տըղեն կը գարմանա, թե էսի ի՞նչ պան ա, էնոր ի՞նչ ա, օր կը պագա:

Ձինգար կասա. - Տըղա՛, գյինա՞ս իմ մադեն ի՞նչ ա, օր զըներ կը կըտըրտեմ, չըմ ծախե: Օրըն ես գին առեր էր, քաղքի մեչ կը ծախեր, տեսա, օր սիվտակ ծիավորըն ռըմ ծեռն, էկավ, ասաց. «Ձինգար, էտա գին չը՞ս իտա ծի»:

Ասի՛ կը տամ:

Ասաց. - Գյին ի՞նչ ա:

Ասի. - Խարիր հիսուն կուռուշ ա:

Խարիր հիսուն կուռուշ էտու, չըտվի, ասի՛ խամ ա, բալկո հա՛վիլի մոտեն առեմ:

Էտա ծիավոր ծի ասաց. - Քու քյեֆն ա, իմ փարեն թըբարըք ա, օր տանես, խառնես քու փարին, չու՛մ քու տըղի տըղեն էլ ուտա, չըխըլըսի:

Էն մարթ ծին կըշտեց, կընաց: Վըր ծի էղավ ծախորթություն, էլ իմ խաց՝ խացի, թաց՝ թացի չըխասավ: Մըկա էնու խամար ես գին կը տանեմ քաղաքյ ու կը պիրեմ, չըմ ծախե, կասեմ՝ բալկո էն մարթ էրևա, ընոր ծախեմ: Ամա՛ էլ իմ հույս կըտրեցի, էսա էն ծիավորի գյըլիխն ա:

Տըղեն առավ գյըլիխ, գյընաց էն մարթու մոտ, օր ճաշարան էր պացե, ասաց. - Տու գինգարի մադեն ծի պերի՞ր:

Ասաց. - Խա՛, պերի:

Ասաց. - Դե՛, ձի պատմա՛, խի ի՞նչ ա:

Տըղեն պատմեց, ասաց. - Ձինգա՛ր զին կը տանի քաղքի մեջ, օր ծախա: Մեյ սիվտակ ծիավորըմ՝ ռըմ ծեռ, էնու ռաստ կը գա: Էտա զինին խարիր հիսուն կուռուշ կը տա, էնի չի տա:

Կասա զինգա՛ր. «Էսի խամ ա, բալկո հալիլի փարա մոտեն առնիմ»:

Ծիավոր կը թոնի, կերթա: Ձինգա՛րի վերեն կելնի ծախորթու-թյուն: Դռովան՝ զինգա՛ր ուր շինած զին կը տանի, քաղքի մեջ կը զրվըռացուցա, կասա. «Բալկո էտա ծիավոր էմէլ գա ռաստ, տամ էնոր»: Ես ծիավորի գյըլիխ պերի, էնոր ցուց տվի, էնի էնոր հույս մոտեն կտրեց: Մարթ, զինգա՛րի մադեն էսին ա:

Մարթ ըսկսավ տըղին պատմել:

Ասաց. - Ես օրըմ էսա իմ ճաշարանի հախարի մոտ կամեր էր, դիր մ՛ էլ ես ախչիկըմ էտա տեղ կանուկ տեսա: Ես էսպես կը պըշկի ախչիկեն ու չըմ գըխշընա պա մ՛ասե: Ես մեկ էլ տեսա՝ մեկ սիվտակ ծիավորըմ՝ էնու ռըմ ծեռ, էնտիխեն էկավ, ասաց՝ մարթ, տա հե՞ր անլե՛մ կը պըշկիս էտա ախչիկ:

Ես ասի. - Ի՞նչ էնեմ: Ախչիկեն շատ կը սիրեմ ու չըմ գըխշընա պա մ՛ասե:

Ասաց. - Մը՛ վախենա, ես էնի կը պերեմ, կը փըսակեմ քե վերեն:

Գյընաց, ախչիկե ծեռ պըռնեց, էպե, էտիր իմ ծեռաց մեջ, էն տեղ տերտեր մ՛էպե, մեր փըսակ էրաց:

Ասաց. - Մարթ, հառճին կիշիր կնիկ տը գա, պառկի իմ սենյակ:

Ես էլ ի՞նչ էնեմ, չար նաչար, ասի՝ թըխ գա: Ես չըր ուզե եր-թեր, հե՞ր անհարմար էր: Լե ապա ի՞նչ էնեմ, շիվարած մընացեր էր: Հիրիկուն օր էտուր, քընելու ծամանակ ախչիկ տարավ ուր սենյակ:

Ես մի սահաթ մընացի իմ սենյակի մեջ, իմ քուռ չըտարավ կըսկըծու: Ես էլա, գացի: Ամլա տըռան ծակը վե իշկեցի, ասի. «Իշկեմ, խի իմ կընգան կը պագա, խի ի՞նչ կէնա»:

Էտի թուր քաշեր էր, տըրեր էր ախչիկե խոգալ վերեն, կա-սեր. «Դե, քե սեյրի կա, ասա՛, քու սեյրիքը ըսպանեմ, օր տալ էն մարթուն չըվընասես»:

Ախչիկ ասաց. - Իմ պոճըկի մագերուց մեկ սեյրի վիշապըմ կելնի տալս, օր իրկան կըծի, մեռի:

Ծիավոր ասաց. - Դե՛, խամ տալս:

Ախչիկ խանեց տալս, էնի էգա՛ր, էտա վիշապ ըսպանեց:

Ծիավոր ասաց. - Դե՛, էլ կա քու սեյրիքը, խամ տալս:

Ախչիկ ասաց. - Չէ՛, էլ չըկա:

Ծիավոր գոռեց վերեն:

Ախչիկ ասաց. - Մեկ խատ էլ ունիմ սեյրի:

Ծիավոր ասաց. - Քու սեյրին ի՞նչ ա:

Ասաց. - Իմ սեյրին իմ պերնից մեկ ասլան տալս կը գա, օր իմ իրկան կը վընասա:

Ասաց. - Իսն էլ գո թամաշա կէնեմ:

Մեկ էլ էտա մարթ տըռան պատռունը վե ձի տեսավ հա-կանա:

Ասաց. - Վուա՛յ, օղորթմա հիսան բերախտ ա, ես էսի պերի, օր էնուր սեյրիքը ըսպանեմ, օր քե չըվընասեր ու էլներ, թողներ, փախեր, էրթեր: Էսի իմ քուրն ա ու գոռովի փըսակեցի վըր քե, մըկա տալ քու սըրտի մեջ գեշ խորխուրթ կազմեր ես, թի՛ էսա մարթ իմ կնիկ տարավ՝ ի՞նչ կէնա:

Էնու խամար էրկուսն էլ հողից աներուր էղան:

Ասաց. - Մըկա էսա ճաշարան օր պացեր էր, էրթըցող, գալա-ցող կը պերեր, խաց կը կերցուցեր, կասեր՝ բալկո էտա մարթ մեկ էլ ձի ռաստ գա ու ես խընթըրվիմ, բալկո էնու քուրն էլըմ պերա, տա ձի: Քանի օր ճաշ կուտեմ, ես կը գեր, մեջ մարթերուն կերթեր, կը գեր, ես էտա մարթ հինե չըտեսներ: Էնու խամար ես կը գաներ իմ աչքերու մեջ ու կերթեր տուն: Էն սիվտակ ծիավոր մարթ գո էսա էր: Իմ մադեն էսին ա:

Տըղեն առավ գյըլիխ, գյընաց խընդ էն ախչիկ:

Տարավ գյըլիխ ախչիկե մոտ, ախչիկ գյըլիխ տեսնելու պես մեկ էնու ծեռով բոռաց և գյըլիխ առավ, պագեց:

Ասաց. - Հե՛յ, տըղա՛, էտա մարթ, օր ճաշարան պացե, տալ էնու մադեն ձի պիրի՞ր, ընչի՞ կը գաներ էնու աչքերու մեջ:

Տըղեն ասաց. - Խա՛, պերի:

Ասաց. - Դե պատմա՛:

Տըղեն ասաց. - Ձեվա՛ խանըմ, էտա մարթ էնու ճաշարանի կըշտի հախարի վերեն մեկ ախչիկըմ կը տեսնի, կուզա օր

ախչիկ առի, չըզըխչընա ծեռ թալի հինե, մարթն էմլա շիվարած՝
կը պըշկի խընդ ախչիկ:

Մեկ էլ կը տեսնի, որ սիվտակ ծիավոր մարթըմ՝ ռըմ ծեռ, կը
գա կը պատահի:

Կասա. - Տո՛ մարթ, ի՞նչ ա, տու կը պըշկիս տա ախչիկ: Չէ-
ղի՞ կուզես առիս:

Կասա. - Խա՛, ես շատ կուզեմ առնիլ, չըմ գըխչընա:

Կասա. - Օր ընցկուն ա, ես կը պերեմ, կը փըսակեմ վեր քյե:

Կասա. - Էպի փսակեց վըր ձի: Չի ասաց. «Օր փըսակեմ
վըր քյե, հանձին կիշիր տը գա, պառկի իմ սենյակ»: Ես էլ ասի՝
ուր քյեֆն ա, թ՛ էրթա պառկի: Եփ էղավ հիրիկուն, ճաշարանի
տեր գյընաց ուր սենյակ, ախչիկ գյընաց ծիավորի սենյակ:
ճաշարանի տիրոջ քուն չըտանի, կասա, թե՛ իմ կնիկ տարեր ա,
հուրուշ պա՛մ կենա: ճաշարանի տեր կասա. «Ես էլա, գացի, տը-
ռան ծակերուց աչկեցի, որ թուր քաշեր էր, ախչըկեն կասեր, թե՛
քու սեյրիք ի՞նչ ա, ասա՛, քու սեյրիք ըսպանիմ, որ տու տա
մարթուն չըվընասիս»:

Ախչիկ կասա. - Իմ սեյրին պոճըկներու մագերուց մեկ վի-
շապըմ կելնի, մարթու կը վընասա:

Ծիավոր էտա վիշապ խանիլ կը տա տուս, էտա վիշապ կը
սպանա:

Ասաց. - Դե՛, ասա՛, խի էլ ի՞նչ կա:

Ասաց. - Իմ պերնից էլ մեկ ասլան կելի, մարթու կը վընասա:

Ասաց. - Ես էլ գի թամաշա կենեմ: Մեկ էլ ձի տըռան ծակը
վեր ըխավ: Ասաց. «Յա՛յ գյիդի, բեբախտ հիսան: Ես պերեր եմ
ի՞նչ պատճառներով՝ էնոր սեյրիք կը սպանեմ, որ քյե չըվընասա,
տու էկեր ես գյեշ սրտով կիշկես, կասես, թե էտա մարթ իմ կնիկ
տարեր, խի ի՞նչ կենա»: Էրկուսն էլ աներևութ էղան: Ասաց. «Ես
իմ ճաշարան պացեր եմ, բալկո էն մարթ տիր մ՛էլ գյեր, ես տես-
ներ, խընթըրվեր, որ բալկո էմէլ էնոր քուր տեր ձի»:

Եփ որ ես էսա գյըլիխ պերի էնոր, տեսավ, էն էլ էնու հույս
հըմեն պանից կըտրեց, ասաց. - Էսա գի ծիավորն ա:

Ձեվա խանըմ ասաց լաճուն. - Էն ախչիկ եսն եմ, էտա սիվ-
տակ ծիավորն էլ իմ ախպերն էր, ես ճաշարան պացի, ֆախիր-
ֆուխարին խաց կը տեր: Կասեր, թի իմ ախպեր սաղ ա՛ չըխոթ թո

էնու կադի բալի հանաճ կան գա, թե մեներ ա, թ՛էրթա էնու խո-
գուն:

Ասաց. - Մըկա գի տու գըլըլիխ պերեր ես, ճաշարան կը
կոծեմ:

Եփ ճաշարան կոծեց, տըղային ասաց. - Դե գյընա՛, տեր-
տերըմ պե՛, թի մեր փըսակ էնա: Աստված ձի էնոր կըսմաթ չէրաց,
քյե կըսմաթ էրաց:

Տըղեն գյընաց, տերտեր մ՛էպե, էնոնց փըսակ էրաց, էնոնց
քոշկ ու սարե մ՛ավա էրին, մեչ ապրան:





11. ԽԵԼՔՈՎ ԱԽՉԻԿ

Թակավորը ուր վոզիրին կը փորձա՛, խի խելախաս ա, թի չէ: Կամ չէ՝ ո՞ր մեկ խելախաս մարթուց էտա խոսք տը խասկընա, օր էնա ուր վոզիր:

Կը կանչա վոզիրին, կասա. - Վոզիր, քյե ոսկի՛մ տամ, տար մեկ ոսկու սըջանա՛, մեկ խու ու իմ ոսկին էլ պե: Գամա ընցկուն էնես, օր հիմանամ, թի էտա ոսկով ես առե: Քյե շատ փարա կա, չըլնի՛ թի էնորով առնես:

Վոզիր էլավ, առավ ոսկին ու ընգավ ճամբախ:

Շատ գյընաց, քիչ գյընաց, մեկ Աստված գյինա, ճամխի խետ պատահավ մեկ գյեղացի մարթու՛մ:

Վոզիր չըճանչըցվի թի վոզիր ա, հասարակ մարթու խալավ ա խա՛գյեր:

Վոզիր գյեղական օր կը տեսի, կասա. - Գյեղացի՛, ծեր գյեղ գա՞տն ա:

Ասաց. - Չուր հիրիկուն կը խասինքյ մեր գյեղ: Կեղիս ծի կոնախ, քյե խաց, ճուր կը տամ, չուր խըլխտուն էլի՛, գյընա՛:

Կերթան, խասին մեկ պըրակի մոտ, վոզիր գյեղացուն կասա. - Մարթ, արի՛ թաք-թաք մըտինքյ պըրակ, ջուխտ-ջուխտ էլնինքյ:

Գյեղացի մարթ կը մտածա. «Էսա մարթ ծու՞ռ ա, ի՞նչ ա, ի՞նչըխ թաք-թաք կը մըտնի, ջուխտ-ջուխտ կէլնի»:

Մե քիչ էլ ճամբախ կերթան:

Վոզիր մարթուն կասա. - Արի՛, ես եղիմ ծի, տա՛ւ ծի խեծի՛, յան տա՛ւ եղի ծի, ես քյե խեծիմ:

Գինա՛ գյեղացին կը մտածա. «Վոլլա՛, էսա մարթ ծուռ ա»:

Կը խասին գյետի մոտ, վոզիր գյեղացուն կասա. - Մարթ, յան արի՛, եղի՛ կարմունջ, ես քյե ընցիմ, յան ես եղիմ կարմունջ, տա՛ւ ծի ընցի:

Էն ժամանակ էլըմ կասա. «Էսա մարթ ծուռ ա»:

Կը թոնին, կերթան գյեղացու գյեղ: Մարթ կառի վոզիր, կը տանի հօղեն:

Ինքյն կը տաննա, կերթա, ախչըկեն կասա. - Մե մարթըմ եղավ ծի հինգեր, պերած եմ հօղեն, փըշուն խաց տո՛ւ, տանեմ, էնի ուտա:

Ախչիկ կէլի, խաց ու քալամ տա, օր տանի, մեհվան ուտա, խեր կը ծըծղա:

Ախչիկ կասա. - Ընչի՞ կը ծըծղաս, դա՛դի:

Կասա. - Էն մարթ ծուռ ա:

Կասա. - Ինչպե՞ս ծուռ ա:

Կասա. - Ծամխու խետ օր խասանքյ պըրակի մեչ, ծի ասաց՝ թաք-թաք մըտինքյ, ջուխտ-ջուխտ էլինքյ: Մե քիչ էլ գաճինքյ, ծի ասաց՝ յան տա՛ւ եղի ծի, ես քյե խեծիմ, յան ես եղիմ ծի, տա՛ւ ծի խեծի: Քիչ մ՛ էլ գաճինքյ, խասանքյ գյետի մոտ, ծի ասաց՝ յան տա՛ւ եղի կարմունջ, քյե ընցիմ, յան ես եղիմ՝ ծի ընցի:

Ախչիկ էլ քալամ, խաց չէտուր, էլավ մեկ թուփ սեր, տասվերկու խատ խավու ծա՛ւ, հիսունվերկու խատ էլ խաց էտու խոր, ասաց. - Տար, տիր էն մեհվընի առա՛ճ, թըխ ուտա:

Եփ օր տարավ հօղեն, էտիր վոզիրի հանե՛ճ, վոզիր տեսավ, խասկըցավ, օր էտի մեկ մարթու կերակուլ չի, էտի փորձ ա: Էն տեղաց մարթերաց, տանտիրոջ, մեկէլին ասաց. - Մարթեր, ծե պա՛ մասիմ, չըրըրկիքյ. խըլղի լուսնակ ամիս մի անգամ կը պիլիքի, ծեր լուսնակ միշտ խո՞ռ ա: Մեկէլ տ՛ասիմ. հըմեն մարթու տարին տասվերկու ամիս ա, ծեր հա՛ հա՛ տաս ամիս ա: Մեկէլ՝ խըլղի տարին հիսունվերկու շապաթ ա, ծեր հա՛ հա՛ քանու-նեվո՞ւթ տ՛եղի:

Էտա գյեղական էլավ, վոզիրին կա՛հիմ ծեծըմ տըվին, ասին. - Էսա մարթ ծուռ ա:

Խեր առավ խաց, տանցավ, էկավ տուն:

Ախչիկ ասաց. - Դա՛դի, էսա մեհվան խաց չըկերա՞վ:

Ասաց. - Չէ՛, մեհվան էնքան տըփեցին, օր մ՛ ասե:

Ասաց. - Ընչի՞ խամար:

Ասաց. - Կասեր մե՛ խըլղի լիւսնակ ամիս մեկ անգամ կը պիլիքի, ծեր հնա խոռ ա:

Ախչիկ ասաց. - Դանդո՛, չէղի՞ թի տու սերից քիչըմ կերեր ես, օր խոսվեր ա:

Խեր ասաց. - Խա՛, ախչի՛, ճամբախ քիչըմ կերեր եմ:

- Էլ ի՞նչ ասաց, դանդո՛:

Ասաց. - Կասեր, թի խըլղի տարին տասվերկու ամիս ա, ծեր միշտ տասն ա:

Ասաց. - Չէղի՞ ճամբախ էրկու ծու կերեր ես:

Ասաց. - Խա՛, կերեր եմ:

Ասաց. - Էլ ի՞նչ ասաց:

Ասաց. - Խըլղի տարին հիսունվերկու շապաթ ա, ծե հնա հիսուն ա:

Ասաց. - Դանդո՛, չէղի՞ խացն էլ ես կերեր:

Ասաց. - Խա՛:

Ախչիկն ասաց. - Գընա՛, էն մեհվան պե՛ տստեղ, տուքը էնոր լայեղ չեք:

Եփ օր վոզիրն էկավ նստավ, ախչիկ խաց էպի, իտիր վոզիրի հանեմ:

Վոզիր պըշկաց ախչըկա աչքին, տեսավ մեկ աչքն ճախառ էր, ասաց. - Դոդա՛, քյե լավ ա շինած, համա փանջարեն քիչ ճախառ ի:

Ախչիկ խասկըցավ, օր իր խամար ասաց:

Վերճ վոզիր ասաց ինքը ուր, թի՛ էսա ախչիկ էսա պանի թանդաիր չըտեսի, թու մարթ չըկանա:

Ասաց. - Ախչի՛, թակավոր մեկ ոսկի տըվեր ա ձի, կասա՛ ձի տը պերես էտա մեկ ոսկով մեկ խու, մեկ սըջանդա, էլըմ իմ ոսկին էլ ետ պերես: Էն էլ գաս, ձի պատմես, թե ի՞նչ կերպով ա, օր հիմանամ: Բակր տու տանես, քու փարով պերես:

Ախչիկ ասաց. - Էտի կուլա յա: Ոսկին տար, տու՛, մեկ ոսկու խու առ: Էտա խույու պըրտեր կըտրա՛, տու՛ շինել էրկու սըջանդա, մեկ ծախա՛, տու, մեկ ոսկի առ, էն մեկէլ սըջանդեն, խուն, առ, տար քու թակավորին:

Ինքըն ոսկին տարավ, էտու, մեկ խու առավ: Խույու պըրտեր կըտրեց, էրաց էրկու սըջանդա, մեկ ծախեց, էտու, մեկ ոսկի առավ:

Խուն ու մեկ սըջանդեն առեց ու թակավորի խամար տարավ:

Վերչ ախչիկ խորից խառցընեց, ասաց. - Դանդո՛, տու գլխոցա՞ր էնոր առակներ ի՞նչ ին, օր էն քյե ասաց խընդ ճամխին:

- Չէ՛, չըգլխոցա:

- Բյե ասիմ: Էն ժամանակ, օր էն քյե ասե՛ արի թաք-թաք մըտինքը պըրակ, ջուխտ-ջուխտ էլինքը, տուքը առանց փետի եք էղե, ծեր ծեռքեր փետ չէղե: Էնու խամար ասե՛ արե մե մեկ փետ կըտրենքը, մեր ծեռ պըռնենքը, էլնենքը ջուխտ: Փետ մարթու ախպեր ա, մարթ շընից կը պըրծու, գազանից կը պըրծու, գոդից կը պըրծու: Էն, օր ասե քյե՛ տու արի էղի ծի, ես քյե խեծիմ, ես էղիմ ծի՛ տու ձի խեծի, էն էլ էն ա ասե՛ արե մեկ մասալ ասա, տու կեղիս ծի, էնել ականջ կենա, չի նեղանա: Տուք ճամբախ մըրըծեր եքը, օր մասալ ասիքը, չիմենքը, թե ճամբախ կերթեք: Էնու խամար էն էտպես ասեր ա: Օր տու էկեր եքը գյետի պըռուկ, օր էն քյե ասեր ա՛ արի տու էղի կարմունջ, ես քյե ընցիմ, ես էղիմ կարմունջ, տու ձի ընցի, էնի էն ասեր ա՛ էրկուսն էլ չըպիպկընանքը, գանիմքը գյետ, յան տու պիպկըցի, ձի ընցու, յան ես պիպկընամ, քյե ընցուցեմ, օր էրկուսն էլ բանատի տեղ չըպիպկընենքը: Շըլկող կեղի կարմունջ: Տու չես խասկըցե: Էնի օր մըտավ իմ հոդեն, ձի ասաց՝ հոդեն շատ լավ հոդե մ՛ա, ամա փանջարեն ճախառ ա: Էնի հոդին չասաց, ձի ասաց, թե՛ ախչիկ, տու լավ ախչիկ ես, ամա քու մեկ աչք շիլ ա, ճախառ ա:

Ախչըկե խավի ծուեն, խաց, սեր օրոխկելն էլ էն ա, օր խերն ասաց ծուռ ա, մեկ էլ ասաց՝ թաք-թաք մըտնենք, ջուխտ-ջուխտ էլնենքը, ախչիկ էնտուց խասկըցավ, թե էն մարթ կամ մեծ մարթ էր, կամ չէ՛ ֆանասաթլի էր, էնոր խամար ծըվով, սերով էնի փործեց:

Մենքը տաննանքը վոզիրի պատմության վերեն:

Վոզիր առավ խուն, ոսկին, պան, տարավ թակավորի հանճև էտիր:

Ասաց. - Ա՛ռ, թակավոր, քու ոսկին, քու խուն, քու սըջանդեն:

Ասաց. - Շատ լավ, դե՛, մեկ տեղ արա ձի, խի ի՞նչըխ ես առե:

Վոզիր ասաց. - Մեկ ոսկի՛մ տըվեր եմ, մեկ խու եմ առե, պըրտեր էրեր եմ էրկու սըջանդա, մեկ ծախեր եմ ոսկի՛մ, էնու էն ոսկին, էն էլ քու խուն ու սըջանդեն:

Ասաց. - Վոզի՛ր, պատմա՛ խենք՝ էտա խելք՝ քյե վո՞ն ա շանց տվե:

Ասաց. - Թակավոր, մեկ գյեղացի ախչիկըմ՝ տասնուխինգ տարեկան, էնի յա ծի շանց տվե:

Ասաց. - Վոզի՛ր, քյե պատրաստութուն տեսի, գյընա՛ ախչիկ պե ծի խամար:

Վոզիր ասաց. - Շա՛տ լավ:

Առավ պեռներով փարա, անքան, պան, գյընաց, շըտկավ ախչըկե գյեղ:

Ախչըկե խեր ու գյեղական գանձացան, թե էտնք՝ ընչի՞ էկան ըստեղ:

Վոզիր գյընաց, ախչըկե խոր տուռ կաննավ:

Ախչըկե խոր կանչեց, ասաց. - Ախչըկեն պատրաստի՛, տանիմ թակավորին, թակավոր կուզա՛ ախչըկեն:

Խեր ախչըկեն ասաց. - Ախչի՛կ, թակավոր ճամխե, քյե կուզա:

Ախչիկ ասաց. - Խըլխուն կերթամ:

Առավոտուն վոզիր առավ ախչիկ, ընգնավ ճամբախ:

Տարավ ախչիկ թակավորին: Թակավոր փըսակվավ, ամա չըգյընաց ախչըկե մոտ:

Ասաց. - Ես էտր տը փործեմ, խի ինչպե՞ս ա, լա՞վ ա:

Օրըմ քանչեց, էրկու քանչեց, կըռիվ ըսկըսավ:


Գյընաց կընգան ասաց. - Կնի՛կ, գո՛ ես կերթամ, քու մոտ չում մըկա չըմ էկե: Ա՛ռ էնա փարի քյիսեն քյե:

Էրկու քյիսա էտու, մեկ տանտակ էր, մեկ հըլիմ էր: Տանտակ քյիսի պերան պանց էր, հիլինին կոծ ու ուր փանջով մոհրուկ:

Ասաց. - Կնի՛կ, կուզիմ, օր էսա մոհրուկ քյիսից առանց ճըղելու ու քակելու՝ ոսկին տանտղկես մըջ տանտակ քյիսուն, փանջեն մընա անարատ: Մեկ էլ մեր կըսրախ իմ տըկի ծիուց քանչեկ պիտի տաս, օր մեր ծիուց քուռակ մ՛էլի: Ես իմ ծիմ կը խեծիմ, կերթամ կըռիվ:

(Պատմողը վերջեն շարունակեց այնպես, ինչպես նախապես գրված է: Կինը իր շորեր փոխած էրկան քով կերթա և հոն սադրաջե խաչի շընորհիվ կը մնա հղի անկե, անոր կնիք կը գրավե և իր էգ ծին հղի կը կեյնե թագավորի ծիուց)¹¹:

¹¹ Ծ. Բ.



12. ՄՈՍԹՈՒՈՒԱԶՈՒ ԿՆԻԿ

Մեկ մարթըմ կէլի, կերթա մեկ քանդաքյըմ: Քանդքյի մեչ կան կը գա, կը տեսի, օր մեկ խանըմ փանջարեն վեր էնու գյըլիխ խանե տուս:

Մարթն էլ կը նայե էտու հիրիս: Չու՛մ ճաշոցին էտա մարթ մընաց տա՛ կանուկ:

Խանըմ իչկեց՝ տըլ հալա՛ մարթ կանուկ ա տա՛:

Ասաց. - Մարթ, ի՞նչ կուզես:

Ասաց. - Վոլլա՛, խանըմ, իմ աչք մընացե քյե, դորսվան տու գյինաս, բալկո ծի պաքյըմ, յան ծեռ տաս:

Խանըմ տուռ էպանց, կանչեց մարթուն, էպե ներս:

Մարթն ասաց. - Դե՛, խանըմ, ծի պաքյըմ տու:

Խանըմ ասաց. - Չէղի՛, ես քյե մեկ մոսթուռե՛մ տամ, տա՛ր էնտուց էրկու գանգ պե՛ ծի, ես քյե ծեռ կը տամ:

Խանըմն էլ կուզա՛ փործա, խի էտա մարթ շըռա՞դ ան, շո՞ւն ա, թի չէ՛ խախալոզի մեկն ա:

Էտա մոսթուռեն միայն էտա խանըմի իրկան տուքան կընդըվի, հուրուշ տեղ չըկա:

Մարթն առավ մոսթուռեն, տուքըյներ կան կը գա, ո՛ր տուքան կը տանի, էնտուց չըկա:

Գյընաց, պատահավ խանըմի իրկան տուքան, շանց էտուր տուքընտարին, ասաց. - Էսա կըտորից չունի՞ս:

Խանութպան առավ, աչկեց, օր ճիշտ էն կըտորն ա, օր ուր կընգան մոտն էր:

Ասաց. – Ջանըմ, էսա մարթ խանլիմ, էսա ի՞նչըխ գանցե մեր տուն, էսա կըտոր ըցկե ուր ծեռ:

Ասաց. – Մարթ, էտա կըտոր վո՞ն ա տըվե քե:

Ասաց. – Ջանըմ, քու կո՞րծն ինչ ա, էսա կըտորից տու երկու նետ տու ծի:

Ասաց. – Երկու նետ երկու ոսկի յա, երկու ոսկի տո՛ւ, քե երկու նետ տամ:

Մարթն ասաց. – Վոլլա՛, փարա չունենմ, էմալ տուր, չուր աշխատեմ, քու փարեն տամ:

Ասաց. – Չէ՛, խի ինչի՞ խամար ա, ծի ասա՛, օր տամ:

Մարթն ասաց. – Ես էկա քանդի մեչ, փանջարե՛մ վե ես խանըմըմ տեսա: Իմ սիրտ շատ զենի ուզեց: Ես էլ գանցի, էն խանըմից խընտրեցի, պաքըմ ուզեցի: Էն էլ էսա կըտոր իտու ծի, ասաց՝ տա՛ր, էսա կըտորից երկու նետ պե՛, քե պաքըմ տամ:

Խանութպան շըֆա ընգանվ, ասաց. – Վոլլա՛, ես երկու նետ տը տամ էնոր, ինգիմ հետև, խի ո՞ր տեղ վե կերթա՛, առնիմ ծեռնեն:

Էնի գընաց, խանութպան տուքըմի տուռ փակեց, հա հուշիկ-հուշիկ ընգանվ հետև:

Խանութպան տեսավ, օր գընաց, մըտավ ուր տուն:

Խանութպանի կնիկ հիրիշկաց, կը խի, օր ուր մարթ հետևեն կը գա՛, շոտ կըտոր մարթու ծեռնեն առավ, պախեց, մարթն փաթիլեց խըսիր, կանըցուց պատի երես վեր, իրիկ տուռ տըփեց:

Կնիկ գընաց, տուռ էպաց:

Ասաց. – Մարթ, տու հե՞ր հեսօր ընցնա՛ շոտ քու խանութ կոծեցիր, էկար:

Մարթ չըգիմա՛ կընգան ի՞նչ ասա:

Ասաց. – Կնիկ, ես իմ ջեբի տանակ կուրիսեր եմ, էնոր խամար շոտ էկա, տուն կան կը գանմ, խի ո՞ր տեղն եմ էցկե:

Խանութպան տուն հըմեն աչկեց, վեր ցածր, էլ տեղ չէթող, օր չաչկեց, մարթ չըտեսավ:

Ինք-ինք մըտածեց, ասաց. «Ջանըմ, էս ի՞նչ ա, ես տեսա՛ էտա մարթ չում իմ տուն էկավ, էկավ, մըտավ ներս, էս ի՞նչըխ էղավ: Էսի խիյալ էր, չարք էր, էսի ի՞նչ մադա էր»:

Ետ տանցանվ, գընաց, նըստավ ուր խանութ, ու կնիկ էլանվ, ըզմարթ տընեն խանեց տուս, ասաց. – Չեսօր գընա՛, գիշերս մեկ

տեղ կա՛ց, վանն արի՛, նոր քե պաքըմ տամ, հեսօր իմ իրիկ շըֆա գանցեր ա, չընի մեկէլ ետ տանա: Օր քե տեսնի՛ ծիկ էլ, քիկ էլ կը սպանա:

Մարթն տընեն էլանվ գընաց, հուրուշ տեղըմ պառկավ չուր առավոտ:

Առավոտուն գինա էկավ: Էկավ, գընաց խանըմի տուռ տըփեց:

Ասաց. – Խանըմ, դե՛, ծի պաքըմ տու, ես վանվա, էրա քու սիրուց:

Ասաց. – Արի՛, քե մոսթուռե՛մ տամ, գընա՛, էնտուց նետ մ՛ էլ պե, քե պաքըմ տամ:

Մոսթուռեն էտու, գընաց կան էկավ, կան էկավ, չըկընդանվ, էլըմ գընաց խանըմի իրկան մոտ:

Խանութպան ասաց. – Չե՛յ, մարթ, էլման տու էկա՞ր:

Ասաց. – Խա՛, ես էկա:

Ասաց. – Ի՞նչ կուզես:

Ասաց. – Մեկ նետ էսա մոսթուռից տու ծի:

Ասաց. – Փարա ունի՞ս:

Ասաց. – Չէ՛, չէ՞ ես էրեկ քե ասի՛ փարա չունիմ, պանենմ, տամ քե:

Ասաց. – Զե՛ անփարա կը տամ, լե տու տը պատմես խի հերեկի քու տարած ի՞նչըխ էղավ, պա՛ մ՛երի՞ր:

Մարթն ասաց. – Ես հերեկ տարա, խանըմ պատրաստվավ՝ ծի պաքըմ տը տեր, էնու իրիկ էկավ, տուռ տըփեց:

Ասաց. – Ապա տու դի՞ր պաղկըվար:

Ասաց. – Ձի փաթուրեց խըսիրի մեչ, կանցուց պատի երես վեր:

Խանութպան հինքըն ուր ասաց. «Վա՛յ, ես չըֆահմա էտա պանին»:

Էլանվ, նետըմ էտուր էտոր մոսթուռից:

Մարթն առավ ապրանքըն, տարավ, ինքըն էլանվ, ընգանվ հետև:

Մարթն գընաց, մըտավ տուն, ասաց. – Դե, խանըմ, շոտ ծի պաքըմ տուր, էսա երկու օր ա ծի պաքըմ չըտըվիր:

Ասելուն պես՝ իրիկ տուռ տըփեց:

Կնիկ էտա մարթ փաթեց լըխեֆներ ու էտի լըխեֆներու գողվեմք:

Գյընաց, տուռ էպաց, իրիկ էկավ ներս:

Ասաց. – Մարթ, խեղ էղի, էսա էրկու օր կա՝ տու գերեկով խանութից կը թողնիս, կը գաս, ի՞նչ էղեր:

Մարթն ասաց. – Ես ծի ըռովել մ'եմ առի, պիրիմ վեր մեր խըսիրն չըբռեմ, խի՞ խըսիր կը քակա՞:

Խըն ըռովել գարկելուն խըսիր, խըսրի ծալեր կըտրեց, գյընաց, խասավ պատ:

Ինքյն գյինա, թե մարթ փաթուկ ա խըսիր վեր:

Խըսիր քաշեց ըստեխ, քակեց աչկեց, մարթ չըկա մեչ խըսիրին:

Ասաց ինքյ ուր. «էսա չա՞րքյ էր, էսա ի՞նչ էր»:

Ինգավ, տուն փընտըռեց, մարթ չըկընդավ:

Մարթն տանցավ, գյընաց էնու խանութ:

Խանըմ լըխեֆի մեչեն մարթուն խանեց, ճամխեց, ասաց. – Գետօրն էլ գյընա՞, քանի իմ իրիկ չըտանցե էտ, առավոտուն արի՞:

Առավոտուն էկավ, էլըմ խանըմ էնու նոր կըտորըմ մոսթուռա էտուր, ճամխեց, ասաց. – Գյընա՞, էնա տուց էրկու նետ ծի խամար պե՛, նոր էս քյե պաքյըմ կը տամ:

Ինքյն էլավ, գյընաց էնտեղ:

Ասաց. – Էրկու նետ էսա տուց տու ծի, օր խանըմ ընծի պաքյըմ տա:

Ասաց. – Չէ՞ հերեկն էլ տարար, տու պա՛մ չըկարցա՞ր էներ:

Ասաց. – Չէ՛, էս խըն տանելուն էնու իրիկ էկավ, տուռ տըփեց:

Ասաց. – Ապա քյե ո՞ր տեղ պաղկվըցուց:

Ասաց. – Լըխեֆի մեչ:

Մարթն առավ էն էրկու նետ ապրանքյ, էնի ինգավ հետև:

Գյեղական մըտավ ներս, էտու խանըմին:

Ասաց. – Խանըմ, դե ծի պաքյըմ տու: Ամլե՛մ օր տու ծի կը խապես, կը տանես, կը պիրիս:

Խանըմ պերան՝ իրիկ տուռ տըփեց:

Կնիկ գյընաց, մարթուն տանավ, պախեց դուլաք վեր, տանցավ էկավ, տուռ էպաց:

Տեսավ ուր իրիկ, ասաց. – Մարթ, տու էսա էրկու օր կա՝

տուքան կը թոնես մըշամուր, կը գաս, ի՞նչ էղե քյե:

Ասաց. – Վոլլա՛, հետօր էլ մեկ տապանցե մ'եմ առե, պերիմ, փործիմ, խեմ, թե լավ ա, առիմ:

Էգա՛ր լըխեֆներուն: Լըխեֆներ քակեց, աչկեց տեսավ, օր գյուլեն գացե, տիպե պատ, լըխեֆն էլ ծակե՝ մարթ չըկեր հինե:

Մարթ մտածեց, ասաց. «Ջանըմ, էսա մարթ ծի կը խապա, էսա ո՞ր տեղն ա պաղկըվե»:

Մարթ մըտածեց ասաց. «Թոնեմ էրթամ, թե մեկ էլ էկավ, պան առեց, տ'ընգիմ իտև գան, իմ կընգան ասեմ, թե էսպես պա՛մ տու կենես, էսպես մարթըմ կա, կը գա ապրանքյ կառի, օր էնու պաքյ տաս»:

Մարթն օր կերթա, կնիկ կերթա պաղկովող մարթուն կը խանա տուս, կասա. – Գյընա՞, չէլնի իմ մարթ մեկել տաննա գա՞, գյընա՞, առավոտուն արի՞:

Առավոտուն մարթն էլըմ էկավ:

Ասաց. – Խանըմ, էս քիլ բախտ, տու պաքյըմ տաս ծի:

Կնիկն ասաց. – Ա՛ռ նա կըտոր, տա՛ր, էրկու նետ ծի խամար պե՛:

Մարթն էլավ, գյընաց էնու իրկան տուքան: Էրկու նետ էնտուց առեց, էկավ: Իրիկ ինգավ մարթու հիտև:

Մարթն ներս մըտավ, չըմըտավ, իրիկ տուռ տըփեց:

Կնիկ էպի, մարթուն չուխըցուց, կոմիկըմ ընցուց գյըլիխ, աչքերու տեղ ծակեց, օր լուս էրևեր, տարավ, մարթուն մըտուց բաղչի հավուզին մեչ:

Մարթուն ասաց. – Ես, իմ իրիկ շարթ կը պըռնենքյ, քար տը գանենք էսա կոմկին, խի ո՞ր տեպուց, էտու խոսկեր ճիշտ ա, ո՞ր օր չըտիպուց, էնու խոսկեր սուր ա: Ես օր կը գանիմ, տու քիլ գյըլիխ պե իմ քարի տեմ, չըլնի՛ քար բանատի ընցնի, օր իմ իրիկ կը գանա, տու քիլ գյըլիխ տար էնի տեղ, թըխ քար բանատի ընցի:

Գյընաց, տուռ էպաց, իրիկ էկավ ներս: Էկավ, տապանցե մ'էգար դուլաքին, էնի գյինա՝ մարթ դուլաք վեմ ա:

Կնիկ ասաց. – Մարթ, տու ծըռա՞ր, տու մեր խըսիր ըռովելով գարկիր, լըխեֆներ ըռովելով գարկիր, մեր դուլաք գարկիր, մե էքքան վնաս տվիր:

Ասաց. – Կնիկ, մարթըմ կա, օր ծիգնից էնա իրեքյ տիր ապ-

րանքը կը գլորնան, կը պերա մը քյե, ես կընգիմ հիտև, չըմ կանա պըռնե էնի մեր տան մեջ. նա հըմեն քու էրածն ա:

Կնիկ ասաց. – Տու սուք կասես: Քյելա էրթանք մեր հավուգ, կոմիկըմ կա վըր ճըրիւն. ես իրեք քար գաննեմ, էն ժամանակին օր ես տիպուցի կոմիկն, տու սուք կասես, օր տու տիպուցիր, ես սուք կասեմ:

Կնիկ իրեք քար կը գանա, իրեքն էլ կը տիպուցա: Ո՛ր մեկ քար օր սըխալ էրթա, մարթն կոմիկ կը պերա տեմ: Մարթու քարեր օր կը գանա, մեկն էլ չըմ տիպի: Ճըրու մեջի մարթ ուր գլըլիխ կը քաշա տեմ՝ չըտիպի:

Մարթն կիմանա, թե կոմիկ զատ կոմիկ չէր:

Շոտըմ մարթն կէրթա խանըմի խոր մոտ: Խանըմի խերն էլ էնտեղաց մութասըրըֆն ա:

Կասա, թե. – Քու ախչիկ էսպես պա մ'երաց:

Մարթեր կասեմ. – Տը գանք քննենք, թե էնպես ա, կընգան վիգ կը գանենք, թե էնպես չի՝ քու վիգ կը գանեմ, քանի օր տու պատվի հետև կան կը գաս:

Սութասըրըֆ կէլնի, մարթըմ կառնի խընդ ուր, խընդրաց կը գան տուն:

Էտա ճըրու միջու մարթ էն տեղեն էլեր, գացեր էր, պըռնեցին, պերին քննության:

Սութասըրըֆն ասաց. – Մարթ, էտա խանըմ քյե ի՞նչ ասաց, ի՞նչ խոստացավ, ի՞նչ տանջուց քու գլըլխուն:


Ասաց. – Դողրին ասա՛, ես քյե փարա կը տամ:

Մարթն ուր գըլըլխու էկածն պատմեց էնոր: Ասաց, թե ի՞նչըխ չորս տիր ծի խապեց տարավ, էպի, չում հիտին տիր ծի մըտուց մըջ էտա ճըրիւն:

Խանըմ ինքն ուր ասաց. «Վոլլա՛, իմ գլըլիխն էլ, ըսորն էլ գլընաց»:

Էն մարթն ասաց. – Մեկ էլ հիշարցա՛ տեսա օր էրագ էր, ես էրագի մեջն էր կը տեսներ, գյիտեր, թե դողրի էր:

Սութասըրըֆ էպի, փեսի գլըլիխ կտրեց, ուր ախչիկ փըսա-կեց վեր էտա մարթուն:



13. ՄԱՀՄԱԴ - ԲԵԿ

Մահմանդ-Բեկ, էնու գավգիր կըլնին, կերթան սար: Կերթան կաքավ պըռնելու: Չում հեվարին՝ անծրև կը տա վերեն:

Մահմանդ-Բեկ գավգիրին կասա. – Ես շուտով կերթամ, տու թոռեր քաղա՛, արե՛:

Մահմանդ-Բեկ կը գա, գավգիր թոռեր կը քաղա, էնու հիտև կը գա:

Մահմանդ-Բեկ կը գա տաշտի մեջ, կը տեսնի՝ մեկ տուն գի տաշտի մեջ շինուկ ա, լամբեքյ հինե կը վառվին:

Կասա. – Շա՛տ աղեկ, ավահի մ'եղավ, էրթանք մըտինքյ հինե չում խըլխուն, խըլխուն թոնիմքյ, էրթանքյ:

Կերթա, տուռ կը տըրփա: Էն տան մեջն էլ մեկ խանըմ կա, մեկ էնու ախչիկ, մեկ էնու ջառին:

Խանըմ էնու ջառին կը ճամխա՛ գլընա թի ի՞նչ մարթ ա՛ մեր տուռ կը տըրփա:

Ջառին կերթա, տուռ կը պանա, կասա. – Տու ի՞նչ մարթ ես, ի՞նչ կուգես:

Մահմանդ-Բեկ կասա. – Ես Մահմանդ-Բեկն եմ, տուռ պա՛ց, գան ներս չում խըլխուն, իմ խավըներ անծրևու տակ թացվան, չորուցիմ, խըլխուն էլնեմ, էրթամ:

Ջառին գլընաց, խանըմին ասաց, թե՛ Մահմանդ-Բեկն ա, անծրև էնու խավըներ թացի, կասա՛ տուռ պացեքյ, գան ներս չուր առավոտուն, կերթամ:

Խանըմ կասա. – Գլընա՛, Մահմանդ-Բեկին ասա՛, թե՛ ծի կովըմ կա, էրինջըմ կա, կովու գյին ի՞նչ ա, էրընջի գյին ի՞նչ ա, խի էնու

կիթ-հարնաքնաք ի՞նչ ա, թի խանեց, տու էլ պանց, թը գան ներս:

Գլընաց ջառին, ասաց Մահմանդ-Բեկին. — Խանըմ կասա՝ ծի կովըմ կա, էրինջըմ կա, կովու գլին ի՞նչ ա, էրընջի գլին ի՞նչ ա, թի խանեց, թը գան ներս, թի չէ՝ հեչ:

Մահմանդ-Բեկ ասաց. — Կովու գլին խինգ ոսկի կաժի, էրընջու՞ն՝ իրեքյ ոսկի: Կիթ-հարնաքնաքն էլ՝ շատ-շատ մե խոնդքյարի եղ:

Ջառին գլընաց, խանըմին պատմեց, ասաց, թե՝ Մահմանդ-Բեկ էսպես կասա:

Ասաց. — Գլընա՛, ասա՛, էնոր տեղ չըկա ըստնա, դո՛ր կերթա, թ՛ էրթա:

Չէ՞ անձրև էմա՛լ շատ կը գլեր, Մահմանդ-Բեկ գլընաց, զինքյ էտու ծառի տակ, օր անձրև չըգլեր վերեն: Նըստավ էն ծառի տակ:

Տեսավ Մահմանդ-Բեկ, օր գավգիրն էլ էկավ: Էկավ, գլընաց էտա տուռ տըփեց: Ամմա գավգիր Մահմանդ-Բեկին չըտեսնա:

Խանըմ ասաց. — Ջառի՛, գլընա՛ խի էն վո՞րն՝ ա տուռ կը տըփա:

Ջառին գլընաց, խառցընեց:

Գավգիրն ասաց. — Ես Մահմանդ-Բեկի գավգիրն եմ, տուռ պանցեքյ, գան ներս, չու՞մ խըլխու՞ն էլնեմ, էրթան:

Մահմանդ-Բեկ էնու մըտքի մեչ կասա. «Ես քու ամիրեն եմ, ծի տեղ չըտըվին, քյե ի՞նչըխ տը տան»:

Խանըմ կասա. — Ջառի՛, գլընա՛ խառցընա՛, ասա՛ ծի կովըմ, էրինջըմ կա: Կովու գլին ի՞նչ ա, էրինջի գլին ի՞նչ ա: Էնու կիթ-հարնաքնաք ի՞նչ ա: Թի խանեց, տուռ պանց, գան ներս: Թի չէ՝ տուռ փակի, արե ներս:

Ջառին գլընաց, ասաց. — Խանըմ կասա՛ գլընա՛ ասա՛ ծի կովըմ կա, էրինջըմ կա: Կովու գլին ի՞նչ ա, էրինջին ի՞նչ ա, կիթ-հարնաքնաք ի՞նչ ա, թի խանեց՝ առ ներս, թի չէ՝ հեչ:

Գավգիր ասաց. — Գլընա՛, քու խանըմին ասա՛ կովու գլին հիտուն ոսկի ա, էրընջու՞ն՝ խարիր, էնու կիթ-հարնաքնաքն էլ՝ նա՛ ես գինամ, նա՛ քու խանըմ, էնի մեկ Աստված գլինա:

Տուռ պանցին, գավգիր գլընաց ներս:

Մահմանդ-Բեկ ուր խելքյ էթալ:

Ասաց. «Ջառնըմ, ես բեկ մ՛ եմ, ծի ջառին ներս, էսա խեղճ ֆուխարին ի՞նչըխ առին ներս»:

Մահմանդ-Բեկ էլանվ ծառը վե, փանջարից թանաշա կէնա, խի՛ գավգիր մըտավ էն տեղ, ի՞նչ տ՛էնա:

Գավգիր եփ մըտավ ներս, էնու խալվըներ թաց էր, էնու խալվըներ խանեցին, դաստըմ լանվ խալավ խառուցին:

Խանըմ խընդ գավգիրին չըգրուցի: Մենակ էնու ծեռաց մանդիլ գլընտեց, էթալ գավգիրի ծընգան վերեն:

Գավգիր մանդիլ առավ, էտի վըր փետին, թամիզըմ տանկով պըրտեց, էթալ խանըմի գոքյ:

Խանըմ նուռըմ էնու ջեբեն էխան, էթալ գավգիրի ծեռ:

Գավգիր նըռան վիզ տանկով կըտրեց ու էթալ խանըմի գոքյ:

Խանըմ խաց ու չայ պերին, կերան ու խըման, էլան, չըլխըցան, խի գավգիրին պառկան, էնոնց խամար քյեֆ էրին:

Մահմանդ-Բեկ ծառի վիրվուց տեսավ:

Ինքըյ ուր ասաց. «Գավգիր՛, ծի չըթողին գլեր ներս, քյե թողին, առավոտուն խենքյ, ի՞նչ օր խես, իմ ծեռնեն տը խես»:

Վերճ խըլխու՞ն Մահմանդ-Բեկ էթող, գլընաց ուր տուն, գավգիրն էլ՝ էնոր էտե էլանվ, գլընաց:

Մահմանդ-Բեկ գավգիրին ասաց. — Գավգիր՛, էսօր գլիչեր տու դո՞ր էր մընացե:

Ասաց. — Մընացի էն սարի մեչ:

Ասաց. — Սուք կասես, չէ՞ տու գանցիր, մըտար մեկ կոնըխի մեչ, խանըմ կեր էն տեղ: Կերար, խըմեցիր, յաթղի մեչ պառկար խանըմի ծոց:

Ասաց. — Չէ՛:

Մահմանդ-Բեկ տըփեց գավգիրին: Որքան օր տըփեց, կըսա չէրաց:

Ասաց. — Ֆայրա՛ չէնա, տըփելով պան չասա:

Առեց ուր գավգիր, չորս-խինգ խըլամի խետ, տարավ էտա կոնըխի տեմ, կապեց ծառ ու խըլամներուն ասաց. — Թըվանքյ գանկեքյ, չէ՛ մը գանկեքյ էնոր, ընցկուն գանկեքյ, օր տիպի էնու կըշտըներ:

Օր թըվընքյի ծեն կը գան, խանըմ փանջարից գլըլիս կը պերա տուս, կը տեսնա՛ էն մարթ, օր գլիչեր էկեր էր, ուր մոտ պառկեր էր, գո՛ կապած ծառ, կը տան թըվընքյի հանան:

էլնով, էնու շըմկընեը եցկեց էնու ոտկեր, նուռ էտի ուր ջեր, գյըննաց խըն էն մարթ:

Գյըննաց, էտա նուռ էգնը ծառին, նուռ բըլնվավ գետին, ու հինք տնոցավ ետ, չըխոսավ:

Գնվգիր ասաց. - Մահմանդ-Բեկ, արի ծի հարծըրա, քե կըսա տ'ընեմ դորսվան:

Մահմանդ-Բեկ էկավ, գնվգիր հարծըրեց, ասաց. - Դե՛, պատմա՛, խի ի՞նչ ա:

Ասաց. - Եփ օր ես էկա, էսա տառ տըրփեցի, ջառին էկավ, ծի խառցնեց խանըմի կողմեն, թե՛ խանըմ կասա ծի կողմ կա, էրինջ, էնու կիթ-հարնքաթ ի՞նչ ա: Տիւ չըս կարցե խանե, օր տառ պանեն, տառ մըտներ ներս: Կով էնոր կասեր, էրինջ էնու ախշըկեն կասեր: Կիթ-հարնքաթն էլ զավակի կողմից կասեր: էնու գյին հիսուն ոսկի օր արծեր, ախշիկ ազաթ էր, էնի խարիի ոսկի կարծեր: էնու զավակի կողմից ասի՝ նա՛ ես գինամ, նա՛ տառ, էն մեկ Աստված գինա: էնու խամար տառ պացին, ես մըտա ներս:

Մահմանդ-Բեկ ասաց. - Գնվգիր, ապա է՞ն ինչ չնվրա էր՝ էթալ քու գիք, օր ես տեսա:

Ասաց. - Մահմանդ-Բեկ, էն չնվրեն էթալ ծի, ասաց, թե՛ իմ նամուս թալեցի քու ծեռ: Ես էլ առի չնվրեն, պըրպըրտեցի, խասկըցուցի, թե՛ ծի օր էսպես էլ պըրպըրտին՝ թու մարթու կըսա չեմ էներ:

Ասաց. - Ապա էն ի՞նչ նուռ էր՝ էթալ քու գիք:

Ասաց. - Նուռ էթալ, ծի ասաց, թե՛ նըռան խատերու պես տառ իմ խոսքեր կը բըլնվես, ես էլ նըռան վիզ կըտըրեցի, թե՛ չու՛մ վիզն էլ կըտըրին, ես մարթու չեմ ասե:

Ասաց. - Գնվգիր, ապա մըկա ընչի՞ կըսա էրի:

Ասաց. - Մահմանդ-Բեկ, տառ ծի կապեցիր ծառ, տըրփի թըվընքի հանձն, ես կըսա չէրի, լե խանըմ էկավ, նուռ էգնը ծառին, բըլնվավ, տեմակ ծի ասաց՝ իմ խոսքեր բըլնվա, նոր ես իմ խոսքեր քե կըսա էրի:

Մահմանդ-Բեկ ասաց. - Էտպես կնիկ ըսկի մեկ տեղ չըկա:

Մեկ մարթ էն տեղեն ասաց. - Մահմանդ-Բեկ, ես կնիկ տեսեր եմ, օր էնի խըն էնու կեսն էլ չէրի:

Մահմանդ-Բեկ ասաց. - Պատմա՛ խի՛ ի՞նչըխ ա քու տեսած կնիկ:

Մարթն ասաց. - Ես ճանբախ կերթեր, տեսա մեկ անբեղ, անմուրուս երիտասարթըմ, խեծուկ ծիւ վերեն, էկավ, ծի խասավ, խընդրաց ճանբախ կերթանք: Իմ աչք մընաց էնու ծին, էնու խնկըներ, թուր մ'էլ կապուկ էր էնու վերեն: Չոմախըմ պըռնիի ի իմ ծեռ, օր ես ինորով ինչ մարթու օր գաներ, կը մեռներ էն մարթ: Ես էլ ի՞նչ մըտածեցի, ասի չոմախըմ գանեմ, էսա տըրփն ըսպանեմ, էնու ծին ու շորեր առնեմ ծի: Ես չոմախ գանկի էտու վըզին, լե էնու մոտ լըվի՛մ կըծելու չնափ էլ չարծեց, մենակ ետ տնոցավ, իշկաց ծի, ասաց. «Ես մըկա կանամ քե մեկ դըրբի պան էնեմ, հանա ի՞նչ ֆայդա, ես ուխտի կերթամ, էնու խամար ես ծեն չըմ էնե»: Մահմանդ-Բեկ, ես զարմացա, իմ դըրբ վիր գաներ, կը մեռներ, էտա երիտասարթի մոտ փարե՛մ չէրաց: Վեր՛ճ՝ ճանբախ գացինք, ես էնու մոտեն կը ջոկվեր, էն չըթող:

Ասաց. - Չէ՛, տառ կա՛ց, քու աչք մընացե իմ խնկըներ, իմ ծին:

Չի առավ, տարավ մեկ կանալ՝ ոչ տառ ուներ, ոչ պա՛ մ'ուներ, ծիւց ծի էճուց տակ, տարավ, կայնանք պերթի մոտ, ուր հայրից էրկըթ չըվի էխան տառ, էտու ծի:

Ասաց. - Դե՛, էսա չըվին գա՛ր պատ վե, էրա թարանջա, օր ես էլնիմ պերթ:

Ես ինչքան գանկի, էտա չըվին չըմըտավ պատ:

Ինքն իմ ծեռեն առավ, իտիր պատին, գոմփով էգնը, մըտուց պատ վե:

Տնոցավ ծի, ասաց. - Մարթ, իմ ծիւ գան պըռնի՛, կայնի՛ էսա տեղ: Ես կերթամ, կը մտիմ էսա պերթի մեջ, թե շատ կալաբալըղ էկավ, պարանկ ծուխըմ էկավ, տառ գյինաս՝ ես կը գան: Թե կալաբալըղ էկա՛վ, էկա՛վ, ծուխ չէկավ, առ իմ ծին, գյընա, գիտնաս, օր ծի ըսպանած են:

Ինքըն էլնվ, մտավ ներս, շատ կալաբալըղ էկա՛վ, էկա՛վ, պարանկ ծուխ մ' էկավ:

Ասի. - Վոլլա՛, կը գա:

Տեսա, օր էկավ, էճավ տակ, պախըմ, փետատ մ' էլ էպեր խետ:

Էտա պերթի տիմաց, միքա մեկ մարթու գյերեզմանըմ կեր: Էտա փետատ ու պախ էտու իմ ծեռ:

Ասաց. - Էսա գյերեզմանի կըշտին գյերեզման մ'էլ փորա:

Գյերեզմնատունն փորեցի, ասի՝ վոլլա, էսի ձի տը խորա
իմն:

Ասաց. - Պառկի հինն, խի անո՞ւշ ա:

- Մահման՝դ-Բեկ, ես վախեցա, ասի էսա մարթ ձի տը տընն
գյերեզման:

Վերչ ինքն ուր թուր քաշեց, տանջավ իմ վերեն, ասաց. -
Մարթ, դե, ծին կը տամ քյե, իմ շորեր կը տամ քյե, ֆակնաթ ես
կնիկ, ես ձի կը սպանեմ, խող տաս վեր ձի, չէդի օր իմ մախից
վերձ խըն ձի գեշ պան էնես:


Ասի. - Չանըմ, տու հե՞ր քյեզ կը սպանես:

Ասաց. - Թաժա օր ձի նըշանած են, հալա իմ իրիկ իմ կուշտ
չըպառկե: Էտա պերթու միճու մարթեր իմ իրիկ ըսպանած են, էսա
գյերեզմնատունն իմ իրկան գյերեզման ի: Էն օր, օր ես լըսեցի,
թե իմ իրիկըս պըռնած են, ասի՝ ես տ'երթամ իմ իրկան փոխն
ամենն, էնտուց վերջ աշխըրի խաց ձի խարամ ի մընացե:

Ձինք ըսպանեց ու ասաց. - Դե՛, ձի խորա՛, իմ ծին, շորեր
տար:

- Մահման՝դ-Բեկ, ես էնի խորեցի, լավ մ'էնու գյերեզմնա-
տունն շինեցի, ասա ծին ու խալվըներ պերի ձի: Մահման՝դ-Բեկ,
էմալ կնիկ կեդի, տու էմալ կնիկ իսկի տեսե՞ր ես:

Ամիրեն ասաց. - Ափսո՛ս էն կնիկ, օր զինք ըսպանեց:



14. ԴԱԼՈՒ ԽԸՇԽԸՇ

Ժանանակին մեկ մեծ մարթըմ կեդի, էնու տըղեն կը փըսա-
կա: Ժանանակըմ կընցի, տըղեն ուր կընգան չուզի: Փետըմ կը շի-
նա, կը կախա էնոնց տըռան սարդըրից:

Օրական մեկ անգամ, երկու անգամ ըզկնիկ էտա փետով կը
տըփա ու կախա դա:

Կնիկ օրըմ կասա. - Մարթ, տու ընչի՞ ձի կը տըփես, օր ձի
չըսիրիս, գյընն՛, Բաժանե Յաշե քաղքյի թակավորի ախչիկ քյե
խամար պե՛, էնի շատ խորոտ ա, էլ ձի մը տըփա:

Մարթն ասաց. - Ես կերթամ:

Էլավ, էնու խամար փարա վիրուց ու ընգավ ճամբախ, գյը-
նաց խըն քաղաք:

Գյըննց, գյըննց, խասավ քաղաք, թակավորի ախչիկ սեն-
յակ մըտավ:

Ախչիկ ասաց. - Ի՞նչ կուզես, մարթ:

Ասաց. - Էկեր եմ, օր քյե ձի խամար տանիմ:

- Էլի՛ տուս, արե՛, ես պա՛մ տընեմ իմ մինդըրի տակ, արի՛,
խի՛ իմ մինդըրի տակ ի՞նչ եմ տըրե:

Մարթն էկավ ներս, էն ի՞նչ գյինա թի մինդըրի տակ ի՞նչ ա
տըրիւկ:

Մարթն չիմացավ:

Թակավորի ախչիկ կանչեց, էնու հանճըվի մարթերն էպե,
ասաց. - Էսա մարթուն տարեք, փոսթ քոլոզըմ շինեք, զանգա-
կըմ էցկեք մոտեն, տըրեք գյըլիս, զընչիլ մ'էցկեք վիզ, էրեք

Դալու խըշխըշ, տարե՛քյ տեն, պերե՛քյ տեն, տըփեքյ չում էնու մախվան օր:

Առան ըզմարթ, գացին, փոսթե քոլոզ շինեցին, գանգակըմ էցկեցին ծերից, զընջիլ էցկեցին վիզ ու չուր հիրիկուն կը ֆըռնացուցեն քաղթի մեչ, կը տըփեն ու կը բռռեն՝ Դալու խըշխըշ, հա՛յ Դալու խըշխըշ:

Ճըժեր, փողնի տըղեկներ կը թըթեն, քար կը գանեն ու կը բռռեն՝ Դալու խըշխըշ, հա՛յ Դալու խըշխըշ:

Ժամանակ մ'ընցավ, մարթն խընթրեց, ասաց. - Թողե՛քյ՝ ես նամակըմ գըրեմ իմ խոր, օր ես ամլւն բալի մեչ եմ ինգե, բալկո գա՛, ծի ազատա:

Էն ժամանակ նամակըմ կը գըրա՛ խոր, մեկ կը գըրա կընգան:

Խոր կը գըրա. «Արի՛, ծի ազատա՛, Աստծու սիրուն էղի, ես կրակի մեչ կերեցիմ»: Կընգան կը գըրա՛. «Թե ես ազատվա, էկա, քու խոգուն կը գամ»:

Խոր նամակ կերթա կընգան ծեռ, կընգան կերթա խոր ծեռ:

Էն ժամանակ կնիկ կը խղճա, կասա. «Տ'էլիմ, էրթամ, բալկո իմ մարթ ազատեմ, պերեն»:

Կնիկ կէլնի, դաստըմ մարթու խալավ կը խա՛գյի, կէլնի կերթա Բաժանե Զա՛շե քաղթը:

Մեկ պառվու տուն կէղի մեհվան:

Կը խառցնա պառվուն, կասա. - Ես ծեր թակավորի ախչիկ ինչպե՛ս ախչիկ ա, օր ո՛ր մարթ էրթա, վիզ կը կըտրա, չըմ գյիտի ի՞նչ կենա:

Պառավ կասա. - Չուր մըկա որ օր էրթեր, վիզ կը կըտրեր, ամմա հերեկ չէ, մեկէլ մեկ երիտասարթըմ քու պես էկավ, գընաց, էնու պան չըկարցավ խաներ: Մըկա էնու անուն տըրած են Դալու խըշխըշ, էցկած ան սոխըխներ, չուր հիրիկուն փողնի ճըժեր ինգած ան հիտե, կը բռռան, կը ճըվան՝ հա՛յ, Դալու խըշխըշ, ու չում հիրիկուն կը ծեծեն: Զիրիկուն կը պերեն տուն, կը մընա չում առավոտուն, էլըմ կը տանին: Էնու հալ թու հալըմ չի:

Մընաց չում խըլխուն, խըլխուն կնիկն օր մարթու ծե խա՛գյեր էր, էլա՛վ, գընաց:

Գընաց թակավորի ախչըկե մոտ:

Ախչիկ խարցընեց, ասաց. - Տիւ հո՞ւր ես էկե:

Ասաց. - Էկեր եմ խըն քյե փորձըվեմ:

Ասաց. - Էլի՛ տուս, արե՛, ես պա՛մ տընեմ իմ մինդըրի տակ, թի խանեցիր, ես քուն եմ, թի չէ՛ քու գըլլիխ կը գանիմ:

Էլա՛վ տուս, էկավ մերս:

Մեկ գյուլ-վարտըմ տըրեր էր մինդըրի տակ, էնու ոտ տըրեր էր վերեն:

Ասաց. - Եսի ի՞նչ ա իմ մինդըրի տակ:

Ախչիկ մտածեց, չըկարողացավ խաներ: Ուր մոր անուն Գուլե կէղի: Ինքն ուր մտքի մեչ ուր մոր խամար պիտի ասեր՝ ա՛խ, Գուլե՛, ա՛խ, Գուլե՛, տու ծի չըպերեր, ամա ա՛խ Գուլե, ա՛խ Գուլե՛ պանցըր ծենով ասաց:

Թակավորի ախչիկ գյիտցավ թի՛ ուր գյուլն էխան: Ոտ վերուց, գյուլ մինդըրի տըկից էխան տուս:

Էն ժամանակ ասաց. - Տըղա՛, տու ի՞նչըխ իմ փորձ խանեցիր, թու մարթ չըխաներ էր:

Ասաց. - Էնքան մարթու մեղաց տակ մըտեր ես, հալա՛ շատերու էլ տը մըտիս, Աստված էնու խամար ծի խելքյ էտու՛ խանեցի:

Ասաց. - Շա՛տ լավ, ես իմ խոր խաբար կանեմ, օր գի իմ խանելուկ խանեց եսա մարթ, ես էլ էտոր տ՛առիմ, խի ի՞նչ կասես:

Խեր ասաց. - Որտի՛, քու պայման ի՞նչըխ ա, էնպես տ՛ենես:

Ասաց. - Իմ ուխտն էն ա՛ վո՛ն օր իմ խանելուկ խանեց, ես էնի տ՛առնեմ:

Մընաց չուր առավոտուն, սութ տըղին կանչեց, էպե:

Թակավոր ասաց սութ տըղին. - Ախչիկ կը փըսակեմ վըր քյե:

Սութ տըղեն մտածեց, ասաց. - Ես ախչիկ, էնի ախչիկ, օր փըսակա վեր ծիկ, կէղի անպատվութեմ: Աղեկն էմա՛լ ա, օր ասեմ թի ըստա՛ չըմ փըսակվիր, կառնիմ, կերթամ իմ խոր մոտ, թ՛ էնի ծի փըսակա, օր էնու սիրտ խընդանա:

Թակավոր ասաց. - Լա՛վ կէղի:

Թակավոր էլա՛վ, քանի՛մ փարա, ծի, տավար, խաց էտիր խետքյեր, օր ճամխու տընա:

Օրըմ սութ տըղեն կերթա չարսուի մեչ կը զըվըռա, կը տեսի, օր հիրիկ էրած Դալու խըշխըշ, չարսու մեչ կը տըփեն, ճըժեր կընգին խետ ու կը բռռան՝ Դալու խըշխըշ, հա՛յ Դալու խըշխըշ:

Եփ օր հիրկան կը տեսնի, ծեռքերուց կառի:

Էնու զընջիլ պըռնող չըթոնա:

Կասա թե՛ ես թակավորի փեսեն եմ:

Դիրսվան զընջիլ պըռնող կը թոնա:

Ինքյն էլ խըշխըշու փոսթ ու զընջիլ կանծըրա, կը տըռնա չանկի մեչ, կը պըռնա ուր ծեռ: Դանու խըշխըշին դաստըմ խալավ կը խագիւցա, կը տանի խետ:

Կասա. - Տըղա՛, քիւ անուն ի՞նչ ա:

Էնու ճիշտ անուն կը տա:

Դիրսվան սուք տըղեն էն անուն կը տա էնու:

Թակավորի ախչիկ կը խառցըռնա. - Էտա ի՞նչ մարթ ես պերե:

Ասաց. - Վոլլա՛, մեր էրկրացի ա, պերեր եմ մե ծառա: Մե ծառաութեն էնա, չուր էրթանքյ մեր խոր էրկիր:

Ասաց. - Շա՛տ լավ, պերեր ես, պերեր ես:

Թակավորի ախչիկ չըճանչըցավ, թե էտի Դանու խըշխըշն էր:

Էփ օր ճամբախ էլան, թակավոր էնոնց ճամխու էտիր: Օրըմ ճամբախ քյելեցին, էն մեկէլ օր էտոնց կաթըրջին ասաց. - էրկու ավուր ճամբախ ճուր չըկընդըվի, ճուր առնենքյ պեռներ, տանինքյ մեր խետ:

Դանու խըշխըշ ինչ ծառաութեն կէներ, էտա կոներ կը գաներ, ճուր կը պերեր, կը լըցեր, սուք տըղեն ծեռքեր, ոտներ կը վըլեր:

Մընաց, շատ էկան, քիչ էկան՝ խասան էն տեղ, օր էլ ճուր չըկա:

Սուք տըղեն ասաց. - Մեկ իմ ոտաց, ծեռաց ճուր տամ, իմ հիրիկ խըմա, օր խելքյ գա գյըլիխ:

Մընաց չոււ առավոտուն, կալին էպե, էտիր տեղ, կերան:

Խըշխըշ տիրոջ հանճևի հավելցած խաց, կալին վերուց, տարավ էնդեխ կերավ, ծարվըցավ:

Էլ էրեսին չիտա, օր ճուր ուզան ուր աղի մոտեն:

Սուք տըղեն հիմացավ, օր էնի անհաշիվ ծարավ էր:

Ասաց. - Ծառա՛, ծառա՛, էտա լանգան, պաներ պե, իմ ծեռքեր մե քիչ վըլան:

Առավ իբրեղ, լանգան, էկավ, ինքյն էլ փառչով պեռնեց ճուր էխան: ճուր էտու ծառայի ծեռ, ըսկըսեց ծեռքեր օղողել, ոտներն

էլ վըլանց, փառչ ճուր ամբողջ իլից ոտաց, ծեռաց վերեն:

Էն ծանանակ, օր ծառան առավ, տարավ օր թափեր, շատ ծարավ էր, ճարահատ՝ կուշտըմ խըմեց:

Սուք տըղեն չանդից տեսավ, օր հիրիկ էնու ոտաց, ծեռաց ճուր խըմեց:

Խըղճաց վերեն, ինքյն ուր ասաց. «Տիւ էրիր, ես չըմ էնե, ես քյե տ՛էնեմ մեկ մարթըմ»:

Առավոտուն էլան, պանցին, գանցին: Շատ գանցին, քիչ գանցին, էնու խոր էրկիր մոտխըսցան:

Սուք տըղեն Դանու խըշխըշին չանդից մե քիչ գանտընցուց, ասաց. - Մարթ, իմ խոր էրկիր գանտն տեղ ա, ես էտա դուց տ՛էրթամ խընդ իմ խոր էրկիր: Արե իմ ջըլեր տամ քյե, քիւն տու ձի, ես էրթամ խընդ իմ խոր էրկիր, տիւ իմ փոխանորդ էլի էտա կընգան տեր: Չըկասկածես, ես կնիկ ունիմ, մեկ էլ էսի տանեմ խետս, ի՞նչ էնեմ: Գի հանդեցի, խերիքյ ի, տամ քյե քիւ ծառաութնի տեղ:

Էփ օր էնու ջըլեր էտու էնոր, խըշխըշ խագան, էլավ մեկ խորոտ մարթ: Շատ ուրախացավ:

Կնիկն խըշխըշի ջըլեր խագան, էտոր փոսթ ու զընջիլ առեց մոտ ինքյ ու էթող, գյընանց: Գյընանց, խասավ էնոր կեսրանց տուն, էնոր հողի մեչ ուր ջըլեր էխան, կընգան ջըլեր խագան:

Մընաց չոււ առավոտուն, ջուլաք էկավ խըշխըշի խոր, թե՛ քիւ տըղեն թակավորի ախչիկ առավ, էպե:

Էնու խեր, տըրկիցներ գանցին հանճև, առան, էկան տուն, տըղեն փըսակեցին:

Խեր ասաց. - Շա՛տ լավ էղավ, հան գյընանց, էնու խորոտ կնիկըմ էպե, հան էտա քան հարստութեն էլ էպե խետ:

Գյեղացիքյ խառցընեցին, թե՛ ի՞նչ գինով պերիր էտա կնիկ:

Ասաց. - Ձանըմ, ընչի՞ կը խանցընեքյ, հանլաք մարիֆաթըմ խըռջեցի: Վոն օր գանցեր էր, էնու գյըլիխ գանկեր էր:

Քանի մ՛օր ընցավ, ընգան լաճու միտք ուր խին կնիկ, թե ի՞նչըլ էնոր գյըրեր էր թե՛ որ գան, քիւ խոգուն կը գան:

Էլան, գյընանց կընգան սենյակ, օր կընգան տըլփա:

Կասեր թե. - Տիւ գի ճամխեցիր, թակավորի ախչըկան պերի, պերի՞, թի՞ չըպերի:

Էփ օր գյընանց, կընգան տիւ էպանց, փետ տըրընտուց օր առավ, կընգան ասաց. - Քի խեր-մեր չոււ ուտա, թակավորի ախ-

չիկ պերի՞, թի՞ չըպերի:

Փետ վիրուց, տը գաներ, կնիկ հուշիկ մինդըրի տըկեն հա-
մա ըզփոսթե քոլոզ էխան, էսպես հիրար էտու, շարժեց, զընգ-
զընգոց էլան, ու ինքն էլ ասաց՝ Դանու խըշխըշ, հա՛, Դանու
խըշխըշ:

Մարթն էսպես՝ վեր ուր հըզգաց: Նոր խասկըցավ, թե ուր
կնիկն ա, օր էկեր ա, զինքն ազատեր, թակավորի ախչըկեն հաղ-
թեր ա:

Ասաց. - Աման, կնիկ, Աստու սիրուն էղի, իս էրեր եմ, տու
չենես: Տու ծի աշխըրթյի մեչ խայտառակ չենես: Տու ամլան իմ ճոչ
կնիկն ես, էն իմ պստիկ: Ես քյե մեղա Աստըծու:

Կնիկ ասաց. - Չէ՛, մարթ, տու ծի էնչափ չարչըրեցիր, ես
ամլան էկա, քյե ազատեցի, ես թու մարթու չըմ ասի:

Էնու խամար հիրիկ ուր կընգան շատ հավելի ուզեց, խընդ
թակավորու ախչիկ:



15. ՎԱՐՊԵՏ ՏԸՂԵՆ

Մեկ մարթըմ կեղի, էնու տըղին կասա. - Էլի՛, մե քանսուն
օխչար կա, տա՛ր ծախի՛, քանսուն պեռ ցորեն ա՛ռ, արի՛:

Տըղեն կը տանի, օխչըրներ մեկ մեկ կը մորթան, կուտա,
պեռներ կը մընան տանտակ:

Կը գն օրըմ, պատի մանե՛ծ կը պոզա, փանջարից խանըմ
գըլիխ կը խանա տուս, կիշկա: Կը տեսնի, օր մարթու ճըրվածք
փոփուր տիզվե:

Խանըմ կասա. - Ես մարթ շատ գորեղ ա, խի կանչիմ, գն
վեր:

Խանըմի իրիկն էլ գացե բազըրկանութին:

Խանըմ էտա մարթուն կը կանչա վեր, կասա. - Մարթ, տու
ֆըլան պանի խամար կուվաթով կերևաս, տու կանա՞ս մեկ գյիշեր
ծի մոտենաս քանսուն տիր:

Ասաց. - Ընչի՞ չըմ կանա:

Ասաց. - Թե կարցար, ես քյե քանսուն պեռ ցորեն տամ, թե
չէ՛ քու քանսուն ջըվան ու քանսուն էլ քյենե կառնիմ:

Ասաց. - Շա՛տ աղեկ:

Գյիշեր տըղեն գընանց, խանըմի ծոց պառկավ: Չուն խըլի-
սուն էրաց, քանսունի վերեն մարթուց արուն էկավ:

Կնիկ ասաց. - Չէղավ, քու տավըրներ պիտի տաս:

Տըղեն կանթուլ չէրաց: Գացին կազու մոտ:

Տըղեն ասաց. - Ես էկեր եմ, էտր խետ շարթ եմ պըռնե՛ մե
պալանտար գանիմ կոքյովի ծառ, եթե մեկ պալանտըրին քան-
սուն կոքյով ընգան, խանըմ իմ շարթ տը տան, թե չընգան, ես տը

տամ խանըմին: Պալանտար գարկի, քանսուն կոքոյով ընգավ,
քանսունի մեչեն մեկ փուճ ա, մըկա կասա՝ տու տը տաս:

Կազին ասաց. - Էն պալանտար գարկե, քանսուն կոքոյով
էցկե, մեկ փուճ էղե, չէղե, վի՞ր խանն ա: Տու՛ էնու շարթ:

Խանըմ էնու քանսուն պեռ ցորեն պըռնեց:

Վերջ՝ խանըմին մեկ օսկի կաքավըմ կեր, ասաց. - Մարթ,
արի՛ ես, տու շարթըմ պըռնենք: Տու պառկի մըջ ծի, մըջ իմ ախ-
չիկ, թը տու չում խըլխուն ոչ զիս, ոչ իմ ախչկեն ծեռ չըթալեցիր,
օսկի կաքավ կը տամ քե, թե չէ՝ մեր քանսուն պեռ ցորեն ետ տը
տաս:

Տըղեն ասաց. - Շա՛տ լավ:

Տըղեն պառկավ մըջ կնիկ, մըջ ախչիկ, էպի, սամի թելով ուր
թերմաշ կապից էնու ճուռ:

Խանըմ գիշեր էլավ, սամի թել հարծըրեց, էթավ:

Տըղեն էլավ խընդ խանըմի ախչիկ:

Չում լուսուն խանըմ ասաց. - Տու էլեր ես խընդ ախչիկ, իմ
ցորեն տու:

Էն էլ ասաց. - Չէ՛, օսկի կաքավ տը տաս:

Էլան, գանցին կազու մոտ շարիաթ:

Կազին ասաց. - Ի՞նչ ա, գինա էկաք շարիաթ:

Տըղեն ասաց. - Ես իմ ծին կապեր էր սըմի՝ մըջ էրկու առ-
վուտ: Ես՛ էնու պերան էն առվուտ կը խասեր, նա՛ էն մեկէլ առ-
վուտ ափ կարծեր: Առվուտի տեր գըռնաց, ծին հարծըրեց, մըտուց
առվուտի մեչ: Մըկա ի՞նչ սուջն ա, թե՞ տիրոջ, օր ծին հարծըրեց,
մըլեց առվուտի մեչ:

Կազին ասաց. - Հանցանք էնու ա, քանի որ էն մըլե արտի
մեջ:

Օսկի կաքավն էլ խանըմից առավ:

Ցորեն էպանց վըր տավըրներուն, գըռնաց:

Շատ գըռնաց, թե քիչ, քանքից մի քիչ գատընցավ, տեսավ
բազըրկանըմ էկավ էնու հանեճ՝ էտա խանըմի իրիկն:

Բազըրկան տեսավ օսկի կաքավ, ասաց. - Մե թաքըմ տուն
կա, էս էլ տանեմ, էնեմ ջուխտ:

Ասաց. - Մարթ, ի՞նչ տամ քե՛ էտա կաքավ տաս ծի:

Ասաց. - Աներ եմ ոռըմ, կըտամ ոռըմ:

Մարթն ասաց. - Ուր քե՛քն ա, ըստն խալվաթ ի, պա՛մ տամ,
կաքավ մոտեն առիմ:

Գանցին ծորու մեչ: Մարթն քար մ'իտիր խանըմի իրկան օտ-
քերու տակ, մեկ էլ իր օտքերու տակ:

Ասաց. - Էտա ի՞նչ տ'էնես:

Ասաց. - Տըմիմ մեր օտքերու տակ, օր վարտըվերվան
խեղեղ մե չըտանի:


Ասաց. - Մարթ, մենք չում ե՞փ մընալու ենք ըստեղ, օր
խեղեղից կը վախենաս:


Ասաց. - Ես էսա ամսուն կը տըռեմ, մեկէլ ամսուն կը կակդի,
նոր էն մեկէլ ամսուն կը քաշեմ:

Ասաց. - Նալաթ գա՛ քե, ես չում մընալու եմ էսա տեղ:

Ու էթող, գըռնաց խընդ ուր պանին:

Տըղեն առավ քանսուն պեռ ցորեն ու օսկի կաքավ, էկավ
ուր խոր տուն:





16. ԷՐԿՈՒ ՄԱԼԵՔ

Մեկ մալե՛մ գյընաց մեկ գյեղ, գյընաց նըստավ մըզգավթ:
Էտա գյեղի մալի անուն էլ մալա Գնքյիմ էր:

Մալա Գնքյիմ շատ շատագրոց էր, էտա էրթըցող մալեն մալա Գնքյիմին ասաց. - Ես էսա գյիշեր լըսեցի, օր էրկնուց շան լակոտի ծեն կը գյեր:

Գյեղացիքյ ասին. - Էնի խավքյ ա շան լակոտին վերտի հավայի մեչ, ծեն տու լըսեր ես:

Մալա Գնքյիմ հիմացավ, թե էնոր կասեր:

Մալա Գնքյիմ էնոր պատասխանից, ասաց. - Մալա՛, ես ու տու էրկու խատ եղվընեկ ենքյ, կը թըռենքյ: Էրկու կարաս տեսա, մեկ քնքյ էր հըլին, մեկ էլ մեղր: Ես ընգն էն քնքյի կարաս, տու ընգն էն մեղրին: Կարսից էլանքյ տուս, եսն էլ էր թացվի, տուսն էլ: Ասի. «Արի գիրար լիզենք, օր չորնանք: Տու չի լիզեցիր, ես քյե լիզեցի, չուր չորցանքյ»:

Ասին. - Տու թնցվեր եքյ, պերեքյ ծի կըռենքյ, խի տու ո՞ր մեկն եքյ ծանդր:

Ձի ու քյե կըռեցին, ես ծանդր էր, տու թիթըվ: Իմ ամոթ կտրեցին, գնրկեցին քու ետք, կռեցին, դիր տու ծանդր էղար, ես թիթըվ: Քու մորուս կընտեցին, գնրկեցին իմ ետք, կըռեցին, դիր ես ու տու բարենբար էղանքյ:



17. ՉԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժանանակով թուջարըմ կիլնը, ուր լաճ:

Թուջարն էլ շատ գանգյին կիլնը:

Լաճ կըսը. - Կակո՛, իս տ'երթամ թուջրութին, դու խանըվորցիր իս, իս տ'երթամ:

Խերն էլ կըսը. - Տըղա՛, տուլ տու պան չըս գյըտը, ըզքյի տընիմ խն թուջըրքյիրուն, գյընա՛:

Կերիկը, թուջըրքյիր կը պիրը:

Կըսը. - Ձիմ լաճ տարեքյ խիտ, հանա ի՛նչըխ իս ծի սովըրցցի, տու էլ իմ լաճ սովըրցցեքյ: Ամանաթ իմ լաճ:

Քըսան բերգյը պեռ մալ կը տա հինը, կըսի. - Դե գյընա՛:

Կիլնին, կը գան, մնչ տանշտին պեռնիր կը թալին:

Գյիշիր կը մընան նոբն չուր անավոտվան դեմ, թուջըրքյիր կըլնին վի, կըսին. - Դիր լաճ թըխ ըլնը վիր, նոբն պըռնը, անավոտը, ալ մարթ չըվախանա, քիչըմ միքյը քըլնինքյ:

Լաճն էլ կը ծարվանա, կիլնը, կերթա վար հանապըրին: Ինչ ճուր կը խըմը, պըռծնը, մեկըմ կը թալը, ճիվ կը պըռնը:

Կըսը. - Տըղա՛, մը՛ վախանա, իս քըլ քավորն իմ: Անավոտուն կէլնիս, քու մալ չոկ պանց, գյընա՛ Դիարբնքյրա քնղաքյ, իս կը գան, քըլ խանար կը ծախիմ:

Լաճն էլ կիլնը, ուր բերգյըրքյիր կը պանա, կերթա:

Թուջըրքյիր կըսին. - Տըղա՛, տու խիղճ իս, մընակ մ'երթա, ըզքյի տը պըռնին, սպանին:

Կըսը. - Ձե՛, իլան, տ'երթամ իս:

Կերթա Դիարբնայրը, Մերդինա խան կը տընը: Անու քավոր կը գա: Չանու մալ ինչ կա, կը ծախը: Թի տաս վուսկու էր, կանը քըսան վուսկու, թի քըսան վուսկու էր, կանը քնսուն վուսկու: Էնու մալ, էնու փարեյ կը տա հինը: Անու դաֆթար կը տա հինը:

Կըսի. – Քու ընկյորքիրուն չըսիս, թի ֆըլան մարթ ընցկնա մալ ծախից ծը խամար:

Թուջըրքիր կը գան հեռճիվ, կըսին. – Գո հան լաճ իրը, մայան քանըվիր ը: Մըհա անու խոր ջուլաթ ի՞նչըխ տը տանք:

Լաճն էլ ուր դաֆթար թուջըրքիրուն շանք կը տա, կըսը. – Առե՛ք իմ դաֆթար, էրեշեցե՛ք:

Թուջըրքիր կըսին. – Ընցկնեմ ժամանակ կա, մինք ընցկնեմ մալ չընք վաստըկիր: Դու մեկ, էրկու վաստըկիր իս: Մի մալն էլ տար, ծախը:

Կառնի ըգթուջըրքիր, կը պիրը Մերդինա խան, իրիք օր կը մընա, մարթ չի գա վար մալին վե:

Քավոր կը գա:

– Տըղա՛, – կըսը, – չէ՞ իս քի ըսըցը, թուջըրքիրուն մ'ըսը:

Լաճն էլ կըսը. – Աստճու սիրուն իլնը, իմ խաթըր խամար նա մալն էլ ծախը:

Թուջըրքիրուն մալն էլ կը ծախը: Կը պաննան, քաղքեն կիլնին տուս:

Կըսը. – Տըղա՛, կերթե՛ք, մաչ տաշտին քանըցե՛ք: Վար քու ճապ թիվին իրիշի, կանաչ քիշկըմ գո հանդե: Ըգքի տըփին՝ մի՛ գա տուս: Թըքին քու իրիս՝ խաթար մի՛ տա, ըգքի անին տուս էլ, էլըմ գանդտիկ արը, մըտի տուն:

Կիլնին, կը գան, մաչ տաշտին, կը քանին:

Լաճն էլ կըսը՝ իս տ'երթամ նա քիշկ, մընամ հանդե չուր անավոտուն, գամ:

Թուջար կըսը. – Մ'երթա, հանդե վի՞վ գյըտը, գո՞ղ ին, ի՞նչ ին:

Լաճ կերթա: Կերթա, քիշկին կը մոտխըսնա, քիշկի մշակտիր իրիքն էլ կը գան, քանին հանճիվ դարբի: Կը մընա, բեհաշ կիլնը, տըքյտըքուցըմ կը գա, կերթան կըխին՝ ըխթյար մարթ մը գո վար կառուլին տըքտըթա:

Ըխթյար կըսը. – Ես ի՞նչ գյեշ խուտ էր՝ իրի միր տուն:

Կըսը. – Հասուր մեհվա մ'իկիր միր տուն, ի՞նչըխ կը տը-

փինք, ի՞նչըխ կանինք, չընք կանա խանը տուս տընեն:

Կըսը. – Աստված իմ իրիք լաճ առնը, նուր իմ իրիք ռենջ-բար, ուր թըղին մեհվան էկավ, խասավ տուն:

Էմէլ կը տաննան, էն կանդար կը գարկին լաճուն, լաճ բեհաշ կիլնը: Կիլնը, էլըմ քարաջեն վե կիլնը վիր, գանդտիկ կը մտնը անու հոդեն:

Կը տիսնը՝ իրիք լաճ նստած խաց կուտին:

Կըսը. – Ճրաք զըվըրցուցե՛ք, ուր լուս չ'ինի վար նա կղոխ-մա՞գ մարթուն:

Խաց կուտին, ան խացը հավըլութ կը տանին քանին հան-ճիվ շան, չըն իտար մեհվընին: Կը մընա, ան իրիք լաճ մե-մեկ ուր հոդեն կերթա: Խավոր կը մընա վար ուր կառուլին: Կը տեսնա՝ կեսգյիշիլին պատ կը ճըղվը, էրկու խատ արար կը գան տուս, մե-մեկ փետըմ կառնին, կը գան դախ խավոր: Շատ կը գարկին խավորոչ, սիվ օցըմ պերնեն կը քյեշին, սանջուլին քյեշին, կը տանին վիր:

Խավոր կը միռնը հանդե:

Լաճն էլ կըսը. – Առանց պան ըսիլ ծի կը տըփեն, մըկա խերն էլ մեռավ, տ'ըլնին, ըգճը տը սպանին:

Էն էլ կիլնը, կը փախը:

Քավոր կը գա հանճիվ:

Կըսը. – Տըղա՛, տեսա՞ր:

Լաճ կըսը. – Իս տեսա:

Կըսը. – Վաղ գյընա՛, ինչ կը քանեք, վար աչ թիվին կիրիշ-կիս, սըվտակ քիշկըմ կա, կաստ արա դախ ան քիշկին, գյընա՛:

Լաճ էկավ, թուջըրքիրուն էսաց. – Դե՛, պարցե՛ք, յանք:

Պարցին, գանցին: Գանցին, տաշտը մեչ քանըցը:

Թուջրին էսաց. – Հասուր իս տ'երթամ նա սըվտակ քիշկ:

Էսաց. – Տըղա՛, հերեկն էր, տու գանցիր, փախար, հասուր մ'երթա՛:

Լաճ էսաց. – Չէ՛, անկարելի յը, իս տ'երթամ:

Էլավ, գյընաց քիշկ: Քիշկը ռենջըրքիր իկին, ըզլաճ տա-րան, տարան անու խավորքիր փուխիցին, համամլամիշ արին:

Մեկ տըքյտըքուցըմ կը գյեր: Խավոր մարթըմ պառկեր էր վար կառուլին, կը տըքտըթեր:

Կըսը. – Ի՞նչ անուշ խուտ էր՝ իրը միր տուն:

Կըսին. — Հասօր պարը մեհվան մ'իկիր միր տուն:

Կըսի. — Ի՞նչ անիմ, Աստված հանաճ իմ իրիքը լաճ առներ, նուր իմ իրիքը ռենջբար: Վախանամ՝ թողած քըռտոհնքը պաղիր ը վերա, մըսիր ը:

Լաճիր կելնին, ըզմեհվան կը տանին մատ խալվոր: Լըխեֆ-դոշակ կը թալին, ըզմեհվան կը նստըցցին: Ձին էլ կը տանին, լիկ գարը, հարթ կանին հանճիվ: Շատ կաղըր էլ կը պըռնին մեհ-վընին:

Խալվոր կըսը. — Ըզձը տարե՞ք մատ մեհվան, իս անու ծեռ պըռնիմ, թողկաթ անիմ, նուր մեռնիմ:

Ըզխալվորու ծեռ, վուտ կը պըռնին, կը տանին մատ մեհվան:

Կըսը. — Մեհվան, տալ խազար պարով էկար:

Ծեռ կը տա, ըզմեհվընը ծեռ կը պըռնը, թողկաթ կանը, կըսը. — Մըկա կը մեռնիմ, թըխ մեռնիմ:

Կը պըռնին, ըզխեր էլմէլ կը տանին, տընին վար կառուլին: Լաճիր մե-մեկ ուր հողեն կերթա:

Լաճն էլ կը նըստը, կեսգիշիր կիւնը: Պատ կը ճըղվը, կը տեսնա՝ էրկնուց խիտ լուս կը կաթը տակ, իրիքը խատ մարթ կը գան էրկնուց, մեկ սինի՛մ պըռնիր ծեռ, մեկ փեզգյիր պըռնիր ծեռ, մեկն էլ պուռվալ պըռնիր ծեռ, իկին մատ խալվոր: Խալվորոջ սըր-պութին տըվին, հընդե մեկ շորան խալվորոջ պերենն էլավ, էն շո-րան տըրին մաչ սինուն, փեզգյիր թալցին վերա, առըցին, գացին:

Էլավ ծեռ իտու, խալվոր մեռիր էր:

Էն էլ էսաց. — Նա աղեկութին ինչ արին խա ծիկ, նա մարթ ինչ մեռավ, վուլա, տըսին՝ էն սպանից: Ջահնամ, վուլա՛, իս չըմ էրթա չուր խըլխուն: Իմ վիզ կը կըտրին, թըխ կըտրին:

Լաճիր իկին խըլխուն, տեսան՝ խեր միռիր:

Էսաց. — Միր խեր մեռիր, օղորմը ուր խոգուն, մինքը մի մեհվան տընինքը ճամբխու, նուր մի խեր խուրինքը:

Էլան, գատա թըխըցին, տըրին խա մեհվընին: Մեհվան էլավ, ուր ծին խեծավ, իրը: Իրը կես ճամբխին, քավոր իրը հանճիվ:

Էսաց. — Տըղա՛, տեսա՞ր:

Էսաց. — Խա՛, վուլա՛, էրկու քիչկն էլ գացը, տեսա:

Էսաց. — Ուր տեսար, քի կը պը ավորութին էրա՛, քի կը պը աղեկութին արա՛: Քի խաբարըմ տը տամ, հալա՛ քու սեռտ

չըմընա, իմ սըռտին չըխանը, հանա իս տ'ըսիմ: Դու տ'երթաս տուն, քու խեր ըզքը տը փըսակը: Ինչ տալ փըսակելուց պըռ-ծընիս, գաս տուն՝ վար տըռան տը մեռնիս:

Քավոր կորսավ, էլան, ըզքարվան պարցին, իկին տուն:

Խեր էսաց. — Տըղա՛, ըզքի փըսակիմ:

Էսաց. — Տո՛ւ՛մ շինը, ըզտուն արա՛ էրկու տըռենն, խերյաթ-խանա պա՛ց, ֆաղկիր-ֆըղկարա թըխ գան, ուտին, մի դաղա անին:

Խեր անու խամար խերյաթխանեն էպաց:

Էսաց. — Լաճ, դիրիս ըզքի տը փըսակիմ:

Լաճ էսաց. — Ըս տարը էլ մը՝ փըսակը, թըխ մընա տարը մ'էլ:

Էսաց. — Ըզքի փըսակիմ, նոր մեռնիմ, իս էլ, քու մերն էլ ըխթիյարացիր ինքը, ըզքու փըսակ տեսնանքը, նուր մեռնինքը:

Էլան, բազըրկանի մ'ախչիկ ուզըցին անու, խարիր վուսկու խալավ կըտրիցին անու: Տըրին վար անուռին, մուրուս կը կըն-դին, օր տը տանին փըսակ, տեսավ՝ Լրկու ֆըղկարա իկին մաչ ան քաղքին: Մեկ կնիկը, մեկ իրիկ, էրկուսն էլ ախքատ: Խացե կան կը գան: Էրկուսն էլ չըփլախ ին, խալավ չկա վերենքըտիր:

Կնիկ իրկան էսաց. — Գըռնա՛ խարսնըսը տուն, բալքը խացըմ տան, տալ ուտիս:

Իրիկ տեսավ՝ փեսը մուրուս կը կընդին, փեսեն էլ էսաց. — Ըզձը թըղե՞ք, իս կայնիմ, նուր իմ մուրուս կընդեցեքը:

Էլավ, ուր խարիր վուսկու կեսը, խալավքիիր էտու անա ֆըղկարին:

Էսաց. — Գըռնա՛, Աստված քի յի քըսմաթ արիր, ձը քըսմաթ չարիր:

Ֆըղկարեն իրը մատ ուր կնիկ: Էսաց. — Կնիկ, իս գացի մա փեսեն, դիր տալ գըռնա՛ մա խարս:

Խարսն էլ գի համամը մեչ, խարիր վուսկու խալավ տըրիր հանդե, ուր տը խագընը:

Ինչ խարսը աչկ ինկավ դախ ֆըղկարեն, խալավ իտու անու, էսաց. — Ա՛ռ, Աստված քի յի քըսմաթ արիր:

Ջույաթ տարան թուջրին, ըսիցին. — Քու լաճ ուր խալավքիիր իտու ախքըտին:

Էսաց. — Իմ լաճ շա՛տ աղեկ արավ, դաստ մ'էլ թըխ կարը, խագընը, վըրե չըկա՞:

Ջուլար տարան խարսը խոր, ըսիցին. – Քու ախշիկ զուր
խալավքյիր խոու ախքըրտին:

Խեր էսաց. – Աղեկ արավ, թախ դաստ մ' էլ կարը, խագըրը
հինի:

Էլան, երկու ֆողկարա իրիկ, կնիկ իկին մեկտեղ, մեմեկի
ընըցին. «Են մի խալավքյիր տըվըցին, մինքյ խագանքյ, միր
աղեկութին ի՞նչ տ'իլըն նա փեսը, նա խարսը խիտ: Մե աղե-
կութին նա տ'իլըն՝ երկուսն էլ յանքյ, վար ժամտան շեմուց նըս-
տինքյ: Մեկ ըսինքյ՝ Աստված, փեսը ումբըր հերկեն անիս, մեկ
ըսինքյ՝ Աստված, խարսը ումբըր հերկեն անիս»:

Կիլըն, երկուսն էլ կը գան, վար ժամտան շեմուց կը նըս-
տին: Խարս, փեսեն կը պիրին ժամտուն, կը փըսակին:

Ան երկու ախքատքյիրուց մեկն կըսի. – Աստված, տու փեսը
ումբըր հերկեն անիս:

Մեկն կըսը. – Աստված, տու խարսը ումբըր հերկեն անիս:

Չուր փըսակ կիլըն: Երկուս ժամտընեն կը գան տուս, փեսեն
չըգըխշը գա տուն:

Կըսը. – Աթուռ թալըցեքյ, իս նըստին:

Մեկ սըհաթ կը նըստը մաչ բախշին:

Խեր կիլնի, կը գա հիտիվ լաճուն, կըսը. – Իլի՛, յանքյ տուն:

Խոր խաթըր չըկուտըր, կիլըն վե լաճ, քավոր կը թալը, մեկ
թիվ կը պըռնը, քավոր մ'էլ կը թալը, մեկէլ թիվ կը պըռնը:

Կըսի. – Տըղա՛, մը՛ վախանա, իլը՛ վե: Ասպածութին երկու
ֆողկարը ձեն ինկա՛վ Աստու ալանջ: Խարիր մեկ տարը Աստ-
ված թու ումբըր հերկնցըցիր ը, Աստված քյի ումբըր տվիր:

Էլան, իկին տուն:

Անուըքյ խասան ուրինց մըրագ, տուքյ էլ՝ ձիր մըրագ:



18. ՊՈԼՈՏ ԿՅՈՎ

Մեկ կնիկըն կիլըն, անու իրիքյ ախշիկ կիլըն, մեկ խուրթ ը,
երկու՝ ուր մուտեն ին: Ան երկուսըն լավ կը շախը, ան մեկըն
գյիշիր-ցերեկ կը տըփը:

Իրիքյն էլ կերողկը վարժատուն: Ան մեկըն շատ հիմաստուն
կիլըն, ան մեկէլքյիր՝ թու պան չըն գըրտը աշխարքը վերա:

Էն էլ կը գա, գան խուրթ ախշիկ կը թալը հեռճիվ ացցը, կը
գարկը:

Ախշկան կըսը. – Քու խոգյին իլնի, իս քյի տ'անիմ կիվարած:
Ալ ըգքյի չըն հիրողկի վարժատուն:

Անուչ գատ կը տա ուր ախշըկտիր ուտին, անիկ կը մընա
անութի: Ան էլ լալեկեն կը գա փարգախ՝ մատ պոլոտ կիվ:

Պոլոտ կիվն էլ կըսը. – Մը՛ վախանա, ախշը՛, իս իմ տեղ
տ'երեծամ ռըհաթ, իս չըն փախը, ուր տու ինիս հիտիվ ձը, նե-
ղանաս:

Ախշիկ օր վըր ավուր կը կըտըրճանա, կը կալվանա, ինչ ի՛
ըզկիվ կերեծա:

Մերն էլ կիլըն, հուրիշ ախշըկտիր կերողկը հեռճիվ կիվուն,
կըսը. – Թըղ ան չըկալվանա:

Ինչ երկու քուր կերթան հեռճիվ կիվուն, կիվ կը փախը
սարեսար: Երկու ախշիկ ենկանդար կը թըղնին հիտիվ կիվուն,
քըռտիքյ ոտնիր վե կը գա տակ երկու քուրուչ:

Կըսին. – Ալ թարա՛, մինքյն ցա կիվ չըտանիքյ, ըզմի սպանից
ցա կիվ:

Ան էլ կիւնը, ինչկանդար ոսկը, առծաթ կիւնը, կը կախը ուր
ախշը կտիրու վըզքի, ան մեկէլ ախշիկ կը տըփը, անուրը
կերհոկը՝ կիւ տանի, էրեծա:

Ախշիկ լալեւեն կը գա փարգախ:

Պոլոտ կիւ կըսը. – Ընչի՞ կը վախանաս, ախշի՛, վըրե՞ կը
լաս:

Ախշիկն էլ կըսը. – Իմ էրկու քիւրուչ ոսկը, առծաթ կա, ծի
չըկա, իմ մեր ծի կը տըփը, կը թաղկը տուս տընեն:

Ան էլ կըսը. – Մը՛ վախանա, ախշը՛, դու ըզծի ա՛ռ, տար՛,
էրեծա՛, քի դաւը չըկա խիտ:

Կիւնը, ըզպոլոտ կիւ կը տանը, կէրեծա:

Պոլոտ կիւ կըսը. – Թա՛լ, զիմ պուչ պըռնը՛, հիտիվ ծի արը՛:

Ան էլ ըզպոլոտ կիւ պուչ կը պըռնը, հիտիվ անու կէրթա:
Կը տանի մեղ ծիւրըմ վե, կը տեսնա՛ պառաւըմ գի հատե նստիր:

Կըսը. – Պառա՛վ, անանաթ նա ախշիկ, խիտ շախիս:

Ախշիկ կը մընա հանդե: Պառա՛վ կուղ կիւնը, կը քընը:

Կըսը. – Ախշը՛, գի իս կը քընիմ, սիվ ճիւր գա, ըզծի չակախ-
ցուցիս, սըվտակ ճիւր գա, ըզծի չակախցուցիս: Ինչ տեղին գա,
ըզծի ակախցուցիս:

Պառա՛վ քընաւ, սիվ ճիւր իրի, ախշիկ չակախցուց, սըվ-
տակն էլ իրը, չակախցուց, տեղին իրը, ակախցուց:

Ան էլ էլա՛վ, ախշը կան գըլիխ մըտուց մաչ ան ճըրհուն, ոսկը
գըլընդի կախվա՛վ ականջեն, անու վիզ հըմեն էլա՛վ ոսկը:

Չեվարին ախշիկ ուրախ-գուրախ էկա՛վ տուն, մեր տեսա՛վ
ախշկան վըզեն զըմեն ոսկը յը, ականջքի զըմեն ոսկը գիւնդ ը:

Էսաց. – Սի՛վ կապիս, ա՛լ տու մ՛երթա՛, վաղ իմ ախշը կտիր
ըզկիւ տը տանին, էրեծան:

Էրկու քիւր էլան, ըզպոլոտ կիւ տարան, կէրեծան:

Պոլոտ կիւ էսաց. – Ախշը կտիր, թալըցե՛ք, զիմ պուչ պըռ-
նեցե՛ք:

Էլան, ըզկիւ պուչ պըռնիցին, մտան մաչ ծիւրուն: Տեսան
պառաւըմ գի նստիր անտեղ:

Էսաց. – Պառա՛վ, անանաթ նա էրկու ախշիկ:

Պառա՛վ էսաց. – Շա՛տ աղեկ, ախշը կտիր, իս կուղ կէլնիմ,
կը քընիմ, սըվտակ ճիւր գա, ծի մ՛ակախցուցեք, տեղին էլ գա,
մ՛ակախցուցեք, ինչ սիվ գա, ըզծը ակախցուցեք:

- Պառա՛վ, - կը բիռան, - պառա՛վ, պառա՛վ, սիվ ճիւր էկա՛վ,
իլի՛ վե:

Կիւնը պառա՛վ, զերկուսն էլ կը խուրը մաչ ճըրհուն, հըմեն
մեկի ճակտեն սիվ գատըմ կը կախվը:

Կը տեսնա ճակատ, կը տեսնա իրիս, կառնին ըզկիւ, կը
գան տուն:

Մեր կիւնը, ըզխուրթ ախշիկ կը թալը հեռիվ դարբը, կըսը. –
Նարիկ քիւ տըյաթն ը:

Լալեւեն ախշիկ կիւնը, կը գա փարգախ:

Պոլոտ կիւ կըսը. – Մի՛ լա, ախշը՛, Աստված հողորմած ը:

Խըլխուն շուտ ախշիկ կիւնը վե, մեր կըսը. – Ախշը՛, ըզքիւ
պոլոտ կիւ տը զիւնիմ, հանեն նա պոլոտ կիւնը ը կանի խա՛ քի:

Ախշիկն էլ լալեւեն հանա՛ զիւնը կը թալը փարգախ:

Պոլոտ կիւ կըսը. – Ախշը՛, վըրե՞ կը լաս:


Ախշիկ կըսը. – Վու՛ա, ըզքի տը զիւնին, էն հապով կը լամ:

Պոլոտ կիւ կըսը. – Մը՛ վախանա, թըխ ծի զիւնին, իս տ՛ըլ-
նիմ տա՛ս լեղի, մարթ չըկանա ուտը, տու մընակ կիր: Իմ ոսկըռ-
քիւրն էլ բիթուն բահրա՛վը, ոսկը յը, քանը սաղ իս, իմ ոսկըռքիւր
ծախիս, ուտիս, չըխըլըսը:

Անա՛վոտուն կը պիրին, պոլոտ կիւ կը տընին գըտտին, կը
զիւնին, անու միս կանին կավուրմա, ախշը կտիր ու մեր ինչ կու-
տին, կը տաննանա վար անունը, ամընով կը տան գան հեթիմ
ախշիկ, կըսին՝ տար՛, կի՛, բալըքը մեռնիս:

Ախշիկ կուտը, կը քանցընա ախշկան խամար: Ոսկըռքիւրն
էլ կը բահրա՛վը, կը տանը ծախը ուր խամար:

Ան կը խասը ուր մըրագ, դիւ էլ՝ քիւն:



Կըղլեշան կը մտնը ակ վե, կըսը. – Կակո՛, վոլա՛, իս գո՛ ըստան իմ:

Թոթովան ակնեն կը խանին ըզԿըղլեշան:

Պառավ կը փոշմընի, կըսը. – Խոզկե իս զԿըղլեշան կերեր էր, վըրե՞ տարա, տըվը անու խոթ, մոթ:

Լաճ կիլնը, կերթա տոսա, պառավ կը լարը հիտիվ: Ան էլ զինքը կը թալը մաչ հանվին, պառավ կը խասնը, կը խանը տոսա, կուտը:

Խեր, մերն էլ հիտիվ Կըղլեշանին կան կը գան, վոլա՛, չըկա: Ապա պառավ կիրիր:

Կըսը. – Մի կան գալ հիտիվ Կըղլեշանին ի՞նչ ուքուտ ը, Աստված տըվից, Աստված առից:

Կնիկ կըսը. – Գընա՛, առտ վարը, բալքը Աստված կամենա, ակոսը մեչ տեղըն իլնը հերեվան:

Կիլնը, կերթա, առտ կը վարը, գուգուսըն ոսկը կը կընդը:

Ան էլ կըսը. – Վոլա՛, ալ իս վար չըն անի, քանի ժիր ինք, ուտինքը նա ոսկըն, մի բաս ը:

Կը տեսնա՝ մեկ մարթ ան կընարեն կը գա:

Կըսը. – Վոլա՛, իս տը կիսիմ նա ոսկըն խա՛ նա մարթուն:

Կը կանչը, կը պիրը, կես կը տա անու, կես կը տանը ուր տուն:

Կը խասնը ուր մըրագ, տու էլ՝ քու մըրագ:



20. ԲԱԽՏՈՒՆ ԱԽՊԵՐ

Մեկ մարթըն կիլնը, զինքըն ը, ուր լաճ մընակ:

Կըսը. – Կը շիվարանաս, կերթաս Ստամբոլ: Անցկուն մարթու խիտ իլիր ինկյիր, ինչ էրկու փայ խաց կը տընի հանճիվ քյի, փայըն կը տընի հանճիվ ուր: Անցկուն մարթու խիտ մ'իլնիր ինկյիր, ինչ էրկու փայ կը տընի հանճիվ ուր, փայըն կը տընի հանճիվ քյի:

Են էլ կը շիվարանա, կերթա Ստամբոլ: Մեկ մարթըն ռաստ կը գա:

Կըսը. – Ղո՛ւր տ'երթաս:

Կըսը. – Տ'երթամ Ստամբոլ:

Կըսը. – Իսն էլ կելնիմ քյի ինկյիր:

Կերթան խա՛ ճամբխին, կանութանան, խաց կը խանին, օր ուտին: Էրկու փայ կը տընի հանճիվ ուր, փայըն կը տընի հանճիվ տըղին:

Կըսի. – Իս խա քյի չըն իգա՛ Ստամբոլ, իս հուրուշ կընար վե կերթամ:

Կերթա ճամբախ, հուրուշ մարթ մ' էլ ռաստ կը գա:

Կըսը. – Ղո՛ւր տ'երթաս:

Կըսը. – Տ'երթամ Ստամբոլ:

Կըսը. – Իս էլ քյի ինկյիր: Իս, տու մեկ տեղով էրթանք:

Կըսը. – Խաց խան, ուտինքը, յանք:

Տեսնը՝ էրկու բախըր կը տընը հանճիվ ուր, բախըր կը տընի հանճիվ լաճուն:

Կըսի. – Իս խա քյի չըն իլնի ինկյիր:

Կերթա, մարթ մ' էլ ռաստ կը գա:

Կըսը. – Տըղա՛, տ'երթաս Ղո՛ւր:

Կըսը. - Տ'երթամ Ստամբոլ:
 Կըսը. - Տըղա՛, իս, տու՛ իլնինք՝ ախպեր, երթանք:
 Կըսը. - Դե խաց խան, ուտինք, յանք:
 Տեսնա երկու փայ կը տընի հանճիվ լաճուն, մեկ փայ՝ ուր:
 Ան էլ կըսը. - Նուր իս, տու՛ էլանք՝ ախպեր:
 Կերթան Ստամբոլ: Յոթ տարը լաճ կը խիվընդընա՛: Մարթն կիլնը, գան յոթ տարը կը շախը: Լաճ կը ժըռը, կիլնին, կը գան երկիր:
 Ախպեր կըսը. - Իլի՛, երթանք երկիր, էլ մի՛ նըստիլ, ըստն փարա չանի:
 Լաճն էլ կըսը. - Չի փարա չըկա, քի կա, տու՛ մալը տեր իս, իս չէ, ի՞նչըխ տ'երթանք:
 Մարթն էլ կըսը. - Իս, տու՛ ախպեր ինք, մեկ մագ էլ իլնը, իս, տու՛ խնլալ տը կիսինք:
 Կը թըղնին, կը գան: Կը գան մեկ գյեղըն:
 Կըսի. - Մի գյիշիրվա՛մ տեղ տըվեք, մնանք չուն անավոտուն: Անավոտուն կերթանք խն մի ճամբխին:
 Ռեսն էլ կըսը. - Ըստեղ խան կա, վիվ երթա հինը, կը մեռնը, անավոտուն կը տանին, խուրին: Քյի կը պի, գյընա՛ էն խան:
 Էն էլ կերթա խան:
 Կըսը. - Մեռնիմ, թըխ խան վե մեռնիմ:
 Կերթան խան: Լաճ կը քընը, ախպեր կը մնա հանշար: Տեսնա՛ մեկ հանջլանք, յոթ գյըլխեն պն մ'իրը:
 Մարթն էլ ըզթուր քյեշից, էզար, անտ հանջլանք գանտ ըսպանից:
 Գյընաց անու տուն, տիսավ կնիկըն գի էնտիղն ը, կուղ իլիր, քընիր: Կնիկն էլ շատ խորոտ կնիկ ը:
 Տեսավ եօցըն իրը, զինք էզար կընկան պերան վե, գյընաց կընկան փուր: Ըզկնիկ քընուց էխան վե:
 Կնիկ էսաց. - Աստժո՛ւ սիրուն, փախը՛, քանի ան հանջլանք գանտ չիկիր, ըզքյի կիրիր:
 Մարթն էլ էսաց. - Հանջլանք սպանիր իմ: Տաննանք ըստուցա, երթանք միր երկիր:
 Էլավ, ըզլաճ քընուց էխան վե:
 Էսաց. - Իլի՛, պաննանք, յանք:

Էլան, պանջին, քանուն մեկ բերգյը պեռ մալ էլավ: Իկին կես ճամբխին:
 Էսաց. - Ախպեր, դիրիս քու գյեղ միթխըսգավ: Մինք ըստն տը պանջլինք:
 Լաճ էսաց. - Չի գանտ չկա, օր պանջլինք: Չըմեն քու մալն ը:
 Մարթն էլ էսաց. - Քանի օր իս, տու՛ ախպեր ինք, մալը կես՝ ձի, կես՝ քյի:
 Էսաց. - Քըսան պեռ ձի, քըսան՝ քյի:
 Մեկ բերգյիր մնաց հավլը:
 Էսաց. - Էն մեկ բերգյիր հավլը տար քըն խանար, տու՛ շատ իս պանիր:
 Էսաց. - Չիլնը, իս, տու՛ ախպեր ինք: Տը կիսինք: Քյի ոռո՞ւ կընար, թի՞ գյըլխու կընար:
 Լաճ նանիլանցավ էսաց. - Չի ոռու կընար:
 Թուր քյեշից, էրի մատ բերգյիր: Էզար, կես տեղ հինի կըտրից:
 Էսաց. - Դիր կնիկ տը կիսինք:
 Էսաց. - Կնիկ տու՛ պիրիր իս, քըն խանար իս պիրիր, անիկ պիրոզ իլնը քյի:
 Կնիկ վանջացավ, էսաց. - Ի՞նչըխ բերգյիր արին, խն ձի էլ տ'անին:
 Մարթն էսաց. - Կնիկ մը՛ սպանի, միխք ը, տար քըն խանար:
 Էսաց. - Չէ՛, իլանի տը սպանիմ:
 Թուր վիրուց վար կընկան, լաճուն էսաց. - Քյի ոռո՞ւ կընար, թի՞ գյըլխու կընար:
 Ինչ ըզթուր վիրուց, իպը, կնիկ ոռժըկաց, եօց պերնեն թըռավ:
 Էսաց. - Դե՛, առ: Նա՛ կնիկ, նա՛ մալ, նա՛ բերգյըրքյիր, ինչ կա, տըվիր իմ քյի: Տար քըն խանար:
 Ինք կորսավ: Մարթ ուր մալ առից, իրը տուն: Փըսագվավ, նըստավ:
 Էն խասավ ուր մըրագին, տու՛ էլ՝ քուն:





21. ԲԱՅՐՈՒՄ ՈՒ ԴՆՆԴՈՒԱՆ ԽԱՆՆԸՍ

Բահրամ կիւնը, ուր խոր կըսը. - Իս տ'երթամ Սիվ սար
նեճիր:

Կըսը. - Վիվ գացիր Սիվ սար, էլ չըտարցիր հիտ: Տու խիղճ
իս, մ'երթար:

Ան էլ կըսը. - Անկարելի՛ ը, տ'երթամ, չըմ տատորը:

Կիւնը, քնռսուն մարթ անու տիսակ կը տընը խիտ՝ բիթուն
կարմիր ծիավուր: Քնռսուն էլ սիվ ծիավուր կը տընը խիտ: Քնռ-
սուն էլ սըվտակ ծիավուր կը տընը խիտ՝ բիթուն անու տիսակ:
Ուր մըշակն էլ կը տընը խիտ:

Կըսը. - Արա՛ք, ամանաթ ըզբյի իմ լաճ: Տու իմ լաճ շախիս:
Խալկ հուրիւշի տըղա ին, տը փախնին, գան, համա տու իմ
անակորն իս, տու տը շախիս:

Կերթան Սիվ սար, բիթուն ծիավուրբյիր կը փախին, են էլ կը
պիրը, զըմեն էլ կը պըռնը թագավուր: Կը մընան Բահրամ, Արա՛ք
մընակ:

Կը տեսնա՝ վար ծովուն գամի՛մ կը գա, կըսը. - Արա՛ք, նա
ի՞նչ կըրակ ը վար նա ծովուն:

Կըսը. - Գամի յը:

Կըսը. - Կանչի մըհը, նա ի՞նչ գամի յը:

Գամըչուն կըսը. - Քու պեռ ի՞նչ ը:

Կըսը. - Փետ ը:

Էն էլ կըսը. - Նա փետ լի՛ց ծով, ըզձը ա՛ն հիւնը:

Եռսուն ոսկը կը տա, ըզփետ կը լըցը ծով: Բահրամ, Արա՛ք

կը նըստին գամին: Կիւնը ֆըռթոնա, կիւնը հալանկուծում, գամին
կը կուռծանվը, տախտակ կը պըռնին, թալին վար ծովուն, կայնին
վերա: Իրիթ էօր, Իրիթ գիշիր կը մընան մա՛ջ ծովուն, կան կը
գան:

Արա՛ք կըսը. - Բահրամ, դիրիս մեկ մեկի ծեռ թըղնինք, մե-
ռանք, անցկում մընացինք մա՛ջ ծովուն:

- Ապա, - կըսը, - ի՞նչըիս տ'իւնը, ժամանակըմ մեկըգմեկ
ճանչընանք:

Ան կըսը. - Ահդ իւնը, թոչար ծաղըր իմ իրիս չըգա:

Ան էլ կըսը. - Ահդ իւնը, առժի թոչար իմ իրիս չառնը:

Մեմեկի գըլիխ կը պագընին ծեռնիր կը թըղնին: Կը մընա,
մեկ կերթա հուրիւշ թագավուրըմ կըլը խըզմաթքար, Բահրամն էլ
կերթա, կըզղի՛մ կիւնը տուս, ուր դըփ կը խուրը մանչ ավզին,
կիւնը վիր, կերթա, կը տեսնա գյեղըմ գի անտեղ: Խացիր թըխուկ,
յըմակտիր իփուկ, մարթ չըկա անտեղ: Ամեն մալ-ապրանք իհնը
կա, համա մարթ չըկա:

Էն էլ մեկ ամիս կը մընա հանտեղ, կուտի, կը խըմը, ուր քյեֆ
կանը, համա ծաղըր իրիս չի գա:

Կըսեր. - Օր ես Արա՛ք չըխիմ, իմ կյանք ընչը՞ խամար ը:

Էն էլ կիւնը, կը թըղնը, կերթա: Ուր դըփ կը խանը տուս, կը
թալը վար ծովուն, կը նըստը վերա, կերթա քաղաքըմ կիւնը տուս:
Քաղաքն էլ շատ ճու՛ջ քաղաք ը: Մեկ մարթ էլ քաղաք չըկըն-
դըվը: Մալ-ապրանք գի հիւնը: Խացիր պա՛ց, դիրքընքըյտիր պա՛ց,
մարթ չըկա հիւնը:

Էն էլ կըսը. - Ահդ իւնը, իս անտեղեն հիրար չառնիմ, շատ
անուշ տիղ ը:

Կուտը, կը խըմը, ուր քյեֆ կանը:

Ան մեկ էօր նըստիր վար անուռին, ոտ թալիր վար ոտաց,
նարգուլա՛ կը խըմը: Պառա՛վ մ'ան կընարեն կը գա: Ծապ ծիծ
թալիր վար աչ թիվին, աչ ծիծ թալիր վար ճապ թիվին:

Կըսի. - Բահրամ, իս գիշիրով քու հիտիվ կան կը գյեր, տու
գիշիրով ընկար իմ ծեռ: Դե արը՛, յա՛նք, Դընդըռան խանըմ քյե
կը կանչը:

Ինչ կերթա, աչկ կ'իւնը Դընդըռան խանըմ, հա՛ջ կերթա, խիլթ
գըլխուց կերթա: Պառա՛վ հանդե կը պըթընը:

Չըտըն տըրու՛ն խիլթ կը գա վերա:

Կըսը. - Բահրամ, չուր մըկա տու չըր գըլտե՝ իս քու կնիկն էր, տու իմ սալըխ չըր իտա:

Բահրամն էլ կըսը. - Չուր քը մեկ ծի սալըխ չիտուր, իս չըր գըլտը:

Քանսուն պանիս իտուր ըգԲահրամ:

Էսաց. - Գըննա՛, մանչ քաղթյին կան արը, մըհա՛ ի՞նչ մալ կա ախշըրթյի վերա:

Բահրամն էլ տու մ'էպաց՝ մեկ աստլաս էր, մեկ էպաց՝ կոմաշ էր, մեկ՝ ոսկը յէր, քանսուն էլ էպաց, էսաց. - Կըրակ տընիմ, ախշըրթյի մալ հինը, ախշըրթյի մալ տը մընա ախշարթյ, ըսկը ծի օքուտ չկա:

Էլմէլ մաղդեն արիւր ը, ահո արիւր՝ ծաղըր չըգա՛ իրիս:

Դընդըռան խանըմ էսաց. - Բահրամ, օր ծի չըս ուզը, ըգծի թուր:

Բահրամ էսաց. - Ըգթյի շատ կուզիմ, համա մընակ իմ, իմ սըբըր չիլնը:

Էն էլ ըսաց. - Գըննա՛ փարգըխը տըռան վերա, ըսա՛ փարգախ, ծի քյենե կը պի քանսուն կարմիր ծի, քանսուն մարթ վերա, հըմեն իմ տիսակ, էրթանքյ նեծիր:

Քանսուն կարմիր ծիավուր էլան տուս փարգըխեն: Գըննացին նեծիր, չուր հեվարին տանցան, էկին:

Բահրամ էլմէլ մաղդեն արուկ ը:

Էսաց. - Բահրամ, գըննա՛ վար փարգըխը տըռան, ըսա՛ քանսուն սիվ ծի, քանսուն մարթ վերա, էրթանքյ նեծիր:

Էլմէլ էլան, գըննացին նեծիր, չում հեվարին, հեվարին էկին: Էլմէլ Բահրամ մաղդեն արուկ ը:

Էսաց. - Գըննա՛ վար փարգըխը տըռան, ըսա՛ քանսուն սըվտակ ծի, քանսուն մարթ վերա, տըվեթյ, յանքյ նեծիր:

Յեվարին նեծրից տանցան, իկին, Բահրամ իրը տուն, տեսավ կնիկ գըլթիս կուխի փանջարեն վե, անկանդար իրիշկիր ը՝ անկախ տարիւր ը, քյնիր ը: Ան էլ ըզկնիկ գըրկից, գանու տիղ շինից, իտիր վերա: Ծեռ իտու անու ծուց, կութի՛մ կընդալ: Կութին էպաց հիտ, կը խը՝ մեկ պանիս գի հինը:

Էսաց. - Յա՛, քյա՛քըր հիսան, ի՞նչ նա հըմեն պանիս մի շանքյ էր տվիր, նա մեկ պանիս շանց չէր իտա:

Ըգպանիս առից, էլավ տուս: Էլավ, գըննաց, ինչկանդար

տըռան վերա կեր, ջանքից, վար մեկ կոպղըսին չէկավ: Տարավ, մեկ հավշըմ տեսավ, պըստիկ տուռըմ գի անտեղ: Ըգպանիս էտու, տուռ պացվավ, տեսավ՝ խավքյ վըր շըրտին, թըռավ: Յախպիւրըմ կեր անտեղ, էնկանդար խիրոտ, թամիզ հախպիւր էր:

Էսաց. - Վու՛ն, իս փշու՛մ տը խըմիմ:

Ծեռ իտու հինը, էլավ ոսկը:

Էսաց. - Դընդըռան խանըմ, նա հախպըրի վերա՞ էր տու տուռ շիներ էր վար ծի, պանիս չըր իտա, վար ծի պախեր էր: Ախշըրթյի մալը տը մընա ախշարթյ, ծի գիւն պան չըկա:

Տեսավ ան հախպըրը տուն, վար շըրտին մեկ մարգըրտե շապիկյ: Շապիկյն էլ էրեգանկան պես կը փելը, էնպես թամիզ գանտ մը:

Էն էլ էսաց. - Տ'էլնիմ տուս, թամաշա անիմ, մըհա ի՞նչ թամիզ պան ը:

Շապիկյ էպաց հիտ, քանին էգար, ծեռնեն խըլից, տարավ մաշ ծովուն: Շապիկյ գըննաց էրկիրըմ. մեկ կուր նախրուրթըմ ըզտավար իպիր վար ճըրին: Մա նախրին էլ կուր բերգիրըմ կեր: Ինչ աչկ ինկավ շապիկյ, բերգիր խըռտընավ, նախրուրթն էլ փետըմ էգար վար քանկին, կուղուշարթյըմ կուտրից:

Էսաց. - Քու տիրու խեր քուլնիմ, հըմեն ժամանակ տու աննա տ'անիս խա՛ ծիկ:

Իրիշից, ըզշապիկյ տեսավ վար ծովուն, էգար, ըզշապիկյ էխան, առից, իրը: Ցերեկվընով ըզնախիր շուռ իտուր մաշ քաղթյին:

Տավըր տերըկանքյ ըսըցին. - Վըրե՞ ցերեկով տավար պիրի, շուռ տըվիր մաշ քաղթյին:

Էն էլ էսաց. - Աստված ծի իտու, չուր իմ տըղը տըղեն ուտը, իս ծախիմ, չըխըլըսնը:

Շապիկյ իպի մատ ուր մեր:

Մերն էլ էսաց. - Մի չուտվը, միքյ տանիքյ թագավուրը խամար դիարը:

Մերն էլ ուրախութեն առից, էրկու տիս էթուր, գըննաց:

Թագավուրը լաճու աչկ ինչ ինկավ շապիկյ, հաշ գըննաց:

Թագավուր էսաց. - Պառա՛վ, տու նա շապիկյ պերիր, իմ լաճ խիլթյ էթալ:

Էսաց. - Օր նա՛րու տեր տեսնա, ի՛նչըխ տ'իլնը, նա դըլ շապիկյն ը:

Էսաց. - Պառա՛վ, տո՛ւ նա՛րու տեր տը պիրիս բընենա՛վե:

Պառա՛վն էլ էսաց. - Տո՛ւ զի մեկ չափ կուրիկ՝ զիմ ճըժիր ուտին, իս էրթամ, պիրիմ:

Էսաց. - Պառա՛վ, իս քյի ցուրին կը տամ:

Պառա՛վ էսաց. - Մեկ ծըծո՛ւնըմ շինի ձի խանան, ա՛ռ ձի խանան քիչըմ քանթրանա: Ա՛ռ ձի խանան սարիկըմ, կապիմ վան իմ ծըծմի պերնին:

Պառա՛վ կիլնը, ծըծո՛ւն կը խեծնը, շանգյըմե թըբգեղ կը շարը, կը թալը ուր վըզեն:

Կըսը. - Յա Տեր, յա Աստված, տ' էրթամ Հանրուսաղեմ, տ'իլնըմ մուխսը:

Կիլնը, կերթա, Դընդըռանը խոր էրկիր կիլնը տու: Ծըծո՛ւն կը խուրը ծովու պըռուկ, պերան կը թուղնը պանց: Կերթա Դընդըռանի փանջանը տակ, կը տատըրը:

Կըսը. - Դընդըռան խանըմ, տուռ պանց, իս գան, գյիշիր մընամ էսա տիղ չուր խըլխուսն, խըլխուսն կերթամ Հանրուսաղեմ:

Դընդըռան խանըմ կըսը. - Իս ամենկին տուռ չըմ պանա վան պառվուն, իս պառվուց տիսիր իմ:

Պառա՛վ շատ լավա կանը, Դընդըռան խանըմ կըսը. - Չի՛լնը, մեռնիմ, տուռ չըմ պանա վան քյի:

Պառա՛վ կը մընա հանդե, չուր Բահրան հեվար. Դե՛ծրից կը գան:

Էն էլ կըսը. - Բահրան, մեռնիմ քու ոտնիրուն, մուքն, հեվար, իս դո՛ւր տ'էրթամ: Իս տ'էրթամ Հանրուսաղեմ:

Կըսը. - Պառա՛վ, ի՞նչ կուզիս:

Պառա՛վ կըսը. - Կուզիմ մեկ գյիշիրվան տիղ:

Բահրան կը կանչը. - Դընդըռան խանըմ, տուռ պանց, թախ նա պառա՛վ գան տուն, միխսը ը:

Դընդըռան խանըմ կըսը. - Բահրան, պառա՛վ գյըլխանցավանք ը, իս չըմ պիրի տուն:

Պառա՛վ շատ կը խնդրվը, շատ լավա կանը, Բահրանը ձիու ոտնիր կը պագը, Բահրանն էլ տուռ կը պանա վար պառվուն, պառա՛վ կերթա տուն: Չուր Դընդըռան խանըմ կանխիլը,

պառա՛վ տիղրանք հանեն կը շինը, ըզտախտ կանլը, ըզճուր կը պիրը:

Բահրան կըսը. - Դընդըռան խանըմ, չէ՞ տուռ չըր պիրեր տուն: Անան քանիզ պառա՛վ դո՛ւր տ'ընկըյներ միր ծեռ:

Կըսը. - Բահրան, պառա՛վ ազբ բեբախտ ը:

Կը մընա չուր խըլխուսն: Էօրըմ, էրկու պառա՛վ կը մընա էնտեղ:

Կըսը. - Դընդըռան, իլի՛ յանք ծովու պերան վե, մի սըբըր իլնը:

Բահրան կերթա նեճիր: Պառա՛վ ըզԴընդըռան խանըմ կը խապը, կը տանը ծովու պըռուկ, լըվանց կանին:

Դընդըռան խանըմ կըսը. - Պառա՛վ, լըվանց ի՞նչ տ'անինքյ, նա քանաք սաղ մի խանան խալավ ը:

Կըսը. - Սըբըր հանպով կերթանքյ, լըվանց հանպով չընքյ էրթա:

Կանին պըղինձ, փետ, սապուն, կերթան: Կերթան ծովու պերան, կըրակ կանին:

Պառա՛վ կանտով կըռչե կան կը գան: Ուր ծըծո՛ւն կը տեսնա:

Էն էլ կըսը. - Դընդըռան խանըմ, Աստո՛ւ սիրուն, էրի, քանաքյըմ ոսկը կա ըստան:

Դընդըռան խանըմ կըսը. - Իմ քանաքյ հանեն ոսկը յը, իմ հախախուր ոսկը, ի՞նչ տ'անին ոսկը:

Կըսը. - Խոգյիս, արը՛, էրկու խատ ձը խանան խան, իս պառա՛վ իմ, իմ ծեռ կառճ ը:

Դընդըռան խանըմն էլ կիլնը, կերթա, ծեռ կը պարզը դախ ոսկիքյ, թանթանեքյ, ինչ թալիր հինը: Պառա՛վն էլ գանու ոտնիր կը վիրուցը, կը խութը ման ծըծմին: Սարիկ կը կապը վան պերնին:

Դընդըռան խանըմ կըսը. - Պառա՛վ, Աստո՛ւ սիրուն, ըզսարիկ անրցըկը, ձի խըզանթըմ կա խան քյի:

Պառա՛վն էլ ըզսարիկ կանրցըկը:

Կըսը. - Պառա՛վ, թուխթըմ գյըրիմ, տար տի մուխսը մեչ: Ան քյաֆըր Բահրան նեճրից տը գան, քանտուն ավուր կոնախ մինքյ յանքյ, մեկ դան ան տը գան, խասնը: Օր տա խասավ, հան ձի տը սպանը, հան ըզքյի: Իս տը գյըրիմ, մինքյ նա ճանթխով տ'ըյանքյ, խանիմ, չըգան մի խասնի:

Պառա՛վն էլ կիլնը, ըզթուխթ կը տա ծեռ, էն էլ կը գյըրը. «Բահրան, տուռ գանցիր, ան պանիս տարար, ան տուռ պանցիր,

մարգյրտե շապիկյ խանըցիր, գյընաց մնչ ծովուն, պառավ իրի հիտիվ ձի, իս քյի ըսըցի՝ տիւռ մը պաննա վար պառվուն, գի պառավ ձը տարավ: Աստծու սիրուն, գյընա՛ վար ան փարգյըխը տըռան, ըզտիւռ պնց, խավքյ գի վար շըրտին, տը թըռնը: Իրիքյ տիր թաննդար իլը խավքիւն, ըսա. «խավքյ, տիւ Ղընդըռան խանըմի քանար կը սիրիս, ինչ մոթխաս էր, զաննացավ, տիւ շիրնթ մ'անիս ձի, Ղընդըռան խանըմ տարան»: Ան խավքյ ինչ շիրնթ անը, հիտիվ ան շիրնթըն արը, ըզծի կընդի»:

Խավքյն էլ կըսը. - Գյընա՛ վար ան փարգյըխը տըռան, ըսա՛ ձի քյենե կըպը պալու պեշ նալուկ ձին, խեծը՛, տու՛ վար ծովուն: Ղընդըռան խանըմ ո՛ր էրկիր յա, ձին տ'էրթա ան էրկիր, տ'իլնը տիւս:

Բահրանն էլ ըզծին կը խեծնը, կը տա վար ծովուն, կէրթա ան էրկիր, կիլնը տիւս: Կէրթա էլըմ պառվու՛մ մեհվան:

Կըսը. - Պառավ, մեհվան չը՛ս շախե:

Պառավ կըսը. - Մեհվան Աստծու մեհվան ը, նա՛ կա ուտիմ, նա՛ տամ մեհվընուչ:

Բահրանն էլ կիլնը, լուպըմ ոսկը կը տա պառվուն: Պառավն էլ խընդալիւց յոթ տիս կը թըղնը, կիլնը, ճախրակ կը զարկը գյետին, կը կուտորը: Կէրթա խաց-պան կը պիրը քնդըյեն: Կուտին, կը խըմին, քեֆ կանին չու՛մ խըլխուն: Խըլխուն նաղարը ձեն կը գա:

Կըսը. - Պառավ, նա ի՞նչ սազը ձեն կը գա:

Կըսը. - Պառավ մեռնի քյի: Ղընդըռան խանըմն ը պերած:

Կըսը. - Պառավ, Աստծու սիրուն ըլնը, տիւ ի՞նչըխ իս, էրթաս, Ղընդըռան խանըմ տեսնաս:

Պառավ կըսը. - Իմ քիւր գյընաց, Ղընդըռան խանըմ իպի թնգանվուրը խանան, իս չըմ կանա՞ պիրի քը խանան:

Կըսը. - Ա՛ռ քնֆիկըմ խընծիւր, քիւ մատնիկ կապը՛ քնֆկը ճութ, տու՛, իս առնիմ, յամ:

Բահրանն էլ կառնը խընծիւր, մատնիկ, կը տա պառվուն: Պառավ կէրթա թնգանվուրը տուն, վար Ղընդըռան խանըմ տըռան: Ղընդըռան խանըմ քանսուն էօր միւլիւթ ուզիր, մախըր չի տար, չուր Բահրանն գա, խասնը:

Պառավն էլ շատ կը խնդըրվը, կըսը՛ տիւռ պնց:

Ղընդըռան խանըմ կըսը. - Իս պառվուց տիսիր իմ, ալ իս վար պառվուն տիւռ չըմ պաննա:

Պառավն էլ կըսը. - Ղընդըռան խանըմ, դիւ ան քանար կը սիրիս, ինչ գանտն էր, մոտխանսցավ, տիւ տիւռ պաննաս վար ձիկ:

Ան էլ կըսը. - Պառավ, հո՞ւր ը:

Կըսը. - Գի միր տուն:

Կըսը. - Ըսա՛, իս իմ մարգյրտե շապիկյ կը խագըյնիմ, շըրիտ կը կապիմ, ըզծը կը կախիմ տակ փանջարից, գյիշիր՝ սըհնթ վըցին, թըխ գա, ձի կըտորը, առնը, տանը:

Պառավն էլ կիլնը, կը գա, մեկ խատ ֆիսթան կառնը, կը խագըյնը, թանն յագմե՛մ կը թալը վար ուր գյըլխուն, քիչըմ բոյա կառնը, կը տա ուր իրիս, կիլնը, կը գա մա Բահրանն:

Բահրանն կըսը. - Պառավ, Ղընդըռան խանըմ տեսա՞ր:

Պառավ կըսը. - Իս իմ Ղընդըռան խանըմ:

Կըսը. - Պառավ, ըզքյի տը սպանիմ, ի՞նչըխ տիւ յիս Ղընդըռան խանըմ, քիւ անանքիր հանեն թափիր:

Կըսը. - Իմ խերանց խավերուն ձեն արը, իմ անանքիր թափավ:

Կըսը. - Պառավ, յան տիւ Ղընդըռան խանըմի սալախ ձի տը տաս, յան ըզքյի տը սպանիմ:

Պառավն էլ կըսը. - Վու՛ն, գյիշիր՝ սըհնթ վըցին, գինքյ փանջարեն վե տը կախը տակ, գյընա՛, կըտորը՛, տար:

Բահրանն էլ կիլնը, ձին կը խեծնը, կէրթա, կէրթա, փանջարը տակ կը կայնը: Ձիուց կեճնը տակ, ձիու գան կը պըռնը ուր ձեռ, կը կայնը:

Ղընդըռան խանըմ վիրուց գինքյ կը կախը տակ: Կոպ Ռոստամ կը գա, Բահրանը անախ կը տանը, կը քընը, Կոպ Ռոստամ կը գա, կը կըտորը, կը տանը ըզՂընդըռան խանըմ:

Առանվոտուն Բահրանն կանխը, ձիու գան գի ձեռ, նա՛ ձի կա, նա՛ Ղընդըռան խանըմ:

Քնդաքյ կինին, հիտիվ կընկան կան կը գան, կնիկ կորսավ, թնգանվուրը խարս կորսավ:

Բահրանն հիտիվ ուր ձիու դավսին կէրթա, կէրթա Ղընդըռան խանըմու էրկիր, կիլնը տիւս:

Կէրթա, կիլնը պառվու մեհվան: Կը տեսնա՛ նաղարն կը զարկին, կը խաղեն:

Կըսը. - Պառա՛վ, նա՛ ի՞նչ սագ-նանդանն յը:
 Կըսը. - Սի՛վ կապը իմ քուր, օր տա խն Բահրանձին չիրը կայներ փանջարը տակ, օր կըտրեր, ըզկնիկ տաներ: Սի Կոպ Ռոստամ կըտրից, առից, իպի միր թագանվուրը լաճուն:

Կըսը. - Պառա՛վ, տու՛ չըխտ ս'երթա՞ ծիր թագանվուրը մոտ:
 Կըսը. - Պըստըկուց իս անու խացթուխն էր: Թի քյի խըզմաթ կա, կերթամ:

Կըսը. - Գյընա՛, սա՛ ծի՛մ տըվեթյ, գիմ լաճն էլ հուլե խաղա: Պառա՛վն էլ կիլնը, կերթա:
 Թագանվուրին կըսը. - Աստված ծի լաճըմ տվիր: Կը խընդրիմ՝ ծի՛մ տաս, իմ լաճն էլ խեծնը:

Կըսը. - Գանցե՛թյ, բերգյիրըմ տըվեթյ, թախ պառա՛վ տանը ուր լաճուն:

Պառա՛վ ըզծին կառնը, կը պիրը: Բահրանձն էլ բերգյիր կը խեծնը, կը գա՛ թագանվուրը տու: Ինչ ըզբերգյիր տը քըշը, բերգյըրի փուր կառնը գյետին, չըկանա յա:

Բահրանձն էլ կիճնը տակ: Կերթա, փարգյըխը տու կը պանա, կը տեսնա՝ ուր ծի՛ն գի՛ էնտեղ: Ա՛խ կանը: Մեկ Արա՛ք մ'էլ էնտեղ ծիանթյ կը շախը: Էնու փըռծիր կը գա՛ գյետին:

Կըսը. - Յե՛՛, տըղա՛, ի՞նչ ախ արիր: Գյընա՛՛ թագանվուրը տուն, խարսնիս ը, քը խանար խաց կի՛:

Կըսը. - Չի խաց չըպա՛:
 Արա՛ք կըսը. - Նա՛ մարթ ամոթով մարթ մը:
 Կիրիղկը, խաց, կերակուլ կը պիրը էնտեղ: Բահրանձը պերան վե խաց չերթա:

Կըսը. - Է՛յ, մարթ, քու սըռտը խուրիուրթը ի՞նչկ ը, ծի էսա՛:
 Կըսը. - Իս գիմ չըմ կանա ըսի, տու ըզքու՛ն պատմը:
 Արա՛ք կըսը. - Իս ֆըլան թագանվուրը մըշակն էր: Թագանվուրը լաճ էլավ, էկավ Սիվ սար նեծիր: Թագանվուր ծի խտիր խատ ուր լաճուն: Նստանթյ մըջ գանուն, ծով էլավ հանկուծում, իս, անու լաճ վար մեմեկի կորսանթյ:
 Ան էլ հանա՛ կը թըռնը, Արա՛քու գյըլիխ կը պագյընը:
 Կըսը. - Դու իմ խոր Արա՛քն իս:
 Վար մեմեկելի շատ կուրանխանան:
 Էն էլ կըսը. - Արա՛ք, նա՛ իմ կնիկն ը պերած հաստեղ, ի՞նչըխ տը փախցըցիմ:

Արա՛քն էլ կերթա մա՛ Դընդըռան խանըմ, կըսը. - Դընդըռան խանըմ, տու՛ թանթի անիլ՝ որցեղեն տընից չիլնը տու: Տու՛ յէլ առ կընքըտիր, գյընա՛՛ վար բըբըղկուն հախալըրին, լողկանցի՛, Բահրանձ գա՛ անտեղ, ըզքյի առնը, փախնը:

Դընդըռան խանըմն էլ էլավ, դա՛լավ խուս կանչիլ. «Որցեղեն տընեն չիլնը տու, իս էրթամ վար բըբըղկուն հախալըրին, լողկանամ, գամ, իմ մահըր տամ»:

Դընդըռան խանըմ կիլնը, կերթա, Բահրանձ գուր ծի՛ն կը խեծնը, կիճի հիտիվ: Դընդըռան խանըմ կը թալը հիտիվ ուր ծիու՛ն, կը փախնը, ձեն կիճի մա՛ջ կընքըտիրուն՝ Դընդըռան խանըմ տարան:

Չուր քույրա կը գա՛ թագանվուրին, ըզԴընդըռան խանըմ կը փախցըցը, կը տանը: Ասքա՛ր կը տա հիրար, գԱրա՛ք կը խեծըցը վար ծիու՛ն, կը տա հառճիվ:

Կըսը. - Գյընա՛՛ տանցըցու, ա՛ռ, պի՛:

Ասքա՛ր բիթուն կը փախին, կը մընա Արա՛ք մընակ:

Կըսին. - Արա՛ք, տու՛ յէլ տանցի:


Կըսի. - Տու՛ հըմեն խիանաթ եթյ խա՛ թագանվուրին: Իս մընակ տ'երթամ, տը տանցըցիմ, պիրիմ:

Կը գանտանան, Բահրանձ կը տանա վար Արա՛քուն, կառնը գԱրա՛ք, ըզԴընդըռան խանըմ, կը գա՛ ուր խոր էրկիր:

Թագանվուր կը պիրը, ըզպըլանավուրթյիր զըմեն էլ կը թըղնը: Քանսուն տը, քանսուն գյիշիր խարսնիս կը տընը:

Դընդըռան խանըմ թա՛ժա կը փըսակը վար ուր լաճուն:

Ան կը խասի ուր մըրագին, տու՛ յէլ՝ քու՛ն:





22. ԾԱԽՎԱԾ ԵՐԱԶՐ

Մեկ քույրը կհիւնը: Շատ հարուստ կհիւնը: Կհիւնը, ուր մալ կը տա ուր լաճուն:

Կըսը. - Իս կը մեռնիմ, իմ մալ տաս իմ խրոխապերքյորուն, իմ խրոխապոր լաճերուն: Գուրուշնիր չուտիմ, վար քյի ուրախանան, քյեֆ անիմ, ըզքյի անիմ ծաղըր: Վերձ տու կը ծըռիս, սարիր կիմիս, շատ խեղճութիմ կը քաշիս:

Լաճ կը թըղնը, մեկ խորջըն ոսկը կառնը, ուր ծիմ կը խեժնը, կերթա:

Շատ կերթա, ֆըղկարա կհիւնը: Ուր ծիմ կը ծախը, ուր խալալքյիր կը ծախը, զըմեն կանը փարա, կուտը, եխսիր կհիւնը, կիւնը ախշարքյ:

Ձըմեռ կհիւնը, ցուռտ: Կերթա, խըրաքա ճաղացըն կը մընա: Գյիշիր կը կաթը վար գյըլխուն, քաչալ կհիւնը, գյըլխի կը մըրմըռա:

Սորա կըսը. - Իս տ'երթամ ճըրտուն վե, թամիզ ճուր գա վար իմ գյըլխուն:

Էնտեղ երագըն կը տեսնա: Երագի մեչ կը տեսնա՝ լուսնակ կայնած վար ճապ թիվիմ, երկու աստըղ կայնած վար աչ թիվիմ: Երեգակ իրիքյ տիր թամադար կհիւնը:

Իրիքյ տիր էնպես կը տեսնա: Ան էլ կըսը. - Նա ցըռտու մեչ մա ի՞նչ երագ ը՝ իս կը տեսնամ:

Կը մընա չուր խըլխուն:

Կըսը. - Ահո իւնը, չուր մեկ չըսը՝ քու երագ խեր իւնը, իս քըսա չանիմ:

Կիյնը ախշարքյ, կան կը գա: Ուր երագ կը միռնա: Կերթա

մեկ քարի՛մ տակ՝ բառոժ, տեսնա՛ մեկ մարթըմ ան կընարեն կը գա:

Ծառըն քյեշիր մըզղախառ, տըրեր վար ուր ծիուն, կը գա: Գըմեն ճըղեն մեկ առձ կախիր: Ինչ աչկ ինկալ քաչալ, քաչալ շատ վախացալ:

Էլալ, էնտեղեն ըզքաչալ առից, տարալ ուր տուն: քաչալ անութը, անու բոկ էկիր հիրար, ճուր էլ չըկանա խըմը: Էն էլ չայը էպի, էտու, խըմալ, անու բողազ կակղացալ:

Էսաց. - քաչալ, գյիշիր հերկեն ը, մեկ պատմութիմ արա, միմքյ ականջ անիմքյ:

քաչալն էլ էսաց. - Աղա՛, ծենե թու պան չի գա:

Գըտըն տիր փոշմընալ:

Էսաց. - Էս մարթ էս կանդար աղեկութիմ էրաց ծիկ, կերակուլ էտու, մեկ վուչինչ պան ծենե ուզից, իս չըկարցա խեքաթ մաներ անու խամար, գյիշիր վար մի ընցըներ:

Երագ ինկալ միտ հակամըկա:

Էսաց. - Աղա՛, իս երագ մ'իմ տեսիր:

Էսաց. - Աստված խեր անի քու երագ:

Էսաց. - Իս տեսա՛ իս խըրաքա ճաղաց մ'եր, էրագի մեչ տեսա՛ լուսնակ կայնիր վար իմ ճապ թիվիմ, աստղիր՝ վար աչ թիվիմ: Երեգակ իրիքյ տիր թամադար էլալ:

Աղեն էլ էսաց. - Վուր տա անկուն ը, պի՛, քու երագ ծախը:

Էսաց. - Թի կը ծախալը, իս կը ծախիմ:

Էսաց. - Տու ծախը՛, իս կը գյընիմ, քյի ի՞նչ կա խիտ: Իս շատ գանգըն մարթ մ'իմ, էսա գյեղ զըմեն էլ զիմն ը: Թող գան տասերկու կըտուր գյեղ էլ ծի կա: Չի շատ ունիմ, վուչխար շատ ունիմ, ամեն էլ տըվիր իմ քյի, քու երագ տու ծի: Գամա ի՛մեր լալ շախիս, միմչիվ իս կը տաննամ:

Երողկից ըզգյեղի ռես իպը, տերտեր իպը, էսաց. - Միմչիվ մըկա իսն էր ծիր աղեն, մըկա քաչալն ը: Ի՛մալ տըվեր իմ աս քաչալկեն:

Փարջըն ոսկը առից, էթալ վար ծիուն, ըզծիմ խեժալ, գյընաց ախշարքյ:

Շատ կան իրը, ուր ոսկիքյ բիթուն խըլըսալ, ծիմ ծախից, կերալ: Ուր խալալքյիրն էլ ծախից, կերալ, եխսիր էլալ, շատ շիվարացալ:

Գյրնաց հուրուչ քաղաքը, էլնվ տու: Էսաց ինք ուր. «Իս էրթամ քաղաք, թագապուրու քաղաք ը, ծի տը պըռնին, օր տա ծի պըռնին, ալ թըղնիլ չկա, իս անտեր մարթ իմ: Իմ սըլամաթ էն ի՝ իս մընամ մաչ աս գյերեգմընքըյտիրուն չուր խըլըսուն, էրթամ քաղաք, պանհմ, փարա ինը գիմ ձեռ, տամ խացի, ուտիմ»:

Քաղաքն էլ թագապուրին ախչիկըմ կիլնը, վոգըր լաճ գան շատ կուզը:

Ախչիկն էլ ըգվոգըր լաճ շատ կուզը:

Կը գըրուցը խա վոգըր լաճուն. - Սըհաթ վիցին կառնիմ մեկ սիվ ծի, մեկ կարմիր ծի, մեկ սըվտակ ծի, կառնիմ թանգ մալ, ինչ իմ խոր կա, կը խագըյնիմ մարթու խալնավ: Խըդանն էլ կը խագըյնը մարթու խալնավ, կը գանք գյերեգմընքըյտիր: Սըհաթ ինչ կիլնը վից, արի՛, ծի առ, փախը՛:

Էն էլ կիլնը, կը գա, խըդանն էլ կը պիրը խիտ: Սըհաթ կիլնը վից, մաչ գյերեգմընքըյտիրուն կան կը գա: Վոգըր լաճ չըտեսնա:

Կըսը վոգըր լաճ. «Ձանըմ, էս ախչիկ օռոսպը ախչիկ մը, իս չըմ կանա փախըր, օր տա փախըրցիմ, անու խեր թագապուր ը, գիմ վիգ կը կըտըր: Ուր ախչկան պան չանը: Թըխ ախչիկ կան գա ուր խանար, խըլխուն կը գա տուն, էլմեկ իս անու յիմ, ան գիմն ը»:

Ախչիկն էլ խըդանուչ կըսը. - Խիրիտ կան արը, խինք վոգըր լաճ չըպախկըվը գյերեգմընքըյտիր մեջ:

Խըդան կան կը գա, Մահմուդ աղեն կըխը, թագապուրի ախչկան կըսը. - Աղա՛, մեկ մարթըմ գի ըստա՛ յը:

Կըսը. - Պըռնը՛, պի՛:

Խըդան ձեռ կը թալը, Մահմուդ աղը ճիվ կը պըռնը:

Աղեն էնտեղ կը լա: Կը տա մանչ ուր գըլխուն:

Կըսը. - Իս խիղճ մարթ իմ, ի՞նչ տ՛անիս ծի:

Կառնը, կը տանը ըգՄահմուդ:

Թագապուրը ախչիկն էլ կըսը. - Խըդան՛, նա մարթ քանց վոգըր լաճ շատ խիրոտ ը:

Մահմուդ աղը խալնավքիր կը փոխին, աղեն տեսակուն մարթ մը:

Ախչիկ կըսը. - Մահմուդ աղա, իլը՛, փախի՛, յանք Մըսրա քաղաք:

Կիլնը, սիվ ծին կը խեժնը, սըվտակ ծին Մահմուդ աղեն կը խիժնը, կարմիր ծին խըդան կը խեժնը, իրիքըյն էլ կերթան: Կեր-

թան Մըսրա քաղաք, չըն մտնի քաղաք, վար հախպըրին կը նըստին:

Թագապուրը ախչիկ կըսը. - Ըստա՛ Մըսրա քաղաքն ը: Անու սանթանաթ շատ ը: Մի աչկ տ՛իմը հինը, մինք ըգմի տը մուռնանք, մընանք անութը, մի սըլամաթ էն ը՝ մինք նըստինք էսա տիղ՛ վար հախպրին: Խաց ուտինք, ճուր խմինք, նուր էրթանք:

- Մահմուդ աղա, - կըսը, - իլը՛, սըվտակ ծին խեժը՛, խորջըն ոսկը առ խա քի, քու ծին որ կահվը տուռ տանորը, ան կահվեն գըռնա՛: Կահվը չըրաղ քու ծին կը տանը, դուր վե կը տանը, թըխ տանը: Դու ռըհաթ նստի քու տեղ: Վիվ կը գա կահվեն, մեկ խատ չայը տու, վիվ կերթա կահվից, մեկ խատ չայը տու: Ձեռ տու խորջըն, մեկ բեդարը ոսկը լից կահվըչու դագգը վերա: Մեկ լուպ էլ կը տաս կահվը չըրաղին, ինչ քու ծին կը պիրը: Քու ծին խեժը՛, արը՛: Ինչ կը գա, վուրչիկ արը: Էն կահվեն թագապուրական կահվա՛ յը: Գասօր ուրպաթ ը, խոթա կա, խոթից կիլնին, կը գան ան կահվեն, մեմեկի կըսին. «Նա ի՞նչ մարթ էր իրը, նա կանդար չայը իտու մի, նա կանդար ոսկը թափից, ընչի՞ չըսըցինք՝ տու հո՞ւրդուց կը գա, հո՞ւրդե կերթաս»: Չըրաղ կիրողկին հիտիվ քի, կերթաս քու տեղ կը նըստիս, ինչ կանդար չայը կը տան՝ խըմը՛: Մեկ փարա քու ծուցեն մի՛ տա: Կը խարցնին՝ տու ի՞նչ մարթ իս: Դու յէլ ըսա. «Իս գանգըն մարթ մ՛իմ, իկիր իմ Մըսրա քաղաք: Տ՛ու՛մ ծախեցեք, օր տա իս գըռնիմ, իմ տուն պերիմ, նըստիմ հինի»: Կահվըչին կը հիրողկին, մա վի՞ր տուն կա ծախու: Խարիր ոսկը կիլնը, տու էրկու խարիր ոսկը տու՛, առ: Տու՛ն ծախող անու ֆըղկարութեն ուր տուն կը ծախը, չիլնըմ անու հաղկ կըտրիս:

Տան ծախող էկավ կահվեն, վոգըրքիր ըսըցին. - Քու տուն քանի՞մ կը ծախիս:

Տան տեր էսաց. - Խարիր ոսկը:

Վոգըրքիր մեկն էսաց. - Տաս ոսկը իմ խաթըր արա:

Մեկէլ վոգիր էսաց. - Տաս էլ իմ խաթըր արա:

Մընաց սաքըյսան ոսկը:

Տան տեր էսաց. - Թըխ տու գանդտիկ գյեր մա ծի, տուն առներ, վըրե՞ ծի պերիր կահվեն, քըսան ոսկը ծի գարար արըր:

Մահմուդ աղեն էրկու խարիր ոսկը էտու, էսաց. - Տու խեղճ իս:

Ըգտան պանիս առից մոտեն, իտու ըզկահվըչին:

- Էսա տուն վըլա՛, սարսըփի՛:

Կահվըչին գյընաց, տուն վըլաց:

Էսաց. - Մահմուդ աղա, տուն վըլացը, էրթանք, քու տուն առնինք, պերինք:

Մեկ ձին Մահմուդ աղեն խեծավ, մեկ կահվըչին խեծավ, էլան, իկին հախալըրի վերա, օր տա տուն պիրին: Ձատնու կը տեսնա՝ մեկ չաղըր վար հախալըրին գարկած ը: Չաղըր զըմրուք ը, արևու պես կը փելը:

Մահմուդ աղեն կըսը. - Տեր Աստված, նա ի՞նչ չաղըր ը:

Ատ չաղըր թագավուրը չաղըր տի՛լնը:

Դիր կը տաննա, կըսը. - Ջալաբդարու չաղըրն ը, ինչ վուխ-չար ը տարած, ծախած:

Կահվըչին կըսը մաչ ուր մըթկին. «Աս մարթ թագավուրը լաճ ը, աս անու չաղըրն ը»:

Էրկուսն էլ կը գան, վուր տա չաղըր տը ընցընին:

Թագավուրը ախչիկն էլ կըսը. - Խըդան, իլի՛, աչկով արա՛, թըխ գան ըստա, մի ամոթ ը:

Ոսկը աթոռքիր տըրած, էրկուսն էլ կը նըստին վերա: Թագավուրը ախչիկ կը նստը յոթ փարդը հիտիվ: Ուր մարթու խալալքիր կը խանը, ուր կընկան խամը կը խագընը: Էն կանդար խիրոտ կիլնը, օր տա մեկ չամիչ ուտը, անու բուկ վե կերեվա, մեկ ֆընդողկ¹² գարկիս, սաղ կը սիվա:

Մահմուդ աղեն կերթա, կը տեսնա զախչիկ: Խիլք կերթա, իրիք օր կը մընա անկուն: Խըդան կը գա, սեռտ կը մածը, խիլք վերեն կը գա:

Ախչիկ կըսը. - Աղա՛, քանսուն էօր կա, մինք ճամբախ կը գանք, վըրե՞ քու խիլք չըգյընաց, վըրե՞ մըկա գյընաց:

Մահմուդ աղեն էսաց. - Չուր մըկա իս կըսեր՝ տու իմ աղեն իս, իս չըր գյըտե, թի Աստված քի տ՛աներ ձի քըսմաթ, ձի տ՛աներ քի քըսմաթ:

- Մահմուդ աղա, - կըսը, - լա՛գ արա, խացըմ կիր, էրթանք Մըսրա քաղաք, մի ամոթ ը կահվըչու մոտեն:

Խաց պիրին, ինչ կահվըչու աչ ինկավ անու ոսկը գյըտելքիր, յոթ թագավուր էլնեն մեկ, ան էմակ չըն կանա շինե, ինչ

թագավուրը ախչիկ շիներ էր:

Կահվըչին մեկ փըրտուճ էտու պերան, տատրավ: Էլան, ուրինց տուն պարցին, էկան քաղաք: Չորս էօր կը մընա: Մեկ պառավըմ խացե կան կը գա, կը գա Մահմուդ աղը տուն: Խաց կառնը, կիլնը տու: Կերթա թագավուրը հօղեն կը նըստը: Ուր գյըլիխ կը տընը գյետին, ուր ոտնիր ըսկընա կը ցըցը:

Թագավուր կըսը. - Պառավ, ատ ի՞նչ կանիս, մի ամոթ ը:

Պառավ կըսը. - Թագավուր, քու քաղաքի մեչ մեկ մարթ միկիր ը, կնիկըմ կա անու, ինչըխ էրեգակ կը փելը: Յան տու պիրի քի խամար, յա՛ն իս ըզձի տը սպանիմ:

- Պառավ, հասօր գյընա՛, վաղ արի:

- Չէ՛, իլաի, հասօր տիլնը:

Թագավուրն էլ կը հիրողկը անու դիվան-մաջլիս կը ժողվը:

Կըսը. - Պառավ խոսք ի՞նչըխ տը կատարվը:

Վոզիր մ՛ էնտեղ կըսը. - Թագավուր, մի ճամբախըմ կա, իրիք խարիր վաթսուն վից տարի կա՝ մարթ չերթա, գա, կուծուկ ը: Օր տա պացվի, էօրեն իրիք խարիր խագար ոսկը մի օքուտ ը: Գիրողկի, Մահմուդ աղեն պի, էն ճամբախ թախ պանա, չըխ չըկանա, ըզկնիկ ա՛ռ, պի՛ քի:

Թագավուրն էլ կիլնը, մեկ խորջըն ոսկը կը տա վոզըն բախչիչ: Կիլնը, գավթեն կը հիրողկը հիտիվ Մահմուդ աղին:

Կըսը. - Արը՛, թագավուր քի կը կանչը:

Մահմուդ աղեն կիլնը, կը գա:

- Մահմուդ աղա, - կըսը, - ձի ճամբախըմ կա՝ իրիք խարիր վաթսուն վից տարը կա, կուծուկ ը, օր ան ճամբախ պացվը, իրիք խարիր վաթսուն վից խագար ոսկը օքուտ ը իմ քաղաքին էօրա-կան: Գյընա՛, պա՛ց, արը՛:

Մահմուդ աղեն էլ անու կըսը. - Ասքա՛ր տու, իս էրթան, պանան:

Թագավուրն էլ անու կըսը. - Ձի թու ասքար չըկա, կերթաս պանաս՝ պա՛ց, չըս պանա, ըզքու վիզ կը գարկիմ:

Մահմուդ աղեն էլ կիլնը, չորս էօր ավուր մախլաթ կուզը: Կիլնը, կը գա: Կը գա ուր տուն: Շատ մախլաթ կանը, էն կանդար մախլաթ կանը, օր տա լու՛ն լըպըստրա անու իրիսեն, յոթ տիղով վիզ տը կուտըրը: Ձեռ կը տընը ծուց, կը գա մա կնիկ:

¹² Ֆընդողկ. պընթրիկ (Ռշտուհիքուն)՝ մեկ մատի հարված (Ծ.Բ.):

Կնիկ կըսը. - Մահմոնդ աղա, հերեկ տոււ ըզծի առիբ, ի՞նչ շուտ տու ձե՛նե կշտացար:

Կըսը. - Կնիկ, քե՛նե չը՛մ կշտացիր, համա թա՛գա՛վուր ընց-կընա՛ խա՛բարը՛մ տվիր ի:

Կըսը. - Խա՛գա՛ր ափսուս քու մարթութի՛ն, քու կըտըրճութի՛ն, որտա՛ տու գա՛ս Մըսրա քա՛ղաք, նամուս մ'է՛նիս, մաշալա քյի խա՛մար ըսի՛ն: Իլը՛, սըվտակ ձի՛ն խե՛ծը, ըզթուր պըռնը քու ձեռ, գըռնա՛: Մահմոնդ աղա, Աստճու սիրուն իլընը, սարը՛մ կը գա՛ հա՛ռճիվ քյի, տու կա՛հիմ ըզքյի վա՛ր քու ձի՛ուն պըռնը, չինիս տակ: Իրիք տիր տու տ'իլընիս սարը գըռլիս, իրիք տիրն էլ տու տը գա՛ս տակ: Ա՛ն սար օր կա, վիշապ ը, հըտըն տիր կը տա՛ռնաս վերա, վիշապ կը սպանիս, ա՛նու կաշի՛ն կըտրա՛, պի՛: Հա՛մա ինչ կը գա՛ս, ախշար կը կանչը՛ մի խե՛ր սպանող իրը, տու հիտիվ քյի մ'ի-րիշկը՛:

Մահմոնդ աղե՛ն էլ կը գա՛, վիշապ կը սպանը, ա՛րնե խիղիղ կիլընը, Մահմոնդ աղե՛ն կը պիրը վա՛ր ճա՛մբխն: Է՛ն էլ կը գա՛, ուր հիտիվ չիրիշկը:

Ախշար կը կանչին՝ մի խե՛ր սպանող իրը, մի նա՛յար իրը: Հիտիվ չիրիշկը: Սըհաթվա՛՛մ ճա՛մբախ կը գա՛տնանա:

Ախչիկը՛մ կը կանչը. - Աստճու սիրուն, Մահմոնդ աղա, ըզծի նա՛ եխսըրութնից ազատը:

Քյեթր կիրիշկը, կը տեսնա՛ ախչիկը՛մ գի՛ մա՛չ կըպըրն ը: Է՛ն էլ ձեռ կը թա՛լը, զախչիկ կը քյեշը տուս կըպրից:

Թա՛գա՛վուրը ախչիկ դիւրդին կը տըռը: Կըսը. - Խըղա՛՛մ, արը՛, աղե՛ն հա՛վի մ' իպի, քա՛ մի՛ էլ բա՛լա՛ յը: Իս զախչիկ տանի՛մ համա՛մլամիշ անի՛մ, տու Մահմոնդ աղե՛ն տար:

Է՛ն էլ կիլընը, կը գա՛, կը տիսնա կնիկը՛մ գի՛ ա՛նտեղ, կը փելը, թա՛գա՛վուրը ախչիկ ա՛նու սոլ չըկանա տըռը: Խիլը կերթա, կինի գյետին:

Թա՛գա՛վուրը ախչիկ կը գա՛, սեռտ կը մա՛ժը, կը ժըրըցուցը:

Կըսը. - Աստվա՛՛ծ քու տուն ավըր, է՛նա յոթ օր կեր տու ըզծի կը պերեր, քու խիլը չըգըռնա՛ց, հա՛սօ՞ր գըռնա՛ց:

Է՛ն էլ կըսը. - Չուր մըկա իս գըրտեր՝ տու ի՛մոր սիվ ա՛նթա-րուցն էր, իս ի՞նչ գյետեր՝ Աստվա՛՛ծ ձի տ'աներ քյի քըսմա՛թ, քյի տ'աներ ձի քըսմա՛թ, տու ա՛տա՛րգ խորոտ էր:

Մահմոնդ աղե՛ն էլ կիլընը, վիշապը կաշի՛ն կառնը, կը տանը թա՛գա՛վուրը: Է՛ն էլ կիլընը, խորջը՛մ ոսկը կը տա Մահմոնդ աղըն:

Կըսը. - Իս գա՛խ էր՝ մեկ պառվու խա՛բար հա՛պով ըզՄահ-մոնդ աղե՛ն տեր կուրուսցուցիլ:

Է՛ն էլ ուր ոսկըն բուրնը ցըվրից վա՛ր ֆըղկարեքըյտիրուն:

Էսաց. - Քու փարե՛ն խա՛րա՛մ ը:

Իթող, էրի տուն: Պառա՛վ էլմէլ իրի խացե (զղկունն ուտը)¹³, ուր խաց առից, էլա՛վ տուս: Գա՛զը՛մ իտի վըր ուր գըռլխուն, նա՛ֆթ պըռնից ձեռ: Իրը թա՛գա՛վուրը տուն:

Թա՛գա՛վուր էսաց. - Պառա՛վ, ա՛տ քյի ի՞նչ ի էլիր:

Էսաց. - Միռնի՛մ քու արևուն, իս քյի ըսըքի՛ պի Մահմոնդ աղե՛ն կորսըցու, տու հորիկեցիր, կնիկ մ'էլ իպիր ուր, ինչ էրե-գա՛կան պես կը փելը: Տու ի՛մ ռըկուն ա՛տա՛րգ արիր:

Դիրիս է՛ն էլ գա՛գ կը տըռը, նա՛ֆթ տը տա ոռուն:

Թա՛գա՛վուր կըսը. - Ա՛տ պա՛ն չիլընը, տու ի՛մ նամուս կը թափիս: Քյի ի՞նչ կը պը:

Կըսը. - Չի կը պը՝ տու պերիս, ըզՄահմոնդ աղե՛ն սպանիս, ա՛նու էրկու կնիկ պիրիս քյի խա՛մար:

- Պառա՛վ, հա՛սօր չը՛մ կանա, վա՛ղ:

Կըսը. - Չէ՛, իլա՛հի հա՛սօր տ'իլընը:

Կիլընը. - Պառա՛վ, տու գըռնա՛: Քյի դա՛վի չկա, իս կը պերի՛մ, կը սպանի՛մ:

Թա՛գա՛վուր ուր դիվան-մա՛ջլիս կը ժողվը, կըսը. - Մահմոնդ աղե՛ն ի՞նչըլս տը սպանինք, ա՛նա պառվու խնդիրք կատարվը:

Վոզիր կըսը. - Խիվընդը, քըրբիթ պի՛, թա՛լ քու մի՛նդը տակ: Ինկյի վերա: Հորիկի հիտիվ Մահմոնդ աղին, պի՛: Ըսա. «Մահմոնդ աղա, իս կը մեռնի՛մ: Լոխմա հեքյի՛մ էկի վա՛ր ձի, ձի ըսիր՝ ա՛մախութնի խընճուր, ա՛մախութնի ճուր չիլընը, տու չըս ժըրը: Թի օր տու ս'ա՛վա՛տա՛, ինկյի վա՛ր քու կուղիրուն, ըսա՛ ի՛մ կուղիր վա՛ր ձի կը պեկպեկվին»:

Մահմոնդ աղե՛ն էլ կիլընը, կը գա՛, կըսը. - Ութ էօր ձի մի՛հլաթ տու:

Է՛ն կանդա՛ր մա՛հլա՛գա՛ կանը, օր տա՛ լիւն իրիսե՛ն լըպըստ-րա, յոթ տիրո՛վ վիզ տը կուտըր: Կը գա՛ մա՛ թա՛գա՛վուրը ախչիկ:

¹³ Ծ.Ա.

Կըսը. - Տո՛ւ հերեկ քո՛ւ կնիկ պիրիր, ի՞նչ շուտ մընեն կշտա-
ցար:

Կըսը. - Վո՛ւն, իս մընեն չըմ կըշտացիր, հնա՛ն թագավուր
ընցկըննա խաբարըմ տվիր ի ծիկ:

Ան էլ կըսի. - Գյընա՛ մա՛ քո՛ւ թա՛ծա՛ կնիկ, իս քյի թավըլ չըմ
իլնը:

Պըստիկ կնիկ կըսը. - Դո՛ւ հերեկ ըզծի պերիր, ի՞նչ շուտ ծե-
նե կշտացար, ա՛տա՛րզ մահլա՛գա՛ կեմիս:

- Կնի՛կ, - կըսը, - ծի թո՛ւ մահլա՛գա՛ չկա, թագավուր ծի ըսիր՝
անախութնի խընծա՛ւր, անախութնի ծա՛ւր տը պերիս:

Ան էլ կըսը. - Ափսո՛ւս քո՛ւ մարթութին, ինչ տո՛ւ տը գաս,
Մըսրա քաղաքյ նամուս էնիս, ըսին՝ ա՛քարըմ Մահմուդ աղեն,
ընցկըննա մարթ մը: Էլի՛, ըզկարմիր ծին խեծը՛:

Էսաց. - Կարմիր ծին կերթա խա՛ երկնուց, չըվախանաս, չի-
նիս տակ:

Թուխթըմ գյըրից, էտու անու:

Էսաց. - Են թուխթ պըռնը քո՛ւ ծեռ, չինի տակ: Օր տա քո՛ւ
ծեռնեն ինը տակ, տո՛ւ անպատճառ կը միռնըս: Աճուճ-Մաճուճ
կիլնըն, ըզքո՛ւ ծին կը վիրըցին, կը տանին յոթ ծովու կղզին կը
տընին, հա՛լա մը վախաննա: Են կանախըն տի քո՛ւ ծուց: Քո՛ւ ծին
դա՛ւր կը տանին, թախ տանին: Անդե տառըմ կը պանաս, կերթաս
նիրս: Իմ մեր նըստիր էնտիղ, խաց կը թըխը: Գնա՛ ծիծ թախիր վար
աչ թիվին, աչ ծիծ թախիր վար ճա՛պ թիվին: Քան փախեվանի շըրիտ
քա՛շ կերթան անու ծըծիր հետեվանց: Էնու քյինթ քան գալթը
խուփն ը: Իրիթյ հիխկա Վանա ծամուն տըրիր պերան, կը չըվախը-
փացուցը: Աստծու սիրուն իլնը, անու ծըծիր թա՛լ քո՛ւ պերան,
ըզքյի չուտը: Էն էլ կըսը. «Ի՛մ լաճ, տո՛ւ պարոզ էկար, տո՛ւ դո՛ւրն
եր չուր մըկա»: Տո՛ւ յէլ ըսա. «Քո՛ւ ախչիկ մընակ էր, ծի հարիկից,
ըսաց՝ գյընա՛ մատ իմ մեր, խինթյ ի՞նչըխ ը, տարցը, արը»: Էն էլ
տ՛ըսը. «Առե՛քյ, տարե՛քյ խաս բախչեն, թախ ուր խամար կան
գա՛»: Մահմուդ աղա, Աստծու սիրուն, խարոտ կան արը, անա-
խութնի խընծա՛ւր ու ծա՛ւր գո՛ մա՛չ ատ բախչին ը: Խարիր հախար
կա մա՛չ ատ բախչին, խարիր խընծա՛ւրը ծառ կա, հա՛լա անունըյ
չին: Գաղտիկ քիչըմ ճա՛ւր լից քո՛ւ շուշեն, երկու-իրիթյ խընծա՛ւր էլ
տի՛ քո՛ւ ծուց, առ, արը: Հա՛լա Աստծու սիրուն, պառվու լաճիր
չակախին:

Էն էլ էլա՛վ, քիչըմ ճա՛ւր իլից շուշեն վե, իրիթյ խատ խընծա՛ւր
գաղցավ, խտիր ուր ծուց:

Էսաց. - Պառա՛վ, Աստծո՛ւ սիրուն, քո՛ւ ախչիկ մընակ ը, ծի
դաստուր տու, իս էրթամ:

Պառավն էլ խաց էտի հանճիվ անու, կերավ: Ուր ոտ թափ
խու, գանու ծին պիրին:

Ըսաց. - Դե՛, գյընա՛, Աստված քո՛ւ պան հաջողը: Հա՛լա քո՛ւ
հիտիվ միրիչկը:

Իթող, իրը: Իրը կես ճամբսին, մեկ ախչիկըմ էսաց. - Մահ-
մուդ աղա, Աստծո՛ւ սիրուն, ըզծի նա եխսըրութնից ազատը:

Ձեռ էթալ անու փըռչիր, քա՛շից, էթալ վար ծիուն, իրը:
Ախշարըյ կը կանչին՝ մի խեր սպանող պըռնեցե՛քյ:

Իթող, իրը:

Թագավուրը ախչիկ էլմէլ դա՛ւրդին խը:

Էսաց. - Խըղա՛ն, գո՛ հան հա՛վի մ՛էլ խափ, քանձ մի էլ բա՛լա:

Էսաց. - Տո՛ւ ըզՄահմուդ աղեն տա՛ր համամլամի՛շ արա,
մինթյ՝ գանու թա՛ծա՛ կնիկ:

Մահմուդ աղեն իրը, տեսնա ի՞նչ: Էրեգակի բիչիմ կը փելը
մա՛չ երկու կնիկ: Խիլթյ գյընա՛ց:

Թագավուրը ախչիկ սեռտ մաճից, խիլթյ էկավ գյըլիխ:

Էսաց. - Աստված քո՛ւ տուն ավրեր, ան վըռե՞ քո՛ւ խիլթյ
գյընա՛ց:

Էսաց. - Ապա՛ չուր մըկա իս գյըտեր՝ տո՛ւ ի՛մոր անթարուցն
եր, իս ի՞նչ գյըտեր՝ տո՛ւ ըսկում խարոտ էր:

Էլան, խընծա՛ւրըյիր կերան, քյեղվությիր տըվին հինը,
ըսին. - Տա՛ր տու թագավուրին, բալթը ուտը, էլ չըժըրը ուր
ցավուց:

Քիչ մ՛էլ ճա՛ւր տըվին:

Մահմուդ աղեն էլա՛վ, ըզճա՛ւր, ըզխընծա՛ւր առից, էկավ մա՛
թագավուր: Քյեղվությիր քյից մա՛ լըպան, էլա՛վ խընծա՛ւր:

Խընծա՛ւր խու, թագավուր կերավ, ճա՛ւր էլ խու՛ խամալ:
Թագավուր, ուր կնիկ էլան տասնուչուրս տարեկան:

Էսաց. - Մահմուդ աղեն իգյիթ մարթ ը, խորըմ ոսկը տըվեթյ
անու: Գախ էր՝ մինթյ պառվու խաբար անեթյ, անու վիզ կըտ-
րենթյ:

Պառավ էլմէլ էրի խացե: Տեսավ էլան իրիթյ կնիկ, իրիթյն էլ

երեզանկան պես կը փելին: Ըզխաց առից, էլնվ տոնս: Առից քիչըմ աղ, առից տանակըմ, գըրնաց թագավուրը տուն:

Թագավուր էսաց. - Պառա՛վ, անտ ի՞նչ ք:

Էսաց. - Աղ ք:

Էսաց. - Ան ձեռաց ի՞նչ ք:

Էսաց. - Տանակ ք: Յան տու տը պիրիս, իմ սըռտը մըրագ տը կատարիս, յան իս տը պիրիմ, ըզծի տը ճըղիմ, իմ սեռտ լիկ աղ էնիմ:

Էսաց. - Պառա՛վ, ի՞նչ մըրագ ունիս:

Էսաց. - Իմ մըրագ էն ք՝ տու հիրողկիս, ըզՄահմուդ աղեն սպանիս, գանու իրիք կընքոյտիրն էլ առնիս, պերիս քը խանար:

Թագավուրն էլ էլնվ, ուր դիվան-մանչլիս ժողվից:

Էսաց. - Պառվուն խնդիրքըմ կա, պեթկ ք մինք կատան-րինք:

Մեկ աղեկ էսաց, մեկ ավիր էսաց վոզըրքիր:

Մեկ էսաց. - Խնգան ավսուս ան ձեթ, տու կը վանիս դիվնի խանար: Անու քանալ ի՞նչ ք, հիրողկի՛, պի՛, ըսա՛. «Մահմուդ աղա, իս իլիր իմ տասնուչորս տարեկան, զիմ կնիկ իլիր տասնուչորս տարեկան: Մի կը պի՛ մի տունըմ շինիս վան ծովուն: Հառիք՝ առծաթ, պատիր՝ ոսկը, տախտ՝ թըզե, տըսվերկու փանջարն հինը իլնը: Հըմեն փանջարեն երեզանկան շուղ կաթը տակ: Օր տա մինքը երթանքը հինը, ուրնախութին էնինքը»:

Հիրողկից հիտիվ Մահմուդ աղին, թագավուրը ախչիկ էլնվ, գավթին էսաց. - Չանըմի՛, քու խերն էլ անըծած, քու թագավուրին էլ խիտ: Հըմեն տիր արը՝ թագավուր կը կանչը: Վըրե մինքը սավա տըղա՞ յինքը: Թագավուրը սարից մինչիվ իմ տուն թախթըփուշ փըռը, անքաթեք, սելիր, ֆուռկունքըյտիր տու հիրար, բութուն ոսկը, անքար մուզուկով, չալկով տու հիտիվ քի, հանա հըմեն ան վոզըր քըսու:

Չավթեն էլնվ, իրը թագավուրը մոտ, էսաց. - Վոլն՛, Մահմուդ աղի կնիկ ձի սըքըյտիր էրաց, անկնա էսաց՝ հըմեն էլ վոզըր քըսու:

Թագավուրն էլ ուր դիվան բահրավից, թի նա մարթ պիրինքը վի՞գ գանինքը, ի՞նչըխ էնինքը:

Էն էլ էսաց. - Ինչ պան կա, ձի խոսք արավ: Մըկա յէլ վոզըր քըսու պատրաստի, հիրողկի հիտիվ անու, ա՛ռ, պի՛:

Վոզիր էլնվ, երկու ամիս ուր ինչ կա, չըկա, ծախից, խավիրն էլ ծախից, ջիրով պատրաստից: Մահմուդ աղեն խըլխուն էլնվ վիր, տեսավ խինքը գի մուզուկի ձեմ կը գա, անքար պարիվ պըռ-նիր, տանտիր Մահմուդ աղի հիվով:

Էլնվ, նըստավ փայթուն, էկավ թագավուրը տուն:

Էսաց. - Մահմուդ աղա, ձի կըպը տու տու՛մ շինիս ման ծովուն, հառիք՝ առծաթ, պատիր՝ ոսկը, տախտ՝ թըզե, տըսվերկու փանջարն թըղնիս հինը, հըմեն փանջարեն վե շուղ կաթը տակ:

Մահմուդ աղեն էլ էսաց. - Քանսուն էոր ձի միհլան տու:

Էսաց. - Հայրե՛, քանսուն էոր քի միհլան:

Մաղղեն արիր, թագավուրը ախչիկ էսաց. - Տու հերեկ քու կնիկ պերիր, ան վըրե՞ ըզքու մաղղեն երեր իս:

Էսաց. - Կնիկ, ի՞նչ տանիմ, քանսուն էոր միհլան ուզիր իմ, օր վըր ծովուն տուն շինիմ:

Էսաց. - Իս չըմ խառվը, գըրնա՛ մա քու միծին կնիկ:

Միծնիկ կնիկ էսաց. - Իս չըմ խառվը, գըրնա՛ մա քու պըստիկ կնիկ:

Պըստիկ կնիկ էսաց. - Մահմուդ աղա, տու հերեկ ըզծի առիր, ի՞նչ շուտ ձեմե կշտացար:

Էսաց. - Կնիկ, թագավուր ձեմե քոշկ մը ուզի վըր ծովուն շինիմ: Քանսուն էոր միհլան իմ ուզիր:

Էսաց. - Քու տուն նակոլը, մանախ մանը, անտիկ սըհան ք:

Մնաց թի քըսան էոր, թի եռսուն ու հին էոր:

Մարթըմ կերթա, թագավուրին կըսը. - Իս հասօր Մահմուդ աղեն տիսիր իմ:

Թագավուրն էլ շատ կուրախանա: Իրիքը կնիկ կը նըստին վար խացին, կը լան, անունց արտըսունքը կիլնը ժահիր:

Պատիկ կնիկ կը ծըծղա: Էն էլ կըսը. - Կնիկ, ան վըրե՞ կը ծըծղա:

Կնիկ կը ծըծղա, էն էլ կը ոըկի, փետըմ կաննի տըփիլու, կնիկ կիլնը եղվընիկ, կը թըռնի, կերթա փանջարեն վե:

Սըհան վըրցին կը տաննա գա կնիկ, նստի վար ուր խացին, էլմէլ կը ծըծղա:

Թագավուրը ախչիկ Մահմուդ աղին կըսը. - Քու թագավուրին կնիկ ա՛ռ, տար հողեն, անու քեթ պի, ըսա՛ մըհա ի՞նչ տըլնը միր հալ, մի քոշկ տը շինվը՞, ի՞նչըխ տըլնը:

Էն էլ կըսը. - Առ, նա մատնիկ մըտու քու մատ, էրկու սըհաթ մընացիր՝ չուր լիւսնա: Գըննա՛ ծովու պերան, ոսկը աթոռ տըրած, նըստի՛ վերա, քու նարգյուլեն ֆըռֆըռուց տի հինի, քի լաղի չկա: Քոչկ շինվիր ը: Թագավուր կիլնը, կը գա, հեռծիվ թագավուրին չըկայնիս:

Թագավուր էլավ, վիրուց էրը, էսաց. - Աստծու սիրուն էլնը, ֆաղկիր մարթ շատ կա մաչ քոչկին, թախ տաննան, նուր մատ-նըկը ալ լիզը:

Ըզմատնիկ լիզըց: Խանան էլնը՝ նա քոչկ կա, ուր տակնա աթոռ, թագավուր անքյըրով, պառվով, վոզրով կորսավ:

Դավլաթ կուշին թըղին, իրի վար Մահմուդ աղի գըլխուն: Արին թագավուր ուրինց խանար:

Մահմուդ աղեն հիրաղկից, ուր մեր, ուր քաջալիկ առից, իպի երկրեն:

էսաց. - Պառա՛վ, նա՞ լաճ քի շատ կը շախեր, թի՞ հանաճ-վան լաճ:

էսաց. - Թագավուր, էսա լաճ քանց իմ լաճ խորոտ կը շախեր:

Կնիկըմ տանտրի նա թիվի վերա, մեկ նա թիվի վերա:

էսաց. - Ճուրըմ տա՛ւ, իս խմիմ:

Իրիք տիր թանանդար էլավ, նուր էտու ծեռ:

էսաց. - Խացըմ պի՛, իս ուտիմ:


Իրիք տիր թանանդա էլավ, նուր խաց իտիր հանծիվ:

էսաց. - Էսիկ իմ էրագն ը:

Յըտըն տըրու՛ն էսաց. - Տու իմ ախպեր Մահմուդ աղե՞ն իս:

էսաց. - Խա՛:

Նուր անունըք խասան ուրինց մըրագին, տու յէ՛ քու՛ն:



23. ՄԻՆԲՅ ՎԸՁԵՆ ԿԱԽԱԾԸ

Մեկ մարթըմ շատ շիվար կիլնը: Որթկարած ը, հըմեն հեվա-րին կը գա, ուր խաց կառնը, կուտը:

Ան մեկ էոր կերթա տաշտ, կըսը. - Վու՛ա, իս տուն տը շինիմ ձի խանար:

Փետ կը տա, ինչ խուղ կը փուրը, գուգու՛մըմ ոսկը կը թըռնը տուս:

Ան էլ կիլնը, կը գա մատ գյեղի ռես, կըսը. - Իլի՛ յանքյ, գու-գու՛մըմ ոսկը կընդիր իմ, արը՛ էրթանքյ, խանիքյ, իս մընակ չըմ կանա:

Ան էլ կըսը. - Գըննա՛, տու մընակ խան, տու խիղճ իս, քու իդարեն խան:

Անդուցա կըլնի, յա մա գյեղի գըրգիր, կըսը. - Աստծու սի-րուն ըլնը, արը՛ յանքյ, գուգու՛մըմ ոսկը խանիքյ, պերիքյ, կես՛ ձի, կես՛ քի:

Գըրգիր կըսը. - Գըննա՛, ֆըղկարա՛, խան քի մընակ, իս չըմ ուտի քու մալ:

Ան էլ կիլնը, կերթա մա գյեղին, մա որ մարթ կերթա, կըսը. - Գըննա՛, տու մընակ խան քի խանար, տու խիղճ իս:

Ան էլ կիլնը, կը գա մա տերտեր:

Կըսը. - Տերտեր, գուգու՛մըմ ոսկը յիմ կընդի տեղըմ, արը՛ խանիքյ, կես՛ ձի, կես՛ քի:

Տերտերն էլ կըսը. - Օրշնա՛ծ, դե ա՛րը յանքյ տուն:

Առից, իպը տուն, էսաց. - Կնի՛կ, պախ, փետատ տու՛, յանքյ ոսկիքյ խանիքյ, պերիքյ:

Էն էլ կիւնը, կերթա, գիւզիւն ոսկիքը կը խանը, կառնը կը տա շիվար մարթիւ քանակ, կը պիրը տուն:

Կըսը. — Կնի'կ, տիւն շինը:

Շիվար մարթիւն կըսը. — Նա գյետին խուրըն փուրը:

Մարթ ըգխուր կը փուրը: Ան էլ կը պիրը, գանձան կը մըտուցը շիվար մարթիւ փուր հինը, ըզշիվար վարթ կը սպանը, կը թալը խուր վե, խուղ կը տա վերա:

Շիվար մարթ կը կորսը: Գյեղի ռես գյըտի, թի տերտեր գան կորսըցըցիր:

Ան էլ կըսը. — Ահո իւնը, իս հիտիվ ան իրիցուն ժան չերթամ, խաչ չըխանիմ իմ իրիս:

Յոթ տարը ուր տուն վե խաչ կը խանը, ժան չերթա: Ինչ յոթ տարը կը թունմը, մարթըն կը գա միտ, կըսը. — Ռես, արը, երթանըյ ժան:

Ռես կըսը. — Անկարելի' յը, իս չըն իգան ժան, իս իմ տուն հինը խաչ կը խանիմ, վըրե՞ կը գան ժան:

Մարթ շատ հիվը կանը, կըսը. — Արը երթանըյ հանա վար ժանտան տըռան, մը մըտնը նիրս:


Ռես կիւնը, կերթա խիտ, կը տեսնա՝ տերտեր ընցիր հեռճիվ գյեղանկընին, կը գան ժան:

Մարթն էլ ռեսին կըսը. — Իրիչի՛, թաննչան՛ արա:

Տեսավ, տերտեր ինչ տը մըտներ ժանտուն, սիվ էօցըն իրիցու վըզեն հարցըկվավ, զինք իտու տըռան սարդար: Տերտեր մըտավ ժանտուն: Ան մարթ, ռեսն էլ կայնան թաննչան կանին: Տեսավ՝ ժան էլավ: Ան սիվ էօց էլմէլ հարցըկվավ, իրի, զինք էգար իրիցու վզի պիւր: Ձիրիցու վիզ կըքից:

Մարթ ռեսին էսաց. — Կը տեսնա՞ս: Ան սիվ էօց օր կա, ան իրիցու միխքն ը: Չըմտավ ժանտուն, մըռաց տուս, մեմեկ ուր միխք ուր վըզեն կախած ը: Տու ժանտընեն վըրե՞ կը ռըկիս, ժանտուն օր կա, Աստու տուն ը:

Նուր ռես թոքա արավ, իրի ուր ժան:



24. ՅԱՐԵՐԻ ԱՐԿԱՃՆԵՐ

Կիւնը մեկ պառավըն, ուր երկու լաճ, երկու խարս: Պառվու մեկ լաճ կերթա Ստանբիլ:

Ան մեկ խարս շատ կուզը պառավ, գան մեկ չուզը: Կուզը ըգխարս տա կորսըցիլ: Գյիշիր-ցերեկ ըգխարս կը տըփը:

Ան մեկ էօր կըսը. — Խարսի'կ, իս կերթամ ճըրիւ, փեթաքըն կուրիկ գի շուռ կը տամ մանչ հօղին, հանա չուր իս գան, մեկ խատ չըթըղնիս, հըմեն քանիս, լըցիս ուր տեղ: Որտա մեկ մըռա, գան ըգքի ըսպանիմ:

Խարսն էլ շատ կը լա: Անու տալվ կը գա միտ, կըսը. — Ախչը՛, վըրե՞ ընցկընա կը լան:

Կըսը. — Ապա իմ կիսուր կըսը՝ նա կուրիկ զըմեն ժողվը: Մեկ խատ գյետին մըռա, իս գան, ըգքի տը սպանիմ:

Տեգյերկնիկն էլ կը գա, մե մեկ քանտ'մ կը պըռնին անունց ձեռ, ըգկուրիկ հըմեն կը լըցին փեթաքը:

Տեգյերկնիկ կըսը. — Իս տ'իյամ, իմ լաճ կը լա, նա մըռացած զըմեն ժողվիս:

Տեգյերկնիկ կերթա տուն, կըխը պառավ հախալըրեն կը գա:

Ան էլ հանա լաճ կը գա մատ խարս, կըսը. — Աստու սիրուն ըլնը, քիւ կիսուր իրը, մեկ-մեկ տու չուր յի՞փ տը ժողվիս:

Տիւն կը պանա, խավիր կը թըղնի վերա, մեկ խատ ի՞նչ ը՛ խավիր չըն թըղնի գյետին:

Պառավ կը գա, կը տեսնա՝ մեկ խատ չըկա գյետին, կըսը. — Յան՛ սիվ կապիս, նա քիւ քանանաք չը, քի տան տըվող կա:

Պառազն էլ կը որկը, թուխթըն կորոզկը ուր լաճուն, կըսը.
«Արը՛, ալ իս չըն կանա խա քու կընկան ընցըցը: Քու կնիկ անց-
կուն օռոսպը իլիր, ալ թու երկիր անցկընա չըկա»:

Լաճն էլ հանա կիլնը, Ստանբուլա կը գա: Ինչ ան կը գա
տուն, լաճու կնիկ լալեկն կը գա մա տեգյերկնիկ:

Տեգյերկնիկ կըսը. – Վըրե՞ կը լա:

Կըսը. – Վուլա՛, իմ իրիկ իրը, պառազն ծի տը տա սպանիլ:

Տեգյերկնիկ հանա կը գա մա տեգյըր:

Կըսը. – Վըրե՞ քու կնիկ կը տըրփիս: Քու կնիկ օռոսպը չը,
պառազնու աչկ բահըր չըպընը, իրիկ կը պը անու:

Մընաց չուր հեվարին, լաճ կորոզկը, մեր կը պիրը:

Կըսը. – Պառազն, տու ի՞նչ կուզիս խարսնիրուց:

Պառազն կըսը. – Ձա չէ՛, տու քու կնիկ առ, պառկը հանդե,
ան ուր կնիկ առնը պառկը հանդե, իս խիղճ, շեվար, անիրիկ
պառկիմ հըստա:

- Պառազն, չէ՞ տու պանվանցիր իս, քու անանքյիր թափիր ը,
ալ տու իրիկ ի՞նչ տ'անիս:

Պառազն էլ կըսը. – Յան տու ըզձը տը տաս իրկան, յա՛ն իս
կաքուլ չըն անը:

- Պառազն, մարթ ըզքյի չառնը, Աստճու սիրուն ըլնը:

- Չէ՛, իլահ, տու ըզձը տը տաս իրկան:

Ան էլ կը նահլանքանա, կիլնը, ըզպառազն կը տընը մաչ կող-
վին, կը շըլկը, կը տանը սար վե, կը թըղըն հանդե, կը գա:

Յեվար կը տա վերա: Պառազն կիրիշը՝ մարթ չկա:

Կըսը. – Տե՛ր Աստված, ապա նա խելի մարթիր չիկին, յի՞փ
տը գան, ըզձը տանին:

Կը տեսնա՛ երկու-իրիքյ գյել հան կընարեն կը գան: Գյե-
լիրու աչկիր կը պըսան, անու մըտովկեն՝ մու՛ն ին:

Ան էլ կիլնը, կը կայնը, ուր կապեն կը խանը, կը պըռնը ծեռ:

Կըսը. – Իկին, իկին մու՛նդանքըյտերով, իկին, իկին շան-
դանքըյտերով:

Գյելիր կը գան, կը խասնին թախ պառազն, թուշ կը գարկին
պառվու ճուռ:

Պառազն կըսը. – Խոգյիս, կըծիկ-մըծիկ մ'անե՛ք, պաճիկ-մա-
ճիկ արե՛ք¹⁴:

¹⁴ Կծիկ-մծիկ մանեք, պաճիկ-մաճիկ արեք- մի խածնեք, պագեցեք (Ծ. Բ.):

Ըզպառազն կը փուռթըկին, կուտին:

Կը մընա անանվոտան, լաճ կըսը. – Մըհա երթամ սար, իմ
մեր ի՞նչըլիս էլավ:

Կը գա, կը տեսնա՛ պառազն չըկա: Յիտիվ կան կը գա, չը-
տեսնա պառազն: Լաճ լալեկն կերթա գյեղը: Կը տեսնա պառա-
զնը նստիր հանդե:

Կըսը. – Պառազն, ծի մերըն կեր, սար վե իրիկ արավ:

Պառազն կըսը. – Խոգյիս, թի սար վե յը, անիկ գյելիրն ը
կերած:

Լաճն էլ կըսը. – Իս ի մոր սալըխ առը, ջահնան, ալ իմ սեռա
չըմնա խիտ:

Լաճ կիլնը, կը գա տուն: Լաճուն ախպերագյիրըն կըլնի:
Ախպիր աչկն էլ վա՛ր լաճու կընկան կիլնը:

Ուր կընկան կըսը. – Գյընա՛, իմ ախպիր կնիկ պի՛ մի տուն
մեհվան:

Կնիկ կերթա, կը կանչի, կը գա ուր տուն մեհվան:

Կընկան կըսը. – Ճա՛շ իփը:

Ան մարթուն էլ կատու՛ն կիլնը:

Կատուն ուր խանըմուն կըսը. – Տու հիրոզկիցիր, նա կնիկ
պիրիր, նա կնիկ տ'իլնը քու գյըլխուն գանվանիկ:

Ճաշ կը տընը հիռճիվ, խարս ճաշ կուտը, կը պըռճընը:
Մարթն կը կանչը, կը տանը ուր հողեն, կըսը. – Խարսնիկ, իս
ըզքյի կուզիմ:

Կնիկն էլ կըսը. – Իմ իրիկ, տու ախպեր եք:

Կըսը. – Ախպեր չըխո գախպիր խեր կը քունը:

Կնիկ կըսը. – Խարիր տարը մընա, իս ան բերախտութին չըն
անի խաա իմ իրկան:

Մարթ չկանա պա մ՛ անը: Կնիկ կիլնը, լալեկն կը գա տուն:

Տեգյերկնիկ կըսը. – Վըրե՞ կը լա:

Կըսը. – Իմ իրկան ախպեր ծի կըսը՝ իլահ, քը կուզիմ:

Տեգյերկնիկ կըսը. – Տու նըստը՛ ըստա՛, իս լա՛զ երթամ մատ
են մարթ:

Կնիկ էլավ, ըզտեգյերկընկան խալավ խագավ, լա՛զ գյընաց:
Կը տեսնա՛ մարթու կնիկ կերթա ճըրու:

Կըսը. – Ախչը՛, քու իրիկ գո տո՛ւն ը:

Կըսը. – Իմ իրիկ գո տուն ը, ճաշ կուտը:

Կատուն հանեծուց համա վնգկից, իրի մա կնիկ, էսաց. — Շոտ տարցը իրի, նա կնիկ ըգքի տը տա կորսըցըցիլ:

Կնիկ գընաց, խասավ խատ մարթ, գըտել ձեռնեն խըլից:

Մարթ էսաց. — Կնիկ, ընցկընեմ ժամանակ իմ կնիկ չկարցիր իմ գըտել իմ ձեռնեն խըլեր, տու վըրե՞ խըլցիր:

Էսաց. — Խոգիս, խիղճ կնիկ ինկյիր քու ձեռ, իս քու տեղ էլներ, անու ձեռաց կոքոյվն էլ չըր ուտե, խարամ ը:

Էսաց. — Ի՞նչըխ անիմ:

Էսաց. — Պի՛, քու կնիկ տու կորսըցըցիլ: Իս էլ իմ իրիկ տամ սպանիլ, ուտինք, խըմինք, մի քեֆ անինք: Ինկինք իրիկ, կնիկ:

Էսաց. — Իմ կնիկ շեվար կնիկ մը:

Էսաց. — Քու կընկան յար կա, տու չըս գըտը: Ինչ տու կը քընիս, կաստով սուք քուն իլի մընա:

Ան էլ գիշիր սուք քուն կը տընը վար ուր, կը տեսնա՝ կնիկ ձեռ կը տա գըլիխ, հիրար կը տա, գի իրիկ քընիր ը:

Կըսը. — Ախե՛շ, իմ իրիկ քընիր ը, իս տ՛ընիմ, յամ:

Կիլնը, ուր սընդուկ կը պանա: Ուր աղեկ խալավքիր կը խագընը, միամիտ ձեռ կը տա հոդի՛մ, տու կը պանա մաչ ուր տան:

Իրիկն էլ գանդտիկ կիլնը, մուք հինի, կիլնի հիտիվ կընկան: Կը յա, կը մըտնը դուլար վե, զինք կը պանդըվացը:

Կնիկ ձեռ կը տա ներքին դըփը պերան, կը վըրցը, խուրըմ կա հանդե. ան էլ կը մտնը հանդվե: Մարթն էլ կերթա գանդտիկ հիտիվ: Կը տեսնա՝ ան կընարեն տուըմ կը պանգվը, արարըմ կը գա:

Էն կնիկ մե մեկ կը գըլըկին, կերթան հոդեն: Իրիկն էլ էնտեղ թանաչա կանը:

Կնիկ կըսը. — Արա՛բ, իմ իրիկ վար ձի կնիկ էլ կանը:

Արա՛բ կըսը. — Օր քու իրիկ անարգ բերախտ ը, թի կուգիս, ըգքու իրիկ սպանիմ:

Կնիկ կըսը. — Ձի կատու՛ն կա, համեն խըլխուսն կը գա, կինի իմ վուտքիր, կը նըվա, կըսը՝ քու իրիկ ըգքը տը սպանը:

Արա՛բ կըսը. — Իս գան կը սպանիմ, վըրե՞ ան ըգքի սպանը:

Մարթ համա կը վախանա, գանդտիկ կիլնը, կը գա ուր տեղ, կը պառկը: Կըսը. «Ահո՛ իլնը, ալ իս հուրուշ կնիկ չըպընիմ ձի յար, քանը օր իմ սեռտ վար իմ կընկան մըրմուսաց: Օր տա իմ կնիկ

շեվար էր, անու տակ նատարգ պանիր կա, չըխ իմ կնիկ ձի ոչ չըկըտըրը»:

Մարթ կիլնը, կըսկըծու ըգկատուն կը սպանը:

Կնիկ կը գա, կիրիշը՝ կատուն սպանած, թալած հանդե:

Ան էլ կերթա մատ արա՛բ, կըսը. — Հասօր գիշիր արը՝ խատ իմ իրիկ: Ի՞նչըխ ան իմ կատուն սպանիր, տու յէլ գան սպանը:

Իրիկ կը մընա հաշար, կնիկ կը քընը: Ան էլ ուր կընկան խանըլ կը խագընը, կիլնը, կերթա մատ արա՛բ: Երթալու պես, չէ՞ սուվորի, գիհին կը լըցը, կը տա արա՛բու ձեռ:

Արա՛բ անցկուն կը խըմը, հաշ կերթա, ան էլ կը գարկը, գարա՛բ կը սպանը: Կիլնը, կը գա, կիրիշը՝ կնիկ քընուկ ը:

Կըսի. — Կնիկ, իլի՛ յանք նա հոդեն վե, ձի խըզմա՛ք կա խա քի:

Հօղը տու կը պանա, կնիկ կը տանը հոդեն վե:

Կըսը. — Կնիկ, ալ մա նա հոդին հուրուշ տու կա՞, թի՞ չէ:

Կնիկ հերտու կանը, կըսը. — Թու տու չկա:

Ան էլ համա դըփ կը վիրուցը, խուրու պերան կը տեսնա: Ինչ խուրու պերան կը պանա, կընկան կըսը. — Գընա՛ խուր վե:

Կնիկ կըսը. — Վուլա՛, իս չըմ գըտը ճամբա՛խ, տու յէլ արը խա ձի:

Ձիրիկ կը տանը, կըսը. — Դե՛, տու կաց նա դուլար վե:

Ան էլ կերթա մատ արա՛բ, կը տեսնա՝ գարա՛բ սպանած:

Համա կնիկ ուր տեղ հինը կը կըծա, մարթ կըսը. — Կնիկ, ատ ի՞նչ էլավ:

Կըսը. — Աստված քու տուն ավըր, վուլա՛, զիմ արա՛բ սպանած ին:

— Կնիկ, չուր մըկա տու հերտու կաներ, կըսեր՝ ձի յար չըկա:

Կնիկ կըսը. — Թու ծառ չըկա՛ ինչ քանը չառնը:

Լալեկեն զինք կը թալը իրկան փողպատ:

Կըսը. — Կնիկ, շա՞տ անուշ ը յար պըռնիլ:

Կըսը. — Ահո՛ իլնը, ալ իս թոչար յար չըպըռնիմ: Իս չըր գըտե ախշար անցկընա բերախտուրին կեր:

Մարթն էլ համա լա՛գ կը գա մա պառվու խարս:

Պառվու խարսին կըսը. — Արը՛, տու կըսեր՝ քու կընկան յար կա, իս չըր ավատե:

Պառվու խարսն էլ կիլնը, կը գա՛ մարթաւ տուն: Կը պառկը խատ ան մարթաւ կըշտին գիշիր: Անու կնիկ կակախը, կը քըս-քըսվը, կիրիցը:

Կըսը. – Եանաթ գա՛ն էլ կա՞ մարթ գա՛, պառկի իմ իրկան ծուց:

Կնիկ կը պըտպըտա վա՛ր իրկան, կըսը. – Քյաֆըր կնիկ, իս քանձ ան անաթ չըր իլնը, տա՛ւ կերթեր, կուղ կըլներ անու կուշտ:

Կնիկն էլ հանա՛ կը վազկը մա՛ պառվու լաճ, կըսը. – Վուլա՛, քա՛ւ կնիկ գո՛ մատ իմ իրիկն ը: Աստժու սիրուն, դա՛լիլըմ տիսի:

Մարթն էլ կիլնը, կը վազկը, կը գա՛, կնիկ գան կը պախը դո՛-լաթ վե: Կը տեսնա՛ հիրիկուն անու կնիկ կը գա՛, պառկը ախաթր ծուց: Ան էլ հանա՛ նիտ-անեղ կը գա՛րկը, գուր կնիկ կը սպանը:

Մարթ կակախը, կիրիշը՝ յար խա՛ կըշտին սպանուկ ը:

Կըսը. – Ահո՛ իլնը, վա՛ր պառվու խարսին վե, ա՛լ իս քա՛ւ յար չըպըռնիմ:

Պառվու լաճն էլ կիլնը, կը գա՛ տուն:

- Է՛, – կըսը, – իմ ձեռ կուտրեր, իս իմ կնիկ չըսպաներ, իս իմ ախաթեր սպաներ:

Կիլնը, լա՛զ կիրիղկը հիտիվ ուր ախաթը կընկան, կըսը. – Ախաթըր կնիկ, իս իմ կնիկ սպանիցը, հանա՛ փոշընա իմ սպանիլ: Խոզկե իս իմ ախաթըրա՛գիրն էր սպանի, ո՛նչ իմ կնիկ:

Ան էլ կըսը. – Օր տա քյի կը պը, իս կանամ գան տամ սպանիլ:

Յանա՛ լա՛զ ուր սուս կը տա, կիլնը, կերթա մատ ան մարթ:

Ախաթը կը տեսնա՛ պառվու մեկէլ խարս իրի:

Ան մարթուն կըսը. – Արը՛ յանքյ մի տուն, ձի խըզմաթ կա խա՛ քյի:

Կը պիրը, կը մըտուցը քոներ վե: Ան էլ հանա՛ կաշի՛մ կը թա՛-լը վա՛ր քորվան պերնին:

Տըրկըցը կընքըյտիր տը գան տուն, կնիկ կըսը. – Ալա՛հ վոք-յիլ, տը տեսնան, կըսին՝ նա՛ կընկան յար կա:

Ան էլ կիլնը, աղու՛մ կուտ կը թա՛լը վա՛ր քորվան կաշուն, խավիր կը թըղնի վերա:

Թըփըրփուց կը գա՛:

Լաճ քոներ վե կըսը. – Աստժու՛ սիրուն, նա՛ ի՞նչ ձեռ ը կը գա՛:

Կըսը. – Խա՛րա՛ր մի՛ տա, խավե խեծիլ, իլի՛, գա՛խն ը՛ ախ-չար ավրը, կա՛ց քա՛ւ տեղ, հիրար մ՛առնի:

Չան կը թըղնը քոներ վե, կը վազկը մա՛ տեգյըր:

Կըսը. – Դե արը՛, գո՛ քոներ վե, գա՛ր, սպանը՛, մոտեն ագա՛տվը:

Ան էլ կը գա՛րկը, գախաթը մա՛ քորվան կը սպանը:

Տըրկըցտիր կակախին, կը գան, կըսին. – Կնի՛կ, նա՛ ի՞նչ մարթ էր՝ սպանըցիք: Մինքյ մըկա տ՛իյանք, Ամբըրին խա՛րա՛ր տանք:

Կերթան, Ամբըրին խա՛րա՛ր կը տան, կըսին. – Մարթըմ պիրի, ուր տուն հինի սպանիր:

Ամբըրեն կը տանի, կըսը. – Վըրե՞ նա՛ մարթ մա՛ տան սպա-նիցիք:

Կնիկն էլ Ամբըրին կըսը. – Ան տարըն նա՛ մարթ սպանվիր, ինչ խավե խեծիլ էլա՛վ:

Ամբըրեն կը մընա շեվար:

Կըսը. – Իս գըլտի՞մ՝ խավե խեծիլ հի՞փն ը իլիր, օր անցկուն ը, խին ը:

Կըսը. – Խին խաշիվ ը: Գընա՛ քա՛ւ տուն:

Տըռան տըրկիցն էլ կըսը. – Օր տա նա՛ մարթ կորսավ, իսն էլ գա՛ղութին տ՛անիմ, Ամբըրեն պան չկանա խապաթ անի վա՛ր ձը:

Կերթա, հանա՛ գա՛ղտիկ մաքյի կը պիրի, ինքյ, ուր կնիկ կը գենին, կուտին:

Պառվու լաճն էլ գործվոր կիլնը:

Պառվու խարս կը գա՛ մատ ուր իրիկ, կըսը. – Աստված քը տո՛ւն ավրը, մինքյ գործ անելով չընքյ կա՛րը շախվը: Խի՞ս՝ նա՛ տըրկըցը մարթ կերթա, մաքյի կը պիրը, կը կըտըռտին, կանին խուրուվու, քյեֆ կանին:

Ան էլ մըքիւք կը թա՛լը, կըսը. – Տա՛լ չակախած, տա՛լ չակախած:

Կը մընա տըրըմ, էրկու: Կնիկ կիլնը, կերթա հախաթըր ճըրու, կը տեսնա՛ գա՛վթեքյ բահրա՛ված վա՛ր մարթա՛ւ տըռան, գտըրկից պըռնած կը տանին, կախին: Ան էլ էլա՛վ, հանա՛ լա՛զ իրի տուն:

Էսաց. – Իրիկ, էն աղեկ տու չը գա՛ցիր, գա՛ղութին չարիր: Վուլա՛, մի տըրկից պըռնած, կը տանին կախին:

Ան էլ մըքուքը կը թաւը, կըսը. – Պիրիս անկախած, դիրիս անկախած:

Կը մընա, մա գյեղին խարսնիսըմ կիւնը: Պառվու լաճն էլ կը կանչին խարսնիս:

Պառվու լաճ ինչ կերթա, կը նըստըցցին սըրախ՝ վար պաղ թորվան: Հանա մեկ-մեկ կըրակ կը կընդըվը թուներ վե, հանա գա չէ:

Կը տեսնա՝ կը գարկին, կը խաղան: Ախքատ մարթ մ'էլ կը պիրին, կը տընին խատ պառվու լաճուն, վար թորվան:

Փեսի քուր կըսը. – Վոլա՛, իս տ'էլնիմ, էրթամ, մա էրկու ֆըղ-կարեն թաղկիմ հանդուց:

Փեսեն էլ կըսը. – էրկու-իրիքը անիրախ տի՛ կուռեն, տի՛ հեռիվքըիր, թըխ ուտին, էլնին, յան:

Պառվու լաճ գուր պաճին կը տա ախքըտին, կըսը. – Տիւ կի՛, տիւ միխքը իս:

Փեսը քուր ի՛նչըխ կանը, ալ չըն իւնը վիր:

Կըսին. – Ալ դի՛ւր տ'էրթանքը, գիշիրը:

Կիւնը, կերթա, փեսին կըսը. – Ի՛նչըխ կանիմ, թորվընեն չըն իւնը վե մա ֆըղկարեքը:

Մեկէլ քուրն էլ կըսը. – Միւլվ, իս յամ, թաղկիմ, տիւ ս՛ կանա:

Ան քուրն էլ կիւնը, ուր աղեկ խալալքըիր հազին կը գա:

Ինչ կը գա, հանա կը տիղցըցը, կըսը. – Յաման, իս ցըռտու մեռա, իս կը տիղցըցիմ:

Պառվու լաճ կըսը. – Ըստա տեղ չըկա՝ տիւ տաքընաս, ըստա ցուռտը:

Կնիկ կըսը. – Վոլա՛, իս տը նստիմ վար թորվան, տաքըն-ամ:

Կնիկ ուր ոռ կը տընը մա թորվան, կը նըստը:

Մըղդարըմ կը մնա, պառվու լաճ կըսը. – Վոլա՛, մըշախուտ կը գա:

Պառվու լաճ կըսը ախքըտին. – Մընչը՛, խաքար մի՛ տա:

Հա կըրակ կը վատանա, մուխ կիւնը: Չուր խարս կանախը, խարսը ոռ կիրիցը մա թորվան, կուքնին, չուխեն կը մըրկը: Կը մընա չըփլախ:

Պառվու լաճ կիւնը, ախքըտի ձեռ կը պըռնը, կիւնը խաղ:

Ինչ կիւնը խաղ, կնիկ կը ճըվա. – Աստճու սիրուն իւնը, մի ոռ մըրկավ:

Կիւնը տիւս թորվընեն: խարսըսի մարթիր կը թափին վերա, կըսին. – Կնի՛կ, պան չըկա:

– Չէ՛, – կըսը, – մա խարսը վուտ խերով չէր, վար մի չէրը:

Պառվու լաճ, ախքատ ուրախութեն շաշ կիւնին: Ինչ անուշ յըմակ կա, կը տան անունց, կըսեն. – Դե՛, կերե՛քը, քըսա արե՛քը՝ մըհա ի՛նչըխ էլա՛՛ անու ոռ իրիցավ:





25. ԲԱՂՏԱՏԱ ԴՐՈՒԼ

Կեր, չըկեր, մարթըմ կեր, ուր կնիկ: Անու իրիկն էլ Դրռալ էր, լարվեր էր մա տախտին, բերան թողեր էր բաց: Խուրմեն կէյներ վար անու սըրտին, ծեռ չըր իտա՝ դընը ուր բերան, ուր էյներ բերան վե, գի կէյներ, ուրն ուր չէյներ բերան վե, գի անութը կը մեռներ:

Անու կընկան էլ երկու յար կիլնը, յարի կըսին. - Աստված քու տուն ավրը, տու գան Դրռալ չուր հիփ տը շախիս, թանկը տու:

Կնիկ կըսը. - Չէ՛, իս չըմ կանա՞ թանկը տուս, չըմ կանա՞ շուկը, տանը:

Անունքն էլ կըսին. - Տապկուց վե ծըվագեղ շինը՛, տի՛ր հիրծիվ, սա՛ Դրռալ, իլը՛, կի՛: Դրռալ չըխ չըկանա, տու տիր հիրծիվ, չըխ ան ուսուս տը գա, տու էլ յար փանցըցու, չուր տըռեն խանիս տուս, թալ տուս, տուռ շինը վերեն, դուր կը յա, թըխ յա: Քու յախեն մոտեն փըրթո՛ւ:

Ան էլ կիլնը, ծըվագեղ կը շինը, կը տընը հիրծիվ, կըսը. - Դրռալ, իլը՛, կի՛:

Դրռալ կըսը. - Իս չըմ կանա՞ իլնը վե:

Ան էլ կըսը. - Ուսուս արը չուր մա տապկուց, իս տամ, տու ուտիս:

Ան էլ ուշիկ-ուշիկ կիլնը, կը գա, ինչ ան կը գա, ան տապկուց յար կը գատնացը, չուր ըգԴրռալ կը թալը տուս:

Ընչ ըգԴրռալ կը թալը տուս, տուռ կը շինը վար Դրռալին, Դրռալ կըսը. - Կնիկ, տուռ բաց:

Կնիկ կըսը. - Ուրլա՛, տուռ չըմ բանա, իս չըմ կանա ըգթի շախը, տու մարթ իս, իս կնիկ, իս չուր հիփ ըգթի տը շախիմ: Դուր կը յաս, գըռնա՛:

Չուրտը, ծմեռը, Դրռալ կը մըսը, ատանքի կը գարկը վիր իրաց, կը տուղա, կըսը. «Աստված, հիփ տը լուսնա, իս իլնիմ, փախիմ»: Գիշիր հերկենը, գուպ գու չըլուսնա, քանունը հերկեն գիշիրքիրնը: Դորիս կըսը. «Պոշը, իմ կնիկ տուռ չըբանա, իս էլ տիլնիմ, յամ հուրուշ տու՛մ, ցըրտուն չըմեռնիմ»:

Ալ դրռալութին ուշ չըկըտըրը:

Ան էլ կիլնը, կը կայնը, կըսը՝ յա Տեր, յա Աստըված, կը կայնը, ինչ կը կայնը, անու խալըվկեն յոթ տանպողին պատ վե ընկավ տակ:

Ան էլ կիլնը, կըսը. - Յա՛ Տեր, յա՛ Աստըված, տու ծիկ կուսմաթըմ տաս:

Աստըծուց տողա կանը, կըսը. - Իս իրիք ուսկը կընտընիմ, կես տամ անքըտին, կես տամ ծի գատ-մատը: Տամ խացը, ուտիմ, չըմեռնիմ:

Աստըվածութին անցկում հըրաման կանը, հանկախ հինը իրիք ուսկը կը կընտընը:

Իրիք ուսկըն կառնը, խընտալուց կիլնը, կերթա, կերթա մա ծամխին կուրու՛մ ռաստ կը գա, կուր կըսը. - Աղա՛, աղա՛, տաս փարա տու ծիկ, իս տամ ծի խացը, իս անութը մեռա:

Ան էլ կըսը. - Կուր, ուրլա՛, իս իրիք ուսկը կընտիր իմ, կես տը տամ աղքըտին, կեսն էլ տառնիմ ծիկ:

Կըսը. - Աստո՛ւ սիրուն, տու տաս ծիկ, ալ քանց ծի շիվար չըկա:

Ան էլ կըսը. - Դատըրը՛, տամ խուրտիլ, կես՝ ծիկ, կես՝ քիկ:

Ան էլ կըսը. - Աղա՛, խալկ ուրից խերը խամար տըված ին ծիկ, պի՛ ծեթիմ, կես՝ ծիկ, կես՝ քիկ:

Ան էլ կըսը. - Առ, նա մեկ քիկ, նա մեկ ծիկ, նա մեկըն էլ ա՛ռ, ծեթը, կես՝ ծիկ, կես՝ քիկ:

Ան էլ մեկ կառնը, կըսը. - Մըհա՛ ան մեկէլն էլ տու՛ ծիկ, մըհա որը՞ն խորոտը, մեկ առնիմ, ծեթիմ, մեկէլն տամ քիկ:

Իրիքըն էլ կառնը, կը տա մանչ ուր գըլխուն, կըսը. - Յամա՛ն, Դրռալ ըգի կը թալնը, խասեցեք:

Դանա՛ գավթիք կը խասնին, կը տանին կը թալին հափըս:

Դրռալըն էլ անուրը մանչ հափըսին կը մեռնը, թու մըջալ չըկա ձեռ, ըզինք կը թալը վաթ անպըրը ուտաց, կըսը. - Իս անուրը մեռա, իմ կաթիյաթ ի՞նչ կը՝ տու ըզի բըռնիր իս, չըս թըղը: Իս հիվը կանիմ, ըզի թուը:

Անպըրեն խեղճ կանը, կիլը, կը թըղը, կըսը. - Իլը՛, գըռնա՛ քու տուն:

Ան էլ կիլը, կը գա, կիրիշկը՝ տալ կուր նըստիր վաթ ճամխին, վա ուր տըռան նստիր, կըսը. - Աղա՛, աղա՛, իս անուրը մեռա, տաս փարա տու, իս տամ ձի խացը, ուտիմ:

Ան էլ կըսը. - Ուըլա՛, ձի փարա չըկա: Էա ուր միտ վե կըսը. «Թը իս կաթցա, իս քու խեղ տը տամ անըծիլ, շուշանուրտը՛, իմ փարեն առիր, տալ իմ մոտեն փարա կուզը»:

Կը մըռա, չուր էվարին կը կայնը հանտե, հիրար չառնը, կուրն էլ էվարը դորիս տը յա ուր տուն, ուր տուը կը բանա, տ՛երթա ուր տուն:

Ընչ տուը կը բանա, Դրռալ քանց ան շուտ կը յա տուն, դորիս կերթա, ըզինք կը տա մուք բուճըմ, կուր գան չըխը:

Կիլը, ուր փարեն կը խամպըրը, կիլը խարըրից իրիք ուսկը պակաս, ան էլ ան իրիք ուսկըն, ինչ Դրռալից առիր, կը տըռը վերա, կիլը խարիր ուսկը:

Կը կապը շուր, կը թալը հանիք, կը պըռնը ուր ձեռ, կըսը. - Խարիր ուսկըն վաթ հափըզը գըլխուն գա:

Էրկու-իրիք տիր անթարգ կը թալը, կը բըռնը, կը թալը, կը բըռնը, ուրախութեն կարմիր խընձուր չըյա բերան: Տիր մ՛էլ ինչ կը թալը, Դրռալ ուր ձեռ կը տա հիրճիվ, կը գա Դրռալը ձեռ:

Կուրն էլ կը պըռա, կը տա մանչ ուր գըլխուն, կանը հավար, կըսը՝ իմ փարեն կուրսավ:

Մեկ կընարեն տուըմ կը բացվը, կուր մ՛էլ կը գա հանտե, կըսը. - Ան ի՞նչ իլիր, ան ի՞նչ իլիր՝ անթարգ կը պըռաս, տայիմ քու շան ձեռ կը գա, հերեկն էլ քու ձեռ էմեկ իրը խա շիվար Դրռալեն:

Ան էլ կըսը. - Իս ի՞նչըխ անիմ, հերեկն էր՝ ըզի Դրռալ խաթիցը, իրիք ուսկըն մոտեն առը, տըրը վաթ իմ փարեն, էլավ խարիր ուսկը, ան խարիր ուսկըն իս կը թալեր, կը բըռներ, կուրանխաներ վաթ իմ փարեն, ձի քեֆ կաներ, է՛, տիր մ՛էլ թալցը, չիրը իմ ձեռ, մըկա դուր կան կը գան, չըկընտըվը:

Ան էլ կըսը. - Դա՛, տըռավիր, տու չըս գըռա փարա շախը, անցկում բանատա տեղ կը տըռեք, ուրտա խալկ կը տեսնան, կը գան տանին: Իմ պես փարա շախը:

Կըսը. - Բու փարեն տու կը տըռիս հո՛ւր:

Կըսը. - Զի ինչ կանը փարա, չուրս խարիր ուսկը կը յա, գինա բիր վե, կոպըրսուկ ը, կը յամ, կը նըստիմ մա ճամխընիրուն, կը թալիմ տեն, վով կընտըռը, կը բիրը, տա ըզի:

Դրռալ ուր միտ վե կըսը. «Ա՛խ, անա կուրն էլ էյներ իմ ձեռ՝ ձի բաս էր»:

Կուրն էլ կըսը. - Մըհա քու բիր տու, իս թանաչա անիմ, մըհա ի՞նչըխ արիր իս:

Կըսը. - Ա՛ռ, քի խամար թանաչա արա:

Ընչ կը բարզը, Դրռալ ձեռնեն կառնը:

Կուրն էլ կըսը. - Տա տեհ տու մըհա:

Ան էլ կըսը. - Դա չէ՞ իս տըվը ըզի:

Ան էլ կըսը. - Տա անխուգին, տու հի՞փ տըվիր ըզի: Տու չըս տվիր ձի:

Կը գանկին մանչ մե մեկու գըլխուն, կը կըռվին, կիլը կալըպալըխ, կուր մ՛էլ ան կընարեն կը գա, կըսը. - Տա Աստված՝ ձի տուն ավը, ձի կալըպալըխ ի՞նչ ը՛ հանեն գախ կը գա, անոթ չը՞ք անը:

Ան հըրճըն կուր կըսը. - Դերեկ ձի խարիրից իրիք ուսկը պակաս կեր, իրիք էլ Դրռալը մոտեն առը, խարիր թումումավ, դորիս իս էլ կը թալեր, կը բըռներ, տիր մ՛էլ թալցը, ալ չիրը իմ ձեռ:

Ան մեկէլ կուրն էլ չըթըղը չուր ան պըրճընը, հանա կըսը. - Իս իմ փարեն՝ չուրս խարիր ուսկը, տըվը ըզնա կուր, մըկա ընթանցավ, ալ չի տա:

Ան կուրն էլ կըսը. - Դա՛, Աստված ձի տուն ավը, անթարգ փարա կը շախին, խինգ խարիր ուսկը գինա իմ էլանին, խավքիր իմ հինը, ինչ կը նըստիմ վաթ ճամխընիրուն, մարթ վըրըմ չանը, թը մա իմ էլանին փարա կա, վով կընտըռը, էլ կը բիրը, տա ըզի:

Ան կըսը. - Ա՛խ, իմ փարեն կուրուսավ:

Ան կըսը. - Ա՛խ, իմ փարեն մա կուր առից, ալ չի տա:

Դրռալըն էլ ուր միտ վե կըսը. «Նա երկանկը խեղ քուճիցը, մըռաց մա մեկին»:

Իրիք օր կը մընա հանդէ, թու պա՛մ չըկանա անը, ուր գան փարեն էլ առնը, կիլնը, ուր խինգ խարիր ուսկըն կառնը, կը գա տուն:

Կը տա տըռան, կըսը. - Տիւռ բա՛ց:

Ան կըսը. - Տիւ վո՞վ իս:

Կըսը. - Իս Դըռալն իմ:

Կըսը. - Թը կուսմաթըմ ընկիր քու ձեռ, տիւռ տը բանամ, թը չէ՛ դուր կը յաս, գըռնա՛:

Կըսը. - Կնիկ, տիւռ բա՛ց, ուըլա՛, կուսմաթ կա, լա կես կուսմաթ ը:

Կնիկն էլ տիւռ կը բանա, ան էլ սինիւն կը բիրը, լըցը հինը, խամբըրը՝ մըհա քանը յը: Կը խամբըրին, կըխին՝ խինգ խարիր ուսկը յը:

Ան էլ կըսը. - Կնիկ, ուըլա՛, կուսմաթ մ՛էլ տեղըմ կա, լա իմ ձեռնեն թու պա՛մ չըկա:

Կըսը. - Տիւ իմ խեր անըծիս, չուր տիւ գան էլ չըբիրիս, թի տիւ իմ տուն մըտար:

Փարեք մոտեն կառնը, կը թաղկը տիւս:

Կըսը. - Կնիկ, Աստոն սիրուն, կաթնա ութ կուրուշ տու ձիկ, իս խատ ճամխին ուտիմ, չանութանամ, անիմ ձիկ խարջըլըխ:

Կնիկն էլ ութ կուրուշ կը տա անու, կըսը. - Դե՛, իլը գըռնա՛, չուր չըբիրիս, չըգա՛ս:

Դըռալ կառնը ուր ութ կուրուշ, կը գա, էրկու կուրուշ կը տա՝ տըլուզըմ կառնը, էրկու էլ կը տա՝ սարեկ կառնը, չուրս կուրուշ էլ կառնը, կը տա՝ մեղըր կառնը, կը լըցը տըլուզ վե, կէրթա քիչըմ էլ խարան տեղեգ կառնը, կը լըցը մա մեղըրին, սարեկ կը կապը վաթ բերնին, կը տընը չանթեն վե, կըսը. - Յա՛ տեր Աստըված:

Կաստ թաղ կուր կանը:

Կը յա, կը տեսնա՝ կուրըն նըստիր հատե, կըսը. - Աղա՛, աղա՛, տաս փարա տու, իս տամ ձի խացը ուտիմ:

Ան էլ կըսը. - Կո՛ւր, իս իկիր իմ, իմ ախպեր սար վե ունծ կանը, իմ մանգաղ, հեսան մուռցիր իմ տուն, ա՛ն նա չանթեն, նա գատիր թըխ մընա մա քի, չուր իս յամ տուն, գան: Լա մարթ հիրար չըտա:

Ան էլ կըսը. - Չէ՛, քու մալ կուզիս թըղ քըրտու մալ իլնը, իս ձեռ չըմ իտա հինը չուր տիւ գա:

Ան էլ կը տա հինը, կը գատնանա: Ըգինք ճամխից կը տա հիտ:

Կուրն էլ կիլնը, վաթ ճամխին կը կայնը, ուր փետ տիրըմ ուր չուրս բուլիւր կը զըվըռըցը, մեկ ուր ձեռնով կը ճըվա՝ տիւ վո՞վն իս. մարթ ջըհապ չիտա, քըրտերեն կը կանչը՝ կիվոո հուս քինա. մարթ ջըհապ չի տա, թուըրչա կը կանչը՝ քիմ սըն. մարթ ջըհապ չի տա:

Ան էլ կը խընտանա, հա՛յ ջան կըսը, մարթ չըկա մա ճամխընիրուն:

Կըսը. - Դա՛յ, իս քու խերն անիծիմ, տիւ միլիվ, իս քու չանթեն բանամ, քու չանթեն հըմեն ուսկը յը:

Չանթը բերան կը քակը, կուրանակ ձեռ կը տա, կը խը՝ տըլուզըմ գի մա չանթեն, ձեռ կը տա, կը խը՝ սարեկըմ գի վաթ տըլըզը բերնին կապուկ, կըսը. - Դա՛յ, քու խեր անիծած, ուսկըք լըցը մա տըլըզին, կաստըմե կըսիս՝ խաց ը:

Դըռալն էլ գի հանդե գաղտիկ թամաչա կանը:

Կուրն էլ ըգսարեկ կը անըցըկը, կըսը. - Միլիվ բըռըմ ուսկը խանիմ ձիկ, մեկէլ տամ թըղ տանը:

Ան էլ ձեռ կը տա մա տըլըզին, կիրիշկը, կը խը՝ կակուղ գատըմ գի մեջ, ձեռ կը տա ուր բերան, կը խը՝ քաղցըր ը, ան էլ համա կուր կուրանեն ձեռ կը գանը մա ամընին, կը տանը բերան, ինչ կը տանը բերան, տեղզընիր կը թափին, գան կը կըծին, կը պըլա՛վին, ան էլ կիլնը, զուր էլա՛կ՝ ինչ խինգ խարիր ուսկը գի մեջ, կը խանը, կը թալը:

Դըռալըն էլ կը խասնը, կառնը, կը տանտըր, թամաչա կանը, կը տեսնա՝ կուր զուր խալա՛վիքը զըմեն պըլա՛վից:

Պոմ մընաց, տեղզընիր ընչ խախանտան, ան էլ կիլնը մանչ փըշիրուն, մանչ քարիրուն հիտիվ ուր էլա՛կին կան կը գա, դուր կան կը գա, չըկընտընը, ան էլ կըսը. - Իս զըղկում կիրիր էր, իս գան մեղըր չըր կիրիր:

Դըռալն էլ ուրախութեն շաշ իլիր, կայնիր հանդե:

Կուր պոմ տա, պոմ տա կան իրը, նալա՛ջաճաճ, էլա՛վ, լալե՛լեն իրը ուր տուն:

Դըռալն էլ էլա՛վ, խընտանուց վի վի կը թըռնը, խիտ կըսը, կը գա, բիր բընիր ձեռ.

Փափուլե փիր ու փաննա

Ռը հե ուիի տա յակ բաննա¹⁵ (քրդերեն):

Կիւնը կը գա, կըսը. - Կնիկ, կնիկ, տաւռ բա՛ց:


Կնիկ կըսը. - Կուսմաթ ընկա՞վ քու ծեռ:

Ան էլ կըսը. - Տու տաւռ բաց, Աստված իտու, լա հաննա՞ իտու:

Կնիկ տաւռ կը բանա վերա, կըսը. - Կնիկ, սինին բի՛:

Սինին կը բիրին, կը խամպըրը, կիւնը խինգ խարիր ուսկը, մեկէլն էլ կը խամպըրը վերա, կիւնը խագար ուսկը, կնիկ կըսը. - Ապա վար իմ աչքիրուն իկիր, տու դըռալութին տըրեր էր վար քի, վո՞վ ըզքի տը շախեր, տոր պե մընաթ, կի՛, խըմը՛, քե՛ֆ արա:

Անունք խասան ուրինց մըրագ, տու էլ՝ քուն:



¹⁵ Փափուլը տեղական ոտնաման է, որ կը շինին կանեփից և բուրտից, թելից է շինված, իր հագինը թել է (Ծ. Բ.):



26. ԲԱԽՏԱԿՈՐ ՍՈԼԼԱՆ

Շատախ խարսնիս կիւնը, նախրուրթ, ուր կնիկ հաննա՞ կերթան խարսնըսը տուն, կը նըստին: Ով օր կը գա, անունք քիչըմ կը ցածրանան, չուր կը պիրին, կը թալին տուս ըզնախրուրթ, ուր կնիկ:

Կնիկ իրկան կըսը. - Յան տու տ'ըլնիս մալե՛մ, մի էլ կադըր իւնը, յան ես քի կնկըյնութին չըմ անի:

Կըսը. - Կնիկ, չէ՞ ծենե չի գամալութին:

Կըսը. - Գըտոնա՛ս, չըգըտոնա՛ս, բընենալե տ'իւնիս մալա:

Ան էլ կիւնը, քիչըմ թուխթ կառնը խատ ուր, կըտուր մ'էլ գյոռծելի կառնը խատ ուր, կիւնը, խին թումբա՞ մ' էլ կը տա գըլ-լիս, կիւնը մալա:

Կիւնը, կերթա փետե ուր խանար: Կը տեսնա՞ խավքըմ գո՛ հանդե: Խոնչա՛մ կա ոտքիր՝ տաս ոսկը կաժը: Փաթըթըվիր ծառ, մընացիր ուր տեղ:

Ան էլ կըսը. - Կուլա՛, իս տ'ըլնիմ, փետ տանիմ տուն, նուր տը գամ՝ տանիմ ըզխավք:

Կը տեսնա՞ վար ծանբխին էրկու ծիավուր կը գան՝ մաչ էրկինք, մաչ գըտինք, քըրտինք ոտքիր վե կը թալը տակ:

Կըսը. - Աստո՛ւ սիրուն, մալա՛, դավուլաթ կուշին կորսե, քու դըֆթար պա՛ց մըրա:

Մալեն էլ ծուցեն ուր փըռքըտիր կը խանը տուս, կաչկը:

Էսաց. - Յա՛, հա՛, իս խանըցը տուս:

Էսաց. - Մալա՛, ի՞նչըխ խանըցիր տուս:

Էսաց. - Խավք մը, գո՛ մա մերուն, խոնչա՛մ կա ոտքիր՝ տաս ոսկը կաժը: Գացե՛ք, առեցե՛ք, էկե՛ք:

Կերթան, ըզխավք կը տեսնան, կառնին, կը պիրին: Կը տա-
նին, կը տան թագաւորին:

Կըսը. – Զավթիեք, ան ո՞րն ը անսա խոսք իխան տուս:

Կըսին. – Վոլա՛, խիղճ մալե՛մ:

Էլա՛վ, հիրողկից հիտիվ մալին, ըզմալեն առից, իրը:

Էսաց. – Մալա՛, տու շատ ֆըղկարա մալե՛մ կերեվաս: Իրիք
ոսկը քի այլըխ, իրիք ոսկը յէլ քի պաշխիշ:

Մալեն էլա՛վ, իրը: Ուր թածա՛ շալ առից, ֆիսթա՛ մ՛ էլ առից
ուր կընկան:

Մընաց, մեկ ժամանակ վերեն ընցավ, թագաւորը դոռ կոր-
սավ:

Թագաւորը խըղան կընդա՛վ:

Էսաց. – Խըղան՛մ, կընդի՞ր իս, թի՞ չէ:

Մեկ տիր պերնեն պըռծավ, էսաց. – Զէ՛:

Հիրողկից հիտիվ մալին, մալեն էլա՛վ, տողտողալեն գընաց:

Թագաւոր էսաց. – Մալա՛, գիմ դոռ կորսիր ը, իրիշի մըհա՛՛
չըս կանա՞ խանը տուս:

Մալեն չըկարցավ ջըհաթ տեր:

Էսաց. – Իս իլնիմ տուս, իմ թուխթ իրիշիմ, նուր գան, քի
ջըհաթ տամ:

Ինչ էլա՛վ տուս, համա՛ խըղան գինքը եթալ վար մալը ոտաց,
էսաց. – Մալա՛, վոլա՛, իս կընդիր իմ, Աստոն՛ սիրուն, գի մա՛ ծի:
Իմ անուն չըտաս, ըսիս՝ խըղան գիղցիր:

Տեսավ թագաւորը երկու կազ հանդե: Մեկ սիվ էր, մեկ՝
սըվտակ. դոռ եթալ հիռծիվ սիվ կազուն, կըլնից:

Գընաց մալեն, թագաւորը դիվան նըստավ: Ուր փըռթկը-
տիր էխան տուս, վիրա գյոռծելին կը քըսա վերա:

– Ըհա՛, – կըսը, – թագաւոր, քիւ դոռ խանըցը տուս: Քը
երկու խատ կազ կա՛ մեկ սիվ, մեկ սըվտակ: Պի՛, սիվ կազ գինը,
գի անու փուրն ը:

Իպը, սիվ կազ գինից, էխան տուս փուրեն:

Էսաց. – Ավար, մալա՛, տու անա՞րգ մալա յիս, իս գըտեր՝
տու ախթատ մարթ մ՛ էր: Ա՞ր քի քըսան ոսկը պաշխիշ, քըսան
ոսկը յէլ այլըխ:

Մալեն տաս ոսկը իտու՝ ուր կընկան խանար ֆիսթա՛ մ՛ա-
ռից: Դիրիս ինչ կիլնը խարսնիս, մալեն, ուր կնիկ կերթան խարս-

նըսը գըլըխ: Կուտին, կը խըմին, տըռծիկ կանին ուրինց:

Թագաւորը խըզինեն կը կըտրին քանսուն գիղցիր: Ան էլ կը
հիրողկի հիտիվ մալին: Մալը ձեռ-ոտ հախու կը տողա:

Կիլնը, կերթա թագաւորը դիվան:

Կըսը. – Մալա՛, իմ խըզինեն կըտրած: Պեթկ ը տու խանիս
տուս:

Մալեն էլ կըսը. – Թագաւոր, անիկ շատ գիռ պան ը: Քան-
սուն էոր ծի միւլաթ տու: Իմ դըֆթարքի կորսիր, չուր իս խանիմ
տուս:

Մալեն էլ կը կըծկըվը հիրար, կիլնը տուս տընեն: Կը գա,
տաս փարա կը տա, քանսուն կըքոյով կառնը: Կըքոյվքի կառնը,
կը գա տուն:

Հեվարին կըսը. – Կնիկ, կըքոյվըմ տու, իս կըտրիմ:

Գիղցիրն էլ քանսունից մեկ կը հիրողկին վար հերտըսին: Ան
էլ կըքոյվըմ կը կուտը, ինչ կը կուտը, կըսը. – Հե՛յ, հի՛յ, կնիկ,
մեկ իմ ումբըրեն գընաց:

Մեկէլ էոր երկու կըքոյով կը կուտը, երկու գիղ կը գան վար
հերտըսին:

Կըսը. – Հե՛յ, հի՛յ, կնիկ, նա երկու իմ ումբըրեն գընաց:

Գիղցիրն էլ կըսին. – Վոլա՛, մալեն մի տը խանը տուս: Դալ
մինքը չընքը գացեր վար հերտըսին, էսաց՝ նա երկու գընացին:

Էլան, քանսուն էլ իկին, գինքը թալըցին վար մալը ոտաց:

– Մալա՛, Աստոն՛ սիրուն; մինքը գիղցիր ինքը, համա՛ մի բաս
չանիս:

Մալեն էլ կըսը. – Խըզինեն թանամ տա՛ր, ֆըլան ծառը տակ
խո՛րը:

Մալեն խըլխուն կիլնը, ուր չուխեն կը խագընը, խընդալուց
յոթ տիռճ կը թալը, կիյա մա՛ թագաւոր:

Թագաւոր կըսը. – Աստված խե՛ր անի, մալա՛, ի՞նչ շուտ
իկիր:

Մալեն էլ ուր փըռթկըտիր կը տընը գյետին, կիրիշի վերա:

Կըսը. – Թագաւոր, քիւ խըզինեն խուրած ծառը տակ:

Կերթան, ծառը տակեն կը խանին, կը պերին ըզխըզինեն:

Կըսը. – Մալա՛, դիրիս խարիր ոսկը քի այլըխ, խարիր ոսկը
քի պաշխիշ: Տու գիմ խոգյին էլ տ՛ազատիս դիրիս:

Մակեն կիւնը, կը գաւ տուն. ինչ մալը կնիկ կը կայնը, տաս խըղան մալը կընկան փեշիր կը պըռնին:

Ջըհանբ գընաց Մոսկոֆու թագաւորըն, թի տաճկը թագաւորըն ընցկընա շարդ մալեն կա:

Մոսկոֆու թագաւոր կիւնը, կը գաւ մա տաճկը թագաւոր:

Կըսի. – Իս մեկ պա՛մ տը պախիմ, թի քու մալեն էխան, էխան, թի չէ՛ քու վիզն էլ տը գարկիմ, քու մալին էլ:

Մեկ գուլըմ կը կըտորը, կը տընը մինդըրը տակ: Հորիւղկիցին հիտիվ մալին: Տորտորալեն մալեն իրը:

Էսաց. – Մալա՛, Մոսկոֆու թագաւոր պա՛մ ը պախիր, տու կանա՞ս խանի, մըհա ի՞նչ ը:

Մալեն մալա՛գա էրաց, էսաց. – Վա՛խ, Գուլե՛, վա՛խ, Գուլե՛, տու գիմ տուն աւրիցի՛ր:

Մոսկոֆու թագաւոր ըգգու էխան տու:

Էսաց. – Քու տուն նակո՛լը, տու անդըֆթար խանըցիր, ուր տա տու իրիշեր դըֆթար, չըխտ ախշար տ՛աւրեր:

Էսաց. – Հայդե՛, խարիր ոսկը յէ քի պաշխիշ, խարիր ոսկը յէ քի այլըխ:

Մալեն էլա՛վ, իրը տուն, ալ վի՞վ նա մալի հիտիվ քելա:

Կը մընա շապաթ մ՛երկու, թագաւոր կըսը. – Ահդ իլնը, բալա քի իս խորթեն չերթամ¹⁶:

Ուրբաթ տըր գաւթին կը հորիւղկը հիտիվ մալըն: Մալեն տորտորալեն էլա՛վ, իրը:

Էսաց. – Մալա՛, ընցի՛ հեռիվ, յանք խորթեն:

Է՛, մալը տուն Աստված աւրը, մալեն ալֆ, բե չըգըտը:

Էլան, մտան խորթեն:

Մալեն էլա՛վ տու, էսաց. – Իս կարտուս չըմ գըտը, թագաւորից հիվի անիմ:

Ըգթագաւոր կանչից տու, օր տա թագաւորին տ՛ըսեր. «Իս գա չըմ գըտը, Աստու սիրուն, իմ վիզ կը գարկիս, տու գըտիս, կը թըղնիս՝ տու գըտիս»:

Խորթեն պըլա՛վ վար մեմեկը, էն կանդար ժողովուրթ մընաց վար մեմեկը:

Թագաւոր էսաց. – Մալա՛, տու գիմ խոգին էլ ազատըցիր:

– Հոո՛, – էսաց մալեն, – իս գըտեր՝ միղավուր մարթ կեր խորթեն վե, անու խանար ըգքի մընակ կանչըցի տու:

Էսաց. – Մալա՛, իմ կես թագաւորութին քի, կես՝ ծի:

Մալեն էսաց. – Պիրոգ ըլնը քի: Իմ հիվին էն ը՛ իս ըխթի-յարացիր իմ, ալ տու ծի չըկանչիս, իս մեղք իմ:

Էսաց. – Էրկու խարըր ոսկը քի այլըխ, խորջըմ ոսկը յէ քի պաշխիշ:

Ինչ խարսնիս կիւնը, մալեն, ուր կնիկ գի գըլոխն ին: Անունը կը խասնին ուրենց մըրագ, տու յէ՛ քու մըրագ:



¹⁶ Առանց քեզ ուրբաթնավուր աղոթքի չեմ գնա (Ծ. Բ.):



27. ՊԱՌԱՎ, ԱՐԾ ԵՎ ԱՂՎԻՍ

Պառապ տոպրակըն տանձ թալիր ուր քանակ, ինկյիր ճան-
քան, կը գա: Իրը, տեսավ արձ գի մա ճանքխին նըստիր:

Պառավու աչկ ինչ ինկանվ զարձ, վախանցավ: Էլանվ, տոպրակի
պերան էպանց, տարավ, իտը հեռճիվ արձուն: Արձն էլ հընդրից,
իրիքյ խատ վիրուց մոտեն:

Արձ պառավուն ծեռնով արավ, էսաց. — Արը, քու չանթեն
տար:

Պառավ հախու չըգըխշցավ գյեր: Էլանվ, արձ փըշու՛մ զինքյ
ճանքխուց իտու հետ, զաննանցավ:

Պառավն էլ իրը, զուր չանթեն առից, տարավ:

Աղվիս իրը հեռճիվ, էսաց. — Պառավ, ան ի՞նչ ը խա քյի:

Էսաց. — Տանձ ը:

Էսաց. — Էրկու-իրիքյըն տու ըգճիկ:

Պառավ էսաց. — Իս չը՛մ իտա:

Աղվիս էսաց. — Ան վըրե՞ արձուն կը տաս, ձի չըս իտա:

Էսաց. — Իս արձու մոտեն կը վախաններ, քյենե չըն վա-
խանա:

Աղվիս կախավ պառավու մոտեն:

Արձ տեսավ, կը խը՛ պառավ կը լա:

Էսաց. — Աղվիս, ի՞նչ կուգիս նա պառավու մոտեն:

Էսաց. — Իս էրկու-իրիքյ տանձ կուգիմ, չի տա:

Արձուն պառավ էսաց. — Իս միխքյ իմ, վիր խասնիմ տամ,
չըկանգը, զա չըմնա՛ տանիմ իմ հեթըմքիրուն: Իս եխսըրութեն
վախանցա, էրկու տանձ տըվը արձուն:

Արձն էլ էսաց. — Իս գըտներ՝ տու հախու տըվիր, իս չըն
ուտե:

Պառավ էսաց. — Քու պես պարը մարթ նըստեր էր վար
ճանքխին, իս չկանցա ընցներ, տըվը:

Աղվիս էսաց. — Իսն էլ նըստիր էր վար ճանքխին, թըխ տու
ձի յէ տեր:

Արձ աղվըսկուն էսաց. — Դեմակ տու քանափուլչի՞ իս:

Ան էլ էսաց. — Արձ ախպեր, նա պառավու տանձ մի ոչ չըկը-
տըր: Ինիքյ ախպեր, ինիքյ ախշարքյ, միր ապրուստ ճարինքյ:

Պառավ թըղին, գընանց ուր տուն:

Արձուն էսաց. — Արձ ախպեր, տու իլի բըլիւվան, իս կէլնիմ
դավրե: Ինիքյ ախշարքյ, մի իդարեն իլնը:

Աղվիս էլանվ, գընանց, ըգխովու բըլիւլ գիղցավ, իպը: Արձ
ինչ բըլիւլ կը փըշը, ոխշար հանեն շուռ կառնը վերա:

Արձ, աղվիս զոխշար կուտին, կը խըմին, քյեֆ կանին:

Աղվիս իրիշից, չուր ինքյ ճուռ մոտը, արձ չուրս մաքը
կուտը:

Էսաց. — Իս չըն կանա խա արձուն գըլիխ իլնը, իս տը մնամ
անութը: Պեթկ ը իս պաճվիմ անու մոտեն:

Էլանվ աղվիս, գընանց մատ խովիվ:

Էսաց. — Ի՞նչ տաս ձի՛ քու բըլիւլ պիրիմ, տամ քյի:

Էսաց. — Էտեն մեկ մաքը, ահո իլնը, իս տամ քյի, տու
ուտիս:

Աղվիս իրի մատ արձ, էսաց. — Բըլիւլ տու ձիկ:

Արձ էսաց. — Անկարելի կուռձ ը, ալ իս բըլիւլ կը տամ քյի՞:

Աստվածն ը տվիր ձիկ:

Աղվիս ռըկավ, միս չըկերավ:

Էսաց. — Քանի որ իս քյի խասըցի նա հալին, տու պեթկ էր՝
ձի կանդը պըռներ: Ընցընեն էտ կա՛ տու կը փըշեր, թըխ էտըն
տեր, իս կը փըշեր:

Ձարձ խապից, բըլիւլ ծեռնեն առից: Առից, իպի, իտուր
ըգխովիվ:

Էսաց. — Խովիվ, առա քու բըլիւլ: Ամեն հիրիկու մաքյի՛մ պի
իմ պուն վե, իս ուտիմ, ալ իս չըն կանա իլնը տուս:

Չըմեն խըլիսու մաքյի՛մ կը տանը խովիվ աղվըսկու խանար:
Աղվիս կանվանցիր տուն հինը: Արձ անութը կը խատնը:

Էլնվ, իրը, էսաց. – Տ'երթամ մըհն աղվիս դո՞ւրն ը, իս
անուրը խատա:

Էլնվ, իրը վնր աղվըսկե պուճին, էսաց. – Աղվիս ախպեր,
իլի տուս:

Աղվիս էլնվ տուս:

Էսաց. – Աղվիս, տու անտարգ կըլուրվիր իս, իս անուրը մե-
ռա, վըրե՞ անտարգ կանիս խն ձիկ, Աստված քու տուն ավրը:

Էսաց. – Ան պառվու միխքյն էր, իրի, քու գյըլիխ ծածկից:

Էսաց. – Ապն, աղվիս, ի՞նչըխ անինքյ՝ միր մեղաց թուղու-
թին իլնը:

Էսաց. – Աղեկ կաց, ախշարքյ ինկյը, կան արը, մարթու մը՝
տիպնա, թի կուսմնթըմ ինկնվ քու ծեռ, կի՛, թի չինկնվ, կաց
անուրը:

Էլնվ, ինկնվ ախշարքյ: Ապն ավրութին չանը արճ, կը
մեռնը:

Էլնվ, իրը մատ աղվիս, էսաց. – Աղվիս, իս քու Աստծու
բնխտ, իս անուրը մեռա, տու դորիս ձի ճանքնիս շանքյ տաս:

Էսաց. – Իլի՛, գյընն, քի թնլ վնր պառվու ոտաց, ըգքյի
տոխնը. մեկ տիր ըգքյի անըծիր ը:

Էլնվ արճ, գյըննց, զինքյ էթնլ վնր պառվու ոտաց, էսաց. –
Ըգծի տոխնը:

Պառավն էլ էսաց. – Աստված քյի տոխնը: Դու ձի գըյա՛մ չըս
տվիրի, մընակ իրիքյ տանձ իս կիրիր:

Արճ էլնվ, կայննվ, խիլքյ գյըննց անոթութեն, ինկնվ մն
պառվու թիրվան: Չուր պառավ խասավ, էխան, արճու ոռ մըր-
կավ:

Էլնվ, իրի մատ աղվիս:

Էսաց. – Աղվիս, Աստված քու տուն ավրը, իս ըգծը թնլը
վնր պառվու ոտաց, իմ խիլքյ գյըննց, իս ընկն թոներ, իմ ոռ
մըրկավ:

Աղվիսն էլ էսաց. – Աստված քու տուն ավրը, պառավ ըգքյի
անըծիր, տու ինկյիր իս Աստծու կըրակ, ըգքյի չէ տխնիր, ըգքյի
անըծիր:

Էսաց. – Ապն ի՞նչըխ անին:

Էսաց. – Գյընն, իրիքյ տըմակ պի՛ր ձի, ըգքյի անտար:

Խեղճ, անուրը արճ էլնվ, գյըննց, իրիքյ տըմակ առից,
իպիր:

Էսաց. – Աղվիս, նա տըմակտիր ի՞նչ անին:

Էսաց. – Քյի դնվի չկա հինը, իս կը տանին պառվուն քն-
ննփուլ, բնլքյիմ տոխնը:

Արճ հեվարին էլնվ, իրը մն աղվիս:

Աղվիսն էլ էսաց. – Տու նըստը ըստն, իս էրթամ մատ
պառավ:

Էսաց. – Պառավ, Աստծու սիրուն ըլնը, արճ խեղճ մարթ ը,
պե ոսպընե վըռիկ իփի, տիր հեռճիվ, հնլն ալնը շինիս, ուտը,
անու սեռտ գյընիս, միխքյ ը:

Պառավ ոսպընե վըռիկ էփից, հեվարին արճ իրը մատ
աղվիս: Էսաց. – Դե՛, իլի՛ յանքյ, ըգծի թնլիքյ վնր պառվու ոտնի-
րուն, բնլքյի ըգծի տոխնը: Աստծու կըրակեն անտվիս, նլ քու ոռ
չըմըրկը:

Առճ, աղվիս իկին մն պառավ:

Էսաց աղվիս. – Պառավ, նա մարթ իրիքյ տանձ ը կիրիր քյի,
տու տոխնը, նա մարթ Աստծու կըրակեն անտվը:

Պառավ էսաց. – Տու խնգնր պնրիվ եքյ իկի, Աստված ձի
խնլալ անը: Աստված քյի կըրակեն անտը, իցկը մնչ ծովուն:
Դե՛ պնրիվ եքյ իկիր: Նստեցեքյ, քիչըմ ոսպընե վըռիկ կիրեքյ,
նոր գնցեքյ:

Աղվիս էսաց. – Շնուրհակալ իմ, ձի չըպը, վոլն, արճ
անութի յը, թըխ ուտը:

Արճ կերավ, շատ կերավ, փուրցավ կըպավ, հանն ոռեն կը
թնլը:

Իրը մատ աղվիս. – Աղվիս, Աստծու սիրուն իլնը, ձի նա
կըրակեն անտը:

Աղվիս էսաց. – Արճ ախպեր, ի՞նչ իլիր ը:

Էսաց. – Վոլն, փուրցավ իմ կըպիր, նլ թու մըչալ վնր ձի
չըկա:

Էսաց. – Աստված քու տուն ավրը, ան պառվու անեծքն ը քյի
խասիր: Կըրակեն էնր, ինկնր մնչ ծովուն, ծով գո նա փուրցավն
ը: Քու մտիվ՝ ըգքյի տոխնից, հնլն ըգքյի անըծից, տու վնր քյի
չնկնխար:

Էսաց. – Ապն ի՞նչըխ անին:

Էսաց. – Յոթ խատ տըմակ պի: Իս ըզքյի տանիմ մատ պա-
ռավ, տամ քանափուլ, Եփսնը:

Շիվար արճ, ինկավ սար-ճուր, կա՛ն իրը, յոթ տըմակ դի՛ւր
տի՛նը ծեռ: Էլավ, յոթ տըմակ իցկից ուր ծեռ՝ անուօթի, եխսիր:

Իպը, իտու աղվիս տըմակտիր:

Էսաց. – Աղվի՛ս, ի՞նչ անիմ:

Էսաց. – Յոթ եօր ծի միհլաթ տու:

Էսաց. – Հայդե՛ քյի յոթ եօր միհլաթ:

Արճ գյընաց ուր տուն: Յոթ եօր ծի թըմամավ, իրը մատ
աղվիս: Եվ աղվիսն էլ յոթ տըմակ կիրիր, ծարվըցիր, չըգլըխընը
տընեն իլնը տու:

Էսաց. – Աղվի՛ս ախպեր, իլի տուս տընեն, իս իկը:

Աղվիս Էսաց. – Աստժու՛ սիրուն, խնաբար մի՛ տա, պառավ
կայնիր անծոթ:

Էսաց. – Ապա՛ ի՞նչըխ անիմ:

Էսաց. – Խնաբար մի՛ տա: Իս իլնիմ տուս, դալիլըմ կընդընիմ:
Յան չէ՛ տու պառվու ծեռնեն ս՛ազատվի:

Վուլ, աղվիս ճապըմ իտուր, զինքյ իտու վար ճըրուսն, կուշտ
ճուր խըմավ, անպա՛ ծարվու խատեր էր:

Արճ եթալ, զաղվիս պըռնից, Էսաց. – Աղվի՛ս, ան տու քու
խոգյին դի՛ւր վե տ՛ազատիս իմ ծեռնեն:

Աղվիս Էսաց. – Իս քյի ջարթիցը, տու կըտրիճ մարթ իս: Իլի՛,
իս, տու էրթանքյ, իլնինքյ թուջար: Խնարամ խաց մի ոջ չըկըտրը:

Էլան, իկին վար ճամբխըն, տատրան:

Էսաց. – Աղվի՛ս, ի՞նչըխ անիմ:

Էսաց. – Գախ ը՛ թուջըր մալ գա:

Իրիշից, տեսավ՝ խարիր ուղտ ան կընարեն թուջարըմ
առից, իրի ուր խամար, կերթա Հալաթ:

Էսաց. – Աղվի՛ս, ի՞նչըխ անիմքյ:

Էսաց. – Ըզքյի գար մեչկիր:

Ինչ զինքյ էգար մեչկիր, ուղտիր խըռտընան, շուշեքյ զըմեն
կուտրան, թափան գետին: Աղվիս համա՛ ճապ իտու, զինքյ պըռ-
ժուց, փախավ:

Թուջըրքյի էլան, զարճ պըռնըցին, դե՛ գար:

Արճ կը բռա. – Աստժու՛ սիրուն էլնի, իս չէր, քանճ ծի ճուլ
կա, էն ծի անուն իտու:

Շատ գարկըցին, արճ թուջրի ծեռնեն պըռճավ, փախավ:
Էլավ, իրը ուր տուն:

Եօրըմ, երկու մնաց: Խիլքյ իրի գյըլիխ:

Իրի, վար աղվըսկու տըռան տատրավ, Էսաց. – Աղվի՛ս ախ-
պեր, ան տու դի՛ւր իմ ծեռնեն տ՛ազատվիս:

Աղվիս Էսաց. – Աստժու՛ սիրուն, դալ պառվու անծոթըն ը,
հա՛մ ծի խասավ, հա՛մ քյի:

Էսաց. – Ապա՛ ի՞նչըխ անիմքյ՝ անու անծոթեն իլնինքյ,
անինքյ Եփսնիթը:

Էսաց. – Յանքյ, խերյաթխանա պանանքյ, ֆանկիր-ֆըղկա-
րա գան, ուտին, խըմին, մի աղիթկ անին, բալքը պառվու անծ-
թից ազատվիմքյ:

Էսաց. – Յանքյ դուրդե՞ շինինքյ:

Էսաց. – Յանքյ նա սարը մեչ՝ վար ջաղըն:

Էսաց. – Աղվի՛ս, անպա՛ ի՞նչըխ տիլնը, մի խանավքյիր ընց-
կընա կեղտ, ընցկընա կըռտըտուկ, մինքյ կանա՞նքյ վանիցխե-
րութին անինքյ:

Էսաց. – Աստված քու տուն ավըր, գախ ը՛ յԱռնանից¹⁷ խա-
յիր գան, համեն թիվի հաբայոյվ, յանքյ, մե մեկ մեկ խըլինքյ, թա-
լինքյ վար մի քամկին, էլնինքյ վանիցխեր:

Էլան, իկին վար ճամբխին, տատրան, տեսան յԱռնանից
խայիր երկու խատ թիվի հաբայոյվ իկին:

Էսաց. – Արճ, դե խասը՛, երկուսն էլ խըլը՛:

Արճ խասավ, երկուսն էլ խըլից: Մե մեկ մեկ թալըցին վար
թիվքյիրուն, իկին, վանքյ տը շինին: Իկին, քարի՛մ տակ տատրան:

Էսաց. – Դե՛, արճ ախպեր, նա քարը տակ փուրը, ըստան
անինքյ վանքյ:

Արճ Էսաց. – Աղու մ՛ իս փուրիմ, անղու՛մ տու փուրը: Ախպեր
իլնինքյ, խալալ իլնինքյ:

Աղվիս Էսաց. – Տու իմ ճուլ ախպերն իս, հաղկ չը տու
փուրիս, տու տատրը՛, իս կը փուրիմ:

Աղվիս փուրից, չուր մեկ փըշուր մընաց՝ քար շուռ առներ:

Էսաց. – Արճ ախպեր, իս նեղացա, դիրիս տու փուրը:

Վուլ, արճ մըտավ քարը տակ, ինչ ծեռ իտու հինը, քար
շուռ առից վար արճուն:

¹⁷ Առնանց՝ գյուղ Մոկսում (Ճ. Բ.):

Արճ գյրնաց:
Էսաց. – Վանքյ շինողը վո՛ս տեսցեքյ:
Գյրնաց, իրը, թուշ էգան, արճ կերավ, գյրնաց ուր պիւն, ուր
քյեֆ արավ:
Աղվիս խասավ ուր մըրագ, տիւ յէլ՝ քիւ մըրագ:



28. ԱՐՃ, ՄԱՐԹ ԵՎ ԱՂՎԻՍ

Մարթըմ կերթա գագե:

Ուսին վիրուց կը փըրթընը վար մարթիւն, ըզմարթ կառնը,
կը պիրը հետ հինը: Մարթ կերթա, կը տեսնա՝ արճ գի պիւն վե:

Արճն էլ թանթով կանը, կըսը. – Արը՛, մը՛ վանխանա:

Քանը ուր ճամբանի չըկա, մարթ կը նահլանջանա, կիւնը,
կերթա:

Արճ ուր փանփ կը լիզը, կը լիզը, քանկ կը տա վերա, կը տա
հիռճիվ մարթիւն, կըսը. – Ա՛ռ, կի՛:

Մարթն էլ կուտը, քանդըր կիւնը, մեղրը նման քանդըր: Քան-
տուն էօր ըզմարթ կը շախը: Ինչ քանտուն էօր կը թումունը, արճիւ
վանխտ կը գան, ուր չըլից տ՛իւնը տիւս:

Կիւնը, կանվին կը ծակը, կիւնը տիւս, հերկեն ստընը կը պի-
րը, կը կախը տակ:

Կը մըռմըռա, կըսը. – Մարթ, ձեռ թանկ, իս ըզքյի քանչիմ
տիւս:

Ձեռ կը թանը, ըզմարթ կը քյեշը, կը խանը տիւս:

Մարթուն գյեղ շանքյ կը տա թանթով, կըսը. – Դե՛, գյրնան՛,
Աստված խան քյի: Իս իմ աղեկութիւն արը:

Մարթ էլանկ, գյրնաց գյեղ, գյրնաց մատ Ամբըրեն, էսաց. –
Կալավ, ճիճ արճըմ տիսիր իմ, յանքյ, սպանիճքյ:

Ամբըրեն առից ըզխուամբըրտիր, իրը վար հերը պերնին:

Արճն էլ պիւնեն իրը տիւս, իրիշից, զուր շանխած մարթ
ճանչըցավ: Իթող հիտիվ մարթիւն: Ամբըրեն ուր խուամբըրտիրով
տանոցան, չըկանրցան ինյըն հիտիվ արճիւն:

Մարթն էսաց. – Ա՛րճ ախպեր, մ՛իմի՛ հիտիվ ձիկ:

Արճ էսաց. – Իս, տաւ ան էօրն ենքյ ախպեր, ինչ իս քյի կը շախեր:

Մարթ էսաց. – Արճ ախպեր, իս քյի ջարբիցի մըհան, տաւ ի՞նչ կտրիճ մարթ էր:

Արճ էսաց. – Հիսան խում կաթը կերող ը, բերախտ ը, բընե-ննվե ըգքյի տ'ուտիմ:

Մարթ փախավ: Աղվիս մարթուն ռաստ իրը:

Էսաց մարթ. – Աղվիս, գիմ քուր տամ քյի, ըգծը ազատը նա արճու մոտեն:

Աղվիս էսաց. – Արճ ախպեր, ան վըրե՞ թըղիր իս հիտիվ մարթուն:

Էսաց. – Իս քանսուն էօր աղեկութիմ արը խան մարթուն, վերճ ան բերախտութիմ արավ խան ծը:

Աղվիս էսաց. – Նուր գյընաց ուր տուն, անունց անաթ էն ը՝ անունք անաղ կը խըմին, օր տան անաղ խըմավ, խիլքյ գյըլխեն գյընաց, ան խանքար չէլավ, էլավ, գԱմբըրը խոլամքյըտիր առից, էկավ վար քյի, չըգյըտցավ: Մըկա նուր փոշմընիր ը: Ուր տան տաւ ս'անվատա, մեկ կանգախ թըխ պիրը, տաւ խմը:

Էսաց. – Դե՛, հարիկը պի՛, մըհան ի՞նչ խամ ը:

Աղվիս մարթուն էսաց. – Աստճու սիրուն, խասը՛, վանտ անաղ պի՛:

Իպը, իտու գարճ:

Աղվիս էսաց. – Արճ ախպեր, կը խըմիս, հանա քու հիտ-հանաճ գյըտցը:

Արճ խըմավ, խըմիլու պես ծըռավ, քար, թուփ իտու մանչ ուր գյըլխուն:

Էսաց. – Աղվիս, Աստճու սիրուն, ըգծը նա բալից ազատը՛:

Աղվիս էսաց. – Արճ ախպեր, քու վուտքյիր ցըցը, քու գյըլիխ խութը մանչ ծան:

Էլավ, աղվըսկու խանքար արավ, գյըլիխ խութից մանչ ծան, վուտքյիր ցըցից:

Արանը մոտեն իթուղ, իրի, զինքյ էթան վար աղվըսկու վուտաց:

Էսաց. – Ձի թոբան, տաւ իմ ճիճ ախպեր, իս քու պըստիկ ախպեր:

Էսաց. – Դու անիդ արա, նա մարթուն թոչար պան չըսիս:

Մարթ էլավ, գյընաց ուր տուն, աղվիս էլավ, գյընաց հիտիվ մարթուն, մարթ էսաց. – Աղվիս, ի՞նչ կուզիս:

Էսաց. – Կուզիմ քու քուր:

Մարթ կը փոշմընը:

Կըսի. – Իս իմ քուր չըմ ի՛տա քյի:

Աղվիսն էլ կըսը. – Մարթ, իս աղվիս իլնիմ, դու ըգծը խա-պիս:

Կը գան հիտիվ արճուն. – Աստճու սիրուն իլնը, ան մարթ բերախտ ը, արը՛, սպանը՛:

Արճ աղվըսկուն կըսը. – Հեռիվ քյի իս թոբան իմ արի, ան ան մարթուն պան չըմ ըսի:

Աղվիս կըսը. – Ուր անցկուն ը, տաւ գյընան խան քու կուռճիմ, իս գյըտիմ ան մարթ:

Աղվիս կերթա սար վե, կան կը գան ուր խանմար: Կը տեսնա՝ մեկ մարթըմ՝ խընճուրըմ գի՛ ձեռ, կը գան:

Աղվիս անու կըսը. – Ատ ի՞նչ խընճուր ը քու ձեռ, մարթ:

Կըսը. – Նա խընճուր ինչ կնիկ ուտը, կիլնը տըղով:

Աղվիսն էլ կըսը. – Ատ խընճուր տու՛ ձիկ:

Կըսը. – Ան խընճուր տամ քյիկ, տաւ ի՞նչ տը տաս ձիկ:

Կըսը. – Քյի ի՞նչ կը պը:

Մարթ էսաց. – Իս մաղ շեմող իմ: Ձի ոխչըրը փոսթ կը պը, ուր շինիմ մաղ:

Կըսը. – Քու տուն գի՛ դի՛ւրն ը:

Մարթ շանքյ կը տա: Կը բարըշը քանսուն մուրթ: Որտեղ մուրթըմ թալցիմ, աղվիս փախցից, առից, տարավ: Չուր քանսուն մուրթ իպի, իտու հինը:

Էլավ, ըգխընճուր ձեռնեն առից, իրը: Իրը ման մարթ:

Էսաց. – Քու քուր տու ս'իտա՞ ձը:

Մարթ աղվըսկուն էսաց. – Իս պատիճըմ ինկան քու ձեռ:

Աղվիսն էլ էսաց. – Կուր տաւ ս'իտա, ա՛ռ նա մեկ խընճուր, իմ նշան ը, թախ մընա խան քու քուրուչ:

Քուր ինչ ըգխընճուր տեսավ, թուշ էգար հինը, կերավ: Կիրիլու պես էլավ տըղով: Էօր վար ավուր փուր ճիճացավ:

Մարթ քուրուչ էսաց. – Ատ ի՞նչ էլավ խան քյի: Անցկընեմ տարը կա, իս խանտ աղվըսկուն կըռիվ իմ, քյի չըմ իտա աղվըս-կուն, դիր տաւ էլար, իմ ըրկան գանցիր մատ աղվիս:

Ախշիկ էսաց. – Իս խնարար չունիմ աղվըսուց:
 Մարթ էսաց. – Իմ նամուս թափավ, իս տ'հրողկիմ, աղվիս պիրիմ, տամ անու:
 Հրողկից հիտիվ աղվըսկեն:
 էսաց. – Աղվիս, Աստծո՛ւ սիրուն, իմ քուր տըվիր իմ քյի, առ տար:
 Աղվիս էսաց. – Ապա ծի էլ պեթկ չը, իս տըղով կնիկ տ'առնիմ, ի՞նչ անիմ:
 Մարթն էսաց. – Աստծո՛ւ սիրուն իլնը, ինչ կանիս, դախ քու Աստծուն կանիս, քու կնիկն ը, ա՛ռ, տա՛ր:
 Աղվիսն էլ կըսը. – Ախր Աստվածն ը պիրիր վար ծի, իս տը տանիմ, տու քու կաթ, իս՝ իմ կաթ: Օր տա՛ տու հանա՛ճ էօր տեր ծի, քանձ հըմեն աղեկ չը՞ր իլնը: Նամուս թափավ, նուր տըվիր:
 Աղվիս ըզքուր կառնի, կը տանը ուր խանար:
 Աստծու խըրանանքյով քուրուչ փուր կիճնը:
 Ութ էօր վերա կընցնը, մարթ կըսը. – Տ'երթամ մատ իմ քուր, տեսնամ ի՞նչ հալը վերա յը:
 Կերթա, կը տեսնա քուրուչ փուր իճիր ը:
 - Վո՛ւյ,- կըսը,- քուրիկ, էն աղեկ տու քու բալից պըռճար:
 Աստծո՛ւ սիրուն, գանդտիկ թո՛ւղ, արը՛ տուն:
 Քուր կըսը. – Դատար կաց ծենե, իմ իրիկ տալ ծիկ շատ ը:
 Կիլնը, ըզքուր կը խապը, կառնը, կը պիրը տուն: Հեվարին աղվիս կը գա՛ տուն: Կը տեսնա՛ կնիկ տուն չը:
 Ան էլ կերթա վար մարթու տըռան, կըսը. – Մա՛րթ, քու քուր տո՛ւ, իս տանիմ, վըրե՞ խապիցիր, պիրիր:
 Մարթ կըսը. – Անկարելի յը, իս չըմ իտա:
 Աղվիսն էլ կըսը. – Իս աղվիս իլնիմ, տու ըզձը խապի՛ս:
 Մարթ կըսը. – Խարիր տարը յէլ մնա, իս չըմ իտա, անկարելի կուռձ ը:
 Աղվիս կիլնը, կերթա մա՛ Ամբըրեն: Ամբըրեն կ'հրողկը, մարթ կը տանը էնտեղ:
 Կըսը. – Ամբըրա՛, իս անու խուզյին անատիցը արճու ձեռնեն, ան ուր քուր իտու գի: Ինչ արձ գըռնաց, փոշմընավ, ալ քուր չըր իտա: Անու քուր էլավ տըղով: Էլավ գիրովանվ էթալ վար գիկ: Էլա՛, ըսըցի խիղճ ը, առի ըզքուր, պիրը: Դանա քանը յեր քուրուչ

փուր, իճավ: Մարթ գանդտիկ զուր քուր առից, տարավ: Մըկա կը լան, կը բռռամ, չի տա: Իմ նամուսն էլ թափավ:
 Ամբըրեն աղվըսկուն էսաց. – Ի՞նչ տաս ծի քանափուլ, իս ըզքու կնիկ առնիմ, տամ քյի:
 էսաց. – Ձենե ի՞նչ կը գա, իս շեվար իմ: Եթե ուր տու Ամբըրա իս, Աստծու տանատատանով միր տատ կըտըր:
 Ամբըրեն էսաց. – Ի՞նչըխ տու աղվիս մ'իս, ըզքուր կառնիս քանափուլ, նուր ըզմարթ կազատիս, իս Ամբըրե մ'իմ, քյենե քանափուլ չառնիմ:
 Ան էլ էսաց. – Ախըր իկիր վերես, քու ուզած ի՞նչ ը, ուզի՛, ուր իս պիրիմ:
 էսաց. – Չի փուկ չըկա իմ խարորին, գըռնա՛ գի փուկըմ պի:
 Աղվիսն էլ կը գա, իրիք էօր կը տափկանա մա՛չ առտին: Ան մեկ էօր առտը տեր ըզփուկ կը մառնա հանդե, կերթա:
 Աղվիս ըզփուկ կը փախցը, կը պիրը: Կը պիրը, տա գԱմբըրեն:
 Ամբըրեն էլ կը հրողկը հիտիվ մարթուն:
 Կըսը. – Քու քուր անու կնիկն ը, պի՛, տո՛ւ անու, խիղճ ը:
 Կիլնը, ըզկնիկ կը տա գաղվիս: Ասպանութին կընկան միտեն էրկու տըղա կը տա աղվըսկուն: Տըղենիր կինին հիտիվ աղվըսկուն, կիլնին տուս:
 Արձ ան կընարեն կը գա՛ հիտիվ աղվըսկուն:
 Կըսը. – Աղվիս, Աստված խեր անի, քյի տըղա չըկեր, նա հուրդո՞ւց ի քու տըղենիր:
 Աղվիս կըսը. – Կնիկ իմ պիրիր, ուր թու տեղ անտարգ կնիկ չըկա:
 Կըսի. – Քու կընկան անըլ հուրդո՞ւց ը:
 Կըսի. – Իմ կնիկ նա մարթու քուրն ը:
 Արձ կըսը. – Իս ըզմարթ շախիմ, քուր խասնը քյի՞:
 Կերթա, վար մարթու տըռան կը կայնը, կըսը. – Մա՛րթ, իս ըզքյի շախիցը, տու ըզքուր տըվիցիր աղվըսկուն:
 Մարթն էլ կըսը. – Իս ի՞նչըխ անիմ, աղվըսկու տապիր շատ ը:
 Կը հրողկը, գաղվիս կը պիրը արձ, կըսը. – Աղվիս, ռաստին ըսա, քու աղեկութին ի՞նչ էլավ խա՛ նա մարթուն, ուր քուր իտու քյի:

Կըսը. – Վոլնա՛, ան էօր, ինչ տու՛ւ գան պըռնիցիր, տ'ուտեր, իս գան ազատիցը, էսաց, թե՛ զիմ քուր տը տամ քի:

Արճն էլ կըսը. – Աստված զիմ տունն անվըր, իս ճիճացիր իմ, հաննա խիլքը չըկա իմ գըլըիխ: Քանսուն էօր իս գմարթ շնխիցը, վնաստակ խասավ աղվըսկուն:

Աղվիսն էլ կըսը. – Արճ ախպեր, քու պես իլնը, իս չըմ շախվը: Ասպանութին խիլքը տըվիր ծիկ, կըտըրճութին տըվիր քիկ:

Արճն էլ կերթա, վնար աղվըսկե պուճին կը նստը, կըսը. – Ահդ իլնը, չուր իս քու կնիկ չըտանիմ, իս էստեղեն չըկայնիմ:

ԸգըլըլՖըթով մընացած նիրս ծարավ, աղվիս, ուր կնիկ, ուր ճըժիր, արճու հնխուն չըն գըլխշնա իլնը տու՛ս: Աղվիս գանդտիկ գյետին կը ծակը, հուրուշ տեղ վե կիլնը տու՛ս: Կը գա մա մարթ, մա անիր:

Կըսը. – Անի՛ր, պի ցնխանվիլըմ խանլացըցիմք, տանք արճու՛ն, անգանտվիմք մընեն:

Մարթն էլ կիլնը, ըգցնխանվիլ կը խանլացըցը, կը կայնըցը պատի հիրիս վե:

Աղվիս կը գա մատ արճ, կըսը. – Ձենե ի՞նչ կուզիս:

Արճ կըսը. – Իս կուզիմ քու կնիկ:

Աղվիս կըսը. – Վըրե ան մեկ կնի՞կն ը, ան կնիկ չըկա՞ ախշըրքի վերա: Տու՛ իմ քըսմաք կտրող չիս, ծի քյենի՛մ կա, քանճ իմ կնիկ շատ խորոտ ը, էրի՛, էրթանք, տամ քը խանար:

Արճն էլ ուրնխութեն շաշ կիլնը, կըսը. – Աղվիս ախպեր, անպան միմք ի՞նչըխ տանտակ տ'երթանք, խընանութին անիմք:

Կըսը. – Արճ ախպեր, գըռնա՛ տըմակըմ պի, գանտա՛ թըխիմք, անգանգանտա՛ թըլանվիմք, օր տա՛ միր նամուս չըկուտըր:

Արճն էլ էլանվ, գըռնաց տըմակ մ'առից, իրը:

Աղվիս էսաց. – Տանտի չուր հեվարին, իս կը խանլիմ, կանիմ գանտա՛, տու՛ արը, իս կը կապիմ քյաֆիկ, կառնիմք, կերթանք:

Արճ գըռնաց ուր տուն, աղվիս ըգտըմակ կերավ:

Մընաց, հեվարին առճ իրը:

Էսաց. – Աղվիս, գանտա՛ թըխի՞ր իս:

Էսաց. – Արճ, Աստված քու տունն ավիրը, քու տըմակ անցկուն էր, խանլանվ, կըպավ տապկուցը կուղ: Մեկ տըմակով ի՞նչըխ խարսնիս կիլնը: Գըռնա՛, տըմակ մ'էլ պի, օր ոքըմ կըտըր, նա քիչ էր:

Ան տըմակն էլ կիրավ աղվիս:

Յեվարին արճ իրը:

Էսաց. – Աղվիս, դիրիս գանտեն թըխվի՞ր ը:

Էսաց. – Աստված քու տունն անվըր, թոնիր խով էր, հըմեն էլավ կուտ, գըռնաց մա թորվան:

Էսաց. – Ապա՛, աղվիս, ի՞նչըխ տ'իլնը:

Էսաց. – Պեթկ ը տու՛ հանաճ էրթաս, փետ պիրիս:

Արճ գըռնաց, չուր ծառըմ մըզղանխառ քանչից, իտի վնար թիվին, իպը:

Էսաց. – Աղվիս, փետ պիրը:

Էսաց. – Դե, էրկու խատ էլ տըմակ պի՛, ան գըռնաց:

Արճ էրկու տըմակ էլ իպը:

Էսաց. – Ախուր էլ պի՛, անախուր գանտա՛ չըն թըխը:

Արճ էլանվ, գըռնաց ճանաց անլրե: Կը տեսնա՛ մարթ չըկա ճանաց: Կիրիշը, կը խը՝ օղուն վե լիկ աղուն ը, ախուր չըկա: Ի՛նչըխ արավ, չըկանրցավ ճանաց կանացըցեր: Էլանվ, իրը հիտիվ աղվըսկուն:

Էսաց. – Աղվիս, Աստու՛ սիրուն, ճանացպանութին քյենե չի՞ գա, ախուր աղանք: Ձենե պան չի գա:

Աղվիս էսաց. – Յեռոո՛, չըխտ իմ խոր սանանքն ը:

Էն, արճ իկին ճանաց:

Էսաց. – Արճ, տու՛ իլի՛, նստի վնար քանին, հաննա ախուր բանրանվը:

Աղվիսն էլ ըզճանղը ճըրխատ քյեչից, տիրըմ ճանաց վնար արճուն կան իրը:

– Աղվիս ախպեր, քու Աստու՛ բախտ, աղվիս ախպեր, քու Աստու՛ բախտ, խասը՛, ըզճը անգանտը՛:

Արուն, արընճուր արճու՛ գըլխեն կը չըռա տակ:

Աղվիս կըսը. – Յանա՛ խարսնիս սըհա՞թ ը: Վուր տա՛ տու՛ չըս կանա ճանացըմ պանցըցը, տու՛ ի՞նչըխ կնիկ տը շախիս:

– Աղվիս, Աստու՛ սիրուն, ըզճը անգանտը՛, ծի թորա՛:

Աղվիսն էլ կըսը. – Քանի իս, տու՛ հանվզանվա ինք, իս ըգըլի տ'անգանտիմ, տու՛ խիղճ իս, միխք իս:

Կըսը. – Աղվիս ախպեր, իմ գըլըիխ վնար ճը չըտանտըր, իմ գըլըխու քանվ ի՞նչ տ'իլնը:

Կըսը. – Քյենն վուր տա կը գա՛, երկու տըմակ պիրիս, ծեծիմ, առնիմ վար քու գըլխուն:

Ան էլ կերթա, երկու տըմակ կառնը, կը գա՛: Ըզտըմակտիր կուտը աղվիս: Ռիսչոի գյուն կը կուռծը արծու գըլխի հինը:

Կըսը. – Իլը՛, գըլնա՛ քու տուն, չուր քու գըլխի ժըրը, նուր արը:

Արճ կերթա, քանի մ'ետը կը մընա ուր տուն: Խորիտ գըլխի կը ժըրը, կիւնը, կը գա՛:

Կը գա՛, կըսը. – Աղվիս ախպեր, դիր իս գանըյ խարսնիս, քու քյեննիս պի ծիկ:

Կըսը. – Աստված քու տուն ավըր, իմ անիր անկանդար մասրա՛ք արա՛վ, քանսուն կըտիր ոխչար զինից, մինըյ կերանըյ: Անկանդար անաղ խըմանըյ, մընացինըյ քու հիվով, տու չիկիր ըզքու կնիկ տաներ, տու ըզմի խապիցիր:

– Աղվիս, անա՛ ի՞նչըյ անիմ:

Էսաց. – Պի՛, թածա՛ մասրա՛ք արա՛, քու խիլըյ վուր տա, քու խիլըյ գա՛ քու գըլխի: Գըլնա՛, պի՛ քանսուն տըմակ, պի՛ քանսուն տիկ գյինը, նուր անինըյ խարսնիս:

Արճ էլավ, գըլնաց, տըմակտիր իպը: Գյինիըյ էլ իպը: Աղվիս, ուր կնիկ, ուր ճըժիր կուտին, քյե՛ք կանին, արճ հանդե անութը կը խատնը:

Էլավ, տանտակ դաբո մ'իտու ուր անիրոչ ծեռ, էսաց. – Տու՛ գար, մինըյ խաղանըյ, խարսնիս ը:

Յեվարին արճ իրը տընն:

Էսաց. – Աղվիս ախպեր, դիրիս քու թանա՛րիըյ տիսի, էրթանըյ աներանց տուն ախչիկ ուզելու:

Աղվիս էսաց. – Աստված քու տուն ավիրը, գի՛ գյեղական սագ, մանդարեն կը գարկին, կը խաղան, խարսնիս ը:

Էսաց. – Խարսնիս ը, անա՛ մինըյ ի՞նչըյ անինըյ:

Էսաց. – Խարսնիս ը, քը խանար ը, խակին ի՞նչ: Գի՛ կը գարկին, անունց խանար կը խաղան:

Արճ ուրախութեն շաշ էլավ:

Էսաց. – Աղվիս, դե լա՛գի՛, յանըյ դիրիս:

Էսաց. – Դե՛, արը՛, մա՛ ջըվա՛լ շըլկը՛:

Ջըվա՛լըմ լիկ փըթիր արա՛վ, իտու արճու քանակ:

Էսաց. – Աղվիս, մա՛ ի՞նչ ը մա՛ջ ջըվըլին անցկընեն ծանդըր:

Էսաց. – Վըրե՞, տու չը՞ս գըլտը, գանա՛ յը, քու պերած տըմակտիրն ը, արիր իմ գանա՛:

Արճ անութը, գախ ը՛ խատնը:

Էսաց. – Աղվիս ախպեր, իս քու Աստծու բախտ, տու գանտե՛մ խան, իս ուտիմ:

Էսաց. – Աստված քու խիմ քակը, ինչ իս փըսակվա, քանսուն էօր ուրախութեն պան չըմտավ զիմ պերան: Է՛, գանտըյ զըմեն խամբըրուկ ը, անեն ոըքան երկու գանա՛ յը, օր մեկ տուն ռաստ իրը, մեկ ջուխտ տը տանըյ անու: Օր տա մեկ գանա՛ պակաս իլնը, ըզմի տը սպանին գյեղական:

Կիւնին, կերթան խարսնըսը տուն: Աղվիս ուր կնիկ կը խանը խաղ, ինչ արճու աչկ կ'ինը աղվըսկու կնիկ, խիլըյ գըլխեն կիյա, անցկում խորոտ ը:

Կըսը. – Ախ, աղվիս, երանիկ էլներ, իմ կնիկն էլ քու՛նու պես խորիտ էլներ:

Կըսը. – Եա՛ ճիճ քուրն ը, պըստիկ տը խասնը քյի, քանճ մա շատ խորոտ ը:

Ուր կընկան կըսը. – Տու տեղին խակա՛վըյրո՛վ իս, վա՛ղ կարմիր խակա՛վըյիր խագը՛, արը՛, խաղա՛:

Էլըմ էլ զուր կնիկ կը խանը խաղ աղվիս:

Արճ կըսը. – Աղվիս ախպեր, մա վի՞ր կնիկն ը՛ կը խաղա:

Կըսը. – Ան քու կնիկն ը՛ կը խաղա, իմ տեղին խակա՛վըյիրո՛վ էր, մա՛ կարմիր ը:

Ուրախութեն ծուխ արճու գըլխուց կերթա:

Կըսը. – Աղվիս, անա՛ հի՞փ տ'երթանըյ փըսակ:

Աղվիս կըսը. – Մի՛լի՛վ, իս էրթամ, էրեց կընդընիմ, քավոր կընդընիմ, օր տա՛ յանըյ փըսակ:

Աղվիս զուր անիր կը կանչը, կըսը. – Իլը՛, Աստված քու տուն ավըր, քանը շուն կա, տար բահրավը մա տուն, չուր մինըյ գանըյ:

Ճըժերուն էլ կըսը. – Յանեն մեկ քարըմ պըռնեցե՛ք ծեռ, ինչ արճ կը գա՛ ժամու տուռ, գյիսկ է լավան¹⁸ ուզեցե՛ք միտեն:

Աղվիս կըսը. – Արճ ախպեր, դիրիս էրթանըյ փըսակ:

Աղվիս գարճ կը մըտուցը տուն վե: Օր կը գա՛, ուր շուն կը պիրը խատ ուր, ճըժիրն էլ քարիր կը պըռնին ծեռ:

Աղվիս աչկով կանը ճըժերուն, կըսը. – Դե՛, գարկեցե՛ք:

¹⁸ Երեխաները հարսնածի առաջը կտրում են և փող ստանում (Ճ. Բ.):

Մեմեկ քարըմ կը գարկին, շընիր կը խասնին դախ արծ:

Արծ կը բռռա. — Աստծո՛ւ սիրուն, աղվի՛ս ախպեր, ըզծը ազատը:

Աղվիս կերթա ուր տուն, կը պախկըվը: Արծն էլ շընիրու ձեռնեն կը պըռծընը, կը փախը: Կերթա ուր տուն, ալ խիւթը գըլուխ չըտատը, աճցկում շընիր պըռնած:

Կըսը. — Աստված իմ տուն ա՛վըր, իս կելնիմ, աղվըսկուն կը խապվիմ: Տո՛ւ տատըր, հալա չէ՞ իմ աչկ մեկ էլ տ'իճը աղվիս:

Արծ կը գա, վար աղվըսկե պուճին կը տատըր:

Կըսը. — Աղվի՛ս, ահո իլնը, դիրիս տո՛ւ ըզբո՛ւ խուզյին տընիս անծակ տըտում, իմ ձեռնից ս'ազատվի, իս ըզբյի տ'ուտիմ:

Աղվիսն էլ կըսը. — Աստված քո՛ւ տուն ավըր, մեղավուր իս չէր, մեղավուր տո՛ւ յեր:

Կըսը. — Ապա իս ի՞նչըխ աներ:

Կըսը. — Իս քյի շոտով թա՛մբը արը, ըսըցը՝ գյինի խըմը, օր թո՛ւ շուն քյի չըմոթխըսնա:

Արծն էլ կըսը. — Դե՛, էրթանք խարսնիս, խալի՛ս ա՛սա տըրո՛ւն իս գյինի տը խըմիմ:

Արծ կիլնը, կը գա խարսնըսը տուն: Աղվիս գյինի կը տա, արծ կը խըմը:

Արծ տիր'մ կը ծըռը, կինը մա՛չ գյեղին:

Աղվիս կըսը. — Արծ ախպեր, չէ՞ իս ըսըցը՝ քո՛ւ հիտ-հաճաճ գըլտը: Մարթ ուր աներանց գյեղ ընցկընա՛ բեփարդութին կանի՞, ինչ տո՛ւ կանիս:

— Աղվի՛ս, Աստծո՛ւ սիրուն, իս ի՞նչըխ անիմ, ապա իմ խիւթը վար ձի չըտատըր:

Կըսի. — Իլի՛ վար կարմընջին, ըզբյի թալ՛ գյետ, բալթյի պաղիս, ռըհաթիս:

Կիլնը վար կարմընջին, զինք ճըլխթը՝ կը թալը գյետ:

Ամբըրի շընիր կակախին, կը խասնին, գարծ կը պըռնին, արծն էլ թացվիր, չըկանա փախը:

— Աղվի՛ս ախպեր, Աստծո՛ւ սիրուն, ըզծը ա՛զատը, — կը կանչը:

Ա՛ն էլ կըսը. — Արծ ախպեր, վիվ ծուկ պըռնը, ոռ կը թացվը:

Առճ բե ա՛մալ կանին, արծ կինի հանդե:

Աղվիս կը գա, ուր ձեռ կը տա արծո՛ւ գըլուխ, հիրար կը տա:

Կըսը. — Թա՛ժա՛ փեսա, իլի՛ վե, ի՞նչ իս կուղ իլի հանդե:

Ինչ թա՛ժա՛ փեսը բա՛ս կանը, արծ ա՛խ կանը, ինչ ախ կանը, աղվիս հախու կը փախը, կըսը. — Վուլա՛, մա՛ արծ էլմէլ տը ժըրը, գա՛ թախ ձը:

Կիլնը, կը գա տուն, կըսը. — Կնի՛կ, արը, յանքյ, թա՛ժա՛ փեսեն ուտինքյ դիրիս:

Աղվիս, ուր կնիկ, ուր տըղեկնիր կը գան թախ արծ, վուլա՛ գարծ հանդե կուտին: Կը խաղան, կը գան ուրինց տուն, կը խասնին ուրինց մըրագ:



29. ԱՂՎԻՍ ԵՎ ՄԱՐՏ

Կեր, չկեր մարտը կեր, ուր կնիկ: Մարտ կերթա վնր կանը, յուր չանթեն խացն էլ գո վնրը կուշտ, աղվիս կը գն, կառնը ըզխաց, կը յա:

Մարտ կիյնի խատ տուս, կան կը գն, կերթա ծառի՛մ տակ, կը տեսնա՝ գո աքիս ծառ վե, հաննա կը հնգտըֆը ծառ կըտորը:

Աքիս հաննա կըսը. - Տու իմ տուն ավրողն իս, ուր իմ տուն տ՛նվրիս, գո ան աղվիսն ը քու չանթեն տարիր, քու խացիր կուտը:

Մարտն էլ կը վնգը, կերթա մն աղվիս, ուր գաղվիս բռնը, աղվիսն էլ կըսը. - Աղուրթ իսնը աննանկուսին. իս քու չանթեն բերողն իմ, ըզի կանիս քու գող:

Ան էլ կըսը. - Չէ՛, աքիս ծի էսաց՝ աղվիսն ը տարիր:

Աղվիսն էլ կըսը. - Աստված քու տուն ավրը, ան անցկուն կանը, ուր տու անու ուսկիք չըկընդընիս, անու տուն ավրիս: Անու շատ ուսկը կա, գյըննա՛, անու վնռը, ուսկիք առ՛, արը:

Ան էլ հաննա լնգը կը գն, ըզկացին, ըզնավթ տընեն կառնը, կը գն, ըզծառ կը կըտորը, նավթ կը տա վուռուն, անու մըզիս կը խանը տուս, կիրիշկի կը ինը՝ խարիր ուսկը գո հանտե, անու տան մեջ:

Մարտըն էլ կառնը գնտ խարիր ուսկին, կը գն, կը գն ուր տուն, ուր կընկան կըսը. - Ահո իլնը, իս անեկութին անիմ խն աղվըսկուն:

Կիլնը, կիյնը հիտիվ աղվըսուն, կըսը. - Մըհն հո՛ւր տը կընդընիմ:

Կան կը գն, կան կը գն, գաղվիս կը կընդընը, կըսը. - Աղվիս անպեր, արը:

Աղվիսն էլ կըսը. - Աստված քու տուն ավրը, անպա իս ավիր իմ, իս միամիտ հայվան իմ, իմ սերտ ցե թու պն՛մ չըկա:

Ան էլ աղվըսկուն կըսը. - Քու մըրագ արա, իս քու մըրագ կատարիմ:

Ան էլ կըսը. - Իմ մըրագ նա յը՝ օրե ճուռըմ միս տու, իս ուտիմ:

Մարտն էլ կըսը. - Չէ՛, ուրլա՛, հանեն օր ճուռըմ միս շատ ը, քանը իմ կնիկ չուրթան տըրուրը, իս չուրթան տամ, տու ուտիս:

Աղվիս կըսը. - Չէ՛, ուրլա՛, վըրե՞, չէ՞ իս քու շիրիքն իմ, կես գիմն ը, կես՝ քուն:

Մարտն էլ կըսը. - Չէ՛, իս չը՛մ իտա քյի:

Աղվիսն էլ կըսը. - Է՛, իս ճնպով հայվան իմ, ծյի կըսիմ աղվիս, ծի անուն կա:

Մարտն էլ կըսը. - Չանեն խըլիսուն արը, քու ճուռ միս առ, տար, իս քու մոտեն պըրծընիմ:

Ան էլ հանեն խըլիսուն կը գն, ուր ճուռ միս կառնը, կը յա:

Ան մեկ օր միս կը մընա պակաս, կը մոռնա, չըբիրը, աղվիս կը գն, կըսը. - Մարտ, հո՛ւր ը իմ միս:

Մարտն էլ կըսը. - Չնսօր միս չըկա, գյըննա՛, խըլիսուն արը:

Աղվիսն էլ կըսը. - Ապն իս ի՞նչ ուտիմ ընթիս:

Մարտըն էլ կըսը. - Իս կըրակըմ էնգն քու ծեռ, հնսօր չըկա, տունեն անվրա, խըլիսուն արը, էրկու ճուռ տամ: Վըրե՞ ինչ տ՛իլնը:

Աղվիսն էլ հաննա կը ռկը, կիլնը, կը թըղնը, կը յա:

Կըսը. - Ահո իլնը, ալ իս չըթըղնիմ քու խանար:

Աղվիսն էլ կը գն, փանջարեն վե ըզինք կը թնլը մն տան: Չանա կը խասնը, դըկու վիզ կը բռնը:

Դիկըն էլ կըսը. - Աստված քու տուն ավրը, տու ըզի տը բռնիս ի՞նչ, ֆարնգն տան ըզի, կերար, քու աչք տի վնր իմ աղը կընկան: Խնպը՛, առ:

Աղվիս կըսը. - Դի՛կ, կիլնը՞, անցկուն պն՛մ քու մոտեն կը գն՞:

Դիկ կըսը. - Չանեն խըլիսուն արը, քու պուչ շանք տու, գյըննա՛, ան քի տնվը չըկա խիտ:

Աղվիսն էլ սովորավ, համեն խըլիսուն կը գա, ուր պուչ փան-
ջարեն վե շանք կը տա, կը յա:

Կնիկ դըկուն կը խարցըր, կըսը. - Են ի՞նչ ը՛ համեն խըլիսու
վար մի փանջարին կերևա, էմել կը կուրսը:

Դիկըն էլ կըսը. - Ան թագավորը լաճն ը:

Կնիկ կըսը. - Ապա ի՞նչըխ տ'իլըն՝ իս գան տեսնամ:

Դիկըն էլ կըսը. - Առավոտուն քյի հենք կը պը, իս կան-
չիմ, ան գա:

Կը մընա խըլիսուն, դիկ կը կանչը, աղվիս կը գա, կնիկն էլ
կիրիշկը, կըխը՝ աղվիսն ը:

Դըկուն կըսը. - Տա՛ անխուզը, չէ՞ տու կըսեր՝ թագավորը
լաճն ը, նա սարը հայվան պիրի, իս ի՞նչ տ'անիմ:

Դիկըն էլ կըսը. - Իս իմ հախուն անցկում արը: Դորիս քանը
ուր տու՛ անու միս կըտրիցիք, իս անցկում արը, ուր ըզի չուտեր:

Կնիկն էլ կը վազը մա ուր իրիկ:

Կըսը. - Լա՛գ արը, նա ջանավար ձենե չըտանտարը:

Մարտն էլ համա՛ ըզփետ կառնը, կը գա՛ թաղ աղվիս:

Աղվիսն էլ կըսը. - Մարտ, տու՛ ի՞նչ տ'անիս:

Ան էլ կըսը. - Իմ տընեն ինկը՛ տուս, քու սերտ չար ը:

Հանդե կը կըռվին, կը գարկը աղվըսկուն:

Աղվիս կըսը. - Ան օր, ինչ իս քյի ուսկը կը պիրեր, անուշ էր,
ան օր, ինչ ուսկը չըկա, ըզի քու տընեն կը թաղկիս: Իս անցկում
պատիժըմ տը տամ քյի, ուըրտա՛ տու՛ փըշուր չագանավիս:

Աղվիս էլ կը ռըկը, կը յա:

Կերթա, կը պանկը Ամբըրը տան տակ, Ամբըրեն էլ էլավ,
գըրնաց, ճուր տը խըմը, կը խը՛ աղվիս գի՛ հանդե: Կը խասնը,
գաղվիս կը բըռնը:

Կըսը. - Տանիմ, անիմ ձի քուրք:

Աղվիսն էլ կըսը. - Ամբըրա՛, ըզի թուղ, իս քի խարիր ուսկը
շանք տը տամ: Տու՛ աղեկ մարտ իս:

Ամբըրեն գան աղվիս կը թըղըր, կըսը. - Ուր տա տու՛ անց-
կուն բախտուն հայվա մ'իս, գըրնա՛, ան ուսկիք ա՛ռ, պի՛:

Աղվիս կըսը. - Մարտըմ տի խա՛ ձի, իս շանք տամ, թըխ ան
բիրը:

Ամբըրեն ըզխուլամ կը տընը խիտ, խընդրաց կը յան:

Աղվիս գան կառնը, կը պիրը մա՛ ան խիրկին, ըզուր մըկան
բուն շանք իտու, էսաց. - Գի՛ ըստա յը, խա՛ն:

Ան էլ կը փուրը, կը փուրը, խարիր ուսկը կը կընդընը: Կառ-
նը, կը գա՛ մա՛ Ամբըրեն: Ամբըրեն կը հիրիկը, գաղվիս կը կըն-
դընը, կառնը, կը բիրը:

Աղվիս կը գա՛ հանդե, կըսը. - Իմ մըրագ էն ը՛ զիմ տանտա-
տան նըհան մարտուն կըտրիս:

Ամբըրեն կը հիրիկը, ըզմարտ կը պիրը:

Մարտ կըսը. - Ամբըրա՛, տու՛ ըզի պիրի ի՞նչ:

Կըսը. - Իս ըզքի պիրի իմ, տու՛ նա հայվընը մոտեն փարեն
առիր իս, կիրի իս, վըրե՞ մըկա գան կը խանիս տուս:

Մարտ կըսը. - Իս միամիտ գացեր էր, վար կաներ, իմ խաց
տըրեր էր հանդե, կուրավ: Իս էլ մընացը անութը, էլա՛ խա՛ տան-
սին կան հիտ: Խա՛ տանսին գացը, նա՛ Ֆըլան ծառը տակ կը տես-
նամ՝ աքիս իլիր ծառ վե: Իս ծառ տը կըտրեր, աքիս էսաց. «Իմ
ծառ մը կըտրը, քու գող ուր կա՛ աղվիսն ը: Իս խա՛պար չիմ: Գի՛
ան քարը տակ»: Ինչ էսաց, իս էլ էլա՛ գացը մա՛ աղվիս, աղվըսուն
սիցը, թե՛ ո՞ր ը իմ չանթա խաց: Աղվիս էսաց, թե՛ աքիսն ը տա-
րիր, իս խա՛պար չիմ: Իս էլ սիցը՛ չէ՛, աքիս կըսը՛ աղվիս տարիր:
Աղվիսն էլ էսաց. «Տա՛ Աստված, քու տուն ավըր, անու խըզինա
կա, անցկում կանը, ուր տու՛ անու ծառ չըկըտրիս, անու ուսկիք
խանիս տուս»: Իս էլ գացը, ըզծառ կըտրիցը, կիրիշկիմ, կը խիմ՛
խարիր ուսկը գի՛ ծառը տակ, իս էլ առը, բիրը: Սիցը ռըհա՛թ տու-
տիմ, իս սըցը՛ աղվիս խիղճ ը, սիցը՛ քու մըրագ արա, աղվիսն էլ
էսաց, թի՛ իմ մըրագ էն ը, օր ճուռըմ միս տու՛ տաս, իս ուտիմ, իս
էլ սիցը՛ չէ՛, ճուռըմ միս շատ ը, ինչ մի չուրթան տըրուրը, բըռըմ
տա քյի: Աղվիսն էլ էսաց. «Չէ՛, խարիր ուսկը էր, օր ճուռըմ միս
տաս ձի, տա՛լ քիչ ը, իս, տու՛ շիրիք ինք»: Իս էլ սիցը՛ համեն օր
քու՛ ճուռ միս տար: Ան էլ համեն խըլիսուն կը գեր, ուր ճուռ միս
կառներ, կը յեր: Ան մեկ օր չէլավ՛ իս տեր, աղվիս իրը, ուր միս
ուզից, իս սիցը՛ խըլիսուն տամ, ան էլ էսաց՛ չէ՛, մըկա տը տաս:
Իս սիցը՛ չըկա: Աղվիսն էլ էլավ, հըռըկավ, գըրնաց, համա՛ խա-
սավ, զիմ դիկ բըռնից, ըզդիկ տ'ուտեր, ան էլ ուր հախուն կըսը՛
Ֆարնագ ըզի կերար, ի՞նչ Ֆայդա, զիմ աղը կնիկ ուզը, ուր տա՛
իլըն քու՛ յար, ուտիս, խըմիս, քյի քե՛ֆ անիս: Աղվիսըն էլ ճապով
հայվա մ'եր, համեն խըլիսուն իմ կընկան ուր պուչ շանք կը տեր,

իմ կնիկ էլ՝ դրկուն կըսը՝ նա ի՞նչ ը, ան էլ կըսը՝ թագաւորը լաճն ը, իկիր ըզքի հապովը, ուր ըզքի բռնը ուր յար: Կընկան աղկը կիյնը, չուր խըլիսուն ինչ կը գա, կը խը՝ աղվիսն ը, կնիկըս կը գա, ծի կըսա կանը, իս էլ գացը, գաղվիս տըփիցը, խանիցը տուս, հալ-քեֆյաթ նա յը:

Ամբըրեն կըսը. - Մարտ, տու քու Աստված, ան խաց հուստո՞ւց էր, ուր պիրի իս քի, մա ան առտին չէլալ քի կուըսմաթ:

Ան էլ կըսը. - Ուըլա՛, իմ կնիկ իայը:

Կը հորոզկին, ըզկնիկ կը պիրին:

Ամբըրեն անու կըսը. - Կնիկ, ան խաց հուստո՞ւց էր, ընչ տու տարար քու իրկան:

Ան էլ կըսը. - Ուըլա՛, տու իմ վիզ գարկիս, չըզարկիս, ան խաց իս գացը, մի տըրկըցը տըրեն կիողցա, առը, պիրը, տարա իմ իրկան:


Ամբըրեն կըսը. - Մարտ, տու չը՞ս գինա՛՝ խարան մալ հըմեն մարտ չըկանա ուտը, խաց վար քի խարանմալ, փարեն էլ վար քի չըխտ խարան էր:

Դիրիս աղվըսկուն կըսը. - Ան խաց արիր քու կուըսմաթ, ան Աստվածն ը արիր, չուր գա դիկըն էլ վար անու խըյանաթացալ:

Կը հորոզկը, դիկ կը բիրը, կը գինը, կը թալը հիրծիկ աղվըսկուն: Ըզմարտ, ըզկնիկ կը տա կախիլ. աղվիս պարզիրիս կիլնը տուս:

Կը կանչը, կըսը. - Ամբըրա՛, Ամբըրա՛, տու էլ քանափուլ կերող իս: Յան չըխտ տու աթարգ տանաստան կըտրող չէր:

Աղվիս էլ կիլնը, ուշիկ-ուշիկըն կը յա ուր տուն: Անունը խասան ուրինց մըրագին, տուք էլ՝ ծի մըրագին:



30. ԾՈՎՈՒ ԱԽԶԻԿ

Մեկ հարուստ մարթըն կեղի, էնու տըղա կեղի, կը տա դըպրոց՝ կարտան:

Յոթ տարի ուսում կառին: Մեծ տըղեն կը տաննա, կը գա տուն: Կը գա տուն, կը տեսնա, օր էնոր խեր նկարըն պիրեր ա, զարկե պատ:

Էտոր հայրիկին կասա. - Էսա նկարին տեր ընծի պիտի պիրեր:

Խեր կասա. - Էսա պատկերքի տեր չըն գիտի վո՞ն ա, իս գըմիր եմ մեկ հարուստ թուլըրից:

- Անկարելի ա, յա՛ն տ'երթաս պիրես, յա՛ն ես տ'երթամ էն մարթու մոտ, որից տու գըմեր ես:

Խեր ի՛նչըխ օր կենա, չէրի: Տըղեն կելնի, կերթա էն թուլըրի մոտ, օր խեր մոտեն նկար առեր էր:

Թուլըրին կասա. - Էսպես նկար մ՛ ես տվե իմ խոր, էսա նկարի տեր ծի ցուց տուր:

Թուլըր կասա. - Ջավա՛կ, էսի նկար ա, ըՍտամբուլա են ճամբան ծի:

Տըղային ինչքան օր կը համոզա, չէրի, տըղեն կելի, կերթա:

Տըղեն կելի, կերթա ըՍտամբուլա թուլըրի մոտ:

Կասա. - Էս նկարի տեր ծի ցուց տուր:

Կասա. - Ջավա՛կ, էսի նկար ա, ես էտոր տեր ո՛ր տեղեն քե ցուց տամ: Գանուչիք պերին ծախեցին, ես էլ առի:

- Էս կը խընտրիմ՝ էն գանուչիք ծի ցուց տաս:

- Գըլնա՛, ֆըլան գանուչին խարցու, ես էնու մոտեն եմ առե:

Կերթա գանուչոց մոտ:

Կասա. - Գանուչի՛ք, ես կը խընտրիմ՝ էսա նկարի տեր ձի ցուց տաք:

Կասա. - Իզուր ա, քյե շանց տանքը էլ, տու չըս կանա պիրի, թո՛ղ, գյընա՛ քու տուն:

Կասա. - Ես կը խնտրիմ՝ ձի ցուց տաք, թող ես չըկանամ:

Գանուչիքըն էլ կասեն. - Մենք գացիքըն ծովու մեչ, գանի՛ն էրաց ֆըռթունա, տարավ էտա ծովու միջու կղզին: Գանի՛ն կանավ էնտեղ, մենք էլանք տուս, էնտեղ մեկ շենլիզըմ կեր: Էտ շենլիզըմ մեչ մեկ ախչիկըմ կեր, ըտ նկարն էն ախչիկե նկարն ա: Չուր տուռ պացիքըն, գացիքըն, ախչիկ կուրիսավ: Էլ չըգլիտցանք փարի՞ Էր, ի՞նչ էր:

Տըղեն էլ էլավ, ճամբախ ինգավ, գյընաց:

Ճամբախ մեկ խալիվոր մարթ մ՝ էկավ հանեճ, ասավ. - Յա՛, տըղա՛, տու դո՞ր կերթաս:

Ասավ, թե. - Էսա նկարի տիրոչ հիտն տ՛երթամ:

Ասավ. - Էտա ճամխով օր տու կերթաս, կընգի դևերու երկիր:

- Ապա ի՞նչըխ էնեն, ո՞ր տեղվեր էրթամ:

Ասաց. - Օր կերթաս, էտա ճամխի վըրեն երկու դև կը կռվին: Ա՛ն երկու տիկ գլինի, երկու տիկ էրաղի, երկու տիկ էլ խաց, միս, կերակուլ: Տար էն երկու դևի մոտ: Էն դևեր էսա յոթ տարի կը կըռվին, գիրար չըհանթած: Էտա գլինին ու միս տուր էն Սիվտակ դևուն, էտա խացն ու կերակուլ, էրաղին տուր Սև դևուն: Օր ուտին, էտ Սև դև կը սարխոշնա, էտ Սիվտակ դև էնու կը հաղթա: Ինչ ուզես, քյե կը տա: Թե էն քյե ճանապարըմ ցուց տա էտա նկարին:

Տըղեն առավ միսը, կերակուլ, գլինին ու էրաղին, տարավ դևերուն: Միս ու գլինին էտուր Սիվտակ դևուն, էրաղին ու կերակուլներ էտուր Սև դևուն: Սև դև սարխոշցավ, Սիվտակ դև Սև դևուն հանթեց:

Սիվտակ դևն ասաց. - Դե՛, տըղա՛, ուզա՛, քու ուզած տամ:

Տըղեն էլ նկար ցուց իտուր, ասաց. - Էսա նկարի տեր կուզեմ:

Ասավ. - Գընա՛, իմ քուր գո՛ վըր ճամխին, էնոր ծըծվեր թալե վըր թիվերուն: Յետուց գյընա՛, իմ քուրոչ ծըծեր ծըծա:

Տըղեն էլ գյընաց, էնոր քուր նըստեր էր վեր ճամխին, ծըծեր թալեր էր վեր թիվերուն: Պըտուկ առավ պերան, ծըծեց:

Ասավ. - Խողածի՛ն, տու ըստե՞ղ: Խավքյն էնոր թևով, օցն էնոր պոռտով չըր էկեր էր ըստեղ, տու ի՞նչըխ ես էկեր ըստա:

Ասավ. - Իմ կըսմա՞ք էկեր ա ըստա:

- Աղե՛կ, - ասաց, - իմ ատամ կը ցավի, ես քու վիզ քաշեմ, քու արնով իմ ատամ դաղիմ:

Ասավ. - Չե՛, քուրիկ, ես էկեր եմ քյե ակընջկըլն տալու:

- Դե՛, շո՛տ ասա, քանի քու վիզ չըմ քաշեր:

Ասավ, թե. - Իմ ակընջկըլեն էն ա, օր քու ախպեր Սիվտակ դև Սև դևուն հանթեց:

Ասաց. - Քու ակընջկըլեն հընդունակ ա: Նստի իրիք օր: Նորեն ի՞նչ կուզիս, քյե կը տամ, գյընա:

Նստավ, խաց կերավ: Իրիք օր մնաց: Սիվտակ դև էկավ:

Սիվտակ դև քուրոչ ասաց. - Էսա մարթն ի՞նչ օր կուզա, տու՛ր:

Քուր ասավ. - Էսա իրիք օր էկեր ըստեղ, դըհա պա՛մ չուզեր:

Ասավ. - Դե՛, տըղա՛, քու ուզած ուզա:

Ասավ. - Իմ ուզած էսա նկարի տերն ա, ձի ցուց տաք:

Ասավ. - Ես չեմ գլիտի, գընա իմ ծյոչ քուրոչ մոտ, գո՛ վըր ճամխին, էնի քյե ցուց կը տա:

Սիվտակ դևն ասաց քուրոչ. - Ապա էսա տըղին մեկ նըվերըմ չըկա՞, տաս, ձի էնչափ աղեկութեն էրեր, գլինի, միս էտուր:

Ասավ. - Պա՛մ չըկա: Յերեկ ես գացի ծովափ, էն ծովու միջու ախչիկներ սուլեր խագած, տըղին վըր ծովուն, էկան, կը խաղին: Ես գացի՝ փախան, ըն մեկի սուլեր առեր, էկեր եմ: Էնու սուլեր մե հարմար չի գա, տամ էնոր:

Սուլեր իտուր, ասաց. - Օր կերթաս՝ իմ քուր գո՛ վըր ճամխին ա, էլման ծըծեր թալե թիվերուն, հետևանց գյընա՛, ծըծա:

Գյընաց, տեսավ՝ քուր նըստեր էր, ծըծեր վըր թևերուն: Գյընաց հետևանց, դևու ծըծեր ծըծեց:

Դև ասաց. - Տու վո՞ն ես, էկեր ես ըստա: Խավքյն էնոր թևով, օցն էնոր պոռտով չըկանա՞ գա ըստա, տու ի՞նչըխ ես էկեր:

Ասավ. - Լա՛վ, էսա յոթ տարի ա՛ իմ ախպեր կըռիվ կենա, քյե կանիմ խորված, կը ճամխես էնոր:

Ասավ. - Չէ՛, ես իկեր եմ, քյե ակընջկըլեն կը տամ:

Ասավ. - Դե՛, շո՛տ ասա, քանի չըմ մոռթեր:

Ասավ. - Իմ ակընջկըլեն էն ա՛ քիւ արպեր Աև դևուն հանդ-
թեց:

Ասավ. - Քիւ ակընջկըլեն հընդհունակ ա: Նըստի էրկու-իրիքյ
օր, խաց կե, նորեն ի՛նչ կուզես, ուզա՛:

Խաց կերան, իրիքյ օր նստավ, նոր Սիվտակ դևն էկավ:

Դև ասավ. - Էսա տըղին ճանապարհի չը՛ս տըրեր: Դա՛ն ՚մ
չուզե՛ր:

Ասավ. - Չէ՛, էսա իրիքյ օր ա իկեր ա ըստեղ, պա՛ն ՚մ չուզեր
ա, նոր տ՛ուզա:

Ասավ. - Տըղա՛, ուզա քիւ ուզածն:

Ասավ. - Իմ ուզածն էն ա՛ էսա նկարի տեր ծի ցուց տաս:

Ասաց. - Էտի գյընա՛ իմ մոր մոտ, իմ մեր քյե ցուց տա, իմ
գոռօ չի:

Տըղեն էլավ ճանապարհի, դև ասաց էնու քիւրոջ. - Ապա
նըվեր, պա՛ն ՚մ չըկա՞, տաս էսա մարթուն, ծի շատ լավութեն ա էրի:
Միս, գյինի էտուր ծի, կերա, Աև դևուն հանդթեցի:

Ասավ. - Ի՞նչ տամ, հերեկ ես գացի ծովափ, փանրիքյ ընտեղ
կը լողկընեն: Փախան, էն մեկի գյըլխանոց առեր եմ, էկեր եմ:

- Լավ ա, տուր էնոր:

Էտուր տըղին, տըղեն էլ առավ ըզգյըլխանոց ու էլավ
ճանապարհի:

Դևի քիւր ասաց. - Մոհլով քյելա, քյե պա՛ն մ՛ասեն: Օր կեր-
թաս, իմ մեր նըստեր ա վըր ճանխին, էնու մագեր կը սանտըրա:
Էնու հըմեն մեկ մագ խընծ կարպետըմ կա: Օր էրթաս էնտեղ, հա-
մա շոտեն ասա՛ քյե մուժդա՛ եմ պերեր: Չէղնի քյե շոշոտ ճըղ-
ճըղա:

Տըղեն էլ գյընաց, տեսավ մեր նըստի՝ խընծ ճյոջ կոնըմ կա:
Մագեր էնպես քալեր վըր թևերուն, հըմեն մագ խընծ կարպետըմ:

Տղեն էլ գյընաց, օր տեսավ, ասաց. - Մայրի՛կ, քյե մուժդե
մ՛եմ պերեր:

Ասաց. - Դե՛ շոտ ասա, քիւ մուժդեն ի՞նչ ա, թե չէ՛ քյե կերա:

Ասաց. - Իմ մուժդեն էն ա, քիւ լաճ՝ Սիվտակ դև, հանդթեց
ըզԱև դեվ:

Ասաց. - Արի՛ նստի:

Գյընաց, նըստավ դևու կըշտին:

Դևն ասաց. - Դե՛, ուզա՛ քիւ ուզած: Խա՛ց կեր, քանի մ՛օր
կա՛ց, նոր քիւ ուզածն տամ, գյընա՛:

Խաց կերավ, իրիքյ օր մնաց, նոր Սիվտակ դև էկավ:

Դևն էկավ, ասաց. - Մայրի՛կ, էսա տըղին հեչ նըվեր, պա՛ն ՚մ
չը՛ս տըվեր, քյենե պա՛ն ՚մ չուզե՛ր:

Ասավ. - Իկեր ա, չու՛մ մըկա չուզեր, նորեն տ՛ուզա:

Ասաց. - Դե, տըղա՛, ուզածդ ուզա:

Ասաց. - Էսա նկարի տեր ծի ցուց տաս:

Ասաց. - Էտա նկարի տեր գի՛ ծովու կղզու մեչն ա: Էտի փա-
րիներու քանգավորի ախչիկն ա: Օր տու՛ էկար, իմ ախչըկներ հեչ
քյե նըվեր չըտըվի՞ն:

- Տըվեր են: Էն մեկ ախչիկ ջուխտըմ սոլ ա տըվեր, էն մեկէլ
ախչիկն էլ գյըլխանոցըմ տըվե:

Ասաց. - Տու, տեսնամ ի՞նչըխ են:

Էխան էտուր: Իշկեց:

Ասաց. - Տըղա՛, էսա սոլ օր խագյիս, տաս վըր ծովուն, չըս
խըթվեր ծովու մեչ՝ ինչըխ գյետին քյելես, ընցկուն վըր ծովուն
քյելես, կերթաս: Էտ գյըլխանոցն էլ օր տընես, որտեղ էրթաս, քյե
չըն տեսնար: Տիւ կերթաս, էտ սոլեր կը խագյիս, կը տաս վըր
ծովուն, էտա գյըլխարկն էլ կը տընես, օր մարթ քյե չըտեսնա: Ա՛ն
էնա սանտըրն էլ խը քյե, առ էնա առծըլին էլ խըն քյե: Եփ օր
կերթաս, ծովու կղզու մեչ շենլիգյըմ կա, էդ ախչիկ գի՛ էտա
շենլըգյի մեչ: Էդ ախչըկեն էլ չորս խատ խալայեղ կա հանեճ: Էն
ախչիկն էլ տղայի՛մ խետ նշանվեր, ամա տել չըփսակվեր ա: Իմ
մատնիկն էլ տամ խընթ քյե. եփ օր տաննաս, պեր, տու ծի,
չըտանիս խընդ քյե:

Դիւր Սիվտակ դև ասաց. - Տըղա՛, տու՛ կերթաս, ա՛ն իմ էնա
մագեր, եփ օր նեղ ընգիս, կը տաս կրակ, ես քյե կը խասիմ:

Տըղեն էլ տանցավ, դևու մոր ասաց. - Մայրի՛կ, էնա սանտըր
ինչի՞ խամար ա:

Ասաց. - Էն սանտըր, եփ օր կերթաս, էն ախչիկ կը պերես,
հիմնան, ընգեն քիւ հիտև, սանտըր հիտուց քալիս, կեղի մեծ
պըրակըմ մըջ քյե, մըջ քիւ տու՛շման, էլ քյե չըն տեսի:

Ասաց. - Էն առծըլին ի՞նչ տ՛ենեն:

Ասավ. - Եթե օր պըրակից պըռծեն, գան քու հետև, առծըլիմ օր թալիս քու հետևեն, գյետիմ ամբողջ կեղի խանջալ, թուր, սուր պան: Էնոնք օր գան, էնոնց օտքեր կարընի, չըն կանա քյե խասի: Դե գընա: Ախչիկ կը տեսիս:

Տըղեն էլ գըրնաց: Սուլեր խագալ, էտուր վըր ծովուն:

Դևու մեր կանչեց. - Կանի՛, քյե մատնիկն էլ ցուց տամ:

Տըղեն տանցավ, էկավ:

Ասաց. - Տըղա՛, էտա մատնիկե մարիֆաթն էն ա, եփ օր կերթաս էն տեղ, ախչիկ կը տեսնիս, էտ ախչիկ քյե չըսիրա: Դամա եփ էտա մատնիկ շանց տաս, քյե կուգա:

Տըղեն սուլեր խագալ ու էտուր վըր ծովուն, գըրնաց:

Տըղեն գըրնաց կղզու մեջ, տեսավ օր շենլիգըմ կա էն տեղ: Փանջըրեքյ վեր վեր իշկեց, տեսավ օր էնու նկարի տեր գի տան մեջ:

Էն գըլխանոց իտիր գըլիխ, մըտավ տան մեջ: Եփ օր կերակուլ պերին էն ախչըկեն, էնու չորս խալայեղներն էլ նստած խընդ ախչըկան, կուտեն: Լաճն էլ նստավ, չանախի ըն մեկ կողմեն էլ ինքյ կուտա:

Էտ ախչիկ և էտ խալայեղքյեր գարմացան՝ էտա կերակուլ վո՞ն ա կուտա, մընքյ չընքյ տեսնար:

Ախչիկն էտոր խալայեղներուն ասավ. - Եսի ի՞նչ պան ա, կերակուլ կուտեն, մընքյ չընք հիմնա:

Մընաց էն մյուս օր, գինա էնպես: Ախչիկն քույաթ էտուր ուր նշանածին. «Չեղի՞ թե տու աներևութ քուլոգ տըրած ես, կը գաս խըն մե, խաց կուտիս, մընքյ չընքյ տեսներ»:

Նշանած էլավ, էկավ տուն:

Նշանած ասաց ախչըկեն. - Ես չեմ էտ պան էրող, էնի ի՞նչ պան ա՛ տու կասիս:

Էն էլ մընաց էնտեղ: Էն օր էլ խաց կերան միասին:

Տեսան, օր գինա մեկըմ ծածուկ էկեր, խաց կուտա:

Նշանածն էլ գարմացավ:

Ասաց. - Շատ կարելի է, օր տու ձի չըս սիրեր, ուրիշ յար մ՛ ես պըռնե, կը գա ըստեղ՝ մը քե:

Ախչիկ ասաց. - Չէ՛, ես խաթաթ չեմ էտա պանից:

Տըղեն էլավ, հըռըկավ, էլավ, գըրնաց ախչըկե մոտեն:

Էտա ախչիկն էլ ասավ. - Խացի՛ կերող, տու, քու Աստված, տու վո՞ն ես, ի՞նչ ես, տու ջի՞նս ես, տու քյե շանց տաս:

Տըղեն ծեն էտուր, ասաց. - Քու խալայեղներ խան տուս, ես խըն քյե գըրուցեմ:

Խալայեղներ մըլեց տուս:

Խալայեղներ էլան, գացին մըտ ախչըկա նշանած, օր պատմեն թե՛ խացի կերող ծեն էտու ախչկեն:

Տըղեն էնոր գըլխանոց տակ առավ, էլավ հերևան, նըստավ, կը խոսա:

Ախչիկ ասաց. - Տու ջի՞նս ես, հիսա՞ն ես, ասա՛ տու ընչի՞ ես էկած: Տու ի՞նչ ես դըրեր քու գըլիխ, օր ես չըտեսներ քյե:

Ասավ. - Էտա մը խառըրներ, ես քու խետ գործ ունիմ:

- Ասա՛, ի՞նչ ա քու գործ:

Ասավ. - Իմ խեր ձի էտուր դըպրոց: Յոթ տարի դըպրոց մնացի: Էկա տուն, էտա քու նկար տեսա մըր տան մեջ, ես էլ քու սիրուն էլեր, էկեր եմ քյե կընդընելու:

Ասավ. - Տու հիսան ես, ես փարի եմ, ի՞նչըխ կեղի:

Ասաց. - Էղի՛, չեղի՛, տու ձի ուզես, չուզես, գի ես իկեր եմ հիտիվ քե:

Ասավ. - Չեղի՛ր, ձի նշանած ան, արի իմ ծառեքըյներուց մեկ տամ քյե:

Ասաց. - Չեղի՛ր, ես քյե կուզեմ, հուրիշ օր լուս եղնի, չըմ ուզիր:

Ասաց. - Ես քյե չըմ սիրե, էլի՛, գըրնա՛, քանի փարիք չեկած. քե կը սպանեն:

Տըղեն էլավ, տ՛երթեր տուռ պաներ, միտ ընգալ մատնիկ, էխան, ընցուց մատ:

Տանցավ ախչըկեն, ասաց. - Տու ընչի՞ ձի չըս սիրեր:

Մատնիկ շանց խոու:

Եփ օր մատնիկ շանց էտուր, ախչիկ ասաց. - Տըղա՛, տանցիր արի, մ՛երթա:

Տըղեն տանցավ: Տըղեն ու ախչիկ ծեռ թալիցին հիրարու, նըստան էն տեղ: Էնքան, օր տըղեն ախչըկեն կը սիրեր, իրեք էնքան էլ ախչիկ տըղին սիրեց:

Ախչիկ տըղային ասաց. - Ես փարի, տու հիսան, ինչպե՞ս պիտի իրարու խետ ապըրվինքյ:

- Ես հարուստի տղոյն եմ, քոյն կառնիմ, կերթամ մեր երկիր, իրարու խեղ կապըրովինք:

- Եսա ծովն ի՞նչըխ տ'ընցընինք, էրթանք:

Տղոյն ասաց. - Ես ունեմ ընցկուն սուլեր, օր կը խագոյն, կը տամ վըր ծովուն, չըմ խըթվեր մըչ ծովուն:

Տղոյն ասավ. - Ապա տու ի՞նչըխ տը գաս, էսա ծով ընցնիս:

Ախչիկ ասավ. - Իմ խանգիստ ա. Ես էլ կելնիմ եղվընիկըմ, թըռիմ վեր քու թևերուն, էրթանք, իմ խանգիստ ա:

Էլան, էկան, ախչիկն էղավ եղվընիկըմ, թըռավ տըղի թևերուն, տըղեն իտու վըր ծովուն, էկան:

Հէկան, ծով ընցան: Տել չէր խասած դևի մոր մոտ, մեկ էլ էն ախչիկն նշանած առավ ուր հինգըրներ, ընգավ հետևեն: Էկան, էնոնց մոտեցան: Տղոյն մտածեց, ուր առծըլին հետևուն էթալ: Սար, քար էղավ խանչալ, թուր: Էտոնք էկան, տըվին վերեն, ուրենց օտներ կըտըրվավ, արուն էտու վըր օտներուն: Չուն էնոնք էտա թըրերուց, խանչըլներուց պըռծան, տըղեն ու ախչիկ սահաթի՛մ ճանրախ գատացան:

Մեկ էլ տըղեն տեսնա, օր ընգած ան, հետևեն կը գան:

Էկան, մոտխըսցան տըղին: Տղոյն էթալ սանտըր, տանցավ մեկ մե՛տե՛ծ պըրակըմ: Էնոնք ընգան պըրակի մեչ: Տղոյն ու ախչիկ շատ հեռըցան:

Մեկ էլ տեսնա օր չէ՛ Էտ մարթեր գինա պըրակի միճուց էլան, էկան: Էկան, մոտեցան, տըղեն Սիվտակ դևու մագ ծոցեն էխան, էտուր կրակ, Սիվտակ դև էկավ, խասավ:

Ասավ. - Տղոյն, ի՞նչ էղավ քոյն, ի՞նչ նեղ վիճակի մեչ Ես ինգե:

Ասավ. - Ես գըրնացի, նկարի տեր պերի, ախչիկն նշանվեր ա, նշանածն ընգե մեր հետև, չընք կանա ազատվի ծեռնեն:

Դև հանեմ պըռնեց, ըսկըսեց կըվել խետթեր: Էն էլ առավ ախչիկ, էկան դևու մոր մոտ:

Դևու մեր ասավ. - Տղոյն, քու ուզած պերի՞ր:

Ասաց. - Պերի, մայրիկ, գի՛ իմ խետն ա:

Ասավ. - Ապա իմ տըղեն ի՞նչ էղավ, օր էկավ ծըր հանեմ:

Ասավ. - Եսա ախչիկն նշանածի խետ կը կըռվին:

Ասավ. - Հա՛յ, տըղոյն, տու իմ տըղեն կըռվուց մ'ազատեցիր, տարար թողիր կըռվու՛մ մեչ մ' էլ: Պըռվավ՝ պըռվավ, Ես կարող

եմ իմ տըղեն ազատեմ էն տեղեն, ընոնք փառի եմ: Տու կերթաս, տըղոյն, իմ մատնիկ տո՛ւ, տու գըրնա:

Տղոյն ասավ. - Չէ՛, մատնիկ օր տամ, վախեմամ իմ կնիկ գինա ձի թողնի, էրթա:

Ասավ. - Չէ՛, էնոնք փառի եմ, օր մի անգամ էնոր խոսք էտուր, էլ երբեք չ'էրթար:

Մատնիկ էտուր դևու մոր, առավ ուր կնիկ, էկավ:

Շատ էկավ, քիչ էկավ, էկավ խասավ ուր խոր քաղաք:

Ախչիկ ասավ. - Տղոյն, թե Ես Եսա ախչիկ կըլըղոյ էրթամ, իմ լիս տը տա Եսա քաղաք, կարելի է օր հիւքըմաթ ըլնի, ձի քու ծեռնեն առնի:

Ասավ. - Ինչպես կուզես, էնպես էրթանք:

Ասավ. - Ես կեղիմ եղվընիկըմ, տու էլ էտա աներևութ գըլխանոց տիր քու գըլիխ, Ես կը թառիմ քու թիվին, կերթանք:

Էն էլ աներևութ գըլխանոց խտիր, գացին տուն: Տեսավ, օր էնու խեր մանախից խիվընցե, պառկեր էնոր նըվընի մեչ:

Տղոյն ախչիկն ասավ. - Իմ խեր Եսա խիվընցեր ա, ի՞նչ էնենք:

Ասավ. - Ես թերուռըմ կը քաշեմ իմ թևից, տու թաթխա՛ ճըրու մեչ, թոխ տան ըն ճուր, քո խեր խըմա:

Էն էլ թերուռ քաշեց, էտուր տըղին: Տղոյն էլ աներևութ գըլխանոց գի գըլիխ: Եփ օր ինոր խեր ճուր կուզա, տըղեն թերուռ կը թաթխա ճըրու մեչ, ծառեք էտա ճուր կուտան, խեր կը խըմա:

Խեր կը ժըրի:

Ախչիկ տըղին կասա. - Ինչպե՞ս տ' էնինք, օր մենք ըստեղ աշքարն էղինք:

Տղոյն ասավ. - Տու գիտիս, քու գիտցած էրա:

Ախչիկ ասավ. - Նամակըմ գըրնա, ասա՛ հայրիկ, շնապաթ օր մենք տը գանք քոյն տեսնըվինք՝ Ես ու իմ նշանած:

Տղոյն էլ նամակ կը գըրոյ. - Հայրիկ, Ես գըրնացի, իմ նկարի տեր կընդա, պերի:

Տղոյն կառնի նամակ, կը տընա խոր տեղաց վերեն: Խեր օր նամակ կառնի, կարտն, կը գարմանա:

Էն մյուս ախպիր կը կանչա, կասա. - Տղոյն, արի տեսնանք էսի ի՞նչ նամակ ա, քու ախպոր նամակն ա, էսի ո՞ն էպեր:

Ախպեր կը գն, նամակ կը կարտն: Նամակի մէջ գլորված էր, թե՛ հայրիկ, տո՛ւ հիմանաս՝ իմ նշանած առեր եմ, կը գնամ, շնայնք օր քոյն խուր իմ:

Ախպերն էլ կը զարմանա, թե ես նամակ ո՞ն ա ուղարկեր ըստեղ:

- Երանի թե իմ տղղեն անգամ մ' էլ գլեր, ես տեսներ, թըխ ես մեռներ:

Ախպերն էլ ասաց. - Հայրիկ, չուն շնայնք օր աչկենք, խենք ինչպե՞ս տ' էղի՝ սուք ա, աղորթ ա:

Չուն շնայնք օր էնոնք ըսպասեցին, տղղեն էլ գո՛ էնտեղ ականջ կենա, բայց չըն տեսնա:

Տղղեն գլըննց ախջըկե մոտ, ասավ. - Ինչպե՞ս էնենք, իմ խեր, իմ ախպեր նամակ կարտնցին, շատ ուրախցան, համա՛ կասին, թե՛ չըլնի՞ սուք էղի:

Ախչիկն էլ ասավ. - Շնայնք օր հիրիկուն կերթանք:

Էտ վաճառական էլ ուր ծառաներուն կը պատվիրա՝ հնազըր կացեք:

Էտոնք էլ հնազըր կը մընան, կը տեսնան հիրիկուն, օր մեկ մարթըմ, մեկ կինըմ գո՛ էնտեխեն էկան, լիւս մ'էլ գո՛ էտոնց հանեճեն կը գն:

Ծառեք մեկ մաս կերթան հանեճ, մեկ մաս կը գն խոր ակընջըլլա՛ կը տան, թե՛ էսպես պն մ'էկավ:

Խերն էլ կէլնի, ուր տղղերքներով կերթա՛ հանեճ, էն էլ կը տեսնա, օր լիւս տըվեր ա ճանապարհին, կը գն էն կողմեն:

Կերթան, կը խասին, կը ճանչընան, թե ուր տղղեն ա:

Տղղեն, խարս խոր ծեռ կը խամբուրեն, խեր էնոնց կը խամբուրա, կամնի, կը գն տան մեջ:

Էկան տան մեջ, տեսան ախջըկեց լիւս կէլնի, էտա ծառեք չըն կանա իշկի, լիւսուց ամոթ կէնին, ետ կը տաննան:

Խերն, էնոնք նըստան, զըրհուցեցին, խաց կերան, զըրհուցեցին:

Խերն էլավ, վեց օր, վեց գլիշեր խարսնիս էրաց:

Էտա ախջըկա լիւս փանջարեք վեր կը տա քնդըլին: Էտ քնդըլի փաշեն ուղարկեց թե՛ էս ի՞նչ լիւս ա՛ քնդաք իըմեն լիւսըլից:

Ճամխեց, գնցին խառցընեցին:

Վաճառական ասաց. - Մեր տուն պն՛մ չըկա:

Տանցան, գնցին, ասին թե՛ վաճառական կասա՛ իմ տուն պն՛մ չըկա:

Փաշեն ասաց. - Էն ի՞նչ սուքասան մարթ ա: Չէ՞ գո՛ մենք աչքնով կը տեսնենք:

Էկան, վաճառական տարան:

Փաշեն վաճառականին խարցնեց, թե՛ էսա ի՞նչ լիւս ա քու տան մեջ:

Ասաց. - Փաշա՛, իմ տուն հեջ պն՛մ չըկա: Մենակ ես իմ տղղեն եմ փսակե:

Փաշեն ասաց. - Շա՛տ լավ, տո՛ւ գլըննա՛, ես կը գնամ, կաչքեն:

Մարթն էլ էկավ տուն, ասավ. - Փաշեն ծի կանչեց, էսպես խառցըմ ձենե էրաց:

Տղղեն էլ ասավ. - Շա՛տ լավ, ես իմ կընգան խառցընեն:

Տղղեն կընգան խառցուց, թե. - Փաշեն էսպես ասեր ա իմ խոր, ինոր ի՞նչ պատասխան տանք:

Կնիկն էլ ասաց. - Թը գն, տեսնի, տաննա, էրթն:

Մընաց հիրիկվան: Վոլին առավ էնոր ընգերներ, էկավ: Էկավ, տո՛ւ տըլիեց, տո՛ւ պնցին:

Էկան ներս, եփ օր փաշեն էտա կընգան տեսնավ, խելք գլըխուց գլըննց, ո՛չ կարցավ զըրուցեր, ո՛չ էրթալ, ո՛չ գալ: Շաշմիշ էղավ, կայնավ ընտեղ:

Փաշի ընգերներ ծեռքեր պըռնեցին, խանին տո՛ւս, տարան ուր տուն:

Քիչ մընաց, փաշի խելք էկավ վերեն:

Էտոր ընգերներ խառցընեցին. - Փաշա՛, տո՛ւ քու խելք ընչի՞ թըռուցիր:

Փաշեն ուր ընգերներուց կը խառցընա. - Էն ի՞նչ տեսակ խան էր, փնրի՞ էր, իմ խելք իմ գլըխուց գլըննց, ես չըմ գլիտնա՛ ի՞նչ էլավ:

Ընգերներ ասին. - Մենք էլ չիմացանք՝ էտի ի՞նչ էր:

Վոլին էլավ, թելըռաֆ մ'ուղարկեց թնգնավորին, թե էսպես խրեղեն կին պիրած ա ֆլան վաճառականի տղղան, լիւս կը տա քնդըլին:

Թնգնավորն էլ էլավ, ճամխեց. - Էտա ախչիկ կառեք, կը ճամխեք ծի:

Վոլին ճամփեց թուրքի մոտ, ասաց. - Թագավոր քու խարս ուզեր ա:

Թուրքար ասաց. - Իմ տղղին ասեն, նորեն ծե պատասխան տամ:

Տղղին կասա. - Ձավակս, թագավոր քու կին ուզեր ա, ի՞նչ կասես:

Տղղեն ասավ. - Ես իմ ընդանիքին կը խառցընեմ, քյե պատասխան կը տամ:

Էկավ, կընգան ասաց. - Թագավոր քյե ուզեր ա, ի՞նչ պատասխան տանք:

Ասավ. - Գյընն, ասա՛ վոլուն, վոլ ի գացող, թը՛ գան:

Տղղեն խոր պատմեց, խերն էլ գյըննց, վոլուն ասաց:

Վոլին էլ մարթեր ճամփեց, թե՛ գացեք, առեք, պիրեք:

Մարթեր գացին, տուռ պացին, էտոնց խելք գյըլխուց գյըննց, էլան հայվընի կանդան, չըկարողացան պան մ'ասեն:

Գյըննացին վոլին մոտ, ասին. - Մեր խելք մեր գյըլխուց գյըննաց, չըկարցանք պերենք:

Վոլին էլ կասա. - Ապա թագավորի պատասխան ի՞նչ տանք:

Կէլնի, թագավորուն քույնք կենա. - Մեր խելք մեր գյըլխուց կիյա, չընք կանա իրիշկա են կընգան հիրես:

Թագավոր կասա. - Օր էտպես ա, էտոր մարթ թող առի՛, գան:

Ճամփին թուրքին, թե՛ էսպես ա թագավոր հրաման արեր, թե՛ քու լաճ թ՛ առնի ուր կնիկ, գան:

Վաճառական էլ կը գան, լաճուն կը պատմա թագավորու հրաման:

Լաճն էլ կասա. - Շատ լավ, մենք կերթանք:

Տղղեն կընգան կասա. - Թագավոր մե ուզեր ա, երթանք, խենք ի՞նչ տ'ենա, քյե ծըզնից տ'առին, չառին:

Խարսն էլ ասաց. - Վոլուն ասա՛ մենք ոտնով չընք կանա երթա, մե փայթոն թող ուղարկա:

Վոլին փայթոն կուղարկա, կը նըստին փայթոն մեչ, կերթան թագավորի սարի հանեճ:

Թագավոր մեկ սենյակըմ պատրաստե:

Էտոնք օր կերթան, լիւս կը տա թագավորի սարի վըրեն:

Կերթան, կը նըստին սենյակի մեչ: Էն տեղն էլ վոն օր կերթա տեսութեն, խելք գյըլխուց կերթա, կը տառնան հայվընի տեսակ:

Թագավորն էլ ուր վոզիրներ կը կանչա. - Էկեք, խենք ի՞նչ էնենք, չընք կարող երթա տեսության:

Վոզիրներ էկան, թագավոր ուր վոզիրներ ճամփեց, ասաց. - Գացեք, խենք՝ տուք էլ ընպե՛ս եք, ծեր խելք էլ տ'երթա՞ ծըր գյըլխուց:

Վոզիրներ գացին, ինոնց խելքն էլ գյըննաց, էլան, անասունի տեսակ տանցան:

Վոզիրներ ասին. - Էսա ախշիկ են տղղին ա կըսմաթ, Աստվածութեն էնպես ա հրաման էրե:

Թագավորն էլ ասաց. - Թող մընան իմ սարեն, իմ տընից ապըրվեն, թը լիւս տա վըր մեր քաղքին:

Քանի՛մ ժամանակ էնտեղ կապըրվին, տղղեն ախշըկեն կասա. - Ի՞նչըխ էնենք՝ էս տեղեն երթանք:

Ախշիկն էլ տղղին կասա. - Ախըր չէ՞ քու խետ աներևութ գյըլխանոց կա, թուխթըմ գյըրա՛, գյըրա՛ թըխ մեզ ճամփի. գյըլխանոց տի՛ր գյըլիխտ, տա՛ր, էն թուխթ էնոր սենյակի պատ գան:

Թուխթ կը գյըրա, կը տանի գանա պատ, թագավոր կը կարտան, կը գանմանա, թե՛ էսա թուխթ վո՞ր էպեր, մարթ չըմտավ իմ հոդեն:

Թագավոր ուր նորթագեներուն կը խառցընա, թե՛ էսա թուխթ վո՞ն իպեր, չըտեսա:

Կանրակոլներ կասեն, թե՛ մենք մարթ չընք տեսեր ա:


Թագավոր կը մըտածա, կասա. - Էտոնց թողնեմ երթան, իմ գյըլիխն էլ մեկ օյին չըխաղան:

Թագավոր կը պիրի, էտոնց կը խանլաթի, կը ճամփա, կերթան ուրենց հայրենիք:

Կը գան ուրենց հայրենիք, էտ տեղ քանի՛մ ժամանակ կապըրվեն, փանին չուզեր էն տեղ մընա, իրկան կասա. - Արի՛, երթանք մեր երկիր:

Ըզտղղեն կը հանոզա, կառնի, կերթա ուր երկիր:

Ինոնք կը խասնին ուրենց մըրագին, տու՛ն էլ՝ քու՛ն:



31. ԷՐԿՈՒ ԱՆՊԵՐՆԵՐ

Կեղի մեկ անկուշտ մարթըմ, էնոր կնիկ ու երկու տղղա էլ կուՆենա:

Էտ մարթն էլ շատ հարուստ կեղի, էնոր աչկ չըկըշտանար դուՆեի մալից:

Էտոր տղղեկներ կը ճանմխա օտար երկիր գոռծի:

Ճոչ տղղեն կերթա երկիրըմ աշխատելու: Կը տեսնա, օր մեկ սարի՛մ հանեճ ճոչ քարեր կենին գյիլ՝ կը գան սարի գյըլխուց տակ, պստիկ քարեր՝ սարի տըկանց կը տան հել վեր, կերթան սարի գյըլիխ:

Տղղեն կը գանմանա ըն տեղ, թե էսա քարեր ընչի՞ էսպես էղան, կը մըտածա ու իր ճանբանխ կը պըռնի, կերթա:

Կերթա մեկ հարուշ տեղըմ, կը տեսի՝ չորս պըղինձ ըռեզով տըրած վըր անգըռթներուն: Կը տեսի, օր գյըլխու պըղընձի ու հիտին պըղընձի տակ կը վանվի, ճուր ըն պըղընձեն կեռա, կը թալա ըն պըղինձ, պըղընձեն կեռա, կը թալա ըն պըղինձ: Միճու պըղընձերն էլ կրակ էլ չըկա տըկներ, տեղընցտեղ կը մըրկին ու կերեցին, ծուխ տըվե վերեն:

Էն տեղ կը գանմանա ու կը թոնի, կերթա:

Կերթա մեկ սարի՛մ գյըլիխ, կը տեսնա, օր մեկ վերու օջխար էնու հանճըվեն կը փախի: Կընգի հետև, կերթա, կերթա մեկ շենըլկ վեր կը մըտի էտա վերու օջխար:

Տղղեն էլ կերթա, կը տեսի, օր մեկ ըխթիյար գո ըն տեղ: Իրեթյ ծի էլ կապուկ ա ըն տեղ: Էտա ծիանբյն էլ մեկ սև ա, մեկ

սըվտակ, մեկ կարմիր:

Էտ խալիվորն էլ տըղին կասա. – Հե՞ր լանիցիր իճ էճու հետև:

Կասա. – Ես չըմ լաներ հետև, ես էկա, էն ծի տեսավ, փախավ, էկավ:

Խալիվորն էլ կը պըշկի, օր տըղեն շատ խորոտ տըղա ա:

Տղղեն օր կելնի էրթա, խալիվոր կասա. – Խորո՛տ տըղա, արի՛, ես քյե փանու՛մ տամ, գյընա՛:

Տղղեն կը տաննա, կը գան խալիվորու մոտ:

Խալիվոր կասա. – Էնա իրեթյ ծիուց ո՞ր մեկ քյե պիտի, տամ քյե:

Տղղեն կասա. – Չի էնա սըվտակ ծիմ պիտեր:

Խալիվոր կասա. – Էնի լավ չէր, համա գո ուզիցիր, քու քյեֆն ա:

Ծիմ կը տա տըղին: Տղղեն կը խեծի, մուղտանըմ կերթա, էտա ծիմ կը տաննա ճիրի: Մուղտան մ՛էլ կերթա, էտա ճիրին կը տաննա էլ:

Տղղեն կը գանմանա, կասա. – Խալիվոր ասաց՝ էտի աղեկ չէ՛ր՝ համա ի՞նչ էնեմ, գո պերի:

Մուղտան մ՛էլ կերթա, կը տաննա գիմեշ: Տղղեն շատ կը գանմանա, թե՛ ջանըմ, էսի ի՞նչ էր՝ էղավ:

Տղղեն կը հըռըկի, փետըմ կը գաննի գիմշու քանկին, գիմեշ կը տաննա հիսան:

Տղղեն կը գանմանա. – Հան՛, տե՛ր Աստված, էս ի՞նչ պան էր՝ Ես տեսա, էս ի՞նչ պան էր՝ էկավ իճ գյըլիխ:

Մարթն կըլնի զըրուց, կասա. – Տու հե՞ր ծի գանկիր:

Կասա. – Ապա տու ծի էր, էղան ճիրի, էլ, գիմեշ, դիր էղար հիսան: Գիմեշ էր, միտիլ կը քյելեր, ես էլ գանկի:

Կասա. – Դե՛, գյընա՛, էլ ես խըն քյե չըմ իգան, օր ծի գանկիր:

Մարթն էլ կը թողնի, սանհաթի՛մ ճանբանխ կերթա: Ծիմ էլըմ կը տաննա, կերթա ուր խալիվորու մոտ:

Տղղեն շատ կերթա, քիչ կերթա, շատ ու քիչ Աստված գիտա, կերթա, մեկ քանըթի՛մ ռաստ կը գան:

Կերթա կանվեն, խաց կուտա, չայ-մայ կը խըմա:

Կը խառըրնա կանվաջուց. – Էսա քանըթյ ինչպե՞ս ա, առուտուր կեղի՞, չեղի՞:

Կահվաճիմ կասա. – Վոլլա՛, առուտուր կեղի, աղեկ ա: Մեկ մարթըմ օչխար ա պիրեր, կը ծախա, խըտ առնողին քյար չըն ինգիր:

Տըղեն կասա. – Տ'երթամ, թե էնոնք քյար չընգան, ես տ'առիմ, ես էլ եմ էկեր առուտուրի:

Տըղեն կանի էն տեղ, թամաշա կենա, խենքյ ի՞նչըխ բագան կենն:

Կը տեսի, օր էտա օչխըրի տիրոջ ծեռ մեկ շուշե՛մ կա, օչխըրի տեր կասա. – էսա շուշեն հըլին օսկի էրեքյ, տըվեքյ ձի, ես իմ օչխար տամ ծե:

Քանի օր կը պերեն, օսկի կը լըցեն, էտա շուշեն չիլինիր:

Տըղեն կը գարմանա, կասա. – էս ի՞նչ պան ա, էսա շուշեն առնի առնի՝ քանսուն-հիսուն օսկի, էսա քաղքի վաճառականեր քանի՛ լըցին, չիլինավ, տը թողնիմ, էրթամ էսա քաղքյեն, էսա քաղքի բագան ձի պետք չէր:

Տըղեն շատ կերթա, քիչ կերթա, կը տիսնա մեկ սարըմ. քյեշ սար մ՛ ա, կը տեսնի մեկ մեյմուն: Ուր էրկու-իրեքյ ծաքյեր կան, ծաքյեր կըլորին սարի գյըլխուց, կենին գյիլ, կը գան տակ: Մեյմուն կերթա, թե մեկ խասնի, պըռնա, մեկ էլ կը կըլորի, թե մեկ էլ խասի, պըռնա, մեկ էլ կը կըլորի:

Տըղեն կասա. – Տ'երթամ, էնա մեյմունին եօգյնեմ, ծաքյեր պըռնեմ, տանեմ, տընեմ էնու պիւն:

Կերթա, կեօգյնա, կը տանի, տընա պիւն:

Տըղեն կը տա ուր ճամբախ, կերթա:

Մեյմուն կասա. – Տըղա՛, տիւ ձիկ աղեկութեն էրիր, ես էլ քյե աղեկութեն տ'ենիմ:

Կասա. – Տիւ մեյմուն ես, ձի ի՞նչ աղեկութեն տ'ենիս:

Կասա. – Առ՛ իմ էնա էրկու-իրեքյ մագեր, տար խըն քյե, աշխար ա, ժամանակ ա, թը նեղութեն ինգար, իմ մագեր տո՛ւր կրակ, ես քյե կը խասիմ:

Տըղեն մագեր կառի, կը տա ճամբախ, կերթա:

Շատ կերթա, քիչ կերթա, կերթա մեկ քաղքի՛մ հանեճ, կը տեսնա, օր խալիվորըմ կը գն հանեճ:

Կասա. – Ջըհե՛լ տըղա, դո՞ր կերթաս:

Կասա. – Վոլլա՛, տ'իյամ խըտ իմ կըսըթին, տ'իյամ առուտուրի էսա քաղքյըներ:

Կասա. – Կերթաս, համան էնա քաղաքյ առուտուր մ'եննի՛ր, ընցի՛ր, գյընա՛ հիւրուշ քաղաքյ:

Տըղեն կերթա էտա քաղաքյ, գյիշեր մըսաֆըր կեղի, խըլիսուն կըլմի, կերթա հիւրուշ տեղ:

Շատ կիյա, քիչ կիյա, շատ ու քիչ Աստված գյիտա, կերթա մեկ ծովու՛մ պըռուկ՝ շոքյ տըվեր ա վերեն, կասա. – էրթամ ծով, լողկընամ:

Կը տեսի, օր մեկ ծուկըմ դալղեն գարկեր, պերեր ծովափ, ծուկն էլ համա գախ ա՛ խատի:

Կասա. – Վոլլա՛, տը պառկիմ, իմ օտքեր տամ նըքյ, էնա ծուկ տը կլորեմ, էրթա մըջ ծովուն:

Կը նըստի, օտքեր կը տա նըքյ, հուշիկ-հուշիկ, դե ու դե, ըգծուկ կը կըլորա մըջ ծովուն:

Ծուկ լեգու կեղի, կասա. – Ի՞նչ էնեմ, գատըմ չըկա՝ տամ քյե փանու:

Կասա. – Տիւ ծուկ ես, ի՞նչ տը տաս; ձի քիւ գատ չըպիտեր:

Ծուկն էլ էնոր պոչից մեկ թերուըմ կը քաշա, կը տա տըղին, կասա. – Առ՛ էնա քյե, ժամանակ ա, թե նեղութեն հինգար, գաս ծովափ, տաս կրակ, ես քյե կը խասիմ:

Տըղեն էլ կառի ըգթերու, կերթա: Կը տեսի, օր մեկ խավքյըմ ընգեր ա վըր ճամխին՝ անթութեն պերան կը պանա, կը խըփա, համա գախ ա, օր խատի:

Կասա. – Վոլլա՛, ես էսա խավքիւն փըշու՛մ խաց-մաց տը տամ, ուտա, բալթը խոգյի գա՛ հինե, մեղքյ ա, չըխատի:

Խաց ու պան էնոր խուռըուց կը լըցա հանեճ, թոնի, կերթա:

Տըղեն սահաթի՛մ ճամբախ կերթա, խավքյն էլ խաց կուտա, պըռծի, կը կայիմնա, կը թըռի, կերթա, տըղին կը խասի:

Կասա. – Տիւ ձիկ աղեկութեն էրիր, առ էսա իմ թերու, օր նեղութեն ընգիս, թերու տուր կրակ, գամ, քյե կը խասիմ:

Տըղեն կառնի թերու ու կերթա: Շատ կիյա, քիչ կիյա, կը տեսի՛ մեկ խալիվոր մ'էլ կը գն հանեճ:

Խալիվոր կը խառընա. – Ջըհե՛լ տըղա, դո՞ր տ'երթաս:

Կասա. – Տ'երթամ առուտուրի, հիտն իմ կըսըթի:

Կասա. – Տիւ ձի լըսես, տը տաննաս յաս, մեղքյ ես:

- Ապա տաննամ, յամ, ի՞նչըխ էնեմ, իմ խոր աչկ դունեի մալից չըկըշտանար, էրթամ, իմ խեր ձի էլմա տը ճամխա:

- Տանցի՛ր, գյընա՛, ի՞նչ օր տեսեր ես, քիւ խոր կըսա՛ երա, էլ քյե չըճամխեր:

Կասա. — Վոլլա՛, ես շատ պան եմ տեսեր ճամխի խետ:

— Ի՞նչ ես տեսեր, ձի ասա՛, խենքյ՝ քիւ տիսած պաներ ի՞նչ ա:

Տըղեն կասա. — Էկա սարի՛մ հանեճ, ճիչ քարեր սարի գյըլխուց կը գյեն տակ, պստիկ քարեր կը տեն հել վեր, կէլին սարի գյըլիխ:

Կասա. — Գյիտե՞ս՝ էն ի՞նչ հնայով էր:

Կասա. — Չէ՛, ես ի՞նչ կիտիմ:

Կասա. — Էն ճիչ քարեր էն ճիչ մարթերն ա, օր էնոնց պաշտոնից տընգին, գան տակ, էն պստիկ քարերն էլ էն խեղճ մարթերն ա, օր կը պանծրանան, կէղին ճիչ պաշտոնի տեր:

Կասա. — Աղեկ, էնի էնպես, ապա տեղ մ՛էլ էկա, չորս պըղինձ տըրած են վըր անգըռթներուն, էրկու ծերի պըղինձ ճուր կեռեր, կը թալեր մըջ իրարու, կրակ տըղկներ կը վաներ: Էրկու միջու պըղինձ կրակ էլ չըկա տըղկներ՝ տեղընցտեղ կը մըրկին ու կիրիցին, ծուխ կերթա, ես ի՞նչ ա:

Կասա. — Էն էրկու ծերի պըղընձներ էրկու թագավուր են, իրարու կը գանին, իրարու պան չէլիր, ամա միջու պըղընձներ ժողովուրթն ա, օր կըռիվ էլ չէներ, կը չարչըրվի, կը մըրկի տեղընցտեղ:

Կասա. — Տեղ մ՛էլ գանցի սարի՛մ գյըլիխ, բերու էճ իմ հանճըվեն փախավ, գանցի, ինգան շենլըկըմ, մեկ խալիվորըմ կեր, ձի ծի՛մ էտուր, էտա ծին տանցավ, էղավ ճիրի ու էշ ու գհմեշ ու հիսան: Ապա էնի ի՞նչ էր:

Կասա. — Տիւ շատ հարուստ եքյ, վանղ թը ծեր խեր մեռի, թե տիւք էնոր մալի կեսըն ցըրվեքյ աղքըտներուն, ծեր դավլաթ տը վեկեքյ, թե չէ, էնպես չէնեքյ՝ տ՛աղքըտանաքյ, տեճնեքյ, լանգե՛մ կը գանեքյ ծեր դավլըթին, դավլաթ ծենե տը փախի՝ ինչըխ օր փետըմ գանկիր գհմշուն, գհմեշ փախավ, գյընաց:

— Ապա, պապիկ,— կասա,— էկա մեկ քանդաքըմ, բագանի մեջ տեսա՛ մարթըմ մեկ շուշե մ՛ուներ ծեռ, օջխար կը ծախեր, կասեր, թե մեկ էսա շուշով օսկի տեքյ ձի, ես օջխար հըմեն տը տամ ծե: Էտա քանդքի թիւջըրներ քանի օսկի պերին, չիլինավ:

Կասա. — Էն էլ հիսնի աչկ ա, դիւնեի մալն էլ էղի էնոր, կըշտու՛մ չըկա, չըլըցվիր:

Կասա. — Ապա ինչո՞վ կիլինի, ի՞նչըխ տ՛ էղի:

Կասա. — Հիսան օր մեռի, փըշու՛մ խող կը լըցեն էնոր աչկեր, կը կըշտանա էն փըշու՛մ խողից: Տիւ էլ օր կը տաննաս կերթաս, էտա օջխըրի տիրոջ ասա, թե՛ ես քիւ շուշեն հիլինեցի, քիւ օջխար տանեն, թե չիլինեցի՛, ինչ օր խըն ձի օսկի, պան կա՛ տամ քյե: Թե օջխըրի տերն ասավ՝ արի՛ հիլինա՛, մեկ ճանգըմ խող լից, շուշեն կիլինա, առ էնու օջխար, գյընա՛:

— Ապա էկա սար մ՛էլ, մեյմունի ծաքեր կը գյին գյիլ, կը գյեն տակ, ես էլ եօգյնեցի, տարա, տըրի սարի գյըլիխ, մեյմուն էլ ձի քանի՛մ մագ էտուր, ձի ասաց՝ թե նեղութեն ընգիս, մագեր տուր կրակ, ես կը գան քյե խասիմ, էն ի՞նչըխ կը գըրուցա:

— Էն փանի ա, եփ նեղ մընաս, կը գան, քյե կը խասի: Էն ծուկն էլ, էն խավքյն էլ փանի են, կը գան, քյե կը խասիմ:

Տըղեն կը տաննա, կը գան:

Կը գան էտա քանդաքյ, կը տիսի, օր էտա օջխըրի բագան քյար չըն ինգիր հալան:

Կասա. — Օջխըրի՛ տեր, քիւ շուշեն օր հիլինեն, քիւ օջխար տը տա՞ս ձի:

Կասա. — Խա՛, ես տը տամ քյե իմ օջխար: Օր չիլինցիր, ձի ի՞նչ տը տաս:

Կասա. — Իմ խետ ի՞նչ օր օսկի կա, տամ քյե:

Տըղեն կը պերա, ճանգըմ խող կը լըցա, շուշեն կիլինի:

Չօջխար կառնի, կը գան:

Օջխըրի տեր կասա. — Վոլլա՛, էտա քիւ գյիտութեն չէ՛ր, քյե շանց են տված:

Տըղեն կառնի էտա կըտիր օջխար, կը պերա էնոր խոր տուն:

Խեր կը պըշթա, օր տըղեն առավ էտա կըտիր օջխար, էկավ:

Խեր կը կանչա, տըղեն կը տանի, կասա. — Ես քյե էն չափ փանա տվի, պան տվի, էտա օջխա՞ր մենակ պերիր, ի՞նչ տը վանստըկյենքյ էտորից:

Ախր դե անկուշտ ա:

Էն էլ կը պատմա ուր գյըլխու գանլած, խալիվորի տըված պատվեր:

Խերն էլ օր կը լըսի ետա պատմութեն, խոր աչկն էլ կը կըշտանա:

Մեկ քիչ ժամանակ կը մընա, խեր կասա ուր խըզմաթ-քարներուն. – Խարցնեք իմ տըղից, խենքը ո՞րի ախչիկ կուզա, էրթամ, կարգեմ:

Տըղին կը խառցընեն, տըղեն կասա. – Իմ խեր գլխա՞՛ վո՞ն կը պերա, թը՛ պերա:

Խերն էլ որ մեկ ախչիկ կուզա, տըղեն չըխավներ ախչըկեն:

Մեկ օր էրկու աշըղ կը գան էնոնց տուն մեհվան:

Էտոր խերն էլ էտոնց կը խառցընա. – Տիւք կան գալացող մարթ եք, խորոտ ախչիկըմ չը՞ք գլխի՞ դիւր կա, պերեն իմ լաճուն:

Էտոնք պա՛մ չըն ասեր, խերն էլ չըխառցըներ:

Տըղեն էլ հիրիկուն էտա աշըղներուն խաց, պան կառի, կը տանի հօղեն, կուտին:

Էն մեկ աշըղ մեկին կասա. – Ընգե՛ր, մեկ խորոտ ախչիկ գի՛ Կաննա թիւջի՛մ տուն, վո՛վ գացեր, չըկարցի պերի: Շարթ կը պըռնա, օյին կը խաղա, ջամբագութեն կենա, չըն կաննա պերեր: Շանց տանք էսա տըղին, էրթա, վախենանք՝ չըկաննա պերա:

Էն մեկն էլ ասաց. – Շանց տուր, էն էլ թ՛էրթա, բալքո ճամբախըմ կընդի, պերա:

Տըղին կասին. – Կաննա ֆըլան թիւջին լավ ախչիկըմ կա, գացեք պերեք:

Տըղեն էլ խըզմաթքարներուն կասա, էնոնք էլ խոր կասեն:

Խերն էլ կէլի, կէրթա: Կէրթա թիւջի տուն:

Իտոնց էլ իրեք աթոռ էսպես ռեզով տըրուկ ա, վոն օր էրթա, միչնեկ աթոռ նըստի, գլխտեն գի՛ էկեր ա ախչըկե:

Վաճառական էլ կիյա, միչին աթոռին կը նստի:

Ախչըկե խոր կասեն. – Արի՛, մեկ մարթըմ էկեր, նըստեր ա վըր միչին աթոռին, արի՛ ջիւյա՛ր տու:

Ախչըկե խեր կը գա, պարնա կէղին: Խաց, պան կը պերա, կուտին, կը քըռնին չուր խըլխուն: Իրեք օր չըխտ անոնց անաթ չի՛ մըսաֆըրին պան խառցընել, իրեք օր կը թըմի, կը խառցընա:

Կասա. – Ի՞նչ ա, տիւ ախչիկ հապի՞վ ես էկեր, հո՛ւր ես էկեր:

Կասա. – Էկեր եմ՝ ախչիկ ուզեմ իմ լաճուն:

– Շատ աղեկ, ես չըմ ասեր՝ չըմ իտար: Ապա իմ ախչիկ օր ուզած մարթ չէղի, չառի:

Լաճու խերն էլ կասա. – Էրթամ, իմ տըղեն ճամխեն, գա՛, խավնավ, թ՛առի, չըխավնավ, թը չառի:

Կէրթա, լաճուն կասա: Լաճ կէլի, կէրթա:

Տըղեն էլ կէրթա, միչին աթոռին կը նըստի, ախչըկե խոր կասին թե. – Թիւջի տըղեն էկեր ա, արի խենք:

Կը գա, լաճուն պարնա կէղի, խաց, պան կը կերցուցա: Լաճ մըսաֆըր կէղի չուր իրեք օր:

Իրեք օր կը թըմի, կը խառցընա տըղին. – Իմ ախչիկ հապի՞վ ես էկեր: Իմ ախչիկ բաղչեն ա, գըռնա՛, տե՛ս, թե էն քե խավնավ, յան տիւ ինոր խավնար՝ առեք իրարու, թե չըխավնաք՝ մ՛առեք:

Տըղեն կէլի, կէրթա բաղչեն՝ ախչըկե մոտ, տըղեն ու ախչիկ հիրարու կը տեսին, հիրարու կը խավնին:

Ախչիկ տըղին կասա. – Ձի շարթըմ կա, խըն քե պըռնեմ, թե տիւ իմ շարթ խանի՛ր, չըխտ ես քե խավներ եմ, տ՛առիմ, չէ՛ չըմ առնիր:

Տըղեն կասա. – Թիւ շարթեր ծի ասա:

Ախչիկ կասա. – Օր իմ շարթեր չըխանիր, քե տը տամ պըռնել, չու՛մ մըկա քանտուն մարթ տըվեր եմ պըռնել, շարթ չըխանած:

– Դե՛, ասա թիւ շարթեր:

Կասա. – Տիւ գըռնա՛, պաղկըվի ո՛ր մեկ տեղ թիւ ջան կուզա: Կեսօրին սահաթ վեցին, թե ես գլխտա՞ տիւ դի՞ր էր, գլխտա: Թե չըգլխտա, ծի կը մընա մեկ շարթ: Գըռնա՛, պաղկըվի՛, սահաթ օր վեց թըմավ, էլի՛, արի՛, ես քե կասեմ՝ տիւ դիւր էր պաղկըվեր:

Տըղեն կէլի, կէրթա, կը զըվըռա թաղը վեր, կը մըտի մեկ տունը վեր չուր սահաթ վեցին, կէլի, կը գա:

Տըղեն օր կէրթա, ախչիկ կասա. – Տիւ էտա խելքո՞վ ծի տը տանիս, տիւ գացիր ֆըլան փողնով զըվըռար, գացիր ֆըլան մարթիւ տուն:

Կասա. – Գըռնա՛, վաղն էլ, մեկէլ օրն էլ քե պախա՛, թե քե կընդա՛, էն մեկ էլ շարթն կը պըռնեմ:

Տըղեն էլ կէլի, կէրթա: Կէրթա ծովու պըռուկ, էն ծովու ծըկան պատմութեն կընգի միտ:

Կը խանա թերուռ, կը տա կրակ, մեկ էլ կը տեսի, օր ծով էղավ ֆըռթոնա, ծուկ էկավ:

Կասա. – Ախպե՛ր, ի՞նչ նեղութեն ա քյե էղեր:

Կասա. – Էսպես շարթ մ'եմ պըռներ ախչըկե՛մ խեստ. դիր պաղկըվիմ, ձի կը կընդի, տու չը՞ս կանա՛ չուր կեսօրին ձի պախե:

Կասա. – Համա օտքերով արի, իճի իմ փոր:

Տըղեն էլ կիճի ծըկան փոր, ծուկ կառի, կերթա մըչ ծովուն չուր կեսօրին: Կեսօրին տըղեն կը խանա տու: Տըղեն կը գա:

Ախչիկ կասա. – Տու գացիր, մըտար ծովու ծըկան փոր, ես քյե տեսա:

Էն մեկէլ օր տըղեն կերթա սար, հակամա մեյմունի մագ կընգի միտ, մագ կը տա կրակ, մեյմուն կը գա: Դուման տըվե՛ սար, քար պըռնե:

Մեյմուն կասա. – Ախպե՛ր, քյե ինչ նեղութեն կա, ձի ասա՛, շո՛տ էրա:

Կասա. – Էսպես շարթ մ'եմ պըռնե ախչըկե՛մ խեստ. դիր պաղկըվիմ, ձի կը կընդի: Ձի տար, պախա՛:

Մեյմուն կը տանի ըզտղեն պըրակի մեչ, կան կը գա, փըտուկ ծառըմ կը կընդի, տըղեն կը մըտուցա փուտը վեր, կըռճոնքյտեր կը տա դեմ չուր կեսօրին. դորիս տըղեն կէլի, կը գա:

Ախչիկ կասա. – Վոլլա՛, ես քյե չըտեսա էս անգամին:

Շըհանդներ ասին. – Վոլլա՛, ախչիկ գըռնաց:

Ախչիկ ասաց. – Մեկ շարթ մ'էլ կա, վանդ էն էլ քու խեստ կը պըռնեմ, թե խանիր՝ ձի կը տանիս:

Կասա. – Քու շարթն ասա՛ ձի:

Կասա. – Վանդ ես կը նըստիմ ըստա, թե տու էկար, ձի խանիր զըրուց, ես քյոն եմ, թե չըխանիր զըրուց, ես քյե տը տամ պըռնել:

Տըղեն մեկէլ օր կերթա, ինչըխ օր կենա, ախչիկ չէլներ զըրուց, կը տանա, կը գա:

Ախչիկ կասա. – Վանդն ու մեկէլն էլ թե տու ձի չըխանիր զըրուց, քյե տը տամ պըռնել:

Տըղեն կը գա, կը մտածա, խավքու թերուռ կընգի միտ: Թերուռ կը տա կրակ, խավքյ կը թըռի, կը գա տըղի մոտ:

Խավքյ կասա. – Ախպե՛ր, ի՞նչ էղավ քյե, տու էնպես անանա՛ ձի կանչեցիր:

Կասա. – Ախչըկե՛մ խեստ էսպես շարթ եմ պըռներ, չըմ կանա խանու զըրուց:

Կասա. – Վանդ ես կը գամ, կը պաղկըվեմ տըռան հեստ, տու արի, ախչըկեն պարև տուր, օր ախչիկ քու պարև չառներ, տու ասա՛ պարով քյե, տուռ:

Տըղեն կերթա, խավքյն էլ կը պաղկըվի տըռան հեստ:

Կասա. – Պարև քյե, ախչի՛կ:

Ախչիկ չէլներ զըրուց:

Տըղեն կը տանա, կասա. – Պարև քյե, տուռ:

Խավքյ կասա. – Ասծու պարին, տու պարով էկար: Ամոթ չէ՞ր, խագար ափսոս, օր տու էն օռոսպի ախչըկեն պարև տվիր, տանցիր, էրթանքյ:

Ախչիկ չէլնի զըրուց:

Տըղեն մեկէլ օր կերթա՛ մըտ խավքյ:

Խավքյ կասա. – Ես կերթամ, էնոր պանցի հիտև կը պաղկըվիմ, տու էլ օր կը գաս, էն քու պարև չառիր, ասա՛ պարև քյե, պանց:

Տըղեն մեկէլ օր էկավ, ախչըկեն պարև էտուր, ախչիկ պարև չառեց:

Ասաց. – Պարև քյե, պանց:

Ասաց. – Ասծու պարին, խագար պարով ես էկեր: Ախպե՛ր, օրըմ ես էկա մեկ տեղ, մեկ դիրգար ուսթե՛մ փետե տըղե՛մ շինեց, քարգի մ'էլ էտոր ջուլ կարեց, խագուց, մեկ կարողըցվոր մ'էլ կարդաց, խոգի էկավ հինե, վերչ էլան, վերեն կըռվան իրեքյ: Էն կասեր ձի, էն կասեր ձի: Օր տու էղեր, վի՞ր տը խասուցեր:

Կասա. – Եսն էղեր, տը խասուցեր էտա քարգուն:

Խավքյն էլ կասա. – Եսն էլ էղեր, կը խասուցեր էն դիրգարին:

Ախչըկե կողեր կը պըռնա, կը հերստի:

Կասա. – Ծո՛ անգյետներ, եսն էղեր, տը խասուցեր էն կարողըցվորին:

Կասա ու ծեռ կը զանա վըր պանցին, խավքյ կը թըռի, կերթա:

Շրհանդերն են տեղ ծեռքեր կը գանին հիրար, թե ախշըկե շարթեր էխան, ախշիկ գըրնաց:

Կը վազին խոր մոտ, խոր կասեն, թե քու ախշիկ գըրնաց, լաճ էնու շարթեր էխան:

Խերն էլ կասա. – Աստված էն տըղին շատ արև տա, էն քանի մարթերն օր պըռներ ա, էնոնց մեղքըն ընգեր ա իմ վիգ:

Ծի'մ կը տա տըղին, մեկ ախշըկեն, մարթերն էլ պըռնատնեն կը խանա: Տըղեն կառի զախշիկ, կը գա ուր տուն: Կը փըսակեն, վեց օր, վեց գիշեր խաղ ու խաղտուն կենեն: Էնոնք կը խասեն ուրենց մըրազին:

Մենք տաննանք ղո՞ր պըստիկ ախպոր վըրեն:

Էն մեկէլ ախպերն էլ կասա. – Ես էլ տ'էլիմ, էրթամ, կան գանն աշխար վեր:

Խերն էլ կասա. – Կերթա՛ս, վոն օր քեռ ռաստ կը գա, թը ղո՞ր մըսաֆըր կեղիս, թե գյեշ էղին, թե գեղեցիկ էղին, օր քեզնից կը խառցընեն, տու չասես՝ տուք ավարա եք, յան գյեշ եք, ասա խորոտ եք, աղեկ եք:

Տըղեն կէլի, կերթա, շատ ու քիչ Աստված գիտա, մեկ քարի՛մ հանեճ մըսաֆըր կեղի:

Կիշկա, քարի մեչ մեկ հեր կերևա, կը մըտի հինե, կը տեսի մեկ սանդուխըմ օսկի գո ըն տեղ: Կը պըշկի, օր ջըղարի կութի մ'էլ ըն տեղ, հիլին ջըղարա գո հինե:

Խուռջի մ'օսկի կը լըցա, ջըղարի կութին կառի, կէլնի տուս, կասա. – Ջըղարե՛մ խըմեմ ու էրթամ:

Ջըղարե՛մ կը խըմա, կը տեսնա մեկ հանջլանջո՞ր, բաճ՝ հիսնե, քյինթ ու պերան՝ մեյմունե, ջաննավար մ'էն դեխեն էկավ:

Կասա. – Տու հե՞ր իմ օսկին առար, իմ ջըղարեն առար:

Կը խասին, կը կըռվին, իրարու գանին:

Շատ կըռվին, տըղեն էնի կը տըրնա գյետին, էտիկ կը տաննան մեկ շատ խորոտ ախշիկըմ:

Տըղեն տաննակ կը խանա, օր մորթա, ախշիկ կասա. – Մը գանիր ձի, ես քեռ, տու ձի:

Կէլին էն ու ախշիկ, խընդորաց կերթան: Շատ կերթան, քիչ կերթան, շատ ու քիչ Աստված գիտա, կերթան մեկ գյետի՛մ կարմընջ վեր կընցին: Էտա ախշըկե սոլ օտքից կը պըռծի, կընգի գյետ:

Ախշիկ կը տաննա, օր սոլ կընդի, լաճ կասա. – Դե՛, վա՛զն արի, էսա բո՞ղ գյետի մեչ սոլ դո՞ր տը կընդիս, չերևա, քյելի՛ էրթանք:

Մեկ ժամանակըմ կերթան, տեսան մեկ տուռըմ գո մըջ տանջտին:

Տըղեն ախշըկեն կասա. – Էնա ի՞նչ տուն ա:

Ախշիկ կասա. – Էն իմ տուն ա, քյելի էրթանք ըն տեղ:

Կերթան տուն, օր գո էրկու ծի կապուկ ըն տեղ, մարթ չըկա, օղորթ ախշըկե տուն:

Մեկ վեց-յոթ տարի մ' էտա տուն վեր կապըրվին:

Իտոնցն էլ մեկ ախշիկ, մեկ լաճըմ կեղի:

Էնոնք թը մընան էն տեղ:

.....

Արանքերու Միրի լաճ կէլի ուր խոլամներով, ծիանք կը խեծի, կերթա կան գալու:

Կերթա էտա կարմընջի տակ, Միրե Արանքերու լաճու ծին կը պըշկի մըջ գյետին, էն փարու սոլ շող կը տա ծիու աչկերուն, ծին կը խըռդի, կը տաննա: Միրե Արաբու լաճն էլ կը տեսի:

Խոլամներուն կասա. – Մեկ լուսեղեն գատըմ գո էնա գյետի մեչ, էճե՞ք խանեք, խենք ի՞նչ ա:

Կէճին, խոլամներ կը խանեն, օր մեկ անթիկա սոլ:

Միրե Արաբու լաճն էլ կառի սոլ, կը պըշկի:

Կասա. – Երանի ես էսա սոլի տեր կընդեր, թը մեռներ:

Կը տա խոլամներուն. – Գացե՛ք, էտր տեր կընդեք, վո՞ն օր կընդի, գա, էնոր կըռնանցով օսկի տամ:

Կերթան էսա կողմեն չում հանջմու խող, էնա կողմեն չում օսմանցու խող, չեն կընդիր դո՞ր կան կը գան:

Տըղեն էլ օր խընջ օր մանախլի կեղի, շատ կը գանիֆնա: Մեկ օր էրկու դավրեշ կը գան Միրե Արաբու տուն:

Կը խառցընեն մոտեն. – Դավրեշներ, էսա սոլի տեր տուք սալուխա չըք իտա՞, տուք կան գալանցող մարթ եք:

Դավրեշ կասա. – Պերե՞ք, խե՛մ ի՞նչ սոլ ա:

Սոլ կը պերեն, դավրեշ կը պըշկի վերեն, մըլ դավրեշ ըն մըկին կասա. – Ըն թաք տուն, օր տանջտի մեչն էր, տու տեսա՞ր էն կընգան սոլեր, էրկուս մեկ տեսակ չեր:

Կասա. – Վոլլա՛, էսա սոլ ման կը տա էն մեկ սոլին ընգերն ա:

Կասա. – Էտա սոլ տըվե՛ք, տանենք փոռցենք, թե էնորն ա, աղեկ, թե էնոր չի, էլ սալուխա չընք կանա տա:

Դավրեշն առավ սոլ, գյընաց, գյընաց էտա տաշտի միջու տուն, սագ էրաց, պան էրաց էտա կընգան հանե՛ծ: Սոլն էլ մախսուս կախեր էր սագից, թե էնորն ա, տը ճանչընա:

Կնիկն ուր սոլ ճանչըցավ, ասաց. – Դավրե՛շ, էտի ի՞նչ սոլ ա, չըս ծախե՞ր էտա սոլ:

Ասաց. – Ես դավրեշ մարթ եմ, թը քյոն ա, կը ծախեմ, թը քյոն չի, չըմ էտար քյե:

Կնիկն էլ ասաց. – Իմ սոլն ա:

Էլավ, քանի մ' օսկի էտուր դավրեշին, մոտեն առավ:

Դավրեշն էլ տանցավ, գյընաց Միրե Արաբու լաճու տուն:

Ասաց. – Կընդա՛, գի տաշտի մեջ մեկ շենլըկըմ կա, գի էն շենլըկ վեր:

Էն էլ էլավ, դավրեշի կըշռանոցով օսկի էտուր դավրեշին, դավրեշ էթող, գյընաց:

Տըղեն էլավ, մեկ տաս-քըսան ծիավոր առավ ու քըշեց, գացին տաշտի միջու տուն:

Գացին տուն, պայա էղան, մարթն էլավ, էնոնց պատիվ պըռնեց, խաց կիրցուց:

Արաբու լաճու աչկն ընգավ կնիկ, կնիկ մ'ասի, լուս տըվի վերեն, շամալ մոտեն կերթա:

Արաբու լաճու աղը գյընաց, ինգավ էտա տեղ, խոլամներ ճիւր-միւր թալեցին, սիրտ մածեցին, տըղեն էկավ խոգյի, հարավ:

Էլավ Միրե Արաբու լաճ, կայնավ տուռ, խոլամներուն կանչեց:

Ասաց. – Ի՞նչըխ էնենք, օր էսա ախչիկ տանենք, էսա մարթն ըսպանե՞նք, ի՞նչըխ տ'ենենք:

Ըն մեծ խոլամ ասաց. – Տիւ իրկան կանչա՛ տուս, խետ զըրուցա՛, մենք կը մըտենք, կընգան կը խառընենք, թը կը գա՛, թը չի գա՛:

Մեկ ճամխեցին, իրիկ կանչիցին, պիրին, մեկ էլ ճամխեցին, գյընաց, կընգան կը խառընա:

Ասաց. – Միրե Արաբու լաճ քյե կը սիրա:

Կնիկ ասաց. – Կը սիրա, ի՞նչ ընեմ, ծի իրիկ կա, թը տանա, էրթա՛, ես ինոր ուզած կնիկ չեմ:

Խոլամ տանցավ, էկավ Միրե Արաբու լաճու մոտ:

Ասացին. – Կասա՛ ես էնոր ասած կնիկ չեմ, դիր վեր էկեր ա, թ'երթա:

Միրե Արաբու լաճն էլ ասաց. – Չեղի՛ր, զիռով տ'առիք, իյանք:

Էնոնք էտա զըրուցի մեջ իրիկ հիմցավ, թե էտոնց սիրտ ավեր ա, մեկ պանի մ'էկած:

Ըն տեղ իրիկ ասաց. – Ինչի՞ եք էկեր, ծի ասե՛ք, ի՞նչ քըս ու փըս ա:

Ըն մեկ խոլամ ասաց. – Ընչի՞, քյենե կը վախենա՞նք, գի էկեր ենք, քիւ կնիկ կը տանենք:

Էլան, հիրարու խետ կըռվան: Կնիկն էլ տընեն էլավ, գարկին ըն տեղ, վեց խոլամ ըսպանեցին: Մեկլոնք Միրե Արաբու լաճ առեց, փախավ, գյընաց ուր տուն:

Միրե Արաբու լաճ խըլխուսն մեկ խազար ջան ասքար կապեց, գյընաց վերենըլտեր:

Էտա թիւջրի տըղեն, ուր կնիկ նստած ա փանջարեն վեր, տեսան օր գատնոց մեկ խազար ջան ասքար կը գան:

– Դե՛, էլի՛, կնիկ,– ասաց,– ծիանք խեծիք: Միրե Արաբու լաճ ասքար քաշեց, էկավ կըռիվ:

Մարթն էլավ, ծին խեծավ, կնիկն էլ ծին խեծավ:

Կնիկ մարթուն ասաց. – Տիւ էրթա՞ս կըռիվ, թե՞ ես:

Մարթն ասաց. – Ես կերթամ:

Կնիկ ասաց. – Չէ՛, էս անգամին ես կերթամ, անգամ մ'էլ օր գան, տու գյընա:

Կնիկ էլավ, էնոր սիլախքեր կապեց վերեն, ծին խեծավ, գյընաց:

Գյընաց խասավ տեմ, Միրե Արաբու ասքար էկավ տեմ:

Կնիկ ետ տանցավ, մախսուս փախավ հանըճվներուց, էնոնք լարիցին հետև, կնիկ փախավ, չուր էկավ, էլավ տան տուռ: Միրե Արաբու լաճու ասքըրներն էլ որն օր կտրի՛ծ ա, հանե՛ծ էկավ, էնպես, օր կնիկ տեսավ՝ ասքար հերկընցեր ա խընդ ճամխին, մեկ մեկի չըն խասիր, թուր քաշեց, ընգավ հետըվներ:

Դիր անքար մեկ մեկի չըխասավ, ճանտեց, տարավ, էխան Միրե Արաբու տուն: Միրե Արաբի լաճն էլ փախավ, գյրնաց տուն: Կնիկն էլ տանջավ, էկավ տուն:

Կընգան իրիկն էլ նստեր էր փանջարեն, սովրավ կընգան կըռիվ:

Մեկէլ օր Միրե Արաբու լաճ գինն անքար կապեց, էկավ վերեն կըռիվ:

Դիրիս կնիկ մարթուն ասաց. – Տիւ սովրար կըռիվ, ժամանակ քյե ա, տիւ գյրնա:

Մարթն էլ էլավ, ծին խեժավ, գյրնաց անքյըրի հանձն, էնու սիլախքյեր կապեց, գյրնաց, տանջավ, փախավ:

Անքար լարեց իրկան հիտն, չուր էկան տան տիւ:

Անքար հերկնցեր ա խընդ ճամխին, մեկ հիտն մեկու չըն խասիր: Մարթն էլ տանջավ հիտն, անքար ճարտեց, փախցուց տարավ, չուր խասուց Միրե Արաբու տիւ: Լաճ պըռժավ, փախավ:

Կանչեց, Միրե Արաբու լաճուն ասաց. – Մը՛ փախեր, հերեկ մաքյերու կըռիվն ա, հեսօր խոյերուն ա:

Էն էլ տանջավ, էկավ տուն:

Միրե Արաբու լաճու վերեն իտուր հան անքյըրի մաննախ, հան կընգե մաննախ՝ ի՞նչ էնեն, ի՞նչ չէնեն:

Էտա մաննախի մեչն ա, մեկ օր պառավ կնիկըմ գյրնաց տուն, նստավ, կանլոն կը խըմա, հերկեն կանլոնըմ՝ էսա պատից կիյա էնա պատ:

Խառցընեց թե. – Միրե Արաբի լաճ ընչի՞ էնպես գնախֆցեր ա:

Ասին. – Էսպես պն մ՛ ա:

Ասաց. – Տընաշեճն, էնի իմ մեկ ճըկըթի պան ա, ընչի՞ ծի շոտ չասեցիք:

Ասին. – Էլի՛, գյրնա՛, խիմ՛ ինչպե՞ս տը պերես, օր քիւ ճըկըթի պան ա:

Ասաց. – Ես կերթամ, թե կարցա օյինըմ խանել էնոնց գյըլիխ, կէլնեն տանիս, խող կը տամ քանուն, թոզ կէնեն, տիւ տեսնեք, էկեք:

Պառավն էլ էլավ, գյրնաց:

Գյրնաց տըռան հանեճ, տիւն փակուկ էր, նըստավ, կնիկ էկավ տիւն, խառցընեց, ասաց. – Տիւ հի՞ւր ես էկեր, ի՞նչ պառավ ես:

Ասաց. – Ես ճամխոթ եմ, էկեր եմ, ծեր տուն մեկվան տ՛էլնեն:

Կնիկ ասաց. – Էլի՛, արի՛ խաց կեր ու գյրնա՛:

Պառվուն խաց էտուր, մըլեց տիւ: Պառավ նստավ տըռան վըրեն չուր իրիկ նեճրից էկավ հիրիկուն:

Ասավ. – Տիւ ընչի՞ ես նըստեր ըստա:

Ասավ. – Ես ճամխոթ եմ, քիւ կնիկ չէթող գան տուն, ծի ա՛ն տուն, չու՛մ խըլխուն մընամ ու էրթամ:

Մարթն էլ ասաց. – Արի՛ էրթանք, մընացի՛ր իմ տուն չու՛մ խըլխուն, գյրնա՛:

Մարթու կնիկ ասաց. – Դո՞ւր պերիր էտա պառավ, մը՛ պերեր: Կնիկ ազգ անտանտար են, չար թըշնամի են:

Ասաց. – Ղորթ տիւ փարի եք, հիսանի իրես չըք ուզե տեսնե:

Կնիկն էլ հըռըկավ, ասաց. – Դե՛, թը մընա, խենք ծի՞ վնաս տ՛էնա, թի՞ քյե :

Կնիկն թողին տուն: Պառավ շոշոտ կէլնի, քանեք կը լըվա, ճիւր պերա, տախտ կավիլա, ճիւր կը լըցա էնոնց ծեռքեր, կը լըվացվին, գինք կտրիճ շանց կը տա:

Մարթն էլ կասա. – Աղեկ ա, էսա պառավ թը մընա էսա տեղ՝ ճիւր-միւր պերա, տախտ անիլա, խըզմաք էնա:

Կնիկն էլ կասա. – Քիւ խարիվ էնենք:

Խըլխուն մարթ կէլի, կերթա նեճիր:

Պառավ ու կնիկն կը մնան տուն:

Պառավ կընգան կասա. – Խազար ախոս, օր տիւ էսա մարթու կնիկն ես:

– Դե՛, ընչի՞ց, ի՞նչ հապիվ:

Կասա. – Ապա էնի մինակ ըստա, նա քյե ընգերըմ, նա պն՛մ ի՞նչըխ քիւ բեհն կէլի:

Կնիկն կասա. – Գի էղավ, իմ լաճու խետ, իմ ախըրկեն իմ բեհն կընցուցեն:

Կասա. – Խոզե տու Միրե Արաբու լաճու կնիկն եղիր, օր քըսան խատ քյե պես քու հանեճ, քյե խըզմաթ աներ, տու քյե սուս տեր, էլեր ու մըտեր ու քու քյեֆն էրեր:

Կնիկն էլ կասա. – Է՛, ի՛նչըխ էնեմ, գո ի՛մ կըսմաթ էսա մարբուն էր:

Պառավ ասաց. – Ես քյե պա՛մ մ'ասեմ, լե կը վախենամ:

Ասաց. – Մը վախենա, ասա՛, հե՞ր կը վախենաս:

Ասաց. – Էտա մարթ թո՛ղ, արի՛ քյե տանիմ Միրե Արաբու լաճուն:

Ասաց. – Պառավ, էտ էլ կըսա՞ յա, կեղի՞:

Ասավ. – Խա՛, հե՞ր չեղի, խազար էմալ էրած ան, ուրենց իրկընիր թողած, քյոն էլ թող եղի խազար ու մեկ:

Ասաց. – Պառավ, տու գյիտե՞ս, թե Միրե Արաբու լաճ ծի կուզա՞, ծի չուզե՞ր:

Ասաց. – Շա՛տ, ես գյիտեմ, օր ըզքյե շատ կուզա:

Ասաց. – Պառավ, ի՞նչըխ էրթանք, համան թողինք էրթանք:

Ասաց. – Օր տու ծի կը լսես, էլի համան ծի՛մ տու, մեկ ես, խեծինք ու էրթանք:

Ասաց. – Գանք, վախենամ՝ ի՛մ իրիկ գա՛, կըռիվ էնա, մարթասպանութեն էղի: Թը գա՛ տուն, օյի մ՛ էնոր գըլոխ խաղանք, նոր էրթանք:

Պառավ ասաց. – Տու գյիտես:

Ասաց. – Պառավ, կայնի՛ թը գա՛ տուն, ես էնոր կուվաթ հիմնամ, խեմ քանի մ՛ ա, նոր օյինըմ կը խաղանք գըլոխ:

Մընաց հիրիկուն, մարթն նեճրից էկավ: Խաց տըրին հանեճ, կերավ: Պառավ ճուր էպի, ծեռքեր լըվաց:

Կնիկ ասաց. – Մարթ, էսա յոթ տարի քյե առեր եմ, ես քու կուվաթ չըկիտցա, խեմ քանի՞ մ՛ էր, քանի՞ մ՛ չեր:

Ասաց. – Ի՞նչ գործ ունես ի՛մ կուվաթից:

Ասաց. – Կեղի, օր էլմէլ գան վերեն կըռիվ:

Մարթն ասաց. – Էլի՛, էնա պընատեն պե՛, ի՛մ ծեռքեր կապա՛, խեմք ջըռքենք, խեմ՝ քանի մ՛ ա ի՛մ ուժ:

Էլավ, էպեր, կայիմ էտոր ծեռքեր, թևեր կապեց:

Ասաց. – Փեթկի հետևուն, տըռան հետևուն, էկե՛ք վիզ կըտրե՛ք, ես թևեր կապեր եմ:

Մարթն էլ ծեռքեր, թևեր էտու հիրար, փոկ կըտըրտեց, ըզխանչալ քաշեց, վազավ տըռան էտև՝ մարթ չըկա, վազավ փեթկի իտև՝ մարթ չըկա:

Էկավ խընչ կնիկ, ասաց. – Տու ընչի՞ էնման ասեցիր:

Ասաց. – Ես քու ուժ ջըռքեցի, խեմք՝ քանի՞ մ՛ էր քու ուժ:

Կնիկ ասաց. – Վոլլա՛, մարթ, ի՛մ խեմք չըկտրի՛ թու պան քյե գավթա, քու ուժ շատ ա:

Ասաց. – Կնիկ, թե ի՛մ ծիու պոչի մազեր կապեն ի՛մ պիւթեր, ծի գավթա, թե չէ՛ ծըռքեր, պաներ ծի չըն գավթի:

Կնիկն էլ կէլի, օտաց ու ծեռաց էրկու պիւթեր կը կապա ծիու մազով:

Կասա. – Պակու՛ միջու մարթեր, էկե՛ք, վիզ կըտրե՛ք:

Մարթ գինք հիրար կը տա, մազ միս կը կըտրա, կը խասի ուսկոռ: Կը մընա պառկուկ ըն տեղ:

Կասա. – Կնիկ, տանակ պեր, մազեր կըտրա՛:

Կասա. – Չէ՛, քու տեղ էտին ա, տը մընաս ամտըլա՛:

Պառավն էլ կը վազա տանիս, խող կը տա հերան: Միրե Արաբու լաճ տուրթին էլ տըրի, խեմ էպի պառավ խող տը տա հերան:

Տեսավ, օր պառավ դու՛ման էտուր վըր տանըսին:

Էն էլ էլավ, տաս խա ծիավոր առավ ու քըշեց, գըռնաց:

Գացին ընտեղ, տեսան, օր մարթն ծեռքեր-օտքեր կապուկ, թալուկ ընտեղ:

Ըզմարթն էլ պըռնեցին, տարա՛ն, թալեցին մըչ տան կըշտի պակերուն: Ու գացին տուն վեր, քյեֆ կէնեն:

Յինչ օր էտա մարթու լաճն ա, կառի գաղտիկ խաց, պան, կը տանի, կը տա խոր, ինչ օր ախչիկն ա, կերթա, թե ուր խեր ասա՛ ծի խաց պեր, յան ճուր պեր, ըզխեր կը տա հանճև քարի:

Միրե Արաբու խոլամներ կը պըռնեն, ըզմարթ կը թալեն խոր վեր: Մարթն էլ կընգի խորի տակ, կը տեսնա, օր էրկու մարթ կան հինե, հիսնի կերպ եմ, լե՛ էնպես գյեշ, ի՛նոնց քիթ, պերան կը ըմմանի գոռտընկու:

Էն մարթերն էլ կասեն. – Քյե ընչի՞ էսպես թալիցին խոր, քու կաթիյաթ ի՞նչ էր:

Էն էլ կը պատմա ուր գըլոխու գալած:

Էտա մարթերն էլ կը խառցընեն. – Մենք աղե՞կ մարթ ենք, թե՞ ավեր:

Էն էլ ուր խոր պատվեր կընգի միտ:

Կասա. – Վոլլա՛, ախպե՛ր, տիւ աղեկ մարթ եք:

Կը տանճան, կասեն. – Մենք գյե՞շ ենք, թե՞ խորոտ, մե թամաշա՛ էրա:

Տըղեն կասա. – Ես ծեր պես խորոտ մարթ չըմ տեսեր, տիւք շատ խորոտ եք:

Էնոնքն էլ կասեն. – Ամլե մարթ թալած են էսա խոր վեր, մարթ մե չըր ասեր՝ տիւ խորոտ եք, ո՞ն օր գյեր, կասեր տիւ գյեշ եք: Մենք էլ զենոնք կը ճամխենք մուք աշխար:

Կասեն ու կը տանճան երկու խորոտիկ ջըհել:

Կէլենն, էտա մարթիւ օտքեր, ծեռքեր կարծրեն: Մարթուն էլ նուռըմ կը տան: Մարթն էլ թե անոթցեր ա, կուգա, օր նուռ կոտրա, ուտա:

Կասա. – Ախպե՛ր, էտի ուտելու չի, էտոր խատեր հըմեն մեկ միլոն մ՛ օսկի կը պըռնա, անգլին են:

Ըզմարթ կը խանեն տիւս խորեն:

Մարթն էլ կէլնի, կը գա, տեսի, օր Արաբու լաճ էնոր տունը վեր քյեֆ-ուրախութեն կէնեն:

Էտա մարթ օր խորեն էլա՛վ, Արաբու լաճ փանջարից կը տեսի:

Չուր էն գա, Արաբու լաճ ուր խոլամքերով կը փախի:

Մարթ կը գանա, մե խինգ-վեց խոլամ կը սպանա, մեկէլոնք կը փախի:

Կը գա տուն, կը տեսնա, օր կնիկ ու պառավ գի տուն վեր:

Յախու էլ չըն կանա գրուցե: Էն էլ կը պերա, ըզպառավն էլ, ըզկնիկն էլ կը կապա սուն վեր:

Ախչիկն էլ կը գա մոտ, կասա. – Տիւ ի՞նչըխ պըռծար, էկար խորեն, տիւ ընչի՞ էկար, իմ խորոտ խեր փախավ, գըռնաց:

Կասա. – Ախչի՛կ, քո խեր վո՞ն էր:

Կասա. – Իմ խեր Միրե Արաբու լաճն էր:

Էն էլ ախչըկե փոր կը թափա, կը թալա դեն:

Տանճա էնոր երկու ծիւն, մեկ ծիւն իրեք օր կը թոնի անոթի, էն մեկն էլ իրեք օր կը թոնի ծարավ:

Ծիանք կը խանա տիւռ, ըզպառավ կը կապա օտք մ՛են ծիու պոչ, օտք մ՛են ծիու պոչ:

Ծարավ ծիու հանեճ կը տա հախպիւր, անոթի ծիու հանեճ կը տա առվըտի արտ, փետ մ՛էնոր կը գանա, մեկ էնոր, օտըմ կէյա խըտ էն ծիուն, ոտըմ մեկէլին, ըզպառավ կը տապկեն:

Տանճա գա տուն, խընճ կնիկ:

Կասա. – Կնի՛կ, տիւ ի՞նչ հապիւլ ծի էմալ էրիր, իմ կաբիյաթ ի՞նչ էր:

Կնիկ կասա. – Ես չէրի, տիւ էրիր:

Կասա. – Ես ի՞նչ էրի:

Կասա. – Ապա պառավ էկավ, ես չըր թողի՝ գյեր տուն, տիւ էկար, պերիր ներս, իմ խեքը գյողցավ, ծի ճամխե էխան:

– Էտի քիւ խոսքն ա:

Մարթու սիռտն էլ կընգից չըկըտրի:

Կասա. – Դե՛, էլի՛, էլի՛ ծիանք խեծիք, քյե առիմ էրթամ, ախըր էղնելուն էղեր ա:

Տըղեն էլ կասա. – Վոլլա՛, դադո՛, տիւ էտա կնիկ թողիր էկավ խընդ մե, ես քիւ խետ չէկա:

Կասա. – Յե՞ր, որդի՛, հե՞ր:

Կասա. – Ապա էնիկ քիւ ծեռքեր կապեց, քյե էթալ խոր վեր, Արաբու լաճն էլ կառեր, կը պառկեր, տիւ տը սպանես ու չըպերես խընդ մե:

Կէլի, կնիկն էլ կը սպանա, կառի ըզտըղեն, կերթա տուն:

Խերն էլ կը տեսնա, օր ուր լաճն էկավ, մե չորս-խինգ տարեկան էրեխե մ՛էլ խետ:

Կասա. – Տիւ դի՞ր էր, դի՞ր չէր:

Պատմեց էնոր գըլխի գալաճ:

Էտա նըռան խատերն էլ կը տանի քաղաք, կը ծախա, մեկ խատին մեկ միլոն օսկի կը տան:

Կը պերա, թանկագին կոնխըներ կը տա շինել:

Մեկ ժամանակըմ կը մըռնա, էտոր խեր կը մեռի:

Էտոր ճիչ տըղի միտ կընգի խալիվորու խրատ:

Կէլի, ախպոր կասա. – Ախպե՛ր, էլի՛, մեր մալի կես բըլա՛-վենք վեր աղքըտներուն:

Պըստիկ ախպեր կասա. – Էտա խորխութ իմ սըռտի մեչն էլ կեր:

Էտոնքյն էլ կէլնեն, մե մեկ խուռջի մ' օսկի կը թալին թւերուց, տանին, օր բըլավեն աղքըտներուն:

Մեկ թաղ վեր կերթա, մեկ էլ կերթա էնա մեկէլ թաղ՝ ջիկ-ջիկ:

Ինչ օր էն ճիչ ախպերն ա, ջամբագներ կը գան հանեմ:

Կասեն. – Էտի ի՞նչ փարա ա՝ կը ցըրվես:

Կասա. – Իմ խեր մեռեր ա, կը ցըրվենք աղքըտներու վերեն:

Կասեն. – Է՛, ջանըմ, ի՞նչ էօգիւտ, քիւ խեր էլ չըսաղնար, աղքըտներն էլ ծեր փարով չըն կըշտաննար:

- Ապա ի՞նչըխ էնեն:

- Առ, արի՛ երթանք կազինոկ, ուտենք, խմենք, մեր քյեֆ էնենք, հիրիկուն էլի գըրնա՛ տուն:

Տըղեն կը համոզեն, կառեն, կերթան քյեֆ էնելու տեղրանք, կը խապեն, փարեն մոտեն կառեն, կը խանեն, կը ճամխեն տուն:

Էն ինչ պըստիկն ա, կը տանի, ուր փարեն կը ցըրվա աղքըտներուն, կը տանա, գա տուն:

Խըլխտուն կէլին, գինա մե մեկ խուռջի՛մ կը լըցեն:

Պըստիկ ախպեր կասա. – Էնա երկու թաղ ցըրվեր ենք, դիր երթանք էնա երկու թաղեր:

Էն ինչ ճիչ ախպերն ա, գինա ջամբագներ կը խապեն, կառեն, կերթան: Պըստիկ ախպեր կը տանի մեկէլ թաղն էլ կը ցըրվա: Չուր հիրիկուն մեկ խալիվորըմ կը գա հանեմ:

Կասա. – Էտի ի՞նչ ա՝ կը ցըրվեք:

Կասա. - Մեր խեր մեռեր ա, փարա կը ցըրվենք աղքըտին:

Կասա. – Ապա հե՞ր մեր թաղ չըք ցըրվեր:

Կասա. – Իմ ճիչ ախպեր ճամխեր են, էկեր, ծեր թաղ կը ցըրվա, քյե չըտվե՞ր ա:

- Չէ՛, վոլլա՛, քիւ ախպեր էսա երկու օր ա՝ փարեն կառնի, կիյա խընդ ջամբագներուն կուտա, կը խմա, փարա չըցըրվեր:

Տըղեն կէլնի, կերթա կազինոկ կաչկա, օր ախպեր գի էն տեղ, քյեֆ կէնա ջամբագներու խետ:

Ախպոր խետ կը կռվի, կասա. – Յե՞ր անտըլա կէնես:

Ախպեր կասա. – Քյե ի՞նչ, ես կէնեմ կէնես:

Էն ու ախպեր կը պա՛ժվին:

Ինչ օր ճիչ ախպոր մալն ա, կիյա կուրիսե, կաղքըտանա, ի՛նչըխ օր փետ էգար գիմշուն, գիմեշ տանցավ հիսան, փախավ, կուրիսավ, էտոր հարստութեն էլ փճավ, կուրուսավ:

Էտա խալիվորն էլ հիրիկուն գըրնաց պըստիկ ախպոր մըսաֆըր:

Տըղեն էլա՛վ, կանտըր պըռնեց, ջիւլ խագիւց, սոլ էտուր:

Ասաց. – Տըղա՛, էնա ի՞նչ երեխա ա քիւ տուն:

Ասաց. – Իմ լաճն ա:

Ասաց. – Ապա մեր չունի՞:

Պատմեց ուր գըլխու գալա՛ծ:

Ասաց. – Տու չըս տիրի՞ր, ես էլնիմ քյե խոր տեղ, երթամ, քյե կնիկ մ՛ուզեմ:

Ասաց. – Քանի տիւ սաղ ես, քյե խոր տեղ տիրիմ:

Խալիվորն էլ ասաց. – Ես կերթամ, ախչիկըմ կը տեսնիմ, քյե կը ճամխիմ, տիւ էլ գըրնա, թե ախչիկեն խավնար՝ պերեն, թե չըխավնար՝ կիյամ մեկ էլ կուզեմ:

Խալիվոր գըրնաց, ժամու տիւռ կանա՛վ, կը տեսնա, օր հըմեն էկան, գանցին ժամ, հըմենի հետև մեկ պառավըմ, մեկ ախչիկ մ՛էկան, էնոնք էլ գանցին ժամ:

Խալիվոր կանա՛վ էնտեղ, չում ժամ էլա՛վ: Ընգա՛վ պառվու, ախչիկեն հետև, գըրնաց պառվու տուն:

Պառվուն ասաց. – Քիւ ախչիկ չը՞ս իտար իմ լաճուն:

Պառավ ասաց. – Օր իմ փեսեն իմ սըռտով եղի, կը տամ, հե՞ր չըմ իտար:

Ասաց. – Կերթամ, իմ տըղեն ճամխեմ գա, թե խավնար՝ տուր, չըխավնար՝ մի տար:

Տաննա կը գա, տըղին կասա. – Ես ախչիկըմ տեսա, էլի՛ գըրնա՛, կաներ ժամտան տիւռ, հըմեն կը գան ժամ, նոր էն ու էնու մեր հըմենի էտև կը գան:

Տըղեն կերթա, ժամու տիւռ կը կանի, տեսա, օր ժողովուրտ հըմեն էկան ժամ: Էնոնց հետև ախչիկ մ՛ ու պառավ մ՛ էկան:

Տըղեն տեսնելուն պես սիռտ վեր ախչիկեն կավիրի:

Կընգի հետևներ, կերթա տուն: Պառավն էլ ըզտղեն կը տիսնի, ախչիկեն սիռտ ու պառվուն էլ տըղի վերեն կավիրի, հիրարու կը խավնեն, մատըրկներ կը փոխեն: Տըղեն կէլնի, կը գա տուն:

Խալիվոր կասա. – Խավնա՞ր ախչիկեն, թե՞ չըխավնար:

Կասա. – Վոլլնա՛, խավնա, շատ շնորհակալ եմ քյենն:
 Պապիկն էլ կերթա, կը պերա, կը փըսակա: Վեց օր, վեց գյի-
 շեր խաղ ու խաղտուն կեննն: Էնոնքյն էլ խասան ուրենց մըրա-
 զին: Պապիկ կը թոնի, կը կուրիսա էնոնց հանճըվեն, խրիշտակ ա:



32. ՇԵՐԵՍԸԺԻՆԱՆ

Կելնի մեկ մարթ: Կուզեր կնիկ ընելը, լե չէր ուզեր հիսանի
 խում կաթ ծծող ախչիկ առններ:

Գյընաց մեկ լավ, խելոք մարթու՛մ քով: Խելոք մարթուն ուր
 ուզածն ասաց:

Խելոք մարթն ասաց. – Գյընա՛, եփ մեկ կին նոր երախա կը
 ծնի, մը թողնի ուր մոր կաթ ծծա: Փարա՛ տուր, տըղեն գընա՛, ա՛ռ,
 արի՛:

Գյընաց, մեկ կնիկըմ տըղա կը պիրեր, կաննավ ընտեղ մինչև
 տըղեն էպեր. տըղեն ախչիկ էր, փարա էտուր, առավ, էկավ:

Էպիր, պախեց, մեծցուց օխչըրի կաթով: Ախչիկ սորա վեր
 ուր կարգյեց:

Էտա մարթ ամեն օր կերթեր նեծիր: Եփ օր կը գյեր տուն,
 խավկիթըմ կը տըրներ պատի հանեճ նըշան, կը թալեր էնոր:

Կընգան կասեր. – Ձըզնից կտրիճ մարթ կա՞ ախչըրի մեչ:

Կնիկ հանտու շատ գայիֆցավ: Սեկ օր մեկ հուրուշ կնիկըմ
 էկավ էնոնց տուն մըսաֆըր:

Ասաց. – Քուրի՛կ, ընչի՞ ես էտպես գայիֆցե:

Ասաց. – Իմ մարթ ավչութնից օր կը տաննա, խավկիթ կը
 տըրնա նըշան, կը գանա: Ձիկ կասա՛ ձըզնից կտրիճ մարթ կա՞
 ախչար: Ես էլ կը վանխենամ, էսպես գայիֆցեր եմ:

Էն մըսաֆըր կին էնոր ասավ. – Թե անգամ մ՛էլ էտպես
 կասա, տու՛ն էլ ասա՛ Շերեմըժիկնան քյեզնից կտրիճ ա:

Մյուս օր էնոր մարթ ավչութից կը գա՛, գինա՛ նըշան կը տընա, կը գա՛նա խավկըթին, տա՛ննա կասա. – Ձիզանից կտրի՛ծ կա՞:

Կնիկ էնոր ասաց. – Շերենըժդիհնան քյեզնից կտրի՛ծ ա:

Մարթն էլ կէլնի, կասա. – Տ'երթամ էտոր տեսություն, տեսնեմ ինչպե՛ս մարթ ա:

Եփ օր կերթա, կը խասնի Շերենըժդիհնանի գյեղի հա՛նեճ, կը տեսնա, օր մեկ երիտասարթ տըղե մ' էն տեղ նըստուկ ա:

Էն տըղի ծեռ, ոտ գո՛մշու ծեռ, ոտաց պես խաստ ա:

Կը խառցընա էն տըղայից. – Տո՛ւ ի՞նչ մարթ ես, էտ տեղ նըստեր ես:

Էն էլ կասա. – Ես Շերենըժդիհնի լաճն եմ:

- Ապա ընչի՞ ես նըստի էտա տեղ:

- Ես գյընացի էն տեղ, ասլան պըռնեցի, ծեռներով ըսպա-
նեցի, իմ ծեռ էղավ յարա. իմ խոր հա՛խուն չըմ գյըխշընա էրթա՛մ
տուն: Ձի պան տ'ասա, թե՛ քյեզ խամար ամոթ չի՞, ասլան ի՞նչ էր,
օր քո՛ւ ծեռ յարալու ըներ:

Էտ խարցնող մարթուն սարսափ տարավ, թե էսա տըղան ա,
օր էսպես ա, էտոր խերն ի՞նչըխ ա:

Տըղային ասաց. – Էլի՛, էլի՛, քյե առնեմ, տանեմ ծեր տուն:

Տըղեն առավ, տարավ տո՛ւս, տըղեն էթող տո՛ւռ, ինքյ մտավ
տուն:

Պա՛րև էտուր Շերենըժդիհնանին: Շերենըժդիհնան պա՛րև
առավ:

Շերենըժդիհնան ասաց. – Մըսաֆը՛ր, հրամեցի՛ր, նըստիր:

Ասաց. – Չէ՛, մի խընտիրքյըմ կա, օր իմ խընտիրքյ կատա-
րես, կը նըստիմ, չէ՛ չըմ նըստիր:

- Նըստի՛, ես քո՛ւ խընտիրքյ կը կատարեմ:

Ասաց, թե. – Իմ խընտիրքյ էն ա, օր տըղան հընդունես, գա՛
տուն:

Շերենըժդիհնան տըղին հընդունեց ներս:

Վերջին, էն մըսաֆըր ու Շերենըժդիհնան էլան, գա՛ցին էնոր
ծիանքըյներու թա՛վլեն: Էն մարթ տեսավ, օր մեկ լավ ծի մ'ընտեղն
ա. եփ օր էտա ծին Շերենըժդիհնան տեսավ, էնպես թոռմավ,
գա՛յիֆցավ, էղավ մուռտալ ծի՛մ:

Էլան, տո՛ւս գա՛ցին էն մարթ ու Շերենըժդիհնան:

Էն մարթ ասաց. – Ես անգամ մ'էլ տա՛ննամ թա՛վլեն, խեմ էն
ծին ընչի՞ ընցկուն էղավ:

Տա՛նցավ թա՛վլեն, տեսավ օր ծին հառաճին տեսակ լավ ծի
մ' էղեր ա:

Տա՛նցավ, էլան տո՛ւս թա՛վլից:

Էն մարթ Շերենըժդիհնանին ասաց. – Շերենըժդիհնան, էսա
ծին ընչի՞ էսպես կէղի:

Շերենըժդիհնան ասաց. – Դե, թոխ տուր, էնպես պան ա, օր
թե ասեմ, չըս ավատա:

Ասաց. – Շերենըժդիհնան, խընտրիմ, օր ասես:

Ասաց. – Օր կը խընտրես, էն ծին իմ քո՛ւրն էր:

Ասաց. – Ապա ինչպե՛ս էղավ ծի:

Ասաց. – Մեկ օր իմ խեր խիվանդ էր: Ձի ասաց գյընա՛ սար,
ծի խավըռծիլ պեր, ես խիվանդ եմ: Ես էլա՛, գա՛ցի, իմ քո՛ւրն էլ
էկավ խըն ծի խավըռծըլե: Գա՛ցինքյ սար, հիրիկուն հուշացանքյ,
չըկառցանքյ տա՛ննենքյ տուն:

Մնացինքյ մեկ ճո՛չ քա՛րի՛մ տակ: Տուն էր էն քա՛րի տակ:

Հիրիկուն մութն էտուր, ես, իմ քո՛ւրն նըստեր ենքյ էտա հերի
մեջ, տեսնանքյ՝ հիրիկուն քա՛ռսուն դև էկան: Ես էլ, իմ քո՛ւր
էլանքյ, պաղկըվանքյ էն մեկ քոշեն: Դևեր նստան, խաց կերան:

Էտա դևերու ճո՛չն ասաց. – Երանի թե Շերենըժդիհնանի
քո՛ւրն ըստեղն էլներ, ես առներ, պառկեր:

Եփ օր էսպես ասաց, իմ քո՛ւրոչ սիրտ փոխվավ:

Իմ քո՛ւր ասաց. – Ախպեր, ես ծարավ եմ:

Ասի. – Հա՛յ, քո՛ւր, ես ճուր հուստե՞ն պերեմ էսա հերի մեջ:

Ասաց. – Էղի, չէղի, տը պերես, թե չէ ես տը կանչեմ, ճուր
ուզեմ էնա դևիրուց:

Ես էլ ճարահատ էղա, էլա՛, գա՛ցի, քիչըմ ճուր գո՛ղցա, պիրի,
տվի իմ քո՛ւրոչ:

ճուր խմեց, դո՛ր ասաց. – Ես անոթի եմ, ծի խաց պիտի:

Ասի. – Քո՛ւր, խաց ո՞ր տեղեն պերիմ, դևեր կիմնան, մե կը
սպանեն:

Ասաց. – Չէ՛, անկարելի ա, տը պերես, թե չէ դևիրուց կուզեմ:

Ես էլ ճարահատ էղա, էլա՛, դևիրուց խաց գո՛ղցա, պիրի,
կերավ:

Վերճըմ ասաց. – Ձի խագ կը գա՛, ես տը խագամ:

– Ախշի՛, մը՛ խազա՛, դևեր կակըխեն, մե կը պըռնեն, կը սպանեն, էնոնք քանսուն դև են, ես միմակ:

Չէղավ, ախշիկ խազաց:

Եփ օր խազաց, դևեր էլան, մե պըռնեցին:

Քանսուն դևեր էլան խըն ձի կռիվ: Էնոնք ձի տարան դեն, ես էնոնց տարա դեն: Վերձեն չըկարողացան ձի հանդեմ:

Իմ քուր ասաց. – Էնոր ճըկըթներ մալեթյ, օր կարողանաք Շերեմըժդինան հանդեթյ:

Եփ օր իմ ճըկըթներ մալեցին, ձի հանդեցին, իմ քամակ տվին սան, ձի կապեցին սան ձիթյով:

Էն տեղ դևերու մեծն առավ իմ քուր, պառկավ:

Քիչ մընաց, դևեր քըլնան, մեծն հիշար էր:

Ես էրի, էրի, էտա ձիթյ կըտրեցի, էլա՛, գացի, քըլնուկ տեղեր տաս խատ դևու վիզ քաշեցի:

Էկա, իմ քամակ տըվի սան, օր դևերու ճիչ չըկիտնա, թե ես իմ ձիթյեր հանրժըրեր եմ:

Դևերու ճիչ ձի ասավ. – Շերեմըժդինան, ես էրազըմ տեսա: Էրազի մեչ դևերու ճիչ առավ Շերեմըժդինանի քուր, պառկեր էր, ինոր քյեֆ կեներ:

Ես էլ ասի. – Ես էլ եմ էրազ տեսեր:

Դևերու մեծ ասաց. – Պատմա, քու էրազն ի՞նչ ա:

Ասի, թե. – Իմ էրազն էն էր՝ մեկ խավթյ մի՛նգեր էր մըջ քանսուն ճընջըղկու, տասի վիզ քաշեց, մնացին եռսուն:

Իմ քուր ասաց, թե. – Դևերու՛ ճիչ, չէղի՞ օր Շերեմըժդինան էլեր, քու ընգըռքյիրու վըզեր քաշեր:

Դև ասաց. – Չէ՛, չըկարար էլիր, էնպես ինքյ կապեր ձիթյերով:

Դև անգամ մ'էլ քըլնավ: Ես էլա, տաս խատի վիզ էլ քաշեցի: Էկա, իմ քամակ տվի սան, կանա:

Անգամ էլ դևերու ճիչ հիմացավ:

Ասավ. – Շերեմըժդինան, ես գինա էրազ եմ տեսեր:

Ասաց. – Քու էրազ ի՞նչ ա:

Ասաց. – Դևերու ճիչ Շերեմըժդինանի քուր պըռնե, մի՛նչ քանսուն օր չըթոներ:

Ասի. – Ես էլ եմ տեսեր էրազ:

Ասաց. – Պատմա՛, քու էրազ ի՞նչ ա:

Ասի, թե. – Իմ էրազ էն ա՛ մեկ խավթյ մ'էկավ մըջ քանսուն ճընջըղկուն, քսանի վիզ քաշեց, մընաց քսան:

Քուր ասաց. – Չէղի՞ Շերեմըժդինան ծեռներ հանրժըրեր ա, էլեր ա, քու ընգըռքյիրու վըզեր քաշեր:

Ասաց. – Չէ՛, էնպես օր ես էնոր ծեռներ կապեր եմ, էն չըկանա ուր ծեռներ հանրժըրի:

Վերջ քըլնան, էլա՛, տասի վիզն էլ քաշեցի, էկա գինա կայնա սան իրիս վեր: Քիչ մնաց, դևերու ճիչ հիշարցավ:

Ասաց. – Շերեմըժդինան, ես էրազ եմ տեսեր:

Ասի՛ պատմի տեսնեթյ քու էրազ:

Ասաց. – Էրազի մեչ դևերու ճիչն Շերեմըժդինանի քուր առեր էր, քյեֆ կեներ, քանսուն օրից ետ խորգե՛մ պիտի էղի Շերեմըժդինանին:

Ասի. – Ես եմ էրազ տեսի, դևերու՛ ճիչ:

Ասաց. – Դե՛, պատմա՛ քու էրազ ի՞նչ ա:

Ասի. – Իմ էրազն էն ա, օր մեկ խավթյ ինգե քանսուն ճընջըղկի մեչ, եռսունի վիզ քաշե, մնացե տասն:

Իմ քուրն ասաց. – Չէղի՞, էն էլեր, քու ընգըռքյիրու վըզեր քաշեր:

Ասավ. – Չէ՛, էնպես եմ էնի կապե, էն չըկառնար ծեռներ հանրժըրի, մարթ ըսպանի:

Անգամ մ'էլ քըլնան, էլա, իննի վիզն էլ քաշեցի:

Արուն էկավ դևերու մեծի տակ:

Դևերու մեծ հիմացավ, ասաց. – Էտա ի՞նչ ճուր էրեցի իմ տակ:

Ասի. – Էլի՛ վեր, քու ընգըռքյիրու հըմենի վիզն էլ քաշեր եմ, սըրեն քյոն ա, էլի՛ քաշեմ:

Էլա՛, ես ու դևերու մեծ էնտեղ կռվանքյ:

Էտա արնի մեչ ոտներ չու՛մ մեր ժընգվեր էղավ արուն: Ես դևերու մեծ հանդեցի:

Մի՛նչ Էնոր գըլըխի կըտրեցի, իմ քուր փախավ:

Ես էլ ինգա՛ քուրոչ հետև, հա էնա տեղ խասիմ, հա էտա տեղ խասիմ, չըխասա, մի՛նչ էկա թավի տուռ, քուր մտավ թավեն, աղոթք էրաց, ձի տանցավ:

Եփ օր ես գամ, ձի տիսնա, կը գանիֆնա:

Էն մարթ ու Շերեմըժդիման էլան, գացին Շերեմըժդիմանի բաղի մեջ: Բաղի մեջ չինարի ծառըմ կեր:

Եփ օր ինոնց աչք ինգավ տա ծառ, տա չինառի ծառ էնպես թոռմըճավ, էտոր թըփեր չորցավ, գյերի տանցավ:

Բաղից տանցան, գացին:

Մըսաֆըր ասավ. – Ես անգամ մ'էլ տ'երթամ էն բաղ, տեսնամ, թե էն ծառ ընչի՞ էնպես եղավ:

Եփ օր տանցավ, գյընաց, տեսավ ծառ զվարթ, կանաչ, գանրան ծառ էր:

Տանցավ էկավ, Շերեմըժդիմանին ասավ. – Շերեմըժդիման, տա չինարի ծառ ընչի՞ էնպես եղավ:

Ասավ. – Մըսաֆըր, ընչի՞ կը խառցընես, տիւ մըսաֆըր չէղիր, ես սիլե՛մ տը տեր քիւ իրիսին, քիւ գյըլիխ թըռըցուցեմ, ամա տիւ մըսաֆըր ես, քյե խաթըր կենեմ:

Ասաց. – Խընտրեմ, Շերեմըժդիման, տիւ ձիկ ասես:

Ասավ. – Մըսաֆըր, էն ծառն էլ օր կը խառցընես, իմ կնիկն ա:

– Օր քիւ կնիկն ա, ինչպե՞ս էղեր ա ծառ:

Ասավ. – Չի էրկու ծի կեր: Ես օր պըռնեցի ձի մշակ, իմ ծիանք օր խընձ օր վանտ կերթան, ես մեկ օր գացի շուկի մեջ, մեկ տըղե մ' ասաց. «Էնա Շերեմըժդիման ա, շապաթ մեկ մշակ կը պըռնա, տիւս կենա, թե պատճառ՝ էնոր ծիանք չըն լավանա, ամա՛, էնոր պատճառ ուր տնիցն ա, թող ձի պըռնա մշակ, էնի տեսնա, թե ես ինչըխ կը լավացուցեմ էնոր ծիանք»:

Ես էլ էտ տըղեն պըռնեցի, տարա:

Տարա իմ տան մեջ:

Տըղային ասի. – Տիւ կարո՞ղ ես իմ ծիանք լավացուցես:

Ասաց. – Խա՛, ես կարող եմ: Տիւ ձի լսես, քիւ ծիանք լավացուցեմ, թե չըլավացուցեմ, հանը չըմ առնե: Քյե մեկ պան ասեմ, չըքըռեխիս:

Ասի. – Տըղա՛, ասա, տիսնանք՝ քիւ ասելն ի՞նչ ա:

Ասաց. – Շերեմըժդիման, գյիշեր քիւ ծիանք կը գան, կը խեծին, կերթան ման գալու:

Ես էլ ասի. – Շա՛տ լավ, եփ օր կը խեծին, տիւ արի՛, ձի հիմաց տուր:

Հիրիկուն ես քյընա, իմ կնիկ էլան, քյընու ուլինգ էթալ իմ

ականց, էլան, գյընաց: Գացեր էր, ծին խեծեր էր, գացեր էր:

Մշակն էլ ուլինգ իմ ակընջեն էխան, ձի ասաց. – Էլի՛, քիւ կնիկ ծին խեծավ, գյընաց:

Ես էլ էլան, գացի թավլեն, գացի տեսա, օր ծին խեծեր էր, գացեր էր: Ես էլ ծե՛մ չըխանի, տանցա, էկա տուն, ասի՛ տեսնանք վա՞ղն էլ տ'երթա:

Մյուս օր էղա սութ խիվանդ: Հիրիկուն ես շոտ պառկա, կնիկն էլ էլան, քյընու ուլինգ էթալ իմ ականց, գյընաց, ծին խեծավ, մշակ էկավ, ձի հիմացուց: Ես էլ գացի, մյուս ծին խեծա, գացի, տեսա, օր գյընաց, մե հերի՛մ տիւս պայա էղավ: Մըտավ հեր վեր: Հերեն էլ մեկ դե մ' էլան, տոպրակըմ քար կախեց ծիու գյըլխուց, մտավ ներս: Ես էլ էն տեղ ըսպասեցի:

Վերջ հերեն էլան իմ կնիկ, ըգծին խեծավ ու քըշեց: Ես էլ գացի, դևու վիզ կըտրեցի, տըրի իմ խուռջին, հիւրիւշ ծանխով շոտ գացի, կընգան հանեճ առի, գյընացի, մըտա թավլեն:

Մշակուն էլ ասի. – Եփ օր կնիկ կը գա, տիւ ծեն չըխանես, պա՛մ չասես:

Ես էկա իմ տեղ քյընա, կնիկն էլ իմ հետս էկավ, քյընավ:

Դևու գյըլիխ ես տարեր ի, տըրեր ի մառան՝ չամչի ջըվըլի վերեն:

Կնիկ օր էկավ, ձի հիշարցուց, խառցընեց. – Տիւ շա՛տ խիվանդ ես:

Ես էլա, ասի. – Ես խիվանդ եմ, ձի չամիչ պիտեր:

Կնիկ էլան, գյընաց մառան չամիչ պերելու: Եփ օր տեսավ դևու գյըլիխ գի էն տեղ չամչի վերեն, ես էլ հետևուն գացի, տեսա, օր դևու գյըլիխ վերուցեր, տըրե ծեռներուն:

Ասաց. – Սև առինք, ես նոր էկա դևու մոտեն, էսի վո՞ն ա կըտրեր, պերեր, տըրեր ըստա:

Հա՛ իշկեց, ատըմներ աչկեց, մայան-մայան ճանչըցավ, թե ուր սիրող դևն ա:

Քիչըմ չամիչ իլեց էնոր գիք, ես տանցա, շոտըմ էկա, իմ տեղ պառկա, էն առեց չամիչ, էկավ, իլեց քասեն, խոիր իմ հանեճ: Ու հիտև էրաց, նստավ:

Ուրն ուր կը մտածա, հեջ չըգրուցեր:

Ես էլ տանցա, ասի. – Ընչի՞ չըս գրուցեր: Դևու գյըլիխ տեսար, ըտոր պատճա՞ռ չըս գրուցեր:

Օր ես ընցկուն ասի, էլձվ, փախավ: Ես մինչև իմ թուր քաշեցի, լձրեցի հետև, փախավ, գլընաց իգու մեջ, աղոթք էրաց, էլավ էսպես ծառ: Վերճեն ես էլձ, գացի մեկ հուրուշ գյեղըմ, ձի կնիկ ուզելու: ՄըսաՖըր, ես գացի մեկ տունըմ, ես էլ մըսաՖըր էղա:

Հիրիկուն պերին, էտա տան օրթեն իմ տեղ շինեցին, էնոնքյն էլ իմ չորս պիլիր պառկան:

Ես էլ էտոնց խառցընեցի, ասի. – Ընչի՞ էսպես կենեք, իմ չորս պիլիր կը պառկեք:

Էն տան մեծ ասավ. – Մեր գյեղ մեկ պա՛մ կա: Ամեն օր կը գա, ամեն տընեն մեկ մարթ կառնի, կերթա, էսօր սըրեն մեր տանն ա, մենք էլ քյե էսպես կառինք մեր մեջ, օր չըգա, քյե տանի, թոխ մե տանի:

Ես էլ էլձ, իմ տեղ շինեցի տըռան հետև, պառկա տըռան հետև:


Գյիշեր մեկ էլ հիմացա, թե մեկ ջանձվարըմ ձի գարկի էնոր հընթըտակ, առի, կերթա:

Մինչև ձի տընեն տուս էխան, ես ինոր ծեռնեն պըռծա, էն փախավ, ես թալեցի, ընոր ծամեր պըռնեցի, ծեռ տարա, խանջալ պիտեր գաներ, բոռաց, ասաց. «Ձի մը՛ գանե, ես կնիկ եմ: Ես էլ էնոր չըգարկի, առա, էկա էտա տուն, կապեցի տան մեջ մինչև առավոտ: Չուր խըլխուսն գյեղական էկան, ասին. – էտա ջանձվար տուր տանենք, ըսպանենք, էն մեր գյեղից օրեն մեկ կը տաներ, կուտեր»:

Ես էլ ասի. – Չը՛մ իտար ծե, էսիկ ջանձվար չի, էսիկ կնիկ ա:

Ես էլ առա կնիկն, էկա տուն: ՄըսաՖըր, էտա կնիկ առա, էկա տուն, փըսակեցի վըր ձիկ: ՄըսաՖըր, ապա էն տըղեն ի՛նչ ձինե էղի ու էսա կընգընից, էրթա ասլան ըսպանա, ասլան էնու ծեռ էնա յարա, ես էնոր թոնեմ գա տո՛ւն:

Վերճեն կասա. – ՄըսաՖըր, գյիտիմ՝ տու ի՛նչ պանի խամար էկած ես, էլի՛ գըռնա՛, քու կնիկ պաշտպանա, հիսանի կաթ ջըկերի, թե ջընս չի:



33. ԻՐԵՔ ԱԽՊԵՐ

Կէղին իրեք պխպեր:

Էն մեկ պխպեր կէլի, կերթա քաղաք ռուր կըսմըթի հիտև: Կը տեսնա, օր իրեք մարթ գի էտա տեղ: Մեկ կոր ա, մեկ թոփալ ա, մեկ էլ՝ չփլախ:

Կորն պալթե՛մ պըռներ ա ծեռ, մեկի՛մ մուրուս թրաշ կէներ:

Թոփալն էլ ճուր կը պերա, էն թրաշ էլնողի իրես կը թըրջա:

Էն չփլախն էլ խըրաբա, անչախմախ հրացա՛մ գի ծեռ:

Մարթուն էն չփլախ կասա. – Տիւ դի՞ր կերթաս:

Կասա. – Ես կերթամ իմ կըսմըթի հիտև:

Կասա. – Ձի էլ տար խընդ քյե:

Կասա. – Քյե տանիմ ի՞նչ, տու չփլախ, քու թըվանքյն էլ խըրաբա:

Կասա. – Տիւ ձի տա՛ր, հալբաթ ես քյե օգուտըմ կէնեմ:

Կասա. – Դե՛, արե՛, էրթանք:

Չփլախ կասա. – Ձի էրկու խատ ինգըր կա, կը պերեմ խընդ

ձի:

Կասա. – Քու ինգըրներ վո՞ն եմ:

Կասա. – Մեկ էնա կորն, մեկ էնա թոփալ:

Կասա. – Թոփալից, կորից ի՞նչ խասկընանք:

Կասա. – Տիւ պե՛, քու ի՞նչ պետքն ա, տու պե՛, տանինք

խընդրաց:

Կասա. – Դե՛, գըռնա՛, քու ինգըրներ պե՛, էրթանք:

Կէլին էտա չորս մարթ, կերթան խընդրաց:

Շատ ու քիչ կերթան, էն կորըն լապըզտրակըմ կը տեսի:

Չփլախն էլ կառի ուր անչախմախ հրացան, կընգի դիրք:
Էն թոփալն էլ կը վնձան, կը պըռնա սաղ-սաղ:
Չփլախ կառի լապըզտրակ, կը տըռնա ուր ծոց:
Կերթան իրեքյ խըրնաքն գյեղ:
Կընգին, կան կը գան, գյեղի մեչ իրեքյ պառապ կը կընդին:
Էն էրկու պառապ մեռուկ են, էն մեկն էլ համա ընգեր ա խընծ
խոգուն:
Կը պերեն, էտ պառապ կը տըփեն, խոգյի կը գան, կը ժըրի:
Կասա. - Ի՞նչ կուզեք ծենե, հո՞ւր կը տըփեք:
Կասա. - Էլի՛, պուտուկ մ'ա, պըղինծ մ'ա կընդի՛, պե՛, մեր
լապըզտրակ էփենք:
Կելնի, պըղինծըն կը կընդի, պերա, պըղընծին ոռ չըկա,
ծակ:
Կը պերեն, կը տըռեն վըր կրակին, կեփեն, կուտեն: Էմալ
կուտեն, փորներ ուտելուց կը պատռի, պերներ չիմանար:
Տիր մ'էլ կը տեսնան՝ լապըզտրակ կելնի, կը փախի: Կընգին
հիտև, չըն կանա պըռնե:
Էն մարթն կասա. - Օգնու չեներ էսա ինգըրներ, տաննամ,
երթամ:
Էտա թոփալ, կորըն, չփլախ կերթան գյեղըն, մեկ կեղի նախ-
րուրթ, մեկ էլ խովիվ, մեկ էլ հորթարած:
Էտոնց հանդեր աշուն կը ժողվեն, կեղի դըկու՛մ պեռ:
Կը թոնեն, կերթան ուրիշ գյեղ մ' էլ:
Էտա մարթն կը թոնի, կերթա, կը տեսի տանջտի՛մ մեչ մեկ
խանիվորըն՝ ճո՛չ սանդուխըն շըլկած, վան կենա:
Կը խառցնա, կասա. - Խանիվոր, էտա ի՞նչ սանդուխ ա, շալ-
կեր ես:
Կասա. - Ճամխորթ, մը՛ խառցնա, ընցի՛ գյըռնա՛, քու ի՞նչ
գոռծն ա:
Կասա. - Չէ՛, ես կը խընդդեմ՝ ծի ասես՝ տու խանիվոր, ընչի՞
ես շալկե էտա ծանդըռ սանդուխ:
Կասա. - Վանլլա՛, օր կը խառցընես, իմ կընգան աչկն տուսն
էր, ես էլ հանխու տըրիր եմ սանդուխ վեր, շալկեր եմ:
Կասա. - Խանիվոր, մեկ էտա սանդուխ տիր գյետին, խենքյ
ինչպե՞ս ա քու կնիկ՝ խորո՞տ ա, թե՞ գյեշ:
Էն էլ կը տըռնա գյետին սանդուխ:

Կը պանան, կաչկեն, կը տիսնան՝ կնիկն էլ, սիրողն էլ գո՛
սանդուխ վեր:
Մարթն էլ կելի, կը թոնի, կերթա:
Կասա. - Ես դո՛ր երթամ, ամլա հանջլաջոր պանե՞ր ծի ռաստ
տը գան:
Կելի, կը թոնի, կերթա: Շատ կերթա, քիչ կերթա, շատ ու քիչ
Աստված գյիտա, կերթա՝ մեկ մարթըն կը գան հանեծ:
Կասա. - Դո՞ր կերթաս:
Կասա. - Կերթամ խընդ իմ կըսմըթին:
Կասա. - Ես էլ եղիմ քյե ինգըր, խընդորաց իյանքյ:
Կասա. - Շա՛տ աղեկ կեղի:
Կելին, խընդորաց կերթան:
Էտա թանձ գանջողի խետն էլ խաց շատ քիչ կեղի, էտ
հանանձին ինգըրոչ խաց շատ կեղի:
Յանանձ կը պերեն էն խին մարթու խացեր կուտեն խընդ-
որաց, չու՛մ կը խըլըսի:
Դո՛ր կասա. - Պե՛ր՝ քու խացերն էլ ուտենքյ:
Կասա. - Չէ՛, ես իմ խացեր չըմ իտար քյե:
Կասա. - Նանանտուրթեն մ' էնե, պե՛ ուտենքյ:
Կասա. - Նանանտու էղիմ, չեղիմ, չը՛մ իտար:
Մեկ մուղդարըն կերթան, շատ կանոթնա հանանձի մարթ,
կելին, էն տեղ կը կըռվին:
Կը պերա, զետա անոթի մարթ կը թանձ գյետին, կը տըփա
էն նանանտու մարթ, զաչկեր խանա, կը թանձ վըր հանխաըրին, կը
թոնա, կերթա:
Կը մնա, մեկ բազըրկանըն կը գան, կը տեսի, օր մեկ կո՛ր
մարթըն խըղ ճամխին:
Կը պերեն, շանպի՛մ խաց կը լըցին կուշտ, օր ուտա ու կը
թոնեն, կերթան:
Մեկ վեց-յոթ օր կը մնա էտա կոր մարթ, խացեր կուտա, խա-
ցեր կը խըլըսի, էրկու եղվընիկ կը գան վեր էտա հանխաըրին, ճուր
կը խմեն, կը տեսին՝ կոր մարթըն գո՛ էտա տեղ:
Էն մեկ եղվընիկ ասաց. - Էսա մարթ շատ աղեկ մարթ մ'եր,
մեկ անաստված մարթու՛մ ռաստ էկավ, էսա պան էրաց գյըլիխ:
Էն մեկել եղվընիկ կասա. - Եթե էն մեր լեգուն խասկըներ,
էնոր աչկեր գո՛ էնոր ջեր ա, մեկ աչկ ուր տեղ տնե՛ր, ես թե-

բուռըմ տը թալեր ըստա, էնիկ թաթխեր մեչ ճըրոււն, գաներ աչկեր, կը ժըրեր:

Էտա մարթն էլ քընուկ, էրագի մեչն կը տեսնա էտա եղ-վընըկներ, կը լըսա էնոնց գրոց:

Մարթն կը հիշարնա, ծեռ կը տա ուր ջեթ, ուր աչկեր կը կընդի, կը տընա ուր աչկերոււն, ծեռ կըտա կըշտեր, թեբուռ մ' էլ կը կընդի, կը գանի ճըրու մեչ, կը տա աչկեր, աչկեր կը ժըրի:

Կէլի, կը տա ճամբախ, կերթա:

Շատ կերթա, քիչ կերթա, կիյա սարըմ: Մութն կը տա վերեն հիրիկոււն, կը մնա էտա սար: Մեկ ծառի տակ կը նստի, կը տեսնա հիրիկոււն մութն կը տա, առչ, աղվեսըմ կը գան:

Էտա մարթն էլ կէլնի ծառ վեր հախու:

Աղվես ու առչ կը գան, կը նստին ծառի տակ:

Աղվես կասա. - Առչ ախպեր, էսա դարբար պա'մ չը'ս պա-խեր, էլնես, պերես ուտինք:

Առչ կասա. - Վալլա', գատըմ պախեր եմ, թը մնա գիշեր, էրթամ, պերես:

Աղվես կասա. - Դե, ո'րն կա էսա դարբար, մութն տվեր ա, էլի' գընա, պե ուտենք:

Առչն էլ կէլի, կերթա մեկ քարի'մ տակ ջանդակ-մանդակ կա, կը պերա, ուտին:

Աղվես կասա. - Առչ ախպեր, տիւ փարա, պան իսկի չը'ս պախեր:

Առչ կասա. - Վալլա', էն ծառի տակ պուտուկըմ օսկի խորեր եմ:

Աղվես կասա. - Շա'տ աղեկ, թը մնա, որ օր օր նեղութեն ընգենք, տանենք մե կերակուլ առինք:

Էն մարթն էլ ծառը վեր ականջ կենա:

Կը մնա չուր խըլխոււն: Աղվես ու առչ կը թոնեն, կերթան: Էտա մարթն կէճի տակ ծառեն, ծառի տակ կը փորա, կառի ըզ-փարեն, ուր խետի խետ կը տաննա, կը գա:

Կը գա, էն նանանտ մարթ, օր ուր աչկեր խանած էր, ուր ռաստ կը գա:

Կը խառցընա. - Էտի ի'նչ ա քիւ շըլակ, տիւ էլման պըռճար, էկա'ր:

Կասա. - Փարա յա:

- Դի'ստ կը պերես:

- Էնա' սարեն:

- Ի'նչըխ էղավ, ի'նչըխ չէղավ:

Կը պառնա, թե' ես գիշեր քընա ծառի վերեն, առչ ու աղ-վես էկան, ձի շանց տվին:

Էն մարթն էլ կէլի, կերթա:

Կասա. - Տ'երթամ, բալթո ձի էլ էնպես պա'մ ռաստ գա:

Կերթա սար, մութ կը տա, կէլի էնտեղ մըսաֆըր: Կը տեսի, օր թե ծառի տակ փորուկ ա, էն էլ կէլի ծառ վեր:

Կը մնա, աղվես ու առչ հիրիկոււն կը գան:

Աղվես առչու կասա. - Էլի', քիւ փարեն, պան աչկա':

Առչ կէլի, կերթա կաչկա, կը տեսի, օր փարեն, պաներ տարած:

Կը տաննա, կը գա, աղվեսու կասա. - Ես հերեկ ի'նչըխ էրի խըն քե, չէղավ, ես ասի' թը մնա գիշեր խալի էղի, նոր էրթամ, պերիմ, տիւ համան ձի ճամխեցիր, մարթ ա էղեր էսա դարբար, մեր ծեն լըսեր, մեր փարեն տարեր ա:

Աղվես կասա. - Թը ծառ վիրն է եղած, չըմ գիտի, թե չէ' գետին մարթ չըկեր:

Առչն էլ կասա. - Խեմ, էրթամ աչկեմ:

Կէլի, ծառ կաչկա, կը տեսի օր թը մարթըմ ծառ վեր:

Կը կանչա, կասա. - Աղվես ախպեր, արի', մեր փարի տարող էլեր ա ծառ վեր:

Կէլին, էրկըսով կը պերեն տակ, կը ճըղճըղեն, կուտեն:

Էն մեկէլ մարթ գընաց ուր տուն:

Ուր ախպեր կը խառցեն. - Տիւ էտա փարեն հի'ստ պերեր, դի'ր գացիր, դի'ր էկար:

Կը պատմա ուր գըլխու գալան:

Էն միճմեկ ախպեր կասա. - Վալլա', ես էլ տ'երթամ: Բալթո Աստված ձի կըսմաթըմ խասուցա:

Պստիկ ախպեր կասա. - Ջանըմ, արի մ'երթար: Կը խես' մեր ճիչ ախպոր գըլխի ինչեր ա էկած: Մ'երթար, խեղճ ես, քիւ գըլխիսն էլ էտա պես պաներ կը գան:

Կասա. - Չէ', ես կերթամ:

Կը պերա ծառի տունգ մ' էլ կը պերա, կը տընգա բանջի մեչ:

Կասա. - Քանի որ էսա տունգ կանաչ ա, հիմացեքյ օր ձի պա՛ն չէդեր, ես աղեկ եմ, եսի օր տեսաքյ առավ չորնալ, գլխոցեք, օր ես կընգիմ նեղութնի մեչ:

Կասա ու կը թոնի, կերթա:

Շատ կերթա, քիչ կերթա, շատ ու քիչ Աստված գլխտա, մեկ մարթակեր պառավըմ կը գա՛ հանեմ:

Պառավ ասավ. - Մարթ, տու՛ր դո՞ր կերթաս:

Կասա. - Կերթամ խընդ իմ ապրուստին:

Կասա. - Արի՛ երթանքյ իմ տուն, ձի երկու խըրեղեն ծի կա, երկուսն էլ կարմիր բա՛շ, ծիեր մեկ տամ քյե: Ձի հախախուր մ՛ էլ կա, օր թե քու ծեռքեր, քու մազեր լըվա՛ս, կեղի օսկի:

Կասա. - Անեվանե հե՞ր տը տաս ծիկ:

Կասա. - Մեռի՛մ քյե, գա՛ս, չորս կանթեն պըղինձըմ ճուր եմ եռցուցե, վերցենքյ խընդորաց, տանենքյ, ձի օգըյնես, իմ գըլըխ լըվա՛ս, էն մեկ ծին տը տամ քյե:

Կասա. - Աղե՛կ, երթանքյ:

Կելին, խընդորաց կերթան, խալիվորըմ կը գա՛ հանձններ:

Խալիվոր տըղին կը խառցընա. - Դո՞ր կերթաս, տըղա՛:

Կասա. - Կերթամ խընդ էսա պառվուն:

Կասա. - Դե՛ արի, քյե կա՛վիթի մ՛ էնեմ ու գըրնա՛:

Տըղեն էլ կը տառնա խալիվորու մոտ, կասա. - Պապի՛կ, ասա՛ քու ասած:

Կասա. - Էտա պառավ քյե կը տանի դո՞ր:

Կասա. - Պառավ կասա՛ արի՛ օգըյնա՛, իմ գըլըխ լըվա՛նքյ, քյե ծի՛մ տամ ու քու ծեռքեր, մազեր էնեմ օսկի:

Կասա. - Ձանվա՛կ, էնի քյե կը տանի խապա՛, էն պըղինձ ճուր օր եռցուցեր ա, քյե կը թալա՛ մեչ:

Կասա. - Ապա ի՞նչըխ էնեմ:

Կասա. - Էն գա՛խ, օր քյե կը տանի պըղընձի մոտ, քյե կասա՛ արի պըղինձ վիրու, առ, էյանքյ, տու՛ր էլ ասա՛ Էտա պըղինձ շատ ծանդըր ա՛: Էն օր կը թալա՛, երկու կանթ կը վիրուցա, տու՛ր երկու ոտ պըռնա, շուռ տուր մըչ պըղընձին:

Տըղեն կերթա, պառվուն կը խասի, խընդորաց կիյան:

Կերթան, պառավ տու՛ր կը պանա, մըտին տուն:

Տըղեն կը տեսի, օր մեկ պըղինձըմ թալած վըր անգըռթին, սարսափելի կը եռա:

Պառավ տըղին կասա. - Դե՛, արի՛, վիրու՛ պըղինձ, տանենքյ իմ գըլըխ լըվա՛նքյ:

Կասա. - Մամի՛կ, էսի ծանդըր ա, տու՛ր էլ ձի օգընա, երկու կանթ ես պըռնիմ, երկու՛ տու՛ր, առինքյ, էյանքյ:

Մամիկն էլ կերթա, պըղընձի երկու կանթեր կը պըռնա, կը կըզի, օր վիրուցա, տըղեն հիտուց երկու ոտներ կը պըռնա, շուռ կը տա մըչ պըղընձին:

Մամիկ կը խաշի մըչ պըղընձին:

Տըղեն էլ կելի, կերթա տու՛մ: Երկու ծի կապուկ ա ըն տեղ: Նա՛ կը գըրընվեն, նա՛ կը ծախվին: Յըմեն մեկ կաժին խազար օսկի:

Գըրնաց, փընդըռեց, ասաց. - Խի մամկե օսկե հախախուր դո՞ր ա:

Գըրնաց, կան էկավ, հախախուրըմ կընդա՛վ էնոր պակի մեչ, ծեռքեր ու մազեր լըվա՛ց, էղան օսկի: Էկավ ըզժի մ՛ էլ խեծավ ու Էտուր ճամբախ, գըրնաց:

Շատ գըրնաց, քիչ գըրնաց, շատ ու քիչ Աստված գլխտա, մութն Էտու վերեն, գըրնաց թագավորու բաղչի մեչ, ծին կապեց վըր հախապըրին, ինքյն էլ պառկավ, քըրնավ:

Խըլխուն էլ թագավորու բաղչապաներ էլան տու՛ս, տեսան օր մեկ խըրեղեն ծի՛մ կապուկ էտա տեղ, հախապըրի վըրեն էլ մեկ խըրեղեն տըղեն՛քըրնուկ՝ ծեռքեր օսկի, մազեր օսկի:

Խանին տըղեն վեր, խառցընեցին. - Տու՛ր ի՞նչ տըղա ես, ի՞նչ տըղա չես:

Ասաց. - Ես ճամխորթ մարթ մ՛ եմ, իկեր եմ, խընդ իմ ապրուստին կան կը գա՛մ:

Էտոնքյն էլ կասեն. - Ըստեղ թագավորի բաղչեն ա, հե՞ր ես քու ծին կապեր հինե:

Կասա. - Ես կարիք մարթ եմ, չըգլխոցա:

Կը պըռնեն, կառին, կերթան:

Կառին, կերթան թագավորի տուն:

Թագավորին կասին. - Էսպես մարթ մ՛ենքյ պըռներ, պերեր: Էկեր էր, ծին կապեր էր քու բաղչեն:

Թագավոր կասա. - Մը՛ պըռնեքյ, օր օտար մարթ ա, չըգլխոցեր, ի՞նչ էնենքյ:

Թագավորի տան մախլուխներ կը գան թամաշա էտա տըղին:

Թագավորի ախշըկա աչկ կընգի տըղին:

Թագավորն էլ կը պերա, կը փըսակա վըր ուր ախշըկեն:

Խինգ, վեց օր խաղ, խաղտուն կենեն:

Կելնի, տու մ' էլ կը տա, ուր փեսեն ու ախշիկ կը նստին մեջ: Քանի՛մ խատ ինգըր էլ կը տա էտոր: Էն տըղեն էլ հար կերթա նեծիր:

Ախշիկ տըղի ինգըրներուն կասա. - Թե օր կերթաք, չըլնի էրթաք ծախ թիվու ճամխով, էն ճամբախ Մըժու մորանի սարն ա, որ օր գացեր ա, չէկեր:

Կասին շատ աղեկ:

Էնոնքյն էլ կելին, կերթան: Կերթան ճամբախ, ճամբախ կըլնի էրկու:

Ինգըրներ կասին. - Էտա ծախ թիվու ճամխով մ'երթար, քյելի՛, նա աչ ճամխով էրթանք:

Էն էլ կասա. - Զէ՛, ես էն ճամխով տ'երթամ:

Ինգըրներ ի՛նչ կենին, չէղիր խետ:

Կերթա, ինգըրներն էլ կընգին հետև, կիյան:

Կերթան, մեկ սար մ'էնոնց հանեծ կընգի, կը տան սար վեր, կենա պուրջ ու անծրև, կը տա վերենքըյներ:

Ինգըրներ չեն կանա դիմանար, էնի կերթա:

Կերթա սարի գյըլիխ, մեկ խաղալըմ հանճըվեն կը փախի:

Էն էլ կը լարա խաղալի հիտև, խաղալ կերթա, զինք կը թալա մեկ շենլըկի մեջ: Էն մարթըն էլ կերթա, կը մտի շենլըկի մեջ, կը տեսնա Արաբըմ կըլնի հանեծ:

Արաբ կասա. - Դե՞ր կը լարիս իմ խաղալի հիտև:

Կասա. - Խաղալ էր, իմ հանճվեն փախավ, ես էլ լարեցի հիտև:

Ըդտեղ կը կռվին վեր խաղալին:

Կասա. - Արաբ, շատ աղեկ, օր տու կը կըռվիս, տանինքյն էսա խաղալ տաշտի մեջ թոնինքյն, քանի մեր աչկ կը կըտրա, թ'երթա: Նոր ըստուց ծիանքյն կը խեծինքյն, կընգինքյն հիտև, որ օր գյընաց, պըռնեց, թըխ էղի էնոր:

Արաբ կասա. - Շա՛տ աղեկ, ես կընդունեմ էտա պան:

Խաղալ կը տանեն, թողնին տաշտի մեջ, քանի էնոնց աչկ կը կըտրա, խաղալ կերթա: Էնոնքյն էլ ծիանքյն կը խեծին, կը լարին խաղալու հիտիվ:

Էտ մարթ կընցի, կերթա պըռնա, ուր ծին աղեկ ծի յա: Կը տաննա, պերա Արաբի մոտ, Արաբ, էնի էլման կը կռվին վըր խաղալին:

Կասա. - Արաբ, տու ի՞նչ կուզես, թողիր, փախավ, ես գացի պըռնեցի, էլ ի՞նչ կուզես:

Արաբ կասա. - Արի՛ ես, տու թուխթ խաղանքյն: Եթե տու ծի տարար, խաղալ քուն ա, ա՛ռ տար, թի ես քյե տարա, քյե կը պըռնեն, կախեմ իմ պատեն:

Կըստին, թուխթ կը խաղան, Արաբ մարթուն կը տանի:

- Դե՛, - կասա, - էլի՛, քյե կը տանիմ իմ տուն, տու պըռնավոր ես, ես քյե տը կախեմ իմ պատեն:

Արաբը ըզմարթ կը պերա, կախա էնու պատեն վըր քյինթ ու պերնի:

Էտոր մեկէլ ախպերն էլ, ծառ օր տընգյեր ա, կը տեսնի՝ ծառ առավ չորնալ:

Կիշկա ծառ, կասա. - Վալա՛, իմ ախպեր նեղութեն ա ինգե, դիւց էնա ծառ չորցավ:

Տըղեն էլ կելի, տա ճամբախ, էրթա, կասա. - Էրթամ իմ ախպիր հավար:

Կերթա, մեկ խաղիվորըմ կը գա հանեծ:

Խաղիվոր կասա. - Կըտրի՛ճ տըղա, դի՞ր տ'երթաս: Վալա՛, քու ախպերն էլ էկավ, էսա ճամբխով գյընաց:

Կասա. - Ապա տու իմ ախպեր կը ճանչընա՞ս:

Կասա. - Խա՛:

Կասա. - Օր իմ ախպեր կը ճանչընաս, դիրվե՞ գյընաց:

Կասա. - Վալա՛, քու ախպեր մեկ պառավըմ խապեց, տարավ:

Կասա. - Է՛, էն պառավ տու ս'գյիտի՞ դի՞ր տարավ, դի՞ր չըտարավ:

Կասա. - Վալա՛, պառվու տուն գյիտիմ՝ գի էնա սարի հիտև:

Կասա. - Ապա չըգյիտցա՞ր՝ ինչ հապով կը տաներ իմ ախպեր:

Կասա. - Քիւ ախպեր կը խապեր, տաներ էնտեղ վնասեր, ես քիւ ախպիր պատվիրեր եմ, թի իմ խնայար էրեր՝ պրոծեր:

Կասա. - Ապա տիւ ս'գլիտի՞ ի՞նչ տ'էներ իմ ախպիր գլըլիխ:

Կասա. - Պրղիհնծըմ ճիւր էր եռցուցեր, տը խապեր, քիւ ախպեր թալեր մըջ ճրոսն:

Տըղեն էլ կը տա ճանրախ, կերթա:

Կերթա, սար կընցի, տանջտի մեջ մեկ տու՛մ կը տեսնա, կասա. - Էղի, չէղի, ես ինա պառվու տուն:

Կերթա տան մեջ, կը տեսի, օր պառավ թալուկ ա մըջ պըղընծին:

Կասա. - Վալա՛, էսա տեղեն էլ իմ ախպեր ազատվեր ա, խի՛ն դի՞ր ա էն նեղութեն ընգեր:

Էն տըղեն էլ կէլի, կան կը գա, կարմիր ծի՛մ կը կընդի, հախպիր մ'էլ պակի մեջ կը տեսնա, ուր ծեռքեր, գլըլիխ կը լըվա, կէղի օսկի: Կէլի, ծի՛ն կը խեծի ու կերթա:

Կասա. - Ծի՛ն օր կա, մըրազ ա, ծեռք գլըլիխ տը թոնիմ, դի՛ր տանի՛ էն տեղ տ'էծիմ:

Ծի՛ն էլ կերթա էտա բաղջի մեջ, որ տեղ էնոր ախպեր կաներ էր, ծիուց կէծի, կը պառկի էն տեղ, կը քընծի չուր խըլիսուն:

Խըլիսուն բաղջապաներ կերթան, կը տեսին, օր ծի՛մ ու տըղե՛մ էրկուսն էլ հանա՛ծի ծիու նըմուշ:

Կասին. - Վալա՛, մեր թագավորու փեսեն օր գացեր էր նեծիր սար վեր, գի էկեր ա:

Շոտ էն մեկ կը վազա՛ մը թագավորի ախջիկ, կասա. - Քիւ մարթ էկեր ա:

Էն մեկէլ ինգըրներ ըզտըղեն կը խանեն վեր քընուց, կասեն. - Տիւ դի՞ր էր գացեր, Մըժու մորանի սարից ի՞նչըխ ես պըռծեր, էկեր:

Էն էլ կը հիմանա, թե հանա՛ծ ուր ախպերն ա էկել ըստեղ, ուր ախպոր գլըլիխ ա էկեր, կասա. - Գի ես էլ պըռծա, էկա:

- Ապա քըլի, էրթանք, թագավորի ախջիկ շատ կասաֆաթ կէներ:

Կառին տըղեն, կերթան թագավորի տուն:

Կը գան հանե՛ծ, կը խընդանան:

Կասեն. - Տիւ գացեր Մըժու մորանի սար, ի՞նչըխ պըռծար, էկար:

Կասա. - Գի ես էլ պըռծա, էկա:

Կը տանին, հիրիկուն ախջիկ ու էնի կը գան ուրի՛նց տուն վեր, կը նստին:

Ախջիկն էլ կը խառցնա. - Տիւ գացեր էսա տան օր, ի՞նչըխ պըռծար, էկար:

Կասա. - Գի ես պըռծա, էկա:

Տեղ կէցկին, կը պառկին: Տըղեն թուր կը քաշա, կը տընա մեջ էրկուս:

Ախջիկ կասա. - Չանըմ, հե՞ր ամտըլա՛ կէնես: Ես քըլե առա, տիւ տաս օր չըմնացիր իմ մոտ, թողիր գացիր, մըկա էլ էկեր ես, ամտըլա՛ կէնես: Օր ծի չըս ուզեր, ասա՛ քըլե չըմ ուզեր:

Կասա. - Չէ՛, ես ուխտ եմ էրե, չում տիր մ' էլ չէրթամ էն սար նեծիր, չըմ իգա՛ քիւ մոտ:

Ախջիկն էլ կասա. - Շա՛տ աղեկ, խըլիսուն գըրնա՛:

Խըլիսուն ախջիկ կը կանչա ինգըրներուն, կասա. - Էկե՛ք, տարե՛ք սար՝ նեծիր:

Էլման կերթա:

Տըղեյներն էլ կը գան, կառնին էտա պստիկ ախպերն էլ, կերթան:

Կերթան, ինգըրներ խե ճանխին կասեն. - Ընցած օրն էլ տիւ գացիր Մըժու մորանի սար, մենք փախանք, մե էտուր պըռնել: Հեսօր էրթանք, մընք չընք կանար, տը փախինք գանք, էլման մե տը տա պըռնել:

Տըղեն էլ կասա. - Չէ՛, էնօր չուր դի՛ր էկաք, հեսօր էլ չուր էն տեղ էկեք, տիւ կանեք ընտեղ, չուր ես տաննամ, գամ:

Էլան, խընդրաց գացին: Գացին մըջ էտա սարերաց՝ ծյուն, անծրև, էտոր ինգըրներ կանան ընտեղ, ու էտի գըրնաց:

Գըրնաց սարի գլըլիխ, մեկ խագալըմ հանճըվեն փախավ: Լարեց խագալի հիտև, խագալ գինք էթալ տան մեջ: Տեսավ, օր Արաբըմ տընեն էլավ տիւս:

Արաբ ասաց. - Տիւ ի՞նչ մարթ ես՝ կը լարես իմ խագալի հիտև:

Ասաց. - Ես նեճըրվան եմ, իմ հանճըվեն փախավ, եսն էլ կը լարեմ, պըռնեմ ծի:

Արաբ ասաց. - Շատ մարթ էտա խագալի հիտև լարե, ամա չըտարեր:

Ասաց. - Չէ՛, ես տը տանեմ:

Արաբ ու էտա տըղեն կըռվան:

Տըղեն ասաց. - Արաբ, ի՞նչ կուզես: Արե՛ էսա խաճալ թո-
նենք մըջ էսա տաճարին: Քանի որ մեր աչկ կը տեսնա, թը փախի,
էրթա՛, ու ես, տա՛ ծիանք խեծիմք, լա՛րենք հիտև: Ո՛ր պըղնեց,
առի էնոր:

Խաճալ թողին մեջ տաճարին, գըրնաց, ծիանք խեծան,
ընգան հիտև:

Շատ գացին, քիչ գացին, պատիկ ախպեր գըրնաց, խաճալ
պըղնեց:

Գինա Արաբ ու էնի կըռվան:

Արաբ ասաց. - Ես չեմ հըրդուներ, չեմ իտար քյե:

- Է՛, - ասաց, - ապա, Արաբ, տա՛ ի՞նչըխ կուզես:

Ասաց. - Արե ես, տա՛ թուխթ խաղանք, որ վերին տարավ,
խաճալ տանք էնոր:

Խուճար խաղցին, տըղեն զԱրաբ տարավ:

Արաբ գինա չէտուր:

Ասաց. - Ի՞նչ կուզես էլ:

Ասաց. - Գո՛ւլա՛ մ՛ էլ առիմք ես, տա՛:

Արաբ ասաց. - Գո՛ւլա՛ մ՛ առիմք, որ տա՛ ծի տըրի գյետին,
ինչ կուզես՝ էրա: Օր ես քյե տանեմ, քյե տանեմ, կախեմ էնա
պատեն:

Գո՛ւլա՛ առան, զԱրաբ էտի գյետին: Թուր քաճեց, որ վիզ
տը կտրեր, Արաբ էղավ ախչիկ, ծըծվեր էխան տա՛:

Տըղեն էլ չէգար, էլան վեր:

Ասաց. - Ապա ի՞նչըխ էնեմ, դիրիս խաճալ կը տա՛ ծի:

Ասաց. - Կը տամ, ի՞նչ ուզես էլ, կը տամ:

Խաճալ էլ իտուր տըղին, տըղին էլ էլավ կնիկ:

Տըղեն ասաց. - Չի ախպեր մ՛ էկեր ա, չը՛ս տեսեր, չէկե՞ր ա
քո՛ մոտ:

Ասաց. - Վա՛լա՛՛ քո՛ պես տըղե մ՛ էկավ, գո՛ պըղներ եմ,
կախեր եմ պատեն:

Ասաց. - Դե վաճի՛, ա՛ռ, առի՛, քանի չըմեռեր:

Արաբ գըրնաց, առավ, էկավ:

Էրկու ախպեր ճանչըցան հիրարու: Էլան, էրկուսն էլ ծիանք
խեծան: Էրկուսի ծիանք մեկ նըմուշ, էրկուսն էլ օսկի ծեռք, օսկի
մազ:

Առավ զԱրաբն էլ, ըզխաճալն էլ, առան, էկան:

Էկան ուրենց ինգըրներու մոտ, ինգըրներ հախու չըն գըխ-
չըցեր էյան տուն, գո՛ կանած էն սարի հառճև:

Ինգըրներ տեսան, որ էրկու կարմիր ծիավոր, էրկուսն էլ մեկ
նըմուշ, ախչիկ մ՛ էլ խետքեր առած էկան:

Էկան խընդրաց, էկան թագավորի տուն:

Թագավորի ախչիկ փանջարեն վեր տեսավ՝ իրիկ էկավ, մեկ
էլ էնու պես գո՛ խետ:

Պերին նստուցին, հըմեն էկան, տեսան, զարմացան: Չըն
գյետի ուրենց փեսեն ո՞ր մեկն ա:

Հիրիկուն էտա էրկու ախպեր, թագավորի ախչիկ ու էտա
արաբ ախչիկ գացին տանը վեր, խաճալն էլ էկեցին, կերան:

Քըրնան չուր խըլիսուն:

Խըլիսուն էտա արաբ ախչիկ խառցընեց թագավորի
ախչըկեն:

Ասաց. - Թագավորի՛ ախչիկ, տա՛ քո՛ իրիկ կը ճանչնա՞ս՝ որ
մեկն ա:

Ասաց. - Չէ՛, վա՛լա՛՛, ես չըմ ճանչընար:

Ասաց. - Պատմա՛ քո՛ գըլխու գալած: Հանաճին, որ էկավ,
ի՞նչըխ էղավ, հետին որ էկավ, ի՞նչըխ էղավ:

Ասաց. - Հանաճին փըսակեցի իմ վըրեն, տաս որ մնաց իմ
մոտ: Տաս օրից ետ գըրնաց նեճիր: Տաս որ մնաց, չէկավ: Ըն մեկ
որ էլ բաղչապաներ ասին՝ էկեր ա քո՛ իրիկ, գո՛ բաղչեն: Ես էլ
ճամխեցի, պերի իմ մոտ, էն էլ թուր քաճեց, էտի մըջ ծի, մըջ էնի,
պառկավ չուր խըլիսուն: Ես էլ ասի՛ էսա տաս որ կա՛՝ տա՛ գացեր
ես, դիրիս էկեր ես, թուր կը տըրես մըջ ծի, մըջ քյե, թե չըս առնի,
ծի ասա: Էն էլ ասաց՝ ես ուխտ եմ էրե, էլման տ՛էրթամ նեճիր:
Էլավ, էթող, գըրնաց:

Ըն տեղ էնու ախպեր հիմացավ, թե ուր ախպեր չըգացեր
ուր կընգան մոտ:

Արաբն էլ ասաց. - Քո՛ իրիկ էնա յա, քո՛ մատնիկն էլ գո՛
մատ, էլի ճանչըցի:

Էն էլավ, մատնիկ տեսավ, ճանչըցավ:

երկու ախպեր էլ գացին տուս: Մնացին երկու ախչըկներ:

Թագաձորի ախչիկ արարու ախչըկան ասաց. - Ապա էսա ի՞նչըխ էլան երկու, էնա մեկէլ հո՞ւստ ա:

Արար աւաց. - Էն մեկէլ էնու ախպերն ա:

- Ապա էն իմ առածն տաս օր դո՞ր գընաց:

Արար աւաց. - Էկավ էնա սար նեծիր, իմ խնգալ հանձվեն փախեր էր, էպի մեր տուն, ես էլն հանե՛ծ, պըռնեցինք գուլնա՛շ, զէն տըրի գյետին, կախեցի պատեն, ուր ախպերն էկավ, զէնի անգատեց, ծի էլ առավ ու էկավ էնոր:

Ըն տեղ թագաձորի ախչիկ քիչըմ տարվավ:

Ասաց. - Իմ իրիկ գացեր, չըկարցեր վըր էսա ախչըկեն, էն մեկէլ գացեր, զէնի անգատեր:

Թագաձորն էլ էլնավ, էտոնց ամսական կապեց, հարստացան, մարթնավարի ապըրվան ընտեղ:

Մեկ օր արար ախչիկ ասաց էնոր իրկան. - Արի՛, էսա երկրեն թողնինք, էյանք: Քու խոր երկիր դո՞ր ա, էյանք էն տեղ:

Ասաց. - Ի՞նչ հնապով էրթանք, ըստեղ մեր ապրուստ կէղի, հե՞ր էրթանք:

Ասաց. - Յըմեն օր թագաձորի ախչիկ մե իրես կը տա, կասա՛ իմ խոր սայից կապըրվեք:

- Աղեկ,- ասաց,- իմ ախպիր ասեն, կարելի ա էլ էն գա՛ խընդ մե, էրթանք:

Պստիկ ախպեր ճո՛չ ախպիր կասա օրըմ. - Ախպեր, ես տ'երթամ երկիր: Թի կը գաս, արի էրթանք, չըս իգար, ես կ'երթամ:

Ասաց. - Ի՞նչ պակսութեն կա մե, ի՞նչ հնապով էրթանք:

Կասա. - Չէ՛, ես տ'երթամ. գաս, տ'երթամ, չըգաս, տ'երթամ:

Էն էլ կասա. - Ես քու թարկ չըմ իտար, օր տու էրթաս, ես էլ տը գամ:

Նոր հիրիկուն թագաձորի ախչըկեն էլ կասա. - Մենք տ'երթանք երկիր: Կը գաս արի, չըսիգա՛՛ մենք տ'երթանք:

Թագաձորի ախչիկն էլ կասա. - Ես թագաձորի ախչիկ եմ, ի՞նչըխ պիտի գյեղ տեղ ապըրվենք: Քյե ի՞նչ պակսութեն կա:

Կասա. - Չէ՛, թու պակսութեն չըկա մե, իմ ախպեր կ'երթա, ես էլ տ'երթամ:

Թագաձորի ախչիկ կասա. - Թ՛ էնի առի ուր կնիկ, էրթա, ես ու տու չ'երթանք:

Կասա. - Ես չըմ կաներ, գաս, չըգաս, տ'երթամ:

Կասա. - Օր ես գամ, ի՞նչ ասեն, իմ խոսքով կենե՞ս:

Կասա. - Ասա՛ խեմ քու ասած ի՞նչ ա:

Թագաձորի ախչիկ կասա. - Յայդե մենք գացինք քու խոր երկիր, հըմեն օր քու ախպըրկին ծի իրես տը տա, ասա՛ քու իրիկ էկավ, ես պըռնեցի, կախեցի պատեն, իմ իրիկ էկավ, գատեց: Ես թագաձորի մ՛ ախչիկ, էնի բանադի: Ձի շատ գոռ կը գա՛:

- Է՞՛,- կասա,- ես ի՞նչըխ էնեմ, գոռ էնպես էղավ:

Կասա. - Ես քյե պա՛ մ'ասեն, քու ախպիր ասա. թը քու խոսքով էրաց, ծի ասա: Քու ախպիր ասա, էնոր կնիկ թը թոնա, էնոր որ մեկ պիտեր՝ վոզիրի ախչիկ, սատրանգանի ախչիկ, ո՞ր մեկ կուգա, պերենք, փըսակենք վըր էնոր, առենք, խընդորաց էրթանք:

Էն էլ գըռնաց, ախպիր ասաց:

Ասաց. - Ախպեր, արի՛ քու կնիկ թո՞ղ, քյե որ մեկ ախչիկ պիտեր, պիրեմ քյե:

Ախպեր ասաց. - Ի՞նչ հնապով իմ կնիկ թոնեմ, ի՞նչ ա էրեր, անեվանե հե՞ր թողնեմ:

Ասաց. - Իմ կնիկ, քյոն քյար չըն ընգեր, արի թող, որ մեկ կուգես, պիրեմ քյե՛ սատրանգանի ախչիկ կուգես, վոզիրի ախչիկ կուգես, որ մեկ օր կուգես:

Կասա. - Իմ կընգան թու կանիյանքըմ չըկա, իմ կնիկ չըմ թողեր:

Տըղեն կէլի, կ'երթա, թագաձորի ախչըկան կը պատմա:

Թագաձորի ախչիկն էլ կասա. - Պա՛ մ'էլ ասեն, իմ խոսքով էրա, թը չէ՛ չըմ իգա՛:

Կասա. - Ասա՛, ի՞նչ ա քու պան:

Կասա. - Քու ախպեր գա՛ր, ըսպանա՛, ըն կընիկն էլ չըխտ կը մըլենք տուս, ու ես, տու դիրիս մեր քյեֆովն ենք:

Կասա. - Ջանըմ, ես իմ ախպեր ի՞նչըխ ըսպանեմ:

Կասա. - Էրթանք երկիր, հա՛ն քյե իրես տը տան, հա՛ն ծի, հա՛ն քյե ամոթ ա, հա՛ն ծի:

Ըզտըղեն կը համոզա, օր ըսպանա գուր ախպեր:

Ու կէլին, ծիանք կը խեծին, կը տան ճանքախ, կը գան: Մեկ սըհաթ, մ'երկու քաղքյեն կեռանան: Թագաձորի ախչիկն էլ մախսուս էնոր ջըլեր, պաներ թողած ա տուն, կասա ուր իրկան՝

տանցեք, գացեք պերեք, ճամբանս ըսպանա, թող արի, ասա՝
մնաց քնդաք:

Էնոնք էլ կերթան, ըզպաներ կառեն, կը գան չուր ճամխի
կես, թուրըմ կը գանի ախպիր գյըլիխ, զախպեր կը թալա ճամ-
բախ, ծին կը քըշա, կը գա, կը խասի կըխտերուն:

Էտա Արաբն էլ փարի ա, կը հիմանա, թե ուր իրկան գար-
կեր, բրինդար թալեր ճամբախ, իկեր:

Կնիկն էլ կը տանա, ուր Արաբու կերպարանք կը պերա
ուր վերեն, տեգեր կասա. - Տու իմ իրիկ ըրիր բրինդար, թալեցիր
ճամբախ, մըկա ծե երկըսիտ էլ օր ըսպանեն, վի՞ր կաբիյաթն ա:

Էն էլ կասա. - Ես քու բախտ, քու Աստղծուն, ես էրի, տու
չենես, ես խապվա թագավորու ախչըկեն:

Կասա. - Դե՛ արի՛, ուխտ էրա, էլ թագավորու ախչըկե խոսքով
չենես, ես էրթամ, քու ախպեր առիմ, գամ:

Էն էլ ուխտ կենա, կասա. - Ուխտ էղի, ես թագավորի ախչըկե
խոսքով չենեմ:

Արաբն էլ կը տանա, կերթա վըր իրկան: Իրիկն գի՛ ինգեր
ճամբախ:

Տեղ կը տա, գիրիկ կը ժըրըցուցա:

Իրկան կասա. - Տու հե՞ր մնացիր ըստան, քու ախպեր էկավ:

Կասա. - Վալա՛, ես ծիուց ինգա տակ, իմ աղըլ գացեր էր,
չըմ գյիտեր՝ ի՞նչ էր էղեր ծի:

Էն էլ կառի իրիկ, կը գա, կը խասի տեգեր, թագավորու
ախչըկան:

Արաբ տեգեր կասա. - Էն չըգյիտեր, թը տու ես գարկեր,
գյիտա, թե ծիուց ա ինգեր տակ, տու էլ էնոր մ'ասեր, օր չէղիք
իրարու դուշման:

Կերթան գյեղի հանեճ: Մեկ էլ ճիչ ախպեր կը տեսի, օր երկու
կարմիր ծիավոր էկան, երկու ծին էլ մեկ նըմուշ, երկու կնիկ էլ գի՛
խետքեր:

Գյեղական էլ կը գան հանեճ, չըն ճանչընար, թե վոն ա, վոն
չի: Կը գան, կերթան ուրենց խոր տուն:

Ախպերն էլ չըգյիտեր, թը վոն են: Էնոնց ծեռքեր, մազեր
օսկի, չըճանչընար:


Էնոնք ախպիր կը խառցընեն, թը՛ տու վի՞ր տընեն ես, քյե
ախպեր կե՞ն, չըկե՞ն:

Ախպերն էլ կասա. - Վալա՛, ծի երկու ախպեր կեն: Երկուսն էլ
գացին, չէկան:

Էնոնք էլ կասեն. - Մենք ենք քու ախպրներ:

Կը պատմեն էնոնց գյըլխու գալաճ:

Վերջ կելին, երկըսի խաղ, խաղտուն էլ կենեն, էնոնք կը
խասին ուրենց մըրագին, տու էլ՝ քուն:





34. ԻՐԵՔՅ ՆԱԽՐՈՐԹ

Կելին իրեքյ գյեղի նախրորթ: Կերթան տանտ, կը գան հիրարու մոտ, կը մեկտեղեն:

Ըն մեկ նախրորթ կասա. - Հետօր ես էրագ եմ տեսեր: էրագի մեչ տեսա՝ արև առավ, հանածին տիր էնոր շող էգան իմ ճակատ:

Ըն մեկել նախրորթ ասաց. - Ես էլ էտա էրագի պես էրագըմ տեսա, համա արևի շող էգան իմ աչ թև:

Ըն մեկել ասաց. - Ես էլ էտպես էրագըմ տեսա, համա՝ արեգակ էգան իմ ծախ թև:

- Ապա ի՞նչըխ էնենքյ, ի՞նչըխ չենենքյ, էրթանքյ վի՞ր մոտ՝ մեր էրագի պատասխան տա, թը ի՞նչ ա մեր էրագ:

Ըն մեկ կասա. - Մեկ խալիվոր մարթ գի՞ մըչ էնա տանտին վան կանա, էրթանքյ էնոր մոտ, մըր էրագի պատասխան տա:

Կերթան, պարև կը տան էտա խալիվորուն, խալիվոր էնոնց պարև կառի:

Կը պատմեն խալիվորուն, թի մենքյ էպես էրագ մ՝ ենքյ տեսեր:

խալիվորն էլ կասա. - Օր արև էգան քի՞ ճակատ, տի՞ տ՛ղիս թագավորի փեսա:

Ըն մեկելին կասա. - Էն, օր քի՞ աչ թև արև էգան, տի՞ տ՛ղիս թագավորի աչ կըշտի վոգիրի փեսա: Էն մեկելն էլ տ՛ղի ծախ կըշտի վոգիրի փեսա:

Կելին, կը գան, կը գան ուրենց նախրի մոտ:

Ամեկ ուր նախիր կը ժողվա, կառի, կերթա ուր գյեղ հիրկուն:

Հիրկուն օր տ՛երթեն, մեկմըկու կասեն. - Վանըն էլ գանը ըստեղ, խենքյ ի՞նչ խորխուրթ մ՝ էնենքյ: Կարելի՞ օր էղինքյ թագավորի, վոգիրի փեսա:

Մեկել օրն էլ կը գան հիրարու մոտ, կը մեկտեղեն տանտի մեչ:

Իրարու կասեն. - Ի՞նչ էնենքյ, ի՞նչ չենենքյ:

Էն մեկն, օր արև գանկեր ա ճակատ, կասա. - Օր տի՞ ծի լսեքյ, տը գանքյ նախրորթուն թողնենքյ, էրթանքյ թագավորն քաղաքյ, նախրորթուն մե օգուտ չեներ:

Կելնեն, հիրարու ծեռքեր կը պըռնեն, միասին կերթան:

Կերթան թագավորի քաղաքյ, կը խառցընեն, թե թագավորն սարեն դո՞րն ա:

Մեկ մարթըմ կասա. - Էնա՞ տեղն ա, գանցեքյ:

Կիյան սարի պակի մեչ, էն տեղ կանակուներ չըն թողնի մնան, կասեն. - Տի՞ւր խեղճ եքյ, չփլախ եքյ, էլեքյ գանցեքյ:

Էնոնքյ էլ կը տաննան, կը գան, քաղքի մեչ մեկ գի՞շե՛մ կը պառկեն:

Գի՞շեր կանակուներ կան կը գան, կը տեսին իրեքյ կըտըռտուկ ջըլերով մարթ գի՞ էտա տեղ, կը պըռնեն գէտոնքյ: Կը խառցընեն, թե՛ ընչի՞ եքյ էկեր ըստա, ի՞նչ մարթ եքյ տի՞ւրքյ:

Էնոնքյ էլ կասեն. - Մենքյ ֆուկարա մարթ ենքյ, էկանքյ, տը գյենքյ թագավորի սարեն, մե չըթողին ներս, մենքյ էլ էկեր ենքյ, ըստա պառկեր ենքյ:

Էնոնքյ կասեն. - Տի՞ւր ի՞նչ գործ ունեքյ թագավորի խետ, տի՞ւրքյ գի՞ղ եքյ:

Կը տանեն, պըռնեն: Գի՞շեր թագավորի ախչիկն էլ, էրկու վոգիրի ախչըկներն էլ էրագ կը տեսին:

Էրագի մեչ կը տեսին, թե իրեքյ ֆուկարա նախրորթ պերած ա՞ն, պըռնած, ուրենց կասեն, թը տվեքյ թողնել, մեղքյ են, էղի, չէղի, տի՞ւրքյ էնոնց տ՛առնեքյ, ծեր կըսմաթ էնոնց գյըլիխն ա:

Խըլխուն իրեքյ ախչիկ կելին, կերթան թագավորի քաղքի մեչ կը մեկտեղեն, հիրարու կը պատմեն: Էն էնոր, էն էնոր կասեն, թե՛ էպես էրագ մ՛ենքյ տեսեր:

Էն տեղ վոգիրի ախչիկ կասա. - Էրթանքյ վի՞ր մոտ՝ մեր էրագի պատասխան տա:

Են մեկէ վոգիրի ախչիկ կասա. - Գնալըսխանի մուտուռ շատ կարողըցվոր մարթ ա, էրագի պատասխան լավ կը տա, էրթանքը էնոր խառցընենքը:

Կերթան, մուտուռ կանչեն, պերեն, կը պատմեն էնոր էնոնց էրզըներ:

Մուտուռն էլ կասա. - Էտպես իրեքը խեղճ մարթ հերեկ պերած ա, պըռնած ա, դե Աստըծու հրաման ա, կարելի օր ծեր կըսմաք էնոնց գըլըխն ա:

Ախչըկներ կասեն. - Թողե՛քը էտա մարթեր:

Թնագնալու ականջն էլ կընգի էսա խնարըրքեր:

Թնագնալոր էտոնց հրաման կենա, էտոնց սերսուփ ջուլ կը խագուցեն, կը ճամխա, պերա էնոր սարի մեչ:

Տըղեկներ օր լավ ջըլեր խագան, էղան լավ, գեղեցիկ ջըլեի:

Ախչըկներն էլ օր կը տեսին, թե Աստըծուց ա, թե ի՞նչ ա, սիրտ կընգի հիրար, կը պերեն, մե մեկ ուր վըրեն կը փըսակեն:

Էնոնց ջոկ հօղա կը տան, էն տեղ քանի՛մ ժամանակ կապըրվին:

Թե ուրիշ վոգիրի ախչըկներ, թե սնդրանգանի ախչըկներ էտոնց էրես կը տան, թե. - Տիւ ընչի՞ գանցիքը ֆուկարա, խեղճ մարթեր առաքը:

Էնոնքըն էլ կելին, կառին ուրենց իրկըներ, կը գան իրիկներու էրկիր:

Շատ կը գան, քիչ կը գան, շատ ու քիչ Աստված գյիտա, կը գան, մեկ քնդաքըն մըսաֆիր կեղին հիրիկուն:

Օր մ՛ էրկու էտա քնդաքը կը մնան: Էտ քնդքի մախլուխաք կը տեսին, թե իրեքը մարթ, իրեքը կնիկ էկած ան, մըսաֆիր էղած: Ամա էնոնց ծիեր խրեղեն, ջըլեր անթիկա:

Վոլին կիմացուցին, թե էսմալ մարթեր էկած ան:

Էտա վոլին կասա. - Գանցե՛քը, էտա մարթեր ճամխեքը էնա պըրակ, մե մեկ շալակըմ փետ պերեն: Եփ օր մարթեր ճամխեքը փետե, թե էտոնքը խանանդան մարթ են, ջըխտ տը դիմադրին, չըն էրթար: Թե չէ, համան էլան, գանցի՞ն, էտոնքը խեղճ, ֆուկարա մարթ են, կեղի օր գողեր են:

Կերթան, էտ մարթերուն կասեն. - Որ օր գն էսա քնդաքը, տ'երթա էնա պըրակ, շալակըմ փետ պերա հուլըյմըթին: Էլե՛քը, գանցե՛քը պըրակ, մե մեկ շալակըմ փետ պերեքը հուլըյմըթին:

Էտոնքն էլ կասեն. - Գետօր հեվար ա, մուքն ա, վանդ առավոտուն կերթանքը:

Մարթեր կը տանոնան վոլու մոտ:

Կասեն. - Ասինքը, ասին, թե հետօր մուքն ա, առավոտ կերթանքը:

Վոլին էլ կասա. - Էնոնքը խեղճ, ֆուկարա մարթ կերևան: Խըլխուսն գանցեքը, գէնոնք ճամխեքը էնա մեծ պըրակ, էն տեղ ասլան կա, գէնոնքը տ'ուտա, մենքը էնոնց կըխտեր¹⁹, պաներ կը պերենքը:

Խըլխուսն մարթեր կերթան փետե:

Կիյան մեչի մեչ, կը տեսնան, օր էրկու ասլան կը գան, էտոնքըն էլ կելնին, գերկու ասլան կը պըռնեն, կը պերեն, փետ կը պանոնան վըրիները, կը գան: Քնդքի կը մոտանան: Վոն օր տեսի, կը վախենա, թե ասլան պըռնած, փետ ա պանցած վըրեն:

Վոլին էլ գէտոնց կըխտեր ճամխած, տարած ուր մոտ, կը խառցընա, թե տիւքը ի՞նչ մարթ եքը, ի՞նչ մարթ չեքը:

Օր կը տեսին, կը գան, վոլուն կասեն. - Մարթեր էրկու ասլան պըռնած, փետ պանցած վըրեն, առան էկան:

Վոլին էլ կելնի, շոտ էնոնց կըխտեր կը ճամխա ուրենց քըրա էրած տուն:

Կառին փետ, կը գան հուլըյմըթի տիւռ:

Ձավթիքը կը փախեն տեսա-տենա:

Վոլին կասեն. - Գանցե՛քը, ասե՛քը, թող առին ուրենց ասլաներ, տանին, թողին սար, չեղի թե գան, էսա ժողովուրտ ուտեն:

Էնոնքըն էլ կառեն ասլաներ, կը տանեն ուրենց տան տիւռ:

Կըխտերուն կը խառցընեն, թե ինչպե՞ս եքը:

Կըխտերն էլ կասեն. - Վոլին մե տարավ, կը խառցփոռցեր, մե կը չարչըրեր, մե կասեր՝ ծի տ'անցեքը:

Էտոնքըն էլ կը հըռըկեն:

Մեկ նախորոթ կասա. - Ասլաներ տանենքը, թոնենքը մեչ վոլու տան, էնոր էրեխեքը, պաներ ուտեն, էնի կռապաշտ ա:

Թնագնալորի ախչիկ կասա. - Զէ՛, մըքը էնի, էլե՛քը, մեր ճամխա պըռնեքը, էրթանքը:

¹⁹ Կնիկ, հոգնակին լինում է կըխտեր (Ճ.Բ.):

Էտոնքյն էլ ուրենց էլած-չէլած կը պաննան վըր ասլաներուն, կը խեծին ծիանքյ ու կը տան ճամբան, կերթան:

Իրեքյ-չորս օր ճամբան կերթան: Կերթան, մեկ ճամբանը կը խասեն, քանտուն մարթ ճամբան կտրած ա, քալան կենեն:

Տեսան, օր փայթո՛մ կը փախի, կը գա էնոնց հանեծ:

Երկու մարթ նստուկ են փայթոնը վեր, փայթոնջին էլ էտոնց կասա. - Էտևանց գողերն են, հանճըվանց իրեքյ մարթ, իրեքյ կնիկ, երկու ասլան պանջած գո կը գան, էսա ի՞նչըխ էնենք:

Կը վախենան, թե չէղի էսա ասլանի տերերն գողերու ինգերն են:

Վաճառականներ կասեն. - Էղի, չէղի, տ՛երթանքյ էտոնց հանեծ:

Կը գան հանճըվներ, փայթոնջին կը կանի: Էտ թագավորի փեսեքյ կը խառցընեն փայթոնջուց, թե՛ ընչի՞ կը փախեքյ:

Փայթոնջին էլ կը վախենա, կասա. - Վա՛յ թե գողերու ինգերներն են:

Կասա. - Ախպեր, մե ասեքյ, թե տուքյ ի՞նչ մարթ եքյ:

Կասեն. - Մենքյ թագավորի քաղքյեն գո կը գանքյ:

- Ապա էտա ասլաներ ի՞նչ են, ի՞նչըխ եքյ պըռներ:

Էտոնց կը պատմեն ուրենց գյըլխու գալած: Էտոնքյ կիմանան, թե գողերու ինգերն չեն:

Կասին. - Ախպըրներ, վու՛ւ, տու պարի էկաքյ: Մենքյ գանցինքյ էնա տեղ, գող կեն, մե թալնեն, մենքյ փախանքյ, ջորով ծեռքերուց ազատանքյ, տու էլ մ՛երթաքյ, ծե թալնեն:

Ինոնքյ էլ կասեն. - Մենքյ տ՛երթանքյ, թը գան մեկ էլ թալնեն:

Փայթոն կը կայնի, էնոնքյ կասեն. - Թե էնոնքյ թալնըվան կը փախենքյ հիտուց, թե չըթալնըվան մենքյ էլ կերթանքյ:

Էտա մարթերն էլ կը գան: Գողեր կը պըռքին, օր իրեքյ մարթ, իրեքյ կնիկ, երկու ասլան պանջած կը գան:

Գողեր կը վախենան, օր կը տեսին ասլան պըռնող մարթ են:

Գողեր կը թողնին, կը փախին: Էտոնքն էլ կերթան գողերու տեղ, կը տեսին, օր մեկ մեծ վանանըմ գարկած էտա տեղ, ինչ օր թալնած են, գո էտա տեղ, կա խնգար ոսկու ապրանքյ:

Էտա մարթերն էլ վանանի հանեծ պայա կեղին:

Կը տեսին, օր չադրի մեչ ախագյին անթիկա պաներ, հիրարու կասեն. - Ի՞նչ էնենքյ, ի՞նչ չէնենքյ:

Փայթոնջին էլ փայթոն քըշեց, գյընաց, տեսավ, օր ախագյին ապրանքյներ գո էտա տեղ: Էն էլ էն տեղ կանավ, էճան միասին: Էն մարթեր էն տեղ քյար ընգան, ինչ օր կարցան, լըցին մըչ փայթոնին, պանջին վըր ասլանքյըներուն, գյընացին խընդրաց:

Շատ գանցին, քիչ գանցին, շատ ու քիչ Աստված գյիտա, քանի մ՛ օր գանցին:

Գանցին էտա թուլըրներու քաղաքյ: Էնոնց տուն նստան խընդրաց: Քանի մ՛օր էտա տեղ ապըրվան, ապրանքյներ ծախեցին, մեկ խնգար, երկու խնգար ոսկու չափ փարա առան: Էլան, էտա քաղքյեն պանջին, գանցին:

Գանցին մեկ տեղըմ, տեսան օր գյետըմ կա հանեծ: Էտա գյետի հանեծ կանան: Կարմունջ էլ չըկա: Ի՞նչըխ տ՛ընցին:

Էտ մեկ նախորթ՝ ծախակողմի վոզիրի փեսեն, զէտա կըխտեր խեծուց վըր ասլաներուն, ընցուց:

Էտա ծիանքյն էլ կապեց հիրար, հանվար պըռնեց, խեծավ վըր ասլանին, քաշեց, ընցուց: Էտ երկու մեկէլ նախորթ ծիով գարկին մըչ գյետին: Աման գյետն էզար, ըզնախորթներ տարավ, ծիանքյ պըռծան, էլան տու:

Մընաց մեկ նախորթ: Առավ իրեքյ կին, երկու ասլան ու գյընաց:

Գյընաց մեկ գյետըմ, հիրիկուն մըսաֆիր էղավ մեկ թագ տու՛մ:

Տեսավ, օր մեկ խալիվորըմ նստեր ա վըր տըռան:

Ասաց. - Պարս քյե, խալիվոր:

Ասաց. - Վա՛յ, տու պարի չէկար:

Ասաց. - Ընչի՞, տեղ չըկա՞, էսօր մըսաֆիր չը՞ս տիրեր:

Ասավ. - Մըսաֆիր, ի՞նչ կը խառցընես, վոն օր գանցեր ա ըստուն, էլ տու չիլեր, կուզես գյընա, կուզես տանջիր:

Էն էլ գյընաց ներս, պեռներ էթալ ցածր:

Տեսավ, օր մեկ տուռ էպաց, էկավ տու: Նախորթ տեսավ, օր ի՞նչ մարթ՝ մարթըմ, օր էսա տուն վեր չըմտեր՝ մեկ աչք գո ճակատ: Նախորթ շատ վախեցավ: Նա էն ա էտ տաննա, նա էրթա: Մընաց կանուկ:

Տեսավ մեկ աչքեն մարթ նախորոթին, ասաց. - Արի՛, արի՛ ներս, քյե կենեմ ընթրիս:

Մեկ աչքեն մարթ ըզնախորոթի ճիվեն պըռնեց ու ըզկըխտերուն, տարավ տուն:

Էն ինչ թագաւորի ախշիկն էր, վոզիրքերուն, աչքերու քաֆիկ պիրին վըր աչքըներուն, չըն գըխշընա պըշքին, նախորոթն էլ պըշքավ, տեսավ, օր էրկու մարթ տել սաղ՝ կախած չանգըլեն:

Մեկ աչքեն մարթ ըզնախորոթ նստուց:

Խարցընեց մոտեն. - Հո՞ւստ կը գաս, էսա կըխտեր քյե ի՞նչ են:

Ասավ. - Թագաւորի քաղքեն կը գամ, էսա կըխտերն էլ էնա մեկ իմ կնիկն ա, էնա էրկուսն էլ իմ քուրերն են:

Մընաց, ասաց. - Տո՛ւք անոթի չե՞ք, խաց չը՞ք ուտեր:

Ասաց. - Վո՛ւն, անոթի ենք:

Էլանվ, ճո՛չ խաց մ՛ էպի, վերեն էլ էրկու հիսնի էփած թև էղիր վըրեն:

Նախորոթի աչք օր ընգամ հիսնի թև, էլ չըզըխշըցավ գանդ ուտեր:

Ասաց. - Հիսնի թև ա, ընդո՞ւց խաց չըս ուտեր, կե՛, պան չըկա:

Նախորոթն էլ հանիւ միս չըկերավ, պըրտուճ մ՛ էրկու խաց կերավ:

Մընաց չուր հիրիկուն, էլավ, էրկու մարթեր, օր կախուկ ա չանգըլից, առավ, էկավ: Էնպես սաղ, շիշ մ՛էգար տակ վեր, գյըլխուց էլան տո՛ւս, պըռնեց վըր կրակին, էփեց, զոտներ, թևեր կերավ, ջանտանկն էլ էթալ էն տեղ, ասաց. «Էն էլ խըլխուն կուտենք»:

Գյիշեր տա կոր մարթ առավ նախորոթի կնիկ ու քըրնավ:

Նախորոթ գյիշեր էլանվ, կրակ էրաց: Տեսավ, օր ուր կնիկ ու էտ մեկ աչքեն մարթ ծեռքեր ընցուցած իրար գյըլխու տակ ու քըրնած:

Նախորոթն էլ էպեր, թուր քաշեց, էտիր էտ կոր մարթու վըզին, մեկ անգամ օր քաշեց, տարավ կեսն:

Մեկ աչքեն էլանվ քիչըմ տա դարբար գավգավ, գավգավ:

Նախորոթի կնիկ էլ ասաց. - Տո՛ւ ընչի՞ն էն ջահելին էմալ գարկիր, ափսոս չէ՞ր:

Էնպես օր ասաց, նախորոթի հըրս էկավ, էլանվ, կնիկն էլ իտու հանճն թրի, կնիկն էլ ըսպանեց:

Ձէն կորն էլ իտուր հառճն թրի, պըրտից գիրարուց, էթալ էն տեղ:

Էլանվ, զուր պաներն էպանց, առավ ասլաներ, թագաւորու ախշիկ ու վոզիրին, գյընաց:

Էլանվ տո՛ւս, ըխթիյարն ասաց. - Տո՛ւ ի՞նչըխ պըռծար, էլանր, մարթանկեր մեկ աչքեն քյե չըկերավ:

Ասաց. - Էն կորին ըսպանեցի:

Ասաց. - Շա՛տ աղեկ էրիր, սպանեցիր, մոտեն պըռծանք:

Մարթն ինգամ ուր ծամբախ, գյընաց: Տեսավ, օր մեկ մարթըմ էնդեխեն կը գամ, էնոր ոտըն, ծեռ խընճ գոմշու, էնոր հըմեն մեկ բեղ խընճ աղվեսըմ կա:

Պիր մ՛էլ, գյըլիխ պիպոզ, պըռներ ծեռ, կա խընճ վարի լիճ: Էկավ հանճն, ասավ. - Տո՛ւ դո՞ր կերթաս, մարթ:

Ասաց. - Ես էնա տեղեն կը գամ:

Ասաց. - Էն անաստված մեկ աչքեն կոր գո՛ վըր ծամխին, տո՛ւ ի՞նչըխ ես ինոր ծեռնեն պըռծե:

Ասաց. - Ես գէնի ըսպանեցի:

Ասաց. - Ձի էրկու խորոխպոր տըղա հէրեկ պըռներ, տարեր, սա՞ղ են, կերե՞ր, ի՞նչ արեր:

Ասաց. - Մեկն իփեց, կերավ, մեկէլն չանգըլեն կախ, ես էկա:

- Դե՛, տո՛ւ գյընա՛, ես էրթամ դըխ իմ խորոխպոր տըղեն:

Ընցավ, էկավ: Էկավ, ինգամ մեկ ուրիշ թագաւորի՛մ խողն էլ:

Տեսնա, օր էտա հիրիկուն դանլալ կանչեց. - Ո՛ր գա՛, էրթա՛ քըրնի մեր ժամտուն չուն խըլխուն, թագաւոր ինչ ուզա՛, կը տա:

Էն էլ ասաց. - Վո՛ւն, ես տ՛երթամ, քըրնիմ ըն ժամտուն, խի ի՞նչ կա:

Քըրնավ ժամտուն, ճրա՛ք չընցուց չուն կեսգիշեր, տեսավ, օր մեկ հիշապ պատեն էլանվ, էկավ, օր ըզնախորոթն կըլնա:

Նախորոթ թուր էտուր ճակտին ու էտուր հիշապի պերնին, հիշապ պերնից ըզքամակը վեր ճըղեց, էխան տո՛ւս:

Մընաց չուն խըլխուն, ժամխար էկավ, խենքը՝ ըզնախորոթ կիրեր ա՞, չըկիրեր:

Գանցին, տեսան, որ մարթ ըզհիշապ պըրտեր, լցեր ա գի ժամտան մեջ:

Ջուլյար տվին թագավորին, թե մըսաֆիր մարթ մ'էկավ, քըր-նավ, ըզհիշապն պըրտեր ա:

Նախորոթն էլ էթող, գըրնաց թագավորու ախշըկան ու վոզիրի ախշըկան կուշտ:

Մեկ էլ ճամխեցին օր՝ արի, թագավոր ինչ օր կուգես, քյե կը տա:

Թագավորու ախշըկեն ասաց. - Էրթամ ի՞նչ ուզեմ, ի՞նչ չուզեմ:

Ասաց. - Օր կիյաս, բանդչե մ'ուզա, մեկ տան տեղ ու մեր ապրուստ:

Մարթն էլնավ, գըրնաց: Գըրնաց թագավորի մոտ:

Թագավորն ասաց. - Ուզա՞ քու ուզած:

Ասաց. - Իմ ուզած էն ա՛ր բանդըմ տաս, տու՛մ շինես մեջ, իմ ապրուստ:

Թագավորն էլ ասաց. - Հիգյի՛մ, տու՛մ ու ամիս տաս ոսկի փարա տըվե՛ք էնոր, թ՛ ապըրվի:

Մարթն էլ էլնավ, առեց թագավորի ախշիկն ու վոզիրին, գըր-նաց, նստավ թագավորի տըված շենլըզ վեր, էն տեղ ապըրվան:

Մեկ քանի՛մ ժամանակ էն տեղ ապըրվան:

Նախորոթն օրըմ կելի, կերթա հուրիշ գյեղըմ: Կերթա, մըսա-ֆիր կելի:

Էտա գյեղի ռես էտա մարթուն կասա. - Էնա սարի տակ՝ տանշտի մեջ, մեկ շենլըզըմ կա, հախաբուր մ'էլ գի հինե: Էտա հախաբուրն էլ էնպես ա, օր վոն օր էրթա, ուր ծեռ, գըլլիխ, աման լըվա, կելի ոսկի: Մենակ թե էթըցող չըտանցեր:

Էտա նախորոթն էլ կելի, տաննա, կը գա ուր տուն:

Կառի ուր ասլաներ, կերթա խընծ էտա տուն, օր ռես շանց ա տվեր:

Կերթա, էտա տան կը մոտխըսնա, մեկ խալիվորըմ կը գա հանեմ, կասա. - Ա՛յ մարթ, դի՞ր կերթաս:

Կասա. - Էսպես տու մ՛ ա ձի շանց տված, տ'երթամ, խիմ ի՞նչ ա:

Ասաց. - Եփ օր կերթաս, մեկ մարթակեր պառավըմ կա ըն տեղ: Էտա տան մեջն էլ եփ օր կերթաս, էտա պառավ կը գա քիւ

հանեմ, քյե կառի, կերթա: Տըռան հիտևն էլ փորեր ա, խոր ա շի-ներ, պարակ ջըլեր տըրեր ա վըրեն ու հարթ լըցեր ա վըրեն, մարթ չըզյիտեր, թե խոր ա: Տիւ չընցես հանեմ, օր տիւ ընցիս հանեմ, քյե կլորա էտա խորը վեր: Տիւ ասա՝ մամիկ, ես կարիր եմ, չըմ գյիտեր, տիւ ընցիր հանեմ, էրթանք: Եփ օր կընցի հանեմ, տիւ զէնի կլորա խոր վեր:

Տըղեն օր կերթա, պառավ կը գա հանեմ, կասա. - Ա՛յ մըսա-ֆիր, տիւ պարի էկար, շոտուց ձի մըսաֆիր չեր էկե, իմ տուն ճամ-խե տիւս:

Տանի վըր տըռան, կասա. - Ընցի՛, էրթանք տուն:

Կասա. - Մամիկ, ես չըմ գյիտի ճամխըներ, կը մոլըրիմ, տիւ ընցի իմ հանեմ, էրթանք:

Մամիկ կըցկա հանեմ, խասի տըռան մոտ, մամիկ կը դըմըշ-կըլն, կեցկա խոր: Խորի տակն շըշի պես պաներ կեն, կը մտնեն մամիկի քամակ վեր, փորաց կը տան տիւս:

Տըղեն էլ կերթա տան մեջ, կը տեսնա օր հախաբուր գի էտա տեղ:

Կասա. - Տ՛ էրթամ իմ ծեռներ լըվամ, խի օղո՞թ կելի ոսկի, չեղիր:

Ծեռքեր կը լըվա, կելի ոսկի: Մագերն էլ կը լըվա, կելի ոսկի: Կելնի, ուր ասլաներ կառի, կը տաննա, կը գա:

Կը գա, ռեսին մըսաֆիր կելի, օր էնոր շանց էր տվեր:

Ռես կը տեսնա, օր ծեռքեր հըմեն էղեր ոսկի, մագեր էղեր ոսկի: Ռեսն էլ կը պերա, էնոր էրկու պեռ ապրանք կը տա էնոր փեշքյեշ: Էն ուր ասլաներ կը պաննա, կը տա հանեմ, կը պերա ուր տուն: Կը գա էնոր տուն, կը տեսնին, օր ծեռքեր, մագեր ոսկի ա, թագավորին հիմաց կը տան: Թագավոր կը կանչա, կը տանի, թե էտի ի՞նչ ա, ի՞նչ պան ես էրեր, արի ռաստին քըսա էրա:

Էն էլ թագավորին կը պատմա ուր գըլլխու գանլած: Թագա-վորն էլ կելի, կառնի վոզիրներ, կերթան էտա տան տեսութեն:

Կերթա, հախաբուրի մեջ ուր ծամեր կը լըվա, կը տաննա ոսկի, վոզիրներն էլ էնպես, սանդրագանն էլ էնպես:

Թագավոր կը պերա, կարակոլ կը տըռա հանեմ, կէնա բեկլիզ:

Կանաթեք կը տըրպին, թե՛ ֆըլան թագավորի խող էսպես հախաբուրըմ կա:

Հիւրհուշ թագաւորներն էլ կէլնին, կը գան թամաշա էնեն, թե ի՞նչ ա:

Էտ նախորդի աներ թագաւորն էլ կը գա, վոզիրներն էլ կը գան:

Կը գան, էտա թագաւորի տուն մըսաֆիր կէլին:

Կը խառցընեն. - Քիւ խողու մեչ էսպես հախախորըմ կա, սո՞ւթ ա, օղո՞րթ ա:

Թագաւորն էլ կասա. - Խա՛, օղորթ ա:

- Էտի ինչպե՞ս էղավ, ինչպե՞ս չէղավ:

Թագաւորն էլ կասա. - Չի մըսաֆիր մ՛էկավ, ուր գըլխու գալածներ ծի պատմեց, մեր ժամտան հիշապ ըսպանեց, գըլնանց էն հախապի մարթանկեր պառավն էլ ըսպանեց, էն հախախոր կընդավ:

Կասեն. - Դե՛, կանչա՛, թը գա՛, տեսինք:

Եփ օր նախորդին կը կանչեն, կը գա: Նախորդ կը տեսնի՝ էնոր աներ, վոզիր, մեկէլ վոզիր ու թագաւոր էկած էն տեղ:

Կերթա թագաւորի ծեռ ու վոզիրին ու մեկէլ վոզիրին: Թագաւոր, վեզիր գէտի չըն ճանչընա:

Կասեն. - Նստիր, խենք՝ տիւ ի՞նչըխ էսա հախախոր կընդեր ես:

Նախորդն էլ կը պատմա ուր գըլխու գալած:

Թագաւոր կը խառցա. - Տիւ հի՞ւստ ես, ո՞ր տեղացի ես:

Կը պատմա ուրենց պատմութեն, թե՛ իրեք նախորդ ենք, գանցինք թագաւորի քաղաք, էտ տանցանք, իմ էրկու ինգերքեր գյետ տարավ, մեկ ախչիկն էլ ես ըսպանեցի, թե՛ էսպես էղավ, էսպես էղավ:

Թագաւոր կասա. - Մըկա տիւ էն մա՞րթն եք:

Կասա՛ խա:

Կասա. - Քիւ աներ ճանչըցի՞ր, խենք:

Կերթա, պստիկ վոզիրի ծեռ կը պըռնա, կասա. - Էնա յա իմ աներ:

- Դե մնացածներ կանչա, թը գան, տիսնանք:

Կանչեն թագաւորի ախչիկ ու վոզիրին, կառին, կը գան ըն տեղ:

Կը ճանչընան գիրար, կը գան, ուրենց խոր ծեռ կը պագյեն, իրարու վերեն կը խընդանան:

Դիր նախորդին կասա. - Ապա ի՞նչըխ էնենք, տիւ չուր մըկա չը՞ս փըսակներ:

- Չէ՛, կասա, - էնոնք հալա՛ իմ քուրերն են:

Թագաւորն կը պերա, էտոնց կասա. - Տամ քյե:

Կասա. - Չէ՛, անգամ ես էտոնք էրեր եմ իմ քուր:

Վերժ խըլխու կերթան էտա հախապըրի տեսութեն:

Նախորդ հրաման կուգա, ուր աներ, թագաւորն էլ ուրենց ծեռ, մագեր կէնեն ոսկի:

Ու կէլնեն, կառին էրկու ախչիկներ ու նախորդ, կիյան հանաճի աներոչ տուն:

Էրկու ասլան էլ խետ կը տանի:

Պստիկ վոզիրի մեկէլ ախչիկն էլ կը փըսակեն վերեն, ուրախութեն կէնեն, էնոնք կը խասին ուրենց մուրագին, տիւն էլ՝ քիւն:





35. ՓԱՐՈՒ ԱՆՉԻԿ

Կեղի մեկ խեր ու մեր ու մեկ տղղե՛մ:

Գյիշեր տղղեն կը քըննի: Էրագ կը տեսնա, օր մեկ շատ խորոտ ախչիկըն կը գա՛ն էնու էրագ, մատնըկներ կը փոխեն էրագի մեջ:

Խըլխուն կելի, օր ո՛չ ախչիկ, ո՛չ պանն, մատնիկ գո՛ մատ:

Տղղեն էլ կասա. - Եսի էրա՞գ էր, թե՞ օղորթ:

Տղղեն օր օրից մանախից շատ կը գանձի՛ճնա:

Խեր կը խառցընա. - Քյե ի՞նչ ա էլեր, ընչի՞ մանախ կենես:

Տղղեն խոր չասեր, թե ինչ ա: Տղղեն էլ մեկ օր կելնի, կը տա ճամբա՛խ: Շատ կերթա, քիչ կերթա, շատ ու քիչ Աստված գյիտա, մեկ խալիվորըն կը գա՛ն ընու հանե՛ճ: Խառցընա տղղին, թե՛ դի՞ր կերթաս:

Տղղեն էլ կասա. - Եսպես էրագըն տեսա՝ մեկ գեղեցիկ ախչիկ մ՛էկավ ձի էրագ, մատնիկներ փոխեցինք, խըլխուն էլա՛ ախչիկ չըկա:

Խալիվորն էլ կասա. - Գյընա՛, իմ տուն գո՛ վեր ճամխին, իմ ախչըկեն ասա՝ մատնիկըն կա, թը տա քյե: Էն մատնիկն էլ օր տու՛ զըվըռցուցես, իրեքյ անքա՛ր կը գան քու հանե՛ճ, էտա անքա՛րներուց ինչ ուզես, քյե կը պերեն:

Տղղեն էլ գյընաց, տեսավ օր տուն գո՛ վըր ճամխին, էտա տան էլ տու՛ռ չըկա, որ մեկ տղղեն կան կը գա՛ն, տու՛ռ չէրևա:

Տղղեն էլ կը նստի պատի հանե՛ճ, կը լա՛, մանախ կենա, թե՛ ինչպե՛ս էնեն:

Ախչիկն էլ լալի՛ւ ծեն կառի տան մեջ:

Ախչիկ փանջարըն վեր կելի, կիրիշկա, կասա. - Տղղա՛, ընչի՞ կը լա՛ս:

Կասա. - Քու խեր կասեր՝ գյընա՛, իմ ախչիկ մատնիկըն թը տա քյե:

- Լա՛վ, տու՛ իմ խեր կը ճանչընա՞ս, իմ խեր ո՞րն ա:

Կասա. - Քու խեր մեկ ճերմակ, սիվտակ մուրուս խալիվոր մ՛ ա:

Ախչիկն էլ ըզմատնիկ էթալ փանջարից, տղղեն առավ:

Ասաց. - Եփ օր քու գործեր տեսնիս, ա՛ռ իմ մատնիկ, արե՛:

Տղղեն էլ առավ ըզմատնիկ, գյընաց: Քիչ տընեն հեռըցավ, խալիվորու ասած ընգա՛վ միտ:

Ասաց. - Խենքյ էտա մատնիկ տը զըվըռցուցիմ, իրեքյ անքա՛ր կը գա՞ն:

Տղղեն ըզմատնիկ զըվըռացուց, իրեքյ անքա՛ր էլան հանե՛ճ:

Տղղին ասին. - Ի՞նչ կուզես:

Ասաց. - Ես կուզեմ՝ էտա մատնըկի տեր պերեքյ ձի:

Էն մեկ անքա՛ր ասաց. - Էտա մատնըկի տեր փարիքյներու թագա՛վորու ախչիկն ա, գո՛ մըջ յոթ ծովու կըծղին: Մենքյ մեկ թոզ, տուման ու ծուխ կենենք, օր փարիքյ մե չըտեսնան, էնա անքա՛րն էլ թը քյե շալկա, առինք, յանքյ ախչըկե մոտ, տու՛ ա՛ռ գախչիկ, արի՛:

Էնոնքյ էլ մեկ թոզ, տուման, ծուխ էրին, ըզտղղեն շալկեցին, տարան ախչկե մոտ, գախչիկ առավ, էկավ: Ախչիկն էլ փարիքյներու ուրիշ թագա՛վորի լաճու խետ նշանուկ ա:

Տղղեն առավ գախչիկ, էկավ: Էկավ էն խալիվոր մարթու տուն, մատնիկ տըվին ախչկան, անքա՛րներն էլ աչիչ հանճըվեն կուրիսան, տղղեն էլ առավ գախչիկ, էպեր, փըսակեց վերեն, նստավ ուր տուն: Յոթ օր, յոթ գյիշեր խարսնիս էրին, խաղտուն էրին, քյե՛Ք էրին:

Մենքյ տանանքյ վըր փարիքյներու թագա՛վորի լաճուն, օր նշանվեր էր ախչըկե խետ:

Էտա թագա՛վորի լաճն օր կը հիմանա, թե ուր նշանած կուրսըվեր, ջիյաբ կուտա ախչըկե խոր, թե՛ իմ նշանած վի՞ր տվիր, ի՞նչըխ էրիր՝ չէրևար:

Խերն էր, չըգյիտեր՝ ինչըխ ա էղեր:

Կասա. - Ինքյ թողեր ա, գանցեր, չըն գյիտեր՝ ի՞նչըխ ա էղեր:

Տըղի խերն էլավ, պատրաստութեն տեսավ, օր էրթա վըր ախշըկա խոր կռիվ:

Էպեր, էտոր ասքըրի մեչ կռվողներ ջոկեց, օր կաննն ծանտըր գորգեր վիրուցա, աղեկ կռիվ էնա: Չորս-խինգ կտրիճ մարթ առավ, էկավ:

Քանսուն կըղրանոց գորգըմ շինեց մեկին, մեկելին եռեսունական կըղրանոց, մեկին էլ վաթսուն կըղրանոց:

Ջոյաթ տվին փարու խոր, թը կը գանքյ կռիվ: Էն էլ ուր փայլևաներ ճոկեց, էն էլ քանսուն-հիսուն կըղրանոց գորգ էտու շինել:

Գանցին կռվի տաշտ:

Էն գանխ, օր կը գանեն հիրարու, գորգերու օղեր կը տիպի հիրար, կրակ մոտեն կը թալա:

Ծըկներ ծովուց գըլխներ վիրուցին, թամաշա էրին, խավքյեր էրկնուց ժողվան, թամաշա էրին, գյետին պատռավ, հուտեր, խուտրունքյներ էլան թամաշա էնելու:

Մեկ տարի հիրարու գանկին:

Էտա տըղի խեր գախշըկե խեր հանթեց:

Ասավ. - Ի՞նչ կուգես, քու խարս ես չըմ գյիտի՝ դիր ա գանցեր:

Տանցավ տուն: Տըղի խետ ճարըմ չէղավ: Տըղեն առավ մեկ փայլևանըմ, գըլնաց աշխար ֆըռալ:

Շատ գըլնաց, քիչ գըլնաց, շատ ու քիչ Աստված գյիտա: Գըլնաց, մեկ գյետի՛մ ռաստ էկավ:

Տեսավ, օր մեկ տըլի միջուց պան մ'էլավ գիմշու տեսակ՝ հրեքյ կոտըշեն: Հըմեն կոտըշեն գանգակըմ կախուկ մոտեն:

Կըղանչեց վըր թագավորու տըղին, ասաց. - Դի՞ր կերթաս, վըր ծի դի՞ր կընցիս, կը յաս:

Ասաց. - Մենքյ կը յանքյ խըտ մեր ճամխին, քու ի՞նչ գործն ա:

Ասաց. - Էկեքյ, ծի գիւլաշըմ տվեքյ: Թը ծե տըղի գյետին, ծե կը մորթիմ, թը տու ծի տըլիքյ, ի՞նչ կուգեքյ, էրեքյ:

Թագավորի փայլևան կը խասի, էտ ջաննավարին կը պըռնա, կը տըլնա գյետին:

Թագավորի տըղեն կասա. - Թուր պե՛, վիզ կտրենքյ:

Էն ջաննավար էաց. - Չի մը՛ մոռթեք, ծի տարեքյ խընտ ծե, ի՞նչ նեղութեն էղի, իմ վերեն:

Կէլենն, կառեն ուրենց խետ, կերթան:

Կասին. - Քու անուն ի՞նչ ա:

Կասա. - Իմ անուն Ջանգանհոռ ա:

Կերթան, մեկ քանդի՛մ ռաստ կը գան:

Էտա քանդիքին էլ բանան ա չորս պիլի՛ր, չըն կաննա մտին ներս: Կանան բանանի հանեճ:

Մեկ մարթըմ կանչեց, ասաց. - Ի՞նչ մարթ եքյ, ընչի՞ եքյ կաներ էտա տեղ, ե՛տ տանցեքյ:

Փայլևան ասաց. - Յան արի, էտա տուռ պանց, յան էտա բանան կը քակենքյ, կը գանքյ ներս:

Ասաց. - Էտա տեղ գորգըմ կա, թե վիրուցիքյ, թալեցիքյ բանոմ ներս, տուռ պանան, գանքյ ներս, թե չըվիրուցիքյ, գան, ծեր վըգեր ճընճըղկու պես քաշեն:

Էտ թագավորի փայլևան ասաց էտ տըլու միջու ջաննավորին. - Ջանգանհոռ, տու ասիր՝ ի՞նչ նեղութեն կա՝ իմ վերեն, դե էտա գորգ վիրու, թալ ներս:

Ջանգանհոռն էլ կոտոշ կը տա, էտա գորգ կը վերուցա, կը թալա բանան վեր, քանդիքի մեչ:

Մարթն էլ մեկ տուռըմ կը պաննա, կերթան ներս: Կերթան, օր կը տեսին ըն բանդնի միջու մարթ, մարթ մ'ասե, մեկ ուղտ մ'ասա: Տեսենն օր մեկ ճանդե քարըմ կախե քանկեն, գի հըմեն գանխ էնոր շալակ:

Խառցընա. - Տու ի՞նչ մարթ եքյ:

Կասեն. - Փարիքյներու թագավորու լաճն ա, ես էլ էնու փայլևան եմ:

Էնոնքյ կասեն. - Քու անուն ի՞նչ ա:

Կասա. - Իմ անուն Բարգըրան ա:

Կասա. - Դի՞ր կերթաքյ:

Կասեն. - Կերթանքյ խընտ մեր տանտին:

- Չի՛ էլ տարեքյ խընտ ծե:

Կէլինն, խընտրաց կերթան:

Կերթան, կը տեսնան, օր ինգան մեկ սըվտակ էրկիր՝ խող ու քար սըվտակ, ճիւր սըվտակ, սարեր սըվտակ:

Շատ գացին, քիչ գացին, տեսան մեկ տաշտի՛մ մեչ շենլըկ մ'երևաց: Էն շենլըկն էլ սըվտակ էր:

Գացին, նստան շենլըկի տուռ, տեսան օր մեկ ախչիկըմ փանջարեն վեր գլըլիխն էխան տուս, ուր ջըլերն էլ սըվտակ:

Ախչիկ ասաց. - Էլե՛ք, գացե՛ք, քանի Սըվտակ դև չէկեր ա, ծե ուտա:

Ասին. - Չէ՛, մենք չընք էրթա, տու արե՛, տուռ պա՛ց, մենք գանք ներս, թը գա՛, մե ուտա:

Ախչիկ տուռ էպաց, տեսավ չորս մարթ գո՛ էտա տեղ: Տեսավ, օր մարթըմ ճանցի քար կախե քանկեն:

Ասաց. - Էտի ի՞նչ ա՛ կախեր ես քու քանկեն:

Ասավ. - Քու ի՞նչ գործն ա:

- Ապա քու անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անուն Բարգըրան ա:

Ասաց. - Ապա էնոր անուն ի՞նչ ա, ինչ իրեք կոտըշեն գանգըկներ կախեր մոտեն:

Ասաց. - Էնու անուն Ջանգահոռ ա:

Ասաց. - Էկե՛ք, էկե՛ք էրթանք տուն, խաց կերե՛ք ու գացե՛ք:

Գացին, իտոր խացն էլ սըվտակ, էտոր կըտելներն էլ սըվտակ:

Խաց կերան:

Խառըրնեցին. - Սըվտակ դև դո՞ր ա գացեր:

Ասաց. - Գացեր վըր Սև դևուն կռիվ:

- Ընչի՞ վերեն կը կռվին:

Ասավ. - Վըր մեկ քաղթի՛մ կը կռվին:

- Կռվուց չըտաննա՞ր, գա՛ տուն:

- Գիշեր կը գա՛ տուն, ցերեկ կերթա:

- Օր մենք մընանք ըստա, մե էլ չըտանե՞ր խետ ուր, էնոր օգնենք:

Ախչիկ ասաց. - Տու էլեք, գացեք էնա բաղչի մեչ նստեք, դև օր կը գա, ես կասեմ: Թե հընտուներ, ես ծե կը կանչեմ, թե չընտուներ, չըխ ծեր խոտ կառնի, կը գա՛ խըտ ծե, կը կռվեք:

Էնոնքն էլ էլան, գացին բաղչեն, նստան:

Հիրիկուն դև էկավ, ասաց. - Կնիկ, փարու խոտ կը գա, վո՞ն ա էկեր ըստա:

Ասավ, թե. - Չորս մարթ էկան, տը գյեն քյե օգյնության, չըգըխըրցան գյեն, գյիտին, թե տու չըր հընտուներ:

Դևն էլ ասաց. - Էնոնք չէկած ծի օգյնելու, էկած քյե հապով, տու սուք կասես:

Էլանվ, կընգան շատ չարչըրեց դև:

Էլանվ, էտու խընչ խոտին, ինգավ խետի խետ գընաց:

Գընաց, տեսավ չորս մարթ նստած են:

Ասավ. - Տու ընչի՞ եք էկեր ըստա:

Ասին. - Մենք խասկըցեր ենք՝ տու Սև դևու խետ կռիվ կենես, էկեր ենք քյե օգյնություն:

Ասավ. - Շա՛տ լավ, օր էմա՛լ ա, էկեք էրթանք տուն, չում առավոտ կերթանք:

Հէլան, գացին տուն, խաց կերան, պառկան քընան չում խըլխուն:

Խառըրնեց, ասաց. - Ծեր անուներ ի՞նչ ա, ծի ասեք:

Ըն մեկ ասաց. - Իմ անուն Ջանգահոռ ա:

Ըն մեկն էլ ասաց՝ իմ անուն Բարգըրան ա: Ըն մեկն էլ ասաց՝ ես փարիքյներու թագավորի փայլևան եմ, ըն մեկն ասաց՝ ես փարիքյներու թագավորի լաճն եմ:

Դևն էլ տեսավ, օր էտոնք կտրիճ մարթ են, էլան, խըլխուն խընդըրաց գացին:

Գացին կըռվու տաշտ, տեսան, օր Սև դև էկավ: Ընտեղ Սև դև իշկաց, օր Սըվտակ դև չորս ընգեր էլ ա պերեր:

Սև դև ասաց. - Էտա մարթեր տու հո՞ւր ես պերեր, ես մենակ եմ, տու էլ մենակ թը գյեր:

Ասաց. - Էնոնք էկան ծի օգյնություն:

Դև ասաց. - Ես չըմ հընտուներ հըմեն, օր մեկտեղ գա՛ք, մեկ-մեկ էկեք, կռվենք:

Սըվտակ դև տանցավ վըր ուր ընգերներուն, ասաց. - Ծե հընարըմ կա՞, մեկ-մեկ խետ կռվեք:

Ընգերներ ասին. - Խա՛, տու քու տեղ հանգիստ նստիս:

Թագավորի լաճ ասաց. - Բարգըրան, պա՛մ կանա՞ք էներ խետ, թե իմ փայլևան խանեն:

Բարգըրան ասաց. - Խա՛, էսի իմ վերեն:

Էլան, էն ու Սև դև բաշլեցին կռիվ:

Բարզըրան ուր քար քամկեն առեց տակ, պըռնեց ուր ծեռ, էրաց մարտակ, գըռնաց թըխ Սև դև:

Սև դևն էլ քանի գորգ գանի, Բարզըրան ուր քար կը տա հանեճ, Բարզըրան էլ ուր քանսուն կըղրանոց գորգ կը գանի դևուն, դևուն պան՝ չէղիր:

Չուճ կեսօր կռվան, ոչ էն էնոր հանթեց, ոչ էն էնոր:

Կեսօրին շըմոեցին, նստան խաց ուտելու:

Կեսօրին Սըվտակ դև ասաց Բարզըրանին:

Ասաց. - Տիւ կը գանես վըր էնու ջանտըկին, էնու ջանտակ ինչըխ թաղիս էնու բըռթերուց, տիւ գար մըչ էնու աչքերուն, օր էնու հաղթես:

Կեսօրե ետ էլան գինա կռիվ: Դև քանի էգար, էն քար էտու հանեճ, էն էլ քանսուն կըղրանոց գորգ կը գանի մըչ դևու աչքերուն: Չուր հիրիկուն կռվան: Բարզըրան Սև դևու քյինթ ու պերան կոտորտեց, աչքեր, ատըմներ արընեց, հանթեց ըզՍև դև:

Մեկ էլ ընգերներուն կանչեց, ասաց. - Էկե՛ք, էսա ջանտակ տարեք, թակեք մեկ տեղըմ:

Ընգերներն էկան, ջանտակ ամեկ ոտըմ պըռնեցին, տարան թակեցին մեկ խորըմ:

Սըվտակ դևն էլ ասաց. - Դե՛, տանցե՛ք, յանք, մեր տուն մըսաֆըր էղեք հեսօր:

Ընգերներ ասին. - Չէ՛, մե դաստուր տու, մենք յանք խըտ մեր ճամխին:

Ասաց. - Չէ՛, տի՛յանք իմ տուն, ծե պատիվ տը պըռնեմ, ծե նըվեր տը տամ:

Էլան, էկան դևու տուն: Կերան, խմեցին: Չուր լուս քըռնան:

Խըլխուն Սըվտակ դև ասաց. - Էսա քանքյի վըրեն ես ու Սև դև կը կռվենք էսա էրկու տարի: Գի տիւք էկաք, հանթիցիք, մեկտ մնացեք, ծե տընեմ վոլի վըր էսա քանքյին:

Թագավորի լաճ ասաց. - Բարզըրան, քյե կը խասի էսա քանքյի:

Բարզըրան տըրին էսա քանքյի վերեն վոլի:

Բարզըրան թագավորի լաճուն ասաց. - Շախգանդան, օր տիւ կերթաք, առ իմ ջըղարի կութին, տար թիւ խետ, օր նեղի ընգար, հըլին ճիւր էրա, տիր թիւ գըլխու վիրև, կը գան, քյե կը խասին:

Էն տեղեն էլան, գանցին: Գանցին, ընգան Կարմիր դևու էրկիր, օր էտոր խող ու քար կարմիր, սարեր կարմիր, ծառեր, ճըրեր կարմիր:

Տեսան շենըկըմ գի մըչ տանտին, շենըկն էլ կարմիր: Գանցին, շենըկի տիւռ նստան:

Տեսան, օր մեկ ախչիկ փանջարից գըլըխ էպեր տիւս՝ ջըլեր կարմիր:

Ասաց. - Տիւ վո՞ն եք, նստեր եք էսա տեղ:

Ասաց. - Մենք ճամխորթ ենք, տիւռ պանց, գանք տուն:

Ասաց. - Էլե՛ք, գանցե՛ք, քանի Կարմիր դև չէկե, ծե ուտա, տիւք իո՞ւր տը գանք տուն:

Ասաց. - Տիւ տիւռ պանց, մենք գանք, թը գան, մե ուտա:

Ասաց. - Ես տիւռ չըմ պանան:

Թագավորի տըղեն ասաց. - Չանգանհո՞ռ, ապա էսա կոտըներ իո՞ւր ես առե խըն քյե, էլի՛, պանց տիւռ:

Չանգանհոռ էլավ, մեկ կոտըչով էգար, տըռան կըտորներ թըռան տան վիրին տեղ, մըտան հինե:

Ախչիկն էլ ի՞նչ էնա, էլավ, էտոնց խաց էպեր, էտոր խացն էլ կարմիր, կըտելներն էլ կարմիր: Խաց կերան, պըռծան:

Մնաց չուր հիրիկուն: Դև էկավ: Տեսան, օր կրակ մոտեն կը թակ: Էկավ վըր տըռան:

Թագավորի տըղեն ասավ. - Չանգանհո՞ռ, էլի՛ր, քիւ վերեն ա, ախըր տիւ տիւռ կոտրեր ես:

Չանգանհոռ ու Կարմիր դև գարկին իրարու: Չանգանհոռ օր ուր կոտոչ կը գարկա, դևու փոր կը ճղա, կէլի էնոր թևեր, արուն կէլնի, արընի մեչ կը կուրուսին, կրակ Կարմիր դևուց կը թակ, պից ու ծուխ տվեր վերենքյներ:

Թագավորի տըղեն ասաց փայլևնին. - Էլի՛, քիւ վաթսուն կըղրանոց գորգն առ, էլի՛, խասի՛ մեր ընգերոչ օգյնություն:

Թագավորի փայլևան ուր վաթսուն կըղրանոց գորգն առավ, էլավ, օր կը գանի, օղեր կը տեպի իրար, կրակ մոտեն կը թակ:

Չէտա դև հանթեցին:

Թագավորի տըղեն էլ ասաց. - Չանգանհո՞ռ, քյե տը տըռեն էսա տան վերեն:

Զանգահոռն էլ ասաց. - Էնա զանգակ ա՛ռ, տա՛ր խետ, եփ օր նեղի ընգիս, զանգակ շարժես, ես ծեն կառիմ, կը գամ, քյե կը խասիմ:

Էն էլ զանգակ կառի ու թագավորի լաճու խետ կելին, կերթան: Կերթան, կընգին ասլանի երկիր: Կը տեսնին, օր բաղըմ շի-նուկ ա, շենլըկ մ' էլ գո՛ հինե:

Կերթան, կը տեսին, օր ախչիկըմ գո՛ շենլըկ վեր:

Կը խառցընեն. - Տո՛ւ ի՞նչ ախչիկ ես ըստա՛:

Կասա. - Ես հիսան եմ, իմ խեր թուջար եր, ասլան ծիկ առե,

էկեր ըստա՛:

- Տո՛ւ ո՞ր մեկ երկրեն ես:

Կասա. - Ես Բարժեռու երկրեն եմ:

Կը խառցընեն՝ փարիքյներու թագավորի ախչիկ չէկե՞ր ծեր երկիր, հիսան եր էկած տարած:

Կասա. - Մեր վաճառականի տղղեն խերու մեկ ախչիկ էպեր:

- Ապա տո՛ւ էնոր անուն, պան չիմացա՞ր՝ ի՞նչ էր:

Ասավ. - Էն ախչըկա անուն Յորի-Մորի էր:

Թագավորի տղղեն էլ կիմանա, թե էնու նշանածն էր:

Էն տեղ ախչըկեց կը խառցընա, թե. - Գյիտե՞ս՝ ո՞ր երկիրն ա, ո՞ր գյեղն ա:

Կասա. - Խա՛, մեր երկիրն ա, ես գյիտեմ:

Մեկ էլ կը տեսնան՝ ասլան ըն կողմեն կը գա՛:

Թագավորի փայլևան կելնի հանեճ, բաշլեն կռիվ:

Իրեք օր, իրեք գյիշեր հիրարու կը զանեն:

Ասլան կը հաղթըվի: Կառնեն զախչիկ ու կերթան: Շատ կերթան, քիչ կերթան, շատ քիչ Աստված գյիտա, կիյան ախչըկու երկիր:

Ախչըկե երկիր մարթեր կը տեսնան, օր երկու փարի են, դե են, ջանավար են, ի՞նչ են, առած ախչիկըմ, կը գան:

Ջույաբ կը տան քաղքյին, աքար կըլնի հանեճ: Կը բաշլեն թոփերով զանել, չարա չէղիր:

Փարիքյներու թագավորի տղղեն զանգակ կը տա հիրար: Զանգակ տալու պես Զանգահոռ կը գա, խասի: Կռվի մինչև հիրիկվան: Յիրիկուն էտա կութին հիլին ճուր կը լըցա, կը տընա գըլխու վիրև:

Բարգըրան կը գա, կը խասի: Խըլխուն կելին, կըսկըսին կռիվ:

Աքըրըրի կումանտար կը տեսի, օր մեկ կոտըշներով, տըլոտ գագանըմ գո՛ ընտեղ կռիվ ա: Մեկ էլ կը տեսնա, օր մեկ հաջլաջոթ մարթըմ ճանղի քարըմ շալկե:

Աքըրըրին կասա. - Մենք չընք կանա խընտ ինոնց կռվել: Մըք կռվի, թը գան, խե ի՞նչ կասեն:

Էնոնքյն էլ կերթան մըջ քաղքյին:

Կումանտար կերթա հանճըվներ, կասա կումանտարին. - Տո՛ւ ընչի՞ մեր խետ կռիվ կենքյ:

Կասա. - Մենք չընք գյիտի՝ տո՛ւ ի՞նչ մարթ եք, էտոր խամար մենք էլ կը կռվինքյ:

Կասա. - Էլ կռիվ կուզե՞ք, թե՞ չըք ուզեր:

Կասա. - Չէ՛, էլ կռիվ չընք ուզեր:

Կումանտար կասա. - Տո՛ւ ընչի՞ք ըստեղ էկեր:

Կասա. - Իմ նշանած ախչիկ հիսաներ առած են, էկած:

Կումանտար կասա. - Մեր քաղաք չի, հուրուչ քաղաք մ' ա: Թագավորի լաճ ախչըկեն կը խառցընա, թե՛ ո՞ր մեկ քաղաքյն ա:

Ախչիկ կասա. - Էսա քաղաք չի, հուրուչ քաղաք ա:

Կումանտարն էլ զէտոնք կը տանի, պատիվ կը պըռնա էտոնց, կերակուլ կը տա մինչև խըլխուն: Խըլխուն կումանտար կերթա, էտոնց նկարներ կը տա քաշել:

Թեկըռաֆ կը տա թագավորին. «Էսա շենքով չորս մարթ ա էկած»:

Էնոնքյն էլ խըլխուն կելնին, ուրենց ճամբախ կը պըռնեն, կերթան:

Թագավորն էլ թեկըռաֆին պատասխան կը գըրա, թե՛ էտա մարթերուն ամսական տուր, ճամխա գա իմ մոտ:

Կումանտար կելի, երկու-իրեք ծիավոր կը ճամխա հետևներ, ամա մարթ չըկա: Կը տաննան, կը գան:

Կումանտար թեկըռաֆ կը տա Պանղու քաղքյի փաշին. «Փաշա՛, էսպես չորս մարթ կը գան, մեկ ծակ ճանղի քարըմ կապեր քանակ, մեկ էլ իրեք կոտըշեն՝ զանգըկներ գո՛ կոտըշներուց: Երկուսն էլ փարի՞ են, չըմ գյիտե ի՞նչ են»:

Վոլիմ էլ կէլնի, նոբանդար կը տընա քանդոյի կըշտըներ, խենք Ե՞փ տը գան:

Նոբանդարներ կը տեսին, օր էտ ասած մարթեր էկան:

Վոլիմ էլ խանար կէնա կուճանտարին. - Քու ասած մարթեր էկան իմ քանդաք:

Կուճանտարն էլ խանար կէնա, կասա. - Թագավորն ուզեր ա էտա մարթեր, ասա տես՝ չը՞ն էրթա մը քագավոր:

Վոլիմ էտա մարթեր կը տանի ուր կոճախ՝ քյեֆ, ուրախութեն, կերակուլ:

Կը խառցընա մոտքերուց. - Մըսաֆըրներ, ի՞նչ կէնեք, հո՞ւստ կը գաք:

Կասեն. - Իմ նշանած փախցուցած, պերած, ըստն ենք սալախ առեր:

Վոլիմ կասա. - Շատ լավ, պերած են գո ըստեղ թուջրի տուն, թուջրի տըղեն պերեր ա:

Էտա քագավորի տըղեն ընգերներ կը թոնի վոլու մոտ, կէլնի, կերթա ուր նշանածի տուն:

Կերթա տուն, մարթ չէղեր տուն, մենակ ուր նշանած տուն վեր կէղի:

Կը նստին իրարու խետ գրոց:

Կասա. - Դա՛յ, անաստված, տու ընչի՞ էկար:

Կասա. - Ես ի՞նչ էնեմ, իրեք անար էկան, ձի առան, էկան:

Ասաց. - Էսա իրեք տարի ա, օր ես քու հիտն ընգեր եմ, երկու տարի խընչ քու խոր կռիվ եմ էրեր, տարի մ՝ էլ ճանքախ կը գան: Տը գա՞ս, քյե առիմ, էրթանք, չըգա՞ս:

Կասա. - Չի լաճ ու ախչիկ մ՝ էլ էլած հիսնից, հիսանի խոտ ընգեր վըր ձի, թալեմ գա՛մ, իմ ճըժեր՝ իմ քիգարն ա, չըմ կարնա թալեմ, պերեմ խե ձիկ՝ ամոթ ա: Ես գան ընտեղ, հըմեն իմ հիրես տը թըքյեն, տ՛ասեն՝ տու հիսան առար:

- Ապա ի՞նչ էնենք, ի՞նչ չէնենք:

Կասա. - Օր տու ձի լըսես, էնոր քուրըմ կա, մարթ էնու հիրես չըտեսեր, խընձ ձի դըհա շատ խորոտ ա, տու տանես, գյիչերն էլ ճրաք չէնես, էնուր լուս կը տա պատեր: Տու օր ձի լսես, զէնի առնիս, էյաս, էլ ձենե եօգուտ չի գար:

Տըղեն կը համոզվի:

Կասա. - Դի՞ր ա, ձի շանց տուր:

Կասա. - Վոլա՛, գո էնա մագալ, տուռ էլ փակուկ ա, պալնիս գո խընչ էնու ախար:

- Ես փարի եմ, ես կանամ տուռ պանամ, զէնի թամաշա էնեմ, էն ձի չըխի էլ:

Թագավորի տըղեն կերթա, կը տեսնա զախչիկ: Ախչիկ նըստեր, էնու մատնըկներու խետ կը խաղա, լուս տըղե վերեն, շանալ մոտեն կերթա:

Տըղեն մեկ սրտով չէ, տաս սըրտով վերեն կը գարկվի:

Տըղեն կը տանա, կերթա ուր նշանածի մոտ:

Կասա. - Իմ սիրտ կպավ, ամա ի՞նչ էնենք, գոռո՞վ տը տանենք, թե՞ խաթրով:

Ախչիկ կասա. - Ընչի՞ գոռով տանես, խաթրով էրա: Տու էլի՛, գյընա վոլու դիվան, քու ընգերքերու մոտ, ես հիրիկուն իմ իրկան տ՛ասեն:

Տըղեն էլավ, գյընաց:

Դիրիկուն էրիկ էկավ, ասավ. - Կնի՛կ, անջըբենլի պա մ՛եկած վոլու մոտ:

- Ի՞նչ են, ի՞նչ պան են:

Ասավ. - Էրկու փարի են, չըգյիտեմ ի՞նչ են, մեկէլ ճոչ քարըմ կապեր քանակ, ընոր քանտակ խընչ ուղտըմ կա: Մեկէլն էլ տըլոտ, գոմչու տեսակ ա, իրեք կոտըչեն, գանգակներ կոտըչից կախ:

Կնիկ ասաց. - Ես գյիտեմ՝ վոն են:

Ասաց. - Վո՞ն են, օր տու գյիտես:

Ասաց. - Մեկ իմ նշանած փարու թագավորու լաճն ա, մեկն էլ էնու փայլան ա: Մեկէլ երկուս էլ ճամխըներն ա կընդանձ խետ:

Ասաց. - Տու ի՞նչ գյիտես, տու տունը վեր, ընոնց ի՞նչ տեսար, ի՞նչ գյիտար՝ վո՞վ են:

Ասաց. - Մենք փարի ենք, ես կիմանամ:

Ասաց. - Օր տու կիմանաս՝ ինոնք հո՞ւր ա էկած:

Ասաց. - Էնոնք էկած ան, ձի տը փախցուցեն, ի՞նչ տ՛ենես: Կանա՞ս խետքեր պա մ՛ընես, ձեր թագավոր կանա՞ խետքեր կռվի:

- Չէ՛, ո՞ր կը գըխընա էնոնց խետ կռիվ էնա, ո՞ր տեսեր ա, հախու կտրեր ա:

- Եփօր ձի տանի, տարտ չըս էնե՞:

- Խա՛, ես մանուկից կը մեռիմ:

- Ապա ի՞նչ տ' էնես խընտ ծի:

Կասա. - Առիմ քյե, էրթամ հուրիւշ քաղաք:

Կասա. - Դիր տանես, կը գա՛:

- Ապա ի՞նչ էնենք, տիւ ճամբախըմ կընդիր:

Կասա. - Ծամբախ էն ա, թե քիւ քիւրոչ խավնավ, տիւ տը տա՛ս:

Կասա. - Թե տիւ էնպես պա՛ մ' էնես, խարիր քիւր կուրբան կէնեմ էնոր:

Ասաց. - Օր էնպես ա, գընա՛, ա՛ռ, արի՛ մեր տուն մըսաֆըր:

- էրթամ ի՞նչ ասեմ:

- Գընա՛ ասա՛ փարիքներու թագաւորի՛ լաճ, հրամեցեր, քիւ մարթերով էրթանք մեր տուն:

Տըղեն էլ կէրթա, կը տիսնա, օր նստած ան վոլու դիվան վեր:

Կէրթա, պարե կը տա, կասա. - Հրամեցե՛ք, էրթանք մեր տուն մըսաֆըր:

Էնոնքն էլ կէլին, կը գան:

Կառի, կը գա՛ տուն, կը նստին: Խաց կուտեն, կը սպասեն չուն կեսավուր:

Փայլեան կասա թիւջրի լաճուն. - Մենք էկեր ենք, քիւ քիւր տ'ուզենք մըր թագաւորու լաճուն, տը տա՛ս, թե՞ չէ:

Տըղեն էլ կասա. - Ծե պարի, ես խարիր քիւր կուրբան կէնեմ ծեր թագաւորի պերան: Իմ քիւր ու տըղեն հիրարու խետ տեսնըվեն, թե իրարու խավնան, ես կը տամ:

Փայլեան կասա. - Թե ախչիկ խավնավ, ուզեց, մենք կը տանենք, թե չըխավնավ, մընք չընք տաներ:

Տըղեն կասա. - Իմ քիւր կէրթա մեր տան պակի հախալուր ճըրիւ, թագաւորի լաճ թ' էրթա, տեսնի, խավնին իրարու:

Ախչիկ կէլնի, կէրթա ճըրիւ, տըղեն էլ կէրթա հիտե, մեկ մեկու կը տեսին, զիրար կը սիրին, վեր մեկմըկու աղըլներ կէրթա:

Կը մնա կուշանան, թագաւորի փայլեան ու փարի ախչիկ կէլին, կէրթան:

Տեսան՝ երկուս ինգած իրարու վըզով, աղըլներ գացե, ընգած էն տեղ: Ծուր կը ցանեն հիրեսն վեր, կը խանեն վեր:

Փարու ախչիկ կասա փայլեանին. - Քիւ թագաւորի լաճ ի՞նչ էր ըրած իմ տալիչ գըլիխ:

Փայլեան կասա. - Ապա քիւ տալվ ի՞նչ էր ըրած իմ թագաւորի լաճու գըլիխ:

Ընտեղ կըլնեն, իրարու մատնիկ կը փոխեն, ախչիկ կը գա, ուր մագալ կը նստի, տըղեն կը գա՛ մոտ ուր ընգերքեր:

Թիւջրի տըղեն կը խասկընա, օր իրարու խավնած, ուր քիւր կը տա փարու լաճուն:

Վոլին էլ կը կանչա, կը տանի:

Կասա. - Շախագա՛ն, մեր թագաւոր ծե ուզեր ա:

Տըղեն կասա. - Ձիւռ՞վ մե կը տանեք, թե՞ խաթրով:

Կասա. - Չէ՛, խաթրով:

Կասա. - Օր խաթրով ա, մենք էրթանք ծեր թագաւորի քաղաքը վեր կընցինք, կէրթանք:

Էտա ախչիկն էլ, օր ասլանից առած են, տըվին վոլուն, ասին. - Ծամխա՛, թ'էրթա էնու խոր մոտ:

Վոլին զախչիկ կը ճամխա ուր խոր մոտ:

Վոլին էլ կէլի, էտոնց փայթոն կը տա, ծի կը տա, կը ճամխա մըտ թագաւոր:

Կէրթան թագաւորի քաղաք: Տեսնան, օր վոլու ճամխած մարթեր էկան:

Թագաւոր կը ճամխա հանճաներ, կը պերա էնոր դիվան: Կը տեսին, օր երկու փարի են, մեկ էլ հիսան ախչիկ: Մեկ էլ ճիչ քարըմ շալկեր, մեկ էլ իրեք կոտըշեն, տըլոտ, մըլոտ, գիւճիւ տեսակ պան ա:

Կը նստին թագաւորի դիվան: Թագաւոր էնոնց պատիվ կը պըռնա:

Թագաւոր էտոնց կը խառցընա. - Տիւ ո՞ր տեղացի եք, ի՞նչ մարթ եք:

Կասեն. - Մեկ փարու թագաւորի լաճն ա, մեկ էլ էնու փայլեան ա:

- Ապա էնա երկու հաջաջութերն ի՞նչ են:

Կասա. - Էն երկուսն էլ ճամբախն են կընդեր, պերեր:

Կասա. - Էնա քար ընչի՞ ես կապե քիւ քամակ:

Կասա. - Էն քար իմ մարտալն ա, կռիվ օր էնեմ, հազըր կը պըռնեմ ծեռս:

- Քիւ անուն ի՞նչ ա:
- Իմ անուն՝ Բարգըրան:
- Վոլւ՛, քիւ անուն հարմար ա, քիւ պեռ ծանտորր ա:
- Ապա էնա կոտորչներովի անուն ի՞նչ ա:
- Իմ անուն էլ Ջանգա՛հոռ ա:
- Վոլւ՛, քիւ անուն էլ հարմար ա՝ գանգրկներ կախած կոտորչերուց: Էտա գանգրկներ ընչի՞ կախած ես:

Կասա. - Կախեր եմ, օր էրթամ կռիվ էնեմ, էնոր ծեն լսեն, օր չասեն տիւ գանդտիկ էկար կռիվ:

Թագա՛վոր կասա. - Ապա էն ախչի՞կ, ի՞նչ ախչիկ ա ծեր խետ:

Կասա. - Էն էլ քիւջրի մ'ախչիկ ա, առեր եմ, իկեր եմ ձիկ:

Կասա. - Տիւ փա՛րի, ինչպե՞ս հիսան առար:



Կասա. - Էնոր ախպեր էկավ, իմ նշանած էպեր, ես էլ զէնու քիւր առա, էկա:

Թագա՛վոր գետոնք կը ճամխա, կերթան էնոնց երկիր:

Բարգըրան ու Ջանգա՛հոռ կը ճամխա ուրենց տեղ: Ինք, ուր փայլեան ու նշանած ամեկ ծի՛մ կը խեծին, կերթան էնոնց խոր քաղաք:

Կերթան հանե՛ծ, կը տեսնան, օր հիսան ախչիկըմ առեր, պերեր խետ:

Ջույաբ կը տան թագա՛վորին, թագա՛վոր էնոնց ակընջկըլւ կը տա: Կը տանի, կը փրսակա: Վեց օր, վեց գյիշեր խարսնիս կենա: Էնոնք կը խասին ուրենց մուրագին, տիւն էլ՝ քիւն:



36. ՇԱՔՐՈ

Մեկ ժամանակըմ կէլնի մեկ թագա՛վորըմ, տղղա չունենար: Մեկ դա՛վրեշըմ կը գա էնոր տուն:

Դա՛վրեշ ասաց. - Թագա՛վոր, ես խասկըցեր եմ՝ տիւ տղղա չունիս, ես էնպես պա՛րիք մ'էնեմ, օր Աստված քյե տղղե՛մ տա, օր յոթ տարին թընըմի, տիւ օրըմ տղ տա՞ս, տանիմ ծի:

Կասա. - Դա՛վրեշ, վողա՛ էղի իմ ջանին, օր տիւ էնպես պա՛րիք մ'անես, ծի տղղե մ'էղի, յոթ տարուց ետ գա՛ս, ես տամ, առիս, էրթաս:

Դա՛վրեշն էլ մեկ խնձիր կը խանա, չըրա, չիրըմ տա թագա՛վորին, մեկ կընգան: Դա՛վրեշ կը թոնի կերթա, Աստվածութեն էնոր մեկ տղղե՛մ կը տա: Յոթ տարի կը մնա, դա՛վրեշ կը գա:

Կասա. - Թագա՛վոր, ժամանակն ա, տղղեն տո՛ւր, առնեմ, էրթամ:

Թագա՛վոր չուգեր տալ, բայց խոսք ա տըվեր, չուգեր խոսքից ետ տաննա, կասա. - Չայդե՛, ա՛ռ, տա՛ր:

Դա՛վրեշ տղղեն կառնի, կերթա մեկ սար՝ քա՛րի՛մ հանե՛ծ: Էտ քա՛րի վերեն մեկ տիւռըմ կը պա՛ցվի, տեսնա տուն կա քա՛րի մեջ, մեկ ճրաքյըմ կը վանվի էտ տան մեջ: Տան էրկու կըշտերն էլ կան անթիկա քա՛րեր:

Դա՛վրեշն էլ տղղին կը պատվիրա, կասա. - Կերթա՛ս, էն ճրաքյ կառե՛ս, կը գա՛ս, չըպըջի՛ս էնա քա՛րեր, ծեռ չըտա՛ս հինե:

Տղղեն կերթա, ճրաքյ կառի, ամա, տղղա յա, ծեռ կը տա քա՛րեր, քանի՛մ քար կառի, կը գա:

Եփ քարեր կը լցա ջեբ, էտ տուռ կը փակվի վերեն: Դավրեշ կը փախի, կերթա:

Տըղեն էլ շատ կը լնն տեղ: Էնոր քուն կը տանի, կը մնա էն տեղ:

Տըղեն օր կը քընդի, ուր տակ կը ծակվի գետին, տըղեն կընգի վըր ճըրհուն:

Ճուր կառնի, կերթա տըղային գետնի տակ վեր: Կը տանի, մեկ հախաբուր վեր կը խանա տուռ:

Տըղեն անոթի, ծարավ ընտեղրանք շատ կը լնն, կան կը գնն: Մեկ խովիվըմ էն կողմեն օխչար կը պերա:

Խովիվն տըղային կառի, կերթա: Խաց կը կերցուցա, կաթ կը կերցուցա, կը տանի տուն:

Ուր կընգան կասա. - Էսա տըղեն սար կընդեր եմ, լավ կը շախես, կը պախես:

Խովիվն էլ կերթա օխչըրի խետ: Տըղեն ու կնիկ կը մնան տուն:

Տըղեն կը տեսնա՝ խովըվու տուն գեշ, մրոտ ա, կասա. - Մայրիկ, առ էնա քարեր, տար ծախսա, փարեն պեր, մե ջուլ, պան կառինք:

Կնիկ քարեր կառի, կերթա չարսուն, օր ծախսա:

Կերթա, մեկ վաճառականին կասա. - Էսա քարեր չը՞ս առնի:

Կասա. - Կառիմ, մայրիկ, գյինն ի՞նչ ա:

Կասա. - Տու գյիտես:

Կասա. - Մայրիկ, մեկ քարին տաս օսկի տամ:

Կնիկ կասա. - Աղա՛, վըր ծի մը՝ ծըծղա, ես քու ծըծղելատեղ չեմ:

Կասա. - Քյե քան օսկի տամ:

Ասաց. - Դե՛, վըր ծի մը՝ խընդն, կառիս՝ ա՛ռ, չե՛ խոթող ես երթամ:

Ասավ. - Քյեգի տամ քանսուն օսկի:

Կնիկ կասա. - Դե տո՛ւ, տիսնանք:

Մարթն կը տա քանսուն օսկին, կնիկն կառի ուր փարեն, կը տաննա տուն:

Տըղին կասա. - Մեկ քար ծախեցի քանսուն օսկի, էլ չըգյիտիմ՝ քուջար ծու՞ռ եր, թե քար կածեր:

Տըղեն կասա. - Օր էտպես ա, էնա մեկէլ քարերն էլ ծախսա, փարեն տանք, տուն շինենք, իմ խեր թըխ չեղի խովիվ, թը գն տուն:

Կնիկն էլ կասա, էնոր մարթուն կասա. - Մեր տըղին մոտ քար կա, մեկ քար ծախեցի քանսուն օսկի, խովվութեն մ՛եներ, արի երթանք, քարեր ծախենք, մեր տներ շինենք:

Խովիվ կը գն տուն:

Տըղին կասա. - Էտ քարերուց շա՞տ կա քու խետ:

Կասա. - Խա՛, տաս-տասնուխինգ քար կա իմ խետ:

Տըղին կասա. - Դե՛, իրեք, չորս խատ մ՛էլ տո՛ւր, տանենք, ծախենք:

Տըղեն չորս խատ մ՛էլ կը տա:

Խովիվն էլ կասա. - Արի՛ երթանք, ծի շանց տուր, թե էն քուջար վո՞ն ա, օր տու էնոր քար ծախեցիր:

Կնիկ կը տանի, քուջըրի տուքան շանց կը տա:

Մարթն էլ կերթա էնոր մոտ, քարըմ շանց կը տա, կասա. - Էսա քար չը՞ս առնի:

Կասա. - Կառնիմ, ընչի՞ չըմ առնի:

Խովվուն կասա. - Թե շատ ունես էտա քարերուց, պե՛, քյե հեվել գյին կը տամ: Մեկը հիսուն, վաթսուն օսկու կառիմ:

Խովիվ կը հիմնա, թե էսա քարեր լավ քար են, հեվել գյին կասա:

Կասա. - Մեկ քարին օր խարիր օսկի տաս, կը պերեն, չըտաս, չըմ պերե:

Էնտեղ երկու քար կը տա, կառի երկու խարիր օսկին, կը գն տուն:

Կը գն, էնոր շինութեն կը շինա, լավ հագուստներ կառի տըղին, ուր:

Ճրաքյն էլ օր հիրիկուն կը վանվի, չորս մարթ ճրաքյի կընտըներ կը նըստին, դիվան կենեն, գրուց կը տան:

Ամեն օրն էլ խըլիսուն էտա ճրաքյի տեղ տըսնուխինգ օսկի կը տընեն: (Ասենք, թե փար, աներևութ պան են)²⁰:

Վերջ, էտ խովիվ շատ կը գանգըննա, խանութ կը պըռնա: Մեկ տարի՛մ, երկու՛մ, տըղեն կը մնա ըտ տեղ, կապըրվեն իրարու խետ:

²⁰ Ծ.Ա.:

Օրըմ տըղեն կասա. - Ես տ'երթամ իմ հայրենիք:
 Կելնի, ուր ճրաքյ կառնի, կը տա ուր ճամբախ, կերթա:
 Կերթա ճամբախ, կը տեսնա, օր մեկ մարթըմ մեռուկ ա,
 էրկու մարթ էլ, կապ էցկած էտա մեռուկի ոտքեր, կը քաշեն, կը
 տանեն տեն ու կը պերեն, կը չարչըրեն:
 Տըղեն կը խառցընա. - Մեղքյ ա, ընչի՞ տապես կենեքյ:
 Կասեն. - Մե փարա կեր էտր վերեն, չիտուր, մըկա օր
 մեռեր ա, կը չարչըրենքյ փարի փոխարեն:
 Կասա. - Ես էտոր փարեն տամ, առե՛քյ, գացե՛քյ, էտ մարթ
 խորեքյ:
 Կը խանա, էտոնց փարեն կը տա:
 Օսկի մ' էլ կը տա, կասի. - Ես էլ ծեր իրավունքյ, տարե՛քյ,
 գէտ մարթ խորե՛քյ:
 Կը տա խորել, ուր ճամբախ կը պըռնա, կերթա:
 Կերթա, կը տեսնա, օր մեկ տեղ մ' էլ էտապես մեռուկ մարթըմ
 կը չարչըրին:
 Էնոնքյ էլ ուրենց փարի խամար կը չարչըրեն էտա ջանտակ:
 Տըղեն էնոնց փարեն կը տա, օսկի մ' էլ կը տա իրավունքյ,
 կասա՛ տարեքյ, թաղեքյ:
 Կը թոնա, ուր ճամբախ կերթա: Օր մ' էրկու կերթա, կը տես-
 նա, օր ուր դավրեշ էկավ հանե՛ծ:
 Ասաց. - Հա՛, լակո՛տ, տո՛ւ ո՞ր տեղն էր, տո՛ւ ինչպե՛ս քարից
 էլար:
 Էտ էլ դավրեշին կը պատմա ուր գյըլխու գալան:
 Դավրեշն էլ կը պըռնա, էտոր կը տըփա, էտա ճրաքյ ու քա-
 րեր մոտեն կառի:
 Տըղեն օր էտա էրկու մեռըլքյեր թաղել էր, էտոնց խոգյին
 կելնին խրիշտակ, հիսանի կըլըխով կը գան, դավրեշին կը պըռ-
 նեն, դավրեշին կը գանեն, տըղի ճրաքյ, փարեքյ, քարեր կառնեն,
 կը տան տըղին:
 Տըղեն էլըմ ճամբախ կընգնի, կերթա: Կերթա՛, կը խասնի ուր
 խոր քաղաքյ, ուր խոր տան հանե՛ծ կը կայնի:
 Ծառաներ կը տեսնին, կը գան, տըղեն կառնեն, կերթան
 տուն:
 Էնոր խեր մանախից խիվընոցեր ա: Օր տըղեն կը տեսնա,
 կը լավանա:

Տըղեն էլ մեկ քանի՛մ ժամանակ կը մնա էն տեղ:
 Խեր կասա. - Իմ տըղեն պըտի կարոյեմ:
 Կըղանչա ուր վոգիրներուն, կասա. - Ո՞ր ախչիկ լավ ա, պի-
 րեմ իմ տըղին:
 Տըղեն ընոնց շանց տվածին չըխավնի:
 Խերն էլ տըղին կասա. - Էլի՛, գյընա՛, քաղքի մեչ, որն օր կը
 խավնիս, ես էն պիրեմ քյե խամար:
 Կերթա մեյդան, մեկ աղվեսըմ կը գա՛ն հանե՛ծ:
 Աղվես տըղային կասա. - Տըղա՛, ինչ կան կը գա՛ն:
 Տըղեն կասա. - Տո՛ւ աղվես ես, ի՞նչ գործ ունես ինձ խետ:
 - Ախար տո՛ւ ծի ասա, ես քո՛ւ սրտի ուզած տամ:
 - Ես մեկ ախչըկե՛մ կան կը գա՛ն, տանեմ փսակվիմ:
 Կասա. - Ես քյե մեկ ախչիկըմ շանց կը տամ: Տո՛ւ գյընա՛՛ էնա
 մեյդան, ոտ գա՛ր գյետին, ասա՛ Հանջին Աջմանդին: Էն գախ խա-
 գար ծեն կընգի գյետին: Ասա՛ Հանջին Աջմանդին, բիրիցի լալա:
 Օր էնպես ասես, մեկ արաքըմ կելնի քո՛ւ անե՛ծ, էնոր հըմեն
 ատամ խընձ մարթըմ կա, ամա տո՛ւ չըվախեսնաս, էն քյե կասա՛՛
 ի՞նչ հրաման կենես: Տո՛ւ ասա՛՛ աղվես անֆանդին էնոր
 սանդուխ կուզեր:
 Տըղեն գյընաց, խասավ մեյդան, ոտ էգար գյետին, ասավ. -
 Հանջին Աջմանդին:
 Գյետնի տըկանց խագար ծեն էլավ:
 Մեկ էլ ասաց. - Հանջին Աջմանդին, բիրիցի լալա:
 Մեկ էլ տեսավ՝ արաք մ' էլավ տո՛ւս, էնոր հըմեն ատամ
 խընձ մարթըմ:
 Արաք ասաց. - Ի՞նչ կուզես, ասա՛:
 Տըղեն ասավ. - Աղվես անֆանդին ուր սանդուխ կուզա:
 Արաքն էլ կուրիսավ, շտըմ մեկ սանդուխ մ'առավ, էկավ:
 Սանդուխ խընձ ջըղարի կուրի մ'ա: Պալնիսն էլ խընձ թոռ-
 վան խաչըռկաթ: Տըղեն առեց, էպեր, էտուր աղվեսուն:
 Աղվեսն կուրին էտի գյետին, պալնիս էգար վերեն, ասաց. -
 ճիչցի՛ր:
 Սանդուխ ճիչցավ, էղավ մեծ սանդուխ:
 Սանդուխ էպաց, մատնիկ մ' էխան, սահաթ մ' էխան, էտուր
 տըղին:

Ասաց. - Օր էսի տանես քու խոր մոտ, օր քու խեր կը խառցնա, թե էտա մատնիկ վո՞ն ա տըվե քյե, տիւ ասա՛ քիւ ի՞նչ գործն ա: Ձի ախչիկըմ տեսեր եմ, փոխեր եմ մըր մատընկներ, առեր եմ, էկեր եմ:

Տըղեն առեց, էկավ խոր տուն:

Խեր օր տեսավ մատնիկն ու սահա՞թ, ասաց. - Տըղա՛, էսի ո՞ր տեղեն ա, որի՞ ախչիկն ես ուզեր:

Տըղեն ասաց. - Քիւ ի՞նչ պետքն ա:

- Ձավակ, չէ՞ ես պիտի հիմանամ՝ քիւ աներոջ տուն ո՞ր տեղն ա, օր էրթանք, խարս պերենք:

Տըղեն էլ մտածեց, խեղճ-խեղճ գլընաց մեյդան:

Աղվես գինա էկավ հանեճ:

Ասաց. - Տըղա՛, ընչի՞ ես քիւ մաղդեն էրեր, կը մտածես:

Ասաց. - Տիւ ծի խապեցիր, իմ խեր աներոջ տուն կը խառցընա ծենե, ես ի՞նչ պատասխան տամ:

Ասաց. - Էտ խանգիստ ա, գլընա՛ մեյդան, ոտ գա՛ր գլետին, ասա՛ Յանին Աջմանդին, իքինջի լալա, խագար ծեն կընգնի գլետին: Տիւս կը գա արաբըմ: Արաբին ասա թե՛ աղվես անանդին կասա՛ էնպես կոնախըմ շինեն, օր թագավորի սարեն էնպես չէղի, օր թագավոր վաճ տ՛առնի ուր վոզիրներ, գա մըսաֆըր: Փայթոներ հազրին, թագավորի մարթեր օր կը գան, տանես, խանես վերին հողեք: Էնպես կերակուլներ տընես հանեճ, օր մեկ կերակուլից իրեք պըրտուճ ուտեն, էն չանախ փոխեք, չանախ մ՛էլ տընեք: Չալդիք, խաղ ասողներ պատրաստեք, օր էնոնք չուն հիրիկուն նըստին, չըգլտնան, թե մեկ սահա՞թ ա նստած, թե կես:

Տըղեն գլընաց: Ոտ էգար գետին, արաբ էլավ հանեճ, աղվեսու խաբըրներ արաբին ասաց:

Արաբ տըղի հանճըվեն կուրուսավ, հրաման էրաց, էտպես կոնախըմ շինվավ:

Տըղեն էկավ տուն, խոր ասաց. - Քիւ վոզիրքեր, քիւ մարթեր, որն օր ունիս, առ, էրթանք զիաֆաթ իմ աներոջ տուն:

Թագավորն էլ ուր վոզիրքեր հավաքեց, առավ, գլընաց: Գլընաց մեյդընի գլըլիս, տեսավ, օր շենլըկըմ կա, էնոր սարից հավելի լավ:

Փայթոններով էկան հանճներ, առան, տարան ներս: Կերակուլներ պատրաստեցին: Ամեն չանախից իրեք պըրտուճ ուտեն,

տենան, օր չանախներ կը փոխվըխեն, ուրիշ կերակուլ կը պերեն էնոնց հանեճ:

Չալդիք, մուզուկեք ամեն կողմեն կը չալեն: Տեսան հիրիկուն էկած, չիմացան, թե սահա՞թ մ՛ա նըստած, թե կես սահա՞թ:

Հիրիկուն էլան, գինա փայթոնով ճամխեց չուն մեյդընը գլըլիս:

Եփ օր ետ տանցան, թագավոր, վոզիրքեր զարմացան, թե էս ի՞նչ տուն էր, ի՞նչ թագարուք էր, մեր քաղքի մեջ էսպես տուն չընք տեսեր էր:

Թագավոր վոզիրքերուն ասաց. - Աջաբ էս տան լաղըքի անուն ի՞նչ էր, դավթըրի մեջ աչկի՛, տես:

Էտոր վոզիրքեր ասին. - Մեր քաղքի մեջ էսպես տուն չըկեր:

Ասին՝ տըղային խառցնեք, բալքի տըղեն գլտնա, խենքը ընոր աներոջ տուն վի՞ր տուն ա, անուն ի՞նչ ա:

Տըղային խառցընեցին, թե քիւ աներոջ անուն ի՞նչ ա, վի՞ր տուն կասին:

Խեղճ տըղեն էլ չըգլտեր աներոջ անուն, յան տան անուն:

Ասին. - Տըղա՛, տիւ պետք ա գլտնաս, օր մենք պատրաստութեն տիսնանք, էրթանք, քյե փսակինք:

Տըղեն էլ ասավ. - Լավ, հիրիկուն ծե կասեմ:

Տըղեն էլ խեղճ, մաղդեն էրաց՝ ես էրթամ ի՞նչ ասեմ, ի՞նչ չասեմ, ընչի՞ ծի խապեց էսա աղվես:

Տըղեն էլ խեղճ սեֆիլ, ծեռքեր տըրե ծոց, գլընաց մեյդան, աղվես էկավ հանեճ:

Աղվես տըղին ասաց. - Ի՞նչ կը մտածես, ծեռքեր տըրեր ես ծոց:

Ասաց. - Իմ խեր ծի կը խառցընա, թե քիւ աներոջ տան անուն ի՞նչ ա, մեկ հիմանանք, էրթանք, քիւ կնիկ պերենք:

Աղվես ասավ. - Քիւ ի՞նչ գործն ա, գլընա ասա՛ թ՛ էնոնց խելին պատրաստա, գան, առնեն էնոնց խարս, էրթան: Ու շոտ տառցի՛, արի իմ մոտ:

Տըղեն էլ գլընաց, խոր ասաց. - Դադո՛, քիւ ի՞նչ գործն ա, քիւ խելին պատրաստա, գացե՛ք, խարս պերե՛ք:

Տըղեն էլ տանցավ, գլընաց մեյդան: Աղվես էկավ հանեճ:

Աղվեսուն ասաց. - Քիւ ասածներ իմ խորն ասի, էկա:

Աղվես տղղին ասաց. - Գյրնա՛ մեյդան, ոտ զա՛ր գյետին, ասա՛ Դաջին Աջմաղին: Խազար ծեն կընգի գյետին: Ասա՛ Դաջին Աջմաղին, իվչընջի լալա: Արաբըն տուս կըլնի, հերեկի արաբ խընծ էնոր ակընջներ չըկա, բայց չըվախենաս: Ասա՛ աղվես աֆանդին կասեր՝ Բարկղիզա խանըն պատրաստեն, քանսուն խատ էլ հուրի-փարի խետ՝ տաս սիվտակ ջըլերով, տաս կարմիր ջըլերով, տաս կանաչ ջըլերով, տաս տեղին ջըլերով: Ասա՛ ու տանջի, արի:

Տըղեն գյրնաց, ոտ էգար գյետին, արաբն էլա՛վ տուս, աղվեսու խաբըրքյեր ասաց էնու ու տղղեն ետ տանջավ:

Խոր ասաց. - Պատրաստա՛ քու խելիք, ա՛ռ, գյրնա՛, քու խարս ա՛ռ, արե՛:

Թագավորն էլ ուր խելիք պատրաստեց, առավ ու գյրնաց:

Գյրնաց մեյդընի գյըլիխ, գինա փայթոներ պերին, տարան տուն: Եփ օր գացին տան մեչ նըստան, կերակուլ կերան, մինչև առավոտուն սագեր գարկին, քեֆ-ուրախութեն էրին, առավոտուն խարս պերին էն տեղ՝ Բարկղիզա խանըն, օր աչքերով մարթ չըկանա թամաշա էնա, լուս մոտեն կերթա:

Քանսուն խատ հուրի-փարիքյն էլ օր էկան, առան, էկան տուն: Տըղի վերեն փըսակեցին, խաղ ու խաղտուն, ուրախութեն:

Թագավորի կին, ուր ուզած կըխտերով ու խարսն փարիներով մեկտեղ նըստած կերակուլ կուտեն:

Եփ օր խարս կագու միս կուտա, օսկըռները կը թալա ուր թեզնիք վեր:

Վոզիրի կըխտերն էլ աչք կը տան էտի, էտա տեսակ կենեն:

Եփ օր խաց կուտեն, կը պըռծին, կէլի, ուր ծեռքեր կը լըվա խարս, ծեռքեր կը ցանա սենյակի մեչ, էնպես օր կը ցանա, անուշ խտըն կընգի էտա մագալ:

Էտ մեկ վոզիրի ախչիկ, էն էլ էնպես էրաց:

Եփ օր էնպես էրաց, թեզնիք վեր թալած օսկըռի մեկ թըռավ, տըպավ թագավորի կընգան, գյըլիխ կուտռեց:

Շատ էնոց վերեն ամչըցան:

Փեսին էլ աղվես աֆանդին մեկ մորթե ջուլ մ'ա տվեր, ասեր՝ էնա խագիր քու ջըլերու տակ, թե մեկըն քյե դուշման էղի, քյե չըկանա պան էներ:

Խարսնիս ցըռված, ամեկ ուր տեղ գյրնաց:

Թագավորի տղղեն ուր ընգերներով գացին, հախարի վըրեն լըվացվան: Թագավորի տղղեն ուր ճըվեր խուս վեր, էնու ընգերներ էն մորթ տեսան:

Ասին. - Էսա ի՞նչ մորթ ա՛ տու խագիր ես:

Էն էլ ամոթու էխան ուր մորթ, էթալ ոտաց ճամբախ:

Եփ օր էնպես էրաց, էտոր կնիկ ուր փարիքյներով տընեն էլան եղվընիկ, թըռան, գացին:

Էրթալու ժամանակ տուն ասաց. - Շաքրոյի սիրտ իմ հետևն ա, թը գա Կավ-Բուլ, ծի կընդի:

Եփ տղղեն էլ տուն էկավ, տեսնա, օր ոչ կնիկ, ոչ պան տուն չըկա:

Մոր կասա. - Դո՛ւր ի իմ կնիկ, դո՛ւր գացին:

Մերն էլ կասա. - Էղան եղվընիկ, գացին:

Տըղեն կասա. - Պա՛մ չասի՞ն հեչ:

Կասա. - Էրթալու ժամանակ ասավ՝ Շաքրոյի սիրտ իմ հիտևն ա, թը գա Կավ-Բուլ, ծի կընդի:

Տըղեն էլա՛վ, հիտև գյրնաց:

Մերն էլ ընգավ տղղի հետև, գյրնաց:

Գացին մեկ օրըն, էրկու, մեկ սարի՛մ հանե՛ծ մըսաֆըր էղան, էնտեղ մուքըն էտու վերենքյտեր: Էն տեղն էլ հերըն կա: Դերի մեչ մըսաֆըր մտան, մեկ մե՛ծ քարըն կա հերի տուռ, տղղեն էտու ետ, մտան հինե: Չուն հիրիկվան սահաթ էրկըսվին մեր տեսավ, օր դև մ' էկավ:

Տըղեն քյընուկ ա:

Դև ու մեր փըշու՛մ գրուցեցին տըռան հանե՛ծ:

Մոր սիրտ դևու վերեն ավիրավ:

Մերն էլ դևուն ասաց. - Արի՛, էրթանք տուն, տու էլ մե պես պանկինքյ:

Դևն ասավ. - Չէ՛, ես չըն գըխընար, կը վախենամ քու տղղից:

Ասավ. - Տու դև ես, էնի հիսան ա, ի՞նչ կը վախենաս, արի՛ էրթանքյ:

Ասավ. - Չէ՛, էն մարթ, օր էսա քար տըվեր ա ետ, էնի շատ կտրի՛ծ մարթ ա:

- Է՛,- մեր ասաց,- ապա ի՞նչ էներք, ի՞նչ չէներք, ես քյե շատ կը սիրեմ:

Ասաց. - Տիւ հեսօր գիշեր եղիր սուօ խիվանդ, օր քու լաճ ասա՝ քյե ի՞նչ պիտի, տիւ էլ ասա՝ էնա սարու հետև խաղողի հեգյի՛մ կա, երթաս, էն սարի հիտևու հեգիւց խաղող պերես, ես կը ժըրիմ: Օր էն էլ երթա հեգիւց խաղող պերա, Կարմիր դևըմ կա ընտեղ, էն դև կը գա՛, ըզքիւ տըղեն տ՛ ուտա, ես չըխտ տը գա՛մ, ըզքյե առնեն:

Քյընան չում խըլխուն, խըլխուն մերն եղեր ա խիվանդըմ, ծանտըր խիվանդ:

Լաճն էլ կասա. - Ի՞նչ եղավ քյե, հելի՛ երթանքյ, ի՞նչ պիտի, ի՞նչ չըպիտի քյե:

Մերն էլ ասաց. - Ես հեսօր երազ եմ տեսեր, էնա սարի հետև հեգյի՛մ խաղող կա, երթաս, էն խաղող պերես, ես կը ժըրիմ, չէ՛ ես կը մեռնիմ:

Տըղեն էլ էլավ, գյընաց: Տեսավ, օր սարի հետև հեգյի՛մ խաղող կա, շենլըկ մ՛ էլ գի հեգիւ գյըլիխ:

Տըղեն գյընաց, մեկ ախչիկըմ կանչեց փանջարից, ասաց. - Տիւ վի՞ն ես, տանջիր, Աստօու սիրուն եղի, քանի Կարմիր դև չէկե քյե կերի:

Տըղեն ասաց. - Տիւ ամտըլա՛ չասիր, օր ասիր, ես չըմ երթա, էն դև թը գա՛, խենքյ ի՞նչ տ՛էնա ծի:

Մընաց, տըղեն էլ նստավ ընտեղ, չէկավ:

Տեսավ, օր դևըմ ըն կողմեն էկավ, բարդի ծառըմ տըրեր վեր թիվին ու ջանտըկներ շարեր վըր թիվին, կը գա՛:

Դև եփ օր էկավ, ըզտըղեն տեսավ հեռըվանց, ասաց. - Խողածի՛ն, իմ աչիչ հանճըվեն հեռացիր, քիւ մեղքյն էլ չընգի իմ վիզ:

Տըղեն էլ ուր տեղեն հիրար չառավ, մընաց նըստուկ:

Դև էկավ խընդ տըղեն, տըղեն թուր քաչեց, գյընաց հանճ: Դև փախավ, զինքյ էթալ խոր, քար մ՛առավ վերեն:

Տըղեն էլ գյընաց, թուր մ՛եգար, քար կըտրեց, էճավ, դևու մեչքն էլ կտրեց, երաց երկու կըտոր:

Դև ասաց. - Տըղա՛, մեկ էլ գար:

Տըղեն ասաց. - Չէ՛, մարթու դըրբ մեկ ա, քյե հիրար տո՛ւր:

Դև զինքյ հիրար էտու, եղավ երկու կըտոր, մընաց ուր տեղ:

Տըղեն էլ էկավ, գյընաց ախչըկե մոտ:

Ասավ. - Տիւ ի՞նչ ախչիկ ես ըստա՛:

Ախչիկն էլ էլավ, էկավ տըղի գյըլիխ պագյեց, ասաց. - Ես մեկ հարուստ մարթու մ՛ախչիկ մ՛եմ, դև էկավ, ծի փախուց, էպե ըստա՛:

Տըղեն ասաց. - Էլի՛, քյե ճամխեմ, գյընա՛, քիւ խոր երկիր:

Ախչիկ ասաց. - Ես մինակ չըմ գյըխընա երթա, ոտնով էլ տաս օրվա ճանքախ ա:

Տըղեն ասավ. - Դևու՛ն ծի, պա՛մ չըկա՞ էսա հողեքյ:

Ասաց. - Դևու՛ն երկու ծի կա էնա հողեն, եթե կանաս պերես տուս, գամես, մարթ խեծի, երկու սանհաթ մարթ կը տանեն իմ խոր քաղաքյ:

Տըղեն էլ գյընաց, երկու ծին հողից էխան տուս, գամեց, դևու տընեն էլ ինչկանդար թանգագին պաներ կեն, երկու խուռջի էլից, էթալ ծիանքըյներու քամակ, ախչիկ խեծուց վըր մեկ ծիուն, ինքյ վըր մեկ ծիուն, տըղին ճամքախ, գացին:

Տարավ ախչըկե խոր քաղաքյ, ախչըկե խոր տուռ պայա էղան: Ախչկա ախպըրներ, խեր էկան հանճ, տարան տուն, խընդանցան վըրեն:

Տըղին ասին. - Արե՛, մեր ախչիկ տանքյ քյե:

Տըղեն ասավ. - Ախչիկ իմ քուրն ա, ես կերթամ խընդ իմ դանդին:

Տըղեն էլավ, ծին խեծավ, էկավ:

Էկավ հեգյին, խուռջի՛մ խաղող էլից ու առավ, էկավ էնոր մոր մոտ:

Դև օր տեսավ տըղեն գի էկավ, ասավ. - Եսի օր Կարմիր դևու ծեռնեն պըռծավ, զաթի տը գա՛, ծի էլ տը սպանա:

Մոր ասաց դև. - Եղի սուօ խիվանդ էլման, օր կասա՛ քյե ի՞նչ պիտի, ասա՛ երազ տեսեր եմ, էնա Սև սարի հետև մեկ խնճիրի ծառըմ կա, երթաս ըն խնճիրներ պերես ծի, ես կը ժըրեմ: Օր երթա էն տեղ, ասլան էնոր նոբադարն ուր ծաքյերով: Թե ասլան գենի ուտա, թի չէ, չարա չէղի էն տըղի խետ:

Դև գյընաց պաղկըվավ, տըղեն խաղող եղիր մոր հանճ:

Մեր խաղող կերավ, գինա մախսուս եղավ խիվանդ:

Տըղեն էլ ասաց. - Մարե՛, քյե ի՞նչ պիտի, ի՞նչ չըպիտիր, չըժըրա՞ր տու:

Ասաց. - Ես երազ տեսեր եմ, էնա Սև սարի հետև քաղչա՛ կա, ըն քաղչի մեչ խնճիր ա, պերես, ես ուտեմ, օր ժըրիմ:

Տրդեն էլձվ, գյրնաց: Գյրնաց տեսավ, օր սարի հետև քնդ-
չե՛մ կա, խնծիր կա մեչ: Գյրնաց բանչի մեչ, տեսավ, օր էրկու աս-
լանի ծաքյ էկան հանեճ, փաթուքվան ոտներ, խընդրաց գանցին
բանչի մեչ:

Տրդեն խուռջի՛մ խնծիր քանդեց, տեսավ օր ասլան ընտեխեն
էկավ, կրակ ոտներուց կը քնլա՛:

Ասլան էկավ խընճ տղեն, տրդեն թուր քանչեց, գյրնաց
հանեճ, թուր մ՛եզար ասլանին, գյրլիխ չուր վիզն էրաց էրկու
տապակ, առավ խնծիրն, էկավ: Էտա էրկու ասլանի ծաքյեր
հընգան հետև: Տրդեն էլ առավ, էկավ խետ:

Տեսավ, օր տրդեն էկավ, ասլանի ծաքյեր գի խետ, վախե-
ցավ, ասավ. - Էսի, օր ասլան էլ ըսպանեց, ծաքյերն էպի, ես էլ
պա՛ն չըմ կենա էնեմ, էլնեմ, թոնեմ էրթամ:

Դև էլձվ, տ՛ էրթեր, մեր ասաց. - Մ՛էրթա՛, տեսնանք, արի
ճարե՛մ կընդինքյ էտր:

Դև ասաց. - Թե կանաս էնոր աչքեր խանես, չըխտ ես կը
գան, չէ, չէղիր, ես չըմ գյրխշընա՛ գան:

Մեր ասաց. - Ապա ի՞նչըխ աչքեր խանեմ, ի՞նչըխ էնեմ:

Ասաց. - Ա՛ռ էնա միլ քու խետ, եփ օր կը քըննի, թա՛լ, աչքեր
խան:

Տրդեն էլ էկավ տուն, խնծիրներ էպե, մեր կերավ, ծիւն էլ
տարավ, կապեց, արածաց, ասլանու ծաքյերն էլ գանցին ծիւն
մոտ:

Գյիշեր տրդեն քըննավ, մեր միլ էթալ, գաչքեր էխան:

Խըլխոււն մեր էլձվ, դևուն կանչեց, ասաց. - Արի՛, աչքեր
խաներ եմ, տրդեր եմ ջեբեր, արի տար, ի՛նչ կենես, էրա՛:

Դևն էլ էկավ, գոտներ պըռնեց, տարավ էթալ խոր ըզտրդեն:

Դևն ու էնու մեր գանցին էնոնց քեֆի խետ:

Էտա ասլանի ծաքյերն էլ կերթան, թե կաքավ էղի, թե խաց
էղի, կը քալեն էտա խոր վեր, տրդեն կուտա:

Մեկ քանի՛մ ծամանակ կը մնա էտպես տրդեն խորի մեչ:
Մեկ օր տրդեն լսավ, օր ուր կըշտեն խըփըսթոցըմ կը գա՛, տրդեն
ծեռ կան ածուց, աղվես մ՛ինգավ ուր ծեռ, պըռնեց գաղվես:

Տրդեն ասաց. - Աղվըսու պոչ պըռնեմ, խեմ աղվես ծակըմ
վեր ծի չըխանե՛ր տուս, հալքաթ տեղըմ վեր էկեր ա:

Տրդեն աղվըսու պոչ պըռնած, հիտև աղվըսու կերթա:

Աղվես տարավ, չու՛մ սահաթ մը ճանապարհ գյետնի տակը
վեր, ըզտրդեն էխան տուս:

Տըսու շավեն էզար տրդի իրեսնը վեր, տրդեն ափըլփեց
գյետին, հիմացավ, օր տուսն ա, գաղվես էթող, գյրնաց:

Մեկ, թե օր մ՛էրկու տրդեն մընաց ըն տեղ նըստուկ:

Մեկ օր տրդեն լսավ, մեկ բազըրգան մ՛էկավ, գանգակի ծե-
ներ, կալաբալաղ տըլի վերեն, կը գա՛: Բազըրգան օր էկավ, ճամ-
բախ վեր տ՛ընցըներ, տրդեն էլ բաշլայեց խաղ ասել, բոռալ:

Բազըրգանի տերն էլ ասաց. - Գանցե՛ք, խենքյ էնա ի՞նչ
մարթ ա, նըստեր խաղ կասա:

Գանցին օր տեսան մեկ կոր, ալիլ մարթըմ նըստեր ա ըտեղ:

Կը գան, բազըրգանի մեծին կըսեն, թե՛ կոր, ալիլ մարթ մ՛
ա, նըստեր ա ընտեղ:

Բազըրգանի մեծ կասա. - Գանցե՛ք, պերե՛ք, առինքյ
էրթանքյ մեր խետ, խեղճ ա, մեղքյ ա:

Կերթան, կը պերին:

Բազըրգաններ կերթան, մեկ հախալըրի՛մ վերեն էնոնց
պեռներ կը քալեն, կը նըստին էն տեղ:

Բազըրգանի մեծ կը խառցընա, թե՛ ի՞նչ ա էղեր քու աչքեր,
անլա՛ էնտեղ ինչ կեներ:

Էն էլ կը պատմա ուր գյըլխու գալա՛ծ:

Բազըրգան կաչկա էնու ջեբքեր, աչքեր գի ջեբքեր:

Էն էլ աչքեր կը խանա, տընա ուր տեղ, տրդեն էլ ծեռ կը տա
ուր ջեբ, էն պերած խնծիրներուց էրկու խատ գի ջեբ, թոռնըներ,
կը խանա:

Թուջար կը խառցընա. - Էտա ի՞նչ խնծիր ա քու ջեբ:

Էն էլ կը պատմա:

Թուջարն էլ կառի, կը տընա ճըրու մեչ, կը կակըրցուցա
էտա խնծիրներ, կը քըսա վըր աչքերուն, աչքեր կը ժըրի:

Թուջարն էլ տըղին կասա. - Արի՛, քե տանեմ իմ խետ:

Տրդեն կասա. - Չըմ իզար, դանդ կա ծի, կերթամ հիտև իմ
դանդին:

Թուջար կերթա: Տրդեն էլ կէլնի, կերթա էն հեր խեմ՝ իմ մեր
ու դևն ընտեղն են, թե՛ էն տեղ չեն:

Կերթա, օր տեսնի գի էրկուսն էլ էն տեղ հեր վերն են:

Դև կելնի, օր փախի, տրղեն կասա. - Չէ՛, մը՛ փախիր, ես քյե պան չըմ էնե, տու ծի պան չըս էրեր:

Դևն էլ կանի ընտեղ: Տըղեն կերթա, ըզթուր կառի, մոր ոտներ, ծեռքեր կըտրա, թալա ընտեխ: Կէլի, կերթա խեմ՝ իմ ծին ի՞նչ ա էղեր:

Կերթա ծիու մոտ, կը տեսնա, օր ծին կապուկ ա: Էնոր կապած տեղ էնքան ա էնու կըշտըներ կան էկեր, օր գյետին էղեր ա թոզ, ծին չու՛մ էնու ծընգվեր խըթվեր ա մըչ թոզին:

Էտա ասլանի ծաքեր տիրած ան, չըն թողած ջանավարըմ գա մոտ, յան մարթ գա տանի, ամա՛ ծին անթոնե կողիւմ չըկա, օր քյելա:

Էն էլ կը տաննա վըր դևու՛ն, կասա. - Արի՛, քյե պան չըմ էներ, իմ ծին տընիս վըր քու թևին, առինքյ, էթանքյ ասլանի բանչեն:

Դևն էլ կը գա, ի՛նչըխ մարթ ուլըմ տընա ուր թևին, տընա ուր թևի վըրեն, կառնի, կիյա ասլանի բանչեն: Ծին կը թոնին բանչեն, ասլանի ծաքերն էլ թոնի բանչի մեչ ու ինքյ, տըղեն կը տա ճանբախ, կերթա:

Կերթա, մեկ տանշտըմ կը տեսնա, օր վարանըմ գարկուկ էտ տանշտի մեչ:

Քանի օր կերթա, էտա վարան ուր աչիչ հանեծեն կեռանա:

Էն էլ կասա. - Ցերեկ ըրստիմ, գյիշեր էրթամ, խեմ ի՞նչ վարան ա, օր իմ հանճըվեն կը փախի:

Ցերեկ կը քընի, գյիշեր կերթա, կը խասի: Կը տեսի, օր գա չըկա վարանի մեչ, տանտակ վարան:

Կասա. - Պառկիմ ըստա, քընիմ, խանգստանամ չու՛մ առատուն: Գալբաք էտա վարանին տերըմ կա:

Խըլխու՛ն կը տիսնա, օր իրեքյ մարթ էն կողմեն կը գան: Էլ հիրարու կը գանեն ու կը տըփեն, կը գան:

Կը խառցընա. - Ընչի՞ իրարու կը գանեքյ:

Էնոնքյ էլ կասեն, թե՛ մեր խեր մեռեր ա: Էնու մալի վըրեն կը կըռվինքյ, քյար չընքյ ինգիր:

Էտ էլ կասա. - Էկեքյ, ծի քյար ըցկեմ, ծեր խոր մալ ի՞նչ ա, պերեքյ մեչտեղ:

Ընոնքյն էլ կասեն. - Մեր խոր իրեքյ պան կա, մեկ աներևուք գյըլխանոց, մեկ սուֆրա ա, մեկն էլ սըջադա ա:

- Լավ,- կասա,- էն գյըլխանոցի մարիֆաթն ի՞նչ ա, էն սուֆրի ու սըջադի մարիֆաթն ի՞նչ ա:

- Էտա գյըլխանոց տու տընես քու գյըլիխ, էլ մարթ քյե չըտեսներ: Էնա սուֆրեն օր տընես քու հանեծ, ի՛նչ ուզես, կը գա մեչ, կուտես, էնա սըջադեն էլ, օր ըրստիս վըրեն, ասխ՝ սըջադա՛, ծի առ, տար, դի՛ր ուզես, քե կառի, կը տանի դեն:

Կասա. - Շա՛տ լավ, գանքեքյ, իրեքյ քար պերեքյ, տըվեքյ իմ ծեռ, ծե ասեն:

Իրեքյ քար կը պերեն, կը տան տըղի ծեռ:

Տըղեն էլ ըզքարեր կը թալա, կերթան, կընգնին սարի տակ:

Էն ասաց. - Դե որ շոտ էրթա, քար մ՛առի, գա ըստա, ո՛ր մեկն ուզա, կը տամ էնոր:

Էնոնքյ գանցին քարերու հետև, տըղեն նստավ վըր ծածկոցին, սուֆրեն իղիր գիքյ, գյըլխանոց իտիր գյըլիխ, ասաց. - Քյենե կուզեմ, ծածկոց, ծի տանես Կավ-Քուվ երկիր՝ Բարկղիզա խանըմի մոտ:

Աչք խփեց, էպաց, էճավ Բարկղիզա խանըմի տան հանեծ:

Էն գյըլխանոց գի գյըլիխ, մարթ զենի չըտեսիր: Տեսնա, օր Բարկղիզա խանըմ պերած են, կը կախեն:

Էն էլ թուր մ՛ էթալ, չըվան կտրեց: Էտա կախողներն էլ գարմացան, թե չըվան ընչի՞ կտրավ:

Ասին. - Վնաս չըկա, անգամ էլ կախենքյ:

Կախեցին, դի՛ր մ՛ էլ թուր էթալ, կտրեց:

Ասին. - Չանըմ, էսի մարթ կա, կը կտրա, չըվանի վըրեն կտրելու տեղ կերևա:

Կասեն. - Աներևուք գյըլխանոց կա էտա կտրողի գյըլիխ, մենքյ չընքյ տեսնա, էնի կը կտրա:

Կանչեն կասեն. - Մարթ, տու վո՞ն ես, ի՞նչ ես, ի՞նչ ես, ջը՞նս ես, փարի՞ ես, ծեն տուր:

Ասաց. - Եսն եմ, ընչի՞ էտա ախչիկ կը կախեքյ, ծի ասեքյ, օր էլնիմ հերևան:

Ասին, թե. - Էտա ախչիկ գանցեր, մեկ տըղե՛մ խապեր, առեր, ըզտըղեն թողեր, էկեր: Տըղեն էլ էկեր ա հիտև էնոր: Խը ճամխին շատ նեղութեն ա ընգեր: Տըղի մեղաց մեր երկիր կրակ կը թափի, էտա ախչիկ տը կախենքյ:

- Է՛,- կասա,- մըկա օր տըղեն գա՛ն ըստա՛ն, զախչիկ չը՞ք կախի:

Կասեն. - Չէ՛, ուխտ եղի, մընք պան չենենք:

Տըղեն էլ գյըլխանոց կառի, կը տընա՛ ծոց, կերևա:

Ընտեղ ախչիկ տըղին կը ճանչընա, տըղեն՝ ախչըկեն: Էտ հուրեք, ինչ օր խընդ ախչըկեն են, կը տանեն, ըզտըղեն պատիվ կը պըռնեն:

Թե տաս օր, թե քսան օր հիրարու խետ քյեֆ-ուրախութեն կենեն:

Տըղեն էլ ախչըկեն կասա. - Դե՛, էլի՛, էրթանք մեր երկիր:

Ախչիկ կասա. - Ես կանամ էղիմ եղվընիկ, թըռիմ, տու ի՞նչըխ տ՛իյաս:

Տըղեն էլ կասա. - Ես էլ խանգիստ կերթամ:

- Տիւ ինչպե՞ս տ՛երթաս:

Տըղեն էլ կասա. - Ծածկոցըմ կա ձի, օր թե նըստիմ վըրեն, ասիմ՝ ձի տար իմ խոր տուն, ձի կը տանի ըն տեղ:

Տաննա, տըղեն կը խառցընա. - Տիւ ընչի՞ ձի թողիր, էկար, ես էկա, ճամխըներ էնքան նեղութեն քա՛չիցի:

Կասա. - Էն մորթ, օր աղվես ա՛ֆանդին էտուր քյե, տու թա՛լեցիր ոտաց ճամբա՛խ, ես էլ հըռըկա, թողի, էկա:

Էն ու ախչիկ դիրիս կը նըստին ծածկոցը վեր:

Կասա. - Ծածկո՛ց, ձի տանես էն ախչըկե խոր տուն, օր ես դևուց ազատեցի, տարա ուր խոր տվի:

Աչք խփին, պանան, կը գան վաճառականի տուռ կեճին:

Կերթան տուն, մըսաֆըր կեղին: Ախչիկ օր էն կը տեսնի, հիրարու վըրեն կը խընդանան:

Ընտեղ վաճառական շատ էնոնց պատիվ կը պըռնա, քանի՛ն ժամանակ էն տեղ կը մնան:

Ըն տեղեն կելնին, վաճառականից քանի՛ն խատ թանգագին պաներ կառին, կը գան: Կը գան, քաղքյեն կելին, կը նըստին ծածկոցը վեր:

Կասա. - Ծածկո՛ց, ձի տանես ասլանու ծաքյերու մոտ, իմ ծիուն:


Աչք խփեն, պանան, քաղչի մեչ կեճին: Տեսնա, օր ծին լացե՛ր, էլեր ա հառճին ծին: Ասլանի ծաքյերն էլ մեծցած: Ընտեղ

կելին, էրկուս ըզծին կը խեծին ու ասլանի ծաքյեր հետև կառին, կը գան խոր տուն:

Նորեն խեր, ուր վոզիրներ կերթան հանեն, կը պերեն, խինգ-վեց օր ուրենց քյեֆ-ուրախութեն կենեն:

Էրկուց իրեք խնձիր կընգի, մեկ ասողին, մեկ լսողին, մեկն էլ չըլսողին:





37. ՄԱԼԱՆՑՈՑ ԱՂԻ ՓԵՍԵՆ

Իրեքյ մարթ գացին ճանաղ: ճանղըպան էրկըսվի աղուն աղաց, մեկին չաղաց, մութն էգար:

ճանղըպան ասաց. - Էլե՛քյ, էրթանքյ, գյիշեր գողեր չըգան, մե թալնեն:

Էն մեկն ասաց. - Ես կարծիմ տաս մարթ:

Էն մեկն էլ ասաց. - Ես տասնըխինգ մարթու չափ եմ:

Մեկն ասաց. - Ես քսան մարթու չափ եմ:

ճանղըպան ասաց. - Օր էնպես կոչաղ եք, եսն էլ խը ծե կելնենքյ քանսուն ու խինգ մարթ:

Հիրիկվան մեկ մարթ մ'տու տըռան վերեն, տուռ չըպացին:

Մարթն ասաց. - Ախպերքեր, տուռ պացե՛քյ, գամ, իմ աղուն աղամ:

Ներսի մարթեր ասին. - Տու վո՛վ ես, ըլնիս թագավոր էլ, տուռ չընքյ պաննա քու վըրեն:

Տըրտու մարթն լանգեն էգար, տուռ կոտեց, տեղից թըռուց, էգան՝ պատ:

Ներսի մարթերուն սարսափ տարավ, չէլան՝ կանին հանեճ:

ճանղըպան էտոնց ասաց. - Թե՞ տուքյ կասեքյ՝ մենքյ մե մեկ տաս, տասնուխինգ մարթու չափ եմք, ընչի՞ չեքյ ըլնի, կայնի:

Տըրտու մարթն ասավ. - Էկե՛քյ, իմ պեռ տըվե՛քյ իմ շալանկու վըրեն, պիրեն ներս:

Մեկն հիրար չանեց, չըգյըխըցան, վախեցան:

Էն էլ էնու պեռ էցկեց ուր ճըվու վըրեն, առավ, էկավ ներս:

Էն մեկէլներու աղուն ճանղեն էխան, էնոր իլից վերեն:

Ասավ. - Ինչո՞ւ տուռ չըպացիքյ իմ վերեն:

Ասին. - Մենքյ վախեցանքյ, վախի խամար չըպացինքյ:

- Թե վախենալու խամար չէդեր, ես կը գամ, ծեր վըզքեր կը քաշեմ, ամա օր վախենալու խամար ա, ծե կը ներեն:

Վերջ նըստավ, էնոր գյըլխու վերեն յարե՛մ կեր, ծեռ էտուր, էնու յարեն սըրպեց, էթալ գյետին:

Էտոնքյ ըսկըսեցին ուրենց-ուրենց խոսել: Ասին.«Ես մարթ օր էքան կոչաղ ա, ըսըրուց ո՞րն է հավել, օր ըսոր գյըլխ կոտրած ա»:

Էն մարթ ասավ. - Ի՞նչ ա կը խորխըտեք, ձի ասե՛քյ, թե չէ կէլնիմ, ծեր վըզքեր կը քաշեմ:

Էն մարթեր ասին. - Մենքյ կասենքյ, թե էնորից կոչաղ ո՞րն ա, օր էնու գյըլխ կոտրած ա:

Ասավ. - Իմ խեր էլավ, ո՞ր տեղեն օր ձի ախչիկ ուզեց, ես չըխավնա: Վերճին մեկ օր էրկու դավրեշ էկան մեր տուն: Իմ խեր էտա դավրեշներուն ասավ. - Իմ տըղեն ո՞ր տեղեն ախչիկ ուզեցի, չըխավնավ: Տու դավրեշ մարթ եքյ, կան գալանցող եքյ, տու գյիտեքյ՝ որտեղ լավ ախչիկ կա, ասե՛քյ, մեկ պիրեմ իմ տըղին:

Դավրեշներ ծեն չըխանին:

Իմ խերն էլ ձիկ ասաց. - Ա՛ռ, էնոնց թաղիս խա՛ց տար, թըղ չուն խըլիսուն մնան, էրթան:

Ես առա էնոնց խաց, թաղիս տարա հողեն: Խաց կերան:

Ըն մեկ դավրեշ ըն մեկ դավրեշին ասաց. - Ես տըղային գյիտե՞ս, թե որ ախչիկ հարմար կը գա:

Էն մեկ դավրեշ ասավ. - Ես կը մտածիմ՝ ոչ մեկ ախչիկ էտոր հարմար չի գա, ընչի օր էսա շատ կոչաղ տըղա յա:

Էն մեկ դավրեշ ասավ. - Ընչի՞, տու չըտեսա՞ր, օր մենքյ գացինքյ Մալանցոց աղի կոներ, էնոր ախչիկ էս տըղայից շատ լավ էր:

Ասավ. - Հավատա՛, ես չըտեսա, փարդի հանեճն էր:

Էնպես ասելով՝ իմ սիրտ էտա ախչըկա վերեն ավիրավ: Էլ ո՛չ ես դավրեշներաց խարցնեցի, թե Մալանցոց աղի տըներ որտեղն ա, ո՛չ էլ էնոնքյ ձի ասին:

Ես էլ էկա տուն, շատ մանախլի էղա: Օրավուր հետև շատ տկարացա մանախից:

Էն մեկ օր իմ խեր խարցընեց իմ ընգերներուն, թե՛ խարցընեք իմ տըղայից, թե ընչի՞ Էնպես գայիճցեր աս:

Ընգերներ ծի խարցընեցին. - Քու խեր կասա՛ ընչի՞ ես էտպես գայիճցեր:

Ես էլ ասի. - Դավրեշներ էկան մեր տուն, իմ խեր ասաց Էնոնց՝ մեկ լավ ախչիկըմ կընդեք, իմ տըղային կարոյեմ: Էտ դավրեշներ ծեն չըխանին, իմ խերն էլ չըխարցընեց էլ: Ես էլ խաց, թաղիս տարա դավրեշներուն հողեն: Էն մեկ դավրեշն ասավ. «Գյիդե՞ք, թե էսա տըղային որ մեկ ախչիկ հարմար կը գա»: Էն մեկ դավրեշ ասաց՝ չէ: Մյուս ասաց. «Մենք գացինք Մալանցոց աղի տուն, Էնոր ախչիկ խորոտ էր, Էն ախչիկ էսա տըղին շատ հարմար կը գա»: Էտա ախչիկա մանախից ես էլ էտպես խիվանդացեր եմ:

Եփ օր ես պատմեցի ընգերներուն, թե ես ախչիկա մանախից եմ էղեր, ընգերներ գացին, իմ խոր պատմեցին, թե Մալանցոց աղի մանախից է ընցկուն էղեր:

Իմ խերն էլ էլավ, չորս մարթ կանչեց, ասավ. - Դե՛, էկեք ասեք Մալանցոց աղեն որ երկրացի աս, էրթանք, տեսնինք:

Էտ չորս մարթ գընացին չում Վան, չում Պանդեշ, մարթ սալուխա չէտուր:

Ճամխեց Պարսկաստանա կողմեն էլ, հեչ մարթ սալուխա չէտուր:

Վերջ տանցավ ծի, ասաց. - Ո՛ր տեղ ճամխեցի, մարթ սալուխա չէտուր, չըկընդանք:

Ես էլ էլա, իմ խոր մեկ ծի՛մ կեր, ոչ մեկ մարթ չըգըխըններ խեծներ, քանչեցի տուռ, խեծա, իմ սիլախքեր կապեցի, հայբե մ՛ էլ ոսկի թալեցի ծիու թարթ:

Իմ խեր ծիկ ասավ. - Չավակ, օր կերթաս, չէրի՛ էտա ծիուն յան փետ գանես, յան ոտ գանես, քե տաշըրից կը խանա էսա ծին: Թըխ ուր կամքով քեյլա:

Ես էլ ճանապարհ ընգա: Ծին էլ Էնպես կամաց կը քեյլա՛ խավիւ ծիուն ոտաց տակ չըկոտրեր:

Ես էլ հըռըկա, մեկ գանգու՛մ գարկի ծիուն:

Վերջ էլ չըտեսա՛ ծին ծի դիր տարավ: Մինչև իմ ուշատուրթուն էկավ վերեն, ծիու գան գավթիցի: Տեսա, օր մեկ տաշտըմ

կա՛ էլ որ մեկ կող կիրիշկեմ, մեր երկիր չէրևար: Չիմացա, թե որ մեկ աշխարն աս: Կամաց-կամաց գընացի մեկ խովվու մոտ:

Ասի. - Խովիվ, մեր ուղտեր պերած են, տու չըս իմանար՝ ո՞ր տեղ տարած:

Խովիվն էլ ծիկ ասաց. - Ընչի՞, տու չըս գինա՛ էսի Մալանցոց աղի երկիրն աս, ըստեղ մարթ գողութեն չէներ:

Ես էլ ասի. - Փա՛ռք, տեր Աստված, թե ես ինգա Մալանցոց աղի երկիր, ի՛նչ կէլնի, թըղ էլնի: Իմ սիրտ խանգըստացավ:

Խովիվն ասի. - Խովիվ, քիչ խաց պեր, ուտենք, ես անոթի եմ:

Խաց կերա, խովիվն խառցընեցի. - Խովիվ, էս օջխար վի՞ր օջխարն աս:

Խովիվն ասավ. - Էս օջխար Մալանցոց աղի օջխարն աս:

- Խովիվ, Մալանցոց աղի տուն ո՞ր տեղն աս:

Խովիվ ասավ. - Էսա տաշտի մեչ մեկ հախախորըմ կա, ընոնց վարաներ գի՛ Էն տեղն աս, մեծ վարան կա վարաներու գըլիխ, Էն գի Մալանցոց աղի վարան աս:

Ես գացի, վարանի տուռ կայնա: Էկան, իմ ծիու գըլիխ պընեցին: Տարան, ծին կապեցին, ընծի էլ տարան, ըստըցուցին վարանի մեչ, մինչև հիրիկվան լավ ծի պատվեցին, խաց կերցուցին:

Հիրիկվան էլի մեչ հավար էղավ, թե գողեր մեր ուղտեր տարան:

Աղեն էլ ծի տարավ, մեկ հուրուշ վարան քընեցուց: Չիգանից գանդիկ էլան, գացին Էնոնց հավարի հետև:

Խըլխուն լիւսցավ: Ես էլ չըմ քըներ, մինչև լիւսուն իմ քուն չըտարավ մանախից:

Խըլխուն աղի կնիկ էկավ, ծի կահվա էպեր: Ես կահվեն չըխըմեցի: Գընաց, ծի խաց էպեր, ես խացն էլ չըկերա:

Աղի կնիկ իմ վերեն հըռըկավ:

Ասավ թե. - Տու վո՞վ ես, ես Մալանցոց աղի կնիկն էլնեմ, քե խաց պերեմ՝ չուտես, կահվա պերեմ՝ չըխըմես, տու ո՞րի տղեն ես, մըսաճըր: Իմ խաց լավ չէր, չըկերար, կահվե՞ն լավ չէր, չըխըմար, ասա խենք՝ ընչի՞ չըկերար, ընչի՞ չըխըմար:

Ես էլ ասի. - Ես էլ մեկ մարթուն տըղա եմ, թալան էղավ, ընչի՞ ծիկ հիմաց չէրիք, ես էլ էրթեր հավարի հետև:

Էկավ, իմ գլուխի պագյեց:

Ասավ, թե. - Մըսաֆըր, մեզ ամոթ ա, օր տու՛ւ էրթաս հավարի հետև, կարելի ա, օր տու՛ւ էրթաս, բրինդար էղիս:

Ես էլ էլա՛, խաց կերա, իմ ծին խեծա, գացի: Գացի ճամբախ, մեկ հուշի՛րիկ ոտ տվի իմ ծիու կող, ծին ձի փախցուց, չու՛մ իմ խելք էկավ վերես, ծիու գամ գավթեցի, մեկ էլ տեսա՛՝ մեկ սարի՛մ գլուխի ծին կանավ:

Ես ոչ գիտեմ՝ ի՞նչ սար ա էն տեղ, օր իմ ծին կանավ: Ես էլ մտածեցի, ասի. «Իմ ծին ձի շատ ա հանե՛ճ պիրեր, տանճամ, ետ էրթամ, թալան ետ ա մնացեր»:

Էլա՛, մինչև հիրիկուն կամաց-կամաց ետ տանցա, թալան չըտեսա:

Ըսպասեցի մինչև խըլխուն, չու՛մ կեսավուր: Նորեն թալան էկավ իմ հանե՛ճ: Տեսա, օր հիսուն խատ ծիավոր, թալան տըված էնոց հանե՛ճ, կառնեն, կը գան:

Ես էլ կանչեցի էտ մարթերուն, ասի. - Էտա թալան կեսն տըվեք ձի, կեսն էլ ծե:

Էտ մարթեր հեչ ծե՛մ չըխանին:

Անգամ էլ կանչեցի, ասի. - Էտա թալան էրկու փայ ձի, փայը՛մ ծե:

Էտոնք էլը՛մ ծեն չխանին:

Անգամ մ՛էլ ասի. - Իրեք փայ ձի, փայը՛մ ծե:

Կանչելու պես էտոնց մեչեն մեկ տաս խատ ծիավոր չուկվան, քչեցին վըր ձի:

Ես էլա՛, ասի իմ ծին տանե՛մ դեն, պերե՛մ դեն, տաքըյցուցե՛մ, օր կռվի մտնե՛մ:

Ծին էնու գլուխի էգար իմ սրտին, պոչն էլ էթալ իմ գլըխուն, ես էլ չէր էրևեր վեր ծիուն:

Պըռվանք կռվու, ես տասն էլ ճանթեցի:

Մյուսներն էլ էկան իմ վերեն:

Կռվանք, մեկ սահաթից ետ տաս-քսան խատ մ՛էլ ճանթեցի, մյուսներ փախան, ազատվան:

Ես էլ թալան տըվի իմ հանե՛ճ, առի, էկա աղի տուն:

Էն ճանթըված մարթիրու ծիանք, զենքեր, ինչ օր կարցա՛ առի, էկա խետ:

Աղեն հալուղ ճանապարհով էր գացե, մե ռաստ չէկավ:

Աղեն տանցավ, էկավ տուն:

Խառցեցին, թե՛ Էսա թալան տանցուցող վո՞ն ա էղեր:

Ասին. - Քու մըսաֆըրն ա էղեր, գացեր, թալան տանցուցեր:

Աղեն էնոր կընգան ասավ. - Ընչի՞ ճամխեցիր մեր մըսաֆըր թալանի հետևեն, թե էնոր վնաս մ՛էղեր, յան գարկըվեր, յան բրինդար էղեր, տու՛ւ ի՞նչըխ տ՛ազատվեր իմ ծեռնեն:

Կնիկ ասավ. - Երիտասարդ ջրիել մ՛ա, ես չըկարցա գավթեր, էլա՛վ, էկավ:

- Դե՛, կանչեք մեր էլի ռըսպիք, թըխ գան:

Կանչեցին, էնոց ռըսպիք էկան, վարանի մեչ նըստան:

Խարըրնեց աղեն ռըսպիներուն. - Էսա մըսաֆըրին ի՞նչ նվեր տանք:

Ըն մեկ ըխթիյար ասավ. - Աղա՛, թե տու՛ւ հընդունես, ես գիտեմ՝ էնու նվերն ի՞նչ ա:

Ասավ. - Իհարկե, ես ծե պերեր եմ, օր պա՛ մ՛ասեք: Ի՞նչ ասեք, ես կընդունեմ:

Ասավ. - Էնոր նվեր քու ախչիկ պիտ օր տանք:

Աղեն ասավ. - Իմ ախչիկեն կըսուրը՛մ կա, թե չէ ես խարիր ախչիկ կուրբան կենե՛մ էնոր:

Ասավ. - Աղա՛, քու ախչիկ կըսուրն ի՞նչ ա: Քու ախչիկ կըսուր չունի: Տու՛ մեկ տիր ասեր ես՝ տը տամ իմ ախպիր լաճուն: Քու ախպիր լաճն էլ ծըռեր ա Էսա էրկու տարի, ընգեր ա սարեր: Վով գա՛ ուզա՛, տու՛ կասես, թե կըսուր կա իմ ախչիկեն: Քու ախչիկ կըսուր չունի:

Աղեն էլ ասաց. - Օր տու՛ք հարմար կը տիսնաք, ես էլ կը տամ:

Էլան, ախչիկ փըսակեցին վեր ձի:

Աղեն տաս խատ երիտասարդ էտուր ձի ընգեր, հըմեն օր կերթամ, նեճիր կենե՛մ, կը գան: Իմ գոքանչ, իմ աներ, իմ աներ տըղեկներ ընցկուն ձի կը սիրին, օր ես գյեր ճանապարհի կես, կը գյեն իմ հանե՛ճ:

Ըն մեկ օր էկանք, մարթ չէկավ իմ հանե՛ճ իմ աներոչ խըղից:

Ես էլ իմ ընգերներուն ասի. - Իմ աներոչ տուն խիվանդ չըկե՞ր, հեսօր մեր հանե՛ճ մարթ չէկավ:

Ընգերներ ասին. - Չէ՛, մարթ հիվանդ չըկեր:

Էկանք վարանի մեջ, օր տեսա իմ աներ, իմ զոքանջ նստած են, գլխերը կախած են: Իշկեցի վարանի մեկէլ կուշտ, թե՛ մեկ չոլախ մարթըմ, էնու ջանտակ էնպես սև, էնոր գլխիս խընջ կողովըմ, էնու ջանտակ արընթըթախ, մինակ փոսթըմ կապեր գո՞ գո՞ք, նըստեր էտա տեղ, էնոր գլխիս տըրեր իմ կընգան ծընգան վերեն:

Ես էլ օր տեսա, ձի ասաց. - Յա՛, Մա՛ննցոց աղի փեսեն տո՞ւ ես, օր էկեր ես, իմ նշանածն առեր ես:

Ու էթող, վարանից տո՞ւս ընգավ:

Աղեն էլ ասաց. - Ես կասեր՝ իմ ախջըկան էրըմ կա, տո՞ւ կասե՞ր՝ չէ՛: Դե՛ էկե՞ք, էսա չոլախի ծեռնից ազատե՞ք:

Աղեն էլավ, ոըսպիք կանչեց, էպեր:

Ասաց. - էկեք ճանապարըմ կընդեք, չոլախ թողեր, գացեր ա տո՞ւս, քանի չէկեր:

Էնոնքյն էլ ասին. - Աղա՛, թե քյե մեկ լավ ծի՛ն կա, մեկն էլ քո՞ւ փեսին կա: Պե՛ր քո՞ւ ախջիկ, քո՞ւ փեսեն խեծո՞ւ, ճամխա՛, թըխ էրթան:

Աղեն էլավ, լավ ծի՛ն էպեր, ուր ախջիկ խեծավ, ես էլ իմ խեծա՛:

Ինգանք ճանապարհին, էկանք հախալըներու վերեն, ես էլ ասի. - Ըստեղ քիչ խանգստանանք:

Ընտեղ ծիանք թողինք արծըցին, մենք էլ նըստանք, խաց-մաց կերանք: Մեկ էլ տեսանք՝ չոլախ էնտեխեն էկավ:

Չոլախ օր էկավ, մենք էլանք, ծիանք խեծանք, օր տը փախենք:

Էկավ, մե մոտացավ, չըկարողացանք փախինք, ծեռնեն պըռծինք: Ես էլ տանցա, իմ ճակ քաշեցի, վեց խա տանանջան գարկեցի, ոչինչ օգուտ չէրաց, էկավ իմ խեստ:

Ես էլ տանցա, իմ ոըմ տըրի մեջ իմ ծիու էրկու ականջ: Ռըմ տըրի մեջ էնոր սրտին, քանի իմ ուժն էր, գարկի, օգուտ չէրաց: Պըռնեց, իմ ոըմ կոտրեց: Ես էլ ծիու տանցուցի, տը փախեր, խասավ էտևանց, իմ ծիու պոչ պըռնեց: Ծեռ էթալ, ձի ծիուց էպեր տակ: Չի խտիր գյետին, իմ ծեռքեր կապեց, ձի տը սպաներ, իմ կնիկ չէթող: Իմ ոտներն էլ կապեց, ձի էթող էնտեղ, առավ իմ կնիկ, գլընաց:

Խովիվ մ'երևաց էնտեխեն, կանչեցի խովիվու, ասի. - Արի՛, իմ ծեռքեր, իմ ոտներ հարծըրա՛:

Խովիվ էկավ, իմ ոտներ, իմ ծեռքեր հարծըրեց:

Խովիվ ասավ. - Էնոր մենակ աչքերուդ դըր կը դիպի, թե չէ՛ հո՞ւրուտ տեղ օգուտ չէներ:

Ես էլ ասի. - Խովիվ, էնի գլընաց ախըր, ապա էնու տեղ ո՞ր տեղն ա, դո՞ր կը մնա:

Խովիվ ասաց. - Էնի ծուռ ա, էրկու տարի ա՛ ընգեր ա սարեր, էնա՛ մեշի մեջ կը մնա:

Ես էլա՛, գացի մեշի մեջ, տեսա, օր իմ կնիկ նըստեր էր, էնի ուր գլըխիս տըրեր էր վեր կընգան ծընգան, քըններ էր: Կնիկ ձի ծեռով էրաց, թե՛ մի՛ գար:

Ես էլ կընգան իշմար էրի, թե՛ ծեն մը խաներ, ես գան էնու մոտ:

Ես գացի, կոճըմ տըրի գյետին, էնու գլըխիս տըրի վըր կոճին: Պիրի, էրկու շիշ տըրի կրակ, կարմըրցուցի, էտ շըշեր տըվի իմ սրտին, տըրի էնոր էրկու աչիչ վըրեն, ընգան վերեն: Ինչքան իմ ուժն էր, ձի թողի վեր շըշին, շըշեր աչքեր ծակեցին, մտան կոճի մեջ: Էն բոռաց, քաշեց մեկ շիշ, էգար, տիպավ իմ գլըխիս: Եսա էն յարեն ա, օր կը մնա չու՛մ էսօր: Ծաղըրպան՛, էսա էն յարեն ա: Ես ընգեր եմ էն տեղ մինչև հիրիկվան: Իմ կնիկ իմ գլըխիս քավեր էր, կապեր էր: Յիրիկուն հիշարցա, առա իմ կնիկ, էկա: Մինչև ես էկա, իմ խեր աղութնից էցկած ին գյեղացիք: Ծաղըրպան՛, ես էկեր եմ մեր գյեղ, իմ խեր նորեն տըրեր եմ աղութնի վերեն, էսա աղուն պերեր եմ, ըստեղ կաղամ, օր հօրեն խարիր մարթ կը գան իմ տեսութեն: Տո՞ւ ընչի՞ տո՞ւս չըք պաներ:

Ծաղըրպան ասավ. - Ես իրեք մարթ չուգեցին պանալ:

Էնոնք էլ ասին. - Մենք հախու տո՞ւս չըպացինք:

Մարթ ծեն չէխան: Առավ ուր աղուն, գլընաց տուն:





38. ՊԸԼՈՒՋ ԿԱՍ ՊԱՌՎՈ ԼԱՅ

Կեր, չըկեր պառավըմ կեր, ուր լաճ: Ան պառավ շատ շըխար էր, գատ չըկեր անունց, անու լաճու անուն Պըլուզ էր: Անու լաճն էլ տայիմ կերթեր, նեճիր կաներ, անով կապրեն:

Օրըմ գընաց սար վե, խատուկ ջանտակըմ տեսավ, ջաննավար էր, գատնու խիտ կը պըսպըղեր, անու մուրթ լիւս կը տեր:

Ան պառվուն էլ գատ չըկեր, մուրթըմ կեր, չախրակըմ կեր: Անու լաճն էլ գընաց, գատ գատ մորթից, իպը տուն:

Մեր էսաց. - Տիւ ի՞նչըխ պիրիր ըզնա:

Պըլուզ էսաց. - Մարե՛, գացիր իմ նեճիր, էլ չըմ արիր, մընակ նարիկ կընդիր իմ, պիրիր իմ:

Մեր կըսը. - Պան չըկա, նեճիր չըկա, գարար չանը, մի չըխ ճըրագ չըկեր, նարիկ ոըհաթը, գիշիր լիւս կը տա, չախրակ կը մանիմ:

Շատ կը մնա, քիչ կը մնա՝ պառավն էլ ուր խանար գիշիր-ցերեկ չախրակ կը մանը, օրըմ գեղը գըզիր կը գատ, գան կը կանչը, ուր տանը ռեսը տուն վերկու խամար: Օրն մըթընշիղ կիլնը, գըզիր կը տեսնա, օր պատմ լիւս կը տա, տեն կիրիշկը, տեն կիրիշկը, չըգըտնա մըհա ի՞նչ լիւս կը տա, ֆեհըմ չանը՝ իրիշկը վար փեթկին:

Նա տես, տեն կիրիշկը, կը տեսնա, ուր վար փեթկին մուրթըմ կա, ատ մուրթըն ը, ուր պառավը տուն անցկում լիւսցիրը:

Կերթա թագավորը մոտ, կըսը. - Թագավոր ապրած կենաս, գընա՛, տիս՝ ինչըխ պառվու տուն մուրթըմ կա, անցկում լիւս կը տա, ուր տաս լամբա ջորով կանա անցկում լիւս տա: Ան չըլայեղ պառվո մըղարին, ան կը վայելը քիւ հօղին:

Թագավորն էլ կըսը. - Շո՛ւտ, կանչեցե՛ք պառվո լաճուն, բերե՛ք:

Կերթան կը տան պառվո տըռան, պառավ կըսին. - Պըլուզ հո՞ւր ը, թագավոր կը կանչը:

Պառավն էլ կըսը. - Պըլուզ գացիր նեճիր, էվարին նեճիրից ինչ գատ, կըսիմ թըղ գատ:

Պառավ գագամ խընտացեր էր, ան սըբըր չըր անը մըհա էվարին Պըլուզ հիփ տը գեր:

Էվարին Պըլուզ ինչ կը գատ տուն, պառավ ուրախ-ուրախ կը վազը, կերթա հիրճիվ, կըսը. - Որդը՛, մըհա գընա՛ թագավոր ինչ կըսը, քի կը կանչը:

Պըլուզն էլ բանից բե խապար կը լազը, թագավորը սարեն կերթա:

Թագավոր կըսը. - Պըլու՛զ, իս լսիր իմ՝ ձի տուն մուրթըմ կա, ուր գիշիր լիւս կը տա, շուտ գընա՛, պի՛ ըստա:

Պըլուզն էլ նախաջացավ, գընաց, ըզմուրթ իպը:

ժամանակըմ ընցավ վերեն, օրըմ վուզիր էսաց թագավորին. - Թագավոր ապրած կենաս, մըկա քիւ հօղեն խորոտ ը, լա տալ պատմ պակաս ը մոտեն:

Թագավորն էլ խարցնից էսաց. - Ան ի՞նչ ը:

Վուզիրն էլ էսաց. - Ան ֆիլը վուսկուր, պետք ը քիւ հօղը պատիր հըմեն ֆիլը վուսկուր զարկիս, օր ան պըսպըղա, մուրթըն էլ լիւս տա:

Թագավորն էլ կըսը. - Ապա վո՞վ տի՛յա, ձի խանար պիրը:

Վուզիր էլ կըսը. - Խա՛, վուրլա՛, վով մուրթ բիրիր, ան էլ ան տը բիրը:

Թագավորն էլ կըսը. - Դե շուտ կանչեցե՛ք պառվո լաճուն, բերե՛ք ըստա:

Կերթան, կը կանչին ըզպառվո լաճուն, կամին, կը գան:

Թագավորն էլ կըսը. - Դե՛, Պըլու՛զ, յան կը գատ, անցկում ֆիլը վուսկուր կը բիրիս, ուր իմ հօղը պատ հըմեն ծածկը, յան հա հա քիւ վիզ կը կըտրիմ:

Պըլուզն էլ կըսը. - Թագավոր ապրած կենաս, մուրթ վար խատուկ ջաննավարին էր, մուրթիցը, բիրը, իս ի՞նչըխ տերթամ ֆիլ ըսպանիմ, յան կընտընիմ, ֆիլի վուսկուր բիրիմ:

Կըսը. - Ի՞նչըխ կը բիրիս, բի՛: Ի՞նչըխ ան մուրթ բիրիր, ան էլ

անցկուն առ, բի՛, կը բիրիս, շո՛ւտ բի, չը՛ս բիրը, քիւ վիզ կը տամ
զանիլ:

Պըլուզն էլ մանդտեն կանը, կը գա տուն:

Մերն էլ կըսը. - Պըլու՛զ, վըրե՞ մանդտեն արիր իս, էլմէլ ի՞նչ
իլիր ը:

Ան էլ կըսը. - Հալ - քեֆիաթ կը խարցընիս, թագա՛վոր ծի կը-
սը՝ պընենավե տը յաս, ֆիլը վուսկուր բիրիս:

Պառավն էլ կըսը. - Գընա՛, թագա՛վորին սա՛ քառսուն պեռ
աղը պանիր, քառսուն պեռ թըխուկ խաց, հըմեն էլ վուզըը քը-
սու, թըխ տան քի, տիւ արը ըստա՛:

Պըլուզն էլ կիլնը, կերթա մա թագա՛վոր, կըսը. - Թագա՛վոր
ապրած կենաս, քառսուն պեռ աղը աղը պանիր, քառսուն պեռ
թըխուկ խաց, հըմեն վուզըը քըսու, իս էրթամ բիրիմ, մեկ ասեղ
թագա՛վորը քըսու իլնը, չըբիրվը:

Կառնը քառսուն պեռ աղը պանիր, քառսուն պեռ էլ թըխուկ
խաց, կերթա մա ուր մեր:

Մերն անու շիրաթ կանը, կըսը. - Առ ատ քառսուն պեռ խաց,
քառսուն պեռ աղը պանիր, տա՛ր, փըռը՝ մա ֆըլան տաշտին,
խավքիր տը թափին, ուտին, տըսին քի՛՝ քիւ մըրազ ի՞նչ ը, տիւ
սա՛ իմ մըրազ գա չը, անոնք էլմէլ տըսին՝ քիւ մըրազ ի՞նչ ը, տիւ
էլմէլ սա՛ գա չը: Անոնց ճիւղ քի փառըմ կը տա, քի տըսը՝ ինչ
գախ նեղն ընկնիս, փառ տաս կըրակ, իս քի տը խասնիմ:

Ան մեկէլ օր Պըլուզ կիլնը, ուր մոր սածտիր հըմեն կանը,
կերթա ճիւղ խավքու փառ կառնը, կըգա տուն:

Թագա՛վորն էլ ուր կիմանա Պըլուզ իկիր ը, մարդ կը հորող-
կը, Պըլուզ կը տանը ուր մոտ, կըսը. - Պիրի՞ր:

Ան էլ կըսը. - Թագա՛վոր ապրած կենաս, ապա՛ իս տիւրի՞ց
տը բիրիմ:

Թագա՛վորն էլ կըսը. - Յա՛ն պիրիր, յա՛ն քիւ վիզ կը տամ
զարկիլ:

Ան էլ լալեկեն կերթա տուն:

Մեր կըսը. - Կըրե՞ կըլաս:

Ան էլ կըսը. - Մարե՛, իս չը լամ, վո՞վ լա, հալ - կըսեն ընցնա
յը:

Պառավն էլ կըսը. - Որդը՛, Աստված ողորմած ը, տիւ արը՛,
քընը՛ չուր խըլիսուն, Աստված տալիլը:

Խըլիսուն Աստըծո բարը լուս ինչ կը բացվը վա՛ր հա՛վթե
տիվ մըլաթի՛ն²¹, պառավ կըսը. - Իլը՛, գընա՛ թագա՛վորը սարեն,
սա՛ կուզեն քառսուն պեռ աղ, հըմեն վուզըը քըսու, վուր փը-
շու՛մ թագա՛վորը քըսու իլնը, ալ չիլնը, ֆիլը վուսկուր չը-
բիրվը:

Պըլուզն էլ կերթա, ուր մոր ուզածտիր կը բիրը:

Մերն էլ կըսը. - Տա՛ր նա ֆըլան սար ցանը, խավքու փառ
տո՛ւ կըրակ, քանի՛մ էրունք - թռչունք կա, հըմեն տը պահրավին:
Առաջից գաղ ցանիս, ֆըլիր հըմեն տը գան, թափին վա՛ր աղին,
ինչ ատ աղ պըրծնին, հըմեն ծարավ տը խատնին, խավքիր
անունց մըսիր զըմեն տ՛ուտին, կը մընա վուսկուր մընակ, տիւ էլ
քիւ քառսուն պեռներ ֆըլը վուսկուրով կը պանաս, կը գա:

Պըլուզն էլ անկախ հինը կիլը, ուր մոր սածը տարզ կերթա
մա թագա՛վոր, կըսը. - Թագա՛վոր ապրած կենաս, տո՛ւ ծի
քառսուն պեռ աղ, հըմեն վուզըը քըսու, իս յամ, քիւ ուզած բիրիմ,
վուր վուզըը քըսու չիլնը, չիլնը:

Կառնը քառսուն պեռ աղ, կերթա ուր մոր սած սար, ատ աղ
հըմեն կը փըռը ատե, ինքըն էլ կը պաղկըվը հերի՛մ տակ:

Պո՛մ կը մընա, չըմընա, կըտիրըմ ֆիլ ան կընարեն կը գան,
կը պահրավին վա՛ր աղին: Կուտին, կուտին, ալ ծարվուն չըն կա-
րա դիմանա, զըմեն էլ կը խատնին:

Պըլուզն էլ խավքու փառ կը տա կըրակ, քանի՛մ թիվավուր
կա վա՛ր տիւնին, ախշըրքին, հըմեն կը թափին վա՛ր ատ լեշիրուն,
միս, կաշին հըմեն կուտին, կը մընա վուսկուր:

Պառվու լաճն էլ կիլնը, ուր քառսուն պեռ կը բանա, կը
տաննա տուն: Կուսկըրքիր հըմեն կը տանը, թագա՛վորին թասլիմ
կանը:

Վուզիր կը տեսնա, վուր պառվու լաճ էլըմ սաղ - սըլամաթ
տանցավ տուն, կըսկըծու փաթլամիշ կիլնը, կըսը. - Ապա ի՞նչըխ
անիմ՝ ան պառվու լաճ կուրսըսցիմ:

ժամանակըմ վերա կընցնը, օրըմ վուզիր կըսը. - Ապա քիւ
հոդեն շատ խորոտ ը, հա՛մ ֆըլը վուսկուր կա, հա՛մ պըսպըղուն
մուրթ, լա՛ տա՛լ պա՛ն պակաս ը, պա՛նասան ծարիկ օր էլներ քի
հոդեն, քանց մըկա էլ խորոտ տ՛էլներ:

²¹ Յոթանասուն ազգի վրա (Ծ.Բ.):

Թագավոր կըսը. - Ապա ի՞նչըխ անիմ, մըկա վո՞վ տը պիրը:

Վուզիր կըսը. - Խա՛, վուըլա, պըսպըղուն մուրթ, ֆըլը վուսկուր վով պիրիր, ան էլ ան տը պիրը:

Վուզիր կանստըմե ըզՊըլուզ կանխուն տիրըմ տեղըմ կօրողկեր, ուր կորսընցըցեր հինը էրթեր: Անու ալ պըհա՛ր չըպըռնը, օր պառվո լաճ օրավուր կը տուվանթուրներ, թագավորն էլ գանխուն՝ հիսուն, վաթսուն վուսկը կը տեր անու հադիա:

Ան էլ գիշիր-ցերեկ մանիւզա կաներ՝ մըհա ի՞նչըխ անը, անու խամար էլ տիրըմ գան հորողկից ֆըլը վուսկուր բիրիլու, մըկա էլ կը հորողկը պանասան ծաղիկ բիրիլու:

Դաննանք վար Պըլուզին:

Թագավոր գան կը կանչը, կըսը. - Դու տ՛երթաս, պանասան ծաղիկ բիրիս:

Պըլուզ կըսը. - Ախըր իս տուրո՞ւց տը բիրիմ, թագավոր ապրա՛ծ կենաս:

Ան էլ կըսը. - Հո՛ւստ կը բիրիս, բի, շաբանթըմ քի մուլաթ, բիրիր՝ բիրիր, չըբիրիր՝ քու վիզ գանիլ կը տամ:

Պառվո լաճն էլ շատ հինը գարը ուր թագավոր վնգ գա ուր մոտեն, լա բոշբանասա, թագավոր կըսը. - Մըքսն չըկա, ուզիս, չուզիս, տը յաս, բիրիս:

Ան էլ մաղտեն արուկ կը տառնա տուն, մեր կը խանրցը. - Որդը՛, քի ի՞նչ իլիր ը, տու էնէլ մաղտեն արիր իս:

Պըլուզն էլ կըսը. - Հալ - քեֆիաթ ընցնա յը, թագավոր պանասան ծաղիկ կուզը:

Մերն էլ կըսը. - Խան մ՛անը, տու գըռնա՛, չուր խըլիսուն քընը՛, խըլիսուն Աստված օղորմած ը:

Խըլիսուն ինչ աղոթրան կը բանցը, պառավ կիլը, լաճուն կըսը. - Գըռնա՛ մա թագավոր, սա՛ քենե կուզիմ քառսուն տիկ գինը, քառսուն ոխչըրը տըմակ՝ հըմեն վուզըրը քըսու:

Ան էլ գըռնաց մա թագավոր, էսաց. - Թագավոր՝ ապրած կենաս, քենե կուզիմ քառսուն տիկ գինը, քառսուն ոխչըրը տըմակ, ուր մեկ խակը քըսու իլը՛ չիլը, հըմեն վուզըրը քըսու տ՛իլը, յան չէ՛ չըմ կանա բիրը:

Առից քառսուն տիկ գինը, քառսուն ոխչըրը տըմակ, իրը մա ուր մեր:

Մեր էսաց. - Որդը՛, ա՛ռ անտունք, տար խա քիկ, խավքու փառ տու կըրակ, ան տանիլը տը տեսնա:

Առից անտունք, գըռնաց տաշտի՛մ մեջ, խավքու փառ իտու կըրակ, քանի մ՛երունք - թչունք կեր, հըմեն պահրավան հանտե: Խարցնից անհունք՝ մա ծի վո՞վ պանասան ծաղկը սալըխ կը տա: Մեկն էլ սալըխ չի տա, ան ճուլ խավքն էլ ուր թիվքիր էնէլ թափ իտու, քանը աղկատ խավքըմ կեր, ան էլ իրը: Վուր հըրճըն տիր չըն կանրցած էկած, անունց մոտեն էլ խարցնիցին, անունքն էլ սալըխ չըտվին:

Ճուլ խավք մեկ մեկ խարցնից, էսաց. - Ալ խավք կա՞ մա տունին:

Խանըվուր խավքըմ իրը անու հիրճիվ, էսաց. - Յոթ ծովու կղզու մեջ խավքըմ կա, քանց ան ճուլ խավք ալ չըկա, թի ան պանասան ծաղկը սալըխ տա:

Անկանխ հինը ճուլ խավք տաստուր իտու էլըմ խավքու, օր էրթան, գան ծովու խավք տընին վար ուրինց թիվքիրուն, բիրին:

Շատ գանցին, քիչ գանցին, շատ ծովիր, ցամաքտիր ընցան, շատ թանա էրկըրքիր տեսան, չուր գանցին յոթ ծովու մեջ կընդան գան խավք: Հալ - հանվալ պանտեցին անու, տըրին վար ուրինց թիվքիրուն, առին բիրին մա ան մեկէլ խավքիր:

Պառվո լաճ անու խարցնից, էսաց. - Պանասան ծաղկը սալըխ չը՞ս իտա, մըհա ուր մանլաթա կա, էրթանք բիրինք:

Ան էլ ըսկընա անու ջըհապ իտու, էսաց. - Իս ան տարին տալ նուր մեկ տարվան ծագ էր, օրըմ յա իմ մոր վար կղզու մ վե, մըռակ ան տարին իմ պանասան ծաղիկ տիսիր, ան օրվընե ալ իս պանասան ծաղիկ չըմ տիսիր: Ան օրվընե ընցիրը ինսուն տարը, ալ իս անտվե չըմ գանցիր, ալ չըմ գըռնա՛ մըկա ան ծաղկից կա, յան չըկա:

Տաստուր իտու ան մեկէլ խավքիրուն, հըմեն գանցին, մընաց ինք՝ Պըլուզ մըռակ:

Ան էլ էսաց. - Շուտ հագըրը քառսուն տիկ գինը, քառսուն ոխչըրը տըմակ, ուր քի տանիմ ան ախշարք:

Պըլուզի մը ռանգին, շուտ իպը քառսուն տիկ գինը, քառսուն ոխչըրը տըմակ, նըստավ վար խավքու թիվին, բանցրանցավ:

Խավքն էլ էսաց. - Քանը տիրոն կանին կվռտ, տըմակըն թալ իմ բերան, տիկըն գինը շուռ տու վերա:

Անկու՛մ բանցրանցան, ուր ալ պառվո լաճ չըր կանա արի-վուն տիմանա, խավքուն էսաց. - Խավք, Աստո՛ն սիրուն իլնը, շուտ ձի իչու տակ, իս վանվա:

Խավքն էլ էսաց. - Մըկա օր իջնին, իս էլ, տիւ էլ տը ընկ-նինք ծով:

- Պըլու՛զ,- էսաց, տիւնեն քու աչիչ քանի՞մ կերևա:

Պըլուզ էսաց. - Քանց կալըն:

Բանցրանցան, բանցրանցան, պառվո լաճ էլմէլ էսաց. - Աստո՛ն սիրուն, ձի իչո՛ւ, իս վանվա:

Խավք էսաց. - Տալ էրկիր քու աչիչ քանի՞կ կերևա:

Ան էլ էսաց. - Քանց մազըն:

Էլմէլ բանցրանցան, գանգամ բանցրանցան, խավք Պըլուզին էսաց. - Էրկիր քու աչիչ քանի՞մ կերևա:

Ան էլ էսաց. - Յանն-հանն կերևա:

Յանեն տըրիւն օր խավք կվռտ կաներ, պառվո լաճ տըմա-կըն կը թալեր խավքու բերան, տիկըն գինը շուռ կը տեր վերա:

Էլմէլ շատ, քիչ բանցրանցան, Պըլուզ էսաց. - Աստո՛ն սի-րուն, ձի իչու տակ:

Խավք էսաց. - Էրկիր քանի՞մ կերևա քու աչիչ:

Էսաց. - Ալ գանտ չըն ըխը: Էրկինք, գետինք էլավ ծով:

Խավք փըշու մ'էլ բանցրանցավ, տորիս դար արավ, իրը տակ: Խավք իջավ, գանգամ իջավ, անցկու՛մ, վուր տորիս Պըլուզ տեսավ ան էրկիր՝ անունք տի՛լնին: Ուրախութենեն անու ձեռնեն գանու՛մ տըմակ փըրթընավ, ընկավ ծով:

Խավքն էլ քանը կվռտըն կաներ, ան տըմակըն, տիկըն գինը կը լըցներ անու բերան: Յըտըն տիր ուր խավք արավ կվռտ, ան էլ ուր անոթուն տանակ էթալ, ուր ճուռ կըտորից, էթալ խավքու բերան, տիկըն գինը շուռ իտու վերա:

Գանգամ էլ իլան, խասան ծովու պըռուկ, նըստան հանտե, փըշու՛մ խանգստանցան, ռըհաթան, դորիս խավք էսաց. - Պըլու՛զ, տիւ իլը՛, գըլնա՛, չուր իս գան:

Պըլուզ էսաց. - Տիւ գըլնա՛, չուր իս փըշու՛մ էլ ռըհաթին, նուր գան:

Խավքն էլ էսաց. - Գըլնա՛ վա՛ր նըհան կուլութին, քի խանար պալանան ծաղիկ քաղը:

Ան էլ էլավ, վուր տը յեր, չըկարցավ, խավքն էսաց. - Վուր տիւ ան միս թալցիր իմ բերան, իս գըլտցա, վուր ան իսնը միս էր, իս չուր մըկա չըր գըտնա, թը իսնը միս ացկու՛մ խամեղ էր, թե չէ չուր մըկա իս վա՛ր ախշըրին թու մարդ չըր թըղիր:

Պըլուզը ճըռան միս ան պախեր էր ուր լեզվը տակ, էխան, իտը ուր տեղ, Պըլուզին էսաց. - Իմ մոտեն փառըն քեշը, քըսը վերա, տը ժըրը:

Պըլուզ խավքու մոտեն փառըն քեշից, քըսից վա՛ր ուր պըրին, հանտան հինը անցկու՛մ էլավ, վուր ալ թու մարդ չըր ըսը, թի անու ճուռ մորե իլիր ը պըրին: Դորիս խավք, պառվու լաճ էրկուսն էլ գանցին վա՛ր ատ հավուզ կուլութնին, գուրինք թըլցին մա՛ ատ հավուզ կուլութնը ջըրին, էրկուսն էլ էլան տըսնըչուրս տարվան ջըհել:

Շատ չըհերկընցցինք, հանտե Պըլուզ էլավ, ուր խանար բոլ բոլ պալանան ծաղիկ քանից, խեծավ վա՛ր ատ խավքու թիվ-քիրուն, ըզծով ընցավ, ինչ իկին, խասան ծովու պըռուկ, խավք էսաց. - Իմ մոտեն փառըն քեշը՛, հիփ տաս կըրակ, իս քի խաս-նին:

Պըլուզ խավքու մոտեն փառըն քեշից, իտը ուր ջըզտան, առից ուր պալանան ծաղկըտիր, գըլնաց մա՛ թագավոր:

Յըմեն տըրիւն, ուր պառվո լաճ պա՛ն կը բերեր թագավորին, թագավոր ճիւզ հաղիե՛մ կը տեր անու, հաստիր քանց հըմեն տիրն էլ գան հավիլ փանու արավ, հորոզկից ուր տուն:

Վուզիր կըսկըծու փաթլանիչ կելներ: Նախանձից չըր գըտ-նա՛ ինչըխ աներ, օր պառվո լաճ վուրնտըրկներ հինը էրթեր: Ան տայիմ ուր միտ վե կըսեր. «Ինչըխ պառվու լաճ ընցնեն տոլվաթուրնա, իս ընցնեն աղքատանամ, ինչըխ թագավոր անու ընցնեն պատիվ պըռնը, անու հաղիա տա, ան էրթա թագավորը խամար թավուր թավուր պանիր բիրը, իս քանը էրթամ, թագա-վորը հիրճիվ անպատիվ իլնին»:

Ատարգ փելըն ընցավ, վերաչուր օրըն վուզիր էլմէլ էսաց. - Թագավոր ապրած կենաս, պիրոզ պընպարնք իլնը քու հոդեն, թու պակսութին չըկա, մընակ քու հոդին պակաս մնացիր ը Չըլ Չըլֆա Ձեռնը՛ Պապե Ֆըրընգը ախչիկ:

Կըսը. - Ապա վո՞վ տը բիրը, վո՞վ չըբիրը:

Ան էլ կըսը. - Վո՞վ ըզմուրթ բիրիր ը, վո՞վ ըզֆըլը վուսկուր բիրիր ը, վո՞վ ըզպալասան ծաղիկ բիրիր ը, ան էլ էն տը պիրը:

Կըսը. - Դե՛հ, շուտ կանչեցեք պառվո լաճ Պըլուզ, բերե՛ք ըստա:

Կերթան, ըզՊըլուզ կը բիրին:

Թագավորն էլ կըսը. - Դե՛, Պըլու՛զ, քենե կուզիմ Չըլ Չըլֆա Ձեռինը՝ Պապե Ֆըրընզը ախչիկ, տիւ բիրիս:

Կըսը. - Թագավոր ապրած կենաս, իս ի՞նչըխ տը բիրին: Անոնք սարե են, անուկը ծուրե են, անուկը կը ճարվեր, իս ի՞նչ գըտիմ Չըլ Չըլֆա Ձեռինը՝ Պապե Ֆըրընզը ախչիկ տիւրն ը, ան մամլաքաթ տիւրն ը, իս ի՞նչըխ տը յամ անու հիտիվ:

Կըսը. - Քի ըպը, քի չըպը, պընենավե տը բիրիս, չըբիրիս՝ քիւ վիզ տը տամ կըտրիլ:

Ան էլ ձեռքիր կը տընը ծուց, լալելեն կը գա մա մեր: Մոր քըսա կանը:

Մեր կըսը. - Մոր տուն քընը՝ չուր խըլխուն, խըլխուն Աստված ողորմած ը:

Կը մընա չուր խըլխուն, խըլխուն մեր կըսը. - Գընա՛ մա թագավոր, սա՛ ձի կըպը քառսուն ջըհել՝ հըմեն մեկ տարեկան, քառսուն էլ մեծ մարդ՝ քառսուն էլ մեկ պոյը, անուկը հըմենանց նըմուշն էլ մեկ մեկը թաղիթ, անուկը խալավքիթ, անուկը ինչ կա ինչ չկա՝ մեկ մեկը նման, քառսուն խատ խալվուր մարդ՝ հըմեն մեկ տարեկան, հըմեն մեկ պաժով, հըմեն մեկ թաղիթ իրիտով, հըմեն մեկ թաղիթ խալվով, մեկ թաղիթ ձեռք, ախըր անուկը ինչ կա, ինչ չկա՝ մեկ թաղիթ իւնը, ձի կըպը քառսուն խատ գոռնաչը, քառսուն խատ նաղաչը, ձի կըպը քառսուն պեռ էմակ՝ նա հըմեն էլ վուզըրը քըսու:

Պըլուզ կիւնը, կերթա մա թագավոր, նա պանիր զըմեն կուզը, կըսը. - Վուր մեկ բան խալկը քըսու իւնը, չըբիրվը:

Հըմեն կը ճարին, կը բիրին, Պըլուզ ատ հըմեն կառնը, կը գա մա ուր մեր: Անու մեր չխտ անու շիրաթ արեր էր, թը ան ի՞նչ տա՛նը:

Պըլուզ ատ հըմեն կառնը, կը յա Չըլ Չըլֆա Ձեռինը՝ Պապե Ֆըրընզը ախչկան սարից սըհաթվա՛մ ճամբախ գատըն հան-

տե կը կայնը: Հատե հըմեն կը բռնին մեմեկու ձեռ, կը խաղան, կուրախանան, ուրից խամար քեֆ-ուրախություն կանին:

Տեսնողքիր, էկող-գացողքիր չըն կըտընա՞ ինչ կասայ ը, կը հալըրնան, կըրակն, ինչ իլիր՝ նարոնք ընցնա քեֆ կանին:

Թագավորը ճիւղ ախչիկ կըսը. - Կակո՛, կը տեսնա՞ս, հըմեն կը յան թամաչա, տաստուր տու, իս էլ էրթամ թամաչա:

Թագավոր կըսը. - Օր կուզիս, տիւ էլ գընա՛, լա սըհաթըմ օր մընա, գա:

Ախչիկ կըսը. - Տը յամ, տալ սըհաթըմ չըթումու՛միր՝ էլըմ տը յամ:

Կիւնը, կերթա, լա սըհաթըմ չէ, յոթ օր կը մընա հատե, անու խալ նուրը իկիր, կըսը. - Տը լագիմ էրթամ, իմ խեր վար ձի չալ-կախը:

Կը գա տուն, խեր կըսը. - Տիւ կըսեր սըհաթըմ մընա, տը գամ, նա վըրե՞ յոթ օր կա՛ տիւ չըս իկիր:

Կըսը. - Խա՛, վուրլա՛, կակո՛, անցկում անուշ էր իմ խալ, տալ սըհաթըմ չըր թումու՛միր, իս էլ լագիցը, սիցը էրթամ, քանը սըհաթ չըթումու՛միրը:

Պըստիկ ախչիկ կը լը, կըսը. - Կակո՛, իս էլ յամ թամաչա:

Թագավոր կըսը. - Համա հանեջուց թամաչա արա:

Ախչիկ կըսը. - Կը խի՞ս՝ տիւ գան կուզիս, ըզի չըս ուզը, ան գընաց սըհաթըմ մընաց, իս յամ, կես սըհաթ մընամ:

Ան էլ կըսը. - Դե՛, տիւ էլ իլը, գընա՛:

Ախչիկ կիւնը, կերթա հանտե, օրըմ, էրկու կը մընա, Պըլուզը մարդիր կիմանան, ուր ատ ախչիկ Պապե Ֆըրընզը ախչիկն ը:

Պըլուզ ախչիկ կառնը, կը փախը, անու մարդիրն էլ հըմեն մեկ կընարե՛մ վե կը փախին, օր խալկ ֆեհըմ չըտանին, թե պապը ախչիկ պառվո լաճն ը տարիր:

Պըլուզ կառնը Չըլ Չըլֆա Ձեռին՝ Պապե Ֆըրընզը ախչիկ, իրից օրվա ճամբախ սըհաթվա մեջ կերթա, ատ թագավորը սընորից կիւնը տիւս, հատե կը նստին, ջուր կը խմին, կը ռը-հաթին, համեն մեկ կընարըմ կը թավալին, Պըլուզն էլ ուր գըլ-լիխ կը տընը ատ ախչկան կիւք, կը քընը:

Ան ախչիկ կը լա, անու արտըսունք կը կաթը վար Պըլուզը իրիսին, Պըլուզ կակախը, կըսը. - Հա՛, ախչիկ, վըրե՞ կը լաս,

թի տալ քու խոր տուն ապով կը լաս, անդ ի՛նչ, իս քի տանգ-
նիմ քու խոր տուն, թի մըկա ի՞նչ ի՛լիր:

Ախչիկ կըսը. - Չէ, վուըլա՛, իս իմ խոր տուն ապով չըմ իլա,
իս քի ապով տարտ կանիմ, մըկա իմ խոր մարդիր տը գան,
ըգքի սպանիմ:


Պըլուզ առից գատ ախչիկ, իպը, տարապ թագավորին
թասլիմ արապ:

Խա ճանխին Պըլուզ ախչկան սեր էր, օր գան թագավորը
խանար կը տաներ, ախչիկն էլ անու սեր էր, օր օրըմ ըգՊըլուզ
գախտիկ տեղըմ տը պախեր, ինչ ի՛նչ գիշիր, խալը տա, թագա-
վոր քնը, թըղ ըգթագավոր սպանը, ինք ի՛նչ թագավոր:

Օրմ թի երկու վերա կընցնը, Չըլ Չըլֆա Չեռին՝ Պապե Ֆը-
րընգը ախչիկ, ըգՊըլուզ մա սարին խորտո գախտիկ տեղըմ կը
պախը: Չուր գիշիր Պըլուզ կի՛նը, ըգթագավոր կը սպանը, ինք
կը նստը վար թախթին:

Խըլխուսն կի՛նին վե, տալալ կը տան կանչիլ, կըսը. - Վո՛վ
իմ թըրը տակ վե կընցնը, թըղ ընցնը, վո՛վ ինչ չընցնը, անու վիզ
տը տամ գարկիլ:

Նուր յոթ օր, յոթ գիշիր խարսնիս կանին, անուըք կը խաս-
նին ուրինց մըրագին, տալ էլ խասնեք ձի մըրագին:



39. ԿՅՈՒՄ ԳԸԼԽԻԿ

Կեր, չըկեր թագավորըմ կեր ու կնիկ, երկուսն էլ խալվուր
կի՛նին, լա անգավակ:

Թագավոր շատ գըտնական մարտիրու մոտ կերթա, շատ
խեթիմքիրու կը խարցնը, ինչ կանը, չանը, ախըր թու ալաջ չըկըն-
տնը, օր անու գավակ ի՛նչ: Ինչ անու մըչալ կը կըտորը, կը գըտ-
նա, ուր ալ անու գավակ չի՛նը, օրըմ հիրիկվան տեղ կը կանչը
ըգվուզիր կըսը. «Չալ-քեֆիաթ ընցնա յը, քանը վուր ձի գավակ
չի՛նը, հասօր, ինչ հըմեն կը քնին, քաղաք կը խալանա, իս, տալ
ի՛նինք, գիշիրով երթանք, տալեն վե կան կը գանք, մըհա տեղըմ,
ալաջըմ չը՛նք կընտընը, օր ձի տըղա ի՛նչ»:

Վուզիր հանտան հինը կի՛նը, հըմեն պան հազըր - հելըստա
կանը, թագավորին կը կանչը գիշիրով, ձիանք կը խեծնին, կը
յան:

Շատ կը յան, քիչ կը յան, վար հաղբիւրի՛մ կը նըստին: Գա-
գան հանտե կը ռըհաթին, խաց կուտին, ճուր կը խմին, կը տես-
նան՝ ան կընարեն վե դավրեչըմ կը գա: Կը գա, բարիվ կը տան,
բարիվ կառնին:

Դավրեչըն կըսը. - Թագավոր ապրած կենաս, մա խըլխու-
մախառ տալ դո՛ւր տը յաս, քալ տանտ, ցալ ի՞նչ ը:

Կըսը. - Տալ ի՞նչ գինաս, օր իս թագավոր իմ:

Կըսը. - Չա՛յ, հա՛յ, իս գըտիմ՝ տալ թագավոր իս, իս գըտիմ՝
տալ վըրե՞ կը յաս տալեն վե էլ:

Կըսը. - Իս վըրե՞ կը յամ տալեն վե:

Դավրեշ կըսը. - Խա՛, վուրլա՛, քիւ տա՛րտ էն ը, ուր քի տըղա չիլնը, տիւ, քիւ վուզիր կը յեք տիւնեն վե, վուր ճարըմ անեք:

Կըսը. - Իս գատ գըտիմ, իս գըտիմ էլ թի ինչը քիւ տա՛րտիս տա՛րման: Լա՛ իս քի շանց կը տամ մեկ կա՛վլով, տիւ ձի ահո՛ արա, վուր իմ կա՛վլ կը պախիս, իս քի քիւ մըրազին կը խասցիմ:

Թագա՛վոր ահո՛ կանը, վուր դա՛վրեշ մընակ զինք ուր մըրազին խասցը, մեկէլ ինչ վուր մըրազ կանը, ինք անսուք տը կա՛տարը:

Դավրեշն էլ թագա՛վորին իրիք խնձոր կը տա, կըսը. - Տա՛ր, կես տիւ կի, կես տու քիւ կընկան, Աստըծո՛ հրամանով ընչ ին ամիս, ին օր, ին սըհա՛ք թու՛մումը, քի լա՛ծըմ տ՛իլնը: Չուր իրիք տարին ըմընա, քի իրիք տըղա տ՛իլնը, լա՛ ան պզտիկ լա՛ծ տիւ տաս ձիկ:

Թագա՛վորն էլ անու խոսք կը տա, վուր Աստ՛ված ուր ըսա՛ծին լըսը, ինք ուր պզտիկ լա՛ծ տը տա դա՛վրեշին:

Հանտա՛մ հինը դա՛վրեշ անու՛նց հիրճիվեն կը կորսվը, անու՛նք էլ ուրախ-ուրախ կը տա՛ռնան տուն: Տալ արիվ չըտաքցիր խորոտ, ինչ անու՛նք խասան քաղաք: Մարտ խա՛քար չէր, թը թագա՛վոր քաղքից իկիր տիւս: Մընակ անու սարը մարտիր խըլխուն ինչ կիլնին վե, կերթան թագա՛վորին աչք տը տան, կը խի՛ն՝ մարտ չըկա հանտե: Փըշու՛ն հըլվըլուց կիյնը թագա՛վորը քոշկ ու սարը մեք, թագա՛վոր հանտա՛մ հինը կը խասնը քոշկ, կըսը. - Խա՛, իս, վուզիր գացեր ենք նեճիր, իկինք:

Թագա՛վոր կը կիսը ատ իրիք խնձոր, կես ինք կուտը, կես ուր կընիկ, չուր ին ամիս, ին օր, ին սըհա՛ք կը մնա, ի՛նչըխ դա՛վրեշ սեր էր, անու լա՛ծըմ էլա՛վ:

Էրկու տարը էլ կը մնա, հա՛մեն տարին թագա՛վորին լա՛ծըմ կիլնը:

Թագա՛վորը լա՛ծիր կը ճուճանան, հասակին կը խասնին, էլ չէ անու պզտիկ լա՛ծ օրե օր կը ճուճաներ, ան էլ էրկու տարվան մեք անցկում ճուճացեր էր, օր յա՛լա՛ յասըթար:

Ատ պզտիկ լա՛ծ հըմեն օր կերթեր խա՛ ճըճիրուն ճանե կը խաղեր, ինչ ուր ճանիր կը տարվեր, չալափե՛՛մ կը գաներ անու, ինչ ուր ճանիր տարվեր էր, էլըմ կը խըլեր: Քաղաք սաղ թագա՛վորից գա՛զընտ կաներ, կանըժեր թագա՛վորին, ուր թա՛մբի՛մ չըր անը վա՛ր ատ լա՛ծուն, հա՛մեն օր անու՛նց ճըճիր կը տըլիեր:

Ժանանակըմ վերա ընցավ, չուր օրըմ դա՛վրեշ իրը: Ատ լա՛ծու խեր, մեր գագա՛մ ուրախացեր էր, ուր ալ դա՛վրեշ չըր իգա ուրինց լա՛ծու հիտիվ, ընչ ըզդա՛վրեշ տեսան, անու՛նց լեղին կըտրավ հա՛խու:

Դա՛վրեշ էսաց. - Դորիս իմ լա՛ծ տվեք, տանիմ:

Խեր, մեր խա՛քար արին մեկ, սիցին՝ մեր լա՛ծու շուրիք խագցինք նախորտը լա՛ծ, նախորտը լա՛ծուն խագցինք մի լա՛ծ, նախորտը լա՛ծ տանք, տանը:

Թագա՛վորը լա՛ծու խա՛լա՛վքիր խագցին ըզնախորտը լա՛ծ, բիրին, թա՛սլիմ ըզդա՛վրեշ արին, սիցին՝ առ քիւ լա՛ծ:

Դա՛վրեշ էսաց. - Չէ՛, նարիկ իմ լա՛ծ չը, մըկա կուզիմ ձե՛նե իմ լա՛ծ:

Թագա՛վոր, ուր կնիկ սիցին. - Քիւ մուր քիւ գըլուխ, իլը՛, գըլնա՛ մա՛ ճըճիրուն, քիւ լա՛ծ կընտը՛, տա՛ր:

Դա՛վրեշն էլ էլա՛վ, գընաց մա՛ ճըճիրուն կան իրը, կան իրը, ուր լա՛ծ կընտավ, տարավ:

Տարավ մա՛ վերվերը սարի՛՛մ, հերի՛՛մ տիւռ կայնացցուց, ջախցը քա՛րըմ կեր վա՛ր մըղարը տըռան, ջախցը քա՛ր էթալ տեն, ըզլա՛ծ տարավ, մըտուց ատ մըղարեն վե:

Դա՛վրեշ հըմեն օր կերթեր նեճիր, նեճիր կաներ, կը տա՛ռներ, թագա՛վորը լա՛ծն էլ կիրակուլ կեփեր, կը հա՛զրեր, չուր դա՛վրեշ սարեն կը գեր:

Փելըմ ընցավ, ան հըմեն օր ինչ պարապ կը մըներ, կը մըտներ հօղեք, կան կը գեր: Դա՛վրեշ անու քառսունից մեկ պակաս բալնիս էր տվիր, սեր էր՝ ինչ պարապ կիլնիս, գըլնա՛՛, ատ հօղեք քի խամար կան արը: Օրըմ ինչ կերթա, տեղըմ կը տեսնա, մա՛նգա՛նեն օլորած, պառավըմ խանած հառիք:

Ատ պառավ էսաց. - Ա՛խ, խուզուտ, արիվուտ մեռնիմ, մըհա՛ ձի ըստից փըրկը:

Կըսը. - Դա՛վրեշ ինչ կը քընը, տիւ անու մուրուս մա՛ժմա՛ժը, չուր ան կը քընը: Ընչ կը քընը, տիւ մկրատով վուրչիկըմ անու մուրուսը միջի բալնիսը կըտըրը: Լա՛ խորոտ անցկում ա՛րա, օր ան չալափը, օր ան ալափը, ձի էլ տ՛ուտը, քի էլ: Ընչ բալնիս կը կըտրիս, ռըհա՛ք պա՛ռկը քիւ տեղ չուր խըլխուն, ըզդա՛վրեշ կերթա նեճիր, տիւ շուտըմ բալնիս պի, նա՛ մա՛նգա՛նեն քակը, ձի ըստից

անգատը, խընդրաց փախսինք, երթանք, թի չէ, վուըլա՛, մի երկուսին էլ անլ անգատութիւն չըկա:

Թանգանվորը լաճ կիլնը, կերթա տուն, կիրանկուլ կիփը, տուն պեկ կը բիրը, չուր հիրիկուն դանվրեշ կը գան տուն:

Նանչ ընթրիս կուտին, կը պըրծնին, դանվրեշ գըլիխ կը տընը վանր ուր ծընկան, կը մանծանծը: Ինչ դանվրեշը կը քընը, վուը-շիկըն անու մուրուս կը փըրճըճը, չուր պզտիկ բանիսըն կը կըն-տընը, ինչ կը կընտընը, մկրատ վուըշիկն կը թանլը, անու բանիս կը կըտըրը, ուսուլովըն անու գըլիխ կը տընը գետին, ինքըն էլ կիլնը, կը պառկը, լան անու կուք փըշուր չըտանը:

Կը մնա չուր խըլիսուն, դանվրեշ կիլնը, կերթա նեճիր, լաճն էլ կը վազը ման պառա՛վ, մանգանեն կը թուլցըցը, ըզպառա՛վ կի-ճուըն:

Պառա՛վ լաճուն կըսը. - Ա՛ռ խա քի հեսան, սանտըր, արծը-լին, աղ, խելը:

Դոր կառնը ըզլաճ, կը տանը, հոդի՛մ տուը կը բանա, կը տեսնա հանտե ճուընը ուսկը կը թանլը, մեկ արծաթ:

Ա՛ն լաճուն կըսը. - Քու գըլիխ տո՛ւ հիրճիվ արծըթին:

Կը տա հիրճիվ արծըթին:

Դոր կըսը. - Տո՛ւ հիրճիվ ուսկուն:

Կը տա հիրճիվ ուսկուն, կիլնը ուսկըջրուկ, խուրջըն ուսկը կը լըցին, կերթան: Հանեն մեկ ձի՛մ կը խեճնին, յանբանք կը փախին:

Չուր էվարման տոր կը փախին, պառա՛վ կըսը. - Աստճո՛ւ սիրուն, մըհան իրի՛շկը, ան քյաֆիր չիրը՞: Մենք վից ոտնա էլ մոռ-ցիր ինք, ան քյաֆիր երկու տաղկիկը մեջ մի տը պըռնը:

Դառնանք վանր դանվրեշին:

Դանվրեշ էվարին ընչ նեճրից կը տաննա տուն, կը տեսնա ջախցը քանր վանր մըղարը բերնին չը, հանտան հինը թըրըխկուցըն կը տինը անու փուր:

Կըսը. - Վուըլա՛, ման հըմեն ան պառվու քանրանանք ը:

Կերթա, կիրիշկը պառվու հոդեն, կը տեսնա պառա՛վ հանդե չը, կերթա թանվըխանեն՝ երկու աղեկ ձիանք հանդե չին: Կերթա ան մեկէլ թանվըխանեն, կը տեսնա, ուր վից ոտնա էլ հանդե:

Դանվրեշ գանգան կուրախանա, կըսը. - Հան՛, պառա՛վ, տու քու խուզին տո՛ւր տը փըրթուցիս իմ ձեռնեն: Հան՛, վից ոտնա՛, լուպըն գանրը տամ քի, չուր հի՞փ պառվուն տը խասցցիս:

Կըսը. - Երկու օր:

Կըսը. - Հան՛, հան՛, քի ըսպանիցիր, երկու լուպ գանրը տամ քի, տու հի՞փ ըզի պառվուն տը խասցիս:

Կըսը. - Օրըն:

Կըսը. - Հան՛, հան՛, քի ըսպանիցիր, կես ֆըտրա տամ, հի՞փ ըզի տը խասցիս պառվուն:

Կըսը. - Չուր ճաշուն:

Կըսը. - Հան՛, հան՛, քի ըսպանիցիր, ֆըտրե՛մ տամ, հի՞փ տը խասցիս պառվուն:

Կըսը. - Չուր ոտըն տընիս ոըքեպ, տանլ ան մեկէլ չըս խաս-ցիր վանր ան մեկէլ ոըքեպին, տը խասցըցիմ պառվուն:

Պառա՛վ լաճուն կըսը. - Մըհան իրի՛շկը՝ ան քյաֆիր ըզմի տը բըռնը:

Լաճ կիրիշկը, կըսը. - Գու գատըն ինչըխ մըժիկ կը գան:

Կըսը. - Հեսան թանլ:

Լաճ մանչ հեսան կը թանլը, սար, ճուր սաղ կիլնը սուլաբ: Դանվրեշե մը ռանկին, վանր ուր իշուն մեկ կընգը, մեկ կիլնը, ինք ուր էլ հըմեն կիլնին արընթըթանխ:

Դանվրեշն էլ տեպրան-տեպրան, վուըշիկ-վուըշիկ անտ սուլա-բից կանգատը, կիլնը տուս:

Պառա՛վ լաճուն կըսը. - Հան՛, տըղա՛, մեկ իրի՛շկը՝ ման ան քյաֆիրը ձեռնեն անգատուն չըկա՞, մըհան չերևա՞:

Լաճ կիրիշկը, կըսը. - Գու գատըն գանտանանց ինչըխ մըժիկ կը գան:

Դանվրեշ ընչ սուլաբից կանգատը, սերբանդութին կանը, մուխիր կը կընտըն, ուր էշ կը թանվանացը ման անտ մուխրին, իշու բըրինքտիր կը ժըրը, կիլնը մորեն մեկ, էլմէլ կը քըշը: Ինչ կանր-խասան կիլնը պառվուն, պառա՛վ կըսը՝ սանտըր թանլ: Ինչ սանտըր կը թանլը, սար, ճուր կիլնը մերը, դանվրեշ, ուր էշ կը ընգնին ման մերուն: Հան՛ տան, հան՛ տան՝ բոմ կանգանան ման թըփնից, բոմ անտուց կը փըրթընին, կընգընին ման մեկէլ թըփնիր: Հըմեն բըրին-տար կիլնին, ախըր տեսե, անտուց կանգատըին:

Ընչ կիւնին տուս, էլմէլ հանդե մուխիր կիւնը, էշ էլըմ կը թա-
վալը մեչ, կը քապրը:

Դաւրեշն էլ էլըմ ուր վից ոտնա ծին կը խեծնը, կը քըշը,
կանրխասս կիւնը, պառավ կըսը. - Մըհա իրի՛շկը, ան քյաֆիր մի
չըխասա՞վ:

Լաճ կիրիշկը, կըսը. - Գո պա մ' ինչըխ կըրակ կը գա թախ
մի:

Պառավն էլ կըսը. - Արծըլին թալ:

Նանչ արծըլին կը թալը, սար, ծաւր հըմեն կիւնը արծըլին
բերան:

Դաւրեշ ուր էշ խեծիր, համա կը տա մա ատ արծըլաց-
տիրուն: Իշու ոտքիր, քանտակ, դաւրեշը ուտքիր, հըմեն կիւնին
արուն, արընթթախ: Դե ըստա, դե ադե, վուըլա՛, ախըր դաւրեշ
թը ադեկ, թը ավիր, ատուց էլ կազատվը: Ընչ կիւնը տուս, կըս-
կըծու ալ չըռըհաթը էլ, համա անցկում արընծապաղ հալով էլմէլ
կը քըշը:

Պառավ կըսը. - Մըհա իրի՛շկը, վուըլա՛, մի տը բըռնը ան
անխուզին:

Լաճ կիրիշկը, կըսը. - Վուըլա՛, գո գատըմ ինչըխ գյուլլա կը
գա:

Պառավ կըսը. - Դե շուտ, աղ թալ:

Նանչ աղ կը թալը, սար, ծաւր կիւնը աղ:

Դաւրեշ, ուր էշ ատ արընթթախ հալով կը տան մա ատ
աղին: Դաւրեշը ոտքիր կը կըսկըտան, դաւրեշ առուծը պես կը
բռա՛ թու-չալ-մըչալ չըկա: Ախըր վուըլիկըմ վուըլիկ հանդուց
կիւնին տուս:

Դաւրեշ կանրխասս կիւնը պառվուն, լաճուն կըսը. - Ալ
տա՞ր խուզին տ'ազատեք:

Պառավն էլ լաճուն կըսը. - Խելին թալ:

Լաճ խելին կը թալը, սար, ծաւր կիւնը ծով:

Պառավ, դաւրեշը լաճ կը մնան ծովով տեն: Դաւրեշ կը
մնա ծովով դես: Դաւրեշն էլ կը տա մա ատ ծովուն անուց հի-
տիվ: Բըռնը տիր դաւրեշ կիւնը, կը սըկվը, տիր մ'էլ կերթա, հա
կերթա, չուր մըկա էլ կերթա, տալ չըխասիր ծովու տակ:

Նուր պառավ, ատ լաճ պուըմ վա՛ր մեմեկը կը խընտանան,
կը նըստին, կը ռըհաթին, դոր կիւնին, ուր հըմեն մեկ էրթա խա ուր
ծամխին:

Պառավ ծիր երկուսըն էլ կը տա ատ լաճուն, խուրջիմ ուս-
կին էլ, պառավ կը գորը վա՛ր ատ լաճուն կըսը. - Ուզիս, չուզիս,
նա ուսկիքըն էլ տ'առնիս քի, ծի ազատիցիր, իս պառավ իմ, ի՞նչ
տ'անիմ փարա, ծի չախըրկի՛մ գին տո՛ւ, բաս ը:

Լաճ կըսը. - Ատ խուրջի ա՛ռ քի:

Ախըր ինչըխ կանը, չըկանա վա՛ր ատ պառվուն: Ան էլ
լուպըմ ուսկը կը տա պառվուն: Խազար տիր մեկ մեկէլը խալալ
կանին, համեն մեկ կերթա խա ուր քեֆին:

Պառավ կը յա խա ուր հալին, ատ լաճըն էլ շատ կերթա, քիչ
կերթա, կերթա, մա վերվերը սարին կիւնը տուս:

Յանդե անու խովիվըմ ռաստ կը գա, կըսը. - Յա՛, խովի՛վ,
ոխչարըմ խասա՞վ ծի, քանը՞ կուրուշ:

Կըսը. - Վուըլա՛, գա չէ, կես ուսկը:

Կը խանը, ուսկի՛մ կը տա գան, խովիվ կերթա, ոխչարըմ կը
բիրը, թասլիմ կանը:

Ան էլ կը մուրթը, միս, կաշին հըմեն կը տա խովըվոչ:

Կըսը. - Ատ միս, կաշին կը տանիս տուն, թը քիւ աղեն կը
խարցընը, կըսը՝ ի՞նչ իլիր ատ ոխչըրին, կըսիս՝ գըլիւրվալ,
խատավ, իս էլ մուրթիցը, միս, կաշին առը, բիրը:

Խովիվ ուսկին կամը, ուրախութենե շաշ կիւնը, կըսը. -
Յա՛ ջան, միս, կաշին էլ իտու ծի, իս տը տանիմ իմ աղին շանք
տամ, սիմ՝ վուըլա, գըլիւրվալ, իս էլ վիզ կըտըրցը, բիրը:

Խովիվ կը մնա հանտե, թագավորը լաճ գագան կը գատնա-
նա, գատ կյուն խորոտըմ կը տարտկը, կը կուրծը ուր գըլիւր:

Պառավ ընչ անու գըլիւր տվեր էր հիրծիվ ուսկուն, արծը-
թին, անու նըմուշ էրեգական պես կը բըրըղկըտեր, ան էլ կատմե
ատ կյուն կը կուրծը ուր գըլիւր, խարցնողին կըսը. - Խա՛, վուը-
լա՛, իս չաչալ իմ:

Մուղտարըմ կերթա, կերթա քաղաքըմ կիւնը տուս, հիրիկու
կիւնը, հըմեն մարտ կիւնը, կը թըղնը ուր տուքան, ուր բանըկործ,
կերթա տուն: Վով կը խասը, կըսը. «Մըկա դարկախքիր տը
գանի, տու վըրե՞ քի խամար տեղըմ չըս կընտընը»:

Ան էլ շատ կան կը գան, տաւր կը յա, չըկանա ուր տեղըմ կընտընը, կը յա, սարի՛մ մոտ կը կայնը, ան սարեն թագա՛վորին կիւնը, թագա՛վորը մշակտիր ընչ չաչալեն կը տեսնան, կիմանան ուր կարիք ը, կըսին. - Հա՛, Չաչալի՛կ, գընա՛, քի տեղըմ կընտը, քանը խալկ հըմեն չըքընած, տաւ մնաս տաւս:

Չաչալիկ կըսը. - Ապա իս մարտ չըմ ճանչընա, ծի տեղըմ տվեք չուր խըլխուսն, խըլխուսն կիւնիմ, կերթամ խա՛ իմ հալին:

Թագա՛վորը սայիս կըսը. - Արը մա՛ ծի չուր խըլխուսն:

Ուր միտ վե կըսը. - Տանիմ խա՛ ծի, ծիանըտիրու տեղ կավլը չուր խըլխուսն, բա՛ս ը:

Սայիս ըգՉաչալիկ կը բիրը մա՛ ինք, չուր խըլխուսն կը տեսնա Չաչալիկ քանի՞ մաշխատողը, խըլխուսն Չաչալկեն կըսը. - Խա՛, վուըլա՛, կա՛ց մա ծիկ, մի խանար կաշխատինք, իմ թային իս էլ, տաւ էլ խընդրաց կուտինք:

Կյում գըլխիկն էլ կըսը. - Իմ ուզածն էլ էտ ը:

Փելըմ կը մընա անտը, չուր գաւրուն կը բացվը:

Բոստընչին Չաչալկեն կը ճանչըներ մըհա՛ ան ինչ աշխատող տըղա էր, ան էլ Չաչալկեն էսաց. - Արը երթանք մա՛ ծի, իս, տաւ իմ ջըրեն խընդրաց կուտինք, իս չըխոմ խալվուրցիր իմ, ալ չըմ կանա իմ ջըրեն հըմեն ուտը:

Կյում գըլխիկն էլ գընաց մա՛ ծիապան, էսաց. - Չի տաստուր տը տաս, իս յամ խա բոստընչուն:

Ան էլ կըսը. - Աստված խա՛ քի իւնը, դորիս իս կանամ ծիանք շախիմ չուր աշուն, աշուն տաւ քաւ պան կը պըրծնիս, խընդրաց ըգծիր տը շախինք:

Կյում գըլխիկն էլ գընաց խա՛ բոստընչուն, կաշխատեր:

Փելըմ մնաց, բոստընչին էսաց. - Որդը՛, իս խալվուրցիր իմ, ալ չըմ կանա քընը մա՛ բոստան, տաւ կաց մոտ, իս յամ տուն, փըշու՛մ ռըհաթիմ չուր խըլխուսն:

Ժանանակըմ բոստընչին կերթեր տուն, Չաչալիկ կը մներ մա՛ բոստան: Մնաց օրըմ, գիշիր ժանանակ, ինչ հըմեն քըներ են, Կյում գըլխիկ ուր ջըգտընեն իրիք մագ էխան. մեկ սիվ էր, մեկ կարմիր, մեկ բոգ: Ատ իրիք մագիր պառավն էր տվիր, սեր էր՝ հանկախ ուր տաւ ուզիս ուր մագ տաս կըրակ, ան գունով ծիմ տը գա՛, քաւ հիրծիվ կայնը:

Չաչալիկ հանկախ հինը կյում ուր գըլխուց էթալ դեն, անու նըմուշ ինչըխ երեգակ բըրըղկըտաց, սիվ մագ հիտու կըրակ հանկախ հինը, սիվ ծիմ՝ սիվ գընով, սիվ հա՛վսըրով, սիվ խալա՛վքիր, սիվ ճակիր կապուկ վերա իրը, ուր հիրծիվ կայնավ: Կյում գըլխիկե մը ռանկին, ըգծին խեծավ, անուն Աստծուն արավ, գըրնաց ան գըլխիս, իրը ան գըլխիս, մեկ տիր ընչ ծիմ էգար, թոգ, տունան իտու վար բոստընին: Խարան իւնը, տու սիս, չըխո ըստա՛ մորե գատ չըցանած:

Շուտ ատ ծիու մոտեն մագըմ քեշից, լըղաք բերնեն էխան, իթուխ, գըրնաց, ինքըն էլ ուր կյում իտը ուր գըլխիս: Գըրնաց, մըտավ ջախցը ճըրտուն վե:

Չըսի՞ս՝ Կյում գըլխիկ ընչ ուր կյում ուր գըլխուց խանիրը, անու իրիսը շանա՛վիլք գացիր, դիպիր թագա՛վորը պգտիկ ախչըկան հօղը պատ, ան էլ հաշար իլիր, իկիր հա՛ռեք, գան տիսիր, ատ պանիր հըմեն թանա՛շա արիր, ուր սերտ վար Չաչալկեն ավրիր: Թագա՛վորը ախչիկ թըղնինք ատ հալը մեք, տանանք վար բոստընչուն:

Խըլխուսն շուտ բոստընչին ընչ կը գա՛ բոստան, կը տեսնա՛ ալ անու կանա՛ծութին չըկա մա՛ բոստընին: Ուր միտ վե Հիսուս Քրիստոս կանը, կըսը. «Նա՛ պախեզին ի՞նչ էլավ, հիրիկուն հըմեն կանա՛ծ էր, խըլխուսն ընցընա իլիր»:

Կը կանչը, կըսը. - Տա Չաչալի՛կ, Չաչալի՛կ, Չաչալի՛կ:

Վուըշիկըմ կըսը. - Խա՛, ան ի՞նչ ը:

Կըսը. - Տա Աստված քաւ տուն ավրը, մա՛ տաւ հո՞ւրն իս:

Չաչալիկ կըսը. - Տա մարտըմ, ծիավորըմ չըկա՞ հանտե:

Բոստընչին կըսը. - Չէ՛, չէ՛, արը մըհա՛ ինչ իլիր ը:

Չաչալիկ կը գա՛ հանտե, կըսը. - Վուըլա՛, հալ-հա՛վալ ընցնա յը. իս քըներ էր, ինչ կես գիշիր կուտրավ, անկախա, ինչ տեսնամ՝ մա՛ պախեզին շանա՛վիլքըմ կա, իս էլ էլա, իրիշկիցը, սիցը՝ մըհա՛ ի՞նչ ը, իս էլ տեսա սիվ ծիավորըմ հանա՛ ծի կարծխանա՛ս իլիր, իս էլ շուտըմ փախա, մըտա ջախցը ճըրտուն վե: Ան ծիավոր իրը, երկու, իրիք տիր գըրնաց ան գըլխիս, իրը, խարան, գատ չիթուխ, ինչըխ տաւ քաւ պարը աչքով կըխիս: Իսըն էլ հախու մնացեր էր ճըրտուն վե չուր մըկա, ինչ տաւ իկիր:

Բոստընչին էլ կըսը. - Որդը՛, պան չըկա, փուրծանքըմ իրը վար մի, ընցավ, գըրնաց, իւը՛, էլմէլ ընկնինք խա՛ մի պանին:

Էլմէլ ուրից բոստան կը դնին, չուր երկու, իրիք շաբաթ մ'էլ կիլնը քանց հանաջ տիրն էլ խորոտ:

Շաբաթըմ էլ վերա կը ընցնը, թագավորը պատիկ ախչիկ կըսը. - Բոստընչը, վաղ տու ծի խիար մը՝ բիրը, տու, թըխ Չաչալիկ բիրը, տու խավուր իս, խեղճ իս:

Ան էլ կըսը. - Աղեկ ը:

Կը մնա, ան մեկէլ օր Չաչալիկ խիար կառնը, կը տանը թագավորը ախչկան:

Թագավորը ախչիկ անու կըսը. - Դայիմ տու խիար, պան պի ծի, մը՝ թըղնը՝ ան պիրը:

Լուպըմ ուսկը կը տա անու, կը ծամխը:

Օրըմ էլմէլ ընչ կես գիշիր կը ընցնը, Չաչալիկ էլմէլ ուր կյուժ կը գանը գետին, կարմիր ծիու մագ կը տա կըրակ: Կարմիր ծին կը գա՝ կարմիրը զընով, կարմիր ռըքեպով, կարմիր հավսըրով, կարմիր խալավքիրով, կարմիր ճակ-սիլախով:

Կիլնը, կը խեծնը, Աստըծու անուն կը տա, երկու տիր կը գա ան գըլիխ, խարան իլնը, մարտ կըսեր՝ չըխոմ տաս տարվան խիրկ ը, ան մեկէլ տըրուժ տալ մըզեղըմ, պան մընացեր էր մա խիրկին, աս տիրն ան էլ չըկեր:

Չաչալիկ շուտըմ ուր կյուժ իտը ուր գըլիխ, ծիու գամ գըլխուց առից վե, կապից վերա, մոտեն մագըմ քեշից, իտը ուր ջըզտան, էլըմ ըզծին իթուխ, գըլնաց: Ինքըն էլ գըլնաց, քըռե՛մ բըլուց վար ուր չուր խըլխուժ:

Խըլխուժ շուտ, բոստընչին ընչ տը գեր, բոստընին աչք տը տեր, ի՞նչ կը խը՝ ավար-խավար պերած վար բոստընին:

Կը գա, մա բոստընին կան կը գա, կըսը. - Չաչալիկ, Չաչալիկ:

Չաչալիկ չըկա, մարտ չըկա, էլմէլ կը պոռա. - Չաչալիկ, Չաչալիկ, Չաչալիկ:

Չաչալիկըն էլ վուըշիկ խիծուցըմ կը խանը, կըսը. - Դա՛, ան ի՞նչ ը:

Բոստընչին կըսը. - Տըղա՛, հա՛յ, Աստված քու տուն չավրը, ան հո՞ւրն իս:

Կըսը. - Խա՛, վուըլա՛, գի քըռը տակն իմ:

Նուր բոստընչին քարիր կը թալը, ըզկյուժ գըլխիկ կը խանը տու:

Կըսը. - Տա նա վո՞վ ընցնա արավ խա քի, խա նա բոստընին:

Կըսը. - Խա՛, վուըլա՛, իս քըռը մոտ թավալեր էր, մեկն էլ ակախացա, կարմիր ծիավորըմ՝ կարմիր խալավքիրով, կարմիր ճակ-սիլախով, մտավ մա բոստընին, իս էլա՛ վեր, տը փախեր, մեկ տիր ուր ծին քըշից մա պախեզին, ընչ քըշից, անու քամուց քըռեն բըլավ վար ծի: Ան պըրիշակ իպը վար մի բոստընին, ան մեկէլ տիր տալ քըռե՛մ սաղ մընացեր էր, աս տիր ան էլ հըմեն խըռ-տըպըլակ արիր:

Կըսը. - Դան չըկա, որդը՛, թըվաղկ վար մարտու կը գա: Էլմէլ կը տնիքը, տալ տարին շուտ ը:

Չաչալիկ, ուր խեր էլըմ բոստան կը տընին, հանաճվան պես կիլնը, կը կատըր:

Այամ էլ վերեն կը ընցնը, Կյուժ գըլխիկ էլըմ ընչ կես գիշիր կը կուտըր, ուր կյուժ գըլխուց կը խանը, կը թալը, ատ շանաճիլք կը գանը թագավորը սարեն: Թագավորը պատիկ ախչիկ չըխոմ գըտեր՝ մըռա հիփ Կյուժ գըլխիկ տ'իլնը, ատ խաղ խաղա, հան-տան հինը կակախեր, կէլներ թամաչա:

Չաչալիկե մը ռանկին, բոզ ծիու մագ կը տա կըրակ հանտան հինը բոզ ծիավորըմ՝ բոզ ռըքեպով, բոզ խալավքիրով, բոզ ճակ սիլախով՝ կապուկ վերա, կը գա, ուր հիրծիվ կը կայնը: Ան էլ անուն Աստծուն կանը, ծին կը տաքըր հինը, մեկ տիր գանկուն կը գարնը, ընչ կը գարնը, խարան իլնը, ալ թու մարտ գինա, թի հանդե մորե բոստան իլիր, ալ տեղն էլ քըՖշ չանը:

Չաչալիկըն էլ ուր կյուժ կը տընը ուր գըլիխ, բոզ ծիու մոտեն մագըմ կը քեշը, կը տընը ուր ջըզտան վե, կերթա երկու, իրիք արտապո գատըն, կը մըտնը մա խոտիրուն, կը պաղկվը:

Խըլխուժ ընչ բոստընչին կը գա, շաշ կիլնը, կըսը. - Աղեկ, չուր հիրիկուն էլ իմ խալ ըստա բոստան էր, ասնա բոստան խըրիշտակտիր տարան, ի՞նչ էլավ:

Կիյնը, տես, տեն կան կը գա, հա կը կանչը Չաչալիկեն, Չաչալիկ ձեն չի տա: Շատ կան կը գա, կը պոռա, կը ճըվա, կըսը՝ դո՞ւր իս, Չաչալիկ: Նուր Չաչալիկ վուըշիկ տըքուցըմ կը խանը:

Կըսը. - Ըստա իմ, բոզ ծիավորըմ չըկա՞ հատե:

Կըսը. - Չէ՛, չէ՛, մարտ չըկա, իլը՛ արը:

Նուր Չաչալիկ կիլնը, կը գա:

Կըսը. - Խա՛, վուըլա, հալ-քեֆիաթ ընցնա՛ յը. իս ծի խամար քընեք էր, մեկըն էլ բոզ ձիավորըն իրը, տը մըտնեք բոստան: Չուր իս հայիըյուն, ան մըտավ բոստան: Տալ չըր մըտիր, անու քամին ձի էթալ, իպը ըստա: Իս անցկում անջեպնելը բան չըր տիսիր: Սը-կան ան քանի՛ն կըտրիճ ը, ուր անու բըռեն ձի ընցկընեն էթալ. չըմ գինա՛ ան Սըփ Սարգիսն էր, յան Սըփ Գևորքն էր, վո՞վն էր:

Անունք էլմէլ կընգնին խա՛ ուրինց պախեզ շինիլուն, մենք տաննանք վար թագավորը պատիկ ախչկան:

Սենք չըխտ տեսանք՝ քանը տիրըմ Կյուն գըլխիկ գյեր տալս, թագավորը պատիկ ախչիկ կէլներ փանջարեն, թամաշա կաներ:

Ան անցկում սավտալու էլեր էր վար Չաչալկեն, ուր ալ չըր կանա տանամիշ տա, ատու խամար էլ օրըմ էլավ, գընաց մա՛ ուր քուրիր, էսաց. - Քուրիր, տալ գիտե՛ք ատաթը. ընչ ախչիկ ճուճա-նա, կը տան իրկան, մըկա՛ մենք էլ ճուճացիր ինք, մի հասակին խասիր ինք, մի խոր սինք՝ մի էլ տա իրկան:

Քուրիր սիցին. - Խա՛, վուըլա՛, ի՞նչըլտ անինք, ի՞նչըլտ չա-նինք:

Էսաց. - Առնինք իրիք բաշլա, մի տանկըտիր գանինք հինը, հորողկինք մի խոր դիվան, չըխտ անունք տը խանսկանան՝ մըհա՛ մի ուզիլուն ի՞նչ ը:

Էլան, իրիք բաշլա առին՝ ճուճ քուրուչ՝ խասուն-խասուն, միջնիկին՝ կես խասուն, կես ժոռ, պտղկին՝ կանաճ, ուրինց տանկըտիր գանիցին հինը, հորողկիցին ուրինց խոր դիվան:

Ընչ ատ բաշլեք տարան թագավորը դիվան, սիցին՝ նա-րունք քալ ախչըկտիր հորողկած ին, ան շաշ էլավ, չըգիցավ՝ յանե ինչ, նուր անու վուզիր էսաց. - Թագավոր ապրած կենաս, քալ ախչըկտիր կուզին կարգվին:

Թագավորն էլ տալալ խու կանչիլ, էսաց. - Քաղաք քաղքով գան, իմ սարը տակ վե ընցնին:

Ուր ախչըկտիրուն էլ մեկ մեկ խնձոր խու, էսաց. - Վի կու-զեք, գանեցե՛ք վար անու գըլխուն:

Քաղաք քաղքով էկին, թագավորը սարը տակեն մեյ մեկ ընցան: Ծուճ ախչիկ ուր խնձոր էզար վար վուզըր լաճու գըլխուն: Սիջնիկ ախչիկ՝ վար մալխո լաճու գըլխուն, մընաց պատիկ ախչիկ:

Չըմեն իկին, գանցին, թագավորը ախչիկ ուր խնձոր վար թու մարտու գըլխուն չէզար:

Թագավոր էսաց. - Ալ քաղաք մարտ կա՞:

Սիցին. - Թագավոր ապրած կենաս, ալ մարտ չըկա, մնաց Չաչալիկ, ուր խեր:

Անունցն էլ կանչիցին, Չաչալկե խեր ընցավ, ընչ Չաչալիկն էլ տը ընցներ, ուր խնձոր էզար վար անու գըլխուն:

Չաչալիկ ձեռ իտը վար գըլխուն, բոռաց. - Ա՛խ, իմ գըլխիս, ա՛խ, իմ գըլխիս:

Անու քուրիր, անու խեր, մեր հըմեն գան արին ծաղըր, սիցին. - Սիվո՛վ սիվավորվիս, ալ մարտ չըկե՞ր, տալ քալ խնձոր գանիցիր վար Չաչալկե գըլխուն:

Թագավորն էլ ուր թածա՛ փեսացտիրուն համեն մեկին սարե մ՛իտու, ուր պատիկ ախչկան էլ խարան՝ տու մ՛իտու. դե գընա՛ մա՛ քալ լուսաթըթախ իրիկ: Ախչիկն էլ նալանջացավ, էլանվ, խատ ուր իրկան գընաց, մըտավ ատ տուն:

Փելըմ մընաց, վուզըր, մալխո լաճիր, ուրինց կընկտիր հո-րողկիցին մա՛ թագավոր, համեն մեկ խորոտ ձի մ՛ուզիցին, գանցին խարսնանսերան ձիանքթուխս թըղնելու:

Կյուն գըլխիկն էլ ուր կընկան էսաց. - Իլը՛, գընա՛ մա՛ քալ խեր, թըխ ձի՛մ տա ձի, իսն էլ էրթամ խարսնանսերան:

Ախչիկն էլ գնաց մա՛ խեր, խեր էսաց. - Չի թու ձի չըկա՛ իս տամ Չաչալկեն:

Ան էլ մալուլ-մալուլ գընաց մա՛ ուր մեր, մերն էլ գընաց մա՛ թագավոր, էսաց. - Ախըր ան էլ մի ախչիկն ը, ձի մ՛էլ տու անու իրկան, թըխ ան էլ էրթա ձիանքթուխս:

Շատ գորից, թագավորն էլ նալանջացավ, էսաց. - Սեցե՛ք սայիսին, թըխ ծըրտուտ բերգիրըմ տա անու:

Չաչալիկ էլավ, ծըրտուտ բերգիր հիտիվ-հիրճիվ խեճավ, ժանգռուտ թուրըմ կապից ուր մեջք, գընաց:

Ճամխը վերա ճըժիր կը թափեն վար անու, կըտեն հիրճիվ քարը: Ընչ գանգամ կերթա, կը գատնանա, խալը կիլըր, աթուցըմ կը տա, կը գանը, ըգբերգիր կը գըլխուրը ձուրըմ վե, սիվ ձիու մազ կը տա կրակ, սիվ ձին կը գա՛ սիվ ռըքեպով, սիվ խալանվքիրով, սիվ ճակ-սիլախ կապուկ վերա: Ուր կյուն գըլխուց կը խանը, կը

տընը քարի՛մ տակ, ուր ծին կը խեծնը, ուր թուր կը կապը վար ուր, անուն Աստծուն կանը, կը յա ծիանքթուխսը մեյտան:

Թագավորը փեսեք, ընչ ծիանք կը թըղնին՝ երկու օրվա ճամխից գատըն, Չաչալիկ դար կանը, կը գա գանունը կը ընցնը, էլըմ կը տաննա, սիլե՛մ կը գանը վուզըրը լաճուն, մեկ մախտ լաճուն, կը յա: Կը յա, կը խասնը մանչ ծիւրուն, սիվ ծիու գամ բերնեն կը խանը, մազըմ մոտեն կը քեշը, կը տընը ուր ջըգտան, կը թըղնը ծին, կը յա: Էլմէ կը խեծնը ուր բերգիր, ուր կյուն կը տընը ուր գըլլիխ, ուր ժանգռուտ թուր կը կապը վար ուր, կը գա տուն:

Դաննանք վար թագավորը փեսացտիրուն:

Ընչ ատ ծիավոր համեն մեկին սիլե՛մ կը գանը, թագավորը ճուշ ախշըկտիր կըսին. - Հա՛յ, քիւ ձեռքիր կուտոր:

Պզտիկ ախշիկ կըսը. - Չէ՛, վուըլա՛, ծի իրկըտիրու ձեռքիր կուտոր:

Կըսին ճուշ ախշըկտիր. - Սիվո՛վ սիվավոր, տալ չամչընա:

Չաչալիկ անու թամպը արեր էր, օր մարտու չըսեր, օր ինք չաչալ չը, լա ատ ախշիկ չըր կանա ըզինք գավթը:

Փեսեք ինչ կը տաննան տուն, թագավոր կըսը. - Հանթուրին վի՞ մնաց:

Փեսեք կըսին. - Թագավոր ապրած կենաս, սիվ ծիավորըմ իրը, չընք գիտնա Սըփ Սարգիսն էր, վո՞վ էր, մի համեն մե կը սիլե մ՛էզար, գըլնաց:

Փելըմ մնաց, Չաչալիկ ուր կընկան էսաց. - Քիւ խոր անեծքըմ տը տամ, սա՛ ամեն:

Էսաց. - Ամեն:

Ան էլ էսաց. - Աստըծուց խընտրիր իմ՝ չուր վաղ արիվ իլնը, քանձ աստըղ երկինք ասքար գան, քիւ խոր սարը բիւլուր բըռնին:

Մընաց ան մեկէլ օր խըլխուն, ընչ Ամտված ուր պարը լուս թանկացցուց վար հավթե տիվ մըլաթին, քանձ աստըղ երկինք՝ ասքար իկին, թագավորը սարը չուրս բիւլուր բըռնիցին:

Հալ-քեֆիաթ թագավորին պատմիցին, թագավոր էսաց. - Ապա վո՞վ տը յա խա անունց կռվը:

Սիցին. Թագավոր ապրած կենաս, վո՞վ տը յա քիւ փեսեք հավիլ:

Ան էլ տանտուր իտու ուր փեսացտիրուն, էսաց. - Մըկա կուզիմ ձենե՛ չուր ճաշուն մեկ ասքար չըթըղնեք:

Համեն մեկին բըռըմ- բիւլուկ ասքար թասլիմն արավ, հորողկից կռիվ:

Կյուն գըլխիկն ուր կնիկ հորողկից մա ուր խեր, ծի մ՛ուզից, ուր ինքըն էլ էրթեր կռիվ:

Թագավորն էլ ան գեթին ուր գըլլխուց խանիլու խամար էսաց. - Ան բերգիր, ան ժանգռուտ թուր տվիր իմ անու, ալ հիւրուշ գախ չըբիրը, թասլիմ անը:

Չաչալիկն էլ էլմէլ հիտիվ-հիրճիվ խեծավ, գընաց, գագան գընաց, ընչ խալացավ, էլմէլ ուր կյուն էզար գետին, կարմիր ծիու մազ իտու կրակ: Կարմիր ծին իրը՝ կարմիր ռըքեպով, կարմիր սիլախքիրով, կարմիր խալավքիրով, հըմեն կապուկ վերա, հազըր-հելըստա: Մեկ տիր անուն Աստծուն արավ, քըլից գընաց, կռվու մեյտան կայնավ:

Կեսօր կուտրեր էր, թագավորը ասքար հըմեն թալաֆ էլեր էր, թագավորը փեսեք անցկում նեղ ընկեր են, ուր ալ չի գա սիլ:

Խարանձ իլնը կյուն գըլխիկ՝ երկու տիր գըլնաց ան գըլլիխ, իրը ան գըլլիխ, ալ շնչավոր չիթուղ:

Գացին, թագավորին սիցին. - Թագավոր ապրած կենաս, կարմիր ծիավորըմ իրը, մեկ տիր դար արավ, ինչ ասքար կեր սարը բիւլուր, մեկ տիր ճարթից, խարանձ իլնը, թը շնչավոր իթուղ:

Ընչ կռիվ վերջացավ, թագավոր կանչից ուր փեսեք, տարավ պատիվ, մընակ ըզՉաչալիկ չըկանչից:

Ժամանակըմ մընաց, թագավոր ցըռացավ կպավ: Ինչ տեղ, ինչ ալաջ արին, փարե՛մ չարավ: Թագավոր չըժրավ:

Մընաց թագավոր, քանը խելքով մարտըմ կեր մա ատ քաղքին, կանչիլ իտու, իպը, էսաց. - Մըհա տեղըմ չըն կանա անը:

Շատ տեղիր շանք տվին, հերկեն-պարակ պանիր սիցին, ան էլ բոշ բանատա ընցավ:

Դոր ատ մարտիր սիցին. - Թագավոր ապրած կենաս, ապա գըտի՞ս՝ առուժը կաթ ուտիս, տիւ տը ժրիս:

Սիցին. - Ապա վո՞վ տը յա առուժը կաթե, վո՞վ չըյա:

Սիցին. - Թագավորը փեսեք տը յան:

Անունքն էլ էլան, ուրինց ճակիր կապիցին, ուրինց ծիանք խեծան, էլան, գացին:

Շատ գացին, քիչ գացին, գացին խասան մա սարի՛մ, ալ անձեղ, ալ կռիկ, ալ թու պա՛մ չըթըղին, օր չըսպանիցին:

Կյուն գըլխիկն էլ ուր բերգիր խեծավ, ուր ժանգոուտ թուր կապից վար ուր, գյընաց: Գյընաց, խասավ խալը տեղըմ, բոզ ծիու մագ խտու կըրակ, ծին իրը՝ բոզ ոըքեպով, բոզ խալավ-քիրով, բոզ ճակ-սիլախ կապուկ վերա, հազըրուկ- հելըստա: Ան էլ շուտըմ կյուն եզար գետին, ուր բերգիր, ուր ժանգոուտ թուր ի թալ հադե:

Մազըմ էլ խտու կըրակ, ան պառավ, ընչ ըզինք անգատեր էր, իրը հանդե, էսաց. - Խուզուտ, արիվուտ կուրբան իլնիմ, քու ուզիլուն ի՞նչ ը, ուզը:

Էսաց. - Խա՛, վուըլա՛, մի թագավոր ցըռացավ կըպիր, կըսին՝ տեղ առուծը կաթը, մըկա իս չըմ գըտը, տուրո՞ւց տը բիրիմ:

Պառավն էլ կըսը. - Գյընա՛ ֆըլան տեղ, ֆըլան լըճը պըռուկ փուսըմ փուրը, տու, քու ծին մտնե՞ք մեջ, կըրճոն, պան տըվեք վար ծի, մընացե՞ք հանդե. չուր արիվ առնը: Առուծ տը գա՛, հանտե ճուր տը խըմը, ան հըրճըն տիր մարտախուտ տ'անը, տը տառ-նա, լա էլըմ տը գա՛ վար ճըրուկ, ճուր տը խըմը: Ինչ տը խըմը, տու քու նիտանեղ գար անու ճապ ոտ, ան ոտ ուռուկ ը, ընչ տու գանիս, ան փըշուս տը բոբբոռա, դոր անու ոտ տը ոըրհաթը, տըսը. - Տու վո՞վն իս, քու Աստված սիրիս, իլնիս տուս, քու ուզիլուն ի՞նչ ը, իս տը տամ:

Չաչալիկ ըզպառավ կը հորողկը խա ուր պանին, ինքըն էլ կերթա, ուր պառվու ըսածտիր անը:

Կերթա մա սարի՛մ, կը տեսնա՛ վուզըր լաճ, մալխո լաճ գի հանդե անձեղ, կռիկ կը սպանին:

Կըսը. - Պարեկանքիր, ան ի՞նչ կանեք:

Կըսին. - Խա՛, վուըլա՛, մի թագավոր ցըռացավ կըպիր, մենք էլ իկիր ինք, առուծը տըկով առուծը կաթ տանինք, ուր ժըրը:

Ան էլ կը թըղնը, կերթա պառվու սած լըճը բերան, ուր խա-մար տեղըմ կը փուրը, ինք, ուր ծին կը մտնին հինը, կըրճոն կը տան վար ուրինց, նիտանեղ կը հազըր, չուր արիվ առնիլու գախ առուծ կը գա՛:

Հանաճ մարտախուտ կառնը, կը տառնա, էլմէլ կը գա՛ վար ճըրուկ, ճուր կը խմը, ուր փըշու՛մ կը խըմը, լաճ նիտանեղ կը գանը, կը տեպնա անու բըրընին:

Առուծ ձենըմ կը խանը, յալա՛ յա՛ մատաթ, կըսը. - Ա՛խ, մա վո՞վն էր: Մըկա ընկներ իմ ձեռ, իս գան տ'աներ կըտուր-կըտուր:

Փըշու՛մ կը մնա, արուն, գըռեխ կը յա առուծը ոտնեն, կը ոըրհաթը, կըսը. - Շուճի՛կ-ջըռնիկ, տու տուս իլը, քու մըրագ ի՞նչ ը, արա՛, ահդ իլնը, իս քու ուզածն անիմ:

Ան էլ հանտան հինը կիլնը տուս, կըսը. - Խա՛, վուըլա՛, մի թագավոր ցըռացավ կըպիր, սած անու տեղ՝ առուծը տըկով առուծը կաթը, մըկա իս էլ իկիր իմ առուծը կաթե:

Առուծն էլ կըսը. - Հա՛, քու սովըցցողը բերան կուտըր, վուըլա՛, իս ահդ արիր իմ, իմ ահդ չըմ իտա գետին:

Ուր երկու ձագտիրուց մեկըն կը տա անու, կըսը. - Ա՛ռ, տա՛ր, յոթ սար ընցցու՛, մո՛ւրթը: Անցկում իլնը՝ անու ձեն չըխաս-նը իմ ականչ, վուր խասավ, քի կանիմ կըտուր-կըտուր, մեկըն էլ սարսուփըմ լվա, նուր պի, անցկում իլնը, ուր խուտ չըգա՛ մոտեն: Ուր խուտ գա՛, տու իմ ձեռնեն չըս պըրձնը:

Չաչալիկըն էլ կերթա, կը մուրթը, խորտըմ կը լվա, կը պի-րը, առուծ կը կըթը, կառնը, կը գա՛: Ընչ կը գա՛, կը տեսնա՛ տալ թագավորը փեսեք կռիկ, պան կը սպանին:

Կըսը. - Պարեկանքիր, բա՛ս ը ատ հայվընքտիր ըսպանեք, էկեք, ծի առուծը կաթ տամ:

Կը վազին, կը գան մատ ան:

Կըսը. - Ապա տու ի՞նչ տը տեք ծի, օր ծի առուծը կաթ տամ:

Կըսին. - Ինչ օր կուզիս:

Ան էլ կըսը. - Իս ծի մոտեն պա՛մ չըմ ուզը, մընակ թըղնեք՝ դաղըմ դընիմ վար ծի ճըռան:

Անունքըն էլ կըսեն. - Ի՞նչ տ'իլնը, պա՛մ չըկա, մարտ չըկա ըստա:

Ուրինց խալավքիր կը խանին, մատնըկով դաղըմ կը տընը վար անու ճըռան, մեկ վար անուր:

Ան էլ առուծը ձագու լեղին չոկ պախտեր էր, խտու անունց, էսաց. - Տալ չըկ տվիր՝ տը ժըրը:

Անունք էլ շուտ լազիցին, գացին մա թագավոր, սիցին. - Թագավոր ապրած կենաս, քու տեղ պիրիր ինք:

Ինչ տեղ տըվին թագավորին, թագավոր մեկ տըրե բատլավ: Անցկում էլավ, ուր ալ չըր կանա մուխրուցը ծակուց իլնը վե:

Մնաց եվարին, Կյուն գրլխիկ կանգնելը առուծը կաթ իտու կնիկ, տարավ թագավորին էսաց. - Առ՛քի առուծը կաթ:

Ինչըխ արավ, չարավ, չէլավ, էսաց. - Սաղիր պիրին, մըհա ինչ արին, դոր Չաչալիկ:

Ախչկան մեր շատ գորից վար թագավորին, էսաց. - Հաննա ժահր ը, լա ուր կը գորին, տու խըմը:

Թագավոր ընչ մեկ կանգնել խըմավ, գագան աղեկցավ, էսաց. - Աստըծու սիրուն, փըշու մ՛էլ հանուց բերեք ծի, ի՞նչ ը ծի ուզիլուն, իս կը տամ:

Գացին, Կյուն գրլխիկին կանչիցին, Կյուն գրլխիկ առից տիկ կաթ, իրը մա թագավորը տունին, էսաց. - Թագավոր ապրած կե- նաս, իս չըխո նա հըմեն քի խանար իմ բիրի, լա իս ալ քի կաթ չըմ իտա, չուր տու իմ մեկ խընտիրք անիս, կանտարիս:

Հանկախ հինը վուզը լաճ, մալխո լաճ հախու փետնացան:

Թագավոր էսաց. - Քու խընտիրք ի՞նչ ը, տեհ, շո՛ւտ արա:

Ան էլ էսաց. - Իմ խընտիրք պան չը, մընակ տու տու շինիս, ուր ըստից մարտ չիլը տու, բալնիս տաս ծի, իս իմ սիլուն սիմ, բաս ը:

Հանկախ հինը տու շինիցին, բալնիս տըվին ըգԿյուն գրլխիկ:

Կյուն գրլխիկ թագավորին էսաց. - Թագավոր ապրած կե- նաս, խանրանսերանին ան վո՞վն էր՝ ծիանքթուխս թըղնիլու գախ սիլե մ՛էզար քու ճուլ փեսին, մեկ միջնիկին:

Թագավոր էսաց. - Ան վո՞վ էր:

Կյուն գրլխիկ հանդամ հինը ուր կյուն գրլխուց էզար վե, էզար գետին, էլավ ջըհելըմ՝ վուր չուտիս, չըխըմիս, հինը իրիշ- կիս, ընչ անու իրիսի շանավիլք էզար ատ քիշկը-սարը պատիր, հըմեն մայիլ էլան, մընացին:

էսաց. - Թագավոր ապրած կենաս, ան իսն էր:

էլմէլ խարցնից թագավորին, էսաց. - Ան վո՞վն էր՝ կովու գախ ան հըմեն անքար թալաֆ արավ:

Թագավոր էսաց. - Վո՞վ գինա՝ Սըփ Գևորքն էր, վո՞վն էր:

էսաց. - Ան էլ իսն էր:

էլմէլ էսաց. - Թագավոր ապրած կենաս, մըհա քու փետնաց- տիրու խանավ բաց, մըհա վո՞վն ը վար անուց ճըռնիրուն նըշան տըրիր, դանիր:

Բացին տեսան, ուր անուրդ՝ երկուսը ճըռան վերեն էլ դան կա:

էսաց. - Ան էլ իսն իմ արիր:

Նուր թագավոր էսաց. - Ամա՛ն, Աստըծու սիրուն, տու քանծ ծի ճուլ, իս քանծ քի պգտիկ:

Չան կը նըստըցցեր վար ուր թախին, լա ան էսաց. - Քու թախք քի պիրոգ բըմբարաք իլնը, ծի քու թախք պետք չը:

Նուր թագավոր ուր թագավորութնը կետըն իտու անու, յոթ օր, յոթ գիշիր թագա խանրանիս արին, անուց խասան ուրինց մըրագին, տուք էլ՝ ծիր:





40. ՉՐԼ-ԲՐՍԿ

Կեր, չըկեր, թագավորը կեր, ուր լաճ:

Թագավոր կը մեռնը, լաճ կը թըղնը, կը յա դուռեն վե:

Կերթա կագան, կերթա, անու մարթըմ դեմ կառնը, կըսը.

Յա՛յ, մարթ, դո՞ւր կը յաս:

Կըսը. - Խա՛, վուըլա՛, կերթամ դուռեն վե:

Կըսը. - Չի էլ չը՞ս անը քու ընկիր:

Կըսը. - Կանիմ, վըրե՞ չըմ անը:

Կըսը. - Տու ի՞նչ կանիս:

Կըսը. - Վուըլա՛, իս երագ կը խանիմ: Քու անուն ի՞նչ կը:

Թագավորը լաճ կըսը՝ Շեր-Ալի:

Կիլնին, կերթան:

Շատ կերթան, քիչ կերթան, մարթըմ էլ անունը դեմ կառնը:

Կըսին. - Դո՞ւր տը յաս:

Կըսը. - Տը յամ դուռեն վե:

Դորիս անունը կըսը. - Ըզի չը՞ք անը ծի ընկիր:

Կըսին. - Վըրե՞ չընք անը: Լա՛ քու անուն ի՞նչ կը:

Կըսը. - Իմ անուն Պոլնաս իմ: Իս աստղը կը ճանչընամ:

Թագավորը լաճուն կըսը. - Քու անուն ի՞նչ կը:

Կըսը՝ Շեր-Ալի:

Կիլնին ընկիր, մեկտեղ կերթան, վուըզրի՛մ տուն մեկվան կիլնին:

Ան վուըզիր չուր ըզանունը պեկ կը բիրը, կը գա թագավորը դիվան:

Թագավոր կը բարկանա, կըսը. - Ապա՛ մըկա ի՞նչ դիվընը վուըխտը:

Կըսը. - Խա՛, վուըլա՛, թագավոր, վերա չըբընիս, ծի հասօր մեկվան կեր, անու խամար, հանական ա:

Կըսը. - Ան ի՞նչ մարթ եմ, վուըր չիկին իմ տուն, իկին քու տուն:

Վուըզիր էսաց. - Անունը կարիպ մարթ եմ, ի՞նչ գըտին իմ տուն վուըրնը, քուն վուըրնը:

Թագավոր էսաց. - Ան մարթիրուն կանչեցե՛ք, գա՛:

Ան մարթիրուն կանչիցին, պիրին: Չուր հանական գախ մընացին հատե, ընչ դիվան բաղլավ, հըմեն գացին, մընացին մեկընքտիր, թագավոր:

Իրիք մարթ էլ ճակ-սիլախ կապիցին վար ուրինց, կայնան վար տըռան:

Շեր-Ալին ան մարթիրուն էսաց. - Ան ի՞նչ տ՛անեք:

Սիցին. - Յալ-քըսեն ընցնա՛ յը, համեն օր ընչ մի թագավոր կը քընը, մինք ճակ-սիլախով կը կայնինք վար անու գըլխուն, չընք թըղնը վիշապ անու գարար անը:

Շեր-Ալը էսաց. - Յասօր դոր մեկընին ը:

Սիցին. - Չէ՛, հասօր մի, վաղ էլ քյի:

- Չէ՛:

- Խա՛:

Ախըր դոր տըվին Շեր-Ալուն:

Մընաց, չուր կեսգիշիր կուըտրիլու վուըխտ մեկըն էլ պատ պացվավ, ահակին վիշապըմ իրը, իրը, կաստ թագավորին արավ: Շեր-Ալին էլ ուր թուր էխան, քանը փըշու՛մ վիշապ իրը, տուս փըրտից, հըմեն փըրտից, իլից հատե:

Փըշու՛մ արուն թըռավ վար թագավորը ճակտին:

Շեր-Ալին էլ էսաց. - Ի՞նչ անիմ, ծեռնով վիրուցիմ, հըմեն տը քըսվը վար թագավորը ճակտին, թըրով վիրուցիմ, վախանամ թագավոր հաշարանա, սը՛ խա՛, վուըլա՛, նա կուզեր ծի ըսպաներ, իս ակախա:

Կը տա, կառնը, կըսը. - Վուըլա՛, իս թըրով տը վիրուցիմ, մըկա ինչ իլիր:

Ընչ թուր կը վիրուցը, թագավոր կը տեսնա, ուր Շեր-Ալ թուր խանիր, կայնիր վար ուր գըլխուն:

Հանդամ հինը ըզջալատքիր կը կանչը, կը պիրը, ուր ջալատքիր կը գան, ինչըխ կիլը՝ թագավորը աչ կընգընը թախ վիշապ, կը տեսնա վիշապ փրորտած, դիգած հատե:

Ան թագավորըն էլ ինչ ատ պան տեսավ, քրսե՛մ ընկավ ուր միտ:

«Թագավորըն կեր, էմակ էփող կը բըռներ, ընչ անու քեֆով չըն իլըն, անունց վիզ կը տեր գանիլ: Հըտըն տիր մարթըմ էլ բըռնից, ան մարթ շատ անու քեֆովն էր: Օրըմ ատ մարթ գընաց, անմախական խընծուրը ծառը ճողըմ չուրցեր էր, ատ չուր ճող կըտրից, իպը, ուր էմակ իփեր, գացին թագավորին սիցին՝ քու աչչին անմահական խընծուրը ծառ կըտրից: Թագավորըն էլ ուր ջալատքիրուն դաստուր իտու, ջալատքիր գացին, ըգան ըսպանիցին, ատ մարթըն էլ դայիմ կը գեր թագավորը միտ, անու դարտ կը գեր»:

Նուր թագավոր վար ուր մըտածածին փոշմընավ, Շեր-Ալուն էսաց. - Իմ ախչիկ չըխոմ քուըն ը, ալ ինչ կուզիս՝ ո՛ւզը:

Շեր-Ալին էսաց. - Յա ծի՛ իս չըմ առնը, լա վուըր քու ախչիկ կը տաս, տու իմ պըզտիկ ախպոր:

Թագավորը ախչիկ հար կը փըսակին վար Պոլնասին, կը մընա: Թագավոր ինչըխ կանը, Շեր-Ալին ուր խամար թու պան չանը:

Կըսը. - Վուըր ծի պան ըպեր, վըռե ծի պան չըկեր:

ԸզՊոլնաս կը թըղնին հատե, ատ էրկուս կիլնին, կերթան:

Շատ կերթան, քիչ կերթան, կերթան վուըզրի՛մ տուն կիլնին մըսաֆըր: Վուըզիր չուր անունց ընթրիս կը տա, անունց պեկ կը պիրը, կը հանագանը:

Ընչ կերթա թագավորը դիվան, թագավոր կը բարկանա, կըսը. - Նա ինչ դիվան էրթալու գախ ը, տու նուր կը գաս դիվան:

Կըսը. - Թագավոր ապրած կենաս, հասօր վերա մը՝ պըռնը, հասօր ծի մեկվան կեր:

Կըսը. - Ան ի՞նչ մեկվան են, ուըր իկին ծի տուն, չէկին իմ տուն:

Կըսը. - Հալ-քըսեն ընցնա յը, ան մարթիր հուրիչ երկրից էկած, ալ անու խամար չըգըցած քու տուն ուըրն ը, իմ տուն ուըրն ը:

Թագավոր էսաց. - Ան մարթիրուն կանչը ըստա:

Հատե դիվան կանին, չուր դիվան կեսըն կիլըն, պառավըմ կը գա վար հուըրդըսին, դիվանը մարթիրուն հըմենանց հիշունց կը տա:

Ատ պառավ յոթ քաղաք տառցուցեր էր քար, մըկա էկեր էր ատ քաղաքն էլ տ՛աներ քար:

Մընաց, անարգ վից տիր իրը վար հուըրդըսին, գըմենանց հիշունց իտու, հըտըն տըրուն ծըծղաց, էսաց. - Հա՛, հա՛, հա՛, Շեր-Ալին տեսցե՛ք, ընչ քացիր, նըստիր վըրըն պուճախ:

Պառավ ընչ ուր էսաց, մարթ ծեն չէխան: Հըտըն տիր Շեր-Ալին էլավ, վագից հիտիվ պառվուն, պառավ փախավ, չուր վար ուր մըղարը տըռան, չուտ տոռ էբաց, մըտավ հինը, տոռ շինից վար ուր: Շեր-Ալին տոռ կուտրից, գընաց, ծեռ իրը պառվո ճըտին, ուըր տը խեխտեր:

Պառավ էսաց. - Շեր-Ալ, խուըզիտ, արուվուտ կուըրբան կիլնիմ, տու ըզի մը՝ ըսպանը: Ահտ իլըն, իս դուր քու անուն լըսնամ, փախիմ:

Պառավ հա փախավ:

Շեր-Ալին գընաց, թագավորը մարթիրուն խապար իտու, էսաց. - Յոթ քաղքը մալ-ապրանք, ուսկին, արծաթ, հըմեն գի պառվու մըղարեն հինը, իս ըզպառավ տը խեխտեր, ընկավ Աստըծու բախտ, իս էլ թըղը, փախավ, գընաց:

Ինչըխ արավ, մարթ չըգըշխըցավ յեր:

Շեր-Ալին էլ մեկում վիզ պըռնից, գորով տարավ, մըտուց պառվու մըղարեն վե: Խուըռըջըմ ուսկը իտու քամակ, իրը, նուր քաղաք քաղքով գացին, ատ մալ-ապրանք հըմեն բիրին:

Թագավոր էսաց. - Իմ ախչիկ չըխո քուըն ը, քու ուզիլուն էլ ո՛ւզը:

Շեր-Ալին էսաց. - Ինչ քու ախչիկն ը, իս չըմ առնը, ատ փըսակինք վար իմ պըզտիկ ախպոր: Մալ-ապրանք էլ ծի չըպը:

Թագավոր շատ գորից:

Ան էլ էսաց. - Ուր ծի մալ ըպեր, իս պառվո ուսկին ու արծաթ, մալ-ապրանք հըմեն տը տանիր ծի:

Նուր թագավորը ախչիկ փըսակից վար էրագախան մարթուն, ինք մընակ էլավ, գընաց:

Շատ գընաց, քիչ գընաց, գընաց ծովու՛մ պըռուկ կայնավ: Հանդե կամի՛մ կեր, ահակին մախլուղ թափեր էր ատե, որ

տ'երթեր վար ծովուն: Ընչ կերթան, կը խասնին վար կես ծովուն, կանու կուղ վե չըփլախ ձեռըն կելներ տաւս, ըզկամին շուռ տեր:

Շեր-Ալին ինչ տեսավ ընցնա պա'մ ը, էսաց. - Մըհա թըղեք իս մընակ յամ:

Թըղին, Շեր-Ալինե մը ռանգին մընակ էլավ, մըտավ կամին, գընաց: Ընչ խասավ վար կես ծովուն, տեսավ չըփլախ ձեռըն էլավ տաւս, որ կամին շուռ տեր: Շուտըն խասավ, աս ձեռ բըռնից, ճըխմըռտից, ընչ ճըխմըռտից, ծովու մեչեն ձե'մ լըսավ:

Ատիկ կըսեր. - Շեր-Ալ, աս տիր ծյի ազա'տը, ահտ իլնը, իս հուր քու ձեն լըսիմ, փախիմ հատուց:

Շեր-Ալին ընչ տառցավ, էլածն անունց քըսա արավ, նուր կամին էլավ վար ծովուն, համեն մարթ գընաց իս ուր պանին:

Շեր-Ալ կիլնը, կը տա ճամբա'խ:

Աթարգ փեղըն կը յա, կը խասնը տեղըն, ընչ կը մոտխըսնա, կը տեսնա քար կա ուր հիրճիվ, ընչ կը գատնանա՝ կը տեսնա մարթ ին: Նուր կը տա մա աս աս քարիւրուն վե, կը յա:

Կազամ էլ կը յա, կը տեսնա խալվուր մարթըն գի նըստիր հատե:

Ան խալվուրուչ կըսը. - Հա՛յ, պարեկա'մ, նա ինչ քըսա յը, ընչ կը գատնանան, նա քարի մարթ-իսան ին, ընչ կը մոտխըսնամ՝ քար:

Կըսը. - Վուրըտը, հալ-քըսեն ընցնա յը: Նա պիրթ ինչ կը տեսնաս, անու մեջ քանսուն ախչիկ կա, անու դարգըխեն քանսուն խուրընդարը արճիկ կախուկ ը: Վով ըզան թըլը, ընցնը վար մեկել դարգըխին, հանդուց էլ ընցնը վար աս կընարու դարգըխին, սեյրին տը բատըլը, ան թալող տը մըտնը նիրս, վով ինչ չըկարը ընցցը, կիլնը քար: Ան մարթիր ընչ տաւ կըսիս, անունք էլ էկած, ջանբըված, լա չըկարցած ընցցած, հըմեն էլած քար: Իս էլ իկը, ջանբըվա, չըկարցա ընցցեր, լա իս շատ խուրըտ էր, սեյրին ձի չըբանա, չըկարցավ ձի աներ քար, իս էլ խալվուրցա:

Կըսը. - Հա՛յ, ջըհելիկ, տաւ խեղճ իս, մը՛ յա, տաւ էլ տ'իլնիս մի պես:

Կըսը. - Չէ՛, վուրըլա՛, իս էլ տը յամ, ջանբըվիմ, մըհա Աստը-ված ինչ տը տա:

Կիլնը, կերթա, աս կընարեն կը թալը, կը ընցցը, դոր ան մեկել կընարեն կը թալը վար պիրթին վե, ապուրըն ճամբա'խ հալ-վիլ կը ընցցը:

Հանկախ հինը դարգա'խ կը բացվը, ինք կերթա մա հալչին, կը տեսնա քանսուն թեփըր գի հատե, քանսուն էլ ձավրով լիկ, կազիր վերեն, գըտելքիր իս կըշտին:

Ան էլ համեն մեկուց փըշու'մ կուտը, կիլնը, կը մըտնը կոտուկ սնտուկի'մ մեջ: Քուրիր ընչ իկին, չըգըցան ան վո՞վ էր աթարգ արիր:

Սիցին. - Ապա վով տ'իլնը ընցնա խուրըտ, ուր ընցնա կանը:

Ան պառավ, ուր սեյրին տվեր էր, զինք էլեր էր պառավ, ան էլ աս ախչկըտիրու մեջըն էր:

էսաց. - Թը ֆըլան մարթ իլնը (Շեր-Ալին)²²:

Ան ձեռաց տերըն էլ հանտե յեր, ընչ վուր ձեռ մա ծովուն վե խաներ էր տաւս:

էսաց. - Վուրըլա՛, իմ շուրֆեն էլ վար անու կերթա:

Անունց ճուլ քուրն էլ էսաց. - Դու էլեք, քացեք ձի հողեք, չուր հըմեն պան կը խասկընանք:

Չըլ-Բըսկըն էլ, էսաց. - Ըսն եք, ջըսն եք, էլեք տաւս, թը չէ ձի նա փանջարից տը թալիմ տակ:

Նուր Շեր-Ալեն էլավ տաւս:

Ախչկըտիրն էլ ակախան, էկին հանտե:

Ատ ախչկըտիրու սեյրին բատլեր էր: Ան մարթիրըն էլ, ընչ էլեր են քար, հըմեն ժըրան, իկին, վով որ կընիկ կուզեր, իրը Շեր-Ալու մոտեն ուր կընիկ առից, գընաց: Մընաց Չըլ-Բըսկ, ուր պըզտիկ քուր:

Շեր-Ալին ըզՉըլ-Բըսկ առից, ան պըզտիկ քուրըն էլ Չըլ-Բըսկին էսաց. - Պախը մա քի:

Ընչ ան մարթիր իկին, քացին, պո'մ մընաց, ան խալվուրն էլ ջըհելացավ, իրը ուր խամար կը գընե:

Հըրճըն տիր Շեր-Ալին էսաց. - Ալ կընիկ չըկա:

Ան էլ էսաց. - Աղեկ ը, իս ան հըմեն աղեկություն իս քի արը, տաւ ձի անկընիկ կը թըղնիս մըկա:

²² Ծ. Ա.:

Շեր-Ալին էլ նախաջացավ, ան պրզտիկ քուրն էլ իտու անու, ըզան էլ իտը ճամխու:

Փելըմ Շեր-Ալին, Չըլ-Բըսկ մընացին անտը, չուր օրըմ Չըլ-Բըսկ գընաց գյիտու պըռուկ, ուր մազիր սանտրից, բըսկըմ ընկավ գյիտ, գյիտ տարավ:

Ան էլ լալելեն իրը տուն, հիրիկուն ճըրագ չարավ, մալուկ-մալուկ նըստավ հատե:

Մընաց, հիրիկուն Շեր-Ալին իրը տուն, տեսավ ուր ճըրագ չըվանած, կընիկն էլ նըստիր, կը լա:

Էսաց. - Ախչը՛, ան վըրե՞ ճըրագ չըս վանիր:

Էսաց. - Հա՛լ - քըսեն ընցնա՛ յը, իս հասօր քացը գյիտու պըռուկ, սանտըրվա, բըսկըմ մազ իմ գըլխուց ընկավ գյիտ, գյիտ տարավ:

Էսաց. - Տընաշեն, վըրե ան մազ չըկա՞ քու գըլխիս, տու անթարգ կը լաս:

Էսաց. - Իմ դարտ էդ չը, իմ ցավ են ը, ուր ան մազ մի տ'իցկը բալե՛մ:

Շեր-Ալին էսաց. - Տընաշեն, ան մազ ի՞նչ կը, ուր մի տ'իցկը բալա՛:

Ան էլ էսաց. - Դե քու քեֆն ը:

Գյիտ ըզանտ մազ առից, տարավ, Պապը Ֆըրընգը երկիր էխան տուս: Էվարին ինչ Պապը Ֆըրընգը մշակ ձին կը պիրը վան ճըրուկ, ինչըխ կանը, ինչըխ չանը, ձին չըյա վան ճըրուկ: Կիրիշկը, կը տեսնա բըսկըմ մազ գի մա ճըրուկ, կանը, կը տընը ուր ճըզտան, կը բիրը:

Կերթա մա քանգավոր, կըսը. - Թանգավոր ապրած կենաս, հասօր պա՛մ իմ պիրիր քյի հանդիս:

Կըսը. - Ան ի՞նչ իս պիրիր ձյի:

Կը խանը փունջ մազ, կը տա քանգավորին:

Թանգավորըն էլ հանդան հինը դալալ իտու կանչիլ, էսաց. - Վոլ մարու տեր բիրը ձի, իս գան տը կայնացըցիմ, անցկուն ուըս-կը լըցիմ վան անու գըլխուն՝ չուր ան մա ուըսկուն կուրսը, հըմեն տամ անու:

Մա ան քաղքին մարթ չէլավ էրթեր, չուր պառավըմ իրը, էսաց. - Թանգավոր ապրած կենաս, իս յամ, քու ուզած բիրիմ:

Թանգավորըն էլ աղեկ հանդիյե՛մ իտու անու, իտը ճամբախ:

Պառավ գընաց, շանգըմե քըփգեխըմ շինից, նըստավ վան ծըծմին, սըբհան ըլա, սըբհան ըլա անելեն խա գյիտուն գընաց:

Շատ գընաց, քիչ գընաց, գընաց Շեր-Ալու պիրթը տակ կայնավ: Շուտըմ ուր ծըծում էխան, հանտե պախից, էլավ, գընաց պիրթ: Թանանջեն վե ընչ կելներ, քանանջը մատքիր կը փըջեր, նուր կելներ:

Գընաց վան տըռան, կանչից, էսաց. - Խաթուն, տոռ բա՛ց, չուր վանը կը յամ խա իմ պանին:

Չըլ-Բըսկ էսաց. - Դե՛ գընա՛ խա քու պանին, քանը շուտ ը:

Պառավ ինչըխ արավ, ինչըխ չարավ, տոռ չէթաց վան պառ-վուն:

Պառավն էլ էլավ, մըտավ քանանջը տակ պանկըվավ, չուր էվարին Շեր-Ալին իրը:

Էսաց. - Ամա՛ն, խուրգիտ, արիվուտ մեռնիմ, ձի տեղըմ տու, չուր խըլխուն կերթամ խա իմ պանին, իմ ընկըրքիր հըմեն քացին, Հարուսաղեն տա քյի մուրատ, իս չըկարցա մընացը:

Շեր-Ալին կանը ըզպառավ, կը տանը տուն:

Չըլ-Բըսկ կըսը. - Աստըծո՛ւ սիրուն, անտ պառավ մը բիրը մի տուն, ան բալե՛մ տը բիրը մի գըլոխ:

Շեր-Ալին էսաց. - Տընաշեն, նա խեղճ պառավ ի՞նչ կը, վուր բալա բիրը մի գըլոխ:

Էսաց. - Դե քու քեֆըն ը:

Ախըր պառավ մընաց հատե: Խըլխուն շուտ կիլը, ձեռքիր կը տա վե, մուխիր կը խանը, քորվընիղ կանը, քոնիր կը վանը, հըմեն պան կանը, չուր անունը կիլնին վե:

Շեր-Ալին կըսը. - Ահա տու կըսեր ըզպառավ չառնինք նիրս, մի չըխ խուրտամըմ պետք էր, Աստըված հորողկից:

Հանեն օր անթարգ կանը անտ պառավ, չուր խորոտ բըստա կիլը վան Չըլ-Բըսկին:

Ընչ բըստա կիլը, օրըմ կըսը. - Չըլ-Բըսկ, անու քու իրկան հուկար մա ընչկին ը:

Կըսը. - Ապա իս ի՞նչ գըտիմ:

Կըսը. - Ապա ան տու ինչ իրիկ-կընիկ եք, ուր տու չուր մըկա չըս գընա մըհա անու վուրժ մըհա ինչ պանը մեջն ը:

Չըլ-Բըսկ կըսը. - Պառավ, ապա ի՞նչըխ անինք:

Պառապ կըսը. - Հիրիկուն քու մագիր գըժ արա, ընչ քու իրիկ կը գա տուն, կըսը՝ ա՛ն ինչ իլիր, սա՛ն ապա՛ն իս, տա՛ն ինչ իրիկ-կընիկ ինք, ուր տա՛ն չուր մըկա ծի չըս ըսը, մըհա՛ն քու վուըժ ինչ բանը մեջն ը:

Չըլ-Բըսկն էլ հիրիկուն ճըրագ չըվանը, չուր պառապ կիլնը, կը վանը: Ընչ Շեր-Ալին նեճրից կը գա, անու նեճիր թիվից չառնը տակ, ընթրիս կուզը՝ ընթրիս չըպիրը, խիտ խաբար կը տա, ան թու պատասխան չիտա:

Շեր-Ալին կըսը. - Ան ի՞նչ իլիր:

Կըսը. - Ապա՛ն տա՛ն ծի չըս ըսը՝ մըհա՛ն քու հուևնար մա՛ն ընչկին ը:

Կըսը. - Տընակո՛ւլ, վըրե՞ տա՛ն չըս գընա, մա՛ն ցախավիլն ը:

Կը մընա խըլխուև, պառապ շուտըմ կերթա հուրիշ ցախավելըմ կը պիրը, ըզատ ցախավիլ կը թալը թոնիր, կը վանը:

Պառապ կը տեսնա, ուր անու թու գարար չիլնը՝ Շեր-Ալուն:

Կըսը. - Չըլ-Բըսկ, տընաշեն, վըրե ա՞ն էր քու իրկան հուևնար:

Կըսը. - Ապա՛ն ի՞նչըխ անիմ:

Կըսը. - Խա՛, վուըլա՛, էլմէլ հերեկվան պես արա՛:

Ան էլ էլըմ անցկուն կանա, Շեր-Ալին կըսը. - Տընաշեն, իմ վուըժ մա՛ն ավիլն ը:

Պառապ խըլխուև լազըմ անու ավիլ կը վանը, հուրիշ ավիլըմ կը տընը հանտե, ընչ Շեր-Ալին թու գարար չիլնը, պառապ էլմէլ կըսը. - Քու իրկան հուևնար ան չէր:

Էլմէլ մաղդեն կանը, չուր անու իրիկ կը գա, կըսը. - Վըրե՞ մաղդեն արիր իս:

Կըսը. - Ապա՛ն տա՛ն ծի չըս ըսը մըհա՛ն քու վուըժ մա՛ն ընչկին ը, ուր իս խաղամ խիտ, իմ սըբըր անիմ:

Դոր կըսը. - Թիակն ը:

Ան էլ չիլնը, պառապ կընգնը խիտ, չուր Չըլ-Բըսկ էլըմ կը ռըկը:

Շեր-Ալին կըսը. - Տընակո՛ւլ, վուըր անցկունը, կուզիս խաականալ, արը, քի սիմ:

Կը տանը, յոթ տոռ կը ընցըցը, ուըր պառապ չըլըսը, պառապն էլ սեյրը կանը, ան յոթ տըռնիր կը բացվին, կերթա, վան անուևն գըլխուև կը կանգնը:

Շեր-Ալին կըսը. - Տընակո՛ւլ, իմ խուըգին գի մա՛ն իմ թըրը կալանին ը: Վուըր իմ թուր թըլին մա՛ն կըրակին, յան մա՛ն ճըրին, իս հանդամ հինը տը մեռնիմ:

Պառապն էլ կըսը. - Հա՛, ջա՛ն, կընտա վուըր կընտա:

Շուտըմ կը վազը, կերթա տուն:

Հիրիկուն ընչ Չըլ-Բըսկ, Շեր-Ալին կը քընին, պառապ կիլնը, Շեր-Ալու թուրը կալան կառնը, կը թալը գլիտ:

Հանկախ հինը Շեր-Ալին կը խիվընդընա: Պառապ ըզՉըլ-Բըսկը գըլխու մագիր կը փաթը վան ուր ծեռաց:

Ան կըսը. - Պառապ, թուր ըզՇեր-Ալին ծածկիմ:

Կըսը. - Սեվո՛վ սեվավուր, մըկա սեր էր քի էլ, քու Շեր-Ալուն էլ, իս չուր յի՞փ տը նըստիմ քու իրիս վե:

Մագիր քեշելեն կը տանը, մըտուցը ծըծում վե, կառնը, կը տանը Ֆըրընգա՛ն պապուն:

Չըսի՞ս էրագ տեսնող էրագը մեջ կը տեսնա, վուըր Շեր-Ալին գախ ը՛ մեռնը: Հանկախ հինը կըսը. - Կընի՛կ, շուտ արա, աղու՛մ գարը լի՛ց հիրճիվ իմ ծիուն, իս տ՛երթամ, իմ ճիւլ ախպեր կը մեռնը, յան խասա, յան չըխասա:

Կընիկ կըսը. - Անցնա յը մըկա տիլնիմ, գարը լըցիմ հիրճիվ ծիուն, վո՞վ գըտնա, մըկա հուրդ ը ընգլիր խա՛ն ուր քեֆին:

Ան էլ շուտ կիլնը, թատարիք կը տեսնա, գարը կը տա ուր ծիուն, շուտ կը գա մա՛ Պոլնաս:

Կըսը. - Ախպեր, շուտ իլը՝ յանք, յան մի ախպոր խասանք, յան չըխասանք:

Պոլնասն էլ կըսը. - Խա՛, վուըլա՛, անու աստըղ մըժխավիր, էրթանք, քանը շուտ ը:

Կիլնին, կերթան, կը խին՝ Շեր-Ալին մեռուկ ը, կիրիշկին՝ մընչ կընիկ կա, մընչ պան, չուր կիրիշկին անու թըրը կալան չըն տեսնա:

Կըսին. - Կա, չըկա, անու թուր թալած գլիտ:

Աստըղ խանող ախպեր լողվուր էր, կերթա մա՛ գլիտու գլառին, լող կանը, կը տեսնա Շեր-Ալու թըրը կալան գի հատե, վիշապ տըրիր վերա:

Կը տառնա, էրագխանին կըսը. - Վուըլա՛, հալ-քըսեն ընցնա յը, վիշապ ուր գըլխու տըրիր վան կալանին:

երնագանխան կըսը. - Մըհնն իրի՛շկը՝ ըստա յոթ տարվան ձեթ չըկա՞:

Կէրթա, անու կըշտու տուն կիրիշկը, կըսը. - Յոթ տարվան չէ, խարիր տարվան ձեթ կա ըստա:

Ատ ձեթ կը տանին, կը թալին մնն ան գյառին: Ձաննավար-քիր հըմեն կը փախին, նուր անունըն էլ կէրթան, կը խանին:

Աստըծու հըրամանով խուըզին կը գն, ըզՇեր-Ալին կիւնը, կը նըստը, կը փըռընգտա, կըսը. - Տընաշենքտիր, իս անցկուն անուշ էր քընիր, տու վըրե՞ ձի խանիցիք վե:

Կըսին. - Տու աղեկըմ քըներ էր, հո՞ւր ը քու կընիկ, հո՞ւր ը քու պառավ:

Կըսը. - Դն՛, հն՛, վուըլա՛, ինչ արիր խնն ձի, ան պառավն ը արիր:

Կըսը. - Ղե, տու էլեք, քնցեք խնն ձի բանին, իս տ՛էրթամ՝ մըհա ինչըխ անիմ:

Անունը էլ կըսին. - Մենք էլ գանք խնն քի:

Կըսը. - Տու քնցեք խնն ձի պանին:

Ըզանունը փնռու կանը, կը տընը ճամբախ, ինքըն էլ կաստ կանը, կը գն, կը գն, Պապե Ֆըրընգն քաղաք կիւնը տու:

Շեր-Ալին կէրթա մնն քաղքեն, կը խը՝ է՛, ահակին կալըբա-լըխ կա հատե, գոռնա-ննդարա կը գանին, կը խաղան:

Պառավըմ կը գն անու հիրճիվ, կըսը. - Դն՛, պառավ, մնն ի՞նչ հըլըգուսն ը:

Կըսը. - Խա՛, վուըլա՛, իմ քուր քնցիր, մնն խեղճ Շեր-Ալին կուրսըսուց, անու կընիկ բիրիր, մըկա ինչըխ կանին, մըհար չի տա²³:

Կըսը. - Պառավ, տու չը՞ս իյա հանտե:

Կըսը. - Խա՛, վուըլա՛, ան չը թըղընը մարթ յա մնն ան, լնն ձի կը թըղընը:

Ան էլ կըսը. - Ա՞ն մնն քաֆիկ, տա՛ր անու:

Ըզյուր մատնիկ էլ կը տընը հինը, կը հորողկը:

Պառավ կը յա վնն տըռան, ինչըխ կանը, ան տու չըբանա, ան էլ կըսը. - Տու քու Աստըված կը սիրիս, տըռան ծերպ վե մնն քաֆիկ անին:

Քաֆիկ կը թըլը մնն տախտին, ան հըրճըն չըխ չիրիշկը հինը:

Նուր կըսը. - Իրիշկիմ՝ մըհն ան ինչ կը մնն անու քաֆիկին:

Կանը, կիրիշկը, կըխը՝ Շեր-Ալու մատնիկ գո մեք, կը վննը հննեքք, կը կանչը՝ պառավ, պառավ, պառավ:

Պառավ կը տառնա, կիրիշկը, կըսը. - Տու քու Աստըված մանչ կը սիրիս, նարու տեր հո՞ւր ը:

Պառավ կըսը. - Վուըլա՛, մնն իրիք օր ը գո մի տուն:

Չըլ-Բըսկ կըսը. - Ապա տու չը՞ս կանա պիրը մնն ձի:

Կըսը. - Վըրե՞ չըմ կարա:

Ան մեկէլ օր պառավ ըզՇեր-Ալին կանը ուր ախչիկ, կընցը ուր հիրճիվ, կը տանը մնն Չըլ-Բըսկ:

Դըմեն կըսին՝ պառավ, ուր ախչիկ քնցին մնն Չըլ-Բըսկ: Անունը բախուրթին կը գեր, ուր պառավ, ուր ախչիկ մընակ կը գեն մնն ան:

Շեր-Ալին ընչ գընաց հանտե, փըշու՛մ վնն մեմեկը խըն-դնցան:

Շեր-Ալին էսաց. - Քու մըհար տու:

Նուր Չըլ-Բըսկըն էլ ուր մըհար իտու: Նուր հըմեն սիցին՝ պառավ, ուր ախչկան ուտ վնն մի իրը, տորիս Չըլ-Բըսկ ուըր մըհար կը տա:

Տարան փըսակիցին, պիրին, պառվու ախչիկըն էլ (Շեր-Ալի), ուր թեգնինք տըվիր ուր բերնին, սնեկն կը ամչընա:

Կը տանին թնգնվորը սարեն, հըմեն կը յան, կը մընա թնգնվոր, ուր թնգն կընիկ, պառավ, ուր ախչիկ:

Թնգնվոր անցկուն ուրնախացեր էր, ուըր ուրնախութեն կար-միր խընճուր չըր էրթա անու բերան:

Չըլ-Բըսկին էսաց. - Ախչը՛, մըհն կըրակըմ տի՛ վնն իմ կանուին:

Էսաց. - Չը՛մ տընը:

Էսաց. - Դ՛ե՛լ, ուըր՛սպը, գնխ ը պնռկըմ տամ մնն գըլխուն:

Էսաց. - Շեր-Ալ, կը լըսի՞ս:

Շեր-Ալն էլ էլավ, խորտըմ ըզթնգնվոր փըրտից, մընաց չուր խըլխուն, խըլխուն պառվուն կանչից, ուր Չըլ-Բըսկ բիրիլու հնդկ տեր:

²³ Դամաձայն չէ ամուսնանալ (Ծ.Բ.):

Էսաց. - Պառա՛վ, կա՛յնը վա՛ր քա՛րին, ուր պանցըր իլնիս, քի շատ ուղսկը կը խասնը:

Հատե եզա՛ր, պառվու վիզ թըռուց:

Իպը, ա՛ն մեկէլ պառավ, ընչ զինք տարեր էր մա՛ Չըլ-Բըսկ, պեռըմ ուղսկը իտու ա՛նու:

Նուր դա՛լալ իտու կանչիլ, էսաց. - Իս Շեր-Ալին իմ, ծյի թա՛գավոր սպանիր իմ, կուզեք էկեք ծյի ռա՛յա, չըք ուզը, ծյի քաղաք քա՛ր վա՛ր քա՛րը չըմ թըղնը:

Հա՛խու հըմեն էլ իկին ռայը, իկին թա՛ժա թագավորը թըրը տակեն ընցան, քա՛ցին խա՛ ուրինց պա՛նին:

Շեր-Ալն էլ առից ըզՉըլ-Բըսկ, մա՛րթըմ իտը ուր տեղ թա՛գավոր, ինք տա՛ռցավ, իրը ուր պիրթ, փելըմ մընաց հանտե, ուր ինչ կեր, չըկեր, հա՛զրից, տըրըստից, ուր թա՛յիտպիր տեսավ, ըզինք հեղըստա արավ:

Բըռըմ օր մընաց հանտե, էլա՛վ, տա՛ռցավ, իրը ուր քաղաք:

Հատե յոթ օր, յոթ գիշիր խարսնիս արին, ա՛նուըք խասան ուրինց մըրազին, տու էլ՝ ծի մըրազին:

Էրկընուց իրիք խընծուր իրը, մեկ՝ սողին, մեկ՝ խա՛սկըց-ցողին, մեկ՝ ալկանջ ա՛րողին:



41. ՍԸԼՏԱՆ ՓԱՐԻՇԱՆ

ժամանակըմ թագավորըմ կեր, ուր իրիք լաճ: Իրիքն էլ խասուկ, հասակ առուկ կիլնին, փսակվիլու:

Թագավորըմ էլ ուր լաճիրուն կըսը. - Ձի վի ախչիկ կը պը, տուըք ծյի խընծուրքիր գա՛րկեցե՛ք վա՛ր ա՛նու տըռան, իս ախչիկ բիրիմ ծի:

Ճուլ լաճ ուր խընծուր կը գանը վա՛ր ուրզըր տըռան, միչնիկ լաճ կը գանը վա՛ր մալխո տըռան, պըզտիկ լաճ կը գանը, նանչ կը գանը, կընգնը մըկան ծակ վե:

Թագավորը կըսը. - Կայե իմ պըզտիկ լաճ յաղլիլ ը:

Էլմէլ հա՛մեն մեկը խընծուրըմ կը տա, կըսը. - Ձի վի ախչիկ կը պը, գանեցե՛ք վա՛ր ա՛նու տըռան:

Էլմէլ ուրինց խընծուրքիր կը գանին:

Թագավորը ճուլ լաճ ուր խընծուր կը գանը վա՛ր ուրզըր տըռան: Միչնիկ լաճ կը գանը վա՛ր մալխո տըռան: Կը մընա պըզտիկ լաճ: Ա՛ն ընչ կը գանը, կը յա, կընգնը էլմէլ մըկան ծակ վե:

Դիրըմ էլ կը գանին, էլմէլ ա՛ցկում:

Պըզտիկ լաճն էլ կըսը. - Կայե իմ բախտ ընցնա՛ յը:

Կառնը ըզգոռտ, կը բիրը: Ընչ կը բիրը տուն, գոռտ ուր գա՛ռտընին կը խանը, կիլնը կընիկըմ, ուր չուտիս, չըխըմիս, հինը իրիշկիս: Դա՛յիմ կիլնը, ուր բա՛նիր կանը, էլմէլ ուր գա՛ռտընին կը խագնը, կիլնը գոռտ:

Փելըմ կը մընա, թագավորը լաճ կըսը. - Կընի՛կ, իս զիմ խեր տը բիրիմ պատիվ:

Կընիկ կըսը. - Միրգամահմատ, խուրզուտ, արիվուտ կուըր-
բան կիլնիմ, քու խեր մը՝ բիրը պատիվ, քու խեր մի տ՝ իցկը մա
բալա:

Միրգամահմատ կըսը. - Չէ, պընենավե իս իմ խեր տը
կանչիմ:

Ան էլ կըսը. - Վուըր անցկուն ը, իս տը մընամ փարտը հիտիվ,
քու խեր ընչ կը գա, կերակուլ, բան տիր հըրճիվ:

Կըսը. - Չէ, անթարգ բան չիլը:

Կերթա, ըզուր խեր կը բիրը, ան էլ կերթա փարտը հիտիվ:

Կը կան հանտե, խաբար կը տան չուր հանական կախ, կըսը.
- Կընիկ, խաց պի իմ խոր:

Կընիկըն էլ տանկավ կընզը, կը գա, խաց կը բիրը:

Ընչ կը գա հանտե, անցկուն խորոտ ը, ուր խոր հաշ կը յա,
կընզը հանտե: Անցկուն սերտ կը մաշին, ճուր կը թըլին իրիս վե,
դե՛, դե՛ ջորով ուշկ կը գա վերեն:

Թագավորըն էլ կըսը. - Միրգամահմատ, յան տը յաս անց-
կուն ջուլըմ բիրիս, ուր իս, իմ անգքար հըմեն նըստինք տակ, մի
ծածկը, տալ հավիլնա, յան քու վիզ տը գանիմ:

Թագավորըն էլ կիլնը, կը յա:

Միրգամահմատըն էլ մաղտըն կանը, կը նըստե հանտե,
չըզըտնա՝ ինչ տանը:

Խեր ընչ կերթա, կընիկ կը գա, կըսը. - Միրգամահմատ, ան
վըրե՞ մաղտեն արիր իս:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, հալ-քեֆաթ ընցնա յը, իմ խեր ծյի էսաց՝
յան ջուլըմ տը բիրիս, ուր իս իմ անգքարով սաղ նըստինք տակ, մի
ծածկը, տալ հավիլնա, յան քու վիզ տը գանիմ:

Կըսը. - Չէ՞ իս քյի սիցը՝ քու խեր մը՝ կանչը, պիրը մի տուն,
քու խեր ըզմի տը իցկը բալա: Կընա՛ հանտե, նանչ տու ծի խանիր
իս, բիրիր իս, սա՛ Սըլտան Փարիշան, չըխտ, ան տըսը՝ ան ի՞նչ
կը իմ փեսեն, տալ էլ սա՛ մըհա՛ ան ջուլ քու ախչիկ կուզը: Թը չը-
կարցար բերեր, ա՛ռ նա՛ մատնիկ, մըտո՛ւ քու մատ, ընչ կերթաս
հանտե, ջուլ կառնիս՝ մատնիկ մա՛ քու մատին օլորը, քանի՛մ ջըն
կա, հըմեն տը գան հանտե, տըսին՝ շինի՞նք, թը՞ ավրինք, սա՛
մընչ շինիցեք, մընչ ավրեցեք, մընակ նա՛ ջուլ թալցեք մի տուն,
էկեք:

Ան էլ կիլնը կերթա, իրիք տիր կը կանչը՝ Սըլտան Փարի-
շան, Սըլտան Փարիշան:

Կըսը. - Ան ի՞նչ կը:

Կըսը. - Մըհա՛ ան ջուլ տա՛ւ, քու ախչիկ կուզը:

Ան էլ կը տա, Միրգամահմատ մատնիկ մա՛ ուր մատնին կօ-
լորը, բուլուկըմ ջըն կը բահրավին հանտե:

Կըսին. - Ավրի՞նք, թը՞ շինինք:

Կըսը. - Մընչ ավրիցիք, մընչ շինեցեք, նա՛ ջուլ թալցեք մի
տուն, տարցեք:

Ջըմիր ըզջուլ կը թալին անուց տուն, կը կուրուսին:

Միրգամահմատ ըզջուլ կը տանը, կը փըռը, ուր խեր, ուր
անգքարով կը նըստին վերա, տալ կեսըն կը մընա տանտակ:

Թագավոր կըսը. - Միրգամահմատ, մըկա կուզիմ քենե սե-
ղան, ուր անցկուն ճուլ իլնը, իս իմ անգքարբիրով, իմ պարեկամք-
տիրով նըստինք բուլուր, թերը անը, տալ չայնըկը, սըմավարը,
կանգախը, խացը տեղ հավիլնա:

Էլմէլ ծեռքիր կը տընը ծուց, մաղտեն կանը, կը յա տուն:

Կընիկ կըսը. - Էլմէլ ան ի՞նչ իլիր՝ մաղտեն արիր իս:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, հալ-քեֆաթ ընցնա յը: Իմ խեր սեղա՛մ
կուզը, կըսը՝ անցկուն իլնը, իմ անգքարբիրով, իմ պարեկամքտիր
հըմեն շարվին բուլուր, տալ սեղնը վերա, սըմավարը, չայնըկը
տեղ իլնը, թը չէ՛ քու վիզ տը գարկիմ:

Կըսը. - Միրգամահմատ, խուրզուտ, արիվուտ կուըրբան
կիլնիմ, չէ՞ իս քյի սիցը՝ քու խեր մը՝ բիրը մի տուն, մինք տընկ-
նիք բալա: Գընա՛, հանտե ինչ տալ բիրիր իս, սա՛ Սըլտան
Փարիշան, Սըլտան Փարիշան, տըսը՝ ան ի՞նչ կը իմ փեսեն, սա՛
մըհա՛ ան սեղան տո՛ւ, քու ախչիկ կուզը: Չըխտ տը տա, տալ տը
առնիս, բիրիս: Խարիր տարի մընա, տալ չըս կանա գետնեն
կըտըրը: Յիտ ա՛ռ նա՛ մատնիկ, ընչ կը տամ, մա՛ քու մատին օլորը՝
քանի՛մ ջըն կա, տը գան հանտե, տըսին՝ շինի՞նք, թը՞ ավրինք,
սա՛ մընչ շինեցեք, մընչ ավրեցեք, նա՛ սեղան թալցեք մի տուն,
քացեք:

Միրգամահմատ էլ կիլնը, կերթա:

Կերթա վար ան տեղաց, ընչ ինք ուր կընիկ բերեր էր, իրիք
տիր կըսը՝ Սըլտան Փարը, Սըլտան Փարը:

Կըսը. - Ան ի՞նչ կը իմ փեսեն:

Կըսը. - Մըհա՛ն ան սեղան տո՛ւ, քու ախչիկ կուզը:

Ընչ կը տա, Միրգամահմատ ուր մատնիկ մա՛ ուր մատին կօլորը, ուր կօլորը, քանց աստղը էրկինք՝ ջըն կը թափին հանտե:

Կըսին. - Քակիհ՛նք, թը՞ շինինք:

Կըսը. - Մընչ քակեցեք, մընչ շինեցեք, նա սեղան թալցեք մի տուն, քացեք:

Միրգամահմատ ըզսեղան կը տանը, թագավոր ուր ազքըր-քիրով, ուր պարեկանքտիրով կը պահրավին բուլուր սեղան, չայտան ուր թախունով կը տընին վերա, տալ կավիլնա:

Թագավոր կըսը. - Յան ճուրթը անմահական խաղուղ պիրի ծյի, յան քու վիզ կը գարկիմ:

Միրգամահմատն էլ մաղտեն կանը, ձեռ կը տընը ծուց, կը յա տուն մա՛ ուր կընիկ:

Կընիկ կըսը. - Միրգամահմատ, ան ի՞նչ իլիր քյի, էլմէլ մաղտեն արուկ իս:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, իմ խեր կըսը ձի՛ պընենավե կերթաս, ճուրթը անմահական խաղուղ պիրիս, դե իս դուրո՞ւց տը բիրիմ:

Կըսը. - Չէ՞ իս քյի սիցը՝ քու խեր մը՛ բիրը մը տուն, տընգ-նինք բալե՛մ:

Կըսը. - Իլը՛, գընա՛ հանտե, ընչ տա՛ ձի խանիր իս, փըշու՛մ գըվը՛ռը վար աչ թիվին, փըշու՛մ գընա՛, ավգիկ ախպուրըմ տա՛ տը խիս, պո՛մ նըստը հանտե, իմ քուրիր տը գան: Սա՛ ձի քուր անմահական ճուրթը խաղուղ կուզը:

Կիլնը, կերթա: Կերթա չուր հանտե, կը գըվըռը վար ավզուտ ախպրին, չուր անու քուրիր կը գան:

Կըսը. - Չի քուր ճուրթը անմահական խաղուղ կուզը:

Հանտը չորոկըքթա՛ կիլնը:

Կըսին. - Դու կա՛ց հանտե, չուր ուրթա՛ք օր մինք կառնինք, կը բիրինք:

Կը մընա հանտե չուր ուրթա՛ք օր, ուրթա՛ք օր անունք ճուրթը խաղուղ, անմահական խաղուղ կառնին, կը բիրին:

Կըսին. - Ա՛ռ, տա՛ր, մինք գըտինք՝ տա՛լ վիր խամար կը տա-նիս, մեկ պըտուղ կիսը՛, կես տա՛լ կի, կես տա՛լ քու կընգան, մեկէլըն տա՛ր, տո՛ւ անու:

Կառնը, կերթա: Կերթա տուն, պըտուղըմ կը կըտորը, կես ինք կուտը, կես կը տա ուր կընգան, ան մեկէլըն էլ կը տանը թագավորին:

Թագավոր կուտը, կը պըրծնը, կըսը. - Հա՛, հա՛, Միրգամահմատ, իմ ֆինոկ ընչ քու մեր մեռավ, տըրած անու գըլոխ, տարած, խուրած, կերթաս կը բիրիս, թը չէ՞ մըկա քու վիզ տը գարկիմ:

Կիլնը, մաղտեն արուկ կը գա՛ տուն՝ մա՛ կընիկ:

Կընիկ կըսը. - Միրգամահմատ, խուըզուտ, աքիվուտ մեռնիմ, չուր մըկա տա՛լ տայիմ մաղտեն արուկ կը գեր տուն, է՛մ մորե չը՞ր իլա՛, ան քյի ի՞նչ իլիր ը, կը լաս:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, իմ խեր ծյի ընցնա՛ էսաց:

Կըսը. - Չէ՞ իս քյի սիցը՝ քու խեր մը՛ բիրը մի տուն, մի տից-կը բալա՛:

Շատ շիրաթ կանը Միրգամահմատին, Միրգամահմատ կը յա, վար ճամխի՛մ կը տեսնա քիչկ ու սարե՛մ գի հանտե, անու նըվընքտիր իլիր, տըվիր հանիք: Մարթ մ՛էլ ան սարը մոտ նըստեր էր վար ծյան:

Էսաց. - Հա՛, մարթ, վըրե՞ ատ հըմեն նըվին գի մա՛ ատ սարին, տա՛ նըստիր իս վար ատ պաղ ծյան:

Կըսը. - Գընա՛, արը՛, քյի սիմ:

Կերթա, տեղըմ էլ կը տեսնա մարթըմ գի հանտե, քըսան տաշտ խաց շարիր ատե, կըսը. - Յաման, իս անուրը մեռա:

Կըսը. - Վըրե՞ ատ հըմեն խաց տեգիր իս հանտե, կըսիս՝ անուրը մեռա:

Կըսը. - Գընա՛, արը՛, քյի սիմ:

Կերթա, տեղըմ էլ կը տեսնա մարթըմ աշչը յը, միս կը ծախը, կըսը. «Յաման, մըկա փըշու՛մ միս էլներ, իս ուտեր»:

Կըսը. - Վըրե՞ տա՛ ատ հըմեն միս կիփիս, կը թալիս կը թափիս, կըսիս՝ մըկա փըշու՛մ միս էլներ, իս ուտեր:

Կըսը. - Գընա՛, արը՛, քյի սիմ:

Փըշու՛մ էլ կերթա, կը տեսնա մարթըմ խաց-պանիր տըրիր վար ուր գըլխուն, կը ծախը, կըսը. «Յաման, փըշու՛մ խաց-պանիր էլներ, իս ուտեր»:

Կըսը. - Վըրե՞ ան խաց-պանիր տըրիր իս վանը քու գըլխուն, կը ծախիս, կըսիս՝ փըշու՛ն խաց-պանիր էլներ, իս ուտեր: Հանձն հա՛զըր կյի:

Կըսը. - Գընա՛, արը՛, քյի սիմ:

Կէրթա, տեղըմ կը խը՛ մարթըմ քաբաբ կը շինը, կը ծախը, խիտ կըսը. «Ա՛խ, մըկա քաբաբըմ էլներ, իս ուտեր»:

Կըսը. - Գո հանտե, հանձն հա՛զըր շինը, կյի՛:

Կըսը. - Գընա՛, արը՛, քյի սիմ:

Կէրթա տեղըմ, կը խը՛ կընիկըմ չըփլախ կիվու ուըսկըրքիր կայնացըցիր հանտե, կը կըթը, կըսը. «Ա՛խ, մըկա պուտըմ կաթ էլներ, իս խըմեր»:

Կըսը. - Չէ՞ գո ան կիվ, խազար հըմեն ուըսկուր ը, ինչ կը կըթիս, հանձն ան քու բերան:

Կըսը. - Գընա՛, արը՛, քյի սիմ:

Գնազամ էլ կէրթա, կը տեսնա՛ մարթըմ էրկու աման առիր, ճիւր կը կըրը, կըսը. «Յաման, իս ծարվո մեռա»:

Կըսը. - Չէ՞ տու գո ճիւր կը կըրիս, ալ վըրե՞ ճիւր կուգիս:

Ան էլ կըսը. - Գընա՛, արը՛, քյի սիմ:

Գընաց տեղըմ, տեսավ՝ պապիկըմ նըստիր իրիք ճամխը խառնուրդ, սիվ թիլ կանը կըծիք:

Կըսը. - Պապի՛կ, ան ի՞նչ կանիս:

Կըսը. - Ձան չէ, գիշիր, ցերեկ կը չափիմ:

Կըսը. - Պապի՛կ, նա նըրքըն ճամբախ կը տանը դո՞ր:

Կըսը. - Ատ խայու ճամբախն ը, կը տանը տժոխք, արքա-վուրին:

Կըսը. - Են կես տեղուն ը՞նչ կը ճամբախ ը:

Կըսը. - Ան քըրտուն ը:

Կըսը. - Են վըրը՞ն ընչկը յը:

Կըսը. - Ան տաճկուն ը:

Կը տա քըրտու ճամբախ վե, կը յա: Շատ գընաց, քիչ գընաց, գընաց վան տժոխուց տըռան կայնավ:

Կանչից. - Մարե՛, մարե՛, մարե՛:

Մեր ճըհաբ իտու, էսաց. - Միրգամանհանտ, խուըգուտ, անի-վուտ կուըրբան իլնիմ, ա՛րը ըստան, ա՛րը ըստան:

Էլավ գընաց, մեր էսաց. - Միրգամանհանտ, քու բան ինչ կը ըստան, տու վըրե՞ իկիր իս:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, հալ-քեֆաթ ընցնա յը, իմ խեր ծի հո-րողկիր, ան ֆինոկ ընչ տըրած քու գըլխ, տանիմ, ան կուզը:

Կըսը. - Ան ֆինոկ, հա՛, ան փըտիր ը մա նա կաթըլքին, ա՛ռ, նարիկ տար, լա տու քու ծեռնով տի՛ անու գըլխ, վուըր տու չըտընիս, սերը յը, անու սերին տը բատը:

Կըսը. - Մըկա ըստան մընակ կաթիլ էլներ, թըխ կաթեր, մըկա ըստան մընակ մութ էլներ, թըխ մութ էլներ, լա Միրգամանհանտ, խուըգուտ, անիվուտ մեռնիմ, կը տանիս, ծան մ՛էլ արա ծի, նա կաթիլք թըխ կըտըրը:

Կամը կը գա, կը գա մա պապիկ:

Կը գա մա պապիկ, կըսը. - Պապի՛կ, ան վըրե՞ իս գացը, տու նըստըր էր ըստան, տու սիվ թիլ կը չափեր, իս իկը ըստան, տու էլմէլ նըստիր իս ըստան, սիվ թիլ կը չափիս, կանիս կըծիք:

Կէրթա մա ճիւր բերող, կըսը. - Ան վըրե՞ տու հանօր ճիւր կը բերեր, կըսեր՝ յաման, իս ծարվո մեռա:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, օրըմ մարթըմ իմ մոտեն ճիւր ուզից, իս սիցը՝ քու բերան խարամ ը, ճիւր չըտըվը խըմեր, մըկա ան իկիր իմ վուըրտ: Իս գիշիր-ցերեկ ճիւր կը կըրիմ, լա չըն թըղնը՝ իս խըմիմ:

Կէրթա մա կիվ կըթող, կըսը. - Վըրե՞ տու անցկուն կըսեր:

Կըսը. - Չի յոթ կիվ կեր, իմ տըրկըցին մեկ, իս ճիւր կը լըցեր հինը, կը տաներ, կը տեր անու փուխ, մըկան նա էն ը՛ կը գա իմ վուըրտ: Իս տա իմ կիվ կըթիմ, լա չըն թըղնը իս կաթ խըմիմ:

Գընաց մա քաբաբ շինող, էսաց. - Վըրե՞ տու հանօր անց-կուն կըսեր:

Կըսը. - Իս քաբաբ կը շիներ, կուտեր, ինչըխ ուզեր, անցկուն կաներ, օրըմ մարթըմ իրը, ծեռն քաբաբ ուզից, իս սիցը՝ անպա՞ մըկա իս քաբաբ տը տամ քյի, մըկա հանսոր էն ը՛ կը գա իմ վուըրտ, իս հանեն օր քաբաբ կը շինիմ, լա չըն թըղնը՝ իս ուտիմ:

Գընաց մա խաց-պանիր ծախող, էսաց. - Ան վըրե՞ տու հանօր անցկուն կըսեր:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, իս իմ քեֆովն էր, ուզեր՝ խաց-պանիր կը ծախեր, չուզեր՝ ծի խանար պարապ կը մըներ: Մընաց օրըմ խիվանդ, շիվարըմ իրը իմ մոտ, փըրտուըմ խաց-պանիր ուզից, իս չըտըվը, մըկա էն ը՛ կը գա իմ գըլխ, իս չուր հիրիկուն խաց, պանիր կը ծախիմ, լա փըրտուըմ խաց-պանըրը խասրաթ իմ:

Դորիս գրնաց մա միս էփող, էսաց. - Ան վըրե՞ տու անցկում կըսեր:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, իս հըմեն օր միս-մըսեղեն կէփեր, օրըմ խեղճ մարթըմ իրը, իմ մոտեն փըշու՛մ միս ուզից, իս չըտըվը, մըկա ան մեղքն ը՛ կը գա իմ վուըտ: Իս օր չուր հիրիկուն աշ-չութին կանիմ, փըշու՛մ կերակուր չըն թըղըն իս ուտիմ:

Անտուց կերթա մա հացթուխ, կըսը. - Ան օր վըրե՞ տու անցկում կըսեր:

Կըսը. - Իս խաց կը թըխեր, օրըմ աղքատըմ իրը, իմ մոտեն խաց ուզից, իս չըտըվը, մըկա ան մեղքն ը՛ կը գա իմ վուըտ: Իս լուսնա չուր հիրիկուն խաց կը թըխիմ, փըրտուճըմ խաց չընկըն իմ ծեռ:

Կերթա մա խավուր մարթ, կըսը. - Վըրե՞ տու հանօր անցկում կըսեր:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, իս տուվաթուր էր, իմ ջըլիրու տեղ, ընցնա ինչ կը խիս, էլե էր խա հանգին, օրըմ ճամբուրթ մարթըմ իրը, տեղըմ ուզից, իս սիցը՝ անպա՞ մըկա իս քյի լըխեֆ-տոշակ տը տամ, հըմեն իլըն վուըճիլ, մըկա անու մեղքն ը՛ կը գա իմ վուըտ: Իս նըստիր իմ վաթ նա ծյան, ան լըխեֆ-տոշկըտիր հըմեն տիգած հանտե, ինչըխ կանիմ, չըն թըղըն մեկ առնիմ, թըլիմ իմ տակ:

Ֆաս կառնը, կը գա տուն: Կը գա, կը յա մա ուր խեր:

Կըսը. - Կակո՛, ուըլա՛, իմ մեր կըսեր՝ անու ֆաս փըտիր ը, լա նարիկ իտու ծիկ, իս առը, բիրը, մըհա բի՛, տընիմ քու գըլոխ, մըհա քյի կը կըպը:

Թագավոր ընչ ծեռ իտու, տը առներ, էսաց՝ թուխ իս տընիմ քու գըլոխ:

Ընչ իտը ուր խոր գըլոխ, խեր գընտըռ-մընտըռ կըլուրվալ, իրը տակ:

Ուըլա՛, թագավոր հար մեռավ:

Նուր Միրզամահմատ ժամ արավ ուր մոր խանար, անու կաթիլք փըշու՛մ կըտրավ:

Անունք խասան ուրինց մըրագին, դուք էլ խասանք ծի մըրագին:



42. ՆԱԽԸՐՉՈՒ ԱԽՉԻԿ

Կեր, չըկեր, նախրուրթըմ կեր, ուր կընիկ: Անունց պան չըկեր: Աստըծու օր անունց բան նա էր՝ նախրուրթ նախիր տը տաներ, անու կընիկ, նախրուրթը խաց կը ժողվեր, ան օր ան կուտին, չուր ան մեկէլ օր էլմէլ անցկում:

Ան նախրուրթը կընիկ մըտափուխ էր: Օրըմ գընաց ուր քուրուչ տուն կըրակե, անու քուր փուխինդ կը շիներ: Ինչ ան գընաց, ան փեշ իթըլ վերա: Յոթ տիր ան իրը վաթ տըռան, կաստըմե կըրակ ընցցուց, էլմէլ գընաց, վառից: Ընչ կերթեր, քուր շուտ փեշըմ կը թըլեր վաթ փուխընդին, կը ծածկեր, ընչ կերթեր տոռ, քուր էլ՛մ ուր փուխինդ կը պաներ, կը խառներ: Անու քուրն էլ ուր կըրակ կը ընցցեր, անու մըտով, ուր ինք էրթեր փուխինդ տեսներ, օր ուր քուր ուր փուխինտ տեր: Չըտըն տիր էսաց.

Շուն կընիկ,

Շուն-մուն կընիկ,

Կերթա շուն-մուն տարին,

Չագին կը մընա փուխընդուդ:

Կերթա ուրինց տուն, էլ՛մ ուրինց նախրըրտութին կանին, չուր անու տըղեն կիլըն իլնիլու:

Նախրուրթ կըսը. - Էրթամ քու քուր բիրիմ մա քի, չուր քու տըղեն կիլըն:

Կըսը. - Չէ՛, մը բիրը:

Կըսը. - Ի՞նչ կենամ մա քի:

Կընիկ կըսը. - Չէ՛, տու էլ մը կենա, գընա՛ թախ քու նախիր:

Կը մընա, մընա մընակ, չուր ան գան, չուր ինչ տըղեն տ'իլ-
նը: Չորոկչաբթըմուտ, ուրբաթմուտ, կիրակմուտ կը գան, կիլնին
խաթուն, հանկանխ ինչ անու ախչիկ էլավ, փաթթըրցին, պըրծան:

Ան խաթընքտիր կըսին. - Մենք չըխտ բան չընք իտա նա
ախչըկան հերեվան:

Մեկն կըսը. - Իս իմ տովլաթ կը տամ:

Մեկելն էլ կըսը. - Խան, վուըլան, իս իմ տալեն կը տամ:

Մեկն էլ կըսը. - Իս իմ խորոտկություն տը տամ:

Անոնք կը թըղնին, կերթան:

Երկոր կը մընա, թի իրիք օր, կը լվան ատ ախչիկ, ինչ կը
լվան, ատ ճուր հըմեն կը մընա տաշտ վե, հըմեն կիլնը ուսկը, ան
էլ ինչ խա ծեռաց կը թանփը գետին, հըմեն կիլնը մարգրիտ:

Դայիմ անու գըլոխ կը լվան, հըմեն անցկում կիլնը ուսկը,
մարգրիտ, անուներն էլ անցկում կը գանգընանան՝ ալ նախըր-
տութին չըն անը:

Ատ ախչիկ օրեօր կը քուջանա, ինչ էլավ երկու տարեկան,
անցկում քուջանցավ, ուր էլավ տանիլու ախչիկ:

Չուրիչ թանգավորի՛մ լաճ իրիք տարը կան կը գան, կան կը
գան, թու մարթուն չըխավնը, օրըմ կը գան ան նախուրթը գեղ: Կը
գան, կը խը՝ երկու ճիժ գո հանտե ջանե կը խաղան, ախչիկ մեչ գո
հանտե՝ ֆըռֆըռան փուշին վար նըմըշին թանաշա կանը:

Թանգավորը լաճ ուր կանուըն բասկ կը տա, անու իրիսը
փուշին կը թանլը տեն, ան կը լա, ինչ կը լա՝ կամպը, անծրով կը
գան, նանչ կը ծըծղա՝ արիվ կառնը: Ան լաճն էլ կը թըղնը, կերթա
կըսը. «Վուըլան, ալ իս թու մարթ չըմ առնը քանց նա հավի՞լ:

Կերթա մա ուր խեր կըսը. - Կակո՛, խա՛, վուըլան, իս նա ֆը-
լան նախուրթը ախչիկ տ'առնիմ, տու պընենավե տը բիրիս ծի:

Կըսը. - Խոր լաճ, իս ի՞նչըխ ըգան տը բիրիս քի, մինք թա-
գավոր ինք, ան նախուրթ ը:

Կըսը. - Չէ՛, տու ըգան չըբիրիս, վուըլան, բըլան, իս ալ թու
մարթ չըմ առնը:

Թանգավորն էլ կը նանաջանա, մարթ կը հորողկը նախուրթը
տուն, ատ մարթ կը գան, կըսը. - Գըտնե՞ք՝ իս վըրե իկիր իմ ըստա:

Կըսին. - Չէ՛, վուըլան, մենք ի՞նչ գըտինք՝ մըհա տու վըրե իս
իկիր:

Կըսը. - Չան-քեֆանք ընցնա ը, թանգավոր քու ախչիկ կուզը
ուր լաճուն:

Նախուրթն էլ կըսը. - Ախըր իմ ախչիկըն էլ տան պըզտիկ ը,
ճուր էլ ուզին, քը գըտնա՞ տա խանկը ծեռ:

Խարս ուզող մարթ ճուր կուզը, տընական ախչըկան անուն
կըտան, կը սին. - Ճուր կանստե թափը:

Ախչիկըն էլ ճուր կեսը կը թափը, կեսն էլ կը տանը տա:

Մարթ կըսը. - Բան չըկա, ծի կանպուլ ը:

Նախուրթ կըսը. - Մի ախչիկ ճիժ ը, մենք ի՞նչըխ տը տանք
ախըր:

Չըն իտա:

Թանգավորը խարս ուզողն էլ կիլնը, կերթա կըսը. - Վուըլան,
նախուրթը ախչիկ չըտըվին:

Ինչ լաճուն սիցին, լաճ թանգավորին էսաց. - Դու սուք կը-
սիս:

Խեր նանաջացավ, էլավ, ինք գընաց:

Գընաց նախուրթը տուն, էլմէլ սիցին. - Մենք մի ախչիկ
չընք իտա, տու թանգավոր եք, մենք նախուրթ ինք, մենք մեմեկը
լայեղ չենք:

Երկու տիր ախըր թանգավոր կը յա հանտե, չըն իտա,
իրիքին կըսին. - Ախըր ախչիկ մը կուըրբան արիր ինք քի:

Թանգավոր կըսը. - Դե՛, ծի թատարուք տեսե՛ք, մենք կը գանք
թախ ծի ախչիկ:

Թանգավոր կերթա, օրըմ, երկու կը մընա, գոռնով, նանաջարով,
թատըրով կը գան թախ ախչիկ:

Նախուրթ ուր կընգան կըսը. - Երթամ, քու քուր բիրինք,
անինք խարսընքուր:

Էսաց. - Չէ՛, մ'երթա:

Ախըր նախուրթ շատ կը կըքը վերա, կերթա, ուր քենին կը
բիրը, կը տընը խան ուր ախչըկան:

Անու էլ գեշ ախչիկըմ կեր, կը տանը խա ուր: Օր կը
խասնին մա կես ճամխին, խարսընքուր խարսընքը մարթիրուն
կըսը. «Տու ընցե՛ք, չուր իս ծի կը խասնիմ, թը կարցա, իմ ախչիկ
կը հորողկիմ, թը չըկարցա, կը գան»:

Ուր անունք կը զանազանան, ան շուտըմ խարսը աչքիր կը խանը, կը խուրը մա քըռին, գուր ախչիկ կը խանլացըցը, կը տանը հանտե:

Վուր կերթա, կը խասնը թագավորը սարեն, թագավորը լաճ ըզան կը ծըծղացըցը, չըպարզը, կը լացըցը, անծրով չի գա, կըսը. - Ան վըրե՞ հնչ տու պըզտիկ էր, ուր ծըծղեր, կը պարզեր, ուր լեր, անծրով կը գեր:

Ան էլ կըսը. - Ան գախ պըզտիկ էր, մըկա ջուջացա:

Կը մընա, մարթըմ կը գա՝ յոթ կուր ախչըկան տեր, վուր կը խասնը մա ատ քըռին, խիծուցըմ կը լըսը, կը փուրը, կը տեսնա ախչիկըմ գի հանտե՝ աչքիր պուրուկ, կըսը. - Հա՛, ախչիկ, ան վո՞վն ը՝ քու աչքիր պուրիր:

Ախչիկ կըսը. - Խա՛, վուրլա՛, իս թու բանից խապար չիմ, հանա՛ իս ընցնա իմ տիսիր:

Ան մարթ կըսը. - Տու կա՛ց հանտե, ծի յոթ կուր ախչիկ կա, յամ, անունց խարցնիմ, թը կաբիւլ արին, չըխոմ իս կը գան, քի կը տանիմ, խա՛ անունց կը շախիմ: Թը կաբիւլ չարին, չըխո չոկ կը շախիմ:

Ախչիկ կըսը. - Լա՛ շուտ տաննաս վար ծի, էլմէլ ծի չըթըղնիս ըստա՛, յաս: Վուր տու ծի թըխներ ըստա՛, յեր, իս չըխո մա քըռին էր, իմ հալ առեր էր, սախախեր էր:

Կը գա տուն, հալ-հալվալ ախչկըտիրուն կը պատմը:

Ախչկըտիր կըսին. - Ա՛խ, ան վըրե՞ տու չըթիրիր խիտ:

Կերթա, կառնը, կը բիրը, յոթ խատ կուր կեն, ան էլ կիլնը ութ խատ: Ան մարթն էլ ժողովք կանը, կը բիրը, գանոնք կը շախը:

Ժանանակըմ վերա կը ընցնը, ատ ախչիկ մեկէլքիրուն կըսը.

- Խեր ճուր բիրը, տընը թոներ, տու չը՞ք կանա իմ գըլոխ վա:

Կըսին. - Խա՛, վուրլա՛, թըղ խեր ճուր բիրը, տընը թոներ, մենք կը լվանք:

Ախչկըտիր ուրինց խոր կըսին. - Ծա՛ւր պի, տընինք թոներ, մա մեկէլը գըլոխ լվանք:

Խեր ճուր կը բիրը, կը տընը թոներ:

Ճըրիր ինչ կը տաքնան, կը խանին, կը տընին հանտե՝ դե պի՛, քու գըլոխ լվանք:

Ան էլ կըսը. - Բա՛մ չըկա՞ իմ գըլոխ լվեք հինը, գետին մը՛ լվեք:

Կըսին. - Խա՛, վուրլա՛, հանտե պընակըմ կա, մա յոթ տարը յը, չընք բանծըցը:

Կըսը. - Բան չըկա:

Կը բիրին, անու գըլոխ կը լվան, վուր ճըրիր տը թափին, կըսը. - Ճըրիր մը՛ թափեք, չուր խեր կը գա, ճըրիր թըղ թափը:

Խեր կը գա, ախչկըտիր կըսին. - Մըհա՛ ատ ճըրիր թափը, մենք չըկարցանք:

Ան ախչիկ կըսը. - Մըհա՛ իրիչկը՛ հինը, ի՞նչ կը:

Կերթա, կիրիչկը հինը, կըսը. - Ինչ մընացիր հինը, հըմեն ուսկը յը, ան ինչ թափիր ը գետին, հըմեն մարգրիտ ը:

Փելըմ հանտե անու գըլոխ կը լվան՝ կը գանգընանան, ալ ժողովք չըն անը:

Կըսը. - Կակո՛, տու չը՞ս կանա էրթա ֆըլան տեղ, լուպըմ ուսկը տանը, իմ աչքիր գի մա ֆըլան թագավորը խարսը ջոպն ը, բիրը:

Կըսը. - Վուրլա՛, կանամ, վըրե՞ չըմ կանա:

Լուպըմ ուսկը կառնը խա ուր, կերթա: Կերթա, կը խը ատ թագավորը խարս տըղով ը, իկիր լվացվիր ծովու պըռուկ, փալ տըվիր հանտե, խիրաթ չանը էրթա:

Յոթ կուր ախչըկան տեր կը յա, կըսը. - Ձատըմ չըկա՞ քու ջոպ, մըհա՛ տու ուտիմ:

Կըսը. - Մըկա՛ անթարգ անլորը-անլորը իկիր, ինչ կա իմ ջոպ:

Կըսը. - Չըխոմ գատ չըկա՞ քու ջոպ:

Կըսը. - Խանրամ, թը քանց էրկու չուր աչք հավիլ բա՛մ կա իմ ջոպ:

Ան էլ կըսը. - Մըհա՛ տու ուտիմ:

Թագավորը խարս կըսը. - Մըկա՛ ատոնք տու տ՛ուտիս ի՞նչ: Դոր ատ մարթ կըսը. - Ա՛ռ քի լուպըմ ուսկը, ատ աչքիր տու՛, իս ուտիմ:

Ան էլ կըսը. - Ա՛ռ, իս լավա կանիմ:

Յոթ կուր ախչըկան տեր ատ աչքիր կառնը, կը գա տուն, ատ թագավորը խարսն էլ կառնը ատ լուպ ուսկին, կը վազը, կերթա մա ուր մեր, օր տալ թագավորը տուն էր, կըսը. - Մարե՛, ան չուր աչքիր տըվը մարթու՛մ, մա լուպ ուսկին առը:

Ան էլ կըսը. - Հա՛, սիվով սեվավուրվիս, չէ՞ իս քի սիցը՝ ինչ էլ տան քի, ատ աչքիր չըտաս խալկին, ընկնինք բալե՛մ:

Դառնանք վար ատ մարթուն: Ան մարթ ուր կը խասնը տուն, ախչիկ կը խարցընը, կըսը. - Բիրիօր իմ աչքիր:

Ան էլ կըսը. - Խա՛, բիրը:

Ան էլ ատ աչքիր կը տընը ճուր, կը կակղանա: Ուսկի՛մ կը տընը ան աչքը տակ, ուսկի՛մ ան աչքը տակ, նուր աչքիր կը տընը վերա: Կը մոռնա, աչ աչք կը տընը ճապ աչիչ տեղ, ճապ աչք կը տընը աչ աչիչ տեղ, փըշուրիկը կը շըլվը: Քանց անաչ էլ խորոտ լուս կը տա, լա փըշու՛մ շիլ ը, քյեթը ը: Ան էլ կիլը, հանեն օր ախչկըտիր կը սանտը, կը լվա, անունց խալավքիր կը թափը, ինքըն էլ հանեն օր ուր գըլոխ կը լվա, տու՛մ ուսկը կը լըցը անունց խամար:

Փելըմ կը մընա ախչիկ, կըսը. - Կակո՛, ծի ծենե մընաթ ը՛ քանի՛մ ծի շախցիք, տորիս ծի տաստուր տըվեք, իս տ՛երթամ:

Կըսը. - Թը քի տեր կա, տու յաս, չըխտ աղեկ խազար բարով տու յաս, թը քի տեր չըկա՛ տու չըխտ տ՛ըսիս՝ տը յամ, վուր անունց գարար չըտամ, չըխտ կա՛ց:

Կըսը. - Խա՛, վուրլա՛, չըխտ ծի տաստո՛ւր տվեք, իս տ՛երթամ խա իմ խուզմըթին:

Կըսը. - Ուր անկուն ը, Աստըված քի խազար խեր տա, գընա՛:

Ան էլ կիլը, կերթա, կերթա մա գաննարած, ուսկի՛մ կը տա, գանըմ կառնը, կը զինը, միս կը տա ատ գաննարածին, մընակ գիւմ կառնը ուր, կը կուրծը ուր գըլոխ, մարտախանըմ կը խագ-նը, կը յա: Կերթա ան թագավորը տուն, կը կայնը անունց հիտիվ տըռան:

Կըսին. - Հա՛յ, տըղա՛, յան գընա՛ տեն, յան ա՛րը տես, կայնիր իս հատե, մընչ կը յաս, մընչ կը կա՛ս, ի՞նչ:

Կըսը. - Վուրլա՛, զա չէ, ծի բան չըկա, իս էլ ծի խամար բանատա կան կը գան:

Կըսին. - Չը՞ս իգա՛, իլը մի կազարած:

Կըսը. - Խա՛, վուրլա՛, վըրե՞ չըմ իգա՛:

Կիլը անունց կազարած, անունց կազիր կը տանը: Կը տա-նը, օրըմ շատ մախլագա կանը, անու շատ տըժար կը գա, կը լա, էլմէլ կամպը, անծրով կը գա, նանչ կը ծըծղա, արիվ կառնը:

Ան թագավորը լաճ հանեն օր կը յա նեճիր, հանօր էլ կը յա նեճիր, ինչ կը տեսնա՛ պոմ կը պարզը, պոմ կը ամպը, կըսը.

«Վուրլա՛, նա փելըմ կեր, իս չըր տիսիր՝ պոմ ամպեր, պոմ պարզեր»:

Բըռըմ օր հայ անտարզ կիլը, թագավորը լաճ կըսը. «Նա ինչ կա, մի կազարածը տակն ը»:

Օրըմ կը գա, պաղ կը տընը: Կազարած ուր խամար էլմէլ մախլագա կանը, կըսը. «Իս ինչըխ կեր, ինչըխ էլա»:

Ուր տարտ կը գա, կը լա, ինչ կը լա, երկինք-գետինք կը խառնը հիրար, ամպիր կը բըռնին երկնուց իրիս, անծրով կը գա:

Դիր՛մ էլ մախլագա կանը, կըսը. - Նա բան վար հըմենանց եկիր, խո իս մընակ չիմ:

Էլմէլ կը ծըծղա, արիվ կառնը:

Թագավորը լաճ ընչ կը տեսնա, կըսը. «Նարիկ ան էր, ինչ իս ըզան կուզեր, նախորոթը ախչիկ ը»:

Կը թըղը, կերթա տուն:

Կըսը. - Խա՛, վուրլա՛, հասօր նեճիր չընկավ իմ ծեռ:

Կըսին. - Հալբաթ օրըմ կընգնը, օրըմ չընգնը:

Ան կազարած ախչիկն էլ հանտե ուր գըլոխ գիւմ առեր էր վե, թը ուր գըլոխ գուրվեր էր, թը սանտրեր էր, թագավորը լաճ տեսեր էր, նուր կըտցըր էր, թի ուր ուզած նախորոթը ախչիկն էր:

Թագավորը լաճ կըսը. - Հասօր կազարած թըխ ծի ընթիս բիրը, ուրիշ վով բիրը՝ տը տամ պատ, աման տը կուտրիմ:

Հիրիկուն նանչ կազարած կը գա, կըսին. - Հասօր տու ընթ-րիս տար թագավորը լաճուն:

Ան էլ քինթ վե կըսը. - Ապա իս չըմ կանա, թըխ հուրիշըմ տանը, իս չարուխով իմ, չիլը:

Անունքն էլ կըսին. - Թագավորը լաճ սիր՝ պընենավե կա-զարած ծի ընթիս տը բիրը, մենք չընք գըխշընա:

Ախըր շատ կը կըքեն վերա, կառնը կը տանը:

Կը տանը վար տըռան, թագավորը լաճուն կըսը. - Ա՛րը, տար:

Կըսը. - Պի՛ ըստա՛, պի՛ ըստա՛:

Կըսը. - Ապա իս չարուխով իմ, չըմ կանա գա վար ատ ջըլի-րուն, վար ատ տեղ ջըլին:

Կըսը. - Տու պի՛, ծի կապիլ ը, քի կապիլ չը՞:

Ախըր շատ կը կըքը վերա, կը տանը:

Կը տանը, կը խասնը մա տախտին, նանչ տը տառնա՝ թան-
գավորը լաճ կը թալը, կը բըռնը, կըսը. - Կըրե՞, քի տ'ուտի՞մ, կա՛ց
ըստա՛, խանբան տանք:

Կըսը. - Չէ՛, իս չանրուխտվ իմ, իս չըմ կանա:

Կըսը. - Քու քըսեն դե արա՛:

Կըսը. - Ի՞նչ քըսա տ'անիմ:

Ախր շատ կը կըքը վերա, կըսը. - Ապա իս գըտնամ, տու
վովն իս, վանրագա քի չըս խանը վանր ծի տեր:

Շատ կը գորը, չուր ախչիկ ուր գըլխուն էկանտիր հըմեն կը
պատմը, նանչ անու աչքիր խանած չուր հանկանի:

Նանչ կանգարած ուր պատմություն կը պըրծնը, թանգավորը
լաճ հանտան հինը ըզուր կընիկ, ուր կընգան մեր կը կապը բոզ
ծիու պուչ, կը թըղնը սար վե, կըսը. «Ձենե կուզիմ՝ չուր խըլխուն
անունց կըտուրքիր բերե՞ք, ծի շանք տեք»:

Նուր անունք յոթ օր, յոթ գիշիր խարսնիս կանին, անունք կը
խասնին ուրինց մըրագին, տուք էլ՝ ծի մըրագին: Էրկնուց իրիք
խընծոր ընկավ, մեկ՝ քըսա արողին, մեկ՝ խասկըցողին, մեկ՝
լըսողին:



43. ԾՈՒՌ ԱՆՊԵՐ, ՃԱՐՏԱՐ ԱՆՊԵՐ

Պառավըմ կիլնը, ուր էրկու լաճ: Ան մեկ լաճ՝ ճուլչն, ճար-
տար էր, լաճ ան մեկելն՝ ծուռ: Կովըմ կեր անունց, ան ծուռ լաճ
հըմեն օր կը տաներ, կը թըղներ սար վե, կը գեր: Օրըմ տարավ,
իթուղ սար վե, կով կորուսավ:

Գընաց, կովու հիտիվ կան իրը, տեսավ քըռքըռոժիկըմ կայ-
նիր վանր քարին, անու էսաց. - Քըռքըռոժիկ, տու իմ կով չը՞ս տի-
սիր:

Քըռքըռոժիկ գըլոխ թափ իտու, էլմէլ խարցնից, էսաց. - Իմ
կով չը՞ս տիսիր:

Էլմէլ գըլոխ թափ իտու քըռքըռոժիկ: Ան էլ հիշունց իտու,
էսաց. - Քու տիրու խերն անիծիմ, տու ծեն չըս ըժը:

Քար մ՝ էգար, քարը տեսավ հուրիշ քարիրուն, գընկգընկա-
լեն պա՛մ ընկավ տակ, գընաց հիրիշկից, տեսավ գուզուլըմ ուս-
կը: Գուզուլ ուսկին իպը, պախից:

Օրըմ ծուռ ախպեր ուրինց տոռ փետ կը ճըղճըղեր, կագին
հանտվե տ'ընցներ, ան շուտ խասավ, կացին իտու մա գըլխուն,
արավ էրկու տապակ, էթալ մա փուղուցին:

Ճարտար ախպեր իրը, տեսավ, կագին ջանտանկ տարավ,
էթալ ուրինց խուր վե, էսաց՝ տոր չընգնուք բալե՛մ:

Էրկու-իրիք օր տեղ չըթըխին, վուր կան չիկին կագին հի-
տիվ, չուր ան մեկ օր իկին մա ծուռ ախպեր, սիցին՝ կագին չըս
տիսիր, էսաց. - Ինչ բոշ-բանանտան կան կը գեք, վուղլա՛, իս սպա-
նիցը, թալցը մի խուր վե:

Ճարտար արարներ վուր կը լըսը, շուտ կը վազը, կուտուշ-քիրով սիվ քոշըմ վիզ կը կըտորը, կը թալը խուր վե՛ վա՛ր կազու քանտանկին, վուր կազին չերեվա:

Հուրընթը մարթիր կը յան, կիրիշկին, ծուռ արարներ կըսը՝ իս իլնիմ, խանիմ, ճարտար կըսը՝ տու չըս կարը, իս մըտնիմ, խանիմ:

Ճարտար արարներ կը մըտնը խուր վե, կըսը. - Ձի կազին մուրուսով էր, թի՞ անմուրուս:

Կըսին. - Դու խան տուս, մուրուսով ը:

Ճարտար արարներ էլըմ կը խարցը. - Ձի կազին կուտուշով էր, թի՞ անկուտուշ:

Կըսին. - Կուտուշով ը, տու խան:

Կը խարցը. - Ձի կազին չորս ոտնա յը՞:

Կըսին. - Խա՛, տու խան տուս:

Կըսը. - Ձի կազին մազով ը, թի՞ անմազ:

Կըսին. - Տու խան, մազով ը:

Ճարտար արարներ մուրթով էժ կը խանը, կը թըլը տուս: Հուր-մըթը մարթիր կը տեսնան, օր ծուռ արարներ գուրինք կը խապը, խորոտըմ կը տըփին, կը թըղնին, կըթան:

Փելըմ մընաց, մեր հա՛ ընչ խաց կը թըխեր, գըլոխ կը քուրեր, կըսեր. «Ա՛խ, գըլոխս կը քուրվը»:

Ան մեկ օր ճարտար արարներ տուն չեր, էլավ, պըղինձըմ ճուր իտը վա՛ր թորվան, տաքցուց:

Մոր էսաց. - Մարե՛, պի՛, քու գըլոխ լվամ:

Մեր էսաց. - Իմ գըլոխ չըքուրվը, իս գըլոխ չըմ լվա:

Մեր տես-տեն փախավ, էլավ, ըզմեր բըռնից, անու գըլոխ լվաց, չէ՞ ճուր շատ տաք էր, մեր հանդան հինը մեռավ:

Հիրիկուն ճարտար արարներ, իրը տուն, տեսավ մեր հանտե պառկեր էր, էսաց՝ նա՛ վըրե՞, պըզտիկ արարներ էսաց. «Հըմեն օր գըլոխ կը քուրվեր, իս էլ անու գըլոխ լվացը, գի՛ խըլուսմընե ռը-հա՛ պառկիրը»:

Էրկուս կըռվան, լա՛ ինչ օգուտ, ճուր արարներ նա՛նջացավ, ուր մեր տարավ, խուրից:

Օրըմ մընաց, մեկէլ օր ծուռ արարներ էլավ տանիս, կընիկըմ ան կընարեն կը գա՛, էսաց. - Հա՛, քա՛քիմ վա՛ր քու խոր, տու հի՞փ ժըրար, կը գա՛ս:

Լարից հիտիվ կընկան, կընիկն էլ էսաց. - Իս քու մեր չիմ: էսաց. - Ատանիսըզ, տու իմ մեր չի՞ս, հերեկն էր՝ քի թաղի-ցինք, հի՞փ էլար, իկիր:

Լարից հիտիվ կընգան չուր մա՛ խիրկիմ, բըռնից, ըսպանից, լարան կապից ոտ, քեշից, կը բերեր, օր տաներ գերեզմընքտիր թաղեր:

Ան կընար, ան կընար սիցին՝ ջանըմ, ան ի՞նչ կանիս, էսաց. - Ախպերքիր, ի՞նչ իմ արիր, իմ մեր հերեկ տարանք, խուրիցինք, հասօր էլըմ տը տանիմ, թաղիմ:

Ան մեռիլ ձեռնեն առին, խըլիցին, ըզծուռ արարներ խորոտըմ տըփիցին, գեղեն խանիցին տուս:

Ան ծուռ արարներ առից ուր ճարտար արարներ, գանցին քա-ղաքըմ, փելըմ մընաց հանտե, քաղքը հարուստ մարթըմ ան ծուռ արարներ էսաց. - Չը՞ս իզա՛ իմ կա՛զիր էրեժա:

էսաց. - Վըրե՞ չըմ իզա՛, կը գա՛մ:

Ան էլավ ան գանգին մարթու կանգարած, ճուր արարներ իթուղ, գընաց ուր տուն:

Ծուռ արարներ փելըմ կա՛զիր տարավ էրեժաց, տեսավ, օր անունք ուրինց պուշիր կըտըցով կը քուրին:

էսաց. - Շիվար կա՛զիրու վերա լիկ ոչիլ ը:

Պըղինձ իտը վա՛ր անգըթին, էռցըցուց, ըզկա՛զիրու գըլոխ մեկ-մեկ իտու հինը, էխան:

Էվարին կա՛զիրու տեր իրը, էսաց. - Նա՛ վըրե՞ նա՛ կա՛զիր թա՛-վալած ին:

էսաց. - Տայիմ գուրինք կը քուրին: Իս էլ գանունք լվացը, ալ փըշուր գուրինք չըմ քուրը:

Ան էլ գընաց տուն, ուր միտ վե կըսեր. «Չէ՞ տու տը գա՛ս տուն, իս քու պաշխուն տը տամ քի՛ ձեռ»:

Ծուռ արարներ գըտեր, ուր ինք էրթեր տուն, ըզինք տը տը-փեն, ան էլ գընաց կա՛զիրու տիրոջ մալ հըմեն առից, գընաց ուր տուն:

Ծուռ արարներ, ճարտար արարներ էլան խընտրաց գեղեն փա-խան, գանցին: Շատ գանցին, քիչ գանցին, խանսան տեղըմ: Պըրուս անան էր շինիր, ծուռ արարներ էլավ անան գընող:

Պըրուտ էսաց. - Ճիւղի՛ր՝ երկու կուռուշկան²⁴, պըզտկըտիր՝ վաթսուն փարական²⁵, շատ պըզտկըտիր՝ տաս փարական²⁶:

Ծուռ ախպեր էսաց. - Չէ՛, վուըլա՛, գըմեն տաս փարական:

Կըռվան, պըրուտ, ծուռ ախպեր խասան հիրար, քանը պըրուտ անանքտիրուց կը փախեր, կը գանտաններ, ծուռ ախպեր կերթեր մա անանքտիրուն, չուր պըրուտը անանքտիր գըմեն սըղկից: Ըզպըրուտ թըղին անտե, ինք, ուր ախպեր էլան, փախան, գացին:

Գացին, տեսան վար ճամխին մարթըմ ջախցը քար կը կըտրեր:

Ծուռ ախպեր էսաց. - Ատ ջախցը քար իմն ը:

Կըռվան, ըզան մարթ կուշտըմ տըրփըցին, խընտրաց ծուռ ախպեր առից ջախցը քար, գացին:

Գացին, ճընարի՛մ ծառը տակ նըստան, ծուռ ախպեր էսաց. - Սուրն ը, իլնինք ծառ վե, քընինք:

Անունք էլան ծառ վե, ջախցը քարն էլ խանիցին ծառ վե: Տեսան քարվա՛մ իրը, ան ծառը տակ էթալ:

Գազամ գիշիր ընցավ, ծուռ էսաց. - Ձի շեռըմ կը գա, ի՞նչըխ անիմ:

Ճարտարն էսաց. - Ախպե՛ր, մը՛ շըռը, նա կանտար մարթ տը սին՝ նա վըրե՞ նարունք էլած ծառ վե:

Էսաց. - Վուըլա՛, պընենավե ծի շեռըմ կը գա, սին, չըսին, իս տը շըռիմ:

Շըռից, տաստըմ սիցին անձրով կը գա, տաստըմ սիցին՝ չէ՛, երկինք պարզ ը:

Դասուցըմ վերա առից, դասուցըմ վերա չառից, ախըր ինչըխ էլներ խախանտան:

Պոմ էլ մընաց, էսաց. - Ախպե՛ր, ծի քաքըմ կը գա:

Էսաց. - Ախպե՛ր, հիվը կանիմ, ախըր ջորով անունք սախանխան, փըշու՛մ գախ քի պըռնը:

Էսաց. - Չէ՛, Քրիստո՛ւս, տը իլնիմ, քաքիմ ջախցը քարը ծակ վե:


Էլա՛վ, քաքից ջախցը քարը ծակ վե: Թը՛փ, թը՛փ, ընկավ ծառ տակ:

Քարվընը մարթիր սիցին. - Են ծառ վե պա՛մ կա, նիաթ:

Ավրիցին փախիլու:

Ծուռ ախպեր էլա՛վ, ջախցը քար ծառեն իթըլ, ինչ իթըլ, ծուռ ախպեր բանցըր էր, շըխկշըխկուց ընկավ ծառ վե, քարվընը խալկ թըղին, փախան, ծուռ ախպեր հետը ծառից իջան տակ, խաշտրանցան վար անունք մալիրուն, մալիր առին, իկին տուն:


Անունք խասան ուրից մըրազին, տու էլ խասնեք ծի մըրազին:



²⁴ 16 կոպեկ (Օ.Բ.):

²⁵ 12 կոպեկ (Օ.Բ.):

²⁶ 2 կոպեկ (Օ. Բ.):



44. ՇԻՐԻՆ ՇԱԽ, ՊԱՐԱԿ ՇԱԽ, ՏԵՂԻՆ ՇԱԽ

Ժամանակով թագավորը կելնի, ուր մեկ լաճ, տորսեն աս լաճ կերթա նեճիր, նեճիրից ինչ էվարին կը գա հերի՛մ տոռ վե կընցընը, աս հերից ձենըն կիլնը:

Կըսը. «Քի ուրկո՞ւք, թե՞ պուրպուք»:

Շատ էրկու-իրեք տիր աս լաճ կերթա նեճիր, քանը տիրըն ինչ նեճիրից ինչ կը գա, աս տոռ վե ինչ կը ընցնը, հերից էլ՛մ ձեն կիլնը, կըսը. «Յե՛յ, թագավորը լաճ, քիկ ուրկո՞ւք, թե՞ պուրպուք»:

Տորսեն աս թագավորը լաճ կերթա տուն, ջոջ մարտիրուն կը պատմը:

Յատե ջոջ մարտըն կիլնը, կը խասկընա, կըսը. - Թագավորը լաճ, իս գինամ՝ ան ինչ կը, ան քի ժանտըր տարքըն կա, ան կը կանչը, կըսը քի՝ ուրկո՞ւք կուգես, թե՞ պուրպուք, ան քի տարքըն տը կա քիկ, ան քի կըսը՝ քի կըպը աս տարք մըկա՞ գա վար քիկ, թի՞ ջոջանաս:

Լաճն էլ էսաց. - Մըկա իս ջըհել են, պալքըն կանամ հաղթեմ, ըզծի ազատեմ, ջոջանամ՝ ալ չըն կանա, ախըր հաքի տը գա, թըղ մըկա կա, քանց զըմեն աղեկ:

Էտա մարտըն էլ կըսը. - Օր անցկուն ը, ինչ տիր մ՝ էլ կերթաս, կը կանչը, կըսը՝ քի ուրկո՞ւք կըպը, թե՞ պուրպուք, տու էլ սա՛ օր հաքի տիլնը, ձի ուրկուք, տորսեն քի տըսը՝ են տարքից ինչ տու պըրծնիս, երկըթե աթոռ նըստիս, մըսե սեղնը վերա խաց ուտես, օր ազատես:

Տորիս էտ թագավորը լաճն էլ կերթա նեճիր, ինչ կը տանա, կը գա վար հերին, տըռնեն ձեն կիլնը, էլմէլ կըսը. - Քի ուրկո՞ւք կըպը, թե՞ պուրպուք:

Ան էլ կըսը. - Օր տիլնը, թըղ ուրկուք իլնը:

Էն էլ կերթա, մեկ քանի՛մ ասքար կամը, կերթա սար՝ նեճիր: Օրըն անցկուն պուքըն կիլնը, կարկուտըն կը գա, ըրիվ-ճըրիվ կիլնը մանչ անու ասքրին, հըմեն մեկ տեղըն վե կերթան տակ, կը մեռնին: Թագավոր լաճը փըշուրըն խորտ կիլնը, անու ձին աղեկ կիլնը, քանը ուր կավաթ կա, իր ձին կը քըշը, ձին էլ հըրալամիշ իլիրը, անցկուն կը թըռնը՝ կերթա պալկա մանլաքաթըն, կը տանը, մեկ իրիցուն տըռան հիրչիվ պայա կանը:

Ատ իրիցուն էլ ախչիկըն կա, տուս կիլնը, կը տեսնա, կերթա ուր խոր կըսը. - Կակո՞, մեկ աղեկ մարտըն կո վար ձիուն պաղիր, թաց մի տոռ կայնիր:

Էրեց կիլնը, կը գա, կը տեսնա աս մարտու նշանքտիր ինչ կեր վերա, կը տեսնա, որ մեծ մարտու տըղա յը, խիտ կը գրուցը, անցկուն պաղիր ը՝ լեզուն չըպուլուրը, ուր խատ իրիցուն գրուցը, համա-համա պեժըն կա ինը, էրեցն էլ համա կիլնը, կերթա հողեն, ըզտպեն կը տա վանել, մարտն էլ կը առնը, կը տանը հողեն, ձին էլ կը տանին փարկախ, գատ կը լեցնեն հիրչիվ ձիուն:

Մարտն էլ, էրեց հողեն կը նըստին, կը տաքնան, մարտու լեզուն կը բացվը, էրեցն էլ կըսը. - Յե՛յ, մարտ, տու հուրտո՞ւց կը գաս, հո՞ւրտը տ՛երթաս, տու ի՞նչ մարտ ես, մընակ ի՞նչըխ իկիր ես ըստա, ի՞նչ խըզմըթով էկիր ես:

Մարտըն էլ կըսը. - Իս չըն գըտը՝ ինչըխ իմ իկեր, նա ձիկ խեր կա, նա մեր կա, իս էլ թու պանից սալըխ չըն իտա, իմ ձին համա ձի առեր, պիրիր ըստա:

Էրեցն էլ կըսը. - Դու չը՞ս իգա իմ ախչիկ տամ քի, ձի արտ, բան շատ կա, ձի էլ կա մեկ ախչիկ, արը, իմ ախչիկ տամ քիկ, խընտրաց արեք, կերեք:

Էտ էլ կըսը՝ կը գամ, կամնիմ:

Էրեցն էլ իր խորոտ ախչիկ կը պիրը, կը փսակը վար աս մարտուն: Ատ մարտն էլ կիլնը, ուր թագավորական խալամքիր, նըշանքտիր կը խանը, կը տընը պուտուկըն վե, պուտուկն էլ կը տանը փարկախ, ձիու տակ կը փուրը, աս պուտուկ կը խուրը

հանտե, սալըմ կը տընը վար պերնին, մեկ տաստըմ ռենջբըրը խալանվ կը խազնը՝ ռենջբըրութին կանը իրիցու տուն:

Տորսեն ժամանակըմ վերեն կը ընցընը, ատ թագավոր տորսեն կը տեսնա՝ լաճ գացիր սար՝ նեճիր, լաճ կուրուսիր ը, մարտ սալըխ չի տա, մեռիր ը, չըն գտնա, սաղր չըն գտնա, շատ կը խարցընին՝ սալըխ չըն առնը: Թագավորն էլ կըսկըծու՝ քանի՞ն օր էլ վերա կը ընցընը, կը մեռնը:

Դուվաթը խավթ կը թըղնին՝ մըհա վար որա գըլխուն թառը, գան անեն թագավոր, խավթն էլ կիլնը, կան կը գա, կերթա, վեց-յոթ ասքար հիտիվ կարճխասա կերթա, իրիցու քաղաք, իրիցու տան վերա կը թառը, ատ ասքարքիրն էլ կը խասնեն, գերեց կը բըռնեն, կը գարկեն, կըսեն. - Մի թագավորը լաճ գի ըստա յը, խան տուս, մըհա ըսպաներ ես, մըհա ինչըխ իս արիր:

Ացկում կը գարկեն, կը տըլփեն, յալա յա սըթար, երեցն էլ կըսը. - Ջանըմ, իս ինչ խաբար իմ՝ ձի թագավորը լաճ ո՞րն ը, իս չըմ գըտնա:

Թագավորը լաճն էլ գացիր արտեր, աշունը չուր տըլիր, խիրկ կը մուլախը, ուր ցանքն, արտըն էլ չուրսբիլուր ջըրիր, մեկ փըշուր մընացիր, լաճն էլ վերա կայներ, կը ջըրը, իրիցու ախչիկն էլ տըղով ը, հանանկանավ խաց չըտարավ յուր իրկան, ան էլ էլավ, խաց առից, ուր իրկան խանար տարավ, մանչ արտին կը տեսնը՝ փըշու՛մ տեղ մընացեր, գի կը ջըրը, իրիկըն էլ անցկում լանգն ը, հանա գյուր պախն կը տընը գյետին, կը նըստը, վար ուր պախին, խացըմ էլ կը տընը վար ուր կընկան ծընկան²⁷, կուտը:

Խիտ կուտը, խիտ կը խարցընը. - Վըրե՞ հանանկան խաց բիրիր ասօր:

Ան էլ կըսը. - Ապա տու ոըհաթ ես, ասքար իկեր մի տուն, անցկում գարկիր իմ խոր, կը սպանը:

Էսաց. - Վըրե՞ կը գարկը, ի՞նչ կուզը:

Ախչիկն էլ էսաց. - Վըսեն՝ մի թագավորը լաճ իկեր ըստա, բի՛, տո՛ւ, խավթ մ՝ էլ թառիր մի փարկըխը տանիս:

Լաճն էլ հանա ձեռ կը տա գյետին, փառք կը տա Աստըծուն, կընկան էլ կըսը. - Վընի՛կ, իմ խերն է մեռիր, խավթն էլ թըղած են, իս թագավորը լաճն են, եկած հիտիվ ձիկ, գընա՛ տուն, ձիու տակ

²⁷ Երկաթե աթոռ, մսե սեղան (Ճ.Բ.):

սալըմ կա, անտա սալ շո՛ւռ տո, պուտուկըմ կա, ատ պուտուկ ա՛ռ, իմ ձիւն ա՛ռ, նա ֆըլան տեղ արը, չուն իս փըշու՛մ լողկանամ:

Ախչիկն կերթա տուն, խոր կըսը, փարկախ կերթան, ձիու տակու սալ շուռ կը տան, ատ պուտուկ կը խանեն, անու ձիւն, ան պուտուկ կառնեն, կը տանին մատ լաճ, լաճն էլ կիլնը, կը լողկանա, պուտուկ կը բանա, գուր խալանվքիր կը խաբընը, գուր ձիւն կը խեծնը, անտա դուվաթը խավթն էլ, օր փարկախի տանիս թառեր էր, հանտուց կը թըռնը, կը գա, ասքարն էլ խիտ, վար թագավորը լաճու գըլխուն կը թառը: Ասքարն էլ ատ կընարեն կը գա, կը տեսնա ըգթագավորը լաճ սալանըլխ կը պըռնը, կը կայնը, թագավորը լաճ խընտրաց կէլնին, կը գան իրիցու տուն, տոր կը հիմանան, ուր թագավորը լաճ էր, հանտե իրիցուն էսաց. «Գի իմ խեր մեռիր ը, իս տ՛էլնիմ, էրթամ, էլնիմ թագավոր»:

Կընըկն էլ էսաց. - Ապա իս ի՞նչըխ անեն, տու յաս, իս մընակ ի՞նչըխ անեն:

Թագավորը լաճն էլ կըսը. - Ա՛րը, գթի տանեն խիտ:

Դորսոն գանու կընիկ, հանկախ ինչ տերթան, ձեռ կը տա, ինչ տը խիծուցը ժանտըր կիլնը, գոր կիլնը, անկախ օր կը թըլը ոըթյա, տոր կը տա, անու տեռ ուռեն կը յա, թագավորը լաճ կըսը. «Ատիկ իջուցե՛ք, ատ ձի ոջ չըկըտըրը», ատու շախ պարանկ էր, ատ տեղաց դորիս, կընիկ կը թըղնը հանտե, պագպանտըմ կը տա կընկան, կըսը. «Թե լաճ էլավ, անուն դնես Պարանկ Շախ, հիտիվ ձիկ գա, թե ախչիկ էլավ, ծախը, գատ պագպանտ հանտա-հանտա ձի բան ը»:

Չատոց կիլնը, կը թողնը, կերթա գուր խոր քաղաք, կիլնը թագավոր, կը նըստը թառը:

Այա՛մ վերեն կը ընցընը, իրիցու ախչըկան լաճըմ կիլնը, անուն կը դնեն Պարանկ Շախ, ժամանակըմ վերեն կը ընցընը, լաճ կը ջոջանա, մատ քաղքը ճըժիրուն կը խաղա, շատ գորպա կիլնը, ըգճըժիր գըմեն կը տըլփը, անոնց մերիրն էլ գըմենն էլ կը պահիրավին, կըսեն՝ շա՛ն հեթիմ, տու մի տըղենիր գըմեն սաղկըտիցիր:

Պարանկ Շախն կը գա տուն, ուր մոր կըսը. - Մարե՛, վըրե՞ ձի խեր չըկա, որ ձիկ կըսին հեթիմ, վըրե՞ տերտեր իմ խեր չը:

Մերն էլ ուր լաճուն կըսը. - Մոր տուն տերտեր քու քան-խերն ը:

Տըղեն կըսը. - Ապա իմ խերն հո՞ւր ը, իմ խեր վո՞վ ը:

Մայրը կըսը. - Քու խեր թագաւորի լաճն էր, անու խերն մեռավ, իկին, ըզան տարան, արին թագաւոր:

Տըղեն կը խարցընը. - Ապա իմ խոր նըշան ի՞նչ կեր:

Մերն էլ իր լաճուն կըսը. - Քու խոր նըշան անտա պագ-պանտն էր, ինչ վար քու թիվին, քու խեր էսաց՝ թի լաճ կիլնը, կապը վար թիվին, թըղ գա:

Ան էլ կիլնը, պագպանտ կը կապը վար ուր թիվին, քահել ծի՛մ կը խեծնը, լուպըմ ուսկը կը լըցը ուր ջոպ, կը յա: Շատ կը յա, քիչ կը յա, կը խասնը ուր խոր մոտ, ուր խոր սարեն, զինք չըխանը ճանչ, ձիուց պայա կիլնը:

Կըսը. - Իմ ձին տարե՛ք փարկախ, խորոտ գատ տըվեք իմ ձիուն:

Ձին կը տանին փարկախ, խոտ, գարը, բան կը բերեն տուն, կը գարկը ան մարտիրուն, բան չուտը, ան էլ կըսը. - Ատ բանիր մի՛ տեք իմ ձիուն, իմ ձին գատոնք չուտը:

Կերթան, հարդ կը բերեն, սարսանի ցուրին կը բերեն, էլըմ կը գարկը, չուտը, ան էլ անոնց կըսը. - Ատ բանիր իմ ձին չուտը: Ատոնքն էլ ուտը, կը տըտը:

Կըսին. - Ապա, ջանըմ, ի՞նչ տանք ուր ուտը, ձին անցուն գատ կուտը:

Պարակ Շախ լուպըմ ուսկը կը խանը, կը գարկը ան մարտիրուն:

Կըսը. - Իմ ձին նատուց կուտը:

Ատ մարտիր կերթան, թագաւորին խաբար կը տան:

Կըսեն. - Մարտըմ իկիր ը, ինչ օր տանք անու ձիուն, չի ուտը, ըզմի կը տըվը, անու տերն էլ կըսը՝ իմ ձին անտոնք չուտը, իմ ձին ուսկը կուտը, խիտ լուպըմ ուսկը շանք կը տա, կըսը՝ իմ ձին նատուց կուտը:

Թագաւորն էլ կըսը. - Կանչե՛ք ան մարտուն, թըղ գա:

Պարակ Շախ կիլնը, կիյա հանտե, թագաւորն Պարակ Շախին կըսը. - Հայ, մարտ, ձին ո՞ւսկը կուտը, ձին բընենալե խոտ, գարը կուտը, հայվան կա խոտ, գարը ուտը, չըտըտը:

Պարակ Շախն էլ կըսը. - Իսան էլ կա, ուր խաց կուտը, ջուր կը խըմը, իսան կա, ուր չը տըտը:

Թագաւորն էլ կըսը. - Հըմեն իսան, հըմեն մարտ կը տըտը:

Պարակ Շախն էլ կըսը. - Ուր անցուն ը, քամի՛մ իմ մոր մոտեն զընաց, տու վըրե՞ սիցիր՝ իմ շախ պարակ ը, ձի ոչ չըկըտը, իմ մեր չըբիրիր:

Թագաւորն էլ հանա խընտալուց կըսը. - Դու Պարակ Շախն ի՞ս:

Ճանչըցան, օր խեր-տըղա են, թագաւորն էսաց. - Պարակ Շախ, տե ի՛լը, մա քաղքին կան արը, պըտըտը՝ մա քաղքին, կան արը, քի խանար ուրախութիւն արա:

Պարակ Շախ մա քաղքին կան իրը, քանի՛մ վախտ վերեն ընցավ, գիտըմ կընցներ քաղքը կըշտեն, խակ կը գան, կը տեն ան գիտ, մոր կը գեն քաղաք: Պարակ Շախ իպը, կարմունչըմ կապեց վար ան գիտուն, կայնավ կարմընչը կուշտ, վոլ կը գեր, վար կարմընչին վե երթեր, կը գարկեր: Կըսեր. «Իս կարմունչ քի խանար իմ շիներ»: Խակ կը տեն մանչ գիտուն, գիտո մեչ կը կայներ, կըսեր. «Կարմունչ կապեր են, ի՞նչ տու կը տաս մանչ գիտուն»:

Տորսեն գացին մա թագաւոր գագընդ, գանգատ, սիցին. - Քու լաճ կարմունչըմ շիներ, կայներ վար կարմընչին, վոլ յա գա, կը գարնը, վար կարմընչին վե յա, կը գանը, տա գիտ, կը գանը: Վար կարմընչի վե յա կըսը՝ իս քի խանար իմ շիներ: Մա ջըրուն վե յա, կըսը՝ կարմունչ իմ շիներ, վըրե՞ մա գիտուն վե կը յաս:

Թագաւորն էլ տորսեն կանչը, կը կանչը, ըզլաճ կը բիրը, սըքտըրմ կը տա, քաղքից կը թաղկը, կըսը. - Տեմակ տու քաղաքըմ տը ավրես:

Դորիս Պարակ Շախ ուր ձին կը խեծնը, կերթա ուրիշ մանալաքըմ, սարե՛մ կը տեսնա, չուրսբուլուր սարին լըղըմ ը, կան կը գա, կը տեսնա տըղե՛մ ձի թըռուցած տակա կերեվա: Ան էլ ուր ձին կը տանը, կը բիրը, ձին կը տաքը, կը թըռուցը ձին, ան լըղըմ կընցնը, կերթա սարը մեչ, Կարմիր տեվըմ հանդե կիլնը, են անտա տեվը կը կըմվին, ըզտեվ կը հաղթը, կը գարկը գլետին, օր ըսպանը, տեվ հանա կըսը. «Ձի մը՝ ըսպանը, ահդ իլնը, իս քանը ժիր իմ, քի խուլանութին անեն, ձի քուրըմ էլ կա, տամ քիկ»:

Ատու քուր կը գա, կըսը. - Ձար, ըսպանը, անիկ թե բախտը մը կա, պոմ էլ անու մըտեն տը յա:

Պարակ Շախ կըսը. - Օր ընկավ բախտ, ի՛րը ոայը, իս ըզան չըմ ըսպանը ալ:

Քուրն էլ կըսը. - Օր չըս ըսպանը, անու էրկու ականչ ծա'կը, հըմեն ականչեն ծիու նալըմ կախը, օր անու մըտեն չիլնը, օրըմ քի քընուկ տեղով ըսպանը:

Պարակ Շախ կիլնը, ականչքիր կը ծակը, նալ կը կախը անու նըշան, անու քուր կառնը: Քանի'մ վախտ վերա կընցնը, կիլնը, ատ տեվու մըղագեք կան կը գա, հօդե'մ կը տեսնա, կը մըտնը ատ հօդին հինը, հօդից ինչ տ'իլնը տուս, հօղը սարտարը վերեն ախչըկան սուրաթ ատե կը տեսնա, խելք գըլխուց կը յա:

Քիչ բա'մ կը մընա, կիլնը, կը յա, տեվուն կըսը. - Ահա մըկա նա սուրաթը տեր բիրիր ծի խանար, յան չէ' մըկա ըգքի տը սպանեն:

Տեվն էլ կըսը. - Իս իրիք տարը արը թային վար անու սուրաթը տիրոջ, չըկարցա ծի խանար բերեր, գան շատ ցավցըցի, ան էլ գուր սուրաթ քեչից վար թըղթին, իս էլ բիրը, տըրը ըստա, տարին տիրըմ կը յամ, ատ սուրաթ թանաչա կանեն, իմ բըհեն կը խանիմ, կը տաննամ, մըկա ես ի'նչըխ յամ, քի խանար բիրիմ:

Պարակ Շախ կըսը. - Չըմ գըտնա, յան տը բիրիս, յան ըգքի տը ըսպանեն:

Ատ տեվն էլ կիլնը, կերթա, շատ չափալամիշ կիլնը, չըկանա բա'մ անը, կը գա, Պարակ Շախին կըսը. - Ացկուն սերպանտ արած ին, ինչըխ պըղընծի պես մըտիր հինը, ալ մարտ չըկանա բիրը, արը խա ծիկ, բալքըմ տու բիրիս:

Պարակ Շախն էլ կիլնը, կերթան ծովու պերան, տեվ կը բիրը, կըրակ կանը ատե:

Կըսը. - Անունք կը գան ըստա, ծի կը տըղիեն, կը գարկեն, ըգի անխելք կանեն, կը թըղնեն կերթան, իս կանախիմ, կը տեսնիմ ալ բան չըկա:

Ան էլ կըսը. - Ուր անցկուն ը, շատ կըրակ արա, թըխ շուտ իլնին տուս:

Կըրակ կանեն, ատ գուրլեմբեն ընչ պըղընծը նման ը, անցկուն կը շուգանան, կիլնին տուս:

Պարակ Շախ կըրակից գատըն նըստեր ը, տեվ գի մա կըրակ: Ծովու փարին, ուր խուրտան կիլնին կը գան, դեղըմ կը տան տեվու քընթին, տեվ անհաշ կընգըն հատե, անցկուն կը գարկեն, ըգտեվ մալըֆ կանեն, կը նըստեն հատե կըրակը կուշտ, ուրինց խանար քըրգախ կը շինեն: Անոնց խըյալ ալ մարտ չըկա ատեխ:

Պարակ Շախն էլ քանկը կընարեն կաղտիկ կը գա, կը թալը, ծովու փարին կիք կը գըրկը, կը գավթը, կառնը գան էլ, ըգխուտանն էլ կը բիրը, ըգտեվ կը ակախցը, կառնին, կը բիրին տեվու տուն:

Ատ փարին էլ կառնը ուր խանար, խուրտան կը տա տեվուչ, տեվուչ քուրեն՝ Պարակ Շախը մոտեն լաճ մը կիլնը, անուն կը դընեն Տեղին Շախ:

Պարակ Շախ օրըմ կը քընը, տեվն էլ կիլնը, կերթա կը խեծնը վար Պարակ Շախը սըրտին, ուր խիխտը, ատ կընիկ առնը ուր խանար: Ատու քուր կակախը, կը գա տըմըշկուլըմ կը գարկը, կը թալը տեն, կըսը. «Ատ նալիրուց անչըցը, ուր կախիր քու ականչքիրուց, ան քի չըսպանեց, տու ահը իս արիր, իլնիս անու խուլան, տու ի'նչըխ ըգան տը ըսպանես»:

Պարակ Շախ կակախը, կիլնը վե, անու քուր անու քըսա կանը, ան էլ կիլնը, տեվուն կըսը. - Տե'վ, տու էլըմ բեթախտ ընգար տուս, խա':

Տեվ էլըմ թոբա կանը:

Էտա փարին կիլնը տըղով, ախչիկըմ կը բիրը, կը մընա, քանի'մ ծանանակ վերա կընցնը, օրըմ ախչըկան անուն կը դընեն Փարիկ:

Էտա տեվն էլ կը բիրը, ատ ախչիկ բալիլ կանը, կը տանը, թալը ծով: Չաչանց խալկ կը տանեն Չաչանց թագավորը խանար կը պախեն: Պարակ Շախն էլ կիլնը, տեվ կը սպանը:

Տեղին Շախ կը ջոջանա, կիլնը, կերթա նեծիր, կերթա ուրիշ կագեն կիլնը տուս, էվարին կերթա Վառիկ Վարդանը քաղքը մեջ, տ'ուր կերթա, անու տեղ չըն իտա, ան էլ կը գարկը խալկ կը սպանը, կը ջարթը, կանջագը:

Վառիկ Վարդան կըտորիճ մարտըմ կիլնը, անու սարեն էլ գի քիչե'մ, անու կըսեն. - Մենք քու լայեղ չենք, գընա', Վառիկ Վարդանը քու լայեղ, մենք շիվար ենք, տու վար մի կանաս, գընա', ան քու հաղկ կը գա տուս:

Տեղին Շախ կըսը. - Վա'յ, մըկա ան անցկուն գորպա յը':

Կիլնը կաստ կանը, անու սարեն կը յա, Վառիկ Վարդան էվարին նեծիրից կը գա, հիսուն թաղիթ նեծիր խիտ կիլնը:

Կըսը. - Ո'ւյ, յանե վար ծի մարտ գա տալ, իս ժիր մարտ գա վար իմ տան:

Էտտեղ Վառիկ Վարդան կառնեն իրարու, կը կըռվեն, Տեղին Շախ կը գանը ըզվառիկ Վարդան կը սպանը, կէրթա Վառիկ Վարդանը սարեն, անու ախչիկ կառնը, կը նըստը: Վառիկ Վարդանի ախչըկան վերեն ժամանակը կընցնը, անու լաճը կիլնը, անուն կը դընեն Շիրին Շախ:

Շիրին Շախ ինչ կը ջոջանա, ֆեհմա կիլնը, ան Փարիկ, Շիրին Շախ մա էրագին ըզմեմեկ կը տեսնան, կը սիրվին վար մեմեկու: Շիրին Շախ խորոտ կը ջոջանա, հասակին կը խասնը, կիլնը, ըզձին կը խեծնը, թուր կը կապը վար ուր, կէրթա կագիմ, կէլնի տիւս, կը տեսնա հատե Սըվտակ տեվ, Սեվ տեվ կը կըռվին: Ատե Սեվ տեվ ընչ տարբ տը զանը, Սըվտակ տեվ կը բարակնա, կիլնը ինչըխ ասեխ: Սըվտակ տեվ ինչ տարբ կը զանը Սեվ տեվուն, Սեվ տեվ կը խաստանա, կը լըցվը, կը ջոջանա, կուռը:

Դորսեն կըսը. - Ի՞նչըխ անեմ, էրթամ Սեվ տեվու կընար, ան չըխոմ կըտրիճ ը:

Ան էլ կէրթա Սըվտակ տեվու կընար, Սըվտակ տեվ կըսը. - Աստըծո սիրուն, քի տու կընարըմ, չիլնը ան քաֆրը տարբ տեպնա քի, ախըր հա իս ընկիր իմ անու ձեռ, ձի տը ըսպանը, ըզքի էլ չըսպանը:

Շիրին Շախն էլ էսաց. - Թուղ ես էրթամ Սեվ տեվու կըռիվ՝ ըզՍեվ տեվ ըսպանեմ:

Սըվտակ տեվը կըսը. - Ձանիլու տարբ անուրն ը, իս զի կը տամ հիրչիվ, չուր ան ուր տարբ կը զանը:

Սեվ տեվ ուր տարբ կը զանը, կը պըրծնը, տորսեն Շիրին Շախ ուր ձին կը խեծնը, կը քըշը վար Սեվ տեվուն, թուրըմ կը գարկը, Սեվ տեվու գըլոխ կը թըռուցը, պոռուցըմ մոտեն կիլնը, գըլոխ կիլնը խատ էրկնուց:

Շիրին Շախ կը տատըր վար ջանդակին, ջանդակը կը փըրտը, Սըվտակ տեվ ձեռ կը տա ըզՇիրին Շախ, կը պըռնը, կը թալը արտաչափըմ կը զատնացըցը:

Սեվ տեվու գըլոխ էրկնուց կը գա տակ, կը տեպնա վար ջանդակին, ջանդակ կը տանը հանդուք:

Շիրին Շախ կըսը. - Բեթախտ Սըվտակ տեվ, տու վըրե՞ չըթողիր իս ըզՍեվ տեվ փըրտեր:

Սըվտակ տեվը կըսը. - Շիրին Շախ, խուհո՛ւտ, արեվո՛ւտ մեռնիմ, իս ան անպով ըզքի թըլցը տեն, անու գըլոխ քի չըտաներ

հանդուք, որ իս ըզքի չըթալեր տեն, ան սերպանտ էր: Տեսա՞ր տեպավ վար ուր ջանդակին, էլըմ տարավ հանդուք:

Սըվտակ, Տեղին Շախ էլան, իկին Սըվտակ տեվուչ տունը, Սըվտակ տեվուն էրկու խորոտ ախչիկ կեր, հիրիկուն քընիլու գախ հորողկից Տեղին Շախը, որ իցկեր մեկ ան կուշտ, մեկ ան կուշտ պառկելու գախ: Տեղին Շախն էլ մընչ թախ ան ախչիկ իրիշկից, մընչ թախ ան ախչիկ իրիշկից, չուր խըլխուն ախպոր պես էլան վե:

Տեղին Շախն էլ ահո արիր ը՝ չուր Փարիկ չառնը, թուհ մարտու մոտ չէրթա:

Սըվտակ տեվ էսաց. - Տեղին Շախ, քու մըրագ ի՞նչ կը, ո՛ւզը, տու զիմ խուզին ազատեր ես, ինչ իմ մոտեն գա, իս քի թախսիր չըմ անը, ձի էրկու ախչիկ կա, էրկուսն էլ կը տամ քիկ:

Տեղին Շախ էսաց. - Քու ախչիկքիր իմ մեր, իմ քուրն ին, լա իմ կընիկ Չաչանքտիր տարած ին՝ Փարիկն ը: Գո՛ Չաչանց երկիր, իս տ'էրթամ, չըմ գնա, որ տեղ վե էրթամ:

Սըվտակ տեվ անու կըսը. - Կը յաս ծովու պերան, կը մըռասա հանտեխ չուր էվարին, էվարին մուք կը տա, Փարիկ կը գա մա քիկ, մըհա ինչ շիրաթ տ'անը:

Ան էլ կէրթա հանտե, գիշիր կը մըռա չուր հանազան ժամանակ, Փարիկ ախչիկը չըկանա գա, մարտ կը հորողկը, կըսը. - Շիրին Շախին սիցե՛ք, որ կանա թըխ շոտ գա, ձիկ տանը, վաղ չէ մեկէլ որ ձի տը տանին:

Շիրին Շախ կը գա, Սըվտակ տեվուն կըսը. - Իս ի՞նչըխ անեմ, չըմ կանա վար ծովուն էրթա:

Սըվտակ տեվ ուր ախչկըտիրուն կըսը. - Ախչի՛, էլե՛ք Շիրին Շախի ձեռը, ոտքիր տեղեցե՛ք, որ կանա վար ծովուն ընցընը:

Սըվտակ տեվու ախչկըտիր անու ձեռը, ոտքիր կը տեղին, լա մեկ փշու՛մ տեղ կը թըղնեն, կըսեն. - Ապա՛ վըրե՞ ան գիշիր մը՛նչ մի մոտեն պագըմ առեց, մը՛նչ... որ անցկուն ը, մա մեկ ոտ թըղ մըռա կիսատեղիլ, ուր չարչարվը:

Շիրին Շախ կիլնը, կը յա Չաչանց երկիր, ան մեկ ոտ չըխուրվը, լա ան մեկէլ ոտ համա կը խուրվը, անտարգ չարչարվելով կէրթա, ըզծով կը խըլըսուցը: Սըվտակ տեվն էլ մագըմ տըվիր ըզՇիրին Շախ, սիրը. «Ուր նեղ տեղ ընկնիս, մագ տաս կըրակ, իս քի կը խասնեմ, մեկն էլ ծով կը խըլըսցիս, կէրթաս Չաչանց երկիր,

խեղեղ կիւնը, ըզմարտիր զըմեն կը տանը, տու կիւնիս ծառ վե, չուր խեղեղ կիւնը, կը պըրծնը, կիւնը արեվ, խեղեղը տավսը խիտ կերթաս ծովու պըռուկ, հանտուց ծովու քավու պես բա՛մ կառնես խա՛ քի, կերթաս, կերթաս թագավորը քաղաք, ըզքի կանիս հեքըմ, թագավորը լաճ պրինտար ը, ըզքի կը տանին ան պրինտարը վերա, ան ծովու քավ կը տաս վերա, կը լվաս, էլմէլ կը ցըրցնիս վերա, կը սաղանա: Ան էլ քի կըսը՝ քու ուզիլուն ո՛ւզը: Տաւ էլ կըսես՝ իմ տեղ զանն ը, ծի քու ծին կըպը խեծնիմ էրթամ»:

Ան էլ կիւնը, կերթա անու սածը պես հըմեն կանը, ըզթագավորը լաճու ծին կուզը, կըսը. - Դա՛ւ, քու սովորըցըցողը պերան կո՛ւտը, հայտե՛, իս ահդ իմ արիր, ա՛ռ:

Ձին կը տա Շիրին Շախին:

Դորսեն կիւնը, ըզՓարիկ ծին կը քըշը: Դիրիկուն ընչ խալկ կը քընեն, կառնը ըզՓարիկ, կը խեծնը ըզծին, ծին կը քըշը: Ատ ծին վար ծովուն փըշուր չըր խուրվը: Ինչ վար ծովուն վե կերթա սար-ծոր կը կանչեն՝ հա՛ւ, թագավորը խարս տարան, Փարիկ տարան:

Չորս կընարեն Չաչանց ախշկըտիր իկին, անու չուրսբալիւր բըռնեցին, իրիք օր, իրիք գիշիր Փարիկ, Շիրին Շախ խատ անքարքիրուն կըռիվ կանը: Քանը կը սպանը, Չաչանքտիր էլմէլ կը հավելնան: Իրիք օր, իրիք գիշիր, օր կը մընա, քիչ մընաց, օր ծովուց իւնը տուս, հատե նեղ կընգնը, ծեռքեր կը թուլնան, կավաթե կընգնը՝ Սըվտակ տեվու մագ կը տա կըրակ, Սըվտակ տեվ կը կանչը, կըսը. - Խուհզուտ, արեվուտ մեռնիմ, դու նեղն ես ընկեր, ի՞նչ կուզես, օր անեն:

Շիրին Շախն էլ կը կանչը.

Կուզիմ բիրթիկըմ քարեղեն,
Պողվըտե բատանը բալիւր,
Թըլիմ իմ Փարիկը մեջ,
Դաննամ իմ կըռվու վերեն:

Սըվտակ տեվ կը կանչը.

Իս կիւնիմ բիրթիկըմ քարեղեն,
Պողվըտե բատանը բալիւր,
Էրկըթե տարգըխքիր վերեն,
Դու թա՛լ քուր ախպոր վերեն,
Դանցը քու կըռվու վերեն:

Շիրին Շախ կըսը.

Կուզեմ բիրթիկըմ քարեղեն,
Պողվըտե բատանը բալիւր,
Էրկըթե տարգըխքիր վերեն,
Թըլիմ իմ Փարիկ մեջ,
Դաննամ զիմ կըռվու վերեն:

Սըվտակ տեվ կըսը.

Իս կիւնիմ բիրթիկըմ քարեղեն²⁸.

Չորսին տեվ կըսը.

Թա՛լ ախշիկ հոր վերեն, էմէլ չանը:

Կըտին տիր կըսը.

Թա՛լ սանամեր քավրոչ վերեն,
Դանցը քու կըռվու վերեն:

Տեվ կիւնը բիրթ, Շիրին Շախ ըզկընիկ կը թալը տեվուչ վերեն, տեվ կիւնը բիրթըմ, կը գա հիրար, կընիկ կը մընա մեջ, ինք կը դաննա վար ուր կըռվուն, քանը կը սպանը, տըհա կը շաննան:

Յոթ օր կը կըռվին, ըզանքար կը հաղթը, կիւնը տուս:

Սըվտակ տեվ կը քակվը, կըսը. - Սանամեր թալիր իս քավրոչ վերեն, ա՛ռ իմ ախպեր:

Շիրին Շախ կիւնը, կառնը ուր կընիկ, կը դաննա տուն, յոթ օր, յոթ գիշիր խարսնիս կանը, կը պսակվը:

Էն կը խասնը ուր մըրագին, դուք էլ խասնիք ծի մըրագին:



²⁸ Կրկնում է երեք անգամ իր ասածը, երեք անգամ կրկնում է և Շիրին Շախը (Ճ.Բ.):



45. ԾՈՎՈՒ ՅԱՄԱՍ

Ժամանակը կիլնը թագավորը, ուր իրիք լաճ: Թագավորը աչքեր կը պըռվը:

Թագավոր կըսը. - Իրիք լաճուց ուր կանա իմ աչիչ տեղ բիրը, թող յա, ձի խամար տեղ է:

Ես լաճ գընաց, կան իրը, իրիք օր վերա ընցավ, չըկարգավ կընտըներ, տարցավ, իրը:

Միչնիկ լաճ գընաց, վեց օր կան իրը, ան էլ չըկարգավ կընտըներ, տարցավ, իրը:

Պըզտիկ ախպեր՝ Միրզո, գընաց, տասերկու օր կան իրը, գիշիր իտու վերա, լուսըմ էրեվաց, գընաց, մոտխըսցավ լուսուն, կը խը, ատ լուս խավթու փան մը գետին լուս կը տա, ձիուց պայա էլավ, ատ փան առեց, էգար ուր գըլոխ:

Ձիուն լեզու իրը, էսաց. - Ատան փան թըղ, ատ փան քիւ գըլոխ շատ տը ցավցըցը:

էսաց. - Չէ, նա գիշիր կենա իմ գըլխու վերա, ցերեկվան թարգ լուս տիլնը, հուր իմ ջան ուզը, տ'երթամ:

Ձին էսաց. - Տը փոշմանիս, տու գըտիս:

Ձին խեժավ, գընաց ան տեղաց ուրիշ կանգեմ ընկավ տուս, թագավորը սարը փանջարեն տակ վե ընչ կը ընցը, ատ փանը շանավիլը իտու թագավորը հօղի մեջ:

Թագավոր էսաց՝ նա ի՞նչ լուս էր, մարթ հորողկից, էսաց. - Գընա՛, իրիշկը՝ ի՞նչ կը:

Գընաց, իրիշկից, կը տեսնը՝ մարթըմ ձին խեժիր, փանըմ գի գըլոխ, ատ փանից լուս կը տա:

Իրը, էսաց. - Մեկ մարթ մը ձիով ընցավ, փանըմ գի գըլոխ, ատ փանիցը ատ լուս:

Թագավոր էսաց. - Գացե՛ք, ատան մարթ բըռնե՛ք, բերե՛ք, մը հա ատ ի՞նչ փանը:

Գացին, բիրին մարթ, իրը էլ նա ձիու կան պերենն էխան, համա ձին անկուն էթող, գընաց թագավորի մոտ:

Թագավոր, ատան Միրզո նըստան իրիք օր, ատ փան տըրին մանչ ուրինց, թամաշա արին, դոստեն քաղը միլաթ, ուրզիր, մալխո, սիցին. «Մի թագավոր փանըմ անպով նա իրիք օր նըստիր, թամաշա կանը, մի բանեն չիրիկը, ան մարթուն մընակ կը նայը, էլ մի խիտ չըգրուցը: Պիրենք նա մարթ անցկում անենք, ուրը էրթա կուրուսը, ան չըգան արտան թագավոր տառնա վար մի»:

Դոստեն ուրզիր, մալխոն կերթան թագավորին կըսին. - Անիկ խավթու մեկ փանը, ընցենն լուս կը տա, ան խավթ կըպը բիրին քի, օր տընիս քիւ հօղեն, գիշիրն էլ լուս տա, իլնը քանց ցերեկ:

Թագավոր էսաց. - Վո՞վ տ'երթա ան խավթ բիրը:

Ուրզիր, մալխոն սիցին. - Նա փան վով բիրիր, ան էլ էն տ'երթա բիրը, ան գընա դուր կա:

Թագավոր ատ Միրզոն էսաց. - Քենե կուզիմ՝ նա փանը տեր խավթ, յան բիրիր, յան քիւ վիզ կը գանիմ:

Դոստեն Միրզո ձին կիյնը ուր միտ, կըսը. - Ահա իրիք օր կա ձին անութը յը, ան իս ինչըխ անիմ:

Գընաց, նըստավ ձիու մոտ, ձեռ իտու կան իպը, ձին էլ կիրիշկը հինը, իրիք օր կա անութը յը, ոըկիր ը:

Միրզո խավթու տեղ չըգընա դո՞ւրն ը, չըգըտնա դո՞ւր կա, ան էլ էլաց, նըստավ ձիու մոտ, զինք էթալ վար ձիու ուրտքիրուն:

Ձին էլ էլավ, խեղճ էկավ, լեզու իրը, էսաց. - Չէ՞ քի սիցը՝ փան մ'առնը, ատ փանից շատ պալա տը քեշիս: Քիւ թագավոր ի՞նչ կուզը:

էսաց. - Ան փանը տեր խավթ կուզը:

էսաց. - Գընա՛, քիւ թագավորին սա՛՞ քառսուն պեռ կուրիկ, էրկու պեռ ցուրին տա պառնալ, գա տանենք հանտե, ձի խեժնը, ցանը ու գընա, ատ քառսուն պեռ կուրիկ ցանը ու գընա, անցկում իլնը՝ հըն առտը մեջ էրկու կուրիկ իյնը: Ատ էրկու պեռ ցուրին, ան

փառ ընչ ընկեր էր, դի՛ ան փառը տեղ, պերան բն՛ց, ան թեռը տակ փո՛ւրը, իսն էլ, տու էլ պաղկվինք ան թեռան տակ, ըզմի չըխին, ան խավքն էլ խավքիրու թագավորն ը, արիվ տեպնը, ան խավքիր կը գան, կիրիշկին, կը խին, կը գան, կերթան խավքիրու թագավորին կըսին. «էրկըր թագավոր գիաֆաթը տըվիր մի խավքիրու թագավորին, էլե՛ք էրթանք»:

Քանի՛ն խավք կա, զուրեմն թագավոր կառնին խան ուրեմն, կը բիրին, կը դնին վար ան ցուրնը պերնին, դորսեն անա՛ մեկէլ խավքիրուն տաստուր կը տա, ցըրվին ան ցանուկ կըրկըտիր ուտին, ան խավքն էլ դողա կանը թագավորին, կըտուցըմ կը գարկը, ան մեկ կան սաղ կը վիրուցը, կը կայնը գըլոխ կը պանց-րանցըցը, կենա՛ թագավորին դողա կանը, Միրզո կը թալը, ոտքիր կը բըռնը, գյուր ձին՝ կը խեծնը, կը փախը:

Չուր ան խավքիր կըրկըտիր կը քաղին, էլ չըն տեսնա զուրեմն թագավոր, ալ չըն գըտնա դուրը տարած, Միրզո կուրախանա, ըզխավք կանը, կը տանը թագավորը խանար, կերթա կը խասնը թագավորը սարեն, խընտալուց էլմէլ ձիու կան չառնը տակ, անութը կը թըղը հանտե, կը յա մատ թագավոր, խավք կը տընը հանտե, շատ կը խընդանա: Գիշիրն էլ կիլնը ինչըխ ցերեկ, անա՛ ուրզիր, մալխոն կըսին. «Ջանըմ, մենք հորողկիցինք ուրը էլ չըգեր, նա՛ գընաց, իպը, ապա նա՛ հուրդե՞ հորողկինք, օր յա ալ չըգա, սինք սերըպանտ խանըմըմ կա Ֆըլան տեղ, անիկ խավքիրուն լեզուն կը խասկանա, ան գա՛ ըստա՛, նա՛ խավքու լեզուն տը խասկանա, կը թարկմանը, մարթ կը հիմանա, անու լեզուն շատ անուշ կիլնը»:

Թագավորին սիցին. - Թագավոր՝ ապրած կենաս, ան կընիկ գա, նա՛ խավքու լեզուն թարկմանը, շատ աղեկ կիլնը, էլ կըսուր չըմընա:

Էսաց. - Ապա՛ վո՞վ տը բիրը:

Սիցին. - Փառ վո՞վը բիրիր, խավք վո՞վը բիրիր, ան էլ ան տը կարը բիրը, քանց ան ա՛վիլ:

Թագավոր կըսը. - Միրզո՛, քյենե կուզիմ՝ էրթաս ան խանըմ բիրիս, թե չէ՛ քու վիզ տը գարկին:

Էլմէլ Միրզո կիլնը, ձին կիյնը ուր միտ, կըսը. - Ձին ոըկիր ը, ալ վո՞վ ըզի տը տանը հանտե:

Կիլնը, կերթա մա՛ ձին, ձիուն յալվարմիշ կիլնը, ձին չըգրուցը խիտ, ան էլ սըհաթըմ նըստավ, ձիուն լավա արավ, գանտ խու, ան կերավ, ձին գրուցեց:

Ձին էսաց. - Ի՞նչ իլիր, Միրզո՛:

Էսաց. - Թագավոր կուզը, կընիկըմ կա նա՛ Ֆըլան տեղ, կասա՛ խավքիւ լեզուն խասկընա, թագավորի խանար պատմը:

Ձին էլ էսաց. - Գընա՛, քիւ թագավորին սա՛ չափըմ ցուրին, մեկ աղ խառնը հիրար, աղա, անը մեկ-էրկու կըլո՛ճ:

Միրզո գընաց, խու շինել, առից, իրը, ձին խեծավ, գընաց, մոտխըսցավ ան խանըմու կազին:

Ձիուն լեզու իրը, էսաց. - Կատղած շու՛մ կա ճամբխը վերա, թու իսան չըկանա ընցընը, ան շուն կը գա, ան մեկ կըլո՛ճ թա՛լ, թըղ ուտը, չուր ան ուտը, մենք կերթանք գյիտու՛մ կը մոտխըսնա, ինչ կը տաննա, կը գա, ան մեկէլ կըլո՛ճն էլ դու թըղ ուտը, անցկում կը ծարավնա, կը խասնը վար անա՛ արնե գյիտուն, շուն ընչ ճուր կը խըմը, կը խատնը: Մեկէլ ինչ կը խասնիս ան գյիտուն, սա՛ օ՛խ, սա ինչ անուշ ճուր ը, իս լա՛զ չիլներ, անդու՛մ տը խըմեր, կերթաս, հանտե տարկախըմ կա, կը խասնիս տարկախը վերա, անիկ սերըպանտ ը, չըգրուցիս, թարանջեն վե կիլնիս վե, անու մազիր կը պըռնիս, կը քյելիս, ինչ թարանջեն վե կը քյելիս, անու քըթեն իրիք պուտ արուն տը գա, ինչ արուն տը գա՛ խան վե, սերին տը պատուր: Ինչըխ կուզիս, անցկուն արա՛, դորսեն անու սերին կը պատուր, քո խոր աչիչ տեղըն էլ կո՛ հականատ կութին վե, կութին կանիս, կը տընիս քիւ ծուց, կը բիրիս:

Ինչըխ ձին Միրզոն թարիֆ արավ, Միրզո անցկում արավ, առեց, իրը թագավորը մոտ, իրիք օր վերա ընցավ, խավք տորիս կը գրուցը, կընիկ թարկմանը, ինկած ուրեմն քեֆը խիտ:

Ուրզիր, մալխոն սիցին. - Ապա ի՞նչըխ անինք, դո՞ւր կուրսըսցիք, հորողկենք Ծովու հանամ բիրը: Ան չըխ չըկարը մըտնը ծովու մեջ:

Թագավորին սիցին. - Շա՛տ աղեկ ը, շատ անուշ բան ը, հանա՛ բա՛ն կա պակաս:

Էսաց. - Ի՞նչ կա պակաս:

Սիցին. - Քու յալ ծիրացիր իս, քյի կըպը Ծովու հանամ, հան ձի յը խեծնիս, հան քանկը վերա հանամ ը, ինչ լողկանաս, տ՛իլնիս երսուն տարեկան:

Կըսը. - Ապա վո՞վ տը յա, բիրը:

Կըսին. - Վով խավք, կընիկ բիրիր, ան էլ ան տը յա, բիրը:

Կըսը. - Դե՛հ, Միրզո՛, քյենե կուզեմ՝ յաս, Ծովու համամ բըռնիս, բիրիս, համ ծի յը, համ համամ ը, յան չէ՛ քու վիզ կը գարկեմ:

Կըսը. - Դա՛յ, հո՛յ, իմ ձին էլմէլ մընացիր անուբը, ձին չիլնը, իս չըմ կանա բիրը:

Գընաց մատ ձին, կը խը՛ կիրպեք առիր հիրար, անուբըթնե ականջքիր շոռ առիր, մաղտեն արիր, կայնիր հանտե, ան էլ կան պերնեն առեց, իպը տակ: Գընաց, փըշու՛մ խուտ իպը, իտը հիրծիվ ձիուն, էլմէլ յալվարմիշ արավ:

Ձիուն լեզու իրը, էսաց. - Թըղ տու կան իմ բերնեն խաներ, իս փըշու՛մ նա կըրլըշքիր ուտեր, պաս էր, տու իմ կամըն էլ թըղիր իմ պերան, գացիր, ընկար խա քու քեֆին, գընաց, ջանձամ, թըղ քու վիզ գարկեմ:

Մարթըն էլ շատ յալվարմիշ կիլնը ձիուն, ձին կըսը. - Ի՞նչ իլիր, ի՞նչ կուզը:

Կըսը. - Յան տերթաս Ծովու համամ բիրիս, յան քու վիզ տը գարկեմ:

Կըսը. - Դայտե՛, ուրը քու վիզ տը գարկեմ, յանք, թը կարգանք բիրինք, թա չըկարգանք, խընտրաց մեռնենք: Գընա՛, սա՛ քառսուն գոմշու կաշը օծուկ, քառսուն էլ քիսա պըր թե թախիս՝ տըզկըցըցին, բի՛, ա՛ռ վար ձիկ, սաղ ծածկիս, իմ լեշ տեղըմ չերեվա, ան ինչ Ծովու համամն ը, իմ մերն ը, տըսընմեկ քուրիրն էլ իմ քուրիրն ին:

Կերթա կը բիրը, կը հագըր, կառնին, կերթան ծովու պերան, ձին կըսը. - Ես կը կայնիմ ըստա, տու էլ նա քար շո՛ւռ տու, կան կա նա քարը տակ, ան կան խանիս, բըռնիս ձեռ, իրիք տիր գարկիս ծով, քելիս, Ծովու համամ՝ իմ մեր կը գա, ինչ կը գա, տու կըտորի՛ճ կաց, ըզկան գա՛ր պերան, գըրի թա՛լ քանակ, տ՛ըսը քիկ. «Իսան օղլի, ըզքյի տը խանիմ հիրծիվ արեգական, ըզքյի տը վանիմ», տու սա՛. «Մըրա՛զը ձի, իս ձի կը տամ քու փուրու տակ», տըսը. «Ըզի վիրուց կը գարկիմ տակ, փարչա-փարչա կանիմ», սա՛. «Ես կիլնիմ վար քու քանկին, էլ չըս կանա ըզի գարկը տակ»: Ձին կըսը. «Ըզքյի անցկում կը վանչկագիմ, քյի կը գարկեմ քարեքար, փարչա-փարչա կանիմ», սա՛. «Իս ըզի վար քու քանկին անցկում կը բըռնիմ, Աստըծով բան չիլնը»: Դորսեն ան

ինչ ծովեն տ՛իլնը տուս, տըսընմեկ ջըվանի անու խիտ տը գան, իմ քուրիրն ին, ինչ աչ իյնը ըզքյի, տը լարին իմ հիտիվ, իս տը փախիմ, տու էլ կահիմ կաց, ըզանուց մեր կահիմ բըռնը՛, թը գավթիցիր, անուց ան բան չըն կանա անը, թը չէ՛ գի էլ, ըզքյի էլ տ՛ուտին:

Ձին անու շանք տալու թարզ անու կիրա կանը, Ծովու համամ կը խեծնը, կը գավթը, դորսեն կը կանչը ան տըսընմեկ ջըվանանց տիրուն, վազ կը գան, անուց ըզձին բըռնած թաղուքիր, կալիք փըտըռտալ, լալեկեն տալ բա՛մ չարած, մեր կը կանչը, կըսը. «Տա՛րց կացեք ձյի քըրոչ մոտեն, իս հանթըվա, տու էլ կե՛ք ռայը»:

Ձիանք ջուվանիքըն էլ կը գան, մա մեմեկ կը խընտանան, կիլնին տըսըվերկու ջըվանը մեկ Ծովու համամ:

Կառնին, կը գան, կը խասնին մա թագավոր, Ծովու համամն էլ կըսը. - Ա՛րը, թագավոր ըզքյի տը սպանը, տու էլ ա՛րը՝ իս գիմ քանակ տանիմ համամ, լողկանցը մեչ, տու կը ջըհեկանաս, թագավոր ինչ տեսնը, տու կը ջըհեկանաս, անուցըն էլ կը գան, տը լողկանան, իսն էլ իմ քանկը վերա կանիմ մեկ-մեկ կազան, ինչ անուցը կը մըտնին մեչ, կը ջըջացըցիմ, կը խեղտըվին:

Անցկուն կանը. անուցը կը խեղտըվին: Կիլնը, ըզխավք, ըզկընիկ, ըզտեղ կառնը, ջուվանիք, Ծովու համամ կառնը, կը գա ուր խոր էրկիր:

Ձըհապ կերթա անու խոր, կըսին. - Քու լաճ՝ Միրզո, իրը, լուսու խավքըմ կի խիտ, Սինամ փարի՛մ կի խիտ, Ծովու համամ տըսըվերկու ջըվանը կի խիտ, աչիչ տեղ կի խիտ:

Նայիսա գընաց ուր տեղ, խեր անու գըլոխ պագնեց, վար մեմեկը խընդացան, աչիչ ճուր էգար խոր աչիչ, փառ քըսից վերա, ծըրավ, խերըն էլ իրիշկից, ըզատ խանըմ սերտ վերա ավրավ, ուզեց ըզլաճ կուրսըսցեր, ուրը ըզխանըմ առներ, Ծովու համամ էսաց. «Քու խեր կուզը՝ ըզքյի կուրսըսցը, ըզքու կընիկ առնը, քու խոր սա՛ կակո՛, տու խալվուրցիր իս, պետք ը՛ տու էլ լողկանաս մա նա Ծովու համամին, ջըհեկանաս»:

Ան էլ կը լողկանա, կը խեղտըվը:

Միրզոն էլ կանին թագավոր, կը տընին թաղթ, յոթ օր, յոթ գիշիր խարսնիս արին, անուցը խասան ուրենց մըրագին, տուք էլ՝ ձեր մըրագին:



46. ԱԼ ԿՅՈՒԼՆԱԸ

Ժամանակը թագավորը կհիւր, ուր քառսուն լաճ:

Թագավորըն էլ կը մընա, մեկէլ չըմահըր, կըսը. - Իս չըմ կա-
նա խն քառսուն մարթու խիտ բարեկամութիւն անը: Գացե՛ք, մար-
տըմ կընտե՛ք, ընչ անու քառսուն խատ ախչիկ իլըր, հըմեն մեկ-
մեկ առե՛ք, մահըրվե՛ք:

Դորսեն կըսը. - Կերթեք, չահիրըմ ծի ռաստ կը գա, ան տեղ
պայա չէլնե՛ք: Գիշիր կիլըր, չըտատրե՛ք, ընցե՛ք ան չահիր: Մեկն
էլ կերթե՛ք, ծի ճամխը վերեն խըրապա ջանացըմ կա, ան տեղ էլ
պայա չէլնե՛ք, ընցընե՛ք, կերթեք տեղըմ էլ կա, հեր ը, ան հերըն էլ
չըտատրե՛ք, մեկէլ գիշիր դուր կոնախ կիլնե՛ք, ծի քեֆն ը: Գանն
ան իրիք տեղ պայա չէլնե՛ք:

Դորսեն քառսուն էլ կիլնին, ուրենց թատարիք կը տեսնան,
ուրենց ծիանք կը խեծնին, կերթան հեվարման տոր կը խասնին
ան չահիր, չահիրի մեջը կը քըշին, կը քըշին չուր էվարին, կեսըն
չըն կանա կըտոր:

Կըսին. - Ջանըմ, մըկա տը յանք դո՞ւր, ըստն քըլինք: Ըստն
խուտ, ճուր շատ կա, կը մընանք ըստն, կը ռըհաթինք, խըլխուսն
կիլնինք, կը յանք:

Դոր պըզտիկ ախպեր՝ Միրգամահմատ, կըսը. - Ախըր չէ՞ մի
խեր մի շիրաթ արիր ը, թը չահիր չըկանե՛ք: Մի խոր ուըսաթ
չըկուրսըսցինք:

Մեկէլ ճուչ ախպերքիր սիցին. - Ահն Միրգամահմատ չըխտ
կըտրուկը հինը, մըկա ինչ տ՛իլըր, ֆարգա մի խեր հանտե ուր
խամար կըսեր:

Պեռնիր թըլցին, մեմեկ վար ուր պեռան ուր գըլոխ խըր,
ռըհաթ քընան:

Միրգամահմատ էլավ, կան իրը, իրիշկից, կը խը՝ ուր
ախպերքիր գըն փըռուց տըրած, հինը քընած: Լուսնակ գիշիր
ինք էլ էլավ, սիլախլանմիշ էլավ, գենքիր կապից, էլավ, պեռնիրու
բուլուր կան իրը:

Չում կեսգիշիրին տեսավ անտա կընարեն մեկ փըռուցըմ կը
գա, կիրիշկը, կը խը՝ վիշապըմ անտա կընարեն կը գա, կանտ
արիր անանց կը գա, ուր ըզանուըք կըլնը:

Ան էլ հանն անուն Աստըծուն արաց, թուր քեշից, զինք
խուտ թաղ վիշապ, գընաց, ըզվիշապ ըսպանից, վիշապը ականց-
քիր կըտրից, էթալ ջըզտան վե վիրուց: Ատ վիշապը կտուրքիրըն
էլ ան տեղեն առից, տարավ, էթալ հուրիշ տեղ, ուր տա խըլխուսն
ախպերքիր չըտեսնան: Վար ուր չառնը, սը, ուր՝ իսն իմ սպանիր:

Դորսեն կը գա կը լըվացվը, չուր կը լըվացվը, աղթրան կը
քացվը:

Կիլնին, կը բառնան, կերթան: Չուր էվարին կը խասնին ան
ջանաց:

Կը մըթըր, էլըմ ախպերքիր կըսին. - Մըկա տ՛երթանք հուր-
տը, ջանաց տալտա տեղ ը, ճուր կա, մընանք ըստն, խըլխուսն
կիլնինք, կերթանք:

Էլըմ պըզտիկ ախպեր էսաց. - Էկե՛ք մի խոր ուըսաթ չը-
կուրսինք, ըստն չըկուտրինք:

Մեկէլքիր սիցին. - Ահն վաղկուկ Միրգամահմատ տու չըխտ
հախու կը կըտրիս հինը, հերեկ չահիր մընացինք, ի՞նչ էլավ: Նան
անուշ տեղ ռըհաթ:

Նայիսա պեռնիր թըլցին, մեմեկ ուր գըլոխ խըր վար ուր
պեռան, քընան:

Միրգամահմատ էլավ, կան իրը, կը տեսնա, կիրիշկը ախ-
պերքիր գըմեն քընան:

Կըսը. - Ըստն էլ մի թըվաղկըմ կա, հանտուց իմ խեր կըսեր՝
չըկայնե՛ք:

Կիլնը, թուր կապից վար ուր, էլավ, կան իրը չում կեսգիշի-
րին, տեսավ գատնու խիտ կըրակըմ էրեվաց, էլավ, կանտ արավ
ան կըրակին, գընաց, մոտխըսցավ, ինչ կը տեսնա՝ մարթակիր
պառավըմ ան կընարեն կը գա, ծըծիր թալիր մեկ վար ան թիվին,

մեկ վար ան թիվին, խնամարանկապ: Ատամքիր ուրագը նման, ինչ կը տեսնա հիրար, անու հըրսից կըրակ-բոց կը թալը, ան էլ ըզինք իտու մեկ քոշեն, պահանավ էսաց. «Նա մարթանկիր ը, ուր ծի մեկեն տեսնա, ծի տ'ուտը»: Ջինք իտու քոշե'մ, պառավ ընցավ:

Ան էլ հիտիվանց էթալ, ըզծծիր պըռնից, իտու հիրծիվ թըրը, սպանից ըզպառավ: Պառվու ականջքիր կըտրից, էթալ վար վիշապու ականջքիրուն, ան էլ մընաց չում խըլխուն, էլան, գանցին:

Չուր էվարին խասան ատ հերը տակ, մըսուրը, քառսուն խատ շինուկ ծիու մըսուրը, քառսուն էլ հարտ, խուտ լըցուկ ը, գանին լըցվեր վերա, դորսեն կը տեսնը քառսուն աման էլ տաք կերակուր տըրուկ, համեն ամընը վերա գըտելըմ տըրուկ, շորանք մոտեն կը յա:

Մեկէլ արապերքիր հանա խասան, ծիանք տարան վար մըս-րին, նըստան վար կերակուրին, սիցին՝ օֆ, ըզկընա անուշ տեղ մի ռաստ չի գա:

Պըզտիկ արապեր էսաց. - Ախապերքիր, ատնա էմակ ծի խանար չիփած, ծի խանար չըտըրած, էտու տեր կան, մըհա տուր գանցած գանխը՝ գան: Չէ՞ ըստնա մի խեր մի էսաց՝ ըստնա չըտնա-րեք: Քըշեք, էրթանք:

Մեկէլ արապերքիրն էլ սիցին. - Անա Միրզամահմատ, գանցինք չահիր, ի՞նչ էլանվ, գացինք քաղաց, ի՞նչ էլանվ, ըստնա ի՞նչ տ' իլնը: Ուրլա՛, տը մընանք ըստնա:

Պեռնիր թանցին, նըստան, Միրզամահմատ էսաց. «Նա ան-տեր չը, մըհա իլնինք կա ըստընը»: էլանվ, կան իրը, տեսավ ատնա հերը մեչ տոռըմ էրեվաց, ատ տոռ էբաց, մըտավ, գընաց մըսրեն հինը: Տեսավ ի՞նչ, կիրիշկը, կը խը՝ քառսուն խատ դեվ կի հատն նըստած ին, ատնա ջոջ դեվ նըստիր հըմենանց գըլոխ:

Անու մեքք չըվամ չի գա պուլուր, պանթ քանց սպինտարըմ, դորսեն ջոջ դեվ ուր արապերքիրուն էսաց. - էլեք՝ մըհա մի էմակ չըպաղի, էրթանք, ուտինք:

Ախապերըմ հորողկից, ատ արապեր էլանվ, իրը մըղարը մեչ: Միրզամահմատ թուրըմ էգար, գան դեվ ըսպանից:

Պոմ մընաց, ջոջ դեվ էսաց. - Տըղա՛, մեկէլ գանցեք, իրիշ-կացեք:

Մեկէլ ինչ գընաց, էլանվ վար տըռան, գանու վիզըն էլ կըտրից:

Ատ ջոջ դեվ մախսուս ուր հերսունինն արապեր հորողկից հատն, ատ մըղարը մեչ, Միրզամահմատ գանուընք ըսպանից:

Ատ հըրըն արապեր ընչ սպանվավ, ատ ջոջ դեվ կանչից. - Թագանվորը լաճ, Միրզամահմատ, գիմ հերսունինն արապերըն էլ սպանիցիր, պըրծար, էլ տու, քիւ քառսուն արապերքիրն էլ գիմ ծեռնեն հո՛ւստ տը պըրծընեք, վըրե՞ իս չըր կանա, իմ արա-պերքիր հըմեն խընտրուց հորողկը, ըզքի էլ, ըզքիւ արապերքիրն էլ, ինչ կի ծիանք կապած վար մի ծիանքտիրու մըսրին, ուրինք նըստած մի էմակտիր կուտին: Յիս չըր կանա գըմեն էլ հորողկը, ըզծի սպանիլ տա:

Միրզամահմատըն էլ էլանվ, տանցավ, գընաց, ուր արապեր-քիրուն էսաց. - էլեք, խանար սիցը՝ ըստնա պանյա չինք իլնը, էլեք թանապիրըմ տըվեք հինը: Չէ՞ մի խեր գընեք՝ ըստնա ինչ էր:

Ախապերքիր սիցին. - Ի՞նչ իլիր:

էսաց. - Յերսունինը սպանիր իմ, մեկ դեվ մընացիր ը, իմ կանվաթ գան չըհաղը, էլեք, էրթանք, խընտրուց գան սպանինք: Թը չըք անվատա էլ, առեք:

Պանվու ականջտիր էխան տուս, էթալ հիրծըվքիր:

Անուընց էսաց. - Նա վիշապ չահիրն իմ ըսպանիր, նա պառ-վու քաղացն իմ սպանիր, նա դեվիրն էլ ըստնա իմ սպանիր: Չէ՞ իմ խեր էսաց, տու չըավտանցիք, էլեք, թանապիրըմ տըվեք հինը:

Ախապերքիրն էլ սիցին. - Ինչըխ գան վիշապ, գան պառավ սպանիցիր, դեվիր սպանիցիր, գընա՛ գան մեկըն էլ ըսպանը: Մենք չընք գըշխընա գա:

Միրզամահմատ էլանվ, տանցավ գընաց, մըղարեն հինը, կը խը՝ ատնա դեվ նարկըլեն տըրիր, ոըհաթ ոըտ թանիր վար ոըտաց, ուրը նարկըլեն կը խըմը:

Կանչեց, էսաց. - Յե՛յ, Միրզամահմատ, տիւ ինչ տանցար, գանցիր քիւ արապերքիրուն սըցիր՝ էլեք էրթանք, ըզդեվ սպա-նինք: Ատ պան տու չըք կանա անը, իմ քան պուլա յը, մըկա բերեք ըզի փանրչա-փանրչա անեք, իս կը սանղանամ: Վըրե՞ իս չըր կանա ըզքի ըսպանը: Ուրը տիւ գիմ հերսունինն արապերքիր ըսպա-նիցիր, լն իս քիւ ջըհելութըն խանար քիւ, քիւ իկիթութըն խանար իս իմ արապերքիր կուրբան արը քիկ, ծի էլ քառսուն քիւր կա,

կանչը՝ քու ախպերքիր, թող գան, իս իմ քուրիր հըմեն մեկը ձի խամար մեկ տամ:

Միրգամահմատըն էլ կանչեց, ուր ախպերքիր իպը հանտե, Ջանպոլոտ էլավ, հըմեն մեկը տուռըմ շանք իտու, հըմեն մեկ գանցին մատ մեկ քուր, ջոջ ախպեր ըզջոջ քուր առից, պըզտիկըն՝ ըզպըզտիկ, տարանա՛, տարանա՛:

Մընաց խըլխուեն, ատ կընքըտիր, Ջանպոլոտ իտու մեկ-մեկ ատ ախպերքիրուն, առին, տարան:

Էսաց. - Միրգամահմատըն էլ թող կենա ըստա, քանի՛մ օրեն կառնիմ, կը գամ, անու կընիկըն էլ տարե՛ք խատ ձի, լա՛ մեկ թըվաղկ վար անու կընկան գա, տը գամ ըզձի մեկ-մեկ ըսպանիմ, զիմ քուրիր առնիմ, գամ:

Ատ ախպերքիր էլան, ըզկընքըտիր առին, գանցին:

Միրգամահմատ, Ջանպոլոտ մընացին ատ տեղ, էրկօր վերա ընցավ, Միրգամահմատ էսաց. - Ջանպոլոտ, տու ըզձի թըղիր էստեղ ինչ, իմ նաֆաս մանչ իմ փուրուն կըտրավ, մընա տու ըզձի տեղըմ տ'օրողկիս, ձի տը սպանին, ձի պա՛մ տ'ըսին:

Ջանպոլոտըն էլ էսաց. - Իս գըտցա՛ տու էգիթ էր, կըտրիճ էր, զըրավով էր, էն անպով իս իմ հերսունինն ախպեր կուըրբան արը քի, քառսուն քուրն էլ քու ախպերքիրուն քու խաթը խամար տըվը, ուըր էսօր ըզքի տեղըմ տը հորողկիմ, ուր զքի հորողկիմ յաս, ան պան բիրիս:

Էսաց. - Ի՞նչ պան, ձի սա՛, ուր ձենե գա, թախսիր չըմ անը:

Ջանպոլոտ էսաց. - Էրթաս, Ալ Կուլնաշ կըսին, ձի խամար բիրիս:

Էլավ էս Միրգամահմատ, խընտրուց էլան տանիս, էսաց. - Եա՛ ֆըլան տեղ ծովըմ կա, ան ծովու վերա տ'երթան, ան ծովու պերան ջոջ ճարտուքարըմ կա, ատ ճարտուքարը տակ իրիք խատ ձիու կան կա, կերթաս, ան քար շուռ կը տաս, ատան կան կառնիս, կը գարկիս մանչ ծովուն, կը քեշիս, կը պըռնիս քու ձեռ, իրիք խատ ձի կը գան, կան գար վար քու ուզած ձիու պերան, գընա՛, բի՛, ձին չըխոմ քի տը տանը հանտե:

Միրգամահմատըն էլ կիլըն, կերթա, կան կը գարնը ծով, իրիք ձին կը գա, մեկ՝ սիվ, մեկ՝ կարմիր, մեկ՝ բոգ:

Ան էլ կան էգար կարմիր ձիու պերան, զինք էթալ կարմիր ձիու քամակ, խեծավ կարմիր ձին:

Ձին էսաց. - Իսան օղը, ըզքի կը խանիմ խատ էրեգական, կը վառիմ:

Էսաց. - Ծովը մըրազը ձի՛, իս ըզի տը տամ քու փուրու տակ:

Էսաց. - Ըզի տը գանիմ գետին, ըզքի փարչա-փարչա կանիմ:

Էսաց. - Ըզի տը թալիմ վար քու քամկին:

Էսաց. - Չա՛յ, իսան օղը, քու մըրազ ի՞նչ կը, հո՞ւր տ'երթաս:

Էսաց. - Ալ Կուլնաշ պիրենք:

Թըռավ ծով, փըռփըռ քեշից, յոթ ավուր ճամբախ գընաց, ատե՛մ ռաստ իրը ծովու մեջ, ան էլ կաստ ատ ատեն արավ:

Գընաց ատ ատեն էսաց. - Իս պանյա իլնիմ ըստա, քիչ ռըհաթիմ, խաց ուտիմ, նուր էրթամ:

Պանյա էլավ, կան իթուղ ձիու պերան, գընաց, ատ ատեն կան իրը, տեսավ, կը խը՝ ախթար մարթըմ նըստիր հանտե: Փըշու՛մ խուղ կը քոմը, կը պըլավը:

Էսաց. - Չե՛յ, պապիկ, ատ ինչ մարթ իս ատ տեղ:

Կըսը. - Իս էլ քու պես մարթ էր, ձին խեծա, իկը ըստա, պանյա էլա, նըստա, կան թըղը ձիու պերան, ձին գընաց ծովու մեջ, ալ իս չըկարցա էրթեր, մընացը ըստա:

Էսաց. - Չա՛յ, վուըլա՛, իսըն էլ կան թըղիր իմ ձիու պերան:

Կերթա, կիրիշկը ուրն էլը գանցիր, իրը մա՛ ախթար, էսաց. - Իմ ձին էլ գանցիր ը:

Էսաց. - Վուըլա՛, ալ ան ձիանք մորե չըն իլնը տուս, լա՛ տըղա հըմեն խըլխուեն ինչ արիվ առնը, իրիք խատ ձի կը գան, մա՛ մեկ ճամխով կիլնին ըստա հանտե, փըշու՛մ կան կը գան, գուրինք կը թալին ծով էլմել, մարթ չըկարը բըռնը: Տու էլ ձի թարգ մընացիր ըստա:

Միրգամահմատըն էլ էլավ, ան ճամխը մոտ գետին փուրից, մըտավ հինը, փըշու՛մ կըղլմըշ իտու ուր գըլխու վերա, արիվ տեսավ, ձիանք ծովուց փըռ թըռան տուս:

Միրգամահմատըն էլ իրիշկից, կարմիր ձին ընչ իրը, ան էլ կան կախիր տակ, կաշին քեշ կը յեր, ձեռ էթալ, բըռնից, ձին գըլոխ վերցընիլուն պես Միրգամահմատ խուրուց էխան տուս:

Դորսեն էսաց. - Ախթար, իս իմ ձին բըռնիցը:

Էսաց. - Աստղված ուր կը սիրիս, օր կերթաս թան Ալ Կուլնաշ պիրիս ըստան, իս տեսնամ: Իմ խավաս ընցընը, նուր տար, իս անու անուն լըսա, լան չըտեսա:

Ատ էլ Միրգամահմատ ծին խեծավ, քըշից, գընաց ծով խըլիսուն:

Շովուց էլավ տուս, ծիուն աստղվածային հրամանով լեզու իրը, էսաց. - Յե՛յ, Միրգամահմատ, էլ իս ըստեղաց կարեն չըմ կանա գան: Իմ ուղտքիր կակուղ ը, իս նա չուր գետին չըմ գըշխը կան գան, տու էլ կերթաս, Ալ Կուլնաշը մեր մեռիր ը, չուր յոթ օր Ալ Կուլնաշ կը գան վար անու կուճպաթին գատ կը պըլավը:

Կը մընա հանտե չում կեսօրին, կերթա, կըսը. - Մարթ, մագըմ իմ պուչեն քե՛շը, տի՛ քու ջըգտան վե պախը, իմ կամըն էլ իմ պերնեն խան, տի՛ նա քարը տակ, գընա՛ քաղքը մեջ, խասկընաս՝ Ալ Կուլնաշը մեր ուր տեղըն խուրած, կերթաս, գանդտիկ անու տարպար կան կը գան, տեղըմ վե կիլնիս անու կիռը վերա, կը պանկիս անու կիռը վերա վար քանկը, կը քընիս: Մեկէլ օր Ալ Կուլնաշ կը գան, տեղ չըխո մոհրոսկը էլ թու ճամբախ չերթա, տու էլ կընկան ճամբախ վե կերթաս, ուր թու մարթ չիմանա, տու էլ սուք քուն տի վար քիկ, Ալ Կուլնաշ կը գան, կը խը, կըսը. «Ուխա՛յի, նա ի՞նչ մարթ ը իկիր ըստան, նա թու տավս չիկիր, թու ճամբախ չիկիր, նա հուրտո՞ւց ը իկիր»: Կըսը. «Տո՛, մարթ, տու ինչ մարթ իս, տու էլ կը նըստիս, քու աչքեր կը բըռտիս»: Քընաթախ իրիշկը, սա՛. «Ուխա՛յի, նա իս հո՞ւր իմ, նա ի՞նչ տեղը, իս ֆըլան թագավորը լաճն իմ, նա ի՞նչըն իմ իկիր ըստան, նա վո՞վն ը ծյի բիրիր ըստան»: Սա՛. «Ձանըմ, նա ութ կա, օր իս ընչ իմ գըլոխ կը տըներ վար բարցին, ծի կըսեն՝ Ալ Կուլնաշ քու կուրսմաթն ը: Ես Ալ Կուլնաշ ա՞րչ ը, իսա՞ն ը, ծի՞ ը, ի՞նչ կը: Իս Ստամբուլա թագավորը լաճ, ի՞նչըն իմ էկիր, ընկիր ըստան»: Ան էլ տըսը. «Տու վըրե՞ ինչըն ծի լըսիր իս, Ալ Կուլնաշ ուր կա, իսն իմ, նա վո՞վն ը քի սիր, վո՞վն քի բիրիր ըստան»: Տու էլ սա՛ ուխա՛յի: Ին կըսեր. «Ալ Կուլնաշը ծի՞ յը, վըրե՞ իսան ը, խանլեմ ուր անցկուն ը, տու իս ծյի բիրիր ըստան: Ախչիկն էլ տըսը. «Չէ՛, իս ըգքյի չըմ բիրիր ըստան, խանլեմ Աստուծե յը», տու էլ սա՛. «Ուր անցկուն ը, Ալ Կուլնաշ տու իս, գընա՛ քու թատարիք տեսը, արը ըգքյի առնիմ, յանը»: Ան էլ ուր խոր ծին տը բիրը, անտե տու խեծեցե՛ք, էկե՛ք

չուր ըստան, ան մագ տու կըրակ, արը կան գան ծով, իս կը գան, ըգծի կըպըցիմ:

Չին թարիֆ կանը, կը պըրծընը, լաճըն էլ թարիֆով կիլնը կը գան:

Կերթա քաղքը մեջ, կը մընա ան տեղրանը կան կը գան, կը խարցընը: Ալ Կուլնաշը մոր կիռ ուր տեղըն ը կը խանկընա, կերթա անու բուլուր լուսով կիրիշկը, կը տեսնը ճամբախ տեղըմ վե չըկա, պըգտիկ սարապըմ անու տակ վե գետնու խիտ կը խը կը լեճացըցը գետնու խիտ, կիլնը լըղմը պիչիմ, կը մըտնը նիրս, կինգընը վար քանկը, կը պանկը վար անու կիռին:

Կը մընա, արիվ կառնը Ալ Կուլնաշ խեր-խըրիաթ կանը, կը գան մոտ, կուճպաթը տոռ կը բանա, կիրիշկը կը խը՝ մարթըմ կի անու մոր կիռը վերա քընիր ը, կիրիշկը խաղիս ուր հիրար չառիր, ուղը մոոր հիրար չառիր, ճամբախ թուրի տեղ վե չիկիր, թուրի տեղ պըլուկ չըկա, կը գարմանա, կըսը. «Որ տեղ վե յը իկիր, իս սիմ՝ կա իսան չը, իսան ը, նարիկ ուղրտեղ վե յը իկիր»:

Ախչիկ էլ կը կանչը, կըսը. - Յե՛յ, մարթ, հե՛յ, իսան, իլը վե՛:

Տըղեն կը հաշարանա, աչքիր կը բըռտը, կիրիշկը տես-տեն գինը խաշիմ կանը, կըսը. - Ուխա՛յի, էս ուղը տեղըն ը, էս իս իմ հոդեն քըներ էր, նա վո՞վ ըգի բիրիր ըստան, նա հո՞ւտը յը:

Ախչիկ կըսը. - Տու ի՞նչ մարթ իս, նա հուրվե՞ իս իկիր ըստան:

Կըսը. - Իս ֆըլան թագավորը լաճն իմ, ութ օր կեր քանը, գըլոխ տըներ բարց, մանչ քընուն ծիկ կըսեն՝ Ալ Կուլնաշ քու կուրսմաթն ը, իս չըմ գըտնա Ալ Կուլնաշ ի՞նչ կը, իսա՞ն ը, մա՞րթ ը, ծի՞ յը, ի՞նչ ը, չըմ գըտնա:

Կըսը. - Ալ Կուլնաշ օր կըսին, իսն իմ:

Տըղեն կըսը. - Վըրե՞ Ալ Կուլնաշ իսան ը, օր տու իս, տու էլ իմ կուրսմաթն իս, նա վո՞վ ծի բիրիր ըստան:

Եսյիսան հատե շատ կը գրուցին, ախչկան սիրտըն էլ կիլնը անտան լաճ:

Լաճուն կըսը. - Ուր անցկուն ը, տու կա՛ց ըստան, իս յամ տուն, հիրիկուն իմ թայիտպիր կը խիմ, իմ խոր ծին կը բիրիմ, հիրիկուն կը գան ըստան, կերթանը:

Լաճ կը մընա հանտե, ախչիկ կերթա տուն, ուր թատարիք կը տեսնա, ուղը հող կանը, գանդտիկ կիլնը, հիրիկուն սըհաթ իրիքին գուր խոր ծին կը խեծընը, գուր գանտիր կառնը, կը գան:

Կը գան, կը գան հանտե, կը կանչը, կըսը. - Միրգամահմանտ, հանգըր իս:

Կըսը, - Խա՛յ, - կը կայնը:

Ախչիկ կըսը. - Հերտում կա վար մի, իսնը չընք ըսը, քարին, փիտին կըսի՞մ՝ Ալ Կուլնաշ ընչ տանին, երկիր, ախշար, քար, փիտ տը կանչին, տըսին՝ տարա՛ն, Ալ Կուլնաշ տարա՛ն, Ալ Կուլնաշ տարա՛ն, հա՛յ, տարան, վով իրիշկը հետեվանց՝ կիլնը քար, սերըպանտը:

Դորսեն կիլնին, ուր խոր ծին կը խեծնին, կը թըռնին ճամբախ, ծին կիյնը տանպար, անտա գիշիրով կը կանչին, կըսին՝ տարա՛ն, հա՛յ, Ալ Կուլնաշ տարա՛ն:

Անունք կը խասնին կես ճամխին, հավարին կիյնը խոր քաղաք, խեր կանկախը, կիյնին հիտիվ չուր կը գան, Միրգամահմանտ ըզԱլ Կուլնաշ կը խասցը ծովու պերան, ըզծիու մազ կը տա կըրակ, կան կը գանը ծով, ծին կը գան, կը խեծնին կը տան ծով, անքար կը խասնը հանտե:

Դորսեն ախչըկան խեր կը կանչը. - Հա՛յ, հա՛յ, իսան օղը, Աստըված սիրիս, քու պըհան՝ արա, տե՛ս, ուր իս քյի տեսնամ թանաշա անիմ, մըհան տու էլ իմ ախչըկան պանպարն իս:

Ախչիկ Միրգամահմանտին կըսը. - Ձիու գըլոխ գըվըրցըցո՛ւ, քու պըհան՝ արա թանխ իմ խեր, թըղ քու նըմուշ թանաշա անը, ռըհանթը:

Միրգամահմանտն էլ ըզվըր պըհան կանը ան կընար, ինչ կը տեսնը, թանաշա կանը, կը խավնը:

Կը կանչը, կըսը. - Պիրոզ հանվթ ջար, պիրոզ պըմպարաք իլնը²⁹, տու էլ անու լայեղ իս:

ԸզԱլ Կուլնաշ կառնը, կը գան:

Ախչըկան խեր կը տաննա տուն:

Կառնը, կը պիրը, կը պիրը անտ անտեն, անտեն պանյա կիլնը, կան ծիու պերնեն կը խանը, կը տընը անտ տեղ, քար կը տընը վերա, կը գան ման անտ ախթար:

Կըսը. - Ախթար, ի՛լը, իս Ալ Կուլնաշ պիրը:

Ախթար ըզխուղ կը քոնը, կը պլանվը, հանա ուր սըպըր էնը, ախթար ընչ կիրիշկը կը խը, կըսը. - Ախեշթ իմ փափաք ընցավ, իսն էլ անդ արեր էր, Աստուց ուզեր էր, տեսներ, նուր մեռներ:

Միլուն պես ախթար կիլնը կողոմ խող, պուռըմ ուըսկուր:

Միրգամահմանտ կիլնը, անու խող, ուըսկըրքիր կը խուրը, ըզԱլ Կուլնաշ կառնը, ըզծին կը խեծնը, կը գան, ինչ կը մոտխըսնա ծովուց կիլնը տուս, ծիուց պանյա կիլնը, ծիու կան կը տընը անտ քարը տակ, կիլնը, զախչիկ կառնը, կերթա:

Միրգամահմանտ անցկում ըզուր մաղտեն կանը, տեսակըմ կիլնը:

Ախչիկ կըսը. - Հե՛յ, Միրգամահմանտ, անտ ինչ էլանվ քյի, անթարզ էլան:

Կըսը. - Քենե պախիմ, քու Աստըծուց ինչ տը պախիմ, իս ըզքյիկ Ջանպուլոտը խանար տը տանիմ, իս իկը, ընկան քու մեղաց տակ, ըզքյի խապիլով բիրը Ջանպուլոտը խանար, մըկա փոշմընիր իմ, մըհան ինչ անիմ, անու խուըզին խան անու չը, քանը սպանինք, կը ժըրը:

Ախչիկն էլ իմաստուն էր, խասկըցավ:

Եսաց. - Միրգամահմանտ, անխըր տու տը չըկեր, ուըր տու իկիր, ըզծի պիրիր, պետքը երթանք, ուըսթութնով անու խուըզու հիտիվ կան գանք, անու խուըզին կընտընինք, մըհան ինչըխ ըզան սպանինք, մինք իլնինք իրիկ-կընիկ: Իսըն էլ քառսուն օր չըմ թըղնը ան գան ման ծյի, օր կը տընիմ քառսուն օր, օր պանլըմ չարե՛մ անու կը կընտնինք:

Ացկում կառնին, կերթան:

Ջանպուլոտ կը գան հիրծիվ, կըսը. - Փեսա՛ ջան, տու պիրի՞ր:

Կըսը. - Իս պիրը:

Ջանպուլոտ ձեռ կը բիրը ախչըկան վըզը բուլուր:

Ախչիկ կըսը. - Տե՛հ, տու ծի մոտխաս չըգան, պերան չըբիրիս ծյի մոտխաս, մեկեն իս տը մեռնիմ, չուր իս կը սովրիմ, չուր քառսուն օր ծյի տու, իս չըխտ քյի խանար իմ իկիր: Տու ծյի մոտխըսնաս, իս տը մեռնիմ, քիչ-քիչ իս քու պըհեն առնիմ, պըստանի իլնիմ չուր քառսուն օր:

Ջանպուլոտ կըսը. - Հայ ջա՛ն, չե՞ տու իկիր ծյի խանար, քառսուն օր չեթըղ, քառսուն տարը իլնը: Ուըր տու քու ռըզա-յութնով իս իկիր:

²⁹ Բարի վայելում յոթ անգամ, շնորհավոր լինի (Ճ. Բ.):

Միրզամահմատին էլ կըսը. - Կընա՛, իմ քրորուչ խա՛նը, շատ շնորհակալ իմ:

Միրզամահմատըն էլ կիլնը, կերթա, անտն մըղարեք տեղըմ վե կը պանկըվը:

Էրկու-իրիք օր վերա կը ընցնը, Ալ Կուլնաշ կիլնը, Ջանպուլտը խիտ կը փուրփուրը, կըսը. - Քու խուրզին ի՞նչ կը, ծի սա՛, օր տու յաս նեծիր, իս խիտ խաղամ, չուր իմ քառսուն օր լըմընա, իս, տու իլնինք իրիկ-կընիկ:

Կըսը. - Իմ խուրզին նա ցախավիլն ը:

Ալ Կուլնաշ կը պիրը, գանտ ցախավիլ չուխն լաթ կը խագըը, խիտ կը խաղա կաստըմե:

Ջանպուլտ կը գա՛, կը ծըծղա, կըսը. - Ատ ի՞նչ կանիս:

Կըսը. - Խնա քու խուրզուն կը խամ, վըր տա պըստանի իլնիմ:

Կըսը. - Իմ խուրզին թիակն ը, ցախավիլ չը:

Կը բիրը, թիակ կը խանլանցըցը, կը խաղցըցը, սըպըր պիրը:

Ջանպուլտ կը գա՛, կը խը, կը ծըծղա, կըսը. - Ան ի՞նչ կանիս:

Կըսը. - Խնա քու խուրզուն կը խաղամ:

Կըսը. - Տընակուլ, խուրզին կը գա՞ մըտնը ան թիակը մեջ, իմ խուրզին կի իրիք որդ ը, մա կութուն՛, կութին մա ճընճըղկու փուրուն, ճընճըղկու կի մա լըպըստրակու փուրուն, լըպըստրակ կի մա վիշապը փուրուն, վիշապըն էլ կի Յընդանանա քաղքը մեջ մա հերի՛մ, յան ուրբաթ օր արիվ կառնը, անտ հերից գինք կը գա տուս, պառոժ, փըշուն՛ կը պառկը հանտե, էլմէլ կը յա հեր վե: Դե՛հ կանաս գընա՛, կընտը՛, պի՛, խաղցըցու՛, մըհա ի՞նչըխ տը կընտընիս:

Ջանպուլտ կերթա նեծիր, չուր հեվարին չի գա նեծրից:

Ալ Կուլնաշ կերթա, Միրզամահմատին կըսը. - Դորսեն անու խուրզին նա յը, ինչ կըսը: Կանա՞ս, գընա՛ տանլիլըմ տիս, սպանը, արը, ըզի ա՛ռ, էրթանք:

Միրզամահմատ էլնավ, ուր թանարիք տեսավ, գընաց: Գընաց ծովու պերան, անտ քար էլմէլ շուռ իտու, կամիր էգար ծով, իրիք ծին էկին, էսաց. «Տիրըմ կարմիր ծին իմ խեծիր, աս տիր ըզբոզ ծին տը խեծնիմ, բոզ ծին մըրազը ծի ը»:

Կան էգար, բոզ ծիու պերան, գընաց:

Բոզ ծին էսաց. - Յայտե՛, իմ քուր ըզբոյի մըրազիմ խասցիր, նա մեկ մըրազին էլ իս ըզբոյի կը խասցիմ:

Գանցին, ըզծով խըլըսան, ընկնավ Յընդըստանա կազեն ծովուց էլնն տուս:

Չին էսաց. - Իս ի՞նչըխ անիմ, տու տը յաս, ի՞նչ բիրիս:

Էսաց. - Իս տը յամ, իմ մըրազ էն ը՛ Ջանպուլտը խուրզին բիրիմ, իմ կընիկ՝ Ալ Կուլնաշ, գանվիր ը, չըմ կանա վերա:

Չին էսաց. - Դու չըս կանա բիրը: Իս չըմ կանա գա՛, իմ ուղտ-քիր շատ կը ցավը, լնա քու խաթը խանար նա մեկ մըրազ իս քի տը խասցիմ: Էրթանք քաղաք, իս որտեղ կայնիմ, հանտե պայա իլնիս, էն տուն ժանանակով թագանվորը տեղ իլիր, մեկ պառավըմ մըկա կա հանտե, անու նըրքըն տընիր վե անուռնարըմ կա, ան քարը տակ կարանսըմ կա, ան կարանսը մեջ մեկ աղեկ թուրըմ կա, ան թուր կիլնը, ան վիշապը կաշին թուր չըկըտըրը, կերթանք, ըզծի կը տանիս, կը տաս նալիլ, նալը բըվըռքիր կաքվու ծըվը պես պետ արա, ծերով գըլխով արա, էրթանք ան հերը գըլոխ, փուրը, իս կենամ գըլոխ, տու մըտը՛ հինը: Արիվ կը տեսնը, վիշապ հերից կը քեշվը, տու ըզբոյի հիրար չըտաս, իս ըզի անկուն կը թըռնիմ վար անու գըլխուն, չուր անու գըլոխ կը փըրճըղկիմ, անկախ դորսեն տը կատուտվը, տոր կատուտ կը պարզվը, տոր տեսնա ընչ կը շըրջվը, իյնը վար փուրու, հանկախ էն թուր քեշը, արը, կըտըրտը, չուն անկուն չիլնը, ըզբոյի հիրար չըտաս, ըզբոյի հերեվան չըխանիս, օր զբոյի տեսավ, ըզբոյի կտուր-կտուր կանը:

Ան ծիու սիլու պես կիլնը, կը խեծնը, կը յա քաղաք, ծին կը յա, պառվուն՛ տոր կը կայնը, պայա կիլնը, կըսը. - Պառա՛վ, մեհվան կը շախի՞ս:

Կըսը. - Մեհվան Աստըծու մեհվան ը, լնա նա՛ կա իս ուտիմ, նա՛ մեհվան ուտը:

Ան էլ կերթա հանտե, ծին կը կապը, կը նըստը, ան պառավ փըշուն՛ անուշուրթնով խատ մեմեկը կը գրուցին չուն էվարին:

Էվարին նախորթ կը գա՛, կըսը. - Պառա՛վ, քու կով վիշապ կերավ:

Պառավն էլ մեկ կով կիլնը: Պառավ կը նըստը, կը լա:

Միրզամահմատ կըսը. - Պառա՛վ, մի՛ լա, ա՛ռ քի չուրս ուղս-կը, տու քի կովըմ ա՛ռ: Չանար չըկա, Աստըված օղորմած ը:

Հիրիկուն ճորագ կանին, կը յան տուն, խալկ լատնահին, Միրգամահմատ կըսը. - Պառա՛վ, ճորագ ա՛ռ, բի՛, յանք ծի նըրքըն տուն վե կանգունք, մըհա՛ ինչ խին պան կա հինը, կերեվա՛ ծի տուն խին տուն ը:

Ճորագ կառնին, կերթան կը խին, ատ անուռաքար կը փուրին, շուռ կը տան, կը տեսնա կանանքն կի հատե՛ թուրըն կի հինը, կըսը. - Պառա՛վ, վուրլա՛, պա՛ն չըկեր, նա մեկ թուրըն էր, թուր տը տաս ծի, տը ծախիս ծի, քու քեֆն ը, տու քու մոտեն գընիմ, քյի օյմիչ չըգա՛, թըղ կենա ծիկ, իս պա՛ն կը տամ քիկ ան թըղ թերեն:

Կը խանը, չուրս ուըսկը էլ կը տա պառա՛վ, ան թուր խալկալից անու խանար:

Թուր Միրգամահմատ առից, կապից վար ուր, ծին առից, գընաց նալբանտը մոտ, էսաց. - Իմ ծին նալը:

Նալբանտ կը իրիշկը, կըսը. - Վո՛վ գըխշը՝ նա ծին նալը:

Որտեղ կը տանը՝ չըն նալը:

Ձիուն լեզու կը գա՛, կըսը. - Սա՛ մը՝ վախանեք, իս ծի սանատ տամ, ծի պա՛ն չիլը, օր ծեռ տան իմ ուըտ, իս չըխտ տը վիրուցիմ:

Կիլը, կը տանը, նալբանտի՛մ ռաստ կը գա՛, փըշու՛մ գրավով կիլը, կըսը. - Նալբանտ, ուըսկի՛մ տամ քիկ, նա ծին նալը, լա՛ անցկում նալըն շինիս, ան ինչ կառնը ուըտաց կընար, կուկ կիլը, լա՛ ան ինչ կը մընա տըսու կընար, անցկում քըռվըռ իլը, տանկը թարգ, արծըլու թարգ, գատ կըտըրը, անու բըվըռքիր անցկում շինիս, կաքվու ծըվը թաղլիթ:

Նալբանտ կըսը. - Ա՛ռ, բի՛:

Ան էլ ինչ ծեռ կը տա ծիու ուըտ, ծին տըլխավտա ուըտ կը վիրուցը, ատ էլ ըգնալ կը տընը ծիու ուըտաց տակ, բըվըռ ընչ կը գարկը, չուր անտըսունք ծիու անքիրուց կը գա՛ տակ:

Ձիու ուըտքիր կակուղին, ատ չուր բըվըռքիր կը գանին, կը մըռմըռա, լա՛ ան անցկում զինք կը կըծկը, հիրար ծեն չըխանը, չըն կը պըրծնին:

Ըգծին կառնը, կերթա, կիլըն հերը գըլոխ:

Ձին կը թըղըն հանտե, ինք հերը կուշտըն կը փուրը, կանը ինչըխ թոներ, կը մըտընը հինը, փըշու՛մ գատ կը տա վար ուր գըլխուն, կը պաղկըվը:

Ուրբաթ օր արիվ կառնը, ատ վիշապ հերեն կը քեշվը տուս, զինք կը տա պառո՛ժ, ատ ծին կը գա՛ հերը գըլխու վերա, ուր չուրս ուըտ մեկ տեղ, խավքու պես զինք կը թալը, զինք կը գարկը վար վիշապը գըլխուն, անցկում ուր ուըտքիր կը գարկը վիշապը գըլխուն, ինչըխ ուրագ գարկին վար փետին, անցկում ուր չուրս ուըտ կը բիրը, մեկ տեղ կը գարկը վիշապու գըլխուն, կը փըր-ճըղկը:

Վիշապ կիլըն, կուտոտ կը գընտուը, պեխամ կիլըն, կը պարգըվը, Միրգամահմատ կիրիշկը, կը խը ինչ պարգըվա՛վ, ընկա՛վ վար քանկը, փուր էրեվաց:

Ատ էլ հանա էլա՛վ տուս, թուր քեշից, վազկից հինը, ինչ թուր էթալ, փուր ճըղից, Ջանպոլոտ սար վե խիվընտցա՛վ, պահըր կը տա թաղ տուն:

Կըսը. - Գացած թաղ իմ խուըգին, ըգծի տը սպանին, տը յամ թաղ Ալ Կուլնաշ, քանը ըգի չըսպանած:

Գընաց, չուր խասավ վար տըռան, զինք հանա տեպա՛վ գետին, պեխամ էլա՛վ, ալ չըկանա հիրուր առնը, հանա նըվուցըն կա հինը:

Չուր ան կը խասնը հանտե, Միրգամահմատ ըգվիշապու փուր կը ճըղը, ըգըպըստրակ կը խանը տուս, լըպըստրակու փուր կը ճըղը, ճընճըղուկ կիլըն տուս, ճընճըղուկու փուր կը ճըղը, կութին կը խանը տուս, կութին կը բանա, կը խը՝ իրիք խատ որդ կա հինը, մեկ՝ տեղին, մեկ՝ կանաչ, մեկ՝ կարմիր, էրկու կը սպանը, մեկ կը թըղըն, կութին կը տընը ուր ծուց, ծին կը խեծըն, կը գա՛, կը գա՛, կը խասնը ծով, կը մըտընը մանչ ծովուն, կը գա՛, ծովուց կիլըն տուս, կան ծիու պերեն կը խանը, ծիու գըլոխ կը պագըն, կան կը տընը քարը տակ, ծին կը յա ծով, ինքըն էլ կառնը ըգկութին, կը յա, կը խը՝ Ալ Կուլնաշ կայնիր վար պատին, կիրիշկը ճամբախ, մըհա՛ հիփ Միրգամահմատ տը գա՛:

Միրգամահմատ կերթա, կը խասնը մա՛ Ալ Կուլնաշ, կըսը. - Ջանպոլոտ հո՛ւր ը, ի՞նչըխ կը:

Կըսը. - Վուլա՛, կի՛ ընկիր վար տըռան, ջորով նըվուցըն կա հինը: Ձենե ճուր ուզից, իս հանա ջորով փախա տուս:

Էլան, խընտրաց մեկ տեղով գացին, կը խին՝ Ջանպոլոտ, հանա նըվուցըն կիլըն մոտեն:

Միրզամահմանտ էսաց. - Անհիր աղա, ի՞նչըխ կիս: Տու խի-վանդ էր, իկիր իմ, քյի աչք կը տամ:

Կըսը. - Տու բարով իս իկիր, արը մըհա իս քյի խիմ:

Միրզամահմանտ էսաց. - Մըհա իս քյի տեղ իմ բիրիր, փըշու՛մ տեղ տամ քյի, նուր:

Կուֆին կը խանը տուս, կը բանա, որդ կը խանը, կըսը. - Քյի նա չըպը տամ տու ուտիս:

Կըսը. - Ա՛խ, մըհա տու՛ իս տեսնամ, իս թամաչա անիմ, աստ ի՞նչ տեղ ը:

Պարզից, տը տեր հինը:

Ալ Կուլնաշ էսաց. - Մի՛ տա, քյի տը սպանը:


Պըռնից, ըզորդը վիզ քեշից, հերկընցուց, Ջանպուլտ քըռ-քըռաց, աչքեր թըռավ ճակատ, ինչ իթող հիրար, էլմէլ խուըգին իրը հինը:

Ինչ էրկու տիր անցկուն արավ, Ալ Կուլնաշ ծեռեն խլից, էթալ գետին, ուըտ քըսից վերեն, Ջանպուլտ հանտե լըմընցավ:

Միրզամահմանտ էլավ, առից ըզԱլ Կուլնաշ, հանտե ինչ անունց լազըմ էր, առին, գացին ուրի՛նց խոր երկիր, Ջանպուլտը քուրըն էլ հանտե էր, առից:

Նուր յոթ օր, յոթ գիշիր խարսնիս արավ, էն խասավ ուր մըրագին, դուք էլ խասնեք ծյի մըրագին:

Էրկուց իրիք խընծուր ընկավ, մեկ՝ սողին, մեկ՝ ականջ արողին, մեկ՝ խասկացըցողին:



47. ՊԱՆՔ ԱՉԱՌ

Ժամանակով կազիմ թագավորըմ, ուր մեկ լաճ:

Թագավոր կը վիրչանա: Տըղեն կիլըն թագավորը տեղ թագավոր կը նըստը, խեր-խերաթ կանը, բռնավորքիր կը թըղը, մեկ խերաթխանե՛մ կը շինը: Ատ խերաթխանին փանջարե՛մ կը շինը, մեկ կը նըստըցըցը ատե, սանտողըմ լիկ ուըսկը կը տըղը անտեղ, վով ընչ փանջարը տակ վե ընցըն՝ ուըսկի՛մ կը թալը անու խամար:

Այա՛մ վերա կընցընը, մեկ դավրեշըմ կը գա հանտե, փանջա-րը տակ վե կը ընցընը, ուըսկի՛մ կը կապին քաֆկը ճութ, փան-ջարեն վե կը թըլին:

Դավրեշ կառնը կըսը. - Նա ի՞նչ կը:

Կըսին. - Մի թագավոր մեռիր ը, անու լաճ խերաթխանե՛մ բացիր, խերաթ կանը:

Դավրեշ կըսը. - Խասկըցա, խերաթ կանին, Պասրանու թա-գավորը ախչիկ խերաթխանե՛մ բացիր ը, քառսուն փանջարա յը թըղիր, համեն փանջարից քառսուն ուըսկը կը թըլը խալկը խա-մար, անցկուն խերաթխանա կիլըն:

Թագավոր կը հիմանա, կը հորողկը, ատ դավրեշ կը տանը:

Կըսը. - Դավրե՛շ, տու ընցնա պա՞մ իս սիր:

Կըսը. - Խա՛, Պասրանու թագավորը ախչիկ խերաթխանե՛մ բացիր ը, քառսուն փանջարա, հըմեն փանջարից քառսուն ուըսկը կը թըլը:

Թագավոր կըսը. - Ուա՛, իս թագավոր մ՛ եմ, իս չըմ կանա արարգ խերաթխանա բանա, ան ի՞նչըխ բացիր: Ահդ իլըն, տու

կինաս ըստա, իս խնկին չըմ ավտա, իս իմ աչքով տեսնամ, նուր գամ, իս հնար տը յամ, մըհնա ի՞նչըխ բացիրը, իս թագավոր մ' եմ, մեկ ուղսկը կը տամ, գըլոխ չըմ կաննա խանը, ան ինչըխ ախչիկ մը քառսուն ուղսկը կը բըլավը, գըլոխ կը խանը, հաննեն փանջարից քառսուն ուղսկը կը բըլավը, տ'երթամ իրիշկիմ, թը անուրթը, տը գամ, քի անգա տ'անհիմ, թը չէ, սուտ էլավ, քի վիզ կը գարկիմ:

Դավրեշ կը մընա հանտե, թագավոր կիլնը, պարկըմ ուղսկը կը լըցը, ուրը թայտպիր կը խը, կիլնը, դավրեշը խաննը կը խագնը, կիլնը, կը յա:

Կաստ կանը Պանսուն քաղաք, անցկում կը յա, կան կը գան, կան կը գան, շիվար կիլնը, ան պարկ ուղսկին կը խըլըսնը՝ ծին կը ծախը, կուտը, անցկում կան կը գան, Պանսուն քաղաքը սալըխ չառնը:

Շատ կան կը գան, կերթա, մեկ սարի'մ գըլոխ մեկ խովըվիւմ ռաստ կը գան:

Խովըվուչ կըսը. - Խովի'վ, իս անուրը իմ, իրիք օր կա՝ անուրթը կան կը գան, խաց կա՞:

Կըսը. - Իս Աստըծու սային Աստըծուն իմ թագավորի ախչը-կան, խաց շատ կա:

Կիլնը, կաթ կը կըթը, պուլ պան կը բիրը, դավրեշ կուտը, լան քիչ կուտը:

Խովիվ էսաց. - Դավրեշ, տիւ շատ անուրթը յեր, տիւ քիչ կերար, տիւ չէ՞ր շիվար, շիվար մարթ քի՞չ կուտը, քիւ կիր կիր չէր:

Կըսը. - Է՞, ան կանտար կարցա ուտեր:

Կըսը. - Են վի՞ ոչխարն ը:

Էսաց. - Են Պանսուն թագավորը ախչկան ոչխարն ը:

Կըսը. - Պանսուն քաղաք ուրտե՞ղն ը, անու ախչկան սարեն հո՞ւր ը:

Կըսը. - Կիլնիս նա կըրը վերա, շուր կամնիս վար քաղաքին, ախչկան սարեն էլ հանտե յը:

Դավրեշն էլ կիլնը, կաստ կանը, կը յա:

Խերաթխանեն կը խարցընը, կը ո՞րտեղն ը:

Խերաթխանեն ինչ պանու կիլնը, կերթա փանջարը տակ վե կը ընցընը, քանֆիկըմ կը գան տակ, կը պըռնա, կը խը՝ քառսուն ուղսկը, ան կանը, կը յա փանջարի'մ տակ վե, քանֆիկ մ' էլ կը գան, կը պանա, կը խը մէլ քառսուն ուղսկը:

Քառսուն փանջարը տակըն էլ հաննեն փանջարից քառսուն ուղսկը կը գան:

Դավրեշ կըսը. - Յե՛յ վախ, իս ընկա անտարելը մեղաց տակ: Ուր խարար ռաստ ը: Են իս չըխանկացա, մըհա նա ի՞նչըխ գըլոխ կիլնը:

Կերթա հանտե, տիվանխանե'մ հօդե'մ կը նըստը, իրիք օր կը մընա հանտե, կըսը. - Իս նա էյութին տը խասկանամ՝ մըհա նա ինչըխ գըլոխ կիլնը:

Իրիք օր ընչ կը մընա, ուրինց անտարթը թարգ խուրզանաթար կը գան, կը խարցընը, կըսը. - Աս տեղաց անտարթը, իրիք օր մըսաթըր գան, նըստը, ուտը, խըմը, պանկը, թավալը, ուր իրիք օր պըրծնը, ուր գործ իլնը, տ'ըսը, ուր չէ՞ տ'երթա, մըկա քիւ իրիք օր պըրծիր ը, քի ինչ խուրզանաթ կա, սա՛, թը չըկա՝ չըխտ գընա:

Կըսը. - Իս կուզիմ ծի թագավորը ախչիկ տեսնամ:

Կըսը. - Ուրը անցկուներ, աղեկ:

Կերթան ախչկան կըսին. - Դավրեշըմ կա, կուզը ըզքի տեսնա:

Ախչիկ կըսը. - Աղեկ, սեցե՛ք մըհա թըղ գան:

Դավրեշին կըսին, դավրեշ կիլնը, կերթա մա ախչիկ, ախչիկ նըստիր հիտիվ փարտին:

Ախչիկ կըսը. - Սա՛, մըհա ինչ կուզիս:

Կըսը. - Իս իկիր իմ ըստա, քիւ հեութեն կուզիմ խասկընալ՝ մըհա տիւ ինչըխ նա խերաթխանեն կը բանցըցիս: Են թագավորութի'մ չըկանա բանցըցը:

Կըսը. - Ուրը անցկուներ, գընա՛ վանդ անսա գանխ արը, չըխտ տը խասկընաս: Սըհաթ վիցին արը:

Կերթա ուր տեղ, մեկէլ օր սըհաթ վիցին կիլնը, կերթա: Կերթա հանտե, կը նըստը, ախչկան պանզըրկանպանչին կը գան, հանտե ախչիկ խա պանզըրկանին կը զըրուցը:

Կըսը. - Ի՞նչ էլավ, տեղ-տեղրանքըմ, դարտին դարմանըմ էլա՞վ, թը՞ չէ:

Պանզըրկան էլ կը տառնա, ախչկան կըսը. - Ան քառսուն տավը պեռ մալ մըսիցը, դարտիս դարմանըմ, տեղ-տեղրանքըմ չըխանկըցա:

Դորսեն ախշիկ պնզրկանին դաստուր կը տա, պնզրկան կերթա, ախշիկըն էլ դավրեշին կըսը. - Դավրեշ, տաւ պա՛մ խնսկը-
ցա՞ր՝ մըհա մինք ինչ սիցինք:

Կըսը. - Չէ՛, իս ի՞նչ գընամ՝ տաւ ինչ կարե գրուցիցիք:

Կըսը. - Դավրեշ, ան իմ պնզրկան էր, քառսուն տավը պեռ մալ տարեր էր ախշարք կը ցըրվեր, ֆանդըրքիրուն հեքիմ, տեղ-
րանք կը խարցըներ: Ֆըլան թագավորը լաճ իմ իրիկն ը, ծըռիր ը, ան մալ տարավ, ցրվից, սըցին պալքը ծի թուղթըմ, անլաջըմ իլնը: Չէ՛, չիլիրը, տանցավ իրը, նա խերաթխանեն էլ իս ան սնալըպով իմ բացիր: Պանլըմ Աստըված մեկ ճար անը, իմ իրիկ սնդանա, անօր ըզծիկ ուզիցին անու, ան հիրիկուն մի տը տանեն փըսա-
կեն, ան հիրիկուն թագավորը լաճ ծըռավ, ան անպով իս իմ խոր խընեն պե խասցը պիրիր իմ ըստա խերաթխանեն պացիր իմ, ուրտա վով գա, ուտը, խըմը, ուր բաշխիշ առնը, էրթա, տողա
անը, պանլըմ իմ իրիկ ժըրը, գա, ձիկ առնը:

Դավրեշն էլ էսաց. - Ըզի էլ կը տեսնաս, իս դավրեշ չիմ, հուրիշ կնգիմ թագավորըն էլ իս իմ: Դավրեշըմ էկավ, քու մաթ
արավ, իս չը անվտանցը, էլա, էկա քյի տեսնելու, մըհա ըշտակը, թը՞
չէ: Իկը, տիսի ըշտակ էր: Ուըր անցկուընը, անդ իլնը, իսն էլ էրթամ,
կան գամ ախշարք, մըհա քու իրիկ տեսնամ, մըհա քու իրիկ ինչ
անպով ծռիր: Մըհա չըմ կանա սնդըցը, ուր տաւ էն անպով նա
կանտար խեր կանիս:

Ախշիկըն էսաց. - Ուըր անթարգ ը, ձյի անպով տը յաս, ան քյի
պարկըմ ուըսկը, գընա՛, լա տուր տեսնաս ուր հիլ-հանվալ, ձիկ
գըրիս: Իս անդ իմ արիր, չուր ան չըսանդանա, յան ուր սալըխ
չառնիմ, իմ թու իրիկ չանիմ, քանը սաղը ախշըրքը վերեն:

Դավրեշ կիլնը, ձին կը խեծընը, պարկըմ ուըսկը կառնը, կը
յա: Խանրընիլով կերթա, ան կնգեն կը ընցընը, կը խարցընը. - Նա
թագավորը լաճ վըրե՞ ծուռ ը:

Կը գա, պառվու՛մ տունը մըսաֆըր կիլնը, կը խանրընը:

Պառավն էլ կըսը. - Նա թագավորը լաճ Պանլըք իզըմ կա, կը
խեծընը, կը գա թագավորը խաս պանդեն, ան իզուց պանյա կիլնը
անտ տեղ, քյիրկըմ թաց թավը փետ կը գարկը անտ իզան,
արընթախ կանը, կը արը հանտ չուր էվարին, էվարին կիլնը,
էլմէլ ան Պանլըք իզ կը խեծընը, քաղքից կիլնը տաւս, կերթա սար,
մարթ չըզըտը դուր կը յա:

Դավրեշ էսաց. - Ինչ գա հանտ, ըզի անկախըցու:

Պառավ էսաց. - Ինչ ան կը գա, չըխտ գըմեն կնկանխեն:

Խըլխուըն ուրբաթ օր կիլնը, թագավորու լաճ՝ ան ծուռ լաճ,
անտ Պանլըք իզ կը խեծընը, կը գա թագավորը խաս պանդեն: Ատ
դավրեշ կերթա հանտ, կը կայնը չում էվարին:

Էվարին ան թագավորը լաճ անտ Պանլըք իզ կը խեծընը,
կիլնը, քաղքից կիլնը տաւս: Ան դավրեշ կիլնը հիտիվ, կերթա,
մուըղտարըմ կերթա, թագավորը լաճ կիրիշկը հիտիվանց, կը խը՝
դավրեշըմ կը գա, անտ էլ կըսը. «Դավրեշ ֆըղկարա՛ յը, հիտիվ ուըր
կուըսմըթին կը գա»:

Ատ էլ կը խանը մեջաց խանջար, կը խանը, կը թալը
հիտիվանց:

Դավրեշ կը գա, կառնը, կը յա հիտիվ:

Փըշու՛մ կերթա, էլմէլ կիրիշկը հիտիվանց, կը խը՝ դավրեշ
հիտիվ անու կը գա, կըսը. - Կիլնը՝ նա դավրեշ շատ ֆըղկարա՛ յը:

Կարցըկը ուր մեջաց ջարիկ, կը թալը հիտիվանց: Դավրեշ
կառնը, էմէլ հիտիվ կը յա:

Թագավորը լաճ կիրիշկը, կը խը՝ էլմէլ դավրեշ հիտիվ ուր
կը յա, կըսը. - Է՛, դավրեշ պապա, թը կուըսմա՞թ էր, խանջարըմ,
ջարիկըմ տըվը, թը չէ՛ ի՞նչ հիտիվ ձյի կը գա, տաննամ քյի
սպանիմ, միղաց մեջ կը մըտնիմ:

Դավրեշըն էլ կըսը. - Թագավորը լաճ, իս կարիպ իմ, տեղ
չըկա, կուզիմ հասօր գամ քյի մըսաֆըր, չուր խըլխուըն էլնիմ,
էրթամ:

Թագավորը լաճ կըսը. - Դե՛հ, արը:

Կը տանը մանտ ինք: Հիրիկուն կը նըստին հանտ, թագավորը
լաճ խաց կը պիրը հանտ, կուտին: Դավրեշ խաց չուտը:

Թագավորը լաճ կըսը. - Վըրե՞ չըս ուտը:

Կըսը. - Անդ իլնը, չուր տաւ ձի չըսիս մըհա քու սնալիպ ի՞նչ
կը՝ տաւ ծռիր իս, իս քու խաց չուտիմ:

Թագավորը լաճ էլ կըսը. - Մեկ յարեմ էլավ վար ձյի, ծովու
մեջ ատե՛մ կեր, ան հեքըմ իմ պըրին աչքից, իմ խոր էսաց՝ գընա՛,
քու տըղեն թըղ կենա ըստա չում ութ օր, կը սնդանըցիմ, արը
տար: Իմ խեր իրը, իս մընացը հանտ չում հիրիկուն, հիրիկուն
անտ մարթ տըսուց կընիկըմ առից, իրը, էսաց. «Դե՛, տաւ կա՛ց նա
հօղեն, իս, իմ կընիկ կը մնանք ըստա չուր խըլխուըն, քյի տեղ կը

տանք, կը սահանա»: Անունք մընացին ան հողեն, պոմ մընաց, իս գանդտիկըմ գանցը, թամանչա արը, կը խիմ՝ ան մարթ էլավ, պարկըմ իպը, երկու սիվ օց էխան տուս, անտան կընիկ չըփլանխցուց, կանցանցըցուց պատը իրիս վե, ան օցիր իթող մեկ ան ծըծը տակ բռնից, մեկ ան ծըծը տակ, անցկում ծըծիցին ըզկընիկ, չում կընիկ քանկեն տեսավ քեգին, մեռավ: Օցիր էլան քանց գերանըմ, ան օցիր իպը, կախից հանքեն պերնքըսվե, պըղինծըմ իտը հիրծիվ անունց պերնը ճրուն: Իս գանդտիկ թամանչա արը, տեսա: Խըլիտուն էլավ անտան մարթ, կանչից ըզծի: «Արը, իմ կընիկ մեռիր, տանիք թաղիք, յան թանիք ծով»: Իս գանցը, կը խիմ՝ ան օցիր վիրուցիր, տըրիր պարկըմ վե, կախիր պատեն, անտան պերնը ճուրըմ էլ արիր մեկ, լըցիր պըղինծ վե, տըրիր հանտե: Ատու կընիկ իս, էն խընտրաց պիրինք, թանցինք ծով, էսաց. «Գընա՛ տուն, փըշու՛մ ձավար խիտ, եղ գի պըղինծ վե մանտաղտ ինը, լի՛ց վերա, կյի՛, ձի ըստա պան կա, գիմ ձավրը վերեն եղ չըլըցիս, չում իս գան, նուր կուտիմ»: Յիս էլ իկը տուն, ձավար իփիցը, էլան, դուր կան իկը, եղ չըկընտա, իկը, տեսա, ուր ինչ կըսեր պըղընծը եղ՝ հերեկվան օցի պերնի ճուրըմ էր, օր իս տեսա, իսըմ էլ գըցա ժանիըր էր չըկերա, ան ժոռ ձավար կուշտ կերա, անտան ժանիըր, ընչ ան կըսեր, կես լըցը մանչ ան ձավրին, խաննիցը, իկը անճար պառկը, ըզի արը սուք խիվանդ, մընաց, կեսօրին անիկ իրը, իս հանան վան իմ ծընկնիրուն կան իկը, սիցը. «Յանա՛ն, իմ փուր, իմ սերտ, իմ գըլոխ, իս վանով, իս պանիլա, իս գանխ ը մեռնիմ»: Ատ մարթ էսաց. «Տու եղ քիչ իս լըցիր վերա, անժոռութեն քյի տիպիրը, քու փուր կը ցավը, մըկա կը ժըրիս: Է՛յ, - էսաց, - տու եղ լըցի՞ր իս իմ փայ ձավրը վերա»: Սիցը՝ չէ՛, տու սիցիր՝ մը՛ լըցը, իսն էլ չը լըցը:

Էսաց՝ խանեն ըզիմ ան անժոռն ը, ինչ մընացիր, սիցը՝ խա՛, ան էլ հանան գտել անից, երկու գտել լանգ-լանգ կերավ, երկու գտել խատ ուտիլուն ուրտքիր իտու տանալանպագ, էլավ փետ հանտե, իս էլ էլան, անու ուրտքիր պըռնիցը, տարա թանցը ծով, իկը գանտու պարկ, ինչ օցիր հինը, ան էլ տարա, թանցը ծով, իկը ընկա գանու հողեք, անու մըղաղեք կան իկը, պըզտիկ գիրքըմ տեսա, ան գիրք կանդանցը, իմ պըռնը տեղ հանտե տեսա, տըվը սանդանգավ, ան գիրք խորոտըմ կանդանցը, տուռըմ բանցվավ, երկու խատ անանա իկին բալթեք ձեռքիր, երկու խատ չալըջը իկին, երկու խատ մուտը իկին, նըստան մեկ ան ծընկուն վերեն, մեկ ան, կիրկ

բիրին պուլուր իմ վըզին, մենք քեֆ արինք, մընացը հանտե, ան հանլը մեք, չում ուք օր թուըմավ, իմ խեր կայեխ հորողկից, իս նըստա կայեխ, գանցը: Էլանք տուս, Պանսրանու քաղըր թագանվորը ախչիկ ձյի խանար ուզեր էր, ձի էլ տարան հանան, ըզծի հանանլանիչ արին, որ իս էրթեր մանիրըվեր, իս հանանը մեք խանլավ խանիցը, տը լողկաներ, ան պըզտիկ գիրք պըռնիցը իմ ձեռ, մեկէլ ձեռնով ըզի կը վեր, հանանչին էսաց. «Թագանվորը լաճ, մենք չընք կանա գան ըզքյի լողկանցը, ուր տու կանպուլ չըս անը, քու գիրք տի՛ գետին, պատահ լողկացը»: Գիրք ինչ տըրը գետին, խատ տընիլուն մեկ մարթըմ էզան, ան գիրք առից, փախավ, իս անցկում կանրցա իմ շապիկ, թումպան խագան, ընկան հիտիվ, չուր գընանց ծովու պերան, անիկ ըզինք հանան էթալ վան ծովուն, գընանց, իս չըկանրցա, իսն էլ կըսկըծու իմ խելք թանցը, ան ան տարին, նան նան տարին իս ծուռ իմ: Մըկա նան Պանլաք իզ ինչ իս կը խեծնիմ, ան էլ անունց մոտեն ը, ան գիրքը մեքն էր, իսըմ էլ անու կը խանրընիմ, սալըխ չի տա, իսըմ էլ իմ կըսկըծուն հան կը խեծնիմ, հան էրկու տան կը տըփիմ: Ան գիրք մըկա տան ըզի, իս տեսնիմ, իմ խելք կը գան վար ձյի, իս կը ճարտըրվիմ:

Են թարգ դավրեչին կանա կանը:

Դավրեչ էլ կիլնը խըլիտուն, կըսը. - Ահդ իլնը, իս յամ, քու գիրք բիրիմ:

Կիլնը, կը թըղնը կերթա, կերթա ախշարք կան գանլ: Ջանղի՛մ տուռ վե կընցընը, ջանդանգյան կը կանչը, կըսը. - Յե՛յ, թագանվոր ապրած կենաս, ըզքյի արիր իս դավրեչ, ի՞նչ կան կը գաս:

Կըսը. - Է՛յ, ջանդանգյան, տու ինչ գըտիս՝ իս թագանվոր իմ:

Ջանդանգյան էսաց. - Իս գըտիմ՝ տու թագանվոր իս, նան ֆըլան թագանվորը լաճու գիրք կուըրսուըրը, տու տ՛երթաս անու հիտիվ, ան անպով կան կը գաս: Կերթաս ֆըլան տեղ, ջամի՛մ կա, ան ջամին չուրս դավրեչ կան, հըմեն մեկ քուընծըմ կայնիր ին, թագանվորին տողա կանին, ան դավրեչ մեռիր ը, անտան մեկ քուընծ մընացիր պարաս, տու էլ գընան անտան քուընծ կայնը: Թագանվոր կը գան, կերթա ջամին, ըզքյի հանտե կը տեսնա, կըսը՝ ո՛ւր, դավրեչ, բանով իս էկիր, տու յի՛փ իս իկիր: Տու էլ սա՛ իս էտտեղ քյի տողա տ՛անիմ, քյի լաճըմ տ՛իլնը, ըզծիկ իմ մըրագին տը խասցը: Թագանվոր տ՛ըսը՝ իս թագանվոր իմ, ըզքյի չըմ կանա քու մըրագին խասցը, նուր ձի լաճըմ տ՛իլնը, ըզքյի քու մըրագին խասցը, անի

իլնը, տաւ կենաս հատե, թը ծյի լաճ էլավ, թըղ իլնը, ըզքյի քու մըրազին խասը:

Դավրեշ քանդակաւոր խաբրով արավ:

Դավրեշ իրը, կայնավ ան քուրնճ, չուն թագավորին լաճըմ էլավ, ան օր գիշիր թագավորին լաճըմ էլավ, Չաչանց թագավորին ախչիկըմ էլավ, անտ լաճ, անտ ախչիկ կը սիրովին վար մեկմեկու:

Ատ թագավորըն էլ ըզանտն դավրեշ շատ կուզը, շատ կը պաշտպանը: Կըսը. «Նա դավրեշ աղեկ մարթ էր, ծի լաճ չըր իլիր, ան ծի էսաց՝ ծի լաճըմ էլավ»: Կը տանը, կը տընը քոկ հօղեմ, խուրլամքտիր կը տընը հիրճիվ, աղեկ կը շախը:

Ատն լաճ կը ճուճանա, ֆեհմա կիլնը, անտն դավրեշն էլ կընը անտն վարժապետ, տաս կը տա, չուր լաճ խորոտ կը ճուճանա: Չաչանց թագավորը ախչիկն էլ դորսեն կը յա, կը գա մա ան:

Դորսեն դավրեշն էլ կիլնը, անտ թագավորին կըսը. - Քու լաճուն սա՛ դորսեն ըզի իմ մըրազին խասը, իս էրթամ էրկիր:

Թագավոր ուր լաճուն կըսը. - Նա դավրեշ քյիկ ինչ սը, տաւ անու խաբրով անիս: Անու մըրազին ըզան խասը:

Դորսեն դավրեշն էլ թագավորը լաճուն կըսը. - Թագավորը լաճ, իս զըտնամ Չաչանց թագավորը ախչիկ կը գա մատ քյիկ, իմ մըրազն էլ էն ը՝ մի գիրքըմ կա մի թագավորը լաճուն, ան գիրք Չաչանց ախչիկն խոր թախում փախըցած, տարած ուրինց երկիր, ան ախչիկ ինչ կը գա մա քյի, տաւ էլ դարպուն սիլի՛մ գա՛ր մանչ պերնին, սա՛. «Չըգաս իմ բուլուր, գողիր, տաւ զըմեն գող եք, չըգաս մա ծիկ»: Ախչիկըն էլ տը լա, տըսը. «Իս ի՞նչ իմ գողգիր»: Տու էլ սա՛. «Մի թագավորը լաճուն մեկ գիրքըմ ծի թախում գողցեր եք, քու խոր սա՛, թըղ խանը տաւս, ա՛ռ, պի՛ մա ծի: Թը չէ, էլ չըգաս մա ծիկ»:

Մեկէլ օր ախչիկ կը գա, թագավորը լաճու վիզ ծեռ կը թըլը բուլուր, թագավորը լաճըն էլ մեկ պըռընցկիմ կը գանը մա պերնին:

Արուն կը լըցվը մա պերնին, կըսը. - Գողիր, տաւ գող եք, ծի սոյ սաղ գող ը, ալ մա ծյի չըգաս:

Ախչիկ կըսը. - Իս ի՞նչ իմ գողգիր:

Կըսը. - Մի թագավորը լաճուն պըզտիկ գիրքըմ գողցեր եք, յան էն գիրք կը բիրիս, յան մա ծյի չըգաս:

Ախչիկ կիլնը, լալեկեն կերթա մա ուր խեր:

Խոր կըսը. - Նա ֆըլան թագավորը լաճուն գիրքըմ քու մըլաթ գողցիրը, պիրիր, յան ան գիրք կը խանիս տաւս, իս առնիմ, էրթամ, յան չէ՛ ան լաճ չըթըղնը իս մատ ան էրթամ: Կըսկըծու ըզծի տը ըսպանիմ: Ուրը տաւ իմ խերն իս, ան գիրք խան տաւս:

Ախչիկն խերն էլ կիլնը, ուր մըլաթ կը կանչը, հըմենանց կը խաբըրընը, կըսը. - Ատ գիրք ո՞րն ը բիրիր, խանեցե՛ք տաւս:

Չըմեն կը հերդվնան, կըսեն. - Մենք մեկըն էլ խաբար չենք:

Մեկ ան կընարեն կըսը. - Ուրլա՛, Դատվանա զըզիրն ը բիրիր:

Ան էլ կը հորողկը, ըզԴատվանա զըզիր կը բիրը:

Կըսը. - Ա՛յ զըզիր, հո՞ւրը գիրք:

Գըզիր կըսը. - Իս բիրը չուր կես ծովուն, Ֆըռընգանց տեվիր գարկիցին վար իմ ծեռաց, իցկիցին ծով: Գանիր ծովու մեջ մեկ անթուռաշենք քարի՛մ վերա մընացիր, էրկու անապ բալթեք տարած, թիվ կայնած կը շախին, վով ինչ էրթա, կը գարկին, ուր տեղ ուրը բալթեք տեպնա, սիվ ճուր կը տա տաւս:

Ատ թագավորըն էլ կը հորողկը, ան ուսթա աղեն չանկալ-քյիր, կայեխքյիր իպը, էսաց. - Չենե կուզիմ, էրթաք էն գիրք որ-տեղ ընկիր, ուրսթութնով խանե՛ք, բերե՛ք:

Էլան, ըզգըզիր առին, գանցին անտեղ, ինչ գիրք ընկեր էր ծով, կայեխ կանանցըցին, դուլպինդ դրին, իրիշկիցին, ծովու տիփ ըզգիրք տեսան:

Էն էլ բիրին, չանկալ շինիցին, իցկիցին թիլը ծեր, տարան, կանխիցին ծովու տակ, բըռնիցին ըզգիրք, հավայը քելիցին, քելի-լու պես ան բալթեք գարկիցին վար քարեն, սիվ ճուր իտու տաւս:

Գիրք առին, իկին, տվին ըզթագավոր, թագավոր իտու ըզուր ախչիկ, ախչիկ առից, իրը մատ ուր մարթ, էսաց. - Ա՛ռ, վըրե՞ իսն էր գողցիր, Դատվանա զըզիրն էր գողցիր, կո առին էկին, իս էլ բիրը, ա՛ռ:

Ատ էլ կառնը ըզգիրք, կերթա: Կերթա թագավորը մոտ, կըսը. «Դորիս ծյի իզին տու, իս յամ իմ էրկիր»:

Կըսը. - Իմ լաճ ըզքյի քու մըրազին խասըց: Դեհ, քու մըրազ արա, մըռա ի՞նչ կուզիս:

Կըսը. - Չյի պան չըպը, մեկ ծի տըվե՛ք, ծի բաս ը:

Չի՛մ կը տա անու, ճամխը խարճըն էլ կը տա, խաթըր կուզը, կը թըղնը, կերթա:

Կերթա, կերթա, կը գա ան տրկիր, ընչ թագա՛վորը լաճ ծըռեր էր, կերթա անու մոտ, կերթա խաս պանչեն, թագա՛վորը լաճ խըլխոուն ընչ արիվ կը տեպնա, կը գա ըզՊա՛լաք աչան խեծիր: Կը գա, ինչ իրը խաս պանչեն պանչա էլա՛վ: Գիրկըմ թաց փետ էզար, ան Պա՛լաք աչառուն զըմեն սըղկեց, Պա՛լաք աչանը կուղ-կուշտ սաղ արընթըթախ արավ:

Ան էլ կը նըստը հանտե չու՛մ էվարին, էվարին անա՛ լաճ էլա՛վ, ըզուր աչան խեծավ, գիրկըմ թավը թաց փետ իտը ուր կիւք, զընաց:

Դա՛վրեշն էլ էլա՛վ, զընաց հիտիվ, չուր քաղքեն էլա՛վ: Թագա՛վորը լաճ իրիշկից հիտիվ, կը խը՝ դա՛վրեշըն ընկիր հիտիվ, կը գա: Ան էլ խանջար անցկից, էթա՛լ, էսաց՝ աղքատ ը, թըղ առնը, տա խացը, ուտը:

Խանջար դա՛վրեշ առից, ընկավ հիտիվ, զընաց: Տիր մ՝ էլ իրիշկից, տեսավ էլմէլ ընկիր հիտիվ ուր, կը յա:

էսաց. - Հա՛յ, կա յէ նա շատ խեղճ ը, անով ուր իտարեն չիլնը:

էխան ուր ջարիկն էլ էթա՛լ, էսաց՝ թըղ նա էլ տանը, տա ուր խացը:

Դա՛վրեշն էլ ըզջարիկ գըրկից, զընաց:

Փըշու՛մ էլ զընաց, թագա՛վորը լաճ իրիշկից, կը խը էլմէլ հիտիվ կերթա:

էսաց. - Ա՛յ դա՛վրեշ պապա, ի՞նչ կուզիս, թը կուըսմա՛ք կուզիս, տըվը, ա՛լ խան ծի գան չըկա, տա՛րցը, թը չէ՛ ըզթի տը ըսպանիմ, քու միղթ կիյնը իմ վիզ: Տու խեղճ իս:

Դա՛վրեշ էսաց. - Թագա՛վորը լաճ, հաստ կուզիմ գան քի մըսա՛ֆըր:

Թագա՛վորը լաճ էսաց. - Ուըր անցկուըն, դե ա՛րը, խա՛սը խընտրաց էրթանը:

Դա՛վրեշ զընաց, խասավ:

Շուռ լաճ էսաց. - Տու ան տըրվան դա՛վրեշ չի՞ս, ինչ իկիր մա՛ ծի:

էսաց. - Խա՛, իս էն իմ:

Գացին սար, հէրը մեջ, խաց տըրին հանտե, խաց կերան, դա՛վրեշ էսաց. - Մըկա քու գիրք տու տեսնաս, կը ճանչընա՞ս:

Թագա՛վորը լաճ էսաց. - Խա՛, ան գիրք մըկա խագար չեշիտ գըրքը մեջ իլնը, կը ճանչընամ:

Դա՛վրեշ գիրք էխան տու, էսաց. - Նա՛ քի՛ւ գիրքն ը:

Առից, իրիշկից, էսաց. - Ահա՛, նա իմ գիրքըն ը:

էսաց. - Դա՛վրեշ պապա, տու քու խելք վար քի բըռնը՛, իս նա գիրք կարդամ: Դու կիմանաս չըխ ինչըխ կը, մըհա՛ մարթ կը ծըռը, թը չէ:

Թագա՛վորը լաճ անա՛ գիրք կը կարդա, տուռ կը բացվը, չալըջիք կը գան, մուտիք կը գան, փարիք կը գան, շատ տեսակ պանիր մեջ կիլնը:

Մեկըն էլ կիրիշկը, կը խը ան դա՛վրեշ հա՛շ գացիր, ընկիր գետին: Ան էլ հանա՛ ըզգիրք կը կուծը, կը տաննա վար դա՛վրեշին: Դա՛վրեշը սիրտ կը մայը, ճուր կը լըցը վար գըլխուն, հա՛լ կը գա վերա, կըսը. «Դա՛վրեշ, ի՛լը նը՛ստը, մըհա՛ քիկ ի՞նչ էլա՛վ»:

Դա՛վրեշըն էլ կըսը. - Իս սալըխ չըմ իտա՛ ինչըխ իլիր:

Կըսը. - Դա՛վրեշ, իս ժըրա՛, ի՛լը, էրթանը ման իմ խեր: Նա՛ գիրք ուըր իս տեսա, իմ խելք իրը իմ գըլխ: Լա՛գ իլը, էրթանը:

Կիլնին, էրկուս խընտրաց կերթան թագա՛վորը մոտ: Թագա՛վոր կը տեսնա, ուըր ուր լաճ ժըրիր ը, իլիր ինչըխ հանա՛ջ մարթ, թագա՛վորըն էլ շատ կը խընտանա, կուրախանա:

Թագա՛վորը լաճըն էլ կըսը. - Աստըված, լա՛ նա դա՛վրեշ էլա՛վ սապիպ, իս ժըրա:

Ատ դա՛վրեշըն էլ կըսը. - Թագա՛վորը լաճու Աստըված իտու, տու ժըրար, ընցկընեն տարը կա Պանսանու թագա՛վորը ախշիկ քի ապով խերաթխանեն՝ բացեր էր, քառսուն փանջարա թըխեր էր, հանեն փանջարից բա՛ֆիկըմ կը գեր տակ, հանեն բա՛ֆկը մեջ քառսուն ուըսկը: Կը լըցեր հիմը, վով էտ տեղեն յէր, առներ, էրթեր, տողա աներ քի խանար, ուըր տու ժըրեր: Պագըրկա՛մ էլ ընկեր էր ախշարք, քառսուն տավը պեռ մալ կը ցըրվեր հեքըմքիրուն, թուղթ անողքիրուն, ֆըղկարացտիրուն, ուըր տու ճարտըրվեր, ուըր տու ժըրեր, ընցկընեն ուըխտ կա, անիկ քի ապով ըսկընեն մանսա՛ֆ կանը, խերաթ կանը, հաստ Աստըված իտու, տու ժըրիր իս, մըհա՛ ինչ կըսիս, մըհա՛ տ՛երթա՞ս ըզէն առնիս, թը՛ չէ, իսըն էլ ֆըլան տեղաց թագա՛վորըն իմ, իսըն էլ դա՛վրեշ չիմ,

իսն էլ քյիկ անպով ընկիր իմ, կան կը գամ: Մըկա Աստղված խոու, տաւ ժըրար, մըկա ի՞նչ կըսիս:

Լաճըն էլ կըսը. - Աստղված ուր խեր կանպուլ անը, շատ շնորհակալ իմ ուր մոտեն, ուր են ձի անպով խերանք կանը, իս էլ թու մարթ չիմ առնը, էլ չըմ փըսակվը, Աստղված ուր խաց խան-գիստ տա, ուըր թը կըպը, թըղ յա, խատ մեկի՛մ փըսակվը: Դորսեն ինչ իմ ջան ուզը՝ թը փըսակվիլ իլնը, թը ինչ իլնը, նա գըրթը մեջ կա: էլ ինչ տ՛անիմ փըսակվիլ:

Դանվրեշըն էլ կըսը. - Անու քու ձեռաց գիրըմ գըրը՛, քու մո-հըր գա՛ր վերա, թը անու նըշա՛մ կա մա քյի, տու տանիմ, որ ձի ավտա: Թը չէ՛ չը ավտա:

Լաճըն էլ գիրըմ կը գըրը, անու մատնիկըն էլ կը տընը մանչ անու թղթին, ուըր մոհըր կը գանկը վերա, կը լոթը, կը տա ըգդանվրեշ:

Դանվրեշ կառնը, կը յա:

Կը յա Պանսրանու թագավորը ախչկան մոտ, կը խը տալ խե-րանքխանեն անցկուն կը պանը, կըսը. - Թագավորը ախչիկ, իմ անանջկանն, քու մարթ ժըրիր ը, ա՛ռ, քյի թուղթըմ պիրիր:

Պերնով դանվրեշ թագավորը ախչկան կը պատմը՝ ինչըխ գանցիր, ինչըխ իկիր: Ջըմեն թագավորը ախչկան կը պատմը: Թուղթըն էլ կը տա, կառնը, կը բանա, կը կարդա, կը խանկընա, մատնիկ կառնը, թուղթ կը պագնը, կը տընը վանր գըլխուն, փառք կը տա Աստղծուն:

Կըսը. - Տիր մ՛ էլ իս անու ժըրը ձեն լըսա, դորսեն ինք ուր քե՛ֆնը:

Ատ դանվրեշ ատ ախչիկ շատ կը գրուցին:

Դանվրեշ կըսը. - Ախչիկ, իս տ՛երթամ, ան դանվրեշ հանփսը մեջն ը: Տ՛երթամ, թը մեռիր ը, չըխտ անու միղք մընաց իմ վիզ, թը չէ, իս իմ ձեռնով անու աղեկութեն իլնիմ, ուր միղք իմ վըզեն խա-նիմ, չըմեռնը, անու միղք մընա իմ վիզ:

Ախչիկ կըսը. - Թագավոր ապրած կենաս, ուըր տաւ կանգիմ թագավոր էր, նա կանտար մի անպով չանփալանիշ էլանր, ախշար կան իկիր, չարչըրվար, մըկա էրթաս, իս էլ կենամ էստեղ, չիլնը, իս ուըխտ արեր էր ատ մարթ ապով, որ ժըրավ, տաւ էլանր սանպիպ, ան մարթ ուըր ձի չառից, տաւ ա՛րը, ըգի ա՛ռ, էրթանը:

Թագավոր էսաց. - Աղե՛կ:

Ուրինց թատարիք տեսան, էլան, տըվին ճամբախ ինք, ան ախչիկ:

Իկին, գանցին թագավորը տեղ, գընաց, կը տեսնա ան դանվ-րեշ ինչ հանփսը արիր, անցկուն խավուրցիր, մուրուս տեղընցիր: Ան էլ կը հորողկը, հանանլամիշ կը տա անիլ, կը բիրը ձեռքըմ թագավորը խանլավթիր, կը խագցը, կը տընը ուր կուշտ, կանը ուըզիր:

Կըսը. - Կի՛, խըմը՛, չու մեռնիս: Հանգիստ ապրիս:

Մեկ սանսուփ, թամիզ հոդե՛մ կը տա, ծառա՛մ կը տընը հիրծիվ:

Թագավորըն էլ դանլալ կը տա կանչիլ, ուր մարթիր կը ժողվը, յոթ օր, յոթ գիշիր խարսնիս կանը, Պանսրանու թագավորը ախչիկ կառնը:

Անունք կը խասնեն ուրինց մըրազին, դուք էլ՝ ձեր մըրազին:





48. ԽՈՋԱՆԱԿ, ԽՈՋԱՆԱԿԱՆ ՄԱՐԿԱՆԻՑ

Ժամանակով թագավորը կհիւնը, ուր մեկ լաճ:

Շատ հարուստ կհիւնը: Խոջան Ալու լաճ կհիւնը տանիս, կը տեսնը, կը խը՝ քարվան կը գան, զընկզընկուց կի ինկեր հիւնը, տեսավ իրը, մոտխըսցավ: Կը խը՝ մեկ ջըհելիկըմ խեծիր ը, սիլախլանմիշ իլիր, ընցիր հիրծիվ անտ քարվընին, անտ քարվան հիտիվ անու կը գան, տորսեն ան էլ անցկուն անու տուր իրը, էսաց. «Իմ խոր անկանտար փարա, մալ, վարիաթ կա, իս չըգանցը մե խատ ախշար կան գեր, իս էլ նա թարգ բանիր աներ»:

Պանխուրթին արավ, էլավ զընաց տուն, մաղտեն արավ:

Խեր էսաց. - Յուսու՛Ֆ, վըրե՞ քու մաղտեն արիր իս:

Էսաց. - Իս հաստ կայներ էր տանիս, տեսա քարվան՝մ իրը, մարթըմ խամըվեր էր, ընցեր էր հիրծիվ, կը գեր, ծի էլ կը պը դու էլ ընցկը նա քարվանըմ կապիս, իսն էլ ընցնիմ հիրծիվ, էրթամ, ախշարք կան գան, մըհա ինչ կա:

Խոջան Ալին կըսը. - Կուզիս անտ պանիր անիս, մըկա քի խանար քարվան՝մ հանգիմ, տընիմ քու հիրծիվ:

Ան էլ կհիւնը, քառսուն պեռ կը բըռնը, քառսուն խուրլամ կը բիրը, քարվան կը կապը, մալե դունա է կը լըցը, կը պառնա, անտ խուրլամքտիր կը տընը խիտ, մեկ աղեկ քանել ծի՛մ կը բիրը, աղեկըմ կը ռըխտը, ձեռքըմ աղեկ սիլախ, մեկ խալավ կը բիրը:

Ատ լաճ՝ Յուսու՛Ֆ, կհիւնը, սիլախլանմիշ կհիւնը, գանտ ծին կը խեծնը, կիյնը հիրծիվ անտ քարվանին, կհիւնը քարվընը ճուլչ, կէրթա:

Կէրթա, կէրթա մեկ քանի՛մ ուղխտ կէրթա ախշարքըմ, մեկ սարի՛մ ռաստ կը գան:

Կհիւնը ծյուն-պուք վերա, կը մընան մանչ ատան ծյան, քառսուն խուրլամ, քառսուն օլախ պեռնիրով կը մընան մանչ անտ ծյան, կը խեղտըվին:

Ատ Յուսու՛Ֆ մընակ կը մընա, վար ծիուն կը քըլը, հանա կը յա, լաճըն էլ կը պաղը վար ծիուն, կը քըլը, անտ ծին էլ աղեկ ծի կհիւնը, հանա կը յա, հանա կը յա, անտ ծին գանտ մարթ կը տանը:

Յիրիկուն հանական գախ կըրակըմ կէրեվա, կանտ կանը, կէրթա հուրիշ կանգը, Խոջան Մանուտը կոնը հիրծիվ կը կայնացըրը:

Խոջան Մանուտ կհիւնը, կը կայնը, կըսը. «Նա ի՞նչ մարթ էր, իրը կայնավ պե պեժըն»:

Յիրիկուն մութն ը, կը կանչը. - Է՛յ, տու ի՞նչ մարթ իս, ձեն չըս իտա, յան պայա իլը, յան տու ինչ մարթ իս, յան զըրուցը, ջըհանպ տու:

Ձեն չըխանը:

Կը մոտխըսնա Խոջան Մանուտ, կը խը՝ սիլախլանմիշ իլուկ, թըվանք գի ձեռ պըռնուկ, հանգըր կայնիր: Տորսեն կըսը. «Նարիկ աշիր մարթը»:

Խոջան Մանուտ ձեռ կը տա ըզուր թըվանք, կհիւնը տուս, կըսը. «Թը ավիր մարթ իս, իսն էլ տը գանկիմ»: Քիչ-քիչ կհիւնը տուս, կը մոտխըսնա, խիտ կը զըրուցը, ջըհանպ չի տա, կը մոտխըսնա, կը խը՝ ինչըխ մեռիլ պաղ կըպիր վար ծիու զընին, տորսեն ձեռ կը տա, ինչըխ կանը՝ չըպըրծնը, ախշըր գորով ըզզընից կը պըրծուցին, կը բիրին տակ, ծին կը տանին, կը կապին, ըզմարթ կը բիրին, կը տընին հիրծիվ կըրակին:

Մուրխտանըմ կը մընա հանտե, հիրծիվ կըրակին կը լըկը, դոր անտան մարթիր, Խոջան Մանուտ կաչկին, մեկ կըսը. - Մեռիր ը:

Մեկ կըսը. - Տա չըմեռիր, անու պերենն շորանք տան տաք կհիւնը:

Կը մընա անցկուն անհանչ չուր անտան խալկ կը պըլանվին, հանական ուղխտ անտ Խոջան Մանուտ վար անտ տըղին շըքը պոմ կըսը. - Մեռուկ ը, կայե պաղիր ը, խուրզը կա հինը:

Անու էլ էրկու կընիկ կա, անցկուն խորոտ, անցկուն կանավ, շըշման կընքտիրըմ ին Խոջան Մանուտին:

Խոջան Մանուտ ուր կընքտիրուն կըսը. - Նա մարթ տարե՞ք ծի հոդեն, մեկ ձեռք խորոտ լըխե՛ֆ-տոշակ պարգեք, նա մարթ

չըփլանդցե՞ք, մեկ էյնե՞ք ան կող, մեկ էյնե՞ք ան կող, կըքե՞ք վար ձի սըրտին, էրկու կընարեն ձեռք թալեք, գրկե՞ք վար ձյի սըրտին, ձյի հելըմ տա ըզան, անիկ ուըր խուըզը կա հինը, հիրար կառնը, կը խոսա, թե չէ, հիրար չառից, չըխտ մեռուկ ը:

Ատ կընքտիրըն էլ ատ տեսակ կանին, չուր կեսգիշիր կը կուտըր, Խոջա՛ Մահմուտըն էլ նըստիր, համա՛ կալուն կը խըմը, վերա կը խարցընը, անցկում ընկիր անու տարտ:

Գախուն տիրըմ կերթա, կը խարցընը, կըսը. - Ատ մարթու լեշ քանը յա, կը տաքնա, թը թոնը յա՛ կը պաղը:

Կընքտիր սիցին. - Ուըլա՛, անու լեշ տորսեն տաք ը, տորսեն առից կանկղանալ, կը քըրտընը:

Էսաց. - Դե՛հ, խորոտ կըքըցե՞ք, խորոտ գըրկե՞ք, տաքցըցե՞ք, ուըրտա անու լեշ տաքցավ, խուըզը կա հինը, պալքըմ ժըրը:

Կը մընա չում դիկ կանչիլու ուըխտ, կը քըրտընը, գինք հիրար կը տա, հա՛շ կը գա վերա, կը ժըրը:

Կընքտիր համա տեղեն կը քեշվին տուս, ինչ ան կը ժըրը, գուրինք խալավքիր կառնին, կը խագնին, կերթան Խոջա՛ Մահմուտին անկանջկալա կը տան:

Կըսին. - Մի անկանջկալեն, քու մարթ ժըրավ:

Խոջա՛ Մահմուտըն էլ կիլնը կերթա ան հողեն, սոպեն կը վառը, ատ մարթըն էլ հա՛շարացավ, նըստավ հանտե, խատ ատ մարթուն գըրուցից:

Էսաց. - Դու ի՞նչ մարթ իս, դու ո՞ր տեղեն իս, վի՞ լաճն իս, հո՞ւր կերթաս, հո՞ւստ կը գաս:

Մարթ էսաց. - Իս չըմ գըտնա, ինչ իմ հա՛շ իրը վար ձի, տեսա էրկու չըփլաղ կընիկ իմ կըշտնեն էլան, գացին:

Ինքըն էլ էկավ, սոպեն վառից, խատ անու անուշ կը գըրուցը, անոթու ուր խելք գընաց, չըկարցավ գըրուցեր, քանը կը խարցըներ:

Ան նա կըսըր. - Չըմ գըտնա: Իսն էլ ձիկ ըստա՛ տեսա, իսն ա գընամ:

Կըսը. - Աղե՛կ, քյի խեր, մեր, ախպեր, ի՞նչ կա:

Կըսը. - Ձատ չըմ գընա, ձի գա՛ չըկա:

Կըսը. - Ոըր քի գատ չըկա, չը՞ս իգա՛, իլնը ձի լաճ:

Կըսը. - Խա՛, կը գա՛մ կինիմ, վըրե՞ չէ:

Կիլնը Խոջա՛ Մահմուտը լաճ:

Ան թըղ մընա հանտե, տանճանք վար խոր:

Գարուն կը տա վերա, խեր կը լըսը, թը հըմեն ատ քարվան, ատ մարթիր մընացած սարը մեջ, ձյան տակ խեղտըված, կորուսած:

Ան էլ տըմին լաճուց կը կըտըր, գըտնա ուըր լաճ մեռիր ը, շատ կը մալուլվը, կը լա, խամ կանը, անու մալին կեսըն կանը անու խեր-խըրիաթ:

Ժամանակըմ վերա կը ընցը, ատա՛ Խոջա՛ Ալու լաճ, ընչ կի մա՛ Խոջա՛ Մահմուտն ը, խատ ուրինց մարթիրուն կերթան նեճիր: Կերթան ատ վըրըն պանցըր սարիր, ուր խոր էրկիրը կա՛զը սարիր կը տեսնա, կը ճանչընա: Անու խեր-մեր կիյնը անու միտ, ան տե հե՛յ- հե՛յըմ կանը, կը տըժարանա:

Կը գան տուն, Խոջա՛ Մահմուտին կըսին. - Ուըլա՛, հասօր մենք գացինք ան պանցըր սար, ան իրիշկից ատ սարիր, տըժար հեյ-հեյըմ արավ, մա՛ յան ան անու խոր սարիրն ը, անու խերենական էրկիրըմ կա, մըրհա ինչըխ կը իլիր, կը ամչընա, չըսը:

Խոջա՛ Մահմուտըն էլ կը գա, կը տընը խա՛ ատ լաճուն, կըսը. - Տըղա՛, ա՛րը սա՛՛ մըրհա քիկ խոր տունըմ, խեր-մերըմ, պանըմ չէլներ քյի, տիւ չըր տըժարանա, հե՛յ չը անը:

Կըսը. - Աղա՛, ինչ տը սիմ, իս էլ Խոջա՛ Ալին կա, ան էլ քյի պես խոջա՛ էր, իս անու լաճն իմ:

Էսաց. - Չա՛, անու անուն լսիր ինք, ան հարուստ, երեվելը մարթ:

Յուսուֆ էսաց. - Քառսուն խուըլամ իտը խա՛ ձիկ, իսն էլ նա՛ ձին խեճա, ընցա հիրճիվ անունց, ախշարք կան իկինք, չում աշուն, աշուն ձյուն-պուք էլավ, մինք մընացինք մա՛ ձյան, քառսուն խուըլամ, քառսուն պերկիր մընացին, խեղտըվան, իս չըմ գըտը՝ ինչըխ իմ իկիր ըստան:

Էսաց. - Խալե՛մ քյի խեր-մեր էլ կան, սաղ ի՞ն:

Էսաց. - Խա՛:

Էսաց. - Ապա՛ ընկա քու խոր-մոր մեղաց տակ, ընցնեմ տարը քյի պախիցը ստան, մըկա գըցած տու՛ մեռիր իս, ուրինց տըմեն տըրած, կուզի՞ս ըզքյի հորողկիմ, տիւ գընա՛ քու խոր մոտ:

Կըսը. - Խա՛:

Տորսեն ան խոջա՝ Մահմուտ կիլնը կերթա, քառսուն պերկիր կը պաննա, հըմեն ուր տընեն, քառսուն խուըլամ կը տընը հիր-ծիվ, ձեռքըմ աղեկ լաթ, ձեռքըմ աղեկ սիլախ կը տա ան լաճուն, անու ձին կը բիրը, կը խեճոցը:

Կըսը. - Տիւ գընա՝ քիւ խոր, մոր խա՛նը: Թա՛ն էլանվ ժանանա-կըմ ան պանիրու փուխ տըվիր՝ տըվիր, թը չէ՛ խալալ իլնը քյի:

Ան էլ կիլնը, կաք բարով կանը, ան կընքտիրու ձեռքիր կը պագնը, կը իլնը, կը յա:

Կերթա ուր խոր երկիր կիյնը տուս, անու խոր երկրը մար-թիր՝ երկու մարթ, ռաստ կը գան, կը ճանչընան, կըսին. - Դու խո-ջա՛ Ալու լաճ Յուսո՞ւֆն իս:

Կըսը. - Խա՛:

Կըսին. - Ապա քո խեր կը գեր՝ տու մեռեր էր, քու խաչխու-նեն կերած ին, պըրճած ին:

Կը գան խոջա՛ Ալիճին անկանջկանլա կը բիրին, կըսին. - Խո-ջա՛ Ալի, իմ անկանջկանլեն, քու լաճ իրը, քառսուն պեռ մալ խիտ:

Խոջա՛ Ալիճ կըսը, թը. - Յե՛, յոթ տարը կա՛ իմ լաճ մեռիր ը, խաչխունեն արիր իմ, էլմէլ կը գեք, կեցըցկեք իմ միտ, ուր տը-ժարանամ:

Չուր անցկուն կըսը, կիլնը տուս, երկու մարթ էլ կը վագին, կըսին. - Խոջա՛ Ալի, իմ անկանջկանլեն, քու լաճ իրը:

Չուր հինգ մարթ կըսին, չըն ավտա:

Չում կանախը, կը խը՝ պեռնիրով կը գա տուռ, նուր կը տես-նա, կը խընդանա, կուրանխանա, կիլնը, ըզլաճու գըլոխ կը պագնը, կը նըստին հանտե, խուլպել կիլնին վար մեմեկը:

Կը խարցընը. - Տըղա՛, ընցկընեն ուըխտ տու ի՞նչըխ էլար, մենք լսիր ենք՝ տու պաթմիչ եք իլիր, հըմեն մեռեր եք:

Կըսը. - էլմէլ իմ պեռնիր, իմ խուըլամքիր պաթմիչ էլան, Աստըված մեկ մարթըմ ըզիկ անգանտից:

Ինչըխ ան մարթ՝ խոջա՛ Մահմուտ, խոջա՛ Ալու խիտ արեր էր, ուր խոր պատմեց:

Խերըն էլ էսաց. - Ո՞րն ը ան մարթ:

Էսաց. - Խոջա՛ Մահմուտն ը, ֆըլան կանգեն, ֆըլան տեղ:

Ալիճ էլ էլավ, թանպիր տեսավ, ըզլաճ փըսակից:

Երկու-իրիք տարը վերա ընցավ, էսաց. - Յուսո՞ւֆ, ան խո-ջա՛ Մահմուտը աղեկութին մընաց վար մի, ան ըզքյի անգանտեր էր,

նա աղեկութին խա քյի արեր էր, կը պը մենք էլ անու աղեկութին անինք, անու փուխ տանք:

Յուսուֆ էսաց. - Կակո՛, պետք ը, ուրտա անցկուն անինք, շատ աղեկ կիլնը, անուըք աղեկութին արած խատ ծիկ:

Խոջա՛ Ալիճ կիլնը, սաքսան պեռ մալ կը բաննա, կառնը կերթա, խորոտ սալըխ լաճու մոտեն կառնը, կը յա, թուղթ մեք խիտ կը տանը:

Կերթա, խարցընիլով կերթա հանտե կը խարցընը, մարթ սալըխ չի տա, կը խարցընը, կըսը. - Չէ՞, ջանըմ, ըստա խոջա՛ Մահմուտըմ կեր:

Կըսին. - Յե՛, խոջա՛ Մահմուտ քանը տարը կա՛ մեռիր, անու կընքտիր մեռած, անու լաճըմ կա, շիվար իլիր, ինկիր ժողով-կանանքտիրուն, ժողովք կանը, կուտը:

Խոջա՛ Ալիճ կըսը. - Անու կավըլ, անու մալիր ընկիր վի՞ ձեռ:

Կըսին. - Կավըլիր կի՛ ըստա անուընցն ը, անու տուքա՛մ էլ կա, ընկիր յահուտու ձեռ:

Խոջա՛ Ալիճ էլ ան ութսուն պեռ մալ կը տանը, մա՛ ան կավ-լիրուն կը թափը, կը կանչը ըզֆաղկիր-ֆըղկարեք, կըսը. - Էկե՛ք, ձի գան տամ:

Կըսը. - Վով խոջա՛ Մահմուտը լաճ բիրը մա՛ ձի, անու պաշ-խիշըմ կը տամ:

Տորսեն կերթան, ան օր չըն իգան, կը մընա ան մեկէլ օր, ան ֆաղկըրքիր կան կը գան, էլմէլ ըզխոջա՛ Մահմուտը լաճ չըն կընտնը:

Էլմէլ կը գան հանտե, ուրինց խանար գան կառնին, կըսին. - Հաստը խոջա՛ Մահմուտը լաճ չիկիր մա՛ մի: Մենք չընք տիսիր:

Կըսը. - Հաստը երթեք, կան գեք, վաղ առնեք, խա՛ ձի բերեք: Չի պաշխիշ կը տամ:

Ատ շիվարքիրն էլ կերթան, կան կը գան, կը կընտընին, կառնին, կը գան:

Լաճըն էլ մեկ թալանտկ մը կը տանին մա՛ խոջա՛ Ալիճ, կըսին. - Նա յը խոջա՛ Մահմուտը լաճ:

Խոջա՛ Ալիճ էլ կը պըռնը, կը նըստըցըցը հանտե, ան տըղե-նիրուն էլ մեմեկին պաշխիշըմ կը տա: Ըզլաճն էլ կը տընը հանտե, չըն թըղընը հիրար առնը, ամեն պան կը լըցը հանտե, ձեռքըմ թա՛ճա խալավ կը խագը, կը նըստը, խիտ անուշըմ կը գըրուը:

Կըսը. - Չի տուն, նա կավըլիր մընակ ձե՞րն ը, թը՞ կեսըն կի խալկը ձեռ:

Էսաց. - Նա յը, էրկու տուն էլ կի խալկը ձեռն ը:

Կըսը. - Ապա տուքան:

Կըսը. - Տուքան կանը էրկու տուքան, կի յախուտու ձեռն ը, խազար կուռուշու պարալը յը:

Կըսը. - Ան քյի խազար կուռուշ, տիւ քիւ տուքան տարցը-ցո՛ւ, ա՛ն քյի էրկու խազար կուռուշ էլ, տիւ քիւ էրկու տուն տար-ցըցո՛ւ:

Լաճ էլա՛վ, փարեն տարավ, տարցըցուց, ուսթա-փալա բըռ-նից, ա՛տ կավըլիր քանի՛մ ա՛տունց տան տեղ կեր, կավըլ շինից, իրիք կաթ լըմընցուց, խինգ խատ տուքան շինից, իցկից հինը, ա՛տ ութսուն պեռ մալ շուռ իտու ա՛տ տուքընքտիր, լաճ իտը հիրճիվ:

Տեսավ, ուր լաճու խելք փըշու՛մ տեղյակ չէր խորոտ, էսաց. - Կայե խորոտ, խելացը, տեղյակ կընիկըմ չիլըն ա՛նու խամար, պոշ պըռնը, էլմէլ տը փըճըացը, կը պը իս ըզնա փըսակիմ, նուր էրթամ:

Կիլըն, լաճուն կըսը. - Դե՛հ, տըղա՛, տիւ կա՛ց ըստա, իս յամ, քյի խամար կընիկըմ բերիմ:

Կիլըն, կերթա Արապը Շեխու մոտ, կերթա հանտե, կը նըստը խնամաաթոռ, տորսեն կը զըրուցին, կըսը. - Շեխե՛ Արապան, իս կանտ արիր իմ հիտիվ Աստըծուն, հիտիվ Աստըծուն իկիր իմ քիւ տիւռ, ախչիկըմ տաս իմ լաճուն:

Արապը ա՛տաթ էն ը, ինչ իսան էրթա ա՛նու տիւռ, պե մըրագ չըտառնա:

Արապըն էլ կիլըն, կերթա, ուր ախպոր խասուկ ախչիկըմ կա, կերթա մա ախպոր կընիկ, կըսը. - Ախպոր կընիկ, ա՛րը ըշտակ սա՛, ինչ ա՛տա ախչիկ ինկիր խա՛ քիկ, չուր իլիր մորեն, տիւ խալկը ձեռաց գա՛տ չը՞ս կիրիրը, քիւ սերտ վար խալկին չըմեղավորցի՞ր:

Կընիկ էսաց. - Շեխըմ, ուրլա՛, իս թու խալկը ձեռաց գա՛տ չըմ կիրիր, լա՛ մեկ օր գացը տըրկըցանց տուն, թագա՛ նուր խա-ղող էկեր էր, ճուքըմ խաղող տըվին ձյի, իս չառը, ձի տըվին Աստըծու սեր, սիցին՝ տիւ տըղով կընիկ իս, նա թագա՛ յը իկիր, մեղք ը, առ տըվին Աստըծո սեր, իս էլ չառը, մեկ պըտուղ իս առիր իմ, կիրիր իմ ա՛ն մեկ պըտուղ:

Էսաց. - Չիլըն, ա՛մոթով տիլնինք, ուր ա՛ն պըտուղ կիրիր իս, ա՛ն ախչիկըն էլ ա՛նու ուշ չըկըտըրը, ա՛մոթով տիլնինք, ա՛ն ախ-չիկ տը տա՛նա վար մի, մի տան նամուս տը թափը:

Տորսեն կիլըն, կերթա ա՛ն մեկէլ ախպոր մոտ:

Կընկան կը խարցըն, կըսը. - Ախպոր կընիկ, ա՛րը ըշտակ սա՛, ընչ նա ախչիկ ընկեր խա՛ քյի, չու՛մ ինչ իլիրը, տիւ խալկը ձե-ռաց գա՛տ կիրիր իս:

Ախպոր կընիկ էսաց. - Շեխըմ, ինչ իս իլիր իմ, մըտափուխ չուր ախչիկ իլիր, իս թու խալկը ձեռաց գա՛տ չըմ կիրիր, լա՛ օրըմ իս մեկ տուն նըստեր էր, խաց կը թըխեն, իս կայնա, ձի սիցին՝ թագա՛ խաց ա՛ն: Ինչըխ արին, իս չառը, ըզձի տըվին Աստըծո սեր, ձեռ տըվիր իմ, քանց պակլեմ կիրիր իմ, տըրիր իմ իմ պերան:

Շեխ էսաց. - Ուրլա՛, ա՛նիկ էլ չիլըն, ա՛ն էլ ուր էրթա, տը տա՛նա վար մի, մենք ճու՛շ տուն ինք, ա՛մոթով տիլնինք:

Շեխուն էլ ախչիկըմ կա, փըշու՛մ պըզտիկ ը, էսաց. - Ախըր դա՛ռտակ չընք ճամխը, տիլթամ իմ կընիկ էլ փուրձիմ մըռա՛:

Գնաց, ուր կընկան էսաց. - Արը ըշտակ սա՛, քյենե պա՛մ տը խարցընիմ:

Էսաց. - Ի՞նչ:

Շեխ էսաց. - Հաստ մեկ աղեկ մարթըմ, իմաստուն, զըտնա-կան մարթըմ իկիր ը, իս նեղ ընկիր իմ, արը մըռա՛ ինչ տիւ իլիր իս տըղով, նա ախչկան դորին տիւ խալկը ձեռաց գա՛տ չը՞ս կիրիրը, քիւ աչք խալկը ձեռաց գա՛տ չիլի՞ր:

Կընիկ էսաց. - Շեխըմ, ա՛ն ախչիկ ընչ ընկիր խա՛տ ձիկ, չուր մըկա իս թու իսնը ձեռաց գա՛տ չըմ կիրիրը, չըմ խապվիր: Ինչըխ կաթ՝ ա՛նարատ իմ:

Էսաց. - Հաստ ա՛ն մարթ իկիր, իս իմ ախչիկ տը տամ ա՛նու, պըզտիկ ը՝ լա՛ պան չըկա:

Շեխն էլ էլա՛վ, ա՛տ ախչիկ իտու խոջա՛ Ալուն, մարթ իտը խիտ, պան-ման իտը խիտ, էլան, առին, գացին:

Տարան, փըսակիցին վար խոջա՛ Մահմուտը լաճուն:

Էսաց. - Տորսեն իս տիլթամ մի կանգեն, նա տուն, նա մալ, նա քառսուն ըղտու պեռ մալ քիւ խորն էր մա՛տ մի, քառսուն էլ տըրը վերա, քյի խալալ խու՛շ ըլնը: Ամանաթ քիւ կընիկ, քիւ կընկան խոսքից դուս չիլնի՛ս, քիւ կընիկ շատ ճարտար ը:

Խոջա Ալին կը թղնը, կերթա ուրից տուն, լաճ, ուր կընիկ կը մընան հանտե:

Այա՛մ վերա կը ընցնը, անա լաճ կիւնը, կըսը. - Տ՛երթամ հուրիշ քաղաքըմ:

Քանի՛մ պեռ մալ կը պըռնը, կըսը՝ տ՛երթամ:

Կընիկ անու կըսը. - Խորոտ՝ քու խելք քու գըլոխ բըռնիս, խորոտ՝ քու խելքից չիւնիս, - կըսը, - նա սուրաթ տար խա՛ քյի, իրիշկիս վերեն, քու խելք կը պանիրալը քու գըլոխ:

Մարթըն էլ կառնը անա սուրաթ, կերթա հուրուշ քաղաքըմ, պեռնիր կը թալը խան հինը: Հանտե յահուտի՛մ կիւնը ան խանը մեջ, ան յահուտին, ան մարթ կը գան հատե, հիրիկուն կը նըստին հանտե, խումար կը խաղան:

Քանը անա մարթ կիրիշկը ան սուրաթը վերեն, յահուտուց կը տանը, յահուտին իրիշկից, կը տեսնա՝ պա՛մ ուր ծուցեն հար կը խանը, թանաշա կանը, կը դընը ուր ծուց:

Յահուտին էլ ան մեկ տիր ընչ էխան, իրիշկից, ձեռ խու, բըռնից, իրիշկից, կը խը՝ կընգան սուրաթ:

Յահուտին էսաց. - Հե՛յ, քու խընտում վար ան ուըռըսպո՛ւն ը, ան քանի՛մ տարը յեր իմ կընիկն էր: Ուըռըսպը էր, իս էլ թանկիցը, քի բերած քյի խանար:

Լաճուն սիրտ պաղավ: էսաց. - Սուք ը, ինչըխ քու կընիկըն էր:

էսաց. - Խա՛, իմ կընիկըն էր, թըղը, մըկա էլ յամ խանտ ուր կըշտին, մըկա էլ տու քու կազը անուն ձի սիս, իս յամ, տըռնիր տը պանա: Իս յամ, ինչըխ ուզիմ, անցկում տ՛անիմ:

Տորսեն ան յահուտին կըսը. - Արը, իս վար իմ տուքնին, տու վար քու սուրաթին խաղանք:

Ատ տեղ կը խաղան, յահուտին ըզուրաթ կը տանը:

Խելք մարթո գըլխուց կը յա, մարթըն էլ քանը խաղա, կը տարվը, ան ահագին պեռ պանիրու կեսըն կը յա, կը տարվը:

Յահուտին էլ կիւնը, անա սուրաթ կը տանը, փաշի՛մ շանք կը տա, կըսը. - Հորողկինք, բիրինք քյի խանար, ընցկընեն մալ տաս ձյի:

Փաշեն կիւնը յահուտու խիտ, երկուս խանաթիր կանին մեկ, շըթախութիմ, հիլեն կը թալին վերա, կը բիրին, կը բըռնին, որ տա կուրսըսցին, էրթան կընիկ պիրին փաշը խանար, տորսեն

անա յահուտին, էլմէլ անա մարթ կը պարըշին, հափսից կը թըղնը:

Կինը խանտ ան մարթուն կըսը. - Իս մըկա էրթամ քու կընկան մոտ, ձի տուն ինչ կա, տեսնամ, գան քյի սիմ:

Տորսեն յահուտին շարտ կը պըռնը խիտ, կիւնը, կերթա, կերթա կը խասնը հանտե, կը խը՝ կի հանտե ինչըխ սարե՛մ երկու տանրկանվան կի վար տըռան, ուըրցեղեն օլարանգ յասախը ներս չերթա:

Տորսեն ինչըխ կանը, չըկանա մըտնը հինը:

Տորսեն կերթա, պառավըմ կը տեսնա, կըսը. - Պառա՛վ, ինչ տամ քյի, ըզի տանիս անու մոտ՝ Խոջա Մանմուտը խարսը մոտ:

Կըսը. - Ախշարք ավըր, անիկ թու ուըրցեղեն գան չըտեսնա:

Յահուտին կըսը. - Իս սանաթըմ պիրիմ, մըտնիմ սանաթըմ վե, տըռնիր վար ձի շինեցե՛ք, ըզի տու շըլկիլ, տար դի՛ անու տան մեջ, սա՛ իս տը յամ Հարուսանդեմ, իմ ձեթ-մեթ կի նա սընտուկ վե, թըղ կենա ըստա, մա՛ քյի, տու Շեխու ախչիկ իս, իմ կեն վար քյի կը գա, չուր իս Հարուսանդմա գան:

Պառավ կըսը. - Աթարգ կիւնը:

Յահուտին կիւնը, սընտուկըմ կը շինը, խինգ ուըսկը կը տա պառվուն, կըսը. - Պառա՛վ, իս մեկ գիշիր կը մընամ հանտե, խըլխուն կը գա, ըզի կը բիրիս:

էլավ յահուտին, մըտավ սանաթ վե, թուղթ-թանաք չըխտ խանտ ուր կեր, աչքիրու հիրճիվ թըղեր էր պաց, փըշուրիկըմ թուղթ կըպուց հիրճիվ:

էվարին պառավ իտու շըլկիլ, տարավ Շեխու ախչկան տուն, էսաց. - Շեխու՛ ախչիկ, Աստըծու սիրուն, իս իմ սանաթ թըղ կենա ըստա, չուր իս յամ Հարուսանդեմ, գան: Կը տանիմ իմ կեսն վար թվը իսնը չի գա:

Շեխու ախչիկ էսաց. - Դի՛ հանա ան հավշը մեջ, գըռնա՛:

էսաց. - Չէ՛, շեխու՛ ախչիկ, տար դի՛ քու պանկած հողեն, թըղ կենա հանտե, չում իս կը գան: Թը իս իկը, չըխտմ կը տանիմ, թը իս չիկը, տու գըտիս, խալալ իլնը քյի խանար:

Շեխու ախչիկ էսաց. - Չէ՛, պի՛ նա քոշեն:

Սընտուկ իթող հանտե, էլավ, գըռնաց:

Հիրիկուն ճըրագ կը կըպուցին, յահուտին էլ ուըշիկ ձեռ կը տա, ուըր անջքիրու հիրճիվու թուղթ կը պըրծուըը, կիրիշկը՝ անու հոդեն ինչ տեսակ ը, անու ռըսըմ կառնը, կը գըրը:

Շեխու ախչիկ ընչ տեղ կիցկը, ընչ տեսակ ը, ան նըվին կը գըրը, ինչ թանղիթ խալավ կա վար Շեխու ախչկան, ինչ խալավ խանը, կը գըրը, անունը ճըրագ որտեղ կը տընին, անունը պան-ցիր ինչըխ կը, անխըր անունը տան էղելութին գըմեն կը գըրը:

Խըլխուսուն պառավ կը գա, կըսը. - Շեխու ախչիկ, իմ սընտուկ տու, իս տանիմ: Գանը, ընկիրքիրուն չըխասա:

Շեխու ախչիկ կըսը. - Ապա քու սնայաթ կի անտե, ա՛ռ տա՛ր, վովը իրիշկը քու սնայաթին:

Պառավ կառնը, կը տանը ուր տուն, յահուտին կիլնը տուս, խինգ ուըսկըն կը տա պառվուն: Կը թըղնը, կերթա:

Կերթա մա Շեխու ախչկան իրիկ, կըսը. - Հե՛յ, մա՛րթ, իս գանը քու տուն տեսա, գիշիր մընացը քու կընկան հոդեն, մատ քու կընիկ, խըլխուսուն էլա, իկը, թը տու չըս ավտա, ձեր տան էղելութին ըստան գրիր իմ:

Լաճըն էլ խելք գըլխուց կը թալը, սավտա կիլնը, կիյնը ան տեղրանը:

Յահուտին կերթա, ան փաշը խամար քըսա կանը, կըսը. - Ալ ան կընկան նըման չըկա: Պա՛մ անինք պատճառ, էրթանք գատ մարթ հափըս անինք, էրթանք գատու կընիկ զորովա քի խամար բիրինք:

Էլան, խապարքիր արին մեկ, գան մարթ բիրին, հափըս արին: Յահուտին, ան փաշեն կիլնին, չուրս-խինգ մարթ կը հորողկին ան Շեխու ախչկան մոտ, տորսեն կիլնին, կերթան Շեխու ախչկան մոտ:

Ախչկան կըսին. - Քու իրիկ ըզմի հորողկիր քու հիտիվ:

Շեխու ախչիկ տեսակըմ կիլնը, կըսը. «Ասանին իմ իրկան խելք գողցած, ան սուրաթ մոտեն առած, մա ինչըխ իլիր»:

Ան էլ կըսը. - Շա՛տ աղեկ ը, յասախը մարթ բանցը չի գա, քաղըը անուն սեցե՛ք, տուք ո՛ւրտեղացի եք, իմ իրիկ կի ո՞ր քաղաքն ը:

Քաղըը անուն կը տան, կը գըրը, կը հիմանա, ան մարթիր կը տանը նըրքըն կաթը հոդեն, տու կը շինը վերա, կերթա տըռնա-պանին անու վերակացուն կըսը. - Չուր մըկա ձի այլըխ քանի մը,

թըղ իլնը երկու անցկուն, մողա՛թ կացեք տան, իս տ՛երթամ իմ խերանց տուն, չում ամիս մ՛ էլ կը գամ: Էսա մարթիրն էլ թըղ կե-նան ըստա հափըս չուր տաս օր թըղեք, սեցե՛ք՝ ան կընիկ գանցիր մատ ուր իրիկ, գանցե՛ք, խասե՛ք:

Ախչիկըն էլ մարթախանը կը խագնը, ձի՛մ կը խեծնը, գիշիր-ցերեկ արավ մեկ՝ կը քեշը, կը գա ուր խոր տուն:

Խեր կըսը. - Ախչիկ, իս անդ արեր էր, ինչ մի տան ախչիկ վար մի գեր, իս տը սպաներ, մըկա իս ըզքի տը սպանիմ, հ՞նչ իլիր քիկ, որ իկիր:

Ախչիկ կըսը. - Կակո՛, քու տան խաց խարան վար ձիկ, թը իս ուտիմ, իս քու տուն ապով չըմ իկիր, իս, իմ իրիկ նեղն ինք ընկիր, իս իկիր իմ, հընտանտըմ կուզիմ քյենե:

Ան էլ կըսը. - Ի՞նչ կուզիս:

Կըսը. - Իս կուզիմ քյենե քառսուն խատ ընտրով, թամիզ ախչիկ, մեն խանվափուխիս, անիս մարթու խանըլ, մեն սիլախով, մեն ձիավոր, տաս ըզիկ, հեքիմ էլ ձի թասլիմ արա, իս տանիմ, բիրիմ, հեքիմ քի թասլիմ անիմ: Մեկ խատ ուըր գարարվը, ձենե ուզը:

Խերն էլ կը բիրը, քառսուն խատ ընտրով ախչիկ կը բիրը, կը խանվափուխը, սիլախով ձիավոր կը տա խիտ, ինքըն էլ թագավորական լաթ կը խագնը նշանքտիրով, պանիրով, կառնը, կը յա կաստ կանը անտա քաղքին կը յա:

Կը խասնը անտա քաղաք, ան ախչկըտիրուն անցկուն թամախ արիր, սիր՝ ինչ ձի իշմար տամ, վիրուցե՛ք, չըթըղնե՛ք: Ուր անուն էլ տրիր խուընտքարը լաճ:

Կերթան, սըվթա կը խասնին ֆըռունը տուռ, ֆըռունը խացիր կը տա կըշուիլ, մեկ մեկից ընչ թիթըվ կիլնը, իշմար կը տա, կը գարկին, անավ գըլոխ կը փըրճըղկին, կըսին. - Նա ինչ գուլուն ախշարք ը, ուր մարթ չըխարցընը պանը վերա:

Տորսեն հատուցա կերթան պաղկըլքիրու մոտ, անտունը քարիր կը կըշը, ան էլ թիթըվ կիլնը, կը գարկին, չուրս-խինգ մարթու գըլոխ կը սըղկը, մանին կանը՝ մա ինչ անաստված քաղաք ը, ինչ պան անին, չըն խարցընը վերա:

Հատուց կերթան, դոր չափիր կաչկին, չափիր կը կուտրին, կերթան, նիտեր կը չափին, նիտեր կը կուտրին:

Ձեռն կը իյնը քաղքը մեջ, տիրսեն կըսին. - Խուղնտքարը լաճ իկիր ը, ըզխալկ քարտեց, հաղկ նահաղկը վերա կը խարցընը, անցկում անքար կա խիտ, ինչ իշմար տա, թագանվորն էլ չըն ճանչընա, կը գարկեն:

Տորսեն գընաց, հափսիր, պըռնավորքիր՝ մըհա ինչ անպով պըռներ եք, պըռնավորքիր կը թըղըն մեկ-մեկ, ըսթընտաղ կանը, ուր իրիկ չըկընտընը:

Կը խարցընը. - Իմ քաղքեն մարթ ըստան պըռնուկ ը, խանեցեք դուս, թը չէ՝ ըզծի քաղաք կը տամ ավրիլ:

Տորսեն կերթան, կան կը գան, կը կընտընեն, կը բիրին:

Կըսը. - Քյի ինչ անպովը պըռնած:

Կըսը. - Իմ տանվըջին յահուտի մը:

Յահուտին կը հորողկը կը բիրը, կըսը. - Ինչ անպով նա մարթ պըռներ եք:

Նայ խաց անու տավին կը տեսնը, կը խը, ուըր սըխալը:

Կըսը. - Յահուտը, արը ըշտակ սա՛, ուըր պըրծընիս, թե չէ քյի կը ըսպանիմ: Դու ինչ գացիր նա մարթու տուն, անու կընիկ ինչ տեսակով տեսար, ըշտակ սա, ուըր պըրծընիս, թե չէ՝ քյի կը սպանիմ:

Յահուտին կըսը. - Իս գացը, ինչ տեսակով էլավ, չըկարցա տեսներ, խիճո ուըսկը տըվը պառվու՛մ, սընտուկըն գընիցը, մըտա ան տեղ վե, պառավ ըզծի տարավ, իտը անու տուն, իս էլ անքիրու հիրծիվ ծակիցը, անու տուն, անու թատպիր թամաչա արը, իկը ըստա, սուք սիցը, անու իրկան վերա պեպախտութին արը, անու կընկան սուրանթ անու մենե առը, անու իրիկ իս տըվը հափըս անիլ:

Էսաց. - Աղեկ ը, տու գացիր անու հողեն, գիշիր մընացիր հանտե, տու հանտե պա՛մ չարի՞ր, պագըն չառի՞ր, ուըր տու կըսեր, իմ կընիկն ը, թըղիր իմ, յամ մկա էլ տը յամ մոտ, չըգացի՞ր, չըպանկա՞ր մոտ:

Յահուտին հերտվըցավ, էսաց. - Չէ՛, իս գաղտիկ իրիշկիր իմ, սընտուկ վե հողը ռաոտըն առիր իմ, իկիր իմ, ուըր ակախեն, իմ վիզ կը գարկեն:

Էսաց. - Ան մարթիր ինչըխ օրոխկիցիք անու կընկան հիտիվ: Դո՛ւր ին, կանչեք, թըղ գան:

Անունըն էլ իկին, էսաց. - Ի՞նչըխ գացիք, ի՞նչըխ արիք:

Անունըն էլ սիցին. - Մի փաշեն, յահուտին մի ռըշվանթ տըվին, մի հորողկիցին, սիցին՝ գացեք, խապեցեք, բերեք: Մենք գացինք, ինչ տեսակով ուըր էլավ, չըկարցանք չըխտ տեսներ, մենք էլ ընչ սուք սիցինք, վար մի ակախավ, մի իտը հափըս, օրական էրկու խաց մի խամար կը գյեր, չում տաս օր թունումավ, մի թըղին, իկինք:

Ատ էլ խարցընեց. - Դու չըկարցա՞ք մըտներ ներս:

Սիցին. - Չէ՛:

Դորիս էսաց. - Յահուտը, նարու կընկան սուրանթ տո՛ւ:

Անու սուրանթ իտու:

Էսաց. - Չէ՛, ա՛ն քու ծեռաց գիր գըրը վերա, օր գըրը, ինչ օր քյի թասլիմ իլիր, էլ տու էս տեղրանք չըդատիրս, ուք օրվա մեջ էրթաս, քու կընկան խասնիս:

Ալարանթ կը տա, անքար կը գարկին, ան յահուտու վիզ կը թըռուցին:

Ատ մարթիրուն էլ կըսը. - Դու խապվեր եք, գացեք, ան անցկում պան չանեք:

Քեֆըն էլ փաշին կը տա, կըսը. - Տու փաշա իս, պետքը վերա խարցընիս, նահաղկութին կանիս:

Ան էլ կիլըն հատեղ, հըմեն պանը վերա կը խարցընը, կարգկանուն կը տընը ան քաղքը մեջ, ուր ծեռնով իչրա կանը, կը թըղըն ան քաղքեն ուր անքար կառնը, կերթա:

Գընաց ուր խոր տուն, խոր էսաց. - Կակո՛, իս իմ ծեռնով իմ դատ տեսա, իչրա արը, իմ իրիկ նահաղկ տեղով հափըս են արած, անգատիցը, բիրը:

Ինչ արիրը, խոր քըսա կանը, կըսը. - Դեքըն պի՛, քու ախչկըտիր տու իրիշկիլ, ինչըխ տարիր իմ, անցկում պիրիր իմ, վանվա օր չըսին՝ անա մի ախչկըտիր տարավ, գարարից, իպը: - Էլմէլ էսաց, - Կակո՛, չըխտ քու քաղքը խաց խարանիր իմ, չըն ուտը, տորիս ձիկ դաստուր տու, իս յամ իմ տուն:

Դաստուր առեց, գընաց տուն, ուք օր մընաց, անու իրիկ իրը:

Էսաց. - Ան ինչ իլիր էր քյի, ընցեն օր կա տու չըր իզա, իս լսա տու պըռվեր էր, ան ինչըխ էլավ՝ ըզքյի թըղին, վո՞վն էր ըզքյի իտու թըղնիլ:

Էսաց. - Չըմ գըտնա, կըսին կըռալիմ լաճը, անցկում սարթ անգրարըմ կեր խիտ, մարթ չըր կըխշընա գըրուցեր, խուընտքար քանգանորը լաճըն էր:

Էսաց. - Յո՞ւր ը քու սուրանթ, տու վըրե՞ քու սուրանթ տեր խանկին, ուըր պըռվեր, ան սուրանթ հո՞ւր ը:

Էսաց. - Ան սուրանթ ան խուընտքարը լաճ յահուտու մոտեն առեց, պախեց մանտ ինք:

Էսաց. - Է՛հ, ան յահուտին ինչ ան սուրանթ առեր էր, ընչ էկեր էր, մըտեր էր քու տուն, քու կընիկ խապեր էր, քի գանարըմ տըվե՞ր էր:

Էսաց. - Չէ՛:

Էսաց. - Նան քո՞ւ ձեռաց գիրն ը:

Էսաց. - Խա՛, իմ գիրն ը:

Էսաց. - Ան իսն էր, իկը, ըզքյի անգտիցը, իմ ձեռնով իչոա արը, յահուտին ըսպանիցը, կարգ-կանուն տըրը անուըց քաղըր մեջ, իկը:

Յատե նուր վան մեմեկը խընտանցան, անտան լաճ թոպան արավ, սաց. - Ալ իս քու խանարից տուս չիլնիմ, որ տու անցկուն կընիկ էր:

Անուըք խասան ուրինց մըրագին, դուք էլ՝ ձեր մըրագին:



49. ՆՍՈՒՇ

Ժանանակով երկու մարթ կիլնին ախպերագիր, կերթան Ստանպուլ: Երկու-իրիք տարը կը մընա, մեկն կիլնը սիլաջը, փարա կը վաստըկը, կը գան տուն: Տան խարիր կուրուչ կա ան մեկին ան, ինչ գո Ստանպուլ: Ատ մեկն էլ խըլիսուն կը տեսնա սընտուկըմ կը ծախին, ատ ծախող կը կանչը, կըսը. «Առնող փոշման, չառնող փոշման»:

Ատ սանթ կը գընը, կը բիրը, կը դընը ուր հողեն, անտու ընկեր կըսը. - Դու իմ ընկերն իս, քու մեր տը գան խանցընը, իս ի՞նչ ջըհանպ տամ:

Լաճն էլ կըսը. - Ա՛ռ նա սանթ, տար իմ մեր, թըխ ջըլիր դընը վերա, չուր իս գան:

Կառնը կը տանը, անտան սանթն էլ կուծ ը, մարթ չըգըտը ինչ կա հինը: Կը տանը ան սանթ, թասլիմ կանը, կըսը. «Նանիկ առ, չուր տարի՛մ երկու էլ քու լաճ կը գան»:

Սընտուկ կը դընին պառվու տուն, երկօր, իրիք օր վերա կընցընը, անտան սանթն գերսից կը կուծվը, կը պացվը: Պառավ հըմեն օր տընեն կերթա տուս, անտ ախչիկ կիլնը, տուն կանվը, կը սանթսըփը, էլմէլ կը մըտնը հինը:

Պառավ ամեն օր կը գան, կը տեսնա տախտ ավուկ, պուտ-կըտիր լվացուկ, կը անջեպնա:

Բըռըմ օր վերա կընցընը, պաղ կը դընը, կը տեսնա սընտըկից ձեռնըմ կիլնը՝ ճըճկ, ճըճկ, ճըճկ, տու կը պացվը, ախչիկըմ կիլնը, տախտ կավը, պուտկըտիր կը լվա, տ՛երթա ուր տը մըտնը սընտուկ, պառավ կը վագը, կը պըռնը, կըսը. - Վա՛յ, իմ լաճ քի գընը, հորողը, տու քի վան ձի պախե՞ս:

Ախչիկն էլ կըսը. - Մարթու մ'ը'սը, մ'ի'ցկը տուս, նա տուն-տեղ ձի'րն ը:

Պառավն էլ կըսը. - Խա', միրն ը:

Ախչիկն էլ կըսը. - Օր անցկուն ը, կընա', ուսթե'մ կա'նչը գա', թաժա անուշ տուն տու շինել:

Պառավն էլ անցկուն կը կանչը ուսթեն, կը պիրը, տուն կը տա կանին իրիք կաթ: Ախչիկն կը տընը վըրըն կաթ:

Ախչիկն էլ պառվուն կըսը. - Չիլնիմ, չիմանամ մարթ թըղնիս գա չուր մըջըն կաթն էլ, թուղթ էլ հորո'ղկը քու լաճուն, սա՞ թըխ շուտ իլնը, գա':

Թուղթ կը խասնը պառվո լաճուն, լաճ կիլնը, կը գա':

Սընտուկ բերող մարթ կըսը. «Նա պա'ն կեր անտ սաբաթը մեջ, որ պառավ ընցնա տու'ն շինեց»:

Շատ խարթ-փորց կանը լա թու բա'ն չիմանա: Օրըն հա-ռեջուց կիրիշկը, կը տեսնա, որ փանջարով ներս ախչիկըն կա, ինչըխ կանը, չըն թըղնը, որ ան իլնը վըրըն կաթ: Ան էլ ուր միտ վե կըսը. «Իս տ'երթամ ճամբախ, իմ ինկիրոջ սիմ, որ ան ախչիկն սպանը, ան անուսպը ը, ընցկընա ը, ընցկընա ը»:

Էլա՛վ, գընաց ինկիրոջ հիրճիվ, էսաց. - Ան ինչ ատաբարգ ախչիկ էր, դրիր սաբաթ վե, հորողկիցիր, մըկա սարե'ն շիներ ը, հոր տաս մարթ կը բիրը ուր մոտ, հոր տաս մարթ կը խանը: Իմ իրիս գետին վե կերթա, ալ իս չըմ կանա թու մարթու իրիս իրիշկը, իսն էլ թըղիր իմ, գեղից իլիր իմ տուս:

Ան մարթն էլ կըսը. - Ահտ իլնը, իս խատ խասնիմ տուն, խանջարըն գանիմ մա անու սըրտին, գան ըսպանիմ:

Պառվո լաճ կը գա տուն, մեր կուրախանա, ընթրիս կուտին, կը տանին վըրըն կաթ մա անու կընիկ, ինք կը տաննա տուն, կը քընը:

Ատ մարթն էլ ձեն չըխանը, չուր ուր կընիկ ուր խալա՛վքիր կը խանը, ճըրագ փըշու'ն կը մըժղավացըցը, կը գա, մըտնը ուր տեղ, խատ իրկան կըշտին: Իրիկն էլ բարցը տակեն բըջախըն կը խանը, մեկ կը զանը կընկան ծըծերու տակ, կը պըռնը հառեջվե, կը թալը պատը տակ:

Դառնանք վար ախչկան:

Ախչկան մատ ալմաստ մատնիկըն կեր, որ էրեգակն նըման կը բըրըղկըտեր: Բազըրկա'ն իրը անտ գեղը տակ, քարվան

էթալ, տեսավ բա'ն կը բըրըղկըտա, ականչ կանը՝ խիժուցըն կը գա: Ատ էլ մարթ կը հորողկը, ուր կը գա կը տեսնա՝ ախչիկըն ընկիր ը հատե, մատնիկըն գի մատ կը պըսպըղա: Ան էլ կը տառնա, բազըրկանպաշուն կըսը. «Պրիմտար ախչիկըն ընկիր հանտե՝ ալմաստե մատնիկ գի մատ, ուր անցկուն լիս կը տա»:

Բազըրկան էլավ, ձի'ն խեժավ, ձի'ն էլ տարտակ ուր խիտ տարավ, ախչիկ խեժուց, իպը: Մուն վառեց, իրիշկից, տեսավ ախչիկ ձեռքիր դրիր վար ուր պըրնին: Տեսավ ախչկան սուրաթ, մայիլ էլավ, էսաց. «Կուտըն ան ձեռ, ուր տարթ գարկիր նատե: Ահտ իլնը, իս նա քառսուն պեռ մալ խարջիմ, չուր նա պըրին տամ ժըրըցըցիլ»:

Ուր քարվան կը պաննա, կը յա մա բիրընջի հեթիմըն, կըսը. - Յեթիմ, իմ կընկան պըրին ժըրըցըցիս, նա քառսուն պեռ մալ, ինչ որ ուզիս էլ, տամ:

Ատ բազըրկան, ան հեթիմ ինչըխ կանին՝ չըն կանա անու ծուց բանա, որ տեղ անին, անցկուն ատաբարգ էր, անցկուն ամչկուք էր: Յեթիմ ինչըխ կանը՝ խալա՛վ չըխանը, ան էլ մըկրատով ան պըրնը դեմ խալա՛վ կը կըտըրը, նուր ըգպըրին կը տեսնա:

Բազըրկանին կըսը. - Գընա', քառսուն օր էլ ա'րը:

Յեռսուն օր տը ժըրըգցեր, տաս օր էլ ուր մոտ տը պախեր, քե՛Ֆ աներ խիտ չուր ան գեր:

Բազըրկան բանցուց ուր ջորիք, էլա՛վ, գընաց:

Յեթիմն էլ քըսան օր տեղ արավ, ախչկան պըրին աղեկցավ, տաս օր էլ տեղ արավ, պըրին խորոտ ժըրավ:

Յեթիմ էլ ան մեկ օր ձեռ կը թալը անու վըզը բուլիւր, ըզան կը պագնը, ան էլ կըսը. - Աստըվա՛ծ կը սիրիս, տալ ձեռ մի տա ըզի, չուր սերտ խորոտ ժըրը, չըխտ իս քուն իմ, չուր տաս օր էլ չուր իմ իրիկ կը գա:

Յեթընու կեմ կը բիրը, չուր հիրիկուն հեթիմ կը քընը, ան էլ կիլնը, տոռ կը շինը վար հեթըմոջ, անու խորոտ ձի'ն էլ կա, կը խեժնը, յալա բաբամ, կը քըշը: Կը քըշը, չուր արև կը տեսնա, կը տեսնա քառսուն խատ խարանիկ, գող, կը գան ուր չորսբուլիւր կը բըռնին: Ախչիկն էլ անցկուն խորոտ էր, վար ուր կը պաշլա՛յիմ կըռվիլ, ախչիկն էլ կըսը. «Վըրե՞ կը կըվեք, իս մեկ իմ, դուք քառ-սուն եք, իս բընեմա՛տ տը խասնիմ մեկը: Մա ձի վով շուտ նա թաս տանը նոհան հախպիւր, թասըն ջուր բիրը ձի, իս անուրն իմ»:

Ըզթաս կը թալը, մեկն կառնը, կը փախը, մեկէլքիր կը վագեն հիտիվ չուր վար հախալըրին: Հախալըրը վերա մեկ կը լըցը, մեկէլն կը թափը: Ախչիկն էլ ուր ձին կը քըշը, կէրթա:

Ինչ կիլնը մըթընշեղ, կը խասնը քաղաքըմ՝ պառվու՛մ տոռ, պառվուն կըսը. - Աստըծու սիրուն, ձի արա՛ քի լաճ, երկու-իրիք օր ձի դավանում տու, մըհա ինչըխ կիլնը:

Ինք օր խասեր էր քաղաք, ուր խամար մարդանակ խալա՛վըմ առեր էր, խազեր էր: Մեկ քանը օր ատ քաղաք կը մընա, չուր օրին մեկ ատ քաղաքը թագավոր կը վերջանա: Դուվաթը խավք կը թըղնին, կը գա, կը թառը վար ատ ախչկան գըլխուն:

Կըսին. - Ան վո՛վն ը:

Կըսին. - Պառվի լաճն ը:

Կըսին. - Պառվը սոյեն թագավոր չիլնը:

Ատ ախչիկ կը տանին, կանին մուք տու՛մ հիմը, էլըմ ըզ-խավք կը թըղնին, խավք էլըմ կան կը գա հուրդուս վե, կը յա, կը թառը վար անու գըլխուն:

Կը բիրին, հուրդուս կը կալնին, էլըմ կը թըղնին, էլմէլ կը գա, կը կայնը տանիս, այնե վար անու գըլխուն, կը բիրին, տանիս կը փուրին, կը տեսան, որ այնե վար անու գըլխուն կայնիր ը:

Կըսին. - Ջանըմ, կիլնը նա Աստըծուց ը, բերեք անինք թագավոր:

Կը բիրին, ըզան կանին թագավոր, կը նըստըսցին վար թախտին:

Ախչիկն էլ կը բիրը խեր-խըրաթ կանը, կարգ-կանուն կիցկը ատ երկրը մեջ, անցկուն կանը, ուր գան, գել խատ մեմեկու կերեծան: Ացկուն անուշցեր էր ատ երկիր:

Տորսեն ատ թագավորն էլ ուր սուրաթ կը քեշը, գանիլ կը տա վար հախալըրը պատին, երկու մարթ կը դընը ատե նորաթ, կըսը. «Վոլ ինչ կը գա, կիրիշկը թախ ատ պատկիր, ախ կանը, գան բըռնեցեք, բերեք մա ձի»: Գընա ուր խարամիկտիր, ուր իրիկ, բազըրկան, հըմեն տը գան ուր հիտիվ, անու խամար ուր պատկիր քեշից, կախից ատե, օր կաներ գանոնք հըմեն բըռներ:

Երկօր մընաց, քառսուն խարամիկտիր իկին վար հախալըրին, իրիշկիցին, ըզսուրաթ տեսան, ախ արին: Բըռնեցին, պիրին, քացին մա թագավոր, սիցին՝ քառսուն մարթ իկին իրիշկիցին թախ պատկիր, ախ արին:

Թագավորն էլ գըցավ, ուր քառսուն գողիրն ին, էսաց. - Տարեք, գանոնք հըմեն էլ բըռնեցեք:

Երկօր էլ մընաց, հեքըմ իրը վար հախալըրին, լըվացվավ, պատկիր տեսավ, ախ արավ, գան էլ տարան թագավորը մոտ:

Թագավոր էմէլ էսաց. - Նա էլ տարեք, բըռնեցեք, լա նա չոկ տեղըմ իլնը, ան քառսուն մարթու մոտ մանեք ըզնա մարթ:

Ձան էլ տարան չոկ տեղ բըռնեցին:

Երկու-իրիք օր էլ մընաց, ուրիշ մարթըմ իրը, ան էլ ախ արավ, գան էլ տարան մա թագավոր, թագավոր ճանչըցավ, օր բազըրկան էր, հրաման իտու, որ ան էլ տանին, հախս անին:

Ժամանակըմ էլ վերեն ընցավ, մեկ ուրիշ մարթըմ էլ իրը վար հախալըրին, ան էլ մեկէլքիրու թարգ լըվացվավ, լըվացվիլու գախս աչք կիյնը պատկիր, ախ կանը, կը բըռնին, կը տանին մա թագավոր:

Թագավոր էսաց. - Ձատ մարթ տարեք թաց տեղըմ, օրե մեկ խա՛ց տըվեք անու թային, չուր իս վերա կը խարցընիմ:

Երկօր էլ վերա կընցնը, խեղճ մարթըմ էլ կը գա, էն էլ կիրիշ-կը սուրաթ, ախ կանը, գան էլ կը բըռնին, կը տանին, ըզան էլ ուրիշ տեղըմ հախս կանին:

Մուռցա սեր, ուր ըզբազըրկան, հեքըմ խազար կը բըռնը լա անանց խորոտ լըխեֆ-տուշակ, օրե իրիք տան չայ կը տա, չուր վար անանց կը խարցընը:

Տորսեն ատ մարթիր կը խըլըսնին, ան գըտեր, որ գըմեն տը գեն անու հիտիվ, կան գյեն, անու խամար էլ ան անցկուն արավ:

Ձըմեն ընչ թունուման, էսաց. - Դիվանխանը մեջ համեն մեկին ջոկ փարտա կանեցեք, ուր անոնց շարիաթ կըտրին, մըհա վըրե՞ անանք ախ արին:

Խատ մեմեկը կըշտին համեն մեկին տեղըմ իտը:

Հըրճըն տիր կանչից քառսուն խարամիկտիր, անոնց էսաց. - Հե՛յ, մարթիր, տու վըրե՞ ախ արիք: Ըշտակ սեցեք, թե չէ՝ մեկտ էլ չըք անատվը: Վոլ ըշտակ սը, բալըմ անատվը, վոլ սուք սը, անու վիզ տը գանիմ:

Խարամիկտիրն էլ կըսեն. - Թագավոր ապրած կենաս, հալ-քեֆաթ նա յը: Մենք քառսուն խարամիկ ենք, տեսանք ախչիկըմ իրը, սիվ ձիու՛մ վերա խեծուկ էր, մենք չուրս կընարեն ըզան բընիցինք: Ան էսաց. «Վոլ նա թաս շուտ տանը, նոհան հախալուր

ջուրըմ բիրը ծի, իս գան տ'առնիմ»: Մենք էլ քացիք վար հախ-
պարհի, մեկ իլից, մեկ թափից, մեկ իլից, մեկ թափից, չուր
անախանք՝ ախչիկ չըկա, մենք էլ իկինք ըստն, անու պատկիր
տեսանք, ախ արինք:

Թագավոր կըսը. - Դե՛, էլե՛ք, ծի տեղ նստե՛ք:

Ձանոնք կը հորողկը ուրինց հողեն: Խարանիկտիրու
պատմութի մեկէլքիր հըմեն կը լսին:

Դոր կը կանչը, հուրիշ մարթըմ կը բիրը, կըսը. - Դե՛յ, մարթ,
տու ինչ անպով ախ արիր, քի՛ ի՞նչ իլիր:

Ատն մարթ կըսը. - Ինչ իլիր, չըխտ ծի իլիր, ան ծին ինչ
մըկա կըսին խարանիկտիր, ան իմ ծին էր, իսն էլ հեքիմ էր,
քառսուն ուսըկու տեղ տըվը, նուր ըզան ժըրըզը, իսան էր, իմ
սերտ վար անու ավրանվ, ծեռ բիրը վըզը բիւլիւր, պագըմ տ'առ-
ներ, իտու Աստըծու սեր, էսաց՝ ծի մը՝ մոտխըսնա, չուր իմ պըրին
ժըրը, իս չըխտմ քուսն իմ, չուր իմ իրիկ գն: Ըգի խապից, գիշիր իմ
ծին առեր, փախեր:

Թագավորն էլ էսաց. - Անցկուսն օր տու ըզան տեղիր ես,
երկու տան տու ըզան կը տեղեր, իսան ը, բան ը, սերտ կը մեղն-
վորներ, տու ըզան ախչիկ թուչար չը՞ս պագնիր, գիշիր մն ան
չը՞ս քընիր:

Ան էլ կըսը. - Զէ՛, չէ՛, չէ՛, անցկուսն անանցը ախչիկ մ'եր,
որ արը, չարը՝ ան պըրին չէ բաց, չուր մըկրատով պըրնը դեմ
կըտրիր իմ, պըրին բացիր իմ, տեղիր իմ:

Թագավոր կըսը. - Որ անցկուսն ը, ի՛լը, քու տեղ նըստը՛:

Ատ մեկէլ մարթ կը պիրը, խարց-փորց կանը, կըսը. - Դե՛յ,
մարթ, տու վըրե՞ ախ արիր:

Ան էլ կըսը. - Ա՛խ, ան հեքիմ ինչ կըսը, ան իմ կընիկն էր:

Թագավորն էլ կըսը. - Ուր ան քու կընիկն էր, տու ի՞նչըխ
պըրինտար արիր:

Ան էլ կըսը. - Իմ կընիկ չէր, համն օրըմ իս իկը քաղաքըմ,
կուշտ գարկեր են, թալեր են տակ փանջարեն վե, իսն էլ անն
կընիկ առը, բիրը ան պըրինտար հալով, տարա մն հեքիմ, սիցը՝
իմ քառսուն պեռ ապրանք տը փըրըզցիմ, չուր գան ժըրըզցիմ,
անիմ ծի կընիկ: Դեքըմու խիտ բարըշա օր մեկ ուրսկը, ուր իմ կը-
նիկ քառսուն օրվա մեջ ժըրըզցեր: Քառսուն օր որ ընցավ, էլն,
քացը, կը տեսնամ մընչ կընիկ կա, մընչ հեքիմ: Տորսեն իս էլ իմ

քառսուն պեռ հըմեն կերա, հըմեն թալաֆ արը, փուճ արը, ընկիր
իմ, ուր հիտիվ կան կը գան, մըկա իկը, ուր պատկիր տեսա, ախ
արը:

Թագավորն էլ էսաց. - Ատ ընցնեն ժամանակ տու ըզան կան
ըծցիր, տու անու մոտեն պագըմ չարի՞ր, անու լեշն էլ չըտեսա՞ր:

Բագըրկան էլ էսաց. - Զէ՛, թոպն, հիրճիվ Աստըծո, իս անու
չըմ մոտխըսցիր, գան չըմ պագնիր, անցկուսն պըրինտար էր, վո՞վ
գըխշներ երեշկեր հինը:

Թագավոր կըսը. - Դե՛, հեքիմ, ուր անցկուսն ը, տու էլ ի՛լը քու
տեղ:

Կը կանչը, ան մեկէլ մըզավոր կը բիրը, կըսը. - Դե՛, արը,
ըշտակ սա, մըհա տու վըրե՞ ախ արիր:

Ան էլ ուր միտ վե կըսը. «Ախըր ի՞նչըխ անիմ, ըշտակ սիմ,
բալքըմ անատվիմ, սուք սիմ, իմ բան պոշ ը»:

Ախր ան էլ կըսը. - Թագավոր ապրած կենաս, նն հըմեն
մըզավորութիմ իմ մոտեն իլիր ը, իս արը: Իս ինչըխ արը,
չըկարցա ըզան բըռներ յար, իս էլ գացը, մն անու իրիկ բեբախ-
տութիմ արը, ան էլ ըզատ ախչիկ պըրինտար արավ, փանջարից
էթալ տակ:

Թագավորն էլ կըսը. - Ապա տու վըրե՞ անու հիտիվ կան կը
գան:

- Դե՛յ, թագավոր ապրած կենաս, - էսաց մըզավոր մարթ, -
մըկա էլ իմ սերտ անցկուսն մընացիրը խն անու, որ կան կը գան,
բալք անու սերտ տառնա, ծիկ առնը:

Թագավորն էլ էսաց. - Տըղա՛, տու գան Ստանպոլա բիրիր,
տու սընտուկը տոռ չըբացի՞ր, խն անու խաբար չըտվի՞ր, յան
անու մոտեն պագըմ չարի՞ր:

Ան էլ էսաց. - Զէ՛, չէ՛, չէ՛, թոպն, իս ակախ չուսիմ անու
մոտեն, իս չըր կըտնա չըխտ մըհա ինչ կեր սընտուկը մեջ, չուր բիրը
տուսն: Ժամանակըմ էլ վերեն ընցավ, նուր օրըմ, ուր անուսնց տուս
ախչիկըմ կա, ինչըխ արը, չըկարցա անու սերտ դարձներ թախ
ծի, իս էլ իմ կըսկըծուսն անցկուսն արը:

Թագավոր էսաց. - Դե՛հ, ուր անցկուսն ը, ի՛լը, նը՛ստը քու տեղ:

Ատ մեկէլ մարթ կը կանչը, կը բիրը, ան չիվար մարթուն
կըսը. - Դե՛յ, մարթ, ինչ անպով իկիր, ան սուրնթ տեսար, ախ
արիր, ըշտակ սա, ուր ըշտակ չըսիս, ըզքի տը տամ ըսպանիլ:

Մարթն էլ էսաց. - Թագաւորն ապրած կենաս, ատ կընիկ, ուր կըսին զընեն, ան իմ կընիկն ը, ատ մըզավոր մարթ, ուր փըշունմ առաջ էսաց, ան ծի խապից, իս էլ իմ նամուսը խաթըը խանմար անցկուն արը:

Ան էլ կըսը. - Աղեկ, տու չըխարցընե՞ր քու մոր, քու տըրկը-ցին՝ մըհա աղո՞ւրթ էր, սո՞ւթ էր:

Կըսը. - Չէ՛, իս էլ ջահել մարթ էի, բարկացեր էր, խապվա, իմ կըսկըծուն անցկուն արը:

Ան մարթն էլ իմացավ, թը քանի՛մ փուրծանք իկիրը ուր կընկան գըլոխ, խասկըցավ՝ տալ ուր կընիկ անարատ ը:

Տորսեն թագաւոր կանչեց ատ քառսուն խարանիկտիրուն, էսաց. - Չե՛յ, մարթիր, ան խարամութուն մ՛անեք, քացե՛ք վար-ցանք արեք, ծի խանմար ապրեցե՛ք:

Խարանիկտիրն էլ թոպա կանին, թագաւորն էլ անոնց պաշխիշ կը տա, կը ճամխը:

Կը կանչը, ատ մեկէլ հեքիմ կը բիրը, կըսը. - Չե՛յ, հեքիմ-բա՛շը, քանի՞մ քի տեղ-տեղրանքի գին գացիր ը:

Չեքիմ կըսը. - Ռաստ սիլ քսան օր տեղիր իմ, քսան ուըսկը ծի ծախս իլիր ը, իմ ծին էլ փախցըցը, տարիր ը:

Թագաւորն էլ էսաց. - Ա՛ռ քի հերսուն ուըսկը, թըղ տաս էլ քի հավիլ իլընը, ա՛ռ քի ծի՛մ էլ, տու ջուլ մարթ իս, քի դավը խա ատ բանիրուն չըկա:

Ըզան էլ ճամխու կը դընը:

Կը կանչը, բագըրկան կը բիրը, անու քառսուն պեռ ապ-րանք կը տա, տաս էլ հավլը կը տա, քանիմ ծախս իլիր, անու կը տա, ըզան էլ ճամխու կը դընը:

Կանչեց ըզան մըզավոր մարթուն, էսաց. - Տու իլիր իս հըմե-նանց դարտ-ցավը պատճառ, տու ուզիր իս գան ախչիկ կորսըս-ցիլ, լա Աստըված ըզան չըկորսընցըցիր:

Դաստուր իտու ջալատքիրուն, ուր անու վիզ գարկեն, ըզան կը տա ըսպանիլ:


Մընաց ան խեղճ մարթ՝ ուր իրիկ, էսաց. - Տու կա՛յնը, քու պատասխանն էլ հիրիկուն կը տամ:

Էվարին կանչեց ատ մարթ՝ մընակ տարավ մա ինք, էսաց. - Չե՛յ, մարթ, տու գըտի՞ս՝ իս վովն իմ:

Ան էլ կըսը. - Չէ՛, իս ինչ գըտիմ տու վո՞վ իս, իս քի դո՞ւր իմ տիսիր:

Ան էլ էսաց. - Չա՛յ, Աստըված քու տուն չավրը, չէ՞ իս քու կընիկն իմ, իս ան սաբաթը մեջն էր, ուըր տու Ատանպուլա գընի-ցիր, հորողկիցիր տուն: Տու լսար՝ ինչ փուրծանք իկիր իմ գըլոխ, լա իս Աստըծով անգատվիր իմ պե թըվաղկ: Դե ի՛լը, գընա՛, թա-միզըմ թըրա՛շվը, հանամլամի՛շ իլը:

Ան էլ գընաց, թըրաշ էլավ, հանամլամիշ էլավ, իրը հանտե: Կընիկ էլավ, դալալ իտու կանչիլ՝ հայտե իրիք տարը ծի ռըհա-թութին, խանգըստութին, թարխանութին: Ժողովուրդ ուրախա-ցավ: Տորսեն յոթ օր, յոթ գիշիր ուրախութին կանին, խարսնիս կանին, անունք կը խասնին ուրինց մըրագին, դու էլ խասնիք ծի մըրագին: Էրկնուց իրիք խընծոր ընկավ, մեկ՝ պատմողին, մեկ՝ խասկըցըցողին, մեկ՝ ականչ արողին:





50. ՌԵՆՋԲԱՐ

Ռենջբարի մի մեկ կեղի, հինգ-չորս եգ կունենա, հինքն ա, մեկ կընիկ: Ջավակ չունի:

Օրերու մեկին կերթա արտ վար ենելու, մեկ եգ կը պառկի: Ինչ կենա, եգ չէլի վեր: Կը պերա, կրակ կը վառա եգան կըշտին, եգան կուշտ կը վառի: Էլմի եգ չէլմի վեր:

Եգան կը թըթուցա, կասա. - Մուռտառ, դու հորի՞ չըս էլի վեր:

Աստղծու հրամանքով եգ կէլի լեզու, կասա. - Ռենջբար, ես մուռտառ չեմ, մուռտառ դուք եք, օր ամեն օր կը մուռտըռովիք: Մենք տարին մեկ խետ ենք:

Եգան խոսքի ասելուն պես տղղեն կասա. - Ուխտ եղի հանձնել Աստղծու, ես պըտի մեկ խետ երթամ իմ տեղ, մինչև օր իմ տարին թըմի:

Տարին օր կը թըմի, Աստղված էտոր տղղե մի կուտա: Էտ տղղեն կը մեծնա, կեղի յոթ տարեկան, էն մեկ օր մոր կասա. - Մարե՛, էսօր ես խաց կը տանիմ իմ խոր:

Մեր կասա. - Լա՛ն, մեռիմ քեզի, դու երեխա ես, դու ի՞նչ գիտես՝ արտ երթաս:

- Մարե՛, - կասա, - հորի՞ ես չըմ գիտեր, իմ խեր գո եկեղեցու ծորի արտն ա կը վարա:

Չընց մեր էտտեղ կը գարմանա: Կէլի, խաց կը տնա բերի մեզրի մեչ, կապա տղղի շալաք, կընգի տղղի էտել: Տղղեն դեմ կերթա խոր մոտ:

Խեր կը տեսի, օր տղղեն առավ խաց, էկավ:
Կընգան վերեն շատ կը հեռտտի, կը տեսի, օր կընիկն էլ հետեվանց էկավ:

Կասա. - Կընի՛կ, դու էս երեխեն հորի՞ խաց տվեցիր՝ առավ, էկավ:

Կընիկ կասա. - Մա՛րթ, ես ի՞նչ երեցի, ծեռնեն չըպռծա:

Խեր խոտղուն կասա. - Կայնի՛, կայնի՛, խարոր արցըկեմ:

Տղղեն կասա. - Ափո՛, փաթ մ՛ էլ գընա, վ՛ արի, մըկա մեզի կղունախ կուգա:

Խեր տղղի խոսք չըկոտրա: Փաթ մ՛ էլ կերթա ու գա, տեսի, օր երկու ծիավոր ենդեխեն էկան:

Խերն ենտեղ կըզի, Աստղծուց շուքըր կուտա, կասա. - Վալա՛, եգան խոսք պիտի կատարի:

Ընտեղ ծիավորներ կուգան, իծին, խաց կը պերեն, ուտեն, ծիավորներ կերթան, խեր տղղի երեսներ կը պաքա, կասա. - Կընի՛կ, էլի՛, տղղեն ա՛ռ, գընա՛:

Կը մընա շապաթ մի վերձ, էն մեկ օր տղղեն կասա. - Մարե՛, հէսօր աղեկ գատ կենես, խավ մի կը մորթես, հէսօր ես խաց կը տանիմ իմ խոր: Իմ խոր էլի կղունախ կուգա:

Մերն ա, էլ տղղի խոսք չըկոտրա: Իմալ օր տղղեն կասա, էմալ խաց ու գատ կենա, կասա. - Տղղա՛, դ՛ էլի՛ ա՛ռ, գընա՛:

Տղղի կառի գխաց, կուգա արտ՝ խոր մոտ:

Կասա. - Բարի օր քեզի, ափո՛: Աստղված քեզի ուժի՛կ տա:

Խեր խոտղուն կասա. - Տղղա՛, կեսօր ա, կայնի՛ արցըկենք:

Տղղեն կասա. - Ափո՛, փաթ մ՛ էլ գընա ու արե՛: Չէսօր մեզի էլմի կղունախ կուգա:

Խեր տղղի խաթըր չըկոտրա:

Փաթ մ՛ էլ կերթա, ու գա, կը տեսի, օր երկու ծիավոր ենդեխեն էկան:

Տղղեն կերթա ծիանքներու գըլուխ կը պըռնա, ծիավորներ կիծին, խաց կուտեն ուրանց, տղղեն կիմնա, օր էտոնք դոր կերթան:

Կասա. - Դու դո՞ր կերթաք:

Կասեն. - Մենք էլ չընք գիտե դո՞ր կերթանք:

Տղղեն կասա. - Չալբաթ ծեզի խըզմաթ մի կա, օր կերթաք:

Կասա. - Մեր թագավոր խիվանդ ա, հեքյըմի սալըխ ա տըված ան, կերթանք, օր են հեքիմ գըտինք, պերենք:

- Է՛, - կասա, - դու ի՞նչ գիտեք, օր հեքիմ դո՞ր ա:

Կասեն. - Մենք էլ պըտի էրթանք շուռ գանք, չուր գետ հեքիմ գըտինք:

Տըղեն կասա. - Ի՞նչ կուտաք ընծի, օր ես ձեզի հեքյըմի տեղն ասեն:

Կասին. - Տըղա՛, օր դու մըկա մեզի հեքյըմի տեղն ասես, էտա քու արախչով քեզի օսկի կուտանք:

Համա տըղեն արախչին գըլխուց կը խանա, կասա. - Դե լըցե՛ք, տեսինք, օր թա դուք սուք չասիք:

Խուրջու պերան կը պանան, տըղի արախչին իլին օսկի կը լըցեն:

Տըղեն կասա. - Դու կերթաք ֆըլան քաղաք, ֆըլան քուչեն, քսանուխինգ նոմեր, կարմիր տըներ, կերթաք, հեքիմն ենտեղն ա: Դե գացե՛ք, Աստըված ձեր պան հանողա:

Էնոնք դեն կերթան, տըղեն ու խեր վըր օսկուն կուրախնան, կհարցըկեն խարոր, կու գան տուն:

Տըղեն կասա. - Մարե՛, քեզի արախչի՛մ օսկի պերեր են հեսօր:

Մեր չավտա: Տըղեն համա ըզյազմեն ծոցեն կը խանա, օսկին կը տանտըկա գյետին:

Մերն ենտեղ կուրախնա: Էնոնք թըխ մընան ուրանց ուրախութենի մեչ, մենք տաննանք վըր ծիավորներուն:

Ինչպես օր տըղեն թարիֆ կենա, ենպես ծիավորներ կերթան, հեքիմ կը գըտին:

Հեքյըմին կասին. - Մեր թագավոր խիվանդ ա: Պըտի գաս, օր մեր թագավոր սաղուս:

Հեքիմ կասա. - Դու ի՞նչ գիտիք, օր թա ես էտտեղն ի:

Էտոնք կասեն. - Խարցուցինք, էկանք, գտանք:

Հեքիմ կասա. - Չէ՛, էտ ասողն ընծի ասե՛ք, օր չասեք, ես չըմ իգա:

Էտոնք կասեն. - Վալա՛, ֆըլան տեղ մենք էկանք, խարորի մի մոտ մեկ պըստիկ էրեխե մի մեզի ասաց:

Հեքիմ կասա. - Տարցե՛ք, գացե՛ք, են տըղեն տարե՛ք, օր են տըղեն ձեր թագավոր չըսաղու, ես չըմ կանար սաղու: Ձեր թագավորի հեքիմն են ա:

Ծիավորներ կէլին, փոշման ետ կուգան: Կերթան թագավորի մոտ:

Թագավոր կասա. - Հու՞ր ա են հեքիմ, պերի՞ք:

Կասեն՝ չէ՛:

Ինչպես օր հեքիմ ծիավորներուն ասեր էր, էնոնք էլ թագավորին ասեցին:

Թագավորն ասաց. - Էտ տըղեն դո՞ր էղի, խըլըսուն կերթաք, ընծի կը պերեք:

Ծիավորներ խըլըսուն էլան ու դեմ էկան ռենջըրի արտ: Տեսան, օր ռենջբար դըռ արտն էր:

Ասին ռենջըրին. - Քո տըղեն տո՛ւր մեզի: Քո տըղի ինչքա՞ն օր օսկի կուգես, կուտանք ու քո տըղեն կը տանինք: Չէ՛, օր չիտաս էլ, գոռով պըտի տանինք: Արի՛, քո խաթրով տո՛ւր, քեզի պավականի օսկի կուտանք, գընա՛, ապրի՛:

Էտ մարթն էր իրիկուն առավ ծիավորներ, էկավ ուր տուն:

Ասաց. - Կընի՛կ, էսա մարթիքն էկած ան, մեր տըղեն կուգեն տանին, դու ի՞նչ կասես: Թե օր մենք չիտանք էլ, գոռով կը տանին:

Տըղեն ասաց. - Ափո՛, դու հորի՞ կը վախենաս, ընծի տո՛ւր, թ՛առին, էրթան: Ես, օր չըմեռիմ, էլի քեզի կը քըտիմ:

Մարթն էլավ, մեկ խագար օսկի փարա էտոնց մոտեն առավ, տըղեն տըվեց, առան, գացին: Տըղեն տարան թագավորի մոտ: Թագավոր գտըղեն օր տեսավ, տաս տարեկան էրեխե մ՛ էր:

Ասաց. - Տըղա՛, դու ընծի կանա՞ս սաղուս:

Տըղեն ասաց. - Թե Աստըված կամեցեր ա, ես քեզի կը սաղուս:

Ասաց. - Տըղա՛, իմ դեղն ի՞նչ ա, ասա՛, օր ճամբխեն, պերեն:

Ասաց. - Քո դեղ գիտե՞ս ինչ ա, նա ֆըլան գեղի մեչ թուխ մաքյի մի կա Մարտիրոսին, են մաքյին դըռ չըծըներ ա: Էն մաքյին օր ծընավ, էրկու գան կը բերա, մեկ կարմիր ա, մեկ էլ սիվտակ ա: Քո դեղն են կարմիր գանու միսն ու արուն ա: Պեթք ա գեն միսն ուտես ու էնոր արնով էլա լողկընաս, դու կը փըրկըվիս: Համա պեթք ա՛ քո մարթիք շուտով էրթան, են մաքյին գըտին ու են

մաքուն մուղաթ կենան: Էն մաքյին օր կը ծընի, էն կարմիր գան չըթողեն ընգի գյետին: Ուր մոր կաթն էլ չուտա: Համա էմալ շուտով վերցեն, պերեն: Ուրիշ տեղ գյետին չըտընեն: Պերեն էսատեղ, օր դու քո ծեռնով գեն գան մորթես, օր դու փըրկըվիս: Օր էսպես չէրեցիր, դու չըս փըրկըվիր: Էլ ընծի մեխք չըպըռնես: Իմալ օր ես թարիֆ կենեմ, իմ թարիֆ եղածի պըտի եղի:

Թագավորն ասաց. - Շատ պարի:

Թագավոր կղանչեց ուր հավատարիմ խորհրդապահ մարթուն ու ճամխեց, գանցին: Գանցին էնտեղ, տասն օր մացին էնտեղ, մաքյին եղավ ծընելու, մաքյին օր ծընավ, ինչպես օր տըղեն թարիֆ էրեր էր, էնպես էլ զգան վերցին ու առան էկան:

Գան պերին, տըրեցին թագավորի հանեմ, տըղեն կղանչին պերին, տըղեն տեսավ, օր ինչպես օր ինք թարիֆ էրեր ա, ըսկի հիլա չըկա հինե: Թագավոր ըզգան մորթեց, միսն էփեց, կերավ, արնով էլ լողկըցավ, Աստըծու հրամանով թագավոր փըրկըվավ:

Թագավոր փըրկըվելով ի վերծ տըղին ասաց. - Տըղա՛, դու ի՞նչ ունիս:

Տըղեն ասաց. - Ես մեկ խեր ու մեր ունիմ:

Խըլըսուն թագավորն էլավ, ճամխեց, տըղի խեր ու մեր պերեց, տըղեն մընաց էնտեղ, չուր եղավ տըսնուխինգ տարեկան, զուր ախչիկ պըսակեց վըր տըղին, տըղեն էրաց ուրին խորհրդապահ, տըղեն խասավ ուր մուրագին:

Դուք էլ խասիք ուր մուրագին:

Աստըծուց իճավ իրեք խընծոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լըսողին, մեկ էլ՝ քուլլի ջաղամաթին:



51. ՊՈՂՈՍ, ՊԵՏՐՈՍ

Կեղի ու չեղի Պողոսն ու Պետրոս մի կեղի: Պողոս ճոչ ախպերն ա, Պետրոսն էլ պըզտիկ ախպերն ա:

Պողոս պըսակված ա, Պետրոսն էլ ազաբ ա: Պետրոսն էլ շատ աղեկ խաղըվոր կեղի: Էրկուսն էլ փայլեվան են: Ըսկի թու մեկ մարթ ըտոնց հախթող չէրեր ա:

Էն մեկ օր ուրանց ազիզ օր կեղի, կերթան օդեն, կը խաղան, Պետրոս շատ աղեկ խաղըվոր ա:

Պետրոսն օր կը խաղա, կը տեսին, օր աշըղ մի կը մըտի մերս:

Պողոս աշըղին կասա. - Աշըղ, դու աշխարի շատ ես պըտտտեր ես, իմ ախպեր Պետրոսի պես մեկ խաղըվոր մի դու տեսե՞ր ես:

Աշըղ կասա. - Հա՛, տեսեր եմ մեկ:

Կասա. - Դո՞ր ես տեսե:

Կասա. - Հընդկաստան, Գեորգ Բեկի ախչիկ Շամամ:

- Աշըղ, - կասա, - դու վըր իմ գըլխուն էկար: Ես պըտի էրթամ, էնի ուզեմ, պերեմ մի ախպեր Պետրոսին:

Էլան, ուրանց պատրաստութեն տեսան մեկ քանի օր ու էլան, քնացին Հընդկաստան: Քանցին Գեորգ Բեկի տուն խարցուցին, քանցին, գտան:

Գեորգ Բեկն աչքեց, օր քսան խատ ծիավոր էկան, ամեն էլ սերսուկի խարսընքի շորերով խազված:

Ասաց. - Եսնք խարսընքվոր են, տեսե՛ք, դո՞ր կերթան:

Գացին տեմ, Գեորգ Բեկի տուռն իճան: Գեորգ Բեկն էլավ, էտոնք ամեն իճուց, տարավ օրեն, պատվով էտոնց նըստեցուց, էտոնց օրենքն էլ էմալ ա, օր կղունխին պըտի իրեք օր պան չը-խարցուն: Իրեք օրեն ետ նորեն պըտի խարցուն, տեսին էնոնց խըզմաթ ի՞նչ ա:

Իրեք օրն օր թըմավ, Գեորգ Բեկն էկավ, ասաց. - Պարեկըմ-նե՛ր, խարցուցել ամոթ չէ, դո՞ր եք էկեր եք, դո՞ր կերթաք: Չեր խըզմաթն ի՞նչ ա:

Պողոսն ասաց. - Գեորգ Բեկ, դու սաղ մընաս, մեր խըզմաթ մըտ քեզի յա:

Գեորգ Բեկն ասաց. - Պարի՛, հազար պարի: Վըր իմ աչիչն էկեր եք: Ասե՛ք, օր ձիր խըզմաթ կատարեմ:

Պողոսն ասաց. - Մենք էկեր ենք մըտ քեզի պարեկմութենի, օր քու ախչիկ Շամամ, թի Աստըված կամեցեր ա, տաս իմ ախպեր Պետրոսին:

Գեորգ Բեկն ասաց. - Օր Աստըված կամեցեր ա, պըտի էղի: Ես իմնամ դու որո՞նք եք:

- Մենք Պողոս, Պետրոսն ենք:

Գեորգ Բեկն ասաց. - Էն փայլեվան Պողոս, Պետրոս կասեն, դո՞ւք եք:

Ասաց. - Խա՛, մենք ենք:

Գեորգ Բեկն ասաց. - Ախչիկ մ՛ ա, թ՛առի քու ախպոր կղաղեն:

Էն տեղ Պողոսն էլավ, Գեորգ Բեկի ծեռ պաքեց, ասաց. - Խընամի՛, շնորհակալ եմ:

Ախչիկ մի գնաց, Շամամին անգըջկա տարավ. - Շամամ, աչդ իլի՛ս, քո խեր քեզի կը պըսակա:

Շամամ ամոթու ծեն չերաց, գըլոխ կախեց:

Գեորգ Բեկն ասաց. - Կը խընթեմ ընծի չորս-խինգ օր, օր տաք, իմ ախչիկն ոտ ու ծեռ տեսիմ, Աստըված ձեր պան հաճողա:

Մընացին խինգ օր էնտեն, ախչիկն ոտ ու ծեռ տեսան, պա-կասութեն խըքացին, խըլըսուն էլան, պըտի ընգին ճամբախ:

Գեորգ Բեկն ասաց. - Ընծիկ մեկ օսաթ մի կա, ձեզիկ էնեն, թե օր իմ ախչիկ մընաց էրեխով, օր իմ ախչիկն ախչիկ էղավ, էն ախչիկ շատ խորոտ կեղի, լուսնըկի պես փայլ կու տա, թե օր տըղա էղավ, տըղեն շատ գեշ կեղի, ինչպես օր մըկան ձաթ,

չուզեք գոր հուհու տեսնել, մեր ջընսի տըղեն էմալ ա: Իմ ախչիկ պըտի մեկ տարի թամամ օրեն կալիք մի սապոնով գէն տըղեն պըտի լվա՛, օր տարին թըմավ, էն տըղեն դորուս օրբըզօր առեճ կուքա՛, կէլի ու էն էլ փայլեվան կեղի: Իմ օսաթն էս ա ձեզի: Իմ օսաթ չընոռնաք, իմ ախչիկն էլ էրես չի՛ տաք: Աստըված ձեր պան հաճողա: Էլե՛ք, ընգե՛ք ձեր ճամբախ, գացե՛ք:

Էտտեղեն էլան, կանչին ուրանց Աստըված, ընգան ճամ-բախ, ուրախելեն էկան: Չորս-խինգ ավուր ճամբախ էկան, էկան էն մեկ օր սարի մեչ, չաղըրներ տրին էն տեղ, ամեն օր, օր ուրանց չաղըրներ կը տնեն, էտոնց նորադար կա, չաղըրներու պուլոր կը պըտոտա:

Էն օր Պետրոսն ասաց. - Էս օր նորադար ես կեղիմ: Քացե՛ք հըմենքս էլ, ձեզի ռըհաթ քընե՛ք:

Էն գիշեր Պետրոսն էղավ նորադար: Օր զըմեն քընան, խա-խընդան, Պետրոս քընաց, մըտավ Շամամի չաղըր: Շամամի վըզի օսկիք քողցավ: Շամամ սկի խաբար չէղավ: Համա առավ օսկիքն ու ընգավ դուս: Խըլըսուն Շամամ հիմցավ, լվացվավ, ուր շորեր խաքավ, տեսավ, օր օսկիք չըկա:

Ասաց. - Վա՛խ, վա՛խ, էս իմ օսկիք վո՞ն գողցավ, տարավ: Ես էղա սեվերես: Ես խըլըսուն էտոնց ջույաք ի՞նչ տամ:

Շամամ էլ ծեն չերաց, մընաց ուր մառաղի մեչ:

Խըլըսուն էլան էտ տեղեն օր ընգան ճամբախ, Պետրոս էմալ ուրախութե՛ մի կենա: Շամամն ասաց մըչ ուր մըթքին. «Վա-լա՛, կա ու չըկա իմ օսկիք Պետրոսն ա տարեր ա: Օր էս հըմլա ուրախութեն կենա»:

Պետրոսն էկավ, տեսավ, օր Շամամ նիյաթ կախեր, կուլա՛: Պետրոսի ջիզար կըտըռտավ: Համա խանեց օսկիք, եռու տեղեն Շամամին նըշանց տվեց:

Օր Շամամ տեսավ գօսկիք, ասաց. «Գոհանամ քեզնե, Աստըված, չէ՞ ուրիշ մարթ իմ օսկիք չըտարեր, էս չէղա սե-վերես»:

Ուրախալեն էկան, էկան մինչև հիրիկուն էլմի սարի գըլոխն իճան, ուրանց չաղըրներ գարկին էնտեղ, կերան, խըմեցին ուրանց, հիրիկուն մութն օր տըղեց, էղավ քընելու գախ, Շամամ ուր հաճեճի մարթ ճամբախց Պողոսի մոտ, ասաց. - Կը խընթեմ, օր էսօր ես կեղիմ նորադար:

Պողոս հրամայեց ասաց. - Հետո պըտի նոբանդար չըպը-
տոտա: Էսոր մեզի նոբանդար պետք չէ:

Գանլող մարթուն ասաց. - Գնա՛, Շամամին ասա՛, թ'ելի ուր
քյեֆով պըտոտա: Ինչ կուզա՛, թըխ գէն էնա: Ես իմ խարսին հրա-
ման կուտամ:

Ու էկավ, Շամամին ասաց. - Քո տեքըր քեզի հրաման տվեց
պըտոտելու:

- Է՛, ախչի՛, էլ պա՛ մի չասա՞ց իմ տեքըր:

Ասաց. - Ինչ կուզա՛, թըխ գէն էնա:

Շամամն ուրախացավ, էլավ, ֆշանգըխներ թալեց ուր
վըզով, թըվանքն առավ ուր ծեռ, փուշին կապեց գըլոխ,
Դիարբաքի շըլվար խաքավ ու էլավ, ընգավ չաղըրներու պոլոր
պըտոտեց: Էլ մարթ էտոր չըճանչցավ: Պըտոտեց, մինչև օր հըմեն
քընան: Քնաց դեմ Պետրոսի չաղրի տուռ կայնավ: Անգաչ տրեց,
օր Պետրոս կը խռա, քյե ի՞նչ պիտի:

Հուշիկ մըտավ ներս, գերես պանցեց, էրես թամաշա էրաց,
սիրտըն ռըհանթավ, սըհան ծոցեն խանեց, էցկեց ուր վիզ, էկավ
քնաց: Քնաց չաղըրներու պոլոր չուր լոս պըտոտեց:

Օր լուսցավ, քըչ հըմեն շուտ էլավ, քնաց լվացվավ, շորեր
խաքավ ու էկավ կայնավ չաղրի տուռ: Մըչ ուր մըթքին ասաց.
«Մըկա Պետրոս կու քա, տեսինք ի՞նչ տրուբյան մեչ ա»:

Պետրոս էլավ, շորեր խաքավ, տեսավ ուր սըհան չըկա:
Վա՛խ, վա՛խ ասաց: Եսի իմ սըհան Ես դո՞ր եմ կորիսեր եմ:

Ու էկավ ընցավ, քնաց: Շամամ տեսավ, օր գըլոխ կախեր ու
կէրթա: Շամամ էնտեղ ծըծղաց:

Մըչ ուր մըթքին ասաց. «Ի՞մալ ա, էրեկ ի՞նչ խաղցիր իմ
գըլոխ: Դե գնա՛, հ էսոր քեզի աղե՞կ ա: Ես էլ ըղըմլա կը խաղամ
քու գըլոխ»:

Պետրոս տարցավ, էկավ, քնաց, մտավ ուր չաղըր, ուրանց
խաց կերան, Պողոսն հրամայեց. - Էլե՛ք, պանրցե՛ք, հանգն ա:

Էլան, էտտեղեն պանրցին ու դեպի ուրանց տուն էկան: Էկան
ուրանց տուն, յոթն օր, յոթ գիշեր խարսնիք էրեցին:

Խարսնիք վերճանալով ետ, ինն ամիս, ինը սըհան, ինը
դանդկեն օր թըմավ, Աստըված Պետրոսին մեկ տըղա տվեց:

Քանցին Պողոսին անգըջկլա տվին, ասին. - Աչքըտ իլո՛ւս, քո
խարսին տըղե մի էլավ:

Քանցին Պետրոսին էլա անգըջկլա տվին, ասին. - Աստըված
քեզի մխիթեց ու քեզի տըղե մի տվեց:

Պետրոս կզավ ու շուքըր տվեց Աստըծուց, ասավ. - Գոհա-
նամ քենե, Աստըված, ինչպե՞ս շուտ ընծի մխիթարեցիր:

Էրեխի իրեք օրն օր թըմավ, Պողոս հրամայեց ասաց. -
Էրեխեն իմ մոտ պերե՛ք, օր էրեխի անուն դենեմ:

Պողոս օր էրեխեն տեսավ, Պողոսի սիրտ էրեխից խառնեց,
ասաց. - Չուզեմ էս էրեխեն տեսնեմ, քանի օր էրեխեն կը մանի
մըկան ծաք: Ես էրեխի անուն պըտի Ես դենեմ Անանուն տըղա:

Գեորգ Բեկի շիրաթն օր տվեր էր, գէնի մոռացեր էր: Էլ
մըթքին չէկավ էն խոսքըն: Տըղեն վերցին ու տարան:

Պետրոս խարցուց, ասաց. - Իմ տըղի անուն ի՞նչ դրեց:

Պետրոսին ասեցին. - Դրեցին Անանուն տըղա:

Պետրոսն ասաց. - Վա՛խ, վա՛խ, էս ի՞նչ ցավալի պան էր:
Վանդ բալքի մենք մեռանք, էս տըղեն օր մընաց, մեր անուն կը
կուրիսի:

Պետրոս մըչ ուր մըթքին մեզեց, ասաց. «Էտոր ճար Ես ի՞նչ
գըտիմ: Էտոր ճարն էն ա, տամ ուր մոր գյիրկ ու մեր խըրկեմ,
էրթա ուր խոր տուն: Իմալ կեղի, թ'ղի: Օր վերջեն Ես խըրի
հանեմ սեվերես չեղիմ էս պանի խամար»:

Իրեք-չորս ամիս օր թըմավ, քնաց, կընգան ասաց. -
Շամամ, Ես քեզի պիտի ճամբխեմ, էրթաս քո խոր տուն:

Շամամին շատ տըծար էկավ, վա՛խ, վա՛խ, ասաց: «Իմ
իրիկ էս ի՞նչ այիբ ա տեսե վըր ծիկ, օր ընծի կը ճամբխե՛ էրթամ
իմ խոր տուն»:

Շամամ գիշեր-ցերեկ էլ ուրախութեն չէկավ սիրտ, կուլեր ու
կը գոռեր:

Պետրոսն էլավ, քնաց Պողոսի մոտ, ասաց. - Ախպե՛ր, կը
խընթերեմ, օր իզին տաս, իմ նըշանած ճամբխեմ, էրթա ժամանակ
մի ուր խոր տուն:

Պանց Պողոս Պետրոսի դարդեն խանքար չուներ:

Ասաց. - Ախպե՛ր, ինչի՞ կը ճամբխես՝ էրթա:

Ասաց. - Հինք կուզա՛ էրթալ:

- Օր հինք կուզա՛ էրթալ, քնա՛, էնոր պակասութեն տես,
քանի՛մ մարթ տի՛ր խետ, թը տամեն ուր խոր թասլիմ էնեն ու գան:

Պետրոսն էր էլավ, էտոր պակասութեն տեսավ, մեկ տաս մարթըմ գտավ, տրեց կընգան խետ, ասաց. - Տամիք, ուր խոր թասլիմ էնեք ու գանք:

Էլան, ընգան ճամբան, առան Շամամին, գանցին: Երկու ավուր ճամբան օր գացին, էն մեկ հիրիկուն Շամամ մըջ ուր մըթքին մտածեց, ասաց. «Ընծի օր տարան. իմ խոր թասլիմ էրեցին, իմ խեր պըտի ասա՝ հանրաթ իմ ախշիկ անգարզութե մի էրեր ա, օր ճամբետեցին, էկավ: Ապա աղեկն էն ա, օր ես գիշերով էլիմ, առիմ իմ տըղեն ու փախիմ, էրթամ, էտոնց վերեն կուրիսիմ: Թըխ գյելեր ընծի ուտեն, քըջ իմ խոր տուն էրթալ աղեկ ա: Ու թըխ ես բենամուս չէղիմ»:

Էտոնք օր քընան, Շամամն էլավ, համա ուր էրեխեն գանկեց ուր հունթ, գիշերով փախավ, էտոնք խըլըսուն էլան, տեսան, օր Շամամ չըկա:

- Հայ վա՛խ, հայ վա՛խ, - ասեցին, - մենք էրթանք, ի՞նչ պատասխան տանք: Էրթանք, ասենք՝ տարանք, խոր թասլիմ էրեցինք, չէղի: Պըտի խորից ջույաթ գա՝ իմ ախշիկ չէկեր իմ մոտ: Ապա մենք էրթանք, աղեկն էն ա, օր իմալ էղեր, հեմալ տողրուն ասենք:

Էլան, տարցան, էկան:

Պետրոսն ասաց. - Դու ի՞նչ շուտ տարցաք, էկաք:

Էտոնք ասեցին. - Քյեզնե ի՞նչ պախտենք, վալա՛, քացինք սարի գըլոխ, գիշեր էնտեղ մացինք, խըլըսուն էլանք, օր չըկա: Ի՞նչ գիտես, զէն էրա՛ մեզի:

Էնտեղ Պետրոս ա՛խ քաշելով ասաց. - Քանցե՛ք ձեր տըղեր, ձեզի ի՞նչ պըտի ասեմ էլ:

Պետրոս գիշեր-ցերեկ մընաց կասաֆաթի մեջ: Թըխ Պետրոս մընա ուր կասաֆաթի մեջ, մենք դանդանք վըր Շամամին: Տեսինք Շամամի հալ ի՞նչ պըտի էղի:

Շամամ էտ գիշեր չուր մի լուս գանցեր ա, շատ ու թիչ Աստըված գիտա, ինչ կանգար տեղ ա գանցի: Արևն օր կառի, կերթա հախպըրի մի վերեն:

Ա՛խ, ա՛խ, - կասա, - ես մեռա:

Կասա. - Փշու՛ն նըստիմ ես հախպըրի վերեն, ողիաթիմ, ինչ կէղի, ուր քյեֆն ա:

Շամամ կը նըստի հախպըրի վերեն, քուն կը տանի, էնտեղ կը քընի: Մեկէլ կիմնա, օր կը տեսի կեսօր ա:

Կէլի, կը նըստի, կը տեսի, օր էնդեխեն տաս-տըսերկու ծիավոր էկան: Շամամն էլ շատ խորոտ ա:

Համա ուր յազմեն կը քաշա ուր գըլխուն, կընգի վըր ուր քյիթ ու պերնին: Դու մ՛աներ, էտ ծիավորներն օր կուգան, էտտեղ մեկ գեղ մի կա, էտ ծիավորներու ճոջ Մանուկ աղի տըղեն ա: Ինքն էլ ազանք ա:

Կուգան, կը տեսին, օր հախպըրի վերեն մեկ կընիկ մի նըստեր ա, էրեխե՛մ էլ գյիրկն ա, էրես ծածկեր, ընգի վըր քյիթ ու պերնին:

Մանուկ աղի տըղեն կը հրամայա, կասա. - Տըղեկներ, հիջեք, էտի շիթեք՝ տեսինք, սա՞ղ ա, թե՞ մեռուկ ա:

Եփ օր կիջեն, շիթեկն, տեսին, օր սաղ ա: Ուր էրեսն էլ ծածկուկ ա: Ինչ կէնեն, էրես չըպանա:

Մանուկ աղի տըղեն կուգա, կասա. - Դու հորի՞ քու էրես չըս պանա, մենք կղարիք ենք: Դու մեզնե հորի՞ կամըչնաս:

Կասա. - Ախպե՛ր, չէ՞ դու մարթ եք, ես կընիկ եմ: Իմա՞լ ես ձեզնե չամչընամ:

Մանուկ աղի տըղեն էտոր էրեսն օր կը պանա, համա էնտեղ Մանուկ աղի տըղի չոքերու կուդում կը կոտորի:

Մանուկ աղի տըղեն մըջ ուր սըրտին կասա. «Ախշըրքի մեջ իմն օր կա, էս ա, իմն օր չըկա, էս ա:

Ասաց. - Ախշի՛, դու ո՞ր տեղացի ես:

Շամամն ասաց. - Չըմ գիտե, թե որտեղացի եմ: Ես էլ զիս էտտեղ տեսա: Վերև՝ Աստըված, ներքև՝ դու: Ի՞նչ գիտես, զէն էրա, աղա՛ ջան:

Ասաց. - Ախշի՛, կավըլ էղի, ես պըտի քեզի առեմ: Ախշի՛, դու ի՞նչ կասես:

Ախշիկ ա՛խ քաշեց ու էլանց:

Ասաց. - Վա՛խ, վա՛խ, աղա՛, դու էտ ի՞նչ էր՝ ասեցիր: Դու քու միթք հորի՞ փոխիր իմ վերեն: Ես պահմա մի ունիմ, թե դու տասնուխինգ տարի իմ պահման կը պախես մըջ քո սըրտին, ես պըտի քեզի առիմ: Չէ՛, օր չըպախես, ընծի սպանա՛, իմ տըղեն էլ խըտ ընծի ու թոխ քնա՛:

Տրդեն ասաց. - Կավրլ էղի, տասնուխինգ տարի քեզի իմ քուրոչ պես պախտեմ, չուր քո պահման կատարի:

Ախչիկ էլավ, ընգա՛վ տրդի խետ ու քնաց տրդի տուն:

Տրդեն ուր մորն ասաց. - Մարե՛, էսա կընիկ ես գըտեր եմ, պերեր եմ: Պըտի իմ քուրոչ պես պախտեմ:

Շամամ մընաց էնտեղ:

Շամամն ասաց տրդին. - Կը խընթերեմ, օր քո մոր թամբեխ էնես, օր կալիբ մի սապոն ընծի տա, օր ես իմ տրդեն հըմեն օր լողկըցում:

Ասաց. - Էտի ռըհա՛թ պան ա, ինչ քո լեզուն պըտտա՛, ուզա՛, չամչընաս: Քեզի հա՛զըր ա:

Տրդեն մոր թամբեխ էրաց, ասաց. - Մարե՛, օր կալիբ մի սապոն տաս իմ քուրոչ, օր ուր տրդեն հըմեն օր լողկըցում:

Շամամ մեկ տարի թամամ տրդեն հըմեն օր լողկըցուց: Տրդեն հօրեզօր հանե՛ծ էկավ:

Տրդի տաս տարին օր թըմավ, տրդեն էղավ, ինչպես օր մեկ քսան տարեկան ջըհել մի: Դորուս տրդեն էլավ, կերթեր, ճըժերու խետ կը խաղեր: Վիր ճիժն համա օր պըռներ, կը վերցեր, տըփեր գետին:

Էտ գեղական զըմեն էղան էտ տրդի վերեն գանգըտվոր: Էլան, քացին Մանուկ աղի մոտ:

Մանուկ աղին ասին. - Էս ի՞նչ հեթիմ էր, դու պերիր, թողիր մըչ մեր ճըժերուն, օր հըմեն օր մեր ճըժեր կը ծեծա ու մեր ճըժերու գըլոխ կը կոտրա: Մենք պըտի էլինք, էտ տրդի դարդեն թողենք, փախենք:

Մանուկ աղի տրդեն լսեց:

Գեղակնին ասաց. - Էս չիմանամ, օր խետ մ'էլ դու էտ քըսեն էնեք տրդին: Խետ մ' էլ օր դուք էտա քըսեն տրդին էրեցիք, զըմենքս ի գեղեն դուս կենեմ:

Գեղական էլ չիխըցան ձեն խանած են:

Տըսնուխինգ տարին օր թըմավ տրդին, տրդեն էմալ փայլեվան մի տարցավ, էլ մարթ տրդի մեչք գետին տրող չըկեր: Տրդեն թըխ մընա էնտեղ, ապրի ուրին, մենք տաննանք վըր Պողոսին ու Պետրոսին:

Պողոս, Պետրոս կէլին եռուն մարթ կը պատրաստեն, կասեն. - Էլե՛ք, գացե՛ք Մանուկ աղի գեղ, էնոր յոթ տարվան վերգին մացեր ա: Շուտ օր ժողվեք, առեք, գաք:

Էտ եռուն մարթ կէլին, կու գան Մանուկ աղի գեղ:

Մանուկ աղին կասեն. - Քո յոթ տարվան վերգին մացեր ա, ահա շուտով մինչև վա՛ղ էսա գախ, կը ժողվես եռուն պեռ փարեն, ժողվա՛, չըժողվես, ահա՛ քո գըլոխ կըտրեցինք:

Էտ տրդի անուն էլա տրած ան Սերոփ: Տրդեն հըմեն օր կերթա, ուրին նեճիր կենա ու կու գա:

Տրդեն հիրիկուն նեճրի տեղեն կու գա, կը տեսի, օր գոռուն ու գոչուն ընգեր գեղի մեչ, կու լան ու կը բոռան:

Տրդեն կասա. - Մարե՛, էս ի՞նչ էղեր ա:

Մեր կասա. - Լա՛ն, Պողոս, Պետրոս ճամխած ան, յոթ տարվան վերգին կուգեն: Էն համար գոռուն ու գոչուն ընգեր գեղի մեչ: Սերոփ կասա. - Մարե՛, չըգիտե՞ս՝ էտոնք քանի մարթ էկած ան:

Շամամ կասա. - Լա՛ն, գիտեմ, եռուն մարթ էկած ան:

- Մարե՛, - կասա, - ես կէլիմ, էրթամ էտ եռուն մարթն էլ պըռնեմ, մորթեմ:

Շամամ կըզի գետնին, շուքըր կուտա մըչ ուր մըթքին, կասա. «Գոհանա՛մ քենե, Աստըվա՛ծ, իշալա իմ տրդեն պըտի ընծի ախշըրքի մեչ սեվերես չենա»:

Կասա. - Լա՛ն, արե՛, քեզի խըրատ տամ:

Սերոփ կասա. - Մարե՛, ի՞նչ խըրատ կու տաս ընծի, ես քո խըրատին կը լսիմ:

Կասա. - Լա՛ն, ձեն մ'եներ: Թըխ փարեն ժողվեն, պըրծին, ես քեզի կասեմ:

Էտոնք զըփարեն կը ժողվեն, եռուն պեռ կը թըմեն, օր խըլըսուն պըտի էլին ու էրթան:

Հիրիկուն Շամամ կը կանչա Սերոփին, կասա. - Սերոփ, էտոնք խըլըսուն կերթան: Էս քեզի խըրատ կու տամ, շիտակ անգա՛չ էրա իմ խըրատին: Դու գիշեր կէլիս, կերթաս, կը կայնիս էնոնց ճամբիս վըրեն: Կաչքես, թե նոնք ընցած, քացած ան, կերթաս, կը խասիս, ինչ կենիս, դու գիտես: Չէ օր չընցած, քացած ան, էնտեղ կը կայնիս, քեզի ջըղարե մի կը քաչես, չուր էնոնք կու գան: Էնոնք օր էկան, էնոնք կը բոռաս, կասես՝ կայնե՛ք, մ'ընցիք,

իմ պաժին տվե՛ք, նոր ընցեք: Էնոնց ճոչի անուն էլ Մուշեղ ա: Էնոնք կերթան, Մուշեղին կասեն՝ մարթ մ' էկե, կայնե վըր ճամբխու կասա՝ իմ պաժին տվե՛ք, նոր ընցեք:

Մուշեղ կասա. - Բացե՛ք, խարցուցե՛ք, տեսե՛ք՝ էտոր պաժին ի՞նչ կուզա՛:

Կու գան կասեն. - Ա՛յ մարթ, քո պաժին ի՞նչ կուզես:

Սերոփ կասա. - Պեռ մի փարա ու մարթու մի գըլոխ իմ պաժին ա, տվե՛ք, նոր ընցեք, քացե՛ք:

Կերթան, Մուշեղին կասեն. - Պեռ մի փարա ու գըլոխ մի կուզա ուր պաժին:

Մուշեղ կը հրամայա. - Տըղա՛, իրեք-չորս խոզի գացե՛ք, գէնոր ոտ ու գըլոխ ջարդեք ու էնոր թվեր կապե՛ք ու պերե՛ք ընծի: Օր տեսինք էնի ի՞նչ մարթ ա, էկեր իմ հանեճ ու ընծնե պաժի կուզա: Չէ՞ ես Մուշեղն եմ: Պողոս, Պետրոսից օր տա պըռծի, մարթ իմ հանեճ չըկանա գրուցա:

Չորս-խինգ խոզի կէլին, էրթան, ծեռ կը թալեն հինե: Էն էրկըսին ամեկուն չափալեխ մի կը գանի, էն մեկի վիզ կը պըռծի, էն մեկէլին ա կը ծըռի վիզ, էն մեկին էլ ըզթեվ կը կըտրա, էն մեկին էլ ըզվոտ կը կըտրա:

Էն ոտ կըտրուկ կու տա էն մեկի շալաք, կասա. - Չեր աղեն վո՞ն ա, տարե՛ք ձեր աղեն:

Մուշեղ կը տեսի, օր մեկ էկավ մարթ մի շալաքն ա ու արուն կը թափի մոտեն ու կու քա՛:

- Յա՛, յա՛, - ասաց, - տըղեկներ, է՞տ ինչ ա:

Կասեն. - Վա՛լա, զարկեց էն էրկըսի վիզ պըռծուց, ու մեզի էլ ես հըմլա էրաց, ասաց՝ քացե՛ք, ձեր աղեն վոն ա, խաբա՛ր տվեք:

Համա էնտեղ Մուշեղ հերսոտավ, քաշեց ըզթուր, ասաց. - Տըղեկներ, խասիք էնոր ճոչ կտոր էնոր անգաչ թողե՛ք, էմալ պըրտեք գէնի:

Էտոնք օր քըշեն վըր Սերոփին, Սերոփ դու գողի մ'էղիր, ընգի միճըվներ, ամեկ դեխ մի գար շըրճա: Սերոփ ըզհմեն ճարտեց, գՄուշեղ պըռնեց, քիթ ու մուր կըտրեց, չորս-խինգ խատ էլ ատամ պերնեն քանդեց, զարկեց ճակատ, ասաց. «Քու աղեն վոն ա, դե քնա՛, քու աղին ջուլա՛ր տու»:

Մուշեղ քնաց դեն, մենք տաննանք վըր Սերոփին: Սերոփ առավ եռսուն պեռ փարեն էլ, տանրուց, պերեց մըջ գեղին: Գեղական էլան, տեսան, օր Սերոփն առավ եռսուն պեռ փարեն էլ, էկավ:

Աղեն քնաց մոտ, ասաց. - Սերոփ, որթի՛, էտ ի՞նչ էրեցիր, էտ ի՞նչ էրեցիր:

Ասաց. - Աղա՛, ի՞նչ եմ էրեր եմ: Խըլղի փարեք էնոնք հորի՞ ժողվեն, տանեն ուտեն: Չէ՛, քը գեղական ուտեն:

Աղեն ասաց. - Տո լա՛ո, վաղ Պողոս, Պետրոս կու քան մեզի օլուխ-չուլուխով կը կըտրին:

- Աղա՛, չէ՛, աղա՛, մը վախենա: Բանի իմ ջան սաղ ա, մարթ քեզի պան չըկանա ասա: Օր ես մեռա, խո դուն քըջ ընծի էվել չես:

Թըխ էնոնք մընան էնտեղ, մենք տաննանք վըր Մուշեղին: Մուշեղ քնաց, խասավ գեղ, գեղական էլան, տեսան, օր ի՞նչ տեսին. Մուշեղի քիթ ու պերան կըտրուկ, ատըմներ շարուկ ճակատ, էկավ:

ՉՄուշեղն առան, քացին Պողոսի մոտ, Պողոսն ասաց. - Յա՛, յա՛, Մուշեղ, էտ ի՞նչ էղավ ձեզի: Էտ վո՞ն ձեզի էտ հըմլա էրաց:

Ասաց. - Պողոս աղա, մենք քացինք, փարեն ժողվեցինք, եռսուն պեռն էլ թամամ, գեղացիք պան չասին, էկանք ճամբխու վըրեն, մեկ էլ տեսանք, օր մարթ մ' էնտեղ կայնուկ էր: Քշեց վըր մեզի, տըղեկներ հըմեն սպանեց ու ընծի էլ ես հըմլա էրաց, առավ փարեն, տանրցավ, ասավ՝ քացե՛ք, ձեր աղեն վոն ա, խաբա՛ր տվեք: Ես կերթամ Մանուկ աղի կուշտ նըստիմ, չուր դուք գաք:

Համա Պողոս շուտով կանչեց Պետրոսին, ասաց. - Պետրոս, շուտ կէլիս, կը ժողվես մեկ-երկու խարիր տըղա, կերթաս գեղ, բուր կը կըտրես, կը թալնես, գէն մարթն էլ կառիս, գաս ընծի:

Պողոսն էր էլավ խըլըսուն, առավ չորս խարիր տըղա, քնաց գեղի չորսբուր գիշերով առավ, մինչև լուսցավ:

Գեղական լուսմուր էլան, տեսան, օր գեղի չորսբուր ասքար պըռներ ա: Էլան, քացին Մանուկ աղի մոտ:

Ասին. - Մանուկ աղա, Աստըված քու տուն ավիրա՛, քո տղ-
դին էլ խետ, էս ի՞նչ բալա՛ էր, պերեց, թողեց մըջ մեզի, օր մեր գեղ
տվեց կըտրել:

Շամամ լուսմութ էլավ դուս, տեսավ, օր գոռուն-գոչուն
ընգեր մըջ գեղին:

Էկավ ջուլ տղդի էրեսի վերեվեն վիրուց, ասաց. - Սերոփ,
մեռի՛մ քեզի, չուր ե՞փ տու քընիս, էլի՛ վեր, չէ՞ տղավ կեսօր:

Տղդեն էլավ վեր, ճուր պերեց, տղդեն լվացվավ, պերեց
խաց տրեց հանեճ, կուռե՛մ էլ կմթ, տղդեն կերավ, պերեց տղդի
սիլեք տրեց հանեճ, ասաց. - Սերոփ, մեռի՛մ քեզի, քո սիլեք
կապա՛ վըր քեզի:

Ասաց. - Մարե՛, ի՞նչ էղեր ա:

Ասաց - Չորս խարիր ջան էկած, գեղի բուլորն առած ան,
գոռուն ու գոչուն ընգեր միճըվներ:

Տղդեն ասաց. - Մարե՛, չո՞րս խարիր ջան: Ես ասի կայի չորս
խնգար ջան են: Օր բալքի իմ թեվեր փշու՛մ նեղեներ: Էտի հե՛չ, իմ
կուռին տուր, էս ջըղարե մի քաշեմ:

Սերոն ասաց. - Լա՛ո, էլի՛, էլի՛, մըկա գեղ ծեռաց կերթա,
ջըղարի գալիս չի:

Ասաց. - Մարե՛, մը՛ վախենա, մեկ սըհաթ, տես՛ իս ինչ կենեմ:

Սերոփն էլավ, քննց Մանուկ աղի հօդի տուռ, օր Մանուկ
աղեն ծեռներ տրեր ծոց, կու լա՛ ու կերթա իգա:

Սերոփ քննց, ասաց. - Աղա՛, բարի լուս քե: Ի՞նչ էղեր քեզի:
Չորի՞ կու լա՛ս: Առ կուռին քեզի, ջըղարե մի փաթա՛:

Մանուկ աղեն լալելեն ասաց. - Աստըված քու տուն ավիրա՛
ու քու պերողին էլ խետ:

Օր էմալ ասաց, համա Սերոփի հեռստավ, քաշեց գթուր ու
ընգավ գորքի մեջ, մեկ սըհաթ չըթըմավ, մեկ Պետրոս պըռծավ
միճըվներուց, փախավ: Առավ Պետրոսի հետև, քննց գեղի թա-
լան զըմեն ժողվեց, պերեց:

Պողոս էլավ, տեսավ, օր թա Պետրոս մինակ կու գա, էմալ
կը փախի, օր ըսկի չիշխընա էտեվ աջքա:

Պողոս քննց հանեճ, ասաց. - Պետրո՛ս, Պետրո՛ս, էտ ի՞նչ
էղավ քեզի:

Ասաց. - Ախպեր՛, էս էլ չըմ գիտե՛ ի՞նչ էղավ: Ես տեսա, օր
մարթ մի էնդեխեն էկավ, ընգավ մըջ տղդեկներուն, տղդեկներուց
մարթ չըթողեց: Անջախ օր էս պըռծեր են, փախեր են, էկեր են:

Պողոս համա հեռստ սրտով, - Չա՛յ, - ասաց, - Աստըված
ծեր տուն ավիրա՛, էս Պողոս փայլեվան էղիմ, վըր ընծի պանցր
մարթ է՛լ էղի:

Լուսմութ էլավ, հրաման էրաց, ասքար ժողվեց ու քննց: Էնի
թըխ ուր ասքրի ժողվելուն թ՛էղի, Շամամ Սերոփի ճամբխեց, ուր
խոր թալան էլ պերեց:

Խըլըսուն Պողոս ասքար էրաց ու էկավ, գացին էնտեղ,
քառսուն օր կըռիվ էղավ: Էլ մարթ չըթողեց, ջանտեց Սերոփ:

Ժողովուրթն էլան, քննցին Պողոսի մոտ, ասին. - Պողո՛ս, դու
մեզի վերծանցուցիր, թե ճար մի կա, էրա՛, չէ՛, օր չըս կանա ճար
էնե, մենք հըմենքս էլ կերթանք էտ մարթուն թասլիմ կեղինք:

Պողոս խըլըսուն էլավ, կանչեց Պետրոսին, ասաց. - Պետ-
րո՛ս, կէլիս, կերթանք կըռվու տաշտ: Յան մենք էլ մեր ժողովուրթի
խետ կը սպանվենք, յան էտ մարթուն կը սպանենք, մեր ժողո-
վուրթ կազատենք:

Խըլըսուն էլան, ընգան ժողովուրթի խետ, քննցին կըռվու
տաշտ: Շամամն էլավ, տեսավ, օր Պողոսն ու Պետրոս ընգած
կըռվու հանեճ ու կու քան:

Կղանչեց Սերոփին, ասաց. - Սերոփ, արե՛, իմ տղդին պա՛մ
ասիմ, մեռի՛մ քեզի:

Ասաց. - Մարե՛, ի՞նչ կասես, ժի՛ր ասա, իմ քըռտինք պա-
ղավ:

Ասաց. - Էնա էրկու մարթ կը տեսի՞ս, օր ընգած, հանեճ կու
քան: Էնա կարմիր ձիավոր չըսպանես, քանի կանաս գէնի պըռ-
նես, պերես ընծի, օր էս գէնի իմ ծեռնով սպանեմ, օր իմ սիրտ
ռըհաթի լավըմ:

- Մարե՛, բալքե էնի գարկեց, ընծի սպանեց: Ապա դորուս,
իմա՛լ կէղի:

- Լա՛ո, էն էլ դու գիտես, իմալ կէղի:

Սերոփ քննց, քննց հանեճներ ու կըռվավ չուր կեսօրին:
Պետրոս կը տըլըպի, օր գանի գէտի սպանա, էտոր սըրեն կու քա,
մոր խոսքն հնապով գ՞Պետրոս չըսպանա: Չամա կառի Պետրոսի
հետև: Պողոս կը փախի, գ՞Պետրոս կը պըռնա ու կառի, կու քա:

- Ահա՛, մարե՛, - կասա, - քո դուշման պերեցի: Ինչ գիտիս, զէ՛ն էրա: Ես կերթամ կըռվու մեչ:

Պետրոս օրթա կուքա, աչքն օր կը քիսի կընիկ, ըզկընիկ կը ճանչընա, արտըսունք աչքերուց կը թափի:

Համա կընիկ կէլի, զինք կը թալա վըր իրկան ոտաց, կասա. - Մի՛ լա՛, Պետրո՛ս, մի՛ լա՛, էսի քո տըղեն ա:

Էնտեղ Պետրոս կը կըզի գետնեն շուքըր կու տա, կասա. «Գոհանամ քենե, Աստըվա՛ծ, չէ՞ ուրիշ մարթ չէր ընծի պըռնեց, իմ տըղեն ա՛ ընծի պըռնեց»:

Կը փաթվին իրար ընտեղ ու կը նըստին իրարու կըշտի խետ: Սըհա՞ք մի կը մընա, Սերոփ կըռվուց կը տաճոնա, կու քա, կը տեսի, օր ուր մերն ու էտ մարթ փաթված հիրուր ու նըստած ան:

Մըչ ուր մըթքին կասա. «Վա՛խ, մարե՛, դու ի՞նչ բերախտ իր: Օղորթմ ա, օր կընգան բախտ չըկա: Ի՛մեր կուզեր, օր զընծի տեր սպանել»:

Համա էն տեղեն զթուր կը քաշա, կու գա՛ դըխ մեր:

- Մարե՛, - կասա, - կայնի՛ տես, ես ի՞նչ խաղամ քո գըլոխ, դու կուզիր, օր ընծի տեր սպանել, օր քո սըրտի փափա՞ք կատարի:

Համա մերն էնտեղեն լալելեն կէլի ու կերթա, կընգի տըղի վիզնուվե, կասա. - Արե՛, լա՛ո, էսի քո խերն ա:

Տըղեն կասա. - Մարե՛, մըկա էտի իմ խե՛րն ա:

- Խա՛, լա՛ո, քո խերն ա:

Գալու պես կը պըռնա խոր ծեռ, կը պաքա: Խեր կը պըռնա ուրախութենով տըղի երըսներ կը պաքա, կասա. «Գոհանամ քենե, Աստըվա՛ծ, չէ՞ ուրիշներ ընծի չըպըռնեցին, իմ տըղեն ընծի պըռնեց, իմ նամուս չըկոտրավ աշըխրքի մեչ, թոխ ես մըկա յէլ մեռնիմ»:

Պետրոս հրամայեց տըղին, ասաց. - Գնա՛ էնա մարթն օրթա չադրի տակ նըստուկ ա, էնի քո խորոխպերն ա: Գնա՛, էնոր ծեռ պաքա՛, ա՛ռ, արի՛ էտտեղ:

Տըղեն էլավ, պըտի էրթեր, խեր ծեռ թալեց հինե, ասաց. - Կայնի՛, մեռի՛մ քեզի, քո սիլեք հաճկա՛, նո՛ր գնա: Էնոնք օր քեզի տեսան, զըմեն հախու կը մեռին: Գնա՛, հեռու կայնի՛, կանչա՛, ասա՛ Պողո՛ս, Պողո՛ս, էլի՛, արե՛, իմ խեր Պետրոս քեզի կը կղան-

չա: Չէ՞ ես Պետրոսի տըղեն եմ: Օր տա՛ իմ անուն տրեր իր Անանուն տըղա: Մի՛ վախենա, էլի՛ ու արե՛:

Պողոսն օր տըղի ծեն լսեց, համա լալելեն էլավ, էկավ, զինք թալեց տըղի վիզնըվե, պըռնեց, տըղի էրեսներ պաքեց, տըղեն պըռնեց խորոխպոր ծեռ պաքեց, առավ, էկավ ուր խոր ու մոր մոտ:

Շամամ տեսավ, օր տեքըրն էնդեխեն էկավ, էլավ ու քնաց, զինք թալեց տեքեր ոտաց:

Պողոս էնտեղ էլաց, պըռնեց Շամամի էրես պաքեց, ասաց. - Լա՛ո, ես ի՞նչ պան էր հէլավ մեր գըլոխ:

Էկան, նըստան չադրի տակ: Ուրախցան, ժողովուրթ մոռցան:

Մեկ կես սըհա՞ք էնտեղ մացին, Շամամն ասաց. - Էտա ժողովուրթին ջույաք ճամբխեք, թոխ էտոնք ուրախնան, մըկա զըմեն հախու կը մեռին:

Կանչին, մարթ մի պերեցին, ճամխին մըչ ժողովուրթին, ասին. - Մի՛ վախենաք, ես մարթ Պետրոսի տըղեն ա:

ժողովուրթ հէլան, ամեկ ուր տեղ քացին:

Պողոս ճամխեց, գեղի աղեն պերեց, տրեց խըտ ուր կըշտին, ասաց. - Թե տու էս ի՞նչ պարիքներ ես ընծի էրեր ես: Աստըծու պարիքներ քյեզի էղի: Էսկից վերճ դու իմ ճոչ ախպերն ես, ես քո պըզտիկ ախպերն եմ: Քանի օր ես սաղ եմ, պիտի օր թամբել էնեմ քո գեղին, մարթ չըմոտնա ու քու գեղեն պան չուզա: Պըտի տու ազատ ապրիս քու էրած պարիքներու հապով:

Էլավ Պողոս աղեն, խաթըր առավ Մանուկից, վերցեց ուր խարս, առավ, էկավ ուր տուն:

Մեկ շաա՞ք մընաց, կանչեց խարսին, ասաց. - Որթի՛, արի՛, քու գըլխու գալածն ինծի թարի՛ֆ էրա:

Ինչ օր էկեր էր ուր գըլոխ, մեկ-մեկ պատմեց ու ասաց Պողոսին:

Պողոսն էլավ, ասաց. - Քացե՛ք, Մանուկ աղի տըղեն առե՛ք, ընծի պերեք:

Քացին, Մանուկ աղի տըղեն պերեցին: Պողոսին էլա մեկ էն տեսակ ախչիկ մի կեր, օր լուսնըկի պես փայլ կուտեր:

Պողոս պերեց Մանուկ աղի տըղեն ուր տուն, ուր ախչիկ պսակեց վերեն, յոթն օր, յոթ գիշեր խարսնիք էրավ, ասավ. -

Որթի՛, էլի՛, քնա՛ քո տուն, ես էլ քո պարիքներու էնելուն: Իմ ախշիկ պսակեցի վըր քեզի:

Սերոփն էր մեկ իրեք-չորս տարի ապրավ էտտեղ: Իրեք-չորս տարով ետ, հընցեն մեկ օր, նըստած էն էնոնց հօղեն, քըսա կենեն, ձիու բախս կենեն, ամեկ ուր ձիւ կը քովեր:

Տեսան, օր մարթ մի տըսուց էկավ, ասաց. - էտ ի՞նչ ձիու բախս ա կեներ:

Ասեցին. - Աղեկ ու վատ ձիու բախս կենենք:

Ասաց. - Դու ի՞նչ գիտեք աղեկ ձի դո՞ր կա: Ախշըրթի մեչ մեկ ձի կա աղեկ՝ Գալբու փաշի ձիւն: Էլ էնոր պես աղեկ ձի ախշարք չըկա:

Ձեն ընգա՞վ Սերոփի անգաչ:

Սերոփն ասաց. - Ահտ էղի վըր իմ քանին, չուր ես էն ձիւ չըպերեն, էլ էտտեղաց խաց չուտեն ես:

Խըլըսուն էլավ, խորն ասաց. - Ափո՛, ես կերթամ:

Ասաց. - Լա՛ն, դո՞ր կերթաս:

Ասաց. - Կերթամ, Գալբու փաշի ձիւն բերեն:

Խերն ասաց. - Լա՛ն, մենք կը տըլըպենք, օր քեզի շուտով պսակենք, դու դո՞ր կը թողես, էրթաս:

Տըղեն ասաց. - Կա՛վըլ էղի, ափո՛, չուր ես էտա ձիւ չըպերեն, ես պըտի իմ խարսնիք չէնեն:

Ինչ էրեցին, տըղի խետ ճար չէղավ: Տըղեն էլավ, կանչեց ուր Աստըված ու ընգա՞վ ճամբախ, քնաց: Քիչ քնաց, շատ քնաց, Աստըված գիտա, քնաց, Գալբու քաղաք դուս էկավ:

Քնաց, մեկ ամիս էտ քաղթի մեչ մընաց, ինչ ճար էրաց, ձիուն ճար մի չըկարցավ էրեր էր, ձիւն կղայդուկ ա, կղայդի պալ-նիսն էլ ախշըկե ծեռն ա:

Էնի թըխ չարչըրվի դըխ ուր տանքանքին, մենք տաննանք փաշի վերեն: Փաշի հանե՞մ մեկ մարթ մի կա, անուն Օվանես ա: Ինքն էլ շա՛տ գոռբա՛, կղոջախ մարթ ա: Աչք տրեր օր թա փաշի ախշիկ պըտի առի: Է՛, ի՞նչ, կարելի՞ յա, փաշի ախշիկ գետի կառի՞:

Էտ էլ փաշի ախշըկեն կասա. - Քանի օր իմ քան սաղ ա, նա՛ պըտի թողեն քեզի տանին, նա՛ էլ դու պըտի իմ ծեռնեն պըռծնիս:

Փաշեն էլ ա էտ Օվանեսից շատ կը վախենա: Քանի օր ինքն անաստված մարթ ա:

Էն մեկ օր Սերոփի կէլի, կերթա պառվու մի տուն, - Պառա՛վ, - կասա, - ա՛ն էնա օսկին, տա՛ր, փըշու մի խա՛ց պեր, ես ուտեն:

Պառավ կերթա, խաց պերա, տըղեն ուտա, կասա. - Տըղա՛, քու լեզուն չըմանի էտտեղաց մարթու լեզուն:

Կասա. - Մարե՛, ես կարիք եմ: Մարե՛, էսա ձեր քաղթի դրութեն իմա՞լ ա:

- Է՛, - կասա, - Լա՛ն, վա՛ղ ինչ կըղդար օր ախշըկներ կան, զը-մեն կը ժողվին, կերթան, ուրախութեն կենեն, փաշի ախշիկն էլ խետ: Վա՛ղ հիրիկուն փաշի ախշիկ օր ուրախութենի տեղեն էկավ, մինակ կերթա, կը մըտի բա՛ղի մեչ, հա՛վուզ կա, հա՛վուզ կը լողկը-նա, նոր կու գա, էրթա պառկի:

- Մամիկ, - կասա, - էտ բա՛ղ ո՞ր տեղն ա:

- Լա՛ն, - կասա, - փաշի տըռան դեմու դիմացն ա: Բա՛ղի տուռ մըկա բաց, զըմեն կերթան, կը պըտտտեն, քյեֆ կենեն ուրանց մեչ:

Տըղեն մըչ մըտին կասա. «Վալա՛, էսի աղե՛կ պան ա: Էրթամ բա՛ղի մեչ, տափիմ, օր ախշիկն էկավ, լողկըցավ, բալքյի էրթամ էտ պալնիս ախշըկե շորերու միչեն գողմամ ու էրթամ, փաշին ասեմ՝ ես շատ աղեկ ձի տիրող եմ: Բալքյիմ ձի առին ձիանքներու մեչ, չուր մի օր մ՛երկու էնոնք պալնըսի շուռ գան, ես գիշեր կէլիմ, կառիմ ձիւն ու կը փախիմ»:

Ասաց. - Մարե՛, շնորհակալ եմ, դե, մընա՛ս պարով, ես կէլիմ էրթամ:

Էն էլ տըղի միթք չըգիտե ի՞նչ ա:

Կէլի, կերթա բա՛ղի մեչ, կը տեսի, օր՝ Է՛, զըմեն լըցված բա՛ղի մեչ, շուռ կու գան ու քյեֆ կենեն: Ինքն էլ կերթա բա՛ղի մեչ, կը պըտտտա ուրին, չուր մուք կու տա:

Գուշիկ գինք կու տա ծառի մի տակ ու կը տափի: Դու մ՛ա՛-սե, թե Օվանեսն էլա էտ գիշեր գիտա, օր փաշի ախշիկ պըտի գա էտտեղ լողկընա, Օվանեսն էլ կերթա, կը տափի:

Օվանես կասա. «Յան պըտի էսօր ես մեռիմ, յա՛ն պըտի փաշի ախշիկ պըռնեն տըկլոզ մըչ հա՛վուզին»:

Փաշի ախշիկ հիրիկուն կու գա ուր ընգերներով, կը մըտին բա՛ղի մեչ, շատ ուրախութեն կենեն, - Ախշկըներ, - կասա, - կը խընթրեն ձենե, թե կարելի յա, դուք էրթաք:

Էն մեկ ախշիկ կասա. - Չէ՛, չէ՛, խա՛նըմ, դըռ շուտ ա:

Կասա. - Օր շուտ ա, ձեզի մեկ սրհնաթ էլ ժամանակ կու տամ, էլ իմ գրլոխ չըցավցուք, մեկ սրհնաթն օր կը թըմի:

Ախչկըներ կելին, քաշվին ու կերթան: Կը մընա մինակ ուր խըզմաթ էրող ախչիկ:

Էնոր էլ կասա. - Քնա՛, իմ տեղ թա՛լ ու քնա՛, քեզի ռըհնաթ քընի: Ես կեղի օր հա՛գան քընիմ, դու խը ձի մի՛ չարչըրվի: Հեսօր քեզի իզին ա:

Ախչիկ կերթա տեղ կը թալա, կերթա ուրին կը քընի:

Էտ էլ կելի բա՛ղի մեչ կը պըտտա, կասա. «Տեսինք՝ էս տեղ-րանք մարթ չըկա՞, օր տըկլոզնամ, լողկընամ»:

Անկըղա՛ր կը պըտտա, մարթ չըտեսի: Կու գա, գուր շորեր կը խանա, կը ծալա տնա մեկ դեխ, գուր ծամեր կը քանդա, կերթա, օր մըտի ճըրու մեչ, լողկընա:

Օվանեսի աչք վերեն ա: Օվանես էլ Սերոփի չըտեսի, Սերոփի էլ զՕվանես չըտեսի:

Ախչիկ կը մըտի ճուր, Սերոփի զախչիկ կը տեսի, կասա. «Հալա՛ թըխ մըտի մըչ հա՛վուզին լողկընա, եփ օր սապոն տվեց վըր ուր գըլխուն, էն վախտ ուր աչքեր կը խըփու, էլ չըտեսի: Էն վախտ կանամ գողնամ ըզպալնիս»:

Սերոփի մըտածունքն էտ ա: Դու մա՛սե, թե Օվանեսի մըտածունքն էլ էտ ա: Ախչիկն օր կը մըտի ճըրու մեչ, օր գըլոխ կը սապոնա, Սերոփի կենա, թե էլի ուր տեղեն, կը տեսի, օր մեկ վա՛զան ու քնա՛ց ախչըկե շորերու վերեն նըստավ:

- Վա՛յ, վա՛յ, - ասաց Սերոփի, - հապա իմ պան ավիրավ էս տեղ: Ես էլ ի՞նչ պըտի էնեմ:

Սերոփի քաշվավ, ուր տեղ նըստավ, ասաց. «Կայնի՛, տեսինք, էտնց մոտեն ի՞նչ կուքա դուս»:

Ախչիկ դըռ խա՛քար չունի, օր Օվանես նըստե վըր ուր շորերուն: Ախչիկ սապոնեց, օր հիստըկվավ, գուր աչքեր լվա՛ց, տա՛ր-ցավ, աչկեց, օր մեկ նըստուկ ա վըր ուր շորերուն: Աչքեց, օր տեսավ Օվանեսն ա: Համա ախչըկե կղուղուն էնտեղ կոտրավ:

Ասաց. - Աստըվա՛ծ, դու ընծի էտր ծեռքեն ազատ էնես: Էլ էս ճար չունեմ:

Օվանես ասաց. - Էլ դո՞ր իմ ծեռնեն կը պըռծես: Էլի՛ ու արե՛: Հեսօր էլ քեզի իմ ծեռնեն պըռծնել չըկա:

Ախչիկն ասաց. - Օվանես, դու եղիս, քո Աստըվա՛ծ, արե՛, հեսօր ընծի ազատ էրա, էս էրթամ իմ խորն ասեմ, օր՝ ափո՛, էս Օվանես կառիմ:

Ախչիկն էլ էտ մըթըրվ կուզա, օր զՕվանես խաբա, ազատվի:

Ասաց. - Չէ՛, չէ՛, չըկարելի՛, օր դու հեսօր իմ ծեռնեն ազատվիս:

Համա էլավ, քնա՛ց, ծեռ թալեր ախչըկե, օր գուլի մեչ պըռ-ներ, ախչիկ բոռաց ու փախավ:

Ասաց. - Օվանես, էլ քու ծեռնեն ընծի պըռծնել չըկա: Ես քեզի էլ պան չըմ ասի: Կաղաճեմ Աստըվա՛ծ, օր դու փայլեվան Սերոփի դըրբին ռաստ գա:

Սերոփի էտ խոսք լսելու պես ասաց. «Վալա՛, պիտի էս էս դըրբ վըր ընծի պըտի չընցուն»:

Համա քա՛շեց ուր թուր, էնդեխեն բոռալեն էկավ: Գալու պես Օվանես թողեց, փախավ: Առավ Օվանեսի հետեվ: Խասավ ախչըկե խոր տըռան հա՛ռեճ ու զՕվանես տվեց հա՛ռեճ թըրի, բըրտեց:

Տա՛րցավ, էկավ ախչըկե մոտ:

- Ախչի՛, էս էն մարթ սպանեցի:

Համա ախչիկ էլավ, քնա՛ց, զինք թալեց Սերոփի ոտաց վերեն, ասաց. - Դու հրեշտակ իր՝ ընծի խասար, էս անաստվածից ազատ էրիր: Արի՛, տեսինք քո ուզածն ի՞նչ ա, օր էս էլ քու մուրազ կատարեմ:

Սերոփին ասաց. - Ախչի՛ ջան, իմ մուրազ ծանդըր պան չէ, էս էկեր եմ քո խոր ձիու հապով:

Ախչիկն ասաց. - Է՞տ ա քու մուրազ, վըր իմ աչիչ: Դե հրամեցե՛ք, էրթանք, օր էս ձին տամ քեզի, օր դու տանիս, իմ խոգին ռըհնաթի: Կուզա՛ թըխ իմ խեր խըլըսուն իմ գըլոխ գանի:

Ասաց. - Սերոփի, էլի՛ էրթանք, էս Օվանեսի ջանդանկ տեսիմ, էնոր արուն խմեմ, իմ սիրտ ռըհնաթի:

Ախչիկն էկավ Օվանեսի ջանդըկի վըրեն, թըրեց վըր ջանդըկին, ասաց. - Դու ի՞նչ անաստված մարթ իր, օր էս փոր-ցանք իմ գըլոխ կը բերեր:

Ախչիկն առավ զՍերոփի, տարավ ուր չադրի մեչ, քնա՛ց, Սերոփին պերեց խաց մի, թաս մ՛ էլ մեղր, ասաց. - Սերոփի, դե անուշ

երա, ես կելիմ, ձին կը թամբյեմ, գամեն, պերեմ քու հանեմ: Խեծի՛ ու քնա՛, Աստղված քո պան հաճողա՛:

ժողովուրթ հըմեն քընուկ են: Մարթ էտ պանեն խաբար չունի:

Ախչիկ քնաց, ձին պերեց, ասաց. - Սերո՛ւի, խըրատ մի կա, քեզի կու տամ: Իմ խըրատ չըմոռնաս: Օր կերթաս, պանցր սարի մի տակ, էն պանցր սարի տակ կըընգներ շատ կան, եփ օր կըընգներ կըռկըռան, ձին կըընգներու ձենեն կուրախնա, կելի, կայնի վըր հետին ոտներուն: Աստղծու սիրուն էղի, մուղաթ կենաս, օր ձիու վրեսեն չընգիս: Օր ընգար, մացիր դան, քո գըլոխն էլ կերթա, իմ գըլոխն էլ կերթա: Իմ խըրատն էս ա քեզի: Դ՛էլի, Աստղված քո պան հաճողա: Մըկա կը լուսնա:

Էնտեղ Սերոփի ծեռ տվեց ախչըկե ծեռաց, ասաց՝ մընաս պարով:

Ախչիկն ասաց. - Քնա՛, Աստղված քո պան հաճողա:

Սերոփին ընգավ ճամբախ, քնաց, ախչիկ տարցավ ուր չադրի մեջ, Սերոփի հապով էլ քուն չըկա:

Սերոփի քնաց ախչըկե ասած սարի տակ, տեսավ, օր կըընգներու ձեն էկավ, ձին էնտեղ ուրախցավ, էլնվ, կայնավ վըր ոտներուն: Սերոփի գարկեց գետին, ձին տարցավ, էկավ:

Աղոթրան օր պանցվավ, ախչիկն էլավ դուս, տեսավ, օր ձին տուռ կայնուկ ա:

Ասաց. - Վա՛խ, վա՛խ, էս ի՞նչ պան էր՝ էղավ:

Ախչիկ դու բախտով էղի, քո բախտ մը՝ կուրիսե, էնտեղեն ախչիկ էլավ, խեծավ ըզծին, քնաց Սերոփի հավար:

Քնաց Սերոփին օր տեսավ, ախչըկե ջիգար կըտըռտավ:

Ասաց. - Չէ՞, էս քե պան թամբեխ էրեցի, հորի՞ իմ խոսքին չըլսիր:

Սերոփին ասաց. - Բալքի Աստղված էս ըմլա էր կամեցեր էր իմ գըլխուն: Ես ի՞նչ էնեմ: Ախչի՛, դու կը տաննա՞ս:

Ասաց. - Կը տաննամ, ապա ի՞նչ էնեմ: Դու առ, քո ձին քնա՛, էս կերթամ, իմ խեռն էլ, էս գիտեմ, օր իմ գըլոխ կը կըտրա: Թող էս առիմ քու դադեն:

Ախչիկն օր էտպես ասաց, արտըսունք Սերոփի աչքերուց թափավ:

Ասաց. - Ախչի՛ ջան, դու չը՞ս իգան, օր էս քեզի էլ տանիմ:

Ասաց. - Ընծի տանիս, վա՛յ թե բերախտութեն էնես խը ձի: Սերոփին ասաց. - Ախչի՛, ուխտ էղի հանձեմ Աստղծու, ինչ օր դու ընծի ասես, էս քո խոսքեն չէլիմ:

Էնտեղ համա ախչիկ պըռնեց, Սերոփի ծեռ պագեց, ասաց. - Դե էլի՛, էրթանք:

Էնոնք թըխ իգան ուրանց տուն, մենք տաննանք վըր ախչկե խոր:

Փաշեն էլավ, տեսավ, օր ջանդակ մի ուր շեման վերեն բըրտուկ ա: Քնաց, աչկեց, տեսավ, օր Օվանեսի ջանդակն էր: Յէլավ, քնաց ուր ախչկե չադր, տեսավ, օր ախչիկն էլ չըկա: Քնաց ուր ձիու մոտ, տեսավ, օր ձին էլ չըկա: Դըռ մարթ էտոր հալեն խաբար չունի: Չամա էկավ, քնաց, մըտավ տեղաց մեջ, պառկավ:

Կընիկն էլավ, քնաց տուս, տեսավ, օր ջանդակ մ՛ուրանց տըռան հանեմն էր:

Լալելին տարցավ, էկավ, ասաց. - Մարթ, քու տուն ավիրի, դըռ տիւ քընուկ էս:

Ասաց. - Կընիկ, ի՞նչ էղեր ա:

Ասաց. - Էլի՛, տե՛ս, մարթ մ՛ ա սպանած ա մեր տըռան հանեմ:

Էլավ, շորեր խագավ, լուսցավ, գեղական էլ զըմեն ժողվան, էկան, տեսան, օր Օվանեսի ջանդակ աղի տըռան հանեմ սպանած ան: Գեղական դըռ խաբար չունին, օր աղի ախչիկն ու ձին էլ տարած ան:

Օվանեսի մարթիկ ժողվան, էկան փաշի տըռան վերեն, ասին. - Փաշա՛, իլաի մենք էլ քեզի կը սպանենք մեր մարթու տեղ: Մեր մարթ դու էս տվեր էս սպանել:

Փաշի սիրտն էլ չըտարավ, լալելին ասաց. - Ի՞նչ կուզիք իմ դարդեն, չէ՞ իմ ախչիկն ու ձին էլ տարած ան:

Չավտըղին էտոնք, գացին, տեսան, օր փաշի խոսք օղորթ ա:

Փաշեն ասաց. - Դըրկիցներ, լսե՛ք, ձեզի մեկ խնդիրք ունիմ ասելու, էտորից վերձ էս քաղքի խաց ու ճուր ընծի խարամ էղի, իմ կընիկ, ճիժ թասլիմ կենեմ ձեզի, ձեզի թասլիմ կենեմ Աստղված, չուր էս իմ ախչիկն ու իմ ձին չըզըտիմ, էս քաղաք մեկ էլ չի գան:

Դըրկիցներ լացին, ասին. - Փաշա՛, էտ ի՞նչ խոսք էր՝ դու մեզի ասեցիր:

Փաշեն ասաց. - Դըրկիցնե՛ր, կը խընթորեմ ձեզնե էլ հեվել-պակաս գրուցք չուզա՛: Իմ վերճի խոսքն էս ա:

Փաշեն էն գիշեր մընաց ուր տուն, խըլըսուն ինքն, ուր տղ-ղեն գիշերով էլան, ընգան ճամբախ: Թըխ փաշեն էրթա, շուռ գա, մենք տաննանք վըր Սերոփին ու ախչըկեն, տեսինք էտոնց վիճակն ի՞նչ կեղի:

Էկան ճամբխու խետ, Մարգրիտ ասաց. - Սերոփ, դու ընծի պըտի պախե՞ս քո քուրոչ պես, չուր իմ խեր ու ախպեր գան, ընծի գըտին: Չէ՛, օր չըպախես, ընծի էտտեղ սպանա՛, քնա՛, Աստըված քո պան հաճողա:

Սերոփն ասաց. - Մարգրիտ ջան, չէ՞ ես Սերոփ փայլեվան եմ, իմ խոսք մեկ ա, ես էն գախ քեզի ուխտ էրեցի, օր քեզի առա, էկա, էտ պանի համար դու սկի խոք չըտանես: Իմալ քո սիրտն ա, իմ սիրտն էլ քո սըրտի պես:

Շատ էկան, քիչ էկան, Աստըված գիտա, Սերոփն էկավ, ուր խոր քաղաք դուս էկավ:

Տեսան, օր Սերոփն էնդեխեն էկավ, գացին Պողոսին ու Պետրոսին ու Շամամին անգըջկլա տվին, ասին. - Ձեր աչք լո՛ւս, Սերոփն էկավ, ձի մի ու ախչիկ մի պերեց:

Հէլան, ուրախութենով գացին հառեճ, պերեցին, ուրախացան:

Շամամն ասաց. - Գոհանամ քյենե, Աստըված, չէ՞ իմ տղեն էկավ, մեկ էլ ես տեսա, ինչ կեղի, թ՛եղի:

Մընաց մեկ ամիս հետո:

Շամամ խարցուց Սերոփից, ասաց. - Սերոփ, դու պսակվե՞ր ես, չէ՞, քեզի պսակենք:

Ասաց. - Չէ՛, չէ՛, մարե՛, էտա պան մի ասեր մըկա, իմ մեչն ու ախչըկե պահման կա, եփ օր մեր պահման կատարավ, էն վախտին ես քեզի կասեմ:

Էլ մեր ձեն չէրաց:

Պողոս խարցուց Շամամից, ասաց. - Շամամ, Սերոփ պսակվե՞ր ա, թե՞ չըպսակվեր ա:

Ասաց. - Հուհո՛ւ, ձեն մը խաներ, էնոնց մեչ պահման կա, օր տղին ասենք, տղեն կը հեռոտի:

Էլ ձեն չէրեցին: Խինգ տարի էտ մեչն ընցավ, էն մեկ օր Մարգրիտ նըստուկ էր փանջարեն, տեսավ, օր էրկու մարթ ընցան:

Մարգրիտ ասաց. - Սերոփ, էն էրկու մարթն օր ընցան, կանչա՛, թ՛իգան դես:

Էկան տեսան, օր ուր խերն, ուր ախպերն են:

Ասաց. - Ախպե՛ր, արե՛ք դաս, արե՛ք դաս, տեսինք դու հու՞ստ եք:

Ասեցին. - Խանըմ, կղարիք ենք:

Ասաց. - Կղարի՛ք, կղարի՛ք, արե՛ք դաս ի: Նըստե՛ք, փըշու՛մ ռըհաթե՛ք, ձեզի խա՛ց կերեք, Աստըված ձեր պան հաճողա, գացե՛ք:

Էնոնք օր էկան, նըստան, Մարգրիտ կղանչեց, ասաց. - Սերոփ, արե՛, քյե պա՛մ ասեմ: Էս էրկու մարթ կը տեսի՞ս, էնա մեկ իմ խերն ա, էնա մեկն էլ իմ ախպերն ա:

Սերոփն ասաց. - Գոհանամ Աստըծուց, իշալլահ Ասպած պըտի մեր մուրազ կատարա:

Սերոփն ասաց. - Ախպըրտի՛ք, հրամեցե՛ք էրթանք, հեսօր դու իմ կղունախն եք: Խըլըսուն Ասպած ձեր պան հաճողա:

Տարավ օղեն, տեղ թալեց, հրամայեց էկան, էտոնց ոտներ խանին, լվացին, շորեր փոխեցին: Պետրոս էկավ, մըտավ օղեն, տեսավ, օր էրկու մարթ հօղեն նըստուկ են, շատ պատվով մարթ կերեվան:

Ասաց. - Սերոփ, դու էս մարթիկ կը ճանչընա՞ս:

Ասաց. - Չէ՛, ափո՛, ես տեսա, օր պատվով մարթ են, առա, էկա, էնոնց շորեր փոխեցի:

Պետրոսն ասաց. - Ապրի՛ս դու, որթի՛, միշտական պատվով մարթիք պեթք ա օր ճանչընաս:

Պետրոս թողեց, ընգավ դուս: Սերոփ կայնավ էտոնց հառեճ: Մարգրիտի սիրտ չըտարավ, քնաց հօղեն, ուր խոր տան շորեր խագավ, էկավ էտոնց մոտ:

Ախպերն աչքեց, ասաց. «Էսի կը մանի իմ քուր»: Մըչ ուր մըթքին ասաց:

Տարցավ խոր վերեն, ասաց. - Ափո՛, էսի կը մանի իմ քուր Մարգրիտ:

Խերն ասաց. - Ա՛խ, որթի՛, մեկ էլ էղե՞ր, օր ես էտ օր տեսի:

Տըղեն ասաց. - Ափո՛, էսա վերեվի շապիկ շիտակ աչքա՛, տես, մեր առած շապիկ չի՞, օր առանք:

Խերն աչքեց, տեսավ շապիկ, ասաց. - Լա՛ն, էտ կտորեն մեր դեխ կա, հորի՞ էտնց դեխ չըկա:

Էլ ախչըկե սիրտ չըղիմացավ, համա էկավ, լնլելին ընգավ ախպոր վիզնուվեր, ասաց. - Պա՛րո՛վ, ախպեր ջան, չէ՞ ես քո քուր Մարգրիտն եմ, է՛:

Էնտեղ ուրախացան ու փաթվան իրա՛րու վիզնուվեր, ինչպես օր էնոք ուրախացան ու փաթվան իրա՛րու վիզնուվեր, Աստըված ամենու գերին էլ մեկմեկին արժան էնա՛ ուրախանան իրա՛րու վերեն:

Էնտեղ Սերոփ շուտ քնաց, ուր խոր խնբար տվեց, ասաց. - Ափո՛, էն էրեկվան կղունխըներ օր էկան, Մարգրտե խերն, ախպերն եմ:

Համա Պետրոս էլավ, էկավ մոտըվներ, ասաց. - Պա՛րի եք էկեր եք, պա՛րի կղունխըներ:

Էնտեղ ուրախացան զըմեն ու էրկու օր, իրեք օր մացին ուրանց ուրախության մեչ:

Իրեք օրեն ետ Մարգրտե խեր Մարգրիտ կղանչեց ու խարցուց, ասաց. - Լա՛ն, քու գըլխու գալնածն ի՞նչ ա:

Ինչ օր էկեր էր Մարգրտե քըլոխ, մեկիկ-մեկիկ ուր խոր պատմեց:

Ասաց. - Ափո՛, ես էկեր եմ էստեղ, մինչև մըկա Սերոփն ընծի ուր քուրոչ պես պախեր ա: Դորուս դու գիտես: Ընծի կու տաս Սերոփին, դո՛ւ գիտես, կառիս կերթաս, դո՛ւ գիտիս: Էլ ես ուրիշ ասելիք չունիմ:

Ախչըկե խեր կղանչեց Սերոփ, գողտուկ Սերոփից խարցուց, ասաց. - Դու իմ ախչիկ Մարգրիտ կառի՞ս, թի՞ չէ՛ ես առիմ էրթամ: Ես խոսք մեր մեչ թը մընա, օր մարթ չիմանա:

Սերոփն էնտեղ պըռնեց Մարգրտե խոր ծեռ, պագեց, ասաց. - Օր դու հրաման էնես, ես կառիմ:

Մարգրտե խեր պըռնեց, Սերոփի էրես պագեց, ասաց. - Ախչիկ մ՛ ա, կղորբան էրեցի քեզի: Քնա՛, քո խեր Պետրոսին ասա՛, թը խըլըսուն էլի, քեզի պսակա:

Սերոփ ամոթու էլ չըքնաց խորն ասեր էր, քնաց ուր մորն ասաց. - Մարե՛, իմ խոր կասես, օր թը խըլըսուն Մարգրիտ պսակա վըր ընծի:

Շամամն էլավ ուրախելին, ծըծղալին քնաց Պետրոսի մոտ, ասաց. - Պետրո՛ս, քեզի անգըջկլե մի տամ:


Ասաց. - Կընի՛կ, ի՞նչ անգըջկըլա, Աստըված պա՛րին կատարա:


Ասաց. - Սերոփն էկավ մը ձի, ասաց՝ քնա՛ իմ խորն ասա, թը խըլըսուն Մարգրիտ պսակա վըր ընծի:

Համա էնտեղեն Պետրոս ուրախելին էլավ, քնաց, պըռնեց Սերոփի էրես պագեց: Խըլըսուն էլան, խարսընքի թաղարուք տեսան, յոթն օր խարսնիք էրեցին, Սերոփ պսակեցին:

Սերոփն ու Մարգրիտ խասան ուրանց մուրագին, դուք էլ խասիք ձեր մուրագին:

Աստըծուց իճավ իրեք խընծոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ՝ էլա քուլլի ջաղամաթին:





52. ԱՂՎԵՍՆ ՈՒ ԿՐԻԱՆ

Աղվեսն ու կիրիրեն մի կեղին: Երկու եզ աղվըսուն կեղի, երկու եզ էլ կիրիրուն կեղի:

Աղվես կերթա մըտ կըրիրեն:

Կասա. - Կիրիրա՛, արե՛ ես ու դու եղինք ախսընգեր, երթանք մեզի վար էնենք, մեր երեխեք չըմեռին անոթի:

Էլան, գացին ուրանց խարոր սարքեցին:

Աղվեսն ասաց. - Կիրիրա՛, ես խոփ ու լուծ մի չունիմ, խոփն ու լուծ մի դու՛ պեր, զընջիլն ու փոկն ու կանդրիվն ու գործեվորն ու լուծ մ'էլ ես կը պերեն:

Կիրիրեն ասաց. - Շնորակալ եմ, վուա՛լա՛, մեր խարոր սարքըվալ:

Գացին, ուրանց խարոր սագեցին, ասին. - Խըլըսուն պըտի էլինք, երթանք, վար էնինք Աստուծով:

Աղվեսն ասաց. - Կիրիրա՛, խարցուցել ամոթ չէ՞ խո, ես սերմ չունիմ: Դու սերմ ունի՞ս:

Կիրիրեն ասաց. - Վուա՛լա՛, ես էլ սերմ չունիմ:

Աղվեսն ասաց. - Ապա իմա՞լ կեղի, կիրիրա՛: Խըլըսուն էլի՛, գնա՛ սերմի:

Կիրիրեն խըլըսուն էլավ, ջըվալ մի առավ, երկու խաց տըրեց հինե, գնաց սերմի:

Կիրիրեն թըխ էրթա սերմի, մենք տանճանք վըր աղվըսուն:

Աղվեսն ասաց. - Բա՛լքի կիրիրեն հազընցավ, էրթամ դըրկիցներուց կոտ մի կորեկ առիմ, տանիմ ցանիմ, չուր կիրիրեն գա, էնոնց փոխ կու տամ:

Աղվես գնաց, դըրկիցներու մոտեն կոտ մի կորեկ պերեց, ցանեց: Վարեն պըռծան, դըռ կիրիրա չըկա: Մընաց, իրեք ամիսն օր թըմավ, կորեկ խասավ, աղվես գնաց, կորեկ քաղեց, պերեց մանդրեց, իստկեց, էրաց սեղծ: Տեսավ, օր կիրիրեն էկավ, առեր կոտ մի կորեկ ու էկավ:

Ասաց. - Պարի օր քյե, աղվեսն ախպեր:

Աղվեսն ասաց. - Նա պարով, նա խերով: Դու նափխեր-նափխըլամաթ էկար: Օր ես մընի քու ումուտով, ես տարի պըտի իմ ճըժեր անոթի մեռեն: Վալա՛, ես քեզի մեկ ճանգ կորեկ չըմ իտա, դոր կերթաս, գնա՛:

Աղվեսն ու կիրիրեն էնտեղ խասան իրար, զիրար ծեծեցին:

Գեղական ժողվան, էկան, ասին. - Ջանըմ, էտ ի՞նչ դավի ա, դուք հորի՞ զիրար կը ծեծեք:

Աղվեսն ասաց. - Ախպեր՛, դու էկե՛ք, տեսե՛ք, էտր օղյաթ, ես վարեր եմ, ցաներ եմ, քաղեր եմ, պերեր եմ, մանդրեր եմ, էրեր եմ սեղծ, մըկա էսի կասա՛ իլահի պըտի: Կիսեմ: Էսի Աստըծու տա՛տաստա՞ն ա:

Գեղական ասեցին. - Ջանըմ, հորի՞ զիրար կը ծեծեք, էլե՛ք, գացե՛ք հուքմաթ: Հուքմաթ վին օր խասուց, թըխ էղի էնոր:

Աղվեսն ու կիրիրեն էլան, գացին հուքմաթ: Ամեկ զուր դարդ կըղսա էրաց:

Հուքմաթ մեզեց, ասաց. «Ես ո՞ր մեկի մեխքն առիմ: Երկու եզ էնոր ա, երկու եզ էնոր ա, ես տատում աղվեսն էրեր ա: Էսա հախ կը խասի աղվըսուն: Ես էտոնց ի՞նչ պըտի ճամբախ տամ: Հանա կիրիրեն չըկանա թըռի, աղվես կը թըռի: Ասեմ գացեք, վոն օր թըռավ, սեղծն ընցավ, թ'էղի էնոր»:

Ասաց. - Արե՛ք, ձեզի ասեմ: Գացե՛ք, օր մեկըտ օր թըռաք սեղծն ընցաք, թ'էղի էնոր:

Աղվեսն համա ուրախալեն ասաց. - Կիրիրա՛, դ'էլի էրթանք: Էլ ի՞նչ կուզես իմ հորուց:

Էկան սեղծի մոտ:

Աղվես կիրիրուն ասաց. - Կիրիրա՛, դե թըռի՛:

Կիրիրեն ասաց. - Հանճին դու՛ թըռի, նոր ես կը թըռիմ:

Աղվես համա ուրախ-ուրախ էկավ, թըռավ: Թըռնելու պես չըվավ սեղծի օթալըխ:

Կիրիրեն ուրախցավ, ասաց. - Դիճի՛, արե՛, դորն իմն ա:

Աղվեսն օր իճնավ, կիրիրեն էնդեխեն խաղալեն էկավ, թըռավ ըզսեղճ, երկու շենք էլ ընցավ դեն: Համա աղվես ծեռ տըրեց ծոց, խեղճ, մեկ դեխ կայննավ:

Ասաց. - Կիրիրա՛, դու ընծի էլ պան չը՞ս իտա:

Ասաց. - Չէ՛, հորի՞ տամ: Դու վըր ընծի անաստվածութեն կեցիր, Աստըված կաբուլ չերաց: Քեզնե առավ, տվեց ընծի: Դոր կերթաս, գնա՛:

Աղվես փոշման ետ տանրցավ: Աղվես շուն էր, իրեք խատ կորեկ առավ, տարավ, թալեց պարկի մեջ, պարկ փչեց, ուռավ ու ըզկահիմ պերան կապեց, շալկեց, գնաց ջանդաց:

Ասաց. - Կը տանիմ, թալիմ ջանդաց, իլավա կենեմ վըր ճանդըցալընին, կառիմ պարկ մի ալուր, գամ, իմ ճըժերն ուտեն:

Գնաց ջանդի տուռ, կղանչեց ճանդըցալընին:

Ասաց. - Ճանդըցալան, արե՛, էն իմ պարկ կորեկ աղա: Ես կերթամ, իմ ճըժեր անոթի են:

Խեղճ ճանդըցալան էլ միամիտ ասաց. - Դի՛ր դատի:

Աղվես տըրեց դան, գնաց: Ուրիշի խատ կեր վըր ջանդի, էնի օր իճնավ, ճանդըցալան ասաց. «Էլիմ, աղվեսու պարկ կորեկն աղամ: Խեղճ ա աղվես»:

Ճանդըցալան էլավ, պարկ պերեց, պարկի պերան օր արցըկեց, պարկի միջեն իրեք խատ կորեկ թըռան, մեկ գարկեց, ճանդըցալընի աչք քոռցուց, մեկ գարկեց, ճանդի քար կոտրեց, մեկն էլ ճանդի բոտ պատռեց:

Ճանդըցալան ծեռ տրեց ծոց, շիվարավ, կայննավ: Քիչ մի մընաց, տեսավ, օր աղվեսն էկավ:

Ասաց. - Ճանդըցալան, իմ կորեկն աղցե՞ր ես:

Ասաց. - Աղվե՛ս, Ասպած քո տուն ավիրա՛, էս ի՞նչ օղյաթ էր՝ դու խաղցիր իմ գլոխ:

- Հա՛ա, - ասաց, - ճանդըցալան, մախսուս կենես, օր իմ պարկ կորեկն ուտես էրթա՞:

Ճանդըցալան ինչ էրաց, ճար չէղավ խըտ աղվեսուն:

Էլավ, ուր հախ լըցեց աղվեսու պարկ, ասաց. - Աղվե՛ս, դե գնա՛: Ասպած քո պան չաճողա: Իմալ դու գիմ տուն ավիրեցիր:

Ճանդըցալան թըխ մընա մըջ ուր հալին, մենք տաննանք վըր աղվեսուն:

Աղվես շալկեց պարկ ալուր, գնաց գեղ մի: Գնաց հիրիկուն տու՛ մի:

Ասաց. - Եսօր ընծի տեղ կուտա՞ք քընիմ, խըլըսուն էլիմ, էրթամ:

Ասին. - Աղվե՛ս, արի՛, պառկի՛ դաս, խըլըսուն էլի՛, գնա՛:

Աղվեսն ասաց. - Ձեզի պա՛մի կասեն:

Ասին. - Աղվե՛ս, ի՞նչ կասես:

Ասաց. - Ձեզի դիկ մի կա, մուղա՛թ կեցեք, չիգա իմ պարկ պատռա, իմ ալուր թափա: Օր թափեց, խըլըսուն կառիմ ձեր դիկ, կերթամ:

Ասեցին. - Աղվե՛ս, Աստըված քո տուն ավիրա՛, դիկ թավեն, թառն ա, քո ալուր տուն ա: Դիկն հորի՞ պըտի գա, քո պարկ պատռա:

Էտոնք օր քընան, աղվեսն էլավ, գնաց, դիկ թառեն պերեց, ըզպարկ պատռեց, ալուր սերսուփ լըցեց դըկու վերեն, տարավ դիկ տրեց ուր տեղ:

Խըլըսուն էլավ, ասաց. - Իմ պարկ պերե՛ք, էս էրթամ:

Քանցին, աչքեցին, օր պարկ պոռթուկ, ալուր թափուկ:

Քանցին, թառն աչքեցին, օր դիկ ալրոտ, թառն ա:

Ասին. - Աստված աղվեսու տուն ավիրա, էս աղվես իմաստո՞ւն էր:

Աղվեսն էր էլավ, առավ ըզդիկն ու գնաց: Գնաց մեկ ուրիշ գեղ մի, գնաց էտ գեղ, տու՛մի մտավ:

Դու մ՛ասի, թե էտոնց էլ սերսուփ քա՛հել ձի մի կա:

Աղվեսն ասաց. - Մուղա՛թ կեցեք, օր ձեր ձին չըզանի, իմ դիկ խատու: Օր իմ դիկ խատուց, ձեր ձին կը տանիմ իմ դըկու տեղ:

Էտոնք ծըծղացին վըր աղվեսուն:

Ասին. - Աղվե՛ս, Աստըված քու տուն ավիրա՛, ձին թավեն, քո դիկ դաս, ձին թավից կու գա՞, քո դիկ խատու՞:

Աղվեսն ասաց. - Ես ձեզի կասիմ, դու գիտեք:

Էտոնք օր քընան, աղվեսն էլավ, դիկ տրեց քարի տակ, սերսուփ ճընջըխեց, տարավ, թալեց ձիու օտներու մեջ: Էկավ, ուր տեղ քնավ:

Աղվես խըլըսուն էլավ ասաց. - Իմ դիկ պերե՛ք, էս էրթամ:

Դես թըռան, դեն թըռան, դիկ չըկա: Գանցին տեսան, օր աղվես աչքեց, տեսավ, օր դիկ ձիու օտներու մեջն ա:

Ասաց. - Ես հիրիկուն ձեզի ասի, ձեր ձին իմ դիկ կը խատուցա, դուք չավատեք:

Աղվես համա էլավ, գնաց, ձին հարցրկեց, թռաւ ձիու մի-
ծաց, քշեց գնաց, գնաց մինչև հիրիկուն ճամբան, մեկ գեղի
ռաստ էկավ, տեսավ, օր դիու ու գուռնեն կը գանին, կը խաղան:

Աղվես դեմ քշեց, գնաց խարսընքի տուռ կայնավ:

Ասաց. - Պարև՛ ձեզի, ախարտիք:

Ասին. - Պարի՛, հագան՛ր պարի, աղվես՛ս ախպեր:

Էն մեկ մարթն ասաց. - Տըղա՛, վագա՛, աղվըսու ձին պըռ-
նա՛:

Գնաց, աղվըսու ձին պըռնեց, աղվեսն իծավ, տարան, ձին
կապեցին թավլեն, ձիու դարման տըվին, աղվըսուն էլ խաց պե-
րին, կերավ: Էտոնք էլան, քացին ուրանց խարսընքի խետ:

Աղվեսն ասաց. - Ես խարսի կեսերը վո՞ն ա:

Ասին. - Աղվես՛ս, հորի՞:

Ասաց. - Ես պըտի պան ասեմ էնոր:

Խարսի կեսերն էկավ, ասաց. - Աղվես՛ս, ի՞նչ կասես:

Ասաց. - Քու խարսին մուղաթ կեցի, քո խարսին ծամ չըկա:
Գիշեր չըգա իմ ձիու պոչ կըտրա, տանի, էնա ուրին ծամ: Օր կըտ-
րեց, խըլըսուն կառիմ քո խարսն, էրթամ իմ ձիու տեղ:

Խարսի կեսերը ծըծղաց վըր աղվըսուն, ասաց. - Խա՛,
աղվես՛ս, էսա մարթիք հըմեն թըխ շըհադ էղնին, օր իմ խարս քո
ձիու պոչ կըտրեց, տարավ, կապեց ուր ծամեր, խըլըսուն իմ
խարս տամ քեզի:

Աղվես գնաց, ռըհաթ ուր տեղ նըստավ: Էտոնք օր ընգան
խարսընքի կալարալըխի մեչ, էտ պան էլ ո՞ր կը մտածա:

Աղվես գնաց, տեսավ, օր խարս քներ ա: Ուշիկ գնաց ձիու
պոչ կըտրեց, պերեց, խանգորցեց խարսի ծամեր ու գնաց ուր
տեղ պառկավ:

Խըլըսուն շուտ էլավ, ասաց. - Իմ ձին պերեք, ես խեծիմ
էրթամ, ես հագընցա:

Գացին, ձին պերեցին, օր ձիու պոչ կըտրուկ ա:

Աղվեսն ասաց. - Չէ՞ ես հիրիկուն ձեզի ասեցի, ձեր խարս
իմ ձիու պոչ կը կըտրա:

Գացին տեսան, օր ձիու պոչ խանգուրցուկ ա խարսի ծա-
մեր: Գացին, խարսի կեսերին խաբար տվեցին: Խարսի կեսերն
էկավ, զըխարսի ծեռ պըռնեց, տարավ, տվեց աղվըսուն:

Ասաց. - Աղվես՛ս, դե ա՛ռ, գընա՛:

Աղվեսն առավ զխարսն ու գնաց: Գնաց մեկ սարի մի գըլոխ
տեսավ, օր ճուչ մի օխչար կեր էնտեղ:

Ասաց. - Վուլա՛, անթթեց ենք, էրթանք խովվու մոտ, կոտ մի
կաթ առինք, ուտինք, էլինք, էրթանք:

Դեմ էրեցին խովվին, գացին:

Ասին. - Խովի՛վ, պարի՛ լուս քեզի:

Ասաց. - Պարի՛, հագան՛ր պարի, աղվես՛ս ախպեր:

Ասաց. - Խովի՛վ, կանա՞ս կոտ մի կաթ տաս մեզի:

Խովիվն ասաց. - Վըր իմ աչից, աղվես՛ս ախպեր: Կա՛թ էլ
կուտամ, խա՛ց էլ կուտամ:

Պերեց, կոտ մի կաթ կըթեց, խաց մ՛ էլ տվեց, կերան:

Ասաց. - Աղվես՛ս ախպեր, կուշտ կերա՞ր: Թե կուշտ չըկերար,
կոտ մ՛ էլ կըթեմ:

Աղվեսն ասաց. - Ես կուշտ կերա, կուզես քիչ մ՛ էլ կըթա՛, թը
խարս կուշտ ուտա:

Խովիվն ասաց. - Աղվես՛ս, գնա՛. զենա օխչար տարցո՛ւ գա՛,
չուր ես կըթեմ:

Աղվեսն էր, էլավ գնաց դըխ օխչար, օր օխչար տարցուցեր,
չըներ զաղվես տեսան: Առան աղվըսու հետեվ: Խովիվ ուրախ-
ցավ: Դա՛ գիդի, հա՛ գիդի, կանչեց, զաղվես էնտեղ պըռնին,
չորցուցին:

Խարս մնաց խովվուն: Խովիվն էլ ազաթ էր:

Դիրիկուն էկավ, բոռաց, ասաց. - Էլ ես խըլըսուն չըմ էրթար
ձեր օխչար, չըմ էրթար ձեր օխչար:

Ասին. - Ջա՛նըմ, տեսեք խովվուն ի՞նչ էղավ:

Գացին մըտ խովիվ, ասին. - Խովի՛վ, դու խըլըսուն հորի՞
չըս էրթա օխչար:

Ասաց. - Վուլա՛լա՛, ես կարթըվեր եմ: Էլ ես չըմ էրթա օխչար:
Ահա՛ն, թե չըք ավտա, գո իմ կընիկն էլ ա խըտ ընծի յա:

Խովիվն ըզկընիկ առավ, էկավ տուն: Խովիվն ու կընիկ խա-
սան ուրանց մուրագին: Դուք էլ խասիք ձեր մուրագին:

Աստուծ իճավ իրեք խընձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լըսողին,
մեկէլա՛՝ քուլլի ջնդանաթին:



53. ՄԱՂԴԵՍԻ ԱՂՎԵՍ

Կեղի, չեղի, աղվես մի կեղի:

Աղվես ետ մեկ օր շատ կանոթնա, կելի, կերթա քաղաք, կասա. «Բալքի պա մի գտիմ, ուտեմ»: Կերթա, մըտի ներկըտուն, օր պան կը ներկեն: Կը տեսի, օր մատ մի խաց կա էտտեղ: Կելի, օր թա խացն առի, ուտա: Պերան օր թա կը թալա խաց, կը պըռձի, ընգի ներկի կարսի մեջ: Կաժ մի թել կընգի վիզ:

Աղվես էնտեղ կը կանչնա ու կելի դուս:

Գել կը տեսի, օր աղվեսն էնդեխեն էկավ, կանանչ ա ու պա մի կա վիզ:

Կասա. - Աղվես ախպեր, դո՞ր կերթաս:

Կասա. - Դու քո՞ն ես, ես աղվեսն եմ, դու չըտեսի՞ս, օր ես հաջի եմ, կերթամ հաջ:

Կասա. - Մեղա՛ Աստղծու, հաջի՛ ախպեր, ես չըգիտի, օր տու հաջի յիր:

Կասա. - Ընծի էլ չըս տանի՞ խըտ քեզի հաջ:

Կասա. - Օր մեխք չունիս, արի՛ տանիմ:

Կասա. - Ես ի՞նչ մեխք ունիմ: Անասու՛մ եմ՝ խըտ իմ հալին:

Ետոնք խըտ իրարի կերթան ճամբախ, գել կը տեսի, օր լապըստրակ մ՛ էնդեխեն էկավ:

Կասա. - Աղվես ախպեր, դո՞ր կերթաս:

Գել կը տաննա վերեն, լապըստըրկուն կասա. - Տո շա՛ն օրտի, չըտեսի՞ս, օր էսի հաջի յա:

Կասա. - Մեղա՛ Աստղծու, ես ի՞նչ գիտի: Դու դո՞ր կերթաք:

Գել կասա. - Մենք կերթանք հաջ, կեղինք հաջի:

Լապըստրակ գելուն կասա. - Կը խընթրեմ, ասա՛, տես ընծի էլ չըտանի՞ ուր խետ:

Գել կը տաննա վըր աղվըսուն, կասա. - Հաջի՛ ախպեր, լապըստրակ կասա, ընծի էլ չըտանի՞ ուր խետ հաջ:

Կասա. - Օր թե մեխք չունի, թ՛ իգա՛ տանիմ:

Լապըստրակ կասա. - Ես անասու՛մ եմ՝ խըտ իմ հալին, ի՞նչ մեխք ունիմ:

Աղվես կասա. - Արի՛ երթանք:

Կերթան քիչ մի ճամբախ, տեսին, օր դիկ մի էնդեխեն էկավ:

Դիկ կասա. - Աղվես ախպեր, դո՞ր կերթաս:

Լապըստրակ կը տաննա վերեն, կասա. - Քո ձեն կըտրա՛, էսի հաջի յա, կերթա հաջ:

Դիկ կասա. - Մեղա՛ Աստղծու: Ես չըգիտի: Ասա՛, տես, ընծի էլ չըտանի՞ խըտ ուրին:

Լապըստրակ կը տաննա վըր աղվըսուն, կասա. - Հաջի՛ ախպեր, դիկ կասա՛ ընծի էլ չըտանի՞ խըտ ուրին:

Կասա. - Օր մեխք չունի, թ՛ իգա՛ կը տանիմ:

Դիկ կասա. - Ես ի՞նչ մեխք ունիմ, անասու՛մ եմ՝ խըտ իմ հալին:

Էնդեխեն կընգին ճամբախ, կերթան, կը տեսին, օր անծեղն էնդեխն էկավ:

Կասա. - Աղվես ախպեր, դո՞ր կերթաս:

Դիկ կը տաննա վերեն, կասա. - Քոփա՛կ, քո ձեն կըտրա՛, էսի հաջի յա, կերթա հաջ:

Անծեղ դըկուն կասա. - Կը խընթրեմ՝ հաջուն ասա՛, տես, ընծի յէլ չըտանի՞ խըտ ուրին:

Դիկ կը տաննա, կասա. - Հաջի՛ ախպեր, անծեղ կասա, ընծի էլ չըտանի՞ խըտ ուրին հաջ:

Կասա. - Թե օր մեխք չունի:

Դիկ կը տաննա վըր անծղուն, կասա. - Հաջին կասա, թե մեխք չունի, թ՛իգա՛ տանիմ:

Անծեղ կասա. - Ես անասու՛մ եմ՝ խըտ իմ հալին, ես ի՞նչ մեխք ունիմ:

Աղվես կասա. - Օր մեխք չունիս, արի՛, երթանք:

Կերթան քիչ մի դեն, կը տեսին, օր կղոսաք էնդեխեն էկավ:

Ասաց. - Աղվեսն ախպեր, դո՞ր կերթաս:

Անձեղ տարցավ վերեն, - Տո քո ձեն կըտրի՞, - ասաց, - դու քո՞ն ես, էսի հաջի յա: Դու չըս տեսի՞, էտոր շորեր հըմեն կանանչ, թըզբեղ վիզ:

Կղոսաբն ասաց անձղուն. - Դու դո՞ր կերթաք:

Անձեղն ասաց. - Մենք կերթանք հաջ:

Կղոսաբն ասաց. - Հաջի ախպորն ասա՛, ընձի էլ չըտանի՞ ուր խետ:

Անձեղ տարցավ վըր աղվըսուն, ասաց. - Հաջի՛ ախպեր, ընձի էլ չըտանի՞ խըտ ուրին:

Աղվեսն ասաց. - Թի օր մեխք չունի, կը տանիմ:

Անձեղ տարցավ վըր կղոսաբն ասաց. - Կղոսաբ, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

Անձեղն ասաց. - Օր մեխք չունիս, արի՛ երթանք:

Էն էլ էկավ, ընգավ խետըվներ:

Քիչ մի տեղ քացին, տեսան, օր բաշոկն էկավ, ասաց. - Աղվեսն, դո՞ր կերթաս:

Կղոսաբ տարցավ, ասաց. - Քո ձեն կըտրա՛, քոփա՛կ, էսի հաջի յա: Դու չըս տեսի՞ էտոր կանանչ թըզբեղն օր վիզն ա:

Բաշոկն ասաց. - Մեղա՛ հԱստըծու, ես ի՞նչ գիտի, օր հաջի էր, - ասաց. - դու դո՞ր կերթաք:

Կղոսաբն ասաց. - Կերթանք հաջ:

Ասաց. - Հաջի ախպորն ասա՛, ընձի էլ չըտանի՞ ուր խետ:

Կղոսաբ տարցավ վըր աղվըսուն, ասաց. - Հաջ աղա, բաշոկ կասա՛ ընձի էլ չըտանի՞ ուր խետ:

Աղվեսն ասաց. - Օր մեխք չունի, կը տանիմ, հորի՞ չըտանիմ:

Կղոսաբ բաշոկին ասաց. - Դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

- Օր մեխք չունիս, արի՛ երթանք:

Էն էլ էկավ ընգավ խետըվներ:

Տեսան օր սարեկն էնդեխեն էկավ, ասաց. - Աղվեսն ախպեր, դո՞ր կերթաս:

Բաշոկ տարցավ վրեն, - Քու ձեն կըտրա՛, - ասաց, - անամո՞թ, էսի հաջի յա: Ընգեր մեր հառեճ, մեզի կը տանի հաջ:

Սարեկն ասաց. - Ասա՛, տես՛, ընձի էլ չըտանի՞ խըտ ուրին: Բաշոկն ասաց աղվըսուն. - Հաջի՛ ախպեր, սարեկն էկե, կասա՛ ընձի էլ չըտանի՞ խըտ ուրին:

Ասաց. - Օր մեխք չունի, կը տանիմ:

Բաշոկ տարցավ վըր սարեկուն, ասաց. - Սարեկ, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

- Օր մեխք չունիս, արի՛ երթանք:

Սարեկն էլ ընգավ խետըվներ գնաց: Մի քիչ գացին, տեսան, օր կուրկուր էնդեխեն էկավ:

Ասաց. - Աղվեսն ախպեր, դո՞ր կերթաս:

Սարեկ տարցավ վերեն, ասաց. - Տո քու ձեն կըտրա՛, սե՛վ: Դու չըս տեսի՞, օր էսի հաջի յա, էտոր շորեր՝ զըմեն կանանչ, թըզբեղ վիզ: Շորերուց ճանչըցի՛, օր էսի հաջի յա:

Ասաց. - Մեղա՛ հԱստըծու, ես ի՞նչ գիտի:

Ասաց. - Դու դո՞ր կերթաք:

Սարեկն ասաց. - Կերթանք հաջ:

Կուրկուրն ասաց. - Հաջուն ասա՛, տես՛, ընձի էլ չըտանի՞ խըտ ուրին:

Սարեկն ասաց աղվըսուն. - Հաջի՛, կուրկուր կասա՛ ընձի էլ չըտանի՞ խըտ ուրին:

Կասա. - Օր մեխք չունի, թըխ իզա, երթանք:

Սարեկն ասաց. - Կուրկուր, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ի՞նչ մեխք ունիմ:

- Օր մեխք չունիս, արի՛, երթանք:

Քիչ մ՛ էլ ճամբախ գացին, լակլակ տեսավ, օր քոմ մի կընցին:

Ասաց. - Երթամ տեսիմ, էտոնք վո՞ն են:

Էկավ տեսավ, օր աղվես ընգեր խավքերու հառեճ, կերթան:

Ասաց. - Աղվեսն ախպեր, դո՞ր կերթաս:

Շուտ կուրկուր տարցավ վերեն, ասաց. - Կըտրա՛ քո ձեն, հերկեն չոքեր, օղորթ մ՛ ա, օր կասեն՝ հերկեն մարթու խելք չոքերն ա: Դու չըտեսի՞ս, օր էսի հաջի յա, կանանչ թըզբեղն էլ վիզն ա:

Էլակլակն ասաց. - Մեղա՛ հԱստըծու, կուրկուր, ես չըգիտի: Դու դո՞ր կերթաք:

Էլակլակն ասաց. - Մեղա՛ հԱստըծու, կուրկուր, ես չըգիտի: Դու դո՞ր կերթաք:

Ասաց. - Չըս տեսի՞ մենք կերթանք հաջ:
 Ասաց. - Հանջուն ասա՛, տես՛ ընծի էլ չըտանի՞ խըտ ձեզի:
 Կուրկուրն ասաց աղվըսուն. - Հանջի՛ ախպեր, լակլակ կա-
 սա՛ ընծի էլ չըտանի՞ խըտ ուրիմ:
 Ասաց. - Օր մեխք չունի, կը տանիմ, հորի՞ չըմ տանի:
 Կուրկուրն ասաց լակլըկուն. - Դու մեխք չունի՞ս:
 Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:
 - Օր մեխք չունիս, արի՛ երթանք:
 Լակլակն էլ ընգավ խետըվներ, գնաց: Քիչ մի տեղ գնացին,
 տեսան, օր կըռունգն էնդեխեն էկավ:
 Ասաց. - Աղվես ախպեր, դո՞ր կերթաս:
 Լակլակ շուտ տանրցավ վըրեն, ասաց. - Կըռունգ, քու ձեն
 կըտրա՛, դու չըս տեսի՞, օր էսի հանջի յա: էսի մեզի կը տանի հաջ:
 Կըռունգն ասաց լակլըկուն. - Հանջուն ասա՛, կը խընթրեն,
 ընծի էլ չըտանի՞ ձեր խետ:
 Լակլակն ասաց. - Հանջի՛ ախպեր, կըռունգն էկեր, կասա՛ ըն-
 ձի էլ չըտանի՞ ուր խետ:
 Աղվեսն ասաց. - Լակլակ, խարցո՛ւ, թե մեխք չունի, կը
 տանիմ, հորի՞ չըմ տանի:
 Լակլակ խարցուց, ասաց. - Կըռունգ, մեխք չունի՞ս:
 Ասաց. - Ես ի՞նչ մեխք ունիմ:
 - Օր մեխք չունիս, արի՛ երթանք:
 Քիչ մի տեղ էլ գանցին, տեսան, օր պուպու մի ճամբխու
 վըրեն կայնուկ է: Պուպուն տեսավ, օր քոմ մի խավք էնդեխեն
 էկան, աղվեսն ընգեր հանձեվներ, կուգա՛: Պուպուն մըջ ուր
 մըթթին ասաց. «Վոլա՛, աղվես էսոնց գըլոխ օղյաթ մի պըտի
 խաղա: Ես էլ պըտի երթամ խըտ էսոնց, տեսինք՝ աղվես ի՞նչ
 օղյաթ կը խաղա էսոնց գըլոխ»:
 Գանցին, խասան պուպուի մոտ, պուպուն ասաց. - Աղվես
 ախպեր, պարո՛վ: Դո՞ր կերթաք:
 Կըռունգ շուտ խասավ, ասաց. - Քո ձեն կըտրա՛, հանջի յա,
 մեզի տանի հաջ:
 Պուպուն ասաց. - Հանջի աղից խարցո՛ւ, տես՛ ընծի էլ չը-
 տանի՞ խըտ ձեզի:
 Կըռունգ ասաց աղվըսուն. - Հանջի՛ ախպեր, պուպուն կասա՛
 ընծի էլ չըտանի՞ խըտ ուրիմ:

Աղվեսն ասաց. - Խարցո՛ւ, օր մեխք չունի, կը տանիմ, հորի՞
 չըմ տանի:
 Ասաց. - Պուպո՛ւ, դու մեխք չունի՞ս:
 Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ, անասու՛մ եմ՝ խըտ իմ
 հալին:
 - Օր մեխք չունիս, արի՛, երթանք:
 Եղավ իրիկուն: Գանցին տեղ մի նըստան, համա աղվըսուն
 ախ գելուց շատ կա: Մըջ ուր մըթթին ասաց. «Ես իմա՞լ օղյաթ մի
 խաղամ գելու գըլոխ, օր գելուց պըռծիմ: Կեցի, գելու օղյաթ
 կըլլա յա: Ես մըկա գելու գըլոխ կը կուրիսիմ»:
 Ասաց. - Գե՛լ ախպեր, էսա անասուններ մեռան անոթի:
 էսոնց ճոչ ես եմ, ընծնե ցածր դու ես: Էլի՛ երթանք, բալքի օխչար
 մի պերենք, էսոնք ուտեն:
 Գելն ասաց. - Հրամեցի՛, հանջի՛ ախպեր: Քո խոսքն ա,
 անոթի կեղի՞:
 Աղվեսն էլավ, ընգավ գելու հանեճ, գանցին տանի մի վրեն
 կայնան, տեսան, օր թա՛ ճուղ մի օխչար մըջ ձորուն ա:
 Աղվեսն ասաց. - Գե՛լ ախպեր, դու կայնի՛ դատ ի, ես գող-
 տուկ կերթամ, էնոնք ընծի չըտեսին, ես մանդր եմ: Տեսինք խովիվ
 ո՞ր տեղն ա նըստուկ, շըներ ո՞ր տեղն են նըստուկ, օր չերթաս,
 ընգիս շըներու մեջ, քեզի պըռնեն:
 Աղվես գնաց, տեսավ, օր խովիվ նըստեր, չորս խատ էլ շուն
 խըտ կըշտին են փըլի մի տակ:
 Էկավ, ասաց. - Գե՛լ, դու գիտե՞ս դորվեր երթաս:
 Գելն ասաց. - Հանջի՛, ես ի՞նչ գիտիմ: Դու գանցիր, տեսար:
 Ընծի ճամբախ ցո՛ւյց տուր, ես երթամ:
 Ասաց. - Էնա փուլ կը տեսի՞ս:
 Ասաց. - Խա՛, կը տեսիմ:
 Ասաց. - Էն փըլի հետեվ թուխ մաքյի նըստուկ ա: Կերթաս,
 հուշիկ թուխ մաքյին կը պըռնես, կառիս, կու գաս: Խովիվ քընուկ
 ա, շուն էլ չըկա խետ: Սկի մը՝ վախենա:
 Գելն էլավ, գնաց, գնաց փըլի հետեվ, տեսավ, օր սեվ մի,
 իմալ օր աղվես կասա, փըլի էնդեխ նըստուկ ա: Դու մ՛ ասի, թ՛ էղի
 սեվ շուն ա: Գնաց, հուշիկ պերան թալեց հինե, թալելու պես շուն
 բռռաց, օր թա բռռաց, մյուս շըներ թափան վըրեն, էնտեղ

պըռնին, ըզգել խեղտեցին: Աղվես դռ չավտա, թե գել խեղտած ան: Անգաջ էրաց, տեսավ, օր խովիվ գարկեց գելու գըլխուն:

- Գիշերո՞վ կու գաս օխչար գողնաս: Դողոն էտըմլա քեզի կը խեղտա, հա՛ ա՛:

Էնդէխ աղվես ուրախելեն էկավ, տեսավ, օր խավքեր հըմեն նըստած ան:

Ասին. - Զաջի՛ ախպեր, հո՞ւր ա գել:

Ասաց. - Ասպած գելու տուն ավիրա՛, գել մեղավոր, կասեր, կերթամ հաջ: Գել զուր պատիճ գտա՛վ: Շըներ պըռնին, խեղտին: Դե՛, հրամեցե՛ք էրթանք, շուտով կը խասինք մեր տուն հեսօր:

Աղվես խավքերն առավ, էկավ ուր բուն, կայնավ տըռան հանե՛ծ:

Ասաց. - Զրամեցե՛ք, ախպըրտի՛ք, հրամեցե՛ք վեր:

Խավքերն ասեցին. - Զաջի ախպեր, դու հրամեցի՛ նըստի՛, նոր մենք նըստինք:

Աղվեսն ասաց. - Զեսօր էսի իմ տուն ա, դու ձեզի նըստե՛ք, ռհաթե՛ք, եփ օր գաջինք ճամբախ՝ խըլղի մեչ, էն վախտին զձեզի տեսիմ, ընծի պատվե՛ք:

Խավքեր զըմեն գաջին, լըցվան աղվըսու բընան մեչ, աղվես տուռն առավ վըրեներ, նոր սիռտ ռհաթավ, ռհաթ նըստավ ուրին:

Ասաց. - Ախպըրտի՛ք, բեխք ձեզի ռհաթե՛ք, ըսկի կասաֆաթ չենք: Ես էլ փըշու՛մ քընիմ ու ռհաթիմ, ետո կէլնինք, կը զրուցենք:

Խավքեր ռհաթան ուրանց, աղվեսն էլ ռհաթավ, էրկու ռհաթեն վերձ ասաց. - Ախպըրտի՛ք, էլեք վե՛ր, էլեք վե՛ր: Աղո՞թք էրեք, Աստըված կանչեք, բալքիմ ձեր մեխքերուն թողութեն էղի: Մենք հաջ կերթանք, մեղավոր մարթուն թողութեն չըկա: Մեղավոր մարթ կը պատըճվի:

Խեղձ անասուններ էլան, միամիտ ստտով աղոթք էրին ու Աստըված կղանչին: Է՛, ի՞նչ գիտին, օր աղվըսի միթք շուն ա:

Աղվեսն ասաց. - Ախպըրտի՛ք, ձեր աղոթքն էրի՞ք:

Ասին. - Խա՛, հաջի՛ ախպեր, մեր աղոթքն էրեցինք:

Աղվեսն ասաց. - Ախպըրտի՛ք, նըստեք ձեզի պատմութե՛մ էնեն:

Ասին. - Այո՛, հաջի՛ ախպեր, էրա՛:

Ասաց. - Մենք հեռու ճամբախ կերթանք: Իրարու մուղաթ կենաք, հեսօր մենք կերթանք Աստըծու ճամբախ խետ, ես մըտա ձեր մեղաց տակ, ձեզի առա, էկա, կը խընթեմ ձեզնե, օր գաթ մեկիկ-մեկիկ ձեր մեխքեր ընծի պատմե՛ք, օր ես վաղ սեվերես չեղիմ:

Բուլոըն էլ մեկ անգամ ասեցին. - Զաջի՛ ախպեր, մենք ի՞նչ մեխք ունինք: Մենք ամենքս էլ անասուն ենք:

Ասաց. - Ախպըրտի՛ք, դու Աստըծու հանե՛ծ վկա կեղի՞ք, օր վոն օր մեխք ունեցավ, զէն ես սպանեմ ու բուլոըն էլ չերթան, մեղավորնան:

Ասին. - Զա՛, հաջի՛ ախպեր, մենք վկա ենք:

Էնտեղ խորամանգ պուպուն ասաց. «Վուլա՛, աղվես էտնց գըլոխ օղյաթ մի պիտի խաղա: Տեսինք ես իմա՞լ պըտի ազատվիմ էտր ծեռնեն»:

Ասաց. - Լապըստրակ, քարի՛ վաստակ, արի՛ տեսինք, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Զաջի՛ ախպեր, ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Օր դու մեխք ունեցար, քո վիզ քաշի՞մ:

Ասաց. - Խա՛, օր մեխք ունեցա, իմ վիզ քաշա:

Ասաց. - Լապըստրակ, Աստըված ամենի օտ-ծեռ բար ա ըստեղծեր, հորի՞ քու հետին օտքեր հերկեն ա ու քու հանձին օտներ կարձ ա: Ախպըրտի՛ք, էսի մեխք չէ՞ր էտր:

Ասին. - Խա՛ա՛, մեխք ա:

Ասաց. - Էսա քեզի մեկ մեխք: Լապըստրակ, խըլղ կերթան տաս-քսան կուռուշ կուտան, թաժա ֆիղա մի կը պերին, տընգեն ուրանց բաղի մեչ: Դու կերթաս, քոքեն կը կըռծես, չուր գըլոխ, կը չորնա: Մարթու փարեն կերթա, կուրիսի: Ախպըրտի՛ք, էսի մեխք չէ՞:

Ասին. - Խա՛ա՛, մեխք ա:

Ասաց. - Լապըստրակ, արի՛ ես քո մեղաց թողութեն էնեն, օր քո մեխք ընծնե չուզեն:

Պըռնեց, հուշիկ ըզլապըստըրկու վիզ քաշեց, թալեց դանի: Խավքերու չոքերն էլավ դիդ:

Ասին. - Վա՛խ, վա՛խ, էսա անաստված ձեզի դուրբարա էրաց, պըտի զմեր տուն ավիրա էսի:

Ասաց. - Դի՛կ ախպեր, արի՛ էստեղ, քո մեխքեր ընծի խոստովանի՛, օր վնդ էրթանք հնջ, քու մեխք ընծնե չուզեն: Ես քո մեղաց թողութեն էնեն:

Խեղճ դիկ էլ ճար չունի:

Էկավ, հուշիկ նըստավ հանեճ, ասաց. - Դնջի՛ ախպեր, ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Ախպըրտի՛ք, օր էտոր մեխք գտա՛, դու իրավունք կուտա՞ք, օր էտոր վիզն էլ լապըստորկու պես քնշեն:

Խեղճ անասուններ ասին. - Դնջի՛, դու գիտես:

Աղվեսն ասաց. - Լսե՛ք, օր էտոր մեխք տամ էտոր էրես, - ասաց, - դի՛կ, Աստղված ախշըրքի մեչ ամեկ մարթուն մեկ կընիկ իրավունք տվեր ա: Դու մեկ մարթ ես, ի՞նչ իրավունք ունիս, օր քառսուն կընիկ պախես: Եսի մեխք չէ՞ր քեզի: Եսա քեզի մեկ մեխք: Դու կեսգիշերին կելիս, խըլղ չըս թողե տանարին, քընին, կես կելին, կերթան, բըթու մեչ կը խեղտին, կես կերթան կը թալըղվին: Եսա քեզի մեխք չէ՞: Եսա քեզի էրկո՞ւ մեխք: Տըղե մի թանձա կը կարգվի, դըռ չէրթա ուր տեղ պառկի, դու շուտ կելիս, կալաբալըխ կը տընիս: Անաստված, դու գիտարս ու փեսե՞ն էլ իրարուց կենես: Եսա քեզի մեխք չէ՞ր: Քո մեխքի հնպով, էքթան մարթն էլ Ջանգամ հնախըրի ջուր չըխմեն: Ախպըրտի՛ք, դուք իրավունք կու տա՞ք, օր ես էտոր վիզն էլ քնշեն:

Խեղճ անասուններ լնլելեն ասին. - Դո՛ւ գիտես:

Աղվես դըկու վիզն էլ քնշեց:

Ասաց. - Անծե՛ղ, արի՛ տեսինք, դու մեխք չունի՞ս, կերթանք հնջ, քո մեխք ընծնե կուզեն:

Ասաց. - Դնջի՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Ախպըրտի՛ք, օր էտոր էլ մեխք գտիմ, էտոր վիզ քնշե՞մ:

Ասին. - Դնջի՛, դո՛ւ գիտես:

Աղվեսն ասաց. - Անծե՛ղ, իմ խըսաբեն ախշարք մալ կը մորթա, նոր կուտա: Խեղճ ռենջբար մի կերթա քաղքեն, էշ մի բուտ կը պերա, օր ուրին շոր մի առի, խագի: Դու կերթաս, կը գանիս էն իշու միջաց վերեն, էն իշու մեչք կենես բրին, սաղ-սաղ կուտես, էսի մեխք չէ՞: Խեղճ ռենջբար էշ կը խատի, իշու տեր կու գանընջըրի եզ կը տանի էն իշու տեղ: Եսա քեզի մեխք չէ՞: Ես քեզի

իմա՞լ տանիմ հնջութեն: Ես իմ մեխք շախա՞, օր քո մեխք շախիմ: Ախպըրտի՛ք, էսի մե՞խք ա էտոր:

Խեղճ անասուններ ասին. - Ապա մեխք ա, մե՞խք չի:

Աղվես պըռնեց, էնոր վիզն էլ քնշեց:

Կանչեց, ասաց. - Կղոսա՛ր, արի՛ տեսինք դու մեխք չունի՞ս:

Կղոսաբն ասաց. - Ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Օր քեզի մեխք գտա՛, քո վիզն էլ անծղու պես կըտրի՞մ:

Կղոսաբն ասաց խա՛:

Ասաց. - Կղոսա՛ր, ես ախշըրքի մեչ վի՞ր բոկի տակն ա ծակ, օր քո բոկի տակ ծակ ա՞³⁰: Եսի քեզի մեխք չէ՞: Եսա քեզի մեկ մեխք: Դու գիշեր-ցերեկ կելիս, ծառերու վերեն կը կայնիս, կենես կղա ու կղու, կղա ու կղու, խըլղ ի՞նչ գիտեն, թե խե՞ր ա, շա՞ռ ա, զըմեն կասեն, թե խե՛ր ա, վըր մեզի, թե շառ ա, վըր քեզի: Միշտական դու խե՛ր ու շառ կը գրուցես: Եսի քեզի մեխք չէ՞ր: Պառավ չորթան կը շինա, կը տնա տանիս, օր ծմեռ էնա ուր էրեխեստերուն կուր: Դու կերթաս կը գանիս էտ չորթան, կը տանիս: Եսի քեզի մեխք չէ՞: Ախպըրտի՛ք, էսի մե՞խք ա:

Խեղճ անասուններ ասին՝ մեխք ա:

Կղոսաբու վիզն էլ քաշեց:

Ասաց. - Բնշո՛կ, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Օր դու մեխք ունեցար, քո վիզն էլ կըտրի՞մ էտոր պես:

- Դա՛ա՛, թե մեխք ունեցա, իմ վիզն էլ կըտրա՛:

- Ախշըրքի մեչ ինչքան օր թռչունք մի կա, դու գիշեր-ցերեկ կընգիս էտոնց հետեվ կը լնրիս, կը գանիս հընթիտակ կը ծակես, կը պըռնես, կուտես: Եսի քեզի մեխք չէ՞ր: Եսկից մեծ մեխք էլ ես վի՞ր վերեն գըտիմ: Ես քո վիզն էլ պըտի կըտրիմ:

Ու պըռնեց, էնոր վիզն էլ կըտրեց:

Ասաց. - Կուրկո՛ւր, դու մեխք չունի՞ս:

Կուրկուրն ասաց. - Ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Կուրկո՛ւր, օր քեզի մեխք գտա՛, քո վիզ քնշե՞մ:

Ասաց. - Խա՛ա՛, իմ վիզ քնշա՛:

³⁰ Իբր թե ազոավի պարանոցը ծակ է (Ճ.Բ.):

Կուրկուր, - ասաց,- կընիկ մի գուր ճըժերու կըսմա՞ք կը կըտ-
րա, ուր ճըժեր կը թողա պախս, կը պերա տաս-քսան խավկիթ կը
տնա խավու տակ, օր խավ ծաք խանա, ճոչցու ու էնոր ճըժերու
կըսմա՞ք շատնա: Խեղճ խավ, քսանումեկ օր կը նըստի էն խավ-
կիթներու վերեն, հօր մեկ դան կուտ կուտա: Կուզա՞, օր ուր
ծաքեր խանա դուս, արեվու հանեճ տաքցու, դու չըս թողեր էնի
արեվու էրես տեսի: Միշտական կը գանիս, էնոր ծաքեր կը
տանիս: Եսի քեզի մեխք չի՞: Թոչունք մի, տեղ մի պան կը տնա,
էնոր ծաքեր քիչ օր կը ճոչնան, չիշխընան էնոնց զըլոխ ծակեն
խանեն դուս: Դու ժիր կը պըռնես զըլխըներուց ու կառիս,
կերթաս: Ու իրիկուն մեր կու գա՞, կը տեսի, օր ծաք չըկա: Ինչ
կըղընար էն մոր ջիգրին մըրմուռ ա: Ետրից ճոչ մեխք էլ ես վի՞ր
վերեն գտիմ: Ես քո մեխքի պատասխան էլ իմա՞լ տամ:
Ախպըրտիք, դուք կաբուլ կենե՞ք, ես էտր վիզն էլ կըտրե՞մ:

Խեղճ մնացած անասուններ ասին. - Մեր ծեռ էլ ի՞նչ կա:
Դու քո խելքով ի՞նչ ուզես, զէն կենես:

Ձենոր վիզն էլ քաշեց:

Ասաց. - Ճընջո՛ւղ, արի՛ տեսի՞նք, դու մեխք չունի՞ս:

Ճընջուղն ասաց. - Ես ի՞նչ մեխք ունիմ:

- Յա՛ա՛, ճընջո՛ւղ, դու մեխք չունի՞ս: Քո մեխք վըր ամենին
շատ ա: Մարթ մի կերթա, էրկու կոտ գանի կը գնա, պերա, օր ուր
ճըժերուն կուք ցանա: Էն գանիին դըռ չըխասի, քիչ մի խատ կընգի
հինե, դու սավ կը պըռնեք, գիշեր-ցերեկ կը մըրտիք էն արտի մեչ:
Ձէն արտ կը թեփնեք ու էնոր էրեխեսներու կըսմա՞ք կը կըտրեք:
Եսկից հեվելի մե՞խք: Մարթ մի բալքի մարթ չունի, մեկ խատ քոռ
էրեխա ունի, ուր խատ կը խանա, փըռա տանիս, օր չորնա, էրե-
խին կասա՞՛ էլի՛, նըստի խատի մոտ: Էրեխեն ա ու չըտեսի: Դու
Աստըված չունի՞ք, կերթաք էտ խատըն հըմեն կուտեք: Ետր էրե-
խեսներու կըսմա՞ք կը կըտրեք: Ես էղավ քեզի էրկո՞ւ մեխք: Մարթ
մի բալքի կըթան չունի, կերթա քասե մի կանփետ կը գտի, կը պե-
րա, կասա՞՛ բալքի ծմեռ էղի իմ ճըժերուն կըսմա՞ք: Դըռ խատ չին-
գի հինե, դու կերթաք, զըմեն կուտեք: Տեր կերթա, կը տեսի, օր
խատ չըկա հինե: Կասա՞՛ ճընջըղներ, Աստըված ձեր տուն ավի-
րա՞, իմա՞լ դուք էսա կանփետ հըմեն թեփնեցիք, դու Աստըծուց չը-
վախեցա՞ք, իմ ճըժերու կըսմա՞ք կըտրեցիք: Եսա քեզի մեխք չէ՞, ես
քեզի իմա՞լ տանիմ խըտ ընծի Սուրբ Քաբայի մոտ, էնոր պուր

դու յոթ խետ պըտտես, էրթաս, էնոր քար պաքես ու էնտեղեն էլ
քար վերցուս, պերես, միշտական դնես քու հանեճ, աղոթք էնես
վերեն: Եսի Աստըված կընթունա՞: Վա՛խ, վա՛խ, ես էլ մեխքի մեչ
կուրիսա: Կայնի՛, ես շուտով քու վիզ կըտրեմ, քանի ուրիշներ քու
մեխք չըլըսած ան:

Պըռնեց ու ճընջըղու վիզ կըտրեց:

Կղանչեց սարեկուն, ասաց. - Սարե՛կ, դու մեխք չունի՞ս:

Սարեկն ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

Աղվեսն ասաց. - Սարե՛կ, լավ իմանաս, օր քեզի մեխք գտա՞,
քո վիզն էլ քաշե՞մ:

Խեղճ սարեկն ասաց. - Դո՛ւ գիտես:

Ասաց. - Սարե՛կ, քո վանթապետ վո՞ն ա, ընծի ցո՛ւյց տուր՝
տեսի՞նք, օր օրական խարիր լեզու կը կարտաս, ուրիշներ էտքան
ծախս կենեն, դըռ չըն կանա էնոնց էրեխին մեկ լեզու սովըրցուն,
քու էրեխեն հընց էլնելու պես դուս խարիր տեսակ լեզու կը կար-
դա: Ես ի՞նչ անաստվածութեն ա կենես: Ա՛յ էսա քեզի մեկ մեխք:
Ախպըրտիք, դու շիտակ լսե՞ք, դեմանկ դու խապիպա մարթ ես:
Գանուն կու գա՞ս, սեվ ես, ամիս մի կերթաս ու կու գա՞ս, նըխշուն
ես, աշուն քո ծաքեր կը խանես, հըմեն ջոն են, կը տանիս ամիս
մի կը պըտտոցուս, հըմեն կը նըխշես, պերես, դու ի՞նչ մարթ ես,
մեկ մարթ մեկ օրենքի կը ծառայա, դու ամիս օրենքի մի կը ծա-
ռայես: Ես էղավ քեզի էրկու մեխք: Աստըված ամեն անասուն էլ
ստեղծեր ա, դու քո ծաքերն օր խանեցիր, կընգիս արտեր, որթ
էղի, կը պերես, բուլոճ էղի, կը պերես, կիտուր էղի, կը պերես, դու
չըս ասի՞, էտնք հըմեն էրեխի տեր են, ես իմա՞լ կը մըրտիմ էտնց
մեխքի տակ: Դու օրական խանգար խատ արունք կենես: Միթե դու
Աստըծուց չըս վախեցա՞ր: Աստըծուց պըռծի, Աստըծու ստեղծած
մեկ մըրժիկ չըկանա ստեղծա, դու օրական խանգար խատ արընքի
տակ կը մըրտիս: Անաստված, հապա դու ընծի կասես, արի՛, ընծի
տա՛ր Սուրբ Քաբայի պուր, յոթ փաթ պըտտոցո՛ւ, օր ես էղիմ հա-
ջի ու գան: Քեզի պես արընպարտանք մարթիք Սուրբ Քաբային
արժանի՞ են:

Աղվեսն համա հեռոտ էլավ, պըռնեց սարեկու վիզ ու
քաշեց, թալեց:

Խեղճ կըռունգն ու լակլակ ուրանց տեղ դողացին: Ասին.
«Վա՛խ, վա՛խ, դորն էկավ մեզի»:

Խորամանկ պուպուն ըսկի կասաֆաթ չէնա:

Կանչեց լակլըկուն, ասաց. - Լակլակ, դու մեխք չունի՞ս:

Լակլակ համա խեղճ, լալելեն, դողալեն, ասաց. - Հանջի՛ ախպեր, ես ի՞նչ մեխք ունիմ:

Աղվեսն համա հեռստտ ասաց. - Կեցի՛, տե՛ս, ինչ կը խաղամ քո գըլոխ, դու մեխք չունիս, արե՛ դես, արե՛ դես:

Խեղճ լակլակն էկավ, նըստավ հանեճ:

Ասաց. - Լակլակ, էսա խավքեր հըմեն կը տեսի՞ս, աչքա էսոնց կտըցներ ու քո կտուց ինչքա՞ն հերկեն ա վըր էսոնց կտըցներուն: Էսա քեզի մեկ մեխք: Աչքա՛ քո օտներ ու էսոնց օտներ, քո օտներ ինչքա՞ն հերկեն ա վըր էսոնց օտներուն, էսի մեխք չէ՞ր քեզի: Աստըված ախշարք ամեն մեկ ռանգի յա ստեղծեր ա, էս հորի՞ դու իրեք ռանգի ես: Քու օտներ՝ կարմիր, քո կտուց՝ կարմիր, քո պոչն ու քու թեվերու ծեր՝ սեվ, քո ջանդակ՝ սիվտակ: Էսի քեզի մեխք չէ՞ր: Դու մուկ չըս թողե, գոռտնուկ չըս թողե, օց չըս թողեր, էսոնք զըմեն դու կը բերես, կերցուս քո ծաքերուն, էսոնք էրեխի տեր չե՞ն: Էսոնց էրեխեք հըմեն կը մնան էթիմ: Վանդ էսա մեխքըն հըմեն Ասպած ընծնե կուզա, ես կեղիմ քեզի սաքաք, քեզի կը տանիմ Սուրբ Քաբեն, կենեմ հանջի: Կայնի՛ ես քու վիզն էլ կըտրեմ:

Լակլըկու վիզն էլ կըտրեց:

Մացին կըռունգն ու պուպուն:

Ասաց. - Կըռունգ, արե՛ տեսի՞նք, դու մեխք չունի՞ս:

Կըռունգու պերան էլ հախու չըպացվավ:

Ասաց. - Հանջի՛ աղա, ունիմ, չունիմ, դու գիտես, էլ դու ընծնե հորի՞ կը խարցուս:

Աղվեսն ասաց կըռունգուն. - Ես կուզիմ, օր դու մեխք չունենաս, ես ու դուն ու պուպուն էրթանք Սուրբ Քաբեն, հուխտ էնենք ու տաննանք գանք:

Խեղճ կըռունգն ասաց. - Հանջի՛ աղա, օր էտըմլա պա՛ մի էնես, շատ շնորհակալ կեղիմ քեզնե:

Ասաց. - Կըռունգ, իրկուն օր գա, ամեն ուր տեղ կը պառկի, էս քընել Աստըծուց ա, դու հորի՞ կը կայնիս վըր քու մեկ օտաց, ինչ կըղդար քո քուն գա, դու կը նընջաս, ինգիս գետին: Էսա քե մե՞կ մեխք: Մարթ մի բալքի տեղե մի կելի, գողտուկ տեղ մի կերթա, դու շուտ կըռկըռուն կը տնես, դու խըլղի նոբադա՞րն ես: Դու

չըս թողե մարթ մ՛ էրթա ուր խըզմըթին: Էսա քեզի էրկու՛ մեխք: Գանուն օր գա, կը պանցըրնաս, պանցըրնաս ու կը կըռկըռաս: Խըլղ կը շիթկին ու կաչքեն ել դըվեր, կասեն՝ կոռնճոպան, կոռնճոպան, կոռնճոպան: Բա՛զի ճիժ կա օր խելք կերթա, կընգի գետին հետեվանց, գըլոխ կը կոտրի, էտի քեզի մեխք չէ՞ր: Կայնի՛ ես քո վիզն էլ կըտրեմ էսոնց պես:

Էլա՛վ ծեռ թալեց ու զկըռունգու վիզն էլ կըտրեց:

Մնացին հինքն ու պուպուն:

- Է՛, - ասաց, - պուպու՛, հորի՞ ես քաշվե էտա մեկ դեխ կայներ ես, դու էսա ջանդըկներ չըտեսի՞ս: Քեզ էլ պըտի խառնեն էս ջանդըկներ, գիտե՞ս: Իճի՛, արի՛ իմ հանեճ, քո մեխք քըց էս ամենին շատ ա: Էսոնց վիզ հըմենին օր կըտրեցի, էսոնց մեխքն էլ ընգա՛վ քո վիզ: Կայնի՛, տես ի՞նչ կը խաղամ քո գըլոխ: Իճի՛, արի՛ իմ հանեճ:

Պուպուն ասաց. - Դե մեռի՛, դուն ու քու անուն, աղվես, ես քո պերնի բրդուճ չեմ, ես ըսկի մեխք չունիմ: Իմ մեխքեր տու՛ իմ էրես, տեսի՞նք:

Ասաց. - Քեզի մեխք չըկա՞:

Պուպուն ասաց. - Չէ՛:

Աղվեսն ասաց. - Դու ի՞նչ իրավունք ունիս, օր թաքավորի թագ կը տընիս քո գըլոխ:

Պուպուն աղվեսուն ասաց. - Աստըծուց ա մեր ջընսին հրաման էղեր թագ: Մեր ջընս քանի կա, պըտի թագ գըլոխն էղի: Էտի մեխք չէ՛, թե ուրիշ մեխք կա, գըտի՛:

Ասաց. - Պուպու՛, դու ի՞նչ մարթ էղիս, օր էրթաս միշտական կայնիս քարերու գըլոխ, ծառերու գըլոխ, ճամխըներու վըրեն, հընց գիշեր ու ցերեկ ասես՝ պուպու՛, պուպու՛ ու գիշեր-ցերեկ խըլղին քաք կերցուս: Էղի դու ո՞րն էղար:

Խորամանգ պուպուն ասաց. - Է՛, աղվես, աչտի աղե՛կ պաց, ես պուպուն եմ, քեզ էլ պըտի կերցուն:

Համա աղվես ուր տեղեն հեռստտ էլա՛վ, ասաց. - Պուպու՛, դու քըց էսոնք հըմեն հեվե՞լ ես:

Ասաց. - Ես հեվել եմ: Ես շըհանդ ունիմ, օր էսա թագն Աստըծուց էկեր ընծի, կայնի՛ ես էրթամ, առիմ իմ շըհանդներ, գա՛մ, օր տես՝ ես ի՞նչ պիտի խաղամ քո գըլոխ, աղվես:

Աղվեսն օր ձրքավ դըխ պուպուն, օր ծեռ պըտի թալեր պուպուին, պուպու դու գողի մ'էղի, աղվըսու գըլխու վըրավով թըռավ դուրս:

Աղվեսն ասաց. «Մեկ պուպուն ընծի պետք չէ: Ես տարի մի էսա քանդըկներ ուտեմ, ընծի խերիք ա»:

Աղվես տարցավ, ընգավ վըր խավքյերու քանդըկին: Աղվեսն թըխ ուտելուն էղի, մենք տաննանք վըր պուպուին: Պուպուն գնաց, տեսավ, օր նեծիրվա մի իրեք խատ տաժի խետ էնդեխեն կուգա: Պուպուն իճավ տաժեցներու հանեծ: Գնայ էստեղ թըռավ, հայ էնտեղ թըռավ, գտաժիք խապեց, չուր պերեց աղվըսու ծակի վըրեն:

Բռռաց, ասաց. - Աղվես, աղվես, հէլի, ես իմ շըհանդներ պերեցի:

Աղվես խավքյերու քանդակ կերեր, փորն ուռեր, էլ հիբուր չըկանա առի: Աղվես դուս էլնելու պես տաժիքն առան հետեվ: Չէ՞ օր աղվես կուշտ ա, չըկանա փախի, զուր օտներ զըմեն գարկեց քարեր, արունեց, քընաց մեկ խըռընդատ մի տեսավ, կայնավ խըռընդատի էրեսնըվեր, տաժիք ընցան, գացին, գաղվես չըտեսան:

Պուպուն ասաց. - Աղվես, տեսա՞ր ըզքոն:

Աղվես մըչ ուր մըտին ասաց. - Պուպու, դու գաղվըսուն խեր ու մեր քունեցիր, ընծի ու քեզի կղղլա կէղի: Ինչ տեսակ էղի, ես քեզի պըտի պըռնեմ:

Աղվես փոշման-փոշման տարցավ, էկավ, մըտավ ուր ծակ: Մընաց մեկ քանի օր ետ, ասաց. «Պուպու քըսմին վըր ճամբխըներուն շատ կը պըտտուա, ես պըտի էրթամ յոթ ճամբխաբանժին պառկիմ, էնտեղ կղաստու խատիմ, բալքի պուպուն գա, ես պըռնեմ»:

Աղվեսն էլավ գնաց, գնաց յոթ ճամբխաբանժին, պառկավ վըր ճամբխուն, կղաստու զինք տրեց խատնել:

Պուպուն էնդեխեն էկավ, տեսավ, օր՝ օհ, իմ աղվես պառկեր էստեղ: Պուպուն մըչ ուր մըտին ասաց. «Կէղի, օր էսի կղաստու յա էկեր, դասի խատեր ա, ես էրթամ քանի՛մ կտուց էտոր պոչին գանիմ, տեսի՞ք»:

Էկավ հուշիկ, իճավ գետին, իրեք-չորս կտուց գարկեց աղվըսու պոչին, աղվես ծե՛ն չէրաց: Թըռավ, էկավ վըր աղվըսու մի-

ճաց, քանի՛մ կտուց էլ վըր միճաց գարկեց, էլ մի աղվես ծեն չէրաց:

Գնաց, հուշիկ անգաց տրեց աղվըսու պերնին, ասաց. - Տեսի՞ք՝ ծեն կէլնի՞ մոտեն:

Տեսավ, օր՝ չէ՛, աղվըսուց բեհն չէլնի:

Ասաց. - Վալա՛, օղորթման խատեր ա: Կայնի՛, էլիմ, կայնիմ էտոր մըռթի վերեն, էտոր աչքեր խանեմ, ուտեմ:

Օր օտ տրեց մըռթի վերեն, էրաց, օր կտուց գաներ աղվըսու աչք, աղվես ուշիկ պերան պացեց ու գպուպուի օտ պըռնեց:

Է՛, - ասաց, - պուպու, զըու խերիկ-մերիկ..., է՛, դու դո՞ր քու խոզին իմ ծեռնեն կազատիս: Ես ջորով զքեզի պըռնեցի, է՛:

Պուպուն ասաց. - Աղվես, խընթիք մ՛ ունիմ քեզնե, խոսք մի կա քեզնե ասելու, քեզի ասեմ, ինչ գիտես՝ զէ՛ն էրա:

Աղվես համա հեռոտ սըռտով ասաց. - Դե ժի՛ր էրա, զըու կող-կուշտ ճարտեցի:

Պուպուն ասաց. - Աղվես, Բանդանդն ա՞ մոտ, թե չէ՞ Բասրաֆ:

Աղվեսն ասաց՝ Բանդանդ:

Օր ասաց Բանդանդ, պուպուն թըռավ, մեկդեխ կայնավ:

Ասաց. - Աղվես, ես քո խերիկ-մերիկ ..., թ՛ասիր՝ Բասրաֆֆֆ, օր իմ օտ-գըլղիս քո պերնի մեչ ճարտիր: Ասիր Բանդանդ, ես թըռա, կայնա դաս:





54. ԳԱՅԼԻ ՓՈՐՉԱՆՔՆԵՐ

Գյել մի կեղի, գյել շատ կանոթնա, իրեք օր կը պըտոտա, պան չը կըպի ծեռ:

Էն մեկ օր կերթա չուի մեչտեղ, էժ մի կը տեսի, կասա. - Կուուլա՛հ, Աստղված իմ կղըսմաթ խասուց:

Կերթա, իծուն կը մոտնա, էժ կը փախի: Կը լա՛րա, գէժ կը պըռնա:

Կասա. - Էժ, դու իմ ծեռնեն դո՞ր կը պըռծիս: Գեսօր իրեք օր ես անոթի եմ: Անպատճառ պըտի քեզի ուտեմ հեսօր:

Էժ գյելուն կասա. - Կը խընթոն քեզնե, ես էրկու խատ էլ ուլ ունիմ, էրթամ իմ ուլերն էլ բերեմ, իրեքս էլ մեկտեղ կե՛ր: Ափսոս ի, իմ ուլեր մընան էթիմ, անմեր:

Գյել կասա. - Դե՛, գընա՛, շո՛ւտ տա՛րցի արե՛: Ես հեսօր իրեք օր անոթի եմ:

Էժ կերթա, գուր ուլեր կառի, փախի, կու գա՛ գյել: Գյել չուր հիրիկուն կը նըստի դա՛նի: Էժն էլ նո՞ր կու գա՛:

Էժն օրթա կերթա, կաչքա ուր կոտըշներու վըրեն, կասա. - Ընձի պես ախշըրթի մեչ ասլան մարթ չըկա: Ես գյելուց պըռժա, էկա:

Գյել կերթա, էն գիշեր կը մընա, խըլըսուն կելի, էրթա չուի մեչտեղ, տեսի, օր կղոչ մի, կերթա կղոչու մոտ, կերթա, միամիտ գկղոչ կը պըռնա:

Կասա. - Կղո՛չ, հեսօր չորս օր էղավ՝ ես անոթի եմ, անպատճառ պըտի ես քեզի ուտեմ:

Կղոչ կը մեզա՛, գյելուն կասա. - Գյե՛լ,- կասա,- կայնի՛, ես էրթամ էնդեխեն խաղամ ու գա՛մ, նոր ընձի կե՛:

Կղոչ կերթա, էնդեխեն խաղալեն կուգա՛, մեկ քա՛լե մի գյելու գըլխուն կը գա՛նի: Գյելու խելք կերթա, գյել կընգի գետին:

Կղոչ կը փախի, ազանովի, էրթա: Գյել կը մընա էնտեղ, մինչև օր խելք կուգա՛ վըրեն, կեղի հիրիկուն:

Գյել մեկէլ խեղճ կելի, էրթա, կը մըտի ուր ծակ: Էն խըլըսուն գյել կելի, կերթա ծի մի կը քըթի, ձին չայրի մեչտեղ առժըցեր, էմալ ա խոստըցեր, օր քե ինչ պիտի:

Գյել կասա. - Կուալա՛, ես հեսօր պըտի էրթամ, էսա ձին ուտեմ, հըմենի տեղն էլ կելի:

Կերթա ձիու մոտ, կասա. - Զի՛, պըտի քեզի ուտեմ:

Կասա. - Կուտես, դո՛ւ գիտես, ես ի՞նչ էնեմ: Դե՛ն օր, օր իմ խեր ընձի թողեր ա էստեղ, ընձի ասեր ա՛՝ քո օտաց տակ նշան մի կա: Էն նշան օր էկավ, խասավ հիրուր, քու օր կը լըմենա: Գնա՛, էտեվանց աչքա՛, տե՛ս, ես իմ օտ կը վերում, օր նշան խասեր հիրուր, ընձի կե՛ր:

Գյել կերթա հետեվանց, ձին կաչքա՛ գյել դեմ կայներ ա, գըստ կը վերու, չուֆթե մի գյելու ճակտի մեչտեղ կը գա՛նի: Գյելու խելք կերթա, գյել կընգի էնտեղ: Զին կազանովի, էրթա:

Օրն էլ հըմալ անձրև օր մ՛ ա, նախորթ փախե, գացե, մըտե գյելու ծակ: Գյելու խելք կու գա՛ վըրեն, գյել կասա. «Էլիմ, էրթամ, մըտիմ իմ պնան մեչ, իմ պնան մեչ խատիմ»:

Գյել ուշիկ-ուշիկ կելի, էրթա, մըտի ուր ծակ: Ինք ուրին-ուրին կասա. «Ձանըմ, ես ի՞նչ խելք էր՝ ես պանցուցի, ես գա՛ցի, գտա էժ մի, ես ի՞նչ կենեմ էրկուսն ու իրեք, ուտեմ, թըխ մընա չոր օսկըմեր: Աստղված գիմ տուն ավիրա խըտ իմ խելքին: Ես գընացի, գըտա կղոչ մի, ես ի՞նչ կենեմ խաղ ու խարսնիք, ուտեմ, իմ փոր կըշտանա, պառկիմ: Աստղված իմ տուն ավրի, իմ անգետ խելքին»:

Գյել ախ մի քաշեց, ասաց. «Ես գա՛ցի, գըտա՛ ձի մի, մըկա ես ի՞նչ կենեմ գիր ու նշան, ես ձին ուտե՛մ, թըխ անուշնա իմ պերան: Ա՛խ, ա՛խ, մըկա մեկ էղեր, գիմ պոչ պըռմեր ու գընձի տեր հանձեվ փետի, գիմ օտ ու գըլոխ ճարտեր: Դըռ հա՛լա ընձի քիչ էր»:

Նախորոթն էնտեղեն էլավ, ըզպոչ պըռնեց, ըզգյել տվեց հանճեվ դըրբի, շիտակ մի ըզգյելու օտ ու գըլոխ ճարտեց ու փախավ:

Գյելն ասաց. «Աստըված գեշ մարթու տունն ավիրա, մարթ ուր տան մեջ չըկանա կըղսե՛մ էլ էնա: Համա մարթու գըլխի վըրեն կայնանձ ան, կը զանին մարթու օտ ու գըլոխ ճարտեն: Իմ տեղն էս ա: Ընծի դըռ քիչ ա: Քանի օր սաղ եմ, պըտի իմ տըղի տըղին թամբիս էնեմ՝ մինչև իրանց տան չորսբուր շուռ չի գան, էլ ուրանց տան մեջ կըղսա չէնեն»:

Էս էլ գյելու գըլխի գալած փորցանքն ա:



55. ԾԱՂՅԻ ՏԵՐԵՐ

Ծանոցը պա՛մ չոլ տանջտի՛ն մեջ ճանըցպընութեն կէներ:

Աղվես էկավ, ճանղի տուռ վե ընցավ, գյնաց տուռ, ճանըցպընին կանչեց. - Ծանոցը պան, արի՛, տուռ պանց:

Ծանոցը պան ասաց. - Աղվեսն ախպեր, քիւ գոռժ ի՞նչ ա ըստան:

Ասաց. - Ես տ՛ղիմ քյե ախպեր:

Ավուր մեկին գյել էկավ, էկավ կանչեց ճանըցպընին, ասաց.

- Տուռ պանց:

Ծանոցը պան տուռ էպանց:

Աղվես ասաց. - Էսա մեր միճմեկ ախպերն ա, կը ճանչընա՞ս, էկե մե մըսաֆըր:

Ավուր մեկ մնաց, առճ էկավ: Էգար տըռան, աղվես էլավ, տուռն էպանց:

Աղվես տանցավ ճանըցպընին, ասաց. - Էսա մեր մեծ ախպերն ա, աթոռքյ թանլե՛քյ, թը նըստի:

Աթոռքյ թանլին, առճ նըստավ:

Առուժ էկավ, թառավ տանիս, աղվես էլավ տուս, ասաց. - Մեգի ախպեր մ՛ էկեր, կընդունե՞՞քյ, պերենքյ տուն:

Առուժին ասաց. - Քիչըմ քյե սպասա՛, մենքյ մեր խոսք էնենքյ մեկ:

Մտավ ճանղաց վե, խոսքեր էրին մեկ: Ասին, թը գան, էղի մե մեծ ախպեր:

Օրըմ մնաց, լապըզտրակ էկավ, էկավ տըռան կանչեց, տուռ չըպանցին:

Լապրզտրակ օր տեսավ ուր վերեն տուռ չըպանցին, բռնաց, ասաց. - Տըղե՛ք, հելե՛ք տուս, ասքար էլան, էճան, տեսա:

Խապեց, էխան տուս, որ էնոնք էլան տուս, լապրզտրակ մտավ ճանդաց: Մըտավ ճանդաց, խասավ, էթալ, ճանդի մուշթակ պըռնեց ծեռ:

Էմեկել ախարըներու սըռտներ ավիրավ, ասին. - Լապրզտրակ խըտ գալուն մուշթակ առավ, էնոր նիյաթ էն ա, օր մի տուրս էնա:

Աղվես ասաց. - Էսի մե տը թալա տուս: Տըղե՛ք, ի՞նչըխ էնենք:

Մարթն ասաց. - Տի յանք դավի, տեսնենք իմ վի՞ր խասնի: Էլան, գանցին դավի: Հըմեն ախարըներ խընդրաց գանցին կանավութեն:

Կանավութեն ասաց. - Հանանին վո՞ն ա էկեր ճանդաց:

Մարթն ասաց. - Ճանդաց չըխ իմն ա:

Ասաց. - Օր քոն ա, հե՞ր դավի կը տեսիս:

Ասաց. - Բերախտութեն կենեն:

Գյել ախար ասաց. - Խա՞, օղո՞րթ բերախտութեն կենեն:

Գյել ասաց. - Խա՞, բերախտութեն կենեն:

Տանցան, առճուն կը խանցընեն, կասեն. - Առճ ախպեր, օղո՞րթ, օր տու գանցիր ճանդաց, վո՞ն էր էնտեղ:

Առճն ասաց. - Օղորթ ա, ճանդաց հանանին տիր մարթուն էր:

Տանցան, առուծին խառցում էրին, ասին. - Առուծ ախպեր, էսի օղո՞րթ ա, լապրզտրըկուն ա, թե՞ խայունն ա:

Առուծ ասաց. - Օր դողրի կը խառցընին, լապրզտրըկուն ա:

Կանավութեն առուծի վկավութնով խասուց լապրզտրըկուն:

Տանցան, էկան: Էկան ճանդաց: Տուռ պանցին, մըտան հինե:

Առուծ ախպեր տանցավ, լապրզտրըկուն ասաց. - Էսա ճանդաց մըջ ձի, մըջ քյե յա, եսն եմ հեօգյնութեն էրե, քյե խասուցե:

Ան ընչ ուր կընիկ կը խանը տանիս, թագավորը, վուըզիր ուր մարթիրով կը գան, թամաշա կանին, կըսին. «Մաշալա, խորոտ ախչիկ մը»: Պոմ կը մնա, չըմնա, երկու ջընիրն էլ կը գան, կը յան թագավորը լաճու հոդեն, ուրինց էշվընկիք կը խանին, կիլնին խան, կը գան մա՛ ան մարթիրուն թամաշա:


Թագավորը լաճըն էլ կը յա, ան փետիր ընչ լըցիր եր ուր տան տակու մըղարեն վե, կը վառը, ջընիրու էշվընկիք կը թալը վերա:

Ընչ էշվընկիք կը վառվին, ջըն կընքըտիր խուտ կառնին, կը յան, ուր կըրակից խանին ուրինց էշվընկիք:

Կերթան, ուրինք կը թալին մա՛ կըրակին, ուրինց խալ տը խանին, երկուսըն էլ կը վառվին:

Նուր թագավոր ուր մարթիրով թագա՛ խարսնիս կանին, անունք կը խասնին ուրինց մըրազին, դուք էլ՝ ծի մըրազին:





64. ԼԱՆԳԱՆԻ ԽԵՔԱԹ

Մեկ թաքավոր կեղներ: Թաքավորուն քնռսուն տղղա կեղներ:

Թաքավորու ճուղ տղղեն գյրնաց մոտ թաքավոր, ասաց. - Մինք քնռսուն ախպեր էկեր ինքյ հիռճիվ փսակվելու:

Թաքավոր ուր տղղին ըսաց. - Արի՛, նըստի՛ թախթ:

Ճուղ տղղեն՝ Լանգան, նըստավ թախթ:

Թաքավոր ու լալեն թանղդիր էղան, էլան, քացին մեկ հուրիչ գյեղըմ, քացին մեկի տուն նըստան, թաքավոր ասաց. - Չի քնռսուն տղղա կա, ձեզի էլ քնռսուն ախչիկ կա՞, տղվե՛ք իմ տղղեքներուն:

Տանտերն ըսաց. - Դիւ վո՞վ ես:

Ասաց. - Ես թաքավոր, էս ա իմ լալեն:

Ասաց. - Թաքավոր ապրած կենա, ձի քնռսուն ախչիկ ունիմ, դանոցի՛ քիւ քնղաք, քիւ թաղբի՛ր տիսի, արի՛, քիւ խարսներ տար:

Թաքավոր դառցավ, հետ էկավ, տղղին ըսաց. - Ես կերթամ խարսներ պերիմ:

Տղղեն ասաց. - Թաքավոր ապրած կենա, ես էրթամ, պերիմ:

Թաքավորն ասաց. - Տիւ նըստի՛ թախթ, ես էրթամ, պերիմ:

Լանգանն ըսաց ուր խոր. - Օր կերթաս, հախպուրըմ կը գա քիւ հիռճիվ, էն տիւնեն օր կը տաննաս գանս, քիւ չնղըր էն հախպորի վերեն չըզարկիս:

Թաքավոր առեց ուր վնգիր-նագիրներ, քուբարներ, էրկու թաբուռ ասքար, թոփ-ջնթըրխանով գյրնաց, առավ ուր խարսներ, տանցավ, էկավ:

Վնգիրն էր գյրնաց թաքավորի մոտ, ըսաց. - Մեր չնղըր էստեղ զարնիք, էս հախպորի վերեն:

Թաքավորն ըսաց. - Չէ՛, իմ տղղեն ինձի շիրան էրե, օր էս հախպորի վերեն չնղըր չըզարկիք:

Ըսաց. - Թաքավոր ապրած, մա մեզի թոփ կա, ոչ կը տա վնր մեզի, մարթ չըզըխշընա տա վնր մըզի:

Չնղըրքյիր էնտեղ հախպորի վերեն զարկեցին: Մնաց չուր կեսքիշերին:

Վիշափըմ էրկնուց իճավ, չնղըրներու չորսպուլուր պըռնեց, գյըլոխ, պուչ էրաց մեկ:

Թաքավոր աքխավ, անաց ուր թոփչուն. - Թոփով զարկ:

Վիշափ ասաց. - Ծի հիրար չըտե՛ք, հանեն կըսպանիմ, գյրնա՛ քիւ տղղա Լանգան ա՛ռ, պի՛ զիկ:

Թաքավոր ասաց էրկու մարթուն. - Քնցե՛ք իմ տղղին՝ Լանգան, առե՛ք, պերե՛ք:

Մարթեր քացին, առան, պերեցին: Օր քացին, Լանգանին ըսիցին՝ էն հախպուր օր տիւ կասեր, քիւ խեր ուր չնղըր էնտեղ զարկեր ա, վիշափըմ էկեր ա չնղըրքյերու չորսպուլուր պըռնիր ա, գյըլոխ, պուչ էրեր ա մեկ, քյի՛ կուզան:

Լանգանն ըսաց. - Կանամ չերթամ, ամա անոց մեխք կընգնի իմ վիզ:

Էլնավ էկավ, էկավ վիշափի մոտ: Վիշափ թալից, պըռնից գտղղին, առավ, տարավ, տարավ, իղիր մեկ սարի գյըլոխ:

Էնտեղեն տղղեն էլնավ, գյրնաց: Կերթա մեկ տանչտի մեչ, կը մըլտի մեկ տան մեչ: Իրեք ախպեր կը պնժվին:

Կըսի. - Ընչի՞ խանար կը պնժվիք:

Կըսի. - Էն հապով կը պնժվիք, օր արտեր կիսիր ինք: Մնացիր մեկ խացի սուֆրա:

Թաքավորի տղղեն ըսաց. - Սուֆրեն պերե՛ք, տղվե՛ք ընձի:

Սուֆրեն տղվըցին թաքավորի տղղին:

Ասաց. - Էն սուֆրեն միր մեկ ախպոր կը խասնի:

Էն ախպոր ըսաց. - Քո գորգ թալ՛:

Իրեք ախպեր գորգ թալըցին:

Չուր քացին, առան զգորգ էկան, թաքավորի տղղեն առավ սուֆրեն, գյրնաց: Կերթա մեկ դեվերու էրկիր:

- Տիւ յէլ թաքավորի տղղա իս, - ասիցին, - քյի կուտիք:

- Ընծի մ'ո՛ւտեք: Հեժնութիւն կինգնի մա՛ ծի:

Էլան, չըկերան: Փետըն գաճրեցին վաճ սուֆրին, խարիր քիլա՛ ցուրին կերան: Յոթ տարվան զըխիրեն դեվեր տարան ուրինց խանար:

Ասըցին դեվերու թաքավորին. - Ընցկուն հեժնութիւն եցկից մա՛ ձի, կոտ էտիր խինգ փարա, մարթ չառնի:

- Քո՛ւ ումուտ ի՞նչ ա, - դեվերու թաքավոր տըղին ասաց:

Լանգանեն ասաց. - Ձի քո՛ւ խուղուց խանիս:

Մեկ կողորըն իտու մոտ: Էլան, գընանց: Գընանց մեկ մըր- ջըննիրու թաքավորու մոտ:

- Սով ինգիր ի մա՛ ձի:

- Ձի մ'ո՛ւտեք, հեժնութիւն կեցկիմ մա՛ ձի:

Փետ էգարկ վաճ սուֆրին: Խարիր քիլա՛ ցուրին, մըրջըննիր կերան, յոթ տարվան զըխիրա տարան:

Ասաց. - Ի՞նչ կուգիս:

Ասաց. - Կուգիմ ձի քո՛ւ խուղից խանիս:

Ասաց. - Ա՛ռ նա կըրշ մա՛ քի: Ի՞նչ վախտ ընգիս նեղութեն, տաս՝ քի կը խասնիմ:

Էլան, գընանց: Գընանց էն քոչկի հիռնիվ:

Ասաց ախչիկ. - Ես գի՛նամ՝ դո՛ւ թաքավորական տըղա յես: Հատուց գատնացի՛, գընա՛: Չըգատնանաս էրթաս, էրկու խոսք կը թալիմ քո՛ւ հիռնիվ, էն էրկու խոսք չըխանիս, քո՛ւ վիզ կը գաճրկիմ:

Տարավ էտի մեկ տան մեչ: Պըղինձըն գատ իփից:

- Չուր խըլխուն թի նա կերա՞ր, թաքավորու ախչիկ տանիս քի խանար:

Չըկարցավ կերեր չուր կեսքիշերին, դեվերու կողորշ էտու կըրակ, դեվեր էլան, էկան մա՛ տըղեն:

Ասաց. - Ի՞նչ էնինք:

Ասաց. - Էնա գատ կերե՛ք, քանցե՛ք:

Էլան, քանցին դեվեր, չուր պարիլուս պանցվավ:

Թաքավորի ախչիկ ըսաց Լանգանուն. - Քո՛ւ խոսք խանը- ցիր: Մնաց մեկ խոսք, էն էլ խանըցիր, ախչիկ տանիս քի խանար:

Էպի տաս քիլա՛ ցուրին, տաս քիլա՛ կորիկ խաննից հիրար:

- Չուր խըլխուն թի տո՛ւ նա ըստըկիցիր, ախչիկ տամ քի:

Չըկարցավ ըստըկեր էր: Մըրջըններու կըրշ էտու կըրակ:

Մըրջըններ էկան, կորիկ կընար մ' ըստըկեցին, ցուրին՝ կընար՛մ:

Ախչիկ առավ, տարավ, տարավ վիշափի մոտ:

Վիշափ ըսաց. - Իմ խեր անցկում մարթ էր սպանի, անու մե- դաց իս էլեր էր վիշափըն, էրկինքըն էր քանցի: Էրկնուց իճա՛ տակ, իճա, նըստա՛ մա՛ չտա՛շտին: Վաճ տո՛ւ շոտ ախչիկ պիրիցիր, իմ մեդաց թողութիւն էլան:

Վիշափ ուր կաշուց լոպկըվավ, էլան տըսվերկու տարեկան ջըլեկիկըն:

Ըսաց. - Ես ախչիկ, օր պերեցիր, իմ քուրն ա:

Ախչիկ էտու Լանգանին:

Լանգան առավ, տարավ ուր խանար:





65. ԱՂՎԵՍՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Աղվես կերթա մաղազի մեջ: Գյել կը գան, կը տեսնի:

Կըսա. - Աղվես, իս քյի կուտիմ:

Կըսա. - Ընչի՞ խամար ձի կուտիս, իս ոսկրի՞ իմ:

Կըսա. - Ընծի կենի՞ս քըզի ախպեր:

Կըսա. - Դե գյընան, առծաթ պի:

Գյել կերթա, կը մըտի մանչ ճրուհ, պաղ շատ կը պըռնա հինքյ: Զար գան մաղազի տուռ, կը խալի:

Կը տեսնա՝ աղվես մաղազից իլիր ի, քանցիր:

Աղվես կերթա, կողով կը գիրծա, գյել կերթա աղվըսու մոտ:

Կըսա. - Աղվես ախպեր, ձի՞ յէ սովորու:

Կըսա. - Մըտի՞ կողվի մեջ:

Կը մըտի կողվի մեջ: Կը գիրծա, պըռծնի: Աղվես կառնի զկողով, տանի, կը թանա հիռծիվ շընեռուն: Շընեռ կը խասնին կողվի վերեն, կողվից գյել կելնի, կը փախնի:

Կը տիսնա՝ աղվես քանցի, էլը նախրուրթ:

Գյել աղվըսուն կըսա. - Ձի չը՞ս էնի քյի ինգյիր:

Աղվես կըսա. - Արի՞, քյի խեծցիմ նա եզան վերեն:

Կառնի, կը տանի գյեղի մեջ: Գյեղական կը գան, կը գաննին գյելուն, գյել կը պըռծնի, փախնի:

Գյել կը գան, նըստի քանի տակըմ: Մեկ կաքանվ կը պըռնի:

Կըսա. - Կաքանվ, քըզի կուտիմ:

Կըսա. - Ասծուց փառք տու, նուր կի:

Ասծուց փառք կը տա, կաքանվ կը թըռնի, կերթա:

Կաքյուլու դարդեն գյել քըռբու կը խատնի:

Աղվես կը քոռնա, կերթա, կ'ինի մեկ խուրու մեջ:
Աղվես կըսա. - Յա սուրփ վանքըմ, տու իմ աչքիր սաղոս, երկու պեռ խունգ պիրիմ քյե խամար:

Բանգըրկա՛մ Զանաբու կը գան: Էկավ աղվըսու խուրու մոտ, ուր բազառ թանփից էնտեղ, օր ռհանթի:

Մեկ բանգըրկան կելնի, կը գան վար խուրուն:

Աղվես բանգըրկանին կըսա. - Դու հո՞ւր կերթեք:

Կըսա. - Խաց մեր կողմ թանգ ան:

Կըսա. - Արի՞ ձիզի հեժան ցուրին տամ:

Ջըվան կը կախին խուրու մեջ: Քիչըմ խուղ կը լցա ջըվուլի մեջ աղվես: Էն բանգըրկան ջըվան կը քանա, խանա: Կը խանի հանրի խուրու պըռուկ, աղվես կելնի, կը փախնի:

Աղվես բանգըրկան խապից:

Կերթա մեկ ճամբսու վերեն, տեսնի երկու քուրթ երկու պեռ խունգ կը պերին: Էն մեկ քուրթ կը տեսնա՝ աղվես վար ճամբսուն խատուկ ա: Փետ կը տա, աղվես կը բանա դեն:

Կես սըհան ճամբախ կերթան էն երկու քուրթ:

Աղվես կը սանկանա, օլըրտվի, կերթա վար ճամբսին էլ՛մ կը խատնի: Կը վըրցի, տընի իշու վերեն: Քուրթեր կը տաննան, կըսեն. «Երթանք էն մեկէլ աղվես պերենք»:

Աղվեսն էլ կառնի զէն երկու էշ, կերթա: Կերթա մեկ վանքի տուռ:

Կըսա. «Վանք, էսա երկու պեռ խունգ պերեցի քյի խամար: Ես կանչիցի քյի, իմ աչքիր սաղցավ»:





66. ԱՄՈՒԼ ՄԱՐԴ

Մարթըմ կիլնը, կըսը. - Կակո՛, ըզծը փասկը:
 Կըսի. - Գյըննա՛, կան էրի, քյը խանմար ախչիկըմ կընդը՛, ա՛ռ, էրի՛:
 Էն էլ կիլնը, կերթա, ախչիկ շատ կը գո՛վան, էն էլ կերթա, ախչիկ կը տեսնա:
 Կըսը. - Անու նշան ի՞նչ կը:
 Կըսը. - Վո՛վ գո՛ւլնա՛նչի՛մ կա, անու մեչկ տա գյետին, իմ ախչիկ կը տամ անու:
 Էն էլ կիլնը մեյդնի մեչ, կը տեսնա՛ գո՛ւլնա՛նչին էրի: Ձարգանդ գան մարթ կը պըռնը:
 Էն էլ կըսը. - Իս իմ տընից իլիո իմ, իկիո իմ, թը գէն թալիո իմ գյետին, չըմ թալիո:
 Կը խասնը, կըսը. «Աստըված, տու ըզծը ամոթով չանիս»:
 Չը գյըտը, թը ախչիկն ը: Ախչիկ գան շատ կը տանջը, ծեռ կը խասնը ծըծիր, կիմանա, թը ախչիկ ը, կը գանկը գյետին:
 Խոսք կերթա թակավուրին, թը քու ախչիկ գանկին գյետին:
 Ախչիկ կըսը. - Աստըծուց իմ խընթրի, քու մարտուրին քու վերեն չըգա՛, չուր քու նըվին ըլնի քու խալնավթիր:
 Կիլնը, կը գա՛ խոր տուն:
 Խոր կըսը. - Ֆըլան թակավուրը ախչիկ ուզիր իմ ծի խանմար, գյըննա՛, պի՛:
 Կիլնին, կերթան, կը պերեն, կը փսակին: Տարի՛մ կընցնը, անու վերեն մարտուրին չի գա՛:

Ախչիկ խոսք կը ճամբխը խոր, կըսը. - Կակո՛, էս մարթ նաներ ը:

Էն էլ կը ճամբխը խնամու վերեն՝ որ քու տըղեն մարթ չէր, վըրե՞ գիմ ախչիկ տարավ, ընկնավ անու մեղաց տակ:

Կըսը. - Տըղա՛, տու մարթ չէ՞ր, վըրե՞ քանցիր, փսակվար:

Կըսը. - Աղո՛ւրթ ը, իմ ծեռ ճար չըկա, ի՛նչըխ գյըտեթյ, անցկուն արեթյ:

Թակավուր կը ճամբխը, գախչիկ կը տանը:

Կըսը. - Տըղա՛, էկած՝ քու կընիկ կը տանին:

Էսաց. - Պեթկ ա իս տանիմ, խոր տան թանլիմ անիմ, վուր հուրիչ մարթ տանը, իս ըզծը տը սպանիմ:

Կիլնը, կառնի ուր կընիկ, կերթա: Տեսնա՛ յոթ դեվ գո՛ մաչ սարին, անու ճամբխի վերա: Թուր կը քյեչը, կերթա յոթն էլ կը սպանը:

Կընիկ կիլնը, անանջթիր կը կըտըրը, կը թալը խորջ:

Իրիկ կըսը. - Ականջթիր վըրե՞ կը տնիս խորջըն:

Կըսը. - Տանիմ իմ խոր տուն, ըսիմ՝ կտրի՛ծ իրիկ մ՛ ունիմ:

Կըսը. - Աստըված հանկը, տու տը թըլիս, չըտանիս քո խոր դիվան: Իս յոթ մուկ իմ սպանիր:

Կիլնը, ըզկընիկ կառնը, կերթա: Կերթան խոր տուն:

Թակավուր կըսը. - Են խորոտ ջընել ափսուս ը, իմ ծեռ չէրթա վերեն, իս սպանիմ:

Կը տանի, թըլի բախչեն, վուր վիշափ ուտը: Լաճն էլ կիլնը, թուր կը քյեչը, ըզվիշափ կը փըրտը:

Որհաթ կը նըստը էնտեղ: Կերթան կը տեսնան՝ վիշափ սպանիր, նըստիր:

Թակավուրն էլ կըսը. - Չան տ՛երոդկիմ ճինմաճինա թակավուրը վերեն կըռիվ, սպանվը, մոտեն ազատվիթյ:

Կիլնը, ծիմ կը խեծնը, կերթա: Շա՛տ, քիչ՝ էլ չըմ գյըտը:

Կերթա պանցր սարի՛մ գյըլիխ, կիրիչկը, գանքար կը տեսնա:

Կըսը. - Են անքար իլնը պանքակ, իս ըլնիմ կըրակ, չըմ կերի վանը, իս իլնիմ անձրիվ, չըմ կերի թըրձը:

Ձիուն լեգու կը գա՛, կըսը. - Մը՛ վանխաննա՛, քանի՛մ տու քու թըրով սպանիս, իս էրկու անցկուն իմ պոչով, ոտնով տը սպանիմ:

Կիլնը, կըռիվ կանը:

Տանճանքյ վնր ախչկան, ախչիկն էլ կիլնին, կը տան մարտիւ:

Հիրիկուն ինչ տը քյընին, կերթան հողեն խաց ուտին, երկու մուկ անիքյ հինը հերար կառնին:

Կըսը. - Կընի'կ, իլի', իմ նետ-անիղ տո'ւ ըզծը:

Կընիկ կը տա, կը գանը, երկու մուկն էլ կը սպանը, կինին գյետին:

Կընկան սեռտ կը խառնը, կիլնը ավիլի'վ ըզմըկնիր կը թնլը տիւս:

Կըսը. - Ի՞նչ տ'անիս, կընի'կ:

Կըսը. - Թնլիմ տիւս, իմ սեռտ էկավ տակ:

Կըսը. - Իս խըլըսուն տը տանիմ քիւ խոր դիվան:

Կընիկն էլ ուր միտվե կըսը. «Վն'յ, էս ի՞նչ փիս մարթ ը, իմ իրիկ էկանք յոթ դեվ սպանից, իմ իրիկ չէթող իս քըսա' էներ, յոթ դեվ յոթ մուկ խըսաբից: Ուխտ իլնը, իս քիւ ծուց չըպառկիմ»:

Կըսը. - Կընի'կ, երի', մըտը' քիւ տեղ:

Կըսը. - Տիւ կեղտո'ւտ, փի'ս, իս չըմ իգն: Երի', ըզքյի լիղ-կանցըցիմ:

Կիլնին, եռման ճուր կը պիրին, գիրիկ կը լիղկանցըցը, սապուն կը տն վնր գյըլխուն, ճուր շուռ կըտա վերեն:

Իրիկ կը բռռա. - Վն'խ, իս երեցա':

Կընիկ կը փախը, կիլնը տիւս: Կըսը. «Հանաճի' իրիկ, ո՞ր տեղն իս, տը գան, քյի խասնիմ, թնխ ծը սպանի'ն»:

Կը գն, կը տեսնա ինչի ծառը թավիր աշնան կը թնփին գյետին, անցկուն ջանդակտիր փըռիր գյետին: Կը քըշը, կերթա:

Լաճ կը տեսնա, կըսը. «Վն'յ, ի՞նչ իլնը, նն կարմիր ձիավոր ըզծը տը սպանը: Իս տ'երթամ, յան էն ըզծը սպանը, յան իս գէն, պըռծնիքյ»:

Կիլնը կը գն, կընիկ գնտնու կը բռռա, կըսը. - Աստըծու սիրուն իլնը, իս քիւ կընիկն իմ:

Կերթան, նըստին հավուզը վերեն:

Կըսը. - Մարտի'կ, տիւ հըմեն էրուն իս, քիւ խնլավքյի խան, ըզքյի լիղկանցըցիմ:

Ձիրիկ կը լիղկանցը, կը նըստի խնլավքյերու վերա, կընիկն էլ կը լիղկանա, կը գն, նըստի անտն տեղ:

Մարտիւ մարտիւթին կը գն, կըսը. - Աստըված հնդկը, իս, տիւ տը պառկինքյ նն տեղ:

Կը պառկին իրարու ծուց: Կիլնին, կերթան, կը նըստին սարի'մ մեչ:

Կընիկ մեկ օր կիլնը, գյըլիխ կը սանդըր, մագեր կիցկը գյետը մեչ, կը տանը:

Կերթա, կինի հուրուշ թակավուրը խուղը մեչ: Մագեր կինը թակավուրը հնվուզը մեչ:

Թակավուրը տըղեն կերթա, կը լվնցվը, մագ կը տեսնա, խիլք կը թնլը, կըսը. - Յաման, էս մագի տեր պերե'քյ ծը խանար:

Թակավուր կը կանչը. - Վեվ գն, նն մագը տեր իմ լաճու խանար պիրը, մեկ ուր կըշռանքի'վ ոսկը կառնը:

Մարթ չըգյըտը, պառավըմ կը գն, կըսը. - Իս գյըտիմ: Ծին-մաճինա խուղը մեչն ը, պիրել իմ մոտեն չի գն, կուզիս քիւ տըղեն տանիմ անտեղ, տեսնա: Թը կը սպանի'ն, կը թըղնի'ն, չըմ գյըտը:

Կառնը ըզլաճ, կը տընը ծըծու'մ վե, կերթա: Անու սարը հնսանձ, ըզլաճ կը խուրը ավզը մեչ:

Կըսը. - Խանըմ, գյիշիրվան տեղ տաս ծը:

Կըսը. - Կո'րսը, իմ տըռնից գյընն':

Կերթա, կը նըստը վնր ճամբխին, մարթ կը գն, կըսը. - Աստըծու սիրուն ըլնը, գյիշիրվա'մ տեղ տու:

Կառնը, կերթա: Պառավ չար կիլնը, խըլըսուն տախտ տիւս կավլը, աչկ կը մըտնը:

Քանի'մ օր կընցըր վերեն, կըսը. - Կընի'կ, տիւ ափսուս իս, ընցկնն մընակ, քյի ընկյիրըմ լազըմ ը, քյեֆ-ուրախութին էնիքյ:

Կը խապը, թակավուրը լաճ կը պիրը, կանը անու սիրական:

Մարթ կը գն, գյիշիր կընիկ հիտիվ կանը թնխ էն: Մարթ կըսը. - Վըրե՞ հիտիվ կանիս թնխ ծը:

Գյիշիր մինչիվ լիւս իրիքյ տիր հիտիվ կանը թնխ էն: Կըսը. «Պն'մ կա իմ կընկան»:

Խըլըսուն կիլնը, կը նըստը վըր ծընարը ծառին, կը տեսնա պառավ կերթա, տըղեն կը խանը ավագից, կը պիրը, հնվուզի վերեն կը նըստին, քյեֆ-ուրախութին կանին: Ինքյն էլ ծառից թանաչա կանի, մընչիվ հիրիկուն, պառավ ըզթակավուրը տըղեն կը խուրը ավագը մեչ:

Մարթ ծառ վե կը կըսկըծվուրը, կը տեսնա՝ դավրեշ մ' էկավ, նըստավ: Ծուցից կուօին էխան, իպանց, կընիկ էխան տուս, քյեֆ արին, կընիկ քյնու ուլնիկ իթըլ դավրեշը անանջ, ջեբից խընծուրըն էխան, փըջից վերեն, արաց խոթոտ ջահելըմ, էնտեղ քյեֆ արին:

Մարթն էսաց. - Փա՛ռք իմ քյենե, Աստըվա՛ծ, չէ՞ իս ընկյիր էլ ունիմ:

Դավրեշ էլավ, ըզկընիկ արաց սիան, էթալ կուօին, մարթն իծավ տակ, մեկտիղ էկան տուն:

Էսաց. - Պառա՛վ, յոթ խուզիւ խանմար կիրակո՛ւլ հազըլ:

Նըստան, էսաց. - Դե՛, դավրե՛շ, քիւ կընիկ, անու սիրող խան տուս:

Էսաց. - Դե՛, կընիկ, քիւ սիրողն էլ խան տուս:

Ան էզար, դավրեշի կընիկ ու սիրող սպանից, դավրեշ էզար, անուրն սպանից, սերսփիցին, նըստան:



67. ՈՒՐՍԿԸՐԻՉ

Խեղճ մարթըմ կիլնը, ինք, ուր լաճ:

Լաճուն կըսը. - Տըղա՛, իս անցկում չարչարվա, բանա, բանա, չըհավելցըցը, շիվար մընացը: Տիւ արը, գընա՛՛ հուրիշ քաղաքըմ, բանը, պալքըմ գանկընանաս: Լա քանը կանաս մըտը մանանտքարըմ, քյի սանաթըմ սո՛վրը:

Լաճ կիլնը, կը յա:

Կը յա, կը յա, կը յա Ստանբուլ կիլնը տուս:

Կերթա մա ուըսկըրչի՛մ, կիլնը աշկերտ: Տարի՛մ կը լըմընա, քանց ուըսկըրիչ շատ իմաստուն կիլնը:

Թագավորը պըզտիկ ախըչկան խուըզմաթքար կը յա պագար՝ մսե, բանե, ուր բիրը, իփը:

Կերթա շուկեն, կը տեսնա՛ տեղըմ շատ խալկ պահրավանծ ան տուընը հանանջ: Ուր միտ վե էսաց. «Յամ, տեսնամ նա ի՞նչ կը, անցկում պահրավանծ հանտե»:

Գընանց, ուըսկըրիչըմ տեսավ կի հանտե, չուտին, չըխըմին, անու նըմուշին քանանչա անին: Անու աղկըլ գընանց, մընաց չուր կեսօրին, մալեն կանչից, էսաց. «Յա՛՛, հո՛՛, նա ինչ արը խա՛ ծյի, իս խըլխուըն տը յեր, նա էլավ կեսօր, իմ խանըմ ըզի տուս տը խանը»:

Էլավ, գընանց տուն:

Թագավորը ախչիկ էսաց. - Ուըռըսպը՛, ան խըլխուըն էր, նա էլավ կեսօր, տու հո՛ւրտըլ յեր:

Ան էլ էսաց. - Ան ուր իս տեսա, տու խիս, տու թուըչար չըս իզա:

Ան էլ էլանվ, սինի՛մ ուղսկը էլից, տարավ, էսաց. - Մըհա՛ իմ խուրզանա՛քքար սուք կըսը յան անդուրտ: Թը ուր սուք սը, տը թըլիմ ծով:

Ինք, ուր խուրզանա՛քքար առին սինի՛մ ուղսկը, գանցին, գանցին ուղսկըրչու տուքան, թագանվորը ախըչկան աղկըլ գընաց, տեպավ գետին: Պոմ մընաց, աղկըլ իրը վերա, էլանվ, գընաց ուր տուն:

Կանչից, քառսուն խատ լըղըմչը իկին:

էսաց. - Լըղըմչի՛ք, ըստուցա չուր նա՛ ֆըլան ուղսկըրչը տուքան լըղըմ տ՛անեք, մարթ չիմանա, ուղը իմանան, ծյի վըզըյիր տը տամ գանիլ:

Լըղըմչիք կը պաշլային թախ ուրինց բան: Ընչ խա՛ ճամխը, կը խասնին տուրքընքտիրուն, տուրքընքտիրու տակ վե ընչ կը բանին, կը խին, կը խարցընին:

Կըսին. - Ատ ի՞նչ տ՛անեք:

Անունքըն էլ կըսին. - Ծուր տը գա՛ յա թագավորը սարեն:

Լըղըմ կը պըրծնին, կը յան մա՛ թագավորը ախչիկ, ուրինց հանկ կառնին, կը յան:

Թագավորը ախչիկըն էլ կը ճամխը ուղսկըրչուն լըղըմ վե, կըսը. - Ա՛րը մի մեհվան:

Ան էլ կըսը. - Զյի խուրզանա՛ք կա, ուղը ան ըզի կուզը, թըղ ան գա:

Խուրզանա՛քքար լըղըմ վե կը գա, թագավորը ախըչկան կըսը: Ախչիկըն էլ կիլը, լըղըմ վե կերթա ուղսկըրչու մոտ:

Ախչիկ կըսը. - Ան վըրե՞ տա՛ չիկիր, յա՞ն տա՛ կը վախանաս:

Անունքըն էլ ուրինց խապարթիր կանին մեկ, կառնը զուղսկըրիչ, կերթա:

Ան մեկէլ օր կիլը սովորութ, հանեն օր կը յա մա՛ թագավորը ախչիկ:

Ան մեկ օր թագավոր կիլը թավտիլ մա՛ ժողովըրտին, մութ կը տա, կը գա, ան ուղսկըրչու տուքընը հիրծիվ կը նըստը, ուղսկըրչուն կըսը. - Մեհվան չը՞ս շախը:

Ան էլ կըսը. - Գըլխու՛ս վերա:

Անունքըն էլ գանցին ուղսկըրչու տուքան: Մութ իտու, տուքընը մեջ գետնուց քանիանքըմ բացվավ, ուր ախչիկան խուրզանա՛քքար էլավ տուքըն մեջ:

էսաց. - Ուղսկըրի՛չ, խանըմ քյի կանչը:

Ան էլ գընաց, անու ալանչ վե էսաց. - Դասօր գընա՛, սա՛ մեհվան կա:

Խուրզանա՛քքար գընաց, թագանվորը ախչիկան էսաց:

Ախչիկ էսաց. - Գընա՛ սա՛ թըղ առնը ուր մեհվընքտիր, գա՛ ըստա:

Թագավորըն էլ սատրագանմին էսաց. - Եա՛ ընչ ըսկընա՛ կը գա, կը յա, ան իմ ախչիկան խուրզանա՛քքարն ը:

Սատրագանմըն էլ թագավորին էսաց. - Խա՛, ուղա՛, անցկուն ը, քա՛ ախչիկան խուրզանա՛քքարն ը:

Ուղսկըրիչն էլ թագավորին էսաց. - Դանվե՛շ պապա, ի՛լը, յանք մի տուն:

Ցանար կը պըռցին, էլան, ընկան լըղըմ վե գանցին թագավորը ախչիկան մոտ:

Թագավոր էսաց. - Սատրագան՛մ, մա՛ հօղեն իմ ախչիկան ը:

Սատրագանմըն էլ էսաց. - Խա՛, ուղա՛, անցկուն ը: Եա՛ հօղեն քա՛ ախչիկան ը:

Թագավոր էսաց. - Եա՛ սեիրը յը՞, մա՛ ի՞նչ կը:

էսաց. - Իս ի՞նչ գըտնամ:

Խաց կերան, պըրծան: Ուղսկըրիչ առից ըթագավորը ախչիկ, գանցին հօղեն: Թագավոր, ուր սատրագան մընացին ան մեկ հօղեն:

Գիշիր մընացին չուր լուս, ընչ լուսցավ, ուղսկըրիչ էսաց. - Դանվե՛շ պապա, ի՛լը յանք:

Թագավոր առից, իպը, տուքընից տուս էխան:

Թագավոր գընաց ուր սարեն, նըստավ վար ուր թախթին:

էսաց. - Սատրագան՛մ, ի՞նչ անինք խա՛ ան մարթուն: Պիրինք վի՞զ կըտրինք, պիրինք կախի՞նք, ի՞նչըխ անինք:

էսաց. - Թագավոր՛ ապրած կենաս, պիրիս կախիս, դա՛նեն տըրսին՝ քա՛ ախչիկ ուղընսպը ը:

Թագավոր էսաց. - Ապա՛ ի՞նչըխ անին:

էսաց. - Առ, բի՛, արա՛ քյի չըբուխչը:

Թագավոր կանչից, առից, իբը, արավ ուր չըբուխչը: Քանի՛մ օր ընցավ վերեն, թագավոր էլանվ, գընաց մա՛ ժողովըրտին կան գանլու:

Գրնացին, մա խանի՛մ մեհվան էլան, խըլիսուն էլավ մա հախարրին լվացվավ, տեսավ մեկ կընիկ փանջարից ուր մեկ մատ շանք իտու:

Թագավոր էսաց ուր միտ վե. «Սըհաթը մեկին ըզի կուզը»:

Լվացվավ, պըրծավ, գընաց նըստավ ուր հողեն, մա ան խանին: Մընաց, սատրագամ գընաց, լվացվավ: Ան կընիկ երկու մատ շանք իտու:

Վուըզիր ուր միտ վե էսաց. «Նա սըհաթ երկուին ըզի կը կանչը»:

Լվացվավ, պըրծավ, գընաց:

Դոր խուըզմաթթար իրը վար հաղպըրին, ան կընիկ ուր իրիք մատ շանք իտու:

Ան էլ ուր միտ վե էսաց. «Նա սըհաթը իրիքին ծյի կը կանչը»:

Ան էլ գընաց ուր թագավորը հողեն:

Թագավոր սըհաթ մեկին գընաց մա ան կընիկ, հանտե թագավորը խամար սեղան պատրաստեր էր, կընիկըն էլ փարտեն քյեշեր էր, մըտիր հիտիվ փարտին:

Թագավոր գընաց, նըստավ, խաց կերավ, պըրծավ:

Կընիկ էսաց. - Խուըզմաթթար, ատ սեղան ա՛ռ, բի՛ ըստա:

Ան էլ թագավորին էսաց. - Կիլնիս, կերթաս իմ հողից, յան չէ՛ քիւ ճիւլ փըրտու՛ւ քիւ ականչ տը մընա:

Թագավորն էլ էլավ, փախավ, գընաց ուր տեղ:

Սըհաթ երկուսին վուըզիր գընաց:

Ան էլ ան թարգանակ սեղան հագրուկ հանտե էր, նըստավ, խաց կերավ, պըրծավ:

Կընիկ էսաց. - Խուըզմաթթար, ատ սեղան ա՛ռ, բի՛:

Ան էլ էսաց. - Սատրագամ կիլնիս, ինչ կիլնիս, կիլնիս տուս իմ հողից, յան չէ՛ քիւ ճիւլ փըրտու՛ւ քիւ ականչ տը մընա:

Սատրագամ փախավ, իրը ուր տուն:

Սըհաթ իրիքին թագավորը խուըզմաթթար գընաց:

Անու խամար էլ սեղան հագրուկ էր, գընաց նըստավ, կերավ, պըրծավ: Սեղնը վերա կազըմ կեր, մեկ բաշլա: Ան էլ կուշտ խաց կերավ, դանակ հանտե վար սեղնին էր, ան էլ առից, գան կազ արավ չուրս կըտուր, սինու չուրս կուղըմ փըրտու՛ւ ըմ

իտը, բաշլեն էլ փըրտից, ծեթկացուց, իլից սեղնը մեջ: Դանակըն էլ խըփից, իտը մա սեղնին:

Կընիկ էսաց. - Խուըզմաթթար, սեղան ա՛ռ, բի՛:

Սեղան տարավ մա կընիկ, կընիկ էլ էսաց. - Ան իմ բաթթըն:

Էլավ, գընաց կընկան մոտ:

Կընիկ էսաց. - Ան վըրե՞ կազ արեր էր չուրս կըտուր, սինու չուրս կուղըմ մեկ տըրեր էր, ան բաշլեն անցկուն ծեթկացեր էր, ան դանակ խըփեր էր, տըրեր էր անտե:

Էսաց. - Ինչըխ ան դանակ խըփուկ ը, անցկուն էլ իմ բերան խըփուկ ը: Ինչըխ ան կազ իս արեր էր չուրս կըտուր, թագավոր ըզի անը չուրս կըտուր, հանտե տարկիսը վերեն մեկ կախը, իս քիւ նամուս չըմ թափը: Թագավոր ըզի ան բաշլը թարգ ըզի փըրտը, էլմէլ իս ծեն չըմ խանը:

Ուր բան պըրծավ, իրը մա թագավոր:

Թագավոր էլավ, գացին թաղ ուրենց սարեն:

Ճամխը խիտ սատրագամին էսաց. - Փուրծանքըմ իկիր իմ վերեն:

Սատրագամ էսաց. - Ի՞նչ կը:

Էսաց. - Ապա ինչ իս գացը լվացա, կընիկըմ ուր մատ էխան տուս, իս էլ սիցը՝ կայե, ծի սըհաթը մեկին կը կանչը, իս էլ քացը: Ան տեղ խաց տըրուկ էր, կերա, մեկ էլ ծյի էսաց՝ չէ՛, տիւ թագավոր իլնիս, ինչ ուր իլնիս, ի՛լը, գընա՛:

Սատրագամըն էլ էսաց. - Ինչըխ քիւ գըլոխ իկիր, անցկուն էլ իմ գըլոխ իկիր:

Թագավոր էսաց. - Ուր քիւ գըլոխ էլ իկիր, մըկա խուըզմաթթարին էլ իկիր:

Բիրին խուըզմաթթարին խարցընիցին:

Էսաց. - Իս թու բա՛մ չըմ տիսիր:

Էլան գացին սարեն, նըստան:

Թագավոր էսաց. - Յան տը սիս, յան չըխոմ քիւ միս քալբաթնով տը քյեշին:

Թագավոր ինչըխ արավ, չէսաց:

Ան էլ իպը, ան խանը տըռան հառաջ տը խեխտեր, տալնըն էլ էլավ, կանչից, էսաց. «Թագավորը ծառեն խապարըմ կա, թագավորին չըսը, տը կախին: Էկե՛ք թամաշա»:

Ան խանը կընհկըն էլ իմացավ, էլանվ փանջարեն վե իրիշ-կից, կը խը՝ գան մարթն ը, ինչ տը կախին: Նուռըմ էգար հիրծիվ ան մարթուն (յանե ինչըխ նա նուռ ցըվըրվավ, անցկուն իմ նամուս ցըրվը, ըզքի թըղ չըկախին)³¹:

Խուրզանաթքար էսաց. - Ըզի բերեք տակ, իս թագավորին տը սիմ:

Տըղեն բիրին տակ, տըվին բըժըշկին, աղեկցավ, գընաց թագավորին էսաց, հըմեն քըսա արավ:


Թագավոր էսաց. - Քու մըրագ ի՞նչ կը, թե իմ թագավորութենը կեսըն տամ քյի:

Ան էլ էսաց. - Քու թագավորութեն բըմբարաք իլնը քու խանար, տու ինչ կը տաս, տու գըտիս:


Ինքըն էլ էսաց. - Արը, իմ պըզտիկ ախչիկ տամ քյի:

Ան էլ գընաց, թագավորը ձեռ պագնից, անու պըզտիկ ախչիկ առից:

Նուր յոթ օր, յոթ գիշիր խարսնիս արին, անունք խասան ուրինց մըրագին: Դուք էլ խասանեք ձյի մըրագին:



³¹ Ծ. Ա.:



68. ԹԱԳԱՎՈՐԸ ԻՐԻՔ ՏԸՂԵՆԻՐ

Կեր, չըկեր թագավորըմ կեր, ուր իրիք լաճ:

Կը խիվընտնա, կը կանչը գուր իրիք լաճ, կը բիրը, կըսը. - Իս տը մեռնիմ, վոլ իմ ամպարը տըռնիր շինը, բալնըսքյիր առնը, վոլ իմ մատնեն մատնիկ խանը, ան տ'իլնը թագավոր:

Թագավոր կը մեռնը, պըզտիկ լաճ կը խասնը, ամպարը տըռնիր կը շինը, բալնըսքյիր կառնը, մատնիկ մատնեն կը խանը:

Կը մընա, թագավոր կը տանին կը խուրին, բըռըմ օր կը մընա, նուր անու ճուլ էլաճ, միչնիկ լաճ կակախին, կըսին. - Մի խոր մատնիկ մատնեն վո՞վ էխան, բալնըսքյիր վո՞վ առիր:

Պըզտիկ ախպեր կըսը. - Իս խանաթ չիմ:

Միչնիկ ախպեր կըսը. - Իս չըմ առիր:

Ճուլ ախպեր կըսը. - Իս չըմ գընա: Թու խան չյի գան, մատնիկ իմ խոր մատնեն խանը, յան բալնըսքյիր տանը:

Հատե կը կըռվին, կիլնին, կը յան մա հուրիշ թագավոր կըսին. - Մի շարիաթ արա:

Թագավոր օրըմ երկու չըկանա անունց տատ անը: Ան մեկ օր էվարին, ինչ կերթա տուն, շատ մաղղեն արուկ ը:

Ախչիկ կըսը. - Կակո՞, ան վըրե՞ մաղղեն արիր իս, չիլնիմ բա՛մ իլիր, չիլնիմ մեկըմ կըռիվ կուզը, նեղութի՛մ իլիր ը:

Կըսը. - Չէ՛, ուրա՛, թու բա՛մ չիլիր ը, մընակ հուրիշ երկրի թագավորի՛մ տըղենիր էկած ին մա ձյի տավը:

Ախչիկ կըսը. - Անունց տավին ի՞նչ կը:

Կըսը. - Հալ-քեֆաթ ընցնա յը:

Ինչըխ իլիր, անու կըսա կանը:

Ախչիկ կըսը. - Վանդ հորոհկը, գան ման ծրի:

Թանգանվոր խըլխուն կը յա սարեն:

Թանգանվորը տըղենիր կը յան, կըսին. - Մի տանվին սանվ արա:

Ան էլ կըսը. - Գանցեք մի տուն, չուր վանդ իս գան, հասոր խուրզանթ շատ կա:

Թանգանվորը ախչիկ կը գան, գանունք կառնը, կը յա ուր հողեն:

Կըսը. - Թանգանվորը տըղենիր, կերկերըմ արեք, ականջ անհինք:

Կըսին. - Ուրլան, մինք թու բան չընք գընա:

Ախչիկ կըսը. - Վուրը անցկունը, իս սիմ, տիւ ականջ արեք:

Կըսը. - Ժանանակըմ մեկ գանգիմ մարթըմ կիլնը, անու մեկ մըշակ կիլնը, ան մարթուն էլ մեկ ազապ ախչիկըմ կիլնը: Ան մըշակ ան մեկ օր ձեռ կը թանլը հինը: Ան ախչիկըմ էլ կըսը. «Ուխտ իլնը իմ վերա, տիւ իմ նամուս մը կուտորը, ինչ օր ըզի տանին, հըռճըն գիշիր իս գան ման քրի»: Մըշակ գախչիկ կը թըղնը: Փելըմ վերա կընցնը, ախչիկ կը տան իրկան: Ախչիկ հիրիկուն չըմըտնը ուր իրկան ծուց: Ան մարթըն էլ կըսը. «Ախչը, ան վըրե՞ տիւ չըս իզան, իս քրի ծրի խանար իմ բիրիր»: Ախչիկըմ էլ կըսը. «Ուխտ կա իմ վերեն, ուր թըղնիս իս իմ ուխտ կանտարիմ, տիւ՝ իմ մարթ, իս՝ քիւ կընիկ»:

Մարթ կըսը. - Քիւ ուխտ ի՞նչ կը:

Կըսը. - Իմ ուխտ էն ը՝ իս ազապ իմ խոր տուն էր, իմ խոր մեկ մըշակ կեր, օրըմ ձեռ իթալ թանդ ծրի, իս սիցը՝ մըկա ըզի թուղ, ահտ իլնը, իս հըռճըն գիշիր գան ման քրի: Մըկա իմ ահտ էն ը, հանխկն ը իս իմ ահտ բիրիմ տեղ:

Իրիկ կըսը. - Գընան, լան շուտ արը, չըլուսնա, ուր լուսնա, յան իս ըզքրի տը ըսպանիմ, յան ըզի:

Ախչիկ կիլնը, խարսը թանգ խանլուկ կիլնը, կը յա, կերթա վար կես ճամխին, կը խը՝ յոթ գիղ կի հանտ:

Ան գիղիրու ճուլ կըսը. - Զիլնիմ մեկ ձեռք տեք անու, թըղ գան մըղան ան ի՞նչ կը, յան դո՞ւր տը յա:

Ախչիկ կը գան:

Ան գիղիրու ճուլ կըսը. - Ախչը, դո՞ւր տը յաս նան գիշիրով:

Ախչիկ կըսը. - Զան-հանվալ ընցնա յը, իս տը յամ, ուխտ իմ արիր, իմ ուխտ տամ կանտարիլ:

Ան էլ կըսը. - Ուր տիւ անցկուն բանտուն իս, գընան:

Էլ բան չըն ըսը, կիլնը, կը յա:

Կերթա, մըշակու տիւ կը տըփը, մըշակ կիլնը տիւ, կըսը. - Մըշակ, կի իս իկը, ինչ կանիս, իս հանգը իմ:

Մըշակ կըսը. - Տիւ իմ մեր, իմ քուրն իս, ան օրըն էլ թըշանական բան էր, գընան իս քիւ բանին, ծրի փըսակ պիրոգ իլնը: Աստըված մեկմեկու գըլոխ պախը:

Ախչիկ կիլնը, կը գան տուն, իրիկ տան հանար ը, տան չըթընիր, կըսը. - Ան վըրե՞ չըգանցիր:

Ան էլ կըսը. - Գանցը, էկը:

Թանգանվորը ախչիկ ան թանգանվորը տըղենիրուն կըսը. - Ո՞ւրըն ը բանտով, ան իրիկն ը բանտուն, ան գիղի՞րն ը բանտուն, թը՞ ան մըշակն ը բանտուն:

Ճուլ լաճ կըսը. - Բանտով անու իրիկըն էր:

Միջնիկ էսաց. - Բանտով մըշակըն էր:

Պըզտիկ էսաց. - Բանտով ան գիղիրըն էր:

Ախչիկ էսաց. - Վըրե՞ գիղիրըն էր:


Պըզտիկ լաճ էսաց. - Ան կանտար ուրսկը կեր վերեն, անունք չառած:

Ախչիկ էսաց. - Տիւ անթըթանսեր, ուրսկանսեր մարթ մ՝ իս, ուր անթարգ ը, մատնիկ, բանլըսքրի կի ման քրի ը, իսան տիւս:

Ան էլ էխան, իտու ըզթանգանվորը ախչիկ: Ան պըզտիկ տըղան շատ խելքով էր, ուր անցկուն չաներ, անու ճուլ անպերքիր բանլըսքրի, մատնիկ մոտեն տաննեն, տելնեն թանգանվոր:

Ան էլ իցկից օրենքի, նըստավ թանգանվոր:

Անունք իսասան ուրինց մըրագին, տիւք էլ՝ ձեր:





69. ՅՈՑ ԱԽՊՈՐ ՔՅՈՒՐ

Ժամանակը մարթըմ կիլնը, ուր յոթ լաճ: Ան մարթըմ էլ կը մեռնը, կը մընա կընիկ, ուր յոթ լաճ, ինքն էլ տըղով ը:

Ան լաճիր տը յան կարըբուրթին, ան գախ ընչ տը յան, կըսին.
- Մարե՛, թը ախչիկ էլավ, մաշկ-մազրակեն կախիս պատեն, թը լաճ էլավ, նիտ-անեղ կախիս պատեն:

Անունք գացին:

Փելըմ մընաց, անունց մոր ախչիկըմ էլավ, ան էլ մաշկ-մազրակեն կախից պատեն, բըռըմ օր մընաց, անունց տըրկից բախլութենե իրը, մաշկ-մազրակեն առից տակ:

Ժամանակըմ ընցավ վերա, ախչիկ ճուճացավ, ուր հասակին խասավ, խա գեղը ախչկըտիրուն կով կը տաներ, օրըմ ախչկըտիրուց մեկ տըտռից:

Ան էսաց. - Իմ ախպոր արիվ, իս չէր:

Ան մեկէլ էսաց. - Իմ խոր արիվ, իս չէր:

Ան էլ էսաց. - Իմ կարմիր կովու արիվ, իս չէր:

Հըմեն ծըծղացին վերա, սիցին. - Տու յէր, ուր տու չէր, անպս վըրե՞ քի յոթ ախպեր կեր, տու քու ախպոր արիվ չէրտվցար:

Ընչ իրը տուն, էսաց. - Մարե՛, անղո՞ւ ծի յոթ ախպեր կեր:

էսաց. - Խա՛:

էսաց. - Ապս ի՞նչ էլած:

էսաց. - Խա՛, վուըլա՛, գացած կարըբուրթին:

Ախչիկ էլ էլավ, ուր հողը քար տեսավ, էսաց. - Տը յամ հիտիվ իմ ախպըրքիրուն:

Շատ զընաց, քիչ զընաց, Աստըծուն ատ ախչիկ խեղճ իրը, ուր խրիշտակ հորողկից մա ատ ախչիկ, ընցավ ախչըկան հիր-

ճիվ, խաբար տալեն առից, տարավ մա վերվերը սարի՛մ:

Տարավ, հիրճիվ սարի՛մ կայնացըցուց, էսաց. - Տու նա տընեն հիրուր առվիս, իս ալ քի տերութին չըմ անը:

Ինք խամբարծավ էրկինք:

Ախչիկ զընաց սարը պակ, կը խը՝ յոթ քասա գի հատը, հըմեն էլ ծավրով լիկ, կագիր վերա, զըտեքի շարուկ: Համեն մեկից փըշու՛մ կուտը, ատե խին խըսիրըմ կիլնը, կը մըտնը մեչ, կը մընա հատե:

Անու վից ճուճ ախպերքիր քացեր են մեճիր: Ան պըզտիկն էլ մընացեր էր, տանտըկնութին կաներ:

Էվարին ընչ ախպերքիր մեճրից իկին, ճուճ ախպեր պըզտիկ ախպոր էսաց. - Են տու իս կիրիր:

Ան էլ ան մեկէլին էսաց:

Ընցնա թալցին վար մեմեկը, մարթ վար ուր հաղկ չարավ:

Մընաց, ընչ խին խըսիր պիրին, տը փըռեն, ուր նըստեն վերա, տեսան խորոտ ախչիկըմ էլավ տուս:

ճուճ ախպեր էսաց. - Իս նա ախչիկ տ՛առնիմ:

Ան էսաց. - Ախ, անցկում մ՛ըսը, չէ՞ իս քու քուրն իմ:

Էրկու տիր կըսը. - Իս քի տ՛առնիմ:

Ան կըսը. - Անցկում մ՛ըսը, չէ՞ իս քու քուրն իմ:

Նուր հալ-հավալ ուր ախպերքիրուն կը պատմը, թը անունք ուրինց մոր ինչ սած, անունց տըրկից ինչըխ բախլութենե մաշկ-մազրակեն պատից բիրից տակ, վուր անունք չըգեն, ուր կով էրեծալ, չուր գալ, ախըր ինչ օր ընցեր էր ուր զըլխուն, կը պատմը:

Համեն օր յոթ ախպերքիր կերթեն մեճիր, ան կը մըտներ տուն, տանտըկնութին կաներ:

Պըզտիկ ախպեր, անու անուն Միրգամահմատ կիլնը, ուր քուրուչ կըսը. - Մորե թորվընեն չըթըղնիս կըրակ խըլըսը: Վուըր խըլըսը, ալ ըստը տեղ կըրակ չըկա, վուր յանք, բիրինք:

Կըսը. - Աղեկ:

Կը մընա օրըմ, ընչ մուխիր կը խանը, կը մուռնա, ըզկըրակ-տիրըմ էլ հըմեն կը խանը, խա մուխրին կը տանը, կը թափը: Չուր կընզընը միտ, կերթա մուխիր կը փըճըճը, անպա մուխըր մեչ կըրակ կը տատըրը, չէ՛, կըրակ չըկա: Կիլնը տուս, կիրիշկը՝ կըրակ չըկա, կիրիշկը, կիրիշկը, նուր կը տեսնա գարեն տեղըմ պարակ մուխըմ կիլնը:

Կառնը ուր պոռ, կերթա, կերթա կը տեսնա՝ մարթանկիր պառաւըն նըստիր մա կըրակ, աչ ծիծ թըլիր վար ճապ թիվին, ճապ ծիծ թըլիր վար աչ թիվին: Քառսուն խուընտքարը արծիծ թալիր ուր պերան, կը ծամը:

Պառաւ ընչ կը տեսնա գախչիկ, կըսը. - Վո՛ւյ, տու խազար բարով իկիր, տե՛, ա՛րը, նըստը՝ մա կըրակ, չուր իս էրթամ, ճուընը բիրիմ:

Ինչ պառաւ կը յա ճըրին, ա՛ն շուտըն ուր պոռ կը կըպուցը, կը փախը, խրիշտակըն էլ ալ ա՛նու տերութին չանը: Կը փախը, կը գա տուն, ծեռ կը տա ուր ջոբ, կը տեսնա՝ ա՛րփըշմե կըծիք ուր ջոբ չը:

Կըսը. - Ահա, վուըլա՛, իմ կըծիք մընացիր մա ա՛ն պառվո կըրակ:

Պառաւըն էլ ճըրուց կը տառնա, կը տեսնա ախչիկ չըկա, կըսը. - Հա՛յ, հո՛յ, մա իս ինչ արը, թուշըն էրկու ուտեր, նուր էրթեր:

Կիրիշկը, կը խը՝ ա՛տե ա՛րփըշմե կըծիքըն կա, կը տա վար ուր ծեռաց, կը գա, վար ախչըկան տըռան կը կայնը:

Պառաւ ա՛նցկում կը պոռա, կը ճըվա՝ ախչը, խուըզիս կուըրբան, մըհա տոռ բա՛ց:

Ախչիկ տոռ չըբանա:

Ախըր ինչըխ կանը, ախչիկ չըբանա, կըսը. - Մըհա քու ճըկուբ մա տըռան ծերպ վե խա՛ն տու:

Ախչիկ ճըկուբ կը խանը, պառաւ ա՛նու ճըկուբ կը տընը ուր պերան, կը ծըծը, կը ծըծը ա՛նու ճըկուբ, ա՛նցկում կը հերկընցըը, չուր ա՛նու սըրտը հիրծիվ կը յա, կը ծըծը չուր էվարին, գա՛նու ախպերքիր տը գա՛ն, կը թըղընը, կը յա:

Ախչիկն էլ ա՛նհաշ կընգընը հա՛տե:

Հիրիկուն ախպերքիր կը գա՛ն, ա՛նցկում կը կանչին, ծեռ չի տա, շատ կը կանչին, ախչիկ կա՛կախը:

Կըսին. - Կա յե՛ մըսիր, խիվընցիր:

Ախչիկն էլ ընցած-տա՛նցածն ա՛նուց քըսա կանը:

Կը մընա ա՛ն մեկէլ օր, ախպերքիր կերթան նե՛ծիր, ա՛ն էլ կիլընը, ուր պա՛ն կանը, ուր պա՛նիր պըրծնիլու գախ պառաւ էլըն կը գա:

Շատ լավա կանը, կըսը՝ տոռ բա՛ց:

Ախչիկ չըբանա:

Կըսը. - Մըհա քու ճըկուբ, քի մատնիկըն բիրիր իմ, մըտուցիմ հինը:

Շատ կը գորը, ախչիկ էլըն ուր ճըկուբ կը խանը տու:

Պառաւ չուր հիրիկուն կը ծըծը, հիրիկուն կը թըղընը կերթա, ախչիկն էլ կընգընը հա՛տե:

Կը մընա էվարին, ա՛նու ախպերքիր կը գա՛ն, շատ կը բոռան, շատ կը ճըվան, ինչըխ վուր կանին, քուր ծեռ չի տա: Գազան կը մընան վար տըռան, նուր Միրգամա՛հմատ կըսը. «Աղուրթ ծի պըզտիկ բա՛լնիս մեչ խա՛ ծի կեր»:

Նուր կը խանը, տոռ կը բանան, կերթան ներս:

Կը տեսնան քուր մեռուկ գի հա՛տե: Նուր կը տաքցին, կը փաթըթին՝ տե՛, տե՛, խուըզի կը գա՛ գախչիկ:

Կը խարըընին, կըսին. - Ա՛ն ի՞նչ իլիր:

Նուր հա՛լ-հա՛վալ ա՛նուց քըսա կանը, կըսը՝ ընցնա էլավ, ընցնա գընաց, իս ընցնա գա՛ցը մա պառաւ, ընցնա ա՛գատվա: Պառաւ ընցնա իրը վար տըռան, ընցնա արավ, ֆըլան-բեֆան:

Միրգամա՛հմատ կըսը. - Տու քա՛ցեք նե՛ծիր, իս կը մընան տուն:

Ա՛ն մեկէլ օր ախպերքիր կերթան նե՛ծիր, Միրգամա՛հմատ տարկախ կը բանա, կը պախկըն տարկախը հիտիվ: Կը մընա սըհաթըն էրկու, մարթակիր պառաւ կը գա, ուրախութե կը վազը:

Կըսը. - Խա՛լիմ մարթ չըկա, յամ ուտիմ, քանը շուտ ը:

Չուրս-խինգ գա՛ն կերթա, վիցին Միրգամա՛հմատ կը խասնը, խանջարըն կը գա՛նը, փուր-փսուր կը ծակը: Ըգպառաւ կը փըրտը, կանը մատ-մատ:

Պըտուընը արուն կը կաթը հանտե, ինչըխ կանը, պախթակով կը քիրը, արուն չըյա:

Միրգամա՛հմատ ուր քուրուչ կըսը. - Ըստա խամիմ կիլընը, լա՛ չըթըլիս թան:

Կըսը. - Չե՛, չըն թալը:

Փելըն կը մընա, ա՛նցկում խորոտ խամիմըն կիլընը, ախչիկըն էլ կըսը. «Մըկա տը յամ, տուրո՛ւց խամիմ բիրիմ, վուըլա՛, իս մա խորոտ խամընքիր տը թալիմ թան»:

Կը քաղը, կը թալը թան, կը մընա չուր հիրիկուն ախպերքիր կը գա՛ն, ինքըն էլ հանօր ա՛տ թան խամ չարիր:

Հիրիկուն ախպերքիր կը գան տուն, թան կը լըցը, կըսը. -
Կերեք, մըհա հրիշկը, իս էլ խամ չըմ արիր:

Ճուլ ախպեր կուտը, տան գըտել պերնեն չըր բիրըր տակ,
կը մեռնը, ան մեկելըն էլ՝ անցկում, ան մեկելըն էլ՝ անցկում, վից
ախպերն էլ կը մեռնին:

Կը մընա Միրգամանհմատ, կըսը. - Ահա, վուըլա՛, ան խամիմ
եր՝ թալիր մա թանին:

Կը մընան երկուս մընակ, անուըք էլ կիլնին, կերթան:

Շատ կերթան, քիչ կերթան, Միրգամանհմատ շատ կը ծար-
վանա, տեղըմ կիւմշու ուտաց տեղ կը տեսնա, հատուց ճուր կը
թալը:

Միրգամանհմատ կըսը. - Նա ճուր տը խըմիմ:

Քուր կըսը. - Կուըրբան, մը՛ խըմը, տիլնիս կիւմեշ:

Շատ կերթան, քիչ կերթան, կերթան տեղըմ կը խին՝
հախըրը, լա հատուց ընչ ճուր կը թալը, լըգու ուտաց տեղ ը:

Միրգամանհմատ կըսը. - Կուըլա՛, իս մա ճուր տը խըմիմ:

Քուր կըսը. - Կուըրբան, մը՛ խըմը, տիլնիս լիգ:

Կերթան, կերթան, կերթան տեղըմ, կը խին՝ իզու ուտաց
տեղեն ճուր կը թալը:

Ախպեր կըսը. - Նա ճուր տը խըմիմ:

Քուր կըսը. - Մը՛ խըմը, խըմիս՝ տիլնիս իգ:

Կերթան, կերթան, կովում ուտաց տեղ կը խին:

Ուըր ճուր կը թալը, կըսը. - Քուրիկ, իս ծարավ իմ, մա կովու
ուտաց տեղեն ճուր տը խըմիմ:

Քուր կըսը. - Քուր քի հայրան, մը՛ խըմը, խըմիս՝ տիլնիս
կով:

Գազան կերթան, քիշում ուտաց տեղ կը խին, էլմէլ կըսը. -
Նա ճուր տը խըմիմ:

Քուր կըսը. - Չէ՛, մը՛ խըմը:

Էլմէլ կերթան, մաքում ուտաց տեղ կը խին, կըսը. - Յաման,
իս ծարվո մեռա, իս մա ճուր տը խըմիմ:

Քուր կըսը. - Չէ՛, մը՛ խըմը:

Փըշում էլ կերթան, քիւր կընցընը, ախպեր շատ տանգավ
կիյնը, կը խըմը, կիլնը գան: Կիլնը գան, կիյնը քուրուչ հիտիվ,
քուր ուր մեչկանց կը կապը վիգ, կերթա: Գազան կերթա, ըզգան
կը կապը ըզճընարը ծառ, ինք կիլնը, կը նըստը ճընարը ծառ վե:

Կը մընա, թագավորը լաճ գուր ծին կը բիրը ճուր, ինչըխ
կանը, ուր ծին ճուր չըխըմը: Կիրիշկը, կը խը՝ սուրաթըմ տը գի մա
ատ ճըրուն, տես-տեն կիրիշկը, կը տեսնա ախչիկըմ տը գի
ճընարը ծառ վե:

Կըսը. - Հա՛, ախչիկ, վըրե՞ նըստիր իս ծառ վե:

Կըսը. - Ձա չէ, գի իս էլ ծի ըստա իմ կընտիր:

Կըսը. - Վուըր անցկուն ը, տու կա՛ց ըստա, չուր իս գան: Ձիմ
տանիմ տուն, գան:

Կերթա տուն, ըզուր խեր կը խարցընը:

Խեր կըսը. - Գընա՛, բի՛:

Ան էլ կը գա, ուր ախչիկ տանը, կըսը. - Նա վի՞ գանն ը:

Կըսը. - Իմն ը:

Կըսը. - Քե՛լը յանք:

Ախչիկ կըսը. - Իս մեկ կանվոլ կը գան, ուր իմ գան թալա՛ք
չանք:

Նուր կիլնը, խա թագավորը լաճուն կը գա: Կերթան խա
թագավորը, լաճուն կը փսակին:

Կը մընա, օրըմ անու կյիսուր անու գըլոխ կը լվա, բիւշու
կընիկ կը գա, կըսը. - Պընենավե մըկա տը յաս, ծի խաց բիրիս:

Շատ կըքվը հինը, կըսը. - Խաթուն, դե ի՛լը, գընա՛:

Ընչ կյիսուր կը յա, մըտըրբու կանեն սերը կանը, իրիք ասեղ
կը գանը վար թագավորը խարսը գըլխուն, ան հա կիլնը
ճընճղուկ, հուրտուս վե կերթա: Մըտըրբու կանեն էլ շուտըմ ուր
խալավքիր կը խանը, կը նըստը, ուր մազիր կը սանտըր:

Կյիսուր կը գա, կըսը. - Ան մըտըրբու կանեն ի՞նչ էլավ:

Կըսը. - Սեվավորվը ատ մըտըրբու կանեն, գընաց:

Կյիսուր կըսը. - Նա վըրե՞ քու լեշ սիվցավ:

Կըսը. - Անցկուն մընացը հիրճիվ մա սըռին, տու չիկիր:

Կըսը. - Ան վըրե՞ քու պերան քեթրավ:

Կըսը. - Անցկուն կանչիցը, չիկիր:

Կըսը. - Ան վըրե՞ քու աչքիր շըլվան:

Կըսը. - Անցկուն իրիշկիցը, տու չերեվացիր:

Կը մընա, ժանանակըմ վերա կընցընը, ան կանեն կը տեսնա
ատ գան անարգ թանգ կը շախին, կը գըտնա՝ թագավորը խար-
սին ը, ատ մեկ օր կըսը. - Դորիս իմ գան գենեցեք, իս տուտիմ:

Թագավորը լաճ կըսը. - Ան վըրե՞ չուր հեռանտ օրիր քու գան անցկում թանգ կը շախեր, հասօր կըսիս գենեցե՞ք:

Խըլխուն ընչ ժամ կը գանը ժամխար, ճընճղուկըմ կը գան, կը թառը վանր ծառիմ, ժամխըրին կըսը.

Ժամխար, տու քու ժամ կը գանիս,
Դու յոթ տիր քու Աստըված կը սիրիս,
Դու էրթաս, թագավորը լաճուն սիս,
Իմ Գառնիկ ախպեր չըգենը:

Էրկօր ճընճղուկ անթարգ կըսը, ժամխար հըրճըն օր կը մոռնա, թագավորը լաճուն չըսը, չուր հանր ճընճղուկ ուր սած կը կըրկնը, նուր թագավորը լաճուն կըսը՝ հանլ-քեֆանք ընցնա յը:

Ան էլ կը գան, կը պանդկըվը ծառը տակ, ընչ ճընճղուկ էլմէլ ժամխըրին քըսա կանը, կըսը. «Գընա՛, թագավորը լաճուն սա՛ իմ Գառնիկ ախպեր չըգենը»: Թագավորը լաճ գանդտիկըմ կը յա, կը յա, ճընճղուկ կը բըռնը: Կը տեսնա իրիք ասեղ կա վանր անու գըլխուն: Ինչ կը քեշը, ճընճղուկ կիլնը կընիկ:

Նուր թագավորը լաճ կերթա, մըտըրբու կանճեն կը կապը ծիու պուչ, կը թըղնը սար վե:

Ինչըխ կիլնը, թագավորը կիմանա՝ անտ գան անու ախպերն ը, կըսը. - Իս չուր մըկա չըր գընա, թը ան գան անու ախպերն էր, թե չէ՝ մըկա իս շուտ գան արեր էր մարթ:

Կըսը. - Կանաչ շըվ կա, ան գանին վանր անտ գանու մեչաց, Աստըծու հրամանով տ՛իլնը իսան:

Ատ շըվ կը բիրին, կը գանին վար գանու վուըտքիրուն, վուըտքիր կիլնին իսան, կը գանին վանր մեչաց, չուր մեչկ կիլնը իսան: Կը գանին վանր գըլխուն, սաղ կիլնը իսան:

Նուր թագան անունը խարսնիս արին, կերան, խըման, ծյի, քյի գանտ չըտըվին:



70. ԴԼՈ, ԼԱՎԱՆԴՈ

Կեղի երկու ախպեր, մեկ՝ Դլո, մեկ՝ Լավանդո:

Դլոն կէլնի կարգյվի, ճիչ ախպերն ա:

Դլոն ան մեկ օր Լավանդոյին կասա. - Էլի՛, էրթանքյ կալ մաղենքյ:

Լավանդոն արտար ա:

Կալ կը մաղեն, Դլոն կը մաղա, Լավանդոն կը լըցա: Քանի Լավանդոն կը լըցա, Դլոն կը մաղա, կէլի գըլիւլ, խատ չեղիր:

Լավանդոն կասա. - Ախպեր, ես կը մաղիմ:

Էն օր կը մաղա, տաննա ցորեն: Խատըն կը պերեն տուն:

Դլոն կասա. - Ախպեր, ես տ՛երթամ կարիբութեն: Իմ կին քյե թասլիմ:

Լավանդոն շատ պիտվանական կեղի, ախպըրկընգան աչք կը մընա հիմե:

Խոսք կը թալա ախպըրկին Լավանդոյին: Լավանդո խոսքով չեներ:

Էրկու տարի, իրեքյ կը մընա, ախպեր կը գան:

Կընիկ իրկան կասա. - Քու ախպեր ծի խոսք կը թալա:

Դլոն Լավանդո կը կանչա, պերա:

Կասա. - Ախպեր, ես իմ կընիկ տըվի քյե, քյե տըվի Աստըծուն, տիւ ընչի՞ անլա կենես: Իմ կին կասա՝ էնի ծի խոսք կը թալեր:

- Չէ՛, - կասա, - Դլո՛, էտի բեթախութեն ա, ես մեղավոր չեմ: Ես կընիկ չեմ էներ, մընացեր իմ անգար:

Կասա. - Ախպեր ջան, խալալ ա՛ ծի, ես կերթամ:

Կէլնի, կերթա: Կը խի, օր չու տաշտի մեջ իրեքը մաքրի կա: Մաքրիքը լըղար են: Ինգեր են կորընգնի ծաղկի մեջ, չեն կանա ուտի: Էն էնու մոտեն կը խլան ծաղիկ, էն էնու մոտեն կը խլան:

Կէլի, կերթա Լանվանդոն: Կերթա, տանշտի մեջ երկու գիսկ կը խի: Էն տանշտի մեջ էլմա կորընգնի ծաղիկ կա, էն կը տա էնոր, էն կը տա էնոր: Մեկ խընձ մեկ կլավն ա:

Լանվանդո կասա. - Էսի ի՞նչ պան ա:

Կէլնի, թոնա գան: Կը գան մըջ չու տաշտին, կը խի չորս կընիկ: Էրկուս կը գընդեն, Էրկուս կը թըխեն: Թըխեն, չըթըխեն, խաց չըկա:

Կասա. - Մայրի՛կ, էտի ինչպե՞ս ա:

Կասա. - Ախպերի՛կ, էսի անեծք ա, օր թըխենք, չըթըխենք, խաց չըկա:

Լանվանդոն կը թողնա, կը գան: Կը խի, օր գո մեջ չու տանշտին կովըմ կա, չուխա ա:

Կովուն կը խառցընա. - Էտի ի՞նչ պան ա:

Կով կասա. - Էտի էն ա, օր ձի խապեցին, ասին՝ գյնա՛, Էվի, Աղանու պըտուղ կեր, Ես կերա, մերկացա:

Կէլի, կը գան: Կը խի, օր մեկ գո ճուր կէնա բանխի մեջ:

Ճուր էրող ըզԼանվանդո կը կանչա, կասա. - Արի՛ մըն ձի, վըր ձի մարթ էլ չըկանա վեր ընցի:

Լանվանդո էկավ:

Ճուր էրող ճըրի ակ տեղ կա, կը քըչկըցուցա, տեղ կա, կը շատցուցա:

Ճուր էրող Լանվանդոյին խառցուց, ասաց. - Տիւ դի՞ր կերթան:

Կասա. - Ձի գան չըկա, Ես թողեր եմ, էկեր եմ, կերթան մըտ Ֆանվագ:

Ճուր էրող կասա. - Եսն եմ Ֆանվագ: Քիւ ցավն ի՞նչ էր, օր տիւ էլան, էկար:

Լանվանդո կասա. - Նեղացա, էլան, էկա:

Կասա. - Ինչու՞ նեղցար, Ես Ֆանվագն եմ, քիւ ցավն ի՞նչ կա, ձի կըսա՛ էրա:

- Իմ ցավ մեկ պան ա, իմ գըլխուց ա, քե կըսա չըմ էներ:

Ֆանվագ կէլնի, թուղթըմ կը գրա:

Կասա. - Գյնա՛ ճիայե խան: Էն սար իըմեն սուսուն ծաղիկ ու բերուն ծաղիկ են: Չերթան ճիայե Կան, էն տեղ դանդա:

Լանվանդոն կէլնի, կերթա: Կը սխալվի, կերթա ճիայե Կան: Ընտեղ գել, պան են: Առչ են, քանանվար են:


Կը տանա, կը գան մըտ Ֆանվագ: Ծերացե՛ր, տեղընցեր, հանիւ վանխեցեր ա:

Ֆանվագն ասաց. - Չէ՞ Ես քե ճամխեցի ճիայե խան, տիւ հինչո՞ւ գանցեր ճիայե Կան:

Էտ խոսքեր օր կը լըմըննա, Լանվանդոն կը մեռնի: Էտիկ շատ արտանր կէղի:

Տիւ խասար քիւ մըրագին, էնի խասավ ուր մըրագին:





71. ՖԱՅԻԶ

Մեկ մարդ կերթեր արտը, ընճապրութեն կենըր, կընըկ խաց կը տաներ, կընըկ ինչ կը խասներ արտ, զկընըկ կը պառկացըցեր քանկը վերեն, մատնիք տը դներ ճակտը վերեն, նետ-անեղ գարներ, մատնըքը օղենի ընցըցեր, կըսեր. - Կընըկ, էլ մարդ աշխարհի վերեն կըտորըճ կա՞, թե՞ իս:

Տարի՛մ թե երկու վերեն ընցավ, ախչկան մեր իրի ախչկան մոտ, էսաց. - Ախչի՛, դիւ վըրե՞ ընցկնեմ մոնացիր իս:

Ախչիկ մոր էսաց. - Ի՞նչըխ տը չըմոնանամ, խաց կը տանիմ արտ, իս տը պառկըմ, իմ իրիկ մատնըքը ակ դընե վար իմ ճակտըն, նետ-անեղ գը գարկե, մատնըքը օղեն ընցըցե, չուր ադա նետ ընցընե, իմ խուզըն կըլընը քանց կուրկըմ խատ: Կըսը. «Աշխըրքի վրեն կըտորըճ մարդ կա՞, թե՞ իս մնակ»:

Մեր էսաց. - Վաղ խաց կը տանըս, ինչ ան կըսը. «աշխըրքը.....», դիւ ասա՛ Սուլթան Մուրատ քանց քի կըտորըճ ի վար ախշըրքըն:

Առավուտուն կընըկ խաց առըց, տարավ, իրիկ էլմ զկընըկ պարկացըցուց վար քանկին, մատնըքը ակ իդի վար ճակտըն, նետ-անեղ իգար... գինաց, էսաց. - Կընըկ, մարդ ախշըրքի վրեն կըտորըճ կա՞, թե՞ իս մնակ:

Կընիկ էսաց. - Սուլթան Մուրատ վար ախշըրքին քանց քի կըտորըճ ի:

Մարդ էսաց. - Խաց ըզը խարամ կենա, չուրը Սուլթան Մուրատը հույութուն չառնըմ, տըսնամ ի՞նչ մարդ ի:

Կընըկ դարձավ, իրի տուն, Ֆայիզն էլ էլավ, ընկավ ճամբախ, գինաց: Գինաց, թա օր՛մ, թա երկու օր, թա քսան օր գինաց:

Օրին մեկ կերթա Սուլթան Մուրատը կոնախ ըլնը:

Չըրիկուն խաց կը դընըն ան տե, դայֆե կը դընըն:

Ֆայիզ խաց կուտը, դայֆեն ձեռ կը բըռնը, օր խըմը:

Սուլթան Մուրատ կըսը. - Դիւ դի՛ւր տ՛երթաս:

Ադ էլ զՍուլթան Մուրատ չըճանչնա, ֆնճան ձեռ կըսը. - Իս Սուլթան Մուրատը անուն լսիր իմ, տ՛երթամ, կան գան, տըսնամ ի՞նչ մարդ ի:

Սուլթան Մուրատ էսաց. - Գուրժ չուընըս խիտ:

Ադ էլ էսաց. - Չէ՛, պետք ի իս էրթամ, տըսնամ:

Սուլթան Մուրատ էսաց. - Իս Սուլթան Մուրատնըմ տըսի, իս անիւ կասեն լսիրըմ, քիւ դայֆեն խըմը՛, իս անիւ կասեն քի խամար էնիմ:

էսաց. - Մինչիվ դիւ անիւ կասեն ըզի խամար չէնիս, իս քիւ դայֆեն չըմ խըմը:

էսաց. - Չա՛, եղբար, դայֆեն խըմը՛:

էսաց. - Անիւ կասեն չէնիս, խարամ ըլնը, թե քիւ դայֆեն խըմիմ:

էսաց. - Ֆայի՛զ, քիւ ֆնճան չըթափիս:

էսաց. - Իս շաբաթ՛մ սայիս՛մ կը բռներ, ան կը սպաներ, մեկն էլ կը բըռներ: Ինչ սայիս կը բըռներ, բիրեր, կըսեր. «Դիւ իմ ձիան աղեկ չըպախիս, զքի կը սպանիմ»: Քանի սայիս բըռնիցը, մեկ չըկըրցան ձիանք աղեկ պախիս: Օրեն մեկ գինացը պազար, մեկ մարդըմ տիսա, ըսըցը. «Չըս ըլնը՞ սայիս», եդա մարդն էլ էսաց. «Իս սայիսութենի իտև կան կը գան»: Իսն էլ ան մարդ առը, տարը տուն, ասըցը. «Նա իմ գանըն, նա էլ իմ խուտ, նա էլ իմ հարդ, իմ ձիանք լավ պախըցըր, պախըցըր, օր չըպախըցըր, ինչ կը թըմը ութ օր, զքի կը սպանըմ»: Ադա մարդն էլ յեմ էտուր ձիանքտիրուն, ջրից զձիանք, մտածից. «Բանըմ կա ադա տեղ, անիւ խամար ձիանք կը մոնանան, թե չէ գանը տան, խուտ տան, հարդ տան, ընչո՛ւ խամար մոնանան: Իս ասիւր մինչիվ լուս տը կենամ հաշար, նոպա պախիմ»:

Սայիս մնաց հաշար մինչև կեսգըշիր:

- Ֆայի՛զ, ֆնճան չըթափիս:

Կեսգըշիրըն տըսավ՝ մեկ փակըխի դիւռ էբաց, զսիվ ձըն արձըկից, զթամք էզար քանկը վերեն, զձըն քեշըց դիւս, խիժավ:

Սայիսն էլ տըսավ՝ իմ կընըկս ի, էն էլ գբիգ ծըն խիծավ, իտու իտիվ կընկան:

- Ֆայի՛գ, քիւ ֆնճան չըթափի՛ս:

Գանցըն մանչ դաշտըն, սայիսն ի կընկան չըխասնը, գատը կը մնա: Մաղարե՛մ կեր մանչ դաշտըն, գծըն կապըց փակախու ու գինաց տուն: Բնո ուլնիք իմ ակընջեն էխան, էսաց. - Սուլթան Սուրատ, իլի՛ վի, աս օր քինանք, չակախանք:

- Թը լիւսնա, իմ նաճրատեղ մոտխասս ա, միլիվ կերթամ:

Իսն էլ էլա վի, զղայֆեն խըմը, խաց կիրա ու գիմ խուրճ թըլի վար ծիուն. գիմ թուր կապըցը, ծըն խիծա, տողրու գինացի մաղարի դռան վերեն կայնա, ծըն կապըցը մաղարը դիւռ, գթուր քեշիցի, բըռնիցի ծեռ, մըտա մաղարեն:

- Ֆայի՛գ, գքիւ ֆնճան չըթափիս (հալա դայֆեն բըռներ էր ծեռ)³² :

Ձդիվ սպանիցը, զդիվու գլիխ կըտոհիցը, լաճու գլիխ, գախչկան էլ կըտոհիցը, ըբիր զլաճու գլիխ, ախչկանն էլ իթալ ճամ, դիվուն իթալ ճամ, գծըն խիծա, իրի դիւռ կայնա. - Կընըկ, էրի՛, նեճիր ա՛ռ, տա՛ր տուն:

- Ասօր ի՞նչ շուտ նեճիրից էլըր:

- Ասօր իմ նեճիրատեղ մոտխասս էր:

Կընըկ զխուրճ առըց, տարավ տուն, զխուրճը բիրան բացից, էսաց. - Նեճիր խանիմ, տըսնամ:

Տըսավ համ լաճու, համ ախչկան, համ դիվու գլիխ: Խասավ, գմրազը վարուց առըց, դարպըն իզար վար իմ քանկըն, էսաց. - Մրազը վարուց, քընե կուզըն Սուլթան Սուրատ յոթ տարի ըլնը ջուրը: Ֆայի՛գ, քիւ ֆնճան չըթափիս:

Յոթ տարը էլա ջուրը, փետ կրիցը:

Յոթ տարը ինչ թմըմավ, մրազը վարուց էզար վար քանկըս, էսաց. - Մրազը վարուց, քինե կուզըն յոթ տարը էլ Սուլթան Սուրատ ըլնը շուն:

Յոթ տարը էլա շուն, ընկան փուղանքտիր, կան էկը, օրե մեկ գինացի քինուլջս տուն, դռան հեռճիվ կայնա:

Քինըս, ուր իրիկ խաց կուտեն, իրիկ իրիշից գիս, էսաց. - Ըսիկ, էս շան աչքիր կը նմանը Սուլթան Սուրատը հաչքիր:

Էսաց. - Դու Սուլթան Սուրատ չի՞ս:

Իսն էլ գլխով ըրը:

Իսն էլ ասըցը. - Դիւ իս աս տե պարկը, իս գտի՞մ հիւր ի:

Էսաց. - Քիւ սիվ ծըն քիւ կընըկ քեշից դուս, խիծավ, գինաց:

- Դի՞ւր գինաց:

Էսաց. - Գինաց մատ էրկու գըլխեն դև:

Էսաց. - Անիկ ինչ սիվ ծըն խիծավ, իսն էլ քիգ ծըն խիծա, հիտիվ գանցը. էսաց ինչ օր տըսած էր...:

- Դիւ ճամբախ գտիս, էրթաս ան տե:

Էսաց. - Քիւ ծիանք սովրուկ ին, կերթան, մաղարի դիւռ կը կանգնըն:

Ֆայի՛գ, մինքն էլ տիսանք՝ դև, կընըկ, գըրկ ու ծուց իլած, պառկած ա տե, լաճ, ախչիկ մ՛էլ իլի դիվուց, ըսըցը. - Դարձի՛, էրթանք:

Դարձան, էկն տուն, սայիս էսաց. - Տըսա՛ր, ինչ կանտար մեղք իս էրի, սպանի զմարդիկ:

Իսն էլ ասըցը. - Դիւ իս աս տե պարկը, իս գտի՞մ հիւր ի:

Էսաց. - Քիւ սիվ ծըն քիւ կընըկ քեշից դուս, խիծավ, գինաց:

- Դի՞ւր գինաց:

Էսաց. - Գինաց մատ էրկու գըլխեն դև:

Էսաց. - Անիկ ինչ սիվ ծըն խիծավ, իսն էլ քիգ ծըն խիծա, հիտիվ գանցը. էսաց ինչ օր տըսած էր...:

- Դիւ ճամբախ գտիս, էրթաս ան տե:

Էսաց. - Քիւ ծիանք սովրուկ ին, կերթան, մաղարի դիւռ կը կանգնըն:

Ֆայի՛գ, մինքն էլ տիսանք՝ դև, կընըկ, գըրկ ու ծուց իլած, պառկած ա տե, լաճ, ախչիկ մ՛էլ իլի դիվուց, ըսըցը. - Դարձի՛, էրթանք:

Դարձան, էկն տուն, սայիս էսաց. - Տըսա՛ր, ինչ կանտար մեղք իս էրի, սպանի զմարդիկ:

Իսն էլ գլխով ըրը:

³² Ճ.Ա.:

Կընըկ էսաց. - Ասըկ իմ քիւրոջ բանիրն ի:

Իրիկ էսաց. - Ինչըխ տ'ըլնը, էլմ էնինք իսան:

Կընըկ էսաց. - Պըղընծ'մ ջուր կը տաքցնիք, իս կերթամ, խավքինըն կը խագնիմ, գմրագի վարուց կը բըռնիմ իմ կտուց, կը փախնիմ, կը գամ: Իմ քիւրն էլ հիտիվեն կը գա, ինչ կը գա ինի վար ծի, իս գմրագը վարուց կը թլիմ տակ, դիւ գմրագը վարուց կը բըռնըս քիւ ձեռ, կը զանիս Սուլթան Մուրատ քամկըն, կըսըս. «Յա մրագը վարուց, Սուլթան Մուրատ էլմ էնիս հառաջի Սուլթան Մուրատ»: Միք վիրուց կըռվընք կուգանք տակ, ծի կը մոտանանք, դու կը զանիք-զանըկ կեցգիք: Ձանըկ կեցգիք մանչ պըղընծը ջրուն, կը խաշըք, կազատվըք մոտեն:

Կընըկ էլավ, խավքինըն խագամ, թռավ, գինաց քիւրոջ տուն, խատ քիւրոջ խուսավ: Գինաց դեն, էրի դեն, քիւր մեկն էլ տըսավ էգար, մրագը վարուց առըց, գինաց: Քիւրն էլ գիւր խավքինին խագամ, թռավ, մինչիվ քիւր խասավ, էնի վարուց թլից տակ: Քիւրուջ իրիկ գմրագը վարուց առըց, էսաց. - Յա մրագը վարուց, Սուլթան Մուրատ էլմ էնիս հառաջի Սուլթան Մուրատ:

Դարպ մ' իգար:

Իսն էլ էլա հառաջի Սուլթան Մուրատ:

Էրկու քիւր վիրուց կըռվան, էկըն տակ:

Իսն էլ ըսըցը. - Ձանինք ըցգինք մանչ պըղընծի ջըրըն:

Քինուջ իրիկ էսաց. - Էրկուսն էլ զանինք, էցգինք մանչ պըղընծին. չէ՞ անի էլ անիւ քիւրն ի, քիւ կընըկ ինչըխ էրաց խա թի, անի էլ սկուն տինե խա ծը:

Ինչ մատացան, զարկըն, էրկուսն էլ էցգին մանչ պըղընծը ջըրուն, խաշան:

- Սուլթան Մուրատ, - էսաց, - դիւ կը կարգվիս, քիւ քեյֆն ի, չըկարգվիս՝ քիւ քեյֆն ի:

- Ան ախչըկ, ինչ իսընը կաթ ծըծիր ի, իս անիւ ախչիկ չառնըմ:

Իսն ամին օր կերթեր նեծիր, օրեն մեկ նեծիրից իկի, մանչ ճամբխուն տըսա բախլիլ'մ դրած, ծիուց իջա տակ, զբախլիլ բացի, տըսա ախչըկ նուր իլի: Փաթութած՝ դրած վար ճամբխուն:

- Ֆայի'գ, զքիւ ֆնճան չըթափըս:

Էդտեղ զախչըկ փաթըթիցը, ըսըցը. - Տանըմ, իմ խերու խամար պախիմ:

Գինացի նեծիր, խագալըմ բըռնիցը: Կըթիցը, իտու ախչկե, կիրավ, մինչիվ միծացավ: Ախչըկ ինչ միծացավ, պսակիցը վար ծը: Լաճ, ախչըկ մ'էլ իլավ: Մեկ ժամանակ'մ վերեն ընցավ, լաճ, ախչըկն էլ միծացան. իսն էլ կառներ գիմ կընըկ, զլաճ, ախչիկ կերթեր նեծիր, անցկուն զմեմեկ կուզընք, ավուր'մ ճամբախ խապար տալեն կերթենք, չընք ակախը վար մեմեկը:

Օրե մեկ էլանք, ընկանք ճամբախ գինացընք, անցկուն գինացընք, էրկու ավուր ճամբախ հեռացանք, գըշիրը էլ չըկարցան գենք: Մնացընք դիւս, գացընք, մտանք հեր'մ ինի տըսանք՝ ինչ Աստված ստեղծի կերակուլ, էդա հերի մեջ կա:

Ըսըցը. - Իս գըտիմ, էսա հեր անտեր չի: Էրթանք, պաղկվիքըն էնա քիւնճ, ասոնց տեր գան, վար մի չակըխըն, ակըխին, զմի կը սպանըն: Առավուտուն շուտ էրթանք:

Գացընք, մտանք ան քիւնճ մինչիվ հըրիկուն, հըրիկուն տըսանք քանսուն խատ դիվ ին հեդա հերը տակ: Նստան, զուրինց խաց, կերակուլ դընըն, պատրաստըն, կիրան, խման:

Գընըն ինչ կը լըցըն, կտան հըրարու, կըսըն. - Սուլթան Մուրատը կընկան կինացը, թու իսանը կաթ չըկերի, միծացը:

Դիր'մ, էրկու, անցկուն ասըցըն. Սուլթան Մուրատը կընըկ ակըխավ, էսաց. - Մարդի'կ, զծի խագ'մ կուգան:

Իսն էլ. - Աստուծո սիրուն ըլնը, հաշ կաց դիւ խագաս, անիւնք տը ակըխըն, ալ մի ազատում չըկա:

Քիչ էլ մնաց, անիւնք ամին տըսըն. - Սուլթան Մուրատը կընկան կինաց:

Կընըկ էսաց. - Մարդի'կ, էլ ըզի չըմ կերի զավթը, իմ խագ կը գա:

- Գլիխ մտու իմ ծուց ինի, գանդտուկ խագա՛, չակախըն:

Կընըկն էլ քանը կերցավ, ճղաց, դեկրն էլ ակախան, գացըն առըն, բիրըն, ասըն. - Մինք ցիրիկուվ քիւ հիտիվ կան գիգենք, դիւ գըշիրուվ ընկան մի ձեռ:

Ըզը զընճուվ կապըցըն սուն վի, ճրագ դըրն վար գլխիւս, կընըկ առըն մեջքիր, կեսգըշիրըն միծ դե առըց գկընըկ, պառկավ ան տեղ:

Քիչ'մ մնաց, ախչըկ ակախավ: Էլավ ջուր առըց, խմավ: Իրի տը պառկեր, - Աստե իմ ձեռքիր քիչ'մ թուլցըցու, իս մեռա, - ըսըցը:

Ախչըկ էսաց. - Դե՛, կը մնջի՛ս, չէ՛ իմ ջուլչ խոր կըսիմ, ըլնը քիւ ջուլչ փրդիւ՛ճ քիւ ականջ էնը:

- Ախչի՛, սիւթ կըսըմ, գնա՛, պառկը՛:

Քիչ՛մ մնաց, տըսա տըղեն գինաց դիւս, իրի, ըսըցը. - Ա՛յ որ-դի, քիչ՛մ իմ ձեռքիր թուլցըցո՛ւ:

էսաց. - Ի՞նչխ թուլցըցիմ:

- Գինա՛, թուր կա տուն՝ գլխու տակ, ա՛ռ, բի՛:

Թուր առըց, իրի: Տըղեն պըգտիկ ի, թուր միծ ի, չըկերի կըտռը: Քսից-քսից, կըտռըց կապիր:

Ըսը. - Որդի՛, գինա՛, պառկե՛:

Իսն էլ զընճըլ իմ մոտեն քակիցը, թուր առը, գինացը, տաս դիվու գլիխ կըտռիցը, իրի, կայնա սան առաջ: Ճրագ դըրը վար իմ գլխուն:

Դիվ էսաց. - Սուլթան՝ Մուրատ, ի՞նչ էրագըս տըսի:

- Էրագ դիւ իս տըսի, Սուլթան՝ Մուրատը կընկան ծուց դիւ իս քինի, թու իսընի կաթ չըկերի, իս էրագ՛մ տըսա, քանսուն ճընճուղ տեղ՛մ են, բաշող իզար վերեն, տաս սպանից, մնաց եռսուն:

Դիվ էսաց. - Ան աչքով դիւ լուս չըս տըսնա, ան գուրծ ինչ դիւ կան կը գան, շատ հեռու ի:

Դիվ քինավ, գթուր առը, տասը վզըն էլ կըտռիցը, քիսան սպանիցը, մնաց քիսան: Էլմ իմ տեղ կանգնա, ճրագ դըրը վար իմ գլխուն:

Դիվ էլմ ակախավ, էլավ, նստավ, էսաց. - Սուլթան՛, ... ասոր գըշիր ինչ էրագ իս տըսի:

- Իս էրագ չըմ տըսի, էրագ դիւ... իս էրագ՛մ տըսի, քանսուն ճընճուղ տեղ՛մ ին, բաշող իզար վերեն, քիսան սպանից, մնացըն քիսան:

էսաց. - Ան ինչ դիւ կըսըս, քիւ գաչքով չըս տըսնա:

Գլիխ տի գետըն, էլմ քինավ: Իսն էլ թուրն առըցը, գինացը տասնի վըզն էլ կըտռըցը, մնաց տաս:

Դիվ էլավ, էլմ նըստավ, էսաց. -:

Իսն էլ ըսըցը. - Իս էրագ՛մ տըսա, քանսուն...:

Դիվ էսաց. - Ըռահաթ կա՛ց, դիւ տղա բան չըս տըսնա:

Դիվ էլմ պառկավ, քինավ:

... Թուր առըցը, գինացը, ինն դև սպանիցը: Մնաց միծ դև:

Դիվ էլավ, նըստավ, էսաց. - ...

Իսն էլ ըսըցը. - Ձմենն էլ սպանիր իմ, մնացիր իս դիւ մնակ, ինչ կենիս, էրե:

Դիվ կանգնավ ուր տեղեն, դևն ու իսն էլ առընք հիրուր, կըռըվ:

Դիվ ինչ կը կոռի, կընըկ կըսը՝ դև՛, դե՛, դև՛, սպանե՛, իս ժխտ քիւն իմ, ինչ իս գդև կը կոռեր, կընըկ կըսը՝ դե՛, Սուլթան՝ Մուրատ, դե՛, սպանե՛, ժխտ իս քիւն իմ:

- Ֆայի՛գ, գթու ֆնճան չըթափիս:

Ձարկը, գդև սպանիցը, իլա, տըղեն առըցը, հերեն իլա-դիւս, ջաղջի քար տըվը հեռջիվ դռան: Կընըկ, ախչըկ մնացին հե՛րու մեջ, գտըղեն առըցը, գինացը:

Մեկ ժամանակ՛մ վերեն ընցավ:

- Ա՛յ որդի, էլի՛, էրթանք, տըսնանք՝ ադա կընըկ, ադա ախչըկ ինչ կենին:


Գանցընք հերը հեռջիվ, քարը ծակեն իրիշիցը, տըսա՝ կընըկ լեշիր կերի, գախչըկն էլ կերի:

Աչ ընկավ հիս, էսաց. - Սուլթան՝ Մուրատ, Աստուծո՛ւ սիրուն, քիւ էրես բի՛, անա քարը ծակուն թամաշա ինիմ՝ նիւր թուղ մեռնիմ:

Իսն էլ էրիս տարա հեռջիվ քարը ծակուն: Ան էլ ձեռ իթալ, գերեսի կղանց կըտռըց, իթալ բիրան:

Իսն էլ կընըկ թուղի, գլաճ առըցը, իկի քաղաք: Թոպա էրը, ալ չըպսակվա: Ֆայի՛գ, նա Սուլթան՝ Մուրատը կասեն քի խամար, որ կասին էլ չըս խավատար, Սուլթան՝ Մուրատ իս իմ:

Ինչ կասեն թըմից, Ֆայիզն էլ ֆնճան ձեռ մեռավ:





72. ՊԱՏԵԼԽԱՆԻ ՄԻՐԱՆԸ ԵՎ ՇԱՎՐԱՆԱ ԹԱԳԱՎՈՐ

Պատըլխանի Միրանի խեր էսաց. - Իս կը մեռնըմ, Սիվ սար
նեջըր չէրթաս:

Խեր մեռավ, օրեն մեկ դըսուց իրի տուն, շիմուց տակ ձե՛մ
ըլավ. - Ա՛խ, Պատըլխանի՛ Միրան, դիւ կերթաս, պա ի՞ս:

Ըրըշից տըսավ մարդ՛մ ճխան դրած ականջ՝ կի ան մարդ
դռան ճխանը տակ:

Էսաց. - Պատըլխանը Միրան, իս թըղնըս, քանի քիւր կա իմ
աչքիւր, իս ըլնըմ քի խըզմեթքար:

Պատըլխանի Միրան էլավ, տը թղներ, մարդիկ ժողվան,
էկըն, ասըն. - Քիւ խեր գիւրովեն ի էսա մարդ բըռնիր, դըրը
ճխանը տակ, մը՛ թուղը:

Էսաց. - Տը թուղնըմ, ըլնը, իմ քաղաքն էլ ավըրը:

Ըզմարդ իթուղ, էլավ անիւ խըզմեթքար, գինաց, քիւր իլից
վար ծիռներուն, լվացվավ: Եղ խըզմեթքար ախ՛մ էրավ:

Էսաց. - Ինչո՞ւ խամար ախ էրըր, բիբի՞կ իս, տկլո՞ւզ իս,
անո՞թը իս, թե՞ մե քի խապար՛մ տըվը:

Էսաց. - Մարդ ըզը խապար չըտըվը, ախ տ՛ենըմ, պա չէնըմ,
չէ՞ իսն էլ տեղաց՛մ թագա՛վուր էր, իսն էլ մարդ ուներ:

Էսաց. - Դիւ ո՞ր տեղաց թագա՛վուրն էր:

Էսաց. - Իս Չիչանց թագա՛վուրն էր, յոթ տարը խա քիւ խոր
կըռըվ էրը, քիւ խեր ըզի բըռնից, իդի աս տե:

Էսաց. - Քի. իրավունք տվիր իմ, գինա՛, քիւ թագա՛վուրու-
թենի՛ն խա՛սը:

Պատըլխանը Միրան թուղ իտու, գինաց վար հիւր թագա՛-
վուրութենի՛ն:

Գըշիր-ցերեկ՝ ա՛խ, Պատըլխանի՛ Միրան, ա՛խ, Պատըլխա-
նի՛ Միրան, օրմըն էլ չըմեռներ. իմ աչքիւր ինե քիւ իրես, զքի տես-
ներ, նիւր մեռներ:

Պատըլխանի Միրան էլավ, Սիվ սար նեջըր գինաց, տըսավ
խազալ՛մ հեռջիվ ծիու՛ն թռավ-փախավ, զծըն իթուղ իտիվ:

Խազալ կը փախը, շատ չըհեռընա, անցկուն կը հեռընա,
ծըն չըխասնը: Մինչիվ կեսօր կուտռավ, ինք, հիւր մարդիւր հիտիվ
գանցըն:

Պատըլխանի Միրան մարդիւրուն էսաց. - Դիւ հե՛տ դարծեք,
գանցե՛ք, իս նա խազալը հիտիվ տ՛երթամ, մինչիվ նա խազալ
չըբըռնըմ, չիմ դառնա:

Մինչիվ հիրիկուն հիտիվ խազալըն գինաց. գինաց կամշը-
ղի բիրան, վերեն մըթնավ: Խազալ մտավ մաչ կամշըն, կուրսավ,
ինք մնաց ան տե, նե կերի հետ դառնա, նե կերի էրթա: Յուրը
մըզրախ իզար ճակտըն, ինքն վար ծիու քանկին հեռջիվ ակախ
գինաց:

Աղ խազալն էլ գինաց, խապար տարավ Չիչանց թագա՛-
վուրըն, էսաց. - Իլի՛, խա՛սը, Պատըլխանը Միրան կի կամշըղի
գլի՛խ, բի՛, չըխասնըս, մըզրախ զգլի՛խ տը ծակը, մեկալ կնարեն
դիւս տա: Խընգ-վեց մարդ խըրկից:

- Գանցե՛ք, գՊատըլխանը Միրան անցկուն քնուկ առե՛ք, բի-
րե՛ք սղա:

Գանցըն, առըն, բիրըն, դրըն հեռջիվ թագա՛վուրըն:

Թագա՛վուր կանչից. - Պատըլխանը Միրան, Պատըլխանը
Միրան:

Աչքիւր էբաց, շաշմիշ էլավ, էսաց. - Իս կամշըղի գլի՛խն էր,
մըկա ի՞նչըխ էկեր իմ աս տե:

Թագա՛վուր էսաց. - Ի՞նչ կը մտածիս, դիւ իմ մարդիւր չըճաչ-
նաս, ըզի էլ չըճաչնաս, չէ, քիւ խըզմեթքարն իմ:

Պատըլխանը Միրան նըստավ թագա՛վուրը կըշտըն:

Թագա՛վուր խրկից, խաց, կերակուլ իբի, կերան, խման,
էսաց. - Պատըլխանը Միրան, դիւ ասա տեղրանք:

Էսաց. - Իսն էլ չըմ գտի, առավուտիվ էկը Սիվ սար նեջըր,
առավուտնախառ խազալ՛մ հեռջիվ իմ ծիու՛ն թռավ, ընկանք

հիտիվ մինչիվ կեսօր կուտռավ, իմ մարդիր խա ծըկ էկըն կեսօր ինչ կուտռավ, իմ մարդիրուն ըսը. «Չիտ դարծեք, իս քանը նա խազալ կերթա, ան խազալը հիտիվ տ'երթամ»: Խազալ չիւր կամ- շըլըղի գլխի բիրը, վար ծի մըթնավ, իս մնացը ան տե, վար իմ ծըու քանկըն: Իմ ակախ գնացիր էր, ակախա քու դիվանը մեջ:

Եսաց. - Պատըլխանը Միրան, ան խազալ չէր, ան իս ծամբ- խըցը հիտիվ քի:

Եսաց. - Դու պետքը ան խազալ տաս ըզը:

Եսաց. - Իս չըմ կերի տա քի, իս իմ խազալ տամ քի, անըկ իմ չի:

- Իս զան կուզըմ, ինչ իրի հետիվ ծը:

Եսաց. - Անըկ Շավրանա թագավուրը ախչըկն ի, ուր խոր մոտեն ըռըկի, տարըմ կա, իկի աս տե, իմ հոք'մ անու վրեն չընցի, կըլըն առավուտն էլ էրթա:

Եսաց. - Պա էնը չըտաս, իս քու չըմ առնը:

Եսաց. - Նե դիւ, նե խազալ, իս չըմ կերի, կուզը գքի թուղ առնը:

Խատ մեկը խուսան, իրարու խավնան, գխազալ առըց:

Չիչանց թագավուրըն Եսաց. - Իս տ'երթամ իմ քանղաք, ամիսըմ երկու իլավ, իմ քանղաք առանց թագավուրը:

Չիւր խազալ առըց, գինաց գիւր քանղաք, ամին օր կերթեր նեջըր ուր խամար: Վուզըրը աչ ընկանվ գխազալ, սիրու առըց, խըվընդցավ, Եսաց. «Իս նա կընկան չըմոտանամ, տը մեռնըմ, պա ինչըխ էնինք, ինչըխ չէնինք, մեկ մարդ'մ բիրինք, սուտ խարս- իս'սմ դնինք, ըսինք՝ վուզըրը լաճ տը պսակինք, կանչինք Պա- տըլխանի Միրանի խազալ, բիրընք խարսնըս»:

Խարսնըս դրըն, գՊատըլխանը Միրանը խազալ կանչըցըն, Պատըլխանի Միրան Եսաց. - Իս չըմ իգան, դու գինա, իս չըմ էրթա, էրթամ, փոշման տ'ըլընըս:

Չվուզըր լաճ բիրըն, ախչկան խամըլ խագուցըն, խանըցըն խաղը, գխազալն էլ խանըցըն խաղը, կընկտիր մեկ-մեկ գվուզըր լաճուն ծեռ թուղըն, վուզըրը լաճ էրի, ընկանվ խազալը ծեռ, խա- զալը ծեռ քանըց, խազալն էլ էլավ, ագուց'մ իզար վար սըրտըն, սպանըց, թուղ խտու, իրի տուն, տունն էլ չըկայնավ՝ Շավրանա քանղաք, դիւ դի'ւր իս, չի' իս էկը քի:

Ախչըկն էլ գինաց տուն, խոր իրես, մոր իրես չըգինաց, մնակ մըտավ հողե'մ ինի:

Քանըմ օր վերեն ընցավ, Պատըլխանը Միրան կըսկըծուն խըվընդցավ, մարդ չըր թուղըն յուր իրես էրթեր, տը կանչեր ուր խուտամուջ, ամեն առավուտուն անու խաց, կերակուլ, քիւր տա- ներ, դներ խատ անու կըշտըն, կեր դիւս, գդուր փակեր վերեն մինչիվ մեկէլ օր առավուտուն մարդիւ իրես չըր տըսնա:

Պատըլխանի Միրան հիրիկուն էրի տուն, մեր անցքուն լացը աչքիր կուրցը, Եսաց. - Մարե, վըրի' լացիրըս անցկուն:

Եսաց. - Չի'ւր ի խազալ:

Եսաց. - Խազալըն հի'նչ իլի:

Եսաց. - Խազալըն գանցը, չէ' խազալ քի Եսաց' իս չըմ էրթա խարսնըս, դիւ փուշման տ'եղընըս: Դու ըսըցըր՝ չէ', տ'երթաս: Խա- զալ գինաց ան տե, վուզըր լաճ բիրած՝ ախչկա խամըլ խագու- ցած, իլի խաղը, վուզըր լաճ էկի բըռնը խազալը ծեռ, խազալը ծեռ քանի, խազալ իլի, ագուց'մ գարկի, վուզըր լաճ սպանը, իրի տուն, կասեն էրավ, ըռըգանվ, թուղ խտու, գինաց:

Պատըլխանի Միրան առավուտուն էլավ, գծըն խիծավ, գինաց չիւր կամշըղըր գլխի, գծըն կայնացըցուց, մըզրախ խտու գլխուն, քինավ: Չիչանց թագավուրը խազալ իրի, Պատըլխանը Միրանը տըսավ:

Դարծավ, գինաց, խապար տարավ խոր, Եսաց. - Պատըլ- խանը Միրան էկի, կամշըղըր գլխի կայնը:

Ան էլ վից մարդիւ Եսաց. - Խասըցե'ք, գՊատըլխանը Միրան քինաթաթախ վիրուցե'ք, բիրե'ք աս տե:

Վից մարդ գանցըն, գՊատըլխանը Միրան քնուկ վիրուցըն, տարըն թագավուրը դիվան դրըն:

Թագավուր կանչից. - Պատըլխանը Միրան, Պատըլխանը Միրան:

Աչքիր էրաց, տիսավ ինք էլմ թագավուրը դիվանն ի:

Թագավուր Եսաց. - Աստված ինե, դիւ չըր իգե աս տեղրանք, ի'նչըխ իլավ՝ էկըր:

Եսաց. - Խազալ ըռըկի, էկի:

Եսաց. - Աս տե չէկը, գանցե ուր խոր քանղաք, չէ' իս քի ըսը՝ դիւ գուրծ չունըս ան խազալըն, իս քի ըսըցը՝ իմ խազալ առ,

տա՛ր, զան մը՛ տանը, ան ասօր սդա ի, վաղ կերթա ուր խոր քն-
դաք, էրի՛, իմ խազալ տամ քի, գինա:

Էսաց. - Չէ՛, չըլնը, իս տ'երթամ իտեեն:

Էսաց. - Աղբե՛ր, տարվան մը ճանբախ ի:

- Տարվան մը ըլնը, տաս տարվան ըլնը, իս տ'երթամ:

Չիչանց թագա՛վուրը խազալ էսաց. - Անպատճառ տ'երթա՞ս:

Էսաց. - Տ'երթամ:

Էսաց. - Դիւ էրթաս, ըսն էլ տը գա՛մ խա քի:

- Դիւ ճանբախ չըս գըտի:

Խազալ իլավ, էրկու շըմըք իբի, մեկ էլ գտակ իբի, էսաց. -
Նա գտակ կը դըմըս քիւ գլիխ, ցերեկ դիւր էրթաս, մարդ քզի
չըխե, ա՛ռ նա շըմըք, մեկ դիւ խա՛գը, մեկ իս, նա շըմըք վուվն օր
խաքընը, քնռսուն ավուր ճանբախ մեկ օր կերթա:

Ձիւրիցն հիող քա՛ր էրըն, գա՛ցըն:

Քնռսուն ավուր ճանբախ մեկ օր կերթըն, թա օր'մ թա քսան
օր ճանբախ գա՛ցըն, խասան ծուվու բիրան, խազալ էսաց. - Կեր-
թաս, նահան քա՛ր կը վիրըցիս, ձիու՛մ կա՛մ կի աղ քա՛րը տակ, ան
ձիու կա՛մ կը տաս քիւր, խրեղեն ձի՛մ ծուվուց կըլնը, գա՛: Դիւն էլ
զկա՛մ կը դնիս բիրան, կը խիճնըս, գքի կը տանը, ծուվ կը խըլըս-
ցըցը: Կա՛մ բերնեն կը խանըս, ձըն կը թուղնըս, նա գտակն էլ կը
դնըս քի գլիխ, դիւ խալղի կը խիս, խալղ գքի չըն ըխի:

Պատըլխանը Միրան գինաց, գքա՛ր չիւռ իտու, կա՛մ գքա՛րը
տակեն էխան, իտու քիւր, սիվ ձի՛մ ծուվուց իրի, գգտակ առըց,
զկա՛մ իղի ձիու բիրան, խաթր ուզըց խազալը մոտեն, էսաց. - Դիւ
դարձի՛, գինա:

Խազալ էսաց. - Չէ՛, իս տը կենամ աս տե, չիւր դիւ գա՛ս:

Պատըլխանը Միրան գձըն խիճավ, քչից վար ծուվըն, տա-
րավ ծուվ ընցուց, կա՛մ իխան, գաստ քա՛ղաք էրավ, գինաց, մտավ
քա՛ղքը մեջ, էսաց. «Իմ գտակ տը ճռպիմ դնիմ իմ գլիխ, մարդ ըզի
տը խե՞»:

Գտակ էղիր գլիխ, մանչ քա՛ղքըն գինաց, անոթը էր, էսաց
տ'երթամ նա քա՛պապճու մոտ, միա ըզի տը խե, թե չէ:

Գինաց, մտավ քա՛պապճու տքա՛ն, քա՛պապ, խաց առըց, իղի
ան տե, կիրավ, մարդ չըխուսավ, էլավ տքնեն դիւս, մարդ չէսաց
փարեն տո՛ւր, նո՛ւր գինա:

Իլավ, գինաց թագա՛վուրը սարեն, դիւ չըսըս՝ խազալ ինչ
իկի՛ խոր, մոր իրիս չըգա՛ցը: Գա՛ցը, մտե հօղե՛մ ինի՛ Պատըլխան
Միրանը կըսկըծուն խըվընդցի, ամին առավուտու խուտամ խաց
կը տանը էղու, դիւռ կը փակը վերեն, գա՛ դիւս մարդիւ իրիսը
չըտըսնա, մարդ անիւ մոտը տը չէրթա, լա՛մ մ՛ էլ իլիր ի:

Պատըլխանը Միրան մնաց անտե մինչիվ առավուտուսն,
խուտամ դիւռ էբաց, խաց տարավ, ան էլ խուտամուչ իտիվեն
նիրս մտավ, նըստավ ան տե, ան գխազալ խե, խազալ զան չըխե,
խուտամ խաց իղի ան տե, էլավ, դիւռ փակըց, գինաց: Խազալն էլ
էլավ, էրկու գդել կերակուլ կիրավ, պուտ'մ էլ քիւր խմավ, էլմ
պարկավ ուր տեղ, քինավ: Պատըլխանը Միրան նստավ վար,
կերակուլն կիրավ, էթուղ էրկու գդել, քիւրն էլ խմավ, մեկ պուտ
քիւր էթուղ:

Խազալ ակախավ, էլավ նստավ: Կուժ առըց, քիւր տը խմեր,
տըսավ մեկ պուտ քիւր կա, փշու՛մ խմավ, կուժ իղի ան տե:
Կերակուլը իշից, կի էրկու գդել կերակուլ կա ամըն մեջ, էսաց.
«Ձա՛նըմ, մարդ չէկը աս տե, դռնիր փակ, կատու չէկը, անա կե-
րակուլ ի՞նչ իլի»: Դարձավ էլ ինք էսաց. «Չէղնը՞ իս կերա, չա-
կախա»: Էլմ պարկավ ուր տեղ, առավուտուն էլմ խուտամ դիւռ
էբաց, իղի հեռջիվ, դառցավ, գդիւռ փակըց, գինաց: Խազալն էլ
էլմ էլավ, քիչ'մ կերակուլ կիրավ, քիչ'մ քիւր խմավ, պարկավ:

Պատըլխանը Միրան էլավ, կուշտ կերակուլ կիրավ, քիւր
խմավ, նստավ ան տե: Խազալ ակախավ, էլավ նստավ, ձեռ իտու
կուժ, քիւր առըց, տը խմեր, էլմ քիւր խմածըն, ըրըշից կերակուլ,
տըսավ կերակուլն էլ կիրած, էսաց. «Ա՛յ ջանըմ, էսիկ սատանա՞
կա ըստե, ի՞նչ կա, ասա ո՞ր տեղով կուգա՛ն»:

Էսաց. «Ընսնե՛ք, ճընսնե՛ք, ըզի նշանց կտեք, տվե՛ք, թե չէ
իմ խոր խապար կըտամ գձի հավըտան-հավիտյանըց կորցըրա»:

Պատըլխանը Միրան չըգըտը անիւ խոր տան դիւր ը, գինք
չանք չէտու, էսաց խազալ. - Պատըլխանը Միրանը քա՛սարը ինչ
մանչ իմ սըրտըն, դու վո՛ւվն իք, ըզի շանք չըտեք, իս ըզի անու
փանճարեն թըլիմ տակ, տը մեռնըմ:

Պատըլխանը Միրան էսաց. - Իս ան ապով իմ էկի, ան գընք
թըլի տակ մեռնը, ալ իս էկիր իմ ի՞նչ:

Ըզգտակ իղի գիտըն, խազալ տըսավ, թռավ, էլավ Պատըլ-
խանը Միրանը գլիխ պագնից:

Էլավ զդուռ ծիծից, խուտամ իրի դուռ իբաց, էսաց. - Ինչ կանչիս:

Էսաց. - Կերթաս խաց, ջուր կառնըս, կը բիրիս:

Էսաց. - Դու ասօր շատ զատ իս կիրի:

Էսաց. - Շատ աճեպ տըսար, իս էրկու օր սաղացիր իմ, իմ լաճն էլ կուտը:

Էսաց. - Իս կուզըմ շատ ուտըս:

Գինաց խաց, կերակուլ, ջուր առըց իբի, դարձավ, իլավ դուս:

Մեկ, էրկու, իրեք օր՝ մ վրեն ընցավ, խագալ գՊատըլխանը Միրան տըսավ, սաղացավ:

Ղանդահարա թագավուր էլավ, մարդ դրկից, էսաց. - Գացե՛ք մըտ Շավրանա թագավուր, անու խագալ կըտա ընծի, թը տա, չըտա, տը գամ, անու քնդաք տ՛ավրըմ:

Մարդիր էկըն, թագավուրը դիվան նստան, ասըցըն. - Մի թագավուր կըսը՝ անու ախչիկ կըտա ըծի, թը տա, չըտա, իս տը գամ, անու քնդաք տ՛ավրըմ:

Էսաց. - Ջանըմ, իս ախչըկ ի՞նչըխ տը տամ, ան դրուն անըկ ուզըց, ախչըկ փախավ, գինաց: Վից-յոթ տարը մնաց դուս, դսուց ինչ իկի, իմ աչք զանու իրիս չընկի: Նա՛ մարդ մատ ան կերթա, նա՛ էն մատ մարդ կերթա: Համին առավուտուն խուտամ խաց կը տանը, դուռ փակը, ընքն էլ խըվանդ ը, լաճ՛մ էլ իլի, տիրով ը, անտեր չի, իս տամ:

Ան մարդիկն էլ դարձան գացըն, խապար տարըն: Ինչն օր էսաց, ամին ասըցըն Ղանդահարա թագավուրըն:

Էսաց. - Ըլեցե՛ք, ասկա՛ր կապեցեք, էրթանք, զանու քնդաք ավրինք, զախչըկ առնընք, բիրինք:

Էլան, ասկա՛ր կապըցըն, էկըն Շավրանա քնդըք բուլուր բըռնըցըն, նստան: Շավրանա թագավուր առավուտ էլավ, տըսավ քնդըք չուրսբուլուր բռնած, նստած:

Մարդ դրկից մատ Շավրանա թագավուր. - Ախչըկ կըտաս, տու, չըտաս՝ զքնդաք կավրըմ:

Թագավուրն էլ էլավ, գինաց մատ ուր ախչըկ, էսաց. - Հա՛յ, ախչըկ, գինա՛, Ղանդահարա թագավուր ա՛ռ, քնդաք մի՛ տու ավրիլ:

Էսաց. - Պատըլխանը Միրանը քնսար ինչ մանչ իմ սըրտըն, քիւ քնդաք ավրը, իս զան չըմ առնը: Մըկա դարձը գինա՛, իրիկ-վան գաս, իս քի խապար՛մ կտամ:

Խեր դարձավ, գինաց:

Էսաց. - Պատըլխանը Միրան, թե բանըմ քինե կը գա՛, իս իմ, զան չըմ առնը ու թե բանըմ քինե չըգա՛, իլի՛, ա՛ռ ըգի, գանդտիկ փախինք, էրթանք:

Էսաց. - Խրկե՛ քիս խոր Ղանդահարա թագավուրըն էսա՛ ինչ անու մոտեն կը գա՛, թը էնը:

Խեր էրի անտե, ախչըկ էսաց. - Իս զան չըմ առնը, ինչ անու մոտեն կը գա՛, թը էնը:

Էսաց. - Ախչը՛, ինչ դու Պատըլխանը քնսար կերդվընաս, իմ խելքը իմ զլխուց կերթա:

Խերն էր, ըռըգավ, գինաց:

Խագալն էլ էսաց. - Դե՛, բանըմ քինե կը գա՛, էրա՛:

Պատըլխանը Միրան էլավ, զեդ գտակ էդըր գուր գլիխ, գինաց ծուվու բիրան, զկան ավզըց էխան, էգարկ ջուր, սիվ ծըն ծուվուց իրի դուս, ձեռք՛մ սիվ շուր վրեն, ձեռք՛մ էլ ճագ:

Էլավ, շուրիր խագավ, զճագիր կապըց, կան իդի ծիու բիրան: Էլավ խիծավ, քչից գինաց մանչ ասկա՛րըն:

Ասկա՛ր բաժինըմ կըտռից, մնաց էրկու: Դարձավ էրի, տարավ զծըն ծովու բիրան, զկան...., գինաց թագավուրը սարեն:

Խագալ կանչից խուտամուչ. - Խաց, կերակուլ շատ բի:

Խուտամ խաց, կերակուլ էբի ան տե, ինչ խուտամ խաց կը բիրեր, Պատըլխանը Միրան գտակ կը դներ, ինչ կերթեր, գտակ կը դներ գիտըն:

Խաց կիրավ, պըրծավ, կանչից խուտամուչ, էսաց. - Կերթաս, իմ խոր խապար կըտաս, գա՛:

Խուտամ գինաց, թագավուրըն էսաց. - Խագալ զքի կուզը:

Թագավուր էրի մատ ախչըկ, էսաց. - Ասօր ի՞նչ կեր, ի՞նչ չըկեր:

Էսաց. - Մը՛ խոսա, ասօր սիվ ծիավուր՛մ էրի, չըմ գըտի՛ Աստուծո՛ւց էրի, ո՛ւստը էրի, ընկավ ադա մանչ ասկըրին, մինչիվ հիրիկուն կըռըվ խոու, բաժի՛մ սպանից, էրկու մնաց:

Էսաց. - Չէ՞ իս քի ասըցը՛ Պատըլխանը Միրան քնսար ինչ մանչ իմ սըրտըն, իս զան չըմ առնը:

Էսաց. - Ախշը՛, իս քի շատ կուզըմ, ադա Պատըլխանը Միրան ինչ դիւ կերդվընաս, ինչ դիւ քնր'մ գարնիս վար իմ գլխիւն:

Խերն էլմ ըռըգամ, իթուղ գինաց:

Առավուտուն Պատըլխանը Միրան գուր գտակ էդիր գլիխ, գինաց ծուվու բիրան, գկնամ ...անիւ շորիր, անիւ ծըն ամին սիվտակ խեծավ, գինաց ընկնամ մանչ ասկըն, գասկնար սպանից բիւլուր, գինաց գթագնավուրը տեղն էլ առըց, ադա թագնավուրըց խարճ առըց Շավրանա թագնավուրը խամար, դարձավ էրի...:

Գինաց սարեն, գտակ էդի, թագնավուր էրի մատ ախշըկ, ախշըկ էսաց. - Ասոր ինչ կա, ինչ չըկա, քի մարդ իմտատ էրի:

Էսաց. - Ասոր բիզ ծիավոր'մ էրի, գասկնար ըմեն սպանից, ան թագնավուրը տեղն էլ առըց, ծի խամար էլ խարճ կապըց:

Էսաց. - Չէ՞ իս քի ասըցը՝ Պատըլխանը Միրան քնսար ինչ մանչ իմ սըտըն, իս գան չըմ առնը:

Էսաց. - Ախշը՛, ինչ դիւ գՊատըլխանը Միրանը գլիխ կերդվընաս, յան նախրուրդ իլի, յան խուվիվ, վերեն ծռիր իս, չըմ գըտի, աս ավուր ծիավուրն էր, թե հերեկըն:

Էսաց. - Պատըլխանը Միրան, չուր հի՞փ գքի տը պախիս, իլի՛ դիւս:

Պատըլխանը Միրան գգտակ էդը գիտըն, թագնավուրն էլ տըսավ ճըհեկըն՝ չուտին, չըխմին, թամաշա էնըն:

Գինաց, գՊատըլխանը Միրանը գլիխ պագնից, էսաց. - Չըխո դիւ իս առը, իլի՛, նըստը՛ թախտ:

Էսաց. - Քիւ թագնավուրութեն պիրոզ կինա քի, իս տ'երթամ:

Էսաց. - Չքի չըմ թուղնը էրթաս:

Քնդըը դըռնիր բիւլուր տու փակիլ, էսաց. - Պատըլխանը Միրան չերթա:

Պատըլխանը Միրան գուր գտակ էդի գուր գլիխ, էլավ գկընըկ, գլաճ առըց, գինաց, քնդքեն ընկավ դիւս, մարդ չըտըսավ: Գտակ գլխուց առըց վե:

Թագնավուր գինաց հոդեն՝ նա՛ ախշըկ, նա՛ տըղեն, էլավ տըսավ, օր թե դաշտը մեջ կերթան, ընկնամ հիտիվ, մինչիվ թագնավուր գինաց, տը խասներ, Պատըլխանը Միրան գկնամ մտուց ծուվ, կարմիր ծըն ծուվուց էլավ, էլավ ինք, կընըկ գճըն խիժան, հայ վար ծուվուն գնցըն: Դարձավ, էրի ուր քնդաք:


Չըն գՊատըլխանը Միրան ծուվուց էխան դիւս, գինաց մատ ան խագալ, ինչ կայնիր էր, ուր տեղեն հիրուր չառը, չընստը, չիւր ծընկնիր գնցը մանչ խուղուն:

Էլան, գուրինց չըմկտիր խաքան, տաս ավուր վերեն էկըն Չիչանց թագնավուրը քնդաք, Չիչանց թագնավուր էսաց. - էրի՛, քիւ քնդաք մ'էրթա, իմ թագնավուրութեն էլ տամ քի, նստինք, ուտինք, խմինք, չուր մեռնընք:

Էսաց. - Չէ՛, տ'երթամ, իս չըմ կայնը:

Պատըլխանը Միրան էլավ, գուր հիղ էրաց, գը, մեկէլ խագալն էլ առըց, գնցըն ուրենց քնդաք:





73. ԲՍԼԱՔ ԱՇԱՌ

Սպահանա թագավոր աղքատանոց՝մ իբաց, էսաց հիւր տրղըն. - Ես կը մեռնըմ, խըյրաթ էլմ կը բանցըցիս:

Խեր մեռավ, տրղեն էլմ բանցըցուց:

Օրին մեկ դավրիշ՝մ էկավ ան դե, ուսկըմ տվըն ձեռ, ուսկըն իթալ, գինաց տան վիրըն քունճ:

Ասըն. - Դավրիշ, ինչո՞ւ ուսկըն կը թըլիս:

Էսաց. - Մեկ ուսկը՞ն էլ խըյրաթ կըլնը:

Խապար տվըն թագավորըն, ասըցըն. - Դավրիշ՝մ կա՛ն ան տե, ուսկըմ տվընք ձեռ, ուսկըն իթալ:

Թագավոր էսաց. - Կանչըցը՞ք ան դավրըշ, թը գա՛ աս տե, խեմ՝ ինչ մարդ ի:

Կանչըցըն, դավրըշ գինաց մա թագավոր, թագավոր էսաց. - Դավրը՛շ բաբա, դիւ իմ խըյրաթ չըս ընդիւնիր, իմ ուսկըն թլիր իս:

Դավրըշ էսաց. - Թագավոր՝ ապրած կանս, դիւն թագավոր, ամոթ չի՞ մեկ ուսկով կըսըս խըյրաթ կենըմ. մե ախչըկըմ կի Բասրայու դաշտ՝ բերդ՝մ շընիր ի ան տե, քանսուն փենճերե թուղիր ի, ամեն փենճերից չավրե՛մ կը գա՛ տակ, ամեն չավրը ճութ քանսուն քիսա, դիւն թագավոր՝ մեկ ուսկով խըյրաթ կենըս:

Թագավոր էսաց. - Ես դավրըշ բռնե՛ք, մինչիվ իս կան: Կը գան, թա աղուրթ իլավ, գդավրըշ չրաղ կենըմ, թա սութ իլավ, դավրըշը վըզ կը գարկիմ:

Դավրըշ բռնըցըն, թագավոր յուր շուրիթ խագանվ՝ հիւր ճակիր կապըց, ձըն խիծավ, դայալըմ ուսկը իթալ ձիու քանակ, գի-

նաց ու ընցկուն կան իրի, Բասրայու դաշտ չըզընտավ, եղ ղըյպե ուսկըն կիրավ, չըզընտավ, հիւր ճակիր ծախըց, կիրավ, չըզընտավ, հիւր ձըն էլ ծախըց, կիրավ, էլմ չըզընտավ:

Թագավոր էսաց. - Դե՛յ վախ, իս ինչ իր՝ իրի իմ խիտ, դավրիշի՛մ խուսըով իմ թագավորութենիցն էլ իլա:

Բանձը քար՝մ ադա տեղն էր, էսաց. - Տ՛էլըմ ադա քարի գլխի, ըզի թլիմ տակ, մեռնիմ, դարվըշը խուսըով ընկիր իմ աշխար, կան կը գան:

Թագավոր գինաց քարի գլխի, հետ կը դառնա, խուզըն քաղցր ի:

Մեկ խովըվըմ անիւ դիմաց նստած կըլնը, խովըվ կանչից. - Աղի՛կ կըտրըճ ճեհել, ինչ կենըս ադ տե, էրի՛, տիսնանք քիւ դարտ ինչ ի, գթի քարվը թըլիս տակ:

Թագավոր գինաց խովըվու մոտ, էսաց. - Իս հիտիվ Բասրայու դաշտըն կան կը գան, չըզընտա, դայպե՛մ ուսկը կիրա, չըզընտա, ճակիր ծախըցը, կիրա, չըզընտա, իմ ձըն ծախըցը, կիրա, շուրիթ ծախըցը, կիրա, չըզընտա. իսն էլ իմ դարդանաց ըզի տը թլիմ տակ, մեռնիմ:

Էսաց. - Քիւ տուն ակուլ չըլնը, կէլնըս աս կըրի վերեն, Բասրայու դաշտ կը տիսնըս:

Թագավոր գինաց կըրի գլխի, տիսավ Բասրա, Բասրայու դաշտ, տիսավ բերդըմ շինի, բըռճիր իլի Ֆալաք³³:

Թագավորն ի իջավ գինաց, գինաց հեռջիվ, տըսավ աղուրթ՝ քանսուն փենճերե թղիր ի հեռջըվ, վուր փենճերըն գինաց, չավրե՛մ վիրուց իկավ տակ, իբաց, ամին չավրը ճութ քանսուն քիսա:

Թագավոր գինաց, ներս մտավ, ութ օր մնաց ադ տե, էրկու դան, իրեք դան կուտըր, կը նստըր ան տե:

Օրեն մեկ՝ անիւ խատամուլ էսաց. - Իս կուզըմ քիւ խանու՛մ տիսնամ:

Եղ խատամն էլ մեկ շամառ իզար տըղը իրեն, էսաց. - Ի՞նչ գուրժ ունիս իմ խանու՛մի խիտ, դիւ ծարավ չըս, անոթը չըս, բիբիկ, տկլուզ չըս, էլ ի՞նչ գուրժ ունըս իմ խանու՛մուլ խիտ:

³³ Շատ բարձր՝ երկինք, Աստու մոտ (Ճ.Բ.):

Գինաց, խանութուց տաց. - Մեկ մարդ ութ օր կա, իկի աս տե, կուտը, կը խըմը, ասօր տաց՝ իս կուզըմ քու խանութ տխմամ, իսն էլ մեկ շամառ զարկիր իմ:

Խանութ տաց. - Դիե՛լ փուշդ, դիւ ընչի՞ զարկիցըր, ան մարդըն էլ կըլնը մե բան կասը: Կանչի՛, թը գա՛ աս տե:

Խատամ գինաց, կանչից, էրի խանութուց մոտ:

Խանութուցն էլ ականջկալա էրին, ասըցըն. - Քիւ պազըրկան իրի:

Պազըրկանն էլ իրի, խանութուց մոտ նստավ:

- Պազըրկան, - կասը խանութ, - իրի՛, խենք, ինչ արիր:

Պազըրկանն տաց. - Քանսուն ըղտաբեռ մալ կիրա, բա՛մ չըխասկացա, ամին ուրբաթ օր սահաթ խընգըն Բալաք աչառ տը խիծնը, տը գա՛, մանչ էրկինք, մանչ գետինք ինի, կը գա՛, ուր խոր խաս պաղչեն կը նստը, կը կըլպըլթա, էրկու չուպուխճի կը գան ադ տե, մեկն ան թիվ կը կայնը, մեկ՝ ան թիվ. կալոն ան մեկ կը լըցընի՛ կը խըմը, մեկն էլ ան մեկ կը լըցընը: Դեմ վի կը կանգնը, թուրըմ կը զանի մեկ անու վըզ, մեկ՝ անու, էրկուսն էլ կը սպանը: Բալաք աչառ կը խիծնը, մանչ էրկինք, մանչ գետինք ինի, կերթա, խատ մարդու չըխուսը, չըտա, չառնը:

Ադ ախչըկն էլ ատա մարդուն տաց. - Ագախար, իմ պազըրկան ինչ տաց, ան մարդ ինչ կասի՝ Զինա թագանվուրու տըղեն ի: Իս, ան մատնըքնիր խատ մա մեկու փուխիր ինք, ան ըզի տ՛առնիր: Մըկա ալ չըմ գտի՛ ինչու խամար ըզի էլ չառնը: - Էսաց, - Թե դիւ գնացըր, Զինա թագանվուրու լաճու հեհլթուն ըզի խամար բիրըր, թը չըբիրըր՝ քիւ խուզըն դնին անձակ գիւզիւմ, իմ ձեռնեն չըս ազատվը:

Էդ մարդ տաց. - Կուզիմ քինե խուրճ՛մ ուսկը, էրթամ խտիվ:

Իլավ, գինաց Զինա թագանվուրը քաղաք, ուրբաթ օր սահաթ խընգին գնաց թագանվուրը խաս պաղչեն:

Տիսավ՝ Բալաք աչառ խիծի, մանչ էրկինք, մանչ գետինք ինի կը գա՛: Իրի, խաս պաղչեն նստավ, վուր կըլպըլթաց, չուպուխճի՛մ մեկ ան թիվ դադրավ, մեկ՝ ան թիվ: Կալոնըմ ան ըլից, խմավ, մեկն էլ ան մեկ իլից, խմավ, մեկն էլ դեմ վի կանգնավ, էրկուսն էլ սպանից, մանչ էրկինք, մանչ գետինք ինի գինաց, խատ մարդու մը՛նչ էտու, մը՛նչ առըց:

Էսաց. - Բա՛մ չըխասկացա անիւ մոտեն:

Մնաց մեկէլ ուրբաթ օր, էլի սահաթ խընգին էլավ, հիւր շուրիր իխան, դավրիշի՛մ շիւր խագանվ, դիւֆըմ բռնից հիւր ձեռ, գինաց, խասավ պաղչեն, նստավ:

Տիսավ էլմ Բալաք աչառ խիծը, մանչ էրկինք, մանչ գետին ինի իրի, իրի, ա տեղ նստավ: Որ նստավ, կըլպըլթաց, չըպըլխճի՛մ մեկ ան թիվ դադրավ, մեկ՝ ան թիվ, կալո՛ն մեկ ան իլից խմավ, թափ խոու, մեկ ան իլից խմավ, թափ խոու: Դեմ վի կանգավ, էրկուսն էլ սպանից, Բալաք աչառ խիծավ, գինաց:

Էսա դավրիշ իընկավ խտիվեն, կանչից. - Յա հաճի, յա հու, յա հաճի, յա հու:

Դարձավ, իրիշից հիտիվ, տըսավ՝ դավրիշ՛մ անիւ խտիվեն կերթա, ուր չավրեն իթալ:

Դավրիշը չավրեն առըց, էլմ հիտիվ գինաց, կանչից. - Յա հաճի, յա հու, յա հաճի, յա հու:

Իրիշից տըսավ՝ դավրիշ էլմ խուեն կերթա: Իրիշից հիւր վերա, բանըմ չըտըսավ:

Յիւր չեփկեն ի խան, իթալ, գչեփկեն առըց, խոու անթը տակ, էլմ ընկանվ խուեն. - Յա հաճի, յա հու, յա հաճի...:

Իրիշից, հիւր վերա բանըմ չըտիսավ: Ալմաստ բիւռ խանչալ որ մեջքն էր, քեշից, իթալ:

Ալմաստ բիւռ խանչալն էլ առըց, խոու անթըտակ, խտիվեն էլմ՝ յա հաճի, յա... ձեն տվեց:

Դադրավ, տաց. - Կը գա՛ գլոխս օր թուրմ սրբիմ անիւ վըզ. իս իմ չավրեն թըլցի՛ քանսուն քիսա անու գինն ի, չեփկեն թըլցի՛ խարիր քիսա, անիւ ալմաստ բիւռ խանչալ թըլցի, Զինա թագանվուրը քաղքի գին ի, թը ան տանըր, խուցուտվըր, ինչ խըլըսներ, էլմ թը գեր:

Էդ դավրիշն էլ տաց. - Իս քիւ քասարը բաղդ ինչ մանչ քիւ սըրտըն դիւ կը սիրիս, ըզը տանըս քիւ կոնախ:

Էսաց. - Դիւ չըտվըր իմ քասարը բաղդ, քի տը սպաններ, լե դիւ տըվըր քասարը բաղդ, գքի չըմ սպանը:

Էսաց. - Իս կերթամ, իմ խուեն էրի՛:

Գինաց, տըսավ բերդ՛մ շինի: Սարե՛մ մանչ վար քաղը գլխուն, տըսավ ադա Բալաք աչառ ինչ խիծիր էր, կապըց սան վի, խուրճ՛մ կանրմաշո փետ առըց, բիրը, կը զարկը:

Ադ ալ ասըց. – Մեղք ի, մը՝ զարկի՝ Աստուծո սիրուն ըլնը, մը զարկը:

- Կը զարկիմ, չըզարկիմ, դիւ ի՞նչ գուրծ ունիս խիտ:

Ա ընցկուն իզար, կաշին վուրնից վե իբի վը:

Թուղ խոու, գաճըն տուն:

Վլացվան, խաց դրին ան տե, կիրան:

Դավրիշ էսաց. - Դիւ, քիւ քանարը բաղդ, դիւ քիւ կասան ձը խամար ինիս:

Էսաց. - Վալաւ, դու չըտվըր քանարը բաղդ, իս թուրըմ զանի քիւ գլիխ, քիւ գլիխ էնա փանծարեն ինի էրթեր դիւս, տըվըր քանարը բաղդ, ազատար:

Էսաց. - Իս էլ թագավուրը տըղա էր, մարդ ուներ, հըրկվընից կը նստեր, օրեն մեկ հիրիկուն քունս տարավ, իսն էլ իմ մարդի-րուն ասըցը՝ ասօր քունս կը տանը, էլեցե՛ք, գինացե՛ք, իմ խոր մոտ նստեցե՛ք:

Մարդիր էլան, գինացըն, քունըս չըտարըց: Մեկնէլ տըսա՝ դիւն բացվավ: Փարի՛մ, էրկու չանկի, էրկու չալըճի, էրկու ուսկը սանտալ աթոռ:

Ռուկը աթոռ մեկ իս նստա, մեկ՝ փարին: Մենք ձեռ թըլցընք իրար թիվ, իմ հաշ գաճը, իս ընկիր իմ ադ տե: Մեկն էլ տըսա՝ մարդ չըկա, վուվ ձը ըռաստ գեր, կը զարներ, կը սպաներ: Տա-վար գեր, ուչխար գեր, մարդ գեր, կը զաներ: Օրեն մեկ ասըցըն. «Թագավուր ապրած կինաս, էս ֆլան սարը մեջ մարդ կա, ան տե ծուռ կը սաղացըցե, քի տըղեն տանըս ան տե, սաղանա»:

Իմ խեր ըգի իլավ, առըց, տարըց ան տե իթուղ, դարծավ իրի, վուր դարծավ իրի, իս մեկ ամսու՛մ չափ մնացը ադ տե, քիչըմ աղեկացա: Օրեն մեկ տըսա խալավուր գինաց ծուվու բիրան, մեկ պառավ՛մ առըց իբի, ձի էսաց. «Քի մեր՛մ իմ բիրի», իս ասըցը. «Բիրիր իս, բարով իս բիրի, խաց, կիրակուլ կեփը, մի շուրիր կը լվա, կը կարը»:

Մնաց մինչիվ հիրիկվան, խալավուր ձը էսաց. - Մինչիվ ապօր իս, դիւ մընակ էր, մեկ հօդե՛մ կը քըներ, ասօր դիւ գինա՛ ջուկ հօդե՛մ:

Գնացի, նստա: Կալո՛ն լըցի, խմա, մեկ էլ լըցի, խմա, քունս չըտարըց: Իս ասըցը. «Տ՛երթամ, իրըշիմ խալավուր, պառավ ինչ կենին»:

խալավուր կապըմ իցգի պառվու վըգ: Քեշից, տարըց դես, իբի դեն, զպառավ խեղդից, իթալ ան տե: Պարկըմ կա, էդա պատեն կախ էր: Պարկ իրի վե, էրկու բարակ օծ միջեն իխան, իթուղ ադա պառավի ջանդակը վրեն: Ադ պառվու էրուն ծօրցըն, ամեն մեկ խաստացան, հէլան քանց սուն: Իբի, օծերու պուչ կապըց հառ-քեն, հեռջիվ ամեն օծու իրիք չանախ իդի վար մեկ մեկը: Ադ էրուն անունց բերնեն թափավ: Չանախքիր էրկու ծակից իրիքըն կա-նավ: Բերըց ադա էրուն իլից մեկ կթոցըմ, իդի ըռաֆը վերեն: Ադ օծեր թամիզ՛մ վլաց, էլմ իդի պարկ վե, բիրան կապըց, կախըց պատեն, լըվացվավ, խաց կիրավ, պարկավ ան տե, քինավ: Իսն էլ դարծա, էկը իմ տեղ, ալ քունս կը տանը՞, չըքնա մինչիվ առա-վուտ:

Առավուտ էլա, էկը մա խալավուր, խալավուր էսաց. - Քու մեր մեռը:

Իս ասըցը՝ մեռը, Աստված խոու, Աստված տարավ:

Խալավուր էսաց. - Իս պառավ կառնըմ, կը թըլիմ ծուվ, դիւ փլավ կենըս, եղն էլ կի՛ ըռաֆը վրեն, կը բիրըս, լըցիս վերեն, կուտիս, մինչիվ իս կը գաճ:

Իսն էլ բիրը, փլավ իփիցը, դըրը քանսեն, անժուր կիրա, քիչըմ էլ դըր քանսեն, էդ գեխիր բիրի, լըցի վերեն, գտել մեջ տնկի-ցը, մինչիվ խալավուր իրի, իրի, էսաց՝ փլավ իփիցը՞ս:

Ասըցը. - Իփիցըմ, իզն էլ լըցիր իմ, կիրիր իմ, հալա կես մացիր ի աս տե:

Խալավուրն էլ կասը. - Խամ չըկա մեջ, անու խամար չըմե-ռավ:

Գինաց, նստավ քանսը վերեն, գտելըմ ինչ կիրավ, չուրցավ հիւր տեղ: Իսն էլ էլա, ադա պըզտի դիւն բաց էրի, տըսա՝ բան չըկեր ան տե, մեկ քանըմ խատ գիրք կեր, մեկ պըզտիկ գիրքըմ էլ ադա գրքերու վրեն դրած: Ադա պըզտիկ գիրք առը, կարդացը, վուր կարդացը, մեկն էլ տիսա՝ փարըն, էրկու չանկըն, էրկու չալ-ղըճըն՝ ուսկը աթոռ խիտնիր, էկան ան տե: Ուսկը աթոռ իս նստա վերեն, մեկ փարըն, ձեռքեր թըլցընք վուր մեմեկու թիվին, էրկու չալըճըն զարկըն, էրկու չանկըն խաղցըն մինչիվ առավուտ:

Ինչ ժամանակ գիրք կարդեր, էլմ կը գեր:

Հօրեն մեկ տղսա՝ իմ խոր կամին իկավ, ան տե կայավ, իմ խեր կամուց դուս էլավ, իրի իմ մոտ, էսաց. - Այ որդի, սաղացե՞ր իս:

Իսն էլ ասըը. - Իս սաղացիր իմ, խալավիւր մեռեր ի:

Իմ խերն էլ էսաց. - Ճեհնե՛մ, դու սաղացիր իս, թո խալավիւր մեռնը:

Մինքն էլ իլանք, էկանք, մստանք կամին: Կամին թուղ իտու, էկընք, ծովուց դուս էլանք:

Իս իմ խուր ասըը. - Դու գինացե՛ք, իս քիչ՛մ լուղանամ, գան, ձի կը խասնիմ:

Անոնք գինացըն: Իս իմ խալավքիր խանը, դըրը ան տե, իմ գիրք բըռնըը իմ ձեռ, մտա մանչ ծովիւն, կը լուղկաներ: Մեկն էլ տղսա՝ մեկ մարդըմ էկավ ան տե, էսաց. «Այ մարդ, դու քու խալավքիրու մոտեն չըս վախինա, քու գրքու մոտեն կը վախինաս: Քու գիրք դի՛ վըր խալավքիրուն, մըտի՛ ծուվ, լուղացը, հիլի՛ դուս: Քու խալավքիր խաքը, քու գիրք դի՛ քու ծուց, գնա՛»: Իսն էլ ասըը՝ անու խուսքն ի, դըրը իմ գիրք խալավքիրու վրեն, մտա ծուվ, կը լուղաներ: Մեկն էլ տղսա՝ գգիրք առըց, հայ վար ծովուն գինաց: Ջրըց դուս էլա, իմ խալավքիր խագան, ալ իմ խոր քանդաք չըգանը, իկա ըս տե, բերդ՛մ աս տե շինիր իմ, մստիր իմ ինի: Ինչ իս իկեր էր աս տե, մինչիվ աս օրիս մարդու խիտ չէր խուսը:

Էսաց. - Ասա Բալաք աչառ կը տիսնա՞ս՝ ան փարու խուրուխրին ի: Երկու խուսք ան գրքից միտս մնացիր ի, մեկ ան կը կարդամ անու, ան երկու չուպուխճին ինչ կը գան, անու աղբերքերն ին, իսն էլ իմ դարտանաց կը գարկիմ, կը սպանիմ, ինչ կը կարդամ, էլմ կը գան: Ամեն ուրբաթ օր իմ խուր խաս պաղչեն մըտըս կըյնը, իսն էլ կերթամ ան տե, երկու սահաթվան չանք կը մնամ ան տե, կըլլիմ գան:

Էսաց դավըռչին. - Իս գըտիմ, Բասրայու դաշտը ախչըկն ի գքի դըրկը աս տե, ա ընցկուն մարդ դրկից աս տե, մարդ մ՛ իմ հոյութին չառըց, դու էկըր, առըր: Գինա՛, էսա՛, քան ըզի մեր, քան ըզի քուր կենա ձի, իս քի չըմ առնը, վուվ կառնը, առ, խիրըք ի ան մալ խարճիս ձը ապով, քի չըմ առնը:

Էդ դարվըռն էլ էսաց. - Չի՛ն տու ձը, դըյպե մ՛էլ ուսկը տո՛ւ, իս տ՛իրթամ գըրքը հիտիվ, գիրք բիրիմ:

Ադ ալ էսաց. - Հա՛յ, դարվի՛շ բաբա, գուրծ չունիս, դու չըս

կերի բիրի, գինա՛ խատ քու բանին:

Դարվի՛շ էսաց. - Չէ՛, տը տաս, իս էրթամ իտենն:

Էսաց. - Տամ, տա՛ր քի խամա կի՛:

Դարվի՛շն էլ իլավ, ձըն խիծավ: Դըյպե՛մ ուսկըն իթալ հուր քանակ, ձըն քշից, գինաց մեկ քանսուն ավիւր ճամբախ, մեկ երկըր դուս ընկավ: Ատե շենլըկ չըկեր, քանց ջաղաց ավիլ բանըմ չըկեր, մեկ, երկու, իրիք ջաղացք ընցավ, մեկն էլ տղսավ ջաղըցպան կանչից, էսաց. «Սպահանա թագավուրու տղա՛, դո՞ւր կերթաս»:

Ան տե ձըն կայնացըցոց, մտածից, էսաց. - Ասիկ իս քանսուն ավիւր ճամբախ իկիր իմ, ասա ջաղըցպան ինչ գիտը՝ իս Սպահանա թագավուրը տղեն իմ:

Ջաղըցպան էսաց. - Ի՞նչ կը մտածիս, դարձը էսա տեղ, ադա գուրծ ինչ դու իտենն կերթաս, իս չըլլիմ, դու չըս կերի բիրի:

Էսաց. - Ըպա իս քի չըմ ճանչընա: Դու ըզի կը ճանչընա՞ս:

Դարձավ, էկավ մատ ջաղըցպան, ջաղըցպան էսաց. - Մինք խրիշտակնիր ինք, իրիք օր քու խուր խըյոթ ի մնացիր իմ, քու խուր խուզըն էլ իս իմ առը: Քու խեր շատ աղեկ խեր կենըր, իս անու խաթըր խամար տը շանց տամ, էրթաս, ան գիրք բիրիս, իս գըտիմ, դու ան գըրքըն իտենն կան կը գաս, իս չըլըմ, դու չըս կերի: Կերթաս Ստամբուլ՝ դուս կըլընըս, կերթաս Էյուպ, դու կը բանան, երկու դարվի՛շ կա ան տե, դու էլ գքի կը տաս վար աջ թիվին դան իտևին, մինչիվ սահաթ խընգին, կըսըս. «Դարվի՛շ բաբանքտիր, դու ընչի՞ չըք խուսը»: Անուքն էլ կասըն. «Սարեն դու կը գաս, ձիւրեն դու կը գաս, աշխարեն դու կը գաս, խուսք քուն ի, մինք ի՞նչ տը խուսընք»:

Դուն էլ էսա. «Ըզի թու խուսք չըկա, իմ խուսք էն ի՛ ձի թագավուր իմ ձեն լսեր, ինն օր, ինն ամըս, ին սահաթ, ին տաղըգա լմաներ, Աստված անու տը տեր տղե՛ն: Թագավուրն էլ ան ժամանակ կու գա դան վերեն, ականջ կենը, կը դառնա, կերթա: Տըղե՛մ ադա թագավուրըն տ՛ըլընը, ըն սահաթըն մեջ էլ ախչըկ՛մ Չիչանց թագավուրըն տ՛ըլընը, ադ ախչըկ, ադ տղեն տը սըրվին իրարու վերեն: Ադ տղեն ինչ կը միծանա, դու էլ թագավուրն էսա. «Թագավուր, քու տղըըն կասըս՝ ան ախչըկ ինչ կը գա քու տղըը մոտ, ըսը՛, թը չըգան քու մոտ, ախչըկ ասը՝ վըրե՞ չըս թուղըն գան քու մոտ, տղեն էլ թը ըսը՛ դու գող իք: Ախչիկ տ՛ըսը. «Մինք ի՞նչ

ինք գողցր»։ Տղոն թող ըսը՝ դու մի գիրք իք գողցր։ Ան ախալը
ան գիրք տը բիրի, մարդ չըկերի բիրի։

Եսաց. - Առ նա կանանչ վարուց, բռնը՝ քու ձեռ, քանի մի
երկրոն իս, մարդ քի թախալմիչ չըլնը, ինչ մի երկրեն դուս կըլըս,
կանանչ վարուց քու ձեռ կը չուրնա, թալ։

Ադ ալ էլավ, կանանչ վարուց բռնըց հուր ձեռ, գինաց,
անհունց երկրեն ինչ դուս էլավ, կանանչ վարուց ձեռ չուրցավ,
վարուց էթալ, գինաց, Ստամբուլ դուս իլավ, գինաց էյուս։ Դուռ
էբաց, մտավ նիրս, տըսավ աղուրթ երկու դավրիչ կան ան տե
վար աջ թիվին, գինք իտու դռան իտևեն մինչիվ սահաթը խընգին։

Եսաց. - Դարվիչ բաբանքտիր, ընչո՞ւ չըք խուսը։

Դարվիչները ասըն. - Աշխըրքեն դու կը գաս, սարեն, ձուրեն
դու կը գաս, խուսք քուն ի։

Թագավորն էլ ինացի՝ մեկ կարիպ դարվիչըն իկի, էսաց. -
Վագիր, իլի՛ էրթանք մատ ան դարվիչ, խենք՝ ինչ կըսը։

Անունք էկան, խասան դռան վերեն։ Դավրիչն էլ էսաց ան
դարվըշնիրուն։

- Չը թու խուսք չըկա, ըծի մեկ խուսք կա, Աստված տեր, ձը
թագավոր իմ ձեն լսեր, ինչ ինն օր, ինն ամըս, ին սահաթ, ին
տագըղա լըմաներ, Աստված անու տը տեր տըղե՛մ։

Թագավոր լսավ, էսաց. - Վագիր, դռնանք, էրթանք։

Դարձան գինացին, չըմտան նիրս։

Երկու մարդու էսաց. - Լուսուն կերթըք էյուս, կը մտիք նիրս,
մեկ կարիպ դարվիչըն կա ան տե, կը բռնըք, ձի խամար կը
բիրըք։

Առավուտուն երկու մարդ էկըն, մտան նիրս, դարվիչ բռնը-
ցըն, ասըցըն. - Արի՛, գինանք։

Եսաց. - Թագավոր ձը ի՞նչ տի՛նե, ի՞նչ գուրծ ունիմ թա-
գավորը խիտ։

- Չէ՛, գքի ուզիրը, տը գաս, էրթանք։

Առըն, տարըն թագավորը մոտ, թագավոր էսաց. - Դարվիչ
բաբա, դու հիրկուն ի՞նչ իս ասը։

Եսաց. - Թագավոր ապրած կենա, իս բանըն չըն ասը հիր-
կուն։

Եսաց. - Չէ՛, ասըցըր։

Եսաց. - Իս բանըն չըն ըսը, մեկ խուսքըն տըվը, իս մտա

էյուս, երկու դարվիչ կին ան տե, մինչիվ սահաթ խընգին չըխու-
սամ, ասը. «Դարվիչ բաբանքտիր, ընչու չըք խուսը»։ Անունք էլ
ասըցըն. «Աշխըրքեն... խուսք քունն ի, իսն էլ ասըցը՝ ձի թա-
գավոր իմ ձեն լըսը, ինչ ինն օր ին... Աստված անու տը տեր
տըղե՛մ»։ Իս նա մեկ խուսքն իմ տըվը։

Թագավորը էլ ա ընցկուն ծիր իր, քի դեղին ի դարծի, էսաց.
- Դարվիչ, նո՞ւր ըզը տըղա ըլնը։

Դարվիչն էլ էսաց. - Աստված տը տա։

Թագավորն էլ էսաց. - Դե կա՛ց աս տե, թե տըղա էլավ,
թագավորութուն ուզիս, ինչ ուզիս, իս տամ քի։

Դարվիչն էլ մնաց ադ տե, մինչիվ ժամանակ իրի։

Աստված իտու մեկ զավակըն։

Թագավոր էսաց. - Դարվիչ բաբա, դու քու թետերըք էրա՛,
իս իմ կես թագավորութուն տամ քի։

Դարվիչ էսաց. - Թագավոր ապրած, դու չը՞ս կերի իմ
խնդիրք կատարը։

Եսաց. - Իս չըկատարիմ, էլ վո՞ւվ քու խնդիրք տը կատարը։

Եսաց. - Իմ խնդիրք քու տըղեն տը կատարը, դու չըս կերի։

- Թը կենա, իմ տըղեն միծանա, կատարը։

Ես սահաթին ինչ տըղեն իլավ, Չինաց թագավորըն էլ մեկ
ախալը կիլավ, տըղեն, ախալը սիրվան իրարու վերեն։

Մեկ ժամանակըն վերեն ընցավ, դարվիչ էսաց. - Թագա-
վոր ապրած կենաս, մեկ ախալիկ չըգա՞՞ քու տըղը մոտ։

Եսաց՝ կը գա։

Եսաց. - Կերթաս, քու տըղըն կըսիս՝ հիրկուն ինչ կը գա, տը-
ղեն չըթըղնե գա՛ հուր մոտ, ան կըսը. «Վըրե՞ չըս թըղնը գամ քու
մոտ», տըղեն թե ըսը՝ գող իք։ Ան տըղը՝ ինչ իք գողցը, տըղեն թը
ըսը. «Միր գիրք գողացըր իք»։

Թագավոր էլավ, գինաց տըղը մոտ, էսաց։ Ախալիկ հիրկուն
իքի մա տըղեն, գիրկ իքի բուլիւր տըղըն, տը կախվեր վըզեն, տը-
ղեն դըմըշկուլ՝ իտու, ախալիկ դպավ գետին։

Ախալիկ էսաց. - Դու ընչո՞ւ չըս թըղնը գամ մա քի։

Տղոն էսաց. - Դու գող իք։

Եսաց. - Մինք ի՞նչ իք գողցը։

Եսաց. - Մի գիրք գողցիր իք։

Ախալիկ դարձավ, լալելեն տուն գինաց։

Թագաձվուր եսաց. - Ախչը՛կ, վըրե՞ կը լաս, քու սիրողն ի՞
մեռը:

Եսաց. - Չէ՛, չըմեռը, չէթուղ իս էրթանք անհու մոտ, իս ասը՛
ընչո՛ւ չըս թուղընը գամ քու մոտ, ծի եսաց՝ դու գիղ իք: Իս ասը՛
մինք ինչ ինք գիղցը, եսաց՝ մի գիրք գիղցիր իք:

Չիչանց թագաձվուրն էլ ջառ իտու կանչիլ, ինչքան մարդ կեր
անհու, ամեն ժողվից, իբի, եսաց. - Վո՛ւվ նա գըրքը սալըղ կը տեք,
էրթա գը բիրը, իս իմ կես թագաձվուրութուն տամ անհու:

Մարդ սալըղ չիտու:

Թագաձվուր եսաց. - Էլ մարդ մնացը՞, չէկը աս տե:

Ասըցըն. - Պառվու տըղեն մնացը, չէկը:

Թագաձվուրն էլ եսաց. - Կանչըցը՛ք՝ ան տըղեն գա՛:

Տըղեն բիրըն, թագաձվուր եսաց. - Տըղա՛, գիտիմ, գիղացած
բիրածըս, դու սալըղ չը՞ս իտա:

Եսաց. - Սալըղ կը տամ, ամա շատ հեռու տեղ ի՛ կի յոթ ծո-
վի կըղզին:

- Դու կարո՞ւղ իս էրթաս, բիրիս, իմ կես թագաձվուրութուն
տը տամ քի:

Եսաց. - Երկու ձկան ականջ ծի խամար բիրե՛ք, մեկ էլ ձիու՛մ
պուչ:

Երկու ձկան ականջ բիրըն, ադա ձկան ականջբիր կապըց,
իթալ վար ծուվիւն, ադա ձիու պուչն էլ իբի, մագիր իտու դիւս:
Տակ-տակ մագիր կապըց հիրար, ան մեկ գլիխն էլ կըպրից,
նստավ ձկան ականջբիրու մեջ: Գնաց, յոթ ծուվիւ կըղզին դուս
էլավ: Ադա գիրքն էլ վար մարմար քարին ի. իրիք մարդ՝ ամին
մեկ կացըն մը ուրինց ձեռ բռնած, գըրքը վրեն կայնած: Սեիրի ի՛
վո՛ւվ ձեռ տա գիրք, տը գարկըն, գլխավրեն կը սպանըն:

Ադ մարդն էլ ադա ձիու մագ կախ իտու, գինաց գըրքը
վերեն, ադա կուպր կպավ գգիրք: Չմագ քեշից, գիրք խիտ իրի,
կացընքն էլ թըփ-թըփ վար մարմար քարըն գարկըն:

Սեիրի էր, պատըլավ, ադ մարդն էլ գգիրք առըց, իբի, իտու
Չիչանց թագաձվուրըն: Չիչանց թագաձվուրն էլ հուր կես թագա-
վուրութուն իտու ադա մարդուն, գգիրք իտու գախչըկ: Ախչըկն էլ
գգիրք առըց, իբի, իտու գտըղըն: Տըղեն էլ գգիրք իբի, իտու
գխեր:

Խերն էլ գգիրք տարավ իտու դարվիշին, եսաց. - Դարվը՛շ,
քու խնդիրը նա՞ էր:

Դարվիշն էլ եսաց՝ խա՛:

Թագաձվուրն էլ եսաց. - Ադիկ վուչ բանըն չը, խնդիրք էրա՛,
կատարիմ:

Դարվիշ եսաց. - Ըգի թու խնդիրք չըկա՛, իմ խնդիրք նա
գիրքն էր, ձի՛մ կը տաս ըգի, դըյպե՛մ ուսկը, իս կերթամ:

Թագաձվուր ձի՛մ, դըյպե՛մ ուսկը իտու:

Դարվիշ ձին խեծավ, դաստ էրավ Չինա թագաձվուրը քա-
ղաք, իրի, Չինա թագաձվուրը քաղաք դուս էլավ:

Ուրբաթ օր՝ սահաթ խընգին էլմ գինաց թագաձվուրու խաս
պաղչեն, նստավ:

Տեսավ՝ Բալաք աչառ խիծի, էլմ էկավ, էջավ, կըլթալթաց,
չըպըխճի՛մ մեկ ան թիվ, մեկ ան թիվ դադրան, ամեն մեկ կալոն
լըցըն, խմավ, դեմ վի կանգնավ, երկուսն էլ սպանըց: Բալաք
աչառ խիծավ, դարծավ, գինաց:

Դարվիշն էլ իտիվեն գինաց:

Տիսավ վուր դարվիշ, եսաց. - Իմ դավրիշ անոթացը, էլմ
էկավ:

Դարվիշն իտիվեն գինաց, խասավ բերդ:

Տիսավ՝ էլմ Բալաք աչառ կապըց սուն վի, ա ընցկուն իգար,
կաշըն վուտնվի խիցի վե:

Վլացվավ, գացըն տուն, խաց դըրըն, կիրան:

Դարվիշն էլ ինչ գիրք դըրը անթըտակ: Անթըտակեն չըհանը
դիւս:

Գիրք ծուցեն էխան, իտու ինի, են էլ դարվիշի վուտ կզվավ,
պագնից, եսաց. - Դարվի՛շ, դու մտիկ էրա, ես կարդամ, դու կը
տիսնաս:

Կարդաց գգիրք: Փարին, երկու չանկին, երկու չալըղճին՝
երկու ուսկը աթոռ խիտքիր դուռ բացըն, էկն ան տե: Ուսկը աթոռ
փարին նստավ, մեկ հինք նստավ վերեն, ձեռնիր թըլցըն իրարու
թիվի վերեն, երկու չալըղճին գարկըն, երկու չանկըն խաղըն:

Դավրեշը հա՛շ գինաց, ընկավ ան տե, էլավ, ջուր իթալ
հերես, սըրտ մաժըց: Դա՛շ էկավ վերեն, էլավ, նստավ:

Եսաց. - Դարվի՛շ, ա՛ռ էսա մատնիք, ան ախչկա մատնիքն ի,
խատ մեմեկը միք մատնիքնիր փուխիր ինք, ըս մատնիք կու

տաս, անհու կասըս՝ թա չը՛ն հավատա, աս ալ անու մատնիքն ի:
Կասըս՝ իս ան չըմ առնը, վուվ կառնը, թը առնը, Աստված անհու
խաց տա:

Կասի. - Դարվի՛շ, քու խնդիրքն էրա՛, իս կատարիմ, իս ծուռն
էր, ըզի ազատըցըր, իմ խուր քաղաք անտեր էր, տեր էրըր:

- Իմ խնդիրք չըկա՛, իմ խնդիրք էնա մատնիքն ի:

Դարվիշ մատնիք առըց, ձին խիծավ, իրի Բասրայու դաշտ՝
ախչկան մոտ, մատնիք իտու գախչիկ, էսաց. - Ան կասը՝ վուվ
կառնը, թըղ առնը, քանց իմ մեր, քանց իմ քուր կենա ըծի:

Ախչիկն էլ էսաց. - Վուվ տ՛առնըմ, գքի տ՛առնըմ:

Ան էլ էսաց՝ խա՛:

էսաց. - Աս տե կինա՞նք, թա՞ էրթանք քու խուր քաղաք:

էսաց. - Իս Սպահանա թագավուրն իմ, խըյրաթի տեր իմ, իս
տ՛էրթամ:

էսաց. - Իլի՛, մալ-ապրանք բառնանք, էրթանք:

էլան մալ-ապրանք բարձան, գանցըն:

Հալա ան դարվիշն բռնած ի:

Ձդարվիշ թուղ իտու, էրավ հուր վազիր:



74. ԼՈՒՍԱՎՈՐ ՍՈՐԹ

Մըսրա քաղաք պառավըմ կեր, ուր տըղեն:

Տըղեն մեկ օր մոր էսաց. - Մարե՛, իմ խոր գուրծ փեշեն ինչ
էր:

Մեր էսաց. - Քու խոր գուրծ ավճուքին էր:

Տըղեն էլավ, թվանկ առըց, գինաց մեշեն, մինչիվ հիրիկուն
կան իրի, բանըմ չըզնտավ՝ սպանըր, դարտակ իրի տուն: Առա-
վուտուն էլմ առըց գթվանկ, գինաց: Էլմ մինչիվ հիրիկուն կան
իրի, բանըմ ձեռ չընկավ, էլմ դարձավ, իրի տուն:

Առավուտուն էլավ, գթվանկ առըց, էսաց. - Իս ասօր բան՛մ
չըզանիմ, իս թու տուն չըմ իգա՛:

Էրղըվցավ, գինաց:

Մինչիվ հիրիկուն կան իրի, բանըմ չըզնտավ՝ սպանըր,
մթնավ:

Հերղըվցի, տուն չէրթա, մնաց ծովու բիրան, զընք իտու
հեռջիվ քարըն, մնաց ան տե:

Տըսավ լուսըմ ծովեն իլավ, դուս իրի, իրի, մոտացավ տը-
ղըն: Տըղեն էլ իզար, ան ճանավար սպանից, գինաց մուրթից,
գմուրթ առըց, իթալ վար թիվին, գինաց տուն, էսաց. «Տանիմ,
թըլիմ ան տե, իմ մեր կը նստը վրեն, լուս կըտա, ճախրակ կը մա-
նի, շատ աղեկ բան ի»:

Իթալ վար թիվին, գինաց քաղքը մեջ:

Վուզիր դուռ կանգներ էր, էսաց. - Տըղա՛, աղա մուրթ տո՛ւ
ըզձը:

Տրդեն էսաց. - Չըմ իտա, մեք քնսիպ մարդ իք, ճրագլուս
չունինք: Կը թլիմ ան տե, լուս կըտա, իմ մեր ճախրակ կը մանի:
Ինչ էրավ վուզիր, տրդեն զմուրթ չէտու, առըց գինաց:
Գինաց դիւռ. - Մարե՛, դիւռ բաց, իս էկա:
էսաց. - Կանգնը՛, ճրագ կպուցիմ, դիւռ բանամ:
էսաց. - Մարե՛, ճրագ մը՛ էնը, իմ խիտ ճրագ կա:
Դիւռ իբաց, մեր ինչ զմուրթ տիսավ, ուրախացավ:
- Ադ ի՞նչ բան է, - էսաց:
Առըն, գացըն տուն, տուն քան գցերեկ շատ լուսացավ:
Մերն էսաց. - Վուրդը՛, ան ինչ մուրթն դիւ բիրըր, քնդքը մեջ
գքի մարդ չըտիսավ:
- Մարե՛, վուզիր գծը տիսավ:
- Բանըմ չըսա՞ց քի:
- էսաց՝ մուրթ տո՛ւ ըզծը, իս չըտվը:
Մեր էսաց. - Վուրդը՛, ան գքի չարըմ տի՛ցքը:
Առավուտուն վուզիր իլավ, գինաց թագավուրը մոտ, էսաց. -
Թագավուր ապրած կինաս, մեկ փուսըն պառվու տրդեն բիրի,
ան քի կը վայելե, բիրիս, թըլիս դիվանխանեն, գըշիր-ցիրեկ լուս
տա:
Թագավուրն էլ խրկից հիտիվ պառվու տրդըն, ադ մարդ
պառվու տրդըն էսաց. - Թագավուր գքի կուզը:
էսաց. - Թագավուր ի՞նչ գուրծ ունը իմ խիտ:
էսաց. - Իս չըմ գտի, կըսը՝ պառվու տրդըն թը գա:
Պառվու տրդեն էլավ, գինաց թագավուրը մոտ:
էսաց. - Թագավուր ապրած կինաս, ընչի՞ ըզծը կանչիր իս:
էսաց. - Հիրիկուն դիւ ի՞նչ իս բիրի քնդքը մեջ:
էսաց. - Իս բան՛մ չըմ բիրի, մեկ մուրթ մի՛մ բիրի, թըլիր ըմ
տուն, իմ մեր նստը վրեն, լուս տա, ճախրակ մանի: Մինք ֆուղա-
րա մարդ ինք, ճրագլուս չըկա:
Թագավուր էսաց. - Կերթաս, ան մուրթ կը բիրիս՝ բի՛,
չըբիրիս, գքիւ վըզ կը գարկիմ:
Տրդեն լալեւեն իլավ, գինաց տուն:
Մեր էսաց. - Վուրդը՛, ինչո՞ւ կուլաս:
- Թագավուր կըսե՛ մուրթ չըբիրիս, գքիւ վըզ կը գարկիմ:
Մերն էսաց. - Վուրդը՛, չէ՞ իս քի ըսըցը՝ վուզըր գքի չար՛մ
տը՛ցգը, վուրդը՛, իլի՛, ա՛ռ տա՛ր, Աստված անհիւ պալա տա:

Տրդեն իլավ, զմուրթ առըց, գինաց, իտու թագավուրըն,
թագավուրըն էլ վուզըն էսաց. - Աղեկ պախշիչ՛մ կը տաս պառվու
տրդըն:
Վուզիրն իլավ, քսան փարա իտու պառվու տրդըն ձեռ:
Պառվու տրդեն գինաց տուն, էսաց պառավ. - Վուրդը՛,
պախշիչ՛մ չըտվը՞ց քի:
էսաց. - Մարե՛, թագավուր էսաց՝ աղեկ պախշիչ՛մ կը տաս,
վուզիր քսան փարա իտու:
էսաց. - Վուրդը՛, Աստված անհիւ պատիճըմ տա, թըլե՛ հակա-
նատ, թը կինա ան տե:
Ձքսան փարա իթալ հականատ:
Վուզիր թագավուրըն էսաց. - Թագավուր ապրած կինաս,
ասա մուրթըն պետք ը ֆըլի ուսկուր բիրին, մեկ սարե՛մ չընին,
մուրթ դնին մեջ, լուս տա:
Թագավուր էսաց. - Վուզիր, ֆըլի ուսկուրը վո՞ւվ տըրթա,
անցկուն ֆըլի ուսկուր բիրի, իս սարա տամ չընիլ:
Վուզիր էսաց. - Ո՛ր ան մուրթ բիրի, ան կերի բիրի:
էսաց. - Մարդ ճամբխի՛, պառվու տրդեն թուղ գա:
Մարդ ճամբխըցըն պառվու տրդըն իտիվ:
Պառվու տրդեն էլաց:
Մեր ասաց. - Վուրդը՛, ինչո՞ւ կը լաս, Աստված վուզըն պա-
տիճըմ տա, գինա՛, մը՛ վախընա:
Պառվու տրդեն գինաց մա թագավուր:
Թագավուր էսաց. - Տըրթաս, ֆըլի ուսկուր բիրիս, թը բիրի՛ր՝
բիրի, թը չըբիրի՛ր՝ գքիւ վըզ կը գարկիմ:
Պառվու տրդեն էլավ, ձեռքիր խաչից ծուց, լալեւեն իրի
տուն:
Մեր էսաց. - Վուրդը՛, ընչո՞ւ կը լաս:
- Մարե՛, - էսաց, - իս տըլամ, պա չըլամ: Թագավուր կըսը՛
անցկուն ֆըլի ուսկուր տը բիրիս, իս ձը խամար սարե՛մ տամ
չնիլ: Իս ի՞նչըլիս տըրթամ, ֆըլի ուսկուր բիրիմ:
էսաց. - Վուրդը՛, մը՛ վախենա, Աստված օղուրմած ը, որ դիւ
կերթաս, թագավուրըն կըսըս՝ խարըր խագար ուղտ կուզըմ, խընգ
խագար բեռ աղ կուզըմ, խընգ խագար բեռ գընի կուզըմ, խընգ
խարըր պալթաճի, խընգ խարըր էլ ուղտ բառնուղ, ամինն էլ
վուզըր քիսայից տըլընը, հիւրը՛ մարդիւ ըլնը, չըմ էրթա:

Տրդեն էլավ, գինաց մա թագավոր, անցկուն էսաց:

Թագավոր էսաց. - Վուզիր, լսա՞ր, ինչ էսաց, կը պատրաստիս՝ պատրաստե՛, չըս պատրաստի, գքու վըզ կը զարկիմ:

Վուզիր էսաց. - Թագավոր ապրած, մեկ օր տաս ընծի մոհլեթ, մինչիվ իս պատրաստիմ:

Պատրաստութիւն տիսավ, պառվու տրդեն էլավ, գինաց տուն:

Մեր էսաց. - Ի՞նչ էրըր, վուրդը՛:

էսաց. - Մարե՛, ըսըցը, վուզիր պատրաստութիւն տրսավ:

Խապար օրոխկիցըն պառվու տրդը իտիվ՝ թող գա՛, էրթա:

Մեր էսաց. - Վուրդը՛, քանսուն ավուր ճամբախ ը, կերթաս, սարը մեջ կիլ կա, ադա կիլու ջրիր կը խանեք դիւս, զընին տեղ կը դարդըկեք, ադա ադն էլ կը տանեք, պարգեք քարիրու վերեն, կերթեք, հեռուն տեղ կը նստըք, թամաշա կենըք: Ֆըլիիր կը գան, զաղ կուտըն, զզընին կը խմին, կը սարխոշման, ադա խընգ խարըր պալթաճիք թընկնին մեջքիր, բուլուր ջարդին, զուսկուրքիր բառնաք, բիրըք:

Պառվու տրդեն էլավ գինաց, վուզրին էսաց. - Քանսուն օր տ'երթամ, քանսուն օր տը գան: Կուզըմ անցկուն ուտիլ-խմիլ ըլնը, մինչիվ գանք, անութը չըմնանք: Որ անութը մնանք, մեկ խատ էլ ուսկուր չըմ բիրի:

Պառվու տրդեն զբեռնիր իբարծ, ուր մարդիր առըց, գինաց:

Քանսուն օր ինչ թմավ, գինաց սարը մեջը:

էսաց ուր մարդիրուն. - Կուզըմ՝ էսա կիլը ջրիր ամին խուրթըք, թափիք դիւս:

էլան, ադա ջրիր ամին խուրթըցըն, թափըցըն, ադն էլ տարան քարիրու վերեն պարզըցըն, գինացըն, զատը նստան, թամաշա էրըն:

Տիսան՝ ֆըլիիր էլան, զաղ կիրան, ծարավցան, էլան վար ջրին, զզընին խման, բուլուր սարխոշցան, գիրար ջարդ ու բուրդ էրըն:

Պալթաճիքն էլ ընկան մեջքիր, սաղ մնացածն էլ բուլուր ջարդիցըն, ուսկուրքիր խանըն, զբեռնիր բըռնըցըն, բարցըն, ճամբախ ընկան, ինչ քանսուն օր թմավ, էկըն Մըսրա քաղաք դիւս էլան:

Տարավ, զբեռնիր թափից:

Թագավոր տրսավ, էսաց. - Վուզիր, պառվու տրդըն մեկ աղեկ պախշի՛՛ն տու:

Վուզիրն էլ էլավ, մեկ կուռուշ էդի պառվու տրդը ծեռ:

Պառվու տրդեն էլավ, գինաց տուն:

Պառավ էսաց. - Վուրդը՛, էկըր, ֆըլի ուսկուրքիր բիրըր, թագավոր քի պախշի՛՛ն չէտո՞ւ:

- Մարե՛, թագավոր էսաց՝ աղեկ պախշի՛՛ն տու, վուզիր մեկ կուռուշ վիրուց, էդի իմ ծեռ:

էսաց. - Վուրդը՛, ան կուռուշն էլ թալ մատ ան քսան փարըն, Աստված անու պատիճըմ տա, չագատվը:

Տրդեն կուռուշն էլ իթալ մատ ան քսան փարըն:

Վուզիր էսաց. - Թագավոր ապրած, ասա ֆըլի ուսկուրքիր ինչ բիրի, պետք ը Ուստա Մուրատ գա՛, սարեն շընի: Վարպետ Մուրատ չըլնը, մարդ չըկերի շընի:

Վարպետ Մուրատն էլ քանսուն տարը կա՝ մեռը:

- Վո՞ւվ տ'երթա՝ վարպետ Մուրատ բիրը:

- Որ ֆըլի ուսկուրքիր բիրիր ի, ան տը բիրի Ուստա Մուրատ:

Մարդ խրկիցըն, պառվու տրդեն էլավ թագավորը մոտ:

էսաց. - Պառվու տրդա, քինե կուզեմ՝ Ուստա Մուրատ գարե՛ն ըզի խամար շընը:

- Թագավոր ապրած, Ուստա Մուրատ քանսուն տարը կա՝ մեռը:

- Բիրըր՝ բիրըր, չըբիրըր՝ գքու վըզ կը զարկիմ:

Տրդեն մաղտեն էրավ, էկավ տուն:

- Վուրդը՛, - էսաց մեր, - ի՞նչ մաղտեն էրիր իս, ի՞նչ կա:

- Պա ի՞նչըխ մաղտեն չէնիմ, թագավոր էսաց՝ տ'երթաս, Ուստա Մուրատ բիրըս: Ուստա Մուրատ քանսուն տարը կա՝ մեռը, իս մեռուկ մարդ ի՞նչըխ գերեզմանեն տը խանիմ, բիրըմ:

Մեր էսաց. - Վուրդը՛, մը՛ վախենա, քու Աստված կանչի՛, գինա՛: Կերթաս թագավորըն կըսըս՝ քանսուն անծին շուշակ վուզըր մոտեն կուզըս:

Տրդեն էլավ մատ թագավոր, ուզըց:

Թագավորն էլ էսաց. - Վուզիր, տը տաս՝ ինչ կուզը:

Քանսուն շուշակ առըց, գինաց գիրիզմանատնիր, ան տե քանսուն էլ մորթից, ան տե իփից, աղքատնիրուն կիրցըցուց, գինաց, հուր չուքիր իզար Ուստա Մուրատը գիրիզմընը հառաջ,

ուր խնդիրք Աստուծուց երավ, կանչից՝ Ուստա՛ Մուրատ, Ուստա՛ Մուրատ, վի՛ իլի:

Աստուծո խրամանով Ուստա Մուրատ իլավ, նստավ:

Էսաց. - Աղբե՛ր, ի՞նչ կուզես զինե, քանսուն տարը կա՛ մեռիր իմ, չը՞ք թուղնը իս խանգըստ մնամ:

Էսաց. - Ուստա՛ Մուրատ, կը խնդրիմ, թագավոր ըզի խրկիր քիւ իտիվ, տը գաս, սարե՛մ թագավորը խամար շնիս, թը չըգաս, թագավոր իմ վըզ տը զարկի:

Ձեռք՛մ չիւր էլ Ուստա Մուրատը խամար տարը խիտ:

Ուստա Մուրատ չիւրի խագանկ, պառվու տըղեն խնդրաց էկըն թագավորը մոտ, Ուստա Մուրատ էսաց. - Թագավոր ապրած մնա, քանսուն տարը կա՛ իս մեռիր իմ, ի՞նչ կուզես զինե:

Թագավոր էսաց. - Իս կուզըմ ասա ֆըլի ուսկուրթիրուց սարե՛մ զի խամար շնիմ:

Էսաց. - Շա՛տ աղեկ, կը շնիմ, իմ կռան, կավ գդել աս տեղ չէ: Իս մեռիր իմ, մինչիվ ասօր իմ կռան, կավ գդել կի՛ մարդագել պառվու դռան փակ տան ի:

- Է՛, վո՞ւվ տ՛երթա, բիրը:

Վուզիր էսաց. - Վո՞ւվ Ուստա Մուրատ բիրի, ան տ՛երթա բիրը, ինչ զմուրթ բիրը:

Թագավոր էսաց. - Պառվու տըղա, կերթաս բիրիս՝ բի՛, չըբիրիս, քիւ վըզ կը զարկիմ:

Պառվու տըղեն մաղտեն երավ, զինաց տուն:

Մեր էսաց. - Ուստա Մուրատ բիրը՞ր:

- Ուստա Մուրատ բիրը, մըկա Ուստա Մուրատը կռան, կավ գդել կի՛ մարդագել պառվու դռան փակ տուն ի, կուզը: Իս ի՞նչըխ տ՛երթամ, բիրիմ:

Էսաց. - Վուրդը՛, Աստված ան վուզըն պատիճըն տա, ան հիտիվ քի կան կը գաս, զքի կուրիսա: Վուրդը՛, մը՛ վախիճա, քիւ Աստված կանչը՛, զինա՛: Կերթաս, սարե՛մ կըլնը քիւ հառեջ, աղ սարը քարի արծըլը տըսակ ըն: Կերթաս, ինչ խասնըս անտե, կըսըս՝ իս աշխարք կան էր իկի, զգնա անուշ սար չըր տըսի, ան կընցնիս, կերթաս, սարե՛մ էլ կը գաս քիւ հառեջ, աղա սար ամին փուշ ի: Կըսըս՝ իս աս քան կան էր էկի, աս տըսակ կակուղ փուշ չէր տըսի: Անհընք ճամբախ կը տան, կընցնիս, կերթաս: Կերթաս, զիտըմ կըյնը քիւ հառեջ, ան ջրու տըսակ աշխրքի վերեն պղտոր

ջիւր չըկա, փշու՛մ ան ջրեն կը խմիս, կըսըս՝ իս աշխարք կան էր էկի, իս աս ջրու տըսակ անուշ, զուլալ, քաղցր ջիւր չըր տըսի: Ջիւրն էլ ճամբախ կը տա, կընցնիս: Կերթաս, պառվը տունն էլ մանչ դաշտըն ի, դիւ քիւ բաղդ, թե պառավ քինած ի, կը բիրիս, թը չէ, զքի կուտը անպատճառ: Վուրդը՛, զքիւ Աստված կանչը՛, զինա՛, մը՛ վախեճար:

Տըղեն էլ իլավ, զինաց թ՛ավուրըմ ճամբախ, թը տաս ավուր, զինաց, սարըն մոտացավ, սարըն էսաց. - Իս անքան ախշարք կան էր էկի, զգնա անուշ սար չըր տըսի:

Սար ճամբախ իբաց, էսաց. - Էրի՛, գնա՛, ըզգնե՛մ տարը իս աս տեղն իմ, մարդ ձը զաղա խապար չըր տըվը:

Սար ընցավ, զինաց, փըշըն մոտացավ, էսաց. - Իս ընզգնե՛մ ախշարք կան էր էկի, իս զգնա կանանչ, կակուղ փուշ վար ախշրքըն չըր տըսի:

Փուշ իրարուց բացվավ, տըղեն ընցավ, զինաց:

Գինաց, գիտուն մոտ խասավ, կզվավ վար գիտուն, փշուրըմ ջիւր խմավ, էսաց. - Իս ընզգնե՛մ աշխարք կան էր էկի՝ զգնա անուշ, քաղցր, զուլալ ջիւր չըր տըսի:

Գիտն էլ ճամբախ էտու, տըղեն ընցավ, զինաց:

Գինաց, պառվու տուն մատացավ, տիսավ՝ պառավ քնած ի, ձեռ իտու, զկռան, կավ գդել առըց, հիտ դարձավ:

Քիչ՛մ հեռըցավ, պառավ ակախավ, տիսավ կռան, կավ գդել առըց, կերթա:

Էլավ, ընկնավ հիտիվեն, էսաց. - Դի՛ւր տը պըրծնըս իմ ձեռնեն, մինչիվ գիտուն բիրան կերթաս, գիտ ի՛նչըխ տընցնիս:

Գիտն էլ, փուշն էլ, սարն էլ սիհըրի էր:

Տըղեն ինչ էկավ գիտու բիրան, պառավ կանչից. - Գիտ, թուղ մը՛ տա էրթա, մինչիվ իս խասնիմ:

Գիտը կանչից. - Չէ՛, ընզգնե՛մ տարը կա՛ իս աս տեղն իմ, մարդ ձը չըր ըսի՛ անուշ, զուլալ ջիւր, աս տըղեն ինչ իրի, էսաց:

Գիտ ճամբախ իբաց, տըղեն ընցավ:

Իրի, փըշըն մատացավ, պառավ կանչից. - Փո՛ւշ, բըռնի՛, մինչիվ իս խասնըմ:

Փուշ էսաց. - Չըմ բըռնը, ընզգնե՛մ տարը կա՛ իս էս տեղն էր, մարդ ձը չըր ըսեր՝ կակուղ, կանանչ փուշ: Աս տըղեն ինչ էրի, էսաց:

Փուշ ճամբախ իբաց, տըղեն ընցավ:

Պառավ կանչից. - Գիտ ընցար, փուշն էլ ընցար, վ'արծլես-տաննուն ի՞նչըխ տ'ընցնիս:

Իրի, սարըն մատացավ, պառավ կանչից. - Սա՛ր, մը՛ թուղնը մինչիվ իս գամ, խասնըմ:

Սար կանչից. - Ինչո՞ւ խամար չըթուղնըմ, ընցգնե՛մ տարը կա՛ իս աս տեղն էր, մարդ ըզի չէր ըսի՛՝ զգնա անուշ սար չըկա: Աս տըղեն ինչ իրի աստե, էսաց:

Սար ճամբախ իբաց, էսաց. - Էրի՛, ընցի՛:

Տըղեն ի՛նչ զսար ընցավ, պառավ կըսկըծու բըղգամ:

Տըղեն զկռան, կավ գդել իբի, իտու Ուստա Մուրատ:

Ուստա Մուրատն էլ բաշլից, սարեն շնից, պըրծավ:

Ուստա Մուրատ պառվու տըղըն էսաց. - Խնդրի՛մ քինե, ինչըխ ըզի բիրի, անցկուն էլ ըզի տանըս իմ տեղ:

Պառվու տըղեն իլավ, Ուստա Մուրատ առըց, գինաց գե-րեզմանանոցն, չուքիր իզար հեռջիվ գերեզմնին, խնդիրք Աս-տուծուց էրավ, էսաց. - Աստված, քինե կուզըմ Ուստա Մուրատ էլմ ուր գերեզմանն մտնի:

Գերեզման բացվավ, Ուստա Մուրատ մտավ ուր տեղ:

Պառվու տըղեն էլավ, էրի հուր տուն:

Վուզիր էսաց. - Թագավուր ապրած կաս, սարեն շնիցըր, մուրթ թըլցիր ի սարեն, լուս կը տա, դո՛ւ մնակ կը նըստըս ինի: Նշանակութի՛ն չունը, պետք ը խրկիս, Պապը Ֆրենկի ախչըկ բի-րիս, էրկուս իրարու առնըք, խատ իրարու նստեք:

Թագավուր էսաց. - Շատ աղե՛կ կըսըս, վո՞ւվ տ'երթա Պապը Ֆրենկի ախչըկ տը բիրի, կըռվով չըբիրվը, խաթրուվ չէրթա:

Վուզիր էսաց. - Էս սարեն վո՞ւվ իտու շնիլ, էսքան գատ վո՞ւվ իբի, էլմ են մարդ կը բիրը:

Էսաց. - Խրկի՛, պառվու տըղըն բի՛ աս տե:

Մարդ գինաց, էսաց. - Թագավուր քի կը կանչի:

Մեր էսաց. - Վուրդը՛, իլի՛, գինա՛, Աստված ան վուզըրն պա-լեն տա: Ան քի իտիվեն կան կը գա՛, վուրդը՛, մը՛ վախինա:

Պառվու տըղեն կիւզան թագավուրըն մոտ:

Էսաց. - Թագավուր ապրած, ի՞նչ կա:

Էսաց. - Քինե կուզըմ՝ էրթաս Պապը Ֆրենկը ախչըկ բիրիս: Բիրիս՝ բի՛, չըբիրիս՝ վըզըդ կը զարկիմ:

Տըղեն մաղտեն էրավ, գինաց տուն:

Մերն էսաց. - Վուրդը՛, էլմ ի՞նչ մաղտեն էրիր իս:

Տըղեն էսաց. - Ըզի կը ճամբխը, կասը՝ Պապը Ֆրենկի ախ-չըկ ձը խամար բի, չըբիրիս՝ վըզըդ կը զարկիմ:

Էսաց. - Վուրդը՛, Աստված ան վուզըրն պատիճըմ տա, կըլ-նըս, կերթաս թագավուրը մոտ, կըսըս՝ թագավուր ապրած, կու-զըմ քինե խընգ խարըր ախչըկ՝ ամեն մեկ տըսակ, մեկ թայ: Անհունց խամլ մեկ տըսակ, քինե կուզըմ մեկ կամի՛մ, ան կամին էլ ամին ակնունք տ'ըլնը, ախչըրքի մեջ ալ ան տըսակ կամի տը չըլնը, քանտուն ձեռք սագ տ'ըլնը, քանտուն ձեռք էլ դահուլ-գուռ-նա տ'ըլնը, հիսուն խատ էլ չանկի տ'ըլնը, մեկ ամսվան ալ խընգ խարըր մարդու ուտելիս, ինչ ուտելիս կա մանչ ախչըրքին, ամեն վուզրի քիսայից տ'ըլնը:

Թագավուր էսաց. - Վուզիր, լսա՞ր:

- Թագավուր ապրած, - էսաց, - խնդրի՛մ, քսան օր ժամա-նակ տաս, մինչիվ կամի՛մ տամ շնիլ, ախչընիրն էլ տիսնամ, բիրիմ:

Կամի՛մ իտու շնիլ, ախչընիրն էլ ժողվից, իբի:

Վուզիր անցկուն իրավ, անցկուն չարչարանք քեշից, գիւր շապըկն էլ ծախըց, հալա ախչըկ մնաց պակաս, ուր ախչըկն էլ իբի տեղ: Անցկուն շվարավ վուզիր, օր ավուր խացըն կարոտ մնաց:

Պառվու տըղեն էլ իլավ, գիւր ախչկըտիր առըց, գինաց, մտավ կամին: Կամին էլ անցկուն կամի մ'եր, ախչըրքի վերեն ան տըսակ կամի չըկեր:

Պառվու տըղեն էր կամին իթուղ, գինաց..... քանըք դիմաց դադրավ:

Էդ.... քանըք մախլուխ թափան թամաշա, ասըցըն մեմեկը. - Սա տըսակ կամի մինք չըք տըսի:

Թագավուր Պապը Ֆրենկին էսաց վուզրին. - Իլի՛, նստընք կայիդ, էրթանք կամու թամաշեն, տըսնանք ինչ մարդ ի, ի՛նչ մարդու կամի ի:

Թագավուր, վուզիր նստան կայիդ, էկան, կամին դիւս իլան:

Վուզիր, թագավուր ինչ մտան նիրս, շաշմիշ իլան, յոթ օր, յոթ գըշիր մնացիր ան տե, իրենց մտով մեկ սահաթ իլավ էկածն:

Թագավոր վուզրին էաց. - Աս սահաթըմ կա մինք էկեր ինք, էրթանք:

Կանուց իլան, նստան կայիղ, դուս իլան:

Թագավոր գինաց սարեն, կընըկ էաց. - Աստված քու տուն վըրը, աս յոթ օր կա՝ դու քաղաք թուղիր եք անթագավոր, անվուզիր:

Թագավոր էաց. - Մի մտքեն սահաթ մ'իլավ, գինացիր ընք:

Կընըկ էաց. - Յոթ օր կա՝ դու գանցըր ըք:

Թագավոր էաց. - Կընըկ, միք գանցընք յոթ օր, էկինք:

Վախինամ՝ դու էրթաս, ամիս՝ մնաս, տը չըգաս:

Կընըկ էաց. - Ասօր իս տ'երթամ:

Կընըկն էլ էլավ, գիր խալավքիր խաքնավ, գիր խուտամ առըց, գինաց նստավ կայեղ, քեշից գինաց, կանու հեռջիվ կայնավ:

Թագավորը կընըկ կայիղից դուս իլավ, մտավ կանին, էաց. - Խուտամ, ինչ մորեն իլեր եք, աղ ընցկնա սեյր չընք տըսի:

Թագավորը կընըկ մնաց տասնըխընգ օր կանու մեջ:

էաց. - Խուտամ, ասօր էրթանք, վաղ էլմ կու գանք:

Կանուց իլան, նստան կայիղ, կայեղչին քեշից, դուս իբի, էխան:

Թագավորը կընըկ գինաց սարեն:

Թագավոր էաց. - Միք յոթ օր մնացընք, կըսըս՝ շատ իք մնացիր, պա դու տասնըխընգ օր մնացիր:

էաց. - Ասա տըսակ սեյր ախշըրքի վերեն էլ չըլնը:

Թագավորը ախշըկ էաց. - Դու էրկուս կերթեք, վալա՛, իսն էլ տ'երթամ:

Թագավորը ախշըկ գիր խալավքիր խաքնավ, իրի նստավ կայիղ, քեշից, գինաց, կայեղից դուս իլավ, մտավ կանին:

Պառվու տըղեն էլ կանուչուն էաց. - Քինե կուզըմ՝ տամուր առնիս³⁴:

Ջտամուր առըց, զկանու պար իտու, կանին էլավ, իրի Մըսըր:

Աղ թագավորը ախշըկն էլ տիսավ՝ խոր քնդքեն հեռըցավ:

- Աման-գաման, կանին գինաց, իս ի՞նչ ինիմ, - պոռաց:

Պառվու տըղեն Պապը Ֆրենկի ախշըկ առըց, իբի, Մըսրա քաղաք դուս էխան, առըց, տարավ թագավորը սարեն:

Ախշըկ գսարեն տըսավ, շաշմիշ էլավ, էաց. - Էսա ֆըլի ուսկուրքիր վո՛ւվ բիրիր ի, ասոր ուստեն վո՛ւվ բիրիր ի, էսա մուրթ վո՛ւվ բիրիր ի:

էաց. - Անա մարդն ի բիրիր, ինչ գքի բիրիր ի:

- Աճեպ ի՞նչ իք տըվը անու, օր բիրիր ի:

- Վուզիրն ը տըվը, իս չըմ տըվը, իս չըմ գիտը:

Ախշըկ տըղըն էաց. - Ի՞նչ ի տված քի:

էաց. - Մուրթ բիրիր իմ, վուզիր ըգի տվը քսան փարա, ֆըլի ուսկուրքիր բիրիր իմ, տըվը մեկ կուռուշ, ուստա Մուրատ բիրիր իմ, տըվը վաթսուն փարա:

Պառվու տըղեն թուղ իտու, գինաց:

Վուզիր էաց. - Թագավոր ապրած, ֆըլի ուսկուր բիրիր, սարեն տվըր շընիլ, զՊապը Ֆրենկի ախշըկ բիրիր, պետք ը խրկիս, անմախութենի ջուր կա, բիրիս, լողանաս, ըլնըս տասնըչուրս տարեկան, առնըս Պապը Ֆրենկի ախշըկ:

- Վուզիր, - էաց, - անմախութենի ջուր վո՛ւվ կերթա, բիրը:

էաց. - Վուվ էս կանդար բանիր իբի, էլըմ ան կը բիրի:

Թագավոր պառվու տըղեն կանչից, իբի:

Տըղեն էաց. - Թագավոր ապրած, ի՞նչ կուզըս ըզնե:

էաց. - Քինե կուզըմ, կերթաս, անմախական ջուր կը բիրիս, իս լուղանամ՝ ըլնըմ տասնըխընգ տարեկան ճըհել, Պապը Ֆրենկու ախշկա խիտ պսակվըմ:

Պառվու տըղեն դարձավ, գինաց տուն:

Մեր էաց. - Թագավոր էլ ի՞նչ էաց:

- Թագավոր էաց՝ կերթաս անմախութենի ջուր բիրիս....

էաց. - Վուրդը, կերթաս, յոթ օր ճամբախ խառնուրդ կա, մեկ էխտիյար մարդ՝ ան տե նստը, վո՛ւվ էրթա, ճամբախ նշանց կը տա, կերթաս ան մարդ:

Ան ինչ տ'երթար, տըղըն կանչից թագավորը ախշըկ:

Պառվու տըղեն էլավ, գինաց Պապը Ֆրենկու ախշկան մոտ, էաց. - Իս տ'երթամ, ի՞նչ կըսըս, ըսա՛:

³⁴ Խարիսխը վեր քաշես (Ծ.Բ.):

Պապը Ֆրենկը ախչըկ էսաց. - Կերթաս, չըմ հավատա՝ դիւ անմախական ջիւր բիրըս, թե բիրը՞ր, իմ ձեռ տաս, հիւրըջ ձեռ չըտաս:

Պառվու տըղեն էլ էլավ, գաստ էրավ, գինաց, խասավ յոթ ճամբախ խառնուրդ, էխտիյար տիսավ, էսաց. - էխտիյար, ճամբախ ըզի նշանց տու, իս տ'երթամ, անմախական ջիւր տը բիրիմ:

էսաց. - Յա՛յ, վուրդը՛, իս չըմ խավատա՝ դիւ անմախական ջիւր բիրիս: Կերթաս ասա ճամբխով՝ տաս ավուր ճամբախ: Առավուտուն ինչ ցուրտ ժամանակ կը տիսնաս քիւ ճամբխը մեջ՝ թե ճանավար ըլնը, թե խավք ըլնը, կառնըս, կը դընըս քիւ ծուց, կը տաքնա, մինչիվ արիվ կառնը, կը թուղնըս: Թ՛անմախական ջիւր բիրը, ան տը բիրը, հիւրըջ մարդ չըկերի բիրը:

Տըղեն էլավ, ճամբախ ընկնավ, խընգ-տաս ավուր ճամբախ գինաց, տըսավ՝ խավքըմ պառկիր ի ան տե, քիչ մնացի, օ ցրտու սառը:

Տըղեն գխավք բըռնից, իդի ծուց, քեշից գինաց, մինչիվ արիվ առըց, խավք ծուց տաքցավ:

Ձխավք իթուղ, թըռավ, գինաց:

Տըղեն էլ գինաց, գինաց, սարը գլխիս կայնավ:

Տըսավ՝ խուրըմ կա ան տե, խազար արշուն խուրունդի. անմախական ջիւրը ան խուրն ը, մարդ չըկերի իջնե մեջ, բան վիրուց չըխասնը տակ:

Նստավ ան տե, մտածից. «Աստված, իս ի՞նչիս անա խուրեն ջիւր խանըմ, տանըմ»:

Մեկն էլ տիսավ՝ բան վիրուց գինաց խուրը տակ, մեկն էլ տիսավ՝ խավքըմ խուրուց դիւս իլավ՝ փարխաճ ջիւր վըզըն: Տիսավ ան խավք, ինչ դըրիդ ի ծուց:

Տըղեն զջիւր առըց, խավք թռավ, գինաց:

Տըղեն ճամբախ բըռնից, գինաց, Մըսրա քնդաք դիւս էլավ, ջիւր իտու Պապը Ֆրենկը ախչըկ, դարծավ:

Պապը Ֆրենկը ախչըկ պըղընծըմ ջիւր եռցըցիր, դրիր ան տե, գինաց թագնավուրը էսաց. - Պառվու տըղեն անմախական ջիւր բիրը, իլի՛, լուղկանանք, կարգվինք: Իլի՛, մըտը՛ աս պըղընծ:

Թագնավուր էկավ, շիւրիդ էխան, ընկնավ պըղընծ, խաշավ:


Թագնավուր տարըն, պախըցըն:


Անմախական ջիւր բիրըն ան տե, պառվու տըղեն, Պապը Ֆրենկու ախչըկ լուղացան, էրկուսն էլ իլան տասնըխընգ տարեկան, պսակվան:

Քնդը մեջ խուսք իլավ՝ թագնավուր, Պապը Ֆրենկու ախչըկ անմախական ջիւր խմած, իլած տասնըխընգ տարեկան:

Պառվու տըղեն որ իլավ թագնավուր, խրկից, զիւր մերն էլ իբի, յոթ օր, յոթ գըշիր զիւր խարսնըս իդի, պսակվան, էլավ Մըսրա թագնավուր:

Անհընք ան տե խասան ուրից մըրագ, դիւ էլ աս տե խասնիք ձի մըրագըն:





75. ԼԱՎԸ ԳՅՈՒԼՍՍԱՆ

Թագավորն՝ կեր, իրիք տղղա ուներ, իրիք ախչըկ, էսաց. - Իս կը միռնիմ, խավք գա՛, գել գա՛, առջ գա՛, ախչկըտիր կըտեք, - էսաց: - Իս ինչ կը միռնիմ, իմ իտիվեն չըգեք, - էսաց: - Ինչ կը պսակվեք, մա ձի կընկտիք չըքընեք, - էսաց: - Ծառ մը կա մի, իրիք խնծուր կը բըռնը, հուլիսի տասներխնգին կը գան, կը տանըն, չըն թուղնը տըսնանք՝ ինչ խնծուր ի (անմահական խնծուր ի): Ան ցածրի խնծուր մինծ տըղըն, ան միջի խնծուր միջնիկ տըղըն, ան վերի խնծուրն էլ պըզտը տըղըն: - էսաց, - յոթ օր իմ գիրիզման կը պախեք, գըշիր ճրագն էլ չըք թուղնը ընցնը:

Խեր միռավ, տը տանին վիրուցին, էրկու մինծ տըղեք ասըցըն. - Խիտ էրթանք:

Փուքը էսաց. - Չընք էրթա:

- Ի՞նչըխ, մի խեր մեռնը, - ասըցըն, - մինք չէրթա՞նք խիտ:

Պըզտիկ աղբերն էլ առըն, գիրոպեն գնացըն խիտ:

Մինչիվ գխեր պախըցըն, էկան, խրոխբեր նստավ թախտ, թագավորութեն առըց:

Փուքը աղբեր էսաց. - Չէ՞ իս ձի ասըցը. «Չընք էրթա իտիվ»:

Առջ իրի, նստավ խնամաթոռ:

- Չի մինծ քուր տը տեք ձը, - էսաց:

Էրկու մինծ աղբեր ասըցըն. - Մինք մի քուր ի՞նչըխ տը տանք առջին, չընք իտա. տանը տ՛ուտը:

Պըզտըկ աղբերն էսաց. - Իմ խոր խուսք չէրի, կուշտ կիրա, աս էլ չէնըմ, տը տամ տանը:

Մինծ քուր առջ առըց, տարավ:

Անու հիտիվեն գել էկավ, նստավ խնամաթոռ, էսաց. - Չի միջնեկ քուր տը տեք ձը:

Էրկու մինծ աղբեր ասըցըն. - Չընք իտա:

Փուքը աղբեր էսաց. - Չէ՛, իս իմ խոր խուսք գիտըն չըմ իտա, իմ քուր տը տամ:

Քուր խտու գելին, առըց, գինաց:

Անու հիտիվեն Սըմուլ խավք թռավ, էկավ, նստավ խնամաթոռ. - Չի պըզտիկ քուր տը տեք ձը:

Էրկու աղբեր էլմէլ էկան ատե. - Մինք մի քուր ի՞նչըխ տանք խավքուն, խավք առնը, տանը, մի քուր ընկնը տակ, մեռնը:

Փուքը աղբեր էսաց. - Ան էրկու ձի քուրիքն ին, դու չկարողացաք չըտեք. աս իմ քուրն ի, իս տը տամ:

Պըզտիկ քուրն էլ էտու Սըմուլ խավքուն, խավք առըց, տարըց:

Չիրիկուն իլավ. - Աղբերքիր, էլեցեք, էրթանք, մի խոր գիրիզման պախինք:

Էլան, գճրագ առըն, գինացըն վար խոր գիրիզմընին, ճրագ վառըցըն, նստան:

Մինծ աղբեր էսաց. - Դու քընեցեք, իս կը մնամ գարթուն, ինչ ժամանակ իմ քուն կը գա, իս գճը խանիմ վի:

Էրկու պըզտի աղբեր քինան, մինծ աղբեր մնաց գարթուն:

Տըսավ Միվ դիվ իրի, աղա կողմեն գինաց առաջ, էգար, գդիվ սպանից. էթալ ձուր իվե, փրթից, իլից ան տե, էսաց. «Իմ աղբերքիր չըլըն, տըսնան, վախանան»:

Իրի, կանչից, միջնիկ աղբեր էխան վի, էսաց. - Իլի՛, դադը՛, իմ խոր գիրիզման պախի՛, իս քիչըմ քընիմ:

Մինծ աղբեր քնավ, միջնիկ աղբեր կայնավ:

Միջնիկ աղբեր տըսավ՝ վիշապ՛մ գատնու խիտ էրի, են էլ գինաց առեք, չէթուղ մատանա, էգար, գվիշապ սպանից, փըրթից, էլավ, էրի: Իրի, իշից լուսու դեմ ի:

- Աղբե՛ր, - կանչից, - դիմաց լուսու ի, իլի՛ վի:

Պըզտիկ աղբեր էլավ վի, միջնիկ աղբեր քինավ:

Պըզտիկ աղբեր տըսավ՝ աղվիս մ՛ էկավ ան տե:

Էսաց. - Աղվիս ի՞նչ տ՛ինե, կան գա, ուսկուր կըրծը, թը էրթա:

Աղվիսն էլ իրի, ճրագըն մատացավ, պուչ էգար, ճրագ ընցուց, փախավ, գինաց:

Ադ էլ ադ տե շվարավ. կրակ չըկա՝ ճրագ վառը:

Իրըշից, դաշտը մեջ կրակ տըսավ, էլավ, քնում ուլնիք էթալ էն աղբոր ականջ, մեկ՝ էնու ականջ, էսաց. «Իս էրթամ, իմ աղբեր չըլնին վի»:

Գինաց դախ կրակ: Տըսավ մանչ ճամխըն կի իխտիյար մարդըմ՝ սըվտակ կըծըկըմ կի կուշտ, սիվ կըծըկըմ էլ հեռջիվ, կը կըծկը. ադա կըծըկը քիչ ի մնացի խըլըսնա, էսաց. - Հայ, իխտիյար, ադ ի՞նչ կենիս ադ տե:

էսաց. - Իս մութ, լուս կը բաժանիմ. նա թուխ գըշիրն կը կըծկիմ, քիչըմ էլ մնա, կը լուսնա: Ի՞նչ լուսնա, սըվտակ կըծըկ կը կըծկիմ:

էսաց. - Մութ, լուս չըբաժանիս, մինչիվ կրակ առնիմ, գան:

էսաց. - Աստված քիւ տուն ավըրը՝ մինչիվ դիւ գան, էրկու գըշիր, էրկու ցիրիկ կըլընը. սաղ մարդ կը խըվընդնա, խըվանդն էլ կը մեռնը:

էլավ, գխալավիւր կապըց, իդի ան տե, թուխ կըծըկ իդի հեռջիվ, սըվտակ կըծըկ հեռացըցուց մոտեն:

Գինաց դախ կրակ, տըսավ մուղարե՛մ դաշտըն մեջ, կրակ ադա մուղարի մեջ կերևա: Գինաց, տըսավ քանսուն դիվ պառկած, քինած ա, քանսուն կանթեն պըղընծ վար կրակըն, քանսուն հեյվընի ջանդակ էլ մանչ պըղընծըն, վար կրակըն կիռա: Դիւ չըսը՞ս՝ անհունց մինծ աղբեր զարթուն ը: Ադ էլ էլավ, կրակ՛մ առըց, էլավ վար դռան, էսաց. «Նա կրակ չէլավ, էրթամ մեկէ բիրիմ»:

Ձան կրակ էթալ, գինաց մեկ էլ իբի:

էլ էսաց. - Նա էլ չէկավ:

Ձան էլ էթալ, մտավ մաղարեն վե, գինաց պըղընծը վրեն կայնավ, էսաց. - Իս ձիռ տը տամ նա պըղընծ, վիրուցըմ, թը վիրուցը, դըրը գիտըն, էլմ դըրը վար կրակըն, գիմ կրակ առնըմ, էրթամ: Թը չի վիրուցը, փախիմ, էրթամ, ալ կրակ չըմ տանը, դիվիր ակախիմ, իմ խուզըն ալ իս անհունց ձեռնեն չըմ ազատը:

Աստըծու անուն իտու, ձիռ իտու գքանսուն կանթե պըղընծ վիրուց, իդի գիտըն, էլմ իդի վար կրակըն, զուր կրակ առըց, էլավ վար դռան:

Մինծ դիվ կանչից. - Այ մարդ, կրակ՛մ քի խաթը, մեկն էլ քի խաթը, էն մեկ էլ ինչ էր՝ տարըր: Տը գան, թի դիւ էնա քանսուն կանթե պըղընծ վիրուցըր, դըրըր գիտըն, էլմ դըրըր վար կրակըն, մի քանսուն աղբոր մինծ դիւ ըլնըս:

Ադ էլ դարծավ, իրի, ձիռ էտու գքանսուն կանթե պըղընծ, վիրուց իդի գիտըն, իդի վար կրակըն:

Դիվն էլ էսաց. - Մի քանսուն աղբոր մեծ դիւ:

Դիվ ուր աղբըքիր էխան վի, էսաց. - էրթանք, նա թագանվուրըն իրիք ախչըկ կա, յոթ տարը կա՝ մինք կուզընք, չըտա, դարկանիիրը փակը, խուղը՝ էլնըք էրկըթե բիվեռ շընիմք, տանընք զարկիմք պատան, էլնըք պատանը գլիխ:

էլան, բիվեռ առըն, գանցըն պատանը հառաջ:

Մինծ դիվուն էսաց. - Իս բիվեռ կը բըռնըմ, դիւ զարկ:

Մեկ հիթակ՛մ էլ ձիռ, ինչ կը զարկեր, ձեռն կընկներ քաղքը մեջ, ադ էլ դիվուն էսաց. - Ադ չիլավ, մըկա կակախիմ, քանսունը մեկս էլ կը սպանիմ:

Տըղեն բիվեռ կը տեր պատըն, ձեռնով կը զարկեր:

Մեկ-մեկ էգարկ, էլավ պատանի գլիխ:

Քանսուն քան խանեց ուր խիտ, էսաց. - Ինչ քան՛մ կը թըլիմ, դիվըմ էկեցե՛ք, էկեցե՛ք պատանի գլիխ, էն էրթա մըջ քանքըն, դոր մեկ էլ իլնը:

Անի էլ կայնավ վար պատանին, քան՛մ կը թըլեր, դըվըմ կըլներ պատանի գլիխ, ադա տըղեն էլ թուրըմ կը զարկեր դըվուն վըզ, ճանտակ, գլիխ խընտրանց կերթեր քանքը մեջ:

Քանսուն էլ ադա տըսակով սպանից:

Տըղեն էլ էջավ քանքու մեջ, կան իրի: Գինաց, թագանվուրու սարեն տըսավ, մտավ նիրս, գինաց թագանվուրու հողի դիռ էբաց, տըսավ թագանվուր, իրան կընըկ քընած, տըղեն դրած ծանծըմակ, օձ սան վի իջի, քիչ մացի բիրան խասը, գտըղի իրիս կըծը: Խանճար քեշից, զար վար օծու գլխիւն, խանճար մտավ մանչ սան, մնաց:

Տըղեն խանճար իթուղ ուր տեղ, թագանվուրը խանճար առըց, զարկից ուր մեջք, գինաց: Դիռ մ՛ էլ իբաց, տըսավ թագանվուրը միծ ախչըկ ադա տեղ քընի, մուն զարկած գլխիմ, մի ուտ-բիրուն, էսաց՝ տ՛էրթամ, պագնըմ:

Գինաց, կզվավ վրեն, էսաց. - Մանչ անհու քընուն զան չըպագնիմ:

Գինաց, դհո մ' էլ իբաց՝ միջնիկ ախչկան հոդեն ի, ան էլ միծ ախչկան տըսակ պարկը, քընը. նա քանց միծ ախչըկ խորոտ էր:

Գինաց, կզվավ վրեն, էսաց. - Տը պագնիմ:

Չըպագնից, հիտ դառցավ, էսաց. - Մանչ անհու քընուն չըմ պագնը:

Գինաց, դհո մ' էլ իբաց՝ պըզտիկ ախչկան հոդեն:

Պըզտիկ ախչըկ քանց երկուսն էլ խորոտ էր:

էսաց. - Քնած ըլնը, չըլնը, զան տը պագնիմ:

Գինաց, կզվավ վրեն, անհու սըրտ պագնից:

Քանց փարեմ՝ անհու սըրտ սիվցավ:

Փոշման էղավ, էսաց. - Աստըծուց էղներ, չըպագներ անհու սըրտ:

Ան էլ թուղ իտու, իրի, դարկախ իբաց, իրի դհու, գինաց, զուր կրակ առըց, գինաց մատ իխտիյար:

Իխտիյար էսաց. - Աստված քիւ տուն ավըրը՝ էլավ երկու գըշիր, երկու ցիրիկ դիւ գանցիր իս, խըվանդ մըկա միռե, սաղ խիվընդի:

էլավ ըզիխտիյար արցկից, էսաց. - Իս կիրթամ, մութ, լուս չըբաժանիս, չուր իս իմ ճրագ կպուցիմ: Որ իմ ճրագ կենա առանց կանել, դիւ զմութ, լուս բաժանիս, իս քի տը սպանիմ:

Ադ էլ գինաց զուր ճրագ կպուց, քնուն ուլնիք աղբոր ականջնիրուց էխան:

Լհուցավ, աղբեր էկավ, էսաց. - Ըլեցե՛ք վի, լիւս ի:

Աղբերքիր էլան, նստան, գանցըն, լվացվան:

Պըզտը աղբեր էսաց. - էրթանք:

Միջնիկ էսաց. - էրթանք դի՞ւր:

Միծ էսաց. - էսա կուղմ:

էն կուղմ, ինչ դիվ սպանիր ի:

Պըզտիկն էլ էսաց. - Չէ՛, էրթանք սարիր ի՞նչ անինք, անջուր, անբան էրթանք: Նստինք վար հաղբըն, խաց կուտընք, կը լվացվընք, ջուր կը խմինք:

Գանցըն վար հաղբըն:

Դառնանք վար թագավուրըն:

Թագավուր քնուց էլավ վի, տըսավ օծ սան վի էջի, քիչ մնացը զտըղեն կըծը, խանճար զարկած մանչ օծու գլխուն, մտի մանչ սան, խանճար թուղած ուր տեղ:

խապար բիրըն թագավուրըն. - Թագավուր ապրած կինաս, քանտուն դիվն էլ սպանած ին:

Թագավուրն էլ դալալ իցկից մանչ քանդըն, իտու կանչիլ. - Ո՛վ ըզնա դիվիր սպանիր ի, թը գան, թագավուր անհու խնդիրք կատարը:

Վի՛ կուվըմ կեր, վի՛ էշըմ կեր, ծախըցըն, տըվըն, թուր առըն, կապըցըն վար ուրինց, մեկ-մեկ կը յան մա թագավուր, թագավուր կըսը. - Դիվիր դի՞ւ իս սպանի:

Կըսը՝ խա՛:

Կըսը. - էնա խանճար քեշե՛, խընեք:

Որ ձիւ կը տանի խանճար, խանճար կը գան՞ դիւս: Չի գան դիւս:

Քանի մարդ կեր մանչ քանդըն, մարդ չըկըրցավ խանճար քեշիր դիւս:

Թագավուր էսաց. - էլ մարդ մնա՞ց մանչ քանդըն:

Ասըցըն. - Մանչ քանդըն մարդ չըկա, հաղբըն վրեն սևութի՛մ կա, չընք գըտի՛ մա՞րդ ի, հեյվա՞ն ի, ի՞նչ ի:

Թագավուր էսաց. - Գանցե՛ք, որ մարդ ի, առե՛ք բիրե՛ք:

Գանցըն, տըսան՝ իրիք մարդ նստած վար հաղբըն:

Ըսըցըն. - էլեցե՛ք, էրթանք. թագավուր ըզծի կուզը:

- Թագավուր ի՞նչ գուրծ ունի մի խիտ, մինք ճամբխուրդ մարդ ինք, մինք թագավուրըն չընք տըսի, թագավուր զմի չըտըսի:

- Չէ՛, տը գեք, - ասըց:

Առըն, տարըն:

Յառաջ մինծ աղբեր տարան թագավուրը իրիս:

Թագավուր էսաց. - Նա դիվիր դի՞ւ իս սպանի:

էսաց. - Իս իմ սպանի:

- էն որ սպանիր իս, էնա խանճար քեշի՛, տըսնան:

Չիւ իտու խանճար, խանճար կը գան՞ դիւս, սուն կը գան, խանճար չըզան:

Միջնիկ աղբեր գինաց՝ էլմ աղա տըսակ:

Հիտքեն պըզտիկ աղբեր գինաց, էսաց. - Դիւ նա դիվիր սպանիլիւց խապար ունի՞ս:
Էսաց. - Իս իմ սպանիր նա դիվիր:
Էսաց. - Որ դիւ իս սպանիր, նա խանճար քեշի՞ դիւս:
Թագաձուրըն էսաց. - Ա՛ռ քիւ խանճար, իս իմ խանճար քեշիմ դիւս:
Չիռ իտու, առըց գուր խանճար, էգար մեջք:
Թագաձուր էսաց. - Ախչկըտիր դիւ քի խըմար իս ազատը, ինչ կուզըս, ուզը՛, տամ:
Տըղեն էլ էսաց. - Բան էլ չըմ ուզը, ախչկըտիր խերիք ի:
Ադա իրիք աղբեր, իրիք ախչկըտիր առըն, էկըն ուրինց տուն:
Մինծ քիւր՝ մինծ աղբոր, միջնիկ քիւր՝ միջնիկ աղբոր, պըզտիկ քիւր՝ պըզտիկ աղբոր: Առան, պսակվան:
Պըզտիկ աղբերն էսաց. - Աղբըրքիր, մե խեր վոսիյաթ էրավ. «Չի կընկտիրուն մոտ չըքնե՛ք»:
Աղբըրքիր ասըցըն. - Մինք պսակվիր ինք, մի կընկըտիրուն մոտ տը պառկինք:
Պըզտը աղբոր կընիկն էլ ուր տեղ շնից, պառկան:
Ադ էլ ուր կընկան կուշտ չըգինաց, իրի, պառկավ իտիվ դռան:
Մեկէլ օր կընըկ էսաց. - Իտիվ դռան տեղ անի՞ւշ ի:
Տարավ, տեղ իցկից իտիվ դռան: Էլմ մարդ գինաց, վըրին քիւնճ պառկավ: Մեկէլ օր կընըկ տարավ տեղ վըրին քիւնճ պարգեց: Մարդ էլմ չըգինաց վար տեղաց, գինաց իտիվ դռան պառկավ:
Կընիկն էլ մարդիւն էսաց. - Քիւ նագ քանց Լավը Գիւլստան շատ ը:
Ադ էլ էսաց. - Քան գիմ մեր կինաս ըզծը, քան գիմ քիւր, մինչիվ իս Լավը Գիւլստանը չըտըսնամ ինչըխ մարդ ի:
Էլավ, ընկնավ ճամբախ, գինաց:
Շաբաթ՛մ էրկու ճամբախ գինաց:
Գինաց, ընկնավ առջու սընոռ:
Գինաց առջու պաղչեն, վար հավուզըն նստավ:
Քիւրն էլ դադըր վար պատըն, ըլիկ մանը:

Իրըշից մանչ պաղչեն, տըսավ մարդ՛մ նստը վար հավուզըն, էսաց. - Խավք ուր թիվով, օձ ուր պուռտով չըր իկե միր պաղչեն, աս վո՞ւվ իկե միր պաղչեն:
Ինքն էլ իլավ, էրկու, իրիք խաց առըց, գինաց, տըսավ աղբեր:
Թռավ, զաղբոր գլիխ պագնից, զաղբեր առըց, էկըն տուն: Խաց իղի ան տե, աղբեր կիրավ, խուսան, վար մեմեկու ուրախացան: Հիրիկվան իլավ, զաղբեր պախից:
Կես սահաթ մնաց, առջ իրի:
Դիւռ էբաց, մտավ նիրս, էսաց. - Կընը՛կ, մարդախուտ կը գա մի տնեն:
Էսաց. - Տնավի՛ր, դիւ սարեն կը գա, դիւ ծուրեն կը գա. մարդ-մարդախուտ քինե կը գա:
Էսաց. - Չը՛մ գըտի, մարդախուտ կը գա մի տնեն:
Էսաց. - Աճեպ ի, մըկա իմ աղբըրքիրուց մեկ ըյներ սդա, դիւ ի՞նչ տ՛եներ:
Էսաց. - Մինծ աղբեր իներ սդա, մինծ փըրդիւճ ականջ տ՛եներ, միջնիկ իներ՝ ան տըսակ: Պըզտիկ աղբեր իներ, անիւ տեղ տը շնիր վար իմ գլխուն:
Ասաց. - Իմ պըզտը աղբեր կի սդա:
Առջ էսաց. - Քիւ վըզ կուտըր, իս իմ, ան մեկ անիր, ան էլ վար ծը կը պախիս, տիլի՛, բի՛ սդա:
Էլավ, զաղբեր առըց, իբի:
Խաց իբի ան տե, խաց կիրան:
Առջն էսաց. - Քիւ խըզմաթ ի՞նչ կա էսա էրկիր:
Էսաց. - Իս իկիր իմ, տ՛երթամ, Լավը Գիւլստանը տըսնամ:
Առջն էսաց. - Աղըկ իմ գուրծ չի, թը գըտի, Սըմուլ խավք գըտի, ան ախշար շատ կան կը գա, որ ան չըգըտի, էլ մարդ չըգըտի: Ալ հիւրը ճամբախ չըկա, կերթաս մոտ քիւ քիւր:
Առջն էլ էլավ, զճամբախ շանց իտու: Ադ էլ էլավ, զճամբախ բռնից, գինաց: Գինաց գիլու պաղչեն:
Ի՛նչըխ առջու տըսակ միջնիկ քիւրն էլ անցկուն էրավ:
Գեյ խարցնից. - Դի՞ւր տ՛երթաս:
- Տ՛երթամ Լավը Գիւլստանը էրկիր, զԼավը Գիւլստան տըսնամ:
Էսաց. - Իսն էլ չըմ գըտի, Սըմուլ խավք գըտի:

Ադ էլ էլավ, զճամբախ շանց իտու, մարդ ընկնավ խա ճամբ-
խըն, գինաց, գինաց, Սըմուլ խավթու պաղչեն դիւս իլավ, վար
հաղբըրին նստավ, քիւր խմավ, պառկավ: Ան տե Սըմուլ խավթ
վիրուց իրըշից, տըսավ՝ կի մարդըմ վար հաղբըրին, էկավ տակ,
տը գարկեր:

Ինչ մատացավ, տըսավ անիր:

Սըմուլ խավթ էլ թիվթիւր իտու երեգնկան, խուվ էրավ վար
անիրուջ, անիր ակախավ, էլավ, նստավ:

Սըմուլ խավթն էլ էջավ խատ անիրուջ կըշտըն:

Վար իրարու խնդացան, ուրախացան:

Էլան, գնցըն տուն, քիւր էկավ, կախվավ աղբոր վըզ, աղբոր
գլխիս պագնից:

Սըմուլ խավթ էսաց. - Կընըկ, խաց բի, ուտընք:

Քիւր էլավ, խաց իդի անտե, կիրան, խման:

Սըմուլ խավթ էսաց. - Աստված խեր էնը, դիւ ի՞նչ գուրծը
իկի, դի՞ւր տ'երթաս:

Էսաց. - Իս իկիր իմ, տ'երթամ Լավը Գիւլստան տըսնամ:

Սըմուլ խավթ էսաց. - Իս չըմ գըտի, անիւ երկիր ո՞ր տեղն ի,
իս կանչիմ խավթիր, գան, տըսնանք ո՞վ սալըղ կը տա:

Սըմուլ խավթ կանչից, քանի խավթ՛մ կեր, ժողվան, էկըն:

Խարցնից, մեկ սալըղ չիտու:

Էսաց. - Ալ խավթ մնա՞ց դիւս:

Ասըցըն. - Մեկ քնլապիտ՛մ կի յոթ ծովու կըղզըն, մնացի ան
տե, փիտուր մ՛ էլ վրեն չըկա:

Սըմուլ խավթ էսաց. - Իրիք-չուրս խավթ գանցե՛ք, դրե՛ք վար
ծի թիվթիրուն, առե՛ք, բիրե՛ք:

Չուրս խավթըմ թռան. գանցըն յոթ ծովու կըղզըն, գաղա
խավթ վիրուցըն, գուրինց թիվթիր տըվըն հիրար, գխավթ վար
ուրինց թիվթիրուն, առըն, բիրին, տըվըն Սըմուլ խավթըն, Սըմուլ
խավթ խարցնից. - Դիւ գըտիս՝ Լավը Գիւլստանի երկիր դի՞ւրն ի:

Ադա խավթ էսաց. - Իս մեկ դիրըմ գանցը, ան ալ խատ իմ
մոր:

- Մըկա կարո՞ղ իս երթաս:

- Ի՞նչըխ տ'երթամ, փիտուր չունիմ, անութութենե մեռեր իմ:

Մեկ շաբաթ՛մ օխչըրի դմակ կիրցուց, ադ խըն փիտուր
թափավ, նուրեն փիտուր էկավ:

Ութ օր էլ կիրցուց, լավ փիտուր էկավ վրեն:
Խավթ էսաց. - Փործիմ, կարո՞ղ եմ թըռնիմ:
Քիչըմ թռավ, բանծըրցավ, էլմէլ էկավ տակ:
Էսաց. - Չըմ կարողանա թըռըն:

Ութ օր էլ միս կիրցուց, խավթն էլ էսաց. - Իլի՛, նըստը՛ վար
իմ թիվթիրուն, երթանք:

Ադա մարդ էլավ, նըստավ՝ վար խավթիւ թիվթիրուն, տա-
րավ, զծուվ խըլսցիւց, իդի ցամաք՝ դառցավ, իրի:

Անի ինչ մթնավ, գինաց մանչ քնդըն, կան իրի, հանկարծ
գինաց Լավը Գիւլստանը դիւռ եբաց, գինաց նիրս, հօդեք կան
իրի, դիւռն էլ եբաց, տըսավ Լավը Գիւլստանը պառկը, քընը, բար-
ծըմ գլխուն, մեկ վուտթիրուն, մեկ ան կուղք, մեկ ան կուղք: Վար
անիւ սըրտըն գիւլ ու ըռահանը, ադ էլ ձեռ իթալ, պոկեց զգիւ-
ըռահան, էխան (մագիրուն տեղ գիւլ ու ըռահան էր):

Լավը Գիւլստան միռավ:

Ադ էլ դառցավ, իրի ծովու բիրան, փուսըմ փուրից, նըստավ
ինե, քիչ մ'էլ ցախ ու մախ իդի վար ուր գլխուն, տըսավ իրիք
եղվընիկ էկան, թռան ան տե, գուրինց խավթինըն խանըն:

Ադ էլ տըսավ՝ մեկ իրան կընըկ, մեկ էլ երկուս աղբոր կընկ-
տիք ին:

Դիւ չըսը՞ս՝ կընըկ խավթինըն հանկարծ կը տանը, դընը
անիւ գլխու վերեն, ադ էլ գխավթինըն առըց, պախից:

Ադիւքն էլ էլան, գանցըն մատ Լավը Գիւլստան, տըսան Լավը
Գիւլստան միռե, չըկայնան, հիտ դառցան, էկըն:

Երկու քիւր գուրինց խավթինըն առըն, թռան, գանցըն:

Քիւր կը կանչը. - Այ քիւրիր, մ'երթեք, մինչիվ իս իմ խավ-
թինըն գընդընիմ, գան:

Մարդն էլ էլավ, գխավթինըն խաքնավ:

Կընըկ մնաց ան տե, ինք թռավ, գինաց:

Ադա տըղեն իրի մատ ուր քիւրիր, քիւրիրու մոտեն թուղ
իտու, գինաց ուր տուն: Էլավ աղբերնիրու նաղլ էրավ գուր տը-
սած: Աղբերնիր էլան, գուրենց կընկտիք թուղըն:

Յուլիս ամիս մոտացավ, հուլիս տասնըչուրս օր իլավ, մինծ
աղբեր էսաց. - Աղբերնիր, մի խնծուրը ժամանակն էկավ, տը
գան, խնծուր տանըն, ըլեցե՛ք, երթանք, պախիսը:

Պըզտը աղբեր էսաց. - Ըծը խնծուր չըպը, գացե՛ք, պախեցե՛ք ծի:

Մինժ աղբեր էլավ, գինաց հեռջիվ խնծուրըն, սահաթըմ էրկու մնաց ան տե, փախավ, իրի:

Մինժ աղբեր քնավ, պըզտը աղբեր իլավ, գինաց:

Գինաց, նըստավ խնծուրը ծառը տակ:

Սահաթըմ էրկու մնաց, տըսավ փալըմ սիվ ամպ ուռավ, իրի: Իրի, ծառըն մոտացավ, տըսավ Սիվ դիվըմ ձեռ իթալ, խնծուր կըտո՞ից, դառցավ: Ան էլ անեղ մ'իզար, գոհիվ իցթից, գոհիվ քեշից, հեռացըցուց, փըրթից, իլից ան տե, դառցավ, իրի տուն, քնավ:

Առավուտուն աղբերնիր էլան վի, գացըն խնծուրը թամաշեն, տըսան խնծուրըմ տարած, էկըն, քնու մեջ գաղբեր բըռնըցըն, տփիցըն, ասըցըն. - Հիրիկուն դու չէկըր խնծուր պախենք, էկըն տարըն:

Մինժ աղբոր էսաց. - Չէ՛, դու գացըր, թը պախեր:

Հիրիկուն միջնիկ աղբեր էսաց. - Եկե՛ք, էրթանք, մի խնծուր պախինք: Մեկը տարած ըն, էրկուսն էլ չըտանըն:

Պըզտը աղբոր ասըցըն. - Իլի՛, էրթանք:

էսաց. - Գացե՛ք, պախեցե՛ք ծի խըմա, իս չըմ ուզը:

էրկու աղբեր էլան, գացըն, սահաթըմ էրկու մնացըն, վախացան, փախան էկըն, գացըն ուրից տեղ, քնան:

Պըզտը աղբեր էսաց. - Իս գըտիմ, մըկա իմ աղբերքիր փախած, էկած:

էկավ, գինաց խնծուրը ծառը տակ, տըսավ մարդ չըկա: Աղ էլ նստավ ա տե սահաթըմ էրկու: Տըսավ՝ Սըվտակ դիվ էկավ, ձեռ իթալ, գխնծուր կըտո՞ից, դառցավ: Խատ դառնըլիւն նիտ-անեղ մ'էզար, գոհիվ պառկացըցուց գիտըն: Չեռ իթալ գոտ, բըռնից, քեշից, տարավ, հեռացըցուց, փըրթից, իլից ան տե, դառցավ ուր տեղ, քնավ:

Լուսցավ, աղբրտանք էլմ գացըն խնծուրը թամաշեն, տըսան՝ ան մեկէլն էլ տարած, մնացի մե, էկան, էլմ քուֆր տվին աղբոր:

Պըզտը աղբեր կասը. - Ա՛յ ճանըմ, իս չըմ ուզը, իս չըմ ուզը, խնծուր գծը պետք չէ:

Հիրիկուն ասըցըն. - Դե՛, հելի՛, գինա՛, գքու խնծուր պախե:

էսաց. - Դու գացե՛ք, զծիր պախեցե՛ք, մնաց իմ, իս չըմ էրթա:

Մինժ աղբեր էսաց. - Իս կէրթամ, պախիմ գծը խամար:

Պըզտիկ աղբեր էսաց. - Կէրթաս, չըս էրթա, ծը պետք չի:

Մինժ աղբեր իլավ, գինաց, նըստավ խնծուրը ծառը տակ, մինչիվ մթնավ, փախավ էկավ, գինաց, ուր տեղ պառկավ:

Պըզտը աղբերն էլ էսաց. - Իս գըտիմ, մըկա փախի: Էրթամ խնծուրը ծառը տակ:

էլավ գինաց, նըստավ խնծուրը ծառը տակ, սահաթըմ էրկու մնաց, տըսավ՝ Կարմիր դիվ իրի, քանց սար մը: Իրի, իրի խնծուրը ծառըն մատացավ, ձեռ էթալ, գխնծուր կըտո՞ից, դառցավ: Աղ էլ նիտ-անեղ մ'իզար, դիվ էլավ յարալիւ, փախավ: Տըղեն էլ ընկավ իտեն, գացըն, խասան մանչ դաշտըն, դիվ մտավ մաղարեն վի, աղ էլ դառցավ, իրի տուն, ընկավ ուր տեղ, քընավ մինչիվ խըլուսիւն:

Խըլուսիւն ակախավ, իլավ վի, էսաց. - Ա՛յ աղբերնիր, իս էրազը մեջ գացը, մի խնծուրը ծառը տըսա, դիվն էլ իրի, գմի խնծուրը կըտո՞ից, իս նիտ անեղ՝մ գարկը, չընկավ, էլավ յարալիւ, փախավ: Իս ընկա՞ հիտիվեն, գացընք չուր մանչ դաշտըն, դիվ մտավ մաղարեն վե, իս դառցա, իկա: Թա չըք խավատա, արուն էլ խա ճամբխըն թափը մինչիվ մաղարի բիրան:

էլավ, գաղբերնիր առըց, գացըն խնծուրը ծառը տակ. ըրը-շիցըն գիտըն, գարուն տըսան, խատ արնըն գինացըն մինչիվ մաղարը բիրան:

Մինժ աղբեր էսաց. - Ըզծը կախեցե՛ք, իս էրթամ մաղարեն:

Շըրիտ կապիցըն. գմինժ աղբեր կախըցըն մաղարեն վեր:

էսաց. - Աստըծո՛ւ սիրուն, ըզծը քեշեցե՛ք, ցրտու մեռա:

Քեշիցըն դիւ:

Միջնիկ աղբեր էսաց. - Դու չըկեղչըցար, իս տ'էրթամ:

Միջնիկ աղբեր կախիցըն, քիչ մ'էլ էն գինաց, էսաց. - Աղբեր-նիր, Աստըծո՛ւ սեր, ըզծը քեշեցե՛ք դիւ, իս շուքիւ մեռա:

Աղ էլ քեշիցըն, խանըցըն դիւ:

Պըզտըկ աղբեր էսաց. - Դու գացե՛ք ծի տնիր, մարդ ըզծը չըճանչնա, իս կէրթամ մաղարեն վի: Էկա՛ էկա, չէկա՛ չէկա: Քանտուն օր նա շըրիտ չըքեշե՛ք դիւ, դիւքն էլ ծի խաց, քիւր կը

բիրեք, ուտիք: Մինչիվ քննսուն օր իս եկա՝ եկա, չեկա՛, թուղ կըտեք, կէրթեք:

Պըզտը աղբեր կախըցըն մաղարեն վե, գնաց, էջավ տակ:

Շըրիտ ուր մեջքեն արցըկից, գինաց, կան էրի:

Գինաց պաղչե՛մ տըսավ, սարե՛մ տըսավ, ան պաղչեն՝ սիվ, սարեն՝ սիվ, էսաց. - Իս գըտի՛մ, ասըկ Սիվ դիվուն ը:

Գինաց, նըստավ: Դիվու կընըկ էլավ, տըսավ՝ մարդըմ նըստի պաղչեն, կանչից էսաց. - Ա՛յ խողածին, ծառա՞վ իս, ջիւր խըմը, անո՞ւթը իս, իլի՛, քի խաց ա՛ռ, գինա՛, Սիվ դիվ գա՛ցը նեջըր: Իրիք օր չէկը, գա՛, քիւ խուգըն էլ չըս ազատը անաւ ձեռնեն:

էսաց. - Սիվ դիվ իրիք օր կա, իրիր իմ քի մատաղ:

Կընըկն էլ էսաց. - Իս Աստըծուց էն կուգեր: Էրի՛ սղա, գիրար առնընք, ուտինք, խմինք մինչիվ մեռնիլու օր, ինչ Աստված ստեղծի, ստա ի:

էն էլ գինաց ան տե չուր հիրիկուն:

Հիրիկուն կընըկ էլավ, տեղ շընից, պառկան: Տըղեն էլ թուր իդի մանչ հինք, մանչ կընըկ, նուր քընավ:

Լուսցավ, էսաց. - Ճամբախ կա հիռջիվ ձը, դառնամ՝ գքի առնըմ:

Կընըկ էսաց. - Էրթա, աչ ինի Սըվտակ դիվու կընըկ, ալ ըզծը չառնը:

էլավ գինաց, Սիվ դիվու սընոռ ընցավ, գինաց Սըվտակ դիվու սընոռ:

Տըսավ Սըվտակ դիվու պաղչեն սըվտակ, սարեն՝ սըվտակ:

էսաց. - Էս գըտի՛մ, աս էլ Սըվտակ դիվուն ը, մինչիվ էրթամ Կարմիր դիվու սընոռ, Աստված օղորմած ը:

Գինաց, նըստավ Սըվտակ դիվու պաղչը մեջ:

Սըվտակ դիվու կընըկ էլավ, ըրըշից. կի մարդ՛մ նըստը պաղչը մեջ, կանչից, էսաց. - Ա՛յ մարդ, Աստըծու սիրուն ըլնը, անո՞ւթը իս, էրի՛, քի խաց առ. ծառա՞վ իս, ջիւր խըմը: Հիւստ իկիր իս, դառցը՛, գինա՛ ան տե, Սըվտակ դիվ չորս օր կա՛ գացը նեջըր, չէկը: Գա՛, խիտ տըսնիլուն գքի տը սպանը, քիւ մեղք ինի իմ վըգ:

էսաց. - Սըվտակ դիվ կուրպան եմ արե քե:

էսաց. - Սըվտակ դիվ սպանիր իս, դ՛երի սղա, ըզծը ա՛ռ, մինչիվ ուտինք, խմինք, միռնինք:

Գինաց ան տե, կընըկ խաց իթալ, կիրավ, հիրիկուն կընըկ տեղ պարզից, պառկիլու ժամանակ թուր իդի մանչ հինք, մանչ կընըկ, քընավ:

Կընըկ էսաց. - Դիւր տ՛երթաս:

էսաց. - Հերդում իմ էրի, տ՛երթամ կարմիր դիվու մոտ:

էսաց. - Գուրծ չունիս, մ՛երթա, քե կը սպանի, էրի՛, ըզծը ա՛ռ:

Ադ էլ էսաց. - Սպանի, սպանի, տ՛երթամ:

Մարդն էլ ճերմակ դիվու կընկան մոտեն իլավ, գինաց Կարմիր դիվու պաղչեն նըստավ:

Կարմիր դիվուն պաղչեն էլ՝ կարմիր, սարեն էլ՝ կարմիր:

Կընըկ դիւս էլավ, տըսավ մարդ՛մ նըստի պաղչը մեջ:

էսաց. - Ա՛յ խողածին, անո՞ւթը իս, էրի՛ խաց ա՛ռ քի, ծառա՞վ իս, ջիւր խըմը, ադ տիղեն իլի՛, գինա՛: Կարմիր դիվ գինացիր էր նեջիր, նեջըրըց իրի, յարալու էր, ասօր ալ գինացը նեջիր, գա՛լու խիտ գքի կը սպանը:

էսաց. - Ընդրա խամար իկիր իմ, ըզծը սպանը:

Ինչ էրավ, խիտ չէլավ:

Կարմիր դիվ հիրիկուն էկավ, տըսավ մարդըմ պաղչը մեջ նըստիր ի, կընկան էսաց. - Դիւ չըկարողացար, ասա մարդ ինչ կուգեր, տեր, ան էրթեր, իս չըգեր, զան տըսներ:

Կընըկ էսաց. - Իս ինչ էրը, չըգինաց:

Ադ էլ կանչից գմարդ, տարավ ան տե. - Դիւ ի՞նչ մարդ իս:

- Իս ճամբխուրդ իմ:

- Խավք ուր թիվուվ, օծ ուր պուռտով չըգա՛ աս տե, դիւ ի՞նչըխ իկիր իս աս տե:

էսաց. - Խավք չըգա՛, օծ չըգա՛, իս իկիր իմ:

էսաց. - Որ էն տըսակն ի, ա տեղ քընի: Առավուտուն իս, դիւ տ՛երթանք կըռըվ:

Քընավ մինչիվ առավուտուն:

Առավուտուն մարդ, Կարմիր դիվ գացըն, պաղչը մեջ առըն հիրար. կըռվան մինչիվ հիրիկվան:

Կարմիր դիվ էսաց. - Գինա՛, դիւ իմ կընկան ծուց պառկը, առավուտուն էրի՛, էլմ իս, դիւ կըռըլընք:

Ան էլ գինաց կընկան մոտ:

Անմախական ջիւր կեր ան տե: Դիվ մտավ էղա ջըրն մեջ, լուղացավ, դիւս իլավ, յարեք սաղացավ:

եղ մարդն էլ գինաց, հիրիկուն թուր իդի մանչ հինք, մանչ կընըկ, քնավ: Առավուտուն իլավ, գինաց կըռըվ:

Ինչ կը քելի, արուն, արընքջուր բրինքներաց թափը տակ:

Գացըն, կըռվան մինչիվ ճաշուն. մարդ չըկարողացավ մեկ դարպ գարկի, անճախ գինք պախից, դիվ չըսպաներ, մինչիվ բրինքտիր տաքցավ: Որ տաքցավ, կըռըվ էրըն մինչիվ հիրիկվան:

Էլմ դիվ էսաց. - Գինա՛, իմ կընկան կուշտ պառկը:

Մարդ գինաց տուն, դիվն էլ լուղացավ, նըստավ:

Մարդն էլ գինաց տուն, հիրիկուն տեղ շընիցըն: Էլմ թուր իդի մանչ հինք, մանչ կընըկ, քնավ:

Դիվու կընըկ մարդուն էսաց. - Առավուտուն կերթաս կըռըվ, թե դիվ գքի չըսպանից, էլ դու չըգաս տուն: Կերթաս ճնարը ծառը տակ խուրըմ կա: Ան ծառը տակ անմախական քուր կա: Դիվ կը խրկիս, գա՛ տուն, դուն էլ կը մտնիս ան ջըրը մեջ լուղկանաս, քու յարեք կը սաղանա, դիվ տնեն գա՛, կը գարկիս, կը սպանիս:

Մարդն էլ առավուտուն էլավ, գինաց կըռըվ: Ինչ կը քելի, արուն, արընքջուր բրինքներաց կը թափը տակ:

Կըռըվ էրըն մինչև հիրիկուն. մեկ դարպ չէգարկ դիվուն, անճախք գինք պախից, դիվ չըսպանից գոս:

Հիրիկուն դիվ էլմ էսաց. - Գինա՛ տուն:

Մարդ էսաց. - Իս չըմ երթա, ասոր դու կերթաս տուն:

Դիվ էսաց. - Ինչո՞ւ չըս երթա:

Էսաց. - Երկու օր իլավ՝ իս կերթամ, ասոր դու տ'երթաս:

Դիվն էլ թուղ իտու, գինաց տուն:

Մարդն էլ գինաց, ճնարը ծառը տակը խուր տըսավ, քուր էխան, մտավ ջըրու մեջ, լուղկացավ, դուս էլավ:

Յարեք սաղացան՝ քանց առաջն էլավ:

Դիվն էլ գինաց տուն, կընկան էսաց. - Դո՞ւն էր մարդուն ըսըցըր՝ չըգաս տուն:

Էսաց. - Չէ՛, իս խապար չունիմ մոտեն:

Էսաց. - Դու խապար չունիս, ադ էլ չըգըտի խուր ինչ տեղն ի, ցրտուն յարեք տը պաղը: Առավուտուն կերթամ, կը գարկիմ, կը սպանիմ:

Առավուտուն դիվ իլավ վի: Ինչ կը քելի, արունք, արընքջուր բրինքներաց կը թափը տակ:

Գինաց պաղչը մեջը, երկուս առըն հիրար, կըռվան: Էլ դիվ չըկարողանա դարպ գարկը մարդուն, մարդն էլ էգար, գդիվ սպանից, իրի տուն:

Կընըկ էսաց. - Նըստինք սդա, ուտինք, խմինք, չուր մեռնինք:

- Չէ՛ղնի, - էսաց, - իս աս տե չըմնամ:

Կընըկ էսաց. - Իս կըսըմ՝ մնանք աս տե, չէ՛ղնը՝ երթանք:

Էլավ, Կարմիր դիվու կընըկ առըց, ինչ կեր, առըց, էկան Սըվտակ դիվու մոտ: Սըվտակ դիվու կընըկն էլ առըց, ինչ կեր, առըց, էկավ Սիվ դիվու մոտ:

Սիվ դիվու կընկան խաղն էր՝ ուսկը կատու, ուսկը մուկ մանչ ուսկը սընուն կը պտուտեն:

Սըվտակ դիվու կընկան խաղն էր՝ ուսկը աղվիս, ուսկը լըպըգտրակ մանչ ուսկը սընուն կը պտուտեն:

Կարմիր դիվուն էլ՝ ուսկը կաքավ, ուսկը բազեն մանչ ուսկը սընուն. անու խաղն էլ են էր:

Կարմիր դիվու կընըկ էսաց. - Աս բանիր կը դնիս մեկ տոպրակի մեջ, կը կապըս քու քանակ, քի պետք կըլընը:

Ադունքն էլ էլան, մալ-ապրանք, ինչ կեր, առըց, էկավ հեռչիվ մաղարը դռան. շըրիտ չէ՞ կախ էր, շըրիտ հիրար իտու, աղբըրքիր մաղարը բիրեն կանչըցըն. - Ա՛յ աղբեր, դու էկըր:

(Քանի՛մ խնծուր տարըր ըն դիվիր, բուլոր իբի):

Ադ էլ մալ-ապրանք կապըց, ամին քեշեցըն վի, մնաց կընկտիր: Սիվ դիվուն կընըկ քեշից վի, Սըվտակ դիվուն էլ, մնաց Կարմիր դիվուն:

Կարմիր դիվու կընըկ էսաց. - Դու իլի՛, իս նուր կըլնիմ դուս:

Մարդ էսաց. - Չէ՛, իս չըմ թուղընմ գքի սդա:

- Մա՛րդ, - էսաց, - դու իլի՛, կը փուշմընիս:

- Չէ՛, դու տ'ըլնիս:

Կընըկն էլ էսաց. - Իս գըտիմ, գքի տը թուղնին էդա խուրը մեջ, դունա՛ ի, թա մնացըր սդա, կերթաս Սիվ դիվու փանճարեն: Գըրքըմ կա ան տե, կը կարդաս: Որ կը կարդաս, սիվ խուն, սըվտակ խուն կըռան վար քրուն, կը կըռվըն: Ջքի կը թլիս սիվ խույու քանակ, սիվ խուն կը թլի սըվտակ խույու քանակ, սըվտակ խուն գքի կը բիրե, լիս ախշարք խանե դուս:

ՉԿարմիր դիվու կընըկն էլ կապից, քեշիցըն վի:

Աղբերքիրու աչ ինչ ընկան զԿարմիր դիվու կընըկ, ասըցըն.
- Մի աղբեր գա, մի բանըմ չի տա, ինչ կա, տ'առնը ուր, սալ դնինք մաղարը բերնի վըրեն, թը մնա մաղարեն:

Սալ քեշըցըն վըր մաղարը բիրնըն, զկընկըտիր, զմալ-ապարանք, առըն, գացըն:

Ինչ գացըն, խրոխպերն էլ մեռի. մինժ աղբեր նըստավ թախտ, մեկէլ աղբերն էլ էլավ անաւ վուզիր:

Կընկըտիրն էլ ըսըցըն. - Մինք քանտուն օր իրավունք չընք իտա պսակվը:

Պառնանք պըզտիկ աղբոր: Աղբեր անընցկուն կանչից աղբերքիրուն, աղբերքիր ձեն չըտվիցըն:

Աղ էլ դառցավ, գինաց Սիվ դիվու սարեն, տըսավ փանճարեն գիրքըմ կա: Առըց, կարդաց, էլավ ծուկ, տըսավ սըվտակ խուն, սիվ խուն վար ծուկուն կըմվան: Աղ էլ գինաց, մոռացավ, զինք իթալ սըվտակ խույու քանակ, սըվտակ խուն զան իթալ սիվ խույու քանակն, սիվ խուն տարավ մութ ախշարք, իցքից դաւս:

Գինաց, մանչ քաղքըն կան իրի, գինաց, էլավ պառվու կոնախ, էսաց. - Պառնավ, կոնախ կը տիրի՞ս:

էսաց. - Մեռնիմ քի, մընչ կա ուտինք, մընչ կա խմինք, կը տիրիմ, ընչի՞ չըմ տիրի:

էն էլ իլավ, ձեռ իտու ճեպ, էրկու-իրիք ուսկը իտու պառավ, էսաց. - Տար քաղաք, ուտիլիւ բան, շաւր առ, իրի:

Պառնավ առըց, իբի, կիրան:

- Պառնավ, - էսաց, - Զաւրըմ բի, խմիմ:

էսաց. - Վըշապըմ մտի հաղբրի ակ, Զաւր չըթուղըն գա: Օրեն ախշըկըմ տը տանին, տան վիշպուն, նուրեն թուղըն Զաւր գա, էն արընքաւր խմին: Ասօր իրիք օր կա՝ Զաւր չըկա մի քաղաք: Թագավուրը ախշըկ տը տանըն, չէրթա:

էսաց. - Պառնավ, ինչ ժամանակ թագավուրը ախշըկ տանըն, ձը իմաց կը տաս:

էսաց. - Շա՛տ աղեկ:

Թագավուրն էլ էսաց. - Քաղաքըմ չըմ ավըրմ ախշըկըմ ապով:

էլավ, ախշըկ զուրովեն իտու, տարան, կապըցըն ճնարը ծառ, տարուղնիր փախան, էկըն:

Պառնավն էլ իմաց իտու տըղըն. - Թագավուրը ախշըկ տարան:

Մարդն էլ իլավ, զուր թուր՝ առըց, գինաց, տըսավ ճնարը ծառ, կի հեռջիվ, հաղբըրըն, ախշըկ կապած ճնարը ծառ, գացած: Ան էլ ախշըկ արցըկից ճնարը ծառեն, առըց, նստավ ան տե:

Ախշըկ էսաց. - Աստըծու սըրուն ըլնը, իլի՛, գինա՛, վըշապ ըզձը տ'ուտը, զքի չուտը:

էսաց. - Զքի տ'ուտը, ըզձը էլ թ'ուտը, իմ քուն կը տանը, գլիխ դնիմ քու գուք, քիչըմ քընիմ՝ վըշապ ինչ գա, ըզձը իմաց կը տաս:

Գլիխ իդի ախշկու գուք, քնավ: Վըշապ գլիխ հաղբրի ակեն էխան դաւս, ախշըկ ինչ տըսավ, լիզուն մանչ բերնըն չուրցավ, էլ չըկարուղացավ խապար տեր հախու, արտըսուք կաթավ տըղի իրիսը վրեն: Տըղեն ակախավ, տըսավ վըշապ ակեն իկի դաւս, տըղեն էլ իլավ, ախշկան ճիվ բռնից, հիտուց քեշվավ, քենի վըշապ դաւս էկավ, ան զախշըկ հիտ քեշից, մինչիվ վըշապ ակեն դաւս էլավ:

Տըղեն թուր իտու ուր սըրտըն, զինք իթալ վըշապու բիրան: Վըշապ աղ մարդ կըլնը, թուր վըշապու բիրան կըտռից: Ինչ տար ուժ կեր ինի, վըշապ կլնից զմարդ, ուժե ընկա՛վ, թուղ իտու: Մարդն իլավ, զվըշապ փըրթից, Զաւր պըրծավ, գինաց:

Ախշըկն էլ ձեռ իտու արընըն, էգար աղա մարդու քանակ, թուղ իտու, գինաց տուն: Քաղաք քաղքուկ աղա արընքաւր կը տանըն:

Ախշըկ էսաց. - Մը՛ տանեք, կը զուլալվը:

Չավատացըն:

Թագավուր էսաց. - Ախշը՛, դաւ քաղաք տ'ավիրըս:

էսաց. - Ա՛յ խերըկ, վըշապ սպանիցըն:

- Ախշը՛կ, վո՞ւկ սպանից:

էսաց. - Մեկ մարդ մ'էր, չըմ ճանչնա:

Աղա տըղեն ականջ էրավ, տըսավ Սըմուլ խավքիրու ծագտիրու ձեն կը գա: Ըրըշից ճնարը ծառ, տըսավ Սըմուլ խավքիւ քուն, տըսավ վըշապըմ փաթըթվի բուլուր ծառըն, քիչ մնացի ծագտիր ուտը:

Ան Սըմուլ խավք ծագտիր կը խանը, ամին տարը վըշապ կուտը, Սըմուլ խավք չըզըտի՝ վո՛ւկ կուտը:

Սըմուլ խավք ուր թիվքիր տըվը երեգանկան, արիվ ան քանդ-
քըն չառնը, լիւս ան քանդքըն չառնը:

Տըղեն էլ թուր քեշից, ադա վըշապ սպանից, փըրթից, քան-
դալակմ հից, տարավ Սըմուլ խավքիւ ծագտիրուն:

Սըմուլ խավք վիրուց տըսավ, խուլ էլավ, իրի, տը գարկեր,
ծառեն բիրեր տակ, սպաներ:

Ձագտիր գանցըն հեռջիվ մոր. - Աստըծո՛ւ սիրուն, դիւ բան
չենը՛ս, ադըկ մի դիւշման սպանը, մի խամար միս բիրը:

- Ա՛յ մարդ, - էսաց Սըմուլ խավք, - քիւ խնդիրք երա՛, կա-
տարըմ:

էսաց. - Իմ խնդիրք էն ը՛ ըզծը տամըս իմ խերենական
խուղ:

էսաց. - Կերթաս, կը բիրիս յոթ դմակ, յոթ տըկ քիւր:

Սըմուլ խավք վըրուց էկավ տակ, արիվ առըց վար քանդքըն,
լիւսցավ, քիւր չըկեր, քիւր երի, լիւս չըկեր, լիւս երի:

Թագավուր իտու կանչիլ. - Վուվ գվըշապ սպանը, վուվ ա
ընցկուն երավ, լիւս առըց, գան, թագավուրութիւն կուզը, մալ կուզը,
ինչ կուզը, տը տամ:

Ախչըկ էսաց. - Ա՛յ խերըկ, իս կը նըստիմ փանճարեն, քանդքը
մարդ թը գան, փանճարի տըկով ընցնըն, իմ նշան կա, իս կը
ճանչնամ վըշապ սպանող:

Ադ մարդն էլ էկը, գանցը պառվու տուն էլմ:

Քանի մարդ կեր մանչ քանդքըն, էկըն, փանճարի տըկով
ընցան:

Մարդ մանչ քանդքըն չըմնաց, թագավուր ախչկան էսաց. -
Ան մարդ չըճանչցա՞ր:

էսաց. - Ան մարդ չէկը:

- Ա՛յ ախչըկ, - էսաց, - ալ մարդ քանդքըն մեջ չըկա:

էսաց. - Դալալ իցկե մանչ քանդքըն՝ տընիր կան գան:

Ընկան մանչ քանդքըն, կան էկըն, մարդ չըտըսան առանց
գան:

Գանցըն պառվու տուն, տըսան կոնախըմ կա ան տե, էկըն,
պատմիցըն. - Թագավուր ապրած, մնացը պառվու կոնախ:

էսաց. - Գանցե՛ք, ան մարդ բիրե՛ք:

Գանցըն, բիրին:

Ախչըկ ըրըշից, էսաց. - Նա ի, իմ նշան կի վրեն:

Թագավուր կանչից գան մարդ, տարավ:

- Վըշապ դի՛ւ իս սպանի, - էսաց թագավուր:
էսաց. - Խա՛:

էսաց. - Սըմուլ խավք ի՞նչըխ իլավ, էկավ տակ, իմ քանդաք
լիւսցավ:

Սըմուլ խավքիւն նաղըն էլ թագավուրը խամար երավ:

Թագավուր էսաց. - Ա՛յ վուրդը, ախչըկ դիւ իս ազատը քի
խմա, իմ քանդաք դիւ իս լիւսըցի, մըկա թագավուրութի՛ն կուզըս,
տամ քի, վըզիրութի՛ն կուզըս, տամ քի, ի՛նչ կուզըս, տամ քի:

Ադ էլ էսաց. - Քիւ ախչըկն էլ, թագավուրութի՛ն էլ, վըզիրութի՛ն
էլ պիրոգ կինա քի: Քինե կուզըմ յոթ անծին շիշկու դմակ, յոթ տըկ
քիւր, ալ հիւրիշ բանըմ քինե չըմ ուզը:

Թագավուրն էլ յոթ անծին շիշկու դմակ իբի, յոթ տըկ էլ բի,
մարդ էլավ, առըց, գինաց մա Սըմուլ խավք, քիւր ու դըմկընիր
եղիր վար Սըմուլ խավքիւն, ինքն էլ խիծավ:

Սըմուլ խավք թռավ, բանցրացավ:

Տըղեն էսաց. - Աստըծո՛ւ սիրուն, իս ցրտու մեռա:

էսաց. - Դիւնեն քենի՞մ կերևա հեռջիվ քիւ աչիչ:

էսաց. - Քանց արտըմ չափ:

Քիչ մ՛ էլ բանցրացավ, երեգանկան մոտացավ:

էսաց. - Աստըծո՛ւ սիրուն, իմ քանակ իրիցավ:

էսաց. - Դիւնեն քենի՞մ կերևա հեռջիվ քիւ աչիչ:

էսաց. - Քանց իզան գլխիւ բաշ:

Քիչ մ՛ էլ բանցրացավ, էսաց. - Աստըծո՛ւ սիրուն, իս իրիցա:

էսաց. - Ալ դիւնեն կերևա՞ հեռջիվ քիւ աչիչ:

էսաց. - Ալ բանըմ չըմ տըսնա, մթնավ հեռջիվ աչքիրուս:

խավք դառցավ, բիրանքսիվե էկավ:

էսաց. - Ինչ իս կռամ, դմակըմ թա՛լ իմ բիրան, տըկըմ քիւր
ընց վրեն:

Քանը անը կռաց, դմակըմ իթալ, տըկըմ քիւր իլից:

Մնաց հիտքի դմակ, ծեռնեն պըռծավ, գինաց ծուվու մեջ:

խավք կռաց, ան էլ դանակ իթալ, ադա վուտաց մսանին
կըտռից, իթալ խավքիւ բիրան:

խավք տարավ, ծուվ ընցուց, իրի ցամաք, մարդիւ էսաց. -
Իլի՛, գինա՛:

Մարդ էսաց. - Չէ՛, դիւ գինա՛, իս կերթամ:

Խավք գըտի՝ մսանին կըտռը:

Դիր մ՝ էլ էսաց. - Իլի՛, կայնը՛, գինա՛:

Մարդ կայնավ, տ՛երթեր, չըկարողացավ:

Խավք էսաց. - Ան հըտըն փըրդիւճ, ինչ դու տըվըր ձը, ի՞նչ էր:

Էսաց. - Քինե պախիմ, Աստըծուց ի՞նչ պախիմ, հըմլա՛, հըմլա՛:

Էսաց. - Ան նա փառ, քըսը՛ վար քու վուտաց, իլի՛, գինա՛:

Էն սահաթ սաղացավ, խավք թռավ, գինաց, մարդ իրի խուր քանդաք, գինաց, իլավ ուսկըրչու տըղա:

Դառնանք վար կընկըտիրուն, քանսուն օր լըմացավ:

Թագավուր էսաց. - Եկե՛ք, պսակվընք:

Սիվ դիվու կընըկ էսաց. - Մինչիվ իմ ուսկը մուկ, ուսկը կատուն մանչ ուսկը սընուն պտուտըն, ձը խամար չըբիրըք, իս չըմ պսակվը:

Թագավուր կանչից, զուսկըրըչ տարավ, էսաց. - Ասօրվընե քինե կուզըմ՝ ուսկը կատուն ուսկը մուկ մանչ ուսկը սընուն պտուտըն ձը խամար: Չըբիրի՛ր՝ գքի կը սպանիմ:

Ուսկըրիչ մաղտեն էրավ, ձիռքիր էցքից ծուց, գինաց տուն:

Կընըկ էսաց. - Քի ի՞նչ իլավ:

- Թագավուր առավուտուն իմ վըզ տը զարկը, կըսը՝ ասօրվընե կուզը՝ ուսկը կատու, ուսկը մուկ մանչ ուսկը սընուն խաղան, իս իմա՛լ տը շընիմ:

Ադա տըղեն էլ էսաց. - Վարպի՛տ, գինա՛, բեռըմ պնդուկ բի՛, մարդ մա ձի չըգե՛ք, իս առավուտուն կը շընիմ, բիրիմ:

Տըղեն առըց պնդուկ, չաքուճ մ՛էլ առըց, մտավ հօդեն, գդուռ փակըց, նըստավ զպնդուկ կուտըց, կիրավ:

Կեսգըշիր էր, կընըկ մարդուն էսաց. - Իլի՛, գինա՛, նա կը շընի, չըշընի, առավուտուն թագավուր քու վըզ տը կըտռը:

Մարդ իլավ, գինաց վար իտիվ դռան, ականջ իտու, չաքուճ ձե՛ն կը գա՛, ձեռ իտու դուռ, փակ ը, դառցավ, գինաց:

Իրի, էսաց. - Կընըկ, չաքուճի ձե՛ն անուշ կը գա՛:

Լուսցավ, իլավ, իդի վար ուր գլխուն, իրի, իտու ուսկըրչուն, ուսկըրիչ առավ, գինաց թագավուրըն, թագավուր իտու Սիվ դիվու կընկան:

Սըվտակ դիվու կընըկ էսաց. - Սիվ դիվու կընկան ըլնը, ձը չըլնը՞:

Էսաց. - Մինչիվ ուսկը աղվիս, ուսկը լըպըզտրակ մանչ ուսկը սընուն չըխաղան, իս չըմ պսակվը:

Ադ էլ տըղեն Սիվ դիվու տըսակ շընից, տարավ թագավուրըն, թագավուր իտու Սըվտակ դիվու կընկան:

Կարմիր դիվու կընըկ կըսը. - Անունց կըլնը, ձը չըլնը՞, ուսկը կաքավ, ուսկը բագեն մանչ ուսկը սընուն չըխաղան, չըմ պսակվը:

Ադ էլ անունց տըսակ, առավուտուն տըղեն իդի վար գլխուն, իբի:

Ուսկըրիչ էսաց. - Տո՛ւ, տանիմ:

Տըղեն էսաց. - Չէ՛, ան էրկուս ուր դու տարըր, նա մեկն իս տը տանիմ, ճաշըմ ուտիմ, գան:

Տըղեն առըց, տարավ Կարմիր դիվու հօդեն, կընկան աչ, ինչ ընկավ տըղեն, դեմ վի էլավ, տըղըն գլխիս պագնից, ուրախացան վար մեմեկը:

Խապար տարան թագավուրըն, վըզըրըն՝ աս տըսակ, աս տըսակ:

Թագավուր էսաց. - Կանչըցե՛ք գա՛ ըս տե ան մարդ:

Կանչից: Թագավուրըն աչ ինչ ընկավ զաղբեր, վուտքիր ախու դուղաց: Մըկէլ աղբեր էլ էրի ան տե:

Պըզտիկ աղբեր էսաց. - Ա՛յ աղբերքիր, դու խա ձը էրըք, իս խա ձի չըմ էնը, Սիվ դիվու կընըկ՝ մինձ աղբոր, Սըվտակ դիվու կընըկ՝ միջնիկ աղբորս: Չի կընկտիք առե՛ք, քանըմ իմ ձե՛ն կը գա՛, գանցե՛ք, դու գըտե՛ք, ձի Աստըված:

Ադ էլ իլավ, յոթ գըշիր զուր խարսնիս իդի, զԿարմիր դիվու կընըկ առըց, թագավուրուբին առըց, նըստավ թախտ:

Ան անտե խասավ մըրագ, դու էլ աս տե խասնըք ձի մըրագ:





76. ՈՐՆ Է ՊՈՌՆԿՈՐԴԻՆ

Մեկ մարդուն մեկ կրնրկ կեր, մեկ էլ խըտամ էր հիւր կրնկան հառեջ. ադ մարդ խառվավ գխըտամ, էրկու լաճ իրան կրնկնից հէլան, լաճ մ' էլ խըտամուչ հէլավ:

Էն ժամանակ, ինչ խեր տը մեռներ, էսաց. - Տըղե՛ք, մեկդ ծինե պեհպահր եք:

Խեր մեռավ, տըղեքն էլ գխոր մալ տը կխսին վար ուրինց:

Էդ միժ աղբեր էսաց. - Մի խեր ինչ մեռավ, վասիաթ իտու, էսաց. «Մեկ ծինե պեհպահր եք»:

Միջնեկ աղբեր էսաց. - Ի՞նչըխ էնինք:

Էսաց. - Էրթանք գաճու մոտ՝ մի շարիաթ էնը:

Էլան, գաճըն ճամբխը մեջ՝ տիսան կի կրնկան դավսըմ գաճի, էն մեկ էսաց. - Կի, կրնկան դավս ի, ադ կրնրկ գաճը ըռըկ:

Մեկէլ էսաց. - Ան կրնրկ գաճիր ըռըկ, ամա ան կրնրկ տըղիվ ի:

Միժ աղբեր էսաց. - Կի, դավու՛մ դավս էլ գաճը:

Մեկէլ էսաց. - Դավեն կուր իլի:

Մեկէլ էսաց. - Դավեն բիռնով իլի:

Տիսան կրնկան տերն էլ, դավու տերն էլ էկան:

Կրնկան տեր էսաց. - Դիւ կրնրկըմ չը՞ք տըսի:

Էսաց. - Քիւ կրնրկ չի՞ գաճիր ըռըկ:

Էսաց. - Իմ կրնրկ գաճիր ըռըկ:

Միջնեկ էսաց. - Քիւ կրնրկ տըղիվ չէ՞ր:

Էսաց. - Խա՛, տըղիվ էր:

Դավաճին էսաց. - Դեվա՛մ չը՞ք տըսի:

Էսաց. - Քիւ դեվան կուր չի՞:

Էսաց. - Խա՛, իմ դեվան կուր էր:

Միժ աղբեր էսաց. - Քիւ դեվան բարձուկ չէ՞ր:

- Խա՛, բարձուկ էր:

- Քիւ բեռ ճամը մեղր չէ՞, մեկ քացախ:

Էսաց. - Խա՛:

Էսաց. - Պա իմ դեվան դի՞ւր գինաց:

- Մինք չինք գըտի՛ դիւր գինացը, գինա՛, կան էրի, գընտի՛:

Դավու տեր էսաց. - Չէ՛, դիւ իմ դավեն տը տե՛ք:

Կրնկան տերն էլ կըսը. - Իմ կրնրկ տիսեր եք, տը տե՛ք:

Էլավ անունց բաթրուն:

Կրնկան տեր, դավու տեր ըսըցըն. - Էրթանք գաճու մոտ, շարիաթ էնինք:

Գաճըն գաճու մոտ:

Կրնկան տեր էսաց. - Էսա իրիք մարդ իմ կրնրկ տիսած, պախած՝ չըն իտա, մի էրկըվի շարիաթ, նա իրիք մարդուն էրա:

Գաճին ադա իրիք մարդուն խարցընից, էսաց. - Դիւ աս մարդու կրնրկ տըսի՞ր իք:

- Մինք զկրնրկ չընք տըսի, - ըսըցըն:

Միջնեկ աղբեր էսաց. - Անիւ կրնրկ գաճը ըռըկ:

Գաճին էդա մարդուն էսաց. - Աղո՛ւրթ քիւ կրնրկ գաճը ըռըկ:

Էսաց. - Խա՛, իմ կրնրկ գաճը ըռըկ:

Գաճին էդա մարդուն խարցընից. - Դիւ ի՞նչ գըտիս՝ գաճը ըռըկ, օր դիւ չըս տըսի:

Էսաց. - Ան կրնրկ կավըմ գաճիր իր, մեկ դարձիր իր, իրիշիր իր հիտուց:

Ջիւչ աղբեր էսաց. - Անիւ կրնրկ տըղիվ իլի:

- Դիւ չըս տիսի, ի՞նչ գիտցար՝ անիւ կրնրկ տըղիվ իլի:

Էսաց. - Անիւ կրնրկ կավըմ գաճիր իր, մեկ դարձիր իր, իս անիւ խամար գիտցա՛ տըղիվ ի:

Դավաճուն էսաց. - Դիւ ի՞նչ կուզիս:

- Պա՛, - էսաց, - իմ դավեն պախած չը՛ն:

Պըզտի աղբեր էսաց. - Մինք խա ճամբխըն գիգենք, դավու՛մ դավս տըսանք:

Միջնեկ էսաց. - Անիւ դավեն մեկ աչքեն էլի:

- Դու չըս տիսի, ի՞նչ գըտիս՝ մեկ աչքեն իլի, - էսաց:
- Մեկ կնարեն էրծացիր իր, - էսաց:
Գնազին դավու տիրուջ խարցուց. - Աղո՞ւրթ՝ քու դավեն կո՞ւր ի:
էսաց. - Խա՛, իմ դավեն մեկ աչքեն էր:
Ջուլ աղբոր էսաց. - Դու ի՞նչխ իս տիսիր:
էսաց. - Սիվ դավեն բարծուկ ի, բեռն էլ թայըմ քացախ իլի, մեկ՝ մեղր:
էսաց. - Դու չըս տըսի, ի՞նչըխ գըտիս՝ մեկ քացախ իլի, մեկ՝ մեղր:
էսաց. - Ան ճամ ինչ մեղր էր, ճամբխը վրեն ճանճ են թառած, մեկել յան քացախ էր, ճանճ հու չըր թառը:
Գնազին էսաց. - Աղո՞ւրթ, քու բեռ մեկ ճամ քացախ, մեկ մե՞ղր էր:
էսաց. - Խա՛, ճամըմ քացախ էր, մեկ՝ մեղր:
Գնազին էսաց. - Ասունք իմաստուն մարդ ին, խապար չունին ծի բաներուց, դու գինա՛, քու կընկան կան էրի, ան էլ էրթա հուր դավուն:
Գնազին ադա իրիք աղբոր էսաց. - Դու ի՞նչ կաշիք:
Ասըցըն. - Մինք էլ շարիաթ կուզընք:
Գնազին էսաց. - Անթի ինք, խաց բիրիմ, տ՛ուտընք, նուր ծի շարիաթ կինիմ:
Բիրին ատե խաց ու կաթ:
Պըզտի աղբեր էսաց. - Եսա խացից մեռլի խուտ կու գն:
Միջմեկ էսաց. - Եսա կաթից էլ շան խուտ կու գն:
Ջուլ էսաց. - Գնազու կաթից շան խուտ կու գն, գնազու խացից մեռլի խուտ կու գն, գնազին էլ խայի մոտեն ի:
Գնազին որ լսից, կանչից գխովիվ, իբի, զուր մերն էլ իբի, էսաց. - Աղուրթ կըսիք, ըսե՛ք, չըսիք՝ ծի իրիքն էլ կը սպանիմ:
Մաճկալն էսաց. - Նա խաց որ մի արտը խացն ը, մանծալխբիրու կշտան արտը խացն ը. քիչըմ մանծալխ փուրի ինք, տվիր ինք խատ արտըն:
Գնազին էսաց. - Ան մարդ իմաստուն ի, սուտ չըսը:
էսաց. - Խովի՛վ, նա կաթ ինչ մաքու կաթ ի:
- Ան մաքու գնռ ինչ իլավ, անու մեր խատավ, իս թալը շան տակ, ծըծից, միծացավ:

էսաց. - Ան էլ աղուրթ ի:
էսաց հուր մոր. - Մարե՛, տողրուն կըսըս, չըսըս՝ քի կը սպանիմ:
էսաց. - Քինե պախիմ, Աստուծուց ի՞նչըխ պախիմ, օրեն մեկ խեն էրի մա ծի, ան խայի մոտեն էլար դու:
էսաց. - Աս իրիք մարդն լե իմաստուն ին:
Միծ աղբեր էսաց. - Գնազի՛, մի իրիք աղբոր շարիաթը էրա՛. մի խեր, ինչ մեռավ, վասիաթ էրավ. «Ձի իրիք աղբոր մեկ պեհ-պահր ի»:
Գնազին էսաց. - Իս ծի շարիաթ չիմ կերի էնը:
Գնազու ախչըկ էսաց. - ճամբխը՛ մա ծի:
ճամբխից:
Ախչըկ էսաց.
«Ժամանակով մարդըմ աչք դրիր էր վըր ախչկա՛մ, ըսըց. - Գնա վար իմ ձեռաց:
Ախչըկ չըգնաց:
Ախչըկ մեկ օր խաց կը տանը սար, ադ մարդ տիսավ ախչըկ, բըռնից, էսաց. - Ասուր ճար չըկն, խատ իմ ձեռաց տը գնա:
էսաց. - Աստըծու սիրուն ըլնը, դու ըզը ջավըր իս, ան օր ինչ ըզի տը տանըն պսակ, իս գըշիր գնմ քու կուշտ:
Ադ մարդն էլ ադ ախչըկ թուղ խուտ: Ադ ախչըկ տարան իրկան, ախչըկ շուրի խանից, ախ էրավ:
էսաց մարդ. - Ըզը չըխավնը՞ս:
էսաց. - Իս գնցը սար՝ մի մարդիրուն խաց տանը, մեկ մարդ ըզը բըռնից, խուսք իմ տվիր... իս ան հապով ախ կենիմ:
Մարդ հէլավ, հուր շուրի խագնավ, գուր կընըկ առըց, տարավ ան մարդու տուն, թասլիմ էրավ, դարծավ, իրի:
Ադա մարդ տիսավ խարսըմ՝ քորք վար գլխուն, էսաց. - Դու վո՞ւվն իս:
էսաց. - Իս ան ախչըկն իմ, դու ֆլան սարը մեջ ըզը ըռաստ էկար, իս ան օր ուխտ էրը՝ առաջի գըշիր քու կուշտ պառկըմ, իս իմ իրկան նաղ էրի, իմ իրիկ առըց, ըզի բիրից վար դռան, ինք դարծավ:
էդ մարդն էլ էսաց. - Դու իմ մերն իս, իմ քուր:
Ադ մարդ ադ ախչըկ առավ, բիրից ուր իրկան դռան, գինաց»:

Աղ գանգու ախչըկ ադա իրիք աղբոր էսաց. - Դու ըլեք՝ ի՞նչ տ'ենեք ադա ախչկան:


Ադա պըզտի աղբեր էսաց. - Իս ըլլեր, խատ ախչկա տը պղ.:

Միջնեկ աղբերն էսաց. - Ան իրկան աղեկութիւն էր, առըց, իբի:

Ջուլ աղբեր էսաց. - Աղեկութիւն ան մարդուն ի, օր սարը մեջ ըռաստ էկավ, ջավրըց, ինչ էկավ մատ, հիտ դարծուց, էսաց՝ իմ մերն իս, իմ քուր:

Ախչըկ էսաց պըզտի աղբոր. - Պեհպահիր դու իս:

Պըզտի աղբեր պեհպահիր էրին, մալ էրկու աղբոր վերեն կիսըցըն:



77. ԽՈՃԱ ԴՅՈՒՄԵՓԻ ԳԱՌՆԻԿ ՏԸՂԵՆ

Ժամանակով մեկ խոճա Դյուսեփ կըլնը: Աս խոճա Դյուսեփ շատ խարուստ կըլնը, անուր շատ օխչար կըլնը: Խոճա Դյուսեփը խովիվ օխչարը կառնը, կերթա սար: Անուր ավատ չըլնը: Ան մեկ ժամանակ Աստված խրաման կենե, անուր կընըկ ծուցվուր կըլնը: Աշնան ժամանակ կըլնը, խովիվ կառնը օխչար, կու գան տուն:

Խոճա Դյուսեփ տուն չի, գանցեր ուր խամար պազըրկանութեն:

Ան մեկ օր անուր կընըկ ցավ կըլնը, պըտի տըղա բերի, կըսը. - Խովիվ, գնա՛ դրկեցաց տուն, ան կընկան կանչի՛, իգան:

Խովիվ կասի. - Վալա՛, իս չիմ էրթար, կերթամ, կասիմ՝ ան կընըկ չէկավ:

Ի՞նչ պատճառ ի:

- Պատճառը՝ իս ըզի տամ դռան հիտիվ, իրիշկիմ՝ ինչըխ կընըկ տըղա կը բիրը:

Էլավ դուս, էկավ, ըսաց՝ չէրի:

- Գինա՛, հուրիշ կընկան կանչը, թըխ իգան:

Էլավ դուս-դուռ, էկավ, դիր մ'էլ ըսաց. - Ան էլ չէրի:

- Գինա՛ ուստի տուն, անունց կընկըտիք բոշ իմ, բալքի մեկը իգան:

Խովիվ էլավ դուռ, էլմ դարծավ, էկավ ըսաց. - Գինացի, կընկըտիք ան ըսաց՝ դու գինա, ան ըսաց՝ դու գինա, մեկն ալ չէկըն:

Ըսաց. - Թըխ չի գան, իմ ճարն ալ Աստված:

Մնաց խովիվ իտիվ դռան, խոճա Դյուսեփը կընըկն ալ ընկեր ի իռչիվ ցավուն:

Խովիվ տըսավ՝ հիրողըս վի իրեք աղվընիկ էջան մեջ տախտըն, տըսան իրեքն ալ էղան կընըկ, ընկան կընկան թիվքիր, անունց կարգը ինչ էր, կատարըցըն:

Խովիվ թամաշա կենի, տըսավ՝ մեկ տըղա էղավ, մեկը գտըղեն կը փաթըթը, մեկն ալ կընկա տեղը շընըց: Կընկա խելքը գինացեր ի, իրեքն ալ ուրից աղվընիկ խագան, կերթեն:

Ան մեկ ըսաց. - Ինչո՞ւ մեկ տուղա չէրինք աս տըղի խամա:

Ան մեկ ըսաց. - Իս ի՞նչ տուղա տ'ենիմ. ան Աստուծուց տուղա կենիմ; ինչ գանս Աստված ստեղծեր ի՞ էրունք-թռչունք, անունց լիզուն խասքանա:

Ան մեկը ըսաց. - Իս ան Աստուծուց կուգիմ՝ ինչ մուրագ էնե, անուր մուրագ կատարի:

Ան մեկն ալ ըսաց. - Իս ան Աստուծուց տուղա կինիմ՝ հոգիով ալ, մարմնով ալ զարքայութիւն տըսնը:

Թռան, գինացըն: Խովիվ էկավ յուր գիւն, տըսավ՝ մաքին ծընիր, գան մը բիրիր ի: Խամա խասավ, գան գրկից, առավ, իբի խըտ կընկա կըշտըն, գտըղեն առըց, իղի հեռջև մաքուն: Խովիվ գտըղեն պախեց հուր խամար:

Կընըկ ագախավ, օր գան խըտ հուր կըշտըն կը պըռա:

Ձեռ կը տա, էրախա, բան չի գան, գան մնակ ի, կըսի. - Փա՛ռք քի, Աստված, չէ՞ դու ըզի տըվըր, թըղ գան ըլնը:

Կը մնա խըլուսուն, դրկեցի կընկտիք կը գան, կը տեսնըն՝ գան մը բիրիր ի:

Աղ կընըկն ալ կըլնը, ուր գան կը շախի, կը մնա, խոճա Զուսեփ կը գան տունը. - Կընըկ, աղ ի՞նչ գան ի:

- Մա՛րդ, Աստված ան տվեր ի, իմ Գաննիկ տըղեն ի:

Խովիվն ալ տըղեն հուր խամար կը պախի:

Տըղեն ջոջըցավ, էղավ չուր խընգ տարեկան: Կը մնա մեկ օր, մանջ սարին կը նստի խովիվ, խըտ տըղին կը խոսա. - Տըղա՛, տուղա էրա Աստուծուց:

Ըսաց. - Ի՞նչ տուղա ինիմ:

- Ըսա՛, աս փատ ընըս օսկը:

Ինչ խա տըղը ըսելուն՝ փատ օսկը դարձավ:

Խովիվ ըսաց. - Որ սկուն ի, տըղա՛, ըսա՛՛ մանջ աս սարին մեկ քոշկ ու սարա շինվը, Մըսրա փաշի ախշըկ մեջը ըլնը, ինչ

Աստված ստեղծիր ը՛ մեջը ըլնը, իմ խովիվ խեթ մեջը ըլնը, դու, բան չըլնը:

Տըղեն խըտ ըսելուն տըսավ մեկ քոշկ ու սարա էն տեղ շինուկ, դու, բան չըկա, խեթն ալ կըշտըն չի: Իրիշկըց՝ օխչար գինացըն, մընակ ընկավ խովիվ օխչարըն, գինաց: Էկան, էկան գեղի քամակ: Աղբիր մի կեր ան տեղ: Տըղեն գինաց, վըր աղբըրին նստավ, խատ աղբըրի ջրին կը խաղա:

Ան օրն ալ խոճա Զուսեփի մեհվան էկած ի, հուր կընկա ըսաց. - Կընի՛կ, սափուր ա՛ռ, գինա՛, մեկ պաղ ջուր մը քի՛, խմի՛նք:

Կընըկ էլավ, զսափուր առից, գինաց, Գաննիկ տըղեն ընկավ խովիվ, գինաց:

Գինաց, տըսավ մեկ տըղե մի վըր աղբըրին նստիր ի, կանչից. - Ա՛յ տըղա, իլի վի՛ր, իմ խուն չըգան, քի զարկի:

Տըղեն էլավ, կանգնավ:

Խուն գմեր ընցավ, գինաց դախ տըղեն, տըսավ, խուն դադրավ վըր երկու օտաց, խա տըղին կը խոսա, երկու սահաթ խա մեկ մեկու կը խոսան:

Կընըկ ալ էլավ, գուր աման էլից, դարձավ, կանչից. - Խա՛յ տըղա, դու վի՛ր տըղեն իս:

- Խովիվու տըղեն իմ:

- Վի՛ր խովիվու:

- Չիմ գիտի:

- Էրթանք մի տուն:

- Չէ՛, ես տ'երթամ մա օխչար:

Կընըկ էկավ տուն, խոճա Զուսեփ ըսաց. - Կընի՛կ, ես դու եռսուն տարվա կընըկ իս, իս չի տիսիր՝ դու խա մեկի գրուցիր, ասուր ըզի մեհվան էկած ի, իս քի ըսըցը՝ գինա՛, ջուր մի քի, խմի՛նք: Աս երկու սահաթ կա, նոր կու գան, դու խա վի՛ր կը խոսեր:

- Խա՛, մարդին չիմ խոսեր, իս մեկ աճեպ տիսա: Մեկ տըղա վըր աղբըրին էր, կըլներ խընգ տարեկան տըղա: Իս ասի՛ տըղա՛, գինա՛ դեն, խուն չի գան, քի զարկի: Իս տեսա՛ տըղեն կանգնավ, խուն գինաց, դադրավ վըր հուր օտքերուն, խա տըղըն խոսավ, իս ան թամաշան կինի, ան արով հանագանա:

- Դու չի գիտցա՞ր՝ վի՛ր տըղեն էր:

- Իս խարցընցի, ըսաց՝ խովիվու տըղեն իմ:

- Դու՛ր գինաց:

- Ըսաց՝ տ՛րթամ մա օխչար:

Օխչար չուր առից գեղի արտեր, անքան կանչըցըն, մարդ չըկեր խա օխչըրին: Էլան գացին, տըսան խոճա Դուսեփը օխչարն ի, խովիվ չըգա խըտ:

Տըղեն էկավ, անոր խարցըցըն. - Քու խեր հո՞ւր ի:

- Մեկ քոչկ ու սարա շինավ, իմ խեր մնաց մեջ:

Խոճա Դուսեփ էլավ, զուր օխչար, գտըղեն առից, էկավ տուն:

Տըղեն թռավ ուր գիրկ: Իրար ճանչըցան, շատ ուրախացան:

Խովիվ հուր տեղ կը մնա, թըխ մնա:

Խընգ-վեց տարի ալ կընցընը, կըլը տըսվերկու տարեկան, ան մեկ օր մեր կերթա դրկեցի տուն՝ կրակը:

Կիրիշի՝ տուն կըլան, տըղեն կը խարցնի. - Ի՞նչ իղի ի, վըրե՞ կըլաս, մարե:

- Ան տըղեն կը ճանչընա՞ս, ինչ խա քի կը խաղեր հերեկ:

- Խա՛:

- Մեռեր ի:

- Մարե՛, վըրե՞ մեռեր ի:

- Ջըմեն տի մեռըք:

- Իմ խե՞րն ալ տի մեռընը:

- Խա՛, տի մեռընը:

- Իս ա՞լ տի մեռընը:

- Դու ալ տի մեռընը:

- Մարե՛, սկուն տեղ կերթամ, օր թե չըմեռընը:

- Որդի՛, դուր երթաս, տը մեռընը:

Տըղեն թորկի-կերթա, ի՛նչըխ ինի՛ն, չըղաղըրը:

Տըղեն օր կերթա, կըսա. - Օղորմա՛ծ Աստված, իմ խոր տըրներ, սըրներ, կորիճկներ, գերաններ օսկը, արծաթ դառնա:

Կիրիշին՝ էղիր ի օսկը, արծաթ:

Տըղեն թորկեց, գինաց:

Դուր գինաց, խարցընեց, կասին. - Ջըմեն կը մեռընը:

Գինաց-գինաց, մե ծուվ ըռաստ էկավ: Կիրիշի՛ մեկ պառավ ծուվու պռուկ նստիր ի, շիրիփ մը առի, ծուվու ջուր դուս կը թափի: Մեկ յանեն կը թալի, մեկ յանեն կու գա մանջ ծուվուն էլմ:

Պառավ ըսաց. - Հա՛յ, կանանչ-կտրիճ տըղա, դո՞ւր տ՛րթաս:

-Տ՛րթամ ան տեղ, ինչ չըն մեռընը:

Ըսաց. - Կա՛ց խըտ զը, չըս մեռընը:

Ասաց. - Ի՞նչըխ, էստեղ չը՞ն մեռընը:

- Կը խե՞ս աս ծուվ, աս շիրիփ թալիմ, թալիմ, չուր ցամքե, իսան գա՛, շինը գեղ, գութան մեջ բանը, սել բանը, քաղաք շընը, նուր իս տը մեռընը:

- Դու պըտի մեռընը՞ս:

Ըսաց. - Խա՛, պըտի մեռընը:

- Օր մեռընը կա՛, չըմ կենա դաս:

Չըղաղրավ, էլավ, գինաց: Գինաց, գինաց, ի՞նչ կիրիշկի՛ մեկ ծառ, ծառ էնքան բանձր ի, էրեգակ ծառի կես տեղն ի, կիրիշ-կի, խավթու՛մ ձեն կու գա:

Խավթ կը կանչը. - Է՛, կանանչ-կտրիճ տըղա, դո՞ւր կերթաս:

- Կը յամ ան տեղ, ինչ չըն մեռընը, մա քի ի՞նչըխ՝ մեռնիլ չըկա՞:

- Կը խե՞ս աս բանձր ծառ:

Ըսաց. - Խա՛:

- Իս անքան տը ծոտիմ, էլնը խատ իմ բուսին, նուր իս ընկնիմ, մեռընը:

- Չըմ դաղրի աս տեղ, - ըսաց, իթուղ գինաց:

Գնաց, շատ ու քիչ Աստված գիտի, մեկ դաշտ ըռաստ էկավ, օ քան էրեվանա դաշտ կա, մեկ չայիր, մեջը մեկ ձի կա, ձին ըսաց. - Է՛, կանանչ-կտրիճ տըղա, դու՛ր դո՞ւր կերթաս:

- Կերթամ ան տեղ, ինչ մեռնիլ չըկա՛, ի՞նչըխ, աս տեղ մեռնիլ չըկա՞:

- Կը խե՞ս աս չայիր, անքան տ՛արածամ, օր չուրանա, չայիր դառնա չոր, քամին առնը, տանը, թոզ մնա, նուր իս տը մեռընը:

Ըսաց. - Չէ՛, դու տը մեռընը՞ս:

Ըսաց. - Խա՛, անմեռնել չըկա՛, տը մեռընը:

Չըղաղրավ ան տեղն ալ, գինաց:

Գինաց, գինաց, նեղացավ, ըսաց. - Քիչ մը նստիմ զդա, խանգիմ, էրթամ:

Ագախ գինաց, տեսավ կո մեկ պաղչի՛մ մեջ ի, կիրիշկի՛ մեկ խավթուր մարդըմ ջուր կենը:

- Հա՛յ, տըղա՛, - ըսաց, - ա՛ռ ան բախը, ջուր կապե՛ աս յան:

Տըղեն բախ առըց, ջուր կապըց, տըսավ ան խալվուր թաժա ալկտիր կը կտրի:

- Ամի՛, ինչո՞ւ ալկտիր կը կտրիս, ափսուս ի:

- Է՛, որդի՛, ան յուկ չի, աս կը կտրիճ, տաս տարեկան տըղեն կը մեռնը, աս կտրիճ, տըսնըխընգ տարեկան տըղեն կը մեռնը:

- Ամի՛, մենք ա՞լ տը մեռնինք:

Կա՛սի. - Խա՛, տը մեռնինք:

- Օր մենք տը մեռնըք, իս տ՛երթամ իմ խոր, մոր մոտ մեռնըմ:

Խալվուր ձեռ իտու, առավ իրեք խնձուր, էտու:

- Քի պետք կու գա՛, - ըսաց:

Տըղան աչքեր իբաց, հանդ ինչ նստի, բան չըգա՛:

Յիտ դարձավ: Դարձավ էկավ, տըսավ ծին:

Ձին անքան չայիրը կիրիր, գետըն ընկիր, կը խատնը, ըսաց. - Է՛, կանանչ-կտրիճ տըղա, դու էկար, բան մը չըկա՞ մա քի, տաս ըգի, ուտիմ:

Խնձուր մը էտու ծիուն, ծին գխնձուր կիրավ, էղավ էրկու տարվընիկ ճվան:

Էթուղ, գինաց:

Էկավ, խասավ խավթուն, խավթ ընկեր վըր բուլնիճ՝ յուր ծըրտի վրա, կը խատնը:

- Է՛, կանանչ-կտրիճ տըղա, - ըսաց, - դու էկար, բան մը չըկա՞ խա քի, տաս ըգի, ուտիմ:

Էխան խնձուր մը լե, էտու անու:

Խավթ խնձուր կերավ, էղավ թագա Ֆարիս, թռավ, գինաց:

Տըղեն իթուղ, գինաց, խասավ պառվուն, կը տըսնի, օր ալ ծուվ չըկա, մեկ փշուր մնացիր ի, պառավ օտ դրիր ի մանջ, ընկեր ի ան տեղ, կը մեռնը:

Ըսաց. - Է՛, կանանչ-կտրիճ տըղա՛, դու էկար:

Ըսաց. - Խա՛, իս էկա:

- Բան մը չունի՞ս, տաս ըգիկ, իս ուտիմ, մեռնըմ:

- Վալա՛, մեկ խնձուր ունիմ:

Խնձուր էտու պառվուն, ինչ պառավ գխնձուր կերավ, էղավ տըսնըջուրս տարեկան:

Պառավ գինաց ուր հալի, ան էկավ հիւր տուն:

Տըղեն ի կերթա, կիրիշկի, տուն չըկա, վիր կը խարցնի, տան սալըղ չըտան:

Ան էղավ խուսք, ան էղավ խուսք, մեկ խալվուր մարդ մը կար մանջ ան քաղքին, ըսաց. - Ադ ի՞նչ էղիր ի:

Ըսին. - Ճանըմ, մեկ տըղե՛մ էկեր ի, խոճա Յուսեփի տուն կը խարցնի, կա՛սի՝ անուր տուն առիք, սուն արծաթ, օսկի ի:


Ըսաց. - Յե՛, իմ պապեն կըսա՛ կար մե քաղքի մեջ մեկ մարդ, տունն արծաթ, օսկը էր:

Տըղեն շատ փընտըրտեց, բանըմ չըխասկըցավ, ըսաց. - Գիրիզմանքնիր ըգի նշան տվեք:

Գնաց, գիրիզմանքնիր տըսավ, գխոր խաչքար ճանչըցավ, գիրկ իբի բիւլիւր, խամբուրից:

Մարավ, էկավ վըր սըրտին. ինքն ալ տեղգտեղ մեռավ, գինաց դրախտ:





78. ՄԱՐԴ ԵՎ ՕՉ

Թագավոր երագըն տըսավ, կանչից ուր վուզիր, իբի, էսաց.

- Ես երագ մ' եմ տըսի, իմ երզի պատասխան տո՛ւր:

- Քո երագ ի՞նչ ի, օր իս պատասխան տամ:

- Չըն գըտի, - ըսաց, - դո՛ւ պատասխան չըտաս, մարդըն տը բիրիս, պատասխան տա:

Վուզիր շատ կան իրի, շատ մարդ էլ իբի, չի կնրցեն պատասխան տեն. վուզիր մնաց շվար:

Մեկ օր գեղին մեկ կընըկ էսաց ուր մարդուն. - Մարդի՛, թագավոր երագըն տըսեր, գնա՛, պատասխան տո՛ւր, փարա բի՛, մի ապրուստ էնինք:

- Կընըկ, չըն գըտի, ի՞նչ պատասխան տամ:

- Գեղական կերթան, դո՛ւ էլ խիտքիր գինա՛:

Մարդ էլավ, շվար-շվար գինաց:

Մեկ քար ըռաստ էկավ, մարդ նեղացիր էր, նստավ, անտե բիչ մը ըռահաթավ: Չեն էլավ քարից: Իրիշկից, օձ մը տըսավ:

- Մարդ, դո՛ւ դո՛ւր գնա:

- Վալա՛, թագավոր երագ մը տըսի, էրթամ, անուր պատասխան տամ:

- Դո՛ւ գըտի՞ս՝ անու երագ ինչ ի, օր պատասխան տաս:

- Չէ՛, վալա՛, չըն գըտի:

- Օր թե չիս գըտի, ինչո՞ւ կերթաս:

- Իմ կընըկ վըր ձի գո՛ւրի ի, իս անու ախուն կերթամ:

- Որ ընցկուն ի, անու էրագ քի նշանց տամ. թագավոր օր ինչ տա, դո՛ւ բիրի՞ս խա ըզի կիսիս:

- Խա՛, վաղտա ըլնը, - էսաց. շատ հերդում հերդվըցավ էլ:

- Դե՛, էլի՛, գինա՛, թագավորըն էսա՛ դո՛ւ մեջ էրզին տըսըր իս՝ էրկնուց գել կը թափեր. պատճառն էլ ի՞նչ ի՛ աշխարք էղած գել, գքի պախի՛, հիշար կաց, քի չըսպանին, քիւ թագավորու-թեն-թախտ ձեռնեն առնըն: Էան էլ ի՛նչ կու տա, բի՛ խա ըզի կըսի՛:

Մարդ էլավ գինաց, գինաց դիմաց թագավորըն դադրավ:

Թագավոր էսաց. - Դո՛ւ ի՞նչ իս իկի:

- Իկիր իմ՝ քիւ էրզին պատասխան տամ:

- Դո՛ւ գըտի՞ս՝ իմ երագ ի՞նչ ի:

- Բալքի գըտիմ, - էսաց: - Դո՛ւ տըսար մեջ էրզըն՝ էրկնուց գել կը թափեր, աշխարք էղեր գել. հիշար կաց, գքի մեջ չուտըն:

Թագավորը շատ փարա էտուր անու, մարդն էլ էսաց. - Թագավոր, խա զի մարդ դիր, ճամբխեն ըզի չըթալնին:

Թագավորը շատ մարդ իդիր խիտ, էկան:

Ադու միտք ի՞նչ ի՛ գեդ մարդիր իբի խատ ուր, գան օձ սպանին:

Էկավ, խասավ ան քարու մոտ, մարդիր պախից, քար մի իդի էս ծուց, փարեն էլ մեկէլ ծուց, էսաց. - Ինչ իս քարն կը զարկիմ, դո՛ւ էլ հիլե՛ք, ըզի հուզնե՛ք, զօձ սպանինք:

Էլավ, գինաց, դիմաց օձուն դադրավ, կանչից. - Օձ, դո՛ւս արի, փարեն բիրի իմ, իս, դո՛ւ կըսինք:

- Դո՛ւր ի փարեն:

Փարեն շանք էտու:

Էսաց. - Ադ մեկէլ ծուց ի՞նչ ի:

- Չատ չի, - էսաց:

- Քար դրեր իս ծուց, ըզի սպանիս. գինա՛, չըն իզն դո՛ւս:

Մարդ էլավ, դարձավ, գինաց, մարդիրուն էսաց. - Էլեցե՛ք, գացե՛ք, էլ իս չըն վախինա:

Էկավ ուր տուն, կընըկ էսաց. - Մարդ, չէ՞ դո՛ւ չէր իրթիր:

- Կընըկ, մեկ օձ ըզի նշանք էտու:

- Դո՛ւ օձուն բան չըտվի՞ր:

- Չէ՛, - էսաց:

- Վաղ միզնե դավա չենը ան օձ:

- Չըմ գըտի. իս մարդ բիրի խա գի, սպանի ան օծ, դիւս չէկավ:

Միւս տարին թագաւոր էլմ էրագ տըսավ, էլմ կանչից վուզիր:

- Թագաւոր, վուվ ինչ պատասխան տվիր ի, էլմ ան բիր:

էլան, օղորկըցըն հիտիվ ան մարդուն: Մարդ մնաց շվար, բան չըգըտի, խատ օծուն պեպախտութեն իրի, մըկա չըգըտի՝ ինչ պատասխան տա:

Կընըկ ըսաց. - Մարդի՛, գինա՛ մատ ան օծու:

էլավ շվար-շվար գինաց, գինք էտու ան քարը տակ:

Օծ էլմ կանչից. - Դի՛ւր տ'երթաս:

- Թագաւորը օրողկիր ի մա գի, ուզիր ի, էրագ ի տըսի, էրթամ:

- էրթա՛ս, գըտի՞ս՝ ինչ ի անուր էրագ:

- Չէ՛, հավատա:

- Օր թե չըս գըտի, ի՞նչ տ'երթաս:

- Էկեր իմ մա քի, սերն Աստըծուն, ըզի կը սպանի:

- Ան դիրն էր, դիւ իկի մա գի, քի շանք տըվը, դիւ փարեն բիրիր, ըզը չի տըվըր:

- Աս դիր վաղտա ըլնը, ինչ տա, բիրիմ տամ քի:

Օծ էսաց. - Մարդ, գինա՛, թագաւորին էսա՛ իս գըտիմ քի էրագ, ինչ դիւ տըսար. գըշիր մանչ էրզըն էրկնուց աղվես կը թափեր, պատասխան ի՞նչ ի՛ քիզնե հիշար կաց. աշխարք էղեր ի լեպ. մեկ գքի չիւտի, քիւ թախտ քիւ ձեռնեն առնը:

էլավ, գինաց մա թագաւոր դադրավ:

Թագաւոր էսաց. - Էկա՞ր:

- Իս ա, էկա:

- Իմ էրագ ի՞նչ ի:

- Դիւ տըսիր իս՝ էրկնուց աղվես կը թափեր:

- Իս տըսիր իմ՝ աղվիս ի թափի, անու պատճառը ի՞նչ ի:

- Անու պատճառը էնը ի՛ աշխարք էղեր ի լեպ, քիզնե հիշար կաց, մեկ էլ քի չի խափի, քիւ թախտ քիզնե առնը:

Թագաւոր անու շատ փարա էտու, ուր փարեն առից, էկավ, միտք էրավ. «Ինչո՞ւ ան ճամբխով էրթամ, հիւրիշ յանով կ'երթամ»:

ճամբախ փախից, էկավ ուր տուն, կընըկ էսաց. - Մարդ, էլմ օ՞ծ նշանք էտուր:

- Խա՛, էլմ օծ նշանք էտու:

- Օծուն գատ տըվի՞ր:

- Չէ՛, հիւրիշ ճամբխով էկա:

Մնաց մեկէլ տարըն, թագաւորը էլմ էրագ տըսավ, էլմ վուզիր կանչից:

- Վուզիր, - էսաց, - մեկ կուզիմ՝ իմ էրզին պատասխան տա:

էլան, էլմ օղորկեցին հիտիվ ան մարդուն:

Մարդ մնաց շվար, էրթա՛ չըլնը, չէրթա՛ չըլնը:

Չէլան, գիւրով տարան. հասան ան քարըն, մարդիրուն էսաց. - Դիւ գացե՛ք, իս էրթամ մատ քարին, իզան:

Մարդ ուրին-ուրին էսաց. «էրթամ, օծ ըզի կծի, չէրթամ, մատ թագաւորին սուտ դիւս իզան, ըզի սպանի, աղիկ ի՛ օծ ըզի կծի, մատ թագաւորի սուտ դիւս չըգան»:

էլավ, գինաց մա քարին կըճկվավ շվար-շվար, օծ կանչից վիրա:

- Դիւ է՞լմ իկի:

- Էլմ իկիր իմ, խա՛, վալա՛, էլմ իկի, ի՞նչ ինիմ:

- Ան գախ նեղը կըյնիս, կը գաս, ան գախ, ինչ փարեն ծիւցըղ ի, փախչիս, չըս իզան մա գի:

- Վալա՛, ան առաջվան փարեն ինչ տըվը, բիրիր իմ խիտ: Մըկա ան ինչ տա, բիրիմ էսա տեղ, ա՛ռ քի, ըզիկ պըրծուցիս անու ձեռնեն:

- Գինա՛, էսա թագաւորին՝ դիւ տըսըր իս մանչ էրզին՝ գանը կը թափեր էրկնուց. պատճառը ի՞նչ ի՛ աշխարք էղավ գան, դիր լուս կիր, խըմը՛, քե՛յՖ էրա:

էլավ, գինաց, դիմաց թագաւորին դադրավ, թագաւոր խարցընից. - Դիւ էլմ էկար, իս ի՞նչ էրագ իմ տըսի:

- Դիւ մանչ էրզին տըսիր իս՝ էրկնուց գանը կը թափեր. աշխար էղավ գան, կիր, խըմի՛:


Աղ մարդ առըց գուր փարեն, դիւ էկավ մատ օծ, կանչից. - Օ՞ծ, դի՞ր իս, արե՛, գփարեն կըսինք:

Մարդ իբի, իրիք դրվան էլ կըսից, օծ էսաց. - Մարդ, ա՛ռ, տար, իս ի՞նչ կ'ենիմ փարեն:

- Աս քու սատաղեն ի՝ ընկավ իմ ձեռ. երկու դիր պեպախտութեն էրը:

- Չէ՛, քի լոմա չըկա, աշխարք էղեր էր սկուն, մըկա աշխարք էղեր ի գան, իս քու շվարութենի աբով նշանք տըվը, մեկ էլ աշխարք ճարպըցի:

Մարդ փարեն առից, գինաց ուր տուն: Ան խասավ ուր մուրագին...:



79. ԻՐԻՔՅ ԿԸՆԸԿ

Օրըմ կազու կընըկ, իրիցու կընըկ, ռեսիմ՝ կիլնիմ, կերթան գանշտ, ճամփիսը մեչ մեկ դոռ կը կընդնին: Ատ իրիքյ կընըկ հանտը վանր ան դոռ քանրին կը կըռվին:

Կազու կընըկ կըսը. - Հանաճ ի՛ս տեսա:

Իրիցուն կըսը. - Վոլա՛, ի՛ս տեսա հանաճ:

Ռեսիմ կըսը. - Չը՛, վոլա՛, հանաճ ի՛ս տեսա:

Հանտե շատ կալաբալըխ կանըն, չըն բանրըջը:

Կազու կընըկ կըսը. - Յանքյ հոքյմանթ, մի շանրիանթ անիմքյ՝ մըհան մի ջանվախի քանր վի՞ տը խասնը:

Էլան կանցին հոքյմանթ՝ կազու խանմար, պատմիցին ուրինց պան: Կազին ինչըխ արավ-չարավ, չըկանրցավ անունց շանրիանթ աներ:

Կազին կընքյտիրուն էսաց. - Ծի մոհլանթ, քանցե՛քյ տուն. ծի իրիքյ կընգանմենե կուզիմ՝ վով գուր իրիկ շատ խասպից՝ ան դոռ կը տամ անու:

Մեկ օր ռես կյընանց առտ, խիրկ շուռ կը տեր, կընըկ էլանվ, կանչից մեկ մարթ իպը, էսաց. - Ա՛ռ քյի չարխի՛մ, կյընան՝, ծի երկու ծիր ծուկ պի:

Մարթ կյընանց իպը, կընըկ ամա՛մ ծուր իլից, ըզծուկ էթանլ ինը, խաց առիր խանտ անտ ծըկան, առից, կյընանց առտ, ման ռես:

Առտը քոչըն կայնավ, ծըկտիր էխան, իտը ուր ջեբվե, կանչից իրկան, էսաց. - Արը՛ խաց կի:

Մարթ իրը նըստավ, խաց կուտեր, կընըկ կյընաց մանչ վան-
րին, կանխտիկ ան երկու ծուկ էխան, էթալ մանչ ան չուր խիրկին:
Իրիկ չըտեսավ:

Կանչից իրկան, էսաց. - Լա՛գ արը, երկու ծուկ ժիր գի մա նա
խիրկին կը փախին:

Իրիկ էսաց. - Կյըրո՛ղ տու՛ն, մանչ անանովան խիրկին ի՞նչ
կանը ժիր ծուկ:

Էսաց. - Ի՛լը՛, արը՛, տի՛ս:

Մարթ կյընաց, տեսավ՝ երկու ծուկ ժիր գի մանչ խիրկին
կըթըխթըփան, սաց. - Կընը՛կ, նա անջեք պան ը:

- Մարթ, ի՞նչկ ը անջեք. շա՛տ կիլընը մանչ խիրկին:

Մարթ շատ մանիանգա արավ, կընըկ էսաց. - Մա՛րթ, ի՞նչ
մանիանգա կանիս, տանիմ իփիմ, ուտինք:

Կընըկ իփից, իպը, կերան: Մարթ շըտակ անվատաց, որ ան
ծըկնիր խիրկեն էլան տու: Եվարին ռես կյընաց ժամտան տու,
կյեղը մարտիր հըմեն բարհավեր են հանդը:

Ռես էսաց մարտիրուն. - Իս հասօր պանըմ տիսիր իմ:

Մարտիր սիցին. - Ի՞նչկ իս տիսիր:

Սաց. - Մանչ անանովան խիրկին ժիր ծուկ ըմ տիսիր:

Մարտիր սիցին. - Կյըրո՛ղ տու՛ն, սուք մը՛ սը, մանչ անան-
վան խիրկին ի՞նչ կանը ժիր ծուկ:

Մարթ հերտըվցավ, էսաց. - Պըռնիր իմ, իմ կընըկ իփիր, իս
կիրիր իմ:

Մարտիր էլմէլ սիցին. - Վոլա՛, տու սուք սիցիր:

Անիկ հերտըվցավ, էսաց. - Սուք չը՛, նա ծուկ իս աչկով տե-
սա, պերնով էլ կերա:

Ինք շըտակ անվատաց, թը շըտակ ը, ախըր:

Խըլխու՛ն կընըկ էլանվ, կյընաց, կազուն կըսա արավ, ընչ որ
էլեր էր՝ կազուն էսաց:

Կազին էսաց. - Մըկա տու ընցկընա քու իրիկ խապիցի՞ր:

Էսաց. - Կյեղ մեն էլ տեսան, իս խապիցը:

Կազին ըզդոռ առից, իտու ռեսը կընգան, էսաց. - Թը
անու՛նք քանց քյի շատ խապիցին, ըզդոռ տը տամ անու՛նց, թը
չըկարցան խապեն, դոռ տը մնա քյիկ:

Օրըմ էրեց, ուր կընըկ կանցին տանը ծառտակ:

Իրիցու կընըկ կանխտիկ մարթըմ տեսավ, մարտու՛ն էսաց. -
Պախկվը՛ նա փլան տակ, ընչ տերտեր կիլընը ծառվե, տու ա՛րը մա
ծի, քու պան տի՛ս, ընչ էրեց կը կա տակ, տու պախկվը:

Կընըկ իրիցուն էսաց. - Տերտեր, տանձ խասիր, տու ի՛լը
ծառվը, բըռըմ պի՛ ուտինք:

Էրեց էլանվ ծառվե, մարթըն իրը մատ կընըկ, ուր պան տե-
սավ, էրեց վիրուց իրիչկից, էսաց. - Կընը՛կ, անամոթ, ատ ի՞նչ
կանիս:

Էսաց. - Տերտեր՛, պան չըմ անը:

Էսաց. - Ապա ատ վո՞վն ը հատը:

Էսաց. - Տերտեր՛, մարթ չըկա ստա, իս մընակ իմ:

Տերտեր վիրուց լազ իրը տակ, ան մարթ փախավ, պախկ-
վավ:

Տերտեր էսաց կընգան. - Տու վըրե՞ ընցկնա արիր:

Կընըկ հերտըվցավ, էսաց. - Տերտեր՛, որ մարթ իլընը ծառվե,
իրիչկը ծառ տակ, մարտու աչիչ երկու կը տա:

Տերտեր էսաց. - Կընը՛կ, չէ՛, իս իմ աչկով տեսա:

Էսաց. - Տերտեր՛, տու կա՛ց ստա, դորիս իս իլնիմ ծառվե:

Կընըկ էլանվ ծառվե, իրիչկից կյետին, էսաց. - Տերտեր՛, ատ
ամոթ չը՞ քյի, ատ ի՞նչ կընըկ ը հատը:

Էսաց. - Կընը՛կ, մարթ չըկա ստա:

Էսաց. - Կյըրո՛ղ քյի տանը, չէ՞ տու քահանա իս, ամոթ չը՞
ատա պան կանիս:

Կընըկ էճանվ տակ, էսաց. - Վա՛յ, տերտեր՛, տու նա պան
արի՞ր իս. իս իկը տակ, մարթ չըկա ստա:

Էսաց. - Վըրե՞, կընըկըմ խատ իմ կըշտի՞ն էր:

Էսաց. - Տերտեր՛, ապա տու վըրե՞ զի լոմա կաներ, չէ՞ ծառե
ծառտակ երկու կերեվա:

Տերտեր էսաց. - Մոլով մըհա իս տիր՛մ էլ իլնիմ, իրիչկիմ:

Տերտեր որ էլանվ ծառվե, կընըկ ծեռնով արավ, կանչից ատ
մարթուն, էսաց՝ արը՛, մարթն իրը, էլմէլ ուր պան տեսավ, տերտեր
էլմէլ հիշունց իտու, իրը տակ: Չուր տերտեր իրը, մարթ փախավ:

Էրեց խա կընգան կռիվ արավ, կընըկ էսաց. - Տերտեր՛, ծուռ
միլընը, բակըլ միլընը, ծառեն ծառտակ մարտու աչիչ երկու
կերեվա:

Տերտեր էսաց. - Կընը՛կ, իս նա պան չըր կյըտե:

Կընըկ էսաց. - Ապա, խորոտ պան սովրը:

Տերտեր խորոտ անվատաց, թը ան պան շըտանկ էր:

Տերտեր իրը կյեղ, մենանց էսաց. - Իս նուր կյըտցա, թը ծառեն ծառտակ էրկու կերեվա:

Մարտիր չնվատացին, սիցին. - Տերտեր, անն պան սուք ը:

էսաց. - Չը, հասօր իս իմ աչկով իմ կընգան վերա տեսա:

Յըմեն, ինչըխ էլեր էր, հըմեն կըսա արավ:

Մարթիր վերեն շատ ծըծղացին, սիցին. - Տերտեր, անն պան էլ տիր'մ էլ չըսի'ս, ամոթ ը:

էսաց. - Իս կյիտի'մ, շըտանկ ը:

Խըլխուն կընըկ էլնվ, կյըննց մն կազին, ինչըխ էլեր էր, կազու խնմար կըսա արավ, կազին էսաց. - Շըտանկ կըսիս:

էսաց. - Կյեղական գի մեն կյիտին:

Կազին էսաց. - Կանցե'քյ ան դոռ ռեսը կընգանմենն առե'քյ, տըվե'քյ իրիցու կընգան. իրիցու կընըկ քանց ռեսին շատ խապից:

Օրըմ կազին կյըննց շուկեն, կազըմ կյընից իպը, կընգան էսաց. - Կընըկ, հիրիկուն ի'փը, ուտինքյ:

Հիրիկուն կընըկ ճրաքյ արավ, անգուր շինից, ըզկազ իտը մանչ պըղընծին, իտը վար անգյթան, ինքյն էլ թաթ պըռնից ուր ծեռ, նըխշ կաներ: Կազին թեկներ էր վար ուր պանցին:

էսաց. - Կընըկ, անն կազ չէփա'վ, ուտինքյ:

Կընըկ էսաց. - Մըկա մուր'վ, տնլ չի'փիր:

Կազին բոմ մընաց, քըրնավ: Կընըկ էլնվ, ըզպըղինծ անգյթից վիրուց, իտը հանանաթ պախից, գուր թաթն էլ իտը վերա պախից, էլնվ քըրնու ուլնիկ էթնլ կազու ականց, կազին խորանթ քըրնավ: Կազու կընըկ էլնվ, ծեռ իտու վար ռաֆկին, գարծըլին իպը, ըզկազու մուրուս հըմեն կընդից, ըզկազին շըլկից, իպը, էթնլ տուս, ըզտուռ շինից, իրը, նըստավ վար ուր տեղաց:

Մընաց, չուր կեսքըշրին կազին անանխավ, աչկիր էպանց՝ աստղիր կերեվա, էսաց. - Յա', իս տուն էր, մըկա գի իս տու'սն իմ:

Իրիշկից խնվաքյիրու կես խանուկ ը, էսաց. - Տ'իլնիմ, լազիմ, յամ տուն՝ քանը մարթ ըզի չը տըսիր:

Կյըննց վար տըռան, ծեռ իտու տուռ, տուռ շինուկ էր:

Կանչից, էսաց. - Կընըկ, տուռ պա'ց:

Կընըկ էսաց. - Ան վո'վն ը:

էսաց. - Կընըկ, չէ' իս կազին ըմ:

էսաց. - Դե', կյընն', կյըրող քը տանը, իմ կազին գի ստն. իս չըմ կյըտը տու վոլն իս:

էսաց. - Կընըկ, չէ' իս քու կազին իմ:

էսաց. - Կը յաս դեն, չըխտ կը կանչիմ մեր կյեղական, հըմըն կը յան, ըզքյի ռազիլ անիմ:

Կազին էսաց. - Կընըկ, խնվեմ իս քու կազին չի'մ:

էսաց. - Չէ', իս քյի չըմ ճանչընա:

Կազին մանիանգ արավ, ծեռ իտու մուրուս, մուրուս չըկա, էսաց. - Յա', կիլնը, իս կազը չի'մ:

Շատ մանիանգ արավ, էսաց. - Կիլնը, նն մի տուռ չը...

Կայնավ մանչ փուղնին, իրիշկից դես-դեն, էսաց. - Ջանըմ, վուլ, նն տուն միրն ը:

Տիր'մ էլ ըզծեռ իտու ըզտուռ, կանչից, էսաց. - Կընըկ, տուռ պա'ց:

էսաց. - Տը յաս դեն, չըխտ կը կանչիմ գնվթիքյ, կան ըզքյի տանին հոքյմնաթ: Մընա քու պան ի'նչկ ը, կյիշիրով տու կնս վար մի տըռա'ն:

Կազին տիր'մ էլ մանիանգ արավ, էսաց. - Ջանըմ, իս կազը էր, մուրուսով, մըկա նն գի մուրուս չըկա, նն աքեթ պան ը, կիլնը, թը իս կազին չիմ: Տ'իլնիմ, նն կյեղեն էրթամ, քանը չըլուսիր: Կյեղական կան գի տիսնին անմուրուս, ծի ամոթ ը:

Կազին իթուղ, կյըննց դույնեն վե: Կյընաց Ջըզիրեն:

Մընաց չուր տարըմ, մուրուս իրը, խորո թունումավ, էսաց. - Վուլ, իս տ'իլնիմ, էրթամ. էրթամ մի կյեղ:

էլնվ, իրը ուրինց կյեղը մոտխաս կյեղըմ, կընըկ լըսավ, թը կազին իկիր ան կյեղ: Կընըկ էլնվ, կյըննց ուր պարեկնը տուն: Ան պարեկնը անուն էլ Դանման էր:

էսաց. - Դանման, իս խարիր կուրուշ տամ քյիկ. ընչ կազին կը կն, էվարին տու տանիս ծի տուն, չըթըղնիս կն մի տուն: Իս էլ հիրիկուն կը կնմ ծի տուն:

Կազին էվարին իրը, Դանման կյըննց հիրծիվ, էսաց. - Յա', կազը, տու պարո'վ իկիր, տու հասօր ծի մեհկան իս:

էսաց. - Չի մըննթ ը:

էսաց. - Բըվեննավե, տը կնս մի տուն:

Առից, տարավ ուրինց տուն: Ճրաքյ կըպուց, ընթրիս կերան, մողանըմ նըստան, կազին նեղացեր էր, պառկավ, քըրնավ:

Կազու կընըկ հանձն իրը, քընու ուլնիկ էթալ կազու ականջ, կանչից, մարթըմ իպը հանդե, էսաց. - Մարթ, առ քի չարխի՛մ, ըզկազին շըլկը, տար մի տուն:

Ինչըխ հանաչ, ուր տեղ շինից, կազին ընցկուն իտը վար ուր տեղաց: Տալ ան պըղինծ, կազ հինը, գի հականատ, իպը, իտը վար անգթին, էլալ ուր թաթն էլ իպը, նըստավ հիրծիվ ճրաքյին, էլմէլ ան ավուր պես նըխշ կանը: Էլալ կազու ականջեն ուլնիք էխան: Կազին ակախավ, կիրիշկը՝ գի ուր տունը:

Էլալ նըստավ հանձն, կիրիշկը՝ կընըկ թաթ կանը, էսաց. - Կընըկ, հա՛յ քու խեր անիծած, տու նա ի՞նչ էր՝ արիր խա՛ ծի:

էսաց. - Կըրո՞ղ տուն, ի՞նչ ըմ արիր:

էսաց. - Տու վը՞րը իմ մուրուս կընդիցիր, ըզի իցկիցիր դույնենվե:

Կազին ըզծեռ իտու փետ, էլալ թախ կընըկ:

Կընըկ էսաց. - Տընավիր, տու ծըռա՞ր, նա ի՞նչ էլալ քի:

էսաց. - Կընըկ, ապա նա պաներ ընչ տու արիր խա՛ ծի:

էսաց. - Կազը՛, մըհա կըսա՛ արա, մըհա ի՞նչ իլիր խա՛ քի:

Ինչ որ էլեր էր, կազին կընգան խանար կըսա արավ:

Կընըկ էսաց. - Յախ, կըրո՞ղ տուն, ատ տու էրազ իս տիսիր:

Կազին էսաց. - Կընըկ, իս նա տարի՛մ կա դույնեն կան կը կան, տու ի՞նչըխ կըսիս՝ նա էրազը:

էսաց. - Տընավիր, կազու էրազ շատ խորանթը: Տու կը խի՞ս՝ տալ գի կազ վար անգթան, տալ մի կազ չիփիր, տալ իս իմ թաթը նըխշ չըմ պըռծիր: Տու քընար, իս սիցը՝ չուր կազ իփը, ըզկազին խանիմ վե: Մըկա տու քընուց ակախար, ծըռիր իս:

Կազին կիրիշկը կընգան խանարնը՝ կազ գի վար անգթան, թաթն էլ գի նա կընգան ծեռ, ինքյն էլ գի էլմէլ անցկուն թեկնիր վար ու պանցին:

Կազին շա՛շ էլալ, էսաց. - Կընըկ, կիւնը նա էրա՞զ էր:

էսաց. - Կըրո՞ղ տուն, չէ՛ չըխտ էրազը. ապա տու հի՞փ կանցիր կարիթութին, տու կըսեր՝ ծի մուրուս չըկեր, գի տու մուրուսով, գի խատ իմ կըշտին իս:

Կազին ավանտաց, թե էրազ տեսեր էր:

Մընաց, խըլխուն կազին էլալ տու, անու տըրկըցտիր, վով տեսավ, էսաց. - Վու՛յ, կազը՛, տու պարո՞վ իս իկիր:

էսաց. - Վըրե իս կանցեր դո՞ւր:

Սիցին. - Նա տարե՛մ կա, տու չըս էրեվա:

Կազին էսաց. - Իս հիրիկուն կանցիր իմ տուն, մըհա խըլխուն իկիր իմ տու, մըկա տուքյ ծի ընցկընա կըսիքյ: Իս թո՛ւ տեղ չըմ կանցիր:

Անունքյ սիցին. - Կազը՛, տու սութ կըսիս:

Կազին հերտըվցավ, էսաց. - Տու ի՞նչ լըսեր եքյ սութը:


Կազին կըթցավ, թը նա պան էրազ էր:

Կազու կընըկ կընանց հոքյմաթ՝ կազու խանար ինչըխ էլեր էր, կըսա արավ, կազին շա՛շ էլալ, էսաց. - Կընըկ, քու սըհաթ խո՛շ, որ տու քու իրիկ ընցկընա խապիցիր: Տու շատ ջանքա՞զ իս: Խա՛վեմ ան դոռ կը խասնը քիկ:

Իրիցու կընգանմենտ առին, տըվին կազու կընգան:

Ընցկընա պան կիւնը մի երկիր:





80. ԵՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Երկու ախպեր կեր: Շատ գանգոյինացան: Ճուշ ախպեր ռես էր, անտ պըստիկն էլ ռենջբերութիւն կաներ, մանջկալութիւն կաներ, շատ գանգոյինացան, սատանենն էսաց. - Բո՛շ ը. իս չը յամ ըզմեմեկը աչիչ տամ խանիլ՝ բո՛շ ը:

Սատանենն կըրնաց, էսաց. - Աստված քու տուն քակը, քու ճուշ ախպեր անքանին թըլիր վար թիվթիրուն, վար պատըծերթիրուն կան կը կան. չէ՞ տու էլ անու ախպերն իս, ռենջբերութիւն կանիս: Կըրնա՛, տու էլ անու պես քյե՛փ արա:

Ախպեր ըզմանջ իթող, իրը:

Իրը տուն, էսաց. - Իս վար չըմ անը:

Ճուշ ախպեր անու էսաց. - Ա՛ռ իմ անքանին քյի, տու ռեսութիւն արա, իս էրթամ վար անիմ:

Էլանվ ճուշ ախպեր, կըրնաց, պըստիկ ախպեր անքանին խականվ, կըրնաց տանըսկըտիր չալըմ կանը, հոքյոնթին գանփթիյեն իրը, կանչից. - Ռե՛ս, արը:

Իպը, թորչան գրուցից, չըխանսկըցավ, չըխտ թորչան չը կըրտնա:

Երկու տիր գրուցից, չըխանսկըցավ, շանակի՛մ էզար, էսաց. - Շա՛ն որտը, չըս կըրետընա թորչան, ռեսութիւն մ՛անը:

Էլանվ կըրնաց մատ ուր ճուշ ախպեր, էսաց. - Տո՛ւ իս վարիմ, տու կըրնա՛ տուն:

Ճուշ ախպեր էսաց. - Էվարին խըղրաց կերթանք տուն:

Էվարին էլան, իկին տուն:

Խըլխուն պըստըկ ախպեր կըրնաց վար. էլմէլ սատանենն իրը, էսաց. - Աստված քու տուն քակը. քու ախպեր քյե՛փ կանը, էլմէլ տու իկիր իս վա՛ր կանիս:

Իթող ըզվար, իրը տուն, կըրնաց աշխարքյվե, էրեցըմ հանաս կը տա կանչիլ, կըսը. - Վո՛վ կան գի մըշակութիւն անը, չուր պուպու կան, իս անու հանսկ տամ, թը չըկարցավ, գոլ կաշը տը խանիմ անու քանկեն:

Խըլխուն ատ ռեսը ախպեր կըրնաց, էլանվ իրիցու մըշակ, էրեց էսաց. - Խըլխուն իմ տաժին կը տըրնիմ հերճուվ քյի, կըրնա՛, դուր իմ տաժին կը նըստը, հանտը վարը:

Տաժին կըրնաց, սուլար նըստավ: Մըշակ կըրնաց հանտը, անկարելը պան ը, հանտը չըվարվը:

Էլանվ, իրը տուն, իրիցուն էսաց. - Չըկարցա վարեր, գոլ կաշը իմ քանկեն խան, իս էրթամ:

Էրեց գոլ կաշը էխան մըշակուչ քանկեն, մըշակ էլանվ, իրը տուն:

Ճուշ ախպեր էլանվ, կըրնաց մոտ:

Էրեց էսաց. - Ա՛րը, ի՛լը ձի մըշակ, չուր պուպու կան, քու հանսկ տամ. թը տու չըկարցար, քու քանկեն գոլ կաշը կը խանիմ, յաս քու տուն: Խըլխուն իմ տաժին կը տըրնիմ հերճուվ քյի, կերթա, դուր կը նըստը, հանտը վարը:

Տաժին կերթա, կը նըստը սուլար կըրուխ: Մըշակ տաժին ի կը կըրուրե՛ կը կան կյիտու պերան կը տանտը, մըշակ կը կան, կը լըծը, վարը: Էրեց կիլընը կիրիշկը, կը խը՝ մըշակ լըծիր, կը վարը:

Կը կան տերթսնուն կըսը. - Մի մըշակ կը վարը:

Ախչիկ խաց կը տանը մըշակուչ, չըգըրխընա յա ման մըշակ, կը տանչը մըշակուչ, կըսը. - Ա՛րը, քյիկ խաց տար:

Կը կան, գախչիկ խայտանակ կանը, ուր խաց կը տանը:

Ախչիկ լանլեն կը կան տուն:

Էրեց ուր կըրնան կըսը. - Բո՛շ ը, մի մըշակ գոլ կաշը տը խանը մի քանկեն: Գասոր հիրիկուն իմ պառավ մեր կը խանիմքն ձիոնը ծառվե, հիրիկուն մըշակ կը կան տուն, սընք պուպու իկիր, քու հանսկ տանք, կըրնա՛:

Էրեց գուր մեր քխանը ծառվե, հիրիկուն մըշակ կը կան, իրիցու մեր կըսը՝ պու-պու:

Դոր էրեց կըսը. - Մըշակ, պուպու իկիր, քիւ հնիսկ տանք, կըրնա՛:

Մըշակ կիւնը, կըսը. - Տ'իւնիմ մըհա նա ի՞նչկ ը ծառվե:

Կիւնը պնւնդարըմ կը գարկը, իրիցու մեր ծառեն կը պիրը տակ, կանը տաժ:

Էրեց կըսը. - Կընըկ, ի՛ւը, կանտա թըխը՛, փախիքը, էրթանքը. մի մըշակ գու կաշը տը խանը մի քանկեն:

Կանտա թըխիցին, տըրին կողովվե: Մըշակ իրը, մըտավ կողովվե, կանտեք խը վար ուր: Իրիցու կընըկ իրը շըլկից, բոմ էն, բոմ էրեց կը շըլկին:

Մըշակ կողովվե կը պուզը, կը կան վար իրիցու քանկին, կըսը. - Կընըկ, քանի՛մ եղ շատ իս տըրիր հինը, կը խալը, կը կան վար ին քանկին:

Կընըկ կը շըլկը, կըսը. - Ա՛խ, տերտեր, քանըմ ծանդը ը նա կանտեք:

Փշու՛մ էլ կանցին, շըներ իկին թախ էրեց, իրիցու կընըկ:

Էրեց էսաց. - Կընըկ, մըկա մի մըշակ ընգյներ ստան:

Մըշակ էսաց. - Ան ի՞նչկը, տերտեր:

Էլանվ, ըզընիր փանատից դեն-դեն:

Էրեց էսաց. - Կընըկ, մի պան բոշ ը, էրթանքը, վար կարմըն-ջին կը քընհինքը, մի մըշակ կիցկինքը կեստեղ, կյիշիր իս կանկա-խիմ, կանիմ՝ ըհը՛, տուսն էլ արա՛ ըհը՛, ըզմըշակ պըռնինքը, թըլինքը կըտ:

Մըշակ կյիշիր էլանվ, ընգանվ կուշտ, կընըկ մնաց կեստեղ: Տերտեր կյիշիր անախավ, արավ՝ ըհը՛, մըշակն էլ արավ՝ ըհը՛, իրիցու խիյալ, թանու կընըկն ը, պըռնիցին թըլցին կըտ:

Տերտեր էսաց. - Կընըկ, տեսա՞ր:

Մըշակ էսաց. - Ան ի՞նչկ ը, տերտեր:

Էրեց էսաց. - Տիւ իմ կընըկն էլ թըլցիր կըտ: Ա՛րը, գու կաշը իմ քանակեն խան, կըրնա՛ քիւ տուն:

Մըշակ իրը, գու կաշը իրիցու քանկեն էխան, կըրնաց տուն, էսաց. - Ախպեր, քիւ թու խանիցը:



81. ԼԵՔԿԱՐ ԿԸՆԸԿ

Մարթըմ կը յա նեճիր, կաքանվըմ կը գանը, կը պիրը տուն, ուր կընգան կըսը. - Իփը՛, ո՛ւտընքը:

Կընըկ կիփը, կը տա ուր յարուչ:

Մարթ կը կան, կըսը. - Կաքանվ պի՛, ուտընքը:

Կըսը. - Մարթի՛կ, վուլա՛, կատուն կիրիր:

Կըսը. - Պան՛ չը մընացի՞ր:

- Վուլա՛, չը՛ մընացիր, զըմեն կիրիր:

Էրկու շապան հար կերթա նեճիր՝ յան կաքանվ, յան կազ, յան լըպըզտրակ կը պիրը, լան տիր՛մ էլ չո՛ւտը:

Իրիկ կըսը. - Կընըկ, իս հաստ տը յամ՝ էլմէլ տը պիրիմ:

Կերթա կազըմ կը պիրը, կըսը. - Կընըկ, նա կազ իփը՛, ուտինքը. իս տընեն չըմ էրթա, չուր իփը՛ ուտիմ. էնկանդար պիրը, տիր՛մ էլ չըկերա:

Կընըկ ան օր ուր յարուչ կըսը. - Տեղըմ չերթաս, հաստ կազ տը պիրիմ՝ խըդրաց ուտինքը:

Կազ իտը վար անքթան, իփից, իրիշկից՝ մարթ տընեն չերթա տուս, սաց. - Մարթի՛կ, տու վըրե՞ չըս ի՛յա տընեն:

Էսաց. - Վուլա՛, կընըկ, չուր չուտիմ՝ չըմ ի՛յա:

Կընըկ մընաց շիվար, ուր միտվե սաց. «Իս ի՞նչըխ անիմ, իմ յար խապիցը»:

Մանիան արավ, էսաց. «Իս լեբըմ չը տամ հինը՝ իմ պան բոշ ը»:

Էլնավ, մըտավ ուր մառան ընը, մառանից իրը, էսաց. - Մարթիկ, իսկ հնասոր էրագըմ տեսա, մի ճաշ կազ էր, տիւ էլնար, կանցիր ժամտան տիւ, մարթըմ իրը, կայնավ խն քիւ կըշտին, տիւ գան մարթ պիրիր մի տուն՝ ճաշ:

Մարթ ուր միտվե էսաց. «Իս տ'երթամ ժամտան տիւ, որ անցկուն իլնը, իս գան մարթ տը պիրիմ ճաշ»:

Էլնավ. կըննաց ժամտան տիւ:

Կընըկ վնգկից մատ յար, էսաց. - Ապա իս ի՞նչըխ անիմ, ան կըրողուտ իրիկ չէրթա տիւս, որ իս ան կազ պիրիմ՝ իս, տիւ ուտինք:

Էսաց. - Պան չա՛նը, հնասոր թըխ ան ուտը:

Կըսը. - Չը՛, իս հերտըվցիր իմ, բե քի չըմ ո՛ւտը:

Յար էսաց. - Ապա իս ի՞նչըխ անիմ:

Էսաց. - Իս քի շիրնթըմ անիմ. իմ իրիկ տը յա ժամտան տիւ, տիւ էլ կըննա՛ ժամտան տիւ, քիւ թիվ տու իմ իրկան թիվ. իմ իրիկ ըզքի տը պիրը մի տուն, որ իս, տիւ խըդրաց ուտինք՝ իմ սեռտ ոնհնթը:

Կընըկ տնոցավ տուն: Յար մըժլնավ, չըկըննաց ժամտան տիւ: Մեկ ուտար մարթըմ իրը, կայնավ խնտ անու իրկան կըշտին:

Մարթ միտվե էսաց. «Իմ կընգան էրագ շըտնակ էր. իս նա մարթ տը տանիմ մի տուն՝ ճաշ»:

Էլնան, քանցին տուն: Կընըկ հանեճկվե իրիշից, կը խը՝ ուր յար չը:

Իկին տուն, էսաց. - Կընըկ, խա՛ց պի՛ իս, իմ մեհվան ուտինք:

Կընըկ շիվարավ, կըտուրըմ մըժլնավ, էճավ նըրթըն տուն, գորթիկ իթուղ, քշից մանչ տըրկըցը առտին, էլնավ, տնոցավ տուն, էսաց. - Մա՛րթ, ի՛լը լագ, մի որթիկ գի մա մի տըրկըցը առտին. կըննա՛, պի՛ տուն, չուր իս խաց տընիմ:

Իրիկ էլնավ, կըննաց թնխ որթիկ, կընըկ էլնավ, ամա՛մ տաք ճուր էխան, սախեն իպը, սանդու քնր իպը, սապուն իպը, գան սանդու քնր իտը մանչ սախենին, սապունով լըվնց:

Մեհվան էսաց. - Մարե՛, ատ սանդու քնր ի՞նչ կը լըվնս:

Էսաց. - Քի հնպով կը լըվնմ:

Էսաց. - Վըրե՞ ծի հնպով կը լըվնս:

Էսաց. - Իմ կըրողուտ իրիկ հոր մարթըմ կը պիրը մի տուն, նա սանդու քնր կը գնրկը անու ոռ: Իս քի խեխճ կանիմ, ան հնպով տը լըվնմ, որ քի ոռ չըցավը:

Մեհվան էլնավ, տընեն փախավ, կընըկ էլնավ, ըզկազ առից, պախից յարուչ խնմար:

Իրիկ իրը, էսաց. - Կընըկ, հո՛ւր ը ան մարթ:

Էսաց. - Կըրող՛ ան մարթ տաներ. էզնր, ըզկազ առից, փախավ:

Իրիկ էսաց. - Կընըկ, մըհա էրկու խա՛ց տու ծի, իս էրթամ հիտիվ ան մարթուն:

Էլնավ, կըննաց հիտիվ ան մարթուն, անիկ իրիշկից՝ ան տանտեր կը վնգկը հիտիվ անու, ան մարթ վնխնցավ, էսաց. - Իս տը փախիմ, դորիս ան մարթ ըզսանդու քնր առից, իրը:

Անիկ շատ փախավ:

Ան տանտեր կանչից, էսաց. - Մը՛ փախը, իս կնմ՝ հանա մեկ տիրըմ խաց մըտուցիմ մեչ:

Անու խնլըվկեն, թը սանդու քնրն ը, կը պիրը, որ գնրկը անու ոռ:

Ան մարթ էսաց. - Պնրեկան՛, իս քի գն չըմ կիրիր, մի՛ կն:

Ան տանտեր կը կանչը. - Կա՛յնը, մեկ տիր գնրկիմ հինը՝ բնս ը:

Անիկ քննց հնռնճ լագ կը փախը:

Մարթ շաթ վնգկից, նեղնցավ, էսաց. - Չնքնն ը, ախըր, իս կազու միս չըկերա:

Էլնավ, իրը տուն:

Կընըկ էսաց. - Մա՛րթ, ի՞նչըխ արիր:


Էսաց. - Վո՛ւա՛, կընըկ, չըխասա:

Էսաց. - Քի սուջն էր. տիւ ան մարթ տը չըպերեր:

Էսաց. - Ապա իս ի՞նչըխ աներ: Պիրը՛ չէլավ ծի կըսմաթ:

Կընըկ ըզկազ տարավ իտու յարուչ, էլմէլ իրիկ մընըց անուտիլ:





82. ԳՅԵԺ ՄԱՐԹ ՈՒ ԿԸՆԸԿ

Կեր, չըկեր, մարթըմ կեր, ուր կընըկ: Էլան, թոնըր վանիցին, ուրինց խանար ճաշ իփիցին, տըրին թորվան կուղ, էլան տուս, տուռ շինիցին: Մարթըմ տեսան. մարթն էլ աման ծախող էր, որ կյեղը մեչ կան կը կա:

Մարթ, ուր կընըկ սիցին. - Հան՝ մարթ, չը իյաս մի տուն. մինքը ճաշ իփիր ինքը, տըրիր ինքը մա թոնըր, եղը ճուռիկն էլ գոխա կըշտին, տուռն էլ շինիր ինքը, պալնիս տըրիր ինքը փակտուն, մինքը տ'երթանքը գանշտ, անանփուրիկ պիրինքը, նուր մի ճաշ ուտինքը:

Կանցին, գանշտ արին, անանփուրիկն էլ պիրին, ան անանփուրիկն էլ խիլծ էր:

Իկին տուն, տեսան ճաշ կերած, եղն էլ կերած, պուտուկ քանքած հինը, տուռ շինած, պալնիս էլմէլ տըրած փակտուն, կանծաց:

Ճանջըմ թառեր էր կընգան ճակատ, իրիկ էսաց. - Ինչ արիր, ինչ չարիր, ատ ճանջն արիր: Կյըլոխ կի՛քը պըռընը, սպանին:

Թանվանե՛մ էգար, ինչ էգար, ճանջ թըռավ, կընգան կյըլոխ արավ էրկու շնդկ: Կընըկ ընգանվ հանտը, մեռավ:

Էլան, գէ էպանց, էսաց. - Որ իմ կընըկ մեռավ, իս իմ տուն տը տանին:

Կանցին ճամբախ, էշ գըռաց:

Էսաց. - Քու տիրու խե՛ր... Իմ կընըկ մեռավ, տուն փո՞ղ կը փըջիս:


Հանապոշ՛մ էգար, գէ սպանից, պըղինձըմ պեռնեն էխան, էթալ թիվ, կյընաց: Փըշու՛մ կյընաց, պըղինձ տեպավ քար, ծեն էլան, էսաց. - Քու տիրու խե՛րն անիծած, իմ կընըկ մեռիր, մերաք շիվարիր, տու սա՞գ կը գանկիս:

Պըղինձ կյըլիւրից, իրը, կյընաց:

Ան էլ կյընաց, խասավ կյիտու պերան, էսաց. - Նեղանցիր իմ, աղու՛մ տը լիղկանամ:

Խանվաքյիր էխան, մըտավ կյիտ, լիղկանցավ, մամուռ փանթըվավ մերաքը պուլիւր, էսաց. - Իմ էշ խատիր, տու կանաչկարմի՞ր կը կապիս:

Էգար, կըտրից, կյընաց հընգանվ հեքյիմքյիր: Մըհա չուր հի՛փ:





83. ՔՅԵՌԻՆ ՈՒ ԽԱՐՁԵՆ

Քյեռին շատ կիող մարթ էր, կիողութին կաներ:

Անու խարզեն պըստիկ էր, էլնվ, կյըննաց մնթ քյեռին, էսաց. - Քյեռը, զի՛ էլ տար խն քյի կիողութին:

էսաց. - Խարզն, քիւ մոտեն կիողութին չի՛ կն, լն արը, էրթանք:

էլնն կնցին ծառըմ տակ, էսաց. - Խարզն, տիւ կնց ըստն, իս իլնիմ ծառվե:

էսաց. - Վըրե՞ տ'իլնիս ծառվե, նն՛ ֆեքը կա, նն՛ պնն:

էսաց. - Անծեղ պիւն տրիր հանդե, տ'իլնիմ, ննու ծըվիր կիողնամ, նն չնկնխը:

Քյեռին ընչ էլնվ ծառվե, անծըղկու ծըվիր կը կիողներ, խարզեն էլ էլնվ, ննու շըլվալ ոռեն էխան, կիողավ, նն չնկնխավ:

Քյեռին որ էծնվ, իրը տակ, խարզեն էսաց. - Ծըվիր պիրի՞ր:

- Ապն, իս ընցնն՛ մարթ իմ, զի ծըվիր, անծեղ չնկնխավ:

Խարզեն էսաց. - Քյեռը, հո՞ւր ը քիւ շըլվալ:

Կիրիշկը՝ շըլվալ չըկա վերա, էսաց. - Խարզն, ապա հո՞ւր ը իմ շըլվալ:

էսաց. - Քյեռը, կա յե տիւ տընեն չի՞ս պիրիր:

էսաց. - Խարզն, վոլա՛, ընչ իս իկը ըստն, իմ շըլվալ վնր ծի էր:

էսաց. - Կա յե մնացիր ծառվե:

Ան էլ էլնվ ծառվը, ճըղեճող կան իրը, շըլվալ չըկընդնվ, տննցավ, էծնվ տակ, էսաց. - Խարզն, շըլվալ չըկընդն, կուրսավ, կյըննաց:

էսաց. - Ա՛րը, քյեռը, տիւ ծի փարե՛մ չը՛ր խըսաբը, վոլա՛, քիւ շըլվալ իսն իմ կիողիր:

Ան էլ հնմն խասավ, խարզը քնմակ տըփտըփից, էսաց. - Վոլա՛, տիւ ծի վոչ տը կըտրիս:

էլնն, կնցին, նլ թու կիողութին չըմնաց, որ չարին: Խնթնր կյըննաց, խասավ թնկնվորին: Թնկնվոր փարման արավ, չըկարգավ խաներ տիւս:

Ան էլ իպը էրկու գնփթիյա, դնվե՛մ իտու ննունց հերճիվ, ննունց թնթը արավ, էսաց. - Գի դնվեն կի յա շուկու մեչ, լն տիւք չըմոթխըսներք դնվին, լն գնտնու աչկ պըռնե՛ք վըրա, մըհն վո՞վ տը կիողնա ըզնն դնվեն. վոլ կիողնա, տանը, էրթե՛ք պըռնեք, պերե՛ք, վո՞վ կիլնը, թըխ իլնը:

Չնփթիյեք աչկ մոտեն թարթիցին, չըթարթիցին, խարզեն ըզդնվեն քըլփսից տուն ինը:

Չնփթիյեք կիրիշկին՝ դնվա չըկա:

- Ալ ի՞նչըխ անինք, որ անինք, ընչ էրթանք թնկնվորը մոտ, մի վիզ տը կըտրը, նլ ի՞նչըխ անինք:

էլնն, մարդեն արուկ կնցին:

Թնկնվոր էսաց. - Դո՞ւր ը դնվեն:

Սիցին. - Թնկնվոր ապրած կենաս, վոլա՛, դնվեն մի մոտեն կիողան, չնկնխանք:

Թնկնվոր մնջլխըմ իտը. - Ապա ի՞նչըխ անինք, որ նն կիողիր խանինք տիւս:

Պառավըմ իրը, էսաց. - Իս էրթամ, խանիմ տիւս գնն դնվեն:

էսաց. - Որ խանիս տիւս, քյի կնզնմ փարա տը տանք:

Պառավ կյըտներ դնվեն դիւր ին կերած: էլավ, կյըննաց խարզը տուն, խարզեն տուն չէր, կընքյտիր մենակ են: Պառավ առից լնց: Անցկուն նրցունք կը թափը աչկիրուց:

Սիցին. - Պառավ, նտ տիւ վըրե՞ կը լնս:

էսաց. - Քիռներ պառվու աչկիր, մեկ տըղա կեր պառվուն, խիվանդ ը, կը մեռնը, դնվու միս կուզը, չըկա:

Ան կընքյտիրն էլ էլնն, փըշու՛մ միս տըլին պառվուն:

Պառավ էլնվ տիւ, խարզեն տեն առից, էսաց. - Պառավ, նտ ի՞նչ միսը:

էսաց. - Աստված շեն պախը նն տուն, իմ լաճ խիվանդ էր, կնցը, նն խշուր միս տըլին:

Էսաց. - Տարգը՛, պառա՛վ, չըխտ անտ փըշուր ը տըված, էր-
թանք, իս շատ տամ:

Պառա՛վ մըտա՛վ տուն ինը: Խանջարը՛մ էզար փուր, պառա՛վ
ընգա՛վ հատը, մեռա՛վ: Քյեշից ներքյըն տունվե, խուր փուրից, ըզ-
պառա՛վ խուրից:

Իրը թախ կընքյտիր, էսաց. - Գոռքա՛գոռք էլնեք, կընքյտի՛ր,
տու զի տեք խեխտի՞լ:

Էլմէլ կացին, թակավորին սիցին. - Պառա՛վ կուրցա՛վ:

Պառա՛վըմ էլա՛վ, իրը մա՛ թակավոր, էսաց. - Քու կա՛ վար ծի,
իս ան կոդ կընդնիմ:

Թակավոր էսաց. - Տու կընդնիս, ինչ մըրազ անիս, իս կը
տամ:

Պառա՛վ կյընաց, ընգա՛վ տընիր, նա տընեն նա տուն, որտեղ
յա՛, կըսը. - Աստո՛ւ սիրուն, իմ լաճ խիվանդ ը, ըղտու միս արած
տեղ, ծի տուն ըղտու միս չըկա՞:

Դուր կյընաց, չէլա՛վ, չուր կյընաց քյեռու խարզը տուն:

Հանդե մարթ չըկեր տուն, կընքյտիր սիցին. - Աստո՛ւ
սանդա՛ղեն մի մարտիրուն, քանի՞մ քյի կըպը միս:

Էլան, քասե՛մ տըվին պառվուն, տարա՛վ:

Պառա՛վ կիլը տուռ, մախլա՛զա կանը. - Ի՞նչըխ տանիմ՝ նա
տուն ճանչընամ:

Տըռան հիրճիվ տու՛վըմ քյըլս կիլը, համա՛ ուր լուպ կը տա
մեչ, կը գանը տըռան վերեն, կիյա:

Քյեռը, խարզեն էվարման դոր կը կան տուն, կիրիշկին, կը
խին՝ տուռ նըշանուկ ը, մըտան տուն, սիցին. - Կընքյտիր, նա վո՞վ
իկիր մի տուն:

Կընքյտիր սիցին. - Մարթ չէ:

Սիցին. - Ախըր հասօր մարթ իկիր մի տուն:

Անունքյ սիցին. - Վոլա՛, թու՛ մարթ չիկիր, մընակ պառա՛վըմ
իկիր, փըշու՛մ ըխտու միս տարիր՝ անու լաճու խամար տեղ:

Սիցին. - Ծի խե՛րն անըծեք, անիկ գո՞ր տեղու խամար ը
տարիր:

Քյեռըն էսաց. - Խարզա՛, իլը՛, կախ ը, ըզմի տուռ պըռնին:

Պառա՛վն էլ չըխտ գո՛ միս տարիր, կացիր մա՛ թակավոր,
սըիր. - Իս քու կոդ կընդնա: Խըլխուն անքա՛ր տու ծի, իս յամ,
պըռնիմ:

Թակավոր էսաց. - Շա՛տ աղեկ:

Քյեռը, խարզեն էլան անտ հիրիկըվնով, խարզեն կողովըմ
շըլկից, պո՛վ տըրին հինը, ընգան տըռնետուռ, ո՛ր տուռ կացին,
քյեռին ծեռ իտու մանչ քյըլսին, էզար վար տըռան, չուր կացին
թակավորը տուռն էլ նըշանիցին, իկին ռախա՛ պառկան, քյընան:

Խըլխուն շուտ պառա՛վ էլա՛վ, կյընաց մա՛ թակավոր, թակա՛-
վոր բուլուկըմ անքա՛ր իտու անու, պառա՛վ առից, կյընաց, որ տուռ
կիյա՛՝ նըշանուկ ին տըռնիր, վոլա, էլ չըկյըտցա՛վ յէր քյեռու,
խարզը տուն: Պառա՛վ շիվարա՛վ, մընաց:

Անքա՛րն էլ կուշտըմ ըզպառա՛վ տըփիցին, տանցան, կացին
մա՛ թակավոր, սիցին. - Թակավո՛ր ապրած կենաս, պառա՛վ էսաց՝
իս տուռ նըշանիր իմ, մի՛նքյ ո՛ր տուռ կացինք, նըշանուկ էր, պա-
ռա՛վ ալ չըճանչցա՛վ ըզտուռ:

Թակավոր մախլա՛զ արա՛վ, պանըմ ուր կյըլխու առա՛վ: Պի-
րին հախարը ճամբախ ոսկը փըռիցին, էրկու գախթիյա էլմէլ
տըրին հանդե կարավոլ, գատնու կայնան, կիրիշկին, ընչ խալկ
կիյան ճըրու՛՝ վոլ նանչ կըզվը առնը, գան պըռնին: Վոլ նանչ կյը-
նաց, չըկըզվա՛վ գոսկին առնը: Խարզեն էլ իպը, փափուլըմ կարից
ուր խամար, թամամ նիտը կես, տարա՛վ իտը մանչ կըպրին, գատ
փափուլ խակա՛վ ինը, էրկու աման պըռնից ծեռ, կյընաց ճըրու,
դուր ընչ ոսկը կա, ոտ կը տընը վերա, մեն կըպա՛վ ոտաց տակ,
մեկ խատ էլ չըմընաց:

Շուք իտու, մաղրաք իտու, կարավոլքյիր իկին, սիցին. - Սի
ոսկիքյ քաղի՛նք, տանի՛նք, գո՛ մարթ չըկըզվա՛վ ոսկին առներ, որ
պըռնենք:

Էլան, իկին իրիշկիցին, կը խին՝ ոսկի չըկա, ըզմեն էլ տա-
րած:

- Ալ ի՞նչըխ անինք, որ անինք, հաս տիր թակավոր մի վիզ
տը գանը:

Կացին, թակավորին սիցին. - Վոլա՛, ոսկիք կոդցան, մի՛նք
չակախանք, մի՛նք չըտեսանք մարթ կըզվեր կյետին, որ մի՛նք
պըռնենք, պերենք, լա՛ ոսկիք չըկա. խա՛զար մարթ կացին, իկին,
չըկյիտցանք՝ վոլն ը տարիր:

Թակավոր թա՛ծա խըզինե՛մ շինից քաղքեն գատըն, մեչ լիք
փարա արա՛վ, չուրսպուլուր լըղըմ իտու փուրիլ, կուպըր խալից,
իլից, ան լըղմիր լիք կուպըր արա՛վ:

Քյեռը, խարզեն էրկու-իրիք տիր ըզթանկավորը խըզհնեն կըտրիցին: Թանկավորն էլ կըննաց խըզհնը պիւլիւր իտու փուրիլ, լիք կուպըր արավ:

Խարզեն էսաց. - Քյեռը, ի՛լը էրթանք թանկավորու խըզհնից աղու՛մ փարա խանինք, պիրինք, ուտինք:

Կանցին, խասան լըղմը պերան, խարզեն էսաց. - Քյեռը, տիւ շատ ուստա իս, ընցը, իս հիտիվ քի կյան:

Նանչ քյեռին ոտ էթալ մանչ կըպրին, չուր մեչք ինը կըննաց մանչ կըպրին:

Էսաց. - Խարզա՛, ապա իս ի՞նչըխ անիմ, որ անիմ, իս մը-նացը մեչ:

Ան էլ ոտ իտը վար թիվին, թըռավ, ընցավ, չանթե՛մ լիք ոսկը արավ, իրը, որ էլմէլ իտը վար քյեռու թիվին, թըռավ, ընցավ: Քյեռին անցկում խորվավ մանչ կըպրին, հանա կըլուխ կերեվա:

Խարզեն ուր միտվե էսաց. «Կան, զիմ քյեռին կը տիսնին, զան տը ճանչընան, զի էլ տը ճանչընան, տը խարցնին՝ քի ընգյիր վո՞վն ը, ան էլ ուր անճարուն բեննավե տ՛ըսը»:

Ան էլ խանջարըմ էթալ ըզքյեռու ծեռ, ըզկըլուխ կըտրից, առից, կըննաց:

Առից, տարավ տուն, քանկընըկ իրը, սաց. - Յո՞ւր ը քիւ քյեռին:

Էսաց. - Ա՛ռ ըզկըլուխ, զար ըսքի:

Անունքյն էլ առին լաց վար քյեռու կըլխուն:

Խըլխուն թանկավոր անխա՛վ, իրիշից՝ խըզհնեն էլմէլ տարած: Կըննաց, իրիշից, ջանդակըմ գի մանչ կըպրին: Փուրիցին, խանիցին տիւս, մարթ չըճանչըցավ՝ նա ինչ մարթ էր: Դոր առին, տարան թըլցին վար հախարը ճամխին, կարավու տըրին հերճիվ, կարավուլքիրուն թամբը արին՝ վով ընչ վերեն լա, պըռնեցե՛ք:

Դալալ տըլին կանչիլ, որ մարթ չըմընա տուն, մեն էլ յան ճըրու, թը՛ կընըկ: Խարզեն չըխ կըլտնա, ան էլ ուր աման առից կըննա՛ ճըրու, կը խը՝ քյեռու ջանդակ գի հատը, ան էլ չըխ կայմիր հատը: Սեն կիյան կը կան, մարթ չիրիշկը հինը: Քանկընըկ ընչ կըննաց, սեռտ մըռմըռաց, խարզեն խասավ, աքուցըմ էզար, անու աման կուտրից, կարավուլքիր իկին, տը պըռնեն, սիցին. - Տիւ վըրե՞ կը լա:

Խարզեն էսաց. - Ապա ուր աման կուտրիր, ան աման ապով կըլա:

Կընըկն էլ էսաց. - Ի՛մ աման կուտրիր, որ յամ տուն, իմ իրիկ ըզի տը տըլը, անու ապով կը լամ:

Չանփթիյեն էլ էխան, էրկու կուրուշ իտու, էսաց. - Կըննա՛ տուն, մի՛ լա:

Դոր խանթար տըլին թանկավորին. - Տեր-տիրական չըկա ան ջանդակին:

Թանկավորը ախչիկ էսաց. - Չաղըրըմ զարկե՛ք ծի խանար, ան ջանդակն էլ թըլցե՛ք իմ չաղըրը տիւ, ան ջանդակը կարավու իսն իմ:

Խարզեն քանընգան էսաց. - Թըխ տանին հանդե, իս իմ պան կըլտնամ:

Ատ էլ ի՛նչ արավ. խարիր կուրուշ իտու, էլըմ առից, ըզ-չվանքյտիր կապից վերա, հանեն օր կերթեր փետը: Նանչ կը մըթեն, կերթեր. որ կերթեր, խաղ կըլեր:

Թանկավորը ախչիկ էսաց. - Նա՛ ի՞նչ մարթ ը, դայմա՛ ան խաղ կըսը:

Կանչից, իրը չաղըր, էսաց. - Ատ դո՞ւր տը յա:

- Շիվար մարթ իմ, կերթամ պեռըմ փետ կը պիրիմ, իդարա՛ կանին:

Էսաց. - Քիւ պեռ փետը կյին քա՞նը կուրուշ ը:

Էսաց. - Իրիք կուրուշ:

Էսաց. - Խալեն քիւ փետը կյին իս կը տամ, նըստը՛ փըշու՛մ գրուցը՝ իմ սոբըր կա:

Նըստավ, բոմ խիտ գրուցից, էսաց. - Չի դաստո՛ւր տու, իս իլմիմ տիւ, պուզիմ, կան:

Էսաց. - Ի՛մ կեն վար քի չի՛ կա, վախանամ տիւ փախիս:

Էսաց. - Նա՛ թիլ կապը իմ մատ, թիլը ծեր պըռնը՛, չուր իս յան, պուզիմ, կան:

Որ էլա՛վ տիւս, ան թիլ կըտրից, հըրկեն թիլըմ կապից հինը, կըննաց մատ էլ, հանա լազ խասավ, ըզջանդակ կապից վար իշուն, էլ զուր ջանդակ առից, կըննաց տուն, ինք տանցավ մատ ախչիկ:

Նըստան հանըր, չուր խըլխուն գրուցիցին, էսաց. - Խա՛նըմ, լիւսցավ, ծի դաստո՛ւր տու, իս էրթամ:

Էսաց. - Դե՛, քի դաստուր ը, կյրնա՛:

Էլնա՛վ, իրիշկից, ապա կյիտը՝ էշ չըխտ կնցիր, հանա՛ էլնց, բըռաց, իտու մանց ուր կյըլխուն:

Թանկավորը ախչիկ էսաց. - Ատ ի՞նչ էլնա՛վ քի:

Էսաց. - Վոլա՛, տու իմ տուն ավրիցիր, իմ իդարեն, իմ ճըժ-կըտիրուն՝ ան մեկ էշն էր:

Թանկավորը ախչիկ էլնա՛վ իրիշից՝ մընչ էշ կա, մընչ էլ ջան-դակ կա:

Էսաց. - Տու վըրե՞ կըլնա, իս քու իշու կյին կը տամ:

Թանկավորը ախչիկ էլնա՛վ, կյրնաց մատ խեր, էսաց. - Էլնած պան ը, միմք ըզկող խանիմք տուս:

Էսաց. - Կյրնա՛, դալալ տու կանչիլ, նա կող ո՞րն ը, կա, զինք բալու անը, իս գան տ'անիմ թարխան: Նա մեկ էլ կըռալ-քիրու ամոթուն իս չիմ կանա խա մարթու գրուցը:

Խարզեն էլ էլնա՛վ, բըստա կյրնաց մա թանկավոր, էսաց. - Նա պանիր մեն իսն իմ արիր, լն տու թը իմ վիզ կըտրիս էլ, տու կյր-տիս, իզին տու, մեկ պան էլ կա, իս անիմ, իմ կաթըլ քի խալալ ը:

Էսաց. - Չը՞ իս չըմ կյըտը՝ տու ինչ տ'անիս:

Էսաց. - Ին տը յամ, Մուսկուվու թանկավոր կողնամ, պիրիմ:

Էսաց. - Որ տու անթարզ պան՝ անիս, տու մեկ տըրե թարխան իս:

Էսաց. - Քիշըմ ծի խանար կյրնը՛, քանուսն խատ գանգակ:

Կյրնից, իտու հինը, ան էլ ըզքոշ զինից, էխան տիկ, գան-գակտիր կախից անու մազիրուց, փաթըթից, իտը չանթենվե, կյրնաց:



84. ՔՅԵՌԻՆ ՈՒ ԽԱՐԶԵՆ

Տարբերակ

Թանկավորու ախչիկ էսաց. - Իս տ'երթամ մա խըզինին:

Ինք կյրնաց, կյիշիր մընաց մա խըզինին, մընաց հանչար: Ան մարթ իրը էլնել, ընչ մըտավ միրս, հանա՛ ախչիկ խասավ, պըռնից: Խարզեն էլ անցկուն չար էր, գրուցից խատ ախչըկան, իցկից ախչըկան խիլք, կյրնաց մատ ախչիկ, դոր ըսաց՝ իս տը յամ:

Ախչիկ էսաց. - Իս ջորով ըզքի պըռնիցը, ալ կը թըխսի՞մ տու յաս:

Ան էլ էսաց. - Որ անցկուն ը, ախըր, տու հար ըզի պըռնի-ցիր, որ անցկուն ը, իմ ծեռ պըռնը՛, իս վար տըռան ճուրըմ թա-փիմ, կան, մըստինք, չուր խըլխուն զի տար մա թանկավոր:

Խարզեն, ան կըտրուկ ծեռ խատ անու էր, ծեռաց պագուկ ինք պըռնից, ըզծեռ իտու զախչիկ, ախչիկ էրկու ծեռնա կիք ըզ-ծեռ պըռնից, խարզեն ընչ էլնա՛վ վար տըռան, հանա՛ ըզկըտրուկ ծեռ իթուղ ախչըկան ծեռ, հա՛ յալն, կյրնաց: Ախչիկ շիվարավ:

Խըլխուն կյրնաց, էսաց. - Վոլա՛, բատալ ը, չըպը՛ռվը:

Ինչըխ էլեր էր խատ անու, խոր պատմից: Մընաց անցկուն, դոր ախչիկ էլնա՛վ տըղով. ախչըկան լաճըմ էլնա՛վ:

Լաճ ֆըռն էլնա՛վ, թանկավոր էսաց. - Նա լաճ տարե՛ք, տըրե՛ք հախպուր, իս դալալ տամ կանչիլ, հըմեն մարթ թըխ կան դենվե, խընծուրըմ գի խա լաճուն, ուզին ընցնին, մըհա լաճ ան խընծուր վի տա յան վի վերեն ուրախնա, գի անիկ անու խերն ը, անու արուն վար անու կըզըխճա, հանա՛ շուտ գան պըռնե՛ք:

Խարզեն ընչ լըսավ, էսաց. - Գնայ-հոյ, չէլնվ, թաթփիրըմ չիլ-
նը՝ ըզի տը պըռնին:

Էլնվ, կըրնաց, լըպըզտրակըմ պըռնից, իտը ուր թիվաթիու
տակ, կըրնաց: Խալկ, վո՛վ յա լաճու մենեն խընձուր կուզը, չի՛
տա, ընչ խարզեն խասավ մա լաճ, լաճ տո՛ւրնախաներ վերեն,
խարզեն հանա ըզլըպըզտրակ իթող, վոլա՛, կեռ ընգանվ մա
խալկին՝ հա՛յ լըպըզտրակ, հա՛յ լըպըզտրակ, պըռնեցե՛ք, հանա
խարզեն ըզլաճ առից, իտը թիվաթիու տակ, մարթ չանկախավ,
առից, կըրնաց:

Իկին, սիցին. - Թանկավոր ապրած կենաս, ըզլաճն էլ կհո-
ցան, տարան:

Ծեն ընգանվ հուրիչ թանկավորքիր:

Մեկ խոռտ թանկավորըմ հորոխկից մատ ան թանկավոր,
էսաց. - Տու ի՞նչ թանկավոր իս, կհո՞ մը չըս կանա խանը տուս: Տու
չըխանիս տուս, իս տը կան, ըզքյի խուղե, ճըրե կորսըցըցիմ:

Թանկավոր շիվարավ, ալ չըկըտնա ինչըխ անը, շատ էլ կը
վանխանա:

Ան էլ էլնվ, դալալ իտու կանչիլ, քանը մարթ կեր, իպը,
էսաց. - Ան կհո՞ ո՞րն ը, թըխ կա, իս իմ բախտ տամ անու, անիկ
երթա ան թանկավորին զատըմ կհո՞նա, պիրը, ինչ ուզը, իս տամ:

Մարթ չըզըխշցավ սեր՝ իսն իմ:

Խարզեն հանա ան կընարեն թըռավ հանդը, էսաց. - Վոլա՛,
իսն իմ ան կհո՞.

էսաց. - Տո՛ւ իս:

էսաց. - Խա՛:

էսաց. - Որ տու իս, տու տը կանա՞ս յաս ան թանկավորին
զատըմ կհո՞նաս, պիրիս:

էսաց. - Մըհա՛ իշալ ը, տը պիրիմ:

էսաց. - Դե, կըրնա՛:

Խարզեն էսաց. - Դե՛, մագով քո՛շըմ արա տիկ, քանտուն
զանգանկ, խորո սարա՛թըմ տու ծի, իս յամ:

Թանկավոր իտու, խարզեն զատիր իտը սաթաթը մեչ, շըլկից,
կըրնաց:

Կըրնաց Մուսկուվու թանկավորը քաղաք, իրիշկից՝ անու
սարեն յոթ տաթաղին ը, ան էլ կըրնաց պողվըտե քաննիս: Թա-
նկավոր գո մանչ ուր տեղաց քըրնիր: Ան էլ ուր չանթեն թիվեն իպը

տակ, քո՛շու մուրթ խականվ, կըրնաց վար թանկավորը կըլխուն
կայնավ, մեկ զինքյ հաճնից: Թանկավոր ուր տեմվե կայնավ, ին-
չըխ ուռ կը տհոլա:

էսաց. - Են ի՞նչ էր:

էսաց. - Տու չըս կըրտնա՞ ինչ էր: Իս խրիշտակն իմ, իկիր
իմ՝ քու խոկյին տա՛ռնիմ:

էսաց. - Ապա, խրիշտակ, քու բախտն իմ ընգիր, տու թադ-
բիրըմ չըս կա՞րը տիսնը ծի:

էսաց. - Իմ թադբիր քու տիսնիլուն մա յը՝ ըսքյի մարմնով
տանիմ արթավութիմ:

էսաց. - Դե՛, տու՛ կըրտիս:

էսաց. - Դե՛, իլը՛, մըտը՛ մա սընդուկվե, լա՛ հիրար չառնիս,
խաթար չըտաս:

Չվան իցկից ըզսընդուկ, էսաց. - Դուր իս քյի կը տընիմ կյե-
տին, մանչ քյի կըսիմ՝ կու՛ճ, կու՛ճ, տու արա՛ հա՛վ, հա՛վ, կըսիմ՝
փը՛սի, փը՛սի, փը՛սի, տու սա՛ մա՛ու, մա՛ու, կըսիմ՝ թը՛շո՛, թը՛շո՛,
տու իշու թարգ զըռա:

Առից, տարավ Օսմանլու թանկավորու սարեն:

Յոթ կըռալքյիր հանդը խազըր էր: Ան էլ իտը հանդը, էսաց՝
կու՛ճ, կու՛ճ, թանկավոր արավ՝ հա՛վ, հա՛վ, էսաց՝ փը՛սի, փը՛սի,
արավ՝ մա՛ու, մա՛ու, էսաց՝ թը՛շո՛, թը՛շո՛, ան էլ իշու թարգ զըռաց:

Ան էլ ըզսունդկը պերան էպաց, էսաց. - Դե՛, իլը՛ տուս:

Էլնվ, իրիշկից, կը խը՛ կըռալքյիր հըմեն գո հատե յին,
ամոթ-զամոթ նըստավ:

Թանկավոր էսաց. - Վըրե՞ կանչընաս, տուքյ մեն էլ զի զա՛ չէ
կը խանեքյ, կըսեքյ. «Տու մեկ կհո՞ չըս կանա խանը», գո իմ կհո՞
ըզքյի էլ կհոցավ:





ՀԱՎԵԼՎԱԾ I

Սոկսի խոսվածքի նմուշ՝ գիտական տառադարձությամբ³⁵

պօլօտ կ^ոօվ

մեկ կնիկըմ կիլնը, անու իրիք արչիկ կիլնը, մեկ խուրթ ը, երկու՝ ուր մ^ոօրեն ին: ան³⁶ երկուսըն լավ կը շախը, ան մեկըն քիշիր-ցերեկ կը տըփը:

իրիքն էլ կօր^ոօղկը վարժատուն: ան մեկըն շատ շմաստուն կիլնը, ան մեկել քիր՝ թնս պան չըն քըտը աշխարքը վերա:

են էլ կը քանգան խուրթ արչիկ կը թանը շեռիվ անցը, կը գանրկը:

արչկան կըսը. – քնս խ^ոօգին իլնի, իս քի տ՛անիմ կօվարած: ան ըգքի չըմ շօր^ոօղկի վարժատուն:

անուշ գանտ կը տա ուր արչկըտիր ուտին, անիկ կը մնա անուրթի: ան էլ լանլէն կը կան փարգանխ, մատ պօլօտ կ^ոօվ:

պօլօտ կ^ոօվն էլ կըսը. – մը՛ վանխանա, արչի՛, իս իմ տ^իղ տ՛երեժամ ռըհանթ, իս չըմ փախը, ուրտան տնս ինիս շիտիվ ծը, մ^իղանաս:

արչիկ օր վըր ավուր կը կըտըժանա, կը կանվանա, ինչ ի ըգկ^ոօվ կերեժամ:

³⁵ Հեքիաթի տառադարձման համար շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Գ. Աճառյանի անվան լեզվի հնաստիտուտի ավագ գիտաշխատող, ք.գ.թ. ժաննա Միքայելյանին:

³⁶ Գիտական տառադարձման մեջ մեծատառեր չեն կիրառվում:

մ^իերն էլ կիլնը շնորիշ արչկըտիր կօր^ոօղկը շեռիվ կօվուն, կըսը. – թըղ ան չը կանվանա:

ինչ երկու քնս կերթան շեռիվ կօվուն, կ^ոօվ կը փախը սանրեսար: երկու արչիկ ենկանդան կը թըղնին շիտիվ կօվուն, քըռտինք լ^ոօտքիրվէ կը գան տակ երկու քնսնս:

կըսին. – ան թօթան, մինքն ան կ^ոօվ չը տանինք, ըգմի սպանից ան կ^ոօվ:

ան էլ կիլնը, ինչկանդան լ^ոօսկը, առժաթ կիլնը, կը կախը ուր արչկըտիրու վըգքիր, ան մեկել արչիկ կը տըփը, անուրթը կօր^ոօղկը, կ^ոօվ տանի, երեժամ:

արչիկ լանլէն կը կան փարգանխ:

պօլօտ կ^ոօվ կըսը. – ընչի՞ կը վանխանաս, արչի՛, վըր^ի է կը լանս:

արչիկն էլ կըսը. – իմ երկու քնսնս լ^ոօսկը առժաթ կա, ծի չըկա, իմ մ^իեր ծի կը տըփը, կը թանկը տնս տըմ^իեն:

ան էլ կըսը. – մը՛ վանխանա, արչի՛, տնս ըգծի առ, տար, երեժամ, քի դանվը չըկա խիտ:

կիլնը ըգպօլօտ կ^ոօվ կը տանը, կերեժամ:

պօլօտ կ^ոօվ կըսը. – թան, գիմ պուչ պըռնը՛, շիտիվ ծի արը՛:

ան էլ ըգպօլօտ կ^ոօվու պուչ կը պըռնը, շիտիվ անու կերթա: կը տանի մ^իղ ծնրըմվէ, կը տեսնա, պառավըմ գօ շանտ^ի է նըստիր:

կըսը. – պառավ, անանաթ ան արչիկ, խօր^ոօտ շախիս:

արչիկ կը մնա հանդ^ի: պառավ կուղ կիլնը, կը քըռը:

կըսը. – արչի՛, գօ իս կը քըռնիմ, սիվ ճնր կան, ըգծի չանխսըցիս, սըվտակ ճնր կան, ըգծի չանխսըցիս: ինչ տ^իղին կան, ըգծի անխսըցիս:

պառավ քըռնավ, սիվ ճնր իրը, արչիկ չանխսըցուց, սըվտակն էլ իրը՝ չանխսըցուց, տ^իղին իրը, անխսըցուց:

ան էլ էլանվ, արչկան կըլ^ոօխ մըտուց ման ան ճըրնս, լ^ոօսկը կըռնդիր կախավ անանաթն, անու վիգ շըմ^իեն էլանվ լ^ոօսկը:

շեվարին արչիկ ուրախ-գուրախ էկավ տուն, մ^իեր տեսավ արչկան վըգ^իեն զըմ^իեն լ^ոօսկը յը, անանաթքիր զըմ^իեն լ^ոօսկը կինը ը:

եսաց. – սի՛վ կապիս, ան տնս մ^իէ յթա, վան իմ արչկըտիր ըգկ^ոօվ տը տանին, երեժամ:

երկու քնս էլան, ըգպօլօտ կ^ոօվ տարան կերեժամ:

պօլօտ կ՞օվ էսաց. – անխկըտիր, թանլըց՞էք, զիմ պուչ պռնեց՞էք:

էլան ըզկ՞օվու պուչ պրոնիցիւն, մըտան մանչ ծնորուն: տեսան պառապըմ գօ նըստիր անտ՞էդ:

էսաց. – պառա՛վ, անմանաթ նան էրկու ախչիկ:

պառա՛վ էսաց. – շատ աղ՞էկ, ախչկըտիր, իս կուղ կէնիմ, կը քընիմ, սըվտակ ճնր կան, ձի մ'անկանխցուց՞էք, տ՞էդիմ էլ կան, մ'անկանխցուց՞էք, ինչ սիվ կան, ըզձը անկանխցուց՞էք:

- պառա՛վ, – կը պօռան, – պառա՛վ, պառա՛վ, սիվ ճնր էկավ, իլի վ՞է:

կիլնը պառա՛վ, գերկուսն էլ կը խուրը մանչ ճըրուն, շըմ՞էն մէկի ճակտէն սիվ գատըմ կը կախվը:

կը տէպնա ճակատ, կը տէպնա իրիս, կառնին ըզկ՞օվ, կը կան տուն:

մ՞էր կիլնը ըզխուրթ ախչիկ կը թանլը շեռճիվ դանրը, կըսը. – նանրիկ քն օղյաթն ը: լանլէն ախչիկ կիլնը կը կան փանրգանխ:

պօլօտ կ՞օվ կըսը. – մի՛ լան, ախչը՛, աստված օղորմած ը:

խըլիսուն շուտ, ախչիկ կիլնը վ՞է, մ՞էր կըսը. – ախչը՛, ըզքն պօլօտ կ՞օվ տը զինիմ, անմեն նան պօլօտ կ՞օվն ը կանի խան քի:

ախչիկն էլ լանլէն հանան զինք կը թանլը փանրգանխ:

պօլօտ կ՞օվ կըսը. – ախչը՛, վըր՞է՞ կը լան:

ախչիկ կըսը. – վօլան, ըզքի տը զինիմ, էն հանպօվ կը լան:

պօլօտ կ՞օվ կըսը. – մը՛ վանխանա, թըխ ձի զինիմ, իս տ՞ըլնիմ տանս լ՞էդի, մարթ չը կանա ուտը, տնն մընակ կիր: իմ լ՞օսկըռքիրն էլ բիթուն պանիրանվը, լ՞օսկը յը, քանը սաղ իս, իմ լ՞օսկըռքիր ծախիս, ուտիս, չը խըլըսնը:

անանվ՞օտուն կը պիրին, պօլօտ կ՞օվ կը տընին կէտին, կը զինին, անու միս կանին կավուրմա, ախչկըտիր ու մ՞էր ինչ կուտին, կը տաննանա վան անունց, ամնով կը տան գան հեթիմ ախչիկ, կըսին. – տա՛ր, կի՛, բանլը մ՞էռնիս:

ախչիկ կուտը, կը քանցրանա ախչկան խանար: լ՞օսկըռքիրն էլ կը պանիրանվը, կը տանը ծախը ուր խանար:

ան կը խասնը ուր մըրագ, տնն յէլ՛ քնն:

Արտաշես Բարսեղյան

Արտաշես Բարսեղյանը ծնվել է 1890թ. Ռշտունյաց գավառի Նարեկ գյուղում: 1898թ. մտել է գյուղում բացված Ջանաշյանց որբանոց: 1903թ. փոխադրվում է Աղթամարի վանքի դպրոց, որն ավարտում է 1906-ին: Մի տարի հետևում է Վանի Հայկական Կենտրոնական վարժարանի լրացուցիչ դասընթացին և ձեռք է բերում ուսուցչի վկայական:

1907-1908թթ. ուսուցչություն է անում Աղթամարի գյուղերում՝ Շատախում, Սոխրաբերդում և այլուր:

Շատախում նա խմորատիպ «Տիգրիս» թերթի խմբագիրներից մեկն էր, ինչպես նաև «Ծովակ» կիսամսաթերթի հիմնադիր խմբագիրներից մեկը: Աշխատակցել է նաև Վանի «Աշխատանք» թերթին:

Ինքը՝ Արտաշես Բարսեղյանը, իր ձեռքով գրած ինքնակենսագրականում նշում է, որ սերը դեպի բանահյուսական և ազգագրական նյութերը իրեն ներշնչել է մայրը դեռ մանկուց:

1907-ից նա սկսում է հավաքել բանահյուսական նյութեր՝ առածներ, հանելուկներ, երգեր, աղոթքներ, հեքիաթներ: Նա նշում է, որ իր գրառած բանահյուսական նմուշների մեծ մասը ժառանգել է մորից՝ ավելացնելով, որ հարսանիքի երգը սովորել է հարսանիքներում, երկրագործի երգը՝ գութանի և աշխատանքի վայրերում: Շատ սիրելով բանահյուսությունը՝ ինքն էլ շատ բան իմացել է անգիր:

Սենեքերիմ Շալճյան

Սենեքերիմ Շալճյանը ծնվել է 1878թ. հունվարի 3-ին Վանի Քաղաքամեջ թաղամասում: Հայրը՝ Հակոբը, մասնագիտությամբ ջուլիակ (շալճի) էր, որտեղից էլ ծագում է Շալճյան ազգանունը: Այդ արհեստին հետևել են Սենեքերիմն ու իր երկու եղբայրները: Ջուլիակության շնորհիվ ընտանիքն ապրել է բարեկեցիկ կյանքով թե՛ հոր կենդանության օրոք և թե՛ հետո:

Սենեքերիմի հայրը ուսումնասեր մարդ էր և հոգում էր իր զավակների կրթության մասին: Ութամյա Սենեքերիմը հաճախում է տեղի միջնակարգ դպրոցը և 1896թ. ավարտում այն: Միջնակարգ դպրոցում նա սովորել է հայոց լեզու, բնագիտություն, մաթեմատիկա, ֆիզիկա, աշխարհագրություն, պատմություն, ֆրանսերեն, կրոնի պատմություն: Աշակերտում է եղիշե Դունդակչյանին (Վանում Փորթուգալյանի հիմնադրած դպրոցի փայլուն շրջանավարտներից մեկը) և Հովհաննես Կուլօղլյան-Մկրտչյանին:

Միջնակարգն ավարտելուց անմիջապես հետո՝ 1896 – 1901թթ. ուսուցչություն է անում նույն դպրոցում, հետո 3 տարի զբաղվում է ջուլիակությամբ:

1904թ. վերադառնում է ուսուցչական աշխատանքի և իր գործը շարունակում մինչև 1915թ. ապրիլյան կռիվները, մինչև Վասպուրականի գաղթը: Այդ ընթացքում մեկ ամիս աշխատում է Վանի ոստիկանության վարչությունում՝ որպես գործավար: Ս.Շալճյանը մեծ հետաքրքրություն է դրսևորում հայոց պատմության, մատենագրության նկատմամբ: Նա ծանոթ էր Գ. Խալաթյանի «Ազգագրական նյութերի հավաքման ծրագրին» և բանահավաքչական աշխատանքները կատարում էր ծրագրի պահանջներին համապատասխան:

